ԻՄԱՑՔ

Ի ՉԱՐՉԱՐԱՆՍ ՔՐԻՍՏՈՍԻ

ԻՄԱՑՔ

Ի ՉԱՐՉԱՐԱՆՍ ՔՐԻՍՏՈՍԻ

ՀՕՐ ԳԱՅԵՏԱՆՈՅ ՊԵՐԳԱՄԱՑԻՈՅ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱԳՐԱՏՈՒՆ

ՎԵՆԵՏԻԿ. — Ս. ՂԱԶԱՐ

ՌՅԻԸ — 1879

✠

ԻՄԱՑՔ

ԱՆՄԱՀԻՆ ՄԱՀՈՒ

ՆԵՐԱԿՐԹԵԼՈՑՆ Ի ՆՈՑՆ

ԱՍՏՈՒԱԾԱՐԵԼՈՑ

ԱՐՀԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ

ՀԱՐԱԶԱՏԱՑ ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆՑ

ՍԻՐԱՑՆՈՑ ՍԻՐԵԼԵԱՑ

Տ. ԳԷՈՐԳԱՅ ՐԱԲՈՒՆԱՊԵՏԻ

Տ. ԵԴՈՒԱՐԴԱՅ ԱՌԱՋԱՒՈՐԻ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԱՑ

ՅԻՇԱՏԱԿ

ԱՆՄԱՀՈՒԹԵԱՆ

ԲԱՆ

ԱՌ ՎԵՐԾԱՆՈՂՍ

Եթէ խոհականագոյնն նախնի իմաստասիրաց՝ բնականին լուսով 'ի վերայ եհաս և վճռեաց, խոկումն եւեթ մահու լինել զկեանքս այս համառօտ, զի՞նչ յօրէնս շնորհաց ժամանելոցս և վայելողաց յարդիւնս հոգեկեցոյց Փրկչին մերոյ, իցէ արժան լինել չարչարակիր մահու նորին, եթէ ոչ խոկումն կենաց 'ի կեանս: Հրաշափառ խոհք և խորք մահու, որ յանմահութիւն վերածեն անվրէպ. և որոց 'ի դէպ է լնուլ բովանդակ և 'ի վեր քան զամենայն՝ զմիտս քրիստոնէի 'ի ժամանակեայ կենցաղումս, որպէս և զսիրտն՝ յանսպառ յաւիտենականութեանն: Որպէս ստուգիւ վասն ամենայն մարդոյ որ գայցէ յաշխարհ՝ կրեաց և մեռաւ Քրիստոս, նա և վասն ամենեցուն և վասն ամենայն դարուց կանգնեաց զխաչ իւր 'ի կենդրոնի աշխարհիս՝ ամենադիտակ արձան ուղեցոյց մարդկութեան, զորով ամենայն հոսանք կրից և դիպաց կենցա-

ղականաց՝ շրջան առեալ բաղխեսցին և անցցեն, և նա անսասան և անսասանելի հայեսցի և հովանասցի. որպէս ասաց սրանկնագոյնն նորոց վարդապետաց, « Խաչն կայ, մինչ աշխարհս հոլովի » [1]. ամենայն ոք առ նովաւ դեգերեալ կամ փրկեսցի կամ փշրեսցի. միոյն ցուպ օգնականի լինելով, միւսում գաւազան երկաթի. և ոչ նեցուկ միայն վաստակելոց, այլ և փայտ բուժիչ սրտի, կեցուցիչ հոգւոյ: Վասն որոյ սարտուցեալք 'ի գաւազանէն՝ բուռն հարցուք զցպոյն՝ ցաւագնեալքս յանհրաժեշտ աղցից կենցաղոյս:

Իմանան Քրիստոսի և խաչին նորա սիրողք՝ զոր ասեմս, և առաւել քան զոր ասեմս. ընդ որս և զայս, զի ոչ իբրու նոր ինչ կամ պակաս մնացեալ 'ի հոգևոր գրենոյ և հրահանգաց յազգիս մերում՝ աւանդեմք զմատենիկս զայս, այլ զի ըստ բազմապատիկ ախորժակաց հոգւոյ և սրտի՝ ունի և այս մատեան զիւր ինչ առանձինն բարեշնորհութիւն. և զի չեն բնաւ և ոչ եղիցին երբեք բաւական՝ ամենայն բանք որ զՔրիստոսի կրից ճառիցեն. վասն այսորիկ վստահութեամբ արկցի և այս՝ աղքատօրէն և մուրացաբար՝ յանարգամեծար գանձանակ խմոյն Քրիստոսի, խուն խերեւեշ 'ի Թարգմանչէ, այլ բնիօն բազմարժեայ 'ի հեղինակէ բանիցս. որ արդարև սիրող խոտեցելոյն յաշխարհէ՝ խաչի, գծծակերպ կնկղաւոր մի վանական, որոյ անուն նշանակեալ է 'ի կռան գրոցս, 'ի բազմաթիւ ընտիր ընտիր գրուածոց սրբոց Հարց և վարդապետաց

[1] Պօսիւէ. Stat Crux dum volvitur orbis.

հաւաքեալ և բովանդակեալ է զիմաստս սոցին, որպէս արդարև մեղու հոգևոր 'ի յոլովից և 'ի զանազանեալ բանաւոր ծաղկանց մեղրադործեալ զգաւռնս զայս յանուն և քաղցրս 'ի ճաշակ երկնահաղորդ շրթանց. և առ ստուգութեան կամ առ խոնարհութեան՝ և զբուն իսկ զբանս հոգեկիր արանցն՝ լատին բարբառով դրոշմեալ է 'ի ստորև հիւսուածոյն. զոր մեզ աւելորդ էր յեղուլ 'ի հայումս, զի ոչ յաւելուած ինչ այլ կրկնութիւն լինէր վայրապար, և գրեաթէ կիսով չափ ևս ստուարանայր գիրս այս. շատ լիցի և մեր հաւաստել, զի յամենայն մասունսն կամ հատուածս (որ ըստ թուոյ աւուրց տարւոյ են) տասն կամ հնգետասան բանք են նշանակեալք 'ի Ս. Գրոց կամ 'ի Հարց յոյն և լատին եկեղեցւոյ. զորոց հիւթ իմաստից, որպէս ասացաքս հեղինակն իւրով աստուածատուր շնորհիւ յեռեալ է 'ի մի յարմարութիւն:

Իսկ զանուն գրոցս, ասէ նոյն ինքն, ոչ կամեցեալ կոչել Խոկմունս կամ Մտածութիւն Չարչարանաց Քրիստոսի, զի մի սոխպողական իմն կամ ծանր և դժուարընտել թուիցի հասարակաց ընթերցողաց, այլ ճգնեալ գտանել դիւրընկալ ևս կոչումն՝ անուանեալ է յիւր լեզուն իտալական՝ Խորհուրդք և Գորովք 'ի Չարչարանս Քրիստոսի [1]. զոր մեր համառօտել ևս կամելով՝ Իմացս միայն կոչեցաք. իբրու զի երկոցունց ևս ներգործութեանց, մտացն ասեմ և սրտի, պատշաճի այդ, միոյն խորհրդածութեան և միւսոյն գորովանաց:

1 Pensieri ed Affetti sopra la Passione di Gesù Cristo.

Զայս ևս խնամով ազդ առնէ հեղինակն. զի 'ի վեր քան զայլս յուղղութեանց միտ եդեալ է՝ զխոնարհութիւն և զսէր հաստատել, որ ամենայն վիճակի անձանց կարևորագոյնք են, և զհպարտութիւն հերքել, զխանդարիչն ամենայն բարւոյ և զամենևին ատելին Աստուծոյ: Դարձեալ, առ առաւել օգուտ ընթերցողին՝ երկուս ևս յաւելու խրատս. մի, չհամարել հին ինչ և անցեալ ժամանակաց զդէպսն որ 'ի սմա ճառին, այլ որպէս նոր և ներկայ. զի, ոչ միայն 'ի Քրիստոսէ և այսր անընդհատ կատարի յիշատակ նորա, այլ և յառաջ քան զգալուստ նորին յաշխարհ՝ բազումք 'ի նահապետաց, որպէս Աբրահամն և Իսահակ, զնա կերպարանէին և օրինակէին. և որպէս սիրելիք և որդեկորոյս ծնողք՝ հանապազ առաջի աչացն ունին զսիրելիսն և զմեռեալս իւրեանց ցկեանս ողջոյն: Երկրորդ, մի վերացական ինչ և առ հանուրս հասարակեալ և բաժանեալ համարել զզօրութիւն չարչարանացն Քրիստոսի, այլ վասն անձին սեփական, վասն իմ յատուկ. զի Քրիստոս այնպէս կրեաց վասն ամենեցուն առ հասարակ, որպէս վասն միոյ միոյ ուրոյն. (Գաղատ. բ. 20):

Նորին հեղինակի է հաւաքած և կարգած ցանկ նիւթոց կամ առաքինութեանց կարևորաց և ախտից ինչ խորշելեաց, 'ի կրթութիւն և 'ի զգուշութիւն հոգեսիրացն, նշանակեալ ըստ թուահամարոյ հատուածոյն. զոր և մեք նոյնպէս նշանակեցաք՝ Ուղղութիւնս և Ուղղելիս կոչելով: Միայն Աղօթքն յաւելան 'ի գիրս այլուստ. առաջին եօթանքն են Հ. Պետ. Բինե-

մնատեայ Յիսուսեանց , Թարգմանեալք յուժե_
մնէ 'ի հանգուցեալ ծերունեաց Ուխտիս , և ու_
Թերորդն՝ այլոյ ուրումն. յայտնի են որ զկնին
գան՝ մերոյ ազգիս եկեղեցւոյ և գպրութեան
գոլ պտուղք , Շնորհալւոյ , Լամբրոնացւոյ ,
Փառնեցւոյ և այլոց , և 'ի Տարականաց ։

Աղաչէին յօժարողքն յԻմացքն և յաղօթս յայ_
տսնիկ , մասնաւորել յօգուտն հոգևոր՝ զարգիւ_
նական Հարազատան 'ի Քրիստոս Ննջեցելս , տա_
րոց յիշատակ նուիրենն ։



Նա զմեղս մեր բառնայր եւ վասն մեր չարչարէր,
եւ սորա վիրօքն բժշկեցաք.

Ես. ԾԳ

ԻՄԱՑՔ .

Ի ՉԱՐՉԱՐԱՆՍ ՔՐԻՍՏՈՍԻ

Կանխաճառութիւն Քրիստոսի առ Առաքեալսն զՉարչարանաց իւրոց :

Ա. Բազում անգամ կանխաձայնէր Քրիստոս զդառնակսկիծ չարչարանաց իւրոց առ Առաքեալսն. արժան է քննել թէ զի՞նչ յայնմանէ ծագեցաւ: Ճառէ զչարչարանացն՝ յետ դաւանելոյն Պետրոսի զինքն Որդի Աստուծոյ. և ճառէ առ 'ի յորդորել զամենեսին նման իւր համբերութեամբ կրել զխաչն. իբրու այն թէ՝ որ ոչն կամիցի չարչարակից իւր լինել այժմէն, ոչ լիցի հաղորդակից և 'ի վայելս փառացն: Իսկ զի՞նչ առնիցէ Պետրոս: — Կամ 'ի սադրանաց սատանայի և կամ 'ի վակժոյժ գթոյն՝ ընդդէմ կայ նմա, և նկրտի 'ի հաւանութիւն ածել զնա, եթէ այդօրինակ նախատական չարչարանք ոչ վայելէին Որդւոյ Աստուծոյ կենդանւոյ և անմահի:

Ճառէ Քրիստոս զչարչարանացն և յայլում նուագի, 'ի դարձին իւրում 'ի Գալիլէէ յԵրու֊

սաղէմ. և յայտնէ զանհամբոյր անարգանսն զոր կրելոցն էր, որպէս զի 'ի խոնարհութենէ Աստուծոյ ուսցին խոնարհք լինել և ինքեանք։ Եւ արդիւնք իրացն զի՞նչ։ — Երկուք 'ի նոցանէ, Յակովբոս և Յովհաննէս, ունայնանան 'ի խորհուրդս ամբարհաւաճս պատուասիրութեան և յառաջաձգտութեան, մինչև հարկ լինել Քրիստոսի յանդիմանել զնոսա, և ծանուցանել՝ զի թագաւորութիւն իւր տացի խոնարհաց,

Մի՛տ դիցուք, որպէս և 'ի մեզ ներգործիցեն բանքն Քրիստոսի։ Եթէ առաքեալքն ունիցին տեղի անմեղադրութեան՝ վասն ոչ քաջ հասու լինելոյ խորհրդոյ Խաչին, զի չև ևս էր 'ի գլուխ ելեալ. մեք զո՞ր ներել թողութեան ունիցիմք՝ եթէ ոչ օգտիցիմք 'ի խորհրդածութենէ Չարչարանաց Քրիստոսի։ Յ'ածել իմում զայն զմտաւ՝ առաջադրեմ իսկ մեռուցանել զանձն իմ և խոնարհել. այլ քանիցս՝ կամ յաղթմանէ անձին սիրոյ և կամ սատանայի՝ հրաժարեմ և 'ի մեռելութենէ և 'ի խոնարհութենէ։ Թէպէտև Քրիստոս յամենայն իսկ դէպս չարչարանաց իւրոց՝ ազդ առնէ ինձ ուսանել 'ի նմանէ զխոնարհութիւն, քանի՞ն տակաւին փքանամ ես անձնապարծութեամբ, ունայնութեամբ, պատճառանօք և հեթեթեալ խծբծանօք։

Ո՛վ նորոգող Փրկիչ հոգւոյ իմոյ, զգեցո ինձ զհոգի քո, որպէս զի զօրացեալ յաղթեցից չկամութեանս 'ի վշտակրութիւն։ Յորժամ ազդ ինձ լինի ուրանալ զկամս ինչ յոյժ մարդկայինս, Ճանաչեմ ըստ մասին զպարտս իմ. այլ ընդ նմին և վատասրտիմ և տկարանամ, և վաղվաղակի հրաժարեմ յայնմանէ զոր դու թելադրես։ Ո՛վ, քանի՜ մեծ է մանաւանդ հպարտութիւնս իմ։ Չգիտեմ թէ իցէ՞ ուրեք ոք որոյ ընկալեալ իցէ այնքան լոյս և առիթս վարելոյ խոնարհութեամբ,

որքան եսս հաւատովք 'ի սուրբ չարչարանս քո: Ո՛վ քաղցր Յիսուս, ո՛վ բարեգութ Յիսուս, ո՛վ վարդապետ ճշմարիտ համբերութեան և ճշմարիտ խոնարհութեան, ուսո ինձ զուղղութիւնս այսոսիկ՝ զոր կամեցարդ ուսուցանել ինձ: Մի լիցին ինձ անպիտանացու չարչարանք քո: Ահաւադիկ 'ի ծունր անկեալ առաջի մեծվայելչութեան քո, աղաչեմ զքեզ, տուր ինձ շնորհս խոկալոյ 'ի չարչարանս քո:

Տպաւորեցից 'ի մտի զայս իմաստ. եթէ՝ առանց համբերութեան և առանց խոնարհութեան ոչ կարացից փրկել զանձն իմ: Եղէց համբերող՝ եթէ եղէց խոնարհ, եթէ քաջ խորամուխ լեալ 'ի ներքս 'ի յիս՝ ծանեայց զտառապելութիւնս իմ:

Բ. Ի զարմանալ երբեմն ժողովրդեանն 'ի վերայ սքանչելեացն գործեցելոց 'ի Քրիստոսէ, խօսի նա միւսանգամ զչարչարանացն ընդ աշակերտսն, և ասէ. «Դիք դուք 'ի լսելիս ձեր զբանս «զայսոսիկ, զի Որդի մարդոյ մատնելոց է 'ի «ձեռս մարդկան»: Եւ զայս ասելով յայտ իմն այնպէս առնէ՝ զի գիտասցեն թէ ոչինչ ակամայ անցցէ ընդ նա, այլ զամենայն իւրովք կամովք յանձն առնուցու. որպէս զի և յորժամ տեսանիցեն զնա մեռանելով 'ի խաչին, գիտասցեն և յուշ լիցի նոցա եթէ ինքն մարդ է և Աստուած: Եւ ո՞ր քան զայս յայտնագոյն բարբառ կայցէ առ 'ի տպաւորելոյ յոգւոջ նոցին զխորհուրդն մեծ: Եւ սակայն որպէս կուրացեալք և անըզգայեալք՝ չառնուն նոքա 'ի միտ զոր կամէրն ծանուցանել:

Դարձեալ խօսի ընդ նոսա Յիսուս զչարչարանացն և անպատրուակ զեկուցանէ, եթէ մատնեսցի և կատակեսցի և հարկանիցի և սպանցի,

որպէս նախագուշակեալ է զնմանէ 'ի գիրս. և տակաւին ինչ ոչ իմանան նոքա. և համարելով թէ առակաւ ինչ խօսիցի, այլափոխեն զիմաստս բանիցն՝ յայլ ինչ ձգելով, օտար ամենևին 'ի ճշմարտութենէ մօտալուտ չարչարանացն: Վասն այնորիկ և վաղ վաղ սկսանին վիճել զաւագութենէ, ոչ գոլով արմատացեալք 'ի խոնարհութեանն ուղղութեան, զոր ստէպ թելադրէր նոցա վարդապետն աստուածային:

Մի վայրապար խնդրեսցուք եթէ ուստի՞ այս յառաջեալն, այլ զմեզ ինքեանս քննեսցուք: Միթէ ո՞չ յաճախ նոյնպիսի իցեմ և ես յընթեռնուլս կամ 'ի խոկալ զչարչարանաց Քրիստոսի, ապշեալ և ըլթացեալ, ոչ իմանամ և ոչ 'ի միտ առնում: Ի խորհելս թէ ո՞ է որ կրէն զչարչարանս, և վասն է՞ր և վասն ո՞յր, գրեաթէ ամենևին անզգայ գտանիմ, որպէս թէ իսպառ մեռեալ իցեն յիս հաւատք: Եւ ո՞ գիտէ եթէ մըթութիւնս այս մտաց և խստութիւն սրտի՝ չիցեն արդիւնք անհեղ պատուհասին սպառնացելոյ դատապարտելոցն, զրկումն յիմանալոյ զխորհուրդն փրկագործութեան:

Խիթամ յոյժ ընդ այս, և մեղք իմ տան ինձ իրաւունս զանգիտելոյ արդարև. այլ զողորմութիւն ժտիմ 'ի քէն, ո՜վ լուսաւորիչ հոգւոյս իմոյ, և աղաչեմ փարատել զխաւարս զայս: Չեմ արդարև բնաւ արժանի լուսոյ քո. այլ խոստանամ քոյին օժանդակութեամբ մի ևս ընդ վայր հարկանել զնոյն, այլ մանաւանդ հաւատարմութեամբ վարել զայն 'ի փառս քո: Բա՛ց զաչս մտաց իմոց, ամբարձ զսիրտ իմ 'ի վեր քան զզգալիս, և տուր ինձ իմացուած մտախոհ լինելոյ 'ի խորհուրդս ցաւոցդ, ուշի ուշով և ջերմեռանդեամբ, առ 'ի շարժել 'ի գութ և 'ի զղջումն: Ես ոչ առնեմ և ոչ գիտեմ առնել աղօթս. զի որ-

պխսի՞ ինչ աղօթք իցեն այն, եթէ յորժամ յառ-
նեմն անտի՝ գտանեմ յիս ամենևին կենդանի զախ-
տըս իմ: Ո՛վ ամենաբարի Յիսուս, աղաչեմ ըզ-
քեզ յաղիս ամենողորմ գթութեանդ, ուսո զիս
և օժանդակեա շնորհօք քովք:

Ցանձն արարից զիս յամենօրհնեալ Տիրա-
մայրն, 'ի սկիզբն և 'ի վախճան մտածութեանցս.
և խոնարհեցուցից սակս զանձն իմ անարժան.
քանզի Աստուած՝ խոնարհաց տայ զշնորհս իմա-
նալոյ:

Դաստամաւորթիւն Ցուցայի:

Գ. Ի յարուցանել Յիսուսի զՂազար 'ի մեռե-
լոց, և 'ի հռչակել համբաւոյ սքանչելեացն՝ որ վեր-
ջին և մեծագարողն եղև, և պահեալ էր ցայն ժամ՝
ըստ խորհրդոց գերագոյն կամաց իւրոց, բա-
զումք 'ի Հրէիցն հաւատացին, խոստովանելով
զնա Ճշմարիտ որդի Աստուծոյ. այլ քանզի և այ-
լոց ոմանց երթեալ առ Փարիսեցիսն՝ ազդ առ-
նէին զանձել թուոյ հաւատացելոցն և հետևողաց
Քրիստոսի, ժամ եառուն փութացան ողքա 'ի
տուն Կայիափայ, միաբանել ընդ ժողովրդապետ-
սըն, և դաւադիր լինել Յիսուսի: Էր նոցա և
յայլում նուագի խորհեցեալ սպանանել զնա,
այլ արդ 'ի գլուխ հանել զխորհուրդն ցանկան:

Ուրանալ և թաքուցանել զեղեալ սքանչե-
լիսն ոչ կարեն. և որ անկ էր առաւել ևս 'ի զար-
մացումն կրթել զամպարիշտսն զայնոսիկ և տալ
մեծարել զՅիսուս, 'ի մեծագոյն ևս դառնու-
թիւն և 'ի զայրուցս գրգռէ զնոսա՝ վասն անո-
ղոքելի ատելութեանն որով ատէինն զնա: Ո՛հ,

յո՞ր վայր ածեալ հզեն զմարդ՝ կիրք անագո-
րոյնք: Կէտ մի կարևոր է այս առ ստէպ 'ի յուշ
ածելոյ՝ յորժամ 'ի չարչարանս Քրիստոսի կա-
միցիմ խորհել: Ո՞ եղև պատճառք չարչարանացն՝
բաց դատման աշխարհի: — Կուրացեալ կիրք
գլխաւորաց Եբրայեցւոցն: Ո՞ իցէ այնմ պատ-
ճառք՝ ըստ դատողութեան Աստուծոյ: — Մեղք
իմ: Եւ ուստի՞ ծագումն մեղացս. եթէ ոչ 'ի կը-
րից իմոց գաղտնեաց, և մանաւանդ յայնմանէ՝
որ իսպառ բռնացեալ է 'ի վերայ սրտիս:

Յընթեռնուլն զվարս Սրբոց՝ տեսանեմք զի
ամենեքին մեռելութեամբ կրից ստացան զսրբու-
թիւն. իսկ ես՝ կրիւքն այնոքիւկ զորս Սուրբք 'ի
մաքրութիւն իւրեանց պէտ արարին, քանիցս
չար քան զՀրեայսն վարեցայ, 'ի դաւաճանել
քեզ, ո՛վ Աստուած իմ: Դու ետուր ինձ զկիրս
բնականս՝ զի փոխեցից զնոսին 'ի կրթութիւն ա-
ռաքինութեանց. իսկ ես 'ի բորբոք և 'ի հրա-
հանգ ախտից փոխեմ զնոսին: Կոչեմ զնոսա
մերձ ընդ մերձ 'ի սիրտ իմ, որպէս 'ի սրահն
Կայիափայ՝ 'ի խորհուրդ. և վախճան խորհրդոյն
լինի՝ մեքենայել ընդդէմ քո կտտանս մահացուս:
Ո՛հ, ո՞ր դարման, որպիսի՞ հնարք փրկութեան
մնայցեն ինձ:

Դու միայն, Աստուած իմ, դու միայն կարես
օգնել ինձ յայսպիսի դէպս. վասն այսորիկ խո-
նարհեալ աղաչեմ առնել ինձ զշնորհս զայս.
այնպէս յօգուտ արկանել ինձ զչարչարանս
Քրիստոսի առ 'ի չափու ունել զկիրս իմ, զի կաց-
ցեն միշտ հպատակք բանին և հաւատոց և սըր-
բոց քոց պատուիրանաց: Բազում և մեծամեծ
են տկարութիւնք իմ՝ առ չարաչարն զսկատե-
լոյ յախտս բազմապատիկս. այլ իմաստութիւն
քո, Տէր, ողորմութիւն քո և շնորհք՝ հզօրա-
գոյն ևս են առ 'ի յօգնել ինձ և յորդորել 'ի բա-

րին , քան զբնաւորական բերումն իմ 'ի չար անդր ։ Ի հպարտութենէ իմմէ քան յայլմէ իմեքէ երկիւղ է ինձ , քանզի թաքուն է ինձ ախտն . վասն այսորիկ ընդդէմ այսմ արմատոյ ամենայն ախտից՝ ժտիմ զլոյս քո , Տէր , և զզօրութիւն , որ վարդապետդ ես խոնարհութեան և դաս_տիարակ խոնարհաց ։

Յայս սակս իսկ զի թաքուն է յիս ախտ հպ_արտութեան , արժան է ինձ խնամով խուզել քննել զամենայն խորհուրդս , զիղձս , զդիտ_ումնս , զբանս և զգործս իսկ՝ զորս ընտրելա_գոյնս համարիցիմ ։

Դ. Կիրք՝ որ հզօրագոյնս մղէ զքահանայսն և զՓարիսեցիս՝ հակառակել Քրիստոսի , Նախանձն է ։ Տեսանեն նոքա զի ժողովուրդն զարմացեալ ընդ սքանչելիս նորա՝ զհետ ընթանայ . և մա_խացեալ՝ զի մի՛ անարգք և ապաշնորհք գտանի_ցին յաչս նոցին , և դադարեսցէ շահ օգտի իւ_րեանց առ 'ի նոցանէ , առ նախանձու եւեթ գրգ_ռելոյ յագահութենէ և 'ի հպարտութենէ , միաբան կամօք հաստատեն հնարս գտանել 'ի դարման վնասուցն , բառնալով յաշխարհէ զսր_բագոյնն քան զամենայն մարդ եկեալ յաշխարհ ։

Քանի՜ մեծ են չարիքն՝ զոր ածէ նախանձ 'ի կործանումն հոգւոց և բովանդակ աշխարհի ։ Անձինք իսկ հոգևորականք չեն զերծ յայնմանէ . և թէպէտ յաճախ բանք լինին զախտէն , այլ ոչ և դարման զգուշութեան . քանզի թէև ինչ չար համարեալ լինի , վասն այնորիկ և ոչ խիթալի և 'ի բաց փախչելի ։ Եւ սակայն անտի ծագէ առ փոքր փոքր կործանումն մեր յաւիտենական ։

Աղէ քննեսցուք զանձինս 'ի դաղանի դարանս զփառակցութեան մերում . և յայտնեսցի թերևս զօղեալ 'ի նմին ախտս այս ապառուժ, որ հան_

գոյն գանգաղ տենդի՝ առ սակաւ սակաւ հիւծէ և կրծէ զկեանս։ Մեծապէս խղճ լինի ինձ 'ի դէպս դէպս՝ 'ի վիճակի աստ կոչմանս մեծարոյ գտանել յաչս տեսողաց. և եթէ գտցի երբեք ոք հաւասար իմ կամ կրսերագոյն՝ որ առաւել քան զիս յարգեսցի, պատուեսցի և սիրեսցի, թթուիմ և դառնանամ ընդ այն 'ի խորս սրտի իմոյ։ Ընդ ստացուած որպիսի և իցէ բարւոյ՝ զոր ունիցի մերձաւորն իմ, խնդայցե՞մ և լիցիմ ուրախ որպէս եթէ իմ էին բարիքն։ Զայս աղդէ և զայս պահանջէ յինէն սէրն. իսկ ամենայն շարժմունք սրտի՝ որ հակառակ կայցեն այսմ սիրոյ՝ դրդմունք ևեթ են նախանձու։ Եւ այսոցիկ այսպէս գոլով՝ որո՞վ երեսօք իշխիցես, հոգի իմ, կալ առաջի Աստուծոյ։

Զանգիտեմ, Տէր, 'ի չարամոյն յօժարութենէ սրտիս. քանզի տրտմիմ յաճախ ընդ բարիս այլոց, և 'ի չքմեղս լինիմ՝ նախանձաւորութիւն համարելով զտրտմութիւնս զայս։ Այլ ո՞ աներկեւան արասցէ՝ եթէ չիցէ այն նախանձ այնքան նրբին որքան գաղտնագոյն։ Աչք քո ամենապայծառք, ո՛վ Տէր, որք թափ անցանեն յանդունդս սրտից, քաջ իսկ տեսանեն զախտակիր բերմունս իմ. և տակաւին ոչ հոգամ, ոչ ապաշաւեմ, ոչ պէտ առնեմ ուղղութեան։ Նախանձն զաչացու կուրացուցանէ զիս. աւա՜ղ եղկելւոյս։ Կըրթութեամբ եղբայրսիրութեան կարէի սուրբ լինել և խնդալ ընդ բարիս ընկերին, և առաւել ընտրեմ նախանձելով ընդ բարի նորին՝ տրտմել և զայրանալ հանդոյն Հրէիցն անզգամաց։ — Ո՛վ Աստուած իմ, որ ուսուցանես ինձ 'ի գիրս սուրբս, եթէ նախանձ մոլութիւն է սատանայի՝ որ ատեաց և դարանի մարդոյ, յայն սակս միայն զի դու բարի առնես մարդոյ, տուր ինձ օգնութիւն ճանաչելոյ և ատելոյ առաւել քան զառաւել զախտս զայս ժանտաժուտ։

Դուն եղից յամենօրեայ քննութիւնս խղճի մտացդ՝ դիտել զախտ նախանձու. և եթէ գը-տայց յանցաւոր՝ զղջացայց և խոստովան եղէց. Ջանացայց զգոյշ կալ յառթիցն, և զգէմ ունել առաջնոց խլրտմանցն :

Ե. Ի ժողովս անդ քահանայապետացն և Փա-րիսեցւոց՝ ամբաստանութիւն մեծ զՅիսուսէ սքանչելագործութիւնք նորա լինէին. ասեն. Զի՞նչ գործեսցուք, մինչև ցե՞րբ թողցուք զայրս զայս որ առնէ սքանչելիս 'ի վեր քան զզօրութիւն մարդոյ: Եւ յիշեն զկոյրսն բացեալս, զհիւանդսն բժշկեալս, զմեռեալսն յարուցեալս, և զայլն ա-մենայն բազմազան գործս սքանչելեաց 'ի պէտս օգտի մարդկան. և յայնմ ամենայնէ որով պարտ և արժան էր նոցա ճանաչել զՅիսուս՝ Մեսիա նախաձայնեալ 'ի մարգարէից, նոքա այսպէս խելաբերեն՝ եթէ արժան է սպանանել զնա: Եւ ո՞ւր լուաւ ոք երբէք եթէ 'ի դատապարտել զոք՝ 'ի փոխարէն մատուցին գործք նորա բարիք: Եւ զայս առնեն ընդ Յիսուս. յանցաւոր համարին նա վասն ակն յայտնի սքանչելագործութեանցն:

Միտ դիր կուրութեան դոցա: Յանկանային և հայցէին զգալուստ Մեսիայի. իսկ 'ի գալ նորին՝ ամենայն նշանօք ծանօթս տալոյ զանձին, մերժեն զնա և մոլեգինս կատաղեալ հնարին բառնալ յաշխարհէ: Պատկեր իմն է այդ իմոյ գործոյս: Փափագելով փափագեմ և խնդրեմ զխոնար-հութիւն, զսէր, զհամբերութիւն, և զառաքի-նութիւնսն կարևորս 'ի փրկութիւն անձին իմոյ. և յորժամ առնէ ինձ Տէր շնորհս՝ առաքելով զդէպսն, զներքին ազդեցութիւնսն և զօգնու-թիւն՝ առ 'ի լինել արդարև խոնարհ, բարեգութ և համբերող, զի՞նչ առնեմ ես: Ի դերև հանեմ զպատեհն, հակառակ կամ ազդմանցն ներքնոց,

և ընդ վայր համարեմ զօգնութիւնն Աստուծոյ. նմանեալ ամենայնիւ խոտեցելոցն այնոցիկ յերեսաց Աստուծոյ, անարգողացն զերախտիս նորա և ապստամբողաց: Խնդրէին Հրեայք զՄեսիա զի գայցէ փրկել զինքեանս, այլ ոչ բնաւ խափանելով ոչ զաշխարհային շահ օգտի իւրեանց և ոչ զստարոտի ցանկութիւնս. այսպէս և ես փափագեմ զառիթ փրկութեան իմոյ, այլ ոչ ուրանամ ոչ զցանկութիւնս և ոչ զյօժարութիւնս ախտից:

Իսկ դու զի՞նչ ասիցես զինէն, Տէր. միթէ ո՞չ և ես հրէաբար ցնորիցիմ 'ի խնդրելս զփրկիչ՝ զի փրկեսցէ զիս զորօրինակ ես կամիցիմ. զի տացէ ինձ լաւութիւնս՝ չկալով իմ 'ի բաց յախտից իմոց. տացէ ինձ զարքայութիւն երկնից, չառնելով իմ բուռն անձին իմոյ հրաժարել 'ի կամաց մարմնոյ և աշխարհի: — Աստուած իմ, տուր ինձ ճանաչել զողորմութիւնս քո և ըզշնորհս քո. տուր ճանաչել և զչարութիւն իմ՝ զոր ճանաչես դու քաջ. կամիմ ճանաչել զայն՝ զի 'ի բաց մերկացայց և ուղղեցից հրահանգօք կրթանաց, թէպէտ և հակառակիցին զգայութիւնք իմ պղերգացեալք: Դու ինքն, Տէր, կանխեալ ազդես և գրգես զիս առ 'ի խնդրելոյ 'ի քէն զշնորհս զայս. և մերժիցե՞ս յերեսաց քոց զհայցողն յանուն քո՝ քոյին իսկ հաճութեամբ կամաց: Այս ինչ է խնդրուածս իմ, մի 'ի դատապարտութիւն հոգւոյ իմոյ շրջել զառեալսն առ 'ի քէն զշնորհսն և զհնարս: Անհնար է ինձ փրկել այլով ճանապարհաւ քան զոր ուսոյց Փրկիչն աշխարհի. և ընդունիմ զայն՝ հաստատուն կամօք երթալոյ զհետ Յիսուսի 'ի վարդապետութիւնս իւր և յօրինակս վարուցն: Ո՛վ դատապարտեալդ 'ի Հրէից՝ Յիսուս, լեր ինձ միշտ սիրելի, երկրպագելի և նմանելի:

Անհնար է ինձ յատենին Աստուծոյ 'ի չքմեղս լինել անուղղայ վարուցս՝ որպէս առ 'ի չգոյէ օժանդակութեան շնորհաց: Ծուլութիւն է պատճառք յանցանացս. և դատաստան ծուլից և պղերգաց՝ է պատուհաս յաւիտենական:

Զ. Քահանայքն իրաւունս համարին դատապարտել զՅիսուս յայն սակս, զի եթէ թողուցուն զնա կեալ՝ ամենեքին հաւատասցեն 'ի նա, և գայցեն Հռովմայեցիք և բարձցեն զազգ իւրեանց: Այլ մինչդեռ ոմանք զայս և ոմանք զայն ինչ բաջաղեն անհեդեդ բարբանօք, յառնէ քահանայապետական գլուխն Կայիափա, և յանդիմանեալ զամենեսին իբրև ընդվայրախօսս, պատճառ կարևոր սպանանելոյ զՅիսուս հաւաստէ զօգուտն հասարակաց: Ոչինչ է պիտոյ, ասէ, ակն ածել անմեղութեան կամ արդարութեան կամ օրինաց. այլ զոր անկ և օգուտ է մեզ՝ զայն առնել: Եւ ընդ լսելն զբան նորին՝ անդէն և անդ հաւանին ամենեքին, և պատճառանօք նախանձախնդրութեան հաստատեն զդաւանացն խորհուրդ:

Միտ դիր, որպէս 'ի դատի աստ Քրիստոսի՝ 'ի բաց թողեալ խոտեալ լինին և խիղճ մտաց և երկիւղն Աստուծոյ. և միայն յանձանց օգուտ և յակնառութիւն մարդկային մտաբերեն: Եթէ 'ի քննութիւն ճշմարտութեան մատուցեալ էր նոցա, դիւրագոյն էր հաւատալն 'ի Մեսիայն եկեալ. այլ յընդունայնութիւն հարեալք՝ մերժեն զճշմարտութիւն և դարանակալ լինին անձին նորա. վասն այնորիկ և զերկոսին իսկ կորուսին և զըստ աշխարհի վայելս և զյաւիտենականն:

Ո՞չ զնոյնս գործիցեմ և ես: Յորժամ զօրանան յիս կիրք ինչ, ամենևին իսկ իրաւունս ու֊

նել համարիմ. և դուզնաքեայ առերևոյթ ինչ հաւանականութիւն՝ եթէ ըստ քմաց իմոց իցէ՝ անժխտելի համարի: Յամենայն ժամ երբ մեղանչեմ՝ խնդրեմ զՏէր ախորժելեաց իմոց, և օգուտ ինձ համարեալ մերթ զխծրիծ ինչ, մերթ զհեշտութիւն, և մերթ զանարգ ինչ շահ, ախտիւք կրիցս արդարև. դաւաճանեմ մարդացելոյ Որդւոյ Աստուծոյ: Յոյժ սիրեմ զանձն իմ՝ յոյժ սիրելով զՏէր և զհաճոյս առօրեայ կենացս. և զի անձնասիրութիւն իմ հրապուրէ զիս, կուրացուցանէ, և ամենայն աղիտից իմոց լինի առիթ, որպիսի հիգութիւն է ինձ՝ կրել ընդ իս ուր և երթիցեմ՝ զչարագոյնն թշնամեաց իմոց, զսէր անձին:

Եւ ո՞ւր թողում զբան մտաց իմոց, ո՞ւր զհաւատս, ո՛վ Աստուած իմ. յորժամ լաւագոյն գրեմ անձին զընդունայն ինչ հեշտանս, քան զշնորհս քո սուրբ և զփրկութիւն իմ յաւիտենական: Եւ զի՞նչ օգտիցեն ինձ ամենայն սփոփանք կենցաղականք, եթէ թշնամանս քեզ գործիցեն և հոգւոյ իմոյ կորուստ: Եւ իցէ՞ ինձ արժան վայելել առ վայրկեան ինչ, և անդ յանվախճան տանջանս մատնիլ: Աստուած իմ, տուր ինձ հոգի ուղիղ, զգոյշ և հզօր, առ 'ի վարել մեծաւս այսու ճշմարտութեամբ, եթէ զօգուտ իմ և զբարի 'ի քեզ միայն մարթ է ինձ գտանել, ո՛վ գերագոյնդ բարեաց և ամենայն ինչ իմ, 'ի կենցաղումս և 'ի յաւիտեանն:

Ուշ եղեալ քննեցից յո՛ր ինչ առաւել հակամէտ իցեմ, կամ յիմէ՞ խորշիցիմ. քանզի դիւրին է ինձ յայտնիկ սխալակ կարծեօք խաբել զանձն: Դատեսցէ Աստուած և զաստուածաբանութիւն՝ զոր ես ըստ քմաց իմոց յօրինեմ:

Է. Թողումն այն գլխաւորաց ժողովրդեանն.

ժողովակ էր չարութեան 'ի մասնութիւն կենաց տեառնն տերանց և փրկչին աշխարհի, ըստ կանխագուշակութեան Մարգարէին. և ոչ մի ինչ սահմանեցաւ 'ի նոցանէ՝ որոյ չէր սահմանեալ 'ի սկզբանէ յերկինս: Ասաց Կայիափաս. Լաւ է թէ մի ոք մեռանիցի վասն ժողովրդեանս փրկութեան. և 'ի յաւիտենից վճռեալ էր այս առ 'ի յԱստուծոյ. քանզի զամենայն որդիսն Ադամայ 'ի մահ դատապարտեալ աստուածային վճռոյն, չմնայր այլ հնար ազատութեան և փըրկութեան նոցա, բայց միայն Աստուածամարդոյն մեռանելով ընդ նոցա: Զարաչար միտս ասաց Կայիափաս, այլ աստուածայինն իմաստութիւն գիտաց զչարութիւն նորա 'ի կատարումն իւրոց խորհրդոցն վարել. և որ ինչ 'ի յաւիտենիցն սահմանեալ էր՝ այն միայն եղ 'ի գլուխ:

Միտ դիր, հոգի իմ, և տես, զիարդ ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի Քրիստոսի. և որ յերկրի աստ խորհին զնմանէ, և որ իսկզբանէ հաստատեալն էր յերկինս: Եւ, ո՜հ, քանի՜ հլութեամբ խոնարհի պաշտել զարդարութիւն Աստուծոյ յանիրաւութեան մարդկան, 'ի գերագոյն առաքինութիւնս կրթելով զսիրտ իւր: Բացերևագոյն օրինակ պարտուց իմոց նմա նմանող լինելոյ: Բազում անգամ ցասնում և տրտնջեմ և գժգմնիմ, զի կամ խօսին զինէն, կամ անիրաւին ինչ ինձ. և եթէ ձախողիցէ ինչ՝ տխրիմ և տագնապիմ: Եւ ուստի՞ այս. բայց եթէ յանխորհրդաբարս կելոյ. զի ոչ վերամբառնամ զաչս իմ 'ի յուշ ածել, եթէ ամենայն ինչ արդար և գաղտնի դատաստանաւ Աստուծոյ պատահէ:

Աստուած իմ, որ իշխող ես ամենայն զօրութեանց և ուղղութեանց, տպաւորեա ուժգին յոգւոջ իմում զճշմարտութիւն զայս հաւատոց, եթէ յամենայնի՝ որ առ 'ի քէն տնտեսի՝ երկըր-

պատգելի են արդարութիւն քո և ողորմութիւն: Եւ արդ դնեմ 'ի մտի խոնարհել առաջի ամենակալ տէրութեան քում և հնազանդել յամենայնի: Զայս պարտիմ և զայս կամիմ առնել. և զանգիտեմ միայն՝ թէ պակասիցէ ինձ հաստատութիւն 'ի կատարումն առաջադրութեանս. քանզի 'ի բազում և յանթիւ փորձոյ ծանուցեալ գիտեմ զյողդողդութիւն մտացս. վասն այնորիկ 'ի զօրութիւն գթութեանց քոց ապաւինիմ, ով Տէր: Ցամենայն դէպս որ թէ հանդիպիցին՝ կամ անհամբոյրք կամաց կամ ներհակք զգայութեանց, տուր ինձ յիշել զի առ 'ի քէն առաքին, և ընդունել խոնարհութեամբ և պատկառանօք. տուր ինձ հաւատալ, եթէ ողորմութիւն քո տնօրինեաց զնոսին. զի տարայց առաքինաբար համբերութեամբ. տուր ինձ հանապազ յուսալ 'ի քեզ, թէպէտ և 'ի վտանգս անդ հասանիցէ ինձ և 'ի կենաց զրկիլ:

Ըստ օրինակին Յիսուսի հնարեցայց հանել բարի 'ի չարէն. սիրեցից զատելիսն իմ. աղօթեցից վասն թշնամանչաց իմոց, և օրհնեցից զՏէր՝ յորժամ յանհամբերութիւն ինչ դրդուիցիմ:

Ընթրիք Քրիստոսի 'ի Բեթանիա:

Ը. Հաճոյ եղև Քրիստոսի զի 'ի պատմութիւն չարչարանաց իւրոց յօդեսցի և զոր արար Մագդաղենացին յընթրիսն Բեթանիայ, վեց աւուրբք յառաջ քան զմահ իւր: Կինն այն երբեմն մեղաւոր և ապա ապաշխարող՝ յայժմուս նկատելի է գերածայրեալ 'ի կատարելութեան, 'ի հեղուլն զանօթ պատուական նարդեան իւղոյն 'ի գլուխ

և յոտս Փրկչին. զաստուածութիւն նորա ճանաչելով 'ի գլուխն, զմարդկութիւն՝ յոտսն. յօծման գլխոյն յայտ առնելով զսէրն աստուածային. յօծման ոտիցն՝ զսէր ընկերին. որպէս թէ այս իսկ իցէ քրիստոնէականն կատարելութիւն։

Կանխեաց Մագդաղենացին և առաջին գտաւ քան զամենեսին 'ի պատուել զանարգական մահն Քրիստոսի, օծանելով զմարմին նորա ազբրասամիկ իւղովն, որով օծանեն զաւագ մարդկան մարմինս մինչև իջուցեալ 'ի գերեզման։ Այլ մեծագոյն ևս կայ 'ի նկատել։ Կշտամբեն զնա ոմանք իբրու զի վայրապար վատնիցէ զիւղն մեծագին. այլ նա չանսայ ինչ նոցա. անյողդողդ առատութեամբ չդադարէ 'ի գործոյն, և թոյլ տայ ասել զոր կամինն։ Զեն ինչ նմա փոյթ կարծիք և զրոյցք մարդկան. շատ է ինքեան գիտել զի հաճոյ ինչ առնէ Յիսուսի. վասն այնորիկ և Յիսուսի կամք եղեն՝ զի ընդ ամենայն աշխարհ քարոզեսցի անմոռաց պատիւ նորա։

Պիտոյ է ինձ ունել զՄագդաղենին 'ի վարդապետ և 'ի բարեխօս։ Երջանիկ համարի սրբուհին այն՝ զի էօծ զՅիսուս. այլ չիցէ՞ և ինձ իշխանութիւն՝ նմին նման գործել։ Նարդեան իւղով օծանի գլուխն Յիսուսի՝ յորժամ թէ ոք աստուածային սիրոյ իղձս վերընծայիցէ. օծանին ոտք նորա՝ եթէ ոք գործս սիրոյ ընկերին կատարիցէ։ Եւ ո՞ արգելուցու զիս առնել զայսոսիկ։

Աստուած իմ, գիտեմ զոր պարտն է ինձ առնել, և կարէի և կամէի իսկ առնել, սակայն առնեմ ոչ։ Սակս առաջադրեմ յաղօթս իմ՝ գործել միշտ վասն սիրոյ քո, և պարապիլ 'ի գործս հոգևոր և մարմնաւոր ողորմութեանց 'ի պէտս ընկերին. այլ 'ի հանդիպել առթին՝ քանի՜ հեղգ և վատ գտանիմ։ Ակնածութիւն 'ի մարդկանէ զօրանայ 'ի սէր անձին իմոյ. և դոյզն մի ինչ

յետ կացուցանէ զիս 'ի բարի բարի հրահանգաց․ և առ 'ի չարամեցուցանել զոք ըստ աշխարհի՝ ապախտ առնեմ զկամօք քովք, Տէր։ Այլ դու Յիսուս, որ օծեր զսիրտ Մագդաղենացւոյն շնորհօք Հոգւոյդ սրբոյ, մինչև նորա օծեալ էր իւղով զմարմին քո, օծ և զօրացո նովին հզօր քաղցրութեամբ զսիրտ իմ։ Բարեխօս լեր վասն իմ, Մագդաղենացիդ սուրբ, առ 'ի հաստատուն կալ հոգւով ընդդէմ ամենայն ակնառութեան 'ի մարդկանէ։ Կեցցէ Յիսուս, կեցցեն առաքինութիւնք․ և թող զոր կամին ասասցեն աշխարհասէրք։ Տէր է իմ օգնութիւն։

Զետ պատասխանի Մագդաղենին այպանողաց իւրոց, վասն այնորիկ պաշտպան եկաց նմա Յիսուս։ Այսպէս անկցի և 'ի վերայ իմ գութ Յիսուսի, եթէ ունիցիմ համբերութիւն և խոնարհութիւն՝ 'ի չարախօսելն զինէն։

Թ. Մի յանգոսնողաց Մագդաղենացւոյն է Յուդաս, որոյ ունելով զարկղ ողորմութեանցն 'ի պարէն առաքելական ընտանեացն, և սովորեալ 'ի գողութիւն՝ անձին սեփականելով ըզտուրսն, զչարի ցասմամբ մեծաւ, եթէ ընդէ՞ր ոչ տուաւ նմա մարդասիրաբար իւղն այն, զոր ակն ունէր վաճառել և շորթել 'ի գնոյն․ վասն այնորիկ խորհի վաճառել զՅիսուս, և հայթայթել զոր ոչն յաջողեաց ագահ ցանկութեամբն։

Տե՛ս, թէ որպէս զիւղն զայն ազնիւ՝ որ 'ի հոտ սրբութեան լինի Մագդաղենւոյն, փոխէ Յուդաս 'ի խորհուրդ նենգութեան․ 'ի դատապարտութիւն իւր կրթելով զայն՝ որով միւսն արդարացաւ։ Եւ ոչ այժմ ինչ սկսանի հեգն այն թիւրիլ, այլ վաղու իսկ սովոր էր 'ի գողութիւն․ և վասն ունակացելոյ յինքեան ախտի արծաթսիրութեանն՝ ոչ զարհուրի 'ի մտաբերելն ըզ-

մանկութիւն աստուածայնոյ վարդապետին ։ Այլ տես և զայն, եթէ զիա՛րդ գիտելով քաջ Յիսուսի զչարութիւն Յուդայի, ոչ մերժէ զնա յառաքելական խմբէն, ոչ դարշի յընկերութենէ նորին, այլ տանի համբերութեամբ։ Զի՞նչ ուսցուք յօրինակէ անտի Յուդայ, և զի՞նչ յօրինակէն Քրիստոսի։

Ո՞րքան իրք են որովք մարթ էր ինձ փառաւորել զԱստուած, և ես նոքիմք ընդ վայր հարկանեմ զնա։ Զիա՞րդ վարեցիմ մարմնովս. զիա՞րդ հոգւովս։ Ո՛, որպիսի՛ չարաչար վարմունք։ Ամենայնի որ յիս՝ արժան էր բուրել հոտ անուշութեան առաջի աստուածայնոյ վայելչութեան քո, Տէր. և հոտ բարւոյ օրինակի առ ընկերս. իսկ այս որպիսի՛ հոտ զազիր չարութեան բուրէ յինէն։ Ո՛վ Յիսուս, եթէ չեմ արժանի շնորհաց սիրելոյ զքեզ՝ որպէս զՄագդաղենին, շնորհեա ինձ գոնեա չմատնել զքեզ որպէս զՅուդաս. տուր ինձ ճանաչել զբռնացեալն յիս մոլութիւն, և առնել զայն 'ի կրթութիւն մեռելութեան, զի մի՛ լիցի ինձ 'ի գործի կորստեան։ Յուսամ յողնութիւն քո, և հաւատամ զի մի՛ ելցէ 'ի դերև յոյս իմ։

Ածելով և զայս զմտաւ, ո՜վ Փրկիչ իմ, զի յանձն առեր ունել 'ի թիւս առաքելոց քոց և զոմն՝ որ միշտ զոչ հաճոյն քո գործելով տայր քեզ համբերել հանապազ կալոյց զայդ յօրինակ ինձ՝ նմանելոյ քեզ, յորժամ դէպ լիցի ինձ կեալ ընդ այնոսիկ՝ որք առ թերութեան ինչ իւրեանց՝ տաղտկալիք ինձ թուիցին։ Ո՛վ, ո՜րքան մեծ է խտիր ընդ քեզ և ընդ իս, տէր Յիսուս։ Դու ամենեւին իսկ սրբութիւն գոլով համբերեցեր Յուդայ, առն դիւամոլի. իսկ ես որ բազմապատիկ թերութեամբքս կարօտ եմ գթութեան և ներողութեան ամենեցուն, ոչ ողորմիմ և ոչ

համբերեմ այնմ որ ոչ իցէ ըստ քմաց իմոց: Խորշիմ գարշիմ՚ի սմանէ, յախուռն նախանձու բերիմ ընդ նա, և ՚ի թեթև ինչ իրաց գայթակղիմ և վրդովիմ: Կամիմ զի ըստ բարուց իմոց յարմարեսցին այլք. իսկ ես չառնում յանձն զիջանել այլոց: Ուստի՞ է ինձ այս ոգի ամբարտաւան և անհանգիստ: Ո՛վ քաղցրագութ Յիսուս, տուր ինձ ուսանել ՚ի քէն զհամբերել ընկերին, ոչ առ երեսս ինչ կամ մարդելուզութեամբ առ ականէ խոնհեմանալով, այլ քրիստոնէական համբերութեամբ վասն սիրոյն Աստուծոյ:

Լաւ համարեցայց զմեռելութիւն անձին՝ գըթասիրելով առ նա յորմէ զզուիմս, քան ըզխորդս և զձաղկանս: Ո՛վ, քանի՜ մեծ շնորհ է գիտելն համբերել առ ՚ի պահել զսէր եղբայրական:

Մուտք Քրիստոսի յԵրուսաղէմ:

Ժ. Գիտելով Յիսուսի զի մերձենայ ժամանակ չարչարանաց իւրոց՝ կամի և ինքն մերձենալ ՚ի տեղին ուր չարչարելոցն է, այսինքն ՚ի քաղաքն Երուսաղէմ. որպէս զի յայտնի լինիցի եթէ ինքն իսկ է որ սիրէ և խնդրէ զչարչարիլն: Բազում անգամ մտեալ էր նորա ՚ի քաղաք անդր, այլ ոչ շքով և հանդիսիւ՝ որպէս յայժմուս, յորում փափագէ զի տօնախումբ շքով և խնդութեամբ մուծցեն զնա: Զիք ինչ առանց խորհրդոց: Խընդութեամբ ելեալ երթայ յԵրուսաղէմ, քանզի ժամ է արդ չարչարանաց և մահուան իւրոյ ՚ի խաչին. և որքան մերձենայ ժամանակ կատար-

մեան փրկութեան աշխարհի 'ի խաչին, այնքան առնէ եռանդն սիրոյ սրտին Յիսուսի:

Արժան է միտ դնել վարուց գնացից նորա 'ի ճանապարհի աստ, զիմրդ մեծափառ միանգամայն և խոնարհ. ոչ ծիրանիս արկեալ զանձամբ և ոչ 'ի կառս ամբարձեալ ոսկեակապս՝ շուրջ ունելով զբազմութիւն սպասակացն. այլ 'ի հանդերձս գծուծս և 'ի վերայ անարգ գրաստու. զի ոչ կամի ահ արկանել որպէս իշխան հզօր, այլ սիրելի լինել հեզահայեաց կերպարանօքն: Ժողովուրդն զարդարէ զճանապարհն, հնչեն երգք գովութեան, բառնան ոստս ձիթենեաց, 'ի նշանակ գալստեան Թագաւորի խաղաղարարի: Տաա է հայելն իսկ յանպաճոյճ տարազ Թագաւորին՝ առ 'ի միտ առնուլ զհեզութիւնն որով գայ, ոչ յընկճել և 'ի նուաճել, այլ 'ի դիւրել և 'ի փրկել զհպատակս իւր:

Զարմացուք ընդ գթութիւն նորա և ընդ խոնարհութիւն: Եւ ընդէ՞ր, ո՛վ Յիսուս, այդպէս ինքնակամ փութաս աճապարես ընդառաջել նախատանաց, ձաղանաց, փշոյ և խաչի: Ոչ զարմանամ ընդ մարտիրոսն՝ եթէ ուրախութեամբ դիրկս արկին տանջանաց, քանզի առ սէր քո կրէին. իսկ դու վասն ո՞յր ուրուք յանձն առնուս զչարչարանսդ: — Վասն իմ երթաս 'ի տանջանս. և առ 'ի չարչարել վասն իմ՝ այդպէս խայտաս և խնդաս: Յապուշ հարկանիմ և դողեմ. Ո՜վ սէր Յիսուսի, սէր անսահման: Այլ առ այդքան մեծի յօժարութեանդ 'ի չարչարել վասն իմ, զի՞նչ տացից ընդ խորշումն իմ 'ի չարչարելոյ վասն սիրոյ քո: Զի՞նչ տացից և 'ի կըչիռ ձգելով զքո խոնարհութիւնդ ընդ իմում ամբարհաւաճութեան: Ի տեսանելն իմ զքեզ գալով նստեալ 'ի յաւանակի, թուիմ տեսանել զվարդապետ բազմեալ յաթոռ յուսուցանել ինձ

զխոնարհութիւն, և տալ 'ի միտ առնուլ, զի թէպէտ և զամենայն զփրկութիւն կամիցիս, այլ խոնարհք միայն փրկին: Միշտ և հանապազ գոհութիւն և փա՛ռք քեզ, Քրիստոս, որ փրկութեան անձին իմոյ փափագելով՝ ոչ միայն ուսուցանես ինձ զխոնարհութիւն՝ այլ և ներշնչես յիս զնոյն: Գգուելի խոնարհութիւն, սիրեմ զքեզ և խնդրեմ: Այլ դու, ո՛վ ամենակարող Տէր, որ խնամես զմի ոք միայն՝ որպէս զամենեսին առհասարակ, և զամենեսեան՝ որպէս զմի ոք, օգնեա ինձ 'ի հիգութեան իմում, զի մի՛ 'ի փափագելս իմում խոնարհ լինել, զխոնարհութիւն իսկ 'ի նանրութիւն ինձ փոխեցից:

Առիթ խոնարհութեան ինձ եղիցի չգիտելս թէ արդարև սիրեցե՞մ զԱստուած, թէ արդարև իցեմ խոնարհ: Թուի ինձ երբեմն եթէ ունիցիմ ինչ իմաստ խոնարհութեան և սիրոյ. այլ ո՛ գիտէ թէ չիցե՞ն անձնասիրութեան իմոյ պատրանք:

ԺԱ. Յորժամ բազմացոյց Յիսուս սքանչելեօք զհացն, կամէր ժողովուրդն թագաւորեցուցանել զնա, իսկ նա արհամարհեալ զպատիւն՝ խոյս ետ և թաքեաւ. իսկ այժմ լուեալ զգովասանութիւն համօրէն ժողովրդեանն, և զմանկտւոյն անգամ, որք ամբարձեալ զձայնս իւրեանց կարդան զնա թագաւոր 'ի տանէ Դաւթի, ոչ միայն հաճի ընդ այս, այլ և յանդիմանէ զնախանձ ժողովրդապետացն՝ զի զկծին ընդ օրհնաբանութիւնսն, և հաստատէ զճշմարտութիւնն՝ թէ ինքն իցէ թագաւոր: Այլ արժան է գիտել, թէ որպիսի՛ ոք թագաւոր իցէ:

Թագաւոր է որ երկնչի կարգիլ 'ի թագաւոր. զի ոչ է արժան մարդկան կացուցանել զնա թագաւոր, որ էն թագաւոր և որդի թագաւորի,

ոչ մարդոյ այլ Աստուծոյ. ոչ երկրաւոր այլ
երկնաւոր, ոչ ժամանակեայ այլ մշտնջենաւոր։
Խնդայ ընդ անմեղ բարեբանութիւնն, քանզի
յառաջագային 'ի լուսոյ հաւատոց, որովք ձա-
նաչի լինել Ճշմարիտն Մեսիա եկեալ 'ի փըր-
կութիւն աշխարհի։ Զոր օրինակ 'ի ծննդեան նո-
րա տօնս կատարեցին հրեշտակք երգելով ըզ-
փառս 'ի բարձունս, այսպէս և յերթալն արդ
'ի մահ՝ տօնեն ժողովուրդքն, փրկիչ զնա ձանա-
չելով. և մաղթանօք Դաւթի աղաչելով զնա
փրկել զինքեանս։

Յուշ լիցի մեզ, զի նախագուշակեալ գոլով
հանդիսակերպս այս երևոյթ Քրիստոսի 'ի ձև
Թագաւորի, 'ի հրաւիրել անդ Մարգարէին զԵ-
րուսաղէմ ելանել ընդ առաջ նորա և ընդունել,
հարկ է և մեզ համարել պատուիրեալ զնոյն հրա-
ւէր։ Ո՛վ հոգի իմ, ահա գայ և առ քեզ Քրիս-
տոս արքայակերպն փառօք՝ առ 'ի գործել զյա-
ւիտենական փրկութիւն քո։ Ո՛հ, և ընդէ՞ր ոչ
ունիցիս և դու զպարզմտութիւն և զխոնարհու-
թիւն ժողովրդեանն այնորիկ և զմանկտւոյն, առ
արժանապէս օրհնաբանելոյ զնա և աղերսելոյ
զի փրկեսցէ զքեզ։ Ե՛լ, ել հոգի իմ, ընդ առաջ
նորա՝ վառեալ խնդութեամբ, խոնարհութեամբ
և եռանդեամբ սիրոյ։

Ո՛վ Յիսուս իմ, զի՞նչ պիտոյ էր քեզ առ 'ի
մարդկանէ լինել Թագաւոր, որ Թագաւորդ ես
անմահ ամենայն յաւիտենից։ Լինել քո Թագա-
ւոր իմ՝ ոչ է քեզ պատիւ, այլ պատուասիրել։
Թագաւոր իմ ես դու եկեալ անբաւ ողորմու-
թեամբ յաշխարհ՝ առնել զիս Թագաւոր, և տալ
ինձ զարքայութիւն փառաց քոց։ Այդպէս ե-
ղիցի։ Այլ օգնեա ինձ, Տէր, առ 'ի փրկել զիս.
քանզի առանց քո ոչ կարեմ առնել դատաստան
ուղիղ, և 'ի գլորումն երթամ։ Ի ձեռս քո յանձն

առնեմ զգործ փրկութեան անձին իմոյ. դու ուղղեա, դու օգնեա. քանզի քեզ միայնոյ մարթ է տալ ինձ շնորս և լոյս և աղագս հասանելոյ 'ի կէտն իմ վերջին: Ես այսպէս համարիմ, զի եթէ փրկեցայց՝ արարեալ իցէ իմ զամենայն զոր մարթ իցէ առնել յաշխարհիս յայսմիկ. իսկ եթէ ոչ փրկեցայց՝ չիցէ իմ արարեալ և ոչինչ, թէպէտև այլ բազում ինչ արարեալ իցէ իմ յաշխարհի աստ: Այլ դու, Տէր Յիսուս և փրկիչ իմ, 'ի գործս յայս փրկութեան՝ որ է իմ ամենայն ինչ, մի ընկեներ զիս յերեսաց, այլ օգնեա հզօրեղապէս:

Վառեցից 'ի սրտի իմում ճշմարիտ տենչանս յաւիտենական փրկութեան, ընդ փափագանացն Քրիստոսի առ 'ի փրկել զիս: Զինչ արար Քրիստոս առ 'ի փրկել զիս... Եւ ես զի՞ գործեմ: Զի՞նչ ինչ պարտ իցէ ինձ առնել առ 'ի փրկել զանձն իմ:

ԺԲ. Ի յիշատակ ազատութեանն Իսրայելի 'ի ծառայութենէն Եգիպտոսի, ամի ամի մեծահանդիսիւ զոհէին Հրեայք 'ի զատկին զառն մի անարատ, զոր նշանակօք ուրախութեան բերէին 'ի տունս Իսրայելի հինգ աւուրբք յառաջ քան զզոհագործութիւնն: Կամեցեալ և Յիսուսի կատարել լիովին զօրինական ծէսն, և զի ինքն իսկ էր Գառնն անարատ՝ որ պատրաստելոց էր յայնմ պասեքի 'ի փրկութիւն ամենայն որդւոց մարդկան, երթայ յԵրուսաղէմ հնգալից հըրճուանօք, ստուգապէս հինգ աւուրբք յառաջ քան զխաչելութիւնն և զզոհելն 'ի Գողգոթա: — Նա ինքն է քահանայապետն մեծ, որ մատուցանելոց է զզոհն առ Հայրն յաւիտենական. այլ և ինքն իսկ է զոհն պատրաստեալ 'ի քաւութիւն մեղաց աշխարհի. վասն այնորիկ շքով և

հանդիսիւ մտանէ յԵրուսաղէմ առ 'ի պատ_
րաստել և ցուցանել զանձն թէ ինքն իցէ Տէր_
մարիտ գառնն Աստուծոյ՝ օրինակեալն 'ի հին օ_
րէնս և մատնացոյց յայտնեալն 'ի կարապետէն
Յովհաննէ Մկրտչէ:

Ո՛հ, ո՞ կարիցէ տեսանել զոր կրէրն յայնժամ
Յիսուս 'ի սրտին, նկատելով զանձն մերթ որ_
պէս քահանայ և մերթ որպէս զգառն զոհի:
Քահանայ. և որպիսի՛ արժանաւոր կրօնական
խորհուրդք ելանէին 'ի սրտէն 'ի պատիւ մեծի
փառացն Աստուծոյ: Գառն. և որպիսի՛ եռան_
դուն նուիրգործութիւնք սիրոյ, դիտելով զի 'ի
սպանդ վարիցի ցաւօք և անարգանօք, 'ի քաւու_
թիւն՝ ոչ իւրոց ինչ մեղաց՝ այլ օտարացն: Այլ
մեք զմտաւ ածցուք զոր մեզն է անկ. եթէ Հր_
էայք գառն զոհէին 'ի յիշատակ ազատութեան
իւրեանց յեգիպտական տառապանացն, ինձ
զինչ անկ իցէ նուիրել վասն ազատութեան ի_
մոյ 'ի յաւիտենական տանջանաց դժոխոց:

Առ քեզ նախ, Հայր յաւիտենական, խոստո_
վան լինիմ զմեղս իմ. և ամօթ երեսաց իմոց ընդ
զազիր անառակութիւնս իմ՝ լիցի քեզ 'ի գովու_
թիւն և 'ի նշանակ, եթէ քեզ վայելէին փառք 'ի
յաւիտեանս, իսկ ես չարաչար անիրաւեցայ 'ի
թշնամանելն իմ զքեզ: Կցորդեալ ապա զիղձս
մաղթանաց իմոց ընդ ըղձից Յիսուսի, ընդ նմին
ընծայեմ քեզ զանձն իմ ողջոյն: Բանի անբանա_
կան կիրք են 'ի ներքս յիս՝ հպարտութեան,
ցասման, նախանձու, որկորստութեան և ցան_
կութեան՝ 'ի սադրանաց մարմնոյ և աշխարհի.
— զայդ ամենայն կամիմ այժմիկ զոհել քեզ ընդ
գառին քում անարատի, ո՜վ Աստուած իմ. այլ
տուր ինձ հոգի կատարելոյ զզոհն, և ընկալ
զնուիրումնս զայս զիմ ընդ պատարագին արդա_
րութեան՝ զոր ահա մատչի Քրիստոս մատուցա_

նել վասն իմ։ — Յիսուս իմ, որ երթաս այդպէս խնդալից մեռանել վասն իմ, տուր ինձ շնորհս նմանելոյ յայսմ, զի և ես յանձն առից զմեռելութիւնս այնու բերկրութեամբ սրտի՝ որ տայ պատարագին հոտ անուշութեան։

Զատուցից զընտրագոյնն կրից որ յիս, և մատուցից յօժարագոյն եռանդեամբ, 'ի գոհութիւն երախտեաց փրկագործութեանն, որ անճառելի տուրք են գթութեանն Աստուծոյ։

ԺԳ. Մեծ մխիթարութիւն է տեսանել զՅիսուս յերթալն յԵրուսաղէմ՝ ընկերելով առաքելոցն և ժողովրդեանն, որք պատուեն զնա և մեծարեն աղաղակելով բարձրաձայն. Օրհնութիւն որդւոյ Դաւթի, Օրհնեալ որ գայ յանուն Տեառն. քանզի անձն աստուածային ճանաչի և փառաւորի 'ի մարդկայնումն բնութեան։ Այլ յ'ածելն զմտաւ՝ եթէ ահա աւուրք հինգ, և մի յաշակերտացն մատնեսցէ զնա, միւսն ուրասցի և ամենեքին թողցեն զնա, և ժողովուրդն որ արդ ձայն վերացուցեալ թագաւոր կարդայ զնա՝ ամբաստանեսցէ զնոյն իբրև մոլորեցուցիչ, և չար քան զաւազակ գրելով՝ մեծաձայն աղաղակեսցէ և խնդրեսցէ 'ի խաչ հանել զնա, զի՞նչ արժան իցէ ասել ընդ փոփոխութիւն այսպիսի։

Զայս օրինակ պատահէ յաշխարհի. 'ի փառաւորութենէ՝ յանարգութիւն, յովսաննայէ 'ի Խաչեսցի՝ յոյժ հակիրճ են անցքն։ Վաղվաղակի թօթափին հեշտութիւնք. արագ արագ անցանեն անուանեալքն փառք, բարեբաստութիւն և զուարճութիւնք. և ամենայն քաղցրութիւն փոխի 'ի դառնութիւն։ Տե՛ս արդ, անձն իմ, եթէ արժա՞ն իցէ մեծ ինչ համարել զաշխարհ. և կալ քեզ յաւակ օրինակի վարուց գնացից զմեծս զայս Ճշմարտութիւն, եթէ Ամենայն ինչ ընդու-

նայնութիւն է. և ունայնութիւն ունայնութեանց է զակատելն յընդունայնութիւնս: Անցանէ ամենայն ինչ, և չիք սփոփանք մնայուն, բայց որ ինչ 'ի յաւիտենից երանութիւնն է, 'ի խոստացեալն անձանց աստուածապաշտից:

Այս օրինակ է և իմոյս բարուց: Յամենայն նուագս յոր մատչիմ առ խորհուրդս ապաշխարութեան և հաղորդութեան, որպիսի՜ գովութիւն, որպիսի՜ սէր, որպիսի՜ պատիւ ոչ ընծայեմ Քրիստոսի: Մեծարոյ քան զամենայն ինչ զնա համարիմ. զնա ասեմ սիրել 'ի վեր քան զամենայն ինչ. և յետ սակաւու միոյ՝ քանիցս անարգագոյն համարիմ զնա քան զվատթար ինչ հեշտ կամաց, և ընդդէմ նմին դարձեալ՝ թշնամանեմ: Այսօր գոչեմ Ովսաննա՜, և վաղիւն՝ Խաչեացի՜: Եւ յողդողդութիւնս այս ոչ այնքան ապականելոյ բնութեանս չարաչար արդասիք են՝ որքան ունակացեալս չարութեան:

Աստուած իմ, դու տեսանես զիս և ճանաչես մինչև զհիւլեայ մի էութեան իմոյ: Բազում անգամ անջատիմ 'ի քէն, քանզի և ճշմարտապէս կցորդիմ երբէք ոչ. և քանզի սիրով միայնով մարթ է կալ անանջրպետ 'ի քէն, ոչ միանամ ընդ քեզ՝ քանզի ոչ սիրեմ զքեզ: Եւ ընդէ՞ր, ո՜ ճշմարիտ յաւիտենականութիւն և յաւիտենական ճշմարտութիւն, ոչ սիրիցեմ զքեզ: Աստուած իմ, տուր ինձ 'ի խոստովանելս զհիգութիւն իմ և ողբալ զնոյն: Սիրեմ զընդունայնութիւն, և ոգւով չափ յարեալ եմ յընդունայնութիւնս: Ահաւասիկ պատճառք չարեաց իմոց: Այլ դու կորո՛ յինէն զսէր զայս ունայնութեանց. և հեղ յիս զքոյին սէր. ամրացո յիս զսէր զնոյն. ամրացո՛ յիս երկիւղիւ քով զփափագ՝ որով ըղձամս այժմիկ սիրել զքեզ միշտ և անսալ պատուիրանաց քոց:

Պատճառք ոչ կալով յառաջադրութեանս իմում՝ է և այս, զի յանձն ապաստան լինիմ։ Այսուհետև յԱստուած միայն եղէց ապաստան, և Աստուած եղիցի ապաւէն իմ։

ԺԴ. Յառաջեալ Քրիստոսի 'ի Ճանապարհին՝ պատուելով և բարեբանելով 'ի ժողովրդենէն, և մերձ եղեալ յԵրուսաղէմ, 'ի նշմարել անդ զքաղաքն՝ յարտասուս հարկանիմեծապէս։ Լայ, զի գործով հաստատեսցէ զոր քարոզեացն, եթէ «Երանի՜ որ լան այժմ»․ լայ, ոչ զի 'ի քաղաքի անդ դատապարտելոց է 'ի մահ, այլ զի տեսանէ զաւերակս նորին․ քանզի արդար դատաստանքն Աստուծոյ մատնելոց էին զնա 'ի ձեռս թշնամեացն՝ յաւեր և յապականութիւն։ Ոչ զխանդարումն շինուածոց քաղաքին արտասուէ, այլ զքաղաքացիսն, վասն մօտալուտ չարեացն և յաւիտենական կորստեան հոգւոցն․ որ զի 'ի փրկութիւն ամենեցուն գալով նորա 'ի մեռանել, և նոքա առ մեղս իւրեանց ոչ հասցեն 'ի փրկութիւն, և կորիցեն զկորուստ յաւիտենից։

Միտ դիցուք, զիա՞րդ կղկաթ կաթոգի է Յիսուս 'ի սէր հոգւոց։ Վասն ամենեցուն երթայ հեղուլ զարիւն իւր, և վասն փրկելոցն և վասն մերժելոց․ այլ վասն սոցին դատապարտելոց՝ ոչ միայն զարիւն իւր հեղու, այլ և գետս արտասուաց իջուցանէ։ Եթէ Երուսաղէմ օրինակ իցէ եկեղեցւոյ՝ յորում գտանին փրկելիք և դատապարտելիք, մի՞ արդեօք գտանիցիմ և ես 'ի թիւս յետնոցս, որք վասն չարութեան իւրեանց լացուցանեն զբարեսէրն զՅիսուս։ Լայ նա 'ի վերայ այնոցիկ՝ որք թուլացեալք յառաջին ջերմօջերմ բարեպաշտութենէն, 'ի ծուլութիւն և 'ի մեղկութիւն հասանեն։ Իցեմ արդեօք և ես 'ի սոցունց։

Յիսուս քաղցրագութ, նկատեմ զարտասուսդ իբրև հեղեալս վասն իմ՝ որդւոյ եկեղեցւոյ քոյ, այլ դրժողի շնորհացդ, ապերախտի գթու-թեանցդ, և 'ի վտանգի եղելոյ յաւիտենական դատապարտութեան՝ եթէ ոչ անձին զգաստ լի-նէի իմ: Ա՜հ, քաւ լիցի, քաւ լիցի թէ դատա-պարտիցիմ: Պարտաւոր էի և եմ իսկ պարտա-ւոր դժոխոց՝ վասն մեղաց իմոց. այո, լա՛ց, լա՛ց և լիմ վերայ, ով սիրելի Որդի Դաւթի. այլ ար-տասուքդ որ 'ի տրտմութիւն են քեզ վասն կո-րուսելոցն՝ լիցին քեզ 'ի մխիթարութիւն վասն իմ արժանի լինելոյ ապաշխարութեան, որով հնար է ինձ փրկիլ: Գիտեմ զի խնդութիւն մեծ լինի քեզ և վասն միոյ հոգւոյ՝ որ ապաշաւեալ դարձցի առ քեզ. արդ տուր և ինձ գալ 'ի զղջ-ջումն՝ առ որ մեծաւ մարդասիրութեամբ յոր-դորես զիս և կոչես: Զօրութեամբ արեան քո և արտասուաց՝ յուսադնիմ փրկիլ. այլ զոր օրի-նակ հոսանք արտասուացդ և արեանդ՝ արդիւնք են մեծաքորբոք սիրոյդ որ վասն իմ, այնպէս և աղաչեմ զքեզ, մարդասէր Փրկիչ, փրկեա զյու-սացեալն 'ի քեզ, և ամրացո զյոյս իմ վառելով յիս զսէր՝ որով արժան է ինձ սիրել զքեզ: Կե-ղակարծ են ամենայն առաքինութիւնք՝ առանց սիրոյ. այս սէր միայն աներկեան կացուցանէ զիս 'ի կեանս և 'ի մահու՝ 'ի հաղբից գեհենական թշնամւոյն:

Աղաչեցից զամենօրհնեալ Կոյսն՝ զի ընծայես-ցէ մեծվայելչութեանն Աստուծոյ զարտասուսն հեղեալս 'ի Քրիստոսէ, և տացէ և ինձ կաթել շիթս ինչ արտասուաց զղջման:

ԺԵ. Լալով 'ի վերայ Երուսաղէմի՝ արգահատի Քրիստոս 'ի տրտմութեանց խուրոց. ողորմագին աչօք հայելով 'ի վերայ թշուառական քաղաքին՝

պատճառս արտասուաց խորոց ծանուցանէ զանզգայութիւն նորին և զոչն զգուշանալ 'ի վտանգաց: Զասէ ինչ այլ, բայց միայն, «Եթէ գիտէիր»· որ է ասել. եթէ գիտէիր, եթէ կանխեալ տեսանէիր զ'ի վերայ քո եկեալ հասեալ ցասումն Աստուծոյ, լալով լայիր արդեօք և դու և պէտ առնէիր վտանգիդ· այս են չարիք քո. կործանումն քո մերձեալ է, և դու հոգաս ինչ ոչ: Հայր խնամոտ սրտաբեկ լինի և լայ յորժամ տեսանիցէ զորդին զմահ ջերմանեալ վասն զընկենլոյ զդեղն՝ որ 'ի բժշկութիւն նորա մատուցանի: Զնոյն օրինակ ցաւէ Յիսուս· քանզի տեսանէ զքաղաքն, որ առ երի ունելով զհնարս փրկութեանն՝ առաւել կամի կորնչել քան դարմանիլ: Որպէս Փրկիչ՝ գայ այց առնել նմա, և լուսաւորել զընակիչս նորին· այլ սոցա ունայնութեամբք զօշոտեալ՝ կափուցանեն զաչս խորեանց առ Ճշմարտութիւն, և անարժանք գտանին փըրկութեան. քանզի ապախտ առնեն հայթհայթել զայն. վասն այսորիկ այսպէս կնքէ 'ի վերայ նորա Յիսուս զհառաչանս իւր. Երուսաղէմ, 'ի կորուստ մատնիցիս. և պատճառք կորստեանդ այս իսկ է, զի զչարիս քո տեսեր և զայցելութիւն քո ոչ ծանեար:

Կանխասացութիւնս այս խրատ մեծ է զգուշութեան վասն իմ: Քանի՜ քանի՜ ներշնչական դրդմամբք, լուսովք, ներքին և արտաքին ազդմամբք՝ այց առնէ ինձ Քրիստոս, զի զգուշացայց անձին իմոյ, ապաշաւեցից զխոտորնակ գնացս իմ, և վառեցայց 'ի կրթութիւն առաքինութեանց: Յայցելութիւնս յայսոսիկ հաւանեալս առ յինէն կամ զընկեցեալս՝ հաստատեալ կայ փրկութիւն իմ յաւիտենական կամ կորուստ յաւիտենական. և ես զիա՞րդ վարիցիմ. — Աւա՜ղ հիգութեանս իմոյ. քանի՜ անզգաստ, ան-

փոյթ և անջան եմ ես: Դեգերեալ զբաղիմ զաւօրեայ կենօքս, և յաւիտենականութեանն մերձեցելոյ չառնեմ ինչ փոյթ: Սուրբ լինել ըղձամ, և զսրբութեանն հնարս ոչ խնդրեմ. և զգալով յանձին իմում զպատերազմն աւաղելի հեշտից զգայութեանց՝ ընդ զուարթարար տըրտմութեանց հոգւոյ, տակաւին կամ մնամ տարտամեալ, և չգիտեմ հոգւո՞ր իցեմ թէ մարմնաւոր: Այլ դու, ո՛վ Յիսուս իմ, Աստուած իմ, ողորմեա ինձ: Դու գիտես զչարիս իմ. զի կոյր եմ առ լոյս քո, խուլ առ ձայն քո, խիստ և ժանտ առ գգուանս գթոյ քո. և արդ որպէս հիւանդ տառապեալ՝ դիմեմ առ բժիշկդ բարեգութ:

Վէրք իմ մահացու՝ 'ի սրտի իմում է, խղխայթեալ և ապականեալ աշխարհային սիրով. և եթէ ցարդ խաբէի զանձն իմ սիրել զքեզ, արդ 'ի վերայ հասանեմ պատրանացս, և զգամ զի ոչ սիրեմ զքեզ. կեղծեալ և սուտ է սէր իմ, բանիւ չափ և ոչ արդեամբք: Եւ զի՞նչ լինիցի ինձ՝ եթէ զայս օրինակ հասից յաւարտ կենաց իմոց: Տուր ինձ, Տէր, յօգուտ արկանել զողորմութիւնս քո, մինչ դեռ ևս կայ ինձ ժամանակ:

Պատուական յոյժ համարեցայց զազդեցութիւնն որովք մերձ ընդ մերձ այց առնէ ինձ Տէր. երկեայց յայնմանէ յորմէ չերկնչէրն Երուսաղէմ, 'ի ցասմանէն Աստուծոյ. և զուն գործեցից սկիզբն առնել յօժարութեամբ նորոց կենաց:

Հրաժեշտ Յիսուսի 'ի Մօրէ իւրմէ:

ԺԶ. Ի դէպ է յետուլ յանցս չարչարանաց Փրկչին՝ խորհրդածութիւն մի բարեպարիշտ և եռանդնաշարժ, որ կարի իսկ հաւանական է, թէպէտ և ոչ աւանդեալ յաւետարանս: Քանզի յամենայն ժամ պատուամատոյց և հնազանդ էր Քրիստոս ամենօրհնեալ մօր իւրում, չառնելով երբէք զանց որ ինչ անկն էր և պատշաճ բարեմոյն որդւոյ, ոչ թուի հաւանութեան եթէ 'ի մերձենալ ժամանակի մահուանն՝ երթեալ իցէ 'ի կատարումն մեծագունին այնմ գործոյ, որ է փրկութիւն աշխարհի, առանց ինչ ծանուցանելոյ մօրն և հրաժարելոյ 'ի նմանէ. մանաւանդ զի և էր նմա յայտնեալ զերացն այնոցիկ խորհուրդս գաղտնիս: Եւ արդ մարթ է խորհրդածել, եթէ Յիսուս սիրելին քան զամենայն որդիս մարդկան, իբրև դարձ արար 'ի Բեթանիոյ, ոչ գտանելով իջեվանս յԵրուսաղէմ, յետ ընթրեացն եմուտ 'ի սենեակ մի ընդ մօր իւրում, մօր սիրականի քան զամենայն մարս: Խռովի Յիսուս 'ի սրտի իւրում ընդ ցաւսն՝ զոր ազդիցէ մօր իւրում 'ի ծանուցանելն նմա. խռովի և Մարիամ մինչև ինչ լուեալ, քանզի կասկածանօք գուշակէ զոր ինչ անցանելոցն է ընդ որդին իւր. այն զի և հռչակեալ էր խորհուրդ դաւաճանութեան քահանայապետիցն:

Որդին՝ Աստուած է, այլ և մարդ. և զի յանձն էառ կրել զամենայն տկարութիւնս մարդոյ՝ չէք երկբայել եթէ կրեաց և զամենայն տխրութիւնս զոր յայնպիսի դէպս կրէր ամենայն մարդ, և առաւել ևս դառնապէս, քանզի և առաւել էր

գութ սրտի նորա: Մինչդեռ յիշէր 'ի պարուզին զբաժանումն հոգւոյն 'ի մարմնոյն՝ տխրէր մահուչափ. և արդ համարեցի՞մք զնա անկարեկիր ընդ բաժանումն յամենասիրելի մօրէն:

Իսկ ես երբ գործեցայց 'ի գութ՝ եթէ անգործ կամ այժմիկ: Տես, հոգի իմ, զորդիս զայս և զմայրս այս: Հառաչէ որդին զի առնելոց է գործ զոր չարարին երբէք, մշտացուցանել զմայրն ամենասիրելի. զգայ և մայրն զինչ կամիցին առնել հառաչանք սրտի որդւոյն իւրոյ: Յայս չարչարանս Յիսուսի և Մարեմայ՝ չունին մասն Հրեայք: Տառապեցուցանէ զՅիսուս՝ Մարիամ իբրև մայր իւր. և զՄարիամ տառապեցուցանէ Յիսուս՝ իբրև որդի իւր:

Ո՛վ Յիսուս, որդի ամենասիրուն, ո՛վ Մարիամ, մայր ամենասիրուն. 'ի ծունր անկանիմ հոգւովս առ ոտս ձեր: Տուր ինձ, ո՛վ Մայր, սակաւիկ մի 'ի սիրոյդ որով սիրես զՅիսուս. տո՛ւր ինձ, ո՛վ Յիսուս, սակաւիկ մի 'ի սիրոյդ՝ որով սիրես զՄարիամ: Սէր ձեր փոխանակաւ տառապեցուցանէ զձեզ. զայս սէր խնդրեմ և ես՝ առ 'ի լինել ձեզ կարեկից: Մայր Յիսուսի, որ ոչ անարժան համարիս լինել և ինձ մայր, և սիրես զիս սիրով առաւել քան զամենայն մարս, ողորմեա ինձ: Լի ես ողորմութեամբք. և զի ողորմելի եմ ես քան զամենայն ողորմելիս, ակն ունիմ լսելի լինելոյ աղաչանացս՝ շնորհօք սրբոյ սիրոյն զոր ժտիմս առ 'ի քէն:

Կարեկից եղէց Յիսուսի և Մարիամու 'ի ցաւագին տառապանս նոցին, և յուշի ունելով զի ես իսկ եմ պատճառք ցաւոց նոցին, յորդորեցից զսիրտ իմ 'ի ցաւ զղջման մեղանացս, վասն որոց երթայ Փրկիչն 'ի չարչարանս և 'ի մահ:

ԺԷ. Քանզի էր Քրիստոսի սիրտ գործական,

այլ և արխական, ոչ է մեզ անդէպ համարել՝ եթէ որդիական գորովանօք և աստուածայրականն զօրութեամբ այսպիսի ինչ բարբառիցի ընդ Մարեմայ. « Մայր իմ, ահա հասեալ է ժամ փրկագործութեան աշխարհի՝ պատարագաւ իմոյ անձին. ահա մատնիմ՝ի ձեռս ատեցողացն զիս, որք արասցեն ընդ իս զոր և կամին զչար: Շնորհ ունիմ զտառապանացն և զվշտաց՝ զոր կրեցեր վասն իմ: Եւ զոր օրինակ ցուցեր հաճութիւն կամաց ընդ մարդեղութիւնս իմ, ցանկամ զի հաճեսցիս և այժմ ընդ մահս իմ: Հաւանեաց զի թողից զքեզ և երթայց կատարել զկամս Հօր իմոյ յաւիտենականի »: Զայս Յիսուս. իսկ զի՞նչ Մարիամ: — Ի խոր խոցեալ յանհնարին ցաւոցն՝ հազիւ կարէ յօդել բանս ինչ բեկբեկեալս նուաղկատանօք և հառաչանօք. « Ո՛վ սիրելիդ իմ Յիսուս, հայր իմ, որդի իմ, և ամենայն ինչ իմ. ո՞չ իցէ հնար ինձ մեռանել փոխանակ քո. մեռայց գէթ ընդ քեզ: Մինթէ պակասիցէ՞ն Հօր քում որ ամենակարողն է՝ այլ հնարք՝ի փրկութիւն աշխարհի, առանց քո մեռանելոյ »: Կամէր արդեօք աւելի ինչ ասել տատրակն խորհրդական, այլ արտասուք հեղձամղձուկ առնեն զնա. և գիտելով զի ոչ է մարթ փոփոխել յաւիտենական վճռոյն, հաւանի կամացն աստուածայնոց՝ լիովին կամակցութեամբ, գերազանցեալ իմն քան զանձն՝ վեհագոյն առաքինութեամբ: Այլ սակայն մեծապէս ներգործէ՝ի նմա ցաւոյն մորմոքումն: — Ո՜հ, թէ տեսանէիր զնա, հոգիդ իմ, յորպիսի՜ յարտասուս ոչ հարկանէիր: Այլ ո՞ բաւիցէ հասու լինել ցաւոյ Որդւոյս այս և Մօրս այս: Ոչ է ումեք կար իմանալ զցաւս նոցին, քանզի և ուժգնութեան սիրոյ նոցին չիք ոք հասու:

Արժան է ինձ զմտաւ ածել եթէ վասն էր

հաւանի Մարիամ ընդ մահ Յիսուսի. — քանզի վասն իմ երթայ 'ի մեռանել. զի որպէս վասն ամենեցուն առ հասարակ՝ այսպէս և վասն իմ առանձինն մեռաւ նա: Կարէր Մարիամ ասել ցորդին. Իսկ դա ո՞վ է՝ վասն որոյ արժան համարիս տալ զպատուական կեանս քո. դու որդի ես Աստուծոյ, իսկ դա որդն անարգագոյն: Այլ լռեաց ինչ յայսպիսեաց ասելի, և հաւանի խանդաղատեալ ընդ իս՝ զի յանձն առնուցու Քրիստոս վասն իմ զմահ դառնագառն:

Ո՜վ մայր գեղեցիկ սիրոյ և մեծի ցաւոյ, քանի՜ ինչ պարտական եմ քեզ. գոհանամ զամենամեծ սիրոյդ որ վասն իմ. և պաղատիմ հրեշտակաց երկնից՝ բիւր գոհութիւնս ընդ իմ մատուցանել քեզ: Իսկ դու սիրտ իմ, որպիսի՞ ինչ սիրտ իցես՝ եթէ ոչ վառիցիս սիրով Մարիամու՝ որ ամենեւին սէր է վասն քո, և առ սէր քո յանձն առնու զրկիլ յորդւոյ իւրմէ: Ծա՜նր թուիցի քեզ տակաւին հրաժարել 'ի հաճոյից ինչ զգայութեանց՝ մեռուցանելով զախորժակդ, մինչ նա զայսպիսի յանձն առնու մեռելութիւն դժընդակ, հաւանել ընդ մահ Յիսուսի:

Ի խորհրդածելս 'ի չարչարանս Քրիստոսի՝ յիշեցից ամէպ զԿոյսն ցաւագին, և եղեց ցաւակից. այլ բիւր արտասուս թէ հեղից վասն նորա՝ ոչ կշռեսցեն զմի ևեթ արտօսր նորին հեղեալ վասն իմ:

ԺԲ. Ազդմամբ երկնային լուսոյ՝ Մարիամ կանխագէտ լեալ չարչարանացն Քրիստոսի՝ կրէր երկար մարտիրոսութիւն, և ոչ մի ժամ դուլ և դադար ունելով ցաւոց սրտին. այլ այն ամենայն յաւէք առ ոչինչ թուէին առ դառնակսկիծ ցաւովն զոր զգայ 'ի տալ որդւոյն զհրաժարականն ողջոյն: Յորժամ կարդայ զորդեակն երկոտասան-

ամենի՝ արդարև տառապեցաւ յոյժ, քանզի ոչ գիտէր ուր իցէ նա, այլ արդահատէր յուսով գիւտին, որպէս և եղեն իսկ: Իսկ այժմ գիտէ թէ յո՛վ երթայ. — 'ի կապանս, 'ի ձաղկանս, 'ի պատկիլ փշովք և 'ի խաչ ելանել. և ոչ մի նշոյլ մխիթարութեան գտանելով՝ զգայ այժմիկ զանցս սրոյն ընդ անձն իւր, ըստ նախագուշակութեան ծերունւոյն Սիմէոնի: Նախատեսութեամբ չարչարանացն՝ Յիսուս 'ի վիշտ էր մօրն, այլ և 'ի մեծ սփոփանս՝ քաղցրիկ կենակցութեամբն, քանզի հանապազ զհետ նորա երթայր մայրն: Իսկ յանջատման արդ նորին իսպառ՝ որպիսի՞ ցաւօք ոչ ցաւեսցի: Ո՜վ Ճշմարիտ շուշան մաքրութեան և սիրոյ՝ 'ի մէջ փշոց: Մայր է և այրի, և խնամոտ առ ամենեսին 'ի բուսոյ բարուցն և յառաքինութենէն. և տեսանէ զի 'ի մահ երթայ միածինն իւր և անմեղ որդի՝ 'ի ծաղկի հասակին, և Աստուած Ճշմարիտ՝ յորում ամենայն գանձ իւր և սէր ծրարեալ է: Ո՛ տայր աչաց իմոց արտասուս առ այսքան սրտառուչ պատահար: Տպաւորեսցին յաղիս իմ ցաւք՝ զոր 'ի քեզն կրեցեր, ո՜վ Մարիամ:

Այլ ակն արկցուք և 'ի Քրիստոս: Անհնարին տառապանօք թողու նա զմայր իւր ամենասիրելի՝ առ սէր իմ, առ 'ի խնդիր և 'ի գիւտ մոլորելոյ ոչխարիս: Ո՜վ, որպիսի՜ սէր վասն իմ: Իսկ ես զի՞ առնեմ վասն նորա: — Փախչիմ 'ի խնդրողէն, և թողում լքանեմ զգտողն իմ. թողում զնա՝ զի զհետ երթայց անբարի ախորժակաց իմոց. չառնում յանձն առ սէր նորա թողուլ զաշխարհային ինչ ըղձանս իմ, զկարծիս ինչ կնճռեալս, զչնչին հաճոյս ինչ կամաց: Ո՜վ ապերասան ապերախտութիւն:

Այլ առաջի քո խոնարհիմ, ո՜վ հովիւ և փրկիչ սիրարկու. և սորջացեալ ընդ յիմարական

չարութիւնս իմ՝ ցաւիմ ընդ լքանելն իմ զքեզ անսխրողաբար, և ընդ սիրելն զարարածս քան զարարիչդ: Խոստովանիմ զի չար արարի 'ի թողուլն զանբաւ բարիդ, և հայցեմ 'ի քէն թողութիւն ողորմութեան: Գթութիւն, ողորմութիւն, ով Յիսուս, վասն ցաւոցն զոր զգացեր 'ի թողուլն զմայրն քո, և վասն ցաւոց մօր քո 'ի թողուլն զքեզ: Զհետ բերմանց զգայութեանցս գնալով թափառնակի, մոլորեալ կորեայ չարաչար: Խնդրեա, զիս, Տէր, և գիտ զանձն իմ. ոչ ևս փախեայց, մի թողից զքեզ յաւիտեան:

Յիշեցից զցաւս Յիսուսի և զՄարիամու՝ զոր վասն իմ ցաւեցան. և 'ի փոխարէն երախտեաց՝ ոչ հրաժարեցայց առ սէր նոցին համբերել կարեւոր ինչ աղխտից հասելոց և կամաւոր ինչ վշտակրութեանց:

Ընթրիք Յիսուսի 'ի վերջնումն Պասեքի:

ԺԹ. Որպէս և զամենայն օրէնս հանապազ ընոյր Քրիստոս անթերի և անվրէպ, մինչև 'ի կատարած կենացն, նա և զօրէնս զատկին կամի ընուլ անպակաս. բայց ունի 'ի մտի և այլ ինչ զատիկ յառաւել փառս Աստուծոյ և յառաւել օգուտ մեր: Պասքայն Հրէից յիշատակ էր անցից նոցա 'ի գերութենէ Փարաւոնի յազատութիւն. որ և առակ օրինակի է անցից մերոց 'ի մեղաց 'ի շնորհս, 'ի պատժոց՝ 'ի փառս: Այս է պասեքն ցանկանալով ցանկացեալ 'ի Փրկչէն, յաւիտենական ազատութիւն մեր. և թէպէտ առնել զպասեքն կամ 'ի մահ երթալ՝ նոյն բան է վասն Քրիստոսի, այլ և յայսր վերայ՝ փափա-

պէ նա զատկիս․ որպէս և բազում անգամ ճառէր զայնմանէ, և հանապազ մեծաւ տենչանօք։

Յիշեցից զի 'ի կամելն Յիսուսի կատարել զզատիկն աշակերտօք իւրովք, վաղվաղակի պատրաստեն զայն՝ ըստ օրինակի որ պատուիրեցաւ նոցա։ Եւ ո՞ր իցէ զատիկն՝ որում անձկ է և ինձ ցանկալ և փափագել ամենայն փութով և ջանիւ։ Հոգի իմ, եթէ անցք իցեն պասեքդ, ահաւադիկ այդ պասեքն է հրամայեալ քեզ յԱստուծոյ․ անցանել յանկարգ սիրոյ երկրայնոցս և անցաւորաց՝ 'ի սէր երկնայնոց և մշտնջենաւորաց։ Երջանիկ մեզ զատիկ՝ եթէ փութասցուք առնել զանցսիկս զայս։ Ո՛ն անդր, ընդէ՞ր յապաղիցեմք անցանել 'ի դաղջութենէս՝ յեռանդն, յընդունայնութենէ՝ 'ի ճշմարտութիւն, յաշխարհականաց կենաց՝ 'ի կեանս արդարև քրիստոնէականս։

Ահաւասիկ, Տէր, անսամ ազդեցութեանց քոց յոգիս, և գոհութիւն մատուցեալ սիրոյդ որ առ պասեքդ ցուցդին, կամիմ և ես նմանել քեզ՝ առնելով ճշմարիտ պասեք ճշմարիտ փոփոխութեամբ վարուց։ Օրհնեալ է ողորմութիւն քո՝ որ եբաց զականջս իմ 'ի լսել ձայն քո, և զաչս իմ 'ի լոյս քո։ Ամաչեմ և ատեամ զընդունայն և զգարշելի հեշտութիւնսն՝ յոր ծախեցի վայրապար զկեանս իմ։ Առ սէր սիրոյդ խոստովան լինիմ զմեղս իմ սրտիւ բեկելով․ զի յայսմ հետէ դու միայն լիցիս ինձ քաղցրութիւն և բերկրութիւն։ Ոչ ևս կամիմ լինել որպէս էի։ Հրաժարիմ 'ի քէն, աշխարհ, և յամենայն ամբարհաւաճ պարծանացդ։ Հրաժարիմ 'ի քէն, մարմին, և յամենայն ախտաւոր ցանկութեանցդ։ Հրաժարեմ 'ի քէն, սատանայ, և յամենայն խաբէական հրապուրանացդ։ Աստուած իմ, հոգի իմ, երանութիւն իմ յաւիտե-

նական, այսոքիկ իցեն ինձ հանապազօրեայ խորհուրդք և խղճք: — Այլ զինո՞րդ իշխեմ այսպէս համարձակաբանել, որպէս թէ կարող իցեմ իմնվանն կալ հաստատուն յառաջադրութեանս իմում: Ո՛վ Յիսուս իմ, եթէ յաջողեսցի ինձ առնել անցին՝ ելանելով ՚ի ստրկութենէս յորում հեծեմս ընդ բռնութեամբ չարաչար կրիցս, և մտանել յազատութիւն ընտրելոց քոց որդւոց, քո փառք իցեն յայնժամ. քանզի արդիւնք են շնորհացն զոր վասն իմ ստացար. զոր և հայցեմ այժմիկ շնորհօք ամենազօր արդեանց քոց:

Զմտաւ ածից թէ քանի կարևոր է ինձ դառնալ ՚ի գաղջ և ՚ի պղերգ վարուց իմոց. և յորդորեցից զանձն իմ ՚ի տենչ վերանորոգութեանս, առ ՚ի պատրաստել զիս առ չարչարանս Քրիստոսի, որոյ խորհուրդ՝ օրինակի սատ յընթրիս նորա վերջինս:

Ի. Գիտելով առաքելոցն եթէ փոյթ մեծ է Քրիստոսի վասն կատարման պասեքին մերձեցելոյ, հարցանեն զնա յառաւօտու հինգշաբաթուն, թէ ո՞ւր կամիցի զի պատրաստիցեն զընթրիս պատարագի զատկին. և Յիսուսի կամեցեալ կատարել զօրէնսն, որ յԵրուսաղէմ միայն պատուիրէր առնել զպասեքն, ընտրէ զՊետրոս և զՅովհաննէս, այսինքն է զաշակերտն սիրող և զաշակերտն սիրեցեալ, և տայ նոցա պատուէրս կարևորս, երթալ յայս նիշ կողմն քաղաքին, գտանել զայն նիշ մարդ, և ասել ցնա. Վարդապետ ասէ, մերձեալ է ժամանակ իմոյ մեկնելոյ. ՚ի տան քում կամիմ առնել զպասեքն: Հնազանդեալ աշակերտացն՝ երթան, գտանեն, խօսին. և վաղվաղակի պատրաստեն զամենայն:

Զմտաւ ածից նախ, թէ ո՛րպէս Քրիստոս միակ թագաւորն երկրի և երկնից՝ այնքան աղ-

քառասցեալ է վասն մեր, մինչև չունել յԵրուսաղէմ ոչ տուն և ոչ իշխանս, և հարկ լինել նմա յօտարի տան առնել զպասեքն: Էր իսկ նորա ասացեալ, եթէ Աղուեսուց որջք գոն, և թռչնոց երկնից բոյնք, և Որդւոյ մարդոյ չիք տեղի ապաստանի: Որպիսի՜ շառագունանք երեւաց ինձ, որ յայսքան փափկութիւնս հասեալ եմ, այսքան երագ քրթմնջեմ թէ պակասիցէ ինձ ինչ: Ո՞ւր իցես 'ի սրտի իմում, աղքատութիւն հոգւոյ, աղքատութիւն ըղձից՝ որ կարի յոյժ պիտանացուդ ես փափագողացն բարութեանց երկնից:

Զմտաւ ածից երկրորդ անգամ զպատիւ անծանօթի տանուտեառնն, զորոյ զտուն ընտրեաց Յիսուս 'ի կատարումն հրաշափառ խորհրդոց իւրոց. զվեհագնեայ հնազանդութիւն տանուտեառնն, որոյ գիտելով չափ զդատակնիքն ընդդէմ Քրիստոսի, եթէ հանդերձեալ է կրել հալածանս և վիշտս 'ի գլխաւորաց ժողովրդեանցն՝ 'ի լսել սոցա եթէ վանատուր լեալ է նմա, 'ի վերայ այսորիկ՝ ասպնջականէ զնա յօժարափոյթ մարդասիրութեամբ, ոչ զանձին վտանգ խորհելով և ոչ զմարդկային աչառանս:

Բարեսէրն Յիսուս լսելի առնէ և ինձ զձայն իւր քաղցր, եթէ կամի գալ 'ի տուն հոգւոյ իմոյ և առնել զպասեքն իւր, այսինքն է՝ զյաւիտենական փրկութիւն իմ: Ո՜վ, քանի՜ն մեծ է ինձ շնորհս այս, զի Որդի Աստուծոյ բարձրելոյ յիշէ զիս և պատուասիրէ եկաւորութեամբ իւրով: Ո՜հ, զի այսպէս հաճոյ է քեզ, ո՜վ տէր, ե՛կ աղէ. պատրաստ է քեզ տունն՝ երբեակ սենեկօքն, որ են Յուշ, Միտք և Կամք. ցաւէ ինձ միայն զի ոչ է սա քեզ արժանի, վասն այսորիկ և աղաչեմ զքեզ՝ զարդարել զնոյն քոյին լաւութեամբք: Այո՛, եկ եկ, Յիսուս, զի սպասեալ մնամ քեզ.

քո է բոլորովիմբ սիրտ իմ. Թէպէտ և գիտեմ զի յաղագս այսորիկ կան մնան ինձ հալածանք 'ի սատանայէ, յաշխարհէ և յիմոյս իսկ ապստամբ մարդկութենէ, այլ ոչ զանգիտեմ և ոչ յիմէքէ, 'ի քեզ գոլով ապաստան:

Զգուշացայց անձին մի յարիլ յիրս աշխարհայինս. և առ 'ի լինել համախոհ Յիսուսի՝ զինեցայց արութեամբ ընդդէմ ակնառութեանց մարդկայնոց, յամենայնի զաստուածայինն ժառլով օգնականութիւն:

ԻԱ. Նաև յառաջագոյն ամ ըստ ամէ կատարէր Յիսուս զզատիկն՝ ըստ հրահանգաց օրինին, և ջերմ ըղձիւք ըստ կրօնասէր սրտին. քանզի տեսանէր 'ի գառնն զոհին՝ զօրինակ հանդերձեալ զենման իւրոյ 'ի խաչին: Այլ 'ի յետնում պասեքին՝ յորում վճարելոց էին օրինակքն 'ի կատարումն գրելոցն, խորագոյնս ևս մխի 'ի ճշմարտութիւնն՝ որ յայնմ իսկ գիշերի սկիզբն առնուցուն: Զգառնն զատկական զենուն ըստ օրինացն՝ յերեկոյի հինգշաբաթին. և 'ի նմին գիշերի ձերբակալ լինի. որպէս զի այն գիշեր նախաշաւիղ լինի չարչարանաց նորին և խաչելութեանն:

Ըղձակաթ սրտիւք մտ դիցուք Ընթրեաց Յիսուսի, և բարեսէրն Տէր ոչ թողցէ զհոգիս մեր քաղցեալս: Զի՞նչ ունիցի ասել Յիսուս բազմեալ 'ի սեղանի, տեսանելով 'ի սկաւառակին զգառնն զենեալ և խորովեալ, և յօշեալ 'ի մասունս առ 'ի տալ բաժինս աշակերտաց իւրոց, և ուշ յինքն լինելով 'ի գառնն ճշմարիտ, որ յետ սակաւուց միոյ խաչեսցի և սպանցի: Ոչ ուրեք երբեք կատարեցաւ այսպիսի տօն, յորում զուգակից գտան ստուերն և լոյս, պատկերն և ճշմարտութիւն, այսինքն է օրինակն և օրինա-

կեալն: Ի տեսիլ գառինն յիշատակի զատկին որ յԵգիպտոս գործեցաւ, զմտաւ ածէ Յիսուս զխուրն պասեք, յորում անցցէ յաշխարհէ աստի առ Հայր իւր: Եւ գիտելով զի յանձին իւրում աւարտին օրինակք հնոյ օրինին, և զի հասեալ է ժամանակ՝ յորում ոչ ևս զենուցուն շնչաւորք 'ի նուէր Աստուծոյ, խոնարհի մարդկութեամբ իւրով և նուիրէ զանձն իւր առ Բարձրեալն, խնդրելով 'ի նմանէ, զի որ ցայն վայր ոչ արհա-մարհեաց զզոհս գառանցն՝ վասն օրինակելոյն 'ի նոցանէ, առաւել ևս հաճեսցի ընդ պատարագ անձին իւրոյ՝ զոր մատուցանէր 'ի փրկութիւն հոգւոց: Ո՜վ. քանիպատիկ խորհուրդք են, մանաւանդ սիրոյ՝ 'ի միում յայսմ խորհրդեան. քանզի նովիմբ կատարին հին օրէնք և սկսանին նոր օրէնք շնորհաց:

Զո՞ր շնորհս մատուցից քեզ, Հայր յաւիտենական, որ ետուր ինձ ծնանել 'ի կողմն երկրի՝ ուր պաշտին կրօնք ուղղափառք, և փառաւորի անուն քո նուիրագործութեամբ Ճշմարիտ գառինն՝ որ է Որդի քո ամենասուրբ: Նուիրեմ և ես զնա վասն մեղաց իմոց նովին մտօք՝ որով նայն նուիրեաց քեզ զանձն իւր յԸնթրիսն յայն, վասն մեղաց ամենայն աշխարհի: Եւ զի՞նչ այլ պատուականագոյն և հաճոյագոյն հնար իցէ ինձ մատուցանել 'ի հոտ անուշութեան մեծի վայելչութեան քում: Զիք հաճոյագոյն և արժանընդունակ քեզ քան զորբազան զայս մարդկութիւն. և զիա՞րդ ոչ շարժեսցէ սա զքեզ 'ի գութ ողորմութեան դիւրագայթ բնութեանս իմոյ: Այս է պատարագն արդարութեան՝ զոր հաճիս զի մատուսցի յեկեղեցւոջ քում. և որով կամիս զի յուսասցուք 'ի քեզ: Յուսամ ես 'ի Յիսուս Քրիստոս, և Յիսուսիւ Քրիստոսիւ՝ 'ի թողութիւն մեղաց իմոց. ակն ունիմ շնորհաց, ակն

ունիմ փառաց. և ակն ունիմ թէ ոչ'ի գերև ել-
ցէ և ոչ յամօթ լիցի յոյս իմ:

Նուիրեցից սմա զՅիսուս առ Հայրն երկ-
նաւոր՝ կենդանի հաւատով, եթէ նա է իմ առա-
տապարգև շնորհ քաւութեան. և տացից բանի-
Յովհաննու Մկրտչի. Ահա գառն Աստուծոյ, ա-
հա որ բառնայ զամենայն մեղս աշխարհի։

ԻԲ. Յորժամ զգամք եթէ հասանելոց է'ի վե-
րայ մեր վիշտ մեծի վտանգի՝ տագնապիմք և նե-
ղասրտիմք: Ոչ այսպէս և Քրիստոս: Գիտէ զի
ահա առ դուրս կան չարչարանքն, և ոչ ևս ա-
ւուրք ինչ մնան, այլ ժամք ևեթ. և յանխռով
խաղաղութեան կայ հոգի նորա, յայտ առնելով
եթէ Որդի է Աստուծոյ ճշմարտապէս և փրկիչ
աշխարհի, նաև այնու իսկ՝ զի ոչ փախչի, այլ և
սպասեալ մնայ անվեհեր՝ մահուն: Եւ զոր օրի-
նակ հայր՝ որոյ հանդերձեալ իցէ երթալ'ի սահ-
մանս հեռաւոր, մեծաւ ևս խանդաղատանօք և
գորովանօք խօսի ընդ որդւոցն, այսպէս և Քրիս-
տոս 'ի յետին Ընթրիսն խօսի ընդ առաքելոցն
գերահրաշ քաղցրութեամբ: Յայտնապէս իսկ
պատմէ նոցա որ ինչ անցք անցցեն ընդ նա յայնմ
գիշերի, որպէս զի մի յայլ յայլմէ լեալ ընդար-
մասցին՝ որպէս 'ի յանկարծահաս պատահարէ.
և զայն ևս գիտասցեն՝ զի եթէ 'ի չարչարանս և
'ի մահ գնայ՝ իւր ինքեան յօժարութեամբ և ա-
ռաւ կամօք է: Պարզէ նոցա զխորհուրդն փըր-
կագործութեան, որոյ սկզբնաւորեալ վարդա-
պետութեամբ և սքանչելագործութեամբք իւ-
րովք, կատարումն առցէ չարչարանօքն և մա-
հուամբ. և ապա բանայ զսիրտ իւր՝ այսպէս ա-
սելով զուարթատես կերպարանօք. «Ցանկա-
լով ցանկացայ, 'ի վաղուց հետէ, զայս պա-
սեք ուտել ընդ ձեզ.» որ է վերջին պասեք զոր

առնեմ ընդ ձեզ, վասն այնորիկ և ցանկալի է ինձ. քանզի յայսմ և առլին արժանի եղեց յաւիտենիցն փրկութեան ամենայն որդւոց Ադամայ:

Թորհեցայց տեսից, ուստի՞ իցէ Յիսուսի այնքան մեծ փափագ առնելոյ զպասեքս զայս: Փափագ 'ի սիրոյ ծնանի. և զի սէր մեծ սիրեաց նա հանապազ զհոգիս մեր, ապա և մեծաւ փափագանօք տենչայ պասեքիս՝ յառաջընթաց երեկոյի մահուան իւրոյ, մխիթարելով 'ի տենչանս իւր՝ զի ձկտեալ էին 'ի կանգնումն նորոյ արքայութեան եկեղեցւոյ իւրոյ, և 'ի հայթհայթել մեզ հնարս յաւիտենական փրկութեան:

Ո՛վ ամենագութ փրկիչ, եթէ 'ի մեծէ անտի փափագանացդ որով փափագիս զսրբութիւն իմ և զփրկութիւն, էր և իմ գէթ մասն փոքրիկ ճշմարիտ ցանկութեան՝ 'ի սրբութիւն և 'ի փրկութիւն հոգւոյ իմոյ, որքան այլազգ լինէին այժմիկ գնացք վարուց իմոց: Կամիմ լինել բարի, բարիս գործել, յուղղութիւնս կրթիլ և փրկել զանձն իմ. այո՛, կամիմ զայն. այլ փափագ իմ հողմն իմն է՝ որ երթայ և գայ, արգասիք յողդողդ կամաց: Որ հաստատութեամբ ինչ կամիցի՝ ապաքէն և արդեամբ կրթի 'ի հնարս յաջողելոյ 'ի նոյն. իսկ ես զօր ամենայն 'ի պղերգութիւն հատեալ դանդաչեմ, սակաւ ինչ և կամ ոչ ինչ առնելով զոր պարտիմս: Ո՛վ բարի Յիսուս, բորբոքեա յիս զսէր քո. և բորբոքեսցի յիս ցանկութիւն առնելոյ զամենայն կամս քո: Կամիմ հաճոյ քեզ լինել, այլ կամք իմ տկարք են և զողփողփունք: Քեզ անկ է, Տէր, և զնոյն խնդրեմ 'ի քէն, զօրացուցանել զկամս իմ յառաջադրութիւնս իւր, և կարողացուցանել 'ի լրումն պարտուց իւրոց. որպէս զի եղեց արդարև սուրբ 'ի կեանս յայսոսիկ, և փրկեալ 'ի հանդերձեալ յաւիտեանն:

Որպէս փափագելով փափագեաց Քրիստոս չարչարանաց իւրոց առ սէր իմ, այսպէս և ես առ սէր նորա վառեցայց տենչանօք խոկալոյ և կրթելոյ 'ի նոսին. զի յայսմ իսկ հաստատեալ կայ բովանդակն սրբութիւն և յաւիտենական փրկութիւն:

Լուանայ Յիսուս զոտս Առաքելոցն:

ԻԳ. Յաւարտել ընթրեաց գառինն՝ մինչև բարձեալ զսպասսն՝ յառնէ Քրիստոս 'ի սեղանոյ անտի, և հոլովեալ զվերարկուն՝ ափածանի զիւրև զենջակ, արկանէ ջուր 'ի կոնք, և սկսանի լուանալ զոտս աշակերտացն: Զամենայն ինքնին գործէ, և չթողու ումեք սպասաւորել ընդ ինքեան: Այլ աւետարանիչն մինչև պատմեալ զգործն՝ յանդիման կացուցանէ զգերագոյն իմաստութիւն Փրկչին, զաստուածութիւն անձինն, զյաւիտենական ծնունդն, և զանբաւագոյն իշխանութիւն նորա 'ի վերայ ամենայն իրաց աշխարհի: Ամենայն ինչ խորհրդաւոր է աստանօր. և զի լուացումն այս պատրաստութիւն իմն է զոր նախակարգէ Քրիստոս չարչարանաց իւրոց, որպէս յամենայն պարագայս և դէպս սոցին անկ է քննել զչարչարեալն, արժան է և այժմիկ նկատել, թէ ո՞ է որ լուանայ զոտս: Անմարթ է հասու լինել խորոց խոնարհութեան նորա՝ եթէ ոչ վերասցին միտք յառնել 'ի բարձրութիւն գերազանցութեան նորին: — Յովհաննէս՝ մինչև զմարդեղութիւն Բանին Ճառեալ՝ զաստուածութիւն նորին յայտնեաց. որ-

պէս զի ծանիցի խոնարհութիւն Որդւոյն Աստուծոյ՝ յայնքան բարձրութենէն յայսքան նուաստութիւն իջելոյ. և արդ մատուցեալ 'ի ճառս չարչարանաց նորին՝ յիշեցուցանէ զաստուածութիւնն՝ որպէս զի պարզագոյն ևս նշմարիցի խոնարհութիւնն. և մինչև 'ի խոնարհութիւն խաչին եկեալ՝ պատմէ զխոնարհութիւնն բացափայլեալ 'ի վերնատանն. ասելով, եթէ որ տիեզերաց իշխանն էր՝ խոնարհեցաւ 'ի լուացումն ոտից առաքելոցն:

Իմանամ, հոգի իմ: Որդին Աստուծոյ էջ յերկնից 'ի փրկել զաշխարհ կորուսեալ. և զի հպարտութեամբ կորեաւ՝ զխոնարհութիւն կարգէ փոխանակ 'ի փրկութիւն: Տե՛ս զթագաւորն թագաւորաց, զամենակալն, 'ի գուճս անկեալ աղքատ ձկնորսաց, զիա՛րդ իւրովք ձեռօք լուանայ զոտս նոցին, զանարգագոյն սպաս ծառայի հարեալ. և գոչելով, Ո՜վ խորին և հիանալի խոնարհութիւն, ած 'ի վերայ. Իցէ՞ ուրեմն ամօթալի խոնարհութիւնն:

Ամաչեցեալ զարհուրիմ ընդ խոնարհութիւն քո, Տէր. և յօրինակէ այտի պատկառելով պատկառեմ ընդ ամաչելս իմ 'ի խոնարհել. և յամօթս այս ճանաչեմ քաջ զհպարտութիւն իմ: Զի ուստի՞ իցէ ինձ ամաչել ընդ թողուլ զվէճ ինչ հակառակութեան, կամ զկամահաճոյ ինչ կարծիս, կամ ընդ հեզութեամբ համբերել չարախօսութեան զինէն, զկծեցուցիչ ինչ բանի նաև անիրաւի: Այդմ ամենայնի պատճառք՝ զի հպարտեմ. և եթէ այնքան մեծ է ամօթ և դժուարութիւնս 'ի խոնարհել՝ յայտ ուրեմն է զի մեծ է և հպարտութիւնս իմ: Եւ զիա՞րդ մարթ իցէ ինձ, ո՜վ Տէր, հնարել հայթհայթել զխոնարհութիւն՝ որ ամենևին իսկ կարևորն է 'ի յաւիտենական փրկութիւն անձինս: Առ քեզ խոնարհեալ խըն-

գրեմ զշնորհդ զայդ. աղէ, վասն անչափ խոնարհութեանդ 'ի վերնատանն, բարձ վերայցո յինէն զանիծեալ ախտ հպարտութեան, և շնորհեա ինձ զգանձ քոյին սրբոյ խոնարհութեան:

Գուն եդից 'ի վերայ հասանել ճշմարտութեանս, եթէ լի եմ ես ամբարտաւանութեամբ, և թէ չունիմ մասն խոնարհութեան. և ոչ իսկ գիտեմ զինչ իցէ խոնարհութիւն. վասն այնորիկ յամենայն ժամու աղօթից ժտեցից յԱստուծոյ տալ ինձ խոնարհութիւն:

ԻԴ. Ոչ շատացեալ աւետարանչին յիշել զլուացումն ոտիցն, ծանուցանէ և զպատճառն. և այս իսկ է, ասէ, զի գիտէր Քրիստոս թէ որդի է Աստուծոյ, և զի զամենայն ինչ որ յաշխարհի է՝ եդ Հայր 'ի ձեռս իւր: Թուի ինձ եթէ չիցէ ինչ կցորդութիւն դերադունի պատճառիս ընդ գործոյն նուաստագունի. և սակայն խրատ մի խորհրդաւոր և կարևոր է մեզ այս:

Առաջինն յերանութեանց զոր վարդապետեաց մեզ Յիսուս՝ Աղքատութիւնն է հոգւով, որ իմանի խոնարհութիւն, ամենաբաւական 'ի ժառանգութիւն փառաց. որպէս և հրաժարումն յաշխարհական ընչից՝ յանկագոյն 'ի ժառանգութիւն մեծութեանց երկնից: Վասն այսորիկ իբրև Որդի Աստուծոյ խոնարհելով 'ի լուացումն ոտից աշակերտացն՝ ուսուցանէ մեզ առ ոտն հարկանել զհպարտութիւն, և ճանաչել զխոնարհութիւն՝ առաքինութիւն աստուածահաճոյ: Եւ 'ի լուանալ անդ զոտն այնու ձեռօք՝ յորս եդ Հայր զիշխանութիւն 'ի վերայ ամենայն աշխարհի, ուսուցանէ դարձեալ՝ ոչ 'ի սրտի այլ ընդ ոտիւք դնել զաշխարհ. այսինքն է, որպէս ցուցանէ Առաքեալն, ոչ յարիլ ըղձիւք յերկրաւորս, այլ մտօք և սրտիւք ամբարձե-

լովք՝ յերկինս անդր, ուր անկ է լինել քաղաքավարութեան մերոյ:

Քաջ միտ դի՛ր, հոգի իմ, յայս կէտ կարեւոր: Ի ստեղծանել Աստուծոյ զմարդն՝ կացոյց զնա տէր աշխարհի, և զամենայն արարածս արկ ընդ ոտիւք նորա. ուսուցանել կամելով, զի այնմ որում սահմանեալ են յաւիտենից երանութիւնքն՝ անկ է զամենայն առժամանակեայս առ ոտն հարկանել, և մի հաստատել 'ի նոսին զսիրտ իւր և զսէր: Իսկ յորժամ մարդս մեղօքն Ադամայ խոտորեցաւ յուղղութենէ սատի՝ 'ի ցանկութեան իւրում, զի՞նչ արարեալ Յիսուս 'ի վերանորոգել զնա՝ մեծաւ փափագանօքն 'ի փրկութիւն նորին. — զաշխարհ ամենայն 'ի բուռն ունելով. Ահաւադիկ (կամի իմն ասել ցաւաքեալսն), ահաւադիկ օրինակ նմա՝ որ կամիցի կեցուցանել զանձն իւր. զերկիր՝ երկիր նեղ համարել, և զամենայն երկրաւորս առաթուր հարկանել:

Իսկ ես զի՞արդ վարեցից զայսպիսի լսելով վարդապետութիւն 'ի քէն, Տէր: Մի յայնցանէ եմ՝ որոց գլուխ և սիրտ լի է աշխարհայնօքս. և զի՞նչ օգտեսցէ ինձ առատապարգև շնորհ փրկագործութեանդ՝ եթէ կեցից խառնակ խորհրդովք, զժամանակեայս քան զյաւիտենականսն մեծ համարելով: Զայս օրինակ զերկրաւ փարելով՝ 'ի դէպ գայ ինձ նմանել գրաստուց անբանից. զի ո՞ւր իցեն միտք, ո՞ւր բանն դատող, յորժամ մոռացեալ զերկինս՝ զոկատիցիմ 'ի սէր ստուերի, ծխոյ և տղմոյ: Ո՛ Տէր, ուղղեա ըզգնացս իմ. և քանզի քեզ միայնոյ պարտիմ զանձն իմ, ստեղծիչ իմ և փրկիչ և վախճան իմ վերջին, հա՛ն յինէն 'ի բաց զամենայն սէր օտարոտի, և տուր ինձ զանցաւորս զայսոսիկ վարել միայն յաղագս հասանելոյ 'ի յաւիտենից բարութիւնսն:

Քննեցից և տեսից՝ յինչ յաշխարհայնոցս հարեալ իցեմ սիրով. և ըստ կտակին Յիսուսի՝ գուն եդից չթողուլ զսիրտ իմ 'ի ծառայութիւն ընդունայնութեանց՝ զորս պարտ և արժան է ինձ առ ոտն հարկանել:

ԻԵ. Գայ Յիսուս ծունր դնել առաջի Պետրոսի. իսկ առաքելոյն տեսանելով առ ոտս իւր անկեալ զայն՝ զոր փոքր ինչ յառաջ խոստովանեցաւ Որդի Աստուծոյ կենդանւոյ, սոսկացեալ հիանայ ընդ այնքան խոնարհութիւն: Նորոգէ զհաւատսն, վերաճանաչէ զնուաստութիւն անձին իւրոյ. և իբրու յայլ յայլմէ և ուշագնաց լեալ՝ ձայն արձակէ. Դո՞ւ, Տէր, զիմ ոտս լուանաս. դո՞ւ առ իս. Աստուած ամենայն փառաց և մեծվայելչութեան՝ լուանալ զոտս անարգի միոջ ստեղծուածոյ. տէրդ տերանց և Աստուած զօրութեանց՝ զձկնորսի միոջ ողորմելւոյ և զմեղաւորի տառապելոյ՝ որպիսի ես եմ: — Ոչ ոք է բաւական ասել, թէ քանի՞ հաճոյ էր Որդւոյ Աստուծոյ բարձրելոյ՝ ջերմաջերմ խոնարհութիւն առաքելոյն, որ հայի հաճութեամբ 'ի խոնարհս և ցասուցեալ աչօք յամբարտաւանս. այլ քանզի ոչ է ընդունելի խոնարհութիւն որ հակառակ կայցէ հնազանդութեան, ամենագութն Յիսուս յորդորէ զնա 'ի հնազանդութիւն, և 'ի հաւան ածէ՝ ասելով, թէ զոր այժմ ոչ իմանաս զխորհուրդս՝ յետ սակաւու միոյ ծանիցես. կամելով ասել, թէ ոչ ես զարմացիս ընդ լուանալ ջրով Միածնին Հօր յաւիտենականի՝ զոտս ձկնորսացն, մինչ յետ փոքու միոյ տեսցես զնա արեամբ իւրով լուանալով զաղտեղեալ հոգիս մեղաւորաց: Այլ Պետրոսի տակաւին ոչ գիտելով զխորհուրդս չարչարանացն, պակուցեալ յաստուածութենէն խոնարհելոյ,

սովկացեալ սարտուցեալ հրաժարէ, և ոչ խնդրէ առնու յանձն անսալ. և ածէ թափէ նոյնհետայն, թէ ոչ տայցէ թոյլ յաւիտեան գերագոյն Արարչին՝ լուանալ զոտս տրուպ ստեղծուածոյն:

Խոկացիր յայս խրատ օրինակի խոնարհութեան Ս. Պետրոսի: Յածել իմ զմտաւ զխոնարհութիւնն զոր ուսուցանէ Քրիստոս բանիւ և օրինակաւ, 'ի վերայ հաստանեմ թէ պարտ է ինձ լինել խոնարհ, այլ ոչ գիտեմ զիա՞րդ 'ի նոյն կրթիլ՝ մինչ այնքան անտեղեակ եմ առաքինութեանս, զի ոչ զինչ էն գիտեմ և ոչ յի՞նչ հաստատեալն է: Օրհնեսցի առաքեալն Պետրոս՝ որ յերկուս բանս ուսուցանէ ինձ և զգիտութիւն և զկրթութիւն ճշմարիտ խոնարհութեան: Ամենայն հաստատեալ է 'ի քաջ իմացումն երկուցս այսոցիկ. Ո՞վ ես դու, Աստուած իմ, և ո՞վ եմ ես: — Եւ ո՞ կարիցէ լուսաւորել զխաւար իմ՝ առ 'ի ճանաչելոյ թէ ո՞ իցես դու և ո՞ իցեմ ես, եթէ ոչ դու ինքն, Աստուած իմ: Գթութեան և ողորմութեան քում վայելէ առնել ինձ զշնորհս զայս. զի մեծ պարգև է ճանաչումն այս, և 'ի նոյն հաստատեալ կայ յաւիտենական փրկութիւն իմ. և ամենայն պարգևք բարեաց առ 'ի քէն են, քանզի ես յանձնէ զչար միայն ունիմ: Ո՞վ ամենախոնարհ և ամենափառ Յիսուս, դու ազդեա յիս զոր արժան իցէ խորհել զքէն. և անդէն ծանեայց զոր արժանն է խորհել զինէն:

Փորձն ևեթ ցուցանէ զխոնարհութիւն. և փորձ աներկբայ՝ հնազանդութիւնն է և հլութիւն: Հնազանդ եղեց վեհագունից, և հեզահամբոյր առ հաւասարակիցս և առ ստորնագոյնս ևս:

ԻՉ. Հաստատեալ է 'ի մոի Պետրոս չտալ թոյլ լուանալ զոտս իւր, քանզի իրաւացի թուէր նմա եռանդնն և լաւագոյն հակառակելն քան հաւանել: Իսկ Յիսուս ոչ ևս հաճի ընդ խոնարհութիւն նորա, զի անմասն է 'ի հլութենէ. և տեսեալ զի յամառէ, առաւել յանխոհեմ եռանդն իւր լինել ապստամբ՝ քան 'ի հնազանդութիւն սուրբ, զայրի ընդ նա և խստութեամբ սպառնայ. «Եթէ ոչ լուացից զոտս քո՝ ոչ ունիցիս ընդ իս մասն». որ է ասել, մերժումն յաշակերտութենէն և 'ի հաղորդութենէ խորհրդոյն արքայանից և 'ի ժառանգութենէ արքայութեան իւրոյ: Ահաւո՛ր որոտումն: — Խորազգաց լինի այնժմ Պետրոս. քանզի չիք 'նմա սիրելի և ցանկալի քան զլինելն հանապազ ընդ Յիսուսի, և 'ի հակառակ մրցանս անդ սիրոյն և երկեղի՝ զի մի անջատեսցի 'ի Նմանէ՝ վաղվաղակի անձնատուր լինի, և յօժարի՝ զի ոչ միայն զոտսն լուանայցէ՝ այլ և զձեռս և զգլուխ: Ջերմաջերմ գտաւ զառաջինն 'ի հրաժարելն 'ի լուացմանէն. իսկ այժմ ջերմագոյն ևս 'ի հնազանդել, և 'ի հաւանել ամենայնի վասն կաթոգին սիրոյ աստուածայնոյ վարդապետին:

Ո՛ն առեալ քննեսցուք զայսոսիկ: Այնքան հաստատութեամբ եդեալ էր Պետրոս 'ի մոի թէ չէ վայել չէ արժան թողուլ առ Որդին Աստուծոյ՝ լուանալ զոտս, զի չէր ումեք հնար հակառակ կալ կարծեացն, թող թէ և հաւանեցուցանել զնա յայն: Եւ արդարև, ըստ դատման մարդկեղէն մտաց, որ ոչ կարեն յանդրագոյնան ձգտիլ, ո՞ ոչ խորշէր ըստ հրահանգի վայելչութեան՝ 'ի տեսանելն առաջի իւր զայնպիսի անձն վեհագոյն խոնարհեալ 'ի լուացումն ոտից իւրոց՝ 'ի ծառայական կերպի: Սակայն և յայսր ամենայնի վերայ՝ մի ինչ է որ զայնքան հրաժարեալ

խորշեալն Պետրոս՝ փութացուցանէ 'ի հաւանութիւն հնազանդութեան. — չկալն հակառակ կամացն Յիսուսի և չանկանել 'ի շնորհաց նորա:

Ահաւասիկ ինձ պտուղ օրինակին: Ո՛վ, քանի՛ երագ եմ 'ի բևեռել զկարծիս իմ և 'ի պնդել զպահանջմունս իմ, յամառել 'ի խորհուրդս իմ, չածեալ ակն կամացն Աստուծոյ և սիրոյն Քրիստոսի: Ո՛րքան դժուարանամ 'ի թողուլ յոր ձեռն արկեալս է՝ թէպէտ և այլ ինչ ազդիցէ յիս Աստուած, և խրատս և խորհուրդս բարիս տացեն ինձ որք Աստուծոյ փոխանակքն են, առաջնորդք իմ, հարքն խոստովանութեան և քարոզիչք: — Աստուած իմ, քանիցս կամեցայ կատարել զհաճոյական ինչ իմ կամս քան հնազանդել քեզ, առ ոչինչ համարելով զյամառութիւն իմ և զպնդագլխութիւն, նա մանաւանդ պատուակելով զայն մերթ արդարութեան և նախանձաւորութեան սեթևեթիւք, մերթ սիրոյ և խոնարհութեան երևութիւք: Այլ այն ամենայն հպարտութիւն էր, ընդ որ ապաշաւեմ և ամբաստանեմ զանձնես: Ամենողորմ Յիսուս, հերքեա յինէն զանկարգ յարումն այս յանձն իմ, որ մերձաւոր առիթ է ինձ ստուգանելոյ քեզ և վտանգաբեր գայթակղութիւն 'ի կորուստ անձին իմոյ:

Մի վերակարգեցից զկարծիս իմ քան զառաջնորդացս, և մի իմաստակօրէն հնարեցայց անբասիր կալ յանհնազանդութենէ, յիշելով զվտանգն 'ի վերայ հասեալ Պետրոսի, չունել մասն ընդ Յիսուսի եթէ ոչ հնազանդիցի:

ԻԷ. Աւարտեալ զլուացումն ոտիցն՝ վերադառնայ Յիսուս 'ի սեղանն, և յորդորէ զառաքեալսն 'ի նմանութիւն խոնարհութեան իւրոյ, ծանուցանելով ամենեցուն եթէ յայն սակս խոնարհե-

ցաւ՝ զի և նոքա նմանողք ինքեան լինիցին։ Եւ որ-
պէս սովորն էր հանապազ նախ գործով և ապա
բանիւ ուսուցանել, ասէ ցնոսա. Տեսէ՞ք զոր ինչ
արարի. եթէ այդպէս խոնարհեցայ ես որ
տէրս եմ ձեր, ո՞րչափ ևս առաւել անկ է ձեզ
խոնարհել միմեանց. օրինակ մի ետու ձեզ. և ոչ
ասեմ ինչ այլ, բայց Երանի է ձեզ եթէ իմանայք
զոր ասեմս, և եթէ սոյնպէս առնիցէք։ — Հզօ-
րագոյն է փաստ. եթէ յանարգագոյն կերպ
ծառայի խոնարհեցաւ բարձրեալն Աստուած,
տիեզերացն տէր, ո՞րքան առաւել մեզ անկ է
խոնարհել, որ հողս եմք և մոխիր, փոշի և կաւ։
Նուաստագոյն սպասարկութիւն է զայլոց ոտս
լուանալ. և սովին կամք եղեն Յիսուսի ծանու-
ցանել, թէ չէ մեզ արժան գարշիլ ՚ի ծառայելոյ
միմեանց յօրինաւոր պէտս, և նաև զիրերաց ոտս
լուանալ. որ է ասել ըստ ուղիղ բարոյական ի-
մացուածոյ, կարեկից լինել միմեանց և ներել
թերութեանց և յանցուածոց։

Յայտ ուրեմն է եթէ մեծ խնամք էին Յիսու-
սի՝ յերկնից յերկիր իջելոյ՝ ուսուցանել մարդ-
կան զուղղութիւնս այս խոնարհութեան։ Եւ
կարի իսկ յիրաւունս. քանզի առանց խոնար-
հութեան ոչ է մարթ գամագիւտ լինել և ոչ միոյ
լաւութեան, կամ պահել զայն, և ոչ իսկ փըր-
կութեան հասանել։ Իցեն յարքայութեան որք
չեղեն մարտիրոս, կամ վարդապետ, կամ վերա-
հայեցող կամ կոյս. այլ չիք անդ և ոչ մի ոք որոյ
չիցէ լեալ խոնարհ։ Փոյթ մեծ է Յիսուսի խո-
նարհս լինել մեզ, քանզի և փոյթ մեծ է նմա
փրկելոյ զմեզ. և զի՞արդ հնար էր նմա դիւրա-
գոյն ևս յարդարել մեզ զփրկութիւն, մինչ այս-
քան դիւրին է խոնարհելն, և բաւական է օրի-
նակ իւր առ ՚ի կրթել զմեզ ՚ի խոնարհութիւն։

Զիք ինչ Ճշմարիտ և արժանաւոր քեզ, Յիսուս

իմ և Աստուած իմ, քան զերկնաւոր վարդապետութիւն քո. յոյժ հաւանեալ եմ ընդ այս. այլ սակայն ոչ եմ խոնարհ, և ոչ է ինձ փոյթ լինել խոնարհ. շառագունանօք երեսացս խոստովանիմ զայս: Թուիմ սիրել զգեղեցիկս այս խոնարհութիւն, այլ գործով գարշիմ 'ի նմանէ. քանզի առաւելագանց անձնասիրութեամբ՝ յառիթս անդ խոնարհութեան խորշիմ 'ի խոնարհութեանց: Քանզի յաւուր զանցանեմ և արհամարհեմ զօրբազան կանոնն՝ զոր հաճեցար կարգել ինձ, աստուածայինդ վարդապետ: Ուսուցեր ինձ ոչ զբանիւն չափ խոնարհութիւն, այլ զխոնարհութիւն յիմաստս, յոգիս և 'ի գործս. և ահա զայսոքիւք զանց առնեմ ես: Զիշխեմ և զօգնականութիւն քո առ այս հայցել, քանզի և օգնութեանդ իսկ այդմիկ զդէմ ունիմ: Եւ զինչ լինիցի ինձ՝ եթէ չիցէ ինձ փոյթ բանիցդ և գործոց: Ո՜վ հրեշտակք, ո՜վ սուրբք արքայութեան, որք վասն խոնարհութեան ձերոյ արժանի եղէք փառացդ, բարեխօս լերուք վասն իմ, զի մի՛ դատապարտեսցայց վասն հպարտութեանս իմոյ:

Խոնարհութիւն է՝ կրթիլն 'ի բերման դիպաց չլինել պատճառախնդիր, դժկամակ, անհաւան 'ի հնազանդել վեհագունի, և 'ի ծառայել ստորնագունի՝ ըստ իմում կարի: Եթէ զայս արարից՝ երանի է ինձ:

Պատրաստութիւն հաստատութեան խորհրդոյ ամենասուրբ Հաղորդութեան :

ԻԸ. Եթէ ուշի ուշով ըզ ընթերցցի զամենայն աւետարանական պատմութիւնս, ոչ գտցէ յերեսուն և երեք ամս կենաց Քրիստոսի գործ՝ յոր այնքան խնամով նախապատրաստեալ իցէ, որպէս զհաստատութիւն ամենասուրբ խորհըրդոյն: Քանզի նախախորհեալ և նախասացեալ ծանոյց զայն որպէս զհրաշակերտ գործ սիրոյ՝ դիտելով զփրկութիւն աշխարհի: Քանի՜ հոգփութոյ եցոյց վասն այնորիկ, առաքելով յառաջագոյն զերկուս 'ի սիրելագոյն առաքելոցն, ընտրելով զվերնատունն; և պատուիրելով ըզպատուշաճ հանդերձանացն: Ամենայն ինչ յուսումն մեր կարգեալ է: Եթէ և մի անգամ միայն յամենայն կեանս մեր կայր մեզ ընդունել զամենասուրբ խորհուրդն, արժան էր զողջոյն կեանս կրթել 'ի պատրաստութիւն վասն այնր միոյ նուագի. զայդ պահանջէ մեծութիւն և յորդ խորհրդոյն. իսկ զի աստուածային բարութեան հաճոյ եղև յաճախագոյնս ընդունել մեզ զնոյն, միթէ աւելի՞ ինչ իցէ ասել՝ թէ արժան է յամենայն նուագս հաղորդութեան պատրաստիլ նախագոյն ջերմեռանդն ինչ խոկմամբ:

Աշակերտքն երկոքին առաքեալք 'ի պատրաստել զսրբազան ընթրիսն՝ օրինակք էին անբիծ վարուց, մաքուր հաւատոց և ջերմաջերմին սիրոյ, որով և մեզ անկ է վարիլ 'ի մերձենալ մերում 'ի սեղանն սրբութեան: Նաև վերնատունն զարդարեալ և ծաղկամբք պճնեալ օրինակ էր

հոգւոյ մերոյ, որում անկ է յարդարել քրիստոնէական առաքինութեամբք, մաքուր գոլ և գեղեցիկ և վայելուչ, առ 'ի բաւական լինելոյ ընդունել զամենևին գեղեցիկն և զընտրեալն յամենայն որդիս մարդկան: Արդ քննեցից զանձն իմ, թէ ո՞րպէս պատրաստիմ յընթրիսն երկնային, որո՛վ լաւութեամբք, որո՛վ հոգւով, որպիսի եռանդեամբ:

ՈՀ. Յիսուս իմ, տէր իմ և թագաւոր իմ. գիտեմ քաջ՝ զի առ գերագոյն և սքանչելահրաշ մեծվայելչութիւն քո պիտոյ էր դասուց կատարելութեանց և հրեշտակակերպ սրբութեան՝ առ արժանապէս ընդունելոյ զքեզ. գիտեմ զի վերնատան սրտի անկ էր լինել ամենևին սուրբ, բոլորովին մաքուր: Այլ միթէ վասն այսորիկ վհատեալ յուսաբեկ եղէց: Պարտք և կամք են ինձ մեծապէս վստահ լինել 'ի բարութիւն քո անչափ. և ոչ յաւակնեալ այսու վստահութեամբ՝ մատչիմ պարզ մտօք խնդիր մի հայցել 'ի քէն: Յորժամ արքայ ոք յարքայից կամիցի ագանել 'ի տան աղքատի միոջ, յառաջագոյն առաքէ հանդերձել զտեղին՝ որքան և հնար է արքայավայել. զնոյն արասցես և դու՝ թագաւորդ թագաւորաց, բարեգութ Յիսուս: Իմ սիրտ՝ յոր իջևանել հաճիս, տաղաւար է փոքրիկ յոյժ և խանգար, գծուծ և անարժան քումդ աստուածային վայելչութեան. արդ յառաջ քան զանարգամեծար գալուստ քո պատուական խորհրդովքդ, առաքեա կանխագոյն զոր 'ի դէպն է 'ի մաքրել զնա և 'ի զարդարել, որպէս զի ըստ կարի նուազ անարժան գտցի քեզ: Այլ ինչ ասել ոչ ունիմ. դու լաւ ևս գիտես և զոր պակասէն յիս և զոր քեզն վայելէ: Ահաւասիկ բանամ ես զդրունս սրտի իմոյ, և հաւատամ թէ ոչ աւելի քան զոր կարեմն՝ պահանջես յինէն. այլ և

զայն գիտեմ, յամենակարող ողորմութիւն քո յուսադնեալ, զի ձեռնհաս եղեց և առաւելագունի իմիք՝ քոյով օժանդակութեամբ:

Ի պատրաստութիւն հաղորդութեան ջերմագոյնս փափագեցից առաքինութեանց զոր ոչն ունիմ. խոնարհութեան, սիրոյ, մաքրութեան և որ 'ի սոցին սակի, և հաւատացից յաստուածային մարդասիրութիւն, թէ հաճի ընդ կամս իմ և անսայ ըղձից իմոց:

ԻԹ. Ի դէպ է և վասն այն համարել զլուացումն ոտից աշակերտացն 'ի Քրիստոսէ, զի յետ այնր վաղվաղակի կարգելոց էր զպատուական խորհուրդն և հաղորդել զնոսին, զգուշացուցանելով և զմեզ՝ մեծաւ մաքրութեամբ պատրաստիլ յընդունելութիւն ամենասուրբ խորհրդոյն: Յօժարութիւնք սրտից մերոց դիւրագոյնս յոյժ աղտեղանան 'ի փոշւոյ աշխարհի և 'ի հանապազօրեայ թերութեանց դիւրագայթ, ողջգէտ, պղերգ և չարամէտ բնութեամբ. վասն այնորիկ արժան է՝ յառաջ քան 'ի սեղանն մատչել՝ քննել խնամով զգիտակցութիւնս մեր. և մի և մի իւիք անփոյթ լինել. հարկ է լուանալ զամենայն՝ առ 'ի պատրաստ գտանել վայելուչ մաքրութեամբ: Ոչ է բաւական 'ի մահացու ևեթ մեղաց սուրբ լինել, այլ և 'ի ներելեացն մաքուր եղանիլ. զի զայդ պահանջէ պատիւ և սրբութիւն խորհրդոյն: Զայս խրատէ մեզ լուացումն ոտից առաքելոցն. խոստովանութեամբ մեղաց կանխել զհաղորդութիւնն, որով յանցանքն ջնջին, և 'ի ձեռն նորին իսկ Աստուածամարդոյն՝ որ լուայ զոտս առաքելոցն՝ լուացեալ լինի և հոգին:

Իսկ ես ո՞րպէս զիա՛րդ մատչիմ 'ի հաղորդութեան, որո՛վ փութով խնամոյ քննեմ զմտացս

խիղճ. որպիսի՜ ցաւօք և յառաջադրութեամբ ամբաստանեմ զանձն իմ 'ի խոստովանութեան. և զո՛ր ջան ուղղութեան ունիցիմ յետ այնորիկ: — Աստուած իմ, և ոչ մի օր է՛ յորում ոչ պղծիցիմ ապաշնորհութեամբ, ապստամբութեամբ և պղերգութեամբ. և զի հանապազ հարկ 'ի վերայ կայ ինձ լուանալոյ, քանիցս խոստոնակ կարծեօք և անձնահաճոյ հաւանականութեամբք փաղաքշեմ մտացս չհամարել մեղս զայն՝ որ մեղք են ստուգիւ, և համարել զիս մաքուր յիրս՝ յոր աղտեղեալ եմ: Յոյժ զօրացեալ է յիս անձնիս սէր. և վասն այսորիկ խիթամ լինել յազգէ կեղծաւորացն՝ որք զանձինս առ մաքուրս ունին և լի են գարշելեօք: Եւ ո՞քան զիս կարօտ իցէ լուացման մաքրութեան, որ ոչ միայն ոտիւքս եմ աղտեղեալ՝ այլ և ձեռօք և աչօք, ամենայն զգայարանօքս և ներքին զօրութեամբքս: Այլ ահա մատուցանեմ զիս գլխովին քեզ, ո՛վ Յիսուս իմ. զի ո՛վ կարիցէ եթէ ոչ դու լուանալ զիս և սրբել խորհրդովքն զոր կարգեցեր յեկեղեցւոջ քում: Ողորմութիւն բողոքեմ 'ի քէն. և ապաշաւեալ ընդ յանցուածս իմ յընդունելութեան նոցին իսկ սրբութեանց, հայցեմ 'ի քէն շնորհս զգաստութեան՝ որով կարող եղէց այսուհետև այնպէս խոստովան լինել՝ զի պատրաստագոյն գտայց 'ի հաղորդութիւն:

Զգուշացայց խղճի մտացս՝ զի մի դիւրամատոյց գտցի առ թուլամիտ կարծիս. դուն եդից ուղղել զունակացեալ յանցանս իմ՝ որովք անպատրաստ գտանիմ 'ի խոստովանութիւն և 'ի հաղորդութիւն:

Լ. Պարտ և պատշաճ է յիշել զոր ինչ ասացն Յիսուս 'ի սկզբան ընթրեացս, եթէ ցանկանալով ցանկացեալ էր այնմ աւուր, զի կատարումն

տրացէ հնոյ օրինացն և սկիզբն նորոյն, հաստատութեամբ մեծարգի խորհրդոյս: Ըղձիւք իղձ լինէր այսմիկ, թէ երբ հասցէ ժամն յորում սրբագործեսցէ զխորհուրդս մխիթարութեան մերոյ, և փոխանակ աղականացու գառինն՝ տացէ մեզ ճաշակել յաստուածացեալ մարմնոյն, որ կերակուր է անմահութեան իջեալ 'ի յերկնից: Եւ արդ 'ի հասանել ժամուն որ կէտ սահմանի էր փափագանացն, վաղվաղակի խնդութեամբ մեծաւ գոհութիւն մատուցանէ առ Հայրն երկնաւոր: Ցնծեսցուք և զայս, թէ յայն սակս պատմին յաւետարանի տենչանք Յիսուսի՝ զի և մեք վառեսցուք 'ի նոյն նմանութիւն. և իցէ՞ մեզ հզօրագոյն քան զայս առիթ նմանող լինելոյ: Նթէ Աստուած մեր՝ որ ոչ բնաւ կարօտի մեզ, առաւելահրաշ գթութեամբքն և սիրով այնքան ցանկացաւ հաղորդել ընդ մեզ խորհրդեամբ գոհութեանս, ո՞րքան և մեզ չիցէ արժան փափագել յընդունելութիւն նորին՝ որ ամենևին խնդաւէտ, օգտաւէտ և վայելուչ բարիք է մեր: Փափագ՝ ձայն է սրտի որ խօսի, մաղթէ և լսելի լինի ուժգին զօրութեամբքն. և վասն այսորիկ ըստ առաւելութեան տենչանացն առ աստուածայինս խորհուրդ՝ առաւելագոյն ևս ընծայի պտուղ և ճաշակ քաղցրութեան:

Որո՞վ արդեօք ըղձիւք մաղթիմ ես 'ի հաղորդութիւն: Ո՛հ, նման Հրէիցն եմ ես յանապատին՝ որոց տաղտկալի եղև մանանայն տեղացեալ յերկնից: Որպիսի՜ անախորժելութիւն, անկամութիւն և ցամաքութիւն: Առ սովորութեան բանամ զբերան ընդունել զկերակուրն երկնաւոր՝ քան 'ի դրդելոյ եռանդեան. առ մարդկան ականէ՝ քան առ ճշմարիտ և սրտագին փափագանաց. և զի յաճախ ընդունիմ՝ ոչ ևս թուի ինձ պատուական: Յորժամ զմտաւ ածեմ,

Աստուած իմ, զցանկութիւն քո մեծ գալոյ առ իս՝ հիացեալ ափշիմ. զի զի՞նչ կայցէ իմ գոլոյ արժանի սրբարան մեծի վայելչութեան քում, կամ առ 'ի հաճոյ լինել քումդ փարելի սիրոյ. — այլ յորժամ և զպղերգութիւն ցրտութեան իմոյ յիշեմ՝ որով երթամս յընդունել զքեզ, առաւել ևս զարհուրեալ պակնում: Ո՛վ Յիսուս, ցանկութիւն բլրոց մշտնջենաւորաց, կերակուր ընտրելոց և կերակուր ընտրեալ, որ ամենեւին տենչալիդ ես և լցուցիչ ոգւոց քեզ տենչացելոց՝ ամենալիր գոհութեամբ, ուստի՞ է ինձ չյարգել, չքաղցնուլ քեզ: Ոչ սիրեմ զքեզ, վասն այնորիկ և տենչամ ոչ: Ո՛վ կուրութեան և անզգայութեան հոգւոյ իմոյ. և զո՞ կամ զի՞նչ սիրիցես, ո՞ւմ ցանկանայցես՝ եթէ ոչ սիրես և ոչ ցանկաս այնմ Տեառն՝ որ գերագոյն բարեաց է, և միայն բաւական առ ամենայն իղձս փափագանացդ:

Ժտեցից 'ի Յիսուսէ զսէր իւր, որով հաղորդութիւն մի՝ առ միւս ևս հաղորդութիւն ըղձակերտ արասցէ զիս. և այժմէն նուիրեցից նմա զցանկութիւնս սրտի նորա ընդ ցանկութեանց ամենայն հոգւոց արդարոց՝ որք զմայլեալն են սիրով այսու խորհրդեան նորին:

ԼԱ. Յորժամ կամք եղեն Յիսուսի յընթրիսն հաստատել զմեծայարգի խորհուրդն, յառաջագոյն զմահ իւր զմտաւ էած, ասէ Աւետարանիչն, յիշելով զի ահա հասեալ կայ ժամն յորում յաշխարհէ աստի երթիցէ առ Հայր. և Կամի կոչեաց զխորհուրդն՝ առ յիշատակէ մահուն. ընտրեաց և զտօն պասեքին, ոչ զի մեծագոյն էր կամ յանկագոյն 'ի կատարումն մեծագունի խորհրդոյն, այլ զի քաջիկ նշանակէր սա զանցս իւր. ընտրէր զյետին պասեք կենացն, և ծանու-

ցանէր առ աշակերտսն եթէ ոչ ես կերիցէ ընդ նոսա՝ բայց յարքայութեանն Աստուծոյ. այսինքն է յետ հաստատութեան նորոյ եկեղեցւոյ՝ 'ի փառաւորեալ յարութեանն իւրում: Եւ զի՞նչ նմանութիւն իցէ յիշատակի մահուն ընդ հաստատութեան խորհրդոյս այսորիկ:

Օրինակդ այդ, հոգի իմ, խրատ մեծ և հզօր է քեզ 'ի քաջ պատրաստութիւն առ սեղանն սուրբ: Ըստ օրինակին Յիսուսի՝ յորժամ հաղորդել հանդերձեալ իցեմ՝ յիշեցից և ես զմահ իմ. և հաղորդեցայց՝ որպէս թէ ահա մեռանել կայ ինձ և ելանել յաշխարհէ աստի. որպէս թէ 'ի յետնում հիւանդութեան ելով զթոշակն ընդունիցիմ, և յետին հաղորդութիւն իցէ ինձ այն, և ոչ ևս ունիցիմ ընդունել զմարմինն Քրիստոսի, այլ յոյս վայելելոյ ընդ նմին յերջանիկ հարսանիս Գառինն, յընթրիսն Աստուծոյ: — Եթէ գիտէի թէ առաջին հաղորդութիւն զոր առնուցում՝ վերջին իսկ լինելոց էր, որպիսի՞ պատրաստութեամբ կամէի արդ առնել զայն: Ո՛հ, զի ընդունելոց եմ 'ի ներքս յիս զգերագոյն դատաւորն իմ՝ որ ընդ հուպ հատցէ ինձ վճիռ յաւիտենական զարքայութեան կամ զդժոխոց, և յամենայն յաւիտեանսն լիցի ինձ փառք կամ տանջանք, որպիսի՞ խոնարհութեամբ, մաքրութեամբ և եռանդեամբ ոչ ջանայի ընդունել զնա դէթ 'ի վերջնում յայնմ նուագի, ջերմաջերմ ըղձիւք ընլով զթերի թուլութեանց և ցրտութեանցն անցելոց:

Աստուած իմ, տպաւորեա յոգւոջ իմում զայսպիսի իմացուածս, որպէս զի յամենայն նուագս՝ որպէս առ յետին նուագ հաղորդութեան պատրաստեցայց. քանզի վաղ կամ անագան հասցէ ինձ արդարև վերջինն այն՝ յորժամ ոչն կարծիցեմ: Տուր ինձ յիշել զմահ իմ և 'ի

մատուցմանս գոհութեան, առ 'ի մարզել զիս
'ի ներգործութիւնս հաւատոց, յուսոյ և սիրոյ,
որպէս եթէ արդէն 'ի վերայ հասեալ կայցէ
ինձ մահ, և յետ հաղորդութեանս յանձն առ-
նել զհոգի իմ 'ի ձեռս քո: Արբեա, բարեգութ
Յիսուս, զսիրտ իմ, թօթափեալ 'ի նմանէ զամե-
նայն չարութիւն, և լից զնա շնորհօք քովք. որ-
պէս զի զքեզ ճաշակելով՝ կեցից քև և 'ի քեզ, առ
'ի վայելել զքեզ 'ի փառս քո յաւիտեանս:
Ի կէտ մահուան իմոյ՝ որ 'ի հաղորդութեանց
իմոց հաճոյ թուիցի ինձ. կամ ընդ որ 'ի հաղոր-
դութեանց զիւր լինիցի: Խորհեցայց զերկուսին
զայսոսիկ, և այժմէն վասն այնր ժամու պէտ
անձին արարից:

Հաստատութիւն անմահութեան խորհրդեանն:

ԼԲ. Դարձ արարեալ Յիսուսի 'ի սեղանն յետ
ոտիցն լուացման, լրումն առնէ ծխից և զոհից
հնոյ օրինին, պատարագ նոր զանձն իւր կազմե-
լով՝ հաստատութեամբ ամենասուրբ խորհըր-
դեանն. զոր թէպէտ և կարող էր հաստատել
յորում ժամանակի կենացն և կամէր, այլ պա-
հեաց եթող 'ի յառաջընթաց օր մահուն իւրոյ,
և սակաւուք յառաջ քան զչարչարանսն. որպէս
զի քաջայայտագոյն ցուցցէ նրբութիւն սիրոյ
նորին, և յորդորագոյն ևս լիցին սիրտք մեր 'ի
սիրել զնա: Ի ժամանակին յորում մարդիկ ըզ-
մահ նիւթէին նմա, հաստատէ նա զխորհուրդ
կենաց մարդկան. և կեանք այնքան հարուստ և
պատուական՝ որքան մահ իւր ցաւալից:
Քաջ միտ դիցի առաւելութեան սիրոյն: Մինչ-

դեռ մարդիկ մենքենայեն Յիսուսի չարիս, հալածանս, անարգանս, խոշտանգանս և տանջանս, ինքն շնորհէ մարդկան 'ի պարգև՝ զճոխագոյնն գանձուց շտեմարանաց իմաստութեան և ամենակարողութեան Աստուծոյ: Մինչ դեռ մարդիկ վասն ապիրատութեան և չարութեան իւրեանց՝ առաւել ևս արժանիք գտանին բարձի թողի լինելոյ առ 'ի նմանէ, հնարի նա զարմանահրաշ իմն հնարս յաւերժացուցանել 'ի միջի մարդկան զկայ միայ իւր: Ո՛վ բարութիւն, ո՛վ ամենասքանչ գթութիւն, որ ոչ շիջանի և ոչ ցրտանայ 'ի զրահեղեղ հոսանաց անիրաւութեանց մարդկան, այլ ևս քան զևս բորբոքի: — Մտախոհ եղեալ առաքելոյն Պօղոսի, եթէ ոչ ձաղկանքն, ոչ փուշքն, ոչ բևեռքն և ոչ կսկիծ ցաւոյն բաւականք եղեն անջատել զՅիսուս 'ի սիրոյ մերոյ, գոչէր և ինքն ջերմաջերմն եռանդեամբ, եթէ ոչ ինչ որ կանս յաշխարհի՝ որքան և տաժանելիք իցեն՝ ոչ կարասցեն անջատել զմեզ 'ի սիրոյ անտի Յիսուսի. և ոչ զանձնէ միայն ասէր զայս Առաքեալն նախանձայոյզ, այլ և զմէնջ իւրև զքրիստոնէից:

Այլ իմ քանի՞ այլազգի են կիրք և խորհուրդք: Սէր քո 'ի վերայ իմ, ո՛վ ամենասէր Յիսուս, սէր է համաստատուն և հաւատարիմ. իսկ իմ սէր առ քեզ՝ այնքան տկար՝ մինչ և առ փոքր ինչ վտանգի պակասել: Դոյզն ինչ առիթ, փորձութիւն փոքր՝ շատ է յանջատել զիս 'ի քէն, և ոչ միայն թէ հալածանաց և տանջանաց ոչ համբերեմ առ սէր քո, այլ և ոչ յախտս և 'ի կիրս իմ փոքունս՝ մեռուցանել զիս արխանամ: Ո՛վ Յիսուս, որ այդպէս յաճախ գաս յիս երկրպագելի խորհրդդեամբն, ծանո՛ ինձ զքաղցրութիւն ներկայութեանդ, առ 'ի ժրացուցանել և զօրացուցանել զիս 'ի սէր քո: Ի գթութիւն քո ապաւինեալ

խնդրեմ զսէր, ոչ զթոյլ և մեղմ, այլ հաստատ և հզօր, նման քոյումդ որ առ իս:

Բարի առնել առ սէրն Աստուծոյ՝ չարաչարաց իմոց, լիցի նմանողութիւն իմն Յիսուսի, որ ըստ իւրումն խրատու՝ ետ մեզ սրբով խորհրդեամբս զամենայն բարիս, մինչդեռ մարդիկ խորհէին անցուցանել ընդ նա զամենայն չարիս:

ԼԴ. Սակաւ բանիւք համառօտէ աւետարանիչն Յովհաննէս զհաստատութիւն ամենասուրբ խորհրդոյն, յասելն՝ եթէ Սիրելով Յիսուսի սէր մեծ զիւրսն որ յաշխարհի աստ էին, առաւել և հզօրագոյն ևս սիրով սիրեաց զնոսա 'ի վախճան կենացն. Թողեալ նոցա պարգև որ մեծ է քան զամենայն տուրս, զխորհուրդն Հաղորդութեան, զոր 'ի ճահ է կոչել խորհուրդ անճառելի սիրոյն Յիսուսի. և հուսկ ամենայնի եթող զայն, որպէս զի ազդողագոյն ևս տպաւորեսցի 'ի սիրտս մեր: Որպէս Հայրն երկնաւոր յայտնեաց մեզ զանչափ գթութիւն իւր պարգևելով մեզ զՈրդին Միածին, քանզի զամենայն ինչ ետ մեզ նովաւ, այսպէս և նոյն ինքն Որդին՝ 'ի նշանակ անչափ սիրոյն՝ ետ մեզ զանձն իւր բովանդակ. և 'ի տալ զանձնն՝ ետ և զամենայն զոր ունէր. քանզի յաշխարհի աստ չկարէր տալ ինչ քան զայն մեծագոյն, հաճոյագոյն, քաղցրագոյն և պիտանեգոյն մեզ: Ի յաւետահրաշ խորհրդեանն՝ ետ 'ի պէտս մեր զմարմին իւր և զարիւն, և ընդ նմին զհոգին, զմարդկութիւնն և զաստուածութիւն, և զգանձս անբաւ արդեանց իւրոց:

Ընդարձակեա, հոգի իմ, զտարածութիւն մտացդ, և խորհեաց յանձն քո: Զի՞նչ առաւել քան զայդ կարող էր Յիսուս՝ Մարդն և Աստուած՝ տալ քեզ կտակաւն... Եւ զայդ ամե-

նոյն արար առ 'ի ծանուցանել քեզ, թէ քանի՜ երբեմնայ սիրով սիրէ զքեզ. և քանիօ՜ն պատրաստական իցես և դու 'ի սիրել զնա: — Աստուած իմ, ո՞վ եմ ես զի այդքան սիրես զիս, և խնդրես սիրել առ յինէն: Արարած մի փանաքի եմ քո, և չունիմ ինչ արժանի ամենակալ մեծվայելչութեան քում: Սխրանամ ընդ սէր քո 'ի փառաւորեալ խորհրդեանդ. այլ առաւել ես 'ի դէպ է ինձ զարմանալ ընդ անձն իմ անզգայ և անշնորհակալու առ սէր քո: Եւ մինչև ցե՞րբ, հոգի իմ, երախտամոռայ գոցիս առ ամենախնամին գթութիւն: Ո՛վ Յիսուս, փափագեմ սիրել զքեզ և շնորհակալու լինել. այլ դու ինքնին հզօր օժանդակութեամբդ արիացո զկամս իմ մեղմեխ: Եւ զի՞նչ հատուցից փոխարէն սիրոյդ: Դու տաս ինձ զամենայն զոր եսդ և զոր ունիս. ապա և ես՝ որչափ է ինձ կար և հնար՝ նուիրեցից քեզ զամենայն զոր եմս, զոր ունիմս և զոր ունիցիմ. զամենայն 'ի սուրբ սպասաւորութիւն քո ծախեցից: Այլ մի դադարիր և դու օգնական ինձ լինել շնորհօքդ, որպէս զի կարող եղեց կատարել զփափագ սրտիս որպէս պարտիմս 'ի գոհութիւն երախտեացդ՝ հաստատութեամբ ամենասուրբ խորհրդոյս:

Ի մասնաւորի նուիրեցից Տեառն իմոյ զյուշ, զմիտս և զկամս իմ, զաչս, զլեզու, և զայլն ամենայն, հանդերձ ներքնովք կրիւք. յիշելով զի ոչինչ զօրէն աղօթք ցնդեալք յոգս՝ եթէ ոչ կըրթիցին և 'ի գործ:

ԼԴ. Յիսուս Քրիստոս քահանայապետ յաւիտենից՝ նախանկարեալն 'ի Մելքիսեդեկ, որ միայն 'ի հին օրէնս մատոյց Աստուծոյ բարձրելոյ պատարագ անշունչ, հաց և գինի, բազմեալ 'ի սեղանին, առնու զհացն 'ի սուրբ և 'ի պա-

տուական ձեռս իւր, ամբառնայ զաչսն առ Հայր իւր ամենակարող, օրհնէ և սրբագործէ, ասելով. Այս է մարմին իմ: Նոյնպէս և զբաժակն առեալ, յորում եդեալ կայր գինին, ասէ. Այս է արիւն իմ: Ընդ ասել բանիցն՝ հացն ոչ ևս է հաց, այլ ճշմարիտ մարմին նորա. գինին ոչ ևս է գինի՝ այլ ճշմարիտ արիւն նորա: — Ոչ ինչ օգտէ հետաքննել թէ զիա՞րդ հնար էր այդմ լինել, կամ զիա՞րդ եղև. զի Հրէիցն չարակամ անհաւատութեան նմանութիւն իմն լիցի այդ: Որպէս յարգանդի կուսին Մարիամու մարմնացաւ Բանն Աստուած առանց սպասաւորութեան մարդոյ, զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ, նովին զօրութեամբ և աստանօր հացն փոխեցաւ 'ի գոյացութիւն Աստուծոյ մարդացելոյ: Եւ որպէս յանձն Քրիստոսի՝ Աստուած ծածկեալ կայր 'ի տեսանելի մարմնում մարդոյն, զնոյն օրինակ և 'ի խորհրդեանս սրբում Աստուածամարդն ծածկեալ է ընդ տեսանելի տեսակօք հացին և գինւոյ. և ճշմարտապէս 'ի մարդեղութեանն և 'ի հաղորդութեան՝ կատարի բան մարգարէին, եթէ՝ Աստուած մեր Աստուած ծածկեալ է: Աւելի է մեզ, հոգի իմ, յերկարել զայսմանէ բանս: Զպակասութիւն հասողութեան բանի՝ լցցեն հաւատք, երկիր պագանելով անբաւ բարութեան և իմաստութեանն և կարողութեանն Աստուծոյ:

Արդ հաւատամ, ո՛վ տէր Յիսուս, ամենայն հնարաւոր ժրութեամբ մտացս, եթէ զօրութեամբ անվրիպական բանից քոց՝ դու ինքն իցես 'ի սրբագործեալ նշխարին, Աստուած ճըշմարիտ և մարդ ճշմարիտ, ամենևին կատարեալ հոգւով և մարմնով, ճշմարիտ և իրական գոյութեամբ աստուածութեանդ և մարդկութեանդ սրբազանի: Դու ասացեր զայդ, և է այդպէս. երկինք և երկիր անցցեն, այլ ճշմարտութիւն

բանից քոց կայցէ յաւիտեան: Եւ ես կեցից և մեռայց այսու անյողդողդ և անդրդուելի հաւատովք: Խնդամ ընդ ոչս զքեզ տեսանել, խնդամ ընդ անհասութիւն մտացս առ դերազանցութիւն խորհրդեանդ, առ 'ի մեծապէս ևս պատուել զքեզ խոնարհութեամբ զգայութեանցս և իմացուածոց: Եւ եթէ ոչ հաւատամ ամենայնիւ այնու հաւատով՝ որում արժանիդ ես, յաւել ինձ զայն և արծարծեա. մինչ ընծայեմս քեզ այժմիկ զխնեմական հաւատս վեհագունից սրբոց եկեղեցւոյ քո, և զայնոցիկ մանաւանդ՝ որք և զարիւն և զկեանս իւրեանց ետուն 'ի հաստատութիւն Ճշմարտութեան ամենասուրբ խորհրդոյս:

Աղաչեցից զՅիսուս տալ ինձ այնպիսի հաւատս յորմէ բղխեսցեն զզջումն սրտի, ջերմն եռանդն և խորին մեծարանք, և՛ առ հաղորդութիւն և՛ առ ամենայն այցելութիւն զոր արարից սրբոյ խորհրդոյս:

Ե. Յաւետարար 'ի հացին հաստատեաց Քրիստոս զխորհուրդ Հաղորդութեան, առ 'ի թողուլ մեզ նովիմբ զյիշատակ չարչարանաց իւրոց: Կանխաւ իսկ օրինակեալ էր զանձն իւր 'ի հատն ցորենոյ. և այժմ կամի ծանուցանել 'ի խորհրդեանն, զի որ ինչ ընդ հատ ցորենոյն անցանէ՝ հարկանելով, աղալով և մանրելով առ 'ի ածել հաց, նոյն և ընդ ինքն էանց. զի տանջանօք չարչարանացն մանրեցաւ բոլորովիմբ: Կամի դարձեալ զի հացիւ գոհութեանն յիշեսցուք զանչափութիւն սիրոյն, որով յանձն էառ վասն մեր զչարչարանս և զմահ խաչի, և յամենայն նուագի հաղորդութեան խոկասցուք զցաւալից չարչարանս իւր:

Չիք ինչ յոր այնպէս եդեալ կայցէ յոյս յա-

ւիտենական փրկութեան մերոյ՝ որպէս 'ի չարչարանս Քրիստոսի. և զի չարչարանքդ այդ նկարին և նշանակին 'ի խորհրդեանս սրբում, որպիսի յուսով չիցէ մեզ անկ յուսալ 'ի նա: Իրաւամբք ցնծայ եկեղեցի յերկրպագելն սրբոյ խըրախճանիս, ճանաչելով թողեալ 'ի նմին և յիշատակ չարչարանաց Որդւոյն Աստուծոյ, և գրաւական յաւիտենական փառաց նորին: Մա՞րթ ինչ իցէ մեզ յերկուանալ ընդ փրկութիւն մեր՝ մինչդեռ զբովանդակ իսկ զՓրկիչն ունիմք, փոխեալն մեզ 'ի կերակուր, առ 'ի կարող լինելոյ այժմ կեալ ընդ նմին նորին կենօք, նովին դարձեալ կեալ 'ի յաւիտեանսն յերկինս:

Է՛ երբեք զի տխրեալ տատանմիս դու, հոգի իմ, ցնդաբար ասելով ընդ միտս, Ո՞ գիտէ թէ փրկեցիմ ես: Ո՛հ. յուսա յԱստուածն քո մարդացեալ և նուիրագործեալ. և յուսա աներկմիտ հաւատով. զի իմ իմիք առ աներկեւան ստացուած արքայութեան կարէիր փափագել, զՅիսուս ունելով մեռեալ վասն քո, և գրաւական արքայութեան թողեալ քեզ՝ ոչ միայն զարդիւնս իւր այլ և զինքն գլխովին: — Օրհնութիւն, գոհութիւն և փառք քեզ, Քրիստոս, վասն յուսոյ փրկութեան անձինս՝ զոր շնորհեսդ սրբազան չարչարանօքդ, որք քեզ դառն եղեն, այլ ինձ քաղցր յամենայնս խորհրդեանս: Զտեսանեմ զքեզ այժմիկ յերանաւէտ վայելչութեանդ ծածկեցելոյ, այլ ակն ունիմ յետ սակաւուց տեսանել զքեզ յերկինս բացա երեսօք: Այո, այո, ակն ունիմ փառաց արքայութեան. և այնպէս հաստատութեամբ ա՛յն ունիմ, մինչև չերկնչել և ոչ ուստեք. քանզի ունիմ զհացն յաւիտենական կենաց՝ զոր պատրաստեցեր ինձ 'ի սեղանի սրբոյ խորանին՝ 'ի կազդուրումն անձինս և 'ի զօրաւիգն յամենայն վտանգս: Մարթ էր ինձ զանգի-

տել, եթէ փրկութիւն՝ որ առ 'ի քէն կուսէ աներկբայ է ինձ. վրիպեցի վասն իմոց յանցուածոց, եթէ ապախտ արարից զշնորհիւք առ նոյն ժամանելոյ. սակայն և յայսմիկ ապաւինիմ 'ի հրաշափառ զօրութիւն խորհրդոյն սրբութեան, որ առ ամենայն և յամենայնի լիցի ինձ 'ի լոյս, յօգնութիւն և 'ի զօրութիւն:

Յառաջ և յետ հաղորդութեան յիշեցից զչարչարանս Քրիստոսի զոր վասն իմ կրեաց. և այնքան ջերմեռանդն և օգտաւէտ լիցի հաղորդութիւն՝ որքան յաճախագոյնս կրթեցայց յիղձ և 'ի գութ ցաւագին չարչարանաց Փրկչին իմոյ:

ԼԶ. Նաև այլոյ իւիք աղագաւ զխորհուրդն Հաղորդութեան հաստատեաց Քրիստոս հացին տեսակաւ քան այլով ինչ կերակրով: Հաց՝ գործի հատիւք ցորենոյ հաւաքելովք, աղացելովք և 'ի մի զանգելովք. յայն հաստատեաց զխորհուրդ իւր՝ 'ի նշան միութեան, խաղաղութեան և սիրոյ՝ զոր անկ է ունել հաւատացելոց իւրոց ընդ միմեանս. և յայս սակս պատուիրեաց և մեզ, զի 'ի մատչելն 'ի սեղան անդր, եթէ թերացեալ ինչ գտանիցեմք զանձինս 'ի սիրոյ միութենէ ընդ ընկերս, երթիցուք նախ միանալ ընդ նոսին. քանզի քան զամենայն ինչ հաճոյագոյն է նմա սէրս այս: Եւ անուն իսկ հաղորդութեան զնոյն յայտ առնէ. որ թէպէտ և հաւասար միութիւն Յիսուսի ընդ հոգւոյս իմանի, այլ և զհաւասար միութիւն մեր և զընկերացս ծանուցանէ. որպէս զի չիցէ ումեք հնար ճշմարտապէս հաղորդել՝ որոյ չունիցի միաբանական խաղաղութիւն ընդ ամենեսին: Խորհուրդ եղբայրական սիրոյ է ամենասուրբ գոհութիւնս այս. և յայսմ՝ 'ի սոյն սէր հաստատեալ է գլխովին ոգի քրիստոնէութեան:

Այլ զօրինակ անմարթ է առանց խոնարհութեան պահել զսէր, ահա և զխոնարհութեան օրինակ ընծայէ մեզ Քրիստոս 'ի խորհրդեանս: Մեծ էր յոյժ խոնարհութիւն նորա 'ի մարդեղութեան իւրում, յորում փոքրկացաւ՝ ամփոփելով զանբաւութիւն աստուածութեանն զոր ոչ կարէին տանել երկինք՝ 'ի բնութեան մարդոյ. այլ մեծ ևս է 'ի խորհրդեանս յայսմիկ՝ յորում ընդ տեսակաւ հացին պարփակի և՛ աստուածութիւնն և՛ խոնարհութիւն: Մեծահրաշ սքանչելիք են Աստուածամարդոյն կազմել զանձն 'ի կերակուր մարդկան: Աստուած որ մնուցանէ զհրեշտակս 'ի փառս անդ, կարէ՞ր անդրադոյնս ևս նուաստանալ՝ քան փոխելով 'ի հաց 'ի մնունդ մարդոյ:

Քանիցս ապա պարտ և արժան է ինձ ասել և կրկնել 'ի հաղորդութեան, Տէր չեմ բաւական. և խոստովանել, զի չեմ արժանի ընդունել զքեզ, Աստուած իմ բարձրեալ: Անարժանութիւն իմ առաւել ևս նշաւակի առաջի խոնարհութեան քո. քանզի որ Աստուածդ ես ամենամեծ՝ ծածկես զմեծութիւն քո 'ի խորհրդեանս. իսկ ես արարածս չնչին և խոտան, ամբարտաւանութեամբ սիրեմ և հնարիմ յերևանի կալ: Փափագէի քեզ նման խոնարհել. այլ զի ոչինչ մի եմ ես՝ ուրանօ՞ր խոնարհագոյն ևս քան զբնաւորեալ ոչինչն իմ հնար իցէ խոնարհել: Ո՛վ իմ Յիսուս, որ 'ի խորհրդեանս յայսմիկ ամենևին չնչես շունչս խոնարհութեան և սիրոյ, շնորհեա ինձ գէթ զխոնարհութիւնն յանկաւոր առ 'ի կեալ սիրով ընդ մերձաւորիս: Խոստովանիմ զանցեալ մեղանս իմ, զի վասն հպարտութեանս իմոյ վրէպ գտայ 'ի սիրոյն զոր հրամայես ինձ. այլ արդ աղաչեմ զգթութիւն քո, ողորմեա ինձ. քեզ վերընծայեմ զվրէժ իմ և զպահանջանս.

քեզ նուիրեմ զսիրտ իմ, և հայցեմ 'ի քէն այնպէս յարդարել զնա՝ զի յայսմ հետէ սիրեսցէ անթերի և՛ զքեզ և զմերձաւորս իմ առ սէր քո։

Յառաջ և յետ հաղորդութեան մատուցից աղերս խոնարհութեան, ճանաչելով զանարժանութիւնս իմ, և աղերս սիրոյ՝ առաջադրելով մի և մի իւիք իմովսանն լուծանել կամ խռովել զխաղաղութիւն հաշտութեան։

Տալ Յիսուսի Առաքելոցն զխորհուրդն սուրբ, և զիշխանութիւն կատարելոյ զնոյն։

ԼԷ. Յետ փոխարկելոյ զհացն 'ի մարմին իւր և զգինին յարիւն իւր, Քրիստոս որպէս առաջին և գերագոյն քահանայապետ եկեղեցւոյ իւրում՝ հաղորդէ նախ ինքեան զաստուածային խորհուրդն. և ապա խանդակաթ իմն գորովով՝ տայ առ առաքեալսն, հրամայելով նոցա առնուլ զիւրաքանչիւր բաժին. սովիմբ տալով նոցին և զպատիւ և զպաշտօն քահանայութեան. զոր և անդէն սկսանին կատարել՝ իւրաքանչիւր ձեռօք իւրովք հաղորդելով։ Քաջ միտ դիցուք ծանրութեան, խնամոտ փութոյ և սիրոյ Յիսուսի՝ 'ի կրօնականս յայսմ պաշտաման, զի չիք քան զսա յորդորիչ 'ի ջերմեռանդութիւն։ Ո՛վ, որպիսի՛ ճաշակ, որպիսի՛ քաղցրութիւն է նորա յընթրիս յայս, յորում ինքն է կոչնատէր և ինքն իսկ կոչունք։ — Ոչ ոք յառաքելոցն իշխէր հպել կամ դնել 'ի բերան զփառաւորեալ խորհուրդն լուսով հաւատոց որ զմիտս նոցա լուսաւորէր, եթէ ոչ էր հրամայեալ Յիսուսի. որում թէպէտ և անարժան զանձինս վարկանէին՝ հնազանդեցան։

Եւ ո՞ բաւական իցէ հասու լինել պատշաճաւոր խոնարհութեանն՝ որով զառաջին զայն նուագ ընկալան յանձինս իւրեանց զփրկիչն աշխարհի: Ո՞ կարիցէ ճառել զարտասուսն գորովականս և զղջականս՝ զոր հեղին. կամ ո՞ պատմեսցէ զչարմանահրաշ ազդմունս մխիթարութեան և եռանդեան՝ զոր զգացին յոգիս իւրեանց: — Եթէ առաքեալն Պետրոս միով վարդապետութեամբ զխորհրդոյ գոհութեան՝ զոր սակաւուք յառաջ լուաւ, ծանեաւ և դաւանեաց Աստուած զՔրիստոս, որպիսիս ոչ ընկալաւ լուսաւոր ծանօթութիւնս այժմիկ 'ի հաստատութեան խորհրդեանն: Համարիմ տեսանել զառաքեալն զայն նովին զգացմամբք և բացայայտութեամբք՝ զոր կրէրն 'ի պահուն յորում դաւանեալ զաստուածութիւն նորա՝ հրաժարէր 'ի մատչելոյն Յիսուսի առ ինքն՝ այր մեղաւոր, և ոչ հանդուրժէր կարկառման ձեռին նորա յոտիցն լուացումն: Իսկ զինչ ոչ ասիցէ արդ տեսանելով զվարդապետ իւր և զԱստուածամարդն, զի մատնէ 'ի ծոց իւր և աղէխառնի ընդ ինքեան: Անհնար է բանիւք յանդիման կացուցանել զայդ. բայց օրինակ առից այտի երկիւղիւ և սիրով մատչել 'ի հաղորդութիւն: Երկեայց և սիրեցից՝ եթէ ածից զմտաւ զգերազանցութիւն արքայական և աստուածական կերակրոյն՝ զոր ընդունիմս 'ի սրբութիւն սեղանի:

Յիսուս իմ, Աստուած բարձրեալ, և սիրող խոնարհաց, հեղ և յիս զիմաստս յարգանաց և մեծարանաց՝ որովք դու ինքն զինքդ ընկալար. և քեզ վերընծայեցից զամենայն տուրս շնորհաց՝ զոր և պարգևեսցես ինձ: Ո՛վ Ճշմարտութիւն յաւիտենական, և սէր ճշմարիտ և սիրելի յաւիտենականութիւն, Աստուած իմ, լո՛ւր ձայնի հառաչանաց իմոց: Երանելի Առաքեալք, հայցե-

ցէք վասն իմ 'ի Տեառնէ զորբաղան ըղձս խոնարհութեան և սիրոյ՝ զոր ունէիքդ յայնժամ յառաջ և յետ հաղորդութեանդ. որպէս զի և ամենայն հաղորդութիւնք իմ լիցեն 'ի փառս Աստուծոյ և յօգուտ անձին իմոյ:

Ըստ առաւելութեան կամ նուազութեան հաւատոյ՝ նովին չափով լինի և առ հաղորդութիւնն եռանդն պատրաստութեան և գոհութեան մատուցումն: Խնդրեցից ուրեմն 'ի Տեառնէ հաւատս, և հանապազ յիշեցից զհնարս արծարծելոյ յիս զնոյն:

ԼԸ. Որդին Աստուծոյ 'ի մարմնանալ իւրում առ 'ի բնակել ընդ մարդկան՝ ել 'ի ծոցոյ Հօրն, անմեկնելի մնալով առ 'ի նմանէ. իսկ 'ի հասանել արդ ժամու գնալոյ առ Հայրն, գիտաց մեկնել 'ի մարդկանէ՝ ոչ թողլով զմարդիկ, հաստատելով զխորհուրդ գոհութեանն, և տալով առաքելոց իշխանութիւն նուիրագործութեան, որպէս և ամենայն քահանայից՝ նոցին յաջորդաց յուղղափառ եկեղեցւոջ. Զոր ինչ ես արարի, ասէ, նուիրագործելով զմարմին իմ և զարիւն, զայդ արասջիք և դուք. և զայս պատուիրեմ ձեզ, զի քանիցս և առնիցէք զայդ՝ արասջիք յիմ յիշատակ: Ո՛վ ամենազօր բանք ճշմարտութեան և արդարև աստուածային գըթութեան: Քանի՜ մխիթարութիւն և մեզ զօր ամենայն առաջի կալ սրբոյ պատարագի, և տեսանել զնոյն խորհուրդ որ կատարեցաւն 'ի վերնատանն. մատուցանել առ Հայրն յաւիտենական զնոյն զոհ որ 'ի Գողգոթայն. նորոգել և վայելել զպտուղ գերապանծ նուիրանացն՝ որ արդիւնագոյն, սիրելագոյն և հաճոյագոյն է վայելչութեանն Աստուծոյ քան զամենայն նուէրս: Որպիսի՜ անուշակ սփոփանք են մեզ՝ զՅիսուս

ունել զօրհանապազ յեկեղեցիս մեր, և դիւրապատրաստ գտանել յայցելութիւն և յընդունելութիւն՝ երբ և կամք իցեն մեր. և անդադար պաշտել և օրհնել զգառնն անարատ՝ համաձայն երանելեացն որ յերկինս։ Հնա՞ր ինչ էր Յիսուսի տալ մեզ աւելի քան զինքն իսկ, և տալ հանապազորդ։ Ո՞յր ուրուք 'ի մէնջ անկանէր 'ի սիրտ խնդրել շնորհ մի այսպիսի։

Նախատես լինէր Յիսուս և լքութեանց, անարժանութեանց և արհամարհանաց սրբութեան՝ որով անարգանք և թշնամանք հասանեն նմա 'ի գոհութեանն. և սակայն ոչ դարշեցաւ կալ մնալ 'ի միջի մերում մինչև 'ի կատարած աշխարհի, նշաւակ անպատկառութեան և նախատանաց՝ որ չառնուն ակն 'ի մեծէ պատուոյ նորա և յաստուածային անձնէն։ Այլ ես յիս ինքն դարձայց։ Նախատեսանէր Յիսուս՝ զի և ես դրժանօք անարգելոց էի զնա թերութեամբք հաւատոյ, յարգանաց և սիրոյ, անպատկառապէս կալով 'ի տաճարս սուրբս, և անջերմեռանդն 'ի ժամ պատարագի, ընդունելով զսուրբ հաղորդութիւնն ունայնասէր սրտիւ. և յայսր ամենայնի վերայ հաճելի համարեցաւ զբնակելն ընդ իս 'ի սրբում խորհրդեանն։ Ո՜վ բարութիւն, ո՜վ անչափ անարգամեծարութիւն։ Տէս արդ, հոգի իմ, քանիպատիկ պարտական իցես սիրալիր փոխարինի։

Քաջ իսկ տեսանեմ, ո՜վ բարի Յիսուս, քանի երախտապարտ եմ քեզ, և քանի ապերախտ. և ամօթ ալից երեսօք կամիմ թաքչել ընդ երկրաւ. այլ վստահութեամբ՝ զոր ազդես յիս՝ մատչիմ առաջի քո. և զի կաս 'ի գոհութեան անդ որպէս 'ի գահոյս գթութեան և շնորհաց, հայցեմ զգթութիւն քո վասն անցելոյս, շնորհս՝ վասն ապագայիս։ Դու բոլորովին իմ ես. անկ է և ինձ

լինել քո բոլորովիմբ : Դու ամենայն ինչ ես իմ. և ինձ անկ է հաճել միայն ընդ հաճոյան քո, վայելել 'ի քեզ, և 'ի քեզ հաստատել զերանութիւն իմ բովանդակ :

Ի հաւատով այս արարից Յիսուսի Քրիստոսի՝ որ կայ 'ի սրբութեան խորհրդեանն, ոչ իբրև 'ի պատկերի և յօրինակի, այլ իբրապէս փառաւորեալ անձամբն. և ջերմեռանդն եղեց առ պատարագն սուրբ :

Խնամք Յիսուսի վասն ապաշխարութեան Յուդայի :

ԼԹ. Գիտէ Յիսուս զխորհուրդ մատնութեան Յուդայի. և ցաւ է նմա յոյժ ողբալի աղէտ առաքելոյն իւրոյ մոլորելոյ դիւաբախ չարութեամբն, և զամենայն ջան 'ի կիր արկանէ՝ որպէս փրկիչ սիրարկու՝ յապաշաւ ածել զնա : Եւ ոչ միայն պատուէ զնա սեղանակից առնելով ընդ այլոց առաքելոցն 'ի հանդիսական Ընթրիսն, այլ և զոտսն լուանայ. և ոչ է անհաւան՝ թէ 'ի Յուդայէ իսկ սկիզբն արար խորհրդական լուացմանն, թէպէտ վասն յանդգնօրէն զառաջին տեղին ունելոյ նորա և քան զՊետրոս, թէպէտ վասն այնպէս ինչ կամելոյ ողորմագութ բժշկին երկնաւորի, որ 'ի վեր քան զամենայն զկարօտելոյն կամի զբժշկութիւն : Եւ ո՞ ոչ սքանչասցի ընդ աստուածային գթութիւնն՝ որ խանդաղատի ընդ հոգի գահավէժ դիմեալ յամբարշտութիւն :

Հայեաց ընդ մարդացեալ Որդի Աստուծոյ բարձրելոյ, զիա՛րդ 'ի ծունր իջեալ առնու 'ի սըր-

բաղձան ձեռամն զաղտեղի ոտս Յուդայի, և լուանայ և գգուէ և գրկէ և համբուրէ, և 'ի գոգ իւր փարէ անճառելի սրտահաճութեամբ: Աւետարանիչն Յովհաննէս պատմեալ նախ զահեղ զըրբապիղծ մատնութիւնն' զոր սատանայի արկեալ էր 'ի սիրտ Յուդայի, իբրև պակուցեալ և ափշեալ պատմէ յետ այնորիկ' եթէ ցո՞ր վայր խոնարհեցաւ Թագաւորն փառաց, զանարգագոյն սպաս ծառայի հարկանել մատնչի իւրում. առ 'ի նշան անտեղիտալի սիրոյ իւրոյ: Եւ 'ի լուանալ զոտս առաքելոյն' որ ոչ ևս է առաքեալ' այլ անուամբ չափ 'ի Թիւ անկեալ, որպիսի՞ հնարս ոչ հնարի առ 'ի լուանալ և զհոգին' որ պղծագոյն ևս է: Ոչ գիտեմք որպիսի ինչ խօսիցի ընդ սրտի նորա գաղտնի ազդեցութեամբ. այլ հաւանելի է յոյժ' եթէ յորդորէ ջերմաջերմ սիրով և գթով, և ողոքէ թողուլ մերժել զչարութիւնն անխծելի: Իսկ ուխտադրուժն կայ մնայ սալացեալ անգորով ընդ խոնարհութիւնն' ընդ որ հիացեալ սոսկան հրեշտակացն դասք. և ոչ ինչ օգտի սիրաքան խրատուք Աստուծոյ խոնարհելոյ 'ի կերպարանս աղերսարկուի:

Ընդ ո՞ր առաւել սքանչացայց ես, ո՛վ քաղցրագութ Յիսուս, ընդ խոնարհութի՞ւն և գթութիւն քո' զայգօրինակ փրկական սիրով գորովելով, եթէ ընդ խեղաթիւր և յամառոտ խստասրտութիւն մատնչին: Այլ քանզի և իմ սիրտ խստացաւ որպէս զՅուդայինն' զդէմ ունելով հզօր և քաղցր ձայնարկութեանդ առ իս: Աստուած իմ, զղջամ ընդ ապառումն և ապստամբկամն իմ. տուր ինձ սիրտ այլ, սիրտ դիւրամատոյց, որ անձնատուր լիցի յօժարութեամբ առ ազդմունս քո: Եւ ո՞ւմ լուայց ես եթէ ոչ լսեմ Աստուծոյ զիս կոչողի և յորդորողի, առ 'ի տալ ինձ յաշխարհի աստ զշնորհս իւր, և 'ի հանդերձելումն զփառս:

Նուիրեցից Աստուծոյ զսիրտ իմ, այսինքն է զկամս, ոչ եւս յամառ եւ խուսափուկ, այլ պատրաստ եւ երագ 'ի հնազանդել ձայնի եւ յերթալ զհետ օրինակի գործոյն Յիսուսի:

Խ. Տեսեալ Որդւոյն Աստուծոյ զյամառեալ մնդեալ խստասրտութիւն սիրելւոյ աշակերտին Յուդայի, որ ոչ պատկառեաց ոչ ձմլեցաւ եւ 'ի լուացման ոտիցն, աւարտեալ զպաշտս գործոյն՝ բազմի անդրէն 'ի սեղան եւ մարգարէական ձայնիւք յողբս հատանի, եթէ մի ոմն 'ի սեղանակցացն՝ ապաշնորհ գտեալ երախտեաց իւրոց՝ քանզի հարեալ է 'ի նենգութիւն, մատնելոց է զնա, կիցս ընկենլով գարշապարօքն զորս լուաց եւ գգուեաց եւ համբուրեաց: Նա յասելն զայս յոգւոց ելանէ դառնապէս, իբրեւ 'ի գիւր ինչ ներքին թախծանացն, եւ խիկ եւ խիկ խռովի յանձին իւրում՝ տեսանելով զթահայեաց աչօքն զմատնիչն, եւ տրտմագին դիմօքն յայտ առնելով զոր յամենողորմն սրտին անձուկ տառապանաց: Խռովի Որդին Աստուծոյ, ոչ առ փոքրոգութեան, որպէս թէ ընդ մատնութիւն իւր վշտանալով, այլ խռովի՝ զի կամի խռովիլ, եւ յայտ առնէ նովին զի անհնարին ծանր թուի նմա անկումն առաքելոյն 'ի բարձրութենէ անտի կարգին, եւ երթալն յաւար սատանայի եւ 'ի ճանապարհ կորստեան: — Բողոքէ դարձեալ Որդին Աստուծոյ ուժգին նախանձաւորութեամբ, եթէ զուն գործեաց խոնարհութեամբն յուղղութիւն եւ յապաշաւ ածել զնենգաւորն. եւ որչափ առնել էր ինքեան արար եւ եցոյց սէր 'ի փրկել զնա, վասն այնորիկ եւ անպարտ է 'ի կորստենէ նորին: Այլ Յուդաս ոչ սարջանայ, ոչ ինչ շարժի եւ ոչ զգաստանայ յայդմ ամենայնէ: Ո՜վ, որպիսի՜ գութ Փրկչին, եւ որպիսի՜ կամակորութիւն մեղաւորին:

Այլ ես զի՞ վայրապար զարմանամ ընդ Յուդա՝ զի ոչ գոռովի 'ի՛ քաղցրութենէ գթութեանցն Աստուծոյ. լաւ ևս է ինձ մտանել 'ի ներքս յիս, և յիշել՝ զի ոչ պակաս քան զՅուդաս սիրէ և զիս Յիսուս: Բողոքէ և զինէն՝ թէ սիրելի է նմա հոգիս իմ, և կամելով կամի փրկել զիս. և եթէ դատապարտեցայց՝ իմ միայն մեղք լիցեն այնմ պատճառք: Զնոյն բողոք հարցէ նա և յաւուրն դատաստանի յանդիման առնելով ամենայն աշխարհի՝ եթէ իւրովսանն արար որ ինչ անկ էր 'ի յաւիտենական փրկութիւն իմ: Եւ զի՞նչ գործեցից ես յայնժամ, կամ զի՞նչ ասացից՝ յորժամ յանդիման լիցին ինձ այնքան շնորհք ներքինք և արտաքինք որք տուանն ինձ, և ընդ նոսին անսից զապախտս իմ առ շնորհսն: Եւ ո՞ գիտէ թէ ոչ վատթարագոյն քան զՅուդաս երևեցայց յայնմ տիեզերաժողով ատենի: Ողորմութիւնք քո ամենուստ զհետ իմ ընթանան, այլ ես փախչիմ թաքչիմ 'ի նոցանէ. և եթէ ամենևին պաշարեալ՝ ոչ գտանիցեմ ելս աղագս՝ նկրտիմ զդէմ ունել: Յորժամ խորհուրդք 'ի սիրտս անկանիցին կրթութեան յառաքինութիւնս ինչ, կամ 'ի զսպել զիս 'ի չարունակ ինչ ախտից, ոչ ինչ միտ եդեալ այնց՝ զանց առնեմ, համարելով զնոսին պարզապէս կարծիս և թուիս մտաց իմոց. այլ խաբիմ չարաչար: Բայց դու, ո՜վ տէր Յիսուս, տուր ինձ ոգի ուղիղ՝ ճանաչել քո ազդեցութիւնս զայն ամենայն՝ որ կամ առ բարին յորդորիցէ զիս կամ 'ի չարէն 'ի բաց դարձուսցէ. տուր ինձ և կամս հլուս և ախորժակս առ ձայն քո:

Առ մեծ և պատուական կալայց զազդմունս աստուածայինս, նաև 'ի մանունս անգամ. քանզի և սոցին զանցառութեամբ՝ մարթ է վրիպել 'ի բազմապատիկ շնորհաց, և յանգիստ կորուստն երթալ:

ԽԱ. Յիսուս հարեալ 'ի սէր հոգւոյ Յուդայի՝ առ 'ի շահել զնա մատչի և յայլ փորձ. և առաջի առաքելոցն ազդողագոյնս իմն բարբառի, եթէ գիտէ զինքն ով է մատնիչ իւր, և թէ մի յերկոտասանիցն է: Եւ այսու բանիւք յայտ առնէ զի Աստուած է, քանզի նախատեսանէ զհանդերձեալ մատնութիւնն, և զգաղտնագոյն խորհուրդս սրտի մատնչին: Եւ միթէ չէ՞ր 'ի դէպ զգաստանալ Յուդայի՝ իրազեկ լինելով 'ի յայտնութենէ անտի՝ եթէ ընդ Աստուծոյ է զոր առնելն կամէր, որում հոլանի են ամենայն ծածուկ չարութիւնք իւր: Զէ՞ր պարտ նմա ուշ 'ի կուրծ լինել 'ի փայլմանէ բարութեանն Աստուծոյ, որոյ գիտելով զմատնիչն՝ և համբերէր. և առանց ինչ կշտամբանաց և ամօթապարտ առնելոյ՝ այնպէս հեշտալուրս խրատէր զնա, և քաղցրիկ իմն գելարանօք յապաշխարութիւն հրաւիրէր: Այլ մինչդեռ զայս օրինակ Աստուած խօսի ընդ Յուդայի, սորա չէ ինչ փոյթ զԱստուծոյ, այլ 'ի չարութիւն մատնութեանն յառեալ կայ: Ի լուր բանից Յիսուսի, եթէ Մի ոմն 'ի ձէնջ մատնելոց է զիս, այլք յառաքելոցն սրտաթափ սրտառուչ լինէին 'ի տրտմութենէ, պակուցեալք հայէին ընդ միմեանս, և իւրաքանչիւր զահի զամօթի և 'ի դալուկն հարեալ քննէ զանձն, առ ամենայն չարիս մարթուչ համարելով զինքն՝ վասն դիւրագայթ բնութեանն մարդկայնոյ: Եւ մինչդեռ զարհուրեալ դողան անմեղքն 'ի խոր թախիծս ընկղմեալք, չարեացապարտն Յուդաս ոչ երկնչի և ոչ զգաստանայ, այլ ժպրհեալ յամառեալ կայ լրբութեամբ 'ի մեղս իւր:

Քաջ 'ի միտ առից զայս 'ի խրատ իմ: Սուրբք արքայութեան մինչդեռ յայս կեանս էին՝ յահէ դատապարտութեան տագնապէին յանձինս. և վասն այնորիկ իսկ հասին փրկութեան. քանզի

երկիւղն զգոյշ կացուցանէր զնոսա 'ի վտանգաց և փոյթս 'ի գործս փրկաւէտս: Դատապարտեալքն 'ի գժոխս՝ կէին յաշխարհի որպէս աներկեանք առ փրկութիւն, և վասն այսորիկ իսկ դատապարտ եղեն. քանզի յանձնապաստան վստահութեամբն կեցին անզգաստք, և անզգաստութիւն ած տարաւ զնոսա 'ի դատապարտութիւն: Երկիւղ յատուկ է ընտրելոց, յանձնապաստանութիւն՝ դատապարտելոց: Յորո՞ց կարգէ իցեմ ես:

Եթէ քննիցեմ զմեղս զոր գործեցի, և զոր կարեմս գործել, կարի իսկ իրաւունք են ինձ զանգիտելոյ 'ի փրկութենէ. և սակայն չերկնչիմ ես, քանզի ոչ զգուշանամ 'ի վտանգաց կենացս՝ որպէս պարտ և պատշաճ էր: Ո՛վ Յիսուս, շնորհեա ինձ զերկիւղն որ սկիզբն է իմաստութեան և տուրք քոյին: Մեծ յոյժ համարիմ զբարութիւն քո, այլ մեծ և զանարժանութիւն իմ. քանզի առաւել քան զՅուդա կարեմ մատնել զքեզ, և մատնեցից՝ եթէ ոչ երկիւղ քո սուրբ արգելուցու զիս: Ո՛հ, յորժամ զմտաւ ածեմ եթէ հայր ողորմութեանց ես դու և Աստուած մխիթարութեանց, տուր ինձ յիշել զի և Աստուած ես վրիժուց, դատաւոր արդար և ահեղ խորհրդովք. որպէս զի մի ունայնացուցէ զիս յոյս, և երկիւղ կալցէ զիս 'ի խոնարհութեան: Մի եղեց յանձնապաստան. և զգուշացեալ փախեայց յաւթից վտանգաց. այս երկիւղ է կարեւոր ինձ 'ի փրկութիւն. և փրկեցայց եթէ միայն այսպէս երկեայց:

ԽԲ. Տակաւին չասէ շատ սէր Յիսուսի վասն Յուդայի: Յետ ասելոյն 'ի հասարակի՝ եթէ մի ոմն յերկոտասանիցն է մատնիչն, ասէ և 'ի մասնաւորի, թէ Նա է որ մատնելոցն է զիս՝ որում

թացից զպատառս և տաց. և տայ խնկոյն Յուդայի: Սիրոյ խրատու հնարք են և այս՝ առանց զնա անուանելոյ. բայց Յուդայի՝ որում անկ էր յինքն ձգել զբանն և զգործ, անփոյթ եղեալ՝ չառնու յանձն և չօգտի ինչ. և զհամբերութեամբ Փրկչին ապախտ արարեալ՝ առաւել ևս ապարթանէ: Յայնժամ Յիսուս զքաղցրութիւն իւր փոխէ 'ի սաստկութիւն, սպառնալ, և վայս աշաւորս կարդայ մատնչին. որպէս զի զուշով եկեալ սարշասցի Յուդաս: Այլ 'ի զուր է նմա ամենայն. քանզի դեղեալ և թմբրեալ յամբարշտութեան՝ յամառեալ կքրեալ կայ անհամբոյր առ հեշտալին, անընդոստ առ արհաւիրսն. որպէս անասուն ամեհի՝ ոչ իւիք ամոքի, ոչ իւիք նուաճի:

Տես ինձ, քանի՜ զարմանալի են ողորմութիւնքն Աստուծոյ. այլ քանի՜օն արդար և սպառնալիք նորա. քանզի բաղում անգամ պատահէ ոչ ողոքանաց ազդել և ոչ ուղղութեանց խրատու: Այլ ուստի՞ են Յուդայի յետին աղէտքս:
— Մխա դիր հոգատանաց խորամանկ կեղծաւորին. բարեկամ Յիսուսի տայ կարծել զանձն՝ մինչ թշնամին է. ընդ նմա մխէ զձեռս իւր 'ի սկաւառակն, և ուտէ ուրախութեամբ՝ զի ցուցցէ զանձն անմեղ, և անստգիւտ 'ի խղճէ մտաց. և յայն լրբութիւն անզգամութեան հասեալ կայ, զի ոչ այլ ինչ խնդրէ բայց ծածկել և թաքուցանել զնենգութիւնն. առաւել կամելով չերևել մատնիչ քան չլինել: Յայս սահման եթէ հասանիցէ հոգի՝ վճարեալ է վասն նորա: Ոչ ուրեք երբեք տեսաւ կեղծաւոր ոք 'ի զեղջ եկեալ. քանզի նա է ամպարիշտ՝ որ արհամարհէ զամենայն հնարս կարևորս և սեպհականս յապաշաւ ածել:

Աստուած ամենայն փայելչութեանց, առ քեզ

վերառաքեմ 'ի խորոց սրտիս զաղաչանս իմ և զհառաչանս իմ. մի՛ թողուր զիս երբեք անկանել յապառում խստասրտութիւն: Եթէ անաչառ արդարութեամբ կամիցիս զիս դատել՝ առաքեա ինձ զոր և այլ կամիս պատուհաս. տուր զիս կոյր և խուլ և համր, հաշմ և վարակեալ ամենայն ախտիւք. ես յամենայնի երկիր պագից և գոհացայց զողորմութենէ քումմէ. այլ մի՛ տար ինձ սիրտ անուղղայ և լծընկէց խրատուց քոց փրրկականաց: Պահեա զիս և զերծո 'ի կեղծաւորութենէ՝ զոր զգամն բունեալ յիս, յորժամ ջանահնար լինիմ առաւել ծածկել քան թէ ուղղել զչարիս իմ, առաւել երևել քան թէ լինել առաքինի: Հպարտութեան ծնունդ է ախտս այս, և ոչ ինչ բժշկի՝ բայց խոնարհութեամբ՝ զոր ժտիմս առ 'ի քէն, և ակն ունիմ ընդունել յանբաւելի 'ի քո գթութենէդ:

Գուն գործեցից ատել և գարշիլ 'ի կեղծաւորութենէ՝ անհնարին ատելութեամբ. և քաջ զգուշացայց գնացից վարուց իմոց և դիտման մտացս, զի մի՛ սողոսկեալ սպրդեսցի 'ի ներքս ախտս այս:

խԳ. Յաննշան գեղջէ միջէ անկած ոք էր Յուդա, յոր բարեպաշտութեամբ ակն արկեալ Յիսուսի ընտրեաց յաշակերտութիւն իւր, և վերապատուեալ քան զաշակերտսն՝ 'ի դասս առաքելոցն կարգեաց, և 'ի դասու անդ առաքելոցն ընտրեալ կացոյց զնա տնտես սրբազան ընտանեացն: Յաւել տալ նմա իշխանութիւն 'ի վերայ դիւաց, և զօրութիւն սքանչելագործութեան, և այլ ևս շնորհս բազմապատիկս՝ ըստ բարձրութեան աստիճանին: Այլ նա 'ի վերայ այսքան բարեաց կամովին հարեալ 'ի կուրութիւն, և գահավէժ մղեալ զանձն յամբարշտու-

թիւն , տակաւին ոչ խափանէր զսէր Փրկչին աշխարհի՝ բանիւք և գործովք զկանգնումն իւր հնարել: Եւ մի 'ի հզօրագոյն հնարիցն այս էր, արկանել 'ի միտս Յուդայի զյիշատակ այնքանեաց երախտեացն զոր ընկալաւ յաստուածային գըթութենէն. զի զիա՞րդ մարթ էր նմա յայն սըրբապիղծ խոհերս չարեաց ձեռն արկանել՝ և ոչ յիշել զմեծամեծ շնորհս երախտեաց Յիսուսի՝ որոց պարտականն էր, զի այնքան սիրեցաւ և մեծարեցաւ 'ի նմանէն: Սակայն ոչ իմիք ազդեաց և այս. քանզի և ոչ իմիք խնամ կալաւ ժպիրհն և ապաշնորհ. նա մանաւանդ յետ զփորձ առնըլլոյ զամենակարողութեան, զխոնարհութեան և զբարեգթութեանն Յիսուսի, առաւել ևս ուխտադանց եղև, անզգայեալն չար քան զամենայն գազան: — Կարէր ապաքէն Յիսուս 'ի վկայութիւն կոչել զերկինս և զերկիր՝ գթոյ աղեացն, և գոչել. Զի՞նչ առնել էր և ոչ արարի 'ի դարձ զղջման խստասիրտ առաքելոյն իմոյ Յուդայի. զամենայն 'ի վար արկի, զսէր և զպատիւ, զխոնարհութիւն և զխրատ, զերկիւղ և զաղերս. այլ նա զամենայն արհամարհեաց: Եւ է՞ր ինչ այլ աւելի կամ առնելի՝ զորով զանց արդեօք արարի: — Այլ եկեսցէ ժամանակ զի զայն և զինէն առասցէ Քրիստոս: Տես քննեա, հոգի իմ, և զոր արարն և զոր առնէ խանդակաթն քո Փրկիչն՝ առ փրկութիւն քո յաւիտենից: Յի՞մ իմիք պակաս գտաւ առ 'ի քէն աստուածայինն ողորմութիւն՝ 'ի հրաման շնորհացն մարմնաւորաց և հոգևորաց, հանրականաց և մասնականաց. կամ յի՞մ իմիք թերանայցէ տակաւին:

Ո՜վ Աստուած իմ, քանի՜ բարերար ես դու, և քանի՜ չարաչար եմ ես: Մինթէ անդուլ բարերարել քո առ իս՝ յապաշնորհութիւն ածիցէ զիս: Իցէ՞ ժամ և վայրկեան՝ յորում ոչ արաս-

ցես ինձ բարիս, և յորում ոչ յաւելուցուն ինձ պարտք երախտեաց և սիրոյ առ քեզ: Արդ խոնարհեալ և զամօթի հարեալ՝ ցաւիմ և ապաշաւեմ զապերախտութիւն իմ. և գիտելով զսա խիկ չարագոյն խափան շնորհաց՝ զոր հաճի բարութիւն քո առնել ինձ՝ յողորմութիւն գթութեանց քոց ապաւինիմ: Ո՛հ, մի հայիր յոր ինչ էի. այլ կոչեա զիս և տաց փութով պատասխանի. հրամայեա ինձ և անդէն և անդ հնազանդեցայց. և շնորհօք քովք կազդուրեալ՝ գոհացայց զքէն և սիրեցից զքեզ:

Յիշեցից անմոռաց զբազմապատիկ բարիսն զոր արար ինձ Տէր և առնէ, գէթ յայս սակս՝ զի մի ես մեղայց նմա: Միայն շնորհն չմատնելոյ զիս 'ի դժոխս՝ որոց բազում անգամ պարտաւոր դըտայ, անբաւ երախտեաց պարտական զիս կացուցանէ:

Ժպիրհ նենգութիւն Յուդայի 'ի մատնելն զՅիսուս:

ԽԴ. Յետ հաստատելոյ զամենասուրբ խորհուրդն գոհութեան, բաշխէ առաքելոցն, տայ և Յուդայի՝ որ չէր մերժեալ 'ի յետին ընթրեաց անտի: Նմա ևս հաղորդէ ամենաբարին Յիսուս ընդ երկաքանչիւր տեսակօքն՝ զամենասուրբ մարմինն և զամենապատիւ արիւնն, զի մի ինչ պակասեսցէ յապաշաւ զնա ածելոյ, և մի զլկեսցէ զնա 'ի հզօրագոյն հնարից դարձուցանելոյ զնա յապաշնորհ նենգութենէն: Այլ նորա այն ինչ ընկալեալ զխորհուրդն, և ահա մտանէ 'ի նա սատանայ: Մատնեալ իսկ էր նորա զանձն իւր

սատանայի՝ յորժամ փորձութեանն հաւանեցաւ. բայց տակաւին չէր բռնացեալ սատանայի 'ի վերայ նորա, այլ յետ սրբապիղծ հաղորդութեանն՝ գրաւեաց զնա։

Խորհուրդն հաղորդութեան նոյն է առ ամենեսեան. այլ մինչ կերակուր կենաց լինի այլոց առաքելոցն Ճաշակ մահու լինի առ Յուդա։ Զիք պատուական իբրև զխորհուրդն զայն, չիք հզօրագոյն քան զայն 'ի փրկագործութիւն. այլ նիւթ դատապարտութեան լինի Յուդայի, որ անարժանութեամբ ընկալաւ զայն. և իսկ և իսկ մոլեալ լրբի, և սրբապղծութեամբն կնքէ զխստութիւն սրտին 'ի չարութեան անդ իւրում։ Ո՜հ, ո՛րքան խիթալի է անարժան հաղորդութիւն. զի որ դեղն է կենաց՝ փոխի 'ի թոյն մահաբեր, վասն անօրէնութեամբ մատուցելոյն ընդունելութիւն։ Մի անգամ եթէ հաղորդեցաւ Յուդաս, այլ անարժանութեամբ, և 'ի նմին յայնմ նուագի 'ի գլուխ տարաւ զկորուստ անձին իւրոյ։ — Յուշ լիցի ինձ, զի 'ի հաղորդելն անդ՝ չև ևս էր Յուդայի մատնեալ զաստուածային վարդապետ իւր, այլ միայն զմտաւ ածեալ, և կամօքն հաւանեալ 'ի մատնութիւն, և վասն այսու միայնոյ մեղաց մտաւորի և ոչ գործնականի՝ սրբապիղծ եղև հաղորդութիւն նորա. յորմէ 'ի միտ առից՝ եթէ և մտաւոր մեղք երբեմն մեծագոյն զեան գործեն հոգւոյ քան զգործնականն, վասն առ թեթև ինչ գրելոյ նոցին։ Մի տացէ ինձ Տէր թոյլ՝ հաղորդել երբեք արատեալ ունելով զխիղճ այսպիսի ինչ մեղօք։

Աստուած իմ, եթէ տեսցես զիս երբէք խղճիւ մտաց արատելով մահացու մեղօք՝ գալ 'ի հաղորդութիւն, ուժգին պաղատանօք հայցեմ 'ի քէն՝ բառնալ զկեանս իմ յաշխարհէ՝ քան թողուլ գթել ինձ յայսքան եղեռն անհեթեթ։ Յոյժ

զանգիտեմ յանցեալ հաղորդութեանց իմոց. քանզի գաղջ էի վարուք, և ոչ գիտեմ թէ ունէի՞ զեղջ և զառաջադրութիւն անկաւոր առ 'ի բարւոք հաղորդութիւն. այլ արդ ցաւիմ և զղջամ ընդ ամենայն չարիսն իմ, որպէս և աչք քո տեսանեն: Մի թողուր, Տէր, զի խորհուրդն սրբութեան՝ զոր կարգեցեր 'ի փրկութիւն իմ յաւիտենական՝ լիցի ինձ պատճառք կորստեան: Եւ զի լիցի ինձ 'ի փրկութիւն, շնորհեա ընդունել զայն մաքրութեամբ և ջերմեռանդեամբ:

Առաջին հաղորդութիւն Յուդայի՝ եղև նմա և վերջին: Վասն որոյ և եղուկ ինձ՝ եթէ և մի անգամ արժանապղծութեամբ հաղորդեցայց. զի մարթ է թէ յետին լիցի ինձ այն, և զդատապարտութիւն իմ ճաշակեցից նովիմբ: Բևեռեցից 'ի սրտի իմում զայս զերկիւղ:

ԽԵ. Վաղվաղակի յետ ընդունելոյ զամենասուրբ Հաղորդութիւնն՝ ելանէ Յուդաս 'ի վերնատանէն. իսկ այլք յառաքելոցն՝ Քրիստոսի նըմանելով որ գոհացաւ զերկնաւոր Հօրէն՝ վասն մեծի շնորհիս պարգևելոյ եկեղեցւոյ, կան մնան անդ ջերմեռանդն զգաստութեամբ մտաց. և եռանդնագին ըղձիւք խոնարհութեան և սիրոյ՝ գոհութիւնս մատուցանեն Տեառն, որ հաճեցաւ հաղորդել ընդ նոսա խորհրդեամբն սրբով: Իսկ անօրէնն ժողովէ 'ի միտս իւր խորհուրդս օտարոտս. յընդունել անդ զմարմին և զարիւն Աստուածամարդոյն՝ ոչ եղև նմա իղձ զղջութեան, և ոչ յետ ընդունելութեանն փոյթ 'ի բարեպաշտիկ իմացմունս. վասն այնորիկ և ոչ ինչ ակն ածեալ 'ի մեծէ վայելչութենէն Աստուծոյ՝ զոր 'ի ծոցին կրէր, ելեալ մեկնի վաղվաղակի: Եթէ չէր մեկնեալ գնացեալ, այլ միտ եդեալ մեծութեան խորհրդոյն՝ կայր մնայր ընդ ամենա-

գորով Փրկչին՝ զոր յաղխ իւր ընկալեալ էր, 'ի բայց թողոյր արգեօք զնենգ մատնութեանն, և զգաստացեալ ապաշաւէր զմեղսն, շնորհօք և օգնութեամբ սեփական լուսոյ՝ որում յայնմ երջանիկ պատեհի գամագիւտ լինէր: Ո՛վ եղկելի Յուդաս. որ մերժեաց զբարեմոյն գթասիրութիւն Տեառն Աստուծոյ, որ եկեալ էր 'ի սիրտ նորա՝ առ 'ի մաննաւորել նմա զգանձս շնորհաց իւրոց:

Յուդայի նմանք են և այնոքիկ որք այն ինչ ընկալեալ զսուրբ հաղորդութիւնն՝ վաղվաղեն 'ի բաց մեկնիլ՝ առանց մատուցման արժանաւոր գոհութեան: Աւա՛ղ մեզ: Եթէ օրէնք իսկ հրամայեն մեզ անդադար գոհութիւնս մատուցանել Աստուծոյ՝ վասն առ 'ի նմանէ ընկալեալս շնորհաց, եթէ և յետ յագելոյ մարմնաւոր կերակրովք սեղանոյն՝ պարտ է մեզ գոհանալ զնմանէ, քանի՜օն ևս չիցեմք պարտական սրտառուչ շնորհակալեաց՝ յետ ընդունելութեան սրբոյ խորհրդոյն, վասն անպատումն պարգևաց զոր առար մեզ. այն զի և 'ի նմին իսկ 'ի Փրկչէն մերմէ ուսանիմք զայս: Ոչ թէ միայն քնէած՝ այլ և մեռեալ իսկ է հոգի՝ որ յետ հաղորդութեանն ցուրտ և անզգայ կայցէ:

Իսկ զի՞նչ զանձնէ իմէ ասացից, որոյ բազում անգամ յետ հաղորդելոյ՝ միտքս իսկոյն ցնդմամբ զբաղին, և սիրտ յընդունայնութիւնս զառածանի, թողլով միայնակ 'ի ներքս զՅիսուս. որպէս թէ ձանձրոյթ ինձ իցէ անձն նորա: Ո՜հ, և ե՞րբ, հոգի իմ, այնպէս անկ էր բորբոքել ըղձիցդ՝ որպէս 'ի տանելդ արդ 'ի ներքս 'ի քեզ զԱստուածն քո ամենասիրուն: Եւ դու այդչափ վաղվաղես մեկնիլ 'ի նմանէ. ա՛յդպէս տաղտուկ թուի քեզ փոքր մի պարապիլ ընդ նմին: Ո՛վ Աստուած իմ, ապաշաւեմ ատեամ զամենայն ան-

պատկառութիւնս իմ, զպղերգութիւնս, զդաղջութիւն և զցրտութիւն. և գոհանամ զքէն վասն այնքան նուազացն յորս անգոհացող եղէ. և խնդրեմ 'ի քէն շնորհս յուշ առնելոյ ինձ զերախախս ողորմութեանցդ՝ զոր այդպէս առատապէս զեղուս յիս 'ի խորհրդեանդ սրբում:

Յետ հաղորդութեան յուշ լիցի ինձ Յուդայն մոլեալ 'ի նենգութիւն՝ վասն աներանդութեանն. գիտական համարեցայց զամենայն շտապ փութով մեկնելոյ անտի. և միակ փոյթ ինձ լիցի մատուցումն ըղձաւէտ գոհութեանց:

ԽԶ. Տեսանէ Յիսուս զՅուդա՝ զի անձնապարեալ եղանէ յընթրեացն և մեկնի. և գիտելով քաջ թէ վասն էր, ոչ ևս խօսի ընդ նմա, ոչ առ 'ի շրջել զմիտս նորա 'ի մատնութեանն խորհըրդոյ և ոչ առ արգելուլ զնա. այլ միայն ասէ ցնա, Երթ և արա, և արագիր փութով զոր խորհիս: Ոչ եթէ հրամանք ինչ էն բանքս, այլ նախատացութիւնք, կամ թէ թոյլտուութիւն, որով ոչ արգելու զմատնիչն և ոչ 'ի նոյն յորդորէ. չկամի ամենևին զկորուստ նորա՝ թէ և փափագիցէ անյեղլի կամօք զփրկութիւն աշխարհի. և արիական ոգւով յայտ առնէ թէ ոչ զանգիտէ ուստեք, այլ և պատրաստ է 'ի կատարել զամենայն որ հաճոյ է կամաց Հօր իւրոյ: Յանդիմանութիւն է և այս առ Յուդա, որով ծանուցանէ Յիսուս եթէ յետ զամենայն ասելոյ և առնելոյ յուղղութիւն ածել զնա՝ թողու արդ 'ի խոտորնակ կամս չարութեանն. Զի զայդ կամեցար՝ այդպէս եղիցի. երթ և արա զոր կամիսդ. և ես ոչ ևս զնոյն խնամ փութոյ տարայց՝ որպէս մինչև ցարդն:

Ահաւադիկ աւաղելի վիճակ՝ յոր երբեմն յեղակարծուց ժամանեն մարդիկ: Յետ երկայնա-

մանելոյ Տեառն համբերութեամբ, ժուժալով և սպասելով մինչև առ սահման մի, յետոյ ուրեմն Թողու զնոսա 'ի միգի մոլորութեան' յոր կամովին զառածեցան. և Թոյլ տայ նոցա անձնատուր լինել 'ի կոյր և 'ի խեղաԹիւր կիրսն. որպէս զի անարգել և անդիմակալ երԹիցեն չարեաց 'ի չարիս. եԹէ զմեղս կամի' մեղիցէ. եԹէ զճնաս իւր խնդրէ' ճնասեսցի, և եԹէ զդատապարտուԹիւն իւր' դատապարտ լիցի: Իբրև մեղք' 'ի մարդոյ անտի գայ այդ չար. իբրև պատուհաս' յԱստուծոյ:

Ո՜վ, որպէս զի ահաւոր ես, Տէր, 'ի դատաստանս քո, զաղտնապէս արդար, և արդարապէս զաղտնի: Քաւ լիցի ինձ ժամանել յայդ պայման վիճակի. վասն այսորիկ այժմէն և հանապազ քեզ յանձն առնեմ զկամս իմ և զազատուԹիւն և զամենայն անձնիշխանուԹիւն: Մի Թողուր ինձ կեալ ըստ սովորուԹեան իմոյ, զի մի զհետ երԹալով ցանկուԹեանց իմոց' խաւարեսցին միտք իմ քան զՅուդային: Ես առանձինն զըրաստ իմն եմ անսանձ' որ անքանօրէն բերի յաղտեղի ախորժակսն. և եԹէ հանցես յինէն զդանդանաւանդս' 'ի կորուստ իմ միայն ընԹացայց չարեօքս: Սանձեա զիս, Տէր օրինօք քովք և հաւատովք. ածել դանդանաւանդ 'ի կզակս իմ' երկիւղիւ անսահման արդարուԹեանդ. և յաւիտեան գոհացայց զանբաւ ողորմուԹեանց քոց:

Մեղաւ Յուդաս, և խորհրդովքն յաճախեաց 'ի մեղս. վասն որոյ զդՂՇ կացից 'ի մատոր մեղաց, առ 'ի դարշել և խորշել 'ի մեղաց որ գործով: Ոչ ոք իսկ և իսկ անհնարին չար լինի, այլ առ սակաւ սակաւ:

խէ. Մեկնեալ յառաքելական դասուէն' գնայ Յուդաս 'ի խնդիր Թշնամեացն Քրիստոսի, զըլ-

խաւարայ ժողովրդեանն, զի սահմանեսցեն վասն նախահոգակ մատնութեանն և կատարեսցեն: Այլ մինչև յառաջեալ մեր 'ի քննութիւն գործոյն, նշանակեսցուք, զի 'ի յիշել աւետարանչացն զայդ՝ յեղյեղեն ստէպ զՅուդայէ մի յերկոտասանիցն գոլ, առ 'ի յայտ առնել զծանրութիւն հանդամանաց իրացն: Մարթ էր ասել մի յաշակերտաց, որ եօթանասունն և երկուքն էին, հետևողք Քրիստոսի, այլ ոչ ներքին մտերիմք Փրկչին. սակայն ոչ վայրապար կոչի նա Մի յերկոտասանից, զի ծանիցի մի յառաջնոցն լինել, յընտրելոցն լաւագունից, կոչեցելոցն և բարձրացելոց 'ի վեհագոյն արժանապատուութիւնս եկեղեցւոյ: Առաքեալ էր Յուդա. և կոչմամբն յառաքելութիւն յայտ իսկ է թէ ունէր և ըզշնորհս կատարեալ առաքելութեան 'ի փրկութիւն անձին և այլոց. և սակայն առաքեալն ուրացող եղև. իշխան էր 'ի կրօնս, և եղև որդի կորստեան. 'ի գերամբարձ պարունակի սրբոցն կայր, և կործանեալ յանդունդս չարութեան փոխեցաւ 'ի սատանայ:

Ո՞ւր գտցի աներկեւանութիւն 'ի կործանմանէ, եթէ անկաւ յերկնից արուսեակն հրեշտակ ստեղծեալ, անկաւ Ադամ 'ի դրախտին՝ որ անմեղն էր հաստեալ. և յընտանեգոյն մերձաւորն Յիսուսի՝ անկաւ Յուդաս ընտրեալն 'ի դասս առաքելոց: Ո՛վ, որպէ՜ս զի մեծ են և անքննինք և խորինք դատաստանք քո, Աստուած իմ, դատաւոր արդար, և հզօր յ'առնել իրաւունս: Այլ ինձ ոչ է արժան զայսոսիկ զմտաւ ածելով սըրտաթափ լինել և փոքրոգի խորհրդովք վհատել. այլ միայն կալ յերկիւղի և 'ի խոնարհութեան. մի լինել յանձն ապաստան, այլ ամենայն հնարիւք զգուշանալ 'ի վտանգաց իմոց: Զի եթէ որ վայելէրն 'ի ներկայութեան, 'ի մտերմութեան,

'ի վարդապետութեան և յիշխանութեան մարդացելոյ Որդւոյն Աստուծոյ՝ յայն վիճս չարութեան խարդաւանեցաւ, քանի՛ ևս դիւրագոյն է ինձ յեղակարծումն գլորել յամենայն ապիրատութիւնս, որ զի և ամենեքին տկար եմ և չուառական և զիրկ յառանձինն շնորհաց անտի: Եթէ քաջ խորհեցայց և 'ի միտ առից՝ թէ իմ չիք ինչ առ 'ի վստահել յանձն, և թէ սուրբ ևս իցեմ այսօր՝ կարեմ վաղիւն տարամերժեալ լինել քան զՅուդաս, զի չիք 'ի մեղաց զոր թէ չկարիցեմ գործել. եթէ քաջ խորհեցայց և 'ի միտ առից՝ թէ ոչ գիտեմ զինչ լինելոց է ինձ և 'ի ժամանակի և 'ի յաւիտենսն, Աստուած իմ, զիա՞րդ իշխե ամբարտաւանութիւն զօրանալ յիս, կամ կըռուան գտանել 'ի սրտիս. և սակայն բանացեալ է անդ: Տպաւորեսցի յիս գոնեա, ո՛վ Տէր, Ճըշմարտութիւնս այս, եթէ զանձն իմ խաբեմ յորժամ համարիմ լինել ինչ:

Խոնարհեցայց և առ ընկերօք իմովք, մի՛ գեր 'ի վերոյ համարել զիս քան զայլս. զի ո՞ գիտէ թէ զոր ստորև քան զիս համարիմ՝ ոչ փրկիցի. և ո՞ գիտէ թէ որ լաւագոյն կարծեմ զիս՝ ոչ դատապարտեցայց:

ԽԸ. Մտեալ Յուդայի 'ի ժողով գլխաւորաց Հրէութեանն՝ յայտնէ զխորհուրդս մտացն, 'ի նմին իսկ 'ի պահու յորում վաճառեալ խորհէին նոքա եթէ զիա՞րդ կալցեն զՅիսուս և մատնեսցեն 'ի մահ: Արժան է նկատել և զայս, զի չէր ուրուք հրապուրեալ, յորդոր մատուցեալ կամ խնդրեալ 'ի նմանէ զսպաս մատնչի հարկանել. այլ ինքնին ադիկամի զանձն ընծայեցուցանէ: Ո՛վ անհեդեդ չարութեան և ամբարշտութեան անզգամին: Քանզի առաջօք իմն համարէր զըսքանչելիսն Քրիստոսի, և չհաւատայր Աստուած

զնա լինել, և առ տուակէ կոչէր զնա վարդապետ, և ծաղր առնէր զարբաղան խորհրդոցն, 'ի դէպ է համարել թէ առ 'ի պատրուակել իմն զեղեան մատնութեանն՝ ջանահնար լիցի դատափետ առնել զՔրիստոս, զի չարեացապարտ և արժանի մատնութեան ցուցցէ: Քանզի մեծ լինի խնդութիւն նախարարացն այնոցիկ ընդ յաջողանս անիծելոյն. մեծապէս սրտահեշտանան զի և աշակերտքն վկայեն զՅիսուս չարագործ լինել և ատելի ինքեանց իսկ. և ոչ դանդաղեն մահապարտութեան արժանի զնա դատել՝ վասն մեծամեծ քարուականացն զոր լսեն 'ի միոյ 'ի նորին իսկ առաքելոց: Ճշմարտութիւնս համարին զամենայն սուտս Յուդայի, և զոր ինչ առ նենգութեան և չարութեան ևեթ ասէն՝ թուեն առ նախանձայուզութեան և 'ի չքմեղս խղճի մտացն ստացեալ: Եւ ո՞ կարասցէ հաստ լինել թէ քանի՛ թշնամանք եղեն Քրիստոսի 'ի սրբապիղծ լեզուէ անտի. ո՞ կարասցէ 'ի միտ առնուլ քանի՛ անհամբոյր կիրք և դառն աղէտք իցեն նմա զըրպարտութիւնքն մենքենայեալք՝ զոր կուտեաց զնովաւ իւր իսկ առաքեալն:

Ինձ այնպէս թուի՝ եթէ յայս դէպս, ո՛վ քաղցր Փրկիչ իմ, ասացեր ընդ մարգարէին.
« Թէ թշնամւոյն նախատեալ էր՝ համբերէի ար-
« դեօք. կամ ատելւոյն մեծաբանեալ էր 'ի վե-
« րայ իմ՝ թաքչէի արդեօք 'ի նմանէ. իսկ դու
« մարդ հաւասար իմ, առաջնորդ իմ, և ծանօթ
« իմ: Որ ուտէր զհաց իմ՝ յաճախեաց առնել ինձ
« խաբէութիւն »: Անհամբոյր են նախատինք. և դու Յիսուս, համբերես հանդարտօրէն. և թէպէտ ունել ունիս իրաւունս զչարելոյ՝ ոչ խռովիս, ոչ վրդովիս յանմեղութեան քում ընդ ամբաստանութիւնս Յուդայի: Մեծահրաշ է օրինակդ խոնարհութեան և համբերութեան զոր

տաս ինձ. այլ ես ինչ ոչ օգտիմ. քանզի թէ ոք բանս երկուս քրթմնջիցէ զինէն, ես գոռոզութեամբ և կարծմութեամբ կրկնապատիկ գանպարտամ զնմանէ: Բաղում անգամ նուաստանամ, այլ ոչ խոնարհիմ, քանզի ցասնում և սրտանիմ ընդ որ զիս խոնարհեցուցանեն և չառնում յանձն խորհել: Զգամ, Տէր, հպարտութեանս, որ ես քան զես աճէ յանձին իմում. և յուսահատ լինիմ 'ի նուաճելոյ զկիրս իմ, քանզի յորժամ 'ի փորձ մատչիմ՝ վրէպ գտանիմ 'ի յաղթութենէ: Այլ 'ի քեզ ապաւինեալ՝ ակն ունիմ քոյին օգնութեամբ յաղթող լինել հպարտութեանս:

Եղից 'ի մտի համբերել քրթմնջանաց որ զինէն՝ օրինակ ունելով զՅիսուս. և զգոյշ եղէց 'ի նմանելոյ Յուդայի չարախօսի զայլոց. ոչ գանգատեցայց զումեքէ, մանաւանդ զառաջնորդաց:

ԽԹ. Տեսանէ Յուդա եթէ հաճոյ է քահանայապետից թելադրութիւն իւր զկալանաց Յիսուսի. և զի գլխաւոր աւիթ մատնութեան իւրոյ արծաթսիրութիւնն է, սակ արկանէ կենաց վարդապետին իւրոյ. «Զի՞նչ կամիք, ասէ, տալ ինձ, զի մատնեցից զնա ձեզ»: Զայս ասէ անպարիշտն՝ թողեալ յիրաւադատութիւն նոցին զվարձսն, որպէս թէ զանարգագոյն ինչ և զանպիտան յանպիտանեաց հանցէ 'ի վաճառ: Ո՜, որպիսի՜ անարգանք Որդւոյ յաւիտենական Հօր, կեցուցչի և տեառն աշխարհի, թողլոյ 'ի վարկ և 'ի գնահատումն թշնամեաց՝ որք ոխերիմ ատելութեամբ ատեան զնա: Քահանայքն խոստանան Յուդայի 'ի վարձս սպասաւորութեան գործոյն՝ երեսուն արծաթի, այլ 'ի փոքունց անտի և 'ի խոտան դրամոց, զի այդ էր

գին ստրկաց , և զդոյն նախասացեալ էր մարգարէին 'ի գինս Մեսիայի: Առանց ինչ ընդ բանս ածելոյ շատանայ Յուդա , համարելով շահավաճառ. մեծ արարեալ. և այնպէս իմն թուեցուցանէ՝ եթէ շատանայր և ևս նուաղագունիւ՝ եթէ այնպէս ինչ տային . կնքէ զսակ դաշինն , և այնուհետև խորհի գտանել պատեհ զպարտաւորութեանն կատարել գործ : Առաւել քան երեք հարիւր դենարի համարեցաւ զիւղն նարդեան՝ որով օծանէր Մագդաղենացին զՅիսուս , իսկ այժմ և ոչ երեսուն դենարի հաշուի զարժէգինս նորին Յիսուսի : Ո՛վ կոյր և խելացնոր վաճառական . եթէ առ Մագդաղենին կամ առ ամենօրհնեալ Կոյսն երթեալ ասէր . Զի՞նչ կամիք տալ ինձ զի վաճառեցից ձեզ զՅիսուս , որպիսի՜ գինս ոչ կշռէին նմա , քաջագիտակք անհամեմատ արժէիցն :

Այլ մեք դարձցուք 'ի մեզ ինքեանս : Քանի՜ ինչ արժէս տայցեմք Յիսուսի հանապազօր : Պժգամք ընդ Յուդա՝ զի այդքանոյ փոքու իմիք մատնեաց զՅիսուս . և ոչ զգուշանամք 'ի սոյն մատնութենէ՝ միով միով մեղանօքս : Այո , արդարև այդպէս է , հոգի իմ . քանիցս և մեղս մահացուս մեղար , այնքան և մատն եղեր մարդացելոյ Որդւոյն Աստուծոյ , և նուաղագոյն քան զՅուդայն ետուր արժէգինս , առաւել մեծ և սիրելի համարելով զապիրատ ինչ հաճոյս ախորժակաց : Ո՛վ վատշուեր վաճառական , անգատ և անհաւատ : Եւ դու , Աստուած իմ , տեսեր և գիտես զամենայն մատնութիւնս իմ՝ որովք անարգեցի զանսահմանելի մեծվայելչութիւն քո , խոտան համարելով զնա մերթ քան զամպարհաւաճ և զդիւրացասումն ինչ հաճոյս իմ , և մերթ քան զդայական ինչ ախորժակս : Եւ զիա՞րդ ոչ անդնդասոյզ արարեր զայսպիսի ոք նենգիչ և

մանիլ: Երկիր պագանեմ և գոհանամ զողորմութեանց քոց, ոչ իշխելով առ ամօթոյ և զաչս ընդ երկինս ամբառնալ. և զի ոչ իւիք այլով հնար է ինձ զարման առնել չարեացս, զապաշաւղջմանս վերընծայեմ քեզ, և զառաջադրութիւն կամացս՝ 'ի վեր քան զամենայն ինչ յարգելոյ և սիրելոյ զքեզ: Լուսաւորեա զտգիտութիւնս իմ, օգնական լեր տկարութեանս, ջրեա և ջնջեա զչարութիւն իմ: Զխորհուրդ մեծի սիրոյ քո տեսանեմ ես 'ի փրկագործութեանդ՝ յորում այդքան դիւրագին կամեցար վարկանիլ. որպէս զի մի ոք 'ի չքմեղս լիցի ասել թէ ոչ բաւեմ գնել զնա: Ո՛վ քաղցուենի Յիսուս, եթէ քեզ գին արժանաւոր սիրելն իցէ, ահա սիրեմ զքեզ. և եթէ սակաւ սիրիցեմ՝ յաւել ինձ զսէր քո: Քննեցից զանձն իմ եթէ սիրիցե՞մ զԱստուած ճշմարիտ և գերունակ սիրով, նախամեծար առնելով զշնորհս նորա քան զամենայն ինչ: Իցէ՞ ինչ իր յոր այնպէս յարեալ իցեմ՝ զի խափանիցէ յինէն զսէրն Աստուծոյ:

Բանք Քրիստոսի յետ վերջին Ընթրեացն:

Ծ. Յաւարտել օրինական ընթրեաց զատկին և խորհրդականին Հաղորդութեան, զտեղի առնու Յիսուս առ վայր մի մետասանիւք առաքելովքն 'ի սեղանի անդ. և սիրական անուամբ որդւոյ կոչէ զնոսա. և հրաժարի 'ի նոցանէ խանդաղատագին դիմօք որպէս զհայր որոյ երթալոց իցէ յաշխարհ հեռաւոր: Զուարթութեամբ մեծաւ ցոյցս առնէ փարելի և գգուողական սիրոյ, որպէս զի զօրավիցին սիրտք նոցա և ազդողա-

գոյնս տպաւորեացին 'ի նախն յետին բանք յիշատակաց իւրոց: Պատուիրէ նոցա հաստատուն կալ 'ի սէրն Աստուծոյ. և զի առաւել ես 'ի նոյն յորդորիցէ, ասէ. «Հաստատուն կացէք 'ի «սէր իմ. Որպէս սիրեաց զիս Հայրն իմ և ես «սիրեցի զձեզ»: Եւ ոչ թէ առ առաքեալսն միայն ասիցէ զայս՝ այլ և առ մեզ: Վասն որոյ և արժան է մեծապէս սքանչանալ ընդ այսքան անարգամեծարութիւն աստուածային բարերարութեանն: — Ա՜հ, և ո՞ իցեմ ես, Տէր, զի այդպէս փութոյ սնդութեամբ ժտիցիս զսէր իմ. շատ էր ինձ և քո թոյլ տալն և ներել զի սիրեցից զքեզ. իսկ դու և յորդո՞ր և թելադիր ես լինիս ինձ այդգունակ աղուականն. խնամադրութբանիւք՝ զի արարածս փանաքի սիրիցեմ զքեզ: Զի՞նչ առ այս ասիցես, հոգի իմ. համարիցիս զհրաման սիրոյ նորա՝ որպէս առ կարօտ ինչ քեզ տուեալ, կամ թէ զրկելոյ իւիք՝ եթէ ոչն սիրիցես զնա: Ո՜հ անդր, սթափեաց և 'ի միտ առ, հոգի իմ, եթէ ընդէ՞ր է քեզ հրաման և պատուէր սիրոյ Տեառն: Ոչ առ այլ ինչ, բայց զի գիտէ նա թէ այդու օգտեսցիս, և թէ յայդ սէր հաստատեալ են բարիքն քո և 'ի կենցաղումս և 'ի յաւիտեանսն: Ոչ հրամայեցաւ սիրել զանձն մեր. քանզի 'ի սէրն Աստուծոյ բովանդակին ամենայն բարիք՝ զոր կարեմքս և պարտիմք փափագել վասն անձին: Երանի՜ և երջանիկ եմ ես՝ եթէ սիրիցեմ զՅիսուս Քրիստոս. վա՜յ և եղուկ չուառիս՝ եթէ 'ի կէտ մահուանս գտայց ոչ սիրեալ զնա: Եւ զիա՞րդ ոչ ափշիմ ոչ հիանամ ընդ ինքն ընդ իս, զի գերագոյնն Բարի՝ ամենասիրելին յինքեան և ամենասիրելին ինձ, ոչ յաջողէ սիրելի լինել ինձ՝ ոչ երախտեօքն, ոչ աղաչանօք, ոչ պատուիրանօք, ոչ խոստմամբք և ոչ սպառնալեօք:

Ո՛վ Աստուած, որպիսի՜ ինչ իցէ սիրտ իմ այս։ Ո՛հ, մի՛ 'ի ցասումն՝ այլ 'ի գութ ողորմութեան շարժեսցէ զքեզ անհամութիւն իմ և խստութիւն։ Զիղջ է ինձ՝ զի 'ի զուր և ընդ վայր ծախեցի զայնքան ամս կենաց իմոց՝ զընդունայնութիւնս սիրելով և ոչ զաստուածայինս քո մեծավայելչութիւնդ։ Ո՛հ, իցէ թէ այժմիկ սկիզբն առարից սիրելոյ զքեզ, և այնպէս սիրելոյ՝ զի մի այլ ինչ սէր տիրասցի 'ի վերայ իմ բաց 'ի քոյդ։ Դու, տէր Յիսուս, որ եկիր յաշխարհ՝ վառել 'ի հոգիս զսէր սուրբ, վառեա և 'ի հոգւոջ իմում, և ուղղեա 'ի նմին զամենայն սէր անկարգ. որպէս զի սիրեցից զքեզ ոչ առ սէր անձին իմոյ, այլ վասն քոյ միայնոյ, որ ամենևին արժանիդ ես սիրոյ։

Ուղերձս սիրոյ մատուցից առ Յիսուս, և դուն գործեցից յաճախակի առնել զայս. բարեխօս և միջնորդ ունելով զամենասուրբ Մայր իւր, որ մայր է գեղեցիկ սիրոյ։

ԾԱ. Զի մի ոք խաբիցի 'ի սէրն Աստուծոյ՝ առանց որոյ չիք փրկութիւն, Յիսուս տայ մեզ զնշանակս նորին 'ի ծանօթութիւն. ոչ 'ի բանս պաճուճեալս, կամ 'ի գեղեցկանսիհ խորհրդածութիւնս, կամ յիղձս փափուկս, այլ յանթերի և 'ի հաստատուն պահպանութեան պատուիրանաց իւրոց սրբոց. Որ սիրէն զիս, ասէ, զպատուիրանս իմ պահէ. ոչ 'ի յուշի լոկ, այլ 'ի սրտի և յամենայն կարգս գնացից վարուցն։ Ոչ ասէ թէ որ հնազանդին ինձ յայս ինչ բանի կամ յայն նիչ ժամանակի, այլ հասարակաբար ասէ, թէ որ հնազանդին՝ սիրէ զինքն, և որ ոչն հնազանդի՝ ոչ սիրէ. և առ այս զինքն իսկ ընծայեցուցանէ օրինակ, և նշանակ սիրոյն որով սիրէ զՀայր իւր՝ զկատարեալ հնազանդութիւն իւր։

Արդ եթէ ստուգիւ ասիցեմ և ես թէ սիրեմ զԱստուած, յայտ է թէ պատրաստ եմ անսալ նմա յամենայնի. պատրաստ 'ի կորուսանել զամենայն, նաև զկեանս իսկ, առ անկորուստ պահելոյ զշնորհս նորա՝ նաև առ վայրկեան մի՝ մահացու ինչ մեղօք: Պարտական եմ առ այս: Այլ եթէ 'ի սէր արարածոց բազում անգամ առաւելազանց գտայ յոյժ՝ առ 'ի լրումն ախորժակաց իմոց, արժա՞ն ինչ իցէ ճշդել 'ի սէրն Աստուծոյ, և չկամել առնել բայց զայն՝ յոր անհրաժեշտ պարտաւորեալս եմ առ 'ի չանկանել 'ի մեղս մահացուս: Անհաւատքն անգամ պարտականք են առ այդ. իսկ մեզ օրէնք են աճել ևս քան զևս 'ի սէրն Աստուծոյ: Իցէ՞ վայելուչ, հոգի իմ, ասել, թէ չկամիմ առնել առ սէրն Աստուծոյ՝ բայց որչափ ինչ պարտականս եմ, իբրու թէ զանգիտելով զանցանել զսահմանաւ պատուիրանին:

Ո՜վ ամենասէր Յիսուս, միթէ զայ՞դ օրինակ վարեցար դու ընդ իս, չառնել ինձ բայց յոր պարտաւորեալդ էիր. և ո՞ պարտաւորեաց ըզքեզ՝ եթէ ոչ սէր քոյին առ 'ի կրել զայդպիսի ցաւագին չարչարանս, և զմահ յանձն առնուլ վասն առատապէս քաւելոյ զանձն իմ: Քանի՜ ապաշնորհ իցէ սէր իմ՝ եթէ կշռօք կամիցիմ կշռել թէ մինչև ցո՛ր վայր կարեմ չմեղանչել քեզ մահուչափ, և յայլում ամենայնի անփոյթ լինել զհաճոյից կամաց քոց: Գիտեմ, ո՛վ Տէր, զի նախանձաւոր ես սիրոյ քո. իսկ ես մինչև ցայսօր չետու ինչ նշանակս սիրոյ՝ բայց իղձս արուգս և փափագս զաղփաղփունս: Աղէ բե՛ր, այժմ սկիզբն արարից սիրելոյ զքեզ ճշմարտապէս: Ոչ գիտեմ թէ ո՞րպէս և ո՞րչափ սիրիցեմ զքեզ, և ոչ իսկ թէ սիրիցե՞մ գոնեա ըստ չափու բաւականի՝ առ 'ի ժամանել 'ի փրկութիւն. այլ դու

չնորհեա ինձ նախ տալ զմեզս՝ առաւել առ սէր քո, զի թշնամանս քեզ ածեն, քան առ անձին իմոյ շահ օգտի՝ վասն ահի պատուհասից քոց։ Եւ ապա չնորհեա ինձ հաճել ընդ ամենայն որ ինչ քեզն իցէ հաճոյ, և խորշել յամենայնէ՝ որ քեզ գարշելի իցէ․ և սիրով՝ ոչ այնքան պատուհանացդ որչափ թէ խրատուցդ՝ չափել այլ ինչ որ չիցես դու, կամ որ չիցէ վասն քո։

Անքոյթ կանոն սիրելոյ զՅիսուս՝ ջանք նմանողութեան նորին է․ վասն այնորիկ ընտրեցից 'ի մտի իմում զնմանութիւն նորին, գիտելով զկամս և զփառս Աստուծոյ 'ի գործս իմ և յիղձս։

ԾԲ․ Ստուգագոյն փորձ ճանաչելոյ զսէր առ Աստուած՝ է սէր ընկերին․ զի ոչ է հնար ասել թէ սիրիցէ զԱստուած՝ որ ոչն սիրէ զընկերն։ Վասն այսորիկ Քրիստոս 'ի յետին վարդապետութեան իւրում թելադրէ մեզ զայս սէր եղբայրական, բազում անգամ կրկնելով զնոյն պատուէր ազդողագոյն օրինակաւ, առ առաւել ևս 'ի նոյն փութացուցանելոյ զմեզ, իբրու այն թէ ամենայն ինչ բովանդակիցի 'ի նոյն․ «Պատուիրան նոր տամ ես ձեզ, ասէ, զի սիրեսջիք զմիմեանս, որպէս ես զձեզ սիրեցի»։ Նոր կոչէ վասն նորօրինակ եղանակին որով ուսուցանէ սիրել մեզ զընկերն ըստ իւր նմանութեան, վասն սիրոյն Աստուծոյ և կամաց նորին, և ոչ ըստ սովորական հանգամանաց առ բնական և աշխարհային պատճառաց։ Եւ 'ի յանձնելն զեղբայրականս այս սէր՝ յաւելու Քրիստոս, թէ պատուէրս այս սիրելոյ զմիմեանս՝ իւր պատուիրան է․ այսինքն է իւր յատուկ սեփական և գերունակ գլուխ պատուիրանաց, որում մեծ փոյթ խնամոց ունի՝ զի պահեսցուք զայն։ Իւր են և այլք 'ի պատուիրանացն, այլ ոչ և զմիոյ յայն․

ցանէ այսպէս անդագրյնս խօսեցաւ և պարտաւորեաց. որպէս զի յայտ արասցէ՝ եթէ արժան է մեզ յոյժ մեծարել զսա, ոչ 'ի խորհուրդս միայն, այլ և 'ի կամս և 'ի գործս:

Քննեցից զանձն իմ: Սիրեցի՞մ զընկերս իմ՝ ըստ պատուիրանին տուելոյ մեզ և ըստ նմանութեան սիրոյն Յիսուսի: Յիսուս զամենեսին առհասարակ սիրեաց. քանզի և վասն ամենեցուն մեռաւ. իսկ ես՝ ըստ վկայութեան գիտակցութեանս՝ սիրեցի՞մ անխտիր զբարիս և զչարս, զբարեկամս և զթշնամիս, զերախտաւորս և զապերախտս. եթէ և զմի ոք ոչ սիրեցեմ՝ ոչ ունիմ զսէր որ հաստուցանէ 'ի փրկութիւն: Յիսուս սիրեաց զմեզ՝ ոչ զարժանիս ինչ մեր քննելով, այլ զԱստուած 'ի մեզ սիրելով և զմեզ յԱստուած, և ցանկանալով վասն մեր զճմարիտ բարին՝ որ են շնորհքն և փառքն Աստուծոյ: Սիրեցի՞մ և ես զայսօրինակ զընկերս իմ գերբնական պատճառաւ՝ գիտելով զԱստուած միայն: Եթէ ոչ այսպէս սիրեցեմ՝ անարգիւն է ամենայն սէր իմ:

Ո՞վ սիրող և օրինադիր կարեկցութեան, Յիսուս բարեգութ, ես խաբեմ և չնթեմ անձին՝ յեղբայրսիրութեան մասին. կամիմ հաւատացուցանել զիս ինքն՝ եթէ սիրեցեմ զընկերն, այլ ստուգիւ որպէս պարտն է՝ ոչ սիրեմ: Ո՜հ, քանի՜ երագ առ դոյզն ինչ պատճառի զրկեմ 'ի սիրոյ մերթ զայս ոք և մերթ զայն: Ո՜հ, և քանի՜ն սէրն զոր ունիմ առ ոմանս՝ կամ բնական է կամ քմահաճոյ կամ շահախնդիր և կամ աշխարհային: Սխալիմ ասել թէ ցարդ չսիրեցի և ոչ զմի ոք ճմարիտ քրիստոնէական սիրով. զի զո՞ ոք և սիրեցի՝ ըստ իմոց կամաց սիրեցի և ոչ ըստ Աստուծոյն: Աստուած ամենագութ, գթա յիս, և բարձրացո զսիրտ իմ 'ի վեր քան զբնութիւն, որպէս զի սիրեցից զամենեսին ըստ քոյ կամաց:

Արդար քաւութիւն ինձ փառս ոչ պահելոյս զպատուիրան ընկերսիրութեան՝ եղիցի անդրդուելի առաջադրութիւն մտաց, առ 'ի պահել զնոյն յայսմ հետէ, Սիրել զամենեսին և առ սէրն Աստուծոյ վերաբերել:

ԾԳ. Առ 'ի յորդորագոյնս առնել զմեզ 'ի պահպանութիւն նորոյ պատուիրանի եղբայրական սիրոյն, յառաջեալ 'ի բանս իւր՝ ասէ Յիսուս. «Յայսմ ծանիցեն զձեզ թէ իմ աշակերտք էք՝ «եթէ սիրիցէք զմիմեանս»: Ոչ յայնմ, ասէ, զի աղօթասէրք լինիցիք կամ ջերմեռանդք կամ խստակրօնք, կամ կիրթք յայլում իմիք յառաքինութեանց. այլ կնիք ընտրութեան ճշմարտիցն քրիստոնէից 'ի սոցա, փրկելոցն 'ի դատապարտելոց՝ դնէ զսէրն եղբայրական, զբարի առնելն միմեանց. որպէս թէ ասիցէ. Եթէ բարեպաշտօնք ևս իցէք և հոգեւորք և կուսակրօնք, և որ ինչ այլ և կամիցիք, և սէր ընդ միմեանս ոչ ունիցիք, թէպէտ և սքանչելիս ևս գործիցէք՝ չէք յիմոց անտի:

Այսպէս եղիցի և 'ի կատարածի աշխարհի յաւուր համաշխարհական ատենին. եղբայրական սիրոյն նշանակաւ միայն ծանիցին ճշմարիտքն քրիստոնեայք, և որոշեսցին ընտրեալքն 'ի մերժեցելոցն: Չասիցէ դատաւորն յաւիտենական, եթէ Եկայք օրհնեալք, զի հիացուցէք զաշխարհ սքանչելեօք հրաշից, այլ թէ Եկայք, օրհնեալք, զի սիրեցէք զմիմեանս առ սէր իմ. Երթայք, անիծեալք, զի ոչ սիրեցէք զմիմեանս: Իսկ ես առ իս ինքն եկեալ առ 'ի ճանաչել զպայման հոգւոյ իմոյ, տեսից թէ զիա՞րդ գործով բերիմ յեղբայրականն սէր: — Բազում անգամ խիղճ լինի ինձ ընդ մանունս և ընդ չնչուկս, իսկ զսիրոյ՝ որ իսկութիւն է քրիստոնէական կենաց՝ հազիւ թէ հոգամ:

Ո՜վ ամենագթած Յիսուս, առաջի քո կայ ամպարտութիւնս իմ. այլ և ես ինձէն կամիմ խոստովան լինել յամօթ երեսաց իմոց: Ատելութեամբ բերայ առ բազումս, և ցասմամբ ոխակալ եղէ. և թէ չեղէ այլով իւիք ձեռնհաս՝ գէթ չարախօսութեամբ զվրէժ իմ լուծի: Անարգեցի արդարև և առ ոտն հարի զպատուիրան քո սուրբ. և այսմ ամենայնի պատճառք հպարտութիւն իմ 'ի չարաչար սէր անձին իմոյ հարեալ: Նա և այժմ իսկ, եհէ՜, քանի՜ դիւրագրգիռ եմ և առ դոյզն ինչ անհաճութիւն՝ 'ի զչարիլ, 'ի զայրանալ և մախալ 'ի փոխարէն վրիժուց: Եթէ ընդհարցի ոք կամ վիճեսցի ընդ կարծիս իմ՝ ոչ ես կամիմ նմա զբարի՝ որպէս յառաջն. և առաւել փափագեմ լուծանել զվրէժ փքացեալ կրիցս՝ քան հնազանդել պատուիրանին՝ որ քան զամենայն պատուիրան սիրելի է քեզ, և որում նախանձաւորդ ես յոյժ: Եւ զիա՞րդ փրկութեան ակն կալայց: Աստուած իմ, չեմ արժանի ողորմութեան, այլ սակայն ակն ունիմ առ 'ի քէն. ակն ունիմ և շնորհաց ուղղութեան վարուցս: Տուր ինձ սիրտ նոր և հոգի նոր, որպէս և խոստացարդ ինձ. և հեղ ինձ զգութ 'ի զեղուածոյ առատութեան սրտիդ, որպէս զի կարող եղէց պահել զայս քո ցանկալի պատուէր եղբայրական սիրոյ:

Սիրեցից զընկերս իմ՝ որպէս 'ի դէպ է ինձ սիրել քրիստոնէաբար զանձն իմ. ցանկանալով և ուխտիւք խնդրելով զի ամենայն ոք այնպէս անթերի սիրեսցէ զԱստուած, որպէս ես իսկ ցանկամ և հայցեմ սիրել զնա: Այս է ճշմարիտ սէր կարեկցութեան:

ԾԴ. Ի վեր են քան զամենայն հնարս բնութեան և՛ սէրն Աստուծոյ և՛ սէր ընկերին՝ յոր

պարտականս եմք: Եւ զի մի՛ խուլք գթեսցուք 'ի կատարման պարտուցս՝ առաջի առնէ մեզ Յիսուս հնարս հզօրս՝ զԱղօթս. աներկբայ խոստմամբ՝ զի զոր ինչ և խնդրեսցուք 'ի Հօրէ, մանաւանդ որ ինչ 'ի պէտս յաւիտենական փրկութեան մերոյ իցէ, տացէ մեզ: Զի՞նչ դիւրագոյն աղքատի՝ քան զխնդրելն ողորմութիւն. զի՞նչ դիւրագոյն և ինձ՝ քան զխնդրելն յԱստուծոյ աղքատօրէն զպէտս իմ: Ոչ կարեմ տրտնջել եթէ չիցեն ինձ տուեալ յԱստուծոյ շնորհք ինչ կարևորք ըստ դիպաց և ըստ ժամանակի, քանզի իմ են յանցանք, զի ոչ խնդրեցի:

Ուսուցանէ մեզ Քրիստոս և զօրինակ աղօթիցս այսոցիկ. և պատուիրէ կանխել միշտ 'ի խնդրուածս առ Աստուած՝ խոնարհութեամբ և վստահ հաւատով: Խոնարհութիւն իցէ ծանաչելն զտառապելութիւն մեր և զոչընչութիւն. վստահութիւն՝ հաւատալն աներկբայ՝ եթէ կարէ և կամի Աստուած տալ մեզ զամենայն բարի. և խոստացեալ է ողորմութեամբ իւրով տալ մեզ երբ և խնդրիցեմք: Այս է խոնարհութիւն և այս հաւատք աներկմիտք. ունել զանձնես վարկ որքան և հնար է անարգագոյն և նուաստագոյն. իսկ զԱստուծոյ՝ իմացուած բարձրագոյն և գերագոյն որքան և հնար է: Այսպէս աղօթել ջանամ, հոգի իմ, և լէր աներկմիտ զի ընկալցիս:

Ո՛վ սփոփական վարդապետութեանս: Մի՞թէ իցէ իշխան որ ասիցէ ցաղքատս, եթէ խնդրեսջիք յինէն մեծութիւն՝ վաղվաղակի մեծացուցից զձեզ. կամ բժիշկ՝ որ ասիցէ կամ կարիցէ ասել ցհիւանդս, եթէ խնդրիցէք յինէն բժշկութիւն՝ վաղվաղակի բժշկեցից զձեզ. կամ վարդապետ՝ որ ասիցէ կամ կարիցէ ասել ցտգէտս, եթէ խնդրիցէք յինէն գիտութիւն՝ վաղվաղակի ա-

րարից զձեզ գիտումս։ Զայս աւանիկ առնէ ընդ իս ամենեւին բարութիւնն՝ ամենակարողն Աստուած, զնդալով 'ի կարօտութիւն հոգւոյ իմոյ. Եթէ խնդրիցես յինէն զգութ՝ արարից զքեզ գթած. այսպէս և որ այլն ես։ Եւ զիա՞րդ փոքրոգութեամբ թերահաւատեցից՝ թէ զլասցին ինձ առաքինութիւնքն կարեւորք 'ի յաւիտենական փրկութիւն իմ։ Արդարեւ իմովսամն ամենեւին աղքատ եմ, ամենեւին տկար, ամենեւին տգէտ. իսկ ընդէ՞ր ոչ խնդրիցեմ, մինչ հաւատեալ գիտեմ եթէ անվրէպ է բանն Աստուծոյ, և տացի ինձ ամենայն բարի վայելուչ՝ զոր և խնդրիցեմ։

Օրհնեալ է, Աստուած իմ, բարութիւն քո անբաւ։ Ահաւասիկ անկանիմ առաջի քո լի ամօթով և ոչ գիտելով զինչ խնդրեցից՝ զի ամենայնի կարօտ եմ. խոստովանիմ առ քեզ զաղքատութիւն իմ և բոլորովիմբ յանձն առնեմ քեզ զանձն իմ։ Եւ եթէ առ հնազանդելոյ պատուիրանի քում՝ 'ի դէպ իցէ ինձ և այժմէն խնդրել ինչ 'ի քէն, հայցեմ զշնորհս աղօթելոյ, և աղօթելոյ արժանապէս. քանզի գիտեմ թէ պղերգ եմ յոյժ յաղօթելն և երագ 'ի թողուլ զաղօթս։

Մի՛ զանց արարից յաղօթելոյ, որ զի և դիւրին է աղօթել յամենայն ժամանակի և ամենայն ուրեք. և յուշ լիցի ինձ յաղօթելն՝ բեւեռել զաչս հոգւոյ իմոյ մերթ յողորմելութիւն իմ և մերթ յողորմութիւնն Աստուծոյ։

ԾԵ. Տեսեալ Յիսուսի զի զանգիտեն, տխրին և հոգան Առաքեալքն վասն հանդերձելոյ իւրոյ մեկնիլ յաշխարհէս, խնամով սիրոյ մխիթարէ զնոսա. խոստանայ նոցա, զի թէպէտ և մեկնեսցի՝ այլ ոչ թողցէ զնոսա. և արդահատէ ևս զի բարի լինիցի նոցա։ Նախանձաւէ և զայն՝ զի

հասցեն նոցա հալածանք, տագնապք և տրտ-
մութիւնք. այլ ընդ նմին ազդէ 'ի նոսա և խմո-
ցուածս մեծոգի արիութեան, օրինակ զանձն
տալով՝ որ ատեցան և հալածեցան, և վառելով
'ի սիրտ նոցա զլոյս յաւիտենից խնդութեանց.

Խորհեցայց յերկոսին յայսոսիկ պատճառս.
Զի՞նչ քան զայս քաղցրերիչ և մխիթարիչ ինձ
կայցէ: Ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր. եթէ
Յիսուս Քրիստոս որ գլուխ իմ է, համբերու-
թեամբ տարաւ նախատանաց, երգիծանաց և
ձաղանաց, և մահու անգամ յանարգական փայ-
տի, զիա՞րդ ոչ համբերեցից ես 'ի վիշտս իմ, որ
դաւանիմ զիս անգամ լինել նորին՝ քրիստո-
նեական հաւատովքս: Դառն իցեն խոնարհու-
թիւնք, դառն վիշտք արկածից և աղէտք աշ-
խարհիս այսորիկ. ո՛վ հոգի իմ, ա՛կն արկ 'ի
Յիսուս, և, ո՛հ, քանի՜ քաղցր և անուշ լիցի
քեզ համբերութիւն. քանի՜ մխիթարական՝ վըշ-
տակրութիւնն, արժանի լինելով նմանել նմա:
Եւ եթէ զմտաւ ածիցեմ՝ զի արագ արագ վախ-
ճանին ամենայն տառապանք կենցաղոյս, և 'ի
կրել իմում զայնոսիկ առ սէրն Աստուծոյ՝ պար-
գևեսցի ինձ արքայութիւն և վայելք փառաց՝
որ անողականք իցեն 'ի դարս յաւիտենականս
Աստուծով չափ, ո՛ր վիշտ կամ ո՛ր ապաշխարու-
թիւն անհանդուրժելի թուիցի ինձ այնուհետև:
Աղէ ած զմտաւ, հոգի իմ, զի՞նչ իցէ արքայու-
թիւնն՝ որ համբերութեամբ ստացեալ լինի. և
առ անհատանելի երանութեամբ և բարեբաս-
տութեամբն այնորիկ՝ առժամայն առ ոչինչ մի
գրեսցես զամենայն վիշտ և նեղութիւն: Նա թէ
և հազարս ամաց տևէին կեանքս մեր 'ի հանա-
պազորդ մահուանս և յանարգանս, տակաւին ոչ
հաւասարէին արդիւնքս առ փառսն այն, որ
անչափին է, յաւիտենական և անհուն: Իսկ զի՞նչ

և այսքան համառօտ գոլով կենացս, այսքան հակիրճ և դիւրանց ամենայն վշտացս մերոց։ Ա՛հ, որ խաչ իցէ թէպէտ ներքին թէպէտ արտաքին՝ որ ծանր թուիցի ինձ առ գեղեցիկս այսու խորհրդածութեամբ, եթէ՝ արքայութիւն մնայ ինձ. և թէ յետ սուղ և հակիրճ վշտաց՝ մնան վայելք յաւիտենականք։

Ո՛վ, քանի՛ մեծապարգև ես, Աստուած իմ և տէր, 'ի կամելդ տալ ինձ վարձս զյաւիտենականութիւն ամենափառ, եթէ ուրացայց զկամս իմ, և եղէց համբերող և խոնարհ զսակաւ աւուրս ողորմելի կենացս այսոցիկ։ Ո՛հ, տպաւորեա յոգւոջ իմում զաւետարանականս այս ճըշմարտութիւն. հաստատեա 'ի սրտի իմում զայս սուրբ յոյս. օգնեա ինձ 'ի կեալ՝ որպէս վայել է հաւատոց իմոց և յուսոյ. որպէս զի շնորհօք քովք արժանի եղէց տեսանել զամենակալ զօրութիւնդ, գոհանալ զողորմութեանց քոց, և վայելել յանձառելի փառս քո յաւիտեանս յաւիտենից։

Քանզի յոյս յաւիտենական փրկութեան իմոյ հաստատեալ է յարդիւնս Յիսուսի՝ եթէ նմանող նմին եղէց, կարեւոր ինձ ծանեայց զնմանողութիւնն զայն, մանաւանդ յածելն իմ զմտաւ զչարչարանս իւր սուրբ։

Երթալն Յիսուսի 'ի Պարտէզն Առաքելովք իւրովք։

ԾԶ. Հասեալ ժամու գերասքանչ հնազանդութեանն, որով փառաւորելոց էր Յիսուս զՀայրն յաւիտենական, յառնէ յընթրեացն, և

սախպաւ իմն առնէ ցառաքեալսն. « Ո՛ն, արիք՝ գնասցուք աստի »: Այլ ոչ լուէ 'ի բանից վարդապետութեանն. և աչօք յերկինս ամբարձելովք՝ մատուցեալ աղօթս իմն վսեմականս, ելանէ 'ի վերնատանէն, և գնայ դէպ ուղիղ 'ի պարտէզն Գեթսեմանի: Իսկ առաքեալքն սրտաբախ սրտաթունդ զանգիտեն, թէ դուցէ ահա հասեալ իցէ ժամն անջատման 'ի նմանէ. վասն այնորիկ և որպէս ձագք զհետ հաւուն՝ կուռ զնովաւ երթան սուրբ անձկանօք լսելոյ զձայն նորա. և, ո՜վ, որպիսի եռանդեամբ և մտադիւրս ունկնդնէն միոյ միոյ 'ի բանից նորին՝ որպէս բանից կենայց յաւիտենականաց: Եւ տեսեալ զնոսա Յիսուսի այնքան եռանդունս, նախաճառէ նոցա որ ինչ անցանելոց էր ընդ նոսա 'ի նմին իսկ գիշերի. ծանուցանէ, զի եկեսցէ սատանայ փորձել զնոսա և « խարբալել իբրև զցորեան ». Ջանաճնար լինելով դրդուեցուցանել զնոսա 'ի հաւատոց մտալուտ չարչարանացն, իբրու այն թէ՝ զխնդր Աստուած և փրկիչ աշխարհի իցէ որ և զանձն իւր ոչ փրկէ: Զայս առնէ նոցա սատանածայինն վարդապետ, զի կայցեն 'ի ցածութեան, և մի լիցին ապաստան յեռանդն ինչ իւրեանց. քանզի դիւրագայթ է յոյժ մարդկայինս ակարութիւն, և դիւրասասան են միտք 'ի խորհուրդս հաւատոց՝ եթէ չիցեն առանձինն շնորհօք Աստուծոյ զօրացեալք:

Խրատ զգուշութեան է այս և ինձ: Լուսով՝ որով երբեմն լուսաւորի հոգիս, և եռանդեամբ ինչ՝ որով սիրտս բորբոքի. վստահանամ մարտիրոսանալ քան թէ զհաւատս ուխտիս. այլ քանիցս ես խորագոյնս զգամ զմեղկութիւն իմ. զի 'ի վերայ հասանել փորձութեան ուստեք՝ անդէն վարանեալ աղմկիմ, և փոքր միւս ես և խոպառ գթելի իսկ: Արժան է ինձ զանգիտել 'ի

փորձութեանց որ 'ի հաւատոյս. քանզի ոչ կարեմ իմով ինչ զօրութեամբ հերքել զնոսին: Եւ թէպէտ ոչ կարէ սատանայ փորձել զոք թէ ոչ իցէ նմա թոյլ տուեալ յԱստուծոյ, այլ եթէ երբեք թոյլ տայ Աստուած գալոյ փորձութեանց՝ 'ի հանդէս հաւատոց, քանիցս եւ թոյլ տայ 'ի պատիժ եւ 'ի պատուհաս ամբարտաւանութեան:

Զի՞նչ լինէր ինձ, Աստուած իմ, եթէ թոյլ տայիր կորուսանել ինձ զհաւատս. եթէ այլք յառաքինութեանց կորնչէին՝ մնալով հաւատոց, մարթ էր սովիմբ վերստանալ զայլսն ամենայն. այլ 'ի կորստեան հաւատոց՝ եւ ոչ մի յառաքինութեանց բաւիցէ զօրավիգն ինձ լինել: Արժանի եմ պատուհասի լքանելոյ առ 'ի քէն՝ 'ի կորուսանել զհաւատս, զոր ստացայ ողորմութեամբ քով՝ 'ի սուրբ աւազանէն. եւ այս յաւէտ վասն հպարտութեան՝ որ առաւել քան զամենայն ախտս յողն կայ հաւատոց: Ասացեր յաւետարանի քում, եւ է ստոյգ, զի խոնարհաց միայն է հրահանգիլ հաւատովք: Առանց հաւատոց՝ ցնորք եւեթ են իղձք իմ եռանդունք. առանց խոնարհութեան դիւրաւ գթեցից յամենայն ախտս: Աղէ, վասն այսորիկ, փրկիչ իմ ամենագութ, շնորհեա ինձ զխոնարհութիւնն՝ զոր կամէիրդ յառաքելայն քո, եւ որում՝ գիտես առաւել քան զառաքելայն կարօտ գոլ զիս:

Հաւանելի է ինձ յոյժ՝ եթէ 'ի ժամու մահուան իմոյ փորձեսցէ սատանայ զհաւատս իմ. եւ ո՞ գիտէ զի՞ լինիցի ինձ յաղթաւոր կռուի անդ: Մեծ է ինձ կասկածս այս առ ունելոյ զիս 'ի չափու խոնարհութեան:

ԾԷ. Ի լսել առաքելոյն զգուշակութիւն Քրիստոսի զփորձութիւնէն՝ որ ընդ հուպ բաղխելոց

էր զնոսա, արժան էր նոցա խկոյն զանգիտել 'ի տկարութենէ իւրեանց և խոնարհութեամբ ժտել զԱստուծոյ օժանդակութիւնն: Այլ նոցա ոչ ամբարձեալ 'ի վեր զմիտս՝ փութան պատասխանել, և տալ քան զայլսն ջերմաջերմն Պետրոս, եթէ պատրաստ են ընդ նմա և զբանտ և զմահս յանձն առնուլ; նաև ըղձեանս իսկ կորուսանել, քան թէ գրգռել 'ի հաւատոցն հաստատութենէ և ուրանալ: Այսպէս նոքա և առաւել քան զամենեսին Պետրոս, եռանդուն հաւատով և ջերմաջերմ սիրով վառեալ՝ որով գրգռի իմն 'ի ներքուստ: Այլ քանզի ոչ յաւելու տալ, թէ օգնութեամբն Աստուծոյ խրախուսեսցէ պաշտպանել զհաւատսն, այլ և յեռանդն անձին լինի իմն ապաստան՝ կարող գոլ յիր որ 'ի վեր է քան զզօրութիւն իւր, նաև պարծելով զի թէպէտ և այլքն գեղևիցեն 'ի հաւատս՝ ինքն ոչ, Քրիստոս զնոյն ինքն զյանձնապաստանութիւն նորին առեալ 'ի նշանակ՝ նախագուշակէ, զի երիցս ուրասցի զինքն 'ի նմին յայնմ գիշերի. ուսուցանելով ամենեցուն մեզ, թէ չեն աներկեան և անքոյթ՝ ոչ եռանդն ինչ և ոչ հաստատագոյն առաջադրութիւնն մտաց, եթէ ոչ շնորհք ողորմութեանն Աստուծոյ հասցեն մեզ 'ի թիկունս:

Ո՜վ զարմանալի խորհուրդք իմաստութեան և բարութեանն Աստուծոյ, որ թոյլ տայ սասանել հաստատնագոյն սեանց եկեղեցւոյ իւրոյ, զի զխոնարհութեան տացէ ինձ դաս: Քանզի արդարև ո՞ իցեմ ես, ո՛վ Տէր, զի խոստանամն և 'ի խոստովանութեան մի ես մեղանչել քեզ, և յաղօթս՝ հաւատարմութեամբ զհետ կրթել կատարելութեան: Ձագ եմ թռչնոյ՝ որ առանց թևոց թռչել կամիմ: Տկարագոյն և ողորմելի եմ յոյժ քան զՊետրոս՝ յորժամ խոստանայցին

մեռանել վասն քո, և ոչ յիշէր զօգնականութիւն քո: Այլ դու շնորհեա ինձ մի և մի ընաւ վստահանալ 'ի կամս իմ, կամ յիղձս և յառաջադրութիւնս, այլ միայն 'ի շնորհս քո, խոնարհութեամբ հայցելով զնոյն: Ի բազում փորձոյ անձին ծանեայ զի յայնժամ աղքատագոյն ես եմ՝ յորժամ կարծեմ զիս հարուստ. յայնժամ ապիկար կոյր և ապուշ, յորժամ կարծէի զիս հզօր, գիտուն և խոհեմ. յայնժամ վատօրէն պարտեալ 'ի փորձութեանց, յորժամ հզօրագոյնս վարկանէի զինակալել: Աստուած իմ, խոստովանիմ զտառապելութիւնս իմ և զոչընչութիւն. և հայցեմ զշնորհս քոյ լինել ինձ օգնական յամենայն ժամ, և մի երբեք վրիպել 'ի լուսոյ աստի ճանաչելոյ զանբաւականութիւն իմ առ ամենայն ինչ, որպէս ողորմութեամբ քով ճանաչեմս յայսմ պահու:

Վարժեցայց քննել զներքին գործս իմ. որպէս զի և առ 'ի խուսել 'ի չարէն և առ 'ի գործել զբարի զոր և կամիցիմ՝ յիշեցից դիմել առ Աստուած, յԱստուած լինել ապաստան, և զամենայն առ 'ի յԱստուծոյ ճանաչել:

ԾԸ. Յետ վատնելոյ զտիւն 'ի փրկութիւն հոգւոյ, սովորութիւն էր Յիսուսի մեկուսանալ զգիշերն յաղօթս 'ի պարտէզ մի մերձ 'ի լեառն Ձիթենեաց. ըստ այսմ օրինակի և 'ի վերջնում գիշերիս կատարէ զբարեպարիշտ սովորոյթն. և երթայ 'ի տեղին՝ ուր գիտէ թէ յետ սակաւուց գայցէ Յուդաս զօրականօք՝ ըմբռնել զնա. յայտ առնելով աշակերտացն, եթէ կամաւոր իցէ և ոչ բռնի կամ յեղակարծուց կալանաւորութիւն իւր: Ի պարտիզի ուրեմն որ երկրաւոր դրախտ եղև, մեղաւ Ադամ և ապականեաց զաշխարհս ամենայն. և 'ի պարտիզի աստ Գեթ-

սեմանեայ գայ Յիսուս սկիզբն առնել չարչարանաց իւրոց և փրկագործութեան աշխարհի: —
Մատնէ 'ի պարտէզն՝ ուր վարեալ ձգէ և հրաւիրէ զնա զթութիւն իւր միայն. և նախատեալ զի ընդ նոյն ճանապարհ ընդ որ եկն՝ յետ սակաւուց միոյ դարձցի կապեալ և քարշեալ 'ի թշնամեաց իւրոց, ոչ լինի սրտաթափ, նա մանաւանդ անվեհեր արիութեամբ գայ սպասել նոցա: Տանի ընդ իւր ըստ սովորութեանն և զառաքեալսն, և բարեմոյն զուարթութեամբ կենակցի՝ որպէս թէ չգուցէ ինչ նմա վտանգ վերահաս: Այսպէս խրատէ զնոսա և զմեզ՝ մի երբէք թուլանալ յաղօթից, այլ մանաւանդ 'ի տագնապ ժամանակի յաղօթս եւեթ խնդրել զանդորրութիւն ոգւոյ:

Ո՛վ, քանի՜ բանաւոր և արդար է օրինակ քո, բարի Յիսուս: Ես չառնեմ և օր մի զանց 'ի կազդուրելոյ զմարմին իմ կերակրով, և թէ ոչ կարացից յայն ինչ ժամու՝ յայլում ժամու առնում զկերակուրն. ըստ այնմ և առաւել ևս խնամով՝ 'ի դէպ է ինձ առնել զօր ամենայն՝ առ 'ի կազդուրել զհոգիս իմ աղօթիւք. իսկ ես՝ եթէ և դուզնաքեայ ինչ գործ առաջի կացցէ, զիարդ փութամ թողուլ զաղօթս: Գտանեմ ժամանակ շաղակրատելոյ յանպէտ զրոյցս և յընդունայն կըրթութիւնս, ըստ հաճոյս հետաքննութեան և արուժակաց. և միայն յաղօթս անժաման գտանիմ. ոչ ունելով առ այն ոչ առողջ գլուխ, ոչ հաստատուն միտս և ոչ իղձս յօժարս: Այս են չարիք իմ, ո՜ տէր. և վասն այսորիկ իսկ տկար եմ 'ի փորձութիւնս, դիւրագայթ յառիթս, և ստրուկ կրից իմոց, քանզի ոչ ապաւինիմ յաղօթս. այլ մերթ ծուլութեամբ, մերթ ընդունայնութեամբ և մերթ այլով ինչ անազգակ խնամով՝ զանց առնեմ զաղօթիւք: Այլ դու որ

տասդ լոյս մտաց՝ ճանաչել զպէտս աղօթից, տուր ինձ և հոգի աղօթից՝ առնել որպէս կամիդ զի արարից: Մի անցցէ զինև օր՝ յորում թէ ոչ հաստատուն մտօք խորհեցայց զգործ փրկութեան հոգւոյ իմոյ, առ ոտս քո. մի անցցէ զինև օր՝ յորում թէ չեղեց 'ի քեզ ապաստան, կամ ոչ խոնարհեցայց առաջի քո՝ առ 'ի խնդրել՝ շնորհիւ ողորմութեանցդ զօդնականութիւն քո: Դու պատուիրես ինձ աղօթել. և առ 'ի քէն ակն ունիմ գտանել շնորհս հնազանդելոյ պատուիրանիս քում այսմիկ:

Յորժամ վասն կարևոր ինչ պատճառաց ոչ կարացից կատարել զսովորութեան աղօթս իմ՝ ցուսցէ ինձ և այն. և լցից զթերին փափագանօք և ստէպ ստէպ հառաչմամբ ըղձիւք առ վախճանն իմ վերջին՝ որ է Աստուած:

Զգայական տխրութիւն Քրիստոսի
'ի Պարտիզին:

ԾԹ. Այն ինչ մտեալ Յիսուսի 'ի պարտէզն Գեթսեմանի՝ զեղուն 'ի նա երկիւղ, հոգք, տըխրութիւն և զզուանք: Մինչև թշնամեացն արկեալ 'ի նա ձեռս՝ չարչարել մարմնով, ինքնին մատնէ զանձն 'ի չարչարանս, և յայնպիսի անհնարին չարչարանս՝ զոր չէր ումեք մարթ գործել, բայց ինքեան միայնոյ՝ որպէս կատարելոյ Աստուածամարդոյ: Քանզի 'ի լինելն մարդ՝ Աստուածն Բան՝ կամեցաւ յանձն առնուլ և զկիրս բնական տկարութեանց մարդոյ. և արդ՝ իբրև 'ի դէպ ժամու թոյլ տայր մարդկայնումն իւրոյ բնութեան՝ կրել զամենայն որ յատուկք են մար-

դոյս, զերկիւղ, զոխութիւն, զխռովութիւն հոգւոյ, զհոգս և տագնապս: Խոնարհի Աստուած 'ի նուաստութիւնս մարդոյ, զի վերացուսցէ զմարդն 'ի բարձունս Աստուծոյ:

Այլ ո՞ կարիցէ բացատրել զայսպիսի նորա անօրինակ չարչարանս: Յառեա՛ց և տե՛ս, հոգի իմ, զտէրն քո՝ տժգոյն տմոյն, թուլացեալ, դողդոջուն, վրդովեալ և վարանեալ հոգովք. ոչ գիտէ ո՛ւր կալ ո՛ւր դադարել. մերթ անկանի երես 'ի գետին, մերթ ամբառնայ զձեռս յերկինս. և մերթ զգնայ յաղջամղջի գիշերոյն հոգալով հեծելով և հառաչելով. և յայսպիսի վտանգս սրտաբեկ սրտաթունդ և գոգջիր չնչասպառ՝ խնդրէ իմն 'ի բաց թափել զդառնութիւնն. այլ սոցա ներքսագոյնս տրամադրեալ՝ առաւել ևս զեղուն և գելուն զսիրան:

Զայս օրինակ 'ի գլուխ ելանեն մարգարէիցն բանք, որք ցուցին զհոգի Փրկչին որպէս ծով մեծածով յուզեալ և խռովեալ 'ի մրրկածուփ ալեաց չարչարանացն, ահաւոր, քստմնելի, ագիտաշարժ: Յանձն առնու զտրտմութիւն, զի արժանիս արասցէ զմեզ ուրախութեան. տխրի, զի զմեզ մխիթարեսցէ: Եւ ո՛ւր է մերս կարեկցութիւն առ նա: Նկատեսցուք աղէ քաջ զներքին տառապանս նորին, որք և յարտաքին դէմն և 'ի գնացս նորա կերպարանին:

Ո՛վ քաղցրագութ Փրկիչ իմ, զի՞նչ է զոր տեսանեմս. հոգի քո փառաւորեալ՝ տագնապի ահիւ, տրտմութեամբ և անձկութեամբ: Երկընչիս դու՝ որ ահա խուն մի յառաջ զօրացուցանէիր զԱռաքեալսն. տրտմիս դու՝ որ երանաւէտ բերկրութիւնդ ես զուարթնոց. հոգա՞ս և վարանիս՝ որ փափագեալ մնայիր այսմ ժամու: Գիտեմ զի անձամբ անձին նիւթես զկիրքս զգայական. այլ չիցե՞ն քեզ շատ զոր նախատեսա-

նեսդ՝ 'ի մօտոյ կրել 'ի մարմնիդ, և ընդէր կանխես զայդքան աղէտս վշտաց 'ի հոգւոջդ: Ո՛վ գթութիւն, ո՛վ սէր՝ Սէր վասն իմ կրելոյ խնդիր կայցէ՝ և ոչ մի ինչ թուի քեզ շատ. այլ կամիս ցուցանել թէ որքան սիրես զիս, որպէս զի և ես զքեզ սիրեցից, քեզ կարեկից եղէց, քեզ շնորհապարտ կացից: Այլ զիա՞րդ հնար է ինձ կարեկից լինել ներքին ցաւոցդ՝ մինչ ոչ բաւեմ խելամուտ լինել: Լոյս տուր մտաց իմոց, զի տկար է. զօրացո՛ զփափագ իմ երթալոյ զհետ քո, և նմանելոյ քեզ սիրային ըղձիւք՝ 'ի խորհուրդս տխրական տնօրէնութեանցդ:

Ուստի յօդուտ ինձ առնուլ զվիշտս, և չրջել 'ի փրկութիւն հոգւոյ իմոյ. և քանզի Քրիստոս յանձն առնու զկիրս առ 'ի չարչարել վասն իմ, մեռուցից և ես զիմ կիրս առ սէր նորին:

Կ. Առ 'ի հասու լինել առ փոքր մի ներքին կրից Քրիստոսի, նկատեսցուք 'ի վերնական մասին հոգւոյն զաստուածային կամն՝ որ գերակայեալ հրաման տայցէ, և ենթարկեալ ընդնովաւ զմարդկային կամն՝ յամենայնի հնազանդ աստուածայնումն. և 'ի ստորև՝ զկամս կամ զախորժ մարմնոյ և զզգայութեանց, որ զզուի 'ի ցաւոց և 'ի մահուանէ. վասն այնորիկ տրտմի և տագնապի, և որքան զօրէ՝ փախչել հնարի: Ճշմարտիւ գիտեմք, զի զգայութիւնք 'ի Քրիստոս ամենեւին հպատակ կային հոգւոյն. այլ սակայն ունէր զմարդկայինս տկարութիւն, որով զանգիտէր, հոգայր, տխրէր, ըստ ներելոյ նմա աստուածային կամացն: Վասն այսորիկ 'ի պարտէզն անդ կրեաց Քրիստոս զամենայն արհաւիրս, զզուանս, տխրութիւնս, և տագնապս ներքինս, որքան մարդկայինս բնութեամբ հնար էր կրել: Զայս կամելով Աստուածութեանն, որպէս զի

չարչարանքն լցյին դառնագին, փրկագործութիւնն՝ ծանրագին:

Գիտէ Քրիստոս զի վճռեալ է աստուածային կամաց զչարչարանս իւր և զմահ. և արդ 'ի հասանել ժամուն 'ի գլուխ ելանելոյ՝ առաջի դնի նմա վճիռն այն՝ զի ընդունելի լիցի 'ի մարմնոյ անտի և 'ի զգայութեանց: Տեսանէ զՀայրն յաւիտենական, որ բարկացեալ ընդ մեղս աշխարհի՝ հրաման տայ մերկանալ 'ի վերայ նորա զբոցեղէն սուրն Արդարութեան. և երկեալ բնութեանն տեսեալ զհարուածն վերահաս՝ կրէ զյատուկն բնութեան գործոց և ազդմանց. պակչի, վարանի, և զմահուչափ տրտմութիւնն յայտ առնէ մահացու քրտամբ: Կարէր չորխրել՝ քանզի փափագէր 'ի չարչարանս և 'ի մահ. այլ կամեցաւ կրել վասն մեր զամենայն՝ զոր կրէ մարդս. կարէր և թաքուցանել զներքին զայն կիրս, այլ կամեցաւ արտայայտել նշանակօք, և տալ գրել աւետարանչաց, առ 'ի մեր օգուտ:

Եւ արդ տես, հոգի իմ, զՓրկիչն քո. տես, ո՞րպէս տառապի թախծանօք և նուաղի. և զի՞նչ զայդ տեսանելով՝ զգայցես: — Ո՛վ Յիսուս, սիրելիդ յորդիս մարդկան, գոհանամ զքէն վասն դառնադառն տխրութեանդ՝ զոր յանձն առեր վասն արժանի առնելոյ զիս յաւիտենական ուրախութեանց: Քանի՜ մեծ է սէր քո առ իս: Տուր ինձ չմոռանալ երբէք զկիրս հոգւոյդ, որք տուրք են բարեաց գթութեան քո առ հոգիս իմ: Դու յանձն առեր վարել զկիրս քո 'ի չարչարանս, 'ի քաւել և յարդարացուցանել զիս, փոխանակ զի ես զիմ կիրս 'ի գործ մեղաց վարեցի: Քանի՜ պարտք երախտեաց են ինձ առ քեզ: Ո՛վ ամենագութ Փրկիչ իմ. փափագեմ սիրել զքեզ, և ևս քան զևս առաւելուլ 'ի սիրելն. այլ ուղղեա դու զհոգիս իմ վրդովեալ յազդմանց

զգայութեանց, և զապստամբն 'ի բանէն, որով և ստունգանող աստուածայնոց քոց կամաց:

Յորժամ ծանր և դժնդակ երևեցին ինձ կրթութիւնք առաքինութեանց, յիշեցից զի ոչ թէ այնու առաքինութիւն չիցէ առաքինութիւն. այլ նա մանաւանդ այնքան ևս արդիւնաշատ լինի՝ որքան յաղթէ հոգին վեհերանաց բնութեան:

ԿԱ. Աւ 'ի քաջ իմանալ, որպէս և արժանն պահանջէ, զչարչարանս Քրիստոսի, պարտ և պատշաճ է մեզ հաւանել Ճշմարտութեանս այսմիկ, եթէ ոչ երկեաւ և ոչ տրտմեցաւ նա առ ահի վերահաս ինչ վտանգի: Զէր նա իբրև զմեզ՝ որոց անմարթ է 'ի նեղութիւնս չախրել և չհոգալ, վասն մեծի տկարութեան մարդկութեանս: Իսկ Աստուածամարդոյս չէ մարթ պատահել իմիք յոչ կամս իւր. և եթէ զանգիտէ ինչ և տրտմի և սրտաբախ լինի մինչև նուաղել 'ի տագնապս մահու, 'ի դէպ է ասել ընդ մարգարէին, եթէ այդ ամենայն անցանէ ընդ նա՝ քանզի այնպէս կամի:

Բնականք են 'ի Քրիստոս կիրք իւր. այլ և ոչ միոյ յայնցանէ մարթ է յուզիլ՝ եթէ ոչ հրամայեսցէ առաքինութիւն գերբնական. վասն որոյ կամաւորք են 'ի նմա ամենայն շարժմունք տխրութեան և զարշման և երկիւղի: Որպէս մարդ եղև ըստ օրինակին որում հաճեցաւ, այսպէս և զմարդկայինս կրէ տառապելութիւն 'ի տկարութեան բնութեանն՝ երբ և որչափ կամի: Եւ զօրօրինակ ինքնակամ են չարչարանք մարմնոյն, 'ի դէպ է թէ և տառապանք հոգւոյն ինքնակամք իցեն:

Յաղագս այսորիկ արժան է ինձ խորհրդածել այսպէս. եթէ Քրիստոսի չարչարեալ էր և

առ հարկի զօրութեան իրիք, վասն այնորիկ իսկ զի զհարկն փոխէր յառաքինութիւն՝ գեղեցկագոյն զպատուորութեամբքն, արժան էր ինձ մեծարգել զոհութիւն մատուցանել նմա՝ վասն վսեմական նուիրման անձինն առ Հայր իւր յաւիտենական՝ յաղագս իմ. իսկ զի՞նչ առնել է ինձ, յորժամ և ոչ մի ինչ հարկ եհաս նմա, այլ զոր միանգամ կրեաց՝ կրեաց ինքնակամ բերմամբ սիրոյն և ողորմած կամաց իւրոց:

Ո՜վ բարի Յիսուս, քանի՜ ինչ պարտական եմ քեզ՝ վասն իմանալի դառնութեանն որով լցեր զհոգի քո, առ 'ի լցուցանել զհոգիս իմ իմանալի քաղցրութեամբ: Քանի՜ ինչ պարտական եմ քեզ վասն զարհուրանացն և արհաւրաց՝ զոր զարհուրեցեր 'ի զգայութեանդ, որպէս զի հաստատեսցի յառաքինութեան ոգիս իմ զաղփաղփուն: Յորժամ 'ի վիշտս ինչ անկանիցիմ՝ անդէն խորհիմ 'ի հնարս՝ որք կարողք իցեն զիւրել զվիշտս և զցաւս իմ կամ նուազեցուցանել զնոսին: Իսկ դու զարմանալի հնարագիտութեամբքդ՝ գրաւես զուշ և զուրուշ մտացդ 'ի խորհուրդս՝ որ առաւել եւս ծանրացուցանեն զվիշտսն. և այս առ ոչ այլ ինչ՝ բայց առ 'ի տալոյ ինձ ցոյցս այնքան մեծամեծս՝ որքան և գերօրինակս և անլուրս զսիրոյ քո: Ո՜վ ստուգածոյին միջնորդ, որ խռովիս և զանգիտես՝ վասն սրտապնդելոյ զվեհերոտութիւն մեր, և քաջալերս առնելոյ առ յաւիտենական փրկութիւն մեր, ո՞չ, տուր և ինձ առնել հաւասար փոխարէն սիրոյ քում: Յանկամ սիրել զքեզ, այլ չքաւոր է յոյժ սէրս իմ. հայցեմ շնորհել ինձ զքո սէր՝ վասն արդեանց հոգւոյ քո՝ որ այդպէս խռովեցաւ և տրտմեցաւ 'ի պարտիզին:

Ըստ նմանութեան Յիսուսի որ իւրովի կամօք փութայրի, և ինքն ինքեան հնարի վիշտս առ սէր

իմ, եդից 'ի մտի կամաւորապէս 'ի մեռելութիւն կրթիլ և յաճախ եւս առ սէր նորա նաև զհարկաւոր կիրսն' 'ի կամաւորս ինձ փոխեցից:

ԿԲ. Առ 'ի տալ ինքեան վիշտս դառնակսկիծս, յուշէ Յիսուս յանձին իւրում զամենայն խորհուրդ տխրական' որ կարող իցէ սրտաբեկ սըրտաթափ առնել զնա. և ամենակատարեալ առաքինութեամբ գումարէ յերևակայութեան մըտացն զբովանդակ ազգի ազգի անարգանս և ցաւս չարչարանացն, և ոչ առհասարակ միահաղոյն, այլ որոշ որոշ և մի առ մի' զամենայն նախատինս և զցաւս' զոր կրելոցն էր 'ի մօտոյ: Տեսանէ 'ի պարտիզի անդ զամենայն լլկանս և արհամարհանս' զոր հասուցանելոց են ինքեան. տեսանէ զապտակսն' զոր հանելոց են երեսացն. զճաղկանսն' որով պատառելոց են զմարմինն, զփուշսն' որով ծակելոց են զգլուխն: Տեսանէ զբազմութիւն վիրացն' զոր բանալոց են 'ի մարմինն. զարեանն' զոր հեղլոց է յերակացն. զներքին ցաւոցն' զոր զգալոցն է, և զօրինակ մահուն' որով մեռանելոց է. և զայս ամենայն դըժընդակ իրս վերածեալ առ սիրտն փափուկ' այնքան հզօրեղապէս տպաւորէ 'ի նմին, մինչև անդէն 'ի միում վայրկենի կրել յոգւոջ զոր մի ըստ միոջէ կրելոց է 'ի մարմին. զոհելով և նուիրելով զանձն յամենայն վայրկեանս վասն մեր:

Զմտաւ ած, հոգի իմ, զի հզօրագոյն գոլով 'ի Քրիստոս զգացմանցն, վասն կատարելութեան գործարանաց և զօրութեանց մարդկութեան իւրոյ, դառնագոյն լինի և տրտմութիւնն: Բեր գումարեա 'ի մի զամենայն զարհուրելի երևակայութիւնս մտաց' որք կարողն իցեն խռովել, պակուցանել և տխրեցուցանել զմարդիկ. այդ ամենայն ոչինչ մի է առ տխրական ըմբռնողութեամբ Քրիստոսի, որոյ չիք կշիռ: Վասն միոյ

միոյ 'ի ցաւոցն որ 'ի մարմինն և որ յոգւոջ՝ հրաւէր կարգայ մեզ մարգարէին ձայնիւ, տեսանել եթէ իցէ՞ն լեալ ցաւք ըստ ցաւոց նորա:

Ո՜վ ամենասուրբ Փրկիչ, քանի՜ անաչառ ես առ ինքդ, առ 'ի լինել գթած առ իս. յողորմութեան անդ քում պաշտեմ զանբաւ իմաստութիւն քո. որ զայգպիսի դառնագառն չարչարանս յանձն առեր կրել 'ի զգայական կարողութեան սրտիդ. քանզի յաղբերբ անտի յառաջագայլին յիս ամենայն մեղք, 'ի կամաց մարմնոյ և 'ի ցանկութենէ սրտի: Յայն սակս 'ի կրից քոց կազմեցեր քեզ խաչ, զի անկարգութիւն իմոյս կրից է պատճառ իմոյս չարեաց: Զարթուցեր 'ի քեզ զերկիւղ, զի վտանգ արասցես զիս յարգիլնս քո: Տո՛ւր ինձ, ո՜վ Յիսուս, վայելել 'ի շնորհս արդեանցդ այդոցիկ: Քաւեա զսիրտ իմ յամենայն յանցանաց. մաքրեա յամենայն ըղձից չարաց. չարժեա՛ զնա ճշմարիտ հոգւով ապաշխարութեան, որով ցաւեցայց և տխրեցայց հանապազ վասն ամենայնի՝ որ յիմն առիթ եղև դառն դառն տրտմութեանց քոց: Այս դիտումն էր քո. և այս եղիցի իմ պտուղ:

Ի ներքին չարչարանաց աստի Յիսուսի՝ ուսայց մարդել զներքին մարդս իմ, և հանապազ 'ի սոյն խոկացից. սկիզբն արարեալ յուղղելոյ զանկարգադոյնն 'ի կրից իմոց:

ԿԳ. Ուժգնագոյնն չարչարանաց որ տառապեցուցանէ զզգայական ոգին Քրիստոսի 'ի պարտիզին, է երկիւղ՝ դժնդակ, մօտալուտ և անխուսափելի մահուն, յորմէ զարհուրի յոյժ՝ որպէս 'ի մեծագոյն չարէ ըստ կարգի բնութեան, զի եղծիչ է պատուական կենաց իւրոց: Թէպէտ և յետ անարգական մահուանն հասցէ յարութիւն փառաւորեալ, այլ զգայականն ախորժակ՝

որ շարժի միայն ինքնաբոյս բերմամբ սիրելոյ զներկայ կեանսն, ոչ ձկտի յանդրագոյնսն ևս: Զզուի 'ի մահուանէ. և անդոհական բարախմամբ սրտի զանդիտէ 'ի նմանէ, և տխրի և դեղնու, դալարի, խորշի և գարշի և ոչ կամի մեռանել: Այլ քանզի անհրաժարելի է մահ ըստ աստուածային վճռոյն՝ որում հարկ է բանին հնազանդել, աստի ծագէ մարտ հակառակութեան բանին հնազանդելոյ և զգայութեանն խորշեցելոյ, յորմէ մարդկութիւնն բաղխեալ 'ի տկարութեան իւրում՝ կրէ ցաւս մահուչափս առ երկեղի մահուն՝ որ ճնշէ զնա և կոշկոճէ: — Այլ միտ դիր յամենայնի ամենիմաստ կարգաց Աստուծոյ, որ այսպէս թոյլ տայ զգայականն ախորժակի խորշել և խուսել. որպէս զի որքան մեծ իցէ խորշումն և գարշումն, այնքան մեծ իցէ և առաքինագործն և արդիւնականն հնազանդութիւն Փրկչին՝ 'ի հատուցումն անհնազանդութեանն Ադամայ: Վասն այսորիկ թոյլ տայ սրտին Յիսուսի, զի 'ի հնազանդելն աստուածային կամաց՝ խռովեսցի դառնագառն սարսափմամբ մարմնոյն և զգայութեան. յայն սակս զի յախորժակաց մարմնոյ և զգայութեան յառաջ եկին ամենայն մեղք աշխարհի:

Յիսուս իմ և Աստուած իմ, որպիսիս տաս ինձ ոսկեղէնիկ դաս 'ի պարտիզի անդ, թէ որպէս զիարդ օրէն է ինձ հնազանդել պատուիրանաց քոց, թէպէտ և ամենայն որ 'ի բնութեանս են կիրք և տաղտուկք և զզուանք ընդդէմ կքրիցին: Ո՛հ, քանի՜ երջանիկ լինէի՝ եթէ դէթ յայսմ ևեթ իրի գոնէ գործէի նմանել քեզ գործնօրէն: Յուէ՛ ինձ զի բազում յոյժ նուազս առ չունելոյ զդէմ հաճոյից մարմնոյ և զգայութեանց՝ սոռնդանեցի աստուածայնոյ քում մեծվայելչութեան: Խոստանամ այսուհետև հր-

նուաղանդել քեզ, բուռն տանելով անձին: Այլ քանզի սատակապէս տարանում յառաքինութեանց, և վեհերոտ է ոգիս, և չիք իմ այլ տեղի ապաւինի՝ բայց արդիւնք քո և օգնականութիւն, ուստիկ մատուցանեմ քեզ զսիրտ իմ փանաքի, որ խռովմամբ ոչ զօրէ բնաւ կալ 'ի զիմի այնքանեաց մոլեկան և ախտաւոր կրից իմոց: Հաճեաց, Յիսուս, զօրացուցանել զնա ամենասուրբ շնորհօք քովք, որպէս զի կարասցէ կալ 'ի խոստմանս հնազանդելոյ կամաց քոց աստուածայնոց, և թոյլ տալ բնութեան կրել զոր կրելոցն է:

Վարժարան յաւիտենական փրկութեան բացեալ լինի ինձ 'ի սրտին Յիսուսի. և յայսմ է ծայր քրիստոնէական կատարելութեան, 'ի նախամեծարն տանել զկամս Աստուծոյ՝ կամաց մարմնոյ և զգայութեանց:

ԿԴ. Զանգիտէ Յիսուս 'ի մահուանէ որպէս զմարդ, զի ծանուսցէ մարդ լինել. և քանզի յանձին իւրում կերպարանէ նա զամենայն մարդ՝ կամեցաւ երկեղին տալ մեզ խրատ կարևոր: Միտ դիցուք և խորհրդածեսցուք օգտաբար, այսպէս. եթէ տագնապի Քրիստոս 'ի բնական երկեղէ անտի մահու՝ որ նեղէն զնա յիշատակաւ անջատման հոգւոյն 'ի մարմնոյն, որպիսի՞ երկիւղ ոչ ածեսցէ ինձ յիշատակ մահուն ըստ ազդման լուսոյ հաւատոյս: — Աւետեանն Աստուծոյ չարչարանէ ահ 'ի Քրիստոս, քանզի նա ինքն է ամենևին անմեղ թագաւոր անմեղաց, և ոչ ոք կարէ ստգտանել զնա վասն մեղաց, զի և ոչ ստուեր անգամ չարութեան բանսարկուին գըտաւ 'ի նմա: Իսկ ինձ ամենևին արդարացի է երկնչել. և արժան էր վասն այսորիկ զարհուրել սրտիս զտիւ և զգիշեր. եթէ, կայ մնայ ինձ

մեռանել, և յետ այնորիկ դատաստան, այսքան մեղապարտ գոլով մեծամեծ յանցանօքս: Եւ սակայն ոչ յիշատակ մահուն զարհուրեցուցանէ զիս, և ոչ երկիւղ Նորին յորդորէ զիս 'ի զերծ և յապաշաւ. և կեամ՝ որպէս թէ չիցեմ մեռանելոց, կամ թէ չունիցիմ ինչ համարս տալոյ յետ մահուան: Զանգիտեմ 'ի մահուանէ՝ բնութեանս ազդմամբ, որպէս և անասունքն. զանգիտեմ 'ի Նմանէ՝ վասն երկրաքարշ սիրոյ անցաւորացս, որպէս զանգիտեն և այլազգիքն. այլ ոչ զանգիտեմ ըստ խրատու հաւատոց՝ որպէս արժանն էր զանգիտել ամենայն քրիստոնէի, առ 'ի կեալ ուղիղ վարուք:

Շնորհեա ինձ, Տէր իմ և Աստուած, մի՛ վրիպեցուցանել երբէք 'ի տեսութենէ մտացս զկէտ մահուան իմոյ. զկէտն զայն ահեղ և անդարձական, որ սահմանեսցէ ինձ զերանականն կամ զկորստականն յաւիտենականութիւն. զվայրկեանն զայն՝ յետ որոյ չգուցէ ինձ այլ վայրկեան ապաշխարելոյ. և վասն որոյ պատուիրեցեր ինձ արթուն կալ, զի յանակնկալս հասանէ: Խոցեա զիս, Տէր, երկիւղիւ քով սրբով. երկիւղիւ յաւիտենականութեան՝ որ անստոյգն է. երկիւղիւ դատաստանի՝ որ առանց ակնառութեան լիցի ինձ. երկիւղիւ մեղաց իմոց՝ զորս յաւելում օր ըստ օրէ: Եթէ առաջի աթոռոյ դատողութեան քո դողայցէ և յողորմութիւն քո ապաստան լիցի՝ որ ոչն իսկ գիտէ մեղս արարեալ, ինձ զի՞նչ լինիցի գիտողիս զանթուելի բազմութիւն մեղացս: Դու, ո՛վ իմ Յիսուս, որ և դատաւոր իմ եղիցիս, մատուցեա ինձ շնորհօք արդեանց քոց՝ հոգի Ճշմարիտ, որով կրթեցայց 'ի մեռելութիւն ցանկութեանց մարմնոյ և աշխարհի. առ 'ի կեալ միայն 'ի սէր քո և 'ի նմանութիւն և 'ի յաւիտենական քո վայելս:

Ի պահու մահուանս դատեցայց վասն բաղում ինչ իրաց՝ զորս առ ոչինչ համարիմ այժմիկ. և արժան է ինձ զանգիտել վասն ընդարձակ և համարձակ խղճի մտացս՝ որ թուի ինձ թէ ոչ զարհուրի, բայց 'ի սակաւուց մեծեղեան մեղաց:

ԿԵ. Անդադար և յարաժամ եղեն չարչարանք Քրիստոսի, յառաջնմէ անտի վայրկենէ կենացն՝ մինչև 'ի հուսկ վերջին. քանզի հանապազ տանջէր դառն և հոգետոչոր տագնապաւ, 'ի նկատի ունելով յամենայն ժամ զոր ինչ կրելոցն էր 'ի մարմնին. այլ քանզի ամենայն տրտմութիւնք նորա հոգեկանաւ իմն ուրախութեամբ բարեխառնեալք լինէին, վասն որոյ և յաճախ խօսէր զմահուանէն փափագանօք և յօժարութեամբ, և ոչ իսկ տրտմութիւնս արժան է անուանել զնոսին՝ առ տխրութեամբ զոր արդ զգայ 'ի պարտիզին: Մանր է յոյժ տխրութիւնս այս առ ամենասուրբ հոգին Յիսուսի, քանզի անապակ է, լիուլի և ամենևին անմասն 'ի յամոքմանէ. քանզի այժմիկ զամենայն փառս աստուածութեանն ժողովեալ Յիսուսի յոգւոյն իւրում, և ոչ մասն ինչ փոքրիկ թողեալ 'ի զգայութեան, թէպէտև իսպառ երանեալ է յարքայութեան անդ՝ զոր և վայելէ 'ի վերնում մասին հոգւոյն, այլ յոյժ և յոյժ տրտում է 'ի ստորնումն, յորում անկեալ լքեալ կայ որպէս 'ի մէջ խաւարի և յամայութեան, տաղտկանաց և զզուանաց: Մարդկութիւն նորա համանգամայն և զուարճանայ և վշտագնի. և որպէս չարչարանքն չարգելուն զնա 'ի վայելից, և ոչ վայելքն ամոքէին ինչ զչարչարանսն: Եւ այս ամենայն՝ քանզի այսպէս կամի և կամաւորապէս զայս առնէ: Զոր օրինակ յարարչագործութեան աշխարհի բաժանեաց Աստուած զջուրսն, զկէս 'ի վերոյ և զկէս 'ի

ներքոյ հաստատութեան երկնից, վերնոյն կալով յանդորրու և 'ի հանդարտութեան, ներքնոյն 'ի յուզման և 'ի շարժման՝ 'ի բախմանէ հողմոց. զնոյն օրինակ և 'ի փրկագործութեանն՝ բաժանին 'ի Քրիստոս ջուրք աստուածայնոյն մխիթարութեանց՝ կալով 'ի վերնում բաժնի, 'ի ջուրցն տառապանաց՝ որք զստորինն ողողեն: Էին էին Քրիստոսի և հնարք և պատճառք մխիթարելոյ զանձն. այլ նա 'ի բաց մերժեաց զամենայն զդիւրիչ և սփոփիչ չարչարանացն, և ընկալաւ միայն զյաւէտ դառնացուցիչն: Եւ առ իմէ՞ այսոքիկ: — Առ 'ի շահել ինձ զարքայութիւն՝ ուր անխառն են վայելք յամենայն ցաւոց, և առ աներկեան առնել զիս 'ի դժոխոց՝ ուր և ցաւք ամենևին անմասն են 'ի վայելից. և առ 'ի յորդորել զիս յիւր նմանութիւն 'ի հովտի աստ արտասուաց, ուր խառնուրդ է հեշտից և վշտաց:

Այլ, ո՜հ, քանի՜ օտար է ներքին մարդն իմ 'ի քոյոյդ, ո՜վ բարի Յիսուս. զի ամենայն խորհուրդք իմ և իղձք բերին 'ի փախուստ տառապանաց և վշտաց, և 'ի խնդիր հեշտից, զգայականաց և զբօսանաց: Ծորեա յիս, Տէր, խմացուածս արժանաւորս հոգւոյ՝ որ ստեղծեալ յաղագս յաւիտենականութեան՝ բազմապատիկ փաստիւք և պատճառօք պարտականեալ է նմանող լինել քեզ: Այլ արդ գոհութիւն մատուցանեմ քեզ վասն սիրոյ քոյ, և նուիրեմ զդառնութիւն ցաւոց սրտիդ՝ փոխանակ մեղանացս զոր գործեցի անձնատուր լինելով 'ի գրգանս հեշտութեան:

Գուն եղից նմանել Յիսուսի՝ զրկելով զիս 'ի հաճոյից ինչ յորս մարթ իցէ վայելել օրինօք, և անտրտունջ համբերութեամբ կրելով զդժուարութիւնս ինչ կենաց՝ ըստ պայմանի սեփական վիճակիս:

Բանական տխրութիւն Քրիստոսի 'ի պարտիզին:

ԿՋ. Ոչ ինչ ընդհատ 'ի բովանդակ մարմնոյն՝ նաև համօրէն հոգւոյն կամեցաւ Քրիստոս կրել չարչարանս. ոչ 'ի ստորինն ևեթ 'ի զգայականումն մասին, այլ և 'ի վերնումն՝ որ աթոռն է մտացն և բանի. և թէպէտ երջանիկ էր 'ի միտսն՝ աստուածայնումն տեսութեամբ, համայն և այնպէս եգիտ հնարս զարմանալիս, միաբանել 'ի նոյն միտս՝ ընդ գերազանցեալ ուրախութեան փառաց և գերագոյն տրտմութիւն, որ ներգործիւր 'ի նկատելոյ անտի և 'ի գարշելոյ 'ի մեղաց աշխարհի, որք թէպէտ և քաջ իսկ յայտնի էին նմա յամենայն ժամանակի կենացն, այլ արդ 'ի պարտիզի աստ՝ առաւել իմն ուշի ուշով խորհի զանհնարին զանհեդեդ չարիս նոցին:

Եւ քանզի 'ի մարմնաւորութեան իւրում էառ զկերպարանս՝ ոչ միոյ լոկոյ մարդոյ, այլ զամենայն մարդկան, արդ այժմ զամենեցուն պաղէտս զգածնու: Զմտաւ ածէ զհամօրէն մեղանս աշխարհի որք յԱդամայ հետէ մինչև ցայն վայրկեան, և որք յայնմհետէ մինչև ցօրն դատաստանի. տեսանէ զամենայն, և ոչ որպէս մեքս 'ի հարևանցի վեր 'ի վերոյ, այլ ուրոյն ուրոյն թուովն և տեսակաւ և պարագայիւք և ամենայն աստիճանօք չարութեանն. որպէս թէ ամենայն մեղաւորաց եկեալ հասեալ անդր 'ի պարտիզին և մեղանչէին առաջի երեսաց նորա: Բարէ. քանի՜ քստմնելի խորհրդածութիւն՝ աստուածամարդոյն այնմիկ: Քաջ իսկ իրաւունք

են նմա դանդատել ընդ մարգարէին, եթէ Ուղխք անօրէնութեան պաշարեցին զիս: Կարեմք և մեք յաւելուլ ընդ նմին, եթէ դառնութիւն նորին ծով է համատարած՝ ուր ամենայն գետք երթեալ հոսին:

Այլ զի՞ է ինձ յածել աստանօր զայլոցն մեղօք. դարձայց առ իմն: Նկատէ Յիսուս յանդիման իւր զամենայն մեղս իմ, զխորհրդոց զբանից և զգործոց. զոր ինչ միանգամ և գործեցի յառաջնմէ անտի պահէ բանաւորութեան, զոր 'ի տուէ և զոր 'ի գիշերի, որ միայնակ և որ ընդ ընկերի. այս ամենայն առաջի կայ նորա, և քանակաւ և որակաւ և պժգալի տգեղութեամբ: Տեսեալ և զայն՝ զի չիք յիս վասն սոցին ողրմութիւն. սրտաբեկ, զարհուրեալ յահագին տեսլենէն՝ մտանէ 'ի տխրութիւն մահուչափ:

Ո՜հ, քանի՜ չար ուրեմն են մեղք, որոց պատկեր և եթ բաւական է 'ի տրտմեցուցանել և դառնացուցանել զոգի քո, Յիսուս, որ լի է մխիթարութեամբ 'ի փառս իւրում: Յա՛ւ է ինձ, զի այսպէս դառնացուցի մեղօք իմովք զներքին քաղցրութիւնս քո: Իցի՛ւ թէ էր ինձ հնար սփոփանս ինչ մատուցանել յայսքան աղէտս տառապանացդ: Եւ քաջ իսկ գոյ ինձ հնար միով յօգնականութեանց՝ զոր արդիւնք քո շնորհեցին ինձ. և զայս իսկ խնդրեմ 'ի շնորհս արդեանցդ, մասնաւորել զխիստ իմ տրտմութեանն՝ զոր կրեցեր վասն մեղաց իմոց. և հաւատամ զի որպէս մեղօք իմովք տրտմեցուցի զքեզ, նոյն և յապաշխարելս՝ եղեց քեզ 'ի մխիթարութիւն և 'ի հաճութիւն: — Յորդորեցից զանձն իմ յապաշաւ մեղացս. ժտեցից 'ի Տեառնէ զի տացէ ինձ զարհուրել 'ի մահացու մեղաց. որպէս զի և 'ի ստուերէ անտի նորա երկուցեալ փախեայց, զգոյշ կալով վտանգացն և առթից:

ԿԷ. Տեսանէ Յիսուս 'ի պարտիզին զամենայն մեղս աշխարհի, զանցեալ, զներկայ և զապագայ. և տեսանէ՝ ոչ մարդկայնով ևեթ հարևանցի ծանօթութեամբ, այլ լուսով անսահման և անբաւ ծանօթութեան, որում չեն բաւական տեսութիւնք համօրէն ամենայն մարդկան և հրեշտակաց, խորագոյնս նկատելով մինչև 'ի սպառ զչարութիւն և զգարշութիւն նոցին: Եւ որպէս ծածկեալ են 'ի նմա ամենայն գանձք իմաստութեան և գիտութեան, և 'ի նմա բնակէ լրումն աստուածութեանն, գիտէ կատարելապէս զինչ են մեղքն մահուչափ. այլ ընդ գիտութիւն նորա և ընդ մերս՝ անբաւ է ապարէզ: Գիտեմք զի մեղք յանցանք մեծ են մեզ առ Աստուած. այլ քանզի և զԱստուած ընդ աղօտ ինչ ճանաչեմք հաւատովքս, այսպէս և զմեղս ընդ աղօտ ինչ ճանաչեմք:

Քրիստոս հոգւովն իւրով ճանաչէ անթերի զանբաւ բարութիւն և զմեծվայելչութիւն Աստուծոյ. որով՝ բովանդակ ճանաչէ և զմեծութիւն և զանբաւ չարութիւն մահացու մեղաց, որ ուղղակի մարտնչի ընդ անբաւ արդարութեանն Աստուծոյ. և 'ի ծանօթութենէ աստի ներգործի 'ի նմա՝ տրտմութիւն և տխրութիւն անհնարին, զոր ոչ բացատրել է հնար բանիւ և ոչ հասու լինել մտօք: — Եթէ երևեալ էր ինձ սատանայի դժպհի տգեղութեամբն, ապաքէն սոսկայի, 'ի քիրտն հարկանէի և նուաղէի յահէ անտի. այլ քան զբովանդակ դիւաց դժոխոց տեսիլ միանգամայն՝ դժնդակ ևս է մահուչափ մեղացն. իսկ արդ ո՞րքան ևս աւելի երևոյթ այնքանեաց բիւրուց զազիր մեղանաց առաջի Քրիստոսի, ճանաչելով նորա զմիոյ միոյ նոցին ամենագարշ անօրէնութիւն: Եթէ այնքան դառն էղև նմա յիշատակ խաչին՝ որ դեղ իսկ է չա-

բեացն, քանի՜ն լիցի տրտմութիւն նորա 'ի տեսիլ այսքան չարեաց։

Ո՛վ ամենասուրբ հոգի Քրիստոսի, զի՞արդ հնար իցէ ինձ լինել քեզ կարեկից՝ որպէս արժանն է, Թէպէտև աչք իմ դարձցին 'ի կրկնավտակ աղբերս արտասուաց։ Հիացումն իմ լցցէ զպակասութիւն գթութեանս։ Այլ զի՞արդ տարար ինձ՞ տեսանելով 'ի պարտիզի անդ զանթիւ յանցանս իմ. զի՞արդ մանաւանդ սիրիցես զիս՝ տեսանելով լցեալ զիս դարշելի պղծութեամբք։ Ո՛վ անբաւ ողորմութիւն։ Այլ ուստի՞ իցէ այս, զի դու այնքան տխրիս ընդ մեղս իմ, և ես կամ և մնամ իբրև անզգայ։ Ոչ ճանաչեմ ես զմեղս. այլ քաջ իսկ ճանաչեմ զի չէր պարտ չէր արժան ինձ գործել զայն. և կամէի ճանաչել քաջիկ ևս՝ զի զղջացեալ ապաշաւէի։ Տուր ինձ, Տէր, զծանրութիւն չարեաց իմոց. զի ոչ կարացից ասել յամենայն սրտէ՝ Ողորմեա ինձ, Աստուած, եթէ ոչ կարիցեմ ասել. Զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ։

Զի՞ք իբրև զչարչարանս Քրիստոսի որ կարիցէ տալ ինձ լոյս 'ի ճանաչել, և պատճառս՝ առ ատել զմեղս. վասն որոյ դուն գործեցից զօր ամենայնխոկալ 'ի նոսին, զի չի՞ք իբրև զայն պիտանի ինձ։

ԿԸ. Տրտմի Քրիստոս վասն մեղաց աշխարհի. այլ առաւել ևս վասն մեղաց որդւոցն Իսրայէլի, զի սա ժողովուրդ իւր էր, ընդ որ հայէր հաճութեամբ, զոր սիրէրն, և որում պանծանօք իմն ասէր լինել Աստուած յատուկ և փրկիչ նորին։ Արդ զի՞նչ ասասցէ յոգւոյ իւրում, տեսանելով զժողովուրդն զայն խմբեալ առաջի իւր՝ ապախտիս փոխանակ այնքան ողորմութեանցն հատուցանելով, և մեղս՝ այնքանեաց բա-

բեացն, և պատրաստելով կապանս և շղթայս առ կալնուլ և 'ի խաչ հանել զեկեալն յերկնից յերկիր՝ 'ի փրկել զնա յաւիտեանս: Մեծ էին յոյժ մեղք Հրէից քան զամենայն այլոց ազգաց. վասն այնորիկ և առաւել դառնացուցիչք սրտին Յիսուսի:

Իսկ մեզ քրիստոնէիցս՝ եթէ մեծ ևս իրաւունք իցեն ասել ցՅիսուս, թէ ժողովուրդ քո եմք ընտրեալ և սիրեցեալ, մարթ է և իրաւամբք հաւատալ՝ եթէ վասն մերոցս մեղաց առաւել ևս տխրի նա: Յայտ իսկ է զի մեծ են մեղք քրիստոնէի՝ որ դաւանի կեալ 'ի Ճշմարիտ կրօնս Աստուծոյ՝ քան զանհաւատին. քանզի նորին իսկ խորհուրդք և սրբութիւնք հաւատոյ իւրոց ծանրացուցանեն զմեղսն. և մեծագոյն է ամբարշտութիւն՝ ուր առաւել պարտք էին զգուշանալոյ սրբութեան: Չէ մարթ երկբայել թէ չարագոյն իցեն մեղք քրիստոնէի որ անարգէ զՅիսուս Քրիստոս ծանուցեալ Աստուած և Մարդ՝ քան զՀրէիցն, որ միայն մարդ գիտէին զնա. իրաւամբք ապա և Քրիստոս քան ընդ Հրէայսն՝ մեծապէս տխրի ընդ վարս խառնակեցիկ քրիստոնէից:

Զայս Ճշմարտութիւն յանձն իմ ձգեալ՝ խորհեցայց: Յածել իմում զմտաւ զվիճակ կենաց իմոց, և 'ի քննել զգիտակցութիւնս իմ, համարիմ, ով քաղցրագութ Յիսուս, եթէ քան զամենայն մեղաւորս որք յանդիման եղեն մտացդ 'ի պարտիզին՝ չիք որ առաւել քան զիս տրտմեցոյց զքեզ. զի ոչ գիտեմ իցէ՞ ոք չարագործ կամ ապաշնորհ քան զիս, որ թշնամանեցի ըզքեզ, ունելով իսկ 'ի քէն ընկալեալ այնքան շնորհս պարգևաց և օգնութիւնս: Չեն ծանունք իբրև զիմն մեղք Հրէից և անհաւատից. վատարագոյն եմ ես քան զնոսա. քանզի դուցեն

ինչ նոցա չքմեղք, այլ իմ հաւատք իսկ դատապարտ առնեն զանձն իմ և ամբաստանեն. Հրեից կողոպտեք ընդ մարմին քո անցին, ես անգթագոյն ևս ընդ հոգի հարի զքեզ: Նա արդ չկարեմ այլ ինչ ասել, բայց զի ցաւէ ինձ յոյժ և առաշաւեմ զեղեռնաւոր կեանս իմ: Ցաւէ ինձ և ընդ այս՝ զի դիւրագորով գոլով իմ 'ի տրտմութիւն առ ամենայն արկածս կենցաղոյս որ պատահիցեն ինձ, ոչ կարեմ արժանապէս զգածնուլ սուրբ տխրութեամբ առ ողբալ զմեղս իմ, և առ կարեկից լինել քոյոց վշտաց: Այլ դու, ամենաբարի Յիսուս, ցոյց զմեծութիւն ողորմութեանց քոց տալով զվայելս շնորհացդ առ մեղաւոր՝ որ անարժանն է քան զամենայն մարդիկ:

Քրիստոնէութիւն իմ մեծ պատճառք են առ յորդորել զիս 'ի զիղջ մեղաց իմոց: Ո՜վ, որպիսի՜ անհեդեդ ապիրատութիւն, լինել յեկեղեցւոյ՛ 'ի վայելս անբաւ պարգևացն Աստուծոյ, իսկ մեղօք՝ անհունս պարտական գոլ երախտեացն Աստուծոյ:

ԿԹ. Տաճար սրբութեան են ներքինք Քրիստոսի, յոր ոչ է մեզ մարթ մտանել. այլ թէպէտ և ոչ բաւիցեմք խելամուտ լինել՝ եթէ որպէս զիարդ վշտակրէր հոգի նորա միացեալն սերտիւ ընդ Աստուծոյ, ոչ իսկ սխալիցեմք ասել, եթէ հրաշագործեաց աստուածութիւնն և 'ի թողուլ մարդկութեանն զի կրիցէ, և մանաւանդ 'ի գործակիցն լինել՝ զի առաւել ևս վշտակրիցէ: Սքանչելիք են՝ Քրիստոսի յայնքան մահուչափ ցաւս կայն տակաւին կենդանի: Սքանչելիք են լինելն նորա և՛ ուղևոր և հասեալ. և՛ հոգւոյն լինել երջանիկ՝ փառօքն զոր վայելէ, և միանգամայն խռովեալ 'ի տրտմութեանց և 'ի հոգոց. ընդ այս

արժան է մեծապէս սքանչանալ: Հոգինորա ան-ձնական միաւորութեամբն ընդ Աստուծոյ՝ քա-ջիկ ևս ճանաչէ զամենայն որ տխրեցուցանէն զնա. և զի առաւել ճանաչէ՝ առաւել ևս տխրի. և 'ի յաւելուլ գերագոյն ցաւոց ընդ գերագոյն ծանօթութեանն, մինչ մարդկութիւնն յանհնա-րին վշտացն 'ի վտանգի կայ ընկճելոյ, զօրանայ յաստուածութենէն՝ առ 'ի կարող լինել կրել զայնոսիկ:

Մեք յորժամ 'ի վիշտս ինչ անկանիցիմք՝ մխի-թարիմք զԱստուած յիշելով. գիտեմք զի և մարտիրոսք ուրախ լինէին 'ի ցաւսն, քանզի շնորհք զուարթացուցանէին զնոսա 'ի ներքուստ և յաղթող առնէին տանջանացն. այլ 'ի չարչա-րանսն Քրիստոսի՝ աստուածութիւնն ոչ առաքէ և ոչ շիթ մի ուրախութեան ամոքել զցաւանու-թիւնսն, այլ և յաւելու իսկ 'ի նոյնս:

Քննեցից, եթէ ընդէ՞ր Քրիստոս՝ որպէս Աս-տուած գործակից լինի դառնագոյնս ևս յար-գարել զչարչարանսն, զի անխառն իմն լինիցին ցաւքն, ամենևին անսփոփ, ամենևին անմխիթար: Չարչարի նա 'ի հատուցումն պարտուց մեղաց. և զի մեղքն չար է պարզ, որպէս զի և 'ի դէպ իսկ է զնա միայն առնել չար, արժան է հաւասար նմին լինել և պատուհասին՝ սոսկ և ստոյգ ցաւ: Վասն այսորիկ ցաւք Քրիստոսի և՛ զգայականն և բանականն՝ ընդ դժոխոց համեմատին. քանզի սաստիկք են անհնարին, և պարզ՝ անընդունակ բնաւին դիւրութեան:

Ո՛վ, քանի՜ ծանր չարիք են մեղք: Եւ սակայն քանի՜ցս գործեցի, որպէս թէ ոչ ինչ մի էր: Ե-թէ և մի միայն մահացու մեղս գործեալ էի՝ դոյր իմն անյոյս լինել. քանզի զի՞արդ էր ինձ հնար հատուցանել վասն այնորիկ: Այլ, ո՛ն անդր, 'ի բաց կացցէ յինէն յուսահատութիւն. և շնորհս

մատուցից գթութեան քում, Հայր յաւիտենական, որ հաճեցար տալ վասն պարտեաց իմոց զՈրդի քո մարդացեալ, յորում հանգչիմ և վերանչեմ: Ո՛վ Յիսուս, ո՛րքան ողորմելի ես, այլ ես առաւել ողորմած: Իմ են աղէտքն, քո են գթութիւնք. և, բա՛բէ, քանի՜ն մեծ են գթութիւնք քո քան զտառապելութիւնս իմ:

Հաստատուն կամօք պատրաստ կացից յանձն առնուլ և կրել զամենայն չար՝ քան միանգամ ես մեղանչել մահացու մեղս. քանզի չար և ստուգիւ չար՝ միայն մեղքն է:

Հ. Քրիստոս ոչ միայն տեսանէ 'ի պարտիզին զմեղս աշխարհի, այլ և որպէս Փրկիչ ազգի մարդկան՝ առեալ զայն ամենայն մեղանս ամենայն ազգաց, զՀրէից, զհեթանոսաց և զանբարի քրիստոնէից, բառնայ յիւր վերայ՝ առ 'ի կրել զծանրութիւնն, և իբրու սեփականել իմն ինքեան, որպէս թէ իւր իսկ գործեալ իցէ զնոսին: Եւ զիա՞րդ արդեօք ոչ ընկճեսցի ընդ աշխարհակշիռ բեռամբ եղերանցն, յորս 'ի դէպ է նկատել և զմեր մեղս: Որպիսի՜ տագնապք և տխրութիւնք նորա՝ 'ի զգալ զանձն ճնշեալ ընդ այնքան անբաւ, անհեդեդ և ծանրակիր բեռամբ:

Խորհեաց, հոգի իմ. ամենևին անչար հոգին Յիսուսի՝ որ ոչ բնաւ մեղս արար և ոչ կարէր առնել, քանիպատի՜կ տառապէր և տագնապէր՝ գտանելով զանձն ընդ բեռամբ այնքանեաց անթիւ և անբաւ մեղաց այլոցն: Քանի՜ վիշտ ամենախոնարհ հոգւոյն՝ ընկճելով ընդ այնքան հպարտութեամբք. ամենամաքուր հոգւոյն՝ ընդ այնքան աղտեղի պղծութեամբք. ամենասուրբ և ամենևին աստուածասէր հոգւոյն՝ ընդ այնքան վատչուէր եղերամբք, յաւակնութեամբք և մե-

ծամեծ անարգանօք առ Աստուած : Ո՞ կարասցէ
հասու լինել՝ զի՞նչ կրեաց ամենևին անարատ
մարդկութիւնն այն՝ 'ի նկատել զանձն իւր որ_
պէս պարտական այնքան մեղանաց՝ զորոց կրե_
լոց էր զպատուհաս : Ձիք և ոչ մի օրինակ համե_
մատութեան՝ որով հնար իցէ բացատրել զայդ.
այլ գէթ ըստ կարի մերում գուն դիցուք դա_
տել. որպիսի՜ վիշտ դառնակսկիծ կրեացէ սիրտ
Յիսուսի՝ տեսեալ յանձին այնքան մեղանս որ իւր
ինչ ոչ են : Կարէ արդարև մխիթարել զանձն այ_
նու զի այսպէս կամեցաւ, և հաճէ զմիտս իւր.
այլ մերժէ զամենայն որ սփոփել զնա կարիցէ,
և ժողովէ յանձն միայն զվհատեցուցիչսն, որ_
պէս զի անխառն և սոսկ լիցին վիշտքն և դառ_
նագոյն չարչարանքն՝ որովք հատուցանելոց էր
զմեղացն պարտս՝ ըստ չափու ծանրութեան նո_
ցին իսկ մեղաց :

Ջարհուրին գութք սրտի 'ի խորհելն զայսո_
սիկ. և թուի ինձ, ո՜վ ամենագորով Յիսուս, ե_
թէ բարձեր ըստ անձին զամենայն մեղս իմ՝ 'ի
հատուցումն արդարութեանն Աստուծոյ. յինք_
նըդ տարար զաւիթս իմոց տխրութեանց՝ առ
'ի պարգևել ինձ զքո ուրախութիւնսն. քեզ
համարեցար զանօրէնութիւնս իմ՝ որպէս զի
իմ լիցի քո սրբութիւնդ : Ո՛հ, քանի՜ պարտա_
կան եմ քեզ պարտուք անապակ սիրոյ՝ փոխա_
նակ անապակ ցաւոց քոց : Ո՛հ, քանի՜ պարտա_
կան եմ անհասանելի բարութեանդ և ամենա_
խոր խոնարհութեանդ, զի ոչ միայն յանձն ա_
ռեր մարդ լինել և զտկարութիւն մարդոյս
կրել, այլ և մեղաւորի կերպարանս առնուլ
հաճեցար : Ո՛հ, վասն այսր իսկ քո խոնարհու_
թեանդ՝ բա՜րձ մերժեա յինէն զհպարտութիւն,
և մի՛ երբէք տացես թոյլ տիրելոյ յանձն իմ
ախտիս այսորիկ՝ որ ամենայն իսկ մոլութեանց է
պատճառ :

Ցուեսցէ ինձ ընդ մեղս իմ, որպէս ցաւէ Քրիստոսի ընդ մեղս՝ որ ոչ իւր են. և որպէս խոնարհի նա վասն այսոցիկ և համարի զանձն իւր մեղաւոր, այսպէս և ես ծանեայց զիս պարտաւոր մեղաց իմոց:

ՀԱ. Ցամենայն 'ի չարչարանս Քրիստոսի անկ է նկատել զներքինն նորա. քանզի անդ է տիրապէս առաքինութիւն, կատարելութիւն և սրբութիւն. արժան է և մեզ առաւելապէս զներքինն մեր յարդարել: Առ 'ի քաջ իմանալ եթէ զիարդ Քրիստոս յանձն իւր էառ զամենայն մեղս աշխարհի, 'ի դէպ է ասել եթէ կացոյց նա զանձն իւր յերաշխի աստուածայնումն արդարութեան: Երաշխաւոր է որ յանձն առնու զպարտիս այլոյ, և կամաւ պարտաւոր առնէ զինքն 'ի հատուցանել զոր ոչն կարասցէ հատուցանել պարտականն. և քանիցս առ այս անկարող գտցի սա՝ հարկ է երաշխաւորին ընուլ զպարտսն, ոչ այլոյ ինչ աղագաւ, այլ միայն զի երաշխաւոր է:

Արդ մեր պարտականս գոլով առ Աստուած և արժանիս յաւիտենական մահուան՝ վասն մեղանացս, և զի մեղք անբաւ են ծանրութեամբ վասն դիմակայելոյ անբաւ մեծվայելչութեանն Աստուծոյ՝ արհամարհելոյ առ 'ի մէնջ, և անբաւական 'ի հատուցումն ելով համօրէն բնութեան և ամենայն արարածոյ, զի՞նչ արար Որդին Աստուծոյ: Դրդեալ 'ի սիրոյ անտի իւրմէ և 'ի կարեկցութենէ առ մարդն՝ եղև մարդ. և որպէս մարդ ետ զանձն յերաշխի առ Հայրն յաւիտենական, և յանձն իւր առեալ զամենայն պարտս մեր՝ կացոյց զանձն պարտական 'ի հատուցումն:

Յայս ձև օրինակի արժան է մեզ նկատել զՔրիստոս 'ի պարտիզին. ծանրաբեռնեալ մեղօք

մերովք, այսինքն պարտուք մերովք. քանզի առար զանձն երաշխաւոր վասն մեր, ոչ ինչ պէտս մեզ ունելով, այլ մեր մեծապէս պէտս ունելով նմա: Եւ արդ այժմ որպէս երաշխաւոր մատուցեալ է 'ի հատուցանել և իրաւախոհ լինել. պաշարեալ զհոգին սրտաթափ և մահուչափ տրտմութեամբք, զորս վերընծայէ՝ որպէս զին անբաւ, առ 'ի ջնջել զգրեալն 'ի դպրութիւնս աստուածայինն արդարութեան՝ զմուրհակս պարտականութեան մերոյ, և զերծուցանել զմեզ 'ի յաւիտենական մահուանէ:

Եթէ էին ինչ ուրեք պարտք՝ զոր ոչ ամենայն հասք և ռոճիկք իշխանաց և թագաւորաց երկրի բաւէին վճարել, ասէաք մեծ յոյժ լինել զայն. իսկ արդ քանիօ՜ն մեծագոյն ասիցեմք զպարտս մահացու մեղաց, որում չէին բաւական 'ի հատուցումն ամենայն արարածք երկրի և երկնից. և չէր նմին փոխանակ՝ բայց միայն դառնագառն չարչարանք Աստուածամարդոյն: Մեծ է ինձ խորհրդածութիւնս այս առ 'ի նուաճել զիս 'ի խոնարհութեան, ճանաչելով զիս ինքն պարտական չքաւոր: Այլ 'ի հատուցանել անդ Քրիստոսի կենօք իւրովք՝ վասն իմ, քանի՞ ինչ չիցեմ պարտական առ երաշխաւորն իմ: — Ո՛վ բարերար Յիսուս, եթէ էին յիմում իշխանութեան ամենայն կեանք մարդկան, և դոյր ինձ հնար ծառայեցուցանել զնոսա քեզ զամենայն զարս ժամանակաց, տակաւին իբրև ոչ ինչ մի էին առ պարտուք իմովք որ առ քեզ: Եւ արդ զիա՞րդ ժխտեցից քեզ զմնացուած եղկելի կենացս այսոցիկ. կելով յայսմ հետէ ոչ առ այլ ինչ՝ բայց 'ի սիրել զքեզ և 'ի ծառայել, յերախտիս վճարելից դառնութեանցն զոր կրեցեր վասն ազատելոյ զիս 'ի յաւիտենական տանջանացն: Քեզ վերընծայեմ զամենայն կեանս իմ:

Քրիստոս երաշխաւոր եղև վասն իմ. այլ և ինձ՝ որ տիրապէս պարտական եմ աստուածային արդարութեան, անկ է գործակից լինել արդեանց նորին, և որքան և է ինձ հնար՝ աշխատութեամբ առնել հատուցումն։

ՀԲ. Ի սաստկութենէ տխրութեանն և զզուելոյ և խմանալոյ՝ ընկճեալ հեծեծէ տառապեալ փրկիչն Յիսուս, և իբրև լքեալ անոք, և զուրկ 'ի հոգեկան օծութեանցն զոր սովոր էր ընդունել, իբրև կարօտ քաջալերութեան դիմէ առ երեսին առաքեալսն մտերիմս՝ զորս ունէր առ երի. և որպէս 'ի Թաբօրական լերինն ծանոյց նոցա զինքն Աստուած Ճշմարիտ՝ յայտնելով զգանձս փառաց իւրոց, այսպէս և այժմ 'ի պարտիզին ծանուցանէ նոցա զանձն իւր մարդ Ճշմարիտ, յայտնելով զմարդկային տկարութիւնս, ոչ առերևոյթս այլ Ճշմարիտս և արդարև կարեկցութեան արժանիս։ Հառաչանօք ասէ. Ա՜հ, տրտում է անձն իմ մինչև ի մահ. զմահու կրեմ երաշխէպս, և սիրտ իմ հեղձամղձուկ լինի. մի՛ զիս թողուք, մի՛ զիս լքանէք, եղբարք. ժուժացէք ընդ իս. այս է ժամ կալոյ ձեզ ընդ իս և խրախուսելոյ։

Զի՞նչ ասիցես, հոգի իմ, տեսանելով զԱստուածն մխիթարութեանց և զմխիթարիչն վշտացելոց, յայն և յայնպիսի ժամանեալ տառապանս անձկութեան, մինչև խնդրել մխիթարութիւն։ Այն որ սակաւիկ մի յառաջ գեղեցիկ դիմօքն փարատէր զտրտմութիւնս հոգւոց, և յափշտակէր զսիրտս տեսանելեացն, սովպեալ կայ 'ի ցաւս իւր մուրանալ մխիթարութեան ինչ մասն յերից աղքատին ձկնորսաց։ Զի՞նչ ասիցես 'ի տեսանելդ և 'ի լսել զողորմելի կերպարանսն և զաւաղելի զձայնն, որով որպէս եր-

կորդ ումն Յովբ՝ գայ աղերսել զգութ և զգո-
րով բարեկամացն:

Զարմանալի ցուցաւ Քրիստոս 'ի վերնատանն՝ 'ի լուանալ զոտս աշակերտացն. խոնարհութիւն մեծագոյն էր այն, որով երևեալ վարդապետ և տէր՝ պատկառելի լինէր և հնազանդելի: Իսկ 'ի խոնարհելն այժմիկ մերկանալով երից յիւրոց առաքելոց զտկարութիւն անձին իւրոյ և խնդրելով զնոցայն օգնականութիւն, որպէս թէ չունիցի յինքեանէ ոչ ոգի, ոչ ոյժ և ոչ զօրութիւն առ 'ի տանել տառապանացն, խոնարհութիւն է այս վեհերկոտութեան և սրտաբեկութեան. որով երևի իմն մարդուկ՝ յորում չերևիցի ինչ աստուածային: Քանզի կամաւոր էր 'ի նմա և այս ցածութիւն. ո՜վ սքանչելի օրինակիս: — Այլ յառաջ ևս մատիցուք: Յորժամ տեսանեմ զաստուածային վարդապետն այսքան խոնարհեալ առ առաքեալսն, և զնոսա անկեալ եղեալս ծանրացեալ աչօք 'ի քուն, և որպէս անզգայեալք՝ չառնելով նմա պատասխանի և ոչ կէս բան 'ի մխիթարութիւն կամ 'ի կարեկցութիւն, այսպէս իսկ անօրինելով նորա՝ զի մարդկութիւնն խնդրեսցէ այլ ոչ գտցէ իւր մխիթարիչ, զի 'ի ցաւս չարչարանաց իւրոց ոչ եհաս նմա օգնութիւն, ոչ առ 'ի յԱստուծոյ և ոչ առ 'ի մարդկանէ. — ա՜հ, Յիսուս իմ, հիացեալ գոչեմ. Որպիսի՜ սէր, որպիսի՜ խոնարհութիւն, որպիսի՜ համբերութիւն է այս: Ոչ 'ի զարմանս ևեթ են ինձ այսոքիկ, այլ և 'ի նմանութիւն: Եւ ե՞րբ իցէ զի ողբացից զհպարտութիւն իմ և զապերախտութիւն, եթէ ոչ յորդորիմ ողբալ զայն 'ի խոկալս իմում զխորհուրդ այսքան գերունակ քումդ սիրոյ և այսքանոյ խորին խոնարհութեանդ: Հա՜յր յաւիտենական. զարթո՛ յիս զեղձս՝ որովք կամիս թէ վառէի յայսմ պատեհի:

Ըստ օրինակին Յիսուսի՝ որ 'ի ներքին չարչա-րանս իւր՝ հրաժարէ յամենայն սփոփանաց մարդկայնոց, գուն եդից և ես զրկել զզգայութիւնս իմ յախորժելեացն ինչ հաճոյից: Քաղցրացի ինձ ամենայն՝ զՅիսուսին յիշելով դառնութիւնս:

Քնածութիւն Առաքելոցն 'ի պարտիզին:

ՀԳ. Ածեալ Յիսուսի ընդ իւր 'ի պարտէզն զերեսին աշակերտս իւր հաւատարիմս, զՊետրոս, զՅակովբոս և զՅովհաննէս, յայտնէ նոցա զտրտմութիւն իւր՝ որով նեղի դառնապէս, վասն դժնդակ չարչարանացն՝ որ ժամ 'ի ժամէ մերձենան: Ի լսել զտագնապական ողբս, զցաւ և զհեծութիւն աստուածային վարդապետին՝ իւրեանց որ զամենայն ոք 'ի գութ և յողորմ շարժէր, 'ի տխրութիւն հասանին և ինքեանք, և նեղեալք 'ի տաղտապանացն՝ զքնով անկանին: Երեքին սոքա առաքեալք ընտրեալք էին 'ի Քրիստոսէ որպէս եռանդնալիցք քան զայլսն. և քանզի վկայք կացեալ էին աստուածութեան նորա և ականատեսք փառացն յայլակերպելն նորին 'ի Թաբոր, 'ի դէպ էր նոցա լինել և արուրագոյնս և արթնագոյնս առ 'ի կալ նմա մխիթարիչս 'ի մտաւորում տագնապին՝ զոր զեկոյցն նոցա. այլ սակայն յանհոգ իմն մեղկութիւն հատեալ՝ 'ի քուն մտանեն՝ 'ի ժամանակի յորում արժանն էր ցուցանել առաւել արիութիւն և արթնութիւն. և ոչ վառին 'ի ցաւակցութիւն Յիսուսի՝ որ վասն նոցա իսկ առաւելապէս ցաւի:

Թէպէտ և 'ի բնութեան տկարութենէ, և թէպէտ 'ի փորձութենէ սատանայի եկեալ իցէ քնածութիւն 'ի նոսա, այս ինչ յայտ է՝ զի վատթար ծուլութեան նշանակ է քնածութիւն՝ յորժամ 'ի չարչարանս Քրիստոսի անկ իցէ խորհել: Արժան է և ինձ խորհրդածել զանձնէ. վառի և յիս երբեմն եռանդն ինչ. այլ յաճախ ես 'ի խորհելս զչարչարանացն Քրիստոսի, ո՜հ, քանի՜ գաղջ գտանիմ և ծոյլ, տաղտուկ, տաղտապկոտ և անյօժար: Եւ 'ի սմին իսկ պահու՝ յորում զՔրիստոսի որ 'ի պարտիզին տխրութիւնն կերպարանեմ՝ զի՞արդ կայցեմ: Ո՜վ Աստուած, արդարև նիրհեն իղձք իմ. և չիք իմ ոչ հոգի նմանող նմա լինելոյ, և ոչ զգացուած 'ի վշտակցութիւն: Եւ իցէ՞ ծուլութիւն մեծ՝ քան զդժուարինն 'ի խորհել զտառապանսն՝ զորս ոչ դժուարեցաւ Քրիստոս և կրել իսկ: Գոյ գաղջութիւն՝ յոր թողու լքանէ Աստուած զմարդ. և չիցէ՞ արդեօք յայնպիսեաց անտի և իմս՝ որ կեամս յանզգայս և յուլաբար: — Զարհուրանաց իրք են այսոքիկ, Աստուած իմ. և քանզի մարթ է ինձ սովիմբ և 'ի վհատութիւն կործանել, յոր և հակամէտս եմ, աղաչեմ զքեզ առնել ինձ զայս շնորհօք քովք յառիթ խոնարհութեան. և ճանաչել 'ի պահու յորում առաւել գաղջացեալ իցեմ, թէ ո՞րքան մեծ իցէ իմս հիքութիւն, և ո՞րքան կարևոր է ինձ ձեռն օգնականութեան քո: Առաւել հաճիմ ընդ գաղջութիւն իմ և ընդ ցածութիւն, եթէ 'ի գաղջութենէ անտի քաղեցից խոնարհութիւն, քան թէ ընդ եռանդն իմ և ընդ յանձնապաստան վստահութիւն 'ի նոյն եռանդն զոր զգայցեմ: Եւ չունիցիմ այժմէն իսկ առիթ խոնարհելոյ 'ի գաղջութեան իմում, մինչդեռ քոյովսանն զգամ յիս, ո՜վ Տէր, անէնչանս՝ մտադիւր պարապելոյ

'ի կրթանս կատարելութեան, իսկ իմովսանն զգամ զպակասել զօրութեան իմոյ, և վայրիկ մի անգամ խոկալ 'ի չարչարանս քո ոչ բաւեմ:
Զգոյշ կացից 'ի գաղջութենէ՝ զի մի ունակասցի յիս. և զայժմու գաղջութիւնս յօգուտ արկից՝ 'ի խոնարհել, և այնու հնարս հնարել առ 'ի ստանալոյ զեռանդն:

ՀԴ. Ի քուն գտեալ զառաքեալսն՝ Քրիստոս պատուիրէ նոցա հսկել և կալ յաղօթս, և առանձինն կշտամբէ զՊետրոս, զի ոչ գիտաց ժուժալ և հսկել ընդ նմա և ոչ մի ժամ. այն որ փոքր մի յառաջ երդնոյր և ասէր աներկիւղ քան զայլսն լինել և յանձն առնուլ 'ի սէր վարդապետին իւրոյ զվտանգս և զմահ. և աստուածայինն վարդապետ յայն սակս առեալ էած զնա 'ի պարտէզն, որպէս զի ծանիցէ թէ ոչինչ կարէ յանձնէ որ բազում ինչ խոստանայ իւրովսանն: Արդարապէս արդ խոնարհեցուցանէ զնա, և 'ի թուլութեան անդ նորին տայ նմա իմանալ՝ թէ քանի՞ յանդուգն էին սնափառ խոստաբանութիւնքն. ասելով իմն ցնա. Զիա՞րդ յանձն լինիս ապաստան առնել վասն իմ մեծամեծս, մինչ և ոչ մի ժամ հանդուրժես կալ ընդ իս յաղօթս:
Միտ եդից Պետրոսի, որ յանդիմանեալ 'ի փորձոյ և 'ի գիտակցութենէն, չտայ ինչ պատասխանի, և պատասխանել իսկ ոչ գիտէ առ մեղադրանսն. և այնքան առաւել զամօթի հարկանի՝ որքան զի յիշէ, եթէ զողջոյն իսկ զգիշեր մի կարաց հսկել և աշխատ լինել ընդ ընկերացն յորս ձկանց, և արդ զդայ գործնօրէն՝ զի յօգուտ հոգւոյն և ոչ ժամիկ մի կարաց արթուն կալ և աղօթել: Ո՜վ, որպիսի՜ դաս խրատու է այս վասն իմ: Որպիսի՜ ձանձրոյթ և տաղտկու֊

Թիւն 'ի վերայ իմ անկանի 'ի սպասու Տեառն, և մանաւանդ յաղօթս, մինչդեռ աչալուրջ գտանիմ միշտ յախորժելին և 'ի հաճոյարարս ըղձարանաց: Ի պարապմունս բարեպաշտութեան միայն հասանէ ինձ անկամակութիւն, իսկ յընդվայրայածութեան և 'ի շաղակրատանս՝ բնաւ ոչ: Եւ մինչև ցե՞րբ անկեալ կայցեմ 'ի ծուլութեանս: Զո՞ր չքմեղս գտից յատենի քում, Աստուած իմ, եթէ հնարս հնարեալ կարող եղէ բազում անգամ նուաճել զկիրս իմ առ մարդկանէ՝ ընդունայն մտօք և դիտմամբ, իսկ վասն սիրոյ քոյ՝ գրեա թէ երբէք ոչ նուաճեցի: Այս իս դառնան որ առ առաքեալն կշտամբանք. քանզի զիա՞րդ է, թէ՝ ասելով երբեմն 'ի միտս իմ զոհեցից կամակար զկեանս իմ առ սէրն Աստուծոյ, և 'ի հանապազօրեայ դէպս՝ ոչ մեռուցանեմ զանձն իմ առ սէրն Աստուծոյ և ոչ 'ի փոքու իմիք: Ի նուաստութեան և յանարգութեան իմում աստ ահա գտանեմ առձեռն պատճառս դաս խոնարհութեան. սակայն և ոչ այսու 'ի խոնարհութիւն կրթիմ: Ի խոկալն իմ՝ կարծեմ ապաւինիլ 'ի քեզ, Աստուած իմ, այլ ապա տեսանեմ զի գաղտնի գոռոզութեամբ յառաջադրութիւնս իմ և յանձն իմ ապաւինիմ. և զիա՞րդ հնար է խլել յանձնէ զգոռոզութիւնս նրբագոյն անձնասիրութեամբ վարակեալ՝ և 'ի նմին իսկ պահու յորում առաջադրեմս չլինել 'ի յանձն ապաստան: Ո՜վ բարի Յիսուս, հայեաց և գթա յողորմելութիւնս իմ. մի ածեր 'ի վերայ իմ զանէծսն սպառնացեալ այնոցիկ՝ որք յուսանն 'ի մարդ, և որոց 'ի դէպ է անկանել 'ի վերայ իմ՝ զի յանձն լինիմ ապաստան. այլ շնորհեա ինձ մանաւանդ զերջանիկ օրհնութիւնն խոստացեալ յուսացելոցն 'ի քեզ:

Զգուշացայց 'ի պղերգութենէ, որով չգործէ

մարդ, կամ չարաչար գործէ զոր արժանն է գործել 'ի սպասու Տեառն. և գուն գործեցից յաղթել նմին՝ զի մի դարձցի յունայնութիւն չար, այն որ 'ի բնէ իսկ մոլութիւն մեծ է և մահացու:

ՀԵ. Քննելի է, թէ վասն է՞ր ամենագոյնս պատուիրէ Քրիստոս առաքելոցն յաղօթս կալ, և յանդիմանէ վասն զանցառութեանն և 'ի քուն մտանելոյ. Յանձն լերուք, ասէ, Աստուծոյ, զի ահա մերձեալ է ժամանակ փորձութեան. և ոչ է ձեզ արժան յեռանդն ինչ ձեր ապաստան լինել, քանզի դիւրաբեկ և տկար է մարդկութիւն: Չասէ աղօթել զի մի փորձիցին, այլ զի մի յաղթիցին 'ի փորձութենէն՝ որ ընդ հուպ 'ի վերայ հասանելոց էր նոցա, յ'ուրանալ լքանել թողուլ զնա և փախչել. իբրու թէ ասիցէ. Դուք առաքեալքդ էք իմ և առաջնորդք եկեղեցւոյ իմոյ, զօրացեալք ճաշակաւ մարմնոյ իմոյ և արեան և բանիւ իմով սրբով. այլ 'ի վերայ այսորիկ պիտոյ են ձեզ և աղօթք առ 'ի չգայթակղել. զի 'ի վերայ հասանել փորձութեանց՝ բնութիւնն տկար՝ եթէ ոչ յաստուածային օգնականութենէն օժանդակեսցի՝ 'ի պարտութիւն մտանի:

Այս բանք Փրկչին աշխարհի, հաւատալ արժան է, թէ և վասն մեր ասացան. քանզի յոյժ բազում են թշնամիք մեր ներքինք և արտաքինք, կարողք 'ի մոլորեցուցանել զմեզ 'ի փորձութիւնս և 'ի կորուսանել: Չիք տեղի կամ ժամանակ յորում թէ չիցէ մարթ 'ի վերայ մեր հասանել յեղակարծուց վտանգաց, և պատերազմ բուռն յարուցանել մեզ. վասն այսորիկ յոյժ կարևոր է մեզ սպառազինիլ աղօթիւք՝ զի մի նկուն լինիցիմք: Իբրև զանց արարին զաղօ-

Թիւք՝ ապա յաղԹեցան առաքեալքն 'ի փոր_
ձուԹենէ: Իսկ մեզ ո՞րչափ ևս առաւել դիւրին
իցէ 'ի պարտուԹիւն մտանիլ՝ եԹէ ոչ առ Աս_
տուած կարդայցեմք և զ'առ 'ի նմանէ օգնու_
Թիւնն ժտիցեմք:

Քաջ 'ի միտ առ, անձն իմ, զի չէք փորձու_
Թիւն վտանգաւոր 'ի սատանայէ՝ երբև զԹուլա_
ցուցանելն յաղօԹից, մերԹ այս ինչ և մերԹ
այն պատճառանօք. զի եԹէ յաղԹեսցէ մեզ
յայսմիկ՝ յաղԹողանայ և յայլսն ամենայն. նա և
ինքնին իսկ փորձուԹիւն է չաղօԹելն: Որպիսի՞
ինչ իցէ մերս վարկ զաղօԹից. կամ որպիսի՞
փուԹով յաղօԹս կայցեմք:

Ո՜հ, եղուկ ինձ չուառականիս. որ ոչ միայն
'ի դիւէն և յաշխարհէ ունելով փորձանս, այլ
և 'ի բազմապատիկ ախտից անձին իմոյ, և դի_
տելով չափ զի կարօտ եմ յոյժ օժանդակու_
Թեան քում, Աստուած իմ, տակաւին այնքան
անփոյԹ եմ և անհոգ, ասացից ԹԷ և յանձնա_
պաստան, զի համարիմ և առանց աղօԹից կալ
անսասան: Հարկ է միոյ յերկուց աստի գոլ
Յիմարիմ. կամ արդէն իսկ մտանեալ եմ 'ի գե_
րուԹիւն 'ի ձեռս Թշնամեաց իմոց, և առ կու_
րուԹեան ոչ զգամ, և կամ ողորմուԹեան քո
շնորհօք պահպանեալ 'ի գԹելոյ 'ի մեղս բազմա_
պատիկս՝ զորս կարէի գործել և ոչ գործեցի,
այլ և յայսր վերայ մեղապարտ եմ մեծեղեռն,
քանզի ապաշնորհ գտանիմ առ անչափ քո բա_
րուԹիւնդ: — Ո՜վ, Յիսուս, սիրելի արս ինձ
զաղօԹս, և լուսաւորեա զմիտս իմ ճանաչել՝ ԹԷ
որքան հեզ և ողորմելի իցեմ առանց աղօԹից:

Զղջացոյց ընդ զանցառուԹիւնս իմ, զի յա_
ճախ պարտ և մարԹ էր ինձ աղօԹել և ոչ աղօ_
Թեցի. և գոհացայց զԱստուծոյ՝ զի ոչ եԹող
զիս անկանել գլորել՝ ըստ արդարուԹեան իւ_
րում, և սիրեցից զաղօԹելն:

Աղօթք Քրիստոսի 'ի պարտիզին ·

ՀԶ· Ի սաստկութեան վշտալից տառապանացն ոչ կարճամիտ ոչ զչարի Յիսուս, որպէս մեքս առնեմք յարկածս վշտաց մերոց· այլ աղօթիւք դիմէ առ Աստուած, որպէս և գրեալ էր զնմանէ 'ի Գիրս։ Ոչ եթէ զԱստուած աղօթէ, քանզի աստուածութեամբ հաւասար էր Հօրն յաւիտենականի, և կարէր զոր ինչ և կամէր· այլ աղօթէ որպէս մարդ կարօտ օգնութեան առ 'ի յԱստուծոյ, առ 'ի կարող լինելոյ ժուժալ մարդկայնոյ տկարութեանն· աղօթէ դարձեալ որպէս գլուխ և վարդապետ եկեղեցւոյ իւրոյ, և առ ուսուցանել մեզ իւրովն օրինակաւ, եթէ արժան է մեզ յաղօթս լինել ապաստան յամենայն վիշտս և 'ի կարիս մեր, մանաւանդ 'ի հոգեկանսն։

Տես, հոգի իմ, զՅիսուս· քանի՜ խոնարհութեամբ և պատկառանօք կայ յաղօթս, 'ի ծունր իջեալ և տարածեալ գետնամած, որպէս թէ չիցէ արժանի զերեսս ընդ երկինս ամբառնալ· թուի մոռացեալ թէ որդի Աստուծոյ է, և այնքան մեծ է հպատակութիւնն՝ զի ոչ շատացեալ խոնարհել աղօթելով որպէս մարդ, ևս քան զևս խոնարհի՝ որպէս թէ և տրուպ իցէ քան զամենայն մարդիկ։

Մետ դիր· եթէ Փրկիչն մեր Աստուածամարդ ոչ այլուր խնդրէ դիւր վշտացն բայց միայն յաղօթս, զիա՞րդ յանդգնիցի մարդ տառապեալ ժոյժ ունել վշտացն՝ իւրով զօրութեամբ· միթէ հզօրագո՞յնք կամ հաստատնագո՞յնք ևս իցեմք։

Այլ ես խոստովանիմ զանձին իմոյ յիմարու-
թիւն, ամբարտաւանութիւն և տգիտութիւն։
Միթէ զայս ուսոյց Քրիստոս, խնդրել մխիթա-
րութիւն 'ի կենակցութեան մարդկան՝ յոր-
ժամ տխրութիւն կամ տաղտուկ 'ի վերայ իմ
անկանիցի։ Ո՛հ, քանի՛ սակաւ դիմեմ առ Աս-
տուած՝ նաև 'ի հանապազօրեայ պէտս իմ, մինչ
այլ ինչ կիրք 'ի վերայ իմ հասեալ նեղեն զիս
կամ խռովեն։

Յաւէ ինձ, Աստուած իմ, զի ստունկանեալ՝
խրատուց քոց ոչ անսացի և օրինակի քում ոչ
հետևեցայ։ Զտիւ և զգիշեր արժան էր ինձ աղօ-
թել հառաչանօք և հեծութեամբք և արտա-
սուօք՝ առ 'ի հաշտ առնել զարդարութիւն քո,
և գտանել 'ի քէն ողորմութիւն, վասն բազում
չարեաց իմոց զոր արարի, և վասն բարեացն
գործոց՝ զորովք զանց արարի. իսկ ես աւասիկ
կամ ցրտացեալ և սառուցեալ, զիրկ 'ի հոգևոր
ջերմութենէ, և անփոյթ 'ի կատարումն պար-
տուց իմոց։ Ո՛վ Յիսուս իմ, տուր ինձ փոքր մի
'ի սրբոյ քոյ եռանդանէ՝ որով աղօթեցերդ 'ի
պարտիզին առ Հայրն յաւիտենական. տուր և
ինձ 'ի ճշմարիտ խոնարհութենէ քումմէ, առ
'ի ճանաչելոյ ստուգիւ զոր եմս, հող և մոխիր,
առաջի մեծի վայելչութեանն Աստուծոյ։ Եթէ
չկարէի այլ ինչ յաղօթս՝ բայց խոնարհեցուցա-
նել զանձն իմ և դարձեալ խոնարհեցուցանել,
ոչ ինչ չատ առնէի, քանզի գիտեմ զի դիւրա-
լուր ես աղօթից խոնարհաց։

Ոչ գիտելով թէ ժամ'ի ժամէ զի՞նչ ինձ պա-
տահիցէ, 'ի յաջողութեան իմում յիշեցից ստէպ
զԱստուած. և հայցեցից զօգնութիւն նորա, զի
մի թողցէ զիս յարկածս պատահարաց և 'ի
վտանգս՝ որ թերևս մերձեցեալ և առ դուրս
կան։

ՀԷ. Աղօթք Քրիստոսի 'ի պարտիզին լի էին խոնարհութեամբ, զոր յայտ առնէր գետնատարածութեամբ անձինն. լի եռանդեամբ, այսինքն է՝ ըստ մեկնութեան Առաքելոյն Պօղոսի, քաջահնչող ձայնիւ, հզօր հոգւով և արտասուօք. և լի վստահութեամբ մեծաւ, որպէս և իւր իսկ բանքն յայտ առնեն. Հայր իմ, ասէ, «Աբբայ, Հայր, ամենայն ինչ քեզ հնարաւոր է»: Ո՛հ. գո՞յր ումեք տեսանել զՅիսուս 'ի ներքուստ. որպիսի՜ սիրոյ զգացմամբ, որպիսի՜ պատկառանօք և յարգութեամբ փառաւորէր զաստուածային մեծվայելչութիւնն բանիւքն այնոքիւք: Յայլ նուագս կարդայր զՀայր՝ լոկով Հօր անուամբ. յայսմ նուագի՝ Հայր իւր կոչէ զնա. քանզի յանձին իւրում բերէ զհաւատացեալս իւր, և օրինակաւ իւրով ուսուցանէ զոր կանխաւն ուսոյց 'ի վարդապետութեան իւրում, հայր մեր կոչել զԱստուած յաղօթս մեր, որպէս նա հայր իւր կոչէ յաղօթելն իւրում:

Կարևոր է մեզ յոյժ այս վարդապետութիւն: Ոչ ևս կամի Յիսուս կարդալ մեզ զԱստուած՝ ծառայական երկեղիւ, ըստ հնոյ օրինաց, այլ որդիական սիրով՝ որ յատուկ է նորոյն: Եւ յիրաւի պիտոյ է այսմ այսպէս լինել. քանզի չէ մարթ ճշմարտապէս աղօթել առ Աստուած՝ եթէ ոչ յուսով լսելի լինելոյ առ 'ի նմանէ: Արդ առ աղօթել վստահութեամբ և յուսով, երկու ինչ պատուիրեն 'ի հաւատալ. առաջին, զի Աստուած հայր մեր է բարերարութեամբն, և որպէս հայր ճշմարիտ սիրէ զմեզ. երկրորդ, զի Աստուած ամենակարող է, և չիք ինչ նմա անհնարին. այս երկու խորհրդածութիւնք հաւատոց զօրաւորք են յոյժ առ 'ի յորդորել զսիրտս մեր 'ի յոյս աներկբայ: Ո՞ր շնորհ է զոր ոչ իշխեցից ժտել և յուսացայց ընդունել, գիտելով

չափ զի Աստուած իմ որպէս հայր՝ կամի ինձ զամենայն բարի, և որպէս ամենակալ՝ կարէ իսկ տալ զամենայն բարի։

Ո՜վ ամենասիրելի Յիսուս, հաւատամ զի յայս բան հաստատեալ է գլխովին երանութիւն իմ 'ի ժամանակիս և 'ի յաւիտենին. և արդ հայցեմ 'ի քէն, զի որպէս ուսուցեր ինձ զօրինակ աղօթից, օգնեսցես շնորհօքդ և 'ի կատարել ինձ զնոյն։ Տուր ինձ ասել առ Հայրն յաւիտենական Հայր մեր, որ յերկինս ես, ճշմարիտ խոնարհութեամբ՝ որ իջուսցէ զիս յանարգութիւն կաւեղէն բնութեանս. և ճշմարիտ սրտակաթ գորովով և խորին հպատակութեամբ, քումդ նման, որով տասցերդ առ նա 'ի պարտիզին, Հայր իմ։

Հայր յաւիտենական, որ կամիս զի կարդացից և ես զքեզ 'ի Հայր, հեղ յիս զորդիականն սէր և զյարգանս, զոր արժան է ինձ մատուցանել քումդ մեծավայելչութեան։ Չեմ ես արժանի սիրելոյ առ 'ի քէն, այլ դու ամենևին արժանի ես սիրելոյ առ յինէն։ Մեղաւոր եմ եղկելի, այլ արդեամբք Յիսուսի՝ որդի քո եմ. այո, որդի քո, թէպէտ և ոչ որդիաբար կեամ. և խնդրեմ 'ի հայրենի գթութենէդ՝ որ արժանի համարի զիս յորդիութիւն, թէպէտ և ծառայ անգամ անուանելոյ չեմ արժանի, շնորհա՝ նմանելոյ Որդւոյ քում արժանաւորի, յառաքինութիւնս նորա, 'ի փառս քո և 'ի փրկութիւն իմ յաւիտենական։

Յուշ լիցի ինձ յերկիս յայսմիկ առաքինութիւնս կրթել յաղօթս իմ, զոր ուսոյցն ինձ Քրիստոս, 'ի խոնարհութիւն, յեռանդն ոգւոյ և յապաւինութիւն. յորոց 'ի պակասել միոյն՝ տկարանան աղօթք և ոչ քաջ հաճոյանան Աստուծոյ։

ՀԲ. Քանզի աղօթք ներգործութիւն են կամաց՝ որ յայտ առնէն Աստուծոյ զփափագ լսելի լինելոյ առ 'ի նմանէ, 'ի դէպ է ասել թէ կրկին աղօթք էին Քրիստոսի 'ի պարտիզին. մին՝ որով աղօթէր զի խնայեսցի մարդկութեան իւրում չըմպել զբաժակ չարչարանացն. և այս ըստ բնական կամաց զգայութեան, որ խորշի 'ի վշտաց. միւսն՝ որով աղօթէ զի կատարեսցի որ ինչ և հաճոյ է Աստուծոյ. և այս ըստ բանաւոր կամաց՝ որ կախեալ կայ զաստուածայինն կամաց:

Աղօթէ Քրիստոս առ Հայրն երկնաւոր, նախ, զի հաճեսցի ազատել զնա 'ի մօտալուտ չարչարանացն. և զայս աղօթէ մարմնաւոր ձայնիւ 'ի պէտս զգայութեանն, որպէս զի տկարութեամբ բնութեանն յայտ արասցէ մարդ լինել. այլ առ նմին աղօթէ դարձեալ ամենակատար առաքինութեամբ 'ի հաւանութիւն ածեալ զանձն՝ 'ի կատարումն կամացն Աստուծոյ, որպէս զի ուսուսցէ և մեզ զնոյն օրինակ աղօթել: Աղօթէ զառաջինն բարբառով մարդոյ վշտացելոյ՝ որ խնդրեսցէ զերծանել 'ի վշտացն, որպէս զի այնու ուսցի մարդն աղօթել բանիւք Աստուածամարդոյն, և ոչ այլ ինչ կամել բայց զոր Աստուածն կամիցի: Ո՛վ իմաստութեան և բարութեան աստուածային Փրկչին, որ խոնարհի բարբառել ըղձիւք սրտի մերոյ զի զօդեսցէ զայն ընդ սրտին Աստուծոյ:

Միտ դիր, հոգի իմ, որպիսի օրինակ տայ քեզ Քրիստոս: Թէպէտ և օրէն իցէ մեզ յանդիման առնել Աստուծոյ զբնական կարօտութիւնս մեր, և խնդրել իսկ զի զերծուսցէ զմեզ 'ի տառապանաց կենցաղոյս. այլ անկ է յաղօթս յայս՝ որով խնդրեն փափագք զգայութեան, յաւելուլ յարել առ ժամայն և զմիւսն ևս, այսինքն է զի ամենայն եղիցի ըստ կամացն Աստուծոյ: Յաւել

տէրունական աղօթման, Հայր մեր, խնդրին յԱստուծոյ և ամենայն որ 'ի կարգութեան մարմնոյ են պէտք. այլ որպիսի՞ ոգւով ասիցեմք և զերեսին քաղցրիկ բառն. « Եղիցին կամք քո »:

Բազում անգամ ասեմ և ես, Աստուած իմ, եղիցին կամք քո. այլ շրթամբք բերանոյ ևեթ ասեմ, և ոչ սրտիւ. քանզի բուռն սնդութեամբ յարեալ կռուեալ է իմ 'ի կամս անձին: Կամիմ զի կամք քո եղիցին, այլ առաւել ևս կամիմ զի իմ կամք լիցին. և եթէ ոչ յաջողեսցի կամաց իմոց՝ ծանր թուի ինձ յոյժ: Հիւանդութիւն, կամ արկած ինչ վտանգի եթէ հասցէ ինձ երբեք, թէպէտ և քոյին կամօք, ինձ յոչ կամս է, և ոչ հանդուրժեմ յանձն առնուլ: Աստուած իմ, ուղղեա յիս զանկարգութիւնս զայս, տպաւորելով 'ի միտս իմ զայս իմաստ լուսաւոր, եթէ՝ որքան և պատշաճաւոր թուիցին ինձ կամք իմ՝ միշտ կանոն է թիւր, որով դիւրամոլար և դիւրախաբ լինիմ. միայն քո կամքդ միշտ արդար են և սուրբ. կանոն ուղիղ, յոր անկ է ինձ պատշաճեցուցանել զանձն իմ, առ 'ի վայելել զերանութիւն ճշմարիտ և 'ի ժամանակեայ կենցաղումս և 'ի յաւիտենականն: Այսպէս իցէ, և եղիցի այսպէս, եթէ հաճեսցիս զօրացուցանել զիս քոյին օգնականութեամբ:

Փոյթ և խնդիր կատարելութեան իմոյ այս իցէ, հնազանդեցուցանել առ բանն զյօժարութիւնս զգայութեան, և զբանն մարդկային՝ առ կամսն Աստուծոյ: Առ այս միայն գուն գործեցից, զի և յայսմ խակ է ամենայնն:

ՀԹ. Յանհնազանդութենէն Ադամայ եհաս եղծումն աշխարհի. յանհնազանդութենէ ծագին գրեթէ ամենայն մեղք մեր. քանզի առաւել կամիմք հաճել զախորժակս զգայութեանց

մերոց՝ քան զհետ երթալ պատուիրանացն Աստուծոյ։ Արդ կամելով Յիսուսի ամենեւին հաշտ առնել զԱստուած, 'ի բառնալ զանարգութիւն պատուոյ աստուածութեանն, փոխանակ հասարակաց անհնազանդութեան՝ ընծայեաց զիւրն ամենակատար հնազանդութիւն. և այս յաւէտ 'ի պարտիզին անդ. յորում յարուցանէր 'ի զգայական ախորժական զզուումն մեծ 'ի ցաւոց, յանարգանաց և 'ի մահուանէ. և զի յայտնի լինիցի՝ թէ ոչ ոք կարէ արդահատել զորոմութիւն նորա՝ բայց միայն Աստուած, դիմէ առ Աստուած։ Առաջի դնէ Աստուծոյ զտառապանս մարդկութեան, առ 'ի գութ զնա շարժելոյ։ Այլ զի 'ի կատարել զկամս Աստուծոյ եկեալ էր յաշխարհ և ոչ զմարմնոյ կամս, անդէն 'ի վերայ ածէ, զի առանց ակնառութեան մարմնոյ՝ կատարեսցին կամքն Աստուծոյ. իբրև թէ ասիցէ. Թող խորշեսցի և գարշեսցի բնութիւն. պարտ է նմա հնազանդել Աստուծոյ, և կամիմ զի հնազանդեսցի։

Ո՜վ զարմանալի հնազանդութիւն. տեսանէ յայտնապէս զմի մի 'ի չարչարանացն որ անցանելոց էին ընդ նա. և որքան 'ի վշտալեացն անցից տեսանէ՝ նոյնքան և զգայականն ախորժակ զզուանս բերէ՝ չկամելով զչարչարիլն. այլ նոյնքանիս և բանն ներգործէ հնազանդութիւնս, ջերաջերմն եռանդեամբ նորոգելով զհպատակութիւնն առ Հայրն յաւիտենական, և ընդունելով ուրոյն ուրոյն զիւրաքանչիւր 'ի դառնադառն ցաւոցն, ասելով. Հայր իմ, ոչ իմ կամք այլ քոյդ լիցին։

Հրեշտակաց թողցուք զհիացմունսն, և մեք առցուք զնմանելին օրինակ։ Տես, հոգի իմ, քանիպատիկ զզուանաց հանդուրժեաց Քրիստոս 'ի նրբազգած մարդկութեան իւրում, առ 'ի հնա_

զանգել աստուածութեան, և 'ի քեզ ինքն խոր- հեաց: Ո՜հ, Աստուած իմ, և դոյզն մի զզուանք 'ի վշտաց՝ շատ են ինձ առ 'ի ստունգանել աս- տուածայնոյ քում մեծվայելչութեան. և քան- զի անթիւ են ստունկանութիւնք իմ՝ առ 'ի չու- նելոյ զգէմ յօժարութեանց զգայութեանս, ցաւիմ և ապաշաւեմ զամենայն չարիս իմ. և փոխանակ թշնամանագիր անհնազանդութեանց իմոց՝ մատուցանեմ քեզ զարգագիր հնազան- դութիւնս Որդւոյ քո ամենասիրելւոյ: — Այլ և առ քեզ ակն արկեալ, Փրկիչ իմ ամենասէր, աղաչեմ զքեզ՝ մասնաւորել ինձ յոգւոյ քումէ, զի կարող եղէց առնել ճշմարիտ և հաւատարիմ աղօթս՝ ըստ քումդ նմանութեան: Ոչ կայցէր 'ի պարտիզի անդ առ 'ի մտօք ևեթ խորհրդածել վարկպարազի 'ի վերահաս չարչարանս քո, այլ և ներգործութեամբք կամաց յանձն առեր ըղ- ձափափագ հնազանդութեամբ: Զայս օրինակ արժան էր և ինձ առնել. այլ իմ աղօթք քանի՜ գաղջ են և ցուրտ և ընդվայրպայծ: Յորդորեա, Տէր, զթոյլ և զմեղկ կամս իմ, 'ի կրթութիւն ա- ռաքինութեանց՝ քեզ նմանելով, մանաւանդ 'ի հնազանդութեան կամացն Աստուծոյ հզօր առա- ջադրութեամբ կամաց:

Սովորութիւն լիցի ինձ աղօթել այսպէս. Շնորհեա, Աստուած իմ, զի հանապազ եղիցին յիս կամք քո. Ծանո՛ ինձ զհաճոյն քո, և տուր շնորհս կատարելոյ զնոսին: Եւ բուռն արարից անձին իմոյ՝ յորժամ դէպք պահանջիցեն:

Զ. Զոր ինչ և արար Քրիստոս 'ի փրկութիւն աշխարհի՝ արար որպէս Աստուած և մարդ. զի ոչ որպէս Աստուած լոկ և ոչ որպէս մարդ լոկ կարէր լինել միջնորդ և հաշտեցուցանել զմեզ ընդ Աստուծոյ: Որպէս Աստուածամարդ խո-

նարհեցաւ, աղօթեաց և հնազանդեցաւ: Արժան է 'ի միտ առնուլ և զգերազանցութիւն հնազանդութեանն. զի ոչ եթէ Հայրն յաւիտենական պարտաւոր առնէր զԱստուածամարդն՝ 'ի չարչարել և 'ի մեռանել, այլ նա ինքնին իւրով յօժար կամօք մատոյց զանձն 'ի փրկանս աշխարհի, յայն սակս միայն զի գիտէր զայն հաճոյ Հօրն յաւիտենականի: Այսպէս առնէ որդի բարի որ փափագիցէ պատուել զհայր իւր. շատ է նմա գիտել զհաճոյս կամաց հօրն. զհաճոյս հօրն՝ պատուէր իմն համարի ինքեան, առ 'ի կատարումն ազնուագոյն որպէս և ազատագոյն պատուական հնազանդութեան: Զայս օրինակ արար և Քրիստոս: Գիտէր թէ որքան առաւել չարչարիցի վասն մերոյ փրկութեան, այնքան ևս յաւելցի հաճութիւն, պատիւ և հատուցումն առ Հայրն յաւիտենական. և զի մեծ էր յոյժ եռանդն սիրոյ նորա առ Հայր և առ մեզ, անդէն իսկ և իսկ յանձն էառ կամաւ չարչարիլ՝ որչափ հնար էր մարդկութեան իւրում վշտակրել: Ո՜վ հնազանդութիւն. ո՜վ տեսարան ամաչեցուցիչ ինձ:

Քանի՜ քանի՜ իրք են զոր գիտեմ հաճոյս լինել Աստուծոյ՝ եթէ արարից առ սէր նորա: Գիտեմ զի հաճոյ լինէի կամաց նորա կրթութեամբ խոնարհութեան, համբերութեան և այլոց առաքինութեանց. և սակայն գիտութիւնս այս ոչ յորդորէ զիս առնել զհաճոյսն Աստուծոյ. նա և 'ի յօրինադրեալսն ինձ իրս՝ ծանր թուի ինձ հնազանդելն: Եւ 'ի հասարակի՝ իբրև կանոն կենաց ունիմ զչառնելն չար, այլ զբարիս գործելոյ չէ ինձ փոյթ. յոր ինչ ոչ հարկաւ պարտաւորիցիմ, կամիմ ազատութեամբս վարիլ, առաւել կրիցս սպաս տանելով քան Աստուծոյ. և առաւել զցանկութիւն փաղաքշեմ ընդունայնութեամբ, քան զխոնարհութիւն սիրով ճշմարտութեան:

Աստուած իմ, զի՞նչ այս զեղծումն է յիս՝ որով ընդ վայր հարկանեմ զպատուական օրէնակս քո։ Քեզ չէր պատուէր հրամանի ոչ չարչարելն և ոչ մեռանել. և սակայն յանձն առեր յօժարակամ զչարչարանս և զմահ, միայն առ 'ի հաճել զՀայր քո՛ լեալ նմա հնազանդ։ Զայս արժան է և ինձ առնել։ Այլ աղէ դու ինքնին՝ որ մանաւորեցեր և զիս արդեանց քոց, մանաւորեա և իմացուածոց սրտի քո. որպէս զի հաճոյ լեցի ինձ հնազանդելն սոսկապէս վասն զքեզ հաճելոյ։ Ծանո ինձ ո՛րպէս և որով իւիք կարիցեմ հաճոյ լինել քեզ. և տուր ինձ հզօրեղապէս յօժարել խնդրել յամենայնի զհաճոյս կամաց քոց և ոչ զիմս։

Անսացից ներքին ազդմանց զբարիս գործելոյ, և առանց մանրախուզիւ քննելոյ ընտրելոյ թէ ո՛ր պատուիրան է և ո՛ր խրատ, շատ իցէ ինձ առ հնազանդել փափագ հաճելոյ զԱստուած։

ԶԱ. Երիցս եկաց Քրիստոս յաղօթս 'ի գիշերին յայնմիկ. և զառաջին նուագն իբրև ժամ մի։ Յետ յանձն առնելոյ առ Հայրն յաւիտենական զմարդկութիւն իւր, և 'ի կամս նորին ապատրաստ լինելոյ, 'ի դէպ է հաւատալ՝ թէ որպէս վասն ամենեցուն յանձն էառ չարչարել, այսպէս և վասն մեր ամենեցուն աղօթեաց։ — Յակնարկել իւրում ընդ ամենայն հանդէս չարչարանացն, տեսանէ զի այն իսկ իցէ աղբիւր՝ յորմէ բղխիցեն շնորհք յաւիտենական փրկութեան մերոյ. այլ տեսանէ դարձեալ՝ զի զբազումս 'ի շնորհացն որոց արժանի եղև չարչարանօքն, անկ է նմա խնդրել և ընդունել, ըստ պատգամաց Ս. Գրոց. մարթ է մեզ համարել այսպէս, եթէ ըստ մի առ մի յանձնառութեանն զվիշտս ձաղկանացն և ձաղանացն, զփուշ և զխաչ, նուիրեա-

ցէ և նոյնհետայն զնոսին վասն մեր աղօթիւք և պաղատանօք, հեծութեամբ հառաչանաց և արտասուօք՝ առ Հայրն. և թէ Հայրն՝ պատուեալ յարժանաւորութենէ և 'ի խոնարհութենէ Որդւոյն՝ շնորհեսցէ զամենայն խնդրուածս նորա։ Եւ թէպէտ ոչ լսէ նմա առ ազատելոյ 'ի չարչարանացն՝ որպէս զգայութիւն փափագէր, այլ ոչ լսէ՝ զի այսպէս արժան էր չանսալ նմա, և զի նա ինքն իսկ աղօթէր չլինել լսելի յայնմիկ. իսկ յայլում ամենայնի լսելի լինէր որ զինչ և խնդրէրն։

Զմտաւ ած, հոգի իմ, քանիպատիկ պարտական իցես Փրկչին քում։ Հաւատք, յոյս, սէր, զօրութիւնք խորհրդոց, պարգևք Հոգւոյն Սրբոյ, ազդեցութիւնքն ներքինք, շնորհքն, և ամենայն օժանդակութիւնք կարևորք առ 'ի հասանել քեզ յերանութիւն յաւիտենական, արդիւնք և պտուղք են չարչարանաց և աղօթից Քրիստոսի։ Թէպէտ և վասն ամենեցուն առ հասարակ արդիւնացաւ նա, այլ ամենայն արդիւնք նորին այնպէս իմն սեփականք են քեզ, որպէս թէ ոչ վասն այլոյ ումեք էր նորա վշտակրեալ կամ աղօթեալ կամ արդիւնաւորեալ, բայց քեզ միայնոյ, իբրու թէ դու միայն էիր յաշխարհի։

Գոհանամ զքէն, ով Յիսուս, յամենայն սրտէ, և ցաւիմ զի բազում անգամ ընդ վայր հարի զարդիւնս քո, ոչ լինելով և իմովսանն գործակից նոցին՝ որպէս արժանն պահանջէ։ Աղէ յիշեա, զի մի 'ի բազմապատիկ շնորհացն զոր վասն իմ ստացար՝ այս է, նմանել ինձ քումդ օրինակի 'ի կեանսդ և մանաւանդ 'ի չարչարանսդ. և զայս խնդրեմ խոնարհութեամբ մի ինձ զլանալ։ Մի ընդունայնասցի պտուղ ջերաջերմն աղօթից քոց. թէպէտ և վասն մեղաց իմոց մարթ է հասանել նոցա կորուստ, այլ հեռի արա յինէն

զվտանգդ զայդ ամենամեծ, անդարմանելի և յաւիտենական: Քո կամք են զի փրկեսցայց. արա զի ստուգապէս կատարեսցին կամքդ այդ:

Զամենայն աղօթս իմ հաստատեցից յարդիւնս չարչարանաց Քրիստոսի, և 'ի նորին աղօթս կցորդեցից. և ոչ երկմտեցից ընդունել 'ի ձեռն Քրիստոսի զխնդրուածս իմ որպէս ինձ օգուտ իցէ:

Երեւումն զօրացուցիչ Հրեշտակին առ Յիսուս:

ԶԲ. Աղօթք Քրիստոսի 'ի պարտիզին էին խոնարհ, ջերմեռանդն և վստահ, այլ և տեւողական. առ 'ի խրատ մեզ անձանձիր աղօթելոյ առ Աստուած. զի երկայնմտութեամբ մարթ է ընդունել զայն՝ որում չիցէ մարթ յաջողել այլովք առաքինութեամբք: Միանգամ և երկիցս աղօթէ Յիսուս՝ զաչս յերկինս ամբարձեալ, զի թէ հնար իցէ փրկել մարդկան առանց մեռանելոյ իւրոյ 'ի խաչին՝ փրկեսցի. քանզի դժպհի է յոյժ բնութեան մահ այդպիսի. այլ իբրև պղնձեղէն իմն տեսանէ զերկինս, ուստի ոչ ծագի նշոյլ յուսոյ լսելի լինելոյ աղօթիցն: — Յաւելուն 'ի նա տագնապքն. Ճնշի հոգին մահուչափ տրխութեամբ յանոք յանօգնական լքման 'ի բնականն ևեթ զօրութիւնս իւր. և ուստի՞ այնուհետև ա՛յն ունիցի քաջալերութեան: Եթէ առ առաքեալսն դառնայցէ՝ ահա 'ի քուն կան նոքա. եթէ առ Հայր իւր դիմեսցէ, Հայրն որ ցանկ լսէր նմա յորժամ վասն այլոց աղօթէր, այժմիկ յաղօթելն վասն իւր՝ թուի իմն թէ առ

ոչինչ գրէ զնա, և ոչ այլ ինչ տեսցէ 'ի նմա բայց զկատուն ադամային: Որպիսի՜ տառապանք մարդկութեան, եթէ հակառակ իմն կայ նմին անդրդուելութեամբ երևիցի ամենակալն, և յորժամ անկարութիւն էր քաղցրութեան անտի դառնութիւնք բղխիցեն: Բայց Յիսուս ոչ կարծամտի, ոչ զանձն իւր կոծէ. այլ երրորդ անգամ մատչի կայ յաղօթս. և անդէն 'ի նմին պահու երևի նմա հրեշտակ 'ի յերկնից՝ զօրացուցանել զնա:

Այսպէս առնէ Աստուած որում հեծեծիցէ տառապանօք՝ և դիմեսցէ առ ինքն ապաւինելով աղօթիւք. քաջալերէ զնա արդարև, և ձեռն տայ՝ որպէս և երբ ճահողագոյն իցէ նմա. այսպէս արասցէ և ընդ իս՝ եթէ ոչ թուլացայց ձանձրութեամբ: Յորժամ խնդրեմ յԱստուծոյ շնորհս՝ խոնարհութեան կամ գթոյ կամ սիրոյ ողջախոհութեան, և որ այլն ևս, կամիմ վաղվաղակի լսելի լինել. իսկ 'ի յապաղել շնորհացն՝ կամ երկմտիմ կամ տաղտկամ, և ոչ ևս յօժարիմ յաղօթս: Ո՛վ ամբարտաւանութեանս: Յիսուս՝ որ ամենեին արժանաւորն էր անդէն 'ի սկզբան լսելի լինելոյ՝ յերրորդումն ևեթ նուագի ընդունի մխիթարութիւն. իսկ ես մեղաւոր չուառական՝ զի՞արդ իշխեմ այն ինչ բացեալ զբերան ակն ունել ընդունելութեան շնորհացն:

Բժշկեա, ո՛վ երկայնամիտ Փրկիչ, զյանդգնութիւն անժուժութեան իմոյ. և օրինակաւ քով ուսո՛ ինձ զանեռողաչկան համբերութիւն: Պատժոց և ոչ շնորհաց եմ արժանի. և եթէ տայցես ինչ շնորհս՝ ողորմութեան քում պարգև է այն. իսկ ո՞ իցեմ ես զի տաց օրէնս ողորմութեան քում: Աղքատի՝ որոյ զդուռն գթութեանն քո բաղխիցէ՝ անկ է համբերող լինել:

Պատկառ կացից խոնարհութեան. զի որ խոնարհն է՝ անարժան համարի զանձն լսելի լինե-

լոյ, և ոչ լքանի, զի ոչ երկմտէ, ապաւինելով միշտ 'ի բարերարութիւն Աստուծոյ: Դուստր խոնարհութեան է երկայնմտութիւն:

ԶԴ. Ոչ ոք գիտէ զի՛նչ հրեշտակն ասաց առ Յիսուս, քանզի ոչ է գրեալ յաւետարանս. այլ զի գիտեմք եթէ երևեցաւ առ 'ի զօրացուցանել զնա, 'ի դէպ է հաւատալ թէ քաջալերեցաւ Յիսուս 'ի բանից նորին: Աւանդութիւն է եկեղեցւոյ կերպարանել զհրեշտակն մատուցանելով բաժակ առ Փրկիչն. և բաժակն յայտ առնէ զչարչարանսն, զոր և ինքն Քրիստոս սովոր էր օրինակել զնոյն: Արդ հաւանելի է ասել նմա նախ երկնաւոր պատգամաւորին 'ի դիմաց Հօրն յաւիտենականի, եթէ՝ ոչ է մարթ փրկիլ ազգի մարդկան առանց չարչարանաց նորին, ըստ յառաջագոյն սահմանելոյն. և ապա առ 'ի քաջալերել զնա 'ի ժուժկալութիւն՝ յիշեցուցանել, զի որքան դառնակսկիծք իցեն չարչարանք նորին՝ նոյնքան և օգտաւէտք: — Որպիսի՛ մխիթարութիւն էր առ և Քրիստոսի՝ տեսանել զբիւրս բիւրուց հոգւոյ՝ որոց 'ի պայման դատապարտութեան գոլով՝ 'ի ձեռն հեղման ամենապատուական արեան իւրոյ փրկելոց էին: Նա որպիսի՛ զօրութիւն ոչ արդեօք զգեցաւ՝ 'ի յիշելն եթէ յետ երիր աւուր յարիցէ՝ յաղթական մահու և դժոխոց, և զհետ վշտացն անցաւորաց գայցեն փառք մշտնջենաւորք:

Մխիթարիմ և ես, ո՛վ ամենաքաղցր Փրկիչ իմ, 'ի մխիթարութիւնս քո, թէպէտ և համառօտք յոյժ իցեն քեզ: Ո՛հ, 'ի թիւս հոգեացն՝ զոր տեսեր ազատելիս քոյին փրկագործութեամբ, չիցէ՞ ինձ արժան ակն ունել և իմոյ հոգւոյս: — Այո, յուսամ այդմ, և յուսամ 'ի շնորհս արդեանց քոց. և գիտեմ զի առ 'ի փրկութիւն՝

պէտս է աշխատանաց և չարչարանաց։ Այլ և քաջալերութիւնն զոր զգեցար 'ի պարտիզի անդ, ընդունելով յօժարութեամբ զբաժակ չարչարանացն 'ի փրկութիւն այլոց, չիցէ՞ և ինձ 'ի զօրութիւն առ կամաւորապէս ժուժկալել վասն փրկութեան հոգւոյ իմոյ։ Ընդէ՞ր իցէ ինձ զզուելի բաժակ՝ յորմէ դու ինքն արբեր նախ։ Ո՜վ ամենագորով Յիսուս, որ զօրացար 'ի հրեշտակէն՝ առաւել յիմ սակս քան թէ քո, շնորհեա ինձ տենչ սաստիկ զյաւիտենականս փրկութեան, և շատ է ինձ. զի զի՞նչ կայցէ դժնդակ 'ի քրիստոնէական կեանս՝ որում փափագելի իցէ փրկութիւն անձինն։ Իցեն որքան և իցեն նեղիչք և դժուարինք առաքինութիւնքն և պահպանութիւն խրատուց և պատուիրանաց աստուածայնոց. գոգցուք այդպէս լինել. այլ ո՞չ առ նմին դիւրին և հեշտ թուիցի ամենայն՝ յորժամ յիշիցեմ զի յարքայութիւն երթամ, և յերանաւէտ կայանս անդ անսպառ և անվախճան իցէ երանութիւնս իմ։ Որքան և ծանունք իցեն խաչք աշխարհիս, եթէ ոք առ սէրն Աստուծոյ կրիցէ զայնոսիկ՝ չիցէ՞ նմա գեղեցիկ քաջալերութիւն գիտելն զի ամենայն ինչ անցաւոր է 'ի կենցաղումս, իսկ փառք հանդերձելոյ աշխարհին մշտնջենաւորք են։ Այլ ինձ մեծագոյն քաջալեր առ 'ի բուռն առնել անձին, քո իսկ օրինակդ է, ո՜վ իմ Յիսուս։

Էջ հրեշտակ 'ի զօրացուցանել զՅիսուս, այլ զիս՝ ինքն իսկ Յիսուս քաջալերէ յուսով յաւիտենից կենաց, եթէ հաւատարիմ գտայց 'ի նմանել նմին։ Նորոգեցից զներգործութիւնս յուսոյ։

ԶԴ. Գիտէր Յիսուս որ ինչ ասելոց էր նմա 'ի հրեշտակէն, և ոչ էր կարօտ Աստուածամարդն

ուսանել կամ մխիթարիլ 'ի հրեշտակէ, որ իշխանն է և փառաւորիչ հրեշտակաց։ Աստուած գոլով կարէր անձամբ զանձն մխիթարել. այլ ոչ կամեցաւ ընդունել յաստուածութենէն սփոփանս ինչ 'ի ներքուստ. այլ իբրու մարդ ոք ստորին քան զհրեշտակս՝ հաճեցաւ ընդ գալուստ հրեշտակին, զի առաւել ևս խոնարհեսցի. և կարօտասցի օգնականութեան սպասաւորաց իւրոց։ Մինչ յանապատին տեղւոջ էր՝ մատեան հրեշտակք պաշտել նմա որպէս Աստուծոյ. իսկ այժմ գայ հրեշտակն զօրացուցանել զնա որպէս զմարդ 'ի մարդկայնումն տկարութեան։ — Ո՜վ, որպիսի՜ վարժարան խոնարհութեան բացեալ լինի ինձ աստանօր։ Խոնարհի հրեշտակն առաքեալ 'ի Հօրէն յաւիտենականէ, և խօսի ընդ Յիսուսի պատկառանօք և խորին երկրպագութեամբ։ Խոնարհի Յիսուս և ընդունի զբանս հրեշտակին որպէս զբանս Աստուծոյ՝ մեծաւ արգադիր հպատակութեամբ։ Հրեշտակն խոնարհի առ Աստուածամարդն. Աստուածամարդն խոնարհի առ հրեշտակն։ Այսքան զարմանահրաշ խոնարհութիւն ո՞չ բաւիցէ բնաւ բժշկել զգոռոզացեալ հպարտութիւնս իմ։

Եթէ այնքան խոնարհութեամբ խօսի ընդ Յիսուսի հրեշտակն, որ 'ի դէպ է թէ մի ոմն 'ի վեհագունիցն էր, զի յայդպիսի պաշտօն առաքեցաւ, քանի՜ ևս խոնարհութեամբ չիցէ ինձ չուառիս արժան խօսել ընդ նմա, յորժամ յանդիման լինիմ նմա խոկալով 'ի սուրբ չարչարանս նորին։ Եթէ զմտաւ ածիցեմ զօրպիսութիւն անձին իմոյ, ըստ մարմնոյ որդն գոլով նեխեալ և պատրաստեալ կերակուր որդանց, և ըստ հոգւոյ՝ զազրութիւն գարշելահոտ չարութեան և անօրէնութեան, արժան է ինձ սարսել և դո-

զաղ պատկառանօք և հիացմամբ, թէ զիա՞րդ Աստուածամարդն Քրիստոս թէպէտև բարի և բարերար՝ ներէ ինձ կալ առաջի իւր: Եւ զիա՞րդ կամ առաջի նորա, ըստ ներքին մտաց ամփոփման և ըստ արտաքինս դրից: Եւ եթէ Յիսուս Քրիստոս որ վեհագոյն է քան զամենայն հրեշտակս, այսպէս խոնարհի հլութեամբ և պատկառանօք առ հրեշտակն, որպէս թէ փոքր ևստորին քան զնա իցէ, քանի՞ ևս խոնարհութեամբ չիցէ ինձ արժան վարիլ ընդ ընկերս իմ, համարելով զանձն յետնագոյն և անարգագոյն քան զընաւս, իբրու զի չիք ոք ապաշնորհ քան զիս առ մեծ վայելչութիւնն Աստուծոյ: Իսկ ես քանի՞ արհամարհոտ եմ կրսերաց, ամպարհաւաճառ հաւասարս, և խիզախ առ մեծաւորս:

Ո՜վ, քանի՜ ատելի և անտանելի եմ ամենեցուն՝ վասն հպարտութեանս իմոյ: Ո՞րքան արդեօք զզուիցի յինէն 'ի հպարտէս՝ ամենախոնարհ հրեշտակն իմ պահապան: Գթա յիս, ո՜վ հրեշտակ սիրելի, որ պարգևեցարդ ինձ օժանդակ յողորմութենէն Աստուծոյ. շնչեա յիս զխմացուածս խոնարհութեան քո. և 'ի ձեռն խոնարհութեան Յիսուսի ընկալ ինձ զկարևորս զայս առաքինութիւն՝ յԱստուծոյ բարձրելոյ և բարձրացուցչէ խոնարհաց:

Պաշտօնասէր գտայց առ հրեշտակն իմ պահապան, նաև յայս սակս, զի հանապազ խրատէ զիս 'ի խոնարհութիւն՝ իւրովք օրինակաւ. ոչ գարշելով 'ի հոգալոյ զոխ և զգիշեր զարարած մի անարգ՝ որպիսի եսս եմ:

ՁԵ. Ի բաժակէ անոի Յիսուսի լցելոյ դառնութեամբ վշտաց և մատուցելոյ 'ի հրեշտակէն, զոր և ընկալաւ ամենակատար հաւանութեամբ կամացն Աստուծոյ, 'ի դէպ է մեզ փոխադրել

զխորհրդածութիւնս առ այլ բաժակ՝ զոր մատուցանէ մեզ աշխարհ. բաժակ որ հրապուրէ զզգայութիւնս առերևոյթ ինչ քաղցրութեամբ, և պատրելով զհոգի՝ յիմարեցուցանէ մոլութեամբք, և յԱստուծոյ յաչաց հանէ: Յորչափ քաղաքավարիմք յաղցաւոր կեանս յայսոսիկ՝ 'ի ձեռս մեր է ընտրել կամ զբաժակն Քրիստոսի, որ է խաչակրութիւնն առ սէր նորա, կամ զբաժակն աշխարհի՝ որ է զբաղել 'ի հեշտութիւնս ախտաւորս: Որ զՔրիստոսին ընտրէ զբաժակ, թէպէտ և յանցեալ կեանսն ամենամեղ ոք էր, արդարասցի և փրկեսցի, և արբեսցի յաւիտենական երանութեամբ 'ի վայելս երկնից. իսկ որ զաշխարհին ընտրեսցէ, դատապարտեալ արբցէ 'ի դժոխս զբաժակն մրրախառն, զոր հանապազ ըմպեն մերժեալքն և երբեք ոչ սպառեն:

Ո՞ր յերկոցուն այտի բաժակաց հաճիս թուիցի քեզ, հոգի իմ: Գիտես զի բաժակն աշխարհի քաղցր թուի ճաշակողացն՝ որոց ախորժելի են հեշտախտութիւնք. այլ խորթական է, պեղծ և անցաւոր, և թողու զդառնութիւն խայթի խղճի և տրտմանաց: Իսկ բաժակն Յիսուսի, որպէս և գիտեսդ և փորձես, դառն թուի՝ այլ քաղցր է. զի քանի՜ մեծ է գոհութիւն և ուրախութիւն որոց յօժար սրտիւ ծառայեն Աստուծոյ: Արդ միթէ օրէ՞ն իցէ տատանոր դլալ կալ 'ի խորհել և 'ի խորհրդածել յընտրութիւն: Զի՞ ևս դանդաղեցիմք:

Ո՛վ Յիսուս իմ, Աստուած իմ. հրաժարեմ յաշխարհէ. և աղաչեմ զքեզ անցուցանել յինէն զբաժակն այն գարշելի. անցցէ յինէն բաժակս այս. որպէս զի մի ևս յիշեցից զդառնահամ քաղցրութիւնս: Զբաժակ քո, Յիսուս, սիրեմ, բաղձամ և կամիմ. զի վասն այսորիկ իսկ,

ոՀ, որպէս սիրելի ես ինձ: Այս բաժակ է զոր մատուցանես ինձ, և ես ընդունիմ. բաժակ դառնութեան՝ ապաշխարութեան, բաժակ վըշտալից՝ համբերութեան, բաժակ սիրալիր՝ սրբոյ գթութեան: Արժանի արա զիս, Աստուած իմ, այսմ բաժակի, որպէս զի լիցի սա ինձ հաճոյ քան զամենայն գանձ երկրաւոր: Անագան յոյժ գիտացի զյարգ դորին, այլ գոյ ինձ տակաւին ժամանակ: Ո՜վ բաժակ Յիսուսի, բաժակ փըրկութեան, քանի՜ գեղեցիկ ես ինձ և պատուական: Եթէ ոչ առ այլ ինչ՝ ընդունիմ զդա յօժարակամ, ո՜վ Յիսուս իմ, առ ՚ի գոհանալ զքեն զի արբեր զայդ յօժարութեամբ առ սէր իմ: Տակաւին մեղաւոր եմ երկրի. տուր ինձ ճաշակել յողորմութեանց քոց, զի մի եղեց և մեղաւոր դժոխոց, ուր չիք քաւութիւն:

Ատեցից զանցեալ զկեանս իմ, որովք բազում անգամ պարտական գտայ դժոխոց, և նորոգեցից զառաջադրութիւն մտացս՝ բուռն հարկանելոյ զաստուածասէր կենաց նմանութեամբ վարուց Յիսուսի:

Օրհասական տագնապ Յիսուսի ՚ի Պարտիզին:

22. Լի են սքանչելեօք չարչարանք Քրիստոսի. սքանչելի է և այս, զի ընդունի զօրութիւն ՚ի հրեշտակէն, այլ ոչ նուազի տրտմութիւն նորա ներքին, մանաւանդ թէ և զօրութիւնն այն յաւելու զկիրսն: Թէ որպիսի՞ ինչ էր քաջալերութիւնն՝ զոր մատուցանէր նմա հրեշտակն՝ մարթ է խորհրդածել բարեպաշտ մտօք, այլ գիտել ստուգիւ ոչ է հնար: Ստոյգ է այս, զի

յետ քաջալերութեանն հուպ ընդ հուպ սկսաւ Քրիստոս զօրհասականն տագնապել, որպէս Աւետարանն յայտ առնէ:

Տագնապս այս Քրիստոսի էր արդարեւ նեղահար եւ վշտագին վիճակն՝ յորում օրհասականք նեղին եւ տառապին սուղ ինչ յառաջ քան զմահն: Եւ 'ի դէպ է հաւատալ, եթէ առ սաստկութեան սիրոյն՝ եմուտ Յիսուս յայսպիսի տագնապ օրհասական: Խոստովան եղեւ նա զի կամէր մեռանել՝ առ 'ի տալոյ կեանս աշխարհի. եւ զի չէր մարթ երկիցս մեռանել, յանձն էառ երկիցս օրհասական լինել, եւ զառաջինն՝ այժմիկ կամաւորապէս ածել յինքեան՝ յառաջ քան զպատրաստեալն նմա 'ի Հրէից 'ի Գողգոթա: Յօրհասն՝ զոր 'ի խաչին կրելոց է՝ գայ ձեռն ամպարիշտ խաչահանուացն. յօրհաս պարտիզին՝ սէր իւր միայն է ձեռնամուխ: Սէր՝ հզօր որպէս զմահ՝ զօրացուցանէ զսիրան 'ի մարտնչել զգայութեանցն, եւ հակառակ նոցին՝ տայ նմա փափագել մահու խաչի վասն մեր: Եւ 'ի յանձն առնուլն զբաժակ չարչարանացն եւ մահուն 'ի փրկութիւն հոգւոց մերոց, մտանէ առ ժամայն եւ 'ի տագնապ մահուչափ:

Ո՛վ քաղցրագութ եւ ամենասիրելի Յիսուս, ընդէ՞ր է քեզ կանխել այդպէս զվշտալի տագնապ օրհասից: Եթէ փրկել զիս կամիս՝ չիցե՞ն քեզ բաւական չարչարանքդ մոտալուտք: Այո, այո, շատ են վասն իմ այդոքիկ, այլ քեզ ոչ են բաւականք առ անչափութիւն սիրոյդ: Ո՛վ սէր, ո՛վ գթութիւն, ո՛վ բարութիւն, ո՛վ ողորմութիւն Քրիստոսի, որ այսքան անցանէ զանցանէ զչափաւ՝ առ կարեկցութեան եղկելի հոգւոյ իմոյ: Ո՛հ, մի՛ տար ինձ, տէր, ապերախտ գտանել առ այդքան սէր: Գիտեմ զի չիք քեզ առելի քան զապաշնորհութիւն. եւ արդ առ 'ի չլինել քեզ ապե-

րախտ՝ շնորհ ունիմ դառնադառն օրհասի դ՚զոր կրեցեր 'ի պարտիզին, առ 'ի թափելոյ զիս 'ի յաւիտենական մահուանէն։ Այո, Տէր, գոհա֊նամ զքէն. և սքանչացեալ ընդ գթութիւն քո՝ որ յանձն առնու կրել վասն իմ, ախտակից լի֊նիմ քեզ, և ընդ նմին մատուցանեմ քեզ զգութս քո որ վասն իմ։

Բարի է սքանչանալն, գոհանալն և կարե֊կցելն. այլ արժան է ինձ և չարչարիլ՝ մահացու֊ցանելով զիս յիրս իրս՝ վասն սիրոյն Յիսուսի, որ յանձն էառ այնքան չարչարիլ վասն իմ։ Հարկ կարևոր է նմանել նմա։

Զէ. Ըստ վճռոյն, եթէ ոչ ոք պսակի եթէ ոչ պատերազմիցի, մտանէ Քրիստոս 'ի մարտ վասն մեր։ Պատերազմ է տագնապ օրհասի նորա, յո֊րում բնութիւն և զգայութիւնք յետին ճգամբք ճգնին հրաժարել և խուսափել 'ի մահուանէ։ Եւ 'ի պահուն՝ յորում մատուցանէ նմա հրեշ֊տակն զբաժակն չարչարանաց, յանդիման կայ նմա և մահ անհնարին դժպհի կերպարանօք, առ ահաբեկ առնել զնա։ Տեսանէ նա 'ի նմին պահու զի ելանեն 'ի քաղաքէ անտի թշնամիք իւր, առաջնորդելով Յուդայի, և գան զինուք և կապանօք՝ ունել և տանել 'ի սպանումն. և այս տեսութիւն այնքան հզօրեղապէս ազդէ 'ի նա, մինչև թափ անցանել ընդ աղխմն, և անհնարին տագնապաւ իբրև զմեռեալ գործել։ — Հաւա֊նին կամք նորա մեռանել վասն փառաց Աստու֊ծոյ 'ի փրկութիւն հոգւոց. իսկ զգայութեանցն մեծապէս յոյժ խորշելով 'ի մահուանէ, ծագէ մարտ անհնարին, յորմէ զօրհասականն կրէ տագնապ՝ առ հասարակ ջղաձիգ դողմամբ և սաստկութեամբ անհանդուրժելի նեղահարու֊թեան։ Ոչ առ յաստուածուստ և ոչ 'ի մարդ֊

կութենէ ընձեռի նմա և դոյզն օգնականութիւն. այլ ինքնին միայնակ կամօքն հաւանի զի կրեսցէ մարդն՝ լքեալ յէութեանն մարդկայնում. որպէս զի մի ոք իշխեսցէ հրաժարել 'ի նմանելոյ նմա, տեսլով՝ եթէ կրեաց նա յօժարութեամբ՝ զի Աստուած էր:

Յ'ածել քում զմտաւ զայսպիսի օրհաս, յուշ լիցի քեզ, հոգի իմ, զի հաճոյ եղև Յիսուսի՝ անհնարին խորշումն և զանգիտումն զգայութեանցն, որպէս զի և մինչև իսպառ հնազանդեսցին կամացն Աստուծոյ: Իսկ մեք զի՞րդ արդեօք վարիցիմք՝ յորժամ զգայութիւնք սպուժիցեն կամացն Աստուծոյ: Ո՜հ, Տէր, կարի դիւրամատոյց եմ առ ապստամբութիւնս զգայութեանց. գիտեմ, զի հարկ է զդէմ ունել, և ոչ ունիմ: Թէպէտ և ունիցիմ ինչ նախանձ համբաւոյ լաւութեան և սրբութեան, այլ ուր մահացուցանել զիս 'ի վերայ կայցէ՝ որպէս յանհնարին վտանգէ պակուցեալ՝ լքանիմ: Պատճառք վատութեանս են պղերգութիւն և տարապայման սէր անձին. որով ցանկութիւն զօրացեալ նշան կանգնէ. և զի ոչ զամենայն գուն գործեմ առ 'ի յաղթել՝ յաղթեալ գտանիմ յաճախ:

Տեսանես, Տէր Յիսուս, զհէքութիւն թուլութեանս, տուր և ինձ 'ի զօրութենէ անտի՝ որով մարտեարդ արիապէս 'ի պարտիզին. օրհասիւքով ստացար ինձ զայն. և գիտես իսկ՝ զի ոչ կարեմ հնազանդել քեզ և ծառայել, եթէ ոչ զօրացուսցէ զիս օգնութիւն քո:

Եղից 'ի մտի մարտնչել ընդ երկիւղի մօտալուտ մահուան, ընդ երկիւղի հիւանդութեանց, ընդ երկիւղի արհամարհանաց և ամօթոյ. և գուն գործեցից յաղթելոյ զանգիտանաց զգայութեանց, օրինակ ինձ ունելով զՔրիստոս:

ՋԲ. Առ քաջին հասու լինել եթէ ուստի՞ իցէ Քրիստոսի տագնապ օրհասին, արժան է յիշել՝ զի խորհուրդք նորա յաւելուլին զնոյն: Ամենեցուն իսկ տագնապեցուցիչ է երկիւղ մահու. այլ այնքան առաւելու երկիւղ՝ որքան 'ի բնականն ազդուածն յաւելցի լոյս բանին: Է Քրիստոսի յստակ յոյժ տեսութիւն ճանաչելոյ զազնուութիւն կենաց իւրոց, որ ոչ էին կեանք հասարակաց մարդկան, այլ կեանք որ աստուածային միաւորութեամբն՝ քան զամենայն կեանս արժանաւոր է սիրոյ, պատուոյ և յարգանաց: Գիտէ զի մարմնաւոր կեանք իւր պատուականագոյն են քան զկեանս հրեշտակաց, վասն մեծագոյն փառացն՝ զոր յամենայն ժամ մատուցանէ առ Աստուած: Եւ թէպէտ գիտէ զի մեծ բարիք են նուիրել զայն յազատութիւն հոգւոց 'ի մեղաց, այլ զայն ևս գիտէ՝ զի կեանք իւր մեծագոյն բարիք են՝ քան զմեծութիւն չարեաց ամենայն մեղաց աշխարհի: Ոչ այնքան հեռի է երկիր յերկնէ՝ որքան կեանք նորա 'ի մերս կենաց: Արդ որքան ճանաչէ նա զկեանս իւր արժանի սիրոյ՝ այնքան և հզօրագոյնս սիրէ զայն, և՛ բնական և գերբնական պատճառօք կատարելութեանն: Յամենապատիկ մեծութենէ սիրոյ անտի իւրոյ առ կեանսն՝ անմարթ է նմա չզգալ և ցաւ անհնարին ընդ թողուլն զայն 'ի ձեռս թշնամեացն. և 'ի ցաւոց աստի՝ ժամանէ 'ի դրունս մահու, յորմէ անհրաժեշտ հարկ էր մեռանել և հզօրագունի անգամ մարդոյ:

Եւ արդ տես, հոգի իմ, քանի՞ սիրելի եղեր Քրիստոսի. սիրելի և յոյժ սիրելի են նմա կեանք իւր, այլ առաւել ևս փրկութիւն քո, քանզի առ 'ի փրկել զքեզ յանձն առնու մեռանել: Ահաւասիկ և ինձ օրինակ սքանչելի առ 'ի գործակից լինելոյ փրկութեան անձին իմոյ: Բիւր

պատճառք են Քրիստոսի առ 'ի սիրել և 'ի պահել զամենայն կեանս իւր. այլ քանզի կամք են Աստուծոյ՝ մեռանել նմա առ 'ի փրկել զիս 'ի յաւիտենից մահուանէ, ոչ մի պատճառ ոչ զօրէ նահանջել զնա 'ի հնազանդութենէ. և առ 'ի հնազանդել՝ առ ոչինչ համարի զկեանս իւր, որպէս թէ անարգագոյն իցէ քան զամենայն կեանս 'ի վերայ երկրի:

Քաջ իսկ արժան և իրաւ այսմ այսպէս լինել: Զի՞ք ինչ պատճառ որ աղատ առնիցէ զմարդ 'ի հնազանդելոյ Աստուծոյ: Պատուական իցէ առողջութիւն, պատուական իցեն կեանք. պատուական ամենայն որ ինչ յաշխարհի. այլ պատուականագոյն ևս է հնազանդելն կամացն Աստուծոյ: Եւ իցէ՞ իմ այսու մօք վարեալ ցարդ: — Ոչ. այլ ցաւ է ինձ ընդ այն, Աստուած իմ. և խնդրեմ 'ի քէն շնորհս, առ 'ի կատարել յայսմ հետէ զամենասուրբ կամս քո, արհամարհելով զայլն ամենայն. բայց եթէ և զողջոյն զկեանս իմ տաց քեզ՝ խուն ինչ առաւել քան զոչինչ տամ առ այնքանեաւ զոր պարտն էր ինձ տալ:

Ոչ երկիւղի՝ այլ ըղձից առիթ արժան է լինել ինձ սպառումն կենաց 'ի սպասու Աստուծոյ: Քանի՞ բազումք են որք ծախեն զկեանս 'ի մոլութիւնս ախտից և 'ի զբաղանս աշխարհի:

ՁԹ. Մեծ և ծանր վիշտ է Յիսուսի գիտելն զի կորուսանելոց է զամենարգոյ կեանս իւր, այլ ծանրագոյն ևս գործէ զվիշտն և այլ պատճառ, այն ինքն է անմեղութիւն իւր: Եղեռնագործ որ 'ի մահ վարիցի՝ թէպէտ և խռովի ընդ լուր մահուն՝ որպէս մարդ, սակայն հանդարտի և ոչ պչարի՝ ազգմամբ գիտակցութեանն, որ պատուհաս արժանի յանցանաց իւրոց ցուցանէ նմա զմահն: Այլ ոչ այդպէս և անմեղն. որ և այն-

քան առաւել արդարապէս ցաւի՝ որքան և Ճանաչէ զի չէր արժանի մահու: Ո՛րքան ևս դառն և ցաւագին եղև Քրիստոսի զգացումն մահուն՝ չունելով ամենևին արատ յանմեղութեանն: — Գիտէ զի մեռանելոց է վասն մեղաց՝ ոչ իւրոց այլ օտարաց, վասն որոց իբրև գրաւական մատուցանէ զանձն 'ի հաշտութիւն արդարութեանն Աստուծոյ. այլ իցէ՞ այդ բաւական 'ի մխիթարութիւն նմա: Որ արդարև պարտական ոք իցէ 'ի հատուցումն՝ ժուժկալէ համբերութեամբ, քանզի ասէ յանձին իւրում. Ես եղէ պարտապան, և ինձ անկ է հատուցանել. այլ որ երաշխաւոր ևեթ իցէ՝ նմա ծանր թուի ասելն. Այլք պարտական եղեն և ինձ մնայ հատուցանել: Այս իսկ է որ յաւելու 'ի Յիսուս զբնական տրտմութիւնն. մեղս ոչ առնել և պարտական գոլ մահու վասն այլոյն մեղաց. և առ առաւել ևս զկծանելոյ՝ համարի զմահն ոչ այնքան յանձն առեալ առ սիրոյ՝ որքան պարտական նմին եղեալ առ արդարութեան Աստուծոյ:

Հայեաց, հոգի իմ, 'ի տէրն քո Յիսուս Քրիստոս, զիա՛րդ գետնամածեալ՝ թուի գրեաթէ ընչասպառ, հազիւ հատկեալ հեկեկանօք, որպէս օրհասականքն առնեն 'ի մերձենալ մահուն: Մեծ են ցաւք նորա քան զամենայն ցաւս աշխարհի. և եթէ 'ի բնութիւն և 'ի գթութիւն անիրաւի՝ որ անկարեկից գտանիցի եղկելւոյ վշտակրի անյանց գտելոյ, զի՞նչ ասացից զանձնէս երբ ոչ գորովիմ յայսպիսում պայմանի տեսեալ զամենևին անպարտականն իմ Փրկիչ: Եւ նմա այս առաւել քան այլ ինչ ցաւէ, զի չիք ոք որ ողորմեսցի ինքեան: Եւ ուստի՞ ինձ այս անզգայութիւն մտաց, այս խստութիւն սրտի, զի և ոչ շիթ մի արտասուաց կաթեցուցանեմ, և ոչ հառաչանս մի հատանեմ կարեկցաբար գթով:

Ներեա, Տէր իմ Յիսուս, ներեա ագիտութեանս իմոյ, ցամաքութեանս իմոյ և ապաշնորհութեան: Գործով սրտի պարգև է քո, որում փափագել կարեմ, այլ ոչ և իմովանն գամագիւտ լինել: Ցուէ ինձ զի ապիրատութեամբ իմով անարժան գտայ շնորհիս. և առ 'ի կարեկից լինել՝ վերընծայեմ զհառաչանան ցաւագինս՝ զոր արձակես 'ի դառնակսկիծ չարչարանքդ:

Քանզի ոչ կարեմ նմանել Յիսուսի 'ի վշտակրել անմեղութեամբ, գոնէ եղից գէթ նմանել ինձ առ փոքր մի՝ վշտակրութեամբ ապաշխարութեան: Նա ինքն եղէ պարտական, և ես հատուցից որպէս զիարդ և կարող եղէց:

Դ. Օրհասական տագնապս ածէ Յիսուսի ոչ այնքան մահն՝ որքան մեռանելն 'ի խաչի, որ յայնժամ ժամանակի դժնդակագոյն և պժգալի քան զամենայն մահ համարեալ էր, և պատուհաս եղեռնագործաց չարաչար քարուակ կացելոց: Եթէ հասցէ իշխանի ումեք գլխոյ կառափման պատուհաս 'ի թշնամեացն՝ կարէ քաջալեր անձին մատուցանել. այլ եթէ 'ի կախաղանի եղգամահ լինել կայցէ, յանարգականն անդգործի մահու, անհնարին դառն և ապառում թուի նմա: Այսպէս և սա Յիսուս երկուս ինչ բուռն առնէ անձին. մի՝ յօժարել հնազանդութեամբ 'ի մահ. և միւս՝ 'ի մահ խաչի. և 'ի ձգանից սաստի բռնութեան մարդկութեանն 'ի նուաճել զքստմունս զգայութեան, ահա մտանէ 'ի մահուչափ տագնապս օրհասի:

Թուի ինձ՝ թէ վասն զի կամաւորք էին չարչարանք Քրիստոսի՝ չիցեն այնքան ցաւագինք կրեցեալքն կամաւորութեամբ. այլ միթէ հիւանդ որ հաւանիցի ընդ խարանս և ընդ կտրանս՝

նուազագոյնս զգայցէ զցաւ խարանացն և կորանացն։ Զարչարի Քրիստոս զի կամի չարչարել, արդարև այսպէս է. այլ ոչ վասն այսորիկ բթացեալ ինչ են զգայարանքն. նա մանաւանդ՝ վասն զի չարչարելն կամի՝ առաւել ևս չարչարի. քանզի ինքն իսկ գրգռէ զպակուցումն վշտահար, և սրէ զգայութիւնն յանհնարինս ցաւագնել. որպէս զի յօրինակ մեզ երևեսցի գերազանցութիւն ժուժկալութեան իւրոյ. և որքան հնար է առաւելիր լիցի փրկագործութիւն մարդկան և հաշտութիւն Աստուծոյ։

Եթէ էր ինձ հնար ներամտել 'ի սիրտ քո, Կեցուցիչդ իմ, թուի թէ տեսանէի պատկերացեալ 'ի նմին ճշգրտապէս զամենայն կիրս չարչարանաց քոց։ Ի ցաւս հոգւոյդ՝ չեղեն Հրեայքն ձեռնհաս. այլ ես յանցաւոր եմ քան զամենեսին՝ վասն բազմապատիկ և մեծամեծ մեղաց իմոց. ես ինքն եմ որ 'ի խաչ հանի և անձկեցի ոգեսպառ և օրհասական տագնապաւ զամենաքաղցր սիրտ քո. սիրտ՝ բոլորովիմբ բորբոքեալ առ սէր իմ, սիրտ՝ որում անբաւս եմ պարտական։

Ով սիրտ ամենասէր, սիրտ ամենասիրուն, աղաչեմ և խնդրեմ 'ի քէն թողութիւն անօրէնութեանց իմոց. խոստովանիմ զի մեծ զեղջ է ինձ յոյժ, զի եղէ առիթ այդքան անըմբերելի քում օրհասի։ Առաւել քան զամենեսին պարտական եմ սիրոյ քում. և աւադիկ կամիմ սիրել զքեզ. սիրեմ զքեզ. և եթէ կամիս զի առաւել ևս սիրիցեմ զքեզ, տուր ինձ զաւելին զայն որչափ և հաճոյ իցէ քեզ։ Ոչ գիտեմ թէ հասցէ սէր իմ 'ի չափ լրման պատուիրանին. և վասն այնորիկ օգնականութեան քում կարօտիմ առ 'ի սիրել զքեզ այնպէս՝ որպէս զի եղեց քեզ հնազանդ յամենայնի՝ զամենայն աւուրս կենաց իմոց։

Ոչ գիտեմ որով ախտիւ կամ որով մահուամբ մեռանելոց իցեմ. յանձն առից զամենայն մահ. և խնդրեցից յԱստուծոյ զայս մի շնորհս, մեռանել 'ի շնորհս նորա և 'ի սէր նորա:

ՂԱ. Անհնազանդութեամբն Ադամայ ամենայն չարիք մտին յաշխարհ. հնազանդութեամբ իւրով փափագեաց Քրիստոս զարման տանել նոցին որքան հնար էր: Զար քան զամենայն չար 'ի կարգի բնութեան՝ մահն է, զոր Աստուած ոչ արար, այլ մեղք մուծին զայն. և զի հարկ էր օրհասիս մերոյ դառնութեամբ լինել՝ 'ի պատճառս մեղանացս, յայն սակս կրեաց Յիսուս զորհամն 'ի պարտիզին. և առ 'ի կամաւորապէս կրել զվիշտն՝ որ մեզ հարկաւորաբար է, և առ 'ի տալ մեզ օրինակ նուաճելոյ զերկիւղ մահուն՝ հաւանութեամբ կամացն Աստուծոյ. և առ 'ի շնորհագիւտ առնել զմեզ մեղմութեան տառապանաց՝ որ հասանելոց իցեն յօրհասի մերում. և առ ուսուցանել՝ թէ չէ պարտ չէ արժան զանգիտել յորմէ և է մահուանէ՝ եթէ բռնական և եթէ բնական, թէ քրիստոնէաբար կեանս վարիցեմք:

Աղէ ուշի ուշով խոկասցուք յօրհաս մահուն Քրիստոսի: Ցուցանէ նա յանձին իւրում զտագնապն և զարհուրանս, զոր զգացից և ես 'ի մերձենալ մահուն իմոյ. 'ի յետնումն անդ պահու կենացս՝ լքեացի և յայլ յայլմէ լինիցի յիս բնութիւն իմ, վասն վերահաս լուծման հանգուցից ոգւոյ իմոյ 'ի մարմնոյս. պակուցեալ նկուն լիցի և հոգիս յահէ մօտալուտ մտիցն յատեան Աստուծոյ և յանփոխարկելին յաւիտենականութիւն: Ո՜վ, որպիսի տագնապք հասցեն ինձ յայնժամ՝ մինչ խոցոտեսցէ զիս գիտակցութիւն

վասն այնքանեաց գործոցս անցելոց, և մինչ շուրջ պաշարիցեն զիս վտանգք ապագային:

Փափագիցեմ, հոգի իմ, օգնութեան և քաջալերութեան 'ի Ճգան այնր յաւուրն պատերազմի: Վստահ լեր յարդիւնս Քրիստոսի, և դիր ջան նմանել նմին: Նախապատրաստ կաց նա ահեղ իմն կասկածանօք յաւուրն օրհասին՝ զոր կրիցէ 'ի Գողգոթա: Պատրաստեացուք և մեք կանխաւ, հոգալով զյաւուրն օրհաս կենացս, ստէպ խոկալով 'ի նոյն, և օրհասականս կերպարանելով զանձինս. այժմէն զմտաւ ածելով զխորհուրդն՝ որք յայնժամ գալոց են 'ի միտս մեր, որպէս զի մի յանղգաստից հասցէ 'ի վերայ մեր օրհասն, այլ գտցէ զմեզ պատրաստս: Աւաղելի է օրհաս այնորիկ՝ որոյ ոչ յառաջագոյն հոգալով՝ թողեալ իցէ այնմ յաւուրն ժամու. երանի պատրաստելոցն:

Հայցեմ 'ի քէն, Տէր իմ Յիսուս, թելադրել ինձ խոկմունս՝ որ առաւելապէս պիտանեգոյնք իցեն ինձ 'ի պատրաստութիւն մահու: Վասն արդեանց օրհասի քո 'ի պարտիզին, ողորմեա ինձ, և զերծո զիս 'ի յանկարծահաս մահուանէ, յայնմ մահուանէ՝ որ հասանէ մինչև իցէ մարդոյ պատրաստեալ 'ի մահ:

Ոչ ինչ է ինձ փոյթ թէ այս ինչ կամ այն ազգ իցէ մահն, շատ է թէ մի իցէ յանկարծահաս. առիթ երկիւղի է ինձ՝ ոչ մեռանելն, այլ ոչ բարւոք մեռանելն:

Արիւնահոս քրտունք Քրիստոսի :

ԴԲ. Բնութիւն է մարմնոյս քրտնել՝ յորժամ նեղեալ ընկճեսցի սիրտ՝ կամ յերկեղէ մեծէ, կամ՚ի ծանու ինչ բռնութենէ : Ի կերպարանել անդ Քրիստոսի ՚ի միտս իւր հզօր ցուցակութեամբ զչարչարանսն և զմահն մօտալուտ, ձընշի սիրտն ՚ի կուրծս իւր անձկութեամբք ահի և երկեղի և զարհուրանաց : Ոչ հանդուրժեն ըղդայութիւնքն չարչարիլ. իսկ բանին կամելով զի չարչարեսցի առ ՚ի հնազանդել Աստուծոյ, զօրանայ ՚ի պատերազմին, և զգայութիւն նուաճեալ ներքևի յաղթել իմն բռնութենէ : Աստի քրտունք Քրիստոսի ՚ի պարտիզին . այլ քըրտունք արեան՝ որ ընդ ամենայն ծակոտի մարմնոյն ելանէ . արիւն ձըմարիտ փոխանակ հասարակ քրտան : Ի պակուցմանէ երկեղին՝ խուձապի արիւնն որ զսրտիւն, և ՚ի յետին ձգանց անտի նուաճելոյ զերկիւղն՝ արիւնն այնքանեաւ ուժգին թափով դղորդի, մինչև մեծամեծ կայլակօք հոսել յերկիր : Ոչ երկեղի և ոչ տկարութեան են արգասիք՝ քրտունքս արիւնախառն, այլ արիական զօրութեան՝ որով բանն յաղթեաց զգայական ախորժակաց . ոչ բնութեան՝ այլ կամաց իւրոց են այս չարչարանք աննմանք : Կամք են Քրիստոսի՝ մարդկութեան իւրում ցաւագնիլ՝ ցորվայր դոյ հնար . վասն որոյ և կամի ցաւել մինչև ՚ի քրտունս արեան :

Տես, հոգի իմ, զՏէր քո թաթաւեալ յարեան . արիւն զոր ոչ ձգեցին յերակաց նորա ձաղկանք, փուշք և բևեռք, այլ արիւն՝ զոր

ինքնին ճմլեալ ըղխեաց 'ի սրտէն, որպէս զի քաջայայտ լիցի մեծութիւն սիրոյ իւրոյ և ստուգութիւն ներքին ցաւոցն: Եւ յայսպիսում պայմանի՝ առ քեզ դարձեալ ցաւագին դիմօք՝ Տէրն քո, ասէ. Տես, ո՛ հոգի, իցէ՞ ուրուք երբէք քրտնեալ արիւն՝ որպէս զիս տեսանես. իցէ՞ն երբէք լեալ ցաւք ըստ ցաւոց իմոց:

Ո՛հ, քանի՜ ցաւ է ինձ, Տէր Յիսուս, ընդ տառապանս քո, որք այնքան անհնարինք եղեն մինչև ըղխել զյորդահոսանս արեանդ: Գոհանամ զքէն վասն նախընծայ արեանդ՝ զոր հեղեր յերակացդ, և դու ինքնին հեղեր առ առատապէս հատուցումն իմոցս պարտեաց: Զի՞նչ տաց փոխարէն սիրոյդ: Գիտեմ զի անարժան եմ. այլ մի՛ տար ինձ թոյլ՝ լինել և աներախտ: Տուր ինձ շնորհս գոհանալոյ զքէն վասն այդպիսեաց սիրոյին և ցաւագին չարչարանաց. որպէս զի յիշեցից զնոսին կարեկցաբար և եղեց նմանող: Ո՛վ Յիսուս իմ, որ այդպէս առատապէս հեղուս զարիւնդ, յորդորեա և զսիրտ իմ ապառում՝ հեղուլ գէթ արտասուս ինչ:

Քրիստոսի նմանելով զգեմ կալայց զգայութեան՝ յամենայնի որ հակառակ իցէ աստուածայնոց կամաց: Իսկ որպէս արդեօք մինչև ցարդ զգեմ կալայ կրից իմոց: Ո՛հ, քանի՜ հեռի եմ յարիւն քրտնելոյ 'ի հակառակել իմում կամաց անձին:

ՂԳ. Երկու ըմպելիք դառնագոյնք էին 'ի բաժակին՝ մատուցելում առ Քրիստոս 'ի հրեշտակէն. մին՝ չարեաց պատուհասին զոր կրելոց էր 'ի չարչարանսն, միւս՝ չարեաց յանցանացն՝ յորոց սակս մնայր նմա՝ որպէս երաշխաւորի համօրէն մարդկային սեռին՝ հատուցանել արդարութեանն Աստուծոյ: Քրտնի արիւն, ոչ

լոկ վասն նախատեան լինելոյ դառնագառն պատուհասին, այլ առաւել ևս վասն անթուելի, ամենազազիր և ամենածանր յանցանացն, զոր հանդերձեալ է քաւել, փոխարէնս տալով. և որոց անհնար է քաւիլ, ըստ աստուածային վճռոյն, բայց միայն հեղմամբ անգին արեան նորա: Արիւն քրտնիլ վասն չար պատուհասին՝ արգասիք են յանձնառութեան նորա, որով զախորժական զգայականս նուաճէ ընդ պարտական հնազանդութեամբ. արիւն քրտնիլ վասն չարեաց յանցանացն՝ արգասիք են ներքին ցաւոց նորա, որ քաւէ զանօրէնութիւնս և հաշտ առնէ զԱստուած:

Յառնուլն զիւրև զմեղս ամենայն աշխարհի՝ ամենօրհնեալն Յիսուս՝ այնքան սրտաբախ սըրտաբեկ լինի վասն անհնարին զզուանացն՝ յամենայնէ որ չար է առաջի Աստուծոյ, մինչև արիւն արձակել ընդ ամենայն կողմն՝ ցողողումն երկրի: Ի պատուհաս մեղացն Ադամայ տուեալ էր մարդոյ՝ քիրտն. և 'ի քաւութիւն մեղացն նուիրէ Քրիստոս առ Հայրն յաւիտենական՝ զքրտունս իւր խառնեալ արտասուօք և արեամբ: Անհնարին են ցաւք նորա. և ոչ է անդէպ ասել, եթէ 'ի լալն զմեղանս մեր՝ լուծանի յարտասուս արեան հեղլոյ յայնքան աչաց որքան ծակոտի են 'ի մարմնին:

Խորամուխ լեր, հոգի իմ, և ծանիր, քանի՛ ինչ ծանր չարիք են մեղք՝ որ տան Քրիստոսի մարմնացելոյ Որդւոյ Աստուծոյ՝ տագնապս օրհասականս և քրտունս արեան: Ո՛վ ամենագութ Յիսուս, ամենևին յաչս փոխեալ 'ի լալ դառնապէս զմեղս իմ, վասն կայլակաց քրտանցդ՝ որք արտասուք են կենդանի արեան, կակղեա զխըստութիւն սրտիս. որպէս զի նկատեալ զահեղ ծանրութիւն, զբազմութիւն և զազգ ազգ մե-

ղանացս, բղխեցից և ես արտասուս զղջման և ապաշխարութեան: Զղջամ, Տէր, 'ի վերայ ամենայն չարեաց զոր և արարի. և քանզի մնայ և ինձ իմովսանն առնել վասն սոցին հատուցումն, զի՞նչ կարող իցեմ տալ արդարութեան քում: Գիտեմ զի ոչ արհամարհես զսիրտ խոնարհ և զղջացեալ. խոնարհեցո, Տէր, զսիրտ իմ և շարժեա 'ի զղջումն. և զոր միանգամ ընկալայց 'ի քէն 'ի պարգևի մասին՝ մատուցից քեզ 'ի պատարագ: Ոչ գիտեմ այլ ինչ հնարս 'ի փառաւոր առնել զքեզ, բայց եթէ զղջմամբ սրտիւ. և զայս շնորհս հայցեմ յանբաւ գթութենէդ. քանզի ես ինձէն ունիմ բազում խեղամտութիւն առնելոյ չար առաջի քո, այլ և ոչ մի 'ի պատուել զքեզ:

Գուն գործեցից կրկնել ստէպ զաղաչանս զղջականս, խառնելով զսկար մաղթանս իմ յամենազօր պաղատանս Քրիստոսի, որպէս զի ընկալցի Աստուած 'ի քաւութիւն մեղաց իմոց:

ՂԴ. Հանդէս առնել ընդհանուր ամենայն մեղաց գործեցելոց 'ի կեանս, շարժէ զսիրտ 'ի զղջումն. և այնքան առաւել լինի ցաւ ապաշխարանաց որքան խորագոյնս ծանիցէ ոք զանարգելն զԱստուած՝ զարժանին անբաւ սիրոյ: Արդ որպիսի ինչ լինիցին ցաւք Քրիստոսի 'ի պարտիզին անդ, նկատելով զանձն իւր պարտական մեղաց՝ ոչ միոյ միայնոյ մարդոյ, այլ համօրէն ամենայն մեղանաց ամենայն մարդկան: Որքան ճանաչէ և սիրէ զԱստուած՝ այնքան և ցաւի ընդ անարգանս Աստուծոյ. և զի անբաւ է իմաստութիւն նորա, անբաւ սէրն, անբաւելի և ցաւքն լինէին: Ցաւի նա որքան և կամի. քանզի իշխանութիւն ունի ցաւելոյ որպէս և թուի կամ հաճոյ իցէ ինքեան. և կամելով հաշտ առնել

զԱստուծոյ արդարութիւնն՝ վասն ամենայն մեղանաց ամենայն մարդոյ՝ զոր էառ զանձամբ, որպէս թէ արդարև իսկ իւր էին, 'ի դէպ է հաւատալ՝ եթէ ողորմութեան մեղոյն հաւասար և համեմատ եղեն և ցաւքն: Եթէ 'ի մի խառնէր ոք զամենայն ցաւ ապաշաւանաց զոր կրեցին, զոր կրելոց են և զոր արժան է ունել ամենայն զղջացելոյ աշխարհի, տակաւին սակաւ ինչ էր առ ամենագառն ցաւօք նորին: Ընթեռնումք զոմանց զի առ ատելութեան մեղաց իւրեանց՝ յանձն առին ճգնութիւնս դժնդակս. և զոմանց՝ զի առ սաստիկ ցաւոց սրտիցն մեռեալք եղեն. այլ առ մէն մի վայրկեան անհամեմատ ցաւոցն՝ մեռանէր և Յիսուս, եթէ ոչ հրաշագործէր աստուածութիւնն՝ չտալով նմա թոյլ մեռանել: Որչափական տագնապն և քրտունք արեանն վկայք են անհնարին ցաւոցն:

Ե՛կ արդ, հոգի իմ, և հարց, ուստի՞ է Քրիստոսի այդքան տրտմութիւն մինչև 'ի քրտունս արեան. և տես զգետինն՝ յոր անկեալ կայ 'ի ծունս, զիա՞րդ արիւնաթաթախ է համակ: Յառնուլն 'ի յանձն հեղուլ վասն մեր զարիւնն՝ իսկ և իսկ և եհեղ. և որպէս ճշմարիտ է զի եհեղ զամենայն վասն իմ, ճշմարիտ ևս է զի չգուցէ ինձ օգուտ անտի՝ եթէ ոչ ցաւեցայց և ես ընդ մեղս իմ առ 'ի գտանելոյ թողութիւն: Եւ սակայն զի՞ գործեմ ես: — Ո՛վ Աստուած իմ. առ աշխարհային իրս դիւրագորով է յոյժ սիրտ իմ, իսկ առ թշնամանս զոր եդի քեզ՝ քանի՜ անզգայ և ապառաժ: Փոփոխեա, Յիսուս, զսիրտս զայս, և տուր ինձ այլ, որ մի ևս ուրախասցի կամ տխրեսցի ընդ ունայնութիւնս. այլ միայն 'ի սէր քո լիցի անձնատուր, և դառնապէս զղջասցի վասն որ զքեզն անգոսնեաց: Թուի ինձ երբեմն ապաշաւել. այլ յոյժ սակաւ ինչ է ցաւս

իմ. պիտոյ է ինձ ցաւ բազում, քանզի բազում են մեղք իմ: Երդմնեցուցանեմ զքեզ, Տէր, յարիւն քո ամենասուրբ, տուր ինձ այնպիսի և այնքան ցաւ՝ զի լիցի առոյգ և կատարեալ զղջումն ապաշխարութեան:

Խորհեցայց յաճախ 'ի վերայ ամենայն մեղաց կենաց իմոց, ընդ որս ցաւէ ինձ սակաւ, քանզի չածեմ զմտաւ թէ զի՞նչ իցեն մեղք. և 'ի խորհելն զմեղս՝ խորհեցայց առ 'ի զղջալ: Ո՜հ, քանի՜ և քանիպատիկ թշնամանք առ Աստուած:

ՂԵ. Անհասանելի իմն են ցաւքն որով զօրհասականն տագնապեցաւ Քրիստոս և քրտնեցաւ արիւն. այլ առ իմանալ առ փոքր մի զգալի օրինակաւ, 'ի դէպ է համարել, թէ որ ինչ 'ի հընձանս գործի՝ նոյն օրինակ խորհրդապէս կատարեցաւ և 'ի պարտիզին Գեթսեմանի: Խաղող՝ յետ կթելոյ արկանի 'ի հնձան և կոխի, և ապա դնի ընդ մամլօք, և 'ի ճնշմանէ մամլոցն բռնութեամբ ճմլեալ պայթի և արտաքեղու յամենայն կողմանց զքաղցուն: Այս իմն օրինակ ողկոյզ ամենաքաղցր խաղողոյ էր սիրտն Յիսուսի, աստուածութեամբն և անմեղանչական մարդկութեամբն, այլ և լցեալ դառնութեամբ՝ սակս անթիւ քստմնելի ցուցակութեանց՝ յորոց զզուէրն. և մեղք մեր էին որպէս մամուլ ծանրատրոփ. արդ արկեալ փափկալի սրտին Յիսուսի ընդ այսպիսի մամլօք, և կոխեալ նախանձու արդարութեանն Աստուծոյ, այնպէս ճմլեալ և լըսեալ լինէր, զի 'ի սաստկութենէ ցաւոցն՝ արիւն արձակէր առ հասարակ. և այնպէս ուժգին ցայտէր՝ զի հոսէր 'ի գլխոյն և 'ի թիկանց, 'ի լանջաց, 'ի ձեռաց և յոտից, և յամենայն ծակտեաց մարմնոյն, մինչև վտակօրէն թափել յերկիր:

Յաւեալց, հոգի իմ, մօք և ըղձիւք յամենակիր Փրկիչն քո, և հաւաքելով զչիթս պատուական արեանն՝ աղէխարշեա և գոհացիր, զի վասն քո կրէ զայդ զամենայն: Աւա՜ղ ասեմ քեզ, եթէ և արեամբդ այդուիկ, այդքան սիրարկու արեամբ ոչ կակղիցի սիրտ քո: Այլ դու, ո՜վ բարի Յիսուս, որ հեծես և հիւծիս և տառապիս և քրտնիս ընդ բեռամբ մեղաց իմոց, դու մասնաւորեա ինձ զարդիւնս քո, զի 'ի բաց թօթափեցից յանձնէ զմեղս զայսոսիկ: Ցօղեա յիս միով ևեթ կայլակաւ արեանդ. զի մին այն շատ է 'ի մաքրել, 'ի սուրբ առնել և 'ի փրկել զիս: Իսկ ես փափագելով փափագեմ նմանել քեզ զղջմամբ սրտի, և հեղլով չիթս ինչ արտասուաց փոխանակ հեղման արեանդ, 'ի քաւութիւն մեղաց իմոց: Ո՜վ ամենագութ Յիսուս, հաճեսցի ողորմութիւն քո արդահատել զանձն իմ: Եւ զի ոչ ունիմ արդ փոխարէն մատուցանել վասն անթուելի անօրէնութեանց իմոց, ընծայեմ քեզ, Հայր յաւիտենական, 'ի պատարագ ապաշխարութեան՝ զամենագորովն սիրտ, և զամենևին վշտամբեր սիրտ Միածնի Որդւոյ քո Յիսուսի Քրիստոսի. սիրտ ձմլեալ 'ի կասկածանաց վշտաց իւրոց, և ճնշեալ ցաւօք վասն իմոցս մեղաց: Միթէ մերժիցե՞ս զայսպիսի նուէր: — Գիտեմ թէ ոչ. զի սա է սիրտ ամենասիրելւոյ Որդւոյ քո. և դու ոչ արհամարհես զամենայն սիրտ բեկեալ և խոնարհեալ:

Արդարև առանց սեփական իմն աստուածային շնորհաց՝ ոչ կարեմ ըստ արժան բաւականին զղջալ ընդ մեղս իմ. և արդարև չեմ արժանի այդմ շնորհի. այլ խնդրեցից՝ յուսացեալ յարդիւնս Քրիստոսի:

ՂԶ. Յողջակէզս հնոյ օրինին՝ պատարագն խապաւ հրով ծախիւր և նուիրէր, և Աստուած ընդունէր 'ի հոտ անուշութեան. զի օրինակ էր Քրիստոսի: Արդ օրինակն կատարումն էառ: Ի պարտիզի անդ Քրիստոս պատարագէ և նուիրէ առ մեծվայելչութիւնն Աստուծոյ՝ զանձնն բովանդակ, առանց ինչ խորհելոյ. քանզի չարչարի մարմնովն յօրհասական տագնապս, և արեան քրտունս հոսելով. չարչարի զգայական ոգւովն՝ որ յահէ մօտալուտ մահուանն վարակեալ է մահուչափ տխրութեամբ. չարչարի և բանական հոգւովն, որ է կամքն ցաւագնեալ վասն անթիւ մեղանաց: Իցէ՞ ինչ մասն 'ի մարմնի նորա կամ 'ի զօրութեան հոգւոյն՝ որ ոչ կրիցէ չարչարանս դառնակսկիծս, կամ զոր ոչ ընծայեսցէ յողջակէզ բոլորապտուղ:

Կամօքն մեղանչէ մարդ, ընդդէմ կալով կամացն Աստուծոյ. և զի չէ մարթ այլազգ եղծանել զմեղս՝ բայց հակառակս կամացն գործելով՝ զի տրջասցի ընդ անարգելն զԱստուած, զայս արար Քրիստոս յամենայն 'ի կեանս իւրում. և զոյն առաւել իմն խնամով առնէ 'ի պարտիզին, գրաւելով զուշ կամացն 'ի ցաւս, վասն ամենայն թշնամանացն Աստուծոյ. և այն այնքան ուժգին և եռանդուն ներգործութեամբ, մինչև 'ի բռնութենէ նոցին՝ արեան քրտունս արձակել: Զոր ցաւ և նկատեցես 'ի Յիսուս՝ թէպէտ արտաքին թէպէտ և ներքին, մեծ են քան զամենայն ցաւս մարդկային կենաց. այլ զցաւս նորա վասն մերոցս մեղաց՝ 'ի դէպ է մեզ յաճախագոյնս խոկալ, զի նմանեսցուք նմին. մարթ է 'ի չքմեղս լինել ոչ նմանելով Յիսուսի յայլ ինչ ցաւս նորին. այլ ամենեքին պարտք և հարկք են նմանել նմա 'ի ցաւս կամացն՝ մերովս ողջացեալ կամօք, որում առաւել քան զամենայն ինչ ծանր թուիցի մեղք առ Աստուած:

Ահաւասիկ կամք իմ, զոր նուիրեմ քեզ, Աստուած իմ. կամք իմ չար՝ որ իշխեաց մեղանչել. այլ և արդ ոչ կարէ ապաշաւել զմեղս իւր՝ որպէս արժանն է՝ եթէ ոչ տացես նմա ձեռն օգնականութեան: Մատուցանեմ քեզ զայն՝ որպէս զիարդ և էն. կամք մեղաւոր, այլ փափագող լինել ապաշխարող. կամք ապստամբ և ապաշնորհ, այլ այժմիկ ցանկացող սիրելոյ զքեզ: Մի արհամարհեր զսա. այլ հաճեաց վերընդունել, և ողորմութեամբ քով արգահատել զիղձս սորա բարիս և քաջալերել: Կամիմ՝ զի կամք իմ ոչ ես լիցին իմ, այլ քո բովանդակ. զի յամենայնի և ամենեին քեզ հնազանդեսցի, և մի երբեք ընդդէմ դարձցի: Չիք իմ մատուցանել քեզ հաճոյագոյն ինչ և սիրելագոյն քան զայդ, և յամենայն սրտէ վերընծայեմ զնոյն:

Գովելի է ապաշխարութիւն ըստ մարմնոյ, և թէ որպէս արժանն է առնիցի. այլ ապաշխարութիւն կամաց՝ որ է ցաւելն ընդ մեղս, ամենեին իսկ հարկաւոր է. վասն այսորիկ յայս ուղղեցից խնամով զամենայն աւուրս կենաց իմոց:

ԳԼ. Եթէ քննել կամիցիմք զպատճառս անհնարին ցաւոց կամացն Քրիստոսի 'ի զզուանաց և յատելութենէ մեղաց, գիտասցուք մի և գլուխ ամենայնի զայս իսկ. զի կամք նորա ամենեին հարեալ էին 'ի սէրն Աստուծոյ և վառեալ նախանձու փառաց նորին: Առ 'ի լինելոյ մարդկութեան Քրիստոսի կատարեալ ողջակէզ քաւութեան յանցանաց մերոց՝ հարկ էր և հոգւոյն պատարագել և կիզուլ: Առ իմանալ զոհն զայն, 'ի դէպ է մեզ այսպէս զմտաւ ածել, եթէ հոգին այն առանձինն իւր խնամօք Աստուծոյ սնեալ էր և կարգեալ 'ի սիրել զԱստուած անճառելի օրինակաւ, և նոյն ինքն սէրն Աստուծոյ

եղև նմա սուր խոցոտիչ և հուր կիզիչ. և ըստ չափու սիրոյն Աստուծոյ՝ որ սաստիկ էր յոյժ, յաւելցաւ 'ի նմա և ցաւ բուռն և սաստիկ յոյժ ապաշաւանաց վասն անարգանացն Աստուծոյ:

Ի մարտիրոսս՝ սէրն Աստուծոյ ամոքէր զցաւսն. իսկ 'ի Յիսուս նոյն ինքն սէրն յաւելու զցաւսն: Եւ զիա՞րդ: — Տեսանէ Յիսուս հայր անթիւ մեղաւորաց որք զինուորին պատերազմել ընդդէմ Աստուծոյ. և գուն գործեն ամենայն զինուորութեամբ 'ի բաց ընկենուլ զԱստուած յաթոռոց իւրոց, և առնել, եթէ հնար ինչ էր, զի Աստուած ոչ ևս իցէ Աստուած: Վասն այսորիկ սիրելով նորա զԱստուած՝ որքան հնար էր հոգւոյ անձնաւոր միութեամբ միացելոյ ընդ Բանին՝ սիրել զնա, 'ի տեսանելն զնոյն ինքն զամենասիրելին զԱստուած՝ այդքան խոտեալ և արհամարհեալ՝ յանարգ և յապաշնորհ արարածոց, այնպիսի զգայ ցաւս անհնարինս՝ հաւասար սիրոյ իւրում՝ մինչև նուաղել, օրհասական լինել և ահաքրտնիլ արիւն:

Այսպիսեօք բարձր և ճշմարիտ խոկմամբք 'ի դէպ է ինձ հաւանել, եթէ ահա վասն այսորիկ իսկ յոյժ սակաւ ինչ ցաւէ ինձ ընդ մեղս իմ. քանզի և յոյժ նուազ և իբրև ոչինչ մի է սէր սրտի իմոյ առ Աստուած: Այո, արդարև, Աստուած իմ, ես ոչ սիրեմ զքեզ, վասն այսորիկ իսկ և ոչ ցաւիմ զի մեղայ քեզ: Սակայն ո՞ բայց 'ի քէն կարող իցէ տալ ինձ զայդ սէր՝ որ ամենևին ձրի շնորհ է քո: Ցանկամ սիրել զքեզ վասն փափագանաց և պարտուց իմոց առ 'ի ցաւել ընդ խաւարին չարիս իմ, և ընդ չսիրելն իմ ցարդ զքեզ, այլ և խոտել յոյժ: Ո՛հ, երբ իցէ, Աստուած իմ, զի կատարեսցին իղձք իմ՝ զոհելոյ քեզ միանգամ՝ այլ բոլորովիմբ՝ զանձն

իմ: Փութալ երագել արժան է 'ի գործս յայս. այն զի և յոյժ դանդաղեալ անագանեցի յառաջադրութիւնս իմ. և արդ հայցեմ 'ի քէն, Հայր յաւիտենական, շնորհս' վասն հաճոյագունին քեզ քան զամենայն, որ է փոխադարձ սէր քո առ Յիսուս և սէր Յիսուսի առ քեզ:

Խնդրեցից յանձին իմում զպատճառս վասն որոյ չսիրեմ զԱստուած. և 'ի վերայ հասեալ զի իցէ այն յառաւել սիրելոյ իմ զարարածականս, 'ի բաց կացից յայնցանէ մանաւանդ' որք մասակարք իցեն ինձ կամ խափանիչք սիրոյն Աստուծոյ:

ՂԸ. Որ սիրէ զԱստուած' սիրէ և զամենայն զոր սիրէ Աստուած. և զի սիրէ յոյժ Աստուած զհոգիս մեր' քանզի 'ի պատկեր իւր ստեղծ զնոսին, նաև Յիսուս սիրէ զնոսին մեծապէս. և ոչ առ այլ ինչ եկն էջ նա յերկնից, բայց առ 'ի թափել զհոգիս 'ի յաւիտենից մահուանէ. և ոչ առ այլ ինչ վաստակեաց նա զամենայն աւուրս կենաց իւրոց, և ոչ վասն այլոյ իմիք յանձն առնու չարչարիլ և մեռանել, բայց 'ի կատարումն գործոյ իւրոյ այսորիկ, որ է փրկութիւն հոգւոց: Նա արդ տեսեալ զանթիւ բազմութիւն հոգւոց' զանհաւատից, և մանաւանդ զՀրէից զեղբարց իւրոց ըստ մարմնոյ, և զքրիստոնէից' սերտագոյն եղբարց իւրոց ըստ շնորհաց, որոց ոչ ինչ օգտելոց էին չարչարանք իւր, և երթալոց էին 'ի յաւիտենական դատապարտութիւն, ո՞ կարասցէ ճառել քանի մեծ եղև տրտմութիւն գթոյ նորա: Այնքան մեծ գրելի է' որքան մեծ էր սէր նորա, և որքան բազումք էին հոգիք' զորոց նախատեսանէր զկորուստ վասն մեղաց իւրեանց, և որքան մեծ էին պատիժքն դժոխոց' որ պատրաստեալ մնային

նոցա: — Առաքեալն Պօղոս առ գութ Եբրայե-ցւոց ասանց՝ որք 'ի կորուստ մատնելոց էին՝ այն-քան տրտմէր, մինչև փափագէր իւրոյ իսկ հո-գւոյն զրկմամբ փրկել զնոսին, Թէ մարթ էր այսմ լինել առանց մեղաց. Նմին նման երբեմն և Մովսէս իղձ լինէր: Իսկ ո՞րքան առաւել խան-դաղատէր Յիսուս՝ որոյ սէր առ հոգիս անհա-մեմատ մեծ էր և անբաւ: Եւ ահա ցաւս այս նե-ղէ զնա և յերկիր գլորէ, և արիւն քրտնեցու-ցանէ:

Ո՛վ ամենագորով Փրկիչ իմ, միԹէ կամիցիմ և ես լինել մի յայնցանէ՝ որք վասն ոչ օգտելոյ յարդեանց քոց՝ մատնելոց իցեն 'ի կորուստ: Ոչ, արդարև ոչ. մի եղիցի այս: Ճանաչեմ արդ Թէ քանի մեծարոյ եղև հոգի իմ յաչս քո. փա-փագեմ զի մեծարոյ լիցի և յաչս իմ՝ ջանիւքս 'ի փրկել զայն: Ցաւէ ինձ զի բազում անգամ 'ի վտանգ յաւիտենական կորստեան արկի զնա. այլ մի ևս գործեցից զայդ: Ընդ քրտնուլ քո ա-րեան 'ի քաւուԹիւն մեղաց իմոց՝ ցաւէ ինձ ի-ւիք, այլ խնդամ և այլով՝ և գոհուԹիւն մատու-ցանեմ, քանզի չգոյր ինձ այլ հնար փրկուԹեան: Բայց արիւն քրտնել առ կարեկցուԹեան գա-տապարտուԹեան իմոյ, ո՛չ, զայդ ոչ կամիմ բնաւ. և 'ի նոյն իսկ 'ի հեղումն արեանդ սպա-ռիմ՝ չտալ ինձ Թոյլ երբեք 'ի կորուստ մատ-նել. այլ որպէս գոհանամ զքէն այժմիկ վասն հեղման արեանդ, ահն ունիմ շնորհս մատուցա-նել քեզ և յամենայն յաւիտեանս:

Ի փրկուԹիւն հոգւոյ իմոյ ոչ անխայեաց Քրիստոս ոչ 'ի վաստակս, ոչ յարտասուս, ոչ 'ի քիրտն և ոչ յարիւն. իսկ ես առ այս իմ փրկու-Թիւն՝ զի՞նչ առնիցեմ, կամ զի՞նչ եդեալ է 'ի մտի առնել:

ԼԹ. Յոր սակս եհեղ Յիսուս արտասուս 'ի վերայ Երուսաղեմի՝ 'ի նոյն սակս հեղու և այժմ զարիւն իւր 'ի պարտիզին. և խորհուրդք մտացն յաւելուն նմա զցաւսն: Գիտէ, զի առաջի կայ նմա մեռանել վասն ամենեցուն, զի ամենեքեան փրկեսցին. այլ տեսեալ զի չեն ամենեքեան փըր-կելոց վասն յանցանաց իւրեանց, նա մանաւանդ մահ իւր լիցի բազմաց յիմարութիւն և գայ-թակղութիւն, որով և առաւել ես մեղապարտք դատնիցին և արժանիք դառն դառն տանջանաց դժոխոց, անհնարին վշտօք ձմլի սիրտն բարե-գութ: Քաղցր և հաճոյ է նմա մեռանել վասն ընտրելոցն, բարեկամաց իւրոց, այլ մեռանել վասն ամենեցուն՝ յորոց բազումք 'ի կորուստ մատնիցին և եղիցին ատելիք ինքեան 'ի յաւի-տեանս, այս անբաւ տառապանք են նմա: Իւ-րովանն փափագէ Փրկիչն աշխարհի զամենե-ցուն փրկութիւն, այլ 'ի կատարումն յաւիտե-նական վճռոյ Հօրն իւրոյ՝ ոչ կամի զփրկել որոց ոչ կամիցին փրկիլ կամ թէ բռնաբար փրկեսցին: Որ փրկին՝ հարկ է թէ ունիցի կամս փրկու-թեան: Իսկ արդ տեսանէ Քրիստոս զի բազմաց չեն կամքս այս փրկականք, այլ և փոխանակ այնր՝ կամս ունին խոտորնակս և չարաչարս, վասն այսորիկ տրտմի մինչև 'ի մահ, թալկանայ և արիւն քրտնի առ տագնապին. քանզի տեն-չայր գթութիւն նորա թէ և ոչ մի ոք դատա-պարտեալ լինէր: Ջանահնար լինի հրեշտակն զօ-րացուցանել զնա. այլ արդ հոգին բարեխնամ զանց արարեալ զհրեշտակօք, և թողեալ անդր զհօտն երկնաւոր՝ եկեալ է յերկիր 'ի խնդիր մո-լորելոյ ոչխարին: Հոգիս խնդրէ նա. և ո՜չ, թէ պատահէր նմա Յուդաս կամ այլ մի ոք 'ի մեծա-մեծ մեղաւորաց՝ խոնարհեալ և զղջացեալ... Այո՛, այո՛, յայնժամ 'ի խնդութենէ սիրոյն քաղցրանային նմա և ցաւքն:

Այլ, ո՛հ ինձ, ո՛վ Փրկիչ իմ տրտմեալ. եթէ 'ի մխիթարութիւն քեզ բաւական իցէ հոգի մի մեղաւոր, ահաւասիկ հոգիս իմ՝ ստուգապէս մեղաւոր, և ընդունակ այնքան չարեաց՝ որքան թէ այլ ոք կարող իցէ մեղանչել: Մի եմ և ես արդարև յայնցանէ՝ որոց չէք կամք փրկութեան, քանզի 'ի մոլեկան կրից յաղթահարեալք՝ չունին կամս ուղղութեան: Այլ արդ 'ի բաց թողում ես զկամսն՝ յոր այսքան ժամանակս յապաղեցի: Յաւէտ գարշիմ յամենայն մեղաց իմոց, և այսու միայն աղագաւ՝ զի թշնամանք են քեզ գերագոյնդ բարի և անբաւ սիրոյ արժանի: Կամիմ փրկիլ, և առ 'ի փրկիլ՝ կամիմ ուղղել զանձն իմ: Զօրացո և հաստատեա, Աստուած իմ, զկամս զայս քոյին սուրբ շնորհօք. լուսաւորեա զիս, զի գիտացից թէ յոր ինչ առաւելապէս արժան է ինձ ուղղել զանձն իմ. և օգնեա ինձ հզօրեղապէս յուղղութիւնս յայս:

Քննեցից թէ որպիսի ինչ իցեն կամք իմ 'ի փրկութիւն. քանզի որ ոչն կամի վարել պատկան հնարիւք, որք են փախուստ յախտից և ստացումն լաւութեանց, ոչ ունի ճշմարիտ կամս փրկութեան:

Ճ. Գթութիւն՝ որ զուգախառնութիւն իմն է սիրոյն Աստուծոյ և սիրոյ հոգւոց, ախրագոյն պատճառք համարելի է օրհասական տագնապի և արեան քրտանց Քրիստոսի 'ի պարտիզին: Գթութիւնս այս՝ որպէս հուր մեծաբորբոք հաչէ և հալէ զսիրտ նորա, և քաղէ զոգին բուռն փափագանօքն 'ի չարչարել և 'ի հաշտ առնել ընդ մեզ զՀայրն յաւիտենական: Եւ առաւել քան զթշնամին ծարաւիս արեան իւրոյ՝ ցանկայ ինքն հեղուլ զայն. և եթէ երկիւղ չարչարանացն ճնշէ զնա 'ի ստորնումն մասին, 'ի վերնումն՝ ա-

ուսուել ևս ճ՛նշէ անտանելի չարչարանացն, ո-
րում անձկացեալ մնայ անձոյժ․ չարչարի՝ զի
յամենայն չարչարանքն․ և մահանայ՝ մինչև մեռ-
ցի ստուգապէս վասն մեր։

Զայս ամենայն կանխաւ ծանոյց ինքն՝ մկրտու-
թիւն կոչելով զչարչարանսն, իբրու զի բովան-
դակ իսկ ընկղմելոց էր յարեան իւրում, յայ-
տնեաց և զանտանելի անձկութիւն իւր՝ առ մե-
ծի գթոյն, յորմէ ժամքն՝ ամք թուէին առ ակն-
կալեալ և ըղձացեալ չարչարանսն։ Անհնար է
մտաց մերոց ՚ի վերայ հասանել մեծութեան ցա-
ւոց նորին, քանզի չկարեն իմանալ և զմեծու-
թիւն սիրոյ նորա։ Եւ այս իսկ սէր է որ ՚ի
քերման արեան հարկանէ զնա, իբրու ոչ ժուժէ
զի և առ վայրկեան մի յապաղեսցէ ժամ փրկու-
թեան հոգւոց։

Տես ինձ դու հոգի իմ, զիա՞րդ հոգայ տառա-
պի վասն քո սիրտ ամենագորով Փրկչին քո։
Այլ քանի՜ անարժան փոխարէնք լինին առ յի-
նէն սիրոյ քում, ո՛վ իմ Յիսուս․ ամենայն ծակ-
տի մարմնոյ քո՝ մի մի բերան է, որք աղաղակեն
ինձ սիրել զքեզ, որ այնքան սիրեցեր զիս մինչև
՚ի վտանումն արեանդ։ Եւ ահա հաւատոյ աչօք
տեսանեմ՝ թէ ո՛րչափ ինչ արարեր ինձ զօրու-
թեամբ սիրոյ քոյ․ իսկ ես զի՞նչ փոխարէն առ
այդ հատուցանեմ, կամ զի՞ գործեմ վասն քո։ —
Ցորժամ զմտաւ ածեմ զսէրն եռանդուն՝ որով
ոչ կասին աշխարհասէրք կրթիլ զհետ ընչից,
փառաց և անցաւոր հեշտութեանց, և առ նոքօք
կշռեմ զթեթևութիւն կամ զոչընչութիւն սիրոյ
իմոյ առ քեզ, զնուաղութիւն կամ զոչինչն գոր-
ծոց իմոց որ ՚ի քո սակս, զի ոչ իշխեմ մահացու-
ցանել զանձն իմ, ո՛հ, որպիսի՛ ամօթ և շառա-
գունանք պատեն զիս։ Աստուած իմ, որ տաս
ըղս մտացս ՚ի ճանաչել զպարտս իմ, տուր և

զօրութիւն առ 'ի կատարելոյ զնոսին անթերի։ Դու արժանի համարեցար զիս սիրելոյ զքեզ, և այժմ մի զլանար զշնորհս արդեանց քոց։ Եկեացէ յիս սէր քո, և մի տայցէ ինձ թոյլ խորհել բայց զքէն եւեթ, առ 'ի նմանող լինել քեզ, և հաճոյ լինել հանապազորդ կրթանօք յառաքինութիւնս։

Ցուեցայց ընդ նուաղութիւն սիրոյ իմոյ առ Յիսուս, և մի խաբեցից զանձն իմ թէ սիրեմ զնա, եթէ ոչ առաքինութեամբք ստուգապէս կրթեցայց 'ի սէր նորին։ Հաճոյագոյն նմա յուղղութիւնս՝ եղբայրական սէրն է՝ հիմնեալն 'ի խոնարհութեան։

ԾԱ. Հուր մեծ այնքան յաւէտ բորբոքի՝ որքան հզօրագոյնս շնչիցեն հողմունք. այսպիսի իմն և գթութիւն Քրիստոսի, այնքան ևս քան զևս աճէ որքան ընդդէմ դառնայ նմին մարդկայինս ապերախտութիւն, զոր Ս. Հարք կոչեցին այս չար՝ ցամաքեցուցիչ աղբերաց ողորմութեանն Աստուծոյ։ Խուռն ընդ առաջ լինին մտաց նորա մեղք գործեալք և որ չև ևս են գործեալք, և մեղաւորք՝ որք և յետ չարչարանաց իւրոց՝ դատապարտեցին. այլ յայսր ամենայնի վերայ՝ ոչ հովանայ գթութիւն նորա, այլ մանաւանդ առաւել ևս բորբոքի։ Բանն և զգայութիւն՝ թուին ինձ խորշեցուցանել զնա 'ի չարչարանաց՝ ուստի ոչ լիցի օգուտ բազմաց՝ վասն մեղաց իւրեանց. վասն այսորիկ ապաժոյժք արեան եղանեն 'ի նմանէ. այլ հուր գթութեան փոխանակ նուաղելոյ՝ առաւել ևս վառի, և հալէ զսիրտն՝ որպէս հալի մոմ առաջի հրոյ։ Ի մաքառման անդ գթութեանն իւրոյ և ապերախտութեան մարդկային, տեսանէ Յիսուս՝ զի որ այժմս Փրկիչն է ամենողորմ և յօժար 'ի չարչա-

բանս վասն փրկութեան հոգւոց, լիցի և դատաւոր անաչառ առ 'ի դատապարտել զբազում հոգիս մեղաւորս՝ երբեմն փրկագործեալս յինքենէ: Տեսանէ 'ի պատուիրի անդ զվճիռ յաւիտենական անիծից՝ զոր հատցէ 'ի վերայ նոցա յաւուրն դատաստանի. և տեսանէ այնպէս իմն ներկայական երևութիւ՝ որպէս թէ առ ժամայն իսկ վճռելոց իցէ: Ո՛վ, որպիսի՜ տագնապք գըթութեան նորա. և սակայն ոչ չիջանի, այլ առաւել ևս արծարծանի: Զկայ չմնայ դահճաց մատնելոյ զինքն, այլ կանխեալ ցուցանէ՝ ընդհանուր բղխմամբ արեանն 'ի փրկութիւն առհասարակ ամենեցուն, թէ քանի՜ մեծ է գթութիւն իւր քան զանգթութիւն նոցա:

Ո՛վ հոգի իմ, յուշ լիցի քեզ մատնութիւնն Յուդայ, որ ընդ երեսուն արծաթոյ վաճառեաց զՔրիստոս. և տեսանելով զանգին արիւնն առատապէս զեղեալ 'ի մարդացելոյ Աստուծոյ՝ 'ի փրկութիւն մարդկան ազգի, հիացեալ զարմացեալ գոչեա. Ո՛, քանի՜ անարգ է գինն որով մարդ վաճառէ զԱստուած. ո՜ քանի՜ մեծ է գին՝ որով Աստուած գնէ զմարդ: — Յուշ ածից. զի Քրիստոս մեծաւ գթութեամբ եհեղ զարեան քրտունսն վասն իմ, առ 'ի գիւտ շնորհի թողութեան և ուղղութեան յանցանաց իմոց: Իսկ ես որպէս զիա՞րդ օգտեցայ յարենէ անտի: Որպիսի՜ ինչ ապաշխարութեամբ գործակից եղէ արդեանց նորին: — Լսեմ, Յիսուս, զձայն քո, որով 'ի ձեռն մարգարէին գանգատիս զինէն, զի ապախտ արարի ցարդ զսիրով քով և զարեամբ: Եւ է իսկ ստոյգ. յիրաւի է քեզ ցաւել ընդ այն. այլ ցաւիմ և ես. ոչ ևս կամիմ լինել ապերախտ՝ որպէս ցայժմ:

Ի յուշ ածից զԱստուածամարդն տագնապեալ օրհասական, որ գայցէ ամենայն փառօք

պատուորի 'ի դատապարտել զանարգուս ողոր-մութեան խրոյ՝ անզեղջ սրտիւք: Դարձջիք, դարձջիք այսուհետև առ Աստուած:

Երկու խորհուրդք համբերողին Յիսուսի 'ի Պարտիզին:

ՃԲ. Մինչ տակաւին յառեալ կամք 'ի Հարչա-րանս Քրիստոսի որ 'ի պարտիզին, մի զանց ա-րասցուք 'ի յիշելոյ և զայս, զի ոչ վայրապար ինչ անցին անդ ընդ նա այս ամենայն դէպք. այլ նախատես խորհրդով և կամաւորապէս ըն-տրեալ էր Քրիստոսի զտեղին զայն խորհրդա-կան՝ վասն մեր: Պարտէզդ Գեթսեմանի՝ ուր կրեաց Քրիստոս զտխրութիւնս, զտաղտուկս, զքստմունս, զթալուկս և զքիրտն արեան, և ուր ձերբակալ եղև 'ի թշնամեաց և 'ի մահ վա-ճառեցաւ, կայ 'ի ստորոտս լերինն Ձիթենեաց. 'ի լերինն՝ ուր յետոյ գնաց, և 'ի համբառնալն անտի յերկինս՝ եթող զհետս ոտիցն, ըստ նախա-գուշակութեան մարգարէին: Արդ զի 'ի լերինն Ձիթենեաց տառապեցաւ Քրիստոս, և 'ի լեռնէ անտի վերացաւ 'ի փառսն յաւիտենականս, 'ի դէպ է մեզ 'ի միտ առնուլ, եթէ՝ ճանապարհ որ տանի յարքայութիւն՝ տառապանքն են. ընդ այն ուղի ճանապարհորդեաց Յիսուս. ընդ այն արժան է և մեզ ուղևորել 'ի նմանութիւն նմին: Անմարթ է վայելել և յայսմ աշխարհի և 'ի հան-դերձելումն. այլ հարկ 'ի վերայ կայ հրաժարել կամ յընդունայն զբօսանաց կենցաղոյս կամ 'ի յաւիտենական ուրախութեանց այնր աշխար-հի: Վստահագոյն նշան նախասահման ընտրու-

թեան մերոյ՝ է նմանակցութիւն չարչարանաց Քրիստոսի. և ստոյգ է, զի թէ լիցուք նմա ընկերք 'ի համբերութեանն, լիցուք ապա և 'ի յաւիտենականութեան փառացն:

Հոգի իմ, քանի՜ քաղցր արժան էր քեզ համարել զվշտակրելն՝ միայն 'ի պատճառս ընկերելոյ Քրիստոսի 'ի ցաւագին չարչարանսն: Առ որ յաւելցի և այս. Քանի՜ սիրելի 'ի դէպ էր լինել քեզ վշտակրելն՝ առ 'ի հաղորդ լինել յետոյ Քրիստոսի և յերանական փառսն: Որքան և ծանր ինչ չարչարանք հասցեն յաշխարհի աստ, տակաւին փոքր կամ ոչինչ մի են առ չարչարանօքն Քրիստոսի, և առ փոխարինիւ՝ որ տուեալ լինի արդեամբք չարչարանացն Քրիստոսի: Են արդարև և աշխարհի դրախտք իւր հեշտալիք տեսլեամբ, այլ ամօթալիք և առաջնորդք անվախճան ցաւոց, և ամենևին աննմանք Գեթսեմանեայ պարտիզին, ուր թէ ոք չարչարիցի ընդ Քրիստոսի՝ անտուստ և վերասցի 'ի վայելս մշտնջենաւորս: Կացցուք արդ յօժարութեամբ, հոգի իմ, 'ի պարտիզիս յայսմ՝ ուր տառապեցաւն Քրիստոս: Ո՛վ ունայնութիւնք, փափկութիւնք և զբօսանք, հրաժարեմ 'ի ձէնջ. և հայցեմ 'ի քէն, Յիսուս, զզուելի առնել ինձ զայնոսիկ: Մեռելութիւնք, ուրացութիւնք զգայասիրութեան և անձնասիրութեան, ձեզ տարփամ. և հայցեմ 'ի քէն, Յիսուս, տալ ինձ սիրել ևս քան զևս զամենայն զոր դուն սիրեցեր: Տա՛ր մո՛յծ զիս ստէպ 'ի պարտէզդ յայդ, զի քաղեցից և ես զծրար ստաշխին իմոյ. քանզի ոչ պակասեն ինձ առիթք չարչարանաց՝ և 'ի լոկ ընդդէմն կալ ախտաւոր կրից իմոց, որպէս և արժանն պահանջէ: Զայս պարտէզ ընտրեմ ես՝ 'ի տեղի լալեաց մեղաց իմոց, ուր յաւուրս մարմնաւորութեան քո՝ հեղեր դու, Յիսուս, այնքան արտօսր յաղագս իմ:

Յորժամ բնութիւնս խորշիցի և դարշիցի 'ի կրթութեանց ջերմեռանդն կենաց, ամբարձից զաչս հաւատոց՝ նկատել զարքայութիւնն մըշտընջենաւոր, ուր ակն կալեալ մնայ ինձ Յիսուս. և յոյս քաղցրացուսցէ ինձ զամենայն դառնութիւն երկրաւոր:

ԾԳ. Արժան է յիշման և միւս ևս նշանական դէպ, զի հուպ 'ի պարտէզն Գեթսեմանի՝ ընդ որ ընթանայ հեղեղատն Կեդրոնի, կայ Ձորն Յովսափաթու, ուր համաշխարհական դատաստանն եղիցի, ըստ մարգարէութեանց պատգամացն: Եւ ոչ առանց ինչ անտեսութեան համարելի է 'ի վիճակիդ յայդմիկ կատարել վերջին ատենին, ուր եհեղն Քրիստոս զարիւն իւր վասն մեր. քանզի անդ պահանջիցի համար վասն արեանդ այդորիկ. և նովին արեամբ դրեսցին վճիռք փրկութեան ընտրելոց և դատապարտութեան մերժելոց: Անդր հասեալ եկեսցէ դատաւորական փառօք՝ այն որ եկն որպէս Փրկիչ. և հրապարակաքարոզ արարեալ զվկայութիւն սիրոյն իւրոյ՝ որով սիրեացն զհոգիս, յայտնեսցէ յայնժամ զամենայն՝ որ արդ անծանօթն է և անհաս մնայ մտացս 'ի դառնակսկիծ չարչարանաց իւրոց: Յայնժամ ձայն տուեալ կոչեսցէ զերկինս և զերկիր, և թոյլ տուեալ ամենեցուն քննել և դատել, եթէ էր ինչ ևս տանել նմա 'ի փրկութիւն հոգւոց՝ զոր ոչ արար. հարցցէ ցանձնիւր խիղճ մտաց, եթէ ո՞րպէս զխորդ յօգուտ արկին զխորհուրդս եկեղեցւոյ, զներողութիւնս, զքարոզս, զներքին ազդմունս և զպէսպէս շնորհս փրկագործութեանն՝ զոր այնքան առատապէս մատակարարեաց: Ցուցցէ ակն յայտնի՝ եթէ որպէս անպարտական գոլով՝ հատոյց ինքնին իւրով արեամբ զպարտս մեր. ցուցեալ առ նմին

և զմերս պարտականութիւն՝ 'ի հատուցումն փոխարինի և 'ի գործակցութիւն արդեանց իւրոյ, առ անրաւ ողորմութեամբ նորին նշաւակեալ և անպայման ապերախտութիւնս մեր. և չարչարանք իւր սուրբք՝ ծածկեսցեն ամօթով զերեսս մերժեցելոցն։

Կանխեալ այժմէն տես, հոգի իմ, զի՞նչ լինիցի քեզ յահեղ յայնմ դատաստանի։ Զի՞նչ ասիցես կամ զի՞նչ տացես պատասխանի՝ յորժամ առանց ակնառութեան համար պահանջիցի 'ի քէն այնքան ողորմութեանցն Աստուծոյ։ Յայնմ ժամու գթութիւն Փրկչին որ 'ի պարտիզի անդ Գեթսեմանի, հրաւիրէ զքեզ և ակն կալեալ մնայ՝ ամենեւին հաշտ և համբերօղ. այլ վա՜յ քեզ, եթէ զանց առնիցես. վա՜յ քեզ՝ եթէ արհամարհիցես. քանզի նոյն իսկ ողորմութիւն 'ի Զօրն անդ Յովսափատու անողորմն արասցէ զդատաստանն։ — Ո՜հ, մի՛ քաւ լիցի ինձ, Յիսուս, ընդ վայր հարկանել զողորմութիւնս քո. զոր և պաղատանօք ժտիմ այժմէն։ Եկեսցէ ողորմութիւն քո 'ի վերայ իմ, և տասցէ, զի՞նչ խնդրէ յինէն. օգնութեամբ նորին՝ բան տամ զի ոչ ևս դառնայց սուտնդանող հաճութեան իւրում։ Եկեսցէ գթութիւն քո՝ ներել ինձ զմեղս իմ զոր ցարդ գործեցի, և զգուշացուցանել յառաջիկայէն։ Յուսամ յողորմութիւն քո՝ որ արդ հեշտալուր է ինձ. և 'ի լինելս իմ առ նա ապաստան՝ հայցեմ 'ի քէն, Փրկիչ, վասն աւուրն դատաստանի, պաշտպանել զիս 'ի սաստից նորին իսկ ողորմութեան՝ որ ահեղակերպ յոյժ իցէ յայնժամ։

Ի խոկալ իմում զչարչարանս Քրիստոսի՝ յիշեցից յաճախ և զԴատաստանն. և քաղեցից պտուղ զխորհելն զայս, եթէ մնայ ինձ համարս տալ անվրէպ վասն միոյ միոյ կաթլոյ ամենայարգ արեան նորին։

Ընդառաջել Քրիստոսի թշնամեաց իւրոց ի Պարտիզին.

ԾԴ. Մինչդեռ Յիսուս աղօթէր և տառապէր 'ի պարտիզին, Յուդայի ազդ արարեալ Հրէիցն՝ եթէ այն գիշեր ժամ է դիպան ունելոյ զնա առանց աղմկի, ժողովին խումբք կաղանաւորաց և այլ ամբոխ, հանդերձեն զէնս, բիրս և լապտերս. և յուղի անկեալ դէմ դնեն 'ի Գեթսեմանի, յառաջընթաց գոլով Յուդայի, որ գիտակն էր՝ եթէ ըստ սովորութեան իւրում գոյի անդ աստուածային վարդապետն իւր: Գիտէ և ինքն Յիսուս զոր նոքայն գործեն, խօսին և խորհին՝ վասն իւր. և 'ի տեսանելն 'ի մօտի իւրում՝ եթէ ահա հասեալ մերձեալ կայ Յուդաս՝ յառնէ յաղօթիցն, և զարթուցեալ զառաքեալսն՝ որք տակաւին 'ի քուն կային, զեկուցանէ, քաջալերէ և յորդորէ 'ի փորձ հանդիսին: Ոչ խուսափէ, ոչ թաքչի, ոչ փախչի. այլ 'ի բաց եդեալ զերկիւղն՝ որով սակաւիկ ինչ յառաջ զարհուրէր և տագնապէր, աներկիւղ և արիաբար ելանէ ընդ առաջ ոսոխացն:

Մի ինչ զարմասցուք ընդ այս, այլ խրատեսցուք: Պատուիրեալ էր Յիսուսի առաքելոց իւրոց յաղօթս կալ, զի զօրացեալք այնու՝ մի յաղթահարեսցին 'ի մօտալուտ վտանգին. և արդ օրինակաւ իւրով ցուցանէ և նոցա և մեզ՝ թէ քանի զօրաւոր են աղօթք առ 'ի չափու ունել զկիրս 'ի փարատել զախտութիւնս, և 'ի զօրացուցանել զոգիս 'ի հնազանդութիւն կամացն Աստուծոյ: Եմուտ նա 'ի պարտէզն լի տրտմու-

Թեամբ՝ վասն նախատեսեալ չարչարանացն և մահուն. երիցս աղօթեաց 'ի պարտիզին անդ. իսկ յետ աղօթիցն, տես, քանի՜ անդորրական սըրտապնդութեամբ գնայ ընդ առաջ ամենայնի յորոց զանգիտեալ երկնչէր։

Ո՛վ Տէր իմ և Աստուած, քանի՜ ճշմարիտ է վարդապետութիւն քո՝ հաստատեալ քոյին օրինակաւ, եթէ աղօթք ամենազօր հնարք դեղոց են ամենայն կարօտութեանց իմոց։ Այլ ուստի՞ իցէ ինձ և յետ աղօթից գտանիլ այնպէս ակար որպէս յառաջն, գիւրագայթ յախտս, յառիթըս և 'ի փորձութիւնս։ Չկարեմ այլ ինչ առայս ասել, բայց զի ոչ որպէս արժանն է աղօթեմ. և յաղօթելն իմում՝ առաւել յընդունայնութիւն յածիմ քան 'ի ճշմարտութիւն։ Եւ զի՞նչ օգուտ իցէ կալ առաջի քո մարմնով և ոչ հոգւով։ Ո՛վ Յիսուս իմ, տուր ինձ ձեռն շնորհօք քովք. շնչեա, յորդորեա, կազդուրեա ըզհոգիս իմ եղկելի, առնել զսակաւիկ ինչ աղօթսն զոր առնեմս՝ այնու եռանդեամբ և մտօք որ քեզ հաճոյականն է. ոչ միայն ուշի ուշով խոկալով 'ի խորհուրդս անօրէնութեանց քոց, այլ և ըղձիւք կամաց փարելով զնոքիմբք ըստ պիտոյից կարեաց իմոց։

Յորժամ խորշիցի բնութիւնս 'ի յաղթել և 'ի մեռուցանել զանձն, ասացից ցզօրութիւնս հոգւոյ իմոյ, որպէս ասաց Յիսուս առ առաքեալսն. Ո՛ն, արիք, գնասցուք, ժամ է մարտի և ոչ քնոյ։

ԾԵ. Մերձենան Հրեայքն 'ի պարտէզն, լցեալք ատելութեամբ, նախանձու և ցասմամբ 'ի վերայ Քրիստոսի, առատացեալք ցանկացեալք պահուն ըմբռնելոյ զնա և 'ի կապանս արկանելոյ։ Մերձենայ և Յիսուս առ նոսա, սիրուն և սիր-

արկու և հեզ, ցանկանալով պահու ըմբռնմանն։ Թէ ո՞ առաւել փափագիցէ, Յիսուս՝ 'ի մատնիլ 'ի ձեռս թշնամեացն, թէ թշնամիքն՝ 'ի ձերբակալ առնել զնա, երկբայել երկբայիցէ ընդ այս՝ որ ոչն գիտէ կամ չառնու 'ի միտ զորքանութիւն սիրոյն Յիսուսի 'ի հնազանդութիւն կամացն Աստուծոյ, և 'ի փրկագործութիւն աշխարհի։ Ո՜վ սէր, ո՛վ սէր Յիսուսի, քանի՜ մեծ ես դու քան զՀրէիցն չարութիւն։

Տե՛ս՝ անտի զՀրեայսն կատաղեալս մոլեալս, աստի զՅիսուս՝ որ պատրաստ հոգւով և զուարթադէմ երթայ ընդ առաջ նոցա. և ինքն նախ առաջին խօսի և հարցանէ, Զո՞ խնդրէք. իբրու այն թէ երթայցէ ընդունել 'ի նոցանէ կամ աւետիս խնդութեան կամ պարգև պատուական։ Փախեաւ նա երբեմն, մինչ կամէին թագաւոր առնել զնա. ոչ փախչի այժմ՝ մինչ կամին 'ի կապանս արկանել զնա և 'ի մահ վարել։ Յայնժամ խոնարհութիւնն էր նմա փախչել, այժմ գթութիւնն տայ զօրեղի ունել. գթութիւնն որ սրտապնդէ զնա. գթութիւն որ շարժէ զնա և մղէ երթալ հանդիպել տանջանաց և անարգանաց։ Եւ այսմ ցանկայ ծանօթ մեզ լինել. վասն այնորիկ և 'ի տեսանելն զառաքեալսն պակուցեալս՝ այնպէս իմն յարդարէ զկերպարանս իւր՝ զի ծանիցեն ամենեքին թէ ոչ 'ի հարկէ ինչ անկանի 'ի ձեռս նոցա, այլ 'ի յօժարութենէ ևեթ կամացն պատրաստելոց առ սահմանեալսն յԱստուծոյ։

Ո՜հ, թէ գոյր 'ի սրտի իմում սակաւ ինչ սէր Աստուծոյ՝ քանի՜ այլազգ լինէին գնացք վարուց իմոց։ Որ արդարև սիրէ զԱստուած՝ ամենայնի ժուժկալէ, և զվշտակրելն իսկ ոչ համարի վիշտ։ Այլ ինձ որ այնքան խորշիմ 'ի վշտաց՝ մինչև փոխանակ փափագելոյ և խնդրելոյ զնոսին՝ ըստ

նմանութեան Յիսուսի, որքան և կարեմ փախչիմ 'ի նոցուն, անկ է երկնչել՝ թէ մի գուցէ խաբիցեմ զանձն իմ սիրել զԱստուած, և ստուգութեամբ ոչ սիրիցեմ: Մատիցուք 'ի փորձ: — Սէրն Աստուծոյ չկայ երբէք պարապորդ, այլ հանապազ ներգործէ: — Իսկ ես զի՞նչ գործիցեմ առ սէրն Աստուծոյ: Ոչ է 'ի դէպ համարել թէ կայցէ սէր Աստուծոյ՝ ուր չգուցեն գործք աստուածային սիրոյ:

Ո՛վ Յիսուս իմ, ողորմեա եղկելի մեղաւորիս՝ որ եկեաց ցարդ առանց սիրոյն Աստուծոյ: Առ սէր ամենաքաղցր սիրոյդ՝ որով ինքնին ելեր գնացեր մատնիլ 'ի ձեռս մեղաւորաց, վառեա յիս զնոյն զսէր՝ որով սիրեցից, տարփացայց և խնդրեցից յամենայնի, և յամենայն ժամ կատարել զհաճոյս կամացն Աստուծոյ:

Առ 'ի սիրել զԱստուած՝ պարտ և պատշաճ է ինձ պատրաստ կալ առ ամենայն կամս Աստուծոյ. այլ 'ի կատարել զկամսն Աստուծոյ՝ հարկ է ինձ զիմ կամս ուրանալ: Իսկ արդ յի՞նչ իրս պատրաստ իցեմ ես ուրանալ զկամս իմ զի լցից ըղկամս Աստուծոյ:

ԾԲ. Գիտէր Յուդաս, զի թէ ոչ կամէր Յիսուս՝ ոչ էր հնար ըմբռնել զնա. այլ ապիրատութեամբն կուրացեալ՝ էառ ընդ իւր ամբոխ զինեալ, յուսացեալ զօրութեամբ բռնութեան ունել զնա: Ի գնդի անդ որոց նայն առաջնորդէ՝ էն էն և 'ի քահանայից և 'ի Փարիսեցւոց անտի. քանզի և յայլ նուագս առաքեալ նոցա ըմբռնել զՅիսուս, իբրև 'ի դերև ելին 'ի յուսոյն, հաւանելի է թէ զարգիս և ոչ 'ի մատնիչն ինքնին վստահ լինին, այլ անձամբ իսկ կամին ընկերել և ամենեքին անկասկած 'ի բուռն արկանել զնա: Վստահ էն ամենեքին թէ զայս նուագ ոչ կարի-

ցէ խուսել 'ի ձեռաց իւրեանց. և ծաղր առնէին զնա՝ զի ասէր զանձնէ Աստուած լինել: Տեսանէ Յիսուս զխորհուրդս չարութեան նոցա. և անդէն յանմիտ առնէ զնոսա. քանզի հարցեալ ցնոսա թէ զո՞ խնդրէք, 'ի պատասխանել նոցա թէ զՅիսուս Նազովրեցի, երկուս եւեթ զայս բանս ասէ. Ես Եմ: Եւ ամենեքին առ հասարակ յաներևոյթ իմն զօրութենէ ընկրկեալք անկանէին յորսայս 'ի գետին՝ իբրև կիսամեռք: Ոչ հրեշտակս յերկնից իջուցանէ յօգնութիւն իւր, այլ ձայնիւն լոկով յայտ առնէ թէ Աստուած է:

Զայս օրինակ առնէր նա հանապազ. մարդ զինքն ծանուցանէր՝ որոց ոչ համարէին զնա մարդ. և Աստուած՝ որոց ոչն հաւատային զնա Աստուած: Նմանապէս և այժմիկ, յետ ցուցանելոյ զանձն առաքելոցն մարդ Ճշմարիտ՝ տրտմութեամբքն զոր կրեաց, ցուցանէ նոցին և Աստուած Ճշմարիտ, տալով ձայնին մարդկայնոյ զօրութիւն աստուածային, որով զանգիտեալ զգետնեցան թշնամիքն: Որպէս մարդ՝ որ ոչ գիտիցէ՝ հարցանէ, զո՞ խնդրէք. և որպէս Աստուած՝ միով եւեթ ակնարկութեամբ ամենակալ զօրութեանն՝ յերկիր զարկուցանէ զնոսա:

Ո՛վ Յիսուս Նազովրեցի, մարդ և Աստուած, քանի՜ սիրելի ես դու, այլ և քանի՜ ահաւոր: Ո՛վ, քանի՜ ահեղ հանդիպիս նմա՝ որ զքեզն ոչ սիրիցէ: Այդ ձայն քո, Ես եմ, այսինքն Յիսուս՝ որ է Փրկիչ, արդարև ձայն է խնդալի յունկն սիրողին զքեզ, ձայն ահագնալուր՝ զքեզ անարգողին: Ահաւասիկ քեզ հոգիս իմ՝ որ փափագէ սիրոյդ. ասա նմա, Ես եմ Փրկիչն քո. և շատ իցէ այս ձայն 'ի քաջալերել զնա և 'ի բորբոքել: Այլ ունիմ ես 'ի ներքս 'ի յիս ամբոխ վաշտըւէր կրից, հպարտութիւն, ցասումն, նախանձ, ծուլութիւն, որկրպատութիւն, ցանկութիւն,

և այլս յոլովս, առ հասարակ միաբանեալս 'ի դաւել քեզ: Ասա և ցդոսա. Ես եմ. և այնպէս վատթարեալ վանեա զնոսին, զի մի ևս իշխեսցեն ոտոխել քեզ: Զայս միայն հակիրճ խնդրեմ 'ի քէն, Փրկիչ իմ. տուր ինձ զերկիւղ քո, զի մի թշնամանեցից զքեզ. այլ բոլորով սրտիւ սիրեցից զքեզ, զի հաճոյ եղէց քեզ:

Փափագ սիրելոյ զԱստուած օգնէ ինչ ոչ՝ եթէ ոչ կալցի փոյթ նուաճել զախտս. սպանցուք զայսոսիկ, և կացցուք 'ի մաքրողական կեանս, և մի այնքան վակժայժ թեւակոխեսցուք 'ի միաւորականն և 'ի լուսաւորական:

ԾԷ. Իբրև այսպէս զարկոյց զդետնեաց Յիսուս զթշնամին, հարցանէ զնոսա միւսանգամ, Զո՞ խնդրէք. և անդրէն յառնեն ամենեքին զայրագինս մոլեգնեալք իբրև զառաջինն: Իսկ նա եցոյց զի ոչ զօրէն առնել ինչ նմա՝ եթէ ոչ ինքն կամիցի. և. է այս մխիթարութիւն մեծ առաքելոցն՝ յամենայն դէպս չարչարանաց նորին, գիտելն՝ զի ոչ տանջէր և ոչ մեռանէր՝ եթէ ոչն կամէր: Այլ մեզ 'ի դէպ է աստանօր դադարել առ վայր մի և խորհրդածել յինչ մի յոյժ պիտանի մեզ: — Եթէ Յիսուս ձայնիւ լոկով տապաստ յերկիր կործանեաց զամենեսին զեկեալսն մոլեգնութեամբ յըմբռնել զնա, զհեթանոսս և զհրեայս, մինչ յօժարն իսկ էր մատնիլ 'ի ձեռս նոցա, և ապա դատել և 'ի մահ դատապարտիլ, քանի՞ ահաւոր և պակուցանող ոչ կարծիցեմք զձայն նորա՝ յորժամ ինքնին եկեսցէ 'ի դատել զաշխարհ համօրէն: Եթէ այնքան ահաւոր գտաւ մեղաւորաց՝ Յիսուս 'ի խոնարհութեան իւրում, զի՞նչ լինիցի յաւուրն դատաստանի, յորժամ դայցէ փառօք իւրովք: Ո՛վ, քանի՞ սրտաթունդ սրտակոտոր լինիցին չուառականքն, դատաւոր

ինքեանց տեսանելով զայն՝ զոր այնքան խոստ-
ցին: Քան զշանթ կայծական ահաւորագոյնս որո-
տայցէ նոցա բարբառ ձայնին որ ասիցէ. Երթա՛յք
յինէն, անիծեալք. և անդէն անդնդասոյզ 'ի
գժոխս իջուսցէ զնոսին:

Ա՛յլ և ես ինքն գտայց 'ի տիեզերական ատե-
նի անդ. և զի՞նչ լինիցի ինձ, Աստուած իմ: Եթէ
ոչ կանխեսցէ այժմէն ողորմութիւն քո, ոչ գի-
տեմ յի՞նչ ապաստանել յաւուրն յայնմիկ յետ-
նում՝ յերեսաց արդարադատ բարկութեանն քո:
Անցին զանցին չափք մեղաց իմոց. և բազում
անգամ արժանի գտայ յաւիտենական անիծից
քոց. Եթէ առօրին առժամայն հասանէր դա-
տաստանն, զի՞նչ առնել էր ինձ, մինչ չիք ախտ
մոլութեան՝ որում ոչ իցէ պարտական գիտա-
կցութիւնս իմ: Ողորմեա՛ ինձ Աստուած իմ և
Տէր, ողորմեա՛: Բիւր մահուց արժանի եմ ես,
նաև մահուն՝ որ յաւիտենականն է. և չիք տեղի
յանձին իմում, բայց երկիւղի և անյուսութեան:
Ա՛յլ, ո՛վ Յիսուս, Աստուած փրկութեան իմոյ,
քանի՜ երախտապարտ եմ ես ամենագութ ողոր-
մութեան քում. սա քաջալերէ զիս մեծապէս.
սա յուսացուցանէ զիս, և արդահատէ հայցել
'ի քէն կեանս յաւիտենականս: Զկեանս շնոր-
հաց քոց խնդրեմ 'ի քէն՝ 'ի թողութիւն մեղաց
իմոց. խնդրեմ և զկեանս փառաց քոց՝ առ 'ի
սիրել զքեզ, և օրհնել այժմ և յաւիտեանս յա-
ւիտենից:

Յաւուրն դատաստանի յայտնի եղիցի, թէ ո՞
է Աստուածամարդն՝ որ նուաստացուցանէ ըզ-
հպարտս և բարձրացուցանէ զխոնարհս: Երկիր
պագից նմա ահիւ, և ուսայց լինել խոնարհ:

Ընդունելն Յիսուսի զհամբոյր Յուդայի.

ԾԸ. Յուդայի տուեալ էր ցգունդն որ էր ընդ իւր. «Ընդ որում ես համբուրեցից՝ նա է. կալջիք զնա, և տարջիք զգուշութեամբ»: Այսպէս խրատէր ամենայն խնամով զգուշանալ կալեալ զնա և տանել, զի մի փախիցէ. և ըստ նշանին բան տալոյ՝ յառաջեալ քան զամենեսին մատնիչն նենգաւոր՝ մատչի համբոյր տալ Յիսուսի:

Այն արկ գամ մի 'ի Յուդա, հոգի իմ. տես, որպէս կեղծաւորն մեղմիւ ընդ առաջ ելանէ աստուածայնոյ վարդապետին, զուարթագին իմն և պայծառ դիմօք, առ 'ի վարագուրել զդաւաճանութիւնն, և խաղաղութեան նշանակաւ մատնել զնա 'ի ձեռս թշնամեաց: Նախագուշակեալ էր մարգարէին և զայս, զի այդու նշանաւ մատնեսցի Մեսիայն: Այլ մեզ 'ի ճահ է խորհրդածել. զի որում յառաջ քան զերիս կամ չորս վայրկեանս ևեթ 'ի լսել զձայն Փրկչին, թէ Ես եմ, յերկիր կործանեցաւ ընդ այլոց՝ Յուդաս, 'ի սաստէ անուն Ամենակալին զարհուրեալ և զգետնեալ, չէ՞ր պարտ չէ՞ր արժան նմա զերկիւղն Աստուծոյ ածել զմտաւ, բանալ զաչս մտացն և զգաստանալ յանձին: Եթէ 'ի պահու յորում մեղս ինչ գործել կամէի՝ ձեռն մի աներևոյթ յերկնից զարկուցանէր զիս, թուի ինձ թէ ոչ համարձակէի մեղանչել և 'ի բաց կայի: Այլ Յուդաս անայլայլակ մտօք՝ դարձեալ պնդեալ հաստատի 'ի չարութեան իւրում: Ո՜վ տեսիլ սոսկալի:

Բայց ոչ էն զարմանք մեծ. քանզի Յուդա հարեալ է զագահութեամբ. և զի արծաթսիրութեամբ մատնեաց զՅիսուս, մեայ և այժմ անձկացեալ ժամուն ընդունելոյ զարծաթն խոստացեալ՝ 'ի վարձ մատնութեանն 'ի գլուխ ելանելոյ. և յայն յաւակնութիւն հասանէ՝ մինչև զնշանակն սիրոյ զհամբոյր՝ առիթ առնուլ անհեդեդն և ամենամեծին 'ի գործս ամպարշտութեան: Զի՞նչ ինչ ոչ գործիցէ, և յի՞նչ չիցէ ձեռնհաս տիրացեալն յոգւոջ ախտ մոլեկան: Կուրացուցանէ և խստացուցանէ զսիրտ, և զազդողագոյնս անգամ առիթս դարձի՝ ապիկարս առնէ: Եթէ ասէր ոք զՅուդաս 'ի սկզբբան անդ առաքելութեան նորին, եթէ վասն ագահութեան այնքան անօրինեացիս՝ մինչև ոչ ևս դարձցիս յապաշխարութիւն, ոչ 'ի ձայնէ ողորմութեանցն և ոչ յամենակալ զօրութենէն Աստուծոյ դրդեալ, ոչ կարէր հաւատալ նմա. այլ որ յայնժամ անհաւատն թուէր նմա՝ յետոյ կատարեցաւ ստուգապէս: — Այնպիսի ինչ թէ և ինձ ոք ասիցէ՝ ոչ հաւատամ և ես. և ո՞ գիտէ, Աստուած իմ, եթէ յետ սակաւու միոյ ոչ հասցէ 'ի վերայ իմ ախտ մի կրից փոքրիկ, և առ փոքր փոքր աճեալ յռացի և դարձցի յիս 'ի կիրս ապերասանս: Զամենայն ախտից սերմանս կրեմ յանձին իմում, և զյօժարութիւն առ ամենայն մոլութիւնս, և վատթարութիւն՝ երագ 'ի հոսել զանձն յամենայն ապիրատութիւնս: Ո՛հ, Տէր, կարկառ 'ի վերայ իմ զձեռն քո. զի բաց 'ի քէն չէք ոք որ կարիցէ արգելուլ զիս և պահել 'ի չարէ: Դու, Տէր, դու միայն ես ապաւինութիւն իմ, և ես 'ի քեզ յուսամ:

Օգնել ինձ խոստացաւ Աստուած. այլ անկ է և ինձ քննել տեսանել զկիրսն բռնացեալս յանձին իմում, և ուժգին զօրութեամբ ընդդէմ կալ, սանձել և 'ի չափու ունել:

ԾԹ. Մերձեցեալ Յուդաս առ Յիսուս, յառաջ քան զհամբոյրն՝ ողջոյն տայ. «Ողջ լեր, վարդապետ»: Հնա՞ր էր խորամանկագոյնս քան զայս կեղծաւորել դմա: Անօրէն գայլ գառնազգեստ, որ ջանայ ցրուել զհօտն՝ գաւազանելով զհովիւն: Ողջոյն սիրոյ մատուցանէ՝ որ լցեալն է անհաշտ ոխութեամբ: Ողջութիւն մաղթէ, և 'ի մահ մատնէ: Վարդապետ կոչէ զնա, և զվարդապետութիւնս նորա առ ոտն հարկանէ: Համարի նենգաւորն գործել ընդ աւն պարզամտի՝ որ ոչ ճանիցէ զկեղծաւորութիւն իւր, և կարծէ բարեկամութեան կերպարանաւ խաբել զնա, մինչ պարզելով զբազուկսըն՝ մատչի համբոյր տալ:

Այլ ո՞վ մեծի գթութեանն Քրիստոսի. ոչ 'ի բաց վանէ զդաւաճան վարագուրեալ յարձակեալ յիւր վ՚րայ. պատասխանի տանէ գորովական բարեմտութեամբ առ ստախօսն, և աղու-կան ձայնիւ յանուանէ կարդալով զնա՝ ասէ. «Յուդա, համբուրելո՞վ մատնես զՈրդի մարդոյ»: Յուցանէ նմա զինքն մարդ հեզ և խոնարհ, այլ և ճանուցանէ նմա զինքն Աստուած՝ յայտնելով նմին զխորհուրդս մատնութեանն և զհամբուրին: Եւ ընդէ՞ր տայցէ այդպէս պատասխանի բարեքիկ և քաղցրիկ՝ առ արժանաւորն ամենայն դառն կըշտամբանաց: — Որպէս զի ճանիցէ Յուդա ըզգթութիւն և զհամբերութիւն այնորիկ՝ որ սպասէ դարձի ապաշաւանաց նորա, և կակղասցի սառնացեալ սիրտ նորին: Այլ Յուդա յամառեալ պնդեալ մնայ 'ի խստասրտութեան իւրում: Ո՛վ ողորմելի, և ամենեւին անարժան ողորմութեան:

Բայց ես ճանաչեմ 'ի Յուդաս զայլ ոմն զիս: Ո՛հ, Յիսուս, կոչեմ և ես զքեզ իմ վարդապետ, այլ ոչ քաղաքավարիմ որպէս քո աշակերտ.

հայր կոչեմ, և ոչ կեամ որդիաբար: Զիյէ՞ և այս
սեթևեթ կեղծաւորութեան, մինչդեռ լեզու 'ի
սուտ հանէ զախտ: Այլ ով գթութեան ողոր֊
մութեանց քոց. քանզի 'ի հաստատել ինձ առ֊
թից, փորձութեանց և յօժարութեանց 'ի մեղս,
դու յանուանէ կարդալով զիս 'ի ներքուստ՝ ա֊
սես, որպէս առ Յուդայն. Ա՞յդպէս մատնիցես
զիս: Ո՛վ ձայն քաղցրալուր, ձայն սիրալիր. այլ
ես ապաշնորհ և ապառուամ՝ չլսելոյն առնեմ: Ո՛վ
Յիսուս, փրկութիւն իմ, 'ի դէպ էր և քեզ չլսե֊
լոյն առնել անարժանիս՝ 'ի կարդալ իմում առ
քեզ 'ի պէտս իմ: Բայց ես ոչ եղեց անյոյս 'ի
գթութեանց քոց, զի անբաւ են. այլ ամենայն
զօրութեամբ ձայնիւ սրտի գոչեցից առ քեզ և
ժտեցից. Հա՛ն յինէն զամենայն չարիս իմ, և լից
շնորհօք քովք: Լսելի արա ինձ զձայն քո, և զիս
հնազանդ ունկնդիր ձայնիդ, կակղելով զխստու֊
թիւն սրտիս. զի մի ևս մատն եղեց սիրոյ քում:

Ապաշաւեցից զապերախտութիւն իմ, որով
մերժեցի զայնքան սիրայորդոր ազդեցութիւնս
Աստուծոյ յիս. և 'ի վտանգս փորձութեանց
լուայց զձայն Յիսուսի՝ որ ասէ ցիս որպէս ցՅու֊
դա. Ա՞յդպէս մատնիցես զիս:

ՃԺ. Մօտ մատուցեալ Յուդայի առ Յիսուս՝
փարի բաղկօք զպարանոցաւն, երես առ երես
հպեալ չփէ, և համբուրէ զդէմսն: Իսկ զի՞նչ
Յիսուս ասէ, զի՞ գործէ, կամ զիա՞րդ վարիցի
ընդ անարժանին, որ յայնքան յանդգնութիւն
ժամանեաց, մինչև զնշանակն գործանաց՝ զհամ֊
բոյր՝ փոխել 'ի նշան անլուր չարութեան, ըզ֊
նշանն հաշտութեան՝ 'ի լուծիչ հաշտութեանն՝
զոր երդուեալն էր նմա ուխտիւ առաքելու֊
թեանն: Ո՛վ անմեղունակ գառն Աստուծոյ, զիա՞րդ
հանդուրժես փարելոյ և գիրկ ընդ խառն լինե֊
լոյ ընդ քեզ՝ գեհենաշատ գայլուդ:

Եկայք զուարթունք արքայութեան, տեսէք և զարմացարուք ընդ բարութիւն, ընդ գթութիւն և ընդ քաղցրութիւն Քրիստոսի։ Ոչ խորշի, ոչ 'ի բաց դարձուցանէ զաստուածային դէմսն՝ յանիծակուռ 'ի դառնալից չրթանց անտի՝ որ զդեւս անգամ բաւական էին զզուեցուցանել. ոչ մերժէ զհամբոյրն, այլ ամենևին հեզութեամբ ընդունի. և հաշտ երեսի ընդ նմա՝ որ յամառեալ մերժէր զհաշտութիւն նորա։ Աստուածեղէն իմն արդարև երկայնմտութեամբ համբերէ Յուդայի, նաև 'ի վերջնումն ժամու. և 'ի նմին իսկ 'ի պահու մատնութեանն՝ հառաչանօք և արտասուօք կոչէ զնա 'ի դարձ ապաշխարութեան. այլ 'ի զուր։ Գիտէ և Փրկիչն, զի ոչ կամի ամպարիշտն այն ստրջանալ. այլ իւրովսանն ոչ կասի, առաւել ևս յաճախէ զգութն. և վեհագոյն խորհրդով թոյլ տայ մատնչին, զի և ինքն կատարեսցէ զպաշտօն Փրկչի։

Եւ զի՞նչ աստի օգտեսցուք, հոգի իմ։ Թողցուք 'ի բաց զՅուդայ՝ զառածեալ 'ի խստասրտութեան իւրում, և սքանչասցուք ընդ ամենագութ ողորմութիւնն Յիսուսի. և հաճոյական և մխիթարական խորհուրդ մի զմտաւ ածցուք. Եթէ յանձն էառ Յիսուս թոյլ տալ զի համբուրեսցէ զնա մատնիչն, նենգաւորն սրբապղծն և խստասիրտ, որոյ զթոյն դառնութեան ունելով 'ի շրթունս իւր՝ դայր համբուրիւ մատնել զնա, զիա՞րդ ոչ յօժարագոյնս ևս ընդունիցի համբոյր 'ի նմանէ՝ որ զղջացեալ սրտիւ, և անձկանօք սիրելոյ և հնազանդելոյ նմա՝ մատչիցի առ նա։

Աստուած իմ, որ հաճեցար աստուածութեամբ քով համբուրիլ ընդ մարդկութեան իմում 'ի մարդեղութեան քում, աղաչեմ զքեզ մի մերժեր զփափագ իմ վասն անարժանութեան

իմոյ: Հազարս համբուրից սիրոյ մատուցանեմ քեզ հոգւով իմով. ով Յիսուս Փրկիչ իմ փառաւորեալ, և 'ի մէն մի համբոյր վերընծայեմ քեզ զսիրտ իմ: Բազում անգամ ետու քեզ համբոյր մատնոտու. ցաւէ ինձ ընդ այն յոյժ. այժմ ապաշաւելով մատուցանեմ համբոյր խոնարհութեան, յուսոյ ապաւինութեամբ՝ զի ողորմութիւնք քո ներեսցեն, օգնեսցեն և կեցուսցեն զիս: Եղիցի, եղիցի:

Յաճախեցից աղօթս հոգեթռիչս, որ արձակմունք են և համբոյրք ըղձանաց սրտի: Քանի՜ համբոյրս սիրոյ ոչ կարիցեմ տալ Յիսուսի յամենասուրբ հաղորդութեան: Լիցին համբոյրքն այնոքիկ մաքրագործք և եռանդունք:

ՃԺԱ. Վարդապետ կոչելով ողջունեաց Յուդա զՅիսուս. Յիսուս մարդասիրաբար դարձուած առնէ ողջունին՝ կոչելով զնա բարեկամ: Վասն որոյ և չէ անհաւան՝ եթէ և ըստ անբաւ գթութեան իւրում՝ կշռեաց նմա համբոյր, առ 'ի հրաւիրել զնա յապաշաւ սրտի այնու սիրալիր պաշտամամբ: Այլ քանի՜ խտիր ընդ համբոյր մատնչին և ընդ փոխադարձ համբոյր Փրկչին: Յուդաս համբուրելով մահ նիւթէ Յիսուսի. Յիսուս համբուրիւ իւրով փափագէ կեանս պարգևել Յուդայի: Յիսուս համբուրիւ Յուդայի ընդունի զնշան մահուան իւրոյ. իսկ Յուդաս ոչ կամի 'ի համբոյրն Յիսուսի ընդունել զառիթ կենաց: Ո՜վ, որպիսի՜ գթութիւն Յիսուսի. ո՜վ, որպիսի՜ խստութիւն Յուդայի:

Խոկասցուք և զողջոյնն, զյետին զայն ճիգն գթութեան և նախանձու Յիսուսի՝ որով ջանայր յապաշխարութիւն ածել զՅուդա: Ո՜վ անճառելի ողորմութեանն: Բարեկամ կոչէ զնա, և սիրալիր իմն սաղրանօք զգայուցանէ զի սիրէ

զնա: Ապա տանէ այնու կոչմամբ՝ եթէ չար է նմա զանձն թշնամի առնել Աստուծոյ, և առձեռն պատրաստ երևեցուցանէ նմա զներումն թողութեան. ընձեռէ նմա և զբարեկամութիւնն, միայն եթէ կամիցի ընդունել պայմանաւ զղջանալոյ ընդ նենգելն զնա: Այլ Յուդաս և յետ այնքան ցուցակութեանց սիրոյ մարդասիրին Աստուծոյ, ապառում քան զգազան վայրենի կայ մնայ անաեղխտալի: Իսկ աստուածայինն Իրաւունք՝ արդարանայ 'ի գերագոյն դատաստանի Իւրում. և անօրէնութիւն Յուդայի դատապարտ լինի 'ի բովանդակել դատի Իւրում:

Յաստուածային սիրոյ գթութեանն՝ յորմէ ոչինչ օգտեցաւ Յուդաս, օգտեսցուք մեք, հոգիդ իմ: Առ ընդ միտս մտանել բարեկամութեամբ մեծամեծաց երկրի՝ քանի դժուարութեանց տանին մարդիկ. իսկ առ 'ի լինել բարեկամ թագաւորին փառաց, ինքնակալին տիեզերաց, Տեառն իմոյ Յիսուսի Քրիստոսի, իմ իմիք պիտոյ իցէ: — Շատ է թէ կամեցայց միայն: Զսէր իմ խնդրէ նա. և այսու եւեթ լինի ինձ բարեկամ, թէ կամեցայց: Եւ ընդէ՞ր դանդաղիցիմ հաստատել ընդ նմա սերտ բարեկամութիւն, որով միայն հնար է ինձ լինել երջանիկ և 'ի կենցաղումս և 'ի յաւիտեանս:

Ո՛վ անբաւելի անարգամեծար գթութիւն: Հաճիս դու, Յիսուս, լինել իմ բարեկամ: Դու Որդի Աստուծոյ Բարձրելոյ՝ կամիցիս լինել բարեկամ իմ՝ որդան միոյ անարգի: — Արդարև վաճառեցաւ Յիսուս 'ի Յուդայէ, և գնեցաւ 'ի Հրէից. այլ ոչ Յուդայի և ոչ Հրէից է նա՝ որ վաճառեցաւն և գնեցաւ վասն իմ: Նա իմ է ամենևին, իմ բարեկամ, իմ սիրելի. և ինչ ոչ խնդրէ յինէն՝ բայց միայն զսէր իմ: Ծանիր, հոգի իմ, զպատուականութիւն դորա. սիրեա

զսիրողն քո. 'ի փոխանակութեան անդ սիրոյդ առ սէր՝ գացես զքո ամենայն ինչ։ Քանզի և տղջիցէ քեզ բարի ինչ գործել՝ այնքան և համբոյրս ընծայէ քեզ։ Հատո՛ սէր սիրոյ նորին։

Հաստատեսցիս զբարեկամութիւն ընդ Յիսուսի, նորոգելով զառաջադրութիւն մտացդ և՛ առ 'ի չառնել ինչ հակառակ կամաց նորին, և առ հաճել զկամս նորին յամենայնի՝ հետևողութեամբ առաքինութեանց, որք յանդիման ինձ լինիցին 'ի հանդիսի չարչարանաց իւրոց։

Ըմբռնումն Յիսուսի 'ի Պարտիզին.

ՃԺԲ. Այն ինչ ընկալեալ Յիսուսի զհամբոյրն տուեալ 'ի Յուդայէ 'ի նշան, անդէն գրոհ տան դիմեն Հրեայք 'ի վերայ նորա, և շուրջ պատին որպէս գազանք ամեհիք։ Այլ մեր 'ի բաց թողեալ աստանօր զկատաղութիւն և զանգթութիւն նոցին՝ հայեսցուք 'ի գթութիւն և 'ի սէրն Քրիստոսի. որ ամենայն խնամով զգուշանայ յապահովել զառաքեալսն. և զժանտութիւն թշնամեացն յինքն միայն ձգել կամելով՝ հրամայէ սիրական բարբառով, մի՛ զոք որ ընդ իւրն էին՝ նեղել։ Յանձն առնու հովիւն բարի զի ինքն յօշոտեսցի 'ի գայլոց անտի. ամենայն փոյթ խնամոցն է 'ի վերայ գառանցն, անկորուստս և անարատս պահել զնոսին։ Եւ արդարև և ոչ մի յաշակերտաց անտի 'ի բուռն անկանի կամ վըտանգի. ոչ իբրու զի չիցէ և ընդդէմ նոցա գազանացեալ Հրէիցն սրտմտութեամբ, — նա մանաւանդ որք զՅիսուս իբրև զչարագործ եկեալ էին ըմբռնել, հաւանելի է թէ և զառա-

քեալսն՝ որպէս զգործակիցս կամին ձերբակալ առնել, — այլ զի այս պատուէր էր ամենակարող Աստուածամօրդոյն, որ գիտէ և կարէ հնազանդեցուցանել զամենայն ոք, երբ և որպէս և կամի։

Միտ դիր, զոր ինչ արար Յիսուս 'ի պարտիզին անդ՝ պահելով զառաքեալսն, զնոյն առնէ հանապազ յեկեղեցւոջ, պաշտպանելով զհաւատացեալս իւր. օրինակ մի մեր էին յայնժամ առաքեալքն։ Ո՛վ, որպիսի՜ քաղցր և գեղեցիկ պատճառք ես քան զևս նուիրելոյ զանձինս առ Յիսուս։ Պատանդոյն թշնամիք յաւիտենական փրկութեան մերոյ՝ դեւքն են, նախանձաբեկք և հանապազորդ դարանեալք 'ի կորուստ մեր. այլ եթէ համօրէն իսկ դժոխք զինեալք յարիցեն 'ի վերայ իմ՝ ես ուստի՞ երկեայց, եթէ ընդ իս իցէ Յիսուս։ Զոր օրինակ չիք ոք ատաւէն այնմ՝ որ Աստուծոյ ատելի իցէ, այսպէս և որում միամտութեամբն ծառայէ նմա՝ չիք ուստեք վտանգ։

Չի՞ք քան զայս ինձ խոկումն մխիթարիչ, ո՛վ ամենազօր Տէր իմ Յիսուս։ Շատ է ինձ զմտաւածել զախրարկու պաշտպանութիւն քո 'ի վերայ իմ՝ մինչ թշնամանէի զքեզ, առ 'ի տածելոյ յիս աներկբայ վստահութիւն, թէ ոչ զրկիցես զիս երբէք յօգնականութենէ քումմէ, եթէ երթայց զհետ քո և սիրեցից զքեզ բոլորով սրտիւ։ Ո՞չ բազում անգամ փորձեաց զիս սատանայ և յաղթել ոչ կարաց, քանզի դու պաշտպան կացեր ինձ։ Ո՞չ բազում անգամ 'ի մեղանչել իմում չարայօժար կամօք՝ կլեալ էր արդեօք զիս վիշապն դժոխորովայն, եթէ ոչ էր քո պահպանեալ զիս։ Յանկացեալ փափագեմ ես ամայն յաւիտենից 'ի կեանս հանդերձեալս՝ յօրհնել զքեզ և գոհանալ զքէն միշտ և հանապազ. և

այժմ լի յուսով գթութեանց քոց՝ պաղատիմ քեզ օգնել ինձ ընդդէմ ամենայն թշնամեաց հոգւոյ իմոյ, աշխարհի, սատանայի և մարմնոյ: Ցանկամ կեալ ընդ հովանեաւ քով, Տէր իմ Յիսուս, որ ապաւէն է կենաց, ուր ամենայն աներկեան վայելքն են:

Ի փորձութիւնս՝ յԱստուած միայն անկ է ինձ յուսալ, զի առ 'ի նմանէ միայնոյ է ամենայն օգնութիւն. իսկ ես բազում անգամ գթեմ, և կործանիմ, քանզի յիս և յառաջադրութիւնս իմ լինիմ ապաստան, և ոչ խոնարհիմ առ Տէր միայն գտնել զլոյս իմ:

ՃԺԳ. Իբրև յանձն առնու Յիսուս ձերբակալ լինել՝ թոյլ տալով նոցա, բուռն հարկանեն 'ի նա Հրեայքն. իսկ Պետրոսի վառեալ ջերմաջերմ նախանձու՝ յառաջ մատչի պաշտպան կալ նմա. և զի բերեալ էր ընդ իւր սուսեր, թերևս 'ի կատարումն խոստմանն զոր երդմամբ խոստացաւ, 'ի կենաց ևս անկանել՝ քան թէ ուրանալ, կշռէ հարուած 'ի գլուխ միոյ ուրուք յամբոխէն՝ որ յանդգնագոյն քան զայլսն թուէր, և 'ի բաց հատանէ զականջն. գործ մեծի արդեանց համարելով պաշտպանել զաստուածային զիւր վարդապետ: Այլ թէպէտև բարւոք էր դիտաւորութիւն մտաց Պետրոսի, և արդար պատճառքն, կշտամբէ զնա Յիսուս և ծանուցանէ, զի թէ կամէր ինքն պաշտպանել անձին, ոչ անկարողանայր ածել 'ի թիկունս բովանդակ գունդս հրեշտակաց: Ոչ զանձն փրկել նկրտի Յիսուս՝ այլ զմեզ փրկել: Վասն այնորիկ ոչ պաշտպանէ անձին՝ իբրու անկարող ոք, այլ զի ոչ կամի. և կամի ոչ, առ 'ի հնազանդել Հօրն յաւիտենականի, և տալ մեզ օրինակ հեզահամբոյր համբերութեան:

Ոչ վայրապար ինչ չարափրեցին աւետարանիչքն զգործ Պետրոսի. հարկ է ինձ ընդունել զայդ որպէս խրատ վարդապետութեան: Բազում անգամ օրէն է պաշտպանել անձին՝ ըստ աշխարհական բնութեան. այլ, ո՛հ, քանի՜օն ես լաւագոյն է ըստ օրինակին Յիսուսի՝ համբերել անարգանաց քան թէ հակառակ կալ: Դժուարաժուժելի իմն դիւցազնութիւն թուի, և ամենայն զօրութեանց առաքինութեան կարօտ՝ կարելն և ոչ կամելն պաշտպանել զանձն. այլ զի՞րդ չիցէ առ այդ բաւական՝ մի ևեթ սիրահայեաց ակնարկութիւն առ Յիսուս, որ ամենայնի կարող է և զամենայն հնարի 'ի պաշտպանել զիւրսն, և վասն անձին պաշտպանութեան չէ ինչ նմա փոյթ:

Զանձն իմ խաբեմ մեծ ինչ համարելով և զդուզնաքեայ իմն մեռելութիւն բռնացելոյ յիս անձնասիրութեան. և մի՞թէ կեանք և պատիւ որդանս աղկաղկի՝ իցե՞ն մեծագոյն քան զկեանս և զպատիւ մարդացելոյն Որդւոյ Աստուծոյ, զի այնքան նախանձեցայց վասն իմ: Դուն ուրեք պատահէ պէտք լինել անձին կենաց պաշտպանութեան. այլ սակայն պատահեն ինձ առիթք յոյս կամիմ և ջանամ պաշտպանել զանձն իմ, մերթ 'ի կարծիս ինչ, մերթ 'ի պահանջանս, մերթ 'ի սադրանելն զիս, մերթ 'ի լուր երկուբանի որ խոցոտիցէ զիս. և յայն պայման ժամանեմ, զի նախանձ և պարտս խղճի համարիմ տալ պատասխանի խոցոտչին, ուր արդիւնական ինձ լինէր յոյժ լռելն և համբերութեամբ կրել: Ո՛վ Փրկիչ իմ, Տէր իմ և Աստուած իմ, հայցեմ 'ի քէն զշնորհս լռութեան և զօրութեան՝ զոր հեզութեամբ քով ստացար վասն իմ:

Պատուականագոյն է բան մի լռել վասն սիրոյն Աստուծոյ, քան հազարիւր բան վայելուչ և արդա-

րակ 'ի պաշտպանութիւն անձին իմոյ. առ 'ի կրթութիւն այսմ իմաստի՝ յիշեցից զօրինակն զոր ետ Յիսուս:

ՃԺԴ. Ազդ արարեալ Յիսուսի առ Պետրոս զի ոչ կամի զինուք պաշտպանիլ, մատչի առ որ հատեալն էր ականջն, հպի ձեռօքն և բժշկէ բոլորովին. ոչ միայն հեզ այլ և բարեգործ առ թշնամին երևելով: Կարէր և լուելեայն իշխանութեամբ բժշկել, այլ կամեցաւ զձեռն 'ի գործ արկանել, որպէս զի և յայտնագոյնս երևեսցի նշանն, և ծանիցի զի ինքն է մարդ և Աստուած, որ հպի և բժշկէ. և բժշկէ զմարդն ձեռամբ՝ որով ստեղծն զնա:

Ո՞ր քան զայս մեծագոյն համբերութիւն և բարութիւն կայցէ: Սքանչելիս արդարութեան արարեալ էր փոքր մի յառաջ՝ զգետնելով զթըշնամին. այժմ զողորմութեանն գործէ, բժըշկելով զվէրս միոյ 'ի նոցանէ, զյանդգնելոյն քան զբնաւս՝ որ խիզախեաց յիւր վերայ յարձակել: Ցուցանէ նշան համբերութեան՝ բարի փոխանակ չարի հատուցանելով, և առողջութիւն պարգևէ այնմ որ եկեալ էր 'ի մահ վարել զինքն: Ո՜վ սքանչելի դաս և խրատ ուսման, թէ որո՞վ օրինակաւ արժան է և ինձ վարել ընդ չարակամս իմ: Բանիւք վարդապետեալ էր Յիսուս, եթէ պարտ է բարիս առնել ատելեաց, և արդ օրինակաւ զնոյն ուսուցանէ:

Քանի՜ քանի ցոյցս բարերարութեան չունիցիմ և ես յիս ինքն առ 'ի յԱստուծոյ. այլ ես, Աստուած իմ, ցարդ ատելութեամբ եւեթ բերայ առ քեզ. իսկ դու հանապազ բարիս առնես ինձ: Այս գործ ողորմութեան քո է, հատուցանել բարի ընդ չարի. իսկ իմ գործ ապերախտութեան՝ հատուցանել չար ընդ բարւոյ: Ո՜վ գերազանց

քումդ բարութեան. ո՛վ յեռանաչար իմս անօրէնութեան: Եւ մինչեւ ցե՞րբ դառնացայց առ քեզ. փոխանակ զի այդքան քաղցր ես դու առ իս: Զիջէ ինձ ընդ ապերախտութիւն իմ մեծ. օգնեա ինձ, Տէր, շնորհօք քովք երախտահատոյց քեզ լինել. բժշկեա և զունկն հոգւոյ իմոյ, դիւրալուր լինել ձայնի պատգամաց քոց և հնազանդել. որպէս զի մացեն կեանք ընդ ականջս իմ, որպէս եմուտ մահ ընդ ունկն Ադամայ: Այլ տուր ինձ, Յիսուս, և ոգի նմանութեան քեզ 'ի բարի առնել ընկերաց: Քանզի ես՝ եթէ զկծանիցէ ինչ ոք զիս՝ իսկոյն վառիմ նախանձու վրէժխնդրութեան. և եթէ ոչ լուծանիցեմ զվրէժ իմ՝ սակայն խանդամ ընդ նա. տրտմիմ ընդ բարիս նորա, և խնդամ՝ եթէ չար պատահիցէ նմա: Զհամբերատարն գթութեան՝ որ քաղցրն է և բարերար, և բարի փոխանակ չարի հատուցանէ, չունիմ և զստուեր անգամ. և սակայն լաւութիւնս այս կարեւոր է յոյժ ինձ որպէս քրիստոնէի: Վասն այսորիկ խնդրեմ 'ի քէն, Փրկիչ իմ ամենագութ, զօրացո զիս շնորհօք քովք առ 'ի նմանել քեզ. որպէս զի ոչ թէ միայն վասն սիրոյ քո սիրեցից զբարիս, այլ ջանացայց և առնել բարի ամենայնի որ չար ինչ ինձ առնիցէ: Քեզ յանձն առնեմ, Տէր, զամենեսին որք վնաս ինչ հասուցին ինձ. օրհնեա զնոսա, և տուր նոցա բարիս, և ես ուրախ եղէց ընդ այն:

Եթէ ոչ գտից այլ հնարս բարի առնելոյ այնոցիկ որք արարին կամ կամեցան առնել ինձ չար, աղօթս մատուցից առ Աստուած վասն միոյ միոյ 'ի նոցանէ: Պարտք են այս, զոր և հատուցից ըստ օրինակին Քրիստոսի:

ԾԺԵ. Տեսանէ Պետրոս զհեզութիւն, զգթու-

թիւն, զբարերարութիւն Յիսուսի 'ի սքանչելիս ունկանն կորուսելոյ և վաղվաղակի բժշկելոյ. և տակաւին ոչ հանդուրժէ հանդարտել հաւանել, զի Որդին Աստուծոյ այնպէս անարգաբար անկցի 'ի ձեռս թշնամեաց: Մեծ են հաւատք և սէր Առաքելոյն՝ առ աստուածային վարդապետ իւր. և ծանր է նմա յոյժ տեսանել զնա 'ի մահ երթալ: Այլ ոչ վասն այնր ինչ յանդիմանէ զնա Յիսուս՝ որպէս երբեմն. այլ միայն դարձեալ 'ի նա՝ ասէ քաղցրութեամբ. «Զբաժակն զոր ետ ինձ Հայր՝ ո՞չ ըմպիցեմ զնա»:

Մտօ դիր նախ, զի՞րդ բաժակ կոչիցէ Քրիստոս զչարչարանսն, զոր վասն լայնութեանն և դառնութեանն՝ ծովու նմանեցուցանէին մարգարէքն. իսկ ինքն բաժակ կոչէ, քանզի առ սէր նորա փոքր թուին ամենայն չարչարանք իւր. առ սաստկութեան ծարաւոյն՝ ծով չարչարանացն բաժակ մի համարեալ է նմա. և անձկայ պահուն քամելոյ զայն մինչև ցյատակ՝ որպէս թէ լցեալ իցէ քաղցրութեամբ: Սիրոյ յատուկ է այս, առ ոչինչ գրել զամենայն վտանգ, զամենայն նեղութիւն. վասն այնորիկ յերթալն 'ի չարչարել և 'ի մեռանել վասն մեր՝ քաղցր թուի Յիսուսի չարչարանացն բաժակ:

Մտօ դիր դարձեալ, զի Յիսուս բաժակ իւրն համարի զչարչարանսն, այսինքն է պարգև պատուական, չնորհազարդ և սիրական՝ ընծայեալ նմա առ 'ի Հօրէն: Խորհեցի՛ր եթէ այսպէս սահմանեաց Հայրն յաւիտենական, զի չարչարեսցի նա ոչ 'ի բռնութենէ հարկի այլ կամաւոր յօժարութեամբ և առ բարեգթութեան իւրոյ ևեթ, այնպէս քաջալերէ զնա, մինչև համարել զչարչարանսն ըմպանակ իւր ոսկեղէն՝ լցեալ ամենահամ օշարակաւ:

Դեղեցիկ աւիլժ և օրինակ ինձ նմանութեան

և մխիթարութեան: Այսպէս անկ է և ինձ առնել 'ի պատահարս վշտաց իմոց. համարել տուրս շնորհաց և ողորմութեան Հօր իմոյ երկնաւորի. և առեալ 'ի բերանոյ Յիսուսի զբանս նորին՝ ասել նմա խանդաղատեալ սրտիւ. Զիա՞րդ ոչ ըմպիցեմ ես զբաժակն զոր առաքէ ինձ աստուածային հայրն իմ. հայրն որդեսէր քան զամենայն հարս. միշտ հայր, և 'ի տալն և 'ի բառնալ զբարիս աջողակս: Զայս պարտ է ինձ ասել. այլ ես ոչ այսպէս ասեմ, Աստուած իմ. այլ համարիմ զնեղութիւնս՝ կամ դժնդակ բաղդի արդասիս, կամ չարութեան մարդկան. և վասն այնորիկ ոչ զիջանիմ համբերել նոցին: Ո՜վ Հայր իմ, որ ինքնին իսկ կարողութիւն ես, իմաստութիւն և բարութիւն, արծարծեա զմիտս իմ հոգւովդ քով, վառեա զսիրտ իմ սիրովդ քով, որպէս զի յիշեցից զքեզ 'ի տառապանս իմ, և ընկալայց զայնոսիկ 'ի պաշտելի ձեռաց քոց, և կրեցից յօժարութեամբ 'ի փրկութիւն իմ և 'ի փառս քո:

Զի՛ք օր յորում թէ ոչ պատահիցէ ինչ հակառակ անձին սիրոյ. այլ ինձ բերկրանք լիցին կրել զամենայն վիշտ նեղութեան, եթէ կրթեցայց ամբառնալ և յանձն առնել զսիրտ իմ առ Աստուած:

ՃԺԶ. Արժան է նկատել զՅիսուս 'ի պահու անդ կալանացն. զիա՛րդ անդորր սրտիւ և զուարթագին դիմօք խօսի մերթ ընդ Յուդայի, մերթ ընդ առաքելոյն և մերթ ընդ Հրէից: Որպէս թէ ոչինչ իրք իցեն վասն իւր, չունի այլ ինչ 'ի մտի՝ բայց օժանդակել հոգւոց՝ վարդապետութեամբ, սքանչելեօք և օրինակաւ: Տեսանէ զժողովրդապետսն՝ զի յառաջամատոյց լինին ձեռն արկանել 'ի նա, և յիշեցուցանելով նոցա քաղցրութեամբ զխրատսն փրկականս որ 'ի տաճա-

րին, ընդէ՞ր, ասէ, կամեցարուք այդպէս բըռնութեամբ ունել զիս, որպէս զաւազակ մի. 'ի զուր վայրապար է ձեզ զինուորութիւնդ. և զի՞ ձեզ պիտոյ զինուց առ ըմբռնել զայր մի՝ որ ոչ կայ ձեզ հակառակ, այլ ինքնակամ տայ զանձն 'ի ձեռս ձեր. զորօրինակ ոչ կալարուք զիս 'ի տաճարին՝ քանզի ես ոչ կամեցայ, և ոչ այժմ ինչ ըմբռնէիք՝ թէ ոչ էր իմ կամեցեալ: Այսչափ ինչ ասէ 'ի վերջնումն խրատու, որով կարող լինէին ամենեքին նոքա 'ի միտ առնուլ և ճանաչել զնա Աստուած: Այլ սակայն նոցա ոչ զբարիս նորա անցեալս ածեալ զմտաւ, ոչ յայժմու իսկ 'ի սքանչելեացն բարերարութեան, գթութեան և ողորմութեան՝ պատկառեալ, այլ կուրացեալք չարութեամբ իւրեանց, 'ի նմին իսկ 'ի գիշերին յորում կատարեցին պասեքան զտարեկան ազատութեան իւրեանց յԵգիպտոսէ, յամառութեամբ մոլեգնեալք ընդդէմ աստուածային ազատչին՝ առաւել ևս կատաղեալ զայրանան:

Ո՜հ վատշուէր Հրէայք... այլ դիպողագոյն ևս է ասել, ո՜հ, անձն իմ վատթար. քանի՞ցս մինչդեռ փորձութիւն կամ ցանկութիւն գըրգռէր զիս 'ի մեղս, շնորհեցաւ ինձ լոյս ճանաչելոյ զներկայութիւն և զբարերարութիւն Աստուծոյ իմոյ. լոյս՝ որ ցուցանէր ինձ զծանրութիւն մեղացն և զգուշացուցանէր 'ի մեղանչելոյ. իսկ ես տակաւին ըմբոստացեալ և ապըստամբեալ՝ ըստ նմանութեան ժանտագունից 'ի դատապարտելոցն՝ գործեցի զմեղսն: Զդայի ըղխայթ գիտակցութեան, և ճանաչէի զմեծամեծ տուրս քո, Աստուած իմ. գիտէի զի չար գործեմ յանարգել իմում զքեզ. և սակայն առ ոտն հարեալ, և զայն ժամու առձեռն պատրաստ բարութիւն քո, միայն սակս չարութեան իմոյ մեղայ քեզ:

Եւ արդ որո՞վ երեսօք, Հայր ամենագորով, իշխեցից ամբառնալ զաչս իմ առ քեզ, յետ այնքանեաց ապաշնորհութեանց և կամակորութեանց, և մեղանչելոյ քեզ 'ի նմին իսկ 'ի պահու՝ յորում զգայի յիս զազդմունս սիրոյ քոյ բարերարի: Չեմ ես արժանի ողորմութեան. այլ դու, ո՜վ Փրկիչ իմ ամենասուրբ, արժանի եղեր նմին վասն իմ. յարդիւնս քո ապաւինեալ՝ արդ հայցեմ զայն. և յարդեանց քո՛ց ակն ունիմ այդմ. և յուսամ ոչ միայն գործեցելոցս մեղաց թողութիւն գտանել, այլ և օգնականութեամբ քով հզօրիւ՝ ոչ ևս մեղանչել: Յաճախեա ինձ, Աստուած իմ, զողորմութիւնս քո, և տուր ինձ յարգել զնոսին՝ 'ի փառս քո վարելով նոքիմք 'ի գործս իմ:

Եթէ ոչ կարիցեմ յամենայն յանցանաց զգուշանալ առ դիւրասայթաք բնութեանս, ջան եդից գէթ 'ի չարաչար կամաց փախչել, որով գիտաստութեամբ գործին մեղք. և յայտնի է յայդմիկ ապերախտութիւնն՝ որ զդէմ ունի մտաց լուսաւորելոց յԱստուծոյ:

ԾԺԷ. Անհնար էր ըմբռնել Յիսուսի 'ի Հրէից՝ եթէ չէր նորա կամեցեալ. այլ եթէ չէր նորա զայն կամեցեալ՝ զի՞նչ լինելոց էր մեզ: Կամաւ իսկ եկն 'ի պարտէզն զի ըմբռնեսցի, վասն այնորիկ և թոյլ ետ նոցա: Իսկ անօրինացն այն ինչ 'ի բուռն արկեալ զնա՝ վաղվաղակի մոլեգնեալք որպէս գիշատիչս յարձակին 'ի վերայ նորա. զանգիտեալք թէ գուցէ փախիցէ 'ի ձեռաց իւրեանց, վասն որոյ պարանօք և շղթայիւք կապեն զնա բովանդակ: Ամենեքին խնդան և զուարճանան, և զմիմեամբք ելեալ ջանան ամենայն ոք 'ի նա հասանել, որպէս զի պարծեսցի ձերբակալ զնա առնելով: Հարկանեն զնա բռնցի,

և բրօք և սուսերօք. ընդ երկիր քարշէին, տաւ աթաւր հարկանէին, և տանէին ընդ նոսա որպէս ընդ մեծեղեռն չարագործի:

Հոգի իմ, բաց զաչս մտաց քոց, և տես զաստուածային Փրկիչն յայգեստանն նախատինս: Աղէ հայեաց, զիա՞րդ ժուժայ անդիմանակալ. ոչ պատասխանէ անձին, ոչ ինչ խօսի, և թողու տայ տանել ընդ ինքն զինչ և կամիցին, որպէս ապիկար ոք և ապաուշ: Ուրախանան Հրեայքն լցեալք ատելութեամբ և սրտմտութեամբ՝ զի ձերբակալ արարին զնա. խնդայ և Յիսուս լցեալ համօրէն սիրով առ Հայրն և առ մեզ, զի ահա հասեալ է ժամ չարչարանացն՝ որում սպասէրն հառաչանօք և անձկութեամբ: Ո՜վ սէր Յիսուսի, սէր 'ի փորձ հանդիսի մտեալ: Ես իսկ եմ յանցաւորն և մեղաւոր, արժանի լուտանաց և լկանաց. և այս զի՞նչ է, Տէր իմ և Աստուած իմ, զի որոց եմ արժանի էի՝ դու զանձամբ առնուս զցաւս և զնախատինս: Զի՞նչ իցէ այս, զի զպարտս անիրաւին հատուցանէ արդարն, սուրբն, անմեղն և անարատ Որդին Աստուծոյ. և հատուցանէ, այդպիսի թշնամանս և տանջանս կրելով: Հիանամ, երկրպագեմ և գոհանամ զանբաւ սիրոյդ, Փրկիչ իմ քաղցրագութ. ոչ ոք՝ բայց սէր քո ած հասոյց զքեզ յեղկելիդ յայդ պայման, սէրդ՝ որ առ իս: Եւ զի՞նչ խնդրիցես յինէն այդքանեօք անհնարապատիկ ցուցակութեամբք սիրոյ:

Ի մտի ած, հոգի իմ, ամենայն զոր կրէ Յիսուս և զոր կրեսցէ յընթացս չարչարանաց իւրոց՝ ուղղեալ է յայս նպատակ միայն, զի և մեք սիրեսցուք զնա: Եթէ և չէր ինչ նորա կրեալ վիշտ՝ էին և այլ անթիւ պատճառք սիրելոյ մեզ զնա յամենայն զօրութենէ. և զիա՞րդ ո՞չ մեծապէս ևս սիրեսցուք վասն դառնակսկիծ չարչարանացն: Ո՜վ Յիսուս իմ, ցաւէ ինձ յոյժ, զի ոչ

վաղագոյն ես սիրեցի զքեզ. այլ արդ կամիմ սիրել. և զի դու ինքն տաս ինձ զյօժարութիւն սիրելոյ, հայցեմ 'ի քէն խոնարհաբար՝ յաւելուլ ինձ և շնորհս այնքան սիրելոյ զքեզ ճշմարիտ հոգւով և մաքուր սրտիւ՝ որքան և կամիդ զի սիրեսցիս զքեզ: Սիրեմ զքեզ այժմ փափագանօք, և խնդրեմ ընդ կատարել զփափագս իմ:

Մի շատացայց այսուքիւք միայն վարկպարազի բազատրութեամբք սիրոյ, այլ՝ նկրտեցայց 'ի յառաւկան. Զայս ինչ գործեաց Յիսուս առ սէր իմ. իսկ ես զի՞նչ կամիցիմ առնել և կրել առ սէր նորա:

ՃԺԲ. Տեսի՛լ զարմանալի. զի՞արդ ոչ լուսաւորի խաւարն 'ի փայլմանէ ամենապայծառ լուսոյն: Այդպիսի են շուառական Հրեայքդ շուրջ պատեալք զՅիսուսիւ. փոխանակ լուսաւորելոյ՝ առաւել ևս մթագնին կուրութեամբ: Անպատում են ըլկանքն զոր ածեն զնովաւ. կապեալ կաշկանդեն զկողս նորա, զպարանոց և զձեռս: Քանի՛ անհամբոյր են վիշտք Քրիստոսի յայդօրինակ կապանաց, որպէս թէ բռնութեամբ վարեալ, մինչդեռ ինքնին կամաւորաբար ետ զանձն 'ի ձեռս նոցա, և յօժար իսկ է երթալ յո՛ և տանիցին: Տանջիլ և մեռանել կապեալ ձեռօք՝ նախատինք մեծ են առ ազնուականի, քանզի վատասրտութեան, բռնաբարութեան և ապիրատութեան է նշանակ: Եւ համարեցի՞մք զՅիսուս անզգայ այսպիսի նախատանաց:

Այլ ոչ վասն այդոցիկ ինչ կապանաց այնքան ցաւէ նմա, որքան զի համարի զանձն, ըստ Մարգարէին, կապեալ բովանդակ 'ի գլխոյ ցոտս դառնագոյն ևս կապանօք: Ամենայն մեղք որ յԱդամայ մինչև 'ի կատարած աշխարհի՝ յեռեալք յարեալք ընդ իրեար՝ պատին զնովաւ որպէս

շղթայ երկայն և ծանրակիր, որ լկէ զնա և մեղկէ, մինչև ոչ կարել կալ 'ի վերայ ոտից: Եւ սակայն արիաբար հանդուրժէ, քանզի համբերութեամբ խորտակելոց է զայն: Յանձն էառ զկապանսն զի արձակեսցէ զհոգիս 'ի կապանաց. և առ 'ի լուծանել զշղթայս մեղաց մերոց չգոյր հնար՝ բայց միայն շղթայակապ լինել նորին ինքեան:

Օրհնութիւն, գովութիւն և գոհութիւն գթութեանց քոց հանապազ, ով ամենակարող Փրկիչ իմ, որ ընկալեալ 'ի մարմնիդ զդժուարակիր կապանսն, արձակեցեր և ազատեցեր զհոգի իմ 'ի գերութենէն՝ յորում անկեալ գնէր: Ազատ էի շնորհօք քովք՝ զոր ընկալայ յաւազանէ մկրտութեան, այլ վերստին կամաւորապէս կապեցի զանձն իմ մեղօք. և ոչ է հնար խորտակել կապանացն՝ բայց ապաշխարութեամբ և մեծապէս զղջմամբ: Վասն այնորիկ աղաչեմ զքեզ, ով բարի Յիսուս, յաւել ինձ զշնորհս արդեանցդ 'ի շարժել զսիրտ իմ 'ի զղջումն, զի կակղեալ լուծցի, յիշելով զթշնամանսն զոր եդ քեզ: Խորտակեա, և շնորհօք զոր վասն իմ ստացար՝ զկապանս և զշղթայս չարաչար սովորութեանց իմոց, որ գերեցուցանեն զիս իմօքս ախտից. և մի թողուր այլ կապանս հոգւոյ իմոյ՝ բայց միայն զքաղցր և զանուշակ կապանս ամենամաքուր սիրոյդ, որովք կապեալ կաշկանդեցայց ընդ քեզ բոլորովիմբ, յամենայնի հետևել քոյոց կամաց և հնազանդել աստուածային քում մեծվայելչութեան: Սէր քո որ առ իս՝ պատճառք եղև չարչարանաց քոց. պտուղ չարչարանաց քոց լիցի սէր իմ առ քեզ:

Ընծայեցից առ Յիսուս զհոգի իմ և զմարմին. և աղաչեցից զնա կապել զիս գլխովին կապանօք կատարելութեան, որ է սէրն սուրբ. որպէս զի

ոչ ևս եղեց կարող այսուհետև շարժել յինչ՝ որ անհաճոյ իցէ նմա :

ՃԺԹ. Ի նկատել զՅիսուս վարակեալ կապանօք, շղթայիւք և լուտանօք, արժան է զմտաւ ածել թէ արդ 'ի գլուխ ել զոր ինքնին կանխաւն ասաց, ըստ բարբառոյ մարգարէին. եթէ կալեալ կապեսցի 'ի մեղաւորաց, և ոչ վասն այլոյ իրիք՝ բայց առ մեղս մեր: Եւ արդ աՀաւասիկ անկեալ կայ 'ի ձեռս մեղաւորաց: Եւ զիա՞րդ ըմբռնեցաւ Ամենակալն, և այդպէս պնդեցաւ 'ի ցաւս: — Ոչ Հրեայքն ինչ զինու զօրութեամբ կալան զնա. այլ սէրն աստուածային անհասանելի խորհըրդովք իւրովք. ոչ բռնութիւն թշնամեաց կաշկանդեաց զնա յակամայս, այլ ինքնին կամաւորաբար, որ այնպէս հաճեցաւ և անօրինեաց:

Ե՛կ արդ, հոգի իմ, և տեսեալ զՏէր քո այդպէս խուեալ և խոտեալ յանզգամաց, զմտաւ ած և հաւատա, զի ոչ առ այլ ինչ յանձն էառ անարգիլ 'ի մեղաւորաց, բայց առ 'ի փրկել զմեղաւորս: Մտցուք պատկառանօք խորհրդածութեամբ յամենասուրբ մարմին նորին, և տեսցուք, զիա՞րդ ամփոփեալ յինքեան զներքին ցաւս հոգւոյն՝ զոր սակաւ մի յառաջ երկնեաց, արդ նուիրէ վասն մեր առ Հայրն յաւիտենական և զցաւս մարմնոյն: Համբուրէ գորովաբար զկապանս իւր, զուարթամիտ լինի ընդ բարձումն ազատութեան մարդկութեան իւրոյ, որպէս զի մեք վայելեսցուք յազատութիւն որդւոց Աստուծոյ: Ոչ խորհի ոչ հնարի փախչել կամ ձողոպրել, այլ միայն զերծուցանել զմեզ և փրկել:

Ո՜վ անհուն բարութիւն, անսահման սէր, անսպառ գթութիւն: Կապանքդ այդոքիկ, ո՜վ քաղցր Յիսուս, կապանք և պատանք են բժշկութեան վիրաց իմոց. ակարութիւն քո՝ զօրու-

թիւն իմ է։ Եւ զի՞ր շնորհս մատուցից քեզ փոխանակ այդքանոյ սիրոյ։ Աւադիկ սիրտ իմ առաջի քո. կամի դա գոհանալ զքէն և սիրել զքեզ. այլ անձամբ անձին չէ իմիք բաւական. Դու ինքն տուր դմա զօրութիւն վասն ամենայնի որ հաճոյն է քեզ։ — Ո՜հ, իցի՜ւ թէ միայն յայնմ պահու անկեալ էր քո, ո՜վ Յիսուս, 'ի ձեռս մեղաւորաց, յորում Հրեայքն անօրէնք կալան զքեզ 'ի պարտիզին. այլ և այժմ և հանապազ կալեալ կապիս և տառապիս 'ի ձեռս մեղաւորաց։ Քանիցս ես ինքնին փոխանակ գթալոյ կարեկցաբար ընդ կապանացդ և լուծանելոյ, յաւելի կապանս 'ի կապանացդ՝ յաւելլով մեղս 'ի վերայ մեղաց իմոց։ Մինչև իսպառ անօրինեցայ և անիրաւեցայ առ քեզ։ Արդ ցաւիմ և զղջամ ընդ ամենայն չարիսն իմ, և հայցեմ ներումն թողութեան։

Եւ դու, հոգի իմ, ունկն դիր արդ ուշի ուշով զինչ ասիցէ քեզ Աստուած քո։ Փափագէ նա ըմբռնել 'ի քէն, այլ այնպէս զի դու փրկիցիս, և մի կորիցես։ Իմաստութիւն և սրբութիւն Աստուծոյ՝ ոչ անօրէնութեամբք ըմբռնին, այլ սիրով։ Եթէ սիրեցից զԱստուած՝ եղեց գլխովին Աստուծոյ, և իմ լիցի Աստուած։ Ո՜վ սուրբ Հոգի, որ սէրդ ես Հօր և Որդւոյ, մասնակից արա զիս այդմ սիրոյ։

Գուն գործեցից վարուն առնել յիս զսէրդ զայդ, յարակրթեալ 'ի զղջումն, 'ի խոնարհութիւն առ աստուածային մեծվայելչութիւն, 'ի յանձնառութիւն կամացն Աստուծոյ, և յուրախութիւն սիրոյ անձինս։

փախուստ Աշակերտացն յըմբռնմանն Քրիստոսի:

ԾԻ. Տեսեալ առաքելոց զամենակարող զօրութիւն Քրիստոսի 'ի պարտիզին՝ 'ի զարկուցանելն յերկիր՝ միով բանիւ եւեթ՝ զգունդ թշնամեացն, և 'ի բժշկել զունկնն հատեալ՝ հպմամբ եւեթ ձեռին, համարէին թէ ոչ ոք 'ի Հրէից իշխեսցէ զգէմ ունել նմա: Այլ 'ի տեսանելն՝ զի թոյլ տայ նոցա և իշխանութիւն ըմբռնել զինքն, նա մանաւանդ ինքնին անձնատուր լինի նոցա, խուպառ վհատին, և արագ արագ 'ի փախուստ դառնան: Արժան էր նոցա գէթ զհետ երթալ և կարեկից լինել ըստ պարտուց հաւատարմութեան և սիրոյ, որպէս և էր նոցա արարեալ յայլ նուագս. և տեսանելով զաքանչելիսն զոր գործեաց՝ անկ էր յուսալ 'ի զօրութիւն Աստուծոյ. այլ նոքա վատութեամբ աչաբեկ լինին: Իսկ Յիսուս բարձի թողի մնայ 'ի տուայտանսն, լքեալ և յայնցանէ զորս առանձինն իմն խնամով սիրեաց և լցոյց բարութեամբք: Պետրոս, Յակոբոս և Յովհաննէս՝ կալով կացին ընդ նմա 'ի Թաբորական լերինն՝ վայելել 'ի ճառագայթս փառաց նորին, և ողջոյն իսկ դաս առաքելոյն ընկերշակեր նմա յընթրիս վերնատանն. այլ չիք որ ընկերակից լիցի չարչարանացն. ամենեքին վարին ընդ նմա որպէս ընդ անծանօթի ումեք: Ո՜վ տկարութեան և անգիտութեան ապաշնոր հոգւոց մնոց:

Այլ 'ի մեզ ինքեանս նախանձայոյզ լիցուք: Ոչ բաւեմ թողուլ մօք, Աստուած իմ, զշնորհս և զբարիս՝ զոր առնես ընդ իս հանապազորդ: Ոչ հայր, ոչ մայր, ոչ բարեկամ, և ոչ այլ ոք այնքան սիրեաց զիս: Սէր քո՝ սէր է յաւիտենական, անբաւ և անհամեմատ: Այլ ես ո՜րպէս յաճախ լքի

Թողի զքեզ՝ առ մարդկան ականէ, կամ առ անօտի երկեղի աժամանակեայ ինչ անհանգըստութեան: Ի յաջողութիւնս՝ հեշտեաւ միաբանիմ ընդ քեզ. այլ ուր դէպ լիցի ընկերել քեզ 'ի ձախողանս, վրէպ գտանիմ 'ի համբերութենէ և յապաւինութենէ. և այնքան ընկճէ զիս վատասրտութիւն՝ մինչև անհաբեկ լինել և 'ի դոյզն ճգանց նուաճելոյ զկիրս մի կամ մեռուցանելոյ զգացուած ինչ: Խոստովանիմ զի ապերախտից ապերախտ եմ ես. և ցաւիմ ընդ ապաշնորհութիւն իմ: — Տո՛ւր ինձ, Տէր, զօրութիւն, մի ևս զանգիտելոյ ընաւ յիմեքէ՝ յերթալն իմում զհետ քո. մի եղեց յայնցանէ որք կան ընդ քեզ մտադիւր՝ ցորչափ ջամբես նոցա սփոփանս և անուշունս, և յառաջին անդ ճաշակ դառնութեան՝ վաղվաղակի 'ի բաց թօթափին 'ի քէն: Ջօդեա զիս ընդ քեզ, և պնդեա հաւատով, յուսով և սիրով. որպէս զի մի մեկնեցայց 'ի քէն՝ վասն որոյ և է աշխարհային իրի, և մի ևս երախտամոռաց եղեց քեզ: Եկ հոգի իմ փախստական 'ի Փրկչէդ, եկ, դարձիր առ նա՝ որ սպասեալ մնայ քեզ և հրաւէր կարդայ, զի ողորմեսցի քեզ: Մի զանգիտեր՝ թէ խոյս տայցէ և նա առ 'ի քէն. քանզի կապեալ կայ, և քան զհրէական մոլութեանն՝ կապանք սիրոյ իւրոյ պնդագոյնս կաշկանդեն զնա:

Աստուած իմ՝ ոչ ինչ նուազ Աստուած է իմ 'ի գիշերի տառապանաց որպէս և 'ի տուընջեան մխիթարութեանց. օրհնեցից զնա յամենայն ժամ. հաւատարիմ եղէց 'ի սպասու նորա, և մի ինչ առ մարդկան ականէ ընդդէմ գիտակցութեանս գործեցից:

ՃԻԱ. Յառաջագոյն իսկ տաց օրհնեալն Քրիստոս, եթէ դրդուեալ իւրոյն 'ի փորձութենէ

և դեդևեալք 'ի հաւատս՝ թողցեն զինքն միայն, հանդոյն գառանց պակուցելոց՝ որոց տեսեալ զհովիւն վտանգեալ 'ի գազանէ պատառողէ՝ այլ անդր խուսափեալ ցրուին: Իդէպ է աստա_ նօր յիշել զի 'ի ծանուցանել աստուածային վարդապետին զայս՝ առաքելոցն, ամենեքին ողն ալեալ յուրաստ կային և ջերմաջերմ նախան_ ձու պնդէին մեռանել ընդ նմին մանաւանդ քան թողուլ լքանել զնա: Այսպէս ասէին նոքա յե_ ռանդան իւրեանց, յետ ճաշակելոյ յամենա_ սուրբ խորհրդոյն և զօրանալոյ աստուածային քանիւն. այլ 'ի հասանել պահու փորձոյն, ո՜հ, զիարդ արագարագ նուաղեցաւ եռանդն, եր_ կիւղ 'ի սիրտսն սպրդեաց, և մնայր մարդկու_ թիւնն փոքրոգի 'ի դիւրաբեկ և 'ի տկար բնու_ թեան իւրում: Այսպէս լիցի այնմ՝ որ 'ի բո_ պէականն աշխոյժս հոգւոյ իւրոյ՝ մեծամեծս խոս_ տանայ, յանձն առնուել քան 'ի պաշտպանու_ թիւնն Աստուծոյ ապաստան լեալ:

Եւ ոչ զայս յանձնե և յիս տեսանիցեմ ներ_ գործեալ: Հազար նուագս և ես յաղօթս իմ, 'ի խոստովանութիւնս և 'ի հաղորդութիւնս՝ առա_ քինութիւնս մեծամեծս արարի՝ առ 'ի կրել և մեռանել՝ քան թէ անջատիլ 'ի սիրոյն Քրիստո_ սի: Իսկ ուստի՞ իցէ զի առաւել քան զհազար նուագ թերացայ թուլացայ և թողի լքի զնա 'ի դէպս գոյզն ինչ փորձութեանց: Եթէ քաջ զանձն իմ քննիցեմ գտանեմ պատճառս իրիք զչարաչար յանձն ապաստան և վստահն լինել, և ոչ բնաւ կամ թէ փոքր մի ևեթ՝ յԱստուած ապաւինել: Շնորհք մերժին յամբարտաւանից, և պարգևին խոնարհաց: Այլ իցէ՞ հնար թէ և յետ այնքանեաց ողբալի փորձառութեանց՝ տակաւին չառնուցում 'ի միտ զչափ անձին իմոյ՝ յանհաստատութեան և 'ի գլորման իմում:

Պարտ և արժան է ինձ յայսմիկ ճանաչել քաջ զհէքութիւն պայմանի վարուց իմոց. և մեծ լիցի այսու ինձ շահ՝ քան թէ զառհասարակ զամենայն գիտութիւնս բովանդակելով 'ի միտս իմ: Ո՜վ, քանի՜ ընդունայն, ընդվայրայած, խուսափուկ և յողդողդ է սիրտս իմ: Ի փորձոյ իսկ զգամ՝ զի յընդունայնութիւն յենում՝ յորժամ յանձն իմ յենում: Եւ երբ ճողոպրեցիմ, Աստուած իմ, 'ի գաղտնի հպարտութենէ սատի իմմէ: Առ քեզ կարկառիմ, և 'ի քեզ յանձն առնեմ զիս. 'ի քեզ գտնեմ զամենայն յոյս իմ. գիտեմ զի ոչ թողուս զիս՝ եթէ ոչ ես ինքն թողից զքեզ: Այլ առաքեա ինձ 'ի թիկունս զշնորհս քո, զի մի՛ ևս թողից զքեզ: Եւ ոչ թողից զքեզ, և ոչ թողայց առ 'ի քէն, եթէ կացից 'ի խոնարհութեան, և ճշմարիտ ծանեայց զանձն իմ:

Յուշ լիցի ինձ հաստատել զառաջադրութիւնս իմ յօգնութիւն Աստուծոյ. քաջիկ հաւանութեամբ, զի յայնժամ ևեթ կատարեցից զնոսին՝ յորժամ ապաւինեցայց յաստուածային օգնականութիւն:

ՃԻԲ. Կարծելի էր փախուստ առաքելոցն՝ այնու, զի մինչ սակաւ մի յառաջ պատուիրեաց նոցա Քրիստոս հսկել և կալ յաղօթս, որպէս զի զօրասցին 'ի դիմի հարկանել փորձութեանց, անփութաբար 'ի քուն մտին ծանրացեալք առաւելի պղերգութեամբ: Ո՛հ, որպէս ճշմարիտ է եթէ դիւրաւ թողու զկրթանս առաքինութեան՝ որ յուլացեալ զանց առնէ զաղօթիւք: Օրինակ այգորիկ են առաքեալքդ, որոց երդմամբ խոստացեալ կալ ցանկ ընդ աստուածային վարդապետին իւրեանց և զմահ իսկ յանձն առնուլ ընդ նմա, մինչ ահա ժամանակ էր սերտագոյնս ընդ նմա կալոյ և գնալոյ, այսր անդր

վայրատեալ ցրուէին. և ցրուէին այն արգասիք են կանխելոյ յուլաբար զանցառութեանն:

Անհնար է փորձութեանց չգալ, և գան յեղակարծումն. և ո՞ր զօրութիւն իցէ մեզ բաւական առ 'ի մերովանն զդէմ ունել նոցին: — Աստուծոյ միայն է տալ մեզ օգնութիւն. և զի որոց խոնարհութեամբ խնդրեն 'ի նմանէ՝ միայն խոստացաւ նա օգնել, ապա առ 'ի չյաղթել 'ի փորձութեանց՝ կարևոր են աղօթք. և փորձ իրացն ցուցանէ՝ զի գթէ և անկանի որ ոչն ապաւինի յԱստուած. այսպէս թոյլ տալով արդարադատն Աստուծոյ. որ, սակայն ոչ զոք լքանէ՝ բայց որ արժանին է լքման:

Իսկ ինձ զի՞նչ լինիցի՝ որ գիտեմս զայս ճշմարտութիւն և յօգուտ ոչ արկանեմ: Գիտեմ զի վամն այսորիկ իսկ բազում անգամ յաղթեցայ 'ի փորձութիւնս, և գթեցի յառիթս՝ քանզի աղօթից փոյթ ոչ արարի. և թէ երբեք արարի՝ և զայն ցրուամիտ խորհրդով և գաղջ սրտիւ, և ոչ ժուժկալելով առ ձանձրութեան: Ո՜վ կուրութեանս և յիմարութեանս իմոյ: Եթէ յաւելից ևս այսպէս անփոյթ լինել աղօթից, որպիսի՞ տագնապ երկեղի հասցէ ինձ 'ի պահու մահուան իմոյ, յորժամ տեսից զայնքան շնորհսն՝ որոց արժանաւորեաց զիս Քրիստոս, տեսից զՀայրն երկնաւոր՝ զի յօժար էր տալ ցիս զայնոսիկ, եթէ միայն խոնարհութեամբ խնդրէի. և տեսից ևս զի չընդունելն իմ զայնոսիկ՝ համարեսցի ինձ մեղք չկամելոյ զնոսին, քանզի չկամեցայ աղօթել: — Աստուած իմ, լուսաւորեա և վառեա զհոգի իմ: Մեծ է յոյժ բարութիւն քո 'ի հաճելդ զի խնդրեցից 'ի քէն շնորհս՝ առ 'ի պարգևել ինձ. իսկ իմ այնքան մեծ է հպարտութիւն և անմտութիւն՝ մինչև և ոչ զդոյզն ինչ առնել, այսինքն է, խնդրել զի ընկալայց զնո-

սին։ Զամենայն ամբարտաւանութիւն ատեա, այլ առաւել ես զաղքատայն. որքան ուրեմն ատելի եցեմ ես, զի այնքան մեծ է աղքատութիւն իմ, որքան և մեծ է հպարտութիւն իմ։ Ողորմեա, գթա, թող ինձ, Աստուած իմ։

Խոնարհն Ճանաչէ զպէտս կարեաց իւրոց, և ոչ ամաչէ ժտել զգթութիւն։ Աղաչեցից զՅիսուս՝ շնորհել ինձ 'ի խոնարհութենէ իւրմէ. և կըրթութիւն խոնարհութեան լիցի աղօթք ընտիր։

ՃԻԳ. Ոչ էր մարթ Քրիստոսի չզգալ ցաւդառնակսկիծ ընդ լքումն յառաքելոց իւրոց և մնալն միայնակ 'ի ձեռս թշնամեաց. ապա իրաւամբք տրտմի և բազում անգամ գանգատի բերանով մարգարէից. մերթ օրինակեալ զինքն 'ի տաղաւար անբնակ 'ի մարդկանէ հողմակոծ և կարկտահար, մերթ 'ի քաղաք լքեալ և ամայի և յաւեր մատնեալ։ Զի զինչ քան զայն ամօթալի կայցէ, եթէ աշակերտքն երկուցեալք լքցեն թողցեն զՈրդի Աստուծոյ. և սիրելիքն և հաւատարիմք, ընտրեալքն և բարձրացեալք յաւագութիւնս եկեղեցւոյ իւրոյ՝ վատօրէն 'ի փախուստ դարձցին, մինչ առաւել քան յայլ նուագս 'ի դէպ էր նոցա կալ հաստատուն ընդնմա՝ քաջալերեալք ամենազօր բանիւ իւրով։

Այլ անկ է մեզ ասել եթէ Յիսուսի առաւել ընդ առաքելոցն ցաւէ՝ որք թողուն զնա, քան ընդ ինքն զի թողու. զի որպէս մեծապէս սիրէր զնոսա, մեծապէս և ցաւի վասն նոցա, Ճանաչելով զմեծութիւն չարին՝ յոր գթէ որ թողու զտէր իւր և զփրկիչ։ Ո՛ հոգիս խնամոտ, որ առաւել քան ընդ անձին՝ ընդ հօտին վտանգս գորովիս։ — Իսկ ես վասն իմ քան վասն առաքելոց քոց խորհիմ զքեն, Յիսուս գորովագութ. զի գոյր թերևս տեղի անմեղադրութեան 'ի նոցա

փախստեանն, որպէս 'ի Ձեծէ և 'ի յանկարծահաս երկեղէ 'ի վերայ եկելոյ, և թերևս 'ի խրատ զգուշութեան մեզ լինիցի 'ի դէպս ինչ. և յորժամ տեսանեմ զնոսա 'ի փախստեան իսկ իրեանց յողբս և 'ի հառաչանս հատանել առ տրտմութեան թողլոյն զքեզ, արժանիս կարեկըցութեան վարկանիմ զնոսին: Իսկ ես զո՞ր չքմեղս ունիցիմ կամ որո՞վ ներելոյ կարեկցութեան արժանի լիցեմ, որ բազում անգամ չարութեամբ լքի թողի զքեզ՝ 'ի թողուլն զպատուիրանս, զվարդապետութիւնս և զօրինակս քո: — Ես, ես ինքն եմ առիթ դառնագոյն ցաւոց քոց, փըրկիչ իմ Յիսուս: Եւ զի՞նչ այլ մնայցէ ինձ, բայց զղջացեալ անձամբ և բեկեալ սրտիւ խոնարհել խնդրել 'ի քէն ներումն թողութեան: Ո՛հ, լցիթէ չէր իմ երբեք թողեալ զքեզ. այլ այսուհետև՝ քոյով օգնականութեամբ ոչ ևս թողից զքեզ, ոչ ևս մեկնեցայց 'ի քէն: Դու ես Ճանապարհ, Ճշմարտութիւն և կեանք. և ո՞ւր երթիցեմ թէ անջատեցայց 'ի քէն, բայց եթէ գահավէժ խորդաւանիլ 'ի վիհս, 'ի խաւար և 'ի մահ: Ո՛վ Յիսուս իմ, տո՛ւր զօրութիւն հոգւոյ իմոյ փախչել սուրբ և եռանդուն արագութեամբ՝ 'ի մեղաց, և առաւել փախչել անտի քան 'ի վիշապէ թունաւորէ. փախչել և յառթից մեղաց: Փախուստս այս եղիցի պատուական և փառաւոր 'ի սրբութիւն անուան քում. և գոհացայց զքէն յաւիտեան վասն շնորհացս այսոցիկ:

Ոչ երբեք այնպէս անգոր և գոհ եղէ՝ որպէս 'ի կեալն իմում հաւատարիմ առ Յիսուս. եգից ապա 'ի մտի՝ կալ հանապազ շնորհօք նորա ընդ նմին, մանաւանդ զի անհնար է ինձ այլ ուրեք լաւագոյն ևս կալ:

ԺԻԴ. Արժան է հաւատալ՝ եթէ ոչ վայրապար

ըստ դիպաց ինչ լքաւ թողաւ Յիսուս միայնակ առանց օգնականի՝ 'ի չարչարանս իւր, այլ ըստ գերագոյն անտեսութեան աստուածային իմաստութեան: Ի ծննդեանն՝ ընկերացան նմա հովիւք. 'ի հարսանիսն, յայլակերպութեանն, 'ի քարոզութիւնսն, և 'ի սքանչելագործութիւնս և 'ի վերնատանն՝ առ ընթեր կային մերձ առաքեալքն և մերձ աշակերտքն. իսկ ուր չարչարանօք զաշխարհի փրկութիւն հանդերձեալ էր գործել՝ կամեցաւ կալ միայնակ, որպէս և յառաջագոյն գուշակեալ էր մարգարէիցն: Էր միայն առանձին յորժամ թաղծեալ հոգւով յաղօթս եկաց և արեան քրտունս եհեղ վասն ամենեցուն. կամի և այժմ միայն առանձինն լինել մինչ երթայ վասն ամենեցուն չարչարանս կրել 'ի մարմնի. զի նմա միայնոյ վայել է գործս այս, մեծագոյն 'ի գործս իմաստութեանն Աստուծոյ: Նա միայն կարէ փրկել զմեզ: Վասն այնորիկ թէպէտ և ընկալաւ ընկերս 'ի գնացս կենաց իւրոց, ոչ զոք կամի արդ յերթալն 'ի կնքել զփրկագործութիւն մեր մահուամբ իւրով: Եւ կարի իսկ վայելուչ. զի ո՞ ոք իշխեսցէ ընդ Փրկչին մատչել 'ի փրկութիւն այլոց, մինչ ամենայն ոք իւրոյ անձինն փրկութեան կարօտի:

Միտ դիր, հոգի իմ. Յիսուս կարէր և կամեցաւ փրկել զքեզ. արժան է և քեզ զնա միայն և եթ սիրել յամենայն սրտէ քումէ: Նա միայն չարչարեցաւ վասն քո, և ոչ ոք եղև նմա հաղորդ 'ի վշտակրութեանն վասն քո. և չիցէ՞ արժան նմա միայնոյ լինել քեզ սիրելի, առանց բաժանելոյ զսէր քո ընդ այլում: — Այո, ամենասիրելիդ Յիսուս. եթէ և բիւր սիրտք էին իմ՝ արժան էր զամենայն պատարագել և նուիրել քեզ միայնոյ, զի դու միայն ես արարիչ իմ և փրկիչ իմ, որում եմ և եղեց պարտական փրկութեան

իմոյ՝ ամենայն անձամբ իմով՝ մինչև յաւիտեան։ Այլ աւա՜ղ, ապերախտ արարածոյս, զի մի ևեթ ունելով սիրտ փոքրիկ՝ և ոչ զայն բոլորովիմբ տամ քեզ։ Յաւէ ինձ արդ ընդ սէր զոր արկի յընդունայնութիւնս՝ յամենայն աւուրս կենաց իմոց․ քեզ անկ էր սէրն այն, զոր ես չամբշութեամբ վատնեցի 'ի չռայլութիւնս և յանիրաւութիւնս։ Եւ երբ սկսայց սիրել զքեզ ճշմարտապէս։ Զպարտս իմ ճանաչել ճանաչեմ, և խիղճ է ինձ այս՝ զի ոչ ըստ մտացս ճանաչողութեան և ըղձակաթ լինիմ․ և այնքան առիթս ունելով սիրոյ՝ ոչ սիրեմ զքեզ, Յիսուս իմ։ Այլ դու ինձ հան խսպառ 'ի բաց 'ի սրտէ իմէ զայլ ամենայն սէր, որպէս զի ազատօրէն լցցի քոյին սիրով։ Տուր ինձ 'ի սիրոյդ՝ զոր առ իս ունիս՝ ուսանել զսէր զոր քեզն պարտիմ, և սիրել զքեզ յամենայն անձնէ, յամենայն սրտէ, յամենայն զօրութենէ, և 'ի վեր քան զամենայն։

Քննեցից 'ի սրտի իմում՝ զի՞նչ ինչ սէր ունիցի առ արարածս․ և աղաչեցից զՏէր տալ ինձ օգնութիւն 'ի բաց մերժելոյ յինէն զամենայն որ արգելուցու կամ նուազեցուսցէ զսէր նորին։

ՃԻԵ․ Նուարեալք չորուցեալք փախչին առաքեալքն․ այլ հանդոյնք որբոց 'ի հարցն զրկելոց՝ դառնան մերձ ընդ մերձ 'ի թիկունս արտասուալից աչօք նկատել և մորմոքիլ ընդ Յիսուս։ Զամօթի հարկանի առաւել քան զամենեսին Պետրոս, փախչի և նա, թէպէտ և մտերիմ և հաստատադոյն է 'ի հաւատս քան զայլսն․ այլ աստուսա յերկեղէ վտանգացն զանգիտեալ, և անտուսա 'ի սիրոյ աստուածային վարդապետին առկայեալ, 'ի տագնապ տարակուսին զհետ երթալոյ նորա կամ թէ լքանելոյ զնա, թեակոխէ երթալ զհետ առ սիրոյ, այլ 'ի հեռուստ առ

երկիւղի։ Արդահատելի թուի Պետրոս վասն մի-
ջամտման վարուցն՝ զիջանելով և բարեպաշ-
տութեանն և տկարացելոյ բնութեան. և թուի
իսկ տակաւին ջերմաջերմ և հաստատուն քան
զայլսն փախստականս՝ 'ի հեռաստանէ զհետ եր-
թալովն։ Այլ քանզի և առաւել քան զայլսն քա-
ջասրտաբար մեծամեծս խոստացեալ էր՝ մինչև 'ի
մահ զհետ երթալ՝ անանջատ 'ի Յիսուսէ, արդ
մեկնիլն 'ի նմանէ և 'ի բացեայ կալ, աւաղելի գաղ-
ջութեան են արդասիք, որ մեծապէս անհարիցն
ձոյն է Յիսուսի, և չարագուշակ կարապետ ե-
ուրացութեանց որ ընդ հուպ պատահիցեն նմա։

Զօրինակ հոգւոյ հովացելոյ տեսանեմ աս-
տանօր, զհոգւոյ իմոյ առեմ։ Կամիմ և ես 'ի
սպասու Տեառն անսալ պզգմանց մտաց իմոց,
այլ և ողոքել զյօժարութիւնս զգայութեանց.
կամիմ իմն զերկոսեան միանգամայն հաճել զդի-
տակցութիւն և զցանկութիւն. զհետ երթալ
Յիսուսի՝ այլ 'ի հեռաստանէ, ոչ ունելով փոյթ
մօտ մատչելոյ նմա։ Կամէի ոչ անարգել զնա մե-
ղօք, այլ և ոչ նեղել զանձն կրթութեամբ ա-
ռաքինութեանց նորին, ջանալով օրինաւոր առ-
նել ինձ զամենայն որոց մարթ իցէ լինել օրինա-
ւոր, չածեալ զմտաւ զաւետարանաւանդ մեռե-
լութիւնն։ Խարիմ 'ի խորհուրդս իմ. քանզի
թուլութիւնս այս փոխեսցի փութով յախտ
մահաբեր, և յետ սակաւու միոյ գթեալ ան-
կայց չարաչար, որպէս և զփորձ առեալ եմ
զիրացս հիքաբար յայլ նուագս. միթէ հարկ
իցէ յաւելուլ 'ի փորձոն աղխտաբերս։

Ի քեզ ապաւինիմ, Յիսուս իմ, Աստուած իմ,
և այնպիսի հայցեմ 'ի քէն զօրութիւն և պնդու-
թիւն ոգւոյ՝ զի անյողդողդ կացից հանապազ
առ քեզ. և դուն գործեցից ոչ միայն չմեղան-
չելոյ քեզ՝ այլ և ամենեքիմբ 'ի նմանութիւն քո

նկրտելոյ: Դուզնաքեայ ինչ է սէր իմ առ քեզ. վասն որոյ և ըստ մարդկան աչառանաց, ըստ մարմնոյ և ըստ աշխարհի քաղաքավարելով, դանդաչեմ և յաճախ վարակեալ վայրատիմ: Յաւել յիս և ամրացո զսէր քո. և կեցից պարապեալ միայն 'ի կրթութիւն առաքինութեանց առ 'ի նմանել քեզ և հնազանդել: Աստուած իմ, որ մինչև ցարդ ոչ արարեր զանց զինև, մի 'ի բացեալ լինիր և յայսմ հետէ, որպէս զի մի հեռացեալ մեկուսացայց 'ի քէն. մերձեցի՛ր առ իս, զի մերձեցայց և հպեցայց և ես առ քեզ:

Պարտք և կամք են ինձ լինել բոլորովիմբ Աստուծոյ. այլ ոչ եղեց այնպէս՝ ցորչափ քաղաքավարեցայց առ մարդկան ակամբ, զոր զգօնութիւն և խոհեմութիւն անուանեմ ես: Քննեցից և արհամարհեցից զայսպիսի ակնածութիւնս:

Տարումն Յիսուսի 'ի Պարտիզէն 'ի տուն Աննայի:

ՃԻԶ. Ոչ ուրեք տեսաք, և ոչ 'ի գրոց լուաք՝ եթէ զհուզկահար կամ զչարագործ ոք մատնեալ 'ի ձեռս դատաւորաց՝ այնպէս խժդուժ անգթութեամբ տանջեցին դահիճք, որպէս այժմն անողորմն Հրեայքն՝ զՔրիստոս: Կախարդասար զոք՝ ուխտադիր և դաշնակից դիւաց համարին զՈրդին Աստուծոյ, որպէս թէ կարիցէ և հնարիւք սատանայի զերծանել 'ի ձեռաց նոցա եթէ ոչ պնդապէս պահիցեն: Եւ զի Յուդայի իսկ տուեալ էր նոցա խրատ՝ զգուշութեամբ ունել և պահել զնա, քանիպատիկ պարանօք և հիւսածօք և շղթայիւք ո՞չ արգեօք կա-

պեալ կաշկանդիցեն զնա յամենայն կողմանց, զի մի կարիցէ խզել զկապանսն։ Իսկ Յիսուս կայ որպէս գառն հեզահամբոյր, ըստ նախ օրինակութեան մարգարէիցն, և շուրջ պատին զնովաւ Հրեայքն որպէս շունք կատաղեալք և ցուլք մոլեգինք, առիւծք ամեհիք և գազանք վայրենիք և գիշատիչք, ըստ որում և զայս նախատեսեալ էր գուշակացն։ Ո՞ կարիցէ պատմել զգործս առաքինութեացն՝ յորս ներակրթի Յիսուս, և զատելութիւն, զցասումն սրտմտութեան և զկողուցս ամպարիշտ ժողովոյ Հրէիցն։

Տե՛ս, հոգի իմ, զԱմենակարողն և զՍուրբն Սրբոց, զիա՞րդ կայ 'ի միջի նոցա՝ որպէս յետնաչար քան զամենայն չարագործ, և անկարող 'ի պաշտպանել անձին։ Աչս ածէ շուրջանակի, տեսանել թէ իցէ՞ զոք 'ի ծանօթիցն՝ որ զկնի իւր գայցէ, քաջալերս և օգնութիւն ինչ մատուցանել. այլ և ոչ զմի զոք ոչ տեսանէ։ Եւ ո՞ւր իցեն հրեշտակքն որ սպասաւորէին նմա յանապատին. ո՞ւր առաքեալքն. ո՞ւր բազմութիւն ժողովրդեանն որ մարգարէ հռչակէր զնա. ո՞ւր և Մարիամ մայր նորին ամենասուրբ։ Զիք ոք որ բարբառիցի կամ շարժիցի վասն նորա։ Եւ ընդէ՞ր իցէ այս։ — Եթէ քաջ քննեցից՝ 'ի միտ առից եթէ յայդ պայման վիճակի կայ Յիսուս՝ քանզի այդպէս կամի. և ոչ առ այլ ինչ այդպէս կամի՝ բայց վասն սիրելոյն զիս։ Ճշմարիտ և ամենևին իսկ ճշմարիտ է այս. և չիցէ՞ բաւական 'ի խանդաղատել և մորմոքեցուցանել զիս։ — Ո՜հ, ո՞րքան պարտական եմ անզուգական մարդասիրութեան քում, Յիսուս։ Թշնամանքդ զոր ածեն քեզ՝ ինձ անկ էին ամենաչար մեղաւորիս՝ 'ի պատիժ պատուհասի մեծամեծ մեղաց իմոց, որովք անարգեցի զաստուածային քո մեծվայելչութիւնդ. իսկ զիա՞րդ դու արդարդ և ան-

մեղ՝ յանձն քո ընդունիս զարժանիսն ինձ ցաւս, որ յանցաւորս եմ և չարեացապարտ։ Տեսանեմ զգործ սիրոյ քո, Փրկիչ իմ բարեսէր. այլ զիա՞րդ հատուցեր զսէր քո ազնիւ՝ յարարածս մի ապերախտ և ապստամբ, որ այնքան ժամանակս յաճախեաց թշնամանագիր լինել քեզ, նաև յետ փրկանաւորելոյ առ 'ի քէն։ Գէթ մի ևս մեղիցէ քեզ յայսմհետէ. գէթ սիրեսցէ զքեզ այսուհետև, որպէս և պարտական եմ սիրելոյ. գէթ ողորմեսցի քեզ և շնորհս կալցի, որպէս և պարտական եմ գործելոյ և գոհանալոյ զքէն. ցուեսցէ ինձ գոնեա 'ի տեսանելս զքաղցրութիւն քո տենչալի՝ այդպէս արհամարեալ յառհասարակ յաշխարհէ և յինէն։ Արգահատեա, Աստուած իմ, քոյին օգնականութեամբ՝ ըղձիցս այսոցիկ։

Սէր իմ առ Յիսուս իցէ նմանողն լինել նորայն օրինակի. մի ինչ զչարեցայց ընդ անհաճոյսն ինձ բանս կամ գործս. այլ առ սէր նորա՝ հեզ և համբերող եղեց նախատանաց և հակառակութեանց։

ԾԻԷ. Սրտմտին Հրեայքն լի ոխութեամբ և ատելութեամբ ընդ Յիսուս, վասն չար կարծեացն զնմանէ և զվարդապետութենէ նորա՝ որ հակառակէրն չարաչար բարուց իւրեանց, և վասն սքանչելեացն զոր պատրանս համարէին։ Եւ ևս քան զևս զայրանան, պնդապինդս պարուանդեն զնա և խստագոյնս նեղեն, քանզի այսպէս պատուիրեն և յորդորեն զնոսա գլխաւորքն որք կան առ երի. և առաւել ևս և 'ի վեր քան զբան խժանան, քանզի գրգռին և զգրգռին 'ի գիւաց լցելոց անչափ նախանձու ընդդէմ նորա և մախացողաց, խիթալով թէ նա իցէ Մեսիայն եկեալ 'ի փրկել զաշխարհ։ Ամենեքին յարձակին 'ի վերայ նորա և շուրջ պատեն,

և զոր գիտենն և կարեն՝ ա՛նցուցանեն ընդ նա թշնամանս. և այնպէս ընկճեալ ձ՛նշեն՝ մինչ գրեաթէ չնչասպառ լինել նմա: Վասն այնորիկ ողբայ 'ի ձեռն մարգարէին, զի հեղան զևրևդաւանութիւնք 'ի չարչարանս իւր որպէս ջուրք բազումք, և ծածկեցին զնա և մտին մինչև յոսկերս նորա: Այլ Յիսուս ընկղմեալ 'ի հոսանս ջուրցն, 'ի ցաւսն և 'ի նախատինս, զի՛նչ առնիցէ: — Նովին իսկ ջրով լուանայ և մաքրէ զաղտեղութիւն հոգւոց մերոց, որ գարշելիք են յոյժ առաջի մեծի վայելչութեան Աստուծոյ:

Ո՛վ Յիսուս, ամենևին քաղցրութիւն յայնքան դառնութիւնս, տուր ինձ շնորհօք համբերութեանդ և ապաշխարութեան՝ յոր վասն իմ կրթեցար, լուանալ և ինձ արտասուօք ճշմարիտ զղջման մեղաց իմոց: Այսմ ցանկամ առ սէրն զոր պարտիմս առ քեզ՝ առաւել քան զամենայն ինչ, գարշիլ և խորշիլ 'ի մեղաց քան յամենայն չարեաց, և ցաւել ընդ գործեցեալսն իմ ցայսօր, և կեալ յայսմ հետէ ամենայն զգուշութեամբ և զգաստութեամբ առ 'ի չմեղանչելոյ միւսանգամ: Ահաւասիկ տարածանեմ առաջի քո զիղձ փափագանաց իմոց. և ո՞ է որ կարասցէ տալ ինձ զօրութիւն կատարելոյ զնոսին, եթէ ոչ դու օգնութեամբ շնորհաց քոց սրբոց:

Անհնարին թուի ինձ, ամենասիրելի Փրկիչ իմ, եթէ հոգի որ լուսով հաւատոց խոկայցէ 'ի չարչարանս քո ցաւագինս, անզեղջ կայցէ ընդ մեղանս. և սակայն, ո՛վ զարհուրելի իրացս, տեսանեմ յոգւոց իմում բազմութիւն անօրէնութեանց և սառնգանութեանց՝ ընդ որս արժան էր ինձ ապաշաւել և ցաւել մինչև 'ի խղզումն սրտիս 'ի ծոցոյս, և տակաւին կամ մնամ անցաւ և անապաշաւ: Եւ իմ նշան իցէ ինձ

այս, եթէ ոչ մերժման և դատապարտութեան: Եւ միթէ դատապարտիցի՞ սուգիւ, ո՛վ գթած Յիսուս, հոգիս այս, վասն որոյ զայդքան դառնակսկիծ չարչարանս յանձն առեր: Ո՛հ, դառնայցո ինձ, Յիսուս, զամենայն քաղցրութիւն մղեկան հեշտութեանց իմոց՝ որ այնքան դառն եղեն քեզ, և տուր ինձ դառնապէս ողբալ ընդ քեզ զչարաչար կեանս իմ:

Եթէ և այլ ինչ պտուղ՝ չեղեց կարող քաղել 'ի չարչարանաց Քրիստոսի, զկարևորագոյնս և զպատշաճագոյնս զայս քաղեցից, զփախչելն և զզարշելն 'ի մեղաց, և յառիթից՝ որ 'ի վտանգ մեղաց զիս արկանեն:

ԾԻԸ. Որպէս յառաջագոյն ասացեալ էր մարգարէին զՓրկչէն՝ եթէ լցցի նախատանօք, ծըրմարտապէս կատարեցաւ գուշակութիւնն: Եթէ քաջ ոք միտ դիցէ կենաց Քրիստոսի՝ յերեքամեայ քարոզութեանն, գտցէ զնա իբրու կերակրեալ իմն նախատանօք հալածանաց՝ որ 'ի Հրէից անտի՝ նկրտելոց հանապազ յաչաղանօք զըպարտութեանց խօսել և արհամարհ առնել զնա. իսկ 'ի ժամանակի չարչարանացն՝ յըմբռմանէ անտի 'ի պարտիզին և անդր՝ ոչ միայն կերակրեալ այլ և արդարև յագեալ երևիցի թշնամանօք՝ որ կարի յոլովութեամբ ածան նմա:

Հայեաց և տես, հոգի իմ, զՓրկիչն քո սիրական, զիա՞րդ բռնաբարեալ քարշի արտաքս 'ի պարտիզէն. յանխնայ ձգեն զնա դահիճքն, և նա անդիմակաց երթայ զհետ նոցա. և որպիսի՜ թշնամանս և երգիծանս ածեն նմա անագորոյնքն՝ զճանապարհայն. կռուփս հանեն, աքացի հարկանեն, գաւազանօք գանեն, մղեն բռնցի, յերկիր կործանեն, և ոտս արձակեալ կոխոտեն զնա: Եւ զի՞նչ խորհիցի Յիսուս՝ այդ_

պէս լքեալ և ոտնակոխ եղեալ յանարգ խուժանէն, վիրաւորեալ յերեսս և 'ի գլուխ: Ի տեսանելն աչօք մտաց զտանհարութիւն փառաց և սրբութեան իւրոյ՝ ցաւէ նմա 'ի ներքուստ. և զամենայն անարգանսն և զթշնամանսն համարի տարափս և տագնապս պատուհասից Աստուծոյ՝ 'ի պատժել զմեղս աշխարհի՝ յամենասուրբ մարդկութեան իւրում. և զայն ամենայն նուիրելով Հօրն յաւիտենականի՝ հայցէ վասն մեր ներումն թողութեան: Աւաղ ինձ 'ի դէպ է ասել, թէ յատուկ իմն վասն իմ հայցիցէ, որպէս եթէ չգուցէ այլ ոք մեղաւոր բայց յինէն, կամ թէ ես միայն իցեմ կարօտ առ 'ի նմանէ փրկութեանն:

Ո՜վ համբերութիւն, խոնարհութիւն և գըթութիւն Քրիստոսի: Երկրպագեմ և օրհնեմ զքեզ, ո՜վ հեզահամբոյր գառն Աստուծոյ, վասն այնքան նուաստութեանց և անարգանաց՝ զոր վասն իմ կրեցեր: Ցաւէ ինձ, զի և ես առ ոտն հարի զքեզ՝ քանիցս և մեղայ քեզ. և խոստովանիմ զի մեծ են չարիք իմ քան զՀրէիցն: Վերընծայեմ քեզ զարդիւնս քոյոց համբերատար կրից, որք մեծ եղեն յոյժ, արժանիք և վայելուչք Աստուածամարդոյ. և նոցին իսկ արդեանցդ շնորհօք հայցեմ տալ ինձ օգնութիւն, որպէս զի կարող եղէց 'ի պատահելն՝ տանել առ սէր քո՝ դիպաց ինչ անհաճոյից: Լուսաւորեա, Յիսուս, և բորբոքեա սիրով քով զսիրտս այս իմ, որ ապերախտ է յոյժ, խիստ և ապըստամբ. տուր ինձ յօգուտ արկանել զշնորհս չարչարանացդ՝ յարդարակ քաւութիւն մեղաց իմոց, և 'ի նմանել քեզ 'ի լաւութիւնսն որ առաւել հաճոյք իցեն քեզ: Արարից զամենայն որ հաճոյ իցէ քեզ, և ոչ արարից ինչ մի յանհաճոյից քեզ՝ եթէ ունիցիմ զսէր քո:

Մեռուցից յանձին իմում զցասումն, զըրրամտութիւն և զոխակալութիւն, յորժամ անիրաւեցի ինչ ոք ինձ, կամ զզուեցայ զնա։ Յիսուսի նուիրեցից զկիրս վշտաց իմոց, և յանձն առից զայնոսիկ 'ի քաւութիւն մեղաց իմոց։

ԾԻԹ. Զմտաւ ած, հոգի իմ, զվարումն Քրիստոսի 'ի պարտիզէն Գեթսեմանի 'ի քաղաքն Երուսաղէմ. քանի դժնդակ իրօք էղե։ Յառաջընթաց լինի Յուդաս՝ երագելով զքայլսն, առ ադահութեան վաղվաղ ընդունելոյ զերեսուն արծաթին. շնորհեն նմա գլուխ և առաջնորդ լինել, քանզի և գերազանցեալ է յամպարշտութեան և 'ի նենգութեան։ Զհետ նորա խաղան զօրականքն, և զկնի՝ Յիսուս գլխակորեալ, ձեռամբք յետս կապելովք, դեդեւելով և հեծեծելով, ոչ եւս կարելով տոկալ բռնութեանցն և մղմանց, շուրջ պատեալ 'ի գլխաւորաց ժողովրդեանն և 'ի պաշտօնէից նոցին, որք վերջապահք լինէին 'ի զգուշութիւն նմին։ Առ դրան քաղաքին խռնեալ կայ ամբոխ մարդկան՝ սպասելով գալստեան նորա. և ամենայն ոք բարուրս զնմանէ կարկատէ, ոմն յայս ինչ զնա յանցաւոր համարելով և ոմն յայն։ Եւ զամենայն լսէ Յիսուս, և 'ի լռութեան անդ ամենուստ տեղացեալս 'ի վերայ նորա, խոնարհելով խոնարհի, որպէս թէ ոչ ինչ մի իցէ կամ բեկոր մի անօթոյ խորտակելոյ. և ընդունի յինքն զամենայն զնախատինս և զերդիծանս, որպէս արժանաւոր պատիժս մեղաց մերոց։ Ամենայն քայլք նորա 'ի ճանապարհի անդ ընդ անթուելի հարուածովք թշնամեացն՝ սահմանեալք են 'ի նմանէ առ 'ի փրկութիւն մեր 'ի ձեռաց յաւիտենական թշնամեաց մերոց. առ 'ի բաց դարձուցանել զմեզ 'ի ճանապարհաց մոլութեանց և կորստեան և ուղղել զգնացս մեր ընդ շաւիղս առաքինութեանց՝ յարքայութիւն։

Ո՛վ Տէր զօրութեանց, հզօր և կարող․ անբաւս պարտիմ քեզ գոհութիւնս վասն ամենագորով սիրոյդ․ այլ զիա՞րդ կարացից ըստ արժան բաւականին գովել և գոհանալ զքեզ՝ որ առ ոտս հրաշափառ մեծութեան քում որդն մի եմ նեխեալ։ Ո՛վ Թագաւոր փառաց, զքեզ օրհնեսցեն կարողութիւն քո, իմաստութիւն քո, անճառ և յարահոս առատաձեռն բարութիւն քո։ Իսկ ես, Յիսուս, փափագեմ գովել զքեզ՝ նմանելով քեզ, և հետևելով ընդ հետս ոտից քոց։ Մինչև ցայժմ զընդունայնութեանց զհետ ընթացայ, և 'ի ճանապարհս անօրէնութեանց խիղախելով գործէի զչարիս․ իսկ առ 'ի գործել զբարին, ո՛չ, զի՛ ապիկար և վատթար գտայ։ Ո՛հ, կապեա զիս արդ միով 'ի կապանաց քոց յայդոցիկ, և ձգեա զհետ քո։ Ուղղեա և հաստատեա զգնացս իմ 'ի շաւիղս քո․ որպէս զի մի՛ խորհրդովք և մի՛ ըղձիւք՝ մի՛ ևս ստորանկեալ ստերիւրեցայց 'ի բարուոք ճանապարհէն։ Չարաշար ունակութիւնք իմ ուժաթափ արարին զիս․ միայն ողորմութեան քո շնորհացդ մարթ է վերստին զիս կազդուրել։

Չափ եղից տարապայման երկեղի իմոյ 'ի պատահարաց կենցաղոյս, և ապա դիւրին և հեշտ լիցի ինձ խոնարհն հեզութիւն՝ որով անկ է վշտակրել առ սէրն Աստուծոյ։

ԾԼ․ Յաւէլ, հոգի իմ, երթալ զհետ Տեառն քո Քրիստոսի՝ ընդ քաղաքն Երուսաղէմ։ Թէպէտ և գիշեր իցէ, բազմութիւն լապտերացն լուցելոց բաւական է 'ի տալ նշմարել զնա՝ լքեալ և տխրեալ 'ի չարաչար բռնադատութեանցն՝ որով անդադար տառապեցուցանէին զնա։ Զայն բարձեալ անզգամացն՝ աւետիս ա-

ուետիս գոչէն, 'ի նշանակ կալանաց նորին. ծափս հարկանէին խնդութեամբ, և պարծին հրճուանօք ընդ որսն զ՚՚ր ըմբռնեցին. և երգիծանօք և կատականօք յառակ նշաւակի կացուցանէին զնա ամենեցուն, մատնանիշ առնելով. քննել տեսանել եթէ գուցէ՞ 'ի նմա երևոյթ փրկողի զաշխարհ: Դրունք և պատուհանք տանց խռնեալ էին ամբոխիւ հետաքննին մարդկան 'ի տեսանել զնա. և չիք ոք որ կարեկցութեամբ հայիցի ընդ նա, այն որ սակաւուք յառաջ այնքան սքանչելիս գործեալ էր 'ի քաղաքի անդ և քարոզեալ զարմանալի վարդապետութեամբ. արդ որպիսի՜ ամօթ և նախատինք էին նմա՝ տեսանել զանձն այդքան անարգանօք վարեալ 'ի հրապարակս և 'ի փողոցս: Կարէր և յայնժամ սքանչելեօք յայտնել զամենակալ զօրութիւն իւր, և երևել փառօք իւրովք 'ի նախատանան անդ. այլ 'ի բժշկութիւն հիւանդութեան մարդոյս՝ վարի և նա որպէս մարդ հէք. արդելու զհարըստութիւն իւր, զի տացէ մեզ օրինակ նմանութեան՝ զանձկուն համբերութիւնն:

Եւ արդ, 'ի քեզ ինքն մո՛ւտ 'ի ներքս, հոգի իմ և տե՛ս, ո՞ւմ տուեալ նմանեցիս, Յիսուսի՞ թէ Հրէից: Ո՛վ Յիսուս իմ, չտեսանեմ ինչ յիս որով նմանիցեմ քեզ. այլ բազում ինչ որով նման եմ Հրէից: Քանի՞ցս ոչ խնդացի ընդ սոցա և պարծեցայ և ես ընդ թշնամանս անբաւ վայելչութեան քում, և ծիծաղեցայ, մինչ դեռ պարտ և արժան էր լալ: Եթէ բարկութեան քում արժանի էն Հրեայքն՝ զի յաւելին չարութիւն 'ի ագիտութիւն իւրեանց, զի՞նչ լինիցի ընդ իս չարացելոյս և 'ի հաւատալն իմում զքեզ երկըրպագելի փրկիչ իմ գոլ: Աստուած իմ, ինձ՞ և դժոխք չէին բաւական 'ի տուգանս. ես ինձէն խոստովան լինիմ զի 'ի պատուհաս մեղաց իմոց

'ի դէպ էր նորա ումանս դժոխս հաստատել: Բայց սակայն ապաւինիմ 'ի գթութիւն քո. ո՛հ, փոխանակ այրելոյ զիս 'ի հուր գեհենին՝ բորբոքեա զիս սիրով քով: Վասն այն թոյլ ետուր Հրէիցն անողորմ լինել ընդ քեզ, զի դու ողորմած լիցիս առ իս. և այս իցէ ողորմութիւն քո որում ակն ունիմ և սպասեալ մնամ, ամենապատուական շնորհք սիրոյ քո: Առ ողորմութեան սիրեցեր զիս զամենեւին անարժան արարած մի. ողորմութիւն քո միայն տացէ և ինձ սիրել զքեզ՝ զամենեւին արժանիդ սիրոյ. քանզի զի՞նչ կարիցեմ ես խմովսանն առնել, բայց եթէ անարգել զքեզ: Ո՛վ ամենագութ Յիսուս, եթէ յաջողեցայց 'ի սիրել զքեզ միայն, քեզ եղիցին փառքդ այդ. և զողորմութիւն գթութեանց քոց յաւիտեան երգեցից:

Համեմատեցից ընդ Յիսուսի զանձն իմ, և յամօթ եղէց՝ տեսանելով զնա այնքան համբերող և խոնարհ, և զիս՝ այսքան անհամբեր և հպարտ. և գործնական նմանողութեամբ գուն գործեցից ժտել զօգնութիւն շնորհաց նորին:

ՃԼԱ. Յետ տեսանելոյ զՅիսուս յագեալ և լցեալ նախատանօք՝ 'ի քաղաքին Երուսաղեմի. զմտաւ ած և տես, հոգի իմ, եթէ իցէ՞ արդարև դա Փրկիչ քո, որ հինգ աւուրբք յառաջ հռչակիւր թագաւոր Իսրայէլի՝ յամբոխէն որ ընդ առաջ ելանէին նմա: Որպիսի՜ փոփոխութիւն: Այլ չէին ինչ զարմանք. քանզի չիք ինչ առանց խորհրդոց: Ճշմարտապէս արժանի է Քրիստոս ամենայն պատուոյ աշխարհիս. այլ է և Ճշմարիտ՝ զի առեալ է նա զկերպարանս համաշխարհական մեղաւորի. և վասն այնորիկ կամելով կրել զպատիժ ամբարտաւանութեան մերոյ, յանձն առնու և համաշխարհական նախատինս: Որ

մեզս գործէ՝ զփառս Աստուծոյ կապտէ, ստունկանելով պատուիրանաց նորին. և վասն այնորիկ կամեցաւ Յիսուս 'ի չարչարանս իւր հատուցանել Աստուծոյ զփառսն՝ զոր մեղք հանին 'ի նմանէ: Ոչ ումեք հնար էր՝ բաց 'ի նմանէ՝ գործել զայդ. քանզի Աստուծոյ արհամարհելոյ 'ի մարդոյ՝ միայն Աստուածամարդոյն մարթ էր զփոխարէն արժանաւոր պատուոյ մատուցանել նմա: Ի կորստեան պատուոյ իւրոյ կրեաց Յիսուս զամենայն նախատինս և արհամարհանս. և 'ի կրելն՝ մի ըստ միոջէ մատուցանէր զնոսին՝ Աստուծոյ Հօր, ուղղակի գինմամբ հաշտ առնելոյ և պատուելոյ զնոյն ինքն զՀայրն: Եւ, բարէ, քանի՛ պատիւ եղև Հօրն՝ համբերատար խոնարհութիւն այնպիսւոյ ազնուական անձին՝ այնքան նախատանաց, վասն մարդկան մեղաւորաց: Այսպէս իրագործեցաւ փրկութիւն աշխարհի:

Յիսուս իմ, որ զկնիք փրկութեան իմոյ բացայայտես քաղցրիկ անուամբ քով, իցէ՞ ոք 'ի տիեզերս առաւել քան զիս երախտապարտ առ քեզ. և մինչ այդքան կրես նուաստութիւնս և անարգանս 'ի պատուհաս մարդկայնոյ ամբարտաւանութեան, հարկ է ինձ հաւատալ եթէ չարչարանք քո իցեն վասն իմ քան վասն այլոց մարդկան. քանզի ո՞ ոք 'ի մարդկանէ իշխեաց երբեք առաւել քան զիս գոռոզաբար գլուխ ամբառնալ: Առաւել քան զամենայն մարդ պարտական համարիմ զիս քոյոց երախտեաց, քանզի վասն իմ այդքան խոնարհեցար. այլ զիա՞րդ կարացից հաճոյ լինել քեզ՝ ցորչափ գուցէ յիս բնաւորեալ հպարտութիւն: Ո՛վ ամենահեզ Փրկիչ իմ, յայդ անարգութիւն զիջեալ յաղագս իմ, գիտեմ զոր իրաւամբք պահանջես յինէն. այսինքն է խոնարհութեամբ լինել քեզ

նմանող: Աւադիկ պատրաստ եմ: Հայր յաւիտենական, շնորհօք արդեանց Յիսուսի հայցեմ 'ի քէն խոնարհութիւն, որպէս զի այնու ըստ նմանութեան Յիսուսի կարող եղէց իմովսանն հաշտ առնել և պատուել զքեզ. զՅիսուս ինքնին կացուցանեմ ընդ քեզ և ընդ իս միջնորդ, բարեխօս և ջատագով: Զէ մարթ զլանալ նմա շնորհս, քանզի անբաւ են արդիւնք նորա, փոխանակ զի խոնարհութեամբ իւրով յանբաւս պատուեաց զքեզ: Փրկիչ իմ է նա. և ինձ խոնարհութեամբ 'ի դէպ է գործակից լինել արդեանց նորին, և արժանաւորիլ յաւիտենական փրկութեան:

Կրթութեամբ գործոյ ուսայց եթէ նոյս են հնարք փառաւորելոյ զԱստուած. խոնարհեցուցանել զանձն, և ընդունել յօժարութեամբ զմեռելութիւնս, զամօթ և զարհամարհանս՝ որ թէ հանդիպիցին: Միտ եդից ուշով մանաւանդ այնմ՝ որոյ մարթ է ինձ պատահել:

Յիսուս յատենին Աննայի:

ՃԼԲ. Յաջորդէին զիրեար 'ի քահանայապետութեան Աննա և Կայիափա. վասն այնորիկ նախ առ Աննաածաւ Յիսուս. քանզի կալանաւորքն զհետ երթային Յուդայի, որ խոկայր զերեսուն արծաթին զխոստացեալն նմա՝ ընդունել 'ի քահանայապետէն. և զի սատրապքն մնապարծիկք որք կալանն զնա՝ կամէին մեծ իմն գործ քաջութեան ցուցանել զայն, իբրու զի բազում անգամ այլոց փորձեալ և չէր յաջողեալ. զոր օրինակ որսորդաց կալեալ գազան մի ամեհի՝ առեալ

յածեցուցանէն 'ի տեսիլ ամենեցուն , որպէս զի գովեսցին 'ի նոցանէ , այնպէս և Հրեայքն վարեալ տանին զՅիսուս այսր անդր՝ որպէս զի գովեսցին և երախտաւորք համարեսցին , իբրու ազատարարք երկրի իւրեանց 'ի մոլորեցուցչէն և 'ի խռովչէ հասարակաց խաղաղութեան :

Եւ մտեալք 'ի սրահն մեծ՝ առաջի Աննայի , յանդիման կացուցանէն զՅիսուս որպէս զգլուխ չարագործաց 'ի վերայ երկրի . և նա որպէս զայնպիսի ոք ընդունի զնա , և գովէ՝ զգործ նոցա , և փարելի առնէ վասն մեծի քաջասրտութեանն : Ի գահոյս չքեղս բազմեալ նստի խորամանկ ծերունին , որպէս այր արդարասէր և նախանձաւոր փառացն Աստուծոյ . իսկ Յիսուս յոտին կայ ձեռօքն կապելովք , որպէս չարաչար մեղուցեալ յԱստուած և 'ի մարդիկ : Որպիսի՜ հիացմամբ սոսկացեալ խոստովանեցան և պաշտեցին հրեշտակք՝ զանհասանելի դատաստանս երկնաւոր իմաստութեանն՝ 'ի տեսանելն զսրբապիղծ նուիրագործն 'ի գլուխ դատողութեան բազմեալ . իսկ զՃշմարիտ և զյաւիտենական քահանայապետն Յիսուս՝ որպէս յանցաւոր 'ի դատ վարեալ :

Այլ ինձ առաւել զարհուրելի իրք են աստանօր քան թէ հիանալի , 'ի խորհելն , զի եթէ այժմիկ Որդին Աստուծոյ յանձն առնու 'ի դատաստան մարդոյ մտանել , եկեսցէ օր յորում և մարդն մտանեսցի 'ի դատաստան Աստուծոյ : Եւ թէպէտ Յիսուս յաշխարհական ատենի անդ 'ի գործ արկանէ զխոնարհութիւն և զհամբերութիւն , այլ 'ի ներքս 'ի սրտին կայ անվրդով և ամենևին լրջամիտ ոգւով . քանզի ինքնին գիտէ զի չէ յիմիք մեղադրելի , և ոչ ոք կարէ գտանել 'ի նմա և ոչ դոյզն ինչ արատ յանցանաց : Իսկ զի՞նչ լինիցի ինձ յատենին Աստուծոյ , յորժամ

պահանջիցիմ համարս առաջի յաւիտենականին իմոյ դատաւորի. զի՞նչ լինիցի ինձ լցելոյս գարշութեամբք և ամպարշտութեամբք՝ զորս ոչ կարիցեմ թաքուցանել. քանզի ընդ իս ունիցիմ զդատախազն և զամբաստան յաղթկու, զանձին իմոյ գիտակցութիւն։

Այժմէն վասն այնր ժամու պաղատիմ առ գըթութիւն քո, Աստուած իմ, և հայցեմ դատել զիս այնու սիրով և ողորմութեամբ՝ որով արկեր զանձն ընդ դատաստանաւ ժպիրհ մարդկան՝ յաղագս յաւիտենական փրկութեան իմոյ։ Ո՛վ որ եկիրդ 'ի փրկել զիս՝ անխայեա և մի թողուր զիս 'ի դատապարտութիւն։ Ձեռն տուր ինձ արդ շնորհօքդ առ 'ի պատրաստել զգիտակցութիւնս իմ 'ի քննութիւն դատաստանի, և 'ի հայթհայթել ինձ գործս բարիս. զի նոքա միայն օգնեսցեն ինձ յաւուր բարկութեան քո։

Վկայութիւն բարւոյ խղճի միայն կարէ զիս աներկեան առնել յատենի մարդկան և Աստուծոյ. այս լիցի ապա առաջադրութիւն մտաց իմոց. Մի ինչ հակառակ խղճի։ Իցէ՛ թէ այսպէս արարեալ էի և յ'անցեալ կեանս իմ։

ՃԼԳ. Կամելով Աննայի մատչել 'ի քննութիւն Քրիստոսի՝ սկսանի նախ հարցանել զաշակերտացն։ Արժան էր նմա նախ զգնացս չարագործին ամբաստանելոյ քննել և ապա զհամախոհս նորին. այլ զի չկարէր ինչ յանցանս չփել զնովաւ, յաշակերտսն նկրտի զմեղանսն հանել, որպէս զի այնու զնա մոլորեցուցիչ երևեցուսցէ, իբրու ամբոխարար և ժողովակոչ սերմանացան նորափառ վարդապետութեան։ Հարցանէ դարձեալ խարդախութեամբ խորագիտակն՝ որպիսիք ոմանք իցեն աշակերտքն. քանզի գիտէ եթէ մին 'ի նոցանէ մատնեաց, և այլքն ամենեքին

Թողին զնա և փախեան. և յայսմանէ Ճգնի Ճարտարամտել և ասել պարծանօք. «Ապաքէն ասացի ձեզ եթէ կեղծաւոր ոմն է Յիսուսդ այդ Նազովրեցի. աՀաւադիկ և աշակերտք իւր նորին 'ի սոյն միտս կան, զի ծանեան ուր ուրեմն զդա խաբեբայ գոլ. զի եթէ չէր դա ապիրատ ոք՝ գէթ մի ոք 'ի նոցանէ կայր Հաւատարիմ և Հաստատուն կուսակից նմին. այլ արդ չէք ոք պաշտպան դմա. ամաչէ ամենայն որ չոգաւ զՀետ նորա. ապա ուրեմն խաբեբայ ոմն է դա»: Փառաք զօրաւորք առ դատաստանս աշխարՀի:

Իսկ Յիսուսի որպիսի՞ շառադրունանք ընդ անարգանան և արՀամարՀանս 'ի պատՃառս աշակերտացն: Կարէ միով իսկ ակնարկութեամբ ամենակալ զօրութեանն պապանձեցուցանել զամբարիշտն յախուռնախօս առ ոխութեան և անձնապարծ փքացման. կարէ նշուլիւ միով իմաստութեան իւրոյ ցրուել զամենայն մթարս որով Ճգնին ստու՛ բանս ածել պատուոյ իւրում. բայց Համբերեալ տանի ծանր ծանր նախատանացն, և ինչ ոչ ասէ 'ի չքմեղս անձին:

Օրհնութիւն և գովութիւն քեզ, ամենաՀեզ Փրկիչ իմ, 'ի Հրաշափառ առաքինութիւնս քո. այլ մինչ գովաբանել զքեզ կամիմ՝ կշտամբէ զիս գիտակցութիւն, թէ չեմ արժանի չեմ բաւական գովելոյ զքեզ. վասն այնորիկ խոստովան լինիմ զքո արժանաւորութիւնդ և զիմս ապիրատութիւն: Ի դաւանելն իմում զքեզ քրիստոնէական Հաւատովքս՝ քանի՜ քանի պատՃառս ետու չարաչար վարուք իմովք՝ ՀայՀոյելոյ զփառաւորեալ անուն քո, և տալոյ ասել թշնամեաց կրօնից քոց, եթէ Ոչ է մարթ բարի լինել վարդապետի՝ որ այսպիսի չար աշակերտ ունի:

ՈՀ, Աստուած իմ, ես միայն եմ չար և նենգաւոր, իսկ դու սուրբ և բարի, մանաւանդ թէ

ողջոյն իսկ սրբութիւն և բարութիւն. բազում անգամ ատեցի զմեղս իմ զի թշնամանք էին առ քեզ. իսկ այժմ առաւել ևս ատեամ և գարշիմ վասն ծանրագունի ևս այսմ պատճառի՝ զի թշնամանքն առ քեզ՝ յայնմանէ են որ պատուեալն էր առ 'ի քէն անուամբ և կարգաւ քրիստոնէի: Մի՛ 'ի բացեայ լիցի յինէն սէր քո, Տէր. այլ կացցէ ընդ իս և զօրացուսցէ զիս հետևել քեզ հաւատարմութեամբ զմնացուածս կենաց իմոց:

Պատուեաց զիս Քրիստոս քրիստոնէական կնքով. անկ է և ինձ պատուել զնա նմանելով նմին և կելով որպէս ճշմարիտ քրիստոնեայ նորին: Առ 'ի նուաճել զախտս և զփորձութիւնս՝ շատ իցէ ածելն զմտաւ՝ եթէ Քրիստոնեայ եմ ես:

ՃԼԴ. Յաւելու Աննա հարցանել զՅիսուս զվարդապետութենէ նորա. ոչ վասն օգտելոյ 'ի ճշմարտութենէն, այլ առ 'ի գտանել զայն և 'ի դատափետել զհեղինակն: Իսկ աստուածային վարդապետին խելամուտ գոլով չարիմացութեան նորին, որպիսի՞ արդեօք կրէր վիշտս 'ի տեսանելն, զի ընդ քննութեամբ դատաստանի անկանի՝ իբրև կասկածելի՝ իմաստութիւն իւր երկնային. և վարդապետութիւն իւր որ գիտութիւն է փրկութեան և կենաց յաւիտենականաց՝ առիթ լինի նոցա 'ի դատապարտութիւն մահուան իւրոյ: Մտադիւր տանի նախատանաց անձինն, այլ ոչ հանդուրժէ անարգանաց վարդապետութեան՝ որ Հօրն է յաւիտենականի, յոր և հաստատեալ է փրկութիւն աշխարհի: Պարտ անձին համարի տալ պատասխանի և պաշտպանել զայն, և ասէ. « Ես յայտնապէս խօսեցայ յաշխարհի, լու 'ի լու ամենեցուն. և ոչ ոք յանդիմանեաց զիս. հա՛րց զայնոսիկ որ լուանն թէ

զինչ խօսեցայ ընդ նոսա. ահաւասիկ նոքա գիտեն զինչ ասացի ես»: (Յով. ԺԸ. 20)։ Մի՛տ դի՛ր, զի՞արդ աներկիւղ համարձակութեամբ խօսի. որ պարզաբար ասել իսկ է, եթէ այնքան Ճշմարիտ է վարդապետութիւն իւր՝ մինչև յանձն առնուլ վասն այնր զվկայութիւն՝ ոչ զառաքելոցն իւրոց բարեկամաց, այլ զՀրէից իսկ զիւրոց ոսոխիմ թշնամեաց. վստահ գոլով թէ ոչ ոք լիցի նմա մեղադիր: Չիք անստանանելի փաստ անմեղութեան՝ քան 'ի վկայութիւն կոչել զհակառակորդսն իւր:

Կարացեմ և ես զնոյն ասել, Աստուած իմ, յաւուրն դատաստանի, յորժամ համարս պահանջիցիմ զկենաց իմոց: Կարացեմ 'ի վկայս ինձ կարդալ՝ թէ ոչ զդեւս զթշնամին իմ, գէթ զհրեշտակս և զսուրբս որք բարեխօսք իմ են: Գործք իմ ինքնին ամբարձցեն զձայնս իւրեանց ամբաստանել զինէն: Որպիսի՞ սոսկումն հասցէ ինձ 'ի լսել զհրատարակութիւն այնքանեաց խաւարին և ամօթալի գործոց իմոց, ընդ որս ամաչեմ և զզուիմ այժմէն իսկ 'ի յայտնելս նաև ընդ կնքով դաղտնութեան առ խոստովանահայրն:

Ամենայն բանիւք՝ դու, տէր Յիսուս, ետուր համարձակապէս համարս զվարդապետութեան քո, քանզի գիտէիր եթէ ամենևին իսկ Ճշմարիտ է. իսկ երբ հասցէ և ինձ ժամանակ տալոյ համարս՝ եթէ զիարդ ընկալայ կամ որպէս պահեալ կացի վարդապետութեանդ այդմիկ, զինչ տաց պատասխանի: Հաւատամ թէ Ճշմարիտ է վարդապետութիւն քո. այլ եթէ հարկ իցէ ինձ խոստովանել ըստ գիտակցութեան իմոյ՝ թէ զիա՞րդ վարեցայ այդու վարդապետութեամբ, տեսանեմ զիս այնպէս գտանեալ՝ որպէս թէ մոլար իցէ այն. քանզի հակառակաբար կեամ նորայն խրատու. վասն այնորիկ հաւատք իմ ինք-

նին ամբաստանեսցեն և դատապարտ առնիցեն զիս։ Ո՛հ, փրկիչ իմ, յանօրէնութեան իմում չունիմ և ոչ մի ինչ հնարս պաշտպանութեան․ և ոչ այլ ինչ մնայ ինձ՝ բայց աղաղակ բառնալ առ ողորմութիւն վասն արդեանց չարչարանաց քոց։ Հայր յաւիտենական, ողորմեաց ինձ և թող զմեղս իմ՝ ի շնորհս ցաւոց և տրտմութեանց զոր վասն իմ կրեաց Որդին քո սիրելի։ Ո՛վ բարի Յիսուս, խօսեա՛ց վասն իմ, հաշտ արա վասն իմ․ դու միայն կարես զիս զերծուցանել, զի դու ես փրկիչ իմ։

Ոչ ինչ ուսոյց Յիսուս 'ի ծածուկ՝ զոր ոչ կամէր թէ ասիցեն յայտնապէս՝ 'ի փառս իւր։ Խրատեցայց և ես չառնել ինչ 'ի ծածուկ՝ ընդ որ ամաչիցեմ եթէ յայտնեսցի։

ՃԼԵ․ Պատասխանին Յիսուսի լի էր ամենայն ճշմարտութեամբ, հեզութեամբ և արդարութեամբ․ որպէս զի ամօթապարտ լեալ Աննայի՝ ոչ ևս կարաց կրկնել ինչ։ Այլ ոմն 'ի սպասաւորացն առ երի կացելոց, կամելով յաչս մտանել քահանայապետին՝ քաջօրէն վրէժխնդրութեամբ, յարձակեալ հանէ յերեսս Յիսուսի ապտակ մի ուժգին, և խրոխտապանծ ժպրհութեամբ կշտամբէ զնա․ Ա՞յդպէս, ասէ, պատասխանի տաս քահանայապետին․ միթէ լա՞ւ քան զնա գիտիցես․ ուսիր յայսմ հետէ կալ 'ի չափու։

Ես համարեալ կարծեմ թէ զարհուրեցան երկինք, սոսկացան զուարթունք, և ծածկեցին զաչս իւրեանց չտեսանել զայդքան անարգական և գժուարըմբեր նախատինս՝ զոր անպատկառ պաշտօնեայն անօրէնութեան ած Աստուծոյն փառաց։ Հայեաց, հոգի իմ, յերեսս Յիսուսի՝ որում այնքան ցանկացան նահապետք,

յերեսս՝ որ զմայլեցուցանէր զաչերս փայլմամբ վայելչութեան և շնորհաց. և տես, որպէս կապուտակեցաւ և Թխացաւ 'ի հարուածոյ անտի. զիարդ տառամունքն սարսեցին և ընդերքն այտեան, և էբր արիւն գունդագունդ հոսի ընդ բերանն, ընդ ռնգունս և ընդ աչս: Հնա՞ր ինչ իցէ տեսանել զայնպիսի պատկառելի դէմս այդպէս չարաչար հարեալ՝ և ոչ սրտառուչ սրտաբեկ լինել:

Այլ ընդէ՞ր Թոյլ ետուր, ո՛վ Տէր, ամբարիշտ ձեռինն ապականել զվայելչութիւն երեսաց քոց: Ա՜հ, իմանամ քաջ. կերպարանք հոգւոց մերոց այլափոխեալք և այլագունեալք էին 'ի սևութենէ մեղաց. և որպէս մահուամբ քով հաճեցար եղծանել զմահս մեր, այսպէս և տխեղծութեամբ քով կամիս ջնջել զգարշելի տգեղութիւնս մեր: Ո՛վ անբաւելի գԹութեանդ: Տուր և ինձ գործակից լինել չարչարանաց քոց, մաքրել զհոգիս իմ ներգործութեամբ Ճշմարիտ զղջման և բեկման սրտի: Հիացեալ ափշիմ՝ եԹէ զիարդ ոչ չանԹահար արարին երկինք, կամ ոչ եբաց երկիր զբերան իւր կլանել զնա որ իշխեաց ապտակաւն Թշնամանել և արհամարհանել զքեզ: Այլ չիցէ՞ ինձ օրէն առաւել ես զարմանալ՝ եԹէ զիա՞րդ ոչ կայծակնահար արարին երկինք կամ եկուլ զիս երկիր՝ որ այնքան նուագս Թշնամանագիր եղէ քեզ մեղօք իմովք, և որքան մեղայ՝ այնքան և նուագս յաւելի չարչարել զքեզ: Իցէ՞ ոք յանդգնագոյն կամ լպիրշ քան զիս՝ որ այնքան մեծապէս պարտական գոլով երախտեաց սիրոյ քում՝ իշխեցի անարգել զքեզ: Ո՛հ, իցէ Թէ գոյր հնար լինել ինձ որպէս չեղեալ քեզ անարգու. ո՛հ, իցէ՞ Թէ անկասկած եղեց յայսմհետէ չանարգել զքեզ: Տուր ինձ ատելութիւն, զզուանս և սոսկումն հանապազորդ 'ի

մեղաց. որպէս զի առաւել քան յամենայն չարէ՝ փախեայց 'ի նոցունց, և ոչ մի ինչ հրապոյր բարւոյ գրգռեսցէ զիս 'ի մեղս, և ցորչափ իցէ յիս շունչ կենաց՝ մի դադարեսցայց 'ի ցաւելոյ ընդ մեղս իմ:

Եթէ կամիմ ճշմարիտ ապաշխարող լինել՝ հարկ է ինձ ցաւել հանապազ ընդ մեղս իմ, և զգուշանալ 'ի միւսանգամ մեղանչելոյ: Եթէ թերացայց 'ի ցաւոց կամ յառաջադրութենէ՝ ապաշխարութիւն իմ ոչ իցէ ճշմարիտ՝ այլ վարապար:

ԾԼԶ. Քննեա և կշռեա զհանգամանս իրացն. Ո՞վ է որ զապտակն էած: — Հրեայ ումն անարգ ծառայ սպասաւոր և կալանաւոր: Եւ ո՞ ապտակեացն: — Աստուած ամենակալ, որում չէք ինչ որ զդէմ ունիցի. և յորոյ երեսաց զարհուրեալ դողան սիւնք հաստատութեան և խոնարհեալ կքին հիմունք աշխարհի: Քաջ միտ դնելի է այսմ: Արարիչն Աստուած որ յոչընչէ եհան զմարդն՝ ապտակ ընդունի 'ի ձեռաց զոր ստեղծն և կազմեաց անբաւ իմաստութեամբն և բարութեամբ. Թո՛ղ զէտոն ցաւ հարուածոյն, քանզի ամենայն ուժով բազկին եհար զնա, որպէս թէ փաւաղանաւ ոմամբ երկաթեաւ բախեալ: Իցե՞ն նախատինք հաւասար այսմիկ: Եւ սակայն չէք որ կըշտամբիցէ զժպիրհն սպասաւոր, և ոչ որ գութ արկցէ յանմեղն Տէր. այլ և ամենեքին ուրախ լինին ընդ անարգանսն: Որք զչարչարանաց Քրիստոսի ճառեցին մարգարէքն, առանձինն նշանակեցին և զայս գործ անօրէնութեան, որպէս թէ այս միայն շատ էր 'ի լնուլ զնա նախատանօք: Եւ արդարև, եթէ յ'ածելն ևեթ զմտաւ՝ վառիմք մեք նախանձու, և ոչ հանդուրժեմք թէ անվրէժ մնայցէ, զի՞նչ արդեօք կրեաց Յի-

սուս յընդունելն: Կարել կարէր սաստկագոյնս վրէժ խնդրել, որպէս և ամենեւին արդարացի էր. բայց առաւել ընտրեաց զխոնարհութիւն իւր 'ի գործ արկանել քան զարդարութիւն, զհամբերութիւն՝ քան զկարողութիւն. և առաւել փափագեաց խրատել զիս օրինակաւն՝ քան պատուհասակոծ առնել զամպարիշտն:

Իսկ ես ո՞րպէս օգտիմ այնու: Ո՜վ Աստուած իմ, եթէ ամենայն անիրաւութիւն և լուտանք զոր հնար էր մարդկան գործել՝ կուտէին յիմ վերայ՝ չէին բաւական 'ի համեմատութիւն ապտակին՝ զոր ընկալաւ Որդին Աստուծոյ: Նուաստ է ինձ անհամբերութիւնս և առ դոյզն ինչ ամօթ նախատանաց և մահակրութեան՝ եթէ ուրեք երբեք ինձ հանդիպիցի: Երագութիւնս իմ 'ի ցասումն և 'ի վրէժ, և քինաթափութիւն լեզուանութեամբ ընդդէմ նախատողին՝ տան ինձ խոստովանել, եթէ քրիստոնեայ եմ անպիտան, յոյժ հեռի 'ի նմանութենէ քում, ո՜վ Յիսուս, և անարժան ընդունելի լինելոյ 'ի ծոց եկեղեցւոյ քոյ: — Այլ օգնեա ինձ ո՜վ ամենագութ իմ Փրկիչ. մանաւորեա զիս խոնարհ և հեզահամբոյր հոգւոյ համբերութեան քոյ. սանձեա զցասումն իմ. խոնարհեցո զհպարտութիւնս. որպէս զի 'ի դէպս առթից մի վաղվաղիցեն միտք իմ 'ի վրէժ կամ 'ի տրտունջ, այլ համբերից ամենայնի առ սէր քո, և մեծ համարեցայց զհամբերութիւն քան զամենայն բարիս աշխարհի: Տարայց ամենայնի յօժարութեամբ, եթէ տացես ինձ լոյս ճանաչել՝ եթէ չկան չարիք որոց չիցեմ արժանի՝ վասն մեղաց իմոց. և թէ որ ինչ և կրիցեմ ոչ ինչ են առ այնոքիւք զոր դու վասն իմ կրեցեր:

Մէն մի յառաքինութեանց Քրիստոսի կարգեալ են 'ի յաղթումն հակառակաց նոցին որ

յիս ախտից. առից ինձ յօժանդակ զխոնարհութիւն, զհամբերութիւն, զքաղցրութիւն և ըզհամբոյր բարս Յիսուսի, առ'ի մեռուցանել յիս զհպարտութիւն, զանհամբերութիւն, զդառնութիւն և զբարկութիւն 'ի վերայ ընկերին:

ՃԼԷ. Զխոնարհական համբերութիւն իւր ցուցանէ Յիսուս 'ի կրելն զհարուած ապտակին, և զհեզահամբոյր պարկեշտութիւն՝ 'ի տալն զարժանակշիռ պատասխանին առ հարկանողն ժըպիրհ. Եթէ չար ինչ խօսեցայ, ասէ, վկայեա առաջի դատաւորիդ. իսկ եթէ բարի՝ ընդէ՞ր հարկանես զիս: Որով կամէր ասել, թէ Ոչ այլ ինչ արարի ես բայց վարդապետութեան իմոյ կացի պաշտպան. իսկ դու որ մի յայնցանէ էիր որք լուանն ինձ և հաճեցան և գովեցին, եթէ յայնժամ պատկառեցեր մխել յիս ձեռն, զիա՞րդ այժմդ իշխեցեր: Խրատ իմն հաճոյական էր այս, որով կամէր Փրկիչն մեր 'ի զգաստութիւն և յապաշխարութիւն ածել զամպարիշտն զայն. միանգամայն և անխարդախ վկայութիւն՝ եթէ ոչ ինչ խոտեաց նա զպատիւ քահանայապետին, թէպէտև նա քան զանուն քահանայութեան աւելի ինչ ոչ ունէր: Յամենայն դէպս կայ մեզ ուսանել ինչ 'ի Քրիստոսէ, և յորժամ լռէն և յորժամ խօսին. 'ի լռելն՝ երևի որպէս գառն որ վարիցի 'ի զենումն. 'ի պատասխանելն՝ որպէս հովիւ բարի, որ խրատէ զմեզ և հրաւիրէ 'ի նմանակցութիւն լաւութեանց իւրոց: Եւ ո՞ր լաւութիւն կատարեալ իցէ քան զպատասխանելն հեզութեամբ և առնել բարի չարարարի իւրում: Գաղտնիք են այս ծածկեալ յանիծեալ աշխարհէ, և յայտնեալ ընտրելոց հետևողաց և նմանողաց Քրիստոսի:

Ո՛վ զգայութիւնք իմ և իղձք իմ, ո՞չ զմայլեալ

յափշտակիցէք 'ի խանդաղակաթ սիրոյն Քրիստոսի: Տեսէք, զիա՛րդ գողտրիկ են դէմքն յընդունել զկնիք դժնդակ տապտակին. միանգամայն և դէմք կարծրունք՝ որք բախեալ կայծս արձակեն որպէս զպայլախազ. ոչ կայծ ցասման և ոխութեան, այլ սիրելութեան և բարեգթութեան: Եւ 'ի լռելն և 'ի բարբառել՝ հանապազ շնորհս կաթեն շրթունք նորա. և խօսք նորա և լռութիւն՝ 'ի խրատ օրինակի են մեզ յամենայն ժամ:

Ո՛վ Աստուած զօրութեանց, Հայր յաւիտենական, պաշտպան մեր 'ի պէտս կարեաց մերոց, չէք իմ ընծայել աչաց քոց տեսիլ արժանաւոր քան զերեսս ապտակեալս Որդւոյ քո միածնի: Վասն սիրոյն՝ որում արժանի է սէր նորին՝ գթա յիս և շնորհեա ինձ բարւոք վարել զլեզու իմ: Ցորժամ թշնամանս ինչ ոք ինձ գիցէ՝ է երբեք զի տամ լեզուիս և ժայթքեմ բորբոքախառն բանիւք, և է զի լռեմ՝ լռութիւն դառնահամբոյր. երկոքին ևս ախտաւորք, և լռութիւն իմ և բարբառումն: Այլ դու, Աստուած իմ, ուսո ինձ լռել և խօսել առաքինաբար ըստ Յիսուսի. խօսք իմ լիցին Ճշմարտութեամբ և պարկեշտութեամբ, լռութիւն իմ առ խոնարհութեան և համբերութեան:

Լեզու առընչակից է սրտի. և 'ի սրտի անկ է ինձ նախ արմատացուցանել զխոնարհութիւն. քանզի խոնարհաց տայ շնորհս Աստուած. և խոնարհն գիտէ ըստ ժամուն գիպաց լռել կամ խօսել առաքինօրէն, որպէս արժանն պահանջիցէ:

ՃԼԸ. Կանոն կարգեալ էր Յիսուսի՝ աշակերտաց իւրոց, որովք և մեզ, զի թէ ոք հարցէ զծընօտ մեր՝ դարձուսցուք նմա և զմիւսն. և զոր ուսոյցն բանիւ՝ պարզեաց և եցոյց օրինակաւն: Ոչ

ըստ բառին է իմանալ զայս պատուէր. քանզի համբերութիւն քրիստոնէի ոչ 'ի ծնօտին կայ՝ այլ 'ի սրտի. և մարթ է դարձուցանել առ թշնամին զմիւս ևս ծնօտն, այլ սրտմտութեամբ ցասման կամ ստոյիկեան մնափառութեամբ: Միտք բանից Քրիստոսի այս են. եթէ ոք անարգիցէ կամ նախատիցէ զմեզ, ոչ միայն պարտ է մեզ խորշել յատելութենէ, այլ և յօժարել 'ի կրել այլ ևս զրկանս, ոչ առնելով զանց և զհնարիւք ուղղութեանն՝ եթէ պատշաճ դատիցի:

Եւ ո՞ կատարելապէս իբրև զՔրիստոս արար զպատուէրս զայս, յանդիմանեաց զհարկանողն խաղաղական և օգտաւէտ խրատու. յօժար գոլով յանդորրութեան սրտին կրել մեծագոյնս ևս նախատինս: Ոչ թէ միայն զմիւս ևս ծնօտն մատոյց 'ի հարուած նոր, այլ և զբովանդակ մարմինն 'ի բևեռումն խաչի: Ո՛հ, իցէ՞ թէ գոյր հնար տեսանել 'ի ներքուստ զամենասիրելին Յիսուս. քանի՛ գութ գորովոյ առ ապտակողն. քանի՛ եռանդն սիրոյ առ մեզ՝ որոց վասն կրէրն և փափաքէր կրել զամենայն դառնութիւն խոշտանգանաց:

Ո՛հ, երանեալ և երջանիկ իցէ որ գիտիցէ նըմանել Յիսուսի յայսմ յօժարութեան սրտի, յետ ընդունելոյ նախատինս՝ պատրաստ ելով յընդունել ևս քան զևս, 'ի կրթութիւն մեռելութեան և խոնարհութեան: Այլ ես յոյժ հեռի եմ 'ի նմանութենէ սրտի քումէ, Յիսուս իմ ամենագութ. չունիմ զօրութիւն տանելոյ երկուց կամ երից խայթող բանից ասացելոց ինձ. և զի՞նչ կարիցեմ առնել եթէ և գործով ինչ նախատիցիմ: Եւ ոչ ընդ յանդիմանութիւն արդար նախանձաւորին յուղղել զթերութիւնս իմ՝ հանդուրժեմ յօժարութեամբ. և զորս առաւել երախտեօք պարտ էր ինձ սիրել՝ ատեամ և զնո-

սին ։ Եւ ո՞ր յոյս վստահութեան գուցէ ինձ՝ համ֊
բերելոյ տիրապէս նախատանաց ։ Զիք քրէական
և գայթակղելի իբրև զանժուժութիւն իմ ։ Ի֊
ցիւ թէ տպաւորէին 'ի միտս և 'ի սիրտ իմ պա֊
տուիրանք համբերութեան, որպէս զի գործովք
կատարէի յաղթս դիպաց ։ Կամել կամիմ և փա֊
փագեմ յոյժ նմանել քեզ, Փրկիչ իմ. և զի փա֊
փագեմ՝ հայցեմ և զօգնութիւն քո ։ Եւ ո՞ է որ
տայ ինձ զփափագս զայս և զյոյս և զհայցուած.
ո՞ այլ ոք, եթէ ոչ դու ինքն՝ Աստուած ամե֊
նայն բարութեանց ։ Եւ ո՞ այլ ոք, քան թէ դու,
կարիցէ լսել աղաչանաց իմոց և տալ ըստ ցան֊
կութեան սրտի իմոյ ։ Քո պարգև են տենչանքս
յառաքինութիւն. քո իսկ պարգև և ոչ իմ ինչ
հնարագիտութիւն լիցի և ստացումն առաքի֊
նութեան ։

Ծանեայց զչարիս իմ, թէ անհամբեր եմ, քան֊
զի հպարտ եմ. հպարտութիւն իմ թուեցուցա֊
նէ թէ և փոքու իւիք՝ նախատինք ինձ գործիցին.
և սակայն բնաւ և ոչ մի ինչ 'ի նախատինս իցէ
ինձ, քանզի վասն մեղաց իմոց՝ չարագունից ես
արժանի եմ ։

ՃԼԹ. Եթէ զամենայն ընթացս չարչարանաց
Քրիստոսի քննիցեմք, տեսանեմք զի կրելով նո֊
րա վիշտս յամենայն դասուց մարդկան, և զա֊
մենայն ազգս անարգանաց և ցաւոց, վարեցաւ
հանապազ որպէս գառն հեզատեսակ, որ ոչ ե֊
բաց երբեք զբերան՝ 'ի չքմեղս կամ 'ի տրտունջ և
'ի քրթմնջիւն, թէ հի՞մ թշնամանէք զիս ։ Իսկ
այժմ յընդունել զապտակն՝ գանգատի զյանդըգ֊
նելոյն, և բարբառի. « Ընդէ՞ր հարկանես զիս » ։
Զի՞նչ արդեօք այսմ պատճառք ։ Կարծի թէ որ
եհարն էր Մաղքոսն, զորոյ զունկն բժշկեաց Յի֊
սուս սքանչելեօք 'ի պարտիզին. մարթ է համա֊

րել՝ եթէ և ընդ մարմնաւոր բժշկութեանն՝ տուեալ էր նմա և զհոգևորն. որպէս սովոր էր առնել և այլոց ախտացելոց, լուսաւորելով հաւատովք և արդարացուցանելով թողութեամբ մեղաց նոցին: Իրաւամբք արդ գանգատի Քրիստոս ընդ ապտակն այն միակ՝ իբրև ընդ ծանրագոյն և դառնագոյն քան զամենայն նախատինս. զի յայնմանէ ընդունէր՝ որում բարի արարեալ էր ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ. և 'ի վերայ այսր ամենայնի՝ քանի՜ հեզութեամբ և մարդասիրութեամբ համբերէ:

Որպիսի՞ս և ինձ բարիս հոգեկանս և մարմնաւորս չիցէ քո արարեալ, Աստուած իմ. և որպիսի՞ թշնամանս չիցէ և իմ փոխանակ եդեալ քեզ: Յորժամ զմտաւ ածեմ զամենամեծ շնորհըս ողորմութեան՝ որով 'ի խոստովանութեան այնքան նուագս թողեր զմեղս իմ. և յորժամ յիշեմ՝ զի յետ ընդունելութեան թողութեան՝ դարձեալ թշնամանեցի զքեզ. թուի ինձ թէ առ ամենայն մեղանս իմ՝ յետ խոստովանութեան՝ արդարապէս ասիցես և ինձ. «Արարած ապերախտ, ընդէ՞ր ընդ վայր հարկանես զիս»: Այլ մեծ ևս չար այս է՝ զի և այժմիկ եմ որպէս և յառաջն էի: Շրջան իմն դարձադարձ մեղաց և խոստովանութեան են կեանքս իմ. խոստովանիմ և ոչ զգաստանամ. և փոխանակ զուղղութեանն հնարս հնարելոյ՝ հանապազորդեմ 'ի չարաչար ախտս ունակութեանց իմոց՝ դաղջութեամբ, ցրտութեամբ և ապշութեամբ: Ո՜վ, Աստուած իմ. և ե՞րբ եղիցի վախճան չարութեան իմոյ և ապերախտութեան: — Ոչ գիտեմ առ ո՞ դիմեցից, եթէ ոչ առ քեզ՝ որ առնես մեծամեծս և անհասանելիս: Գիտեմ զի արժանի եմ պատուհասի արդարութեան քոյ, այլ 'ի գթութիւն քո ապաւինիմ. արժանի եմ ցասմանդ, այլ բո-

զոք հարկանեմ ողորմութեան քում, ողորմու-թեանդ ըղձեցելոյ յանբաւ և յանհուն բարու-թենէդ: Շնորհք քո սուրբ զօրացուսցեն զիս՝ մի և մեղանչել քեզ, այլ մանաւանդ սիրել զքեզ 'ի վեր քան զամենայն, և շնորհս և գոհութիւնս մատուցանել վասն ամենայն բարերարութեանց քոց, և առանձինն վասն խորհրդոյ խոստովա-նութեան:

Քննեցից զխոստովանութիւնս իմ. տացէ Տէր զի մի մեղայց 'ի խորհրդեանն կարգելոյ 'ի ջնջել և 'ի սրբել զմեղս: Ո՞րպէս քննեմ զխիղճ մտացս: Զի՞նչ ապաշաւեմ: Զի՞նչ առաջադրեմ: Եւ ո՞ր-պէս ամբաստան լինիմ զանձնէս:

Յիսուս յատեանի Կայիափայ:

ՃԽ. Իբրև եհարց քննեաց Աննա խորհրդա-կցօք իւրովք նախարարօք՝ զվարդապետութենէ և զաշակերտաց Յիսուսի, և ոչ գիտէր զինչ առնել նմա՝ զի ոչ եգիտ փաստ ամբաստանու-թեան, առաքեաց զնա կապանօքն որովք ածինն առ ինքն, առ քահանայապետն Կայիափա՝ որ էր փեսայ իւր. ակն ունելով եթէ նա որ խո-րամանկագոյն էր և բծախնդիր այր՝ գտցէ հը-նարս և պատճառս դատապարտ առնելոյ զՅի-սուս: Իսկ Հրէիցն տեսեալ զՅիսուս արխաբար ժուժկալելով ըլկանացն և թշնամանաց՝ զդողի հարկանէին առ կատաղութեան, զի յամօթ ե-լեն. և զնորա աննկուն համբերութիւնն նախա-տինս անձանց գրելով, անցուցանէին ընդ նա զա-մենայն չարաչար կտտանս, 'ի թափել զանհնա-րին քէն ցասման իւրեանց: Այլ այն ամենայն

անզգութիւն՝ առաւել ևս սքանչելի յարդարև զհեզութիւն գթութեան նորա։

Աւետարանիչն Յովհաննէս յուշ առնէ որոց ընթեռնուցունն և խոկասցեն յանարգական տարուէն Քրիստոսի առ Կայիափա, եթէ այս այն Կայիափա է որոյ սակաւուք յառաջ ասացեալ էր, եթէ լաւ է զի մեռցի Յիսուս վասն փրկութեան ժողովրդեանն։ Կամք են աւետարանչին զի յուշ լիցի մեզ, եթէ Յիսուս փրկիչ է աշխարհի, այսինքն է ճշմարիտ մարդ և Աստուած ճշմարիտ, եկեալ 'ի հատուցումն պարտեաց մերոց, և 'ի մեռանել՝ վասն փրկելոյ զմեզ 'ի յաւիտենիցն մահուանէ՝ յոր դատապարտեալս էաք 'ի սակս մեղաց։ Վասն այնորիկ պարտ և արժան է մեզ հաւատալ այսմիկ աներկմիտ, եթէ աստուածութիւն և մարդկութիւն միացեալ են անճառապէս 'ի միում անձին. զի եթէ մարդ միայն կամ Աստուած միայն էր Քրիստոս, ոչ բաւէր գործել զյաւիտենական փրկութիւն մեր. և հաւասար վտանգ է մեզ՝ և չհաւատալն զնա Աստուած, և չհաւատալն զնա մարդ։ Տպաւորեա ուրեմն, Աստուած իմ, զհաւատս զայս յուշի իմում և 'ի սրտի, որպէս զի եռանդեամբ և սուէպ խոստովան եղէց զայն։

Հաւատամ, Տէր իմ Յիսուս, որչափ և կարեմ, զի դու ես ճշմարտապէս Աստուած և մարդ. և այնպէս հաստատութեամբ հաւատամ՝ զի քոյով օգնականութեամբ տամ և զարիւն և զկեանս 'ի պաշտպանութիւն անսխալական այսմ ուղղափառ հաւատոյ. և եթէ չէք իմ այն հաւատք՝ որում արժանի ես, վերընծայեմ քեզ զամենայն ջերմաջերմ հաւատս՝ որով բիւրք բիւրուց մարտիրոսաց փառաւորեցին զքեզ, ընդունելով զմահ 'ի պատիւ անուան քում։ Այսպէս հաւատամ և օրհնեմ զքեզ 'ի ցաւս քո, և եր-

կըրպագեմ և խոստովանիմ զքեզ փրկիչ իմ. և հայցեմ՝ ի քէն զշնորհս գործով կատարելոյ զոր հաւատամս՝ քեզ նմանելով. զի զի՞նչ օգուտ է ինձ հաւատալ զքեզ փրկիչ իմ՝ եթէ չեղեց գործակից 'ի փրկութիւն անձին իմոյ՝ հետևելով քոց լաւութեանց:

Արծարծեցից յիս զայս հաւատս, եթէ Աստուածամարդն յանձն էառ զկապանս, զանարգանս և զդատապարտութիւն մահու՝ յաղագս իմ. և ըստ չափու կենդանութեան հաւատոց՝ կենդանասցին յիս յոյս և սէր և ամենայն ուղղութիւնք:

ՃԽԱ. Ատեան գումարեալ բազմի քահանայապետն Կայիափա, անարժան գահագլուխ ժողովարանին, շուրջ զիւրև ունելով զուսուցիչս օրինացն և զծերսն, որոց ժամադիր եղեալ էր անդ սպասել Քրիստոսի, քանզի գիտէին զնա ձերբակալեալ. և այն ինչ տեսեալ զի ահա գայ՝ սկսանին խորհուրդ առնուլ, ոչ 'ի քննել թէ արժա՞ն իցէ դատապարտել զնա, այլ թէ ո՞րպէս դատապարտել: Այնքան ծարաւիք են արեան նորա, մինչև առանց ինչ ընդ բանս ածելոյ կամին 'ի մահ մատնել. այլ ոչ շատ համարին լոկ զմեռանելն, այլ կամին զի մեռցի որպէս յանցաւոր և անարգական մահապարտութեամբ: Մախան անօրէնքն ներքին ատելութեամբ սպանանել զՅիսուս. այլ առ Ճշմարտասէրս երևելոյ՝ մեքենայեն արդարութեան կերպարանօք վերասքօղել զկիրս չարութեան իւրեանց. վասն այնորիկ կեղծաւորին ատեան քննութեան կազմել. հեթեթա՛նք խորամանկութեան: Վկայս խնդրեն. և ոչ ինչ է նոցա փոյթ եթէ և սուտ իցեն վկայքն, շատ է թէ առ արտաքս Ճշմարիտք երևիցին. չէ ինչ փոյթ՝

եթէ անիրաւ իցէ վճիռն, շատ է թէ ունիցի ինչ ցոյցս իրաւանց։

Միաբանեալ մաքառին ընդդէմ Քրիստոսի՝ նախանձ, հպարտութիւն և կեղծաւորութիւն. ամենեքին միաբանին սպանանել զՅիսուս, քանզի նախանձոտք են. այլ ոչ կամին այնպիսիք երևել, քանզի հպարտք են. և այնպիսի հնարիւք՝ զի և 'ի չարութեանն իւրեանց՝ բարիք երևիցին, քանզի կեղծաւորք են։

Ո՞չ ապաքէն այսպիսի ինչ երևոյթ և ես յինքն 'ի յիս տեսանեմ։ Կարծէի զիս աղատ յամենայն կեղծաւորութենէ, այլ, ո՛հ, ո՛րքան վարակեալ եմ նովիմբ. քանիցս լաւութեան կերպարանաւ սքօղեմ զյոռին. զնախանձ և զչարութիւն՝ բարե-պաշտութեան երեսօք, զհպարտութիւն՝ խոնար-հութեան ինչ երանգօք. զներքին ապականու-թիւնս՝ արտաքնայարդար պարկեշտութեամբ. զմոլեկան բերմունս՝ դիմակօք պատրուակեալ բարեբարոյութեան։ Եւ զի՞նչ իցէ այս ամենայն եթէ ոչ կեղծաւորութիւն գլխովին։

Ո՛վ Աստուած սրտագէտ, զի՞նչ լինիցի ինձ յաւուր յորում մերկասցիս զխաւարայինս պա-տրուակ, և կեղծիքն իմ երևեսցին։ Ո՛հ, Տէր, ծանո՛ ինձ քաջ զծանրութիւն չարիս, որ այնքան բազմավտանգ է՝ որքան սակաւածանօթ, որպէս զի մտադիւր ուղղեցից զանձն իմ։ Առելութեամբ մեծաւ ատեամ զախտս զայս՝ որ ամենևին հա-կառակ է քեզ։ Դու՝ Ճշմարտութեանց ես Աս-տուած. իսկ կեղծաւորութիւն զի՞նչ այլ է՝ եթէ ոչ խաբէութիւն և ստութիւն։ Աստուած Ճըշ-մարտութեան, տուր ինձ սիրել զՃշմարտութիւն և ատել զընդդունայնութիւն, որ չէ ինչ պիտա-նացու առ յաւիտենականութիւն անդր։

Զի՞ք ինչ ամօթալի քան զկեղծաւորութիւն. 'ի բաց հերքեցից զայն յանձնէ յիշատակաւ աւուրն

դատաստանի, յորում ամաչեսցեն և յամօթ լի-ցին ամենայն կեղծաւորք։ Զիք ինչ այնպէս ծա-ծուկ՝ որ թէ ոչ յայտնեսցի։

ՃԽԲ. Ժողովն գումարեալ 'ի Կայիափայ՝ բա-ղում անգամ նախագուշակեալ էր 'ի Սաղմոս, քանզի 'ի նմին խորհեցան խորհուրդ անիրաւու-թեան խարդաւանել զըպարտութեամբ զանմե-ղութիւն և զհամբաւ փրկչին։ Եւ արդարև զինչ ոչ ասացին կամ զինչ ոչ արարին ստութեամբք՝ առ 'ի պարտաւոր կացուցանել զնա։ Գիտէին ամ-պարիշտքն զի անպարտ է Յիսուս և 'ի վարս և 'ի վարդապետութեան իւրում. քանզի ո՞չ ա-պաքէն 'ի բազում ինչ իրս փորձեալ և հարցեալ զնա խորամանկութեամբ՝ ոչ ինչ գտին 'ի նշաւա-կել կամ 'ի ստգտանել. գիտէին ևս զի ոչ գոյր վկայ որ կարիցէ ճշմարտապէս չար ինչ վկայել զնմանէ։ Այլ քանզի ջեռեալ էին ըղձիւք վատա-համբաւ ցուցանելոյ զնա և իբրև զվատչուէր ոք սպանանելոյ, ոչ գտանելով վկայս ճշմարիտ՝ խնդրէին զսուտս։

Այլ, ո՛հ, ո՛րպէս նշաւակին խորհուրդք մարդ-կան յիմաստութենէն Աստուծոյ։ Զի ահա որք յառաջ մատչին վկայել զնմանէ 'ի չարութիւն, ծանուցեալք էն ստախօսք լինել և անհաւատա-լիք. և յաւելեալ ևս պայծառացուցանել զանա-րատ անմեղութիւն նորա կրթին։ Այնքան մա-քուր, անբիծ և սքանչելի էին կեանք Քրիստո-սի, զի և ոչ ստուեր կամ երևոյթ ինչ յանցա-նաց կարէր աղօտացուցանել զանուն նորա. յա-մենայն ամբաստանութիւնս զոր ամբաստանեն զնմանէ՝ ճշմարտութիւն յաղթահարէ զստու-թիւն. և անօրէնութիւն ինքն զինքն սուտ ցու-ցանէ։

Մեծ մխիթարութիւն է ինձ, Տէր Յիսուս,

պայծառանալ անմեղութեան քո յայնքան անիրաւ վկայութիւնս. և երկիր պագանեմ տեսչութեան Հօր քում երկնաւորի՝ որ այսպէս տնտեսեաց, զի յերթալն քո ՚ի մահ՝ երթիցես արդար ծանուցեալ յաշխարհի, և դատապարտեալ՝ առանց և միոյ յանցանաց: Զարմանամ և ընդ նենգութիւն և չարութիւն Հրէիցն, որք ջանահնար լինէին ՚ի ձեռն վկայից ստութեան դատապարտել զքեզ: Այլ ՚ի սմին ժամու զգամ զգետակցութիւնս իմ կշտամբել զիս, և հաւաստեօք ցուցանել՝ զի ՚ի նոյն չարիս կամ և ես: Ես արդարև ես իսկ խնդրեմ վկայս սուտս ընդդէմ քո, ամենեքին անմեղդ իմ Փրկիչ, քանիցս և խնդրեմ պատճառս, կարծիս և հաւանութիւնս ինչ ընդդէմ ճշմարտութեան աւետարանի քո սրբոյ: Գիտեմ զպարտս խղճի մտաց առ քեզ, առ ընկերս և առ անձն իմ. այլ քանիցս ոչ նկըրտիմ առնել ինձ խիղճ սուտ՝ առ օրինաւոր համարել զիրս որք ապօրինաւորք են յայտնապէս: Քանիցս ՚ի շնորհուկս ցանկութեան՝ նախամեծար առնեմ զխաբէական կարծիս իմ քան զօրէնս քո սուրբս: Աստուած իմ, զղջամ ընդ ամենայն չարութիւնս իմ. և աղաչեմ վասն սիրոյդ որով սիրես զճշմարտութիւն՝ տալ ինձ խիղճ ուղիղ, զի արդարացուսցէ յամենայն դէպս զճշմարտութիւն: Մի թողուր զի պատրեսցեն զիս կարծիք, յիշելով՝ զի ոչ ըստ կարծեաց այլ ըստ խղճի դատեցայց:

Ուսուցանէ աւետարան անձուկ դոլ զճանապարհ արքայութեան. անկ է ինձ վկայս սուտս համարել զթոյլ կարծիսն որք հրաժարեցուցանեն զիս յաւետարանական մեռելութենէ, և կշտամբել զապականեալ բարս աշխատասէր զգայութեանց իմոց:

ՃԽԳ. Ատեան բազմաժողով խմբեալ կայ 'ի սրահի մեծի ժողովարանին. և 'ի տալ Կայիափայի նշան և համարձակութիւն խօսելոյ զՅիսուսէ, ցուցանելով հաճութիւն ընդ յոլովութիւն ամբաստանողացն, անդէն և անդ յառնեն բազումք հծծելով, յառաջ մատչել և շնորհս ունել վասն հրամանի ամբաստանութեան: Խօսի այր իւրաքանչիւր որ ինչ գայ 'ի միտս և զոր լուեալն է 'ի դպրաց և 'ի Փարիսեցւոց, որոց արուեստ իմն արարեալ էր գքրթմնջելն զՅիսուսէ և անուանարկ առնել: Ոմանք ասեն զնա այր կերող և արբեցող, բարեկամ մեղաւորաց. այլք՝ մեղաւոր գլխովին, խռովիչ ժողովրդեան, հայհոյիչ Աստուծոյ. և այլք թէ կախարդասար ոմն է, և ինքնապարծ: Քանիպատիկ ամբաստանութիւնք:

Իսկ Յիսուսի զայն ամենայն լուեալ՝ զի՞ գործիցէ: — Այն պատուաւորի չէք ինչ դառնավիշտ քան զըսպարտութիւն. լաւագոյն համարի զմեռանելն քան զկեալն վատահամբաւ: Ի դէպ է կարծել թէ այժմիկ ըմպէ Յիսուս զդառնադառն բաժակն՝ զոր աղերսէր մարդկութիւն նորա 'ի պարտիզի անդ՝ 'ի բաց դարձուցանել: Լսէ զամենայն. և թոյլ տուեալ զգայական ախորժիցն կրել զամենայն վիշտ՝ որ 'ի կուտելոյ փնովաւ դժնդակ հնարից ամբաստանութեանցն, աննկուն համբերութեամբ տանի ամենայնի. և անճառելի գթութեամբ աղօթէ վասն համօրէն զըսպարտողաց իւրոց:

Զի՞նչ յայսմ օրինակէ ուսանիցիս դու, հոգի իմ: — Ուսայց համբերել՝ յորժամ չար ինչ ասիցեն զինէն. և եթէ 'ի չարախօսութենէ անտի՝ հասցէ ինձ արամել և հոգալ, և իրաւունս համարել զարամելն վասն տարապարտուց նախատանաց և անուանարկութեան իմոյ, ուսայց

չառնել այլոց զոր չկամիմ թէ այլք առնիցեն ինձ: Կարի իսկ դիւրադայթ եմ յախտ չարախօսութեան, երագ և պատրաստ 'ի չարաչար դատել զգործս այլոց, զանպատեհս կասկածել և ասել իսկ նմա. չոյտ 'ի պատմել և յաւելուլ զթերութիւնս այլոց. դիւրաշարժ 'ի ծանուցանել զոր լսեմ զայլոց զչար, առանց քաջիկ քննելոյ եթէ իցեն ստոյգք թէ ոչ. և չածելով 'ի յուշ՝ թէ քանի՞ ինչ վնաս ածից համբաւոյ նոցին:

Ո՛Վ Յիսուս, դու ծանո ինձ զծանրութիւն և զգարշութիւն ախտիս այսորիկ. և տուր շնորհս՝ զի որով սիրով խորշիմ 'ի լսելն չար զանձնէս՝ նովին և զընկեր իմ սիրեցից, և մի խօսեցայց չար զումեքէ: Զղջամ վասն ամենայն մեղաց զոր մեղայ չարախօսիկ լեզուաւս. և դնեմ 'ի մտի սանձել զսա, սիրելով զամենեսին որպէս զանձն իմ, առ սէր քո: Այլ ո՞ կարիցէ սանձ դնել սմա, եթէ ոչ դու, Տէր, տացես օգնութիւն 'ի դէպ ժամու: Ի քեզ առնեմ զնա ապաստան 'ի պահպանութիւն, քեզ նուիրեմ զայն: Դիւրին է ինձ դատապարտել վասն յանցանաց լեզուի. և որպիսի՞ տանջանք հասցեն լեզուի՝ եթէ դատապարտ եղեց վասն լեզուի:

Այլ հարկ է ինձ յարմատ անդր չարախօսութեանն հպել, որ է հպարտութիւն և նախանձ: Հպարտութեան ընդդիմահար կարգեցից զխոնարհութիւն Յիսուսի, և նախանձու իմոյ՝ զզըթութիւն նորա: Ամենայն անկարգութիւն լեզուի 'ի սրտէ անտի բղխէ:

ԾԽԴ. Ի բարկութիւն բրդեալ սրտմտի Կայիափա, զի ոչ գտանէ ընդդէմ Յիսուսի վկայս՝ գոնեա 'ի վերին երեսս իսկ արժանահաւատս. և բախեալ դիւական մոլեգնութեամբ յառնէ 'ի

գրգռել զԱրգարն, որ կայր անբարբառ՝ զգեստին նշմարելով խորին խոնարհութեամբ: Զի՞ գործես, ասէ. ո՞չ տաս պատասխանի որչափ ինչ դոքա զքէն ամբաստանեն: Զայս ասէ խորամանկութեամբ, զի որսասցէ բան 'ի բերանոյ նորա, ցուցանել զնա յանցաւոր եթէ այսպէս և եթէ այնպէս: Իսկ Յիսուսի գիտելով զխորհուրդ չարութեան նորա՝ թոյլ տայ նմա խօսել, և ինքն լռէ: Լռէ, ոչ առ հարկի կամ առ անկարողութեան արդարացուցանելոյ զանձն, այլ ազատական և առաքինի ընտրութեամբ: Լռէ, քանզի չէին պէտք ջատագովութեան՝ ուր ոչ ինչ հաստատեն ամբաստանութիւնքն: Լռէ, ըստ նախագուշակութեան մարգարէին, զի լռութեամբն կատարեսցէ զհեզութիւն և զհամբերութիւն. և այնու իսկ երևի տէր հզօր և կարող 'ի պատերազմի, և յաղթող մեղաց և աշխարհի, մինչ դեռ աշխարհ հպարտութեամբ իւրով կարծէ յաղթել նմա: Ո՜վ լռութիւն բազմուսոյց: Ուսուցանէ ինձ Յիսուս, և քաջ իսկ ուսուցանէ, եթէ զրպարտութեանց և չարախօսութեանց չիք յաղթողագոյն քան զխոնարհութիւն և զհամբերութիւն: Զի՞նչ օգուտ իցէ տալ պատասխանի լուտանաց, եթէ չարագոյն ևս գործիցի: Զի՞նչ օգուտ իցէ և լռութիւն թշնամանագիր և ամբաստանաւն: Մարդկայինս իսկ խոհեմութիւն արգելու և զպատասխանելն. այլ լռութիւն արդիւնական այն է՝ որ քրիստոնէական առաքինութեամբ վառեալ իցէ: — Ի կիրառութեան այսորիկ յոյժ պակասաւոր եմ ես, ո՜վ Տէր, և հարկ է ինձ տպաւորել յիս զառածս զայս, եթէ բարոյական առաքինութիւնք միայնակք առանց գերբնական պատճառի չեն բաւականք առ 'ի ժառանգեցուցանել ինձ զյաւիտենականն երանութիւն: Քանի՜ քանի՜ գործս գործեմ ես

արդեօք բարիս 'ի քէն, այլ արուեստ առ փառս արքայութեան. քանզի գործեմ միայն ըստ բերման բանիս մարդկայնոյ, կամ առ աչս մարդկան. զոր արժան էր ինձ գործել առ սէր քո, Աստուած իմ:

Հայր յաւիտենական, նուիրեմ քեզ զամենառաքինի լռութիւն Քրիստոսի 'ի կրելն զնախատական զրպարտութիւնսն: Բարձ յինէն զամենայն խոհեմութիւն՝ որ ըստ մարմնոյ և ըստ աշխարհի. որ չէ յայլ ինչ պիտանացու, բայց 'ի տածել յիս զսէր անձին, առ 'ի ծանուցանել ինձ զհակառակ պատասխանս, և առ 'ի զրկել զիս 'ի քաղցր մխիթարութեանց քոց: Տուր ինձ փոխանակ նմին զճշմարիտ առաքինութիւն քրիստոնէական, զոր աշխարհս ոչ ճանաչէ, և համարի յիմարութիւն և ապշութիւն. առաքինութիւն՝ որ դրդի 'ի շնորհաց, զոր զլանաս ամբարտաւանից և ազդես խոնարհաց: Լոյս տուր մտաց իմոց ճանաչել զճշմարիտն առաքինութիւն. տուր եռանդն սրտիս՝ առ 'ի սիրել և ցանկալ նմին. և զօրութիւն կամացս՝ առ 'ի գործել ժրապէս:

Չէ բաւական նախատանացն համբերել. անկ է ինձ համբերել 'ի սէր Յիսուսի և վասն նմանող նմա լինելոյ: Քաղցրացի ինձ համբերել, յիշելով զի բազմաց յոյժ համբերեաց Յիսուս կամաւորապէս՝ առ սէր իմ:

ՃԽԵ. Տեսեալ Կայիափայի զի Յիսուս թէպէտ և բռնազբօսեալ 'ի պատասխանել՝ չտայ ինչ պատասխանի, այլ լռէ, փոխանակ սքանչանալոյ ընդ առաքինի լռութիւն նորա, սրտմտի և բորբոքի ցասմամբ. և ջանահնար լինի դարձեալ թախանձել զնա 'ի պատասխանատուութիւն, որպէս զի բան ինչ 'ի փուրսից ամբաստանութեան

որսայցէ 'ի բերանոյ նորա. և վասն այնորիկ ասէ. «Երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի, զի ասասցես մեզ՝ թէ դո՞ւ ես Քրիստոսն որդի Աստուծոյ»: Ո՜հ խորամանկութիւն, ո՜հ դժոխային չարութիւն: Գիտէ ամպարիշտ դատաւորն՝ զի ասացեալ էր Քրիստոսի յայտնուագս լինել որդի Աստուծոյ. և արդ հարցանէ ցնա զայս, ոչ զի հաւատասցէ նմա, այլ զի բանս ինչ կորզիցէ 'ի նմանէ. իբրու զի, եթէ ասիցէ՝ այո, այնն համարեսցի 'ի հայհոյութիւն, և եթէ ասիցէ ոչ, ոչն ևս լիցի նմա 'ի դատապարտութիւն, մոլորեցուցիչ ժողովրդեան երևելով. եթէ այո և եթէ ոչ՝ Կայիափա համարի զայն 'ի յանցանս մեծ և արժանի մահու: Ի նմին խորհրդեան կան և այլ ընթերակայքն, քահանայք, դպիրք և փարիսեցիք: Եւ տես, զի՞արդ ահաւոր անուամբն Աստուծոյ՝ նիւթեն մեծագոյն թշնամանս Աստուծոյ, 'ի մահու միածնի Որդւոյ Աստուծոյ. և զնոյն ինքն զխոստովանութիւնն Քրիստոսի զաստուածութենէ իւրմէ, յոր հաստատեալ է և փրկութիւն աշխարհի՝ հնարին առնուլ պատճառս դատապարտութեան իւրեանց: Ո՜հ, ցո՞ր վայր վարեալ ձգէ զմարդ՝ ախտ բռնացեալ: Ո՞ է որ գրգռէ զչուառականսդ՝ չարաչար վարել սրբազանիւքն, և զայդպիսի անհնարին ժպրհութիւն ժպրհել, եթէ ոչ հպարտութիւնն, նախանձն, բարկութիւնն, և ատելութիւնն, զորս ոչ հոգացան 'ի ցածուցանել 'ի սկզբան անդ:

Պատեհ է ինձ խրատել աստ և զգուշանալ 'ի վտանգս իմ: Այլ զանգիտեմ թէ գուցէ և ես զնուիրական և զսրբազան իրս կրօնից, որպիսի են խորհուրդքն, առից յ'աղագս սրբապղծութեան, վասն յօրացեալ և անարգել ախտից ինչ իմոց: Զգամ յիս սէր անկարգ առ ամենայն որ

յաւելու յիս զամբարտաւանութիւն սրտի և զհեշտութիւն 'մարմնոյ. և սակայն առանց ինչ զմտաւ ածելոյ զպայման վարուցս՝ մատչիմ անգգուշաբար առ ամենասուրբ խորհուրդսն. և անձնահաճ լինիմ ասելով, Զի՞նչ չար լինիցի: Եւ ո՞ գիտէ թէ արտաքինս այս և առերևոյթ բարեպաշտութիւն մերձենալոյ առ խորհուրդս՝ այնքան ընդունայն, աշխարհային և մարմնաւոր ըղձիւք՝ որ հակառակք են աստուածային սիրոյ, ոչ արկցէ զիս 'ի թիւ այնոցիկ՝ որք թշնամիք են քան թէ աշակերտք Փրկչին:

Աստուած իմ, բարձ յինէն զախտս՝ որք առեալ վարեն զիս մինչև 'ի պղծել զսրբազան խորհուրդս քո. տուր ինձ զոգի մեռելութեան՝ զկարևորն 'ի չափու ունել զունայնասիրութիւն իմ. շնորհեա ինձ զսէր քո, զսէր՝ որով որ ունինն վաղվաղակի 'ի բաց թողու զչարութիւն և լինի բարի: Այլք յուղղութեանց յաղթող գտանին ոմն այսմ և ոմն այնմ ախտի. այլ սէր քո միանգամայն արագ արագ յաղթահարէ և նուաճէ զամենայն ախտս:

Քննեցից զկիրս ախտից իմոց, մի՞ արդեօք անձնախաբ լինիցիմ անարժանութեամբ մատչել առ սրբութիւնսն: Թերևս չիցեն արդ ծանունք չարիքն իմ, այլ առ սակաւ սակաւ կարեն ծանրանալ, և ծանրացեալ եթէ ոչ կրթեցայց 'ի մեռելութիւն անձին:

ԾԽԶ. Թէպէտ և գիտէ Յիսուս եթէ Հրեայքն ամպարիշտք չեն արժանիք պատասխանւոյ, և ոչինչ օգտելոց են այնու, սակայն պատասխանէ վասն երդմնեցուցանելոյն զնա Կայիափայի, զի ցուցցէ թէ յոյժ սիրելի է նմա ճշմարտութիւն, և մեծապէս պատկառ կայ սրբոյ անուանն Աստուծոյ. խոստովանի յայտնապէս թէ ինքն է

ճշմարիտ որդի Աստուծոյ: Ես եմ՝ ասաց առ թշնամին, մինչ չեւ ըմբռնեալ 'ի պարտիզին, եւ 'ի բանէ անտի որպէս կայծակնահարք գգետնեցան: Ես եմ, ասէ եւ այժմ այն ինչ մերձ 'ի դատապարտել. եւ շանթ իմն կայծական արդարութեան իւրոյ է բանս այս, որ պարտաւորս կացուցանէ զնոսա 'ի յամառութեան չարութեան իւրեանց:

Այլ մեք 'ի խրատ մեզ առցուք զայդ: Գիտէ Յիսուս զի պատասխանի խոստովանութեան իւրոյ զանձնէ որդի Աստուծոյ լինել՝ առիթ լիցի Հրէիցն առնուլ զայն 'ի պատճառս դատապարտութեան իւրոյ 'ի մահ. եւ չիք երկբայել՝ եթէ կարէր նա լռել. զի ոչ եթէ 'ի նեղ ինչ անկեալ էր առ 'ի տալոյ պատասխանի՝ ոչ առ սրտմտութեան եւ խրոխտական խօսից Կայիափայ, եւ ոչ առ սպառնալեաց դահճացն. եւ սակայն պատասխանի առնէ ազատօրէն եւ կամաւորապէս. եւ ոչ ինչ եւ ոչ մահն մօտալուտ արգելու զնա 'ի խոստովանելոյ զճշմարտութիւն, 'ի փառս Հօրն իւրոյ երկնաւորի եւ 'ի փրկութիւն աշխարհի:

Ո՜վ, քանի՜ ամօթոյ չիցեմ ես արժանի 'ի բաղդատել զանձն իմ, այնքան փոքրասիրտ ելով 'ի կատարման պարտուց իմոց, զի տկարանամ եւ յաղթահարիմ միշտ առ մարդկան ականէ: Եթէ հարկ հասանէր ինձ վտանգաւ կենաց խոստովանել զհաւատս Քրիստոսի, որպէս վկայքն արարին, ո՞ւր մնայր ինձ արիութիւն, մինչ ոչ համարձակիմ եւ շուք դնել առաքինութեան, ուր սակաւ ինչ չարակամութեան կամ չարախօսութեան մարդկան կայցէ կասկած: Ահա այս է տկարութիւն իմ. կամիմ լինել եւ քրիստոնեայ եւ աշխարհային. եւ քանիցս ցրտանամ յառաքինութենէ՝ առ 'ի չկորուսանել զպատիւ եւ ըզշնորհս աշխարհասիրաց:

Ո՜վ Յիսուս իմ, քանի՜ մեծ է սէր քո առ իս.

քանի՛ փոքր է սէր իմ առ քեզ: Դու՝ քանզի ճշմարտապէս սիրէիր զիս՝ ոչ խորշեցար 'ի մատնելոյ զկեանս քո. իսկ ես զի ոչ սիրեմ զքեզ ստուգապէս՝ և խրտուիլ մի ունայնութեանց պակուցանէ զիս: Աղէ, զօրացո՛ զսիրտ իմ, որպէս զի յամենայն դէպս արիացայց խոստովանել և բանիւ և օրինակաւ՝ եթէ դու ես Աստուած իմ, ճշմարիտ և միակ և գերագոյն բարութիւն իմ պաշտելի. այլ չիք որ զգեցուցէ ինձ զօրութիւն՝ բայց միայն սէր քո: Տուր ինձ արդ սիրել զքեզ բոլորով սրտիւ. և եթէ այսպէս սիրեցից զքեզ՝ պատրաստ գտայց կրել զամենայն վասն քո:

Աստուած ճշմարիտ զՅիսուս խոստովանել համարեցի ինձ՝ քանիցս ես 'ի պատեհի դիպաց նմանող եղէց նորայն հեզութեան, խոնարհութեան, համբերութեան, և այլոցն ես պատուական առաքինութեանց:

ՃԽԷ. Յետ խոստովանելոյ զաստուածութիւն իւր՝ յաւելու Յիսուս և հաւաստիս, յիշեցուցանելով զհամաշխարհական դատաստանն, և վկայութիւն դնելով Կայիափայի և այլոց, եթէ յորժամ տեսանիցեն զինքն բազմեալ յաջմէ Հօրն երկնաւորի 'ի փառս, յայնժամ գիտասցեն թէ ո իցէ, և ծանիցեն Աստուած ճշմարիտ զՈրդին մարդոյ, դատաւոր ամենայն աշխարհի զդատեալն այժմիկ, բարձրեալ 'ի մեծվայելչութեան՝ զխոտեալն արդ 'ի խոնարհութեան իւրում, Աստուած ճշմարտութեան և սրբութեան՝ զհամարեալն արդ չարագործ:

Զհաւատս կարեւորս 'ի փրկութիւն մեր՝ կամի այսու հաստատել Քրիստոս. որպէս զի հաւատարիմ լիցի, եթէ ինքն է ճշմարիտ Որդի Աստուծոյ և որդի մարդոյ. հաստատել դարձեալ

զդոյս՝ զդացուցանելով եթէ ամենայն ինչ արդ 'ի վախճան անդր փութայ արագապէս, և յաջողութիւն և ձախողութիւն. և եկեսցէ հասցէ վաղվաղակի ժամանակն՝ յորում տացեն բարեաց փառք մշտնջենաւորք, և չարաց՝ տանջանք մշտնջենականք: Որպիսի՞ տագնապ տարակուսանաց հասցէ յաւուրն դատաստանի կորուսելոցն՝ որոց երթեալ իցէ զհետ թիւրութեան ախտից իւրեանց. որպիսի՛ մխիթարութիւն ընտրելոցն՝ որոց հետևող եղեալ իցէ օրինակի առաքինութեանցն Քրիստոսի: Զինչ արասցէ դատաւորն երկնաւոր 'ի վերջնումն անդ աւուր: — Բարձրացուսցէ զխոնարհս, և խոնարհեցուսցէ զամբարտաւանս:

Ո՜վ հոգի իմ, մինչ 'ի խրախուսել զիս առ կամաւորապէս յանձն առնուլ զվիշտս, զարհամարհանս և զնեղութիւնս աշխարհի, չիցէ՞ն բաւական զօրեղ օրինակն Քրիստոսի, և յոյս վայելելոյ ընդ նմին զյաւիտենական երանութիւնսն: Արդ այժմ է ժամանակ խոնարհութեան և համբերութեան. այլ քաջալերեսցուք, զի եկեալ հասցէ վաղվաղակի և ժամանակ անմահութեան և փառաց: Զեմք բաւականք, չեմք արժանիք այնմիկ, այլ Աստուած ոմն արժանաւորեաց զմեզ. Աստուած խոստացաւ մեզ զայն, և անսուտ է խոստումն նորա:

Արդ խոնարհեալ անկանիմ և երկրպագեմ առաջի աթոռոյ արքունական մեծութեան քո, Տէր իմ Յիսուս. հաւատամ զքեզ Ճշմարիտ Աստուած և Ճշմարիտ մարդ, դատաւոր կենդանեաց և մեռելոց, որ գալոցդ ես 'ի կատարածի ժամանակաց՝ 'ի պսակել կամ 'ի պատուհասել ըստ իւրաքանչիւր արժանեաց: Ուրախանամ ընդ մերձենալ աւուրն այնորիկ՝ յորում ամենայն ատելիքն քո խոստովանեսցին զաստուա֊

ծութիւն քո և զանմեղութիւն: Տպաւորեա անջինջ յոգւոջ իմում զճշմարտութիւն դատողութեան քո. քանզի գիտեմ եթէ լիցի ինձ այս 'ի զօրավիգն մեծ առ 'ի հաւատարմութեամբ ծառայելոյ քեզ և երթալոյ զհետ շաւղաց քոց:

Կրթեցից զհաւատս իմ 'ի դաւանել եթէ Յիսուս է Փրկիչ իմ, առ 'ի վառելոյ զիս 'ի սէր նորա, և թէ դատաւոր իմ է, առ երկնչելոյ 'ի նմանէ: Եթէ 'ի դէպս ուրեք պակասիցէ սէր իմ՝ երկիւղ լցցէ զթերին:

ՃԽԸ. Ի լսել զպատասխանի խոստովանութեան Քրիստոսի զանձն որդի Աստուծոյ, պարտ և արժան էր Կայիափայի անդէն և անդ պատկառանօք և երկիւղիւ 'ի գետին տարածանել, և օրինակաւ իւրով յորդորել և զայլս յերկրպագութիւն նմին. այլ ամենևին իսկ հակառակն գործի: Բորբոքի նա սրտմտութեամբ, զատամունս կրճտէ, և զքահանայական հանդերձն պատառէ. որպէս 'ի զարհուրանաց լսելոյ հայհոյութիւն սոսկալի: Ո՜վ ժանտաժուտ կեղծաւոր. թուեցուցանէ զանձն ջեռեալ նախանձու փառացն Աստուծոյ, և մոլեգին ցասմամբ վեր 'ի վայր տատանի և կատաղի: Երևեցուցանէ զինքն յոգի հարեալ ընդ անարգանս Աստուծոյ. և խնդայ մեծապէս զի եգիտ փաստ ամբաստանութեան և դատապարտելոյ զՈրդին Աստուծոյ. և ոչ լոկով ամբաստանութեամբ ինչ շատանայ, այլ ջանաջնար լինի ամենայն իրօք անցուցանել զանցուցանել և ծանրագոյն ևս ցուցանել զդփուրխին: — Իսկ Յիսուս միթէ նկրտի՞ 'ի չքմեղս լինել՝ լսելով այնպիսի անհեդեդ և պժգալի ոճիրս եդեալ յիւր վերայ, միթէ պաշտպանէ՞ անձին՝ ծանուցանելով զի չէր հայհոյութիւն այլ ճշմարտութիւն՝ զոր ասացն. միթէ զչարի,

և յեղաշրջեալ զգաստ յայս յանդիման առնէ, եթէ ոչ առելն զինքն որդի Աստուծոյ հայհոյութիւն իցէ՝ այլ ուրանալն զայն։ Լսէ նա զի ստութեամբ ամբաստանութիւնն, ժուժկալէ համբերութեամբ, և լռէ հեզութեամբ։ Ո՛վ սքանչելի օրինակ։

Եթէ դէպ լինիցի երբեք սուտ ինչ վկայել զինէն, անդէն 'ի տրտունջ հատանիմ, զաղաղակ բառնամ, և ոչ դադարեմ 'ի վիճելոյ զիբաւանց իմոց ընդ ում և ուր և իցէ, առ 'ի ցուցանել զիս յանխրաւի պարտաւորեն և դատափետ առնեն զանձն իմ. և թէ լեզուք են նենգաւորք որք խօսին զինէն չար։ Կիրք իմ ստուապացուցանեն զկարծիս իմ. և զդոյզն ինչ ստգիւտ մեծ յոյժ համարելով գնեմ 'ի մտի՝ եթէ առ 'ի տանել այնմիկ չիցէ բաւական համբերութիւն չափաւոր։ Եւ որպիսի՞ ոք քրիստոնեայ իցեմ ես՝ որ այսպէս այլազգ 'ի Քրիստոսէ գտանիմ։ Հայեա՛ց, հոգի իմ, 'ի Փրկիչն քո՝ որ հայհոյիչ հռչակի, մինչ ոչ էր, ոչ է և ոչ ոք եղիցի նման նմին փառաւորիչ Աստուծոյ։ Ո՛վ, որպիսի՞ նորայն հեզութիւն. որպիսի՞ երկայնմտութիւն՝ յամենանիրաւ մեղադրանս անդ։ Ո՜ր ունիցի յանդիման աչացն զայսպիսի օրինակ՝ զիա՞րդ ծանր համարիցի տանել և յեռանաչար զրպարտութեան։

Քաղցրագութ Յիսուս, կամիմ նմանող լինել քեզ 'ի կրել զնախատինս. զայս բաղձում անգամ եդի 'ի սրտի և արդ իսկ դնեմ. այլ աւա՜ղ, այնքան յեղյեղուկ եմ՝ զի առաջադրութիւնք իմ նման են ծաղկին դաշտաց, որ յառաւօտուն դալարանայ և յերեկոյն թառամենայ։ Հաստատեա, Տէր, զլուծութիւնս իմ՝ քոյով օգնութեամբ. տուր ինձ ճանաչել և ատել զհպարտութիւն իմ՝ որով մեծ իմն համարիմ զիս և

կարծեմ գոլ անյողդողդ, կայուն և հաստատուն որպէս սիւն կճեայ, մինչ եղէգն եմ սնամէջ յամենայն հողմոց տատանեալ։

Յորժամ 'ի ձախողանս կարճամտիցիմ՝ առիթ խոնարհութեան ինձ առից զկարճամտութիւն իմ. և խոնարհութեամբն գտից շնորհս համբերելոյ յոյլ նուագս 'ի դէպս նոյնպիսիս։

ՃԽԹ. Եթէ առաջի առնէր Կայիափա ընթերակայից խուրոյ՝ օրէնսուսոյց վարդապետաց, քննել առանց ակնառութեան և կրից զպատասխանին Յիսուսի, լուսով վարդապետութեան նորին և սքանչելագործութեանց և համեմատութեամբ գրոց սրբոց և թուոյ ժամանակաց, գտանէր զի նա ինքն է Մեսիայն ակնկալեալ. այլ նա չարութեամբն կուրացեալ՝ ոչ այլ ինչ խնդրէ բայց զի հայհոյութիւն համարեսցի ճշմարտութիւնն, և անմեղն՝ որպէս մեղապարտ խոստովանեալ և հաւանեալ՝ դատապարտ լիցի։ Վասն այնորիկ 'ի մերձակայիցն կողմն դարձեալ՝ կեղծաւորի 'ի կարծիս նոցա ապստամբ լինել, և յորդորէ և պարտաւորէ զնոսա տարապարտ բանիւքն և հնարիւք՝ գործակից ինքեան լինել 'ի վճիռ անիրաւութեան։ — Հաւանեալ անսան նմա ամենեքին, և հակառակ ամենայն օրինաց զանձամբք առեալ զպաշտօն և դատախազի և վկայի և դատաւորի, ձայն բառնան աղմկելով և գոչելով եթէ մահապարտ է Յիսուս։ Ո՜վ կոյրք և չուառք. առաջի աչաց ունելով զակնկալեալ Մեսիայն՝ ոչ տեսանեն. այնքան կանխեալ կալեալ են զնոսա կիրք՝ զի և ոչ մի խրատունք զօրեն առ նոսա. և ոչ են զարմանք եթէ յայնպիսի մտաց յամառելոց 'ի չարիս՝ ելցեն վճիռք խեղաթիւրք։ Այսոցիկ յառաջատես եղեալ մարգարէին՝ նկատէր զնոսա որպէս գինեհա֊

րեալս և ապշեալս. և են իսկ այնպիսիք զմբը-րեալք և զգլխեալք 'ի գոլոշեաց հպարտու-թեան, նախանձու և բարկութեան։

Այլ ինձ ոչ է 'ի դէպ զչարիլ ընդ ներքոյ ձեռին անկեալսն և ընդ հրապուրեալսն 'ի Կա-յիափայէ, իմ իսկ ունելով յանձին Կայիափա՝ զանձնասիրութիւն իմ, գլուխ ամենեցուն 'ի ներքոյ իւր անկելոց կրից։ Սա իսկ է թշնամին ճշմարտութեան և բարեկամ ստութեան. և, ո՜հ, քանի՜ գոռոզ է և շամբուշ, մինչև առ ոտն կոխել յիս զսէր քո, Յիսուս, և ատել 'ի քեզ զամենատենչ բարութիւն քո։ Սա է որ գրգռէ զամենայն զգայունս իմ զներքինս և զարտաքինս. և նոքիմբք ձայն վերացուցանէ ընդդէմ քո՝ մահ կարդալով քեզ, որ ցանկալի հատուցիչդ ես կե-նաց։ Ո՜վ գարշելի սէր անձին իմոյ. — հարկ է ինձ ընդդէմ սմին վառել զնախանձ իմ և զցա-սումն. — այլ զի՞արդ նուաճել զբռնացեալն յիս տիրաբար։ — Զողորմութիւն քո յօգնա-կանութիւն կարդամ, ո՜վ սէր սիրոյ, Տէր իմ Յիսուս Քրիստոս. չէք եթէ զսէր քո՝ որ կարի-ցէ զդէմ ունել իմոյս անձնասիրութեան։ Տուր ինձ արդ շնորհս սիրելոյ զքեզ ջերմաջերմ, և գոչելոյ ամենայն զօրութեամբք հոգւոյ, ամե-նայն ըղձիւք սրտի, ամենայն զգայութեամբք մարմնոյ, Կեցցէ Յիսուս, որով կեայ ամենայն կենդանի, և որ կեայն 'ի նմա՝ ոչ մեռցի յաւի-տեան։ Ո՜ հրեշտակք և սուրբք արքայութեան, ընդ ձեզ միաբանեալ գոչեմ, եթէ արժանի է Յի-սուս յաւիտենական կենաց և յաւիտենից փառաց, հակառակելով ամպարշտացն լեզուաց՝ որք արժանի մահու զնա կարդան։

Սէր անձին 'ի հակառակս մտացն խղճի՝ զցան-կութեան կողմն ունի. և հաւանելիս կարծեցու-ցանէ զբաղում ինչ փաստս մոլորականս։ Քրն-նեցից զանձն իմ և զգոյշ կացից այսմ բանի։

ԾԾ. Լսեալ զինուորացն, դահճաց և սպասաւորաց՝ եթէ դատապարտեցաւ Յիսուս 'ի ժողովոյ Հրէից՝ որպէս հայհոյիչ, և վասն այնորիկ մահապարտ, բորբոքին առհասարակ մոլեգին նախանձու, և դիմեն հանել ընդ նա զկողուցս իւրեանց. կէսք նախատական բանիւք՝ կէսք հենգնական լուտանօք, և այլք յարձակին 'ի վերայ նորա՝ թշնամանել որպէս զհարդ և կարիցեն: Գլխաւորք և ծերունիք հրէակոյտ ժողովրդեանն՝ 'ի բաց թողեալ զպատկառանս որ անկ է ինքեանց, առաջինք լինին յայպանել և 'ի ծաղր առնել զնա. զայն տեսեալ ռամիկ խուժանին՝ զի՞նչ ոչ ասիցեն կամ առնիցեն: — Իսկ Յիսուս կայ և կրէ ամենախորին խոնարհութեամբ: Այլ յայսր վերայ, արժան է մեզ յիշել, զի ոչ նուազեն ներքին չարչարանք նորա: Սիրէ նա՝ որչափ և արժանի է սիրոյ՝ զպատիւ անձինն. և ունի յոգւոջ կարողութիւն զգալոյ զնախատինս իւր. այլ քանզի ցանկայ վշտակրել 'ի մարմնի և 'ի հոգւոջ, մատգիւր ևս կրէ զամենայն պատահարս. ընդունի զամենայն թշնամանս, և կշռէ և քննէ ամենալաւ և ամենասուր մտօքն, որպէս զի առաւել ևս մորմոքեսցի: Անխռով և անայլայլակ կան մնան միտքն, յատակ և խաղաղ. և խորհելով զծանրութիւն միոյ միոյ 'ի լուտանացն ասացելոց և երգիծանացն, և ամենայն անիրաւութեանց որ ընդդէմ իւր, որքան ազդողագոյնս իմանայ՝ այնքան և դառնագոյնս տառապի:

Ո՛վ փարելի Յիսուս, քանի՜ ինչ արժան է

է ինձ ուսանել և սքանչանալ՝ 'ի տեսանել իմուժ զձաղանս քո: Արդարև այս է ժամ թըշնամեաց քոց. քո իսկ ժամ: Ժամ թշնամեաց քոց, թափելոյ 'ի քեզ զքէն և զատելութիւն իւրեանց. ժամ քո, որում մնայիր առ 'ի լնուլ զկեղծ ամենաբորբոք սիրոյդ: Որ ինչ և ազդէ նոցա մոլեգնութիւն՝ զամենայն անխտիր ածեն 'ի վերայ քո ձաղանս. ոչ ինչ ընդհատ և դու չառնես և ոչ զիւիք զանց 'ի կրելոյ՝ զոր և ազդէ սէր քո: Գովեմ զքեզ, գոհանամ զքէն, գթամ 'ի քեզ, Փրկիչ ամենասուրբ, և ցաւիմ զի հեռի եմ յոյժ 'ի հետոց գնացից քոց: Դու ունկն դնես նախատանացդ՝ յառաւել կրթութիւն առաքինութեանց. իսկ ես լսեմ իմոցս նախատանաց՝ զի գրգռեցայց 'ի ցասումն: Ո՛հ, Յիսուս, ես ոչ սիրեմ զքեզ. և այս իսկ է աղբիւր ամենայն չարեաց իմոց: Տուր ինձ սիրել զքեզ, և ահա ամենայն ինչ բարի իցէ ինձ. տուր ինձ սիրել զքեզ, և գրգիռք ախտից փոխեսցին յառիթս առաքինութեանց. և մանաւանդ յաղթխոնարհութեան՝ պատահարքն՝ ընդ որս սրտնիմ կամ հպարտանամ:

Սէր զոր առ պատիւ անձինս ունիմ՝ անկարգ է. ոչ բանն՝ այլ ամբարտաւանութիւն տայ ինձ զդաւլ զնախատինս որ ինձ հասանեն: Այսուհետև յայսպիսի դէպս ասասցից ցանձն իմ. Տես, թէ քանի հպարտ ես:

ՃԾԱ. Աւարտեալ անօրէն Հրէիցն զժողովն, և սահմանեալ միւսանգամ գումարել 'ի նոյն վաղ քաջ ընդ առաւօտն, դառնան 'ի տունս իւրեանց ննջել գոհութեամբ, առ խնդութեան սրտիցն վասն տալոյ զվճիռն անիրաւ քան զամենայն վճիռս աշխարհի: Իսկ Յիսուսի և ոչ դամ մի հանգստեան շնորհի. քանզի մնալով 'ի ձեռս

կաղանաւորացն՝ որք պնդապինդ կապեալ կականդեալ պահէին զնա, ո՞ կարասցէ նշմարել մտօք՝ քանի՛ թշնամանօք և ապիրատութեամբք նեղէին զնա զգիշերն ողջոյն մինչև ցայգն: Զօրէն տեարց իւրեանց որք նախատակոծ արարին զնա բազմապատիկ օրինակօք, զնոյն անցս և չարագոյնս ևս անցուցանէին ընդ նա ծառայքն. ոմանք խեթի հայելով ընդ նա որպէս ընդ հայհոյիչ՝ առ երգիծուցանել զնա, այլք վարկանելով իմն զնա խեղկատակ ոք և խելայեղ, մարդուկ անպիտան և խոտան, յայպն և 'ի ծաղր կատականաց. և ամենեքին զարմանալով զի տուան Յուդայի երեսուն արծաթի վասն անարգի միոջ երեքդանկեան առն: Եւ քանզի դատապարտեալ էր 'ի մահ՝ մարթ էր թողուլ զնա առ վայր մի 'ի գիւրի և խնայել զլլկանան. այլ խուժքն այնոքիկ և դուժք՝ մոլեալք և կատաղեալք՝ մի ըստ միոջէ յարձակին 'ի վերայ նորա ազգի ազգի թշնամանօք. իբրու այն թէ ընդ ամենայն աշխարհ չիցէ ոք չիցէ ինչ անարգագոյն քան զտէրն և զիշխանն աշխարհի: Ո՜վ անլուր անգթութիւն. և ո՜վ մանաւանդ անլուր համբերութիւն: Ի քահանայիցն գրգռեալք անօրէնքն զամենայն հնարս ձաղանաց հնարին՝ ածել թափել զտառապեալ Յիսուսի կատականս, հարուածս և թշնամանս. և նա թոյլ տայ նոցա առնել զոր կամին, և ժուժկալէ հեզօրէն:

Զի՞նչ ասիցես, հոգիդ իմ. սքանչանաս ընդ համբերութիւն Յիսուսի 'ի վերայ Հրէիցն անզգամից, այլ այն համբերութիւն տևեաց ժամս ինչ. իսկ, ո՛հ, ո՜րքան ևս առաւել անկ է քեզ զարմանալ ընդ համբերութիւն Փրկչիդ 'ի քո վերայ բովանդակ ամս երկարս: Ո՜վ մարդացեալ Որդի Աստուծոյ, ես չարագոյնս ևս անցուցի ընդ քեզ զամենայն կեանս իմ մեղօքս՝ քան

Հրէայքն յայնմ գիշերի այպանելով զքեզ. յամենայն նուագս մեղանաց իմոց՝ անարգագոյն համարեցայ զքեզ քան զարարած մի խոտան և վաղանցուկ, յայն հաստատեալ զսէր իմ՝ զոր քեզ միայնոյ պարտական էի։ Սկիզբն արարեալ միանգամ և ոչ դադարեցի և ոչ դադարեմ 'ի հալածելոյ զքեզ. և որո՞ց պատժոց չեղէ և չիցեմ արժանի՝ վասն առ ոչինչ համարելոյ իմ ցարդ զաստուածային զանբաւ մեծվայելչութիւն քո։ Նուսակայն դու քանի՜ երկայնամիտ եղեալ համբերեցեր ինձ։ Երկիր պագանեմ և գոհանամ զքէն, Տէր, և զղջացեալ ընդ ամենայն մեղս իմ՝ թողութիւն հայցեմ 'ի գթութեանց քոց. խոստանալով յայսմ հետէ յարգել և սիրել զքեզ 'ի վեր քան զամենայն, քոյով օգնականութեամբ։ Տուր ինձ ճանաչել քաջ զմեծութիւն քո և զբարութիւն, զամենեւին արժանիս սիրելոյ, որպէս զի և սիրեցից յամենայն զօրութենէ սրտի։

Յանկարգ սիրոյ անձինս ծնանին ամենայն մեղք. վասն որոյ խորշեցայց և քննեցից թէ ո՞ իցեմ ես և ո՞ Աստուած։ Եւ իցէ՞ արժանի եւս այս 'ի կշիռ գալոյ վարկի և սիրոյ ընդ Աստուծոյ։

ՃԾԲ. Առաջին այպանք զոր արարին Յիսուսի 'ի սրահի քահանայապետին, ըստ պատմութեան աւետարանչաց՝ է թուքն յերեսս նորա. որպէս և ինքնին յառաջագոյն ծանոյց զայս առաքելոցն՝ 'ի խօսելն զչարչարանաց իւրոց, եթէ կատակեսցեն զՈրդի մարդոյ և թքանիցեն յերեսս նորա թշնամիք իւր։ Նախատինք մեծ են յոյժ թքանել ընդ երեսս, նշանակ անհնարին անարգանաց և գարշութեան. զի որպէս զզուելի իմն և պիղծ է Թուք, թքանելն յերեսս ուրուք նշանակէ զամենեւին անարգութիւն և զանպի-

տանութիւն երեսացն: Եւ այսպէս համարին զամենազնիւ դէմս Քրիստոսի, զոր դիմեն թքակոծելով պղծել: — Իսկ Յիսուս զիա՞րդ տանի այսպիսի նախատանաց: Անշարժ ունի զերեսն, ըստ նախատեսութեան մարգարէին, առ ընդունելոյ զգարշահոտ խոհերսն. այլ զմտաւ ածելով զմեծութիւն նախատանացն, զանարգանս որբազան չարչարանացն, զնուաստութիւն և զյանդգնութիւն թշնամանողացն, զգայ վիշտ մեծ յոյժ. համայն և այնպէս ամենակատար առաքինութեամբ ժուժկալեալ կրէ վասն մեր: Վշտանայ 'ի հոգւոջն և ուրախ է. և որպէս երանութիւնն ոչ խափանի 'ի չարչարանաց անտի, և ոչ առաքինութիւն խափանէ զչարչարանսն: Առաքինութիւն թեթևացուցանէ ըզվիշտս մեր, այլ զՅիսուսին առաւել ևս ծանրացուցանէ:

Մա՛ւտ հոգի իմ յոգի Քրիստոսի, զի հաղորդեսցիս խորհրդոց նորա: Ո՞ իցէ արհամարհեալն թքակոծութեամբ: Միածին Որդի Աստուծոյ. Ճառագայթ յաւիտենական լուսոյ, հայելի անարատ՝ յոր աստուածայինն տպաւորի մեծվայելչութիւն: Իսկ ո՞ անարգողն թքով: Անարգք յանարգաց, սրիկայք սնոտիք խաժամուժ ռամիկ: Եւ առ ի՞նչ յանձն առնու ըզնախատինսն: Քաջ իսկ գիտես զայդ, հոգի իմ քրիստոնեայ: Յանձն առնու Քրիստոս զգարշելի թքանսն՝ առ 'ի զերծուցանել զքեզ 'ի յաւերժական այպանացն՝ որոց արժանի եղեր մեղօքդ. յանձն առնու զթքանսն, առ 'ի լուանալ նովիմբ զքո աղտեղութիւնս:

Եղո՛ւկ եմ ես, զի կամ ցուրտ սրտիւ մինչ դեռ տեսանեմ զՅիսուս վառեալ սիրով իմով: Զիա՞րդ մնամ լի հպարտութեամբ՝ զայնքան նորայն տեսանելով զհեզութիւն: Աստուած իմ,

աղաչեմ զքեզ և զայս նուագ. — և զմե՞ մի նուագ. — եթէ անբաւ գթութիւն քո ոչ դադարէ առնել ինձ շնորհս, ընդէ՞ր դադարեցայց ես 'ի ժտելոյ։ Խնդրեմ և խնդրեցից ցորչափ իցեմ կենդանի՝ շնորհս սիրելոյ զքեզ և լինելոյ հեզ և խոնարհ. շնորհս՝ հայցելոյ 'ի քէն զշնորհս զայս՝ այնու հոգւով և եռանդեամբ՝ որով կամիս զի հայցեցից։

Ի տեսանել իմում զՀրեայսն զի թքակոծ առնէին զդէմս Յիսուսի, յիշեցից զի ինձ անկ էին թքանքն, որ մեղաւորս եմ անպիտան. և գուն գործեցից ապաշաւել զմեղս իմ։

ՃԾԳ. Մի թողցուք զՅիսուս 'ի նախատակոծ թքանս երեսացն։ Յոյժ տրտմեալ է նա հոգւով. և չիք ոք որ կարիցէ այնքան տխրիլ ընդ անարգանս ինչ իւր՝ որպիսի և իցէ, որքան վշտանայ Յիսուս ընդ մէն մի 'ի նախատանացս. քանզի և չիք որ թէպէտ և գոռոզ և սոնքացեալ ոք իցէ, կարիցէ այսպէս սաստկապէս զգալ զծանրութիւն անարգանացն, որպէս զգացն Յիսուս 'ի խոնարհութեան իւրում։ Այլ հայեսցուք յերեսս նորա ծածկեալս 'ի խղխայթեալ և 'ի թանձրացեալ չարաւոյ թքոյն. — ո՞յս իցեն դէմք զոր կերպարանէր արքայն Դաւիթ ասելով, եթէ չիք ոք յորդիս մարդկան գեղեցիկ տեսանելով, վայելուչ և շքեղ որպէս զնա։ (Սաղմ. ԽԴ. 3)։ Նա մանաւանդ երևին, ըստ նախատեսութեանն Եսայեայ, որպէս երեսք բորբոսեալք բորոտի, յորում չիք տեսիլ բնական կերպարանաց, այլ մակարդ աղծալից։

Ո՛վ երկինք և երկիր, հրեշտակք և մարդիկ, ո՞չ զարհուրիցիք յայդքան անհեդեդ այլափոխեալ տգեղութենէ։ Աստուած փառաց, հայեաց և տես, Հայր երկնաւոր. ո՞յս դէմք իցեն Որդւոյ

քո սիրելւոյ, որպէս զարեգակն փայլեցելոյ, ընդ որ խունն մի յառաջ հաճէիր 'ի Թաբոր: Ո՜ն առ, հոգի իմ, թօթափեա զթմբրութիւն: Դէմքդ այդ Յիսուսի թքակոծեալ՝ որպէս և ան_ սանեալ, գա ինքն տակաւին ոչ ինչ նուազ գե_ ղեցիկ է և հաճոյական յաչս Հօրն իւրոյ Աստու_ ծոյ, քան որչափ պայծառացեալ ճառագայ_ թիւք փառաց իւրոց լուսափայլէր յԱյլակեր_ պութեանն անդ: Ո՞չ նշմարիցես 'ի դմին զհե_ զութիւնն, զխոնարհութիւն և զհամբերութիւն: Ոչ վայելչութիւն կերպարանաց, այլ առաքի_ նութիւն հաճոյ առնէ զանձն՝ Աստուծոյ: — Յուշ լիցի մեզ՝ զի ոչ զինջանելով ինչ հարկին կրէ Քրիստոս զոր և կրէն, այլ առաքինազօր ընտրու_ թեամբ կամացն: Ոչ ցայտէ թուք յերեսս նո_ րա՝ զոր չիցէ նորա կամեցեալ և եդեալ 'ի գանձս չարչարանաց իւրոց, վասն առատագեղ գործե_ լոյ զփրկութիւն աշխարհի:

Ո՜վ Յիսուս, ոչ պակաս երկրպագելի մինչ պաշարեալդ կաս 'ի Հրէից և թքանօք այպա_ նեալ, քան որ յերկինս ես պարառեալ 'ի հրեշ_ տակաց և լուսապսակեալ 'ի սրբոց: Երկրպա_ գեմ քեզ յանարգութեան քում, որով ստա_ ցար մարդկութեան քում և մեր՝ զյաւիտենա_ կանութիւն երանափառ: Գոհութիւն մատու_ ցանեմ քեզ վասն աննկուն համբերութեանդ՝ որով տարար այնքան ամօթալից նախատանաց առ սէր իմ և առ օգուտ: Ո՜վ իմ Յիսուս, որ ոչ դարձուցեր զերեսս քո յայպանաց և 'ի թքա_ նաց Հրէից, մի և յինէն դարձուցաներ: Դարձն 'ի քեզ 'ի մեղաց իմոց, այլ մի յինէն. և մասնաւո_ րեա զիս շնորհացն կարևորաց 'ի փրկութիւն իմ յաւիտենական:

Բազում համբերութեան պիտոյ է ինձ վասն հանապազօրեայ առթից. սակայն զայս եդից 'ի մտի՝ յիշելով զՅիսուսի օրինակս:

ՃԾԴ. Մինչ ես ձաղանս ածէն Յիսուսի բռ-
նաւորք հարուածովք՝ 'ի պարանոցն, 'ի Թիկունս և 'ի կուրծս, և ապտակս հանելով յերեսսն. հրճուելով ինձ ամբարիշտ պաշտօնէիցն և մրցելով ընդ իրեար, Թէ ո՞ կարիցէ ուժգնագոյնս հարկանել զնա: Զայս յառաջագոյն ասացեալ էր նորա 'ի ձեռն մարգարէին. «Զթիկունս իմ ետու 'ի հարուածս, և զծնօտս իմ յապտակս, և զերեսս իմ ոչ դարձուցի յամօթոյ ընդ երեսս Թքանելոյ»: Բա՛բէ, զիա՞րդ լնուլի կատարի մարգարէուԹիւնն: Ոչ ումեք 'ի մարդկանէ հասին այսպիսի անարգանք, ախտանք դիմաց և ըկանք երեսաց, որպէս Փրկչին աշխարհի. վասն որոյ քաջ իսկ իրաւամբք ասաց Եսայիաս, ԵԹէ «Զարմասցին 'ի վերայ քո, (զի) այնպէս անշքեսցի տեսիլ քո 'ի մարդկանէ»: Եւ զի՞նչ քան զայս հզօրագոյն առիԹ՝ ոչ Թէ միայն զարմանալոյ այլ և ընդարմանալոյ. տեսանել ըզՀրեայն ապառուամ՝ լի ցասմամբ սրտմտուԹեան յարձակեալս Թքովք և հարուածովք յամենասուրբ դէմս Քրիստոսի, յորոյ տեսլենէ ծով նուաճեալ հանդարտի, և արեգակն խաւարանայ զի մի տեսցէ զնա: Ո՜վ սրբազան կերպարանք, արժանաւորք պատուոյ և երկրպագուԹեան ամենայն աշխարհի, զիա՞րդ կայք անխլիրտք անվրդովք առ այնքան կատականս և այպանս: Արդարև աստուածայնոյ համբերուԹեան պէտք էին առ այդ:

Այլ ինձ հրաշափառագոյն այս է, զի զայդպիսի համբերուԹիւն համբերէ Յիսուս վասն իմ: Ինձ, ինձ անկ էին վասն անօրէնուԹեանց իմոց տարափք Թքոց, կափահարուԹեանց և ապտակաց: Եւ սակայն Թագաւորն փառաց փոխանակ իմ յանձն առնու զայդպիսի նախատական և ցաւագին կիրս. վասն իմ ամենևին

անարգ և ապերախտ արարածոյս: Հոգի՛ իմ փրկանաւորեալ այդքան սիրով, ամբա՛րձ զձայն քո, կարդա՛ զազգս և զազինս՝ գովել ընդ քեզ և բարձր առնել զաստուածային գթութիւնն:

Եթէ յերեսաց Ճանաչի մարդ, զի՞նչ քան զայս դիպողագոյն՝ նկատել զդէմս Յիսուսի առ 'ի Ճանաչելոյ զնա փրկիչ: Ո՛վ իմ Յիսուս, յորժամ տեսանեմ այդպէս անարգաբար ձաղեալ զդէմս քո, զերևելագոյն մասն մարմնոյդ, և միանգամայն զքեզ այդպէս հեզ, համբերատար և խոնարհ, Ճանաչեմ, խոստովանիմ և պաշտեմ զքեզ՝ փրկիչ իմ. և արդեամբք ամենայն բաւութեանց քոց աղաչեմ զքեզ՝ լինել ինձ արդարև փրկիչ: Արա՛ զի փրկեցայց. և զի անհնար է ինձ փրկիլ եթէ ոչ եղեց նմանող քեզ, ազդեա՛ յիս զսուրբ կամս ուղղութեան՝ զոր գիտես ինձ պիտոյս, և տուր զօրութիւն՝ կատարել ըստ պատշաճի:

Եդից առանձինն իմն զայս 'ի մտի. առ սէրն Քրիստոսի տանել հակառակութեանց և նախատանաց, որպէս այնքանեաց տարաւ նա վասն իմ: Զայս իսկ նա ուսուցանէ, և ինձ հարկաւոր է առ 'ի փրկութիւն:

ՃԾԵ. Զչարին Հրեայքն ընդ համբերութիւն և ընդ հեզութիւն Յիսուսի 'ի կրելն զթշնամանսն, զի ոչ տրտնջէ, ոչ գրգռի և ոչ խռովի. և զի ոչ գիտեն թէ կամաւորապէս կրէ, առաւել ևս զայրացեալք ընդ համբերութիւնն և ընդ հեզութիւն՝ քինախնդիրք լինին. չարաչար մախանօք նորանորս նիւթեն հնարս այպանաց. այլ Յիսուս կայ մնայ 'ի նմին վեհմական առաքինութեան: Առեալ գրդչեակ մի գարշելի արկանեն զգլխովն՝ ծածկել զդէմսն, և ծաղր արձակեալ քրքիջ բառնան յայլն և 'ի կատակ. և կռուփս

և ապտակս հանեալ նմա՝ հարցանէին երգիծա_
նօք. Քանզի մարգարէ էիր՝ գիտես և ասա, ո՞ է
որ եհար քեզ զապտակդ, ո՞ խլյց քեզ զայս հա_
րուած: Այսպէս 'ի ծանականս մատնի տէրն մար_
գարէից՝ որպէս մարգարէ սուտ. վարդապետն
իմաստութեան և բաշխողն գիտութեան անար_
գի որպէս զանմար ոք: Սրտագէտն Աստուած և
տուիչն նախատեսութեան որոց և կամի՝ զիա՞րդ
ոչ գիտասցէ թէ ո՞ է որ թշնամանէն զնա. և սա_
կայն խաղ առնեն զնովաւ և այպանեն՝ որպէս
թէ բանդագուշեալ ոք իցէ, անմար և յիմար:
Հոգի իմ, ո՞չ հարցիս յարտասուս՝ 'ի տեսա_
նելդ զՈրդի բարձրելոյն յայդմ աւաղելի պայ_
մանի: Եթէ լի եղև տրտմութեամբ 'ի Պարտի_
զին՝ նախատեսանելով զայսպանքս, և աղօթէր
ապատել յայնցանէ, քանիպատի՞կ արդ տրտմես_
ցի առնել և զփորձ նոցին: — Տառապեալ Յի_
սուս, գթամ 'ի քեզ յամենայն սրտէ. և մերթ
զկիցս քո խոկալով, մերթ զառաքինութիւնս,
ամաչեմ ընդ անձն իմ՝ այսքան վատթար քրիս_
տոնեայ գոլ՝ մինչ և ոչ 'ի փոքու իմիք բուռն
առնեմ անձին նմանել քեզ: Կամէին եթէ շատ
էր քեզ՝ առ 'ի վրէժխնդիր լինել անարգուացն
քոյ, բանալով զբերան երկրի և զդժոխոց՝ յըն_
կլուզանել զնոսա. այլ դու առաւել սիրեցեր
զկրելն և զլռել, որպէս զոկարագոյն և զապի_
կար քան զամենայն մարդ յաշխարհի: Իսկ ես
զայսպիսի քո օրինակս առաջի աչաց ունելով՝
զի գործեմ: — Բազում անգամ զխոնարհու_
թիւն 'ի բերանի ունիմ, այլ 'ի սրտի զհպար_
տութիւն. յայլոց պահանջեմ համբերել ինձ,
իսկ ես նոցա և ոչ երբեք ժուժկալեմ: Դիւրա_
զգած եմ ամենայնի որ առ համբաւ կամ պատիւ
անձին իմոյ բերցի. այլ ոչ բաւեմ ոչ ժուժել և
ոչ լռել բան մի, և ոչ առ ոտն կոխել զակնածու_

թիւն մարդոյ՝ առ սէր քո։ Ո՜վ բարեգութ Յիսուս, տուր ինձ 'ի հեզութենէ քումմէ՝ զոր այդպէս կրթութեամբ յօրինակ ետուր ինձ և 'ի խրատ. ցանկամ նմանող լինել քեզ յայդմիկ. և աղերսահայց պաղատիմ 'ի քէն զօգնութիւն՝ զոր ստացարդ վասն իմ. ակն ունիմ այդոցիկ օժանդակութեանց, ակն ունիմ և այնմ օգնականութեան՝ որով գործակից եղէց օգնութեան քում ներգործականի։

Որքան փափագելի են ինձ երանութիւնք, այնքան և մեծ համարեցայց զերանութիւնն՝ զորս քարոզեաց և յորս կրթէր Յիսուս. Երանի՜ խոնարհաց. երանի՜ հեզոց. երանի՜ խաղաղարարաց. երանի որոց համբերեն վասն սիրոյն Աստուծոյ։

ՃԾԶ. Զկայ առցուք առ վայր մի, հոգի իմ, 'ի նկատել զդէմս Քրիստոսի՝ զայսօրինակ սքօղեալս։ Ծածկէն զայն Հրեայքն՝ ոչ հանդուրժելով տեսանել զհեզութիւն նորին, զպարկեշտութիւնն և զանդորրութիւն, որովք ցոլս իմն արձակեալ՝ մրմռքեցուցանէ զսիրտս նոցին։ Կամին անարգելս խոշտանգել զնա. և վասն այնորիկ ծածկեն՝ զի մի արգելցին 'ի նշուլից շնորհացն և բարեգթութեանն։ Ո՜հ, որպիսի և որքան չարութիւն. գարշիլ յերկայնմտութենէն Աստուծոյ, և զանգիտել յազդեցութենէ շնորհաց նորին 'ի սիրտս։ Իսկ առ ի՞նչ յանձն առնու Յիսուս զծածկոյթ երեսացն, եթէ ոչ առ 'ի վերացուցանել 'ի մէնջ զամենայն քօղ ստուերական՝ զոգիտութեան և զցանկութեան, որք պատեն զեղկելոքս և թաքուցանեն առ 'ի մէնջ զաստուածայնոցն ծանօթութիւն։ Ո՜վ, որքան պարտականք եմք գթութեանց Փրկչին՝ որ արժանիս արար զմեզ այնքան շնորհաց, ներշըն-

չական ազդմանց, և լուսաւորութեանց: Այլ մեր չար այս է, զի հանդոյն Հրէից կամաւ թաքուցանեմք 'ի մէնջ զներկայութիւնն Աստուծոյ, վերստին այպն առնելով զՅիսուս՝ որքան ինչ հնար իցէ մեզ առնել: Թողեալ զայլս՝ զանձնէս ամբաստան եղէց: Ծածկեցի և կափեցի զերեսս Յիսուսի՝ քանիցս և ազատութիւն շնորհեցի կրից և հաւանեցայ 'ի մեղս. քանզի յայնժամ գործէի որպէս թէ ոչ տեսանէր զիս Աստուած. և յիսպառ մոռացութենէ աստի ներկայութեանն Աստուծոյ՝ ծագեցան ամենայն խառնակ գնացք կենաց իմոց: Այլ աւաղ կուրութեանս իմոյ. միթէ վասն զի ես ոչ կամեցայ զմտաւ ածել զԱստուած՝ և նորա աչք ո՞չ տեսին զիս:

Ցաւէ ինձ, Աստուած իմ, ընդ չարութիւն իմ, և հայցեմ թողութիւն. և աղաչեմ զօրացուցանել զտկարացեալն յիս հաւատս յանդիմանակայութեան: Հաւատամ, տէր, զի որպէս եսդ մշտնջենաւորութեամբ քով յամենայն ժամանակի, այսպէս և անբաւութեամբդ յամենայն տեղւոջ ես. հաւատամ զի ե՛ս էութեամբ քով յիս 'ի ներքս և արտաքոյ. տեսանես զամենայն զոր գործեմ, և այնպէս անվրէպ նկատես և քննես որ ինչ յիս ներգործի՝ որպէս թէ ես միայն իցեմ յաշխարհի: Այո, տեսանես դու զիս. և ես հաւատամ զքեզ Աստուած իմ և դատաւոր իմ, որոյ չէն պէտք վկայից 'ի հաւաստիս ճշմարտութեան: Յանդիման կաս դու ինձ յամենայն թաքնագոյն տեղիս, և 'ի խաւարչտին անգամ ժամու: Ի ներքս 'ի յիս կրեմ զքեզ, յամենայն զօրութիւնս հոգւոյ իմոյ և 'ի զգայմունս մարմնոյ իմոյ. և չկարեմ ինչ գործել զերծ 'ի յանդիմանակայութենէ մեծվայելչութեան քո՝ որ տեսանէն զիս և թափանցէ,

և ներքսագոյնս ևս գտանի յիս քան ես ինքն յանձին իմում: Տպաւորեա, ով ամենասուրբ Յիսուս, խորագոյնս յոգւոջ իմում զայս իմացուած հաւատոցս. և ոչ ևս կարօտացայց այլոց սանձի յարգելուլ զիս 'ի չարէ, և ոչ այլոց խրթանի 'ի յորդոր բարւոյ:

Ի յիշատակ յանդիմանակացութեան Աստուածոյ հաստատեալ է փրկութիւն իմ յաւիտենական. վասն այսորիկ սովորութիւն արարից ինձ զկրթութիւն հաւատոցս, եթէ Աստուած յանդիման կայ և տեսանէ զիս: Ի սուղ վայրկենի մարթ է առնել զայս ներգործութիւն. և որ ոչն առնիցէ՝ ոչ ինչ կարիցէ 'ի չքմեղս լինել:

ՃԾԷ. Ոչ բաւեն բանք 'ի ճառել զոր միանգամ կրեաց Յիսուս 'ի մնացուած գիշերին այնորիկ 'ի տանն Կայիափայի. վասն այնորիկ աւետարանիչն Ղուկաս յետ յիշելոյ (ԻԲ. 65) զթուքսն, զապտակսն և զայպանսն՝ գլխաւորէ զբանսն ասելով, եթէ բազում անցս նախատանաց և խոշտանգանաց անցուցին Հրէայքն ընդ Յիսուս, և մանաւանդ բազմապատիկ հայհոյութիւնս: Առ 'ի վերայ հասանել երկայնմտութեան նորին անճառելւոյ՝ շատ իցէ նկատել զնա յայնպիսում պայմանի՝ յորում չիք ինչ որ արգելուցու ասել զնմանէ ընդ մարգարէին, եթէ անարգագոյն 'ի մարդկանէ իցէ նա, արհամարհեալ քան զբրնաւս, անպիտան և յետնագոյն քան զամենայն որդիս Ադամայ. գարշելի որպէս որդն նեխչաղեղ. մարդ ամենեւին անվարկանելի, յամօթ մարդկան և նախատինք ժողովրդեան, որպէս դրաստ մի անասուն. միանգամայն ասել, մարդնուաստ քան զամենայն մարդ, այնքան խոնարհեալ և կորացեալ մինչև ցածութեան նորա երթալ աւարտել յոչինչ:

Մարգարէք և աւետարանիչք գրեցին մանրամասն բազում ինչ չանարգանաց Քրիստոսի, և ոչ ամաչեցին յայտնել զնոսին. և զի մեծ փառս Աստուծոյ համարեցան զցուցանելն, թէ յոր սահման եհաս գթութիւն նորին 'ի կամելն զայնպիսիս կրել վասն մեր. և զի զայդ լաւ համարեցան վասն մեր, որպէս զի հանապազ յօժարեսցուք սքանչանալ և գոհանալ զԱստուածամարդոյն վասն այնչափ վշտացն, և արհամարհանաց՝ որոց համբերեաց համբերել, զի զյաւիտենից փրկութիւն հնարեսցի մեզ. որպէս զի և մեք ոչ միայն ոչ ամաչեսցուք, այլ մանաւանդ պարծեսցուք և ուրախ լիցուք զի արժանի եղաք նմանել նմա յայսպիսի դէպս:

Վասն այսորիկ գոհութիւն մատուցանեմ քեզ, ով գորովագութ Յիսուս, վասն ամենայն ցաւոց զոր վասն իմ կրեցեր 'ի հոգւոջդ և 'ի մարմնի. և աղաչեմ հաճել ընդ գոհութիւնս այս՝ թէպէտ և փոքրոգութեամբ և գաղջութեամբ սրտի առ յինէն: Բաղձամ նմանել քեզ, տանելով նախատանաց իմիք և խոնարհելով վասն քո. և գիտեմ զի յեղակարծումն ժամ 'ի ժամէ մարթ է այսմ ինձ պատահել. այլ ունիցիմ արդեօք 'ի պատահել առթին և զօրութիւն գործելոյ զայն զոր բաղձամն: Աստուած իմ, ոչ վստահանամ յիս, այլ յուսամ 'ի քեզ միայն: Դու պատրաստեա զսիրտ իմ, զի մի անարգութիւն վարկայց զխոնարհութիւն, այլ մանաւանդ առիթ փառաց իմոց. զօրացո զյոյժ տկարացեալ ոգիս իմ. զի անհնար է ինձ զօրանալ՝ եթէ ոչ դու զգեցուսցես ինձ զօրութիւն:

Խորհեցայց քաջ զինչ վասն իմ կրեաց Յիսուս, և այսու խորհրդով գուն գործեցից և ես կրել ինչ վասն նորա. և եթէ ոչ կամակար մտօք ընրայց առ այս, խոնարհեցուցից զանձն խոտելով զհպարտութիւն և զապերախտութիւն իմ:

ՃՄԸ. Բաղում ինչ կրեաց Քրիստոս 'ի չարութենէ մարդկան 'ի գիշերին յայնմիկ, այլ ոչ պակաս յայնմանէ՝ նաև յիշխանաց խաւարին. այսպէս կամեցեալ վերին իմաստութեանն՝ զի և դժոխայինքն թշնամիք թափեսցեն 'ի նա զամենայն բռնութիւն իւրեանց. որպէս զի 'ի բնութեան մերում ակար համարելոյ և հզօր գտելոյ՝ պարտեսցին և յամօթ լիցին: Ամենայն իրօք հնարի Փրկիչն մեր զօրացուցանել զմեզ ընդդէմ ամենայն դիւական արուեստից. և քանզի 'ի հնարից բանսարկուին սադրեալք՝ յոյժ դիւրադորովք և ակարք գտանիմք յոր ինչ առ պատուանձին ընդհարցի, մինչև չհանդուրժել և արհամարհութեան իմիք, մեծ ինչ համարելով և զդուզնաքեայն, յայն սակս կամեցաւ կրել զամենայն ազգ նախատանաց և անարգանաց՝ զոր մարթ էր սատանայի հնարել, որպէս զի զօրացուք 'ի վանել զամենայն փորձութիւնս նորին: Ընդդէմ միոյ միոյ անիրաւութեանց՝ Քրիստոս հանդէս առնէ առաքինութեանց. և ոչ եթէ մի ըստ միոջէ 'ի գործ արկանէ զնոսին, որպէս մեք, այլ ըստ ընդարձակութեան մտաց իւրոյ՝ զամենայն միանգամայն 'ի կիր արկանէ, վարելով զընութիւն և զշնորհս, զունակութիւն և զպարգևս Հոգւոյն Սրբոյ, ամենայն ներգործութեամբ և կատարելութեամբ նոցին, անհասանելի օրինակաւ: Սաստկագոյնս կրէ զամենայն թշնամանս մինչև 'ի դառնութիւն ցաւոց. և միանգամայն ներգործելով մէն մի կրթանս խոնարհութեան, համբերութեան, սիրոյ, հնազանդութեան, յանձնառութեան կամաց Հօրն, և դարձեալ գթութեան, զցաւոց վասն մեղաց մերոց, ըննուիրման և զաղօթից վասն մեր. այսպէս յամենայն վայրկենի կրկնէ զայսոսիկ և զայսպիսի ներգործութիւնս առաքինութեանց. և դար-

ձեալ առ մի մի 'ի մէնջ վերածէ զանբաւազօր արդիւնս իւր, անարգել ունելով զզօրութիւնս հոգւոյն, և ոչ առ տրամութեանն դանդաղելով ինչ 'ի կրթանս առաքինութեանցն, կամ 'ի տկարութենէ զգայարանացն խափանելով:

Ո՛վ Յիսուս, քանի՜ քանի ուղղութիւնք 'ի հոգւոջ քում. քանի՜ ախտք մոլութեանց յիմումս: Չեմ արժանի կալոյ յանդիման քո. փափագէի առնուլ զքոյ ծածկութի գեղեցկութեան դիմաց քոց՝ և ծածկել զաղտեղի տգեղութիւնս իմ յերեսաց քոց. այլ ո՞ր բաւիցէ քոյ ծածկել ինչ յամենատես աչաց քոց: Անկ է ինձ ջանալ սրբել զանձն իմ և ոչ թէ սքօղել: Եւ ո՞ կարիցէ զիս սրբել՝ եթէ ոչ դու, վերածելով յիս զարդիւնս քո և հեղլով զսէր քո սուրբ: Զիր սեփական է սիրոյ քո՝ սրբել միանգամայն զամենայն զարշութիւնս հոգւոյ: Աղէ շնորհեա ինձ զսէր քո զայս. զի քաւեսցին նովին մեղք իմ. և այնպէս զօրասցի նովաւ հոգի իմ՝ մինչև ոչ ևս մեղանչել քեզ:

Սիրեցից զԱստուած. և այսու սիրով յաղթող եղէց ամենայն ախտից և փորձութեանց և մանաւանդ անկարգ սիրոյ պատուոյ և վարկի անձին իմոյ:

ԺՄԹ. Թէպէտ և ամենայն իւրքն Թողին զՔրիստոս յըմբռնելըն նորա, բայց զհետ երթայր նորա Պետրոս և այլ մի ոմն յաշակերտացն, որ համարեալ կարծի Յովհաննէս. որոյ մտեալ 'ի սրահ քահանայապետին՝ տեսանէր զամենայն որ ինչ անցք անցանէին ընդ աստուածային վարդապետ իւր. և է հաւանելի բարեպաշտ միօք, եթէ պնդաց նա փութանակի ազդ առնել ամեներանեալ Կուսին: Յառեա՛ց արդ, հոգի իմ, ընդ մայրն Յիսուսի, զիա՛րդ տառապի. և ա՛ծ զմտաւ

թէ քանի՛ անհնարին ցաւք հարին զսիրտ նորա 'ի լսելն 'ի Յովհաննէ զամենայն անցսն զոր ժամու ժամու 'ի գիշերին յայնմիկ անցուցին ընդ անձն ամենասիրելի Որդւոյ իւրոյ, սկիզբն արարեալ 'ի պարտիզէն, և աստ 'ի տանն Աննայի և յետոյ 'ի Կայիափայն: Որպիսի՛ ողբք, որպիսի՛ հառաչանք, որպիսի՛ անձկութիւնք: Զոր լուաւն՝ յանդիման մտացն տեսութեան նկարէ մայրն ամենօրհնեալ. և հատկեալ շնչով՝ մերթ ընդ Որդւոյն խօսի, մերթ ընդ հրեշտակաց: Քիրտն և դալուկն մահուան պատի զդիմօքն, նշանակ նուաղանացն զոր կանխաւ գուշակեաց Սիմէոն, որ որպէս սուր թափ անցանէ ընդ անձն նորա: Այլ նա ոչ վրդովի, ոչ զահանդի. և աստուածային լուսով գիտացեալ զոր ինչ Յիսուսն առնէ 'ի ներքուստ 'ի չարչարելն իւրում, միանայ մօք ընդ նմին՝ ամենակատար նմանութեամբ: Պաշտէ ըզպատգամ փրկագործութեան աշխարհի և որպէս 'ի մարդեղութեանն պահու՝ վերստին յանձն առնու. Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցին յիս կամք նորա: Եւ գերաշխարհիկ ներգործութեամբ զնոյն զՈրդւոյն իւրոյ զառաքինութիւնս կատարէ. և զնորին զՈրդւոյն զցաւս ինքեան սեփականելով բանութեամբ ամենազօրով սիրոյն, զամենայն կամակար մօք վերընծայէ վասն մեր առ Հայրն երկնաւոր:

Ո՛վ մայր ամենօրհնեալ, և ամենավիշտ քան զամենայն մայր, քանի՛ պարտական եմ քեզ. և ո՛հ, ո՛րքան ապերախտ եմ եթէ ոչ հատուցից ըստ սիրոյ քոյ: Շառագունանք պատեն զիս յորժամ զմտաւ ածեմ, զի մինչ դու այդքան վասն իմ տագնապիս, ես և ոչ կարեկից լինիմ քեզ 'ի սրտէ: Ո՛հ, տեսանես զիս, ո՛վ Մարիամ, թէ զիա՞րդ իբր անզգայ կամ առ ցաւս քո. այլ դու ինքն տուր ինձ զգալ, մասնաւորելով 'ի սիրոյ

քումէ: Շնորհեա ինձ գտանել լալ փոխանակ քո՛
'ի վերայ չարչարանաց Որդւոյդ. զի ինձ յան-
կագոյն է լալ՝ քան քեզ. քանզի դու ամենեւին
անարատ ես և անմեղ, իսկ ես այն մեղաւորն եմ՝
վասն որոյ տառապի Քրիստոս: Մայր ողորմու-
թեանց, եթէ ես ոչ գթամ 'ի քեզ, դու ինքն
գթա՛ յիս. և ողորմագին աչօք հայեաց 'ի տա-
ռապանս հոգւոյ իմոյ՝ որ անհնարին ծանունք են,
և օժանդակեա ինձ քոյովդ օգնականութեամբ:

Քանզի գլխաւոր բարեխօս ընտրեալ է իմ
զԿոյսն Մարիամ, արդ ընտրեցից զնա և առան-
ձինն բարեխօս առ ընդունել ինձ զշնորհսն կա-
րեւորս՝ զի պտղաբեր լիցին խոկմունք չարչարա-
նացն Քրիստոսի:

Խորհուրդ Հրեից 'ի սպանութիւն Յիսուսի:

ՃԿ. Ի կարճել գիշերոյն՝ որ այնքան ցաւաբեր
եղև Յիսուսի, վաղ քաջ ընդ առաւօտն գումա-
րին անդրէն քահանայապետքն, օրէնսուսոյցքն
և առաջնորդք ժողովրդեանն, հրապարակաւ
յատեան հասարակաց, առնուլ խորհուրդ վասն
անմեղին. քանզի առաջին խորհրդակցութիւնն
գիշերայն անկարգօրէն և աղմկաւ կատարեալ՝
ոչ համարէր ըստ հրահանգաց ուղիղ դատաստա-
նի. վասն որոյ ժողովլին միաբանգամ, զի արդար
և օրինաւոր երևեսցի փուրսիչն, և մի իբր անի-
րաւութեամբ ինչ գործեալ ստգտանիցին: Ի
դէպ է կարծել, թէ և 'ի քնոյ հրաժարեալք՝
զամենայն գիշերն հնարս հնարէին, եթէ որպէս
'ի գլուխ հանցեն զդատապարտութիւն Յիսու-
սի. և ոչ էր պիտոյ Կայիափայի կոչ կարդալոյ
նոցա, զի ահա յայն ինչ ծագել առաւօտուն ժա-

մանեալք կան 'ի պատրաստի: Ատելութիւն նոցա ճեպեցուցանէ զնոսա փութալ բառնալ զՔրիստոս յաշխարհէ ստայօդ զրպարտութեամբք. և ատեն զնա ոչ վասն այլոյ իրիք՝ բայց զի յանդիմանեաց օրինակաւն և վարդապետութեամբ զփառասիրութիւն և զկեղծաւորութիւն նոցա: Ատեան զնա, ոչ զի ատելի ինչ բարս գտին 'ի նմա, այլ միայն զի 'ի փառս Աստուծոյ քարոզեաց նոցա զճշմարտութիւն: Ատելութիւն անբանաւոր և անիրաւ:

Այլ միթէ ո՞չ և ցարդ իսկ այսպէս գործի, հոգիդ իմ: Ամենայն մեղաւոր ատեայ զՅիսուս ըստ այնմ առաքինութեան՝ որ ընդ ախտ իւր հարկանի. հպարտք ատեան զՅիսուս 'ի խոնարհութեան նորին. լկտիք՝ 'ի մաքրութեան նորին. և 'ի հասարակի 'ի ճշմարտութեան նորին ատեան զնա ամենայն վատթար քրիստոնեայք, անձնատուրքն 'ի խաւարին գործս մեղաց:

Ո՜վ Յիսուս, լոյս ճշմարիտ, ճշմարտութիւն սուրբ, ո՜րքան ժամանակս և ես այդպէս ատեցի զքեզ, զի 'ի կալ մնալ իմում ընդերկար ամս 'ի մոլեկան բարս իմ՝ արդարև ատէի զքեզ. քանզի ճշմարտապէս հալածէի զքեզ 'ի լաւութիւնս քո, 'ի խրատս խորհրդոց և 'ի պատուիրանս քո: Նաև 'ի նուիրել իմում զանձն իմ 'ի ծառայել քեզ, ո՜հ, որքան յաւէտ յատելութիւն քան 'ի սէր քո միտեալ է սիրտս այս: Սիրել զքեզ ասեմ բերանով, այլ ստուգիւ ոչ սիրեմ զքեզ. քանզի ուր հնազանդելոյ քեզ հարկ 'ի վերայ կայցէ՝ հեղգ և պղերգ գտանիմ. իսկ ուր դէպք լիցին ըման մոլեկան կրից իմոց՝ պատրաստ և փութկոտ գտանիմ: Զզջամ ընդ նենգութիւն իմ. և դու, ո՜վ ամենագորով Փրկիչ՝ որ գթաս և յոչ սիրողան զքեզ, գթա և յիս. և տուր ինձ շնորհս հաւաստար ապիրատութեանց կենաց ի-

մոց անցելոց՝ որբազան եռանդեամբ սիրոյդ վառելով զիս: Այլ ոչ է հնար ինձ որպէս արժանն է սիրել զքեզ՝ եթէ ոչ և զլաւութիւնս քո սիրեցեմ: Արդ տուր ինձ գործօրէն սիրել զքեզ:

Գուն գործեցից յաւիտս դիպաց զդէմ ունել թափոյ կրիցս, և խնամով ջան եդից կատարել զբարին՝ որպէս երբեմն խնամով խոկայի 'ի չարիս:

ՃԿԱ. Ի խմբել ժողովոյն ընդ առաւօտս ուրբաթուն՝ հրաման տան ածել յատեան զՅիսուս, զի վերստին քննեսցի: Հաստատութեամբ եդեալ է նոցա 'ի մտի սպանանել զնա, որպէս զի անհետ լիցի վարդապետութիւն նորա, հաւատք նորա և անուն: Այլ քանզի ոչ գտանեն փաստ բաւական 'ի դատապարտել զնա, զյետին արդ փորձ փորձեն 'ի ճարտարել խծբիծս ինչ: Մտանէ Փրկիչն Յիսուս մղեալ 'ի կալանաւորացն յատեան անօրէն Հրէիցն. և դու, հոգի իմ, զկայ առեալ հայեաց անս, զիա՞րդ գունատեալ և ուռուցեալ են աստուածաքանչ դէմք կերպարանացն՝ 'ի չարաչար լկանաց գիշերոյն և 'ի թքակոծութենէն, զոր ոչ կարաց սրբել և ջնջել վասն կապեալ գոլոյ ձեռացն: Այր այր 'ի Հրէիցն կայ անդ խստացեալ քարացեալ սալացեալ սրտիւ, և ոչ մի գութ կարեկցութեան ունելով առ Յիսուս. իսկ Յիսուս կայ սրտիւ որպէս ջահաբորբոք վառելով՝ որ լուծեալ շուրջ ծորեսցի 'ի սէր և 'ի գթութիւն: Նստեալ նիւթեն նոքա նենգութիւնս և չարութիւնս առ 'ի խարդաւանել և նկուն առնել զանմեղութիւն Յիսուսի. Յիսուս խոնարհութեամբ զատառապանս իւր յանդիման առնէ Հօրն երկնաւորի, և 'ի ձեռս նորա ապաստան առնէ զդատ իւր. յանձն լինի նմա, 'ի նա ապա-

ւինի, և ոչ այլ ինչ բայց զփառս նորա միայն խնդրէ:

Հոգի իմ, քանի՜ գեղեցիկ իցէ աչօք փափկելովք ապաստան առնել զանձն յամենախնամ ձեռս Աստուծոյ. և ոչ ինչ հոգալով զպատահարաց աշխարհի, թէպէտ և վշտալիցք ինչ իցեն, վստահիլ և յենուլ յԱստուած. Թողուլ զի արասցէ ընդ մեզ Աստուած որպէս կամի և հաճի 'ի ներքին մեր և յարտաքին, յամենայնի որ պատահիցին 'ի հոգի և 'ի մարմին, 'ի պատիւ, յինչս, 'ի կեանս և 'ի մահ, 'ի ժամանակեայս և 'ի յաւիտենականն: Այս ուղղութիւն է զոր ուսուցանէ մեզ Յիսուս, առ 'ի տալոյ մեզ ճաշակս ինչ արքայութեան նաև 'ի հովտի աստ արտասուաց: Այլ իմ սիրտ, աւա՜ղ, քանի՜ հեռի է յուղղութենէ աստի. և ոչ իսկ զվերերեւոյթ գունոյ նորին ունիմ ես: — Սակայն առ քեզ խոնարհեալ պաղատիմ, Տէր Յիսուս, տուր ինձ զօրութիւն կրթելոյ յուղղութիւնդ յայդ: Աստուած իմ, յոյս իմ յարգանդէ մօր իմոյ, յո՞ յուսացայց ես՝ եթէ ոչ յուսամ 'ի քեզ՝ որ ամենայն բարեաց ես կամեցող: Առ քեզ համբարձից զմիտս իմ՝ յամենայն դէպս պատահարաց. և զհաճոյս կամաց քոց միայն փափագելով քեզ յանձն առնեմ զանձն իմ յամենայնի և ըստ ամենայնի. քաջայոյս գոլով զի զոր և հրամայիցես վասն իմ՝ այն ինձ լաւագոյն իցէ: Այլ միայն յանհաստատութենէ կամաց իմոց զանգիտեմ. բայց և յայսմ ապաւինիմ 'ի քեզ, թէ գթութեամբ քով հաստատես զյողդողդումն մտաց իմոց:

Զմտաւ ածից թէ զինչ կամ որպիսի՜ պատահարք կարիցեն 'ի հոգ և 'ի վարանս արկանել զիս. և նորոգեսցից զաղերս ապաւինութեան յԱստուած՝ յամենայն դէպս դժնդակս առհասարակ՝ որ ըստ հոգւոյ և որ ըստ մարմնոյ:

ՃԿԲ. Ոչ Սադայէլ և ոչ այլ ոք ամենեւին եգիտ և ստուեր անգամ արատոյ 'ի Յիսուս. իսկ Հրէայք ժպրհէին գտանել 'ի նմա ոճիրս քրէականս՝ պարտական մահու: Ստիպեն զնա խոստովանել թէ ինքն իցէ Քրիստոսն, այսինքն է թագաւորն Իսրայէլի՝ խոստացեալ յԱստուծոյ առ Դաւիթ. որպէս զի եթէ այն ասասցէ՝ ունիցին փաստ ամբաստանութեան առ Պիղատոս, որպէս հակառակորդ արքունի իշխանութեան և 'ի մեծագոյն եղեռն յաւակնեալ ընդդէմ պետութեան: Իսկ Յիսուս զի՞նչ տայցէ պատասխանի. Ոչ է, ասէ, ժամն քննելոյ՝ թէ ո՞ իցեմ ես. զի եթէ կամ էր ձեր՝ կարէիք ցարդ ճանաչե՛լ զիս. այլ ասեմ ձեզ, զի մերձենայ դատաստանն և Որդի մարդոյ նստցի ընդ աջմէ զօրութեանն Աստուծոյ: Ո՛վ բանք յաւիտենական ճշմարտութեան, սրտազդեցիկք և ահաւորք: Այլ նոքա առաւել ևս սորուեն սրտմտութեամբ և կատաղութեամբ. և 'ի լսելն եթէ գայցէ Յիսուս դատաւորական փառօք, զայրագին կըշտամբանօք հարցումն առնեն. Դո՞ւ ես ուրեմն որդի Աստուծոյ: Միտ դիր չարաբարոյ կուրութեանն: Ունին լոյս մտաց 'ի դատել, զի եթէ դատաւոր իցէ աշխարհի՝ ուրեմն որդի է Աստուծոյ. և չունին նշոյլ մի իմանալոյ՝ թէ ապա ուրեմն պարտ է պաշտել զնա և երկնչել 'ի նըմանէ: Կարող էին և պարտ իսկ էր նոցա հաւատալ 'ի նա, այլ ոչ կամին, զի մի բանադատիցին 'ի հաւատոց անտի՝ թողուլ լքանել զհրապոյրս ախտալից կրից իւրեանց:

Ո՛վ, քանի՜ թշուառական է հոգի՝ որ ըստ արդար իրաւանց Աստուծոյ անզգայանայ մինչև չերկնչել 'ի դատաստանաց Աստուծոյ. պատուհաս ահաւոր, որում զհետ գան անզղջութիւն, խստասրտութիւն և դատապարտութիւն: Անկ

է և ինձ քննել զանձն իմ և զգուշանալ յիմոց վտանգաց։ Հաւատայցե՞մ ճշմարտութեան հաւատոց՝ եթէ գալոց է Քրիստոս իշխանութեամբ և փառօք 'ի դատել զիս. յիշեցե՞մ զայս ստէպ՝ առ 'ի զանգիտել, և ըստ այնմ ուղղել զգնացս վարուց իմոց։ Ո՜վ Յիսուս իմ, դու գիտես զանզգաստ պղերգութիւնս իմ. զիա՞րդ օրէն իցէ ինձ յուսալ 'ի Փրկիչդ իմ՝ եթէ ոչ պատկառեմ և 'ի դատաւորէդ։ Տուր ինձ հաւատս կենդանիս և երկիւղ մեծ, առ 'ի յանդիման նկատելոյ զդատողութիւն քո յամենայն գործս, 'ի բանս և 'ի խորհուրդս իմ. և եղիցի ինձ այս ողորմութիւն մեծ առ 'ի քէն։ Ծանո ինձ այժմէն զբազմութիւն և զմեծութիւն մեղաց իմոց, և արմատացս յիս զմոլութիւնս զայս, թէ զի՞նչ լինիցի ինձ անօրէնութեամբք լցելոյս, յորժամ դայցես 'ի դատել զիս։ Դու յանձն առեր դատիլ 'ի մարդկանէ, առ աներկիւղ առնել զիս յաստուածային և յահեղ դատաստան քո. մեծ բարերարութիւն համարեցայց զայս առ 'ի քէն, և շնորհս կալայց քեզ։ — Պտուղ երկիւղի՝ լիցի ապաշաւ անցելոց կենաց, և առաջադրութիւն բարւոք կելոյ զառաջիկայն։ Քանզի անաչառ լիցի դատաստանն, անաչառապէս քննեցից և ես զանձն իմ։

ՃԿԳ. Առ հարցուածն թէ իցէ՞ արդարեւ Որդի Աստուծոյ, Քրիստոս պարզապէս պատասխանէ և հաստատէ ճշմարտիւ այնպէս լինել որպէս ասէնն նոքա իւրեանց բերանով. և անդէն ամենեքին առ հասարակ, քահանայքն և դպիրք և ծերք ժողովրդեան ՝մոլեգնիս գոչեն. Զի՞նչ ևս պիտոյ են մեզ վկայութիւնք. ահա անձամբ զանձն քրէապարտ եցոյց կրօնից և իշխանութեանց։ Եւ համօրէն հաւանութեամբ և վճռակ-

արկութեամբ, և ոչ միոյ ուրուք զՅիսուսի կողմն ունելով, դատէն զնա յանցաւոր և մահապարտ, ըստ մարգարէին նախագուշակութեան:

Ո՜ անհեդեդ ժպրհութեանն. մահու յանցաւոր դատել զկեանն՝ որ պատուական է քան զամենայն կեանս, և աղբիւր իսկ ամենայն կենաց, յորմէ առնուն զկեալն ամենայն կենդանիք: Դևք ահիւ և դողութեամբ ծանեան զՔրիստոս դատաւոր իւրեանց և Աստուած. իսկ Հրեայքն վասն այնր իսկ զի Քրիստոս զանձն դատաւոր նոցա և Աստուած յայտնեաց, մոլորեցուցիչ և հայհոյիչ կոչեն և դատապարտեն 'ի մահ: Արդարապէս յայտնութիւն խորագոյն խորհրդոցն՝ զոր յայտնեաց նոցա Փրկիչն՝ շրջի 'ի չարաչար դատապարտութիւն նոցին:

Այլ մի կարի զչարեսցուք ընդ Հրեայսն. միթէ Յիսուս 'ի լսել զվճիռն անիրաւ՝ սրտմտի՞ կամ բողոքէ՞, կամ խնդրէ՞ ժամ առ 'ի չքմեղս լինելոյ: Լռէ խոնարհ խոհեմութեամբ, և խոհեմական խոնարհութեամբ, և պաշտէ զարդարադատ վճիռ Հօրն երկնաւորի: Այլ ես առ քեզ դառնամ խորին հլութեամբ, ո՜վ Հայրդ երկնաւոր. ես եմ մեղաւորն, ես եմ եղեռնաւորն պարտական մահու: Զինչ չար արար ամենեւին անմեղ Որդին քո այդ: Յիմ վերայ թափեսցին վրէժք ցասմանդ. ազատեսցի Միածին քո: Զանձնէ իմէ խօսիմ ես, զհին մարդոյս՝ զոր ունիմս յիս յապստամբ ախորժակս իմ. զմարդոյս յանցուցելոյ յԱդամ, զթշնամւոյ և զԱստուած անարգողէ, որ անձնապաշտն է և աշխարհասէր, գերի մարմնոյ և սատանայի: Այո. հոգի իմ, եթէ իջէ 'ի քէն հանճար՝ ըմղոքեա զմարդոյդ. զի դա է արժանի մահու: Աստուած իմ, տուր ինձ զօրութիւն մեռուցա-

նելոյ զնա, ընկճելոյ և յոչինչ դարձուցանելոյ, քանզի այնքան ըմբոստ է և խորոխ՝ մինչև գլուխ ամբառնալ ընդ քո իսկ դէմ։ Գիտես զոր խմանամն զներքին մարդոյս, որ հրէշախառն զանգուած է մեղաց, ախտից և անկարգ կրից։ Մեռցի ժպիրհն և պարտական հազար մահու. կեցցէ Յիսուս յամենասուրբ խոնարհութեան իւրում, որ արժանին է յաւիտենական կենաց. կեցցէ և հոգի իմ ստեղծուած քո և փրկած, առ 'ի վայելել զքեզ 'ի փառսն յաւիտենականս։

Ապաշաւ սրտի, մեռելութիւնք զգայարանաց և ուրացութիւն անձին կամաց՝ մեռուցանեն զհին մարդս այս՝ զորդի Ադամայ։ Նորոգեսցիս արդ աստանօր զառաջադրութիւնս իմ։

Ուրանալ Պետրոսի զՅիսուս:

ԾԿԴ. Մինչդեռ յապարանս Կայիափայի Թըշնամանի Քրիստոս նախատանօք և հարուածովք, 'ի նմին պահու անարգաբար անպատուի և երիւք ուրացութեամբք Պետրոսի։ Սակաւ ինչ ժամուք յառաջ ազդ արարեալ էր նմա Քրիստոսի զհանդիպելոցն. երիցս 'ի պարտիզին խրատեալ էր պատրաստ կալ 'ի փորձութեանց. և վասն ոչ զգուշանալոյն՝ աւադիկ երիցս գթէ թշուառաբար. զի հարցեալ յերիս նուագս եթէ իցէ աշակերտ Յիսուսի, համարձակ և բարձրաձայն ասէ, ո՛չ. և երդմամբք և անիծիւք պայքարի՝ որպէս զի հաւատալի լիցի ոչն. և խոստովան լինի թէ չճանաչէ անգամ զայրն զայն։ Այնպէս ծանուցանէ զանձն Պետրոս՝ մինչև ուրուք ահ արկեալ 'ի նա, կամ իշխանութեամբ և սպառնալեօք բռնաբարեալ. այլ առ լոկ պար-

զօրաւոր հարցուած երկուց ռամիկ կանանց և ժամավաճառ պարապորդ սպասաւորի միոյ։ Զի՞նչ արդեօք ասացին յօքնաթիւ որ անդ մերձակայքն, որոց բազում անգամ տեսեալ էր 'ի քաղաքին զՊետրոս ընդ Յիսուսի շրջելով, և դեռ սակաւ պահու յառաջ ընդ նմա և 'ի պարտիզին։ Յայսպիսի դէպս սովորութիւն է աշխարհի չարաչար դատել։

Կշռեա՛ց, հոգի իմ, զչափ անարգանաց՝ որ այսու եհաս Քրիստոսի. քանզի մինչ դեռ 'ի խնդիր էին վկայից՝ ցուցանելոյ եթէ այր չար է Քրիստոս, ո՞չ ապաքէն փաստ մեծ ընծայեն նոցա բանքն Պետրոսի՝ որ ամաչէր իմն և ստրջանայր ընդ դասանելն 'ի թիւ հետեւողաց նորին։ Այլ քաջ քննեսցուք. եթէ ուրանալ զՔրիստոս ասի զՊետրոսէ՝ վասն յուրաստ կալոյն լինել նորա աշակերտ, քանի՛ քանի՛ քրիստոնեայք իցեն որք չարաչար քան զՊետրոս հանապազ ուրանան զնա, վարուք իւրեանց 'ի սուտ հանելով զհաւատս քրիստոնէութեանն։

Մի՛ յայնցանէ և ես եմ, ո՛վ երկրպագելի Փրկիչ իմ, որ ոչ թէ երիցս, այլ այնքան նուագս յուրաստ կացի 'ի քէն՝ որքան մահուչափ մեղաց, անցանելով զօրինօք քովք։ Պետրոս առ յողդողդութեան և զանգիտելոյ ուրացաւ զքեզ, և այն շրթամբք և ոչ սրտիւ. իսկ ես ստուգիւ չարութեամբ ուրացայ. յուրաստ եղէ բանիւք և գործովք և սրտիւ իսկ, կամակար հաւանելով մեղաց, և ախորժելով ընդ մեղս։ Քանի՞օն պարտ և արժան է ինձ արդ զիջանել 'ի խոնարհութիւն։ Ո՛վ Յիսուս, տո՛ւր ինձ ճանաչել զանպիտանութիւն իմ յանօրէնութիւնս իմ. պտուղ չարչարանաց քոց լիցի ծանօթութիւն մեղաց իմոց, որպէս զի խոնարհ եղէց։

Ուշով քննեցից զորպիսութիւն և զորքանու-

թիւն մեղաց իմոց՝ առ 'ի կրթել 'ի զղջումն և 'ի խոնարհութիւն: Որքան առաւել մեղայ, այնքան և անկ է ինձ ապաշաւել և խոնարհել:

ՃԿԵ. Ի սրահի խորհրդեան Հրէից կալով Յիսուսի, առ արտաքին դրան նորին ուրանայ զնա Պետրոս. և նա տեսանէ աստուածային հոգւովն զոր ինչ ընդ առաքելոյն անցանէ: Տեսանէ զուրացութիւնն՝ հանդերձ սուտ երդմամբքն՝ որ զրկեն զնա 'ի շնորհացն Աստուծոյ, քանզի մեղք են մահացուք. և եթէ 'ի պարտիզին կանխաւ միայն լինելով այնոցիկ՝ տրտմէր և սոսկայր, որպիսի՞ արդեօք կրեաց ցաւս սիրտ նորա ողորմագութ՝ 'ի կատարել գործոյն: Ի կապանս և 'ի ձաղանս մատնեալ կայ Յիսուս, մինչդեռ Պետրոս երդնու և պնդէ ստութեամբ ոչ ճանաչել զնա. և թէպէտ ոչ բանայ զբերան իւր 'ի տրտունջ վասն թշնամանացն և ցաւոցն զոր կրէ, այլ ոչ հանդուրժէ արգելուլ զմարդարէս 'ի բողոքելոյ դառնապէս զՊետրոսէ, ասելով իմն. Ոչ ինչ է մեծ՝ եթէ թշնամիք իմ բանիւք և գործովք ստնհար լինիցին ինձ. զի 'ի մահուշափ ատելութենէ նոցա չմնայր ինձ այլոյ իմիք ակն ունել. այլ զի դու, Պետրէ, բարեկամդ իմ մտերիմ և հացակից իմ, ընտրեալդ յինէն յառաջնորդութիւն հաւատացելոց իմոց, փոխանակ տալոյ զանձնդ 'ի վկայութիւն անուան իմոյ, ուրանաս զիս, այս տրտմեցուցանէ զիս յոյժ և անհնարինս յոգի հարկանէ: Ծանր է ինձ արդարև լքումն իմ յամենայն ծանօթից իմոց. այլ քո Պետրէ, սիրեցելոյդ յինէն քան զբնաւս, ուրացութիւնդ և արհամարհանք, ուրացութիւնքդ երեքին՝ բևեռք են ինձ երրեակ, որք բևեռեն զիս 'ի խաչ՝ ցաւագին քան զխաչն զոր Հրէայքդ ինձ կազմեն:

Այսպէս իմն 'ի դէպ է կարծել թէ գանգատելի Յիսուս զՊետրոսէ, այլ և զինէն՝ որ չեմս հեռի 'ի մտաց նորին: Ո՛վ Յիսուս իմ, հաւատամ թէ առաւել ցաւ եղեն քեզ մեղք իմ քան ամենայն խոշտանգանք Հրէիցն: Գիտեմ զի քաղցր և հաճոյ են քեզ փուշք, զի ցանկալիք են սիրոյ քում, այլ մեղք՝ զի հակառակք են անբաւ սիրոյդ, գիտեմ զի և ատելիք են քեզ, և իմքս մանաւանդ՝ զի ծանունք են. զծանրութիւն նոցին չափեմ 'ի մեծութենէն և 'ի բազմութենէ բարեացն զոր արարերդ ինձ: Ո՛վ, որքան և որպէս մեծամեծք եղեն շնորհք ողորմութեանդ առ իս. և որքան դարձեալ մեծ են մեղանք իմ վասն չարաչար ապերախտութեան իմոյ: Ո՛վ Փրկիչ իմ, տուր ինձ ճանաչել զպարգ շնորհաց քոց, որովք այդպէս զթացար յիս և մեծարեցեր, որպէս զի ծանեայց և զծանրութիւն չարութեան իմոյ 'ի մեղանչելն քեզ, և ոչ ևս ժխտեսցէ այնուհետև սիրտ իմ ցրտին յորդորել 'ի սէր քո և 'ի ցաւել ընդ թշնամանելն զքեզ:

Վիշտ է ինձ երբեմն զի ոչ գործեմ ոչ առ սէրն Աստուծոյ և ոչ առ ատելութիւն մեղաց իմոց. հարկ է ինձ առ այդ՝ խորհել զմեծութիւն բարերարութեանցն Աստուծոյ 'ի վերայ իմ:

ՃԿԶ. Ո՞ կարծէր եթէ Պետրոս որ փոքր մի յառաջ խոստովանէր զաստուածութիւն Քրիստոսի, և երդմամբ խոստանայր մեռանել քան թշնամանել ինչ զնա, արդ ուրասցի զնոյն ինքն՝ փորձեալ 'ի ձայնէ անարգ աղախնոյ միոյ: Ո՞ կարծէր եթէ Պետրոս նախադասեալն 'ի Յիսուսէ յառաջեալս, և գլուխ և սիւն եկեղեցւոյ իւրոյ կարգեալ, այսպէս երագ երագ 'ի գլորմանէ 'ի գլորումն բերցի՝ մինչև 'ի խորս ամբարշտու-

քթեան, և 'ի պատիժ ուրացութեան իւրոյ արժանի լինել ուրանալոյ զնա Փրկչին առաջի Հօր իւրոյ յաւիտենականի:

Ո՛վ իրք ահաւորք: ԶՔրիստոս խոստովանելով՝ մտցեն ապա յերկինս վկայական պատկօք մանկունք անգամ. և Պետրոս որ զերկնից փականս ունի՝ արտաքս յայնմանէ զանձն առագրէ, ըստ ներկայ դատաստանի: Զի՛ք նմա արդարանալ՝ 'ի մահացու մեղաց. այլ միայն յապշութիւն կրթելով մարթ է ասել. Զիա՞րդ գլուխն առաքելոց գործէր զայսպիսի մեղս մեծս. զիա՞րդ հնար էր նմա առնել, զոր թուի ինձ թէ և ոչ որք աւանդեցինն զայն աւետարանիչքն՝ իմացան: Եւ սակայն այնպէս ճշմարիտ են իրքդ՝ որպէս ճշմարիտ է աւետարանն:

Իսկ մեք զի՞նչ այտի ուսցուք: — Ոչ այլ ինչ՝ բայց զայս, զի այսպէս տկար է ինքնին բնութիւնս մեր, եթէ առ վայրկեան մի եւեթ վերացուսցէ 'ի մէնջ Աստուած զձեռն օգնութեան իւրոյ: Որ ինչ էանց ընդ Պետրոս՝ մարթ է այնմ անցանել յեղակարծուց և ընդ ամենայն ոք, թէպէտ և սուրբ իցէ և կատարեալ և 'ի ծագ սրբութեան հասեալ. և առաւել ինձ մարթ է այդմ պատահել քան այլումուեք: Ո՛հ, Աստուած իմ, ո՞ իցեմ ես առանց շնորհացդ օժանդակաց, եթէ ոչ Պետրոսն 'ի պահու յորում ուրացաւ, և կրկին ուրացաւ և երդուաւ և ստեաց՝ թէ ոչ ճանաչիցէ զփրկիչն աշխարհի: Բազում ուղղութիւնս ստացեալ ունէր Պետրոս 'ի վարժարանի աստուածայնոյ վարդապետին. այլ և ոչ մի յայնցանէ բաւական եղև հաստատուն պահել զնա 'ի պահու՝ յորում վերացաւ հզօրն 'ի նմանէ առաքինութիւն՝ որ յերկնից գայ: Ի՞մ իմիք ապա մարթ իցէ ինձ ակնունել յանձնէս հիդոյ և տառապելոյ, և յամենայն

առաքինութեանց և հնարագիտութեանց զուրկ եղելոյ: Զ Պետրոս գլորեալ տեսանելով զարհուրեալ խոնարհիմ առաջի քո, ո՛վ Տէր, և գոչեմ. Ողորմեա ինձ և օգնեա. զի չիք անօրէնութիւն զոր ոչ գործեցից՝ եթէ օգնութիւն քո ոչ ժամանեսցէ ինձ:

Երկեայց յանձնէ, վասն կարողութեանս 'ի գահավէժ գլորումն յամենայն մեղս մահացուս՝ մինչ յանկասկածս իցեմ. և 'ի շնորհս արդեանց Քրիստոսի ժտեցից զօգնականութիւն Աստուծոյ:

ՃԿԼ. Առաջին պատճառ անկմանն Պետրոսի անկ է համարել զգաղտնի հպարտութիւն ինչ նորին. քանզի յաճախակի այս պատահէ, որոց գթենն 'ի մեղս, յառաջագոյն հպարտանալ յանձինս իւրեանց 'ի վերայ իւրեք. և յայտ է յոյժ ատել Աստուծոյ զհպարտութիւն, վասն այնորիկ և թոյլ տալ չարաչար գլորմանց առ 'ի զգաստութիւն և յուղղութիւն ածել: Արդարև երիցս պանծացեալ էր Պետրոսի 'ի գիշերին յայնմիկ յանդըգնօրէն՝ իբրու անմեղանչական ոք լինել և անլուանելի 'ի փորձութեանց. վասն որոյ և Աստուած 'ի պատիժ երիցն յանձնապաստանութեանց՝ թոյլ տայ նմա երիցս գթել յուրացութիւն:

Յեռանդեան իւրում՝ զօրաւոր գտանէր զանձն իւր Պետրոս. և չածեալ զմտաւ զԱստուած՝ զտուիչն ամենայն զօրութեան իւրոյ՝ կարի իմն ապաստանէր 'ի հանճար իւր: Եւ տես, ո՞ւր երթեալ աւարտէր յանձնապաստանութիւն նորա. 'ի սոսկական կնոջէ միոջէ զահի հարկանէր՝ որ պարծէրն զաշխարհ համօրէն առ ոչինչ մի համարել. և որ բազմապատիկ մահուանս յանձն առնուլ համարէր փոխանակ Քրիստոսի՝ զնոյն ինքն

զՔրիստոս ուրանայր: Կամ եղև ամենայն աւետարանչաց գրել զանկումն Պետրոսի, որպէս զի ուսցուք և մեք մի երբեք պարծել յանձինս, և մի յողալ յուսալ 'ի տկարութիւնս մեր, այլ զամենայն վստահութիւն յուսոյ յԱստուած միայն դնել, որ միայնն է Աստուած զօրացուցիչ մեր՝ շնորհօք իւրովք:

Զճշմարտութեանս զորմէ խորհրդածեմ՝ բազում անգամ առի յանձին զփորձ. քանզի՝ քանիցս, ով Աստուած իմ, մինչ հաստատեալ կարծէի զիս յառաքինութեան՝ անհաստատ գտայ և դրդուեալ կործանեցայ. և յորժամ կարծէի իմովս ճարտարմտութեամբ յառաջել 'ի կատարելութեան՝ առաւել ևս յետնեալ գտայ: Ոչ այնպէս ակն յայտնի նշաւակեցաւ տկարութիւն իմ՝ որպէս յորժամ յանձին զօրութիւն վստահացայ. և ոչ այնպէս երբեք քաջ ծանեայ զաղքատութիւն իմ և զաղամարութիւն և զոչինչն իմ, որպէս յորժամ վարկ բարի կալայ զանձնէ, և համարեցայ լինել ինչ. յայնժամ գլորմունք իմ և կորուստք զգաստացուցին զիս:

Ով Աստուած իմ ամենակարող, խորագոյնս տպաւորեա յոգւոջ իմում զծանօթութիւնս զայս զոր 'ի փորձոյ զգացի, եթէ իմովսանն չեմ իմիք կարող. որպէս զի ըստ չափու ճանաչմանս զանարգութիւն, զդիւրահաստումն և զոչընչութիւն իմ՝ փութացայց ապաւինել յանբաւ 'ի քո բարութիւնդ: Բա՛ց զաչս իմ, դնելով 'ի վերայ աչաց իմոց զտիղմ կաւոյ իմոյ. որպէս զի ճանաչելով զմեծութիւն չարութեան իմոյ՝ ծանեայց և զմեծութիւն հեքութեանս իմոյ, և զքո ամենամեծ ողորմութիւնդ:

Խոկացից զյանձնապաստանութեան ախտէ՝ որ գժուարիմացն է և բազմավտանգ. և սովորեցայց 'ի խորհելս կամ յասելս կամել զայս ինչ

կամղայն առնել, յաւելուլ միշտ՝ եթէ՝ Աստուծոյ օգնականութեամբ։

ՃԿԸ. Ի հասարակի ոչ երբեք 'ի ջերմաջերմն սիրոյն Աստուծոյ գթէ ոք վաղվաղակի 'ի մեղս մահացուս. այլ յառաջագոյն կանխեն պղերգանք և գաղջութիւն հոգւոյ. և ոչ սատանայ փորձէ իսկ և իսկ 'ի մեղս մեծամեծս գթեցուցանել, այլ խորամանկութեամբ 'ի փոքունց մեղաց 'ի մեծագոյնսն տանի. որպէս և 'ի Պետրոսդ տեսանի, որ նախ պարզապէս յուրաստ եկաց, ապա երդուաւ սուտ. յետոյ սկըսաւ անիծանել և նզովել զանձն։ Այլ զիա՞րդ ժամանեաց նա յոճիր ուրանալոյ զՔրիստոս։ — Պղերգութիւն, պարապորդութիւն, ընդվայրաքննութիւն և վատասրտութիւն, նշանք մահաբեր գաղջութեան՝ առաջնորդեցին նմա 'ի մեղս մահացուս։ Քաջ 'ի միտ առցուք զայս, եթէ առ 'ի գրգուեցուցանել զհոգի գաղջ՝ շատ է և դոյզն ինչ փորձութիւն։

Փոքր մի յառաջ ննջէր Պետրոս՝ մինչ պարտ էր նմա կալ յաղօթս. կայր պարապեալ առ խարուկին 'ի լսել զշաղակրատանս. և փոխանակ կարեկից ցաւակից լինելոյ Յիսուսի՝ կայր անդ լռկով մարդկային անձկութեամբ 'ի տեսանել զելս կատարածի դատի նորա։ Տագնապեալ յանձին զանգիտէր թէ գուցէ ոք հարցանիցէ ցնա թէ ո՞ ես դու. խրախուսեալ զհետ երթալ Յիսուսի՝ ցորչափ նա աքանչելիս գործէր՝ մինչ և անգամ 'ի պարտիզին, յորժամ զփառս նորա ետես յանարգութիւն փոխեալ՝ պակեաւ. և ըստ սովորութեան աշխարհի վարեցաւ, հաւատարիմ լինել բարեկամ 'ի յաջողութեան նորա, անծանօթանալ 'ի նմանէ 'ի ձախողանսն։ Հոգի որ զայս օրինակ հօվանոյ՝ ոչ կարէ ընդերկար

զգէմունել մահացու մեղաց. քանզիըստ արժան իրաւանց՝ օգնութիւն շնորհացն առ փոքր փոքր հեռանայ 'ի նմանէ: Այսպիսի գոլով և իմս գաղջութիւն՝ որպիսի՞ տխրական դուշակութիւնս չիցէ ինձ օրէն առնել զանձնէ: Ամաչեմ և յամօթ լինիմ և զարհուրեալ դողամ յածելս զմտաւ զաւաղելի պայմանն յոր անկեալ դնի հոգիս, արդարև ծոյլ և պղերգ, ընդվայրաքնին, հեղգասիրտ, գիւրամէտ 'ի թողուլ զկրթանս աղօթից և զեռանդն հոգեսիրութեան, անփոյթ զբարեաց, յօժար 'ի չարիս, գերի կրից, զուրկ յամենայն առաքինութենէ, և ամենայն ախտից ծառայեալ: Յեզր գահավիժի տեսանեմ զիս՝ թերևս և յաւիտենական գլորմանց. Աստուած իմ, կարկառ ինձ զձեռն օգնութեան քո. չեմ արժանի օգնականութեան այլ մանաւանդ լքման և թողման յաւար մեղաց, այլ դու գթա՛ յիս: Ի սէր քո յուսացեալ եմ. և 'ի նոյն սէր պաղատիմ ջեռուցանել զցրտացեալ և զատուցեալ սիրտ իմ. որպէս զի 'ի բաց վանեալ զգաղջութիւն՝ սուտ դաւաճանս այլ իբրեւ սրտէ 'ի վեր քան զամենայն: Միայն հուր սուրբ սիրոյդ այդորիկ բաւական է 'ի վառել յիս զեռանդնն տենչալի:

Որ գաղջն է չզգայ զգաղջութիւնն չար. վասն այնորիկ պարտ է ինձ խոնարհել և լալ զկուրութիւն իմ, զի ամենևին իսկ գաղջ գոլով ոչ ճանաչեմ զգաղջ ութիւնս:

ՃԿԹ. Մեղք Պետրոսի խիստ փրկաւէտ է այնոցիկ որք փափագիցեն կալ 'ի շնորհս Աստուծոյ: Քննեսցուք զպատճառն վասն որոյ թոյլ ետ Յիսուս գթել առաքելոյ իւրում, որպէս զի հանդերձ այլովքն զգուշասցուք և 'ի նոցունց: Նախանձայոյզ խիստ էր Պետրոս առ.

ընկերս. և սակաւ էր նորա քաղցրութիւն և գթութիւն կարևոր յարգահատել և 'ի կանգնել զմեղուցեալն. վասն որոյ և համարեալ կարծէր թէ զամենեսին որք ձեռն արկին ըմբռնել զվարդապետն իւր՝ արժան իցէ 'ի սուր սուսերի կոտորել: Յայն սակս տեսչութիւնն Աստուծոյ իմաստուն անտեսութեամբ թոյլ ետ նմա՝ որ գլուխն էր առաքելոց՝ մեղանչել միանգամ և երկիցս և երիցս. որպէս զի յանձին փորձոյ ուսցի չափ գնել խստութեանն առ այլս, և կարեկից ցաւակից լիցի գթութեամբ և ողորմութեամբ:

Բայց ոչ յուսումն Պետրոսի ևեթ էր խըրատ, այլ զի և մեք ուսցուք օրինակաւ Պետրոսի. որդիք Ադամայ եմք ամենեքին, տկարք և դիւրաբեկք, և 'ի նմին կաւոյ զանգեալք. և յորժամ լսիցեմք եթէ այս ոք կամ այն անկաւ 'ի մեղս մեծս, զմտաւ ածցուք թէ մարթ է և մեզ ընդ հուպ այնմ պատահել: Ունիմք ամենեքին յանձինս մեր զցանկութիւն՝ նմանեալ աղախնոյն Կայիափայ՝ որ դրդեաց զՊետրոս. ունիմք 'ի մեզ և զմիւս ևս ծառայ՝ զմարմինս, և արտաքոյ անձին՝ զդևս, որք առհասարակ հրապուրեն զմեզ ուրանալ զՔրիստոս՝ մեղօք: Արդ անկ է միմեանց ողորմել, սանձահարելով 'ի մեզ զթափ զկծեցուցիչ նախանձու. որպէս զի մի հասցեն մեզ գլորմունք չարագոյնք քան զՊետրոսին:

Բազում շնորհաց մատուցման պարտական եմ քեզ, Աստուած իմ, վասն խրատու խոնարհութեան և գթութեան զոր ետուր ինձ անկըմամբ առաքելոյն քո Պետրոսի: Բազում շնորհաց պարտական եմ քեզ և վասն խրատու՝ զոր ինձ իսկ ետուր յանձնէս. քանզի, քանիցս սակս անկայ 'ի յանցանս՝ զոր ոչ ներէի այլոց. և յայսր

վերայ տակաւին զիարդ թանձրամիտ եմ և հեղգասիրտ, և ոչ առնում 'ի միտ, ոչ իմաստնաբար յայլոց փորձոյ և ոչ տխմարաբար յանձինս փաստուէ: Ճանաչեմ զիս մարդ նման հասարակաց, և ըստ հասարակաց մարդկան անկեալ ընդ կարեօք դիւրագթելութեան և չարութեան. և սակայն ամբարհաւանս նախանձաւորութեամբ ընտիր համարիմ զանձն քան զայլս, որպէս թէ անմարթ իցէ ինձ գործել զամենայն ոճիրս՝ որպէս այլքն. և յամենեցուն առ իս կարեկցութիւն պահանջելով՝ ես ոչ ումեք լինիմ անյիշաչար: Ո՛վ Աստուած իմ, հեղ 'ի սիրտ իմ խոնարհութիւն սուրբ և գթութիւն առ ընկերս. քաջ տեսանես զպէտս իմ. և զի առանց երկուցս այսոցիկ լաւութեանց անմարթ է ինձ 'ի փրկութիւն ժամանել: Հիմն գթութեան է խոնարհութիւնն. և զիարդ յայնքան գլորմանց իմոց՝ յաւագելի փորձառութեանց անտի՝ ոչ ուսանիցիմ լինել խոնարհ:

Եդից 'ի միտ չգայթակղել ընդ գործս այլոց, թէպէտ և անառակք իցեն և ապերասանք: Ողորմեցայց, անբասիր արարից, և վարեցայց գթութեամբն՝ զոր առ իս փափագէի վերբերել 'ի դէպս նմանիս և հնարաւորս:

Գորովիւն Քրիստոսի 'ի Պետրոս.

ՃՀ. Յերրորդում նուագի ուրացութեան Պետրոսի զՅիսուս՝ խօսի հաւն. և 'ի գլուխ ելանէ ոչ բան յանձնապաստան աշակերտին՝ եթէ մեռանել կամիցի քան թէ ուրանալ զաստուածային վարդապետն իւր, այլ զոր կանխաւ ասաց

աստուածային վարդապետն՝ եթէ երբեք ուրաս_ ցի զինքն աշակերտն եղկելի: Ոչ յամառի սա 'ի մեղսն. քանզի անդէն վաղվաղակի զգաստանայ. և զգաստանայ՝ ոչ զի ուրացաւն երբեք, կամ զի հաւն խօսեցաւ, այլ զի Յիսուս ողորմագութ աչօքն հայեցաւ 'ի նա: Այս պատճառք են զգաս_ տութեան Պետրոսի: Դարձ առնէ 'ի մեղանացն առ Յիսուս, քանզի յառաջեաց դարձաւ առ նա Յիսուս՝ շնորհօքն: — Պետրոս մահուչափ մեղուցեալ, թշնամի փառացն Աստուծոյ, պար_ տական յաւիտենից դժոխոց, կարէ ամենայն ճգամբ բնութեան նկրտիլ առ 'ի թափել զանձն յողորմելի վտանգէն, այլ ոչ իմիք զօրէ իւրով_ սանն: Կարօտ է լուսաւորութեան, յորդորման և օգնութեան շնորհացն Աստուծոյ: Հաստարա_ կայց է ճշմարտութիւնս այս: Որպէս մարթ է ամենայն ումեք զիւրովի երթալ, այլ ոչ և իւրովի յառնել, այսպէս կարէ ամենայն ոք անձնա_ սպան լինել հոգւով, այլ ոչ կարէ իւրով զօրու_ թեամբ յարուցանել զհոգին: Ո՛վ, քանի՜ մեծ եղեն ուրեմն շնորհքն Քրիստոսի առ Պետրոս. զի մինչ ինքն 'ի Պետրոսէ թշնամանեցաւ և չու_ նէր ինչ պէտս Պետրոսի, ինքնին նախ 'ի խնդ_ րել նմա, կոչեաց և ետ օգնութիւն, առ 'ի փրկել ևեթ զնա: Եթէ չէր Յիսուսի գթու_ թեամբ հայեցեալ 'ի նա՝ զինչ արդեօք լինէր նմա:

Յիսուս իմ, 'ի դէպ ևս է ինձ աստ զանձնէ խոր_ հելով. Զի՞նչ 'ի պահուս յայսմիկ լինէր ինձ՝ եթէ ոչ այց առնէր ինձ գթութիւն քո յորժամ գլորե_ ցայ, ոչ երբեք ևեթ ըստ Պետրոսի՝ այլ անթիւս, 'ի մեղս ունակացեալս չարութեամբ: Գիտես Տէր, զի 'ի վերայ կայր ինձ մնալ կուրօրէն յամե_ նաթշուառս պայմանի, եթէ ոչ էր քո լուսաւո_ րեալ զմիտս իմ և ձեռն տուեալ 'ի կանգնել. և

եթէ 'ի պահու անդ մեղանացս մեռանէի՝ անդէն և անդ վայրաբերէի 'ի դժոխս: Եւ էր վասն ոչ այլիմ արդ 'ի հուր գեհենին: — Պարտական եմ գթութեան քում միայնոյ, որ շնորհօք ապաշխարութեան կանխեաց և նախապահեաց զիս. և արժան է ինձ խոստովանել, եթէ հազարիւր և հազար անգամ կործանեցեր զիս 'ի յաւիտենիցն մահուանէ. զի եթէ կամեցեալ էր քո՝ կարէիր յամենայն վայրկեան արդարապէս դատապարտել զիս: Եւ 'ի բարերարելն քո շնորհօքդ առ իս՝ իմ իմիք կարօտէիր դու առ յինէն: — Ապաքէն և ոչ իմիք: — Ո՞ր արդիւնք էին իմ առաջի քո: — Եւ ոչ մի: Քանզի անդուստ էի խաւարին, որդի բարկութեան, անօթ կորստեան: Խոստովան լինիմ, երկիր պագանեմ և շնորհս մատուցանեմ յամենայն սրտէ ողորմութեանց քոց որ անբաւ և անթիւ են 'ի վերայ իմ: Յաւել ինձ 'ի վերայ այդոցիկ և զմի և զայս շնորհ, զի երախտագէտ եղեց քեզ և մի ևս մեղայց. և առաւելութեամբ եռանդեան լցից զթերի ժամանակին՝ յորում պարտ էր ինձ սիրել զքեզ 'ի վեր քան զամենայն, և ոչ սիրեցի:

Խորագոյնս դրոշմեցից 'ի միտս իմ զճշմարտութիւնս զայս, հիմն խոնարհութեան, եթէ յիրս կարեւորս 'ի փրկութիւն իմ յաւիտենական՝ չեմ իմիք բաւական իմովսանն. յամենայնի օգնութեան կարօտիմ. և ամենայն օգնութիւն՝ շնորհ է գերբնական առ 'ի յԱստուծոյ:

ՃՀԱ. Սքանչելի է ողորմութիւն Քրիստոսի յամենայն դիմաց. Թէպէտ և կապեալ է և շուրջ պատեալ 'ի զինուորաց և 'ի դահճաց՝ որք անդադար նեղեն զնա և նախատակոծ առնեն, սակայն նա ուշ ունի յապաշաւ ածել զաշակերտ իւր մոլորեալ: Քահանայքն զրպարտեն զնա,

տուր վկայքն ամբաստանեն ձաղկեն և ձաղեն և այնքան ցաւք և վիշտք հեղուն զեղուն զնովաւ՝ զի անհնար է եթէ սիրտ նորա ոչ ընկճիցի դառնագաւն անձկութեամբք. այն զի դատաւորք իւր են թշնամիքն որք տալոց են զծանրակշիռ վճիռն՝ զպատուոյ և զկենաց նորա. և նա սակայն որպէս անփոյթ և անզգայ զիւրոյ օգտէն և զվշտաց իւրոց, և որպէս թէ միայն վասն Պետրոսի մեղացն տրտմեալ, ոչ ինչ հոգայ զանձին ազատութենէ կամ զդիւրելոյ, և զսիրտ յաչս եղեալ՝ ծանուցանէ միայն թէ քանի հոգք և անձուկք են իւր վասն փրկութեան Պետրոսի։

Կշռեա, հոգի իմ, զսէրն Քրիստոսի։ Յորժամ արտասուօք զՂազար 'ի գերեզմանէն կոչեաց, սքանչացոյց զորս մերձն կային՝ ընդ գորով սիրոյ իւրոյ. այլ չիցե՞ն առաւել ևս սքանչելի խանդաղատանք նորին առ Պետրոս՝ 'ի պահուն յորում ողորմագին աչօքն կոչէ զնա 'ի մեղացն. և ևս սքանչելի գորովանօքն առ մեզ, զի նովին իսկ աչօք՝ և ոչ միանգամ ևեթ՝ այլ անդադար և կոչեաց և կոչէ զմեզ։ — Աստուած իմ, քանի՛ քանի՛ աչս սիրահայեացս արկեր յիս ցարդ՝ կոչելով զիս և լուսաւորելով և յորդորելով սրբովք քովք հոգեշնչութեամբք։ Փանիցս և մաշիմ 'ի խորհուրդ ապաշխարութեան՝ ո՞ ազդէ յիս ողի զղջութեան և խոստովանութեան մեղանացս։ Ո՞ մանաւանդ յորդոր եղև ինձ նախ 'ի զդաստութիւն և ապա յուղղութիւն վարուց, եթէ ոչ դու՝ ամենողորմ հայեցիւքդ։ Ո՛վ բարութեան քում և գթութեան, որ արժանի համարիս զաչս գերահրաշ վայելչութեանդ արկանել յորդնս ապականեալ։ Կոյր էի ես և գոհ ընդկուրութիւնս իմ՝ հաճէի նստել 'ի խաւարի. և ո՞ լուսաւոր արար զիս՝ եթէ ոչ ողորմութիւն քո, որ եկն յիմ խնդիր՝ մինչ ես ոչն խնդրէի զնա.

եկն յօգնել և 'ի կոչել զիս, մինչ ես ոչն կարգա֊
յի յօգնութիւն. եկն շնորհել ինձ ներումն
թողութեան, մինչև իմ խոնարհեալ խնդրել
զայն: — Տես արդ, հոգի իմ, զանարժանու֊
թիւն քո և զկարօտութիւն. տես և զմարդա֊
սիրութիւն և զբարերարութիւն Յիսուսի. և
'ի վերայ հասեալ թէ քանի՞ ինչ պարտական ես
սիրոյ նորին, կատարեա գէթ մասն ինչ 'ի պար֊
տուցդ՝ գոհանալով զնմանէ: Տես զՅիսուս,
զիա՞րդ 'ի չարչարանսն անդ գարձուցանէ զաչս
իւր 'ի քեզ, քանզի գթայ 'ի քեզ. հատո և դու
նմա զփոխարէնն՝ ակն արկեալ 'ի նա կարեկից
լինելով վշտաց նորին:

Աղաչեցից զՓրկիչն իմ՝ այնպիսի ողորմագութ
աչօք հայել յիս, զի մեծապէս շարժեսցէ զիս 'ի
զեղջ և 'ի լաց մեղաց իմոց. և գուն գործեցից
զնոյն օրինակ իմովսանն հայել 'ի նա:

ՃՀԲ. Արժան է 'ի քնին առնուլ և զխեղանակ
յապաշաւ ածելոյ Քրիստոսի զՊետրոս: Ակն
արկանէ 'ի նա՝ ոչ խստիւ և խեթի, այլ հաշտ և
հեշտ. և չատ լինի այն առ մեղաւորն՝ 'ի բանալ
զաչս մտացն, 'ի զգաստանալ և զղջանալ: Այն
ակնարկի ձայն է որ թափ ընդ սիրտն անցանէ՝
ուղղել զնա յանհեդեդ սրբաւիղծ մեղացն. ոչ
է ձայն թշնամանագիր կշտամբանաց, կամ յան֊
դիմանութիւն ամաչեցուցիչ մնոտի պանծանաց
նորին՝ յարևէ իսկ անկանելոյ՝ քան ուրանալոյ
զվարդապետ իւր: Ձայն քաղցր է և սիրալուր,
որ խրատէ զնա և ոչ նախատէ, դարձուցանէ և
ոչ կորացուցանէ. ձայն բարեգթութեամբ ազդ֊
արար, որ քաջալերէ զնա յուսալ 'ի բարու֊
թիւն Աստուծոյ, և դառնալ յեռանդնն առա֊
ջին՝ յորմէ վրիպեալ անկաւ:

Զիա՞րդ թուիցի քեզ, հոգի իմ, հնարիմաց

Ճարտարութիւն Փրկչին 'ի վերադարձ առաքե-
լոյն իւրոյ սիրեցելոյ: Խրատեալ էր նորա խըս-
տագոյն ևս զՊետրոս յայլ նուագս՝ վասն թե-
թև ինչ յանցանացն, իսկ այժմ 'ի մեղանչելն
մեծապէս, զի մի 'ի յուսահատութիւն կործա-
նեսցի, քաղցրութեամբ արգահատէ նմա, և 'ի
ծանուցանելն անդ նմա զծանրութիւն մեղա-
նացն՝ ընդ նմին հեղու 'ի նա և վստահութիւն
մխիթարիչ՝ թէ լիցի նմա թողութիւն. և շար-
ժէ զնա 'ի լաց սրտաբուղխ զղջութեամբ: Այս-
պէս գործէ Աստուած. Աստուած որ հայի և տայ
դողալ երկրի՝ դողացուցանէ և զմեղաւորս, այլ
դողմամբ զղջականաւ և փրկականաւ, և ոչ
հեղգասիրտ տարակուսութեամբ:

Քանիցս և ես յանձն իմ զփորձ առի զանու-
շակ ողորմութեանց նորին: Բազմութիւն և
ծանրութիւն մեղաց իմոց կարէին հանապազ
յանյուսութիւն արկանել զիս. այլ դու, ո՛վ
բարի Յիսուս, քանի՜ նրբիմաց սիրով վարեցար
ընդ իս. լուսաւորեցեր զիս ապաքէն զի ծա-
նեայց զահեղ գարշութիւն մեղաց իմոց, այլ
ընդ նմին ետուր ճանաչել և զգութս քո: Դու
ազդեցեր և ազդես իսկ ցարդ յոյս ապաւինու-
թեան և երթալոյ զհետ քո, և ակն ունելոյ
շնորհաց քոց և փառաց: Ո՜վ, զի՜ մեծ, զի՜ քաղցր
և երկրպագելի է ողորմութիւն քո, Աստուած
իմ Յիսուս: Ո՛հ, տուր ինձ ապաւինել միշտ 'ի
նոյն հաստատուն հաւատով՝ եթէ ոչ լքցէ զիս
երբեք, և ոչ զլասցի յինէն զօգնութիւն կա-
րեաւոր 'ի փրկութիւն իմ յաւիտենական: Հա-
ւատամ, Աստուած իմ, եթէ արժան է յուսալ
'ի քեզ. և թէ ոչ անտես առնես յօգնութենէ
քումմէ զյուսացեալսն 'ի քեզ:

Յօրինակէ անտի Յիսուսի յուղղութիւն ածե-
լոյ զՊետրոս՝ ուսայց խօսել միշտ քաղցրու-

թեամբ և գթութեամբ՝ յորժամ անկ իցէ ինձ խրատել զընկեր իմ։

ՃՀԳ. Ոչ անձին զգայ Պետրոս՝ մինչև ոչ լուսաւորեացէ զնա Յիսուս շնորհափայլ նշուլիւ որ ընդ աչսն 'ի նա ցոլանայ. և յայն ինչ ձառագայթել ճշմարիտ լուսոյն՝ վաղվաղակի լուսաւորեալ զերծանի 'ի մեղացն մթութենէ։ Եթէ անդէն յետ ուրացութեանն՝ մեկնեալ գնացեալ էր Պետրոսի հեռանալով յաստուածայնոյ վարդապետէն իւրմէ, ո՞ւր արդեօք երթեալ լինէր, բայց եթէ 'ի չարէն յեւս չարագոյնն. բարի եղև նմա և յառաջ քան զուրացութիւնն երթալն զհետ նորա, թէպէտ և կասկածանօք, և յետ ուրացութեանն ոչ թողուլն զնա, այլ կալ 'ի սրահի անդ Կայիափայ, ոչ կարելով 'ի ներքս մտանել. այս ամենայն նշանք են փարելի սիրոյ նորա առ Յիսուս։ Ո՛հ, զիա՞րդ և Յիսուսի փոյթ խնամոց է զՊետրոսէ. զի եթէ թոյլ ետ նմա գլորել առ 'ի խոնարհեցուցանել զնա, բայց յանկմանն ոչ եթող, այլ փութացաւ կանգնել զնա օգնականութեամբ շնորհաց իւրոց։ Զայս օրինակ վարի Յիսուս ընդ ամենեսին որք սիրենն զնա և զհետ երթան. առանձինն իմն տեսչութեամբ հսկէ 'ի վերայ նոցա. և եթէ դէպ լիցի նոցա առ դիւրադայթ բնութեանն 'ի հրապոյրս դիւին անկանել, ձեռն կարկառէ վաղվաղակի յարուցանել զնոսա անդրէն։

Վասն որոյ և մեզ շահ մեծ օգտի է սիրելն զքեզ, Աստուած իմ. զի որ սիրեն զքեզ՝ թէպէտ և գայթակղեալ գլորեսցի մարդկային բնութեանն տկարութեամբ 'ի յանցանս ինչ, տանջի առ 'ի քէն և քաղցրութեամբ խրատի և մարդասիրութեամբ ժողովի, որպէս որդի սիրելի հօր սիրայնոյ. իսկ սովորելոցն և ունակա-

ցելոց 'ի մեզ՝ Թոյլ տաս արդար դատաստանուդ զահավիժել յանդնդոց յանդունդս։ Այլ և վասն այսորիկ ցանկամ սիրել զքեզ, Աստուած իմ. քանզի սակս այսր իսկ սիրոյ խնամարկես 'ի մեղաւորն, և ոչ թողուս նմա մինչև 'ի սպառ կեալ 'ի մեղսն. այլ ազդես 'ի նա ոգի ապաշխարութեան և ներես նմա, և առատաձեռն զթութեամբդ՝ որպէս քեզն վայելէ, տաս նմա լիութիւն շնորհաց։ Ցաւէ ինձ զի ոչ սիրեցի զքեզ, և այնպէս խստացայ՝ մինչև ոչ շարժիլ ոչ յանբաւելի գթութենէդ և ոչ յիմոյ իսկ օգտէ բարւոյ։ Տուր ինձ գէթ սիրել զքեզ յայս սակս՝ զի սիրելն զքեզ յոյժ պիտանացու է ինձ. որպէս զի 'ի սիրելոյ անտի զքեզ առ սէր իմ՝ յառաջեալ անցից 'ի սիրել զքեզ՝ միայն վասն քո, որ 'ի վեր քան զամենայն արժանիս՝ արժանիդ ես ամենայն սիրոյ իմոյ։

Մի խաբեցից զանձն իմ՝ համարելով 'ի մեղանչել իմում՝ եթէ 'ի դէպ է Քրիստոսի այնու ողորմութեամբ վարել ընդ իս որպէս ընդ Պետրոսի։ Անկ է ինձ սիրել զՅիսուս, այլ և երկնչել. երկիւղ յորդորեսցէ զիս 'ի զգուշութիւն և յարիութիւն։

Ապաշաւ Պետրոսի։

ՃՀԳ. Առաջին ազդումն ակնարկութեան Քրիստոսի 'ի Պետրոս՝ ներգործեաց 'ի նա զյիշատակ բանին զոր ասացն, եթէ երիցս ուրասցիս զինքն։ Ի լսել անդ Պետրոսի զնախասացութիւն ուրացութեանն՝ այնքան մեծ և անհեդեդ մեղս համարեցաւ զայն, մինչև անկարող կարծել ընդ֊

կամս իւր 'ի հաւանութիւն այնպիսւոյ չարութեան: Եւ յիրաւի իսկ, եթէ էր նորա պահեալ 'ի մոլի զզժպհի նկարագիր մահացու մեղաց՝ ոչ արդեօք գործէր զնոյն: Այլ 'ի պահուն չէած ինչ զմտաւ, վասն որոյ և մեղաւ: Իսկ ապա յորժամ 'ի միտս եղև՝ անդէն և անդ զահի զամօթի հարաւ, զղջացաւ և ելաց դառնապէս: Այսպէս առաջին շնորհք 'ի դարձ ապաշաւանաց նորին՝ եղև լոյսն իմացման. երկրորդն՝ եռանդն զղջութեան: Ծանեաւ Պետրոս զծանրութիւն չարեացն զոր գործեաց, և խոնարհեցաւ. ծանեաւ և զմեծութիւն մարդասէր ողորմութեանն Քրիստոսի՝ որով յորդորեալ կոչէր զնա յապաշխարութիւն, և արծարծեցաւ անդրէն սէրն Աստուծոյ 'ի սրտին. և 'ի սրտէն բըղխեցին ընդ աչսն արտասուք ապաշխարութեան: Եթէ հարցցուք զՊետրոս թէ զի՞նչ խորհեցի 'ի լալ, պատասխանի տացէ ընդ Դաւթի, եթէ զմտաւ ածէ զմեծութիւն անօրէնութեանն զոր արար՝ յանարգելն զմեծագոյնն 'ի բարեաց, որ է Աստուած (Սաղմ. Ծ. 5):

Այս է առաջին 'ի հարկաւորս առ ամենայն մեղաւոր, ճանաչել զչարիս իւր. և ես զայս 'ի շնորհս չարչարանաց քոց՝ խնդրեմ 'ի քէն, Տէր իմ Յիսուս, զլոյս քո՝ որով ծանեայց զմեծութիւն եղեռան թշնամանացն՝ զոր եդի գերագոյն վայելչութեան քում: Ճանաչեմ, խոստովանիմ և ամբաստանեմ զանձն իմ՝ որպիսի եմ՝ մեղաւոր ամենաթշուառ. և գիտեմ զի այս ևեթ խոստովանութիւն հիքութեան իմոյ՝ կարէ 'ի ներումն թողութեան ածել զողորմութիւնս քո. այլ ցանկամ ևս քան զևս հաշտ առնել զքեզ ճշմարիտ սիրով և ճշմարիտ ցաւով: Այլ զիա՞րդ կարիցէ սիրտ իմ այսպէս հաշտ առնել զքեզ՝ եթէ ոչ յատակեսցին միտք իմ լուսով քով:

Ո՛վ բան յաւիտենական, որ ասացեր 'ի սկզբան աշխարհի, Եղիցի լոյս. և անդէն եղև լոյսն. ասա զնոյն, և եղիցի այնպէս և 'ի յուդւոջ իմում. որպէս զի ծանեայց և զբարութիւն քո՝ առ 'ի սիրել զայն, և զչարութիւն մեղաց՝ առ ատել զայն: Ո՛վ բարերար Յիսուս, մի եւեթ հայեցուած ողորմութեանդ շատ է ինձ. և մեղաւորս խիստ և գոռոզ՝ դարձայց և եղեց ապաշխարող խոնարհ և զղջական: Չեմ արժանի ակնարկութեանդ յիս. այլ անարժանութիւնս իմ առաւել ևս մեծացուցէ զգթութիւնս քո. և հիքութիւնս իմ սքանչելիս յարդարեսցէ զանբաւելի ողորմութիւնս քո:

Յորժամ 'ի զեղջ ապաշխարութեան զանձն իմ յորդորիցեմ՝ նախ բուռն հարից յաղերս խոնարհութեան, ճանաչելով զիս կոյր, անկարող և անարժան. քանզի առ ապաշխարել չէք ինչ իբրև զխոնարհութիւն անհրաժեշտ կարևոր:

ՃՀԵ. Այն ինչ նշմարեալ 'ի Յիսուսէ՝ զգաստանայ և ստրջանայ Պետրոս. և առ 'ի չկորուսանել զոգի զղջմանն՝ առաջին գործ առնէ թողուլ ելանել 'ի բաց 'ի տանէն Կայիափայ, որպէս յորոգայթագիր տեղւոջէ, ուր դիւրագոյն իցէ նմա վերստին մեղանչել քան ընդ մեղանսն ապաշաւել ճշմարիտ զղջմամբ: Ի տան անդ՝ առիթ գայթակղութեան մեղաց եղեն նմա ընկերակցութիւն ժպրհացն՝ որք առ ատելութեան Յիսուսի չարախօսէին զնմանէ առ քէն նախանձու և թշնամութեան: Գայթակղութիւն եղև նմա և կինն պատրիչ՝ որպէս պատրեաց Եւա զԱդամ: Քաջիկ խորհրդով ելանէ ապա արտաքս. քանզի պայծառացեալ աստուածային լուսովն՝ ճանաչէ արդ զդիւրասահութիւն բնու-

թեանն, ճանաչէ զվտանգսն, և պարտ անձին վարկանի զփախչելն։ Ոչ ես յանձն լինի ապաստան, և ոչ յեռանդն ինչ իւր, եւ չասէ, թէ միանգամ հարցցէն զիս՝ տաց պատասխանի քաջութեամբ զճշմարիտն, և խոստովանեցայց ըզՔրիստոս. այլ խորհի՝ թէ որպէս յերկս նուագս ուրացութեանն՝ կարէր դիւրաւ զգուշանալ յառթէն և ոչ զգուշացաւ, այսպէս և 'ի միւսանգամ պատահել առթին՝ կարիցէ ասել և առնել. այլ գուցէ ոչ ասիցէ և ոչ առնիցէ. քանզի չէք ինչ իւր յոր կարիցէ վստահ լինել. վասն որոյ իմաստնապէս երկնչի և զգուշանայ անձին՝ խոյս տալովն. յաւակ օրինակի ամենեցուն, եթէ 'ի զուր է առաջադրութիւն ապաշխարութեան և զգուշութեան մեղաց, եթէ և յառթէ մեղացն ոք ոչ զգուշասցի։

Իսկ ես ո՞րպէս զիա՞րդ օգտիցիմ յօրինակէ աստի յայսմանէ. արժան էր հանապազ ապաւորեալ ունել ինձ յոգւոջ զայս իմաստ. Եթէ գթեաց Պետրոս յառթի անդ, դիւրագոյն ես է յառիթս իմ գթել ինձ փանաքի հիքոյս։ Եւսակայն, ո՜հ, Աստուած իմ, քանի՜ յանգուգն եմ ես, մինչդեռ գիտելով զտկարութիւն իմ և զյողդողդութիւն յառիթս, ամենևին ոչ ըզգուշանամ, նա մանաւանդ թուի ինձ թէ և խնդրող իցեմ այնոցիկ։

Ո՛վ Յիսուս փրկիչ, որ գթալից ակնարկութեամբդ ազդեցեր 'ի Պետրոս զփախուստ յառթէ փորձանաց, ազդեա և ինձ զնոյն ակնարկի ողորմութեանդ յոյժ հզօրեղապէս. մանաւանդ յայլասեռ անձանց՝ որովք հնարի բանարկուն խարդաւանել և զուրբս անգամ. տուր ինձ հեռանալ 'ի նոցանէ որքան և հնար իցէ. հեռի կալ և յամենեցուն որք կեան և խօսին լրբութեամբ, և սպասարկուք են աշխարհի. քանզի յոյժ դը-

ժուարին է ձիւթով գործել և ոչ շաղախիլ. ընդ թիւրեալսն կենակցիլ և ոչ թիւրիլ:

Քննեցից՝ զի՞նչ ինչ առաւել դրդուիցեն զկիրս իմ և հրապուրիցեն զգայունս իմ 'ի վտանգ արկանելով մեղանչելոյ առ Աստուած. և առաջադրելով զգո՛յշ կա՛ն հսկեցից, և մի վտահացայց յանձն իմ:

ՃՀԶ. Ո՛վ, քանի՜ մեծ է ողորմութիւն տեսչութեանն Աստուծոյ, որ թոյլ տայ երբեմն գթել սրբոց իւրոց, որպէս զի անկումն նոցա լիցի մեզ 'ի խրատ օգտի: Ուրացութիւն Պետրոսի ոչ ումեք գործէ վնաս, այլ ամենեցուն օգտէ օրինակ ապաշխարութեան նորին: Տեսե՞ր, հոգի իմ, զմեղս Պետրոսի, տե՛ս և զարտասուս նորին: Աւետարանիչքն յայն սակս հաւատարմութեամբ նկարագրեցին զնա 'ի պատկեր մեղաւորի և ապաշխարողի, որպէս զի եթէ նմանողք եղաք նմա 'ի մեղանչելն, լիցուք և յատելն և յողբալն ըզմեղսն:

Յետ մեղանչելոյ առ Աստուած՝ կարեւորագոյն ուղղութեանց մեզ յոյս ողորմութեան նորին է, զի որ ոչն յուսայ թողութեան՝ և ոչ զթողութեանն հնարի գիտ. և զայն ոչ հնարելով՝ գթէ յանյուսութիւն, յանզղջութիւն և 'ի դատապարտութիւն: Այս ամենեին իսկ հարկաւոր է յոյսն. և 'ի դէպ է մեզ կրթել 'ի նոյն՝ զՊետրոս ունելով 'ի նկատի: Յասել Քրիստոսի առ Պետրոս սակաւուք յառաջ, եթէ յետ դարձիդ հաստատեսցես զեղբարս քո, առաւել կամէր նշանակել զհաստատելն 'ի յոյս, իւրով օրինակաւ յայտ առնելով ամենեցուն, եթէ որպէս թողաւ նմա, այսպէս թողցի և ամենեցուն որոց դառնայցեն և ապաշխարեսցեն: Չէ ինչ փոյթ թէ մեծամեծք իցեն մեղքս մեր. Քրիստոս եցոյց

'ի Պետրոս՝ թէ ոչ զլասցի թողութիւն որում ապաշխարէին։

Իմացա՞ր, հոգի իմ։ Է՞ երբէք զի խորհելով զմեղս քո՝ 'ի ներողութիւն անկանիս և համարիս իմն թէ վճարեալ իցէ վասն քո։ Խաբիս. — յուսա և ապաւինեա՛ 'ի Տէր բոլորով սրտիւ։ Ո՞չ յիշես, զի թէպէտև մեծ իցեն անօրէնութիւնք քո՝ այլ ոչ կարեն 'ի կշիռ գալ բարութեանն Աստուծոյ՝ որ անբաւ է։ Այո՛, Տէր, գիտեմ և հաւատամ. այլ տակաւին վեհերիմ. և զի՞նչ դարման փրկութիւն բարեգութ Յիսուս, և աղաչեմ արժանել լիս այն քաղցրահայեաց, որ միայն արդահատէն զիս։ Եթէ հայիս դու յիս, օգնեալ լուսով քով՝ բացից և ես զաչս իմ հայել 'ի քեզ. և 'ի քեզ հայելով՝ մարթ ինչ իցէ թէ ոչ յուսացայց 'ի քեզ։ Ո՛վ մարդասէր Փրկիչ, քեզ օրհնութիւն, քեզ փառք և գոհութիւն։ Արդարև 'ի յիշելն իմ զայնքան աղգի աղգի մեղս զոր գործեցի և զոր գործեմ՝ 'ի վտանգ յուսահատութեան մերձենամ. այլ քաւ, մի՛ լիցի ինձ երբէք յուսաբեկ լինել։ Ի քեզ յուսամ և ոգի առնում. քանզի դու արդեամբք չարչարանաց քոց՝ ողորմութիւն բողոքես առ Հայրն քո երկնաւոր վասն իմ։

Արժան է ինձ յուսալ, այլ մի՛ զեղծանիլ յուսով. որպէս եթէ յուսալով զթողութիւն մեղաց յողորմութենէն Աստուծոյ՝ չառնել ինչ փոյթ ապաշխարութեան կամ ջան դնել ուղղութեան։

ԾՀԷ. Ցապաշխարութեան Պետրոսի արժանի նշանակելոյ է՝ զի եղև այն առժամայն, անյապաղ և անդանդաղ։ Որպէս 'ի կոչելն զնա յառաքելութիւն՝ եթող Պետրոս զամենայն և ան-

սաց նմա, այսպէս և 'ի կոչէլն արդ զնա Յիսուսի ակնարկութեամբն յապաշխարութիւն՝ վաղվաղակի անսաց նմա: Այն լինչ կատարեալ նորա զերրորդ նուագ մեղանացն, կոչէ զնա Փրկիչն․ ընդ կոչն յապաշխարութիւն և ընդ գործ ապաշաւանացն՝ ոչ անկանի խորոց ժամանակի:

Այսպէս արժան է առնել․ և յայն սակս՝ զի այս են կամք Աստուծոյ՝ զի յետ մեղանաց վաղվաղակի և անյապաղ փութասցուք յապաշխարութիւն․ և զի՝ չէ պարտ կալ մնալ 'ի մեղս մահացուս և ոչ վայրկեան մի ժամանակի, այլ վաղվաղ թօթափել 'ի բաց ելանել․ զի ոչ թէ միայն 'ի յերկարելն 'ի մեղս՝ և ևս ծանրանան մեղքն, այլ զի և դժուարին լինի ձողոպրելն: Մեծ յոյժ գործ ողորմութեան է Աստուծոյ կոչելն զմեղաւորն 'ի ձեռն շնորհաց իւրոց․ այլ և ոչ փոքր անիրաւութիւն է առ բարերարութիւնն Աստուծոյ՝ անհաւանն գտանել կամ հեղգալ և դանդաղել առ սիրահրաւէր կոչումն: Մեծ և անհնարին վտանգք են հոգւոյ՝ ասելն, Ապաշաւեցից յետոյ․ յետոյ ուղղեցից զանձն իմ․ — զի մարթ է թէ 'ի վերայ հասցէ ժամ՝ յորում խնդրեսցէ զլոյս, և Աստուած թողցէ զնա 'ի խաւարի մթութեան նորին:

Արժան է նմանող լինել երագ յօժարութեան Պետրոսի․ արժան է և ողբալ զչարայօժար կուրութիւն անցելոց կենացս իմոց: Յաւ է ինձ, Աստուած իմ, ընդ ամենայն ժամանակն՝ յորում կեցի ցրտօրէն 'ի մեղս մահացուս, ապստամբ և ապերախտ լուսոյ քում: Եւ զիա՞րդ իշխեցի, չասեմ թէ ժամս, այլ և աւուրս և եօթնեակս յողն կալ սրտմտութեան քոյ ահեղապէս ցասուցելոյ 'ի վերայ իմ: Շնորհ ունիմ գթութեանդ՝ զի ոչ չանթահար արարեր զիս՝ որպէս արժանին էի: Այլ չիցէ՞ կամակորութիւն և այժմուս՝ յա-

բանալս իմ 'ի չարաչար ունակութիւնս հպարտութեան, անհամբերութեան, ծուլութեան, հանդերձ այլովքն. մինչդեռ դու, Աստուած իմ, թախանձանօք կոչես զիս ստէպ յուղղութիւն: Խոստովանիմ թէ ինձ արժան էր յանդիմանութիւնն՝ որով իմաստութիւն քո կշտամբէ զմերժեալսն. «Կոչէի և ոչ լսէիք, յերկարէի զբանս իմ և ոչ անսայիք... այսուհետև ոտնհար եղէց»: (Առակք Ա. ԻԴ.): Ո՛վ Յիսուս, հայեաց յիս միով այնու թափանցիկ ակնարկութեամբ՝ որովք այց առնես ընտրելոց քոց. հայեցուած որ ընդ իւր ունիցի զմի 'ի շնորհացն, որոց կարող թէպէտ իցեմ զդէմ ունել, այլ ոչ կալայց, և դուն գործեցից յամենայնի երթալ զհետ կամաց քոց սրբոց:

Ոչ է պարտ կալ մնալ զի շնորհքն ներգործեսցեն յիս զամենայն հնարս դարձի ապաշխարանաց, այլ անկ է և ինձ գործակից լինել զօրութեամբք հոգւոյս, և բուռն առնել չարայօժար ախտիցս:

ՃՀԸ. Ապաշխարութիւն Պետրոսի էր 'ի ճշմարիտ սրտէ՝ որպէս Աստուած կամի, զի ընդունելի լիցի: Ոչ է յայտ զինչ յապաշաւելն աներ Պետրոս, այլ գիտեմք զի եհեղ բազում արտասուս. և հզօր է ձայն արտասուաց առ Աստուած: Աչօքն խօսեցաւ ընդ Աստուծոյ, և արտասուօքն հայցեաց և ընկալաւ թողութիւն, աջողագոյն գտեալ այնու քան երկար աղերսանօք լեզուի: Երջանիկ արտասուք, որք 'ի մաքրութիւն հոգւոյն 'ի մեղաց անտի՝ եղեն յաւազան մկրտութեան, քանզի բղխէին 'ի սրտէն ճմլելոյ զօրութեամբ տրտմութեան 'ի սաստկութենէ սիրոյ: Ոչ լայ և տրտմի Պետրոս առ կասկածանաց զրկելոյ 'ի պատուոյ գլխաւորութեան եկե-

զերծոյ կամ յիշխանութենէ փականաց երկնից. ոչ լայ և տրտմի վասն սպառնալեաց Փրկչին եթէ խստութեամբ դատեսցի զուրացողս իւր՝ յաւուրն յետնում. ոչ վասն պատուհասին որում արժանի եղև՝ հոգայ և տխրի, այլ միայն վասն մեղացն զոր գործեաց. և առաւել մորմոքի զի առ վարդապետն իւր աստուածային յանցեաւ, քան վասն այլ ամենայն տանջանաց: Ցաւ նորա կատարեալ է զղջութեամբ. այնպիսի անկ է և մերումս լինել՝ առ 'ի լինելոյ մեզ կատարելապէս ապաշխարողս:

Եւ ահա այդ իսկ տագնապեցուցանէ զիս: Գիտեմ ստուգիւ զի բազում անգամ մեղայ. այլ ոչ գիտեմ թէ իցեմ արդ ապաշխարող. զի ո՞ր ցաւք են իմ ընդ մեղս իմ: Առթէն ինձ նոքին տրտմութիւն ինչ՝ յորժամ զմտաւ ածեմ զվըտանգ անձին իմոյ, և խորհիմ զմահ, զդատաստանն և զդժոխս. այլ խղճի մտօք ոչ կարեմ ասել՝ թէ արդարև ցաւիցիմ ընդ մեղս իմ, զի թշնամանեցի նոքիմք զքեզ, Աստուած իմ: Ոչ զղջամ ստուգապէս, քանզի ոչ սիրեմ զքեզ ստուգապէս: Եւ իմ պիտոյ իցէ ապաշխարութիւն վարկպարազի՝ եթէ զուրկ է ապաշխարողն 'ի սիրոյ քումմէ: Ո՛հ, եթէ սիրէի զքեզ 'ի վեր քան զամենայն ինչ և բոլորով սրտիւ՝ որպիսի՜ տագնապ անհնարին լինէր ինձ անջատումս 'ի քէն 'ի պատճառս մեղացն:

Ո՛վ աստուածային Փրկիչ, զարթո յիս զսէր քո՝ քաղցրահայեաց ակնարկութեամբդ. զի ուսայց տրտմիլ արժանաւոր տրտմութեամբ ընդ մեղս իմ: Արդ յայտ առնեմ զի զիղջ է ինձ միայն վասն անարգելոյս զքեզ՝ զամենևին արժանաւորդ սիրոյ. գթա 'ի հոգիս իմ մեղուցեալ. և օժանդակութեամբ շնորհացն զոր տացար արդեամբք չարչարանացդ՝ տո՛ւր սմա լինել ապաշ-

խարող այնու չափով սիրոյ և ցաւոյ՝ ընդ որ հաճիք։

Կրթեցայց տպաշաւել զմեղս իմ առաւել ներգործութեամբ զղջման՝ քան տրտմութեան. քանզի զղջումն՝ Աստուծոյ հաճոյագոյն է և ինձ վստահագոյն։

ՃՀԹ. Այն ինչ ելեալ 'ի տանէն Կայիափայ Ս. Պետրոս՝ 'ի լաց դառնութեան հարկանի ընդ մեղս իւր, և խոյս տուեալ, որպէս երկրորդ ոմն Դաւիթ, շառագունեալ դիմօք զամօթի հարեալ 'ի խայթէ մտացն խղճի՝ ոչ դադարէր 'ի լալոյ, մինչև լուեալ զհամբաւ յարութեանն Քրիստոսի՝ չափ դնէր տխրութեանն՝ վասն խնդութեան խորհրդոյն։ Միայն զարտասուսն յիշեն աւետարանք. այլ անկ է իմանալ և զամենայն որ զհետ գան սաստիկ տրտմութեան. զբախմունս կրծոյ, թաւալմունս յերկիր, հառաչանս, հեծութիւնս և հոգս հալըղականս. այսու օրինակաւ եկեաց զամենայն զկեանս իւր, բեկեալ սրտիւ և խոնարհ ոգւով, հանապազ յիշելով զի մեղուցեալ էր։

Աւագիկ միւս ևս օրինակ արժանի նմանողութեան. և այն ոչ առ յաւելուած ինչ կատարելութեան, այլ առ հարկի. քանզի պարտ է ապաշխարութեան յարատև լինել զամենայն ժամանակս կենաց մերոց, ոչ երբէք շատ համարելով իբրև թէ ահա անէրկեանք իցեմք։ Բայց չեն առ այդ պէտք խորգոյ և մոխրոյ, այլ մերձ ընդ մերձ 'ի յուշ ածել զմեղս մեր, որպէս զի ցաւեսցուք և 'ի խոնարհութեան կացցուք։ Հարկ է վասն չարեացն անցելոց հանապազօրդել յապաշաւանսն. զգոյշ կալ 'ի ներկայ և յապագայ վտանգաց. մաղթելով ցանկ օգնութիւն առ 'ի յԱստուծոյ, զամենայն յԱստուծոյ ակն ունելով ընդունել, և բը-

նաւ ամենեքին ոչ յանձին ինչ ապաւինելով լաւութիւն։ Միթէ իշխիցեմք տրտնջել՝ զի զպատուհաս յաւիտենական հրոյն՝ որ անկ էր մեղաց մերոց՝ փոխեաց Աստուած 'ի պատիժ ժամանակեայ եղկելի կենացս այսոցիկ։

Ո՜հ Աստուած իմ, շնորհիւ ողորմութեանց քոց շատ համարիս դու զդուզնաքեայս զայս փոխարէն քաւութեան՝ վասն մեծամեծ մեղաց իմոց, յորոց 'ի պատուհաս արդարադատ՝ ոչ բաւէին և տանջանք դժոխոց։ Այլ այս զի՞ է, զի յանուն ևեթ ապաշխարութեան՝ զահանդի հոգիս, խորշի դարշի և քրթմնջէ։ Ոչ ճանաչեմ, և որ չար ես է, և ոչ կամիմ ճանաչել թէ զինչ իցէ թըշնամանեալն զքեզ՝ Աստուած ամենակալ և ամենակալ։ Ո՜վ տէր իմ Յիսուս, եռանդագին սիրովդ որով հայեցար 'ի Պետրոս՝ հայեաց և յիս, և ծագեա հանապազ զլոյս քո 'ի միտս իմ, առ 'ի ճանաչել զպէտս հարկի ապաշխարութեան. որպէս զի մի ձանձրացայց և մի դադարեցից 'ի կրթանաց զղջման, մեռելութեան, աղօթից և խոնարհութեան։ Ո՜վ Բան յաւիտենական Հօր յաւիտենականի, դու ինձ 'ի պարգևի ընկալար զշնորհս ապաշխարութեան. յարդեանց քոց ակն ունիմ այժմիկ, և քոյին օգնութեամբ բաղձամ կատարել։

Քանզի երրակի յանցեայ առ Աստուած, սըրտիւ, լեզուաւ և գործովք, յերեսին ես անկ է ինձ ապաշխարել. ջան եղից մանաւանդ բարւոք կատարել զխորհրդականն ապաշխարութիւն։

Վարումն Յիսուսի յատեան Պիղատոսի Դատաւորի:

ՃՉ. Հրատարակեալ զգատաստան մահապարտութեան Յիսուսի՝ սահմանեն Ժողովականքն թողուլ զնա 'ի ձեռս աշխարհական իշխանութեան, և յանձնել 'ի Պիղատոս՝ այր հեթանոս, դատաւոր Հրէաստանի կարգեալ 'ի Հռովմայեցւոց: Ոչ ինչ ըստ դիպաց գործի, այլ ամենայն յառաջ ընթանայ ըստ պատրաստութեան և ըստ կանխասացութեան Փրկչին. որպէս զի.քաջայայտ լիցի գերազանցութիւն սիրոյ իւրոյ: Զարչարի նա ոչ միայն վասն Հրէից կրթելոց 'ի պաշտօն Ճշմարտին Աստուծոյ, այլ և վասն հեթանոսաց դիցապաշտից. կամի զի երկոքեան ևս գործակիցք լիցին 'ի չարչարանս իւր, որպէս զի և երկոքեան վայելեսցեն յարդիւնս չարչարանացն: Ո՛վ բարութեան աղբերն կենաց, որ գերահրաշ տեսչութեամբ այսպէս տնօրինէ, զի և բազմապատիկ լիցին չարչարանք իւր, և բազմադգի հեղինակք մահուան իւրոյ: Տեսանես, թէ ո՛րպէս չարութիւն Հրէից սպասարկու լինի խորհրդոց աստուածեղէն իմաստութեան: Վարեալ տանին նոքա զՅիսուս յամենայն ատեանս հրէական և աշխարհական դատաւորաց, առ 'ի զկծեցուցանել զնա աշխարհագոյժ առնելով զեղեռն յանցանացն զոր եդին 'ի վերայ նորա. և նովին իսկ մեծապէս ևս յայտ յանդիման լինի անմեղութիւն նորին, զի ոչ գտաւ ամբաստանութիւն ստոյգ զնմանէ և ոչ մի: Որքան յոգնաթիւք են դատապարտողքն Հրեայք՝ այնքան և փառա-

ւորի Քրիստոս, քանզի ոչ ոք կարէ յաղթահա-
րել զնա, իսկ ինքն ամենեցուն յաղթէ: Յաղթէ
աշխարհի՝ Ճշմարտութեամբ. սատանայի՝ խո-
նարհութեամբ. և անհաշտ ոխութեան ատե-
լեաց իւրոց՝ համբերատարն հեզութեամբն:

Ո՛վ, որպիսի՜ վարդապետութիւնս հրաշալիս
և Ճշմարիտս ուսուցեր մեզ, բարեգութ Յիսուս,
յամենայն 'ի դէպս չարչարանաց քոց: Արդարև
Ճշմարտապէս ոչ թէ քինաթափութեամբ կրից
յաղթէ ոք 'ի հալածանսն, այլ կրթութեամբ
առաքինութեանց: Զի՞ փոյթ է ինձ թէ այս ոք
կամ այն չար խորհիցի զինէն, եթէ ոչ ստգտանէ
զիս խիղճ իմ առաջի Աստուծոյ՝ որ միակ դա-
տաւոր է իմ: Ընդ թիւր և ընդ յանդուգն դա-
տաստանս որ զինէն լինին՝ վշտանալ վշտանայ
զգայականս իմ ախորժակ. այլ Ճշմարտեալ գի-
տեմ 'ի բազում փորձոյ զի ոչ եթէ նուազի ինչ՝
այլ առաւել ևս աՃէ վիշտն, եթէ տաց տեղի
հպարտութեան, ցասման և ատելութեան:

Փափագիցե՞ս, հոգիդ իմ, 'ի թշնամութեան
անդ սատանայի և աշխարհի վայելել 'ի ներքին
անդորրու՝ առ լաւագոյն ևս ծառայել Աստու-
ծոյ յամենայն սրտէ. — Լո՛ւր, զի՛նչ ասէ քեզ
Քրիստոս և բանիւ և օրինակաւ. «Ուսարուք
յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ, և գտջիք
հանգիստ անձանց ձերոց»: Շնորհեա ինձ,
Փրկիչ իմ Յիսուս, ողորմութեամբ քով ուսա-
նել ինձ գործնօրէն զխրատս զայս: Ո՛վ, զի՜րդ
պատուական է դա՝ ոչ միայն առ 'ի ժառանգել
զկեանսն յաւիտենականս, այլ և առ 'ի վայե-
լել կեանս երջանիկս 'ի հովտիս յայսմիկ ար-
տասուաց:

Գուն եղից 'ի կիր արկանել զխոնարհութիւն՝
նաև առ 'ի նկուն առնել զբռնագոյնն 'ի թշնա-
մեաց իմոց, որ եմ ես ինքնին: Անձնասիրութիւն

իմ միայն վրդովէ զնա. և ոչ գտից երբեք անդորր՝ եթէ ոչ ուսայց խոնարհել։

ՃՋԱ. Քահանայապետքն իւրեանց տեսին զՅիսուս առ Պիղատոս, ոչ միայն զի սպանցի, քանզի ոչ էր նոցա իշխանութիւն 'ի դատապարտութիւն արեան, այլ մանաւանդ զի մեռցի անարգական մահու։ Սակաւ ինչ թուի նոցա մահ նորա իբրու զանցաւորի մովսիսական օրինաց, կամին զի մեռցի որպէս ապստամբ 'ի պետութեանց և խռովիչ ժողովրդեան, արժանի ատելութեան ամենեցուն։ Ի լնուլ զփափագ նախանձուն՝ կարէին սպանանել զնա և գաղտնապէս. այլ կամին չարութեամբ զի սպանցի իբր յանցաւոր 'ի դատողական ատենէ. և սպանցի հրապարակաւ՝ որպէս չարագործ հրապարակագոյժ, զի ամենեքին վատահամբաւ լիցի։

Ահա ցայս վայր ձգէ զմարդ անզգամն մոլութիւն։ Գլխաւորացդ այդոցիկ Հրէութեանն՝ տեսեալ էր զգործս սքանչելեաց Քրիստոսի, և լուեալ զհրաշալի վարդապետութիւնն. այլ այդ ամենայն ոչ ինչ օգտեաց։ Վասն այնորիկ և որ զբարին ներգործելոց էր 'ի նոսա՝ զչարն ներգործէ, մինչև ամենեքին ատելի ունել զՓրկիչն աշխարհի։ Ուսիր և երկիր, հոգի իմ, զի մի՛ շնորհքն աստուածայինք որոց զդէմ ունիս՝ դարձցին և ընդդէմ քո 'ի պատուհաս անձինդ. քանզի Փրկիչն կարգեալ կայ 'ի գլորումն այնոցիկ՝ որք ապախտ առնեն զփրկարար ողորմութեամբք նորին։

Իսկ Յիսուս որ տեսանէն զայս ամենայն փոյթ խնամոց և չարակամ հնարս թշնամեաց իւրոց, քանի՛ արդեօք տրտմի և ցաւի։ Թո՛յլ տայ զդայականին կրել զամենայն սոսկումն՝ զոր յայսպիսի դէպս արկանէ բնութիւն յանձն. այլ

յայսր ամենայնի վերայ անխռով ունի զսիրտն յանդորրու հանդարտութեան. և բնաւ ոչ այլայլելով զպարկեշտութիւն կերպարանացն՝ վարի որպէս գառնուկ հեզ:

Ո՜վ ամենասուրբ Յիսուս, յոյժ պատուական շնորհք են ինձ օրինակքդ ընծայեալք. և մի միայն 'ի շնորհացդ՝ միով ևեթ օրինակաւդ՝ շատ էր ինձ 'ի յարդարել զիս սուրբ, և առաւել քան զսուրբ. և սակայն քանի՜ հեռի եմ ես 'ի սրբութենէ. ո՜րքան զաչացու 'ի յաճախութեան աստ լուսոյ. քանի՜ խուլ՝ այնքան ձայնս լսելով. ո՜րքան տկար՝ այնքան օժանդակութիւնս գտանելով: Զարհուրեալ գողամ, Փրկիչ իմ, զի չարի նշան է ինձ այս. նշան անիծից՝ որովք խոշտանկեա զգաստապարտեալսն: Ո՜հ, քաւ լիցի քեզ կըշտամբել և զիս յաւուր միում՝ եթէ 'ի զուր եղեն վասն իմ այնքան վաստակք քո: Պարգևեա ինձ գթութեամբ քով զմի 'ի հզօր և 'ի յատուկ շնորհացն՝ որովք մարթ իցէ ինձ փոյթ ունել սրբութեան անձին իմոյ նմանողութեամբ լաւութեանց քոց. զմի 'ի շնորհաց անտի՝ որով գիտես թէ կատարիցեմ զսուրբ առաջադրութիւնս զոր ազդեաց յիս:

Փոյթ գործեցից ստանալ զներքին առաքինութիւնս, զխոնարհութիւն սրտի, զսէր և զհաւանութիւն կամացն Աստուծոյ. որովք գիտեացին ինձ և արտաքին առաքինութիւնք, պարկեշտութիւն, հեզութիւն և համբերութիւն:

ՃՂԲ. Կապեալ էր Յիսուս 'ի կաղանաւորացն 'ի պարտիզին, և կապեալ ածաւ առ Աննա և Կայիափա. 'ի նոր կապանս վերստին պարաւանդել ձեռն արկանեն գլխաւորք Հրէիցն, որպէս զի Պիղատոս, ըստ օրինի սովորութեան, այնքանեօք տեսեալ զնա կապանօք շղթայից և պա_

բանաց՝ ծանիցէ յանցաւոր մահապարտ և անարժան շնորհի թողութեան։ Տէս, հոգի իմ, զՓրկիչն քո, զիա՞րդ խիստ կապանօք պնդեալ 'ի ձեռս, 'ի բազուկս, 'ի կուրծս և 'ի պարանոցի, վարեալ լինի ընդ փողոցս՝ 'ի Հրէից անտի, որպէս չարագործ ժանտաժուտ։ Գիշեր էր յորժամ ածին զնա 'ի պարտիզէն յապարանս Աննայի. ուր է այժմիկ մինչ տանիցեն զնա առ Պիղատոս։ Ո՜հ, քանի՜ բազմութիւն է ամբոխիդ որ կան նմա 'ի զնին. և գրեաթէ չիք ոք 'ի նոսին՝ որ կարեկից լիցի նմա. քանզի հռչակ համբաւոյ հարեալ էր ընդ քաղաքն ամենայն զնմանէ եթէ խռովարար է, մոլորեցուցիչ և օտարապաշտօն։

Նկատեա, հոգի իմ, զԱստուածամարդ. ձեռք թխացեալք և յետս կապեալք, դէմք կապուտակեալք և թքակոծեալք, գլուխ կորակոր և 'ի հարուածոց այտուցեալ. և թէպէտ կթուցեալ և պարտասեալ յանդադար ծանականաց և ձաղանաց անցելոյ գիշերոյն, աւադիկ դարձեալ կոչկոճի յանողորմն դահճաց անտի՝ առ ամենայն քայլ ոտին, գանիւ գաւազանաց, քարշանօք պարանաց, և երգիծեցուցիչ թշնամանօք։ Այլ յայսր ամենայնի վերայ նշմարեցե՞ս ինչ 'ի նմա և դոյզն մի տաղտուկ, կամ տրտմութիւն կամ սրտմտութիւն։ Որպիսի՜ պարկեշտութիւն, լրջութիւն, խոնարհութիւն և համբերութիւն փայլէն յերեսս նորա։ Անգիտակ ոք այսոցիկ՝ համարել համարիցի եթէ բռնութեամբ վարի Յիսուս յատեան դատաւորին, այլ ճշմարտապէս՝ ինքնայօժար կամօքն երթայ տալ զանձն 'ի ձեռս Պիղատոսի, որպէս և տուեալն էր 'ի ձեռս Կայիափայ։ Որպիսի՜ սէր. որպիսի՜ ողորմութիւն. որպիսի՜ անյիշաչարութիւն։ Եւ այս ամենայն վասն իմ։

Կարեկից լինիմ մարդկութեան քում ցա֊

ւանդնելոյ, գոհանամ, օրհնեմ և փառաւորեմ զքեզ, ո՜վ սիրող հոգւոյ իմոյ, վասն այդքան կապանացդ՝ որովք յանձն առեր պրկիլ, զի զիս լուծցես յիմոցս կապանաց, որ են մեղքն իմ։ Այլ, ո՜վ իմ Յիսուս, չեն ինձ բաւական միայն առ 'ի քէն խորտակմունք կապանացս. կամ է ինձ և զհետ քո ընթանալ արագ արագ. և զիա՞րդ կարիցեմ գալ առ քեզ, եթէ ոչ քև ինքնին, որ եդ իմ Նպատակ և Ճանապարհ։ Ոչ ոք կարէ երթալ զհետ քո, կամ ընդ քեզ միաբանել, եթէ ոչ գայցէ նմանող լինել քեզ 'ի խոնարհութեան քում և 'ի համբերութեան։ Պարգևեա ինձ ապա, Յիսուս, զշնորհս զայսոսիկ զոր ստացար՝ 'ի ներակրթել զիս 'ի նմանութիւն քոյոց օրինակաց։ Զայս տուրս ողորմութեան երաշխաւորեցեր ինձ 'ի տալն քում իշխանութիւն Հրեից՝ վարել ընդ քեզ ամենայն անգթութեամբ։

Համբերութիւն և խոնարհութիւն Յիսուսի համաշխարհական կանոն է համառօտիւ պարզելոյ զբազմապատիկ տարակոյս խղճի մտաց։ Այսորիւք վարեցայց և յիմ պէտս և յայլոց։ Այսպէս արար Յիսուս։ Այսպէս արարից և ես։

ՃՁԳ. Զետես երբեք Երուսաղէմ քաղաք ուղէկցութիւն միանգամայն արդարոյն և անարգագոյն՝ որպէս զայժմուս՝ զՈրդւոյ Աստուծոյ, 'ի տանէն Կայիափայ յապարանս Պիղատոսի դատաւորի։ Անդ են ամենայն իշխանք ժողովրդեանն, քահանայք և ժողովք դպրաց, Փարիսեցիքն և յառաջաւորքն, միախումբ բազմութիւն մեծ։ Որպիսի՛ պատիւ ընկերութեան այնքան մեծարոյ անձանց։ Այլ դարձեալ որպիսի՛ նախատինք՝ եթէ քննեսցի օրինակն որով վարին ընդ Որդւոյ Աստուծոյ, 'ի կիսաժամեայ

ուղւոջ անդ, զի անդադար թշնամանալից լուտանօք թշնամանեն զնա. «Ե՛կ այսր գողդ և աւազակ. 'ի բաց գնա գիւթ և կախարդ. այժմ չափեսցի իմաստութիւն քո»: Այսոքիկ և այսպիսիք են գովեստք ընծայեալք նմին: Իսկ անմեղն այն գլխակոր զերկիր նշմարելով խոնարհեալ երթայ՝ որպէս զարդարև յանցաւոր:

Որպիսի՜ դարձեալ նախատինք՝ պատճառքն յոր սակս գլխաւորքն այնոքիկ միաժողով երթան ընդ նմա: Երթան ամենեքին 'ի միասին, քանզի այր այր յընկերէ կասկածէ. և զանգիտեալ թէ դուցէ գացի ոք բարեբարոյ որ կամիցի ջատագով կալ Յիսուսի՝ ոչ ումեք ներեն խօսել զնըմանէ: Երթան ամենեքին 'ի միասին, առ առաւել ևս հաւատարիմ առնել զամբաստանութիւնն, և բարձրագոյն բողոքումն անհրաժեշտ իմն պարտաւորել զՊիղատոս 'ի դատապարտութիւն նորին: Ո՛վ, քանի՜ բուռն ատելութիւն ոխերիմ քինուն:

Բայց դու, հոգի իմ, մուտ 'ի սիրտ Յիսուսի, նկատել զաագնապ անձկութեան նորին. և եթէ դուցէ քեզ կայծակն ինչ սիրոյ՝ կարեկից վշտակից լեր նմին առ փոքր մի: Եւ ուստի՞ իցէ քեզ այդքան խիստ և ապառում լինել, զի և ոչ այնքան անարգանք և խոշտանգանք Փրկչին քո շարժեսցեն զքեզ 'ի գութ: Որ սիրէն՝ լինի և կարեկից. եթէ չիք 'ի քեզ գութ կարեկցութեան, ապա չիք քո և սէր: — Ո՛հ, իցիւ թէ չէր այսպէս՝ որպէս և էն, ո՛վ Յիսուս իմ. պակասէ յիս սէր առ քեզ. և զի չիք ինչ անհաճոյ քեզ քան զայս, աւադիկ անկեալ առ ոտս քո՝ բողոքեմ զանձնէ, թէ չիք և ինձ անհաճոյ ինչ քան զայս պակասութիւն սիրոյ: Վա՜շ ինձ. դու այդքան չարչարիս վասն իմ, և այլ ինչ ոչ խըն-դրես յինէն՝ բայց սիրել զքեզ. և ես չսիրեմ

զքեզ։ Իմ չսիրե՞լ զքեզ, որ այդքան սիրեցեր զիս 'ի չարչարանսն քո։ Ցաւէ ինձ յոյժ ընդ խստասրտութիւն իմ, և մանաւանդ ընդ չարութիւն իմ որ պատճառն է խստութեան սրտիս։ Ո՛հ, եթէ ոչ սիրեմ զքեզ, հաճեա՛ց, Տէր, և օգնեա տենչանացս սիրելոյ զքեզ։ Այն ունիմ գտանելոյ ուր ուրեմն շնորհս սիրելոյ զքեզ. և 'ի քեզ յուսամ, ոչ յանձն իմ, զի աղքատ եմ և տառապեալ և ամենևին կարօտ քում սիրոյ։

Աղերս մատուցից սիրոյ և զղջման. և եթէ չգիտիցեմ սիրել և վշտակցել, ցաւեցայց ընդ ցրտութիւն իմ. ատեցից զպղերգութիւնս, և կարդացից առ ողորմութիւնն Աստուծոյ։

ՃՁԳ. Ոչ միայն զառաքինութիւնս Քրիստոսի անկ է մեզ յիշել 'ի չարչարանս նորին՝ առ 'ի նմանողութիւն նոցին կրթիլ, այլ և զթշնամեացն մոլութիւնս՝ առ 'ի գարշիլ 'ի նոցունց։ Զիք ախտ մոլութեան զոր յերեսին ամս քարոզութեան իւրոյ՝ Փրկիչն մեր այնքան սաստիկ խոտեաց 'ի Դպիրսն և 'ի Փարիսեցիս՝ որպէս կեղծաւորութիւն. և 'ի նոյն ախտ տակաւին ջեռեալ կրթին և յայսմ նուագի։ Կամին զի մեռցի Յիսուս. այլ մի 'ի վերայ ինքեանց անկցի ծանրութիւն անօրէնութեանն, որպէս զի արդարք երևեսցին։ Առ Պիղատոս տանին զնա, որպէս զի նա ինքն յետոյ հռչակեսցի դատապարտիչ նորա։ Թուեցուցանեն զարդարութիւն միայն խնդրել 'ի Պիղատոսէ, և զամենայն հնարս հնարին զի տացէ վճիռ ամենանիրաւ։

Հասեալք 'ի գաւիթ դատաւորին՝ խղճեն մտանել 'ի ներքս 'ի սրահն, ուր ատեանն է, և ամենևին ոչ խղճեն 'ի մահ վարել զանպարտն։ Զանգիտեն 'ի պղծելոյ զանձինս, քանզի զգառն պասեքին ուտելոց են, որ օրինակն էր Քրիստոսի,

ջոկ 'ի կողելոյ 'ի նոյն ինքն 'ի Քրիստոս՝ չէք 'ի նոսա բնաւ խէթ խղճի: Ո՛վ կեղծաւորութեանն:

Իսկ դու, հոգի իմ, յառեա՛ց 'ի հակակայն նոցին 'ի Քրիստոս: Տես, զիա՛րդ սքանչելապէս սրբութեան նորին ներքնում պատշաճեալ է և արտաքինն երևոյթ պարկեշտաշնորհ: Ինքնին իսկ ճշմարտութիւն է նա, որ ոչ ստել կարէ, ոչ կերպարանիլ և ոչ կեղծաւորել: Միօրինակ գերահրաշ ճշմարիտք են նորա և լաւութիւնք հոգւոյն և կերպարանացն, և մի 'ի կարի գլխաւոր վարդապետութեանց է այս 'ի գիտութիւն ամենայն ուսուցչի հաւատոյ: Եւ զիա՛րդ կայցէ սիրտ իմ յայս օրինակ դէպս: Տեսանես դու, Աստուած իմ. և ես ինքնին չկարեմ ասել՝ թէ գուցէ իմ և մի առաքինութիւն: Ըստ դպրացն և փարիսեցւոցն օրինակի՝ բաղում անգամ խղճահարիմ ընդ մանունս ինչ որք չեն բնաւ 'ի կարևորաց սակի. իսկ յոր զեղբայրականն սէր արատեն՝ անգանօր թանձր է խիղճ իմ: Կերպարանիմ պարկեշտ, ողջախոհ, համբերող և խոնարհ. այլ եթէ տեսանէր աշխարհ զթիւրութիւն գիտմանցս, զբռնացեալն յիս ընդունայնութիւն, զսէր անձին, զաչառութիւն 'ի մարդկանէ, և զապականութիւն սրտիս, ո՞ այնուհետև չհամարէր զիս արդարև կեղծաւոր, սեթևեթիչ առաքինութեան, զերևոյթ և եթ նորին ունելով:

Արդ առեալ զարշիմ յամենայն կեղծաւորութեանց իմոց, և հայցեմ ներումն թողութեան: Բարձ յինէն, Տէր, զախտս զայս՝ որ Հրէից է սեփական քոց թշնամեաց. և տուր ինձ ոգի ըստ քոյումդ՝ յամենայնի ճշմարտութեան սիրող. ոգի պարզ, աննախարդախ, ուղիղ, արժանի աստուածայնոցդ աչաց հայելոյ: Ո՛վ ճշմարտութեանց սիրող, տո՛ւր ինձ ատել զունայնութիւնս և զստութիւնս, որովք առաւել սիրեմ աշխար-

հի լինել հաճոյ քան քեզ, առաւել ժամանա-կեցս ուշ եդեալ քան յաւերժիցն։

Փախեայց 'ի կեղծաւորութենէ որպէս 'ի չա-րագունէ քան զամենայն ախտս. և ածից նմա դէղ զլիշատակ առաջակայութեանն Աստուծոյ յառաջակայութեան մարդկան. Աստուած յան-դիման կայ ինձ, և տեսանէ զիս։

ՃՂԵ. Օրն՝ որ ըստ մեզ արդ աւագ ուրբաթ է, օր էր զատկի և մեծի տօնի Հրէից, և 'ի նմին աւուր յորում օրէն էր քահանայից և ժողո-վրդեանն պատրաստ լինել երկեղածութեամբ 'ի զենումն գառինն՝ 'ի քաւութիւն մեղաց իւ-րեանց, այնպէս ամենեքին վառեալք են 'ի նիւ-թել և 'ի ճեպել զմահ Քրիստոսի, մինչև չունել այլոյ իմիք փոյթ։ Այլ այս ամենայն գերագունի տնտեսութեանն Աստուծոյ է գործ. քանզի այս խնկ էր ճշմարիտն պասեք սահմանեալ 'ի յաւի-տենից, որում գագարելոց էին ստուերքն և օրի-նակք, և կատարելոց էր զոհ ճշմարիտ գառինն 'ի փրկութիւն աշխարհի։ Ո՜վ օր մշտնջենաւոր սգոյ վասն Հրէից. օ՜ր մշտնջենաւոր լուսոյ վասն մեր։

Միտ դիր արդ, հոգի իմ, և նկատեա ուշի ու-շով, եթէ զիարդ յեղանել դատաւորին Պիղա-տոսի 'ի դռնառաջ ապարանիցն՝ իշխանք Հրէու-թեանն յանձնեն 'ի ձեռս նորա զՅիսուս. ոչ առ-այլ ինչ՝ բայց զի սպանցի մահու խաչի, որ քան զամենայն մահ անարգականն է։ Տես, զիարդ մատնեն զնա որպէս չարագործ վկայեալ։ Այլ քաջիկ ես տես զայս, եթէ զիարդ որ միայն իշխանն է կենաց իւրոց՝ ինքնին յառաջ մատչի և այլ զանձն՝ առ ակր քո։ Ո՜վ բարութիւն, ո՜վ սէր, ո՜վ գթութիւն Քրիստոսի փրկչին՝ կամաւ-յերկնից յերկիր իջելոյ, 'ի դատիլ և դատա-պարտիլ 'ի մահ, առ 'ի փրկելոյ զիս 'ի յաւիտե-

նիցն մահուանէ։ Օրհնութիւն և գոհութիւն մատուցանեմ, քեզ, Յիսուս, և ոչ դադարեցայց յօրհնելոյ և 'ի գոհանալոյ զքեն զամենայն աւուրս կենաց իմոց, յուսով զնոյն գոհութիւն և օրհնաբանութիւն մատուցանելոյ քեզ և յանըսպառ յաւիտեանսն։ Աղէ, որպէս Թոյլ ետուր Հրեից յանդիման կացուցանել զքեզ Պիղատոսի, տուր և ինձ համարձակութիւն ընծայեցուցանել զքեզ Հօր յաւիտենականի։ — Հայր յաւիտենական և ամենակարող, մատուցանեմ քեզ զամենեւին անմեղ Որդիդ քո՝ կապեալ և շղթայեալ, 'ի նոյն 'ի կերպարանս՝ որով կացուցաւն առաջի Պիղատոսի։ Հնա՞ր ինչ իցէ ինձ տալ քեզ հաճոյագոյն, ազնուագոյն և սիրելագոյն քան զսա։ Կամ ո՞ր շնորհ իցէ զոր զլասցիս ինձ՝ եթէ խնդրեցից առ սէր Յիսուսի Քրիստոսի։ Նա և իշխանք աշխարհի առ դուլթ որդւոց իւրեանց շնորհեն բանտարգելոց և դատապարտելոց։ Արդ և ես 'ի սէր Յիսուսի՝ ժամիմ 'ի քէն շնորհս Թողութեան մեղաց իմոց. շնորհս՝ ատելութեան մեղաց և աւԹից մեղաց. շնորհս հաւատարիմ կալոյ 'ի սպասու քո՝ կրԹութեամբ առաքինութեանց, և մանաւանդ պահպանութեամբ պատուիրանաց քոց։

Մատուցից յաճախակի զնուէրս զայս, զՅիսուս Քրիստոս, առ Հայրն երկնաւոր. քանզի զօրաւոր է յոյժ, մանաւանդ յաղօԹս, առ ընդունել զշնորհսն՝ որոց առաւելս կարօտիմ առ յաւիտենական փրկութիւն անձին իմոյ։

Անզգուշութիւն և յուսահատութիւն Յուդայի:

ՃՁԶ. Ընկալաւ Յուդա զխոստացեալն ինքեան արծաթ, այլ ոչ ելիք խաղաղ զՅիսուս. ակն ունէր թէ նա ազատիցի, և ինքն վայելեսցէ յանդորրու զոր շահեցաւն. վասն այնորիկ զտեղի առեալ մնայր ելից իրացն: Եւ տեսեալ անոպայլին զլկանս անմեղ վարդապետին իւրոյ, և զհամբերատար հեզութիւննորին, սկսաւ խռովել խղճաւ ընդ նենգութիւն իւր, և առաւել ևս յորժամ տարանն զնա առ Պիղատոս: Յայնժամ համարեցաւ թէ արդէն դատապարտեալ է Յիսուս. եմուտ 'ի տխրութիւն, և չոգաւ 'ի բաց՝ դողալով և զմատունսն խածատելով 'ի դառնութենէ խայթից եղեռնապարտ մտացն խղճի: Ոչ ծանեաւ Յուդաս զծանրութիւն մեղացն՝ մինչև հանեալ 'ի գլուխ, և տիրեցաւ անհեդեդս, սատանայի իսկ գործակցելով՝ և՛ առ 'ի զգացուցանել նմա զմեծութիւն սխալանացն, և առ 'ի վհատեցուցանել, որպէս զի իսպառ գլորեսցէ: Այս հնարք են դժոխային թշնամւոյն. առ համարձակ և աներկիւղ արկանել 'ի մեղս՝ զառաջինն հաճոյական իմն կերպարանս զգեցուցանէ մեղացն՝ 'ի հրապոյրս ախտին. և յետ մեղանացն՝ ցուցանէ զայն դժպհի կերպարանօք՝ առ 'ի վարակել զհոգին ամօթով և հեղձուցիչ հոգածութեամբ, որպէս զի գլորեսցէ 'ի վհատութիւն և յանյուսութիւն:

Զոր ասեմս զՅուդայէ՝ բազում անգամ յիս ճմարտեալ գտի. 'ի պահու հաւանութեան մեղանացս՝ անարժէք թուեցան ինձ մեղքն, և հրապուրեալ 'ի հեշտութենէն՝ մեղայ: Այլ զինչ արդ

'ի հաճոյից անտի մնայցէ. — ամօթ և դառնութիւն: Փափագեմ ապաշխարութեամբ դարմանտանել վնասուն չարեացս, այլ գիտակցութիւն պակուցանէ զիս. և առ փոքրոգութեան վատաբախիմ. և ոչ այլ ինչ աղօտս ապաստանի գտանեմ՝ բայց զգիմեքն առ քեզ, Աստուած իմ:

Ո՛հ, եթէ Յուդայի յետ ծանօթութեան անզգամութեանն իւրոյ՝ ամբարձեալ էր զաչս յերկինս՝ առ քեզ: Առ քեզ, Աստուած իմ, ամբառնամ ես զիմս. և ընդ աչաց ամբառնամ և զձայն՝ խնդրել 'ի քէն շնորհս մի, որ յոյժ կարևոր է ինձ յայսմ հիքութեանս պայմանի: Տուր ինձ 'ի բազմութենէ և 'ի ծանրութենէ անտի մեղացս հնարել ոչ վհատութիւն այլ խոնարհութիւն. ոչ վհատութիւն՝ որ յանյուսութիւն հանցէ, այլ խոնարհութիւն որ 'ի զղջումն և յուղղութիւն տանիցի: Այս նշան է որով ընտրեալք քո ճանաչին. որոց՝ և մեղքն իսկ գործակից լինին բարւոյ. քանզի յետ գլորմանն՝ առաւել ևս խոնարհութեամբ և զգուշութեամբ կանգնին: Տուր ինձ, Աստուած իմ, զայս մխիթարութիւն 'ի փառս քո, զի մեղք իմ պատճառք լիցին ինձ խոնարհութեան և զգուշութեան, զի մի ևս յանցեայց քեզ:

Տխրութիւն՝ զոր վասն մեղացս զգամ, եթէ առ Աստուած առաջնորդիցէ ինձ՝ տուրք են Աստուծոյ. եթէ խորշեցուցանէ յԱստուծոյ՝ պատրանք են դիւականք: Այսու խորհրդածութեամբ քննեցից քաջ զանձն իմ:

ՃՁԷ. Պակուցեալ յիւրմէ իսկ գիտակցութենէ և 'ի յիշատակէ ահաւոր վայիցն զոր սպառնայր Յիսուս 'ի յետին ընթրիսն՝ այնմ որ մատնիցէ զինքն, մեղուցեալն Յուդաս զղջանայ դառնապէս ընդ մեղս իւր. դարձուցանէ զերեսուն

արծաթին զոր անխրատութեամբ ստացաւ. դարձուցանէ ընդ նմին և զանուն բարի զիւրոյ վարդապետին, խոստովանեալ զանձն պարտական արեան արդարոյ և անմեղի: Այլ ոչ ինչ օգտէ նմա զղջումն, զի ոչ է ըստ արժանւոյն, այլ ըստ բնութեան կրից, որով ոչ թէ ջնջէ այլ և յաւելու զմեղսն. քանզի յառաջադայի 'ի սրտէ թափուր եղելոյ 'ի հաւատոց և 'ի յուսոյ:

Պատասխանէ զանձն որպէս զմատնիչ, այլ իբրև զառն միոյ բարւոյ լոկոյ, և ոչ իբրև մատնիչ Որդւոյ Աստուծոյ: Յիշէ Յուդաս զսքանչելիսն Քրիստոսի, և զբարիսն զոր 'ի նմանէն ընկալաւ, որք և ծանրացուցանեն զմեղացն գարշութիւն. այլ ոչ ածէ զմտաւ զգթութիւնս Քրիստոսի, առ 'ի յուսալ և 'ի խնդրել ներումն թողութեան: Այս է պակասութիւն յուսոյն: Ամպարիշտ վստահութեամբ չարաչար վարեալ էր ողորմութեամբն Աստուծոյ. վասն որոյ և այժմ, որպէս այլ ոմն Կային, այնպէս ապշեալ կայ 'ի ծանրութենէ չարեացն՝ մինչև կարծել թէ անհնար իցէ ինքեան ողորմութիւն գտանել:

Այսպիսի փորձութիւն բազում անգամ մարտեաւ և ընդ իս. և հարկ է ինձ խոստովանել զի արժանի այդմ էի. քանզի չար քան զՅուդա՝ զառանցի զողորմութեամբք քո, Աստուած իմ: Այլ մի թողուր զիս ընկլուզանել. մի լիցի ինձ չարութիւն իմ քան զգթութիւն քո մեծացուցանել, կամ առաւել 'ի բարկութենէ սրտմտութեան քո երկնչել՝ քան 'ի բարութիւն քո ապաւինել: Ծանր իցեն մեղք իմ և անթիւ 'ի բազմութենէ. և ես բազմապատիկ և անբաւազօր հաւատամ ես միշտ զողորմութիւն քո անհուն. և ոչ եթէ վհատիմ 'ի յուսոյ գթութեան, այլ մանաւանդ 'ի ծունր անկեալ զնոյն պաղատիմ: Յիշեցից՝ ցորչափ կեամ՝ զանօրէ-

նութիւնս իմ՝ յամօթ երեսաց իմոց. այլ ամօթս այս ինքնին առաջնորդեսցէ ինձ յապաւինութիւն 'ի քեզ: Օգնեա ինձ, Տէր, առ 'ի ներգործել ըստ շնորհաց հաւատոյ. զի մի կորուսից զհաւատս՝ անարժան գտեալ հաւատոց:

Ի մատչել իմում 'ի խորհուրդ խոստովանութեան՝ հոգացայց զի մի ըստ Յուդայի՛ն եղիցի խոստովանութիւնս իմ. և մի զղջումն իմ ըստ զղջմանն Յուդայի: Զիա՞րդ ցաւիցիմ ես ընդ յանցուածս իմ առ Աստուած:

ՃԶԸ. Ծանուցեալ զդժնդակ չարութիւն իւր՝ զգայ Յուդաս զի դարձեալ եղև երկնից և երկրի. ատելի Աստուծոյ, հրեշտակաց և մարդկան, նաև դիւաց անգամ. վասն այնորիկ ըմպահկեալ և բանդագուշեալ՝ ոչ գիտէ առ ո՞ դառնալ: Դիմէ առ ժողովրդապետսն՝ տագնապեալ և յոգի հարեալ. և յայտնէ նոցա զդառնութիւն ցաւոց սրտին, ակն ունելով սփոփանս ինչ գտանել. այլ նոցա արհամարհեալ զնովաւ՝ ասեն. Զի՞ փոյթ է մեզ մոլեգնութեանդ. կանխաւ անկ էր քեզ խորհել զոր այժմդ խորհիս. և յառաջ քան զմատնութիւնդ՝ տեսանել զհետերթանսն:

Գիտէր Յուդաս զի յոյժ սիրող էր Յիսուս մեղաւորաց, և փափագող ողորմութեանց առ ամենեսին. չէր երբէք նորա մերժեալ զոք. վասն որոյ և կարէր վստահութեամբ դիմել առ նա, որպէս և տեսեալ իսկ էր յառաջագոյն զբազումս պատրաստ գթութեամբ ընկալեալս առ 'ի նմանէ: Նաև խուն մի յառաջ նկատեալ էր զՊետրոս, որոյ կրկնակի ուրացեալ զաստուածային վարդապետն, օրինակ ապաշխարութեան ընծայէր նմա արտասուօքն, որով հնար էր զամենայն իսկ զմեղաց թողութիւն գտանել. և յայսմ ամենայնէ մարթ էր նմա քաջալերս զգե-

նուլ։ Գիտէր Յուդաս, զի սիրելի էր և ամենօրհնեալ Կուսին. կարէր խոնարհել անկանել առ նա, միջնորդ և բարեխօս ունել։ Այլ և ոչ զմի յայսցանէ զմտաւ էած վատշուէրն։ Երկմնեաց, և անյուսացաւ գտանել թողութիւն։ Ի դէպ է ասել, թէ յառաջեաց կորուստ նորա անդառնալի, ոչ այնքան 'ի նենգութենէ մատնութեանն, որքան 'ի թիւրութենէն և 'ի վհատութենէ՝ չյուսալոյ յողորմութիւն Աստուծոյ։ Ոչ պակասեաց 'ի նմանէ աստուածային ազդումն. այլ նա առաւել սիրեաց զկոյր կիրան և զփորձութիւն սատանայի։

Երկնչիմ և յոյժ զանգիտեմ եթէ գուք, առաւել 'ի ժամու մահուան իմոյ, յարիցեն 'ի վերայ իմ այսու քստմնելի փորձութեամբ, ցուցանելով ինձ զբազմութիւն մեղաց իմոց ծանունց, առ յուսաբեկ առնել զիս յողորմութենէ քումմէ, Աստուած իմ։ Ո՛վ Աստուած գթութեանց, ողորմեա ինձ. և մի թողուր զիս վրիպիլ 'ի յուսոյ. քանզի առաւել քան թէ այլով իւիք մեծացուցից զգովութիւն քո։ Զերծո զհոգի իմ, ոչ 'ի դժոխային թշնամւոյ անտի միայն, այլ նաև յահէ և յերկեղէ ոխերիմ թշնամւոյ անտի։ Ո՛վ ամենասուրբ Կոյս, ապաստան մեղաւորաց, հա՛ս ինձ 'ի թիկունս և լե՛ր իմ պաշտպան յանողորմն ոսոխէ անտի. և աղաչեա վասն իմ՝ զի յուսացայց հանապազ յողորմութիւն Աստուծոյ, և այժմ զամենայն ժամանակս կենաց իմոց, և 'ի ժամու մահուան իմոյ։

Ի ժամանակի առողջութեան իմոյ յաճախեցից զմաղթանս յուսոյ, առ 'ի կրթել զիս 'ի նորին դիւրագոյնս՝ 'ի յետին հիւանդութեան իմում և 'ի ժամու մահուան իմոյ։

ՃՁԹ. Տեսեալ սատանայի զի զղջացաւ Յուդա ընդ մեղս իւր առաջի քահանայիցն, և զանգիտեալ թէ գուցէ և ստուգապէս զղջասցի, ցնորեցոյց զմիտս նորա խաւարաւ և զարհուրանօք, առ 'ի տալ նմա զհարուածն յետին և կործանել յանդարձ յուսահատութիւն: Կարէր տակաւին չուառականն քաջալերել յուսով թողութեան, գէթ զայն զմտաւ ածեալ՝ զի չմերժեաց զնա Յիսուս ոչ 'ի գերահրաշ խորհրդոյն՝ 'ի վերնատանն, և ոչ 'ի համբուրէ խաղաղութեան 'ի պարտիզին: Բայց չէարկ նա զայսոսիկ 'ի յուշ. այլ ընկեցեալ մոլեգին սրտմտութեամբ զերեսուն արծաթին 'ի տաճարն, չոգաւ, և իւրովք ձեռօք խեղդ արկ ինքեան. անձամբ անձին եղեալ վկայ և դատաւոր և դահիճ, և յանցաւոր անթողլի:

Զարհուրելի էր գործն. և անկ է մեզ՝ երկիր պագանելով արդար դատաստանացն Աստուծոյ՝ շատանալ, ասելով, եթէ մեռաւ Յուդաս անապաշխար և անյոյս, քանզի ուր ուրեմն եթող ելիք զնա Աստուած: Եւ ո՞ած տարաւ զնա յայն սահման: — Անկարգ տենչ ագահութեանն և արծաթսիրութեան: Եւ զի՞րդ զօրացաւ 'ի նմա ախտն: — Անփութութեամբն առ 'ի յաղթել նմին: Ինքնին եհան 'ի ներքս յանձին իւրում վէրս անողջանալիս. և վասն զի կամաւոր էին յանցանքն՝ անբժշկելիք եղեն: Այսպէս բազում անգամ պատահէ և այլոց, զորս թողու Աստուած արդարապէս 'ի պայման դատապարտելոց, յոր չարութեամբ իւրեանց անձամբ զանձինս վարեցին:

Մարթ է այսմ հանդիպել և ինձ մինչ ոչն կարծեմ. քանզի են են և յիս ախտք մոլեկանք՝ յորոց դիւրաւ պարտեալ յաղթիմ, զի ոչ առնեմ բուռն անձին յաղթել նոցին: Եթէ լքցէ

զիս Աստուած և Թոյլ տայցէ չարաչար վախճանել, չունիմ տրտնջել զնմանէ՝ որ ամենագութ կամօքն հոգայ յիս. ես իսկ եմ ամենայն չարի պատճառ, որ ունականամ 'ի պղերգութեան, և զօր հանապազ պարտական զիս առնեմ մահուչափ պատուհասին: Այլ արդ ձեռն արկանեմ 'ի վերս իմ ցաւագինս. աղէ, Աստուած իմ ամենակարող. հայեաց յոչինչս խորին՝ որ խոնարհիմ առաջի քո և աղաչեմ մի երբէք լքանել զիս: Լսեմ զի ասես 'ի սրտիս՝ թէ իմ են յանցանքն և ոչ քո. և է իսկ արդարև այսպէս. այլ զի՞նչ կարիցեմ առնել առանց քո: Դու ինքնին շնչեա աղդեա յիս զհաճոյսն քո. և զօրացո զիս առնել զայն ամենայն զոր հաճիցիս աղդել յիս: Ողորմութիւնք քո յաղթող լիցին 'ի վերայ չարութեանց իմոց:

Անդ առաւել արժան է ինձ զանգիտել 'ի լքմանէ ձեռինն Աստուծոյ, ուր ոչն զանգիտիցեմ յԱստուծոյ: Նախատեսից և զանգիտեցից. երկեայց՝ և կացից 'ի խոնարհութեան. խոնարհութիւն առատացուցէ յիս զլոյս փրկութեան:

ԾԴ. Խորհրդածութեան արժանի են դէպք Յուդայի: Համարէր նա զառաջինն՝ եթէ բարեբաստութիւն իւր հաստատեսցի յարծաթն. անտի ծագէ 'ի սիրտն ագահութիւն: Առ 'ի հայթհայթել գրամս՝ գողանալ սկսանի. մատնէ զաստուածային վարդապետն իւր. և փութայ տալ զնա 'ի ձեռս կաղանաւորացն՝ առ տենչ ստացման արծաթոյն: Արդ ընկալեալ զայն յԱննայէ քահանայապետէ՝ փոքր մի յառաջ քան ըղհասարակել գիշերոյն, ո՞ւր մնայ երևակերպն այն բարեբաստութիւն: Ի դէպ է ասել թէ և ոչ վայրկեան մի տևեն վայելքն, քանզի անդէն

և անդ անկանի զնովաւ տրտմութիւն դառն. և վաղ քաջ ընդ առաւօտն ընկենու զարծաթն ընդ մէջ գետոյն, և խեղդան 'ի փողն արկեալ անձնամահ լինի. արծաթն կորնչի, և առ յուսահատութեանն կորնչի և հոգին ընդ մարմնոյն: Ահաւադիկ պտուղք յարընչութեան վաշուէր ախտից:

Այս արդասիք են և ամենայն հեշտութեանց մարմնոյ և աշխարհի՝ որ մեղօք հայթհայթիցին: Ունայն և բոպէական են վայելք ախտիցն և զգայութեանց. դաժանք և տևողականք՝ խայթքն 'ի խղճէն ութեալք. սաստիկք և մշտնջենաւորք տանջանքն՝ զոր աստուածայինն արդարութիւն պատրաստեալ է մեղաւորաց: — Հոգի իմ, իցէ՞ օգուտ զմայլել յաշխարհային բերկրութիւնս՝ որք 'ի վայրկենի միում լուծանին: Որպիսի՛ յիմարութիւն՝ խանդակաթ լինել ունայնութեանց՝ փոխանակ սիրոյն Աստուծոյ՝ որ ամենայն բարեաց է գերագոյն: — Եւ սակայն յայսպիսի յիմարութիւնս զառածոյ և ես գրեթէ զամենայն զկեանս իմ. սիրեցի զընդունայնութիւն, զհաճոյս զգայարանաց, զաշխարհային բարեբաստութիւն և զդիւրութիւնս մարմնականս: Սիրեցի զշարախօսութիւն, զվրէժխնդրութիւն, զչարութիւն, զանիրաւութիւն. իսկ գոհութիւն՝ զոր յուսայի գտանել ախտաւոր ախորժակօքս՝ ո՞ւր իցէ արդ: Տեղի ետ չքացուկերպարան հոսանուտ և խուսափող հեշտութեանն. և արդ զգամ զի պատրանք սնոտիք խաբեցին զիս:

Ո՜հ, Աստուած իմ, բա՛րձ խլեա 'ի սրտէ իմէ զամենայն իղձ և սէր այսպիսեաց. և մի տար ինձ թոյլ յարել յայսմ հետէ 'ի հեշտութիւնս կամ 'ի սփոփանս կենցաղոյս, զի մի առ փոքր փոքր գթեցից 'ի վիճակ Յուդայի, որ՝ ուր զարքայու-

թիւն կարծէր դտանել՝ զդժոխս եգիտ։ Ո՜հ, ճըշմարտութիւն գերազանց, Փրկիչ քաղցրագութ, քանզի զրկես 'ի մխիթարութեանց քոց զայնոսիկ՝ որք սիրենն զբերկրութիւնս աշխարհայինս, տուր ինձ ատել զընդունայնութիւնս, և դառն համարել զամենայն որ ոչ է 'ի քեզ. որպէս զի զքեզ միայն վայելեցից, քաղցրութիւնդ ճշմարիտ, քաղցրութիւն անապառ։

Վայելել և զանկայուն հեշտութիւնս կենցաղոյս և զյաւիտենականսն հանդերձեալս՝ անհնարին իրք են. հարկ է 'ի միոյ յայդցանէ զրկել զանձն իմ։ Ո՞ր պատշաճագոյն իցէ ինձ։ — Հարցից զհաւատս իմ։

ՃՂԱ. Համեմատեսցի անկումն Յուդայի ընդ անկմանն Պետրոսի։ Երկաքանչիւր ևս ընտրեալք էին 'ի Քրիստոսէ յառաքելութիւն. այլ ոչ միօրինակ եղև կատարած երկաքանչիւր նոցա։ Պետրոս մեղաւ և զղջացաւ, և եղև սուրբ. Յուդաս մեղաւ և յուսահատեցաւ, և եղև դատապարտեալ։ Վասն սրբութեան իւրոյ անկ է Պետրոսի շնորհս մատուցանել գթութեանն Աստուծոյ, և ասել ընդ Պօղոսի, «Շնորհօքն Աստուծոյ եմ զինչ և իցեմ» (Ա. Կորն. ժԵ. 8)։ Այլ Յուդա ընդ դատապարտութիւն իւր չկարէ բնաւ մեղ դնել Աստուծոյ, այլ միայն իւրում չարութեան։ Իսկ մեզ՝ եթէ ըստ օրինակին Պետրոսի ունիցիմք յոյս փրկութեան, անկ է և օրինակաւ Յուդայի զանգիտել 'ի դատապարտութենէ. և ընդ մէջ յուսոյ և երկեղի ուղղել զընթացս կենաց մերոց։ Ընդ մէջ երկոցուն սոցա կալով՝ հնար է կեալ խոնարհութեամբ. և մեծ աւիթ խոնարհութեան ամենեցուն է ասելն, Ոչ գիտեմ ո՞րպէս եղիցի վախճանն իմ. ոչ գիտեմ փրկեցա՞յց եթէ կորեայց.

Աստուած միայն գիտէ զփրկելին և զմերժելիս․ իսկ ես ոչինչ ոչ գիտեմ՝ի գրելոցն 'ի յաւիտենական իրաւունս նորին։ Մեծ առիթ խոնարհութեան է ամենեցուն ոչն գիտել թէ որպիսի ինչ եղիցի յաւիտենական վիճակ իւր։ Ուսաք 'ի գրոց եթէ բազումք որ սքանչելիս գործէին և տեսիլս տեսանէին, աստեղք կործեցեալք սըրբութեան, անկեալ կործանեցան յետոյ և եղեն խանձողք անշէջ հրոյն։ Ընթերցաք և զայլոց՝ որոց զամս յոլովս լցեալ պէսպէս ախտիւք և թաւալեալք յաղբեւս անօրէնութեանց, 'ի ձեռն ողորմութեանն Աստուծոյ վերամբարձան և դասակցեցան 'ի դասս իշխանութեանց երկնից։ Ո՜հ, թէ տպաւորէին 'ի հոգւոջ այսպիսի խորհրդածութիւնք, մի՞թէ ինչ էր նմա ամբարտաւանել կամ զոռնայնութեամբք գալ։

Այլ ես, Աստուած իմ, չառնում յօգուտ զանհասանելի դատաստանս իմաստութեանդ՝ 'ի փառս քո, այլ առ 'ի խռովել և 'ի վրդովել ևեթ զանձն իմ անդոհական անձկութեամբք․ և գիտեմ զի չար առնեմ․ զի ուր վրդովք և խռովք են՝ անդ ոչ է հոգի քո, հոգի մխիթարութեան և խաղաղութեան։ Այլ աղէ, լուսաւորեա զիս և տուր ձեռն օգնութեան, զի վարեցից զայն 'ի խոնարհեցուցանել զանձն իմ խոնարհութեամբ վստահութեան 'ի բարութիւնս քո․ աներկբայ գոլով զի 'ի խոնարհութեանս յայսմիկ են փառք քո։ Ոչ ես կամիմ խելաբերել եթէ առ գիւրագայթ և տկար բարուցս չիցեմ նախասահմանեալ 'ի փրկութիւն․ այլ մանաւանդ յուսացայց այնպիսի լինել․ քանզի դու ինքն, ո՛վ փրկիչ հոգւոյ իմոյ, խոստացար ինձ և ստացար զարքայութիւն։ Իմովսանն ունիմ շատ իսկ պատճառս անյոյս լինելոյ 'ի յաւիտենական փրկութենէ իմէ, այլ քև չափ՝ ունիմ զամենայն

փառս աներկմիտ յուսոյ փրկութեան: Ապա 'ի քեզ յուսամ. և 'ի բազմապատիկ շնորհացն զորս կանխեցեր առ իս՝ առնում վստահութիւն յու_սոյ վախճանական շնորհաց՝ որ մուծցեն զիս 'ի փառս քո:

Անյուսութեամբն տարամերժեցաւ Յուդաս. և անյուսացաւ՝ զի ոչ յիշեաց զգինս փրկու_թեան իւրոյ: Զայս զմտաւ ածելով իմ'ի խոկ_ման չարչարանաց Քրիստոսի՝ քաջալերեցայց յուսով:

Ամբաստանութիւն Հրէից զՅիսուս առ Պիղատոս:

ԾՂԲ. Գիտելով Պիղատոսի եթէ յարեալ Հրէիցն պնդապէս 'ի ծէսս կրօնից իւրեանց՝ ոչ մտցեն 'ի ներքս յապարանսն, ելանէ արտաքս 'ի պատշգամ մի. և ըստ միոյ կուսէ տեսեալ զՅի_սուս այնքանեօք կաշկանդեալ կապանօք և շըղ_թայիւք՝ 'ի նշանակ մեծեղեռն յանցանաց, իսկ ըստ այլմէ ոչ տեսեալ և ոչ մի փուրսիչ մատու_ցեալ 'ի ծանօթութիւն յանցանաց նորին, հար_ցանէ զքահանայսն և զդպիրս. Զի՞նչ ամբաստա_նութիւն մատուցանէք զառնէդ զայդմանէ. (Յովհ. ԺԸ. 29): Ոչ նշանակքն զոր տեսանէ և ոչ ամբոխ աղաղակին՝ ոչ հաւանեցուցանեն զԴատաւորն՝ չարագործ կարծել զնա. այլ առ 'ի դատել իրաւամբ և մի կուրօրէն դատափե_տել, արդարութեան հրահանգօք կամի 'ի վե_րայ հասանել ճշմարտութեանն:

Համեմատեսցի Պիղատոս ընդ Հրէիցն: Նա այր հեթանոս և անգէտ հաւատոց մերոց, խնդրէ քննել մոտադիւր զդատ Յիսուսի. քանզի գիտէ

եԹէ Թելադրութեամբ լոկով ինքնաբոյս բանին ոչ է օրէն դատապարտել զանմեղն. իսկ Հրեայքն ծնեալք և սնեալք 'ի հաւատս և յօրէնս Ճշմարտին Աստուծոյ, առ ոտն հարեալ զաստուածային պատուիրանն ոչ սպանանելոյ զարդարն և զանմեղ, կամին զի ամենեքին անպարտականն Յիսուս սպանցի որպէս զաւազակ ոք: Եւ զինչ արդ պակասիցէ 'ի լրումն մարգարէութեանն (Եզեկ. Ե, 6. ԺԶ, 48). կամ ի՞ւ իւիք քան զանհաւատան պակաս իցեն Եբրայեցիքդ 'ի չարութեան, 'ի նենգութեան և յամպարշտութեան: — Ասեմ Թէ ո՞չ և 'ի քրիստոնեայս այսպիսի անպատշաճ իրք երեւիցին. քանիցս ո՞չ ուղղադատ դատաւ տգէտն քան զաստուածաբանն. պարկեշտագոյն աշխարհիկն՝ քան զկրօնաւորն. առաքինագոյն զբաղեալն 'ի տուրևառս երկրի՝ քան զնուիրեալն 'ի հոգևոր և 'ի կատարելութեան կեանս:

Այլ յիս ինքն դարձ արարեալ՝ ասացից ցանձն իմ. Քանի՞ք իցեն որոց սակաւ քան զիս ունելով լոյս և ծանօթութիւն՝ լաւագոյնք են քան զիս, ուղղադատք գիտակցութեամբ մտացն, և առաւել քան զիս երկիւղածք 'ի պահել զօրէնս քո սուրբս, Աստուած իմ: Քանի՞ք իցեն որ ոչ դիտելով ոչ գիրս, ոչ խոկմունս, և հազիւ Թէ զխորհուրդս կրօնից, առաւել քան զիս երկիւղածք, սիրողք և հաւատարիմք են 'ի պաշտաման: Քանի՞ք արդեօք, յաւելից ասել, քանի՞ք իցեն և յանհաւատան՝ առաւել քան զիս ընկերասէրք, աւագամեծարք, համբերողք վշտաց, և արդարախոհք առ 'ի չվնասել զոք ոչ բանիւ և ոչ գործով: Աստուած իմ, տեսանեմ՝ 'ի վերայ իմ մերձեցեալ զահեղ և զանաչառ դատաստան քո: Ո՛հ, մի Թողուր ինձ յայսմ հետէ հակառակ կալ, այլ մանաւանդ տուր ինձ անսալ ազդման լուսոյ քո:

Կիրք ունակացեալք յիս՝ նման զիս յարդարեն Հրէից՝ մոլակոյր և խստասիրտ. տո՛ւր ինձ զօրութիւն նուաճել, ընկճել, սպանանել զնոսին:

Յառիթս յանցանաց և թշնամանաց ընդդէմ Յիսուսի՝ ասացից առ կիրս իմ, որպէս Պիղատոս առ Հրեայսն. Զի՞նչ ամբաստանութիւն մատուցանէք զառնէն զայնմանէ: Քննեցուք զվարս Յիսուսի, և տեսցուք, ատելութեա՞ն եթէ սիրոյ իցեն արժանի: Արժա՞ն իցէ թշնամանել զնա:

ԾՂԳ. Գիտէ Պիղատոս զչարութիւն Հրէից ծարաւեալ արեան Յիսուսի. Ճանաչէ և զանձն իւր թշնամանեալ 'ի նոցանէ, զի ոչ իբրև առ դատաւոր դիմեն առ նա, այլ իբրև կատարիչ խոտորնակ կամաց իւրեանց. վասն այնորիկ արդարապէս ընդդիմանայ և հարցանէ, զի՞նչ ամբաստանութիւն ունիցին զնմանէ: Եւ զո՞ր ամբաստանութիւն մատուցանեն: — Եւ ոչ մի. և զի ոչ ունին զինչ ասիցեն, ամօթապարտք լեալ, ապա լրբագոյնս բարբառին. «Եթէ չէր չարագործ այրն այն՝ ապա ոչ մատնէաք զնա քեզ». (Յովհ. ԺԸ. 30): Տե՛ս ինձ զամբարտաւանութիւն խօսիցն: Փքացեալք անձնապարծութեամբ՝ յանցաւոր և մահապարտ բաջաղեն զՅիսուս, այնու՝ զի ինքեանք այնպէս համարին: Աւագութեամբ իւրեանց զանօրէնութիւն ծածկել նկրտին, և երևել անխարդախք և անստգիւտք 'ի խղճէ մտաց. մինչդեռ բաղբաղանօք և սուտթեամբք չարագործ հրապարակէն զբարեգործողն ամենայն աշխարհի. և չառնուն 'ի միտ՝ զի ոչ ունելով փաստս հաւանելիս յանցանաց նորա, ինքնին զնա անմեղ քարոզեն, և զինքեանս՝ չարակամս:

Եթէ 'ի ստուգութիւն Ճշմարտութեան հար-

ցանէր Պիղատոս զգլխաւորան զերծուցեալս 'ի Քրիստոսէ, զկշտրան լուսաւորեալս, զբորոտան սրբեալս, զմեռեալսն յարուցեալս, և զխւրա-ւորս 'ի պէսպէս ախտից բժշկեալս, քաջ իսկ 'ի վերայ հասանէր թէ իցէ՞ նա չարագործ: Իսկ Յիսուս օրհնեալն՝ յայնքան աղաղա՛կէ ամբոխին չարագործ զինք ամբաստանեալ լսելով, զիա՞րդ 'ի չքմեղս լիցի: Լուռ եւեթ կայ. և հիասքանչ լռութեամբն խրատէ զմեզ՝ եթէ որպէս արժան իցէ և մեզ յարկածս կենցաղոյս կրթիլ 'ի համ-բերութիւն: Ո՛վ համբերութիւն, մեծայարգ յոյժ առաքինութիւն իցես դու, զի այդչափ սիրելի ես մարդացելումն Որդւոյ Աստուծոյ, որ առաւել ընտրէ համբերող երևել քան եթէ անմեղ: Իսկ ես զիա՞րդ յարգիցեմ զնոյն: Բաղ-ձամ տեսանել զայն յայլս, իսկ անձին ինչ փոյթ ոչ ունիմ. գիտեմ յորդորել զայլս 'ի համ-բերութիւն, իսկ զիս՝ և 'ի թեթև ինչ առիթս՝ ոչ: Պարսաւեմ զկարճմտութիւն և թշնամա-նեմ որպէս զխոտան ինչ յում և իցէ, իսկ և ես կարճմտագոյն քան զամենեսին գտանիմ. և ոչ ուղղեմ զանձն իմ նախանձաւորութեամբն ո-րով զայլս խրատեմ:

Ո՛վ մեծդ Աստուած երկայնամիտ, տուր ինձ ձեռն օգնութեան առ 'ի նմանող լինել քեզ: Ո՛վ ամենահամբերող Յիսուս, կրթեա զիս 'ի տանել՝ առ սէր քո՝ դժուարատար վշտին, զոր զգամ յորժամ թէ ոք չարախօսեալ անգոսնի-ցէ զիս: Յայտ իսկ է ճշմարիտ երանութիւնն զոր քարոզեցեր յաւետարանի քում. այլ ես չառնում 'ի միտ զառածս զայս. բայց առ 'ի հա-սու լինել՝ զի՞նչ այլ պիտոյ իցէ, եթէ ոչ յիշել զքեզ և յառել յօրինակս քո:

Քննեցից և տեսից եթէ իցէ՞ յանձին իմում հրէականն այն հպարտութիւն, պահանջելոյ

հաւատոս անդիմադարձ՝ յորժամ են խօսի֊ ցին։ Աւետցիս զախտս զայս, և համոզակեր եղեց անձին՝ եթէ հպարտութիւն է մայր անհամբե֊ րութեան։

ՃՂԴ. Տեսանէ Պիղատոս զյաւակնութիւն Հրէից, որք յամառեալ պնդին՝ 'ի կատարումն կրից իւրեանց առնել զնա գործօն անգութ ա֊ նիրաւութեան. և գիտելով զնոսա դիւրագըր֊ գիռս յամբոխայոյզ լինել, հեզութեամբ բար֊ բառի և ասէ. Քանզի կամ է ձեր դատապար֊ տել զայրդ զայդ որպէս յանցաւոր, ոչ ինչ դատանելով 'ի նմա ապիրատութիւն, չկամիմ ես մխիլ յայդ դատաստան. դուք դատեցարուք ըստ ձերոց օրինաց. և եթէ ներիցեն դոքին դա֊ տապարտել զանմեղն՝ դատապարտեցէք և զդա։ Ո՛վ արտասուելի իրք։ Ըստ անհաւատից օրի֊ նաց՝ Քրիստոս անպարտ և անդատապարտ վկայի. իսկ Հրէայք՝ որք պարծէին զօրէնս Աստուծոյ ունել՝ զամենայն հնարս հնարին զի սպանցի նա։ Աւեն խիղճ անձանց համարել՝ իբրև գործ անար֊ ժան՝ զինքնին արկանելն 'ի նա ձեռն 'ի մահ. և ոչ խղճեն փափագել և թախանձել զմահ նորա։ Զմեղս սրտի առ ոչինչ գրեն, և անմեղ համարին զխիղճ՝ զի գործով ոչ կատարեն զայն։ Եւ միթէ չիցէ՛ դատապարտել՝ զոր այնքան թախանձանօք տենչեն դատապարտել յանիրաւի։ Ո՞ւր ուսու֊ ցանեն օրէնք եթէ արժան իցէ փափագել զոր գործել չէն արժան։

Այլ ո՞ւր ձգիմ ես 'ի կշտամբանս Հրէից. միթէ չիցե՞մ և ես, և յոլովակի՝ 'ի նոյին սակի։ Ա֊ տուած իմ, դու ինքնին վկայ ես թիւրութեան իմոյ. առաջի աշխարհի ցուցանեմ զարշանս և զղուանս 'ի գործոյ մեղաց. այլ չարութեամբ սրտի դիւրահաւան լինիմ առ մեղս։ Նախանձա֊

ւոր և յոյժ զգուշաւոր յուցանեմ զիս առ մեղս ներելիս՝ որ յաչս հասարակաց հարկանիցին. այլ ոչ նոյնպէս սոսկամ 'ի գաղտնի մահացու մեղաց: Զօրէն Հրէիցն առաւել ակն առնում համբաւոյ անձինս քան խղճի մտաց. և ոչ խորշիմ լնուլ զկղձս կրից ատելութեան, վրէժխնդրութեան և նախանձու, ուր ուրեք մարթ իցէ վերարկել զմեղս քօղով արդարութեան և նախանձու: Ճանաչեմ զի չար և յոյժ չար է ինձ այս վիճակ. զի անմարթ է թէ իցէ 'ի սրտիս սէրն Աստուծոյ՝ մինչ առ մարդկան ականէ եւեթ զգուշանամ 'ի մեղաց առ Աստուած. և յիս պատշաճեցուցանեմ զասացեալն առ Հրեայս, զներքինն մաքրել. զի առանց անր՝ ինչ ոչ օգնէ արտաքինն: Եւ երբ իցէ, ո՜վ ամենասիրելի Փրկիչ, զի մարդս իմ ներքին վերանորոգեալ կրթեսցի 'ի նմանութիւն օրինակի քումդ ճշմարտութեան և սրբութեան: Աղէ, գթա յիս, և տուր ինձ օգնութիւն հզօր և ազդու առ 'ի խլել յինէն զամենայն կեղծաւորութիւն, և չափ գնել անձին կատարելապէս 'ի ներքինս իմ և յարտաքինս:

Սկիզբն չարի ամենայն մեղաց 'ի սրտին կայ. զգուշութեամբ մեծաւ հարկ է ինձ հսկել 'ի պահպանութիւն սրտի. զի ոչ պակաս յարտաքինն թիւրութենէ՝ և 'ի ներքնոյն խոտի Աստուած, և հոգի դատապարտի:

ՃՂԵ. Յաւել Հրէիցն եթէ ոչ է ինքեանց օրէն առնել դատաստան մահու, յայտ իմն առնեն հաւաստր իմաստիւք, եթէ եկեալ հասեալ իցէ Մեսիայն ակնկալեալ. քանզի ասացեալ էր մարգարէից եթէ կացցէ մնացէ առ Եբրայեցիս լիովին իշխանութիւն դատելոյ մինչև եկեսցէ Մեսիայն. իսկ 'ի խոստովանել արդ սոցա՝ եթէ իշ-

խանութիւնն այն վերացեալ է 'ի նոցանէ, և դեռ այն ինչ բարձին զայն Հռովմայեցիք տիրապետողք, յայտ ուրեմն է զի ասեն, եթէ եկեալ է ակնկալեալն Մեսիա. և զի նա ինքն իցէ Յիսուս Քրիստոս՝ հաւանեցուցանեն սքանչելիք նորին, վարդապետութիւն և նախագուշակութիւնք որ 'ի նմա կատարեցան: Եւ 'ի վերայ այսր ամենայնի համարին և առնեն նմա որպէս միոյ 'ի սուտ մարգարէից՝ զորս նշանակեաց Մովսէս, եթէ մնոտօք պատրեսցեն զժողովուրդն: Ո՛վ կոյրք և հէգք, անարժանք գթութեան, զի զնշանն որ յայտ առնէր զՓրկիչն՝ առնուն 'ի պատճառս մահու խաչի նորին ինքեան Փրկչին:

Ամենայն իրաւամբք յաւելու աստանօր աւետարանիչն (Մատթ. ի. 18.), եթէ նախասացեալ էր Քրիստոսի՝ եթէ 'ի Հրէից եղիցի սկիզբն չարչարանաց իւրոց, և 'ի հեթանոսաց յարաձգեսցի. որպէս զի 'ի գլուխ ելանելով նախասացութեանն՝ քաջ 'ի բաց ծանուսցի, եթէ յայլն մանեալ առ Պիղատոս որպէս զչարագործ աշխարհագոյժ՝ կայ անձն Աստուծոյ Բարձրելոյ. ծանիցի ես, զի ոչ թէ չարութիւն նախանձողաց իւրոց բռնութեամբ կորզեալ ունի զնա այդպէս գձձաբար և անարգօրէն, այլ զի ինքն այնպէս հաճեցաւ, սեփական իւրով առաքինութեամբն, արժանաւոր 'ի փրկութիւն աշխարհի:

Ամբարձցեն Հրեայք զձայնս իւրեանց որչափ և կամին՝ ընդդէմ քո, Տէր իմ Յիսուս, 'ի յաճախութիւն զրպարտութեանց. գոչեսցեն և ես հոգւով, և որպէս գիտեմ և որչափ կարեմ, համաձայնելով սերովբէից և ընտրելոց քոց. Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր զօրութեանց, ամենակալ յաւիտենական. արժանի ես դու՝ տէր Աստուած մեր՝ մշտնջենաւոր օրհնութեան և փառա-

բանութեան. զի արարեր ընդ մեզ ըստ ողորմութեանքում, և ազատեցեր զմեզ 'ի ձեռաց հոգենախանձ թշնամւոյն: Ո՛վ Աստուածդ խոնարհեալ առ ուսուցանել ինձ զխոնարհութիւն, և արհամարհել զունայնութիւնս և զանհանճարութիւնս՝ զոր աշխարհս մեծարէ. ջրեա՛ յիս զհրապոյրս պատրանաց՝ որ զօշոտեալ զառածեցուցանէ զիս 'ի յարգ և 'ի սէր մնոտի պատուոյ: Մի տար ինձ թոյլ մեծարել զայլ պատիւ՝ բայց զծնեալն յառաքինութենէ, որ 'ի քո փառս վերածի. և ուսո ինձ եթէ մեծ նախատինք են այդպէս հպարտ լինել 'ի վարժարանի այսպիսւոյ խոնարհ վարդապետի:

Յամենայն կէտս խոկմանց չարչարանաց Քրիստոսի՛ յիշեցից վերադոչել, Սուրբ, սուրբ, սուրբ. դաւանելով զնա Ճշմարիտ Աստուած, և արժանի փառաց 'ի վիշտս իւր և 'ի նախատինս:

Կոչն Յիսուսի առաջի ատենին Պիղատոսի :

ՃՂԶ. Տեսեալ Պիղատոսի եթէ չիք Հրէից ամբաստանութիւն յատուկ ինչ յանցանաց զՅիսուսէ, առաւել արձակել զանպարտն քան պատուհասել յօժարելով, եմուտ անդրէն 'ի սրահ ատենին, և կոչեաց զՅիսուս առ 'ի քննել ստուգութեամբ ևս զդատ նորա ուրոյն մեկուսի յամբոխէն և յաղաղակէն: Ձեհարց ինչ զնա առաջի Հրէիցն ծանուցելոց չարակամ թշնամիք նորին. և զի յոյժ առ լաւ ունէր զնա, կամեցաւ մարդասիրաբար լսել և գիտել 'ի նորին իսկ բերանոյ, եթէ իցէ՞ Ճշմարիտ թէ սուտ հասարակ ամբաստանութիւն չարագործութեան նորա:

Նկատեսցի արդ Յիսուս կալով յոտին, ձեռօք յետս կապելովք, առաջի Պիղատոսի՝ որ իբրև դատաւոր բազմի 'ի բեմին. և քննեսցի քաջ զորվայր ժամանէ խոնարհութիւն արարչին երկնից և երկրի, Ճշմարտի Որդւոյ Աստուծոյ, որ դատաւոր ամենայն աշխարհի կարգեալ էր 'ի Հօրէն յաւիտենականէ: Առաջի կայ առն անսրբոյ, դիցապաշտի, առ 'ի քննիլ և դատիլ'ի նմանէ, որպէս յանցաւոր ոք և մահապարտ: Դեռ սակաւ ժամք են զի ըմբռնեցաւ 'ի պարտիզին, և ահա մատուցաւ յատեան երից դատաւորաց, Աննայի, Կայիափայ և Պիղատոսի, և ոչ գտին Հրեայքն բան Ճշմարիտ ամբաստանութեան զնմանէ: Ո՛վ, ո՛րպէս յամենայն դիմաց փայլէ անարատ անմեղութիւն նորա. և ո՛րպէս ընդ նմին և հեզահայեաց խոնարհութիւնն: Զերիս ամս վարդապետութեան հանապազ քարոզէր զխոնարհութիւն. և յայսմաւուր՝ չարչարանացն քարոզութիւն իւն յարդարէ զնոյն ինքն զխոնարհութիւն՝ օրինակաւ, քան զոր չիք ինչ ազդողագոյն:

Իսկ ես զո՞ր օգուտ շահիցիմ'ի վարդապետութենէ աստի խոնարհութեան, զոր այնքան յաճախ ետուր ինձ, ո՛վ Յիսուս, և բանիւդ և օրինակաւ: Դու սիրես և խնդրես զառիթս խոնարհութեան. ես գարշիմ և խորշիմ: Դու սփոփիս յամենայն դէպս խոնարհութեանդ, յիշելով միայն զի վասն իմ և առ սէր իմ խոնարհիս. իսկ ինձ խոնարհել առ սէր քո, աւա՜ղ, քանի՜ ծանր և խիստ թուի: Ո՛վ Յիսուս իմ, գթա յիս 'ի մեղաւորս չուառական և ամբարտաւան. ողորմեա՛ց եղկելւոյ մեղաւորիս՝ որ և 'ի հիքութեան իմում լի եմ քինու և սրտմըտութեամբ: Մի՜ հայիր 'ի հպարտութիւնս իմ՝ որ անարժան և ամենեին իսկ անարժան առնէ

զիս ողորմութեան քում. այլ ներելով տուր ինձ շնորհս նմանելոյ քեզ 'ի խոնարհութեան սըրբում։ Եթէ չունիմ ոգի սիրելոյ և խնդրելոյ զառիթս նուաստանալոյ, տուր ինձ գէթ տանել հանդիպելոցն՝ հեզագին համբերութեամբ, ըզքո օրինակդ յիշելով։ Ակն ունիմ թէ լսես աղաչանաց իմոց, քանզի գիտեմ զի խնդրեմ ինչ որ յոյժ հաճոյական է քեզ, և ախորժես լսել յինէն զայն։

Քննեցից, թէ ո՞ր առիթք իցեն յորս մարթ իցէ ինձ խոնարհել ընդ կարծեօք, թուեօք և դատաստանօք առորինագունին քան զիս. և յօժարութեամբ յանձն առից զայնոսիկ, ըստ Քրիստոսի օրինակին, որ արկ զանձն ընդ դատաստանաւ Պիղատոսի։

ԾՂԷ. Ըստ առանձինն ինչ ծանօթութեանց զոր առեալ էր Պիղատոսի զՔրիստոսէ՝ համարէր զնա մատնեալ առ ինքն որպէս ապստամբ և թագաւորութեան թևարկու, և զի երեսփոխան էր կայսեր՝ պարտ անձին վարկանէր քննել զնա ըստ այսմ գլխոյ. վասն որոյ և հարցանէր, թէ Դո՞ւ իցես թագաւոր Հրէից. որպէս զի եթէ իցէ այնպիսի ոք՝ յայտնի լիցի։ Իսկ ամենօրհնեալն Յիսուս զի՞նչ տացէ պատասխանի։ Յամբաստանիլն 'ի քահանայիցն՝ լուռ եւեթ կայր. այլ այժմ արժան համարի խօսել և ուսուցանել զՊիղատոս, և հերքել 'ի մտաց նորին զմթարսըն և զքաղաքական նախանձաւորութիւնս. և առ ամբառնալ զնա յիմաստս բարձրագոյնս՝ ծանուցանէ նմա, զի արքայութիւն իւր չէ յայսըմ աշխարհէ, այսինքն, ոչ է թագաւոր աշխարհական. և առ այս երաշխաւոր ունի զայն՝ զի ոչ գոն նմա գունդք զօրաց 'ի պաշտպանութիւն և ոչ քաղաքք նուաճեալք։

Ո՜վ, որպէս իմաստալից է պատասխանի փրկ-չին: Զայս կամի ասել, եթէ ոչ է թագաւորութիւն իւր երկրաւոր, առ խափանելոյ զիշխանութիւն երկրաւոր թագաւորաց. ոչ է թագաւորութիւն իւր ըստ թագաւորութեանց աշխարհի. թագաւորութիւնք զաղփաղփունք կարօտք ձեռնտուութեան զօրաց և զինուց. այլ արքայութիւնն է երկնաւոր, վերնային մտընքենաւոր, անվայրափակ, անմահական, որ ոչ է ընդ այլոյ ուրուք իշխանութեամբ, այլ ամենայն բարութեամբք պարառեալ: Փոյթ մեծ է Յիսուսի զի 'ի միտ առցի Ճշմարտութիւնս այս, ոչ 'ի Պիղատոսէ միայնոյ, այլ յամենեցուն 'ի մէնջ:

Իսկ ես զխորդ առնում 'ի միտ: Գոհանամ զքէն, Տէր իմ և Աստուած, զի ետուր ինձ լոյս մտաց ճանաչելոյ, և խոստովանելոյ և ատելոյ զմոլորութիւնս կենաց իմոց: Ոչ է թագաւորութիւն քո յայսմ աշխարհէ, այս այսպէս է, և այսպէս հաւատամ: Բայց թէպէտ և զայս ուսայ 'ի հաւատոց, տակաւին եղեն ինձ բազում պատրանք մտաց և յօժարութիւնք սրտի՝ և են իսկ առ ոչինչն զգալի աշխարհիս այսորիկ: Արդարև ոչինչ մի են ամենայն մեծութիւնք, ստացուածք, հեշտութիւնք, բարեբաստութիւնք, վիճակք, յառաջադիմութիւնք և բաղդ կենցաղոյս. այլ զհետ ոչընչիցս այսոցիկ որքան հոգւով և յօժարութեամբ ըղձակերտ եղէ մեծապէս, մինչև արհամարհելով զինքն իսկ զյաւիտենականութիւն, որպէս թէ ոչ իցեն հանդերձեալ կեանք: Ո՜վ Յիսուս, վարդապետ իմ, առ ինչ ասացեր զարքայութիւն քո ոչ գոլ յայսմ աշխարհէ, եթէ ոչ առ 'ի խրատել զիս՝ եթէ չէք ինչ յաշխարհի աստ արժանի յարգի և սիրոյ առ յինէն. և զի ոչ է հաճոյ աստուածային

քում, մեծվայելչութեան բնակել 'ի հոգւոջ որ սիրէ զաշխարհ՝ ապախտ առնելով զսիրովն որ առ քեզ։ Աղէ որ տասդ ինձ լոյս ճանաչել զճշմարտութիւն, տուր ինձ և զօրութիւն և քաջալերս կրթելոյ 'ի նոյն։ Բարձ յինէն զսէր աշխարհիս այսորիկ. և վերուղղեա զամենայն իղձ փափագանաց իմոց առ արքայութիւն շնորհաց քոց՝ 'ի կեանս յայսոսիկ, և առ արքայութիւն փառաց քոց՝ 'ի կեանսն հանդերձեալս։ Փոխոխեա զառիթս անենչանաց իմոց. որպէս զի անմահ հոգիս՝ անմահից ևեթ բարեաց լիցի ըղձակաթ։

Յասել իմում 'ի տէրունական աղօթսն՝ Եկեսցէ արքայութիւն քո, աղաչեցից զԱստուած տալ ինձ զօրութիւն կելոյ յայժմուս 'ի շնորհս իւր, առ 'ի կեալ 'ի հանդերձելումն յաւերժաբար 'ի փառս նորին։

ԾՂԸ. Մինչև ճառեալ Քրիստոսի զԹագաւորութենէ իւրմէ առ Պիղատոս, տայ նմա նշանակ զաստուածութեան իւրոյ, զգացուցանելով զի յայտնի են ինքեան և գաղտնիքն. և յայտ իմն այսպէս առնելով, եթէ հարցուած նորա զիւրոյ Թագաւորութենէն՝ ամբաստանութիւն է Հրէից զոր չարախօսեցին առ նա. վասն այսորիկ քաջ խոկացի զոր արժանն է նմա առնել։ Արդ նկատեալ դատաւորին միանգամայն և զանմեղութիւն Յիսուսի և զիմաստութիւն, վաղվաղակի խոնարհի, և իբրև 'ի չքմեղս լինելով, ասէ. Ճշմարիտ է զոր ասեսդ. և ես ոչ լինիմ քեզ մեղադիր, զի չեմ Հրեայ, և ոչ ինչ գիտեմ զգործոց քոց. ազգ քո էած զքեզ այսր, քանզի կամի զմահ քո. այլ աղէ ասա ինձ. Զի՞նչ գործ գործեալ է քո. եթէ ոչ քեզէն դու քեզ մեղադիր լիցիս՝ իմ չիք ինչ խէթ զքէն։ (Յովհ. ԺԸ. 35)։

Մանրակրկիտ թուղին իւրքս , այլ ոչ վայրապար 'ի գիր եարկ աւետարանիչն Յովհաննէս . բայց զի յայանի լինիցի ամենեցուն ամենևին ամբիծ անմեղութիւն Փրկչին , և ամենանիրաւ վճիռ մահուն զոր կնքեցին 'ի վերայ նորա Հրեայքն անօրէնք ։ Այլ , ասէ , 'ի յուշ ածցուք և զայն' զոր մարթ էր առնել առ Պիղատոս , որ յանկայրն լըսել զգործոց Քրիստոսի . Դա միով բանիւ արար զերկինս և զերկիր , և յերկինս և յերկրի' զամենայն զոր կամեցաւն ։ Եւ վասն ժողովրդեանդ որ այդպէս նենգութեամբ ամբաստան լինի զնմանէ' զինչ ինչ ոչ արար առ 'ի փրկել յեգիպտական ծառայութենէն' բազմապատիկ սքանչելեօք ։ Եւ զի՞նչ ոչ արար վասն փրկելոյ զաշխարհ , և զի՞նչ ոչ առնէ յայժմուս իսկ տառապանօքն' առ 'ի թափել զայն 'ի բռնութենէ դժոխոց ։ Եւ յայսր ամենայնի վերայ չարագործ համարի . և զի առմեղս մեր այդպէս համարեցաւ' զի յանձն իւր էառ զնոսին , վասն այնորիկ և յանձն առնու դատիլ այդպէս անարգաբար ։

Ո՛վ Յիսուս իմ , դու առ վերին երեսս ևեթ մեղաւոր ես' վասն մեղացն յինէն գործեցելոց և ոչ առ 'ի քէն . և յորժամ լսեմ զհարցումն դատաւորին որպէս առ յանցաւոր , թէ Զի՞նչ գործ գործեալ է քո , զարհուրեալ զողամ յանձն իմ խորհրդածելով , եթէ եկեալ է ժամանակ , զի և առ իս եղիցի հարցումն այս' որ առ քեզն , Զի՞նչ գործ գործեալ է քո ։ Հարցցի և հոգիս' 'ի պահու մեկնելոյ նորին 'ի մարմնոյ աստի , Զի՞նչ գործ գործեալ է քո ։ Եւ զի՞նչ լինիցի ինձ , յորժամ ստիպեսցի գիտակցութիւն իմ տալ պատասխանի , ոչ թաքուցանել կարելով և ոչ 'ի չքմեղս լինել անթուելի չարեաց իմոց ։ Աստուած իմ , չիք իմ այլ տեղի ապաւինի' բայց յողորմութիւնս քո , և այժմէն վասն այնր ժամու

խոնարհեալ պաղատիմ: Այժմիկ խոստովան ըննիմ առաջի քո զամենայն մեղս իմ, զի՞ մի յայնժամ յամօթ եղեց:

Զմտաւ ածից զմահն մերձեցեալ, և զդատաստանն եկեալ հասեալ. և փութացայց յաղերս ապաշաւանաց՝ որպէս թէ արդարև ժամանեալ իցեմ 'ի պայմանն՝ յորում չիք և ոչ վայրկեան մի դանդաղելոյ:

ՃՂԹ. Իբրև միանգամ և երկիցս ասաց Յիսուս եթէ արքայութիւն իւր չէ յայսմ աշխարհէ, տալով և զդալի հաւաստիս առ 'ի ցրել զխէթ կասկածանաց՝ զոր յարուցանէ նախանձ քաղաքավարութեան պետութեանց, հաճեալ հանդարտեաց Պիղատոս. տեսեալ ևս զի Յիսուս յայնմ աղքատութեան և գձձութեան վիճակի եղով՝ հեռի է յոյժ 'ի ցանկութենէ աշխարհի, առ որոյ ստացումն կարևոր են մեծամեծ յոյժ հանդերձանք, հարցանէր զնա. Ուրեմն թագաւո՞ր ոմն ես դու: Ոչ առ ըմբերանել կամ երգիծանել զնա, այլ առ նշաւակել Հրէիցն չարախօսաց. զի կամէր ասել, Զի՞արդ հնար իցէ ընդդէմ կայսեր յառնել առնդ այդմիկ աղքատի և տառապելոյ և յամենեցուն ձեռնթափ եղելոյ:

Ի հաւանել այսպէս Պիղատոսի եթէ չիք ուստեք վտանգ կողոպտելոյ յիւրմէ զթագաւորութիւն Հրէաստանի, տայր պատասխանի առ նմա Յիսուս, եթէ արդարև թագաւոր է ինքն. այնպէս իմն յայտ առնելով, զի թէպէտ և չիցէ թագաւոր երկրաւոր՝ ըստ օրինաց այլոց թագաւորաց, սակայն է իսկ թագաւոր և Ճշմարիտ թագաւոր, գերագոյն իշխանութեամբ, ըստ գուշակութեան մարգարէիցն. միանգամայն տալով իմանալ, զի վեհագոյն գոլով ամենայն թագաւորաց, եթէ կամէր՝ ոչ յայս պայման հիքութեան մտանէր:

Երկիր պագցուք, հոգի իմ, այսմ Թագաւորի երկնից և երկրի. Թագաւոր խաղաղարար, որ ոչ եկն պատերազմիւ յարուցանել կամ Թշնամութիւն ընդ ումեք, և անուման է յոյժ այլոց Թագաւորաց. Թագաւորք երկրի նեղեն զհպատակս իւրեանց և որպէս ստրուկս վարեն. իսկ սա Թագաւոր է և ինքնակալ տառատասխրտ, որ բարձրացուցանէ զծառայս իւր, զամենեսին Թագաւորս կացուցանէ. յաշխարհի աստ հպատակքն՝ տան զանձինս իւրեանց 'ի պահպանութիւն Թագաւորին, իսկ այս Թագաւոր դայ 'ի տալ զարիւն իւր և զկեանս 'ի փրկութիւն հպատակաց իւրոց: — Ո՛վ աստուածային Թագաւոր, որ յօգիս ընտրելոց քոց Թագաւորես, և որպէս բնաւից վեհագոյն՝ ամենեւին արժանի ես նախամեծար լինելոյ քան զամենայն արարածս. ես խոնարհեալ երկիր պագանեմ քեզ, և խոստովանիմ զոր եսդ, Թագաւոր և տէր ամենայն Թագաւորաց, Ճշմարիտ և օրինաւոր Թագաւոր իմ: Խոստովանիմ և ցաւիմ՝ զի ոչ ծանեայ ըզքեզ, նաև խոտեցի իսկ երբեմն, և առաւել քան զհրեայն չարութեամբ և նենգութեամբ՝ 'ի բաց մերժեցի: Աւա՜ղ անօրինիս, որ զքեզ'ի բաց Թողեալ՝ զմեղս Թագաւորեցուցի յանձին իմում: Զզջամ ընդ անհեդեդ սղալանս իմ: Այլ դուալ է, եկ, Աստուած իմ, և Թագաւորեա յիս. տացիր բովանդակ և զհոգի և զմարմին իմ. որպէս զի մի և մի ինչ մնասցէ յիս արտաքս 'ի ծառայութենէ ամենափառ մեծութեան քո:

Աղաչեցից զՅիսուս զի հաճեսցի այժմ Թագաւորել յիս շնորհօք իւրովք, որպէս զի արժանի եղեց և ես Թագաւորել ընդ նմա 'ի փառս իւր: Եւ Թագաւորեսցէ յիս՝ եԹէ եղեց խոնարհ, մեռելակիրթ և հնազանդ կամաց իւրոց:

Մ. Ի պատասխանւոջ իւրում առաց նախ Յիսուս առ Պիղատոս, եթէ թագաւոր ոմն է, այլ ոչ որպէս զթագաւորս թագաւորութեանց աշխարհի. ապա վերստին հաստատեաց եթէ իցէ թագաւոր գերագոյն և վսեմական օրինակաւ. և զի մի ոք կարծիցէ եթէ աշխարհականութեամբ և հնարաւորութեամբ կողոպեաց զուրուք թագաւորութիւն, յայտնեաց եթէ թագաւոր է 'ի ծննդենէ իւրմէ, որդի գոլով Հօր որ թագաւոր է, և թագաւորութիւն սեփհական է էութեան նորին. և յաւել, եթէ մարդ եղև՝ զի յայտնեսցէ որ ինչ էն, և ծանուսցէ զճշմարտութիւն առ ամենայն մարդիկ պատրեալս 'ի բանսարկուին հնարից, և 'ի թագաւորել յամենեսին՝ որք հաւատասցեն 'ի նա: Բանիւքս այսոքիւք յայտ առնէ Քրիստոս զպատճառ գալըստեան իւրոյ յաշխարհ, զի ոչ է վասն իշխանութեան, կամ մեծացուցանելոյ զանձն զօրութեամբ զինուց, կամ գանձուց փարթամութեամբ, և շքով փառաց. այլ առ ուսուցանել զճշմարտութիւն, որ հաստատեալն է յաւէտ յերկս յայսոսիկ ծանօթութիւնս. եթէ է Աստուած մի միայն, միակ յէութեան, երրեակ յանձնաւորութեան. եթէ Յիսուս Քրիստոս ճշմարիտ որդի է Աստուծոյ, մարդացեալ 'ի փրկութիւն մարդկան. և եթէ, կայ թագաւորութիւն երանաւէտ յաւիտենական, զոր ապաշխարութեամբ ախտից՝ մաթ է ժառանգել: Այս ճշմարտութիւն անհրաժեշտ հաւատալի է առ 'ի փրկութիւն: Այլ ո՞ կարիցէ հաւատալ կամ կեալ ըստ խրատու վարդապետութեան Քրիստոսի, եթէ ոչ օժանդակիցի 'ի նորին իսկ շնորհաց: Ո՛վ գաղտնիք, ո՛վ խորհուրդք Աստուծոյ Բարձրելոյ: — Այո՛, արդարև, առանց Աստուծոյ շնորհացն ոչ է հնար գործել ինչ

վասն յաւիտենից կենաց. և արժան է ինձ այսու ոչ 'ի յուսահատութեան խորհուրդս բերել, այլ 'ի խոնարհութեան և ապաւինութեան: Առանց շնորհաց չէ հնար գործել ինչ. ճշմարիտ է այս. այլ ճշմարիտ է և այն, զի եթէ զլասցին ինձ շնորհք՝ վասն իմոց յանցանաց իցէ. ապա հարկ ուրեմն է և ոչ ուստեք երկնչել կամ զանգիտել ինձ՝ բայց յանձնէ իմմէ: Առանց շնորհաց չէ հնար գործել ինչ, ճշմարիտ է այս. այլ ճշմարիտ և այն է, զի Քրիստոս մասնաւորեաց ինձ զշնորհս զայս. և հիմ ոչ յուսացայց եթէ տացէ ինձ զշնորհսն, այն որ ետ վասն իմ և զարիւն իւր և զկեանս:

Աստուած իմ, որ խոստացար տալ շնորհս խնդրողաց, խոնարհիմ առաջի մեծութեան քում խորին պատկառանօք, և խնդրեմ 'ի քէն շնորհս աներկմիտ հաւատալոյ անայնի՝ որոց կամիս զի հաւատացից. շնորհս՝ աներկեւան յուսալոյ ամենայնի զոր կամիս թէ յուսացայց. շնորհս՝ ուղղութեամբ գործելոյ ըստ հաւատոց և յուսոյ իմոյ: Վստահ եմ 'ի քեզ, Յիսուս իմ, մի տար թոյլ չարութեան իմոյ զդէմ ունել և արգելուլ յինէն զհոսանս առատաղէղ բարութեանց քոց:

Ի զուր գանգատիմ թէ ոչ պարգևին ինձ շնորհք ինչ կարևորք առ 'ի կրթութիւն կատարելութեան. ես ինքնին արգել լինիմ շնորհացն՝ զունայնութեամբք հարկանելով: Այժմ ուշ եղեալ՝ թօթափեցից զանձն իմ:

ՄԱ. Հարկ է թէ մեծայարգ և յոյժ պատուական իցէ ճշմարտութիւն, քանզի Որդին Աստուծոյ մարդացեալ յայնր սակս, ասէ եկեալ 'ի ծանուցանել զայն՝ կոյր և տգէտ աշխարհի: Պիղատոս ինքնին զմայլեալ 'ի սակաւ

բանից անտի Յիսուսի՝ բոլորքի տենչանօք ուսանելոյ և իմանալոյ զճշմարտութիւն. և հարցանէ. Որպիսի՞ ինչ իցէ ճշմարտութիւն՝ զի հասու լինիցի բնութեան և յատկութեանց՝ որոց անգիտանայր: Այլ, ո՜հ, քանի՜ դժուարին իցէ հոգւոյ զունայնութեամբք զակատելոյ պարապել յուսումն ճշմարտութեան: Այն ինչ հարցեալ Պիղատոսի զՅիսուս թէ զի՞նչ իցէ ճշմարտութիւն, իսկ և իսկ ոչ սպասեալ պատասխանւոյ, մեկնի 'ի նմանէ և երթայ խօսակցիլ ընդ Հրեայսն. իղձք ունայնութեանց հեղձուցանեն 'ի նմա զբաղձանս ճշմարտութեան. աշխարհասէր ոմն է նա. վասն որոյ ունի 'ի ներքս և արտաքոյ բազում ինչ արգելս խափանարարս սիրոյ ճշմարտութեան և հնազանդութեան ձայնին Քրիստոսի:

Քանի՜ք չիցեն յաշխարհի, նաև յեկեղեցական դասուէն, նմանեալք յայսմիկ Պիղատոսի, որք դրդեալք 'ի լուսոյ ուստեք շնորհաց՝ իղձ լինին ուսանել զճշմարտութիւն վարուց իւրեանց, այլ ոչ գտանեն ժամ պատեհ 'ի դարձ զգաստութե. քանզի հարեալք զունայնութեամբք մերթ յայս և մերթ յայն զբաղին գործ: Քանի՜ք ըղձակերոք լինին բարի մտօք ուղղել զախտս, ստանալ զառաքինութիւնս, միտ դնել փրկութեան հոգւոյն. այլ յողդողք յառաջադրութեան մտաց՝ թոյլ տան վայրապար անցանել ազդմանցն և 'ի փորձութիւնս փարին: Աւա՜ղ չուառականացն, որք հանդոյն Պիղատոսի վաղվաղակի անցանեն 'ի լուսոյ 'ի խաւար և 'ի ճշմարտութենէ 'ի ստութիւն:

Մի յայնցանէ եմ և ես, և թերևս վատթարագոյն քան զնոսա. բազում անգամ այց առնէին ինձ ողորմութիւնք քո ներշնչութեամբք 'ի լուսաւորել և 'ի շարժել զիս, առ 'ի քեցիլ յու-

նայնութեանց, և 'ի կրթել զհոգի իմ 'ի խո_
կումն Ճշմարտութեան, և զսիրտ իմ 'ի սէր
Ճշմարտութեան. իղձ լինիմ յայնժամ երթալ
զհետ ազդմանց քոց. այլ, աւաղ, զխարդ վաղվա_
ղակի թուլացեալ փոխիմ 'ի մտաց անտի. զի և
'ի նմին պահու զոր արժանն թուի ինձ գոր_
ծել բարի ոչ գործեմ. և ոչ 'ի բարւոյն սկսե_
լում հանապազօրդեմ: Իմ չարին ոչ անծանօթու_
թիւն Ճշմարտութեանն է, զի Ճանաչեմ. Յիսուս
իմ և վարդապետ իմ, եթէ Ճշմարտութիւնք են
պատուիրանք քո, Ճշմարտութիւն խրատք քո,
Ճշմարտութիւն օրինակ քո, Ճշմարտութիւն
վարդապետութիւնք քո. Ճանաչեմ և՛ս զի հարկ
է ինձ յարմարել զվարս իմ առ մէն մի 'ի Ճըշ_
մարտութեանց քոց. և կամ ևս է ինձ առնել
զոր պարտիմս. և սակայն զոր 'ի միտս ունիմ
Ճշմարտութիւն՝ գործով ոչ կատարեմ: Նւ երբ
իցէ զի տացի հաստատութիւն յողդողդու_
թեանս իմում: Աստուած իմ, քեզ նուիրեմ
զկամս իմ. և աղաչեմ վառել և կազդուրել
զայն եռանդագին առաջադրութեամբ՝ յամենայն
ժամ և յամենայնի հնազանդելոյ քեզ կատարե_
լապէս, և մի երբէք հրաժարելոյ 'ի սրբոյ ծա_
ռայութենէ քումէ:

Պատուական են ամենայն իղձք ծառայելոյ
Աստուծոյ. այլ օգնեն ինչ ոչ՝ եթէ ոչ հզօր ջա_
նիւ կատարեսցին: Արդ քննեցից եթէ որո՞վ օգ_
նոյ պնդութեամբ փափագիցեմ և առաջադրի_
ցեմ ես:

Վերստին ամբաստանութիւն Հրէից զՅիսուսէ:

ՄԲ. Ի սակաւուց անտի բանից զոր ասացն Յիսուս, 'ի վերայ հասանէ Պիղատոս անմեղութեան նորա. և նշուլիւ լոկով մարդկային բանի՝ տեսայ զամբարշտութիւն և զչարութիւն Հրէիցն. և արդարապէս հաւանի 'ի սրտի իւրում, եթէ չէ նա արժանի դատապարտութեան: Փափագելով թափել զնա 'ի հալածանացն՝ ելանէ արտաքս 'ի սրահէն. և ածեալ ընդ իւր զՅիսուս, գնայ 'ի պատշգամն հրապարակահայեաց, անդանօր առաջի ամենեցուն պաշտպանել նմա. և ասէ բարձրաձայն. Ես և ոչ մի ինչ պատճառս մահու գտանեմ յայրս յայս: Իսկ գլուխք քահանայիցն անդրէն զաղաղակ բարձեալ բողոքեն զնմանէ. և զի ոչ գիտեն որով յանցանօք մահապարտ զնա ցուցանել, զայն պնդեն որպէս եղեռն անթողլի՝ զի զԹագաւորութեան Թեկն ածէ: Այլ արդարացեալ էր նա յայսմ բանի, 'ի փորձ քննութեան մատուցեալ. և եթէ էր ինչ գտեալ 'ի նմա Պիղատոսի գէթ յայդմ՝ ոչ ասէր զնա անդատապարտ գոլ: Ի դէպ է յիշել, զի և Յիսուս ինքնին կարէր առ 'ի զամօթի հարկանել զՀրեայսն իբր զպարտիչս՝ 'ի չքմեղս լինել յայտնի փաստիւ, յիշեցուցանելով զհինգ հազար մարդիկն յանապատին՝ որք կամէին Թագաւորեցուցանել զնա, և ինքն խոյս ետ 'ի նոցանէ. այնպէս յայտնի էր անփառասիրութիւն նորա: Եւ սակայն լռեաց Յիսուս. և այս իսկ են զարմանալիք 'ի լռութեանն.

զի յայն սակս իւր զի լուէ՝ Պիղատոս առաւել եւ հաւանեալ հաստատի ընդ նորա անմեղութեանն և ընդ Հրէից կամակորութիւն:

Ո՜վ բարի Յիսուս, զոր Հայր անուանեաց Աքանչելի և Հզօր. արդարև սքանչելի և հզօր ցուցար 'ի բանս քո. այլ ոչ ինչ պակաս սքանչելի և հզօր և այժմ 'ի լռութեան քում. զի նովին իսկ լռութեամբ արդարացուցանես զճշմարտութիւն և նկուն առնես զստութիւն, և առաւել ես փայլեցուցանես զանմեղութիւն քո: Խնդակից լինիմ քեզ, զի թէպէտ և դատապարտելոց ես, այլ և 'ի դատաւորէն քումէ անպարտ վկայիս: Տուր ինձ աղէ նմանող լինել քումդ առաքինազարդ լռութեան: Զանձն իմ խաբեմ ես, յորժամ 'ի դէպս դէպս 'ի պաշտպանութիւն անձին ջերանիմ առ 'ի ջրել զչարախօսութիւնն. այլ դու, Փրկիչ իմ, հակառակ այդմ ցուցանես ինձ օրինակ. և 'ի դէպ է ինձ ուսանել, զի եթէ առոյգք իցեն չարախօսութիւնք զինէն՝ հարկ է ինձ խոնարհել և ուղղել զթերութիւնս. եթէ սուտք՝ արժան է ինձ հանդարտել լռել, և յիշել զի չէք իբրև զհեզութիւն և զհամբերութիւն հզօր վկայ անմեղութեան: Գիտեմ զոր վայել է ինձ առնել. այլ միթէ արարից... Ոչ վստահիմ բնաւ յանձն իմ. և չունիմ տեղի վստահութեան, բայց միայն յօգնականութիւն շնորհաց քոց, Աստուած իմ:

Խնդրէ անձնասիրութիւն իմ՝ քրթմնջողս և զրպարտիչս նշաւակել զչարախօսան զինէն. ախտ ապառում մոլութեան է այս, զոր անկ է ինձ դուն գործել և ուղղել:

ՄԴ. Երիս ամբաստանութիւնս մատուցանէն զՅիսուսէ առ Պիղատոս. եթէ, Նորալուր վարդապետութեամբ խռովեցուցանէ զժողովուրդն.

արդելոյ տալ հարկս կայսեր. և ասէ զանձնէ լինել խոստացեալն Մեսիա Թագաւոր Հրէից։ Այլ, բայց, զիա՞րդ քաջայայտ է ստութիւն դոցին։ Զի երբ ապստամբեցոյց զժողովուրդն, և ո՛չ մանաւանդ զգաստացոյց՝ խոնարհութիւն և ապաշխարութիւն քարոզելով. երբ եղեն կասկածք զվարդապետութենէ նորա, և ոչ մանաւանդ զարմանք և սքանչացումն. երբ բանսարկու եղև նա՝ հերձուածս յարուցանել, և ո՛չ մանաւանդ պատուիրէր սէր և խաղաղութիւն։ Իսկ զհարկ արքունի ե՞րբ խափանեաց, և ո՛չ մանաւանդ զնոյն պատուիրեաց և բանիւ և օրինակաւ իւրով։

Այնքան աներկմիտ է Պիղատոս եթէ սնոտի զրպարտութիւնք են այդոքիկ, զի և անգամ ոչ մատուցանէ ՚ի քննութիւն։ Իսկ կամելն Քրիստոսի Թագաւոր լինել, յայտնի է և այդմ անհաւատալի ստութիւն լինել։ Այս միայն է ստոյգ, զի Քրիստոս է Մեսիա և փրկիչ աշխարհի։ Այլ ո՜հ, ցո՞ր վայր ժամանէ ամբարշտութիւն Հրէիցն՝ անցեալ ըստ ամենայն չափ, զի գլուխ չարագործութեանց համարին զկատար բարեգործութեանցն, զբարենշանն քան զամենայն գործս իմաստութեան և ամենազօրին ամենակալ զօրութեանն Աստուծոյ առ ազգս մարդկան։

Բայց դու, հոգի իմ, խորամուխ լեր, նկատեա զինչ ՚ի ներքս յինքեան գործէ Յիսուս՝ տեսանելով զանձն այդպէս յանիրաւի հալածեալ ՚ի գլխաւորացն ոխերիմ թշնամեաց իւրոց։ Առ Հայր իւր յաւիտենական վերընծայէ զնախատինսն՝ որ ՚ի խաբէութեանց անտի ՚ի վերայ իւր անկանէին. և չառ համարեալ զի անմեղութիւն իւր յայտնի է առաջի Աստուծոյ, խորագոյն խոնարհի և լռէ. ընդունի և հաճի ընդ անարգանսն, որպէս ընդ արդարադատ փոխարէն

պարտուց ամբարտաւանութեան մերոյ առ մեծվայելչութիւնն Աստուծոյ:

Ո՜հ, որքան պարտական եմ քեզ, Յիսուս, յօրհնել, 'ի գովել և 'ի գոհանալ, և մանաւանդ 'ի սիրել զքեզ. այլ, ո՜հ, որքան և անփոյթ եմ 'ի պարտս իմ. որքան մանաւանդ հեռի 'ի նմանողութենէ օրինակաց քոց: Դու ինքնակամ երթաս ընդունել նախատինս. և ոչ միայն յանձն առնուս, այլ և հաճիս. իսկ ես ոչ թէ միայն ատեմ և խորշիմ յամենայնէ որ անպատուել ինչ զիս թուիցի, այլ մանաւանդ ջանամ հնարիմ գամագիւտ լինել գովութեան և պատուոյ. և ոչ գտանեմ գիւր՝ եթէ որք ոչ զիս գովեսցեն և պատուեսցեն, ըղձակերտ լինելով սնոտի փառաց: Ո՜վ, քանի՜ մեծ է խոնարհութիւն քո. քանի՜ մեծ իմս հպարտութիւն: Աղէ, Ճառագայթեա նշոյլ մի 'ի շնորհացդ, Աստուած իմ, լուսաւորել զիս ծանօթութեամբ եթէ քեզ միայնոյ վայելեն գովութիւնք և պատիւք, ինձ ամենայն նախատինք և անարգանք աշխարհի: Արժանի ես դու ամենայն բարւոյ, քանզի լի ես շնորհօք, Ճշմարտութեամբ և սրբութեամբ. իսկ ես ամենայն չարի, քանզի լի եմ անօրէնութեամբք:

Առաջադրեցից չխնդրել երբէք գովեստ. և թէ գովեսցայց ինչ՝ զգուշացայց 'ի հաճութենէ, Աստուծոյ վերընծայելով զամենայն փառս. այլ չարարից ինչ առանց Աստուծոյ օգնականութեան, զոր արժան է ինձ հայցել թախանձանօք:

ՄԴ. Վառեալ բորբոքին քահանայապետք և ծերք ժողովրդեանն 'ի մեծացուցանել զամբաստանութիւնսն. որք թէ և ծանուցք իցեն և յոյժ նախատականք, Յիսուս և ոչ մի բան և ոչ կէս բանի ասէ 'ի ջրել զնոսին. սուտ է ամենայնն, և

մարթ է դիւրաւ հերքել զայնոսիկ: Եւ զի դիտէ Պիղատոս զվատութիւն նոցին, բարեյօժար կամօքն 'ի փրկել զգատափետեալն անպարտ, համոզէր լինել նմա յորդորաբար ասելով. Ո՞չ լսես, որքան դոքա զքէն ամբաստանեն. և զիարդ չտաս պատասխանի առ այդքան ամբաստանութիւն: Ե՛ն են Քրիստոսի օրինաւոր պատճառք պատասխանւոյ. քանզի խնդիրն որ յուզի զնմանէ՝ մեծ և յոյժ կարևոր է, զի վասն համբաւոյ վարուցն և վասն կենացն է. բարեշնորհ դատի նմա դատաւորն, նա մանաւանդ նոյն ինքն իսկ դատաւորն խրախուսէ զնա, յօժարեալ արձակել զնա, միայն եթէ լինիցի նա 'ի չքմեղս: Այլ յայսր ամենայնի վերայ լռէ Յիսուս:

Իսկ ընդէ՞ր լռիցէ: Արդարև անարժանք են պատասխանւոյ նորին ամբաստանողքն չարաճճիճիք և կամակորք. անարժան է և ինքն Պիղատոս՝ վասն մնոտի հնարագիտութեանն, որով թէպէտ զարդարութեան կողմն ձգնիցի՝ սակայն կամի և Հրէիցն շնորհուկս առնել: Այլ 'ի դէպ է ասել թէ առաւել վասն ոչ կամելոյն ազատիլ՝ լռէ Յիսուս. զի մի ազատութեամբ իւրով՝ փըրկութիւն աշխարհի անագանիցէ. լռէ դարձեալ զի օրինակաւ իւրով ուսուսցէ մեզ, եթէ որպէս պարտ իցէ համբերող լինել յարկածս վասնդայ:

Ո՜վ աստուածային Փրկիչ, զո՞ր շնորհս մատուցից սիրոյ քում: Եթէ և ամենայն մասունք մարմնոյս 'ի լեզու փոխէին, և եթէ զլեզուս հրեշտակաց ես առնուի, էր ինձ հնար ըստ արժան բաւականին գոհանալ և օրհնել զքեզ: Փոքու ինչ մարթ էր քեզ փրկել զանձն 'ի մահուանէ. այլ փրկիլ չկամիս՝ զի 'ի մահ վարեսցես վասն իմ: Ո՜վ գթութիւն, ո՞վ սէր՝ արդարև արժանաւոր Աստուծոյ միայնոյ:

Այլ եթէ ոչ կարիցեմ առնել փոխարէն սիրոյ քում ըստ չափու բաւականի, ընդէ՞ր գոնեա ոչ փութայցեմ 'ի նմանողութիւն քումդ օրինակի: Բազում անգամ քրթմնջես դու, հոգի իմ, մերթ զի դատեն զքեզ և չար խօսին, մերթ զի չարաչար միտս ընծայեն գործոց քոց, և զոր վասն բարւոյ արարեր՝ չարի համարին: Ո՛վ ընդունայն և անհանճար տրտունջ: Տես զՅիսուս զրպարտեալ, զիա՛րդ լուռ եւեթ կայ, և համբերութեամբ տանի ամենայնի: Այլ դու ինքն, Յիսուս իմ, որ այդպէս գեղեցիկս խրատես զիս օրինակաւ քով, յորդորեա զիս և զօրացո շնորհօք քովք առ 'ի նմանութիւն քո կրթիլ:

Ճշմարիտ համբերութիւն է գիտելն լռել ըստ օրինակի Յիսուսի՝ 'ի դէպս յորս մարթ էր ինձ օրինաւոր և շահաւոր լինել խօսելն և պաշտպանել զանձն. բայց ոչ որ ըստ մարդկային խոհեմութեան լռութիւնն է բաւական, այլ որ ըստ Աստուծոյ սիրոյն է:

ՄԵ. Տեսեալ Հրէիցն՝ եթէ արհամարհ թուի դատաւորին ամբաստանութիւն իւրեանց որպէս սուտակապաս ինչ, ամբառնան զձայնս իւրեանց՝ իբրու վառեալք նախանձու, և գոչմամբ աղաղակի խնդրեն դատապարտել զՅիսուս: Իսկ Յիսուս ոչ ինչ ընդ այն խռովի. այլ հանդարտ արտիւ, հեզահամբոյր և լուրջ կերպարանօք թոյլ տայ ասել զոր կամին, և ինքն լուռ կայ. մինչև ինքնին իսկ Պիղատոսի զարմացեալ՝ սքանչանալ ընդ տեսիլն նոր և անսովոր և ոչ ուրեք յաշխարհի երևեալ: Մեծ յոյժ լինել զզարմանս Պիղատոսի՝ յայտնէ աւետարանիչն, վասն նորատեսիլ հանդամանաց իրացն եղելոց. քանզի գիտէ զՅիսուս անմեղ լինել. գիտէ ևս զի զգօն և քաջախօս է նա, և կարէ ճարտարու-

թեամբ և յաջողութեամբ 'ի չքմեղս լինել. իսկ տեսեալ զնա յակներև վտանգի մահուն լսելով և կրելով անխռով և աներկիւղ, յապուշ իմն հարկանի 'ի հիացմանէն. հրաշս նշմարելով դերմարդկային առաքինութեան 'ի սքանչելի արիութեան, որում չէր երբէք տեսեալ նման:

Աւադիկ, հոգի իմ, Փրկիչ քո և կեցուցիչ, արդարև Հզօր, որ ոչ ընաւ զանգիտէ 'ի համախումբ զօրութեանց դժոխոց և աշխարհի. զայս օրինակ հանդէս արար արութեան 'ի տապալել զթշնամիս իւր, ոչ բռնութեամբ և պերճութեամբ, այլ համբերութեամբ և խոնարհութեամբ: Ո՛հ, քանի՜ խաբեալ է որ կարծէ զառաքինութիւն արութեան 'ի կորով ուժոյ՝ որ վանիցէ բռնութեամբ զբռնութիւն և արհամարհանօք զարհամարհանս: Յայս պատրանս կեցի և ես կուրօրէն, Աստուած իմ. և սովին ստացայ զունակութիւն չար՝ առ ասողն ինձ բան խոցոտիչ՝ պատասխանել հնդապատիկ և վեցպատիկ խստագոյնս ևս. և առ դոյզն կասկած թէ իցէ ոք ինձ նախանձորդ՝ ոչ դադարեմ 'ի նախատելոյ զնա և արհամարհանս զնովաւ կուտելոյ՝ որպէս և որքան կարեմն: Որպիսի՞ գնացք են իմ այս՝ օտարոտի 'ի քումմէդ, ո՛վ Յիսուս: Դու 'ի չարչարանս քո հանապազ զիս նկատէիր. ես 'ի դէպս նմանելոյ քեզ՝ չունիմ զքեզ առաջի աչաց: Այս պատճառք են ամենայն չարեաց իմոց: Ո՛հ, իցիւ թէ մտախիրս և ուղղմն յիշէի զքեզ, Թագաւոր փառաց, և զոր արարերդ և կրեցեր վասն իմ: Աղէ, տպաւորեա 'ի մտի և 'ի սրտի իմում զհամբերութիւն, զխոնարհութիւն, զլռութիւն՝ որով վարեցար ընդ թշնամիսն քո զրպարտիչս. և տո՛ւր ինձ շնորհս գոնեա փոքու իւիք նմանող լինելոյ քեզ սրբութեամբ. դէթ ըստ չափու բաւականի հասանելոյ 'ի փրկութիւն և 'ի վայելս փառաց քոց:

Ամաչեցից յիշելով զանհեդեդ ապերախտութիւն իմ, զի յօրինակս Յիսուսի ճանաչելով զոր պարտիմս առնել՝ ոչ առնեմ։ Լացից և աղաչեցից զԱստուած Բարձրեալ՝ ներել ինձ և տալ օգնութիւն։

Առաքումն Յիսուսի 'ի Պիղատոսէ առ Հերովդէս։

ՄՋ. Անյողդողդ կայ Պիղատոս յարդարադատ կամսն, չդատապարտել զՅիսուս՝ զոր անմեղ ճանաչէ. բայց և Հրէայք յամառեալ կան 'ի նենգութեան իւրեանց՝ թախանձելով դատապարտել զանմեղն. և ոչ գիտելով զինչ այլ գործել կամ ասել, յետ ամենայնի մատուցանեն զայս փուրսիչ, եթէ խռովիչ ոմն է Յիսուս, որ ոչ թէ զաւակաւս ոմանս ապստամբեցոյց, այլ ժողովուրդ բազում, յամենայն Գալիլիա և յամենայն Հրէաստանի։ Այլ իմ իմք օգտեցէ ամբաստանութիւնդ այդ. — բայց առ 'ի ցուցանել 'ի Յիսուս ևս քան զևս անպարտ անմեղութիւն, և 'ի Հրէայսն՝ չարաչար ևս կամակորութիւն։ Եթէ գոյր ինչ յանցուած զորմէ կարէին ճշմարտապէս ամբաստանել զՓրկիչն, անհաւատալի է թէ առ գթութեան լռէին կամ անմեղադիր առնէին, և ցարդ ասացեալ էր զայն 'ի լրումն ըղձից ատելութեան և նախանձու իւրեանց. այլ ոչ այլ ինչ ունին՝ բայց զայն զի վաստակէր Յիսուս ճանապարհս առնելով և աշխատէր քարոզելով զճշմարտութիւն և ուսուցանելով զոգէտս. — և չիցէ՞ այդ մեծ ևս գովութիւն ազնիւ առաքինութեան նորին։ Ծաղր

տանէ Պիղատոս ինքն զայդպիսի ամբաստանութիւն. յայտնի լինի և իմաստութիւն Յիսուսի՝ լռելովն. զի զի՞նչ պէտք իցեն նմա պաշտպանել անձին՝ ուր ջատագով կայ նմա համբաւ մեծահռչակ սքանչելեացն զոր գործեաց 'ի Գալիլիա և 'ի Հրէաստանի:

Տես, հոգի իմ, զմարգարէագիր անէծսն զոր ձգեն աւաղելի Հրեայքդ 'ի գլուխս իւրեանց, չար իմն մեծ ցուցանելով զմեծ բարին զոր գործեաց մարդացեալ Որդին Աստուծոյ: Իցե՞ս արդեօք և դու պարտական մեծի մեղացդ այդոցիկ. քանի՞ցս արդեօք կիրս, հաշածանս և անիրաւութիւնս համարեցար զնախանձն՝ որով այլք կշտամբեցին զքեզ վասն յանցանաց քոց: Քանի՞ցս աշխարհական կարծեօք կեղծաւորութիւն համարեցար զջերմն եռանդն ընկերացդ. խօթամտութիւն՝ զխոնարհութիւն, փոքրոգութիւն՝ զհամբերութիւն, և խիղճս դառնութեան մաղձի՝ զաղօթսն, զմեռելութիւնս և զհրահանգս բարեպաշտութեան: Այս է չար համարել զբարին, ըստ օրինակի Հրէիցն՝ զՅիսուս զրպարտողաց: Այլ իցէ՞ թէ ճանաչիցեմ զմեծութիւն չարեացս այսոցիկ իմոց:

Որպէս շնորհ է ընտրելոց բարիս քաղել 'ի չարէն, այսպէս և մերժելոցն գործ է չար 'ի բարւոյ հանել. 'ի մերժելոց անտի եմ և ես հանգոյն Հրէիցն՝ զորոց ունիմ զկերպարանս, եթէ ոչ զղջացայց և սրբեցից յանձնէ զախտս զայս: Ո՛հ, Յիսուս իմ, ցաւէ ինձ ընդ չարութիւն իմ ամենայն՝ որ 'ի մահաբեր սերմանէ անտի նախանձու վերաբուսեալ: Շնորհեա ինձ աղէ կայծակն մի սուրբ սիրոյ, որ բարերարոյն է և համբոյր, որ ոչ դատի չար, այլ և խնդայ ընդ բարին այլոց:

Մխիթարեցայց հայելով ընդ Յիսուս՝ զորոյ

առաւել ես փայլեցուցանէն զանմեղութիւն՝ զսպարտութիւնքն. և եդից 'ի մտի նմանող լինել նմա 'ի վիշտսն և 'ի հաւանութիւն կամացն Աստուծոյ՝ 'ի կրելն զմեղադրանս և զանիրաւութիւնս:

ՄԷ. Ի տագնապ մեծի տարակուսանաց ըմբռնեալ կայ Պիղատոս. քանզի սաստ պարտս անձին համարի ազատել և արձակել զՅիսուս, իսկ անտի խիթայ խռովեցուցանել և ամբոխել զՀրեայս՝ եթէ ազատ կացուսցէ և արձակիցէ զՅիսուս: Արդ 'ի լսելն եթէ Յիսուս վրդովէ զԳալիլիա դաւառ իշխանութեան Հերովդէի, և զի նա 'ի Գալիլիա իսկ սնեալ իցէ, խորամանկ հնարագիտութեամբ պատճառս առնու զայն ճողոպրելոյ 'ի դատողութենէ անտի, և յանձն առնէ զնա առ Հերովդէս, որ իբրև Հրեայ ճշմարիտ կամ սուտ, դտանէր յայնժամ յԵրուսաղէմ'ի սակս տօնի զատկին. որպէս զի նա արասցէ զոր պատշաճն դատիցի:

Խնդան ընդ այն և Հրեայք. քանզի Հերովդէս որդի էր անագորոյն հօր որ կոտորեաց զամենայն մանկունս Բեթղեհեմի, և ինքն իսկ խժդըժագոյն բարուք՝ տուեալ էր գլխատել զՅովհաննէս Մկրտիչ. ակն ունէին թէ տացէ և զվճիռ մահուան Յիսուսի: Իսկ Յիսուս թէպէտ և վաստակեալ և պարտասեալ էր 'ի կապանացն և 'ի տանջանաց զոր կրեր 'ի պահէ ըմբռնմանն մինչև ցայն վայր, այլ իսկոյն բուռն հարեալ 'ի նա ձեռն ուժգնակի 'ի սրահից անտի Պիղատոսի, և շապաւ տանէին ընդ փողոցս խռնեալս 'ի բազմութենէ ամբոխի դիմելոյ 'ի տեսիլն նորադէպ: Տե՛ս և զարմացիր, հոգի իմ, զիարդ զամենահեղն Փրկիչ ձգձգեն, լլկեն, անդոսնեն և անողորմ հարկանեն: Այս չորրորդ ճանապարհ է

յորժ՝ ցաւագին և նախատալից զոր առնէ նա. նախ 'ի Պարտիզէն վարեալ առ Աննա, յԱննայէ առ Կայիափա, 'ի Կայիափայէ առ Պիղատոս, և արդ 'ի Պիղատոսէ առ Հերովդէս: Եւ Թշնամանք զոր գնեն նմա՝ ես քան զևս առաւելուն, աճելով աճեն արտմութիւն և մոլութիւն Թշնամեացն: Գաղարեա այդր վայրիկ մի, հոգի իմ, խոկա և յեղյեղեա հիացմամբ. Ահա որպիսի՜ս կրէ Որդին Աստուծոյ վասն իմ. յեղյեղեա դարձեալ պատկառելով և զամօթի հարկանելով. Եւ յետ այդքան կատականաց և լուտանաց զոր վասն իմ կրեաց՝ ես ոչ ունիմ ժոյժ և առ դոյզն ինչ խայթուած բանի վասն նորա, և ոչ բնաւ բուռն առնեմ անձին յաղթել որ ինչ ծանր ինձ թուիցի՝ վասն նորա: Ո՜վ ամօթ, ամաչել ընդ կիրս որ վասն ծառայութեանն Յիսուսի, մինչ նա ինքն Յիսուս ամենևին ոչ ամաչեաց այնքան կրել վասն իմ:

Ո՜վ Յիսուս իմ, քաղցրացո ինձ զնմանելն քեզ 'ի նուաստութիւնս՝ զոր այնքան սիրով կրեցեր վասն իմ. գիտեմ զի հաճոյ եղեց քեզ՝ որքան յաւէտ նմանող լինիցիմ քեզ յայսմիկ. վասն այնորիկ յանձն առնում յօժարութեամբ առ սէր քո զանարգանս և զնախատինս՝ զոր 'ի փառս քո առաքեսցես ինձ: Ծանր և խիստ է առ անձնասիրութիւն իմ՝ առաջադրութիւնս այս. այլ ամենայն քաղցր և դիւրին լիցի ինձ՝ եթէ հեղուցուս յիս զսէր քո, զոր և ժտիմ առ 'ի քէն. քանզի գիտեմ եթէ ոչ են քեզ հաճոյ համբերութիւնք որ ըստ մարդկան ականէ:

Համարեցայց եթէ զայս ինչ կամ զայն նախատինս անցուցեն ընդ իս, իսկ ես զի՞ գործելոց իցեմ. համբերի՞ց արդեօք: Աստուած իմ, չկարեմ ինչ խոստանալ իմովսանն. շնորհեա ինձ զվստահութիւն՝ զոր վայել է ինձ ունել յանբաւելի մեծվայելչութիւն քո:

Յիսուս յանդիման լինի Հերովդէի:

ՄԸ. Ազդ եղեալ առ Հերովդէս եթէ ահա գայ Յիսուս յանդիման լինել նմա՝ ածեալ 'ի դահճաց և 'ի հրէական զօրականէն, փութայ բազմել յարքայական դահոյսն, և բազում անձկութեամբ մնայ ժամանելոյ նորա. և իսկ և իսկ 'ի տեսանելն զնա՝ խնդայ և ուրախ լինի մեծապէս. ընդունի զնա սէթևէթաբար իմն ընդունելութեամբ, ոչ որպէս զչարագործ ոք, այլ այր փարելի հռչակաւոր իմաստութեամբ և զօրութեամբ սքանչելագործութեան, որում 'ի վաղուց բաղձայր հանդիպել:

Ո՛վ Յիսուս, Բան յաւիտենական, իմաստութիւն անստեղծ, որպիսի՛ գեղեցիկ արդ պատեհ քեզ խօսելոյ և յայտնելոյ զօրութիւն վարուցդ և զվարդապետութեան: Իշխանդ այդ ցանկացեալ փափագէ յոյժ լսել զպատգամս բերանոյ քոյ. և եթէ խօսեսցիս՝ քաջ գիտես զի ոչ արհամարհեսցիս այլ մանաւանդ և գովեսցիս: Խօսեաց ապէ. և որպէս երբեմն հաճէիր ճառ արկանել առ ժողովուրդն և լսէիր գովասանութիւն, մի ծանր թուեսցի քեզ և այժմ առնել խօսս յարքունիս աստ, ուր թագաւորն և դրանիկքն ամենեքին յօժար կամօք մեծարեն զքեզ:

Այլ Յիսուս լուռ կայ. և որպէս գրեալն էր զնմանէ (Սաղմ. ձթ. 5.) եթէ իրաւամբք յարդարեսցին ամենայն խօսք նորա, իրաւացի համարի արդ զլռութիւնն: Եւ ընդէ՞ր: — Քանզի տեսանէ զՀերովդէս թէպէտ և յօժար 'ի լսել և 'ի գովել, այլ ոչ և յանսալ բանիցն և 'ի պատուել

այնու հաւատովք զոր արժան է ընծայել Աս-
տուծոյ. վասն այնորիկ առաւել ընտրէ անար-
գել քան վայրապար գովաբանել: Ո՛վ լռութիւն
մեծախրատ քան զամենայն դաս: Իմանամս, հոգի
իմ, զոր ուսուցանէն քեզ Տէր քո: Դիւրին է
խրատդ յիմացումն՝ եթէ կամիցիս հրահանգել
գովլն. և այս իսկ է, փախչել՝ որքան հնար է՝ 'ի
մարդկան գովեստից, և մի դասել ընդ այնոսիկ
որք խօսին առ որսալոյ փառս և գովութիւնս:
Աստուած իմ, աւադիկ յայսմ սխալակեմ ես,
կուրութեամբ՝ անձինս սիրոյ. յոյժ ըղձակերտ
եմ գովեստից և անհնարին հետամուտ, որպէս
կերակրոյ ինչ հաստատնոյ: Եւ չիցէ՞ այդ յիմա-
րութիւն, կամ իցէ՞ ինչ յիս՝ արժանի գովու-
թեան: Իմովսանն ոչ ինչ ունիմ բայց զչարիս.
և այդոքիկ պարսաւանաց են արժանի. և եթէ
գուցէ ինչ յիս կամ զինև բարի՝ քոյ է այդ ա-
մենայն, և քեզ վայելէն փառք վասն այդորիկ:
Ո՛վ ամենախոնարհ Փրկիչ, առաւել սիրող ան-
արգանաց քան պատուոյ, հալածեա յինէն զո-
գի սնափառութեան որ բնանայն յիս, և ծանո
ինձ զճշմարտութիւն ապշութեան իմոյ 'ի խըն-
դրելն իմում փառս 'ի մարդկանէ. զհպարտու-
թեան իմոյ՝ 'ի գրել անձին զգովութիւն որ ոչ
վայելէ ինձ, և զգողութեանս՝ 'ի սեփականելն
ինձ զպատիւ՝ որ քեզ միայնոյ է անկ:
Որ խնդրէ գովել 'ի մարդկանէ՝ խստան գտա-
նի առ 'ի յԱստուծոյ: Եւ զինչ օգտիցէն ինձ ա-
մենայն գովեստք աշխարհի՝ յորժամ եկեսցէ Տէր
'ի դատել զիս, և թերևս յայն սակս և դատա-
պարտել իսկ:

ՄԹ. Երկուս իրս խնդրէ Հերովդէս 'ի Քրիս-
տոսէ. մի, տեսանել սքանչելիս ինչ գործեալ 'ի
նմանէ. որպէս, փոխել զջուր 'ի գինի, աճեցու-

ցանկել զհացն, և զսոցին նմանս, որ զարմանս ած_ցեն, հաճեցուսցեն զհետաքրքիր բնութիւնն, և ափշեցուսցեն զգայութիւնս. մինչ, լսել բանս 'ի նմանէ. քանզի լուեալ էր եթէ խօսիցի յայժ քաղցր և հիանալի զօրութեամբ: Վասն այսորիկ պէսպէս հարցուածս 'ի մէջ արկեալ՝ յորդորէ զնա ասել, թէ ո՞ ոք իցէ. զի՞նչ վարդապետու_թիւն նորա, կամ որո՞յ զօրութեամբ այնքան սքանչելիս գործիցէ. և ամենայն փութոյ անդու_թեամբ թախանձէ և համոզկեր լինի զի տացէ պատասխանի: Իսկ Յիսուս ոչ թէ միայն ոչ զի_ջանի 'ի կամս նորա՝ առնել սքանչելիս, այլ և ոչ արժանի համարի զնա պատասխանւոյ: Որպէս առաջի Պիղատոսի վեհաբար վարեցաւ Յիսուս՝ տալով այնչափ միայն պատասխանի որչափ ար_ժան համարեցաւ և հաճեցաւ, և ծանոյց զինքն Թագաւոր բարձրեալ 'ի վերայ ամենայն Թագա_ւորաց աշխարհի. այսպէս և առաջի Հերովդէի կայ 'ի նմին գերիշխանականն վսեմութեան. և յայտ առնէ եթէ Թագաւորն այն ոչ ունի իշխա_նութիւն տալոյ բանալ զբերան իւր. յանձն առ_նու հպատակել կրթութեամբ հեզահամբոյր համբերութեանն, այլ ոչ և կարողութեամբն և իմաստութեամբ: Իբրև Աստուած զլանայ յայ_տնել զաստուածութիւն իւր այնմ՝ որ յանձն պատրաստ լինի գոռոզութեամբ. որպէս մարդ՝ խոնարհի, և հրաժարէ 'ի ցոյցս առնելոյ:

Ուսիր, հոգի իմ. Քրիստոս եկն յաշխարհ առ 'ի դատապարտել և ոչ առ շնորհուկս առնել ամ_բարտաւանութեան մարդոյ: Ո՜վ, քանի՜ կարևոր է խոնարհութիւն՝ առ 'ի վայելել զմխիթարու_թիւնն Աստուծոյ. քանի՜ կարևոր է խոնարհու_թիւն՝ առ 'ի լսել և ուսանել զյաւիտենական ճշմարտութիւնս Աստուծոյ: Յանձն Հերովդի ցուցանէ քեզ Քրիստոս որպէս Աստուած՝ թէ

զիա՛րդ չէ նմա փոյթ վասն հպարտից. որպէս մարդ՝ յանձին իւրում ցուցանէ թէ զիա՛րդ արժան իցէ խոնարհ լինել: Կարէ գործով և բանիւ հայթհայթել յոյքունիս անդ փառս՝ որում և արժանի է, այլ արհամարհէ զայն: Եթէ և ես արդարև արժանի ինչ էի պատուոյ, 'ի դէպ էր արհամարհել զպատիւ աշխարհական քան ընդունել ցնդական: Այլ ո՛ւր են յիս արժանիք պատուոյ. — և սակայն անարժան իսկ գոլով՝ ցանկամ և փափագեմ այնմ, և չարաչար զհետ կրթիմ:

Աստուած իմ, տո՛ւր ուղղել զփառասիրութիւն իմ և 'ի ստանալ զխոնարհութիւն, օգնականութեան քում կարօտիմ. են յիս նշոյլք ինչ ճանաչելոյ զմեծութիւն քո և զոչինչն իմ, այլ ոչ լոյս բաւական. աղէ՛, փրկիչ իմ ամենագութ, վասն որոյ ասացաւն՝ եթէ զպատրոյգն առկայծեալ ոչ շիջուսցես, այլ առաւել ես վառեսցես զի տացէ լոյս, լուսաւորեա զիս առ 'ի ճանաչելոյ քաջ զանձն իմ, և այնու վերանալոյ 'ի քոյ ծանօթութիւնդ. ճանաչել զհիքութիւնս իմ, առ 'ի կանգնել և խնդրել զողորմութիւն քո:

Զէ ինձ արժան խնդրել այլ փառս, բայց զարդարև փառացին, զոր Աստուածն տացէ ընտրելոց իւրոց, ըստ իւրաքանչիւր արժանեաց, յաւուրն դատաստանի:

ՄԺ. Իսպառ լռէ Յիսուս առաջի Հերովդեայ. քանզի ամենևին անարժան է Հերովդէս լսելոյ զաստուածային նորա բանս. անարժան՝ վասն զեղծամեղծ պագշոտութեան յոր զակատեալ է, և որով փոխեալ իմն յանբան անխմաստ, որ չունի միտս ոչ յիմանալ զբանս Աստուծոյ, և ոչ պատրաստութիւն օգտելոյ նովիմբ. անարժան՝ և վասն խորամանկ կեղծաւորութեանն, որ կեր-

պարանոք բարեպաշտութեան պատրուակէ զչա-
րութիւն, և ցոյցս տայ հոգեկանս՝ մինչդեռ 'ի
հեշտալիս զգայութեանց ևեթ հատեալ կայ.
չարաչար կամօքն՝ անձամբ անձին սատելով, և պա-
տուել կերպարանելով զՅիսուս՝ գործովն՝ որով
ծաղր առնէ զսրբութիւն նորա: Արդարապէս
ապա լուէ Փրկիչն աշխարհի: Այլ, ո՜հ, քանի՜ չա-
րագուշակ է լռութիւն Աստուծոյ՝ որ ոչ ևս խօ-
սիցի ընդ հոգւոյ: Չէր ուսեալ այնպէս երկիւղ
սրբոց Հարց՝ որպէս 'ի լռութենէ Աստուծոյ.
վասն այսորիկ և Դաւիթ յաճախագոյնս յեղյե-
ղէր 'ի սաղմոսն՝ աղաչելով զՏէր մի լռել. զի վա՜յ
է հոգւոյ՝ ընդ որում ոչ ևս խօսիցի Աստուած՝
սրբովք ներշնչութեամբք. քանզի զի՞նչ սիրիցէ
և զճշմարտութիւն՝ եթէ ոչ ունիցի զվարդա-
պետն հրահանգիչ ճշմարտութեան. զի՞նչ դը-
նիցէ ընդ ձանապարհս արքայութեան երկնից՝
եթէ ոչ առաջնորդն գնա ընդ այն ուղղիցէ: Ա-
հագին են իրքս: Եւ որքան ճշմարիտ է եթէ ան-
արժան են լսոյ ձայնին Աստուծոյ պղծասէրքն
և կեղծաւորք, այնքան արժան է ինձ հոկել 'ի
վերայ իմոյ անձին աչիւ մեծաւ, առ 'ի զգուշա-
նալոյ յերկուցուն սատի չարեաց: Անհնարինս
զդէմ ունի Աստուծոյ, որ անբաւ մաքրութիւնն
է, զազիր մեղք պղծութեան. անհնարինս հա-
կառակի նմա՝ որ ճշմարտութիւնն է անբաւ,
գարշելի մեղքն կեղծաւորութեան: Եւ զի՞նչ
զարմանք իցեն եթէ ոչ խօսեսցի Տէր ընդ պղ-
ծոյն և ընդ կեղծաւորի:

Աստուած իմ, Փրկիչ իմ ամենագթած, աղա-
չեմ զքեզ վասն սիրոյ քո անբաւելոյ, մի երբեք
սրտմտիր 'ի վերայ իմ այնքան՝ մինչև լռել յինէն
ողորմութեանց քոց: Խոստովան լինիմ զի չեմ
արժանի լսելոյ զձայն քո 'ի սրտիս, որ լի է
պղծութեամբ, մնոտեօք և չարութեամբ. այլ

տղէ, գիտ դու որ ամենահնարդ ես, աղագս զերծանելոյ ինձ յախտից խմոց և կրից, և արժանի լինելոյ լսել զձայն քո սիրական: Մի առներ ընդ իս որպէս ընդ Հերովդէի, չբարբառել և մի բան. խօսեաց ընդ իս, ներշնչեա յիս, բարեգութ Յիսուս, 'ի բաց դարձուցանելով զիս 'ի չարէն և յորդորելով 'ի բարին: Յոյժ ցանկացեալ փափագեմ լսել զձայն քո, քանզի անձկացեալ եմ անսալ քեզ յամենայնի:

Զզուեալ առեցից զերկոսին ախտն, զպղծութիւն և զկեղծաւորութիւն, կշռելով զաղտեղութիւն նոցին, և զատելութիւն յաչս Աստուծոյ Բարձրելոյ:

ՄԺԱ. Յուսումն գիտութեան մերոյ՝ անկ է քննել և այլ ևս երկուս պատճառս, որոց աղագաւ ոչ բարբառեցաւ Քրիստոս առաջի Հերովդէի: Առաջին այն, զի 'ի վաղուց լուեալ էր թագաւորին զհամբաւ վարդապետութեան և սքանչելեաց Փրկչին, և թէպէտ ցանկացեալ էր տեսանել զնա և լսել 'ի նմանէ, այլ ունելով և պատեհս, որպէս 'ի քարոզելն Քրիստոսի 'ի Գալիլեա, չարար փոյթ տեսանելոյ և լսելոյ. քանզի չարաչար հարեալ զժամանակեայ իրօք, զանց զմշտնջենաւորօքն առնէր: Իսկ Աստուած արդարապէս զլանայ զշնորհս իւր այնոցիկ՝ որք զունայնութեամբք աշխարհի զակատեալք՝ յուլանան 'ի պարտս իւրեանց: Ի դերև ելանեն ամենայն իղձք բարիք՝ եթէ ոք ոչ գտցէ ժամանակ գործելոյ զնոսին:

Երկրորդ պատճառ լռութեան Քրիստոսի այս է, զի ունելով արդ Հերովդի ժամ բարեպատեհ վայելելոյ յաստուածային ներկայութիւն նորին, և տեսանելոյ և լսելոյ 'ի չահ հոգւոյ իւրոյ, չառնէ ինչ փոյթ զհոգեկան օգտէն. այլ

միայն ցանկայ լինուլ զհետաքննութիւն զգայա-
րանացն 'ի տեսանել զգործս սքանչելեաց նորա,
և զհետաքննութիւն մտացն՝ 'ի լսել զճարտարու-
թիւն խօսիցն: Իսկ Աստուած արդար դատաս-
տանաւ ժխտէ զշնորհս իւր առ այն որ խնդրէն
ոչ բարեպաշտ մտօք՝ այլ մնոտի հետազօտու-
թեամբ: Այսպէս պատահէ 'ի սակս հետա-
քննութեանն չօգտել ինչ 'ի լրոյ քարոզութեանց
և յընթերցուածոյ հոգեկան գրոց: Առ սիրտ
ընդվայրաքննին ոչ խօսի Աստուած:

Յաւելցի և այլ պատճառ լռութեան Յիսու-
սի, որ և կարևորագոյնն է: Եթէ խօսէր Յիսուս
կամ գործէր ինչ սքանչելիս, դիւրին էր Հերով-
դէի արձակել զնա 'ի ձեռաց Հրէից. վասն այ-
նորիկ լռէ, զի մի մահ իւր խափանեսցի, և մի
աշխարհի փրկագործութիւն անագանեսցի: Ո՜վ
սէր սքանչելահրաշ. և զինչ իցէ ինձ հնար,
ո՜վ Յիսուս, այդմ փոխարէնս առնել. կամ զինչ
շնորհս մատուցանել վասն այնքան բազմապա-
տիկ պարտուց իմոց: Լռութիւն քո այդ անա-
ւառ արդարութիւն էր առ Հերովդէս, այլ ինձ
ողորմութիւն սիրարկու: Յաւէլ ինձ, Տէր,
զնոյն ողորմութիւն, ոչ լռելով՝ այլ խօսելով:
Չեմ արդարև արժանի լսելոյ երբէք զբարբառ-
քոյ, վասն պղերգութեան իմոյ, որով բազում
անգամ ոչ հայեցայ 'ի լոյսն զոր ծագեցեր 'ի
միտս իմ, և վասն վայրապար հետազօտութեան
իմոյ, որով յուսմանն ճշմարտութեանց՝ առաւել
զմիտս իմ հաճել ցանկացայ քան զկամս: Այլ
դու, Տէր, հայեաց 'ի քո արժանաւորութիւնդ,
և մի յիմս անարժանութիւն: Բո՛րձ յինէն զա-
մենայն խափանարար շնորհաց քոց. որպէս զի
կարող եղեց ընդունել արժանապէս զխօսսին, և
արժանապէս գործակից լինել ամենայն ազդմանց
նոցին:

Վասն պղերգութեան իմոյ յաստուածայինսն, և վասն վայրապար հետաքօտութեան մտաց՝ 'ի քարոզս, յաղօթս և 'ի հոգևոր ընթերցմունս, յորպիսի և յո՛րքան շնորհաց ոչ վրիպիմ։ Ո՜հ, որքան 'ի դէպ է ինձ ուղղել զանձն իմ։

Ծանականք Յիսուսի յարքունեիս Հերովդեի :

ՄԺԲ. Երկնչին Հրեայքն եթէ դուցէ արձակիցէ Հերովդէս զՅիսուս. վասն այնորիկ առաւել ևս յամառեալ բարձրաձայն աղաղակաւ յեղյեղեն զամբաստանութիւնսն. և տեսեալ զի ոչ ինչ օգտեն բողոքք, հաւանական թուի թէ քահանայապետիցն որ եկեալ էին ընդ Յիսուսի՝ մօտ մատուցեալ առ Հերովդէս՝ առ 'ի գրգռել զնա և խստացուցանել զսիրտն, յուշ արարեալ իցէ նմա զկոտորած մանկանցն 'ի ձեռն հօր նորա 'ի պատճառս առնս այսորիկ միայն, որ 'ի ծննդենէ անտի խուռն թագաւոր Հրէից հռչակիւր. յիշեցուցեալ ևս եթէ 'ի սակս սորին ևեթ առն՝ յանդիմանեաց զնա Յովհաննէս Մկրտիչ վասն տրոփանացն. յաւելեալ 'ի նոյն և զամենայն բարուրս զայրացուցիչս խորամանկ, դառող և անդութ ոգւոյ։ Զարութեան է այդ ամենայն՝ նախանձաւորութեան կերպարանաւ վարագուրեալ։ Հնա՞ր ինչ էր նախանձու յիմարագոյն ևս լինել 'ի դատման իւրում, կամ առաւելագանց 'ի զայրույս իւր։

Այլ դարձեալ լռէ Յիսուս. և թէպէտ քաջիկ տեսանէ զի խօսելովն ստասցի համբաւ զգօնի, իսկ լռելովն ադէտ համարիցի և պանդուր, լաւ համարի զ'ի ժամուն համարեալ ադիտութիւնն և յիմարութիւն, քան զցոյցս առնել իմաստու-

թեան իւրոյ։ Անհասանելի է յաշխարհէ վարդապետութիւնս այս Քրիստոսի. քանզի ոչ գիտէ աշխարհ եթէ ո՛ւր եղեալ իցեն կամ որով ճանապարհաւ գտանիցին գանձք ճշմարիտ իմաստութեան. վասն այնորիկ անթիւ են յիմարք յաշխարհի, քանզի և անթիւք են որք շատախօս լինին վասն հանճարեղս երևելոյ։ Այլ Յիսուս իւրով օրինակաւ ցուցանէ մեզ, թէ քանի՛ պատուական է և փառացի լռութիւն երկայնամիտ. մինչդեռ հալածեալ 'ի զրպարտչաց և 'ի քսու արանց ոչ բանայ զբերան իւր, ոչ 'ի նըկուն առնել զնախանձորդսն և ոչ 'ի ջատագովել զանձն։

Ո՛վ քաջահմուտ վարդապետ, քանի՛ քաջ տեղեկացեալ գիտես զմարդկային մեր տգիտութիւնս. ո՛վ քաջափորձ բժիշկ, քանի՛ ճարտար գիտես բժշկել զմարդկային մեր հպարտութիւն։ Լռութեամբ յայտնեցեր զանմեղութիւն քո. լռութեամբ կատարեցեր զգործ իմաստութեանդ. լռութեամբ ստացար քեզ զկոչումն գալոյն եկելոյ 'ի սպանդ առ 'ի փրկութիւն աշխարհի։ Ո՛վ բարի Յիսուս, հայեաց ողորմագին աչօք 'ի հիքութիւնս իմ։ Տեսանես թէ քանի՛ հեռի եմ ես 'ի քումդ նմանութենէ. քանի՛ անհմուտ 'ի գիտութիւն լռութեան։ Լռեմ երբեմն, յորժամ իմաստութիւն համարիմ զլռելն. ոչ կարեմ լռել՝ յորժամ տկարութիւն համարիցի լռելն։ Ահա յամենայն դիմաց նշաւակի հպարտութիւն իմ։ Եւ ո՞ կարիցէ տալ ինձ զօրութիւն նուաճելոյ զայն՝ եթէ ոչ դու, տալով ինձ 'ի սովորական քումդ խոնարհութենէ։ Որ խոնարհն է՝ ոչ դժուարի 'ի լռել. և զի խոնարհութիւն պակասէ յինէն, զայս խնդրեմ 'ի քէն, և այսմ ակն ունիմ յուսով լսելի լինելոյ առ 'ի քէն։ Գիտեմ զի հաճիս ընդ խոնարհս. և այսու

յուսամ գտանել առ 'ի քէն շնորհս խոնարհութեան՝ զոր հայցեմս, առ 'ի հաճոյ լինել քեզ:

Է երբեք զի կարեւոր վարկանիմ զխօսելն առ 'ի չքմեղս լինել և 'ի պաշտպանել զանձն իմ. այլ եթէ առ սէրն Աստուծոյ՝ լուռ ևեթ կացից, գիտէ Աստուած լաւ ևս արդարացուցանել զիս լռութեամբս քան եթէ խօսելով:

ՄԺԳ. Յաղում ինչ հարցեալ Հերովդէի զՅիսուս, և ոչ մի ինչ լուեալ 'ի նմանէ պատասխանի, պչարի իբրև 'ի գերև ելեալ յակնկալութեանցն, և սրտմտեալ՝ նշանացի և բանիւք արհամարհանաց այպանէ և նախատէ զնա. համարելով ապուշ ոք, աղամար և անհանճար, որ լռիցէ վասն ոչ կարելոյ ընտրութիւն առնել զատման և ասել վայելչապէս բանս երկուս: Տե՛ս, զո՞ր նուաստութիւն անարգութեան իջուցաւ անքաւելի իմաստութիւնն Աստուծոյ, արժանաւորն ամենայն զարմանաց և պաշտաման յաշխարհէ: Տե՛ս. զիա՛րդ յամենայն առեանս հրէականս և աշխարհականս Հրէաստանի և Գալիլեայ՝ վարին ընդ Յիսուս՝ Որդի բարձրելոյն, և Բան Հօրն երկնաւորի: Քանի՛ այպանութիւնք և անարգանք ամենուստ, մինչև առ կատակելի յիմար ունել զնա: Եւ նա որպիսի՛ համբերութեամբ և հեզագին խոնարհութեամբ տանի ամենայնի: Եւ առաջի Աննայի և Կայիափայ, և առաջի Պիղատոսի և Հերովդէի տեսանի համբերութեամբ կացեալ և լռեալ. ոչ զի ոչ կարէ կամ ոչ գիտէ 'ի չքմեղս լինել, այլ զի այսպէս վայելուչ համարի, և ոչ կամի. հանապազ կըրթելով զսիրան յամենակատար ներգործութիւնս վսեմական առաքինութեանց:

Ո՜վ. Յիսուս իմ, Աստուած Ճշմարիտ, վասն էր կամեցար զամենակարող աստուածութեան

քո մեծութիւն և վայելչութիւն ծածկել ընդ այնքան խոնարհութեամբ. և զի՞ պիտոյ էր քեզ այդքան նուաստ և անօրինակ խոնարհութիւն: Ծանիր, հոգի իմ, զՃշմարտութիւնն. ոչ առ 'ի հարկէ ինչ կամ առ 'ի պէտս իւր խոնարհեի Քրիստոս, ինքնին գոլով գերագոյն և ամենափառ բարի. այլ վասն մեր խոնարհեցաւ, իբրու զի չգոյր ինչ որով մարթ էր տալ փոխանակս անհնարին հպարտութեան մերոյ առ Հայրն երկնաւոր՝ քան զայս խոնարհութիւն: Ո՜վ սքանչելեացս. ո՜վ հրաշալի տեսլեանս: Աստուած ոմն ուրեմն այսքան խոնարհի վասն իմ՝ մինչև համարիլ պանդոյր ոք և բախած մոօք՝ որ ոչ գիտիցէ բանիւ մոաց վարիլ: Աստուած ոմն հաճի այսքան անարգիլ վասն իմ 'ի սակս ամբարտաւանութեան իմոյ: — Այո՛, ես հպարտութեամբ իմով անպատուեցի զԱստուած. և ոչ իւիք չինեցաւ պատիւն Աստուծոյ՝ բայց նուաստութեամբք Որդւոյ Աստուծոյ: — Ո՜վ հպարտութիւն, քանի՛ ուրեմն խոտելի իցես: Եւ սակայն այս ախտ է հզօրագոյնս կռուեալ յաղխս իմ, յոր սովորեալս եմ, և առ որ չունիմ ինչ փոյթ ուղղութեան: Ո՜վ ամենախոնարհ Փրկիչ, տո՛ւր ինձ վայելել յարգիւնս խոնարհութեան քո, տալով ինձ եռանդն և զօրութիւն յաղթելոյ ամենայնիւ բռննացելումս յիս այսմ մոլութեան: Յայս հաստատեալ է փրկութիւն իմ. կարեմ առնել զոր կամիս, այլ ցորչափ հպարտ իցեմ՝ 'ի մերժելոց համարի եմ:

Յամօթ եղեց, զի Աստուծոյ կամաւ գալով յերկնից յերկիր 'ի գործել և յուսուցանել զխոնարհութիւն, ես որ երկրաւորս եմ՝ խուժուիմ խոնարհել յերկրի: Ո՜վ որդն նեխաշաղիղ և գոռոզամիտ:

ՄԺԴ. Որ Պիղատոսի՝ վասն լռութեանն՝ զարմանայ եղև առիթ Յիսուս, այժմ Հերովդէի առիթ համարի ցասման և անարգանաց: Թէպէտև ոչ 'ի միոյ յերկոցունց 'ի նոցանէ դատապարտեցաւ, այլ և ոչ արձակեցաւ, զի և ոչ մի 'ի նոցանէ իշխէր զդէմ ունել սրտմտութեան Հրէից ամպարշտաց: Այլ միտ դիր չարութեան մարդոյ՝ և Աստուծոյ տնտեսութեանցն: Ասիւր զՀերովդէէ 'ի բազմաց հետէ ցանկացեալ տեսանել զՅիսուս՝ մինչ սա հեռի էր. իսկ մինչ արդ առընթեր կայ՝ տես որպէս խոտէ զնա: Քանի՛ չարութիւն իցէ ցանկալ պարգևացն Աստուծոյ՝ առ արհամարհել ծաղու և այպանօք: Այլ տես ինձ՝ զիարդ և վերին խնամքն տնտեսէ, զմարդոյ չարութիւն գործակցել իւրոց բարձր խորհրդոց: Հարկ է Քրիստոսի մեռանել, քանզի այս էին անյեղլի կամք Աստուծոյ. այլ և դատապարտելոց էր այնու օրինակաւ որով ամենեցուն յայտնի լիցի անմեղութիւն նորա. վասն այնորիկ յետ անմեղ ճանաչելոյ զնա Պիղատոսի, անմեղ ճանաչէ և Հերովդէս, քանզի ոչ համարի զնա արժանի պատժոյ: Եթէ ճշմարիտ էր ամբաստանութիւն Հրէիցն՝ մոլորեցուցիչ ժողովրդեան լինել Յիսուսի, ոչ այդպէս վարկպարազի առ պանդոյր ոմն ունէր զՅիսուս՝ այլ խստութեամբ դատէր. և զայն պատեհ առեալ ոխաթափ լինելով դատապարտէր իսկ: Յայտնի ուրեմն է եթէ անմեղ է Յիսուս, և 'ի զուր ստախօսեն Հրեայք:

Ո՛վ, քանի՛ պաշտելի են խորհուրդք քո, Աստուած իմ. խնդամ, զի անմեղութիւն քոյ յայտնի լինի ամենայն աշխարհի. քանզի հարկ է զաչացու և ամենաչար լինել առ 'ի չճանաչելոյ զայն: Ուրախ լինիմ, ո՛վ Սուրբդ սրբոց և ամենեւին սուրբ յամենայն 'ի գործս քո, զի 'ի վերայ ա-

մենայն նախանձու հակառակութեան մարդկան և սատանայի՝ ամբիծ յամենայն արատոյ երևի անմեղութիւն քո։ Այլ տուր և զիմս ողբալ չարութիւն՝ որով ամպարշտեցայն հաւատարիմ։ Ոչ ուրեք չփափագեմ յաղօթս իմ՝ շնորհաց լուսոյ քո և օգնութեան, առ 'ի ճանաչել և կատարել զհաճոյս կամաց քոց. այլ ըստ անբաւ բարութեան քում տալով չափ քո ինձ զշնորհդ զայդ, զիա՛րդ վարեալ իցէ իմ նոքիմբ։ Զեն ինչ թաքուն 'ի քէն ապաշնորհութիւն իմ և անհաւատարմութիւն։ Քո շնորհք են այնքան հոգեշնչութիւնքն որովք յորդորիմ մերթ 'ի նուաճել զկիրս իմ և մերթ զիմացուածս. այլ առ ոչինչ դրեմ ես զշնորհսդ զայդոսիկ, զի ոչ վարեմ յօգուտ, նա մանաւանդ զհակառակն գործեմ ազդեցլոցն յիս 'ի ներքուստ։ Իսկ զի՞նչ աստցից զանձնէ՝ եթէ փափագիցեմ շնորհացն՝ և արհամարհիցեմ զնոքօք, որպէս և յաճախակի արհամարհեմս իսկ։ Ա՜հ, Յիսուս իմ, եղծ ջնեա զչարութիւն իմ. զօրացո՛ զթուլութիւնս, և տուր ինձ զշնորհսն կարևորս յարդիւնական գործակցութիւն միոյ միոյ 'ի շնորհացդ։

Վասն ամենայն շնորհաց որք պարգևիցին ինձ՝ տալոյ եմ համարս յատենի Աստուծոյ. և թերևս յարհամարհութենէ միոյ 'ի նոցին կախեալ կայցէ յաւիտենական կորուստ իմ։ Ամենայն փութոյ պնդութեամբ գուն գործեցից կեալ ահիւ և դողութեամբ և հաւատարմութեամբ։

ԺԵ. Զօրէն Հերովդէի և ամենայն դրանիկք նորա ամբառնան ընդդէմ Յիսուսի, մի քան զմի յառաջելով յանդոսնել զնա. խառնեալ են ընդ երեսս խումբք զօրականաց Գալիլեացւոց և Հրէաստանեայց. և ամենեքին առ խեղագար ունելով զնա՝ խաղ առնեն զնովաւ այսր անդր

Ձգձգելով ձաղանօք և կատականօք 'ի չարաչար նախատինս նմա. միաբանեալք յանարգօրէն այպանման և ժողովուրդն Հրէաստանի՝ յորոց միջի ծնեալն է, և Գալիլիա՝ ուր սնեալն էր: Ի կրթանս ամենակատար խոնարհութեան նորա՝ ամենայն չարաչար բռնաբարութիւնք և նուաստութիւնք կուտին զնովաւ. և 'ի գրգռելն ամենեցուն զնա 'ի տրտունջ կամ 'ի բողոք, նա ոչ տրտնջայ և ոչ բողոքէ, և ոչ ինչ այլ առնէ մարդկութիւնն տառապեալ՝ բայց յանդիման առնել զկարիս իւր և յանձն լինել առ Հայրն յաւիտենական՝ յարհամարհանս իւրում: Մրցին ընդ միմեանս ամբարիշտքն թէ ո՞ կարիցէ առաւել երգիծուցանել և այպանական առնել զնա. այլ եթէ գոյր հնար տեսանել զկիրս սրտին Յիսուսի, տեսանէր արդեօք թէ որպէս յամենայն բոպէ կրկնէր առաքինի ներգործութիւնս՝ մանաւանդ զսիրոյ, մերթ առ Աստուած՝ յանձն լինելով 'ի կամս նորին, մերթ առ թշնամանողս իւր, աղօթելով վասն նոցա, և ընդ միոյ միոյ որ առ 'ի նոցանէ ձաղանացն՝ հայցելով նոցին օրհնութիւնս երկնաւորս:

Յիսուս սկզբնատիպ է նախասահմանելոյն, եկեալ յուսուցանել զօրինակ փրկութեան անձանց. և զի քարոզեալ էր բանիւ, թէ որ կամի զանձն իւր փրկել՝ 'ի հեզութիւն կրթեսցի, չափաւորելով զցասումն, մեռուցանելով զքէն վրէժխնդրութեան, և բարի առնելով չարարարացն. զնոյն արդ քարոզէ ամենազդեցիկ օրինակաւն: Քաջ գիտէ զի հեզութիւնն այն՝ բազմաց դժուարին յոյժ թուիցի և գրեա եթէ անհնար. վասն այնորիկ ընծայէ անձամբ յանձին յարացոյց հանապազորդեան. որպէս զի մի ոք կարասցէ 'ի չքմեղս լինել՝ եթէ ոչ կամիցի զհեզութիւն համբուրել:

Ո՜վ Յիսուս, մարզիչ և վարդապետ հեզութեան, քանի՞ պարտական եմ քեզ. մի յայնցանէն եմ՝ որոց ծանր յոյժ Թուի հեզանալն. և զինչ այնր պատճառք՝ եթէ ոչ հպարտութիւն իմ միայն: Ո՜վ ամենահեզ Յիսուս, չնչեա յիս 'ի հոգւոյ քումմէ, որպէս զի յամենայն դէպս նախատանաց և ծաղու զինէն, քեզ նուիրեցից զայդս կրից ցասմանս: Առ հեզանալ՝ հարկ է ինձ լինել խոնարհ. այլ ոչ խոնարհ եղեց և ոչ հեզ՝ եթէ ոչ գտից օգնութիւն առ 'ի քէն. արդ խնդրեմ 'ի քէն զմի յօգնութեանց՝ զոր ստացար վասն իմ հեզութեամբդ և խոնարհութեամբ:

Առ 'ի տանել զզուանաց որ յանպատուելն զանձն իմ, տպաւորեցից 'ի սրտի իմում զՔրիստոսի օրինակն. այս միայն կարասցէ քաղցրացուցանել ինձ զամենայն նողակալի դառնութիւն:

Անդրէն առաքումն Յիսուսի 'ի Հերովդէէ առ Պիղատոս:

ՄԺԶ. Ոչ գիտէր Հերովդէս զինչ առնել ընդ Յիսուս. ոչ դատապարտել զնա կամէր, զի անմեղ էր, և ոչ արձակել, զի մի խռովութիւն Հրեայքն. ապա զամագիտ լինի առաքել զնա անդրէն առ Պիղատոս: Վասն այնորիկ տայ արկանել զնովաւ հանդերձ սպիտակ, զգեստ՝ զոր սովորութեամբ կրէին ապուշքն և իշխանազունք. այլ առ առակէ զգեցուցանեն Յիսուսի, որպէս զի կատակեսցի յամենեցուն իբրև զյիմար ոք՝ որ անհեդեդ խորհրդով զթագաւորութեան Թեկն ածիցէ: — Ո՜վ պաշտելի խոր-

հուրդք իմաստութեան Բարձրելոյն. զհանգերձն ցնցոտի և սպիտակ՝ զոր Հերովդէս կամէր 'ի նշանակ յիմարութեան Յիսուսի, Աստուած կարգէ 'ի նշան անմեղութեան նորին: Հարկ էր Փրկչին առաքելոյ 'ի սրբել զաշխարհ 'ի մեղաց՝ լինել սուրբ և անմեղ, ամենևին անարատ 'ի մեղաց. և աւադիկ նա սպիտակազգեաց՝ 'ի վկայութիւն փառաց, եթէ նա ինքն է գառնն Աստուծոյ՝ պատրաստեալ 'ի պատարագ քաւութեան, ոչ իւրոց ինչ այլ օտարացն մեղաց: Ոչ նոյն գունակ զգեցուցանէր զնա Հերովդէս՝ եթէ գործ ինչ չար նշմարեալ էր 'ի նմա: Թէպէտ և յայտնել զՅիսուս առնէ նա զամենայն, այլ չիք և ընդ այս յերկուանալ՝ զի ոչ ծաղունշաւակ առնէր զնա՝ եթէ էր գտեալ 'ի նմա յանցանս խստիւ պատուհասելիս:

Ո՜հ, քանի՜ ուրախութիւն է ինձ, Յիսուս իմ, յայտնութիւն անմեղութեան քո: Քանի՜ և տրտմութիւն է ինձ, զի այդպէս անարգի անմեղութիւնդ այդ: Աքանչանամ ընդ աննկուն համբերութիւնդ, այլ առաւել ես ընդ անհասանելի գթութիւնդ. քանզի առ ի՞նչ յիմ սակս յանձն առեր արկանել զքե զհանդերձ նախատանաց և զանարգու ամենապատիւ քումդ սրբութեան, եթէ ոչ առ 'ի ծածկել զիմս գարշելի տգեղութիւն: Ո՜վ զօրութեան աստուածային սիրոյն, որ կարաց սիրել զարարած մի չարաշուէր և զզուելի՝ որպիսի եսս եմ. սիրել զնա առ 'ի գեղաւորել և զգեստաւորել զնա հանդերձիւք պատուականօք շնորհաց, լաւութեանց և փրկութեան: Եւ ի՞ւ կարացից երախտահատոյց լինել: — Քանզի չէ մարթ սիրոյ այլ ինչ փոխանակել՝ քան սէր, աղէ, ուսո ինձ, զիա՞րդ հնար իցէ սիրել զքեզ արժանապէս. և օգնեա սրտիս տառապելոյ՝ այնպէս կցորդել ընդ քեզ սիրով,

մինչև ոչ մարմին և ոչ աշխարհ զօրեսցեն մեկնել զիս առ 'ի քէն: Անհնար է ինձ ցորչափ իցեմ այսպէս մեղաւոր՝ միանալ ընդ քեզ. այլ դիցես ինձ զսէրն զայն՝ զորմէ գրեալ է, եթէ ծածկէ զբազմութիւն մեղաց. զի մի ինչ յիս արգելուցու զանբաւագոյն միութիւն՝ որ յաշխարհիս յայսմիկ յարգարի ընդ քեզ շնորհօք, և 'ի յերկինս՝ փառօք հանդերձ:

Զի մի վարկպարազի ինչ լինիցին տենչանքս սիրելոյ զԱստուած, քննեալ տեսից թէ զինչ արգելու զիս 'ի սիրելոյ զԱստուած. կամ զինչ ինչ պատրաստ իցեմ առնել առ սէրն Աստուծոյ. և առաջադրեսցիս ինչ ինչ առանձինն:

ՄԺԷ. Սպիտակազգեաց երևեցաւ Յիսուս յայտնակերպութեան իւրում 'ի Թաբօրական լերինն, որ էր հանդերձ փառաց. սպիտակս արկանէ և արդ 'ի չարչարանսն, և է այս նմա հանդերձ նախատանաց: Տես արդ, հոգի իմ, զՏէր քո, զիարդ անգրէն տանին զնա յապարանից Հերովդէի 'ի Պիղատոսին, ընդ բազմամբոխ փողոցս քաղաքին. ոմանք յիմար համարին զնա, այլք չարագործ. և թուի ինձ այնպէս թէ չգուցէ յաշխարհի անարգագոյն ինչ քան զնա: Ամենայն ուրեք, և յամենեցուն առ հասարակ 'ի տղայոց և 'ի ծերոց, յազնուաց և 'ի ռամկաց՝ դսրովի գձձաբար, և չէք որ պաշտպան կամ օգնական կայցէ նմա: Ամենեքին խնդան 'ի տեսանելն զնախատինս և զարհամարհանս նորա. միայն ամբաստանիչք նորա զչարին և կրձտեն զատամունս իւրեանց 'ի հայելն ընդ նա. քանզի 'ի սպիտակութեան զգեստուն նշմարելով զանմեղութիւն նորին՝ յանձանց խղճէ դատապարտին սուտ գոլ զամբաստանութիւնն:

Ո՛հ, Հերովդէս, Հերովդէս, որ սքանչելեաց

փափագէիր, ո՞ւր իցես արդ։ Ե՛կ և տես. աւադիկ սքանչելիք մեծահրաշ, եթէ ունիցիս միտս իմանալոյ։ Աստուած անարգի մեծապէս 'ի փառսն՝ յիւրոց խոտան արարածոց. և սակայն լռէ, հանդուրժէ, ոչ սրտմտի։ Եւ զի՞նչ իցէ այս գործ՝ եթէ չիցէ սքանչելիք արդարև արժանի Աստուծոյ։ Այլ քանի՛ քանի սքանչելիս նմանօրինակս առնէ Աստուած յամենայն ժամ յամենայն ուրեք յաշխարհիս յայսմիկ, 'ի տեսանելն սատի զանարգանս Աստուծոյ ամենայն ուրեք այնքան մեղանօք, և անտի զհամբերութիւն նորա փոխանակ վրէժխնդրութեան, և զպահպանելն զմեզ յամենայն վայրկեանս կենաց՝ մինչ յամենայն վայրկեան արժանի եմք մահու, ո՞չ ապաքէն չիցէ արժան զարմանալ և սքանչելիս խոստովանել զայս։ Սքանչելի՛ք ողորմութեան, յոր սակս և անքաւելի ողորմութիւն։

Ոչ հիանամք ընդ սքանչելիսս՝ քանզի հանապազօրդք են. այլ մինչև ցե՞րբ կուրացայց ես առ 'ի չտեսանել զնոսին, և չհատուցանել փոխարէնս երախտեաց Աստուծոյ իմոյ։ Պաշտեմ զողորմութիւն քո առատապէս մարդասիրեալ առ իս. և անթիւս խոստովանելով առ 'ի քէն ներգործեալ յիս սքանչելիս մինչև ցայս օր, պահպանութեամբ կենաց մարմնոյս և հոգւոյս, պատկառանօք խոնարհեալ և ակն առեալ մեծի քումդ բարութեան, գոհանամ զքէն 'ի բոլոր սրտէ։ Եւ քանզի ոչ առ այլ ինչ երկայնամտես առ իս, բայց առ ևս քան զևս հաղորդս առնել զիս գթութեանց քոց, աղաչեմ զքեզ, Յիսուս, վասն ամենայն արդեանց չարչարանաց քոց առնել ինձ զշնորհս զայս, ոչ ընդ վայր հարկանելոյ զողորմութիւնս քո. 'ի բազմապատիկ գործս հրաշից զոր արարեր ընդ իս՝ յաւէլ և զայս, փոփոխել բոլորովիմբ զսիրտ իմ. որպէս զի

խիստն, ցամաքն և ցուրտն այն՝ եղիցի կակուղ, եռանդունն և բորբոքեալ սիրով քով։

Օ՜ն, սկիզբն արասցուք անյապաղ սիրել ճշ-մարտապէս զԱստուած. բաղում են ժամանակքն զոր չարաչար ծախեցի յանարգել զքեզ. սակաւ՝ քան զոր կարծեմն՝ մնայ ինձ ժամանակ սիրելոյ զքեզ։

ՄԺԸ. Նկատեսցուք զՏէրն մեր Յիսուս Քրիստոս ընդ յիմարս համարեալ յամենայն արքունեաց Հերովդէի, և իբրև այնպիսի ոք վարեալ ընդ ամենայն Երուսաղէմ, առնելով ընդ նմա զամենայն այպն կատականաց՝ զոր սովոր է առմինն բիրտ առնել ընդ յիմարս։ Սա ինքն է իմաստութեան առաջնորդ և իմաստնոց ուղղիչ, որ տայ գիտութիւն ոգւոց. և որ լցեալ գոլով իմաստութեամբ ՚ի մանկութենէ անտի իւրմէ՝ սքանչելի եղև ամենեցուն վասն գիտութեանն։ Ի դէմս իսկ նորա փայլէ իմաստութիւն, և սակայն ՚ի յիմարաց կարգի համարի. նա մանաւանդ իւր իսկ իմաստութիւն զայս այսպէս կամի և անօրինէ, զի որ ոք տեսցէ զնա իշխանական սուտ հանդերձիւն պաճուճեալ՝ ծաղր արասցէ իբրև զյիմար ոք։

Ո՜հ, ո՜ տայր մեզ իմանալ որպէս արժանն է զխրատս զայս մեծախորհուրդ։ Այսու օրինակաւ, ընդ անմիտս համարելով յախմար աշխարհէ, կամեցաւ Յիսուս փրկել զմեզ. զնոյն օրինակ արժան է և մեզ գործել զյաւիտենական փըրկութիւն անձանց. քանզի խոտան են ամենայն իմաստունք ըստ աշխարհի. և առ ՚ի դասիլ ընդ ընտրեալսն՝ հարկ է մեզ յիմարս համարիլ յաշխարհէ։ Քաջ ՚ի միտ առցուք. աշխարհ՝ իմաստութիւն համարի զհպարտութիւն, զվրէժխնդրութիւն, զխաբէութիւն, զկեղծաւորութիւն,

զխորամանկութիւն, զանիրաւութիւն, զանօրէնութիւն. և այս իմաստութիւն նշանակ է դատապարտելոցն: Աշխարհ յիմարութիւն համարի զպարզմտութիւն, զխոնարհութիւն, զանկեղծութիւն, զհամբերութիւն. և այս յիմարութիւն՝ զորոյ Յիսուս եցոյց մեզ զօրինակ՝ նշանակ է ընտրելոցն: — Յորո՞ց դասուց իցեմ ես, յիմաստո՞ւն համարելոցն յաշխարհէ, եթէ ՚ի յիմարացն կարծեցելոց ՚ի նմանէ: — Աստուած իմ, քանիցս խաբեցայ ցարդ, ամենայնիւ հնարս հնարելով երևել ընդ իմաստունս աշխարհի: Ընդունայնութեամբ շլացեալ չածի զմտաւ իմանալ զճշմարտութիւնն, եթէ արդարև յիմարք այնոքիկ են՝ զորս առ իմաստունս ունի աշխարհ, և իմաստունք ճշմարիտք՝ զորս յիմարս վարկանի աշխարհ: Այլ արդ հաստ լինիմ, ո՜վ Յիսուս, զմտաւ ածեալ զքո օրինակ: Արդարև չիք ոք իմաստուն՝ բայց որ կրթիցի ՚ի նմանութիւն լաւութեանց քոց, և յիմարք են ամենեքին՝ որք զմոլութեանց զհետ երթեալ՝ ունիցին զսուտ և զունայն գիտութիւն աշխարհի:

Ո՜վ իմաստութիւն անստեղծ, իմաստութիւն յաւիտենականն, հե՛ղ յիս զհոգի քո, որով ճշմարտապէս կրթեցայց յառաքինութիւնս, և թող ծաղր արասցէ զիս աշխարհ համօրէն: Ես փրկել կամիմ զանձն իմ. և զի միայն փրկեցայց՝ չէ ինձ փոյթ թէ աշխարհականք յիմար համարեսցին զիս: Պարզմտութիւն արդարոց ծաղր լինի այժմիկ. և զառաքինութիւն՝ խոտան համարին հպարտ իմաստունքն աշխարհի. այլ եկեսցէ ժամանակ յորում փառօք փայլեսցեն ուղղութիւնք, և որ զհետ երթեալ իցէ նոցին՝ երանելի լիցի ՚ի յաւիտեանսն:

Առ ՚ի լինել իմաստուն՝ անկ է յիմար համարել զանձն իմ. և արդարև յիմար եմ ցորչափ

պինդ ունիցիմ զաւանդութիւնս և զկարծիս աշխարհի՝ զհակառակն Ճշմարտութեանց աւետարանին:

ՄԺԹ. Յետ յիշելոյ աւետարանչին զառաքումն Յիսուսի 'ի Պիղատոսէ առ Հերովդէս և 'ի Հերովդէէ առ Պիղատոս, յաւելու, զի թըշնամիք գոլով նոցա միմեանց՝ այսու պատեհաւ եղեն բարեկամք: Եւ ոչ առանց ինչ խորհրդոյ՝ այն որ եկեալ էր 'ի հաշտութիւն համօրէն աշխարհի՝ 'ի հաշտութիւն հաւանութեան ածէ նաև զանիրաւ դատաւորս իւր. յօրինակ ժողովրդեան ամենայն ազանց՝ որք արդեամբք չարչարանաց Քրիստոսի հաւաքելոց են 'ի միութիւն եկեղեցւոյ: Եցոյց դարձեալ այսու, եթէ քանի՜ սիրելի է նմա խաղաղութիւն և միաբանութիւն փրկելոցն իւրոց: Այլ քաջ քննեսցուք զիրսդ: Միթէ յորդորեա՞ց ինչ Քրիստոս զերկոսին իշխանսն 'ի հաշտութիւն. միթէ հաւանեցո՞յց 'ի միաբանութիւն՝ միջնորդ հաշտեցուցիչ խոստանալով ինքնին լինել: Ապաքէն ոչ. այլ ընթեռնումք միայն զի առաքեցաւ նա 'ի Պիղատոսէ առ Հերովդէս, և 'ի սմանէ յետս անդրէն առ Պիղատոս. և առանց ինչ բարբառելոյ նորա՝ եղև վաղվաղակի խաղաղութիւն ընդ նոսա: Միայն յանդիմանակացութիւնն Յիսուսի կապելոյ և շղթայելոյ՝ բաւական եղև զիջուցանել զատելութիւն թերահաւատ Հրէին և զանկրօն հեթանոսին, և առնել զնոսա բարեկամս: Իսկ արդ մտանելով Յիսուսի յաճախակի 'ի մեզ՝ Ճշմարիտ և իրական ներկայութեամբն 'ի սրբութիւն Հաղորդութեան, ո՞չ կարասցէ տալ մեզ թօթափել յանձնէ զամենայն դառնութիւն և զատելութիւն մեր որ առ ընկերս: Զարհուրելի՜ համեմատութիւն:

Այսու խոկմամբ արժան է ինձ զահի զամօթի հարկանել. քանզի արդարև, զի՞նչ իցէ այս, զի ներկայութիւն Յիսուսի այնքան հզօրեղապէս ներգործէ 'ի միաբանել բարեկամութեամբ զեր֊կոսին քաղաքախոհսն՝ որք ոչն հաւատան նմա, և նոյն Քրիստոս որ այնքան յաճախ մտանէ յիս, ոչ 'ի դաժանաց չուրջ պատեալ, այլ 'ի հրեշտակաց հաշտութեան, ոչ լինի բաւական անդել զիս զօդիւ սիրոյ ընդ ընկերս իմ։ Զի՞նչ իցէ այս, զի 'ի ժամանակի չարչարանաց Քրիս֊տոսի՝ երկու հնացեալ թշնամիք՝ լինին բարե֊կամք. և թէպէտ յամենայն նուազի հաղորդու֊թեան իմում՝ յիշատակ լինի չարչարանացն Քրիստոսի, ես ինքնին լուծանեմ զհաշտութիւնն և զսէր բարեկամաց՝ առ դոյզն ինչ և ընդու֊նայն խծբիծ։

Աստուած իմ, քանի՜ խիստ, թիւրեալ և վատ֊թարեալ է սիրտս այս իմ։ Յորժամ զքեզ ըն֊կալեալ 'ի հաղորդութեան, և տակաւին կեամ հակառակութեամբ և դժկամակութեամբ ընդ եղբարս իմ, ո՞չ ապաքէն ես ինքնին զմեծափառ ընթրիս քո փոխեմ 'ի սեղան դիւական։ Ո՜վ մահացու չարութիւն։ Յաւէ՜ ինձ յոյժ ընդ այս, Տէր, և զանձնէ բողոքեմ. և քոյին օգնականու֊թեամբ՝ զոր ժտիմս, խոստանամ դառնալ յուղ֊ղութիւն։ Ո՜վ ամենագութ Փրկիչ, խաղաղա֊րար երկրի և երկնից, մի արդելուր յինէն զշնորհդ զայդ, զոր խոնարհեալ անձամբ պա֊ղատիմ. զշնորհս՝ պահելոյ, որչափ յիմն է, զսէր եղբայրական ընդ ամենեսին։ Այս ուղղութիւն է զոր յոյժ սիրեցեր և պատուիրեցեր. և այսմ՝ քան այլում ամենայնի անկ է ինձ նախանձաւոր լինել։

Եթէ երբեք դէպ լիցի ինձ գժտիլ ընդ ումեք, ուշ անձին արարից՝ ոչ աղմկելոցս կրից լսել,

այլ Յիսուսի, որոյ ձայնք ձայնք՝ են միշտ խաղաղութեան և սիրոյ:

Զուգարունկ Պիղատոսի զՅիսուս ընդ Բարաբբայ:

ՄԻ. Միւսանգամ առ ինքն ածեալ զՅիսուս՝ տեսանէ Պիղատոս. և որ յառաջ սքանչացեալ էր ընդ իմաստութիւն նորա 'ի խոհական պատասխանիսն, այժմիկ առաւել ևս զարմանայ զի այնպիսի զգօն այր յիմար համբաւի: Արդահատի զի և ոչ Հերովդէս եգիտ պատճառս դատապարտելոյ զնա, այլ ցաւէ նմա զի վերստին ստիպի մտանել 'ի դատ՝ յորմէ հրաժարելն փափագէր: Այլ զի չէր հնար այդմ լինել, և զի գիտէր զանմեղութիւն Յիսուսի, կոչեցեալ առ ինքն զգլխաւորս Եբրայեցւոցն՝ առաջի դնէ նոցա պարզապէս զխորհուրդս իւր. եթէ 'ի վերայ ամբաստանութեանցն եղելոց՝ ոչ ինչ չար գտանէ յայրն յայն. և զի նոյն կարծիք էին և Հերովդէի. ապա առ շնորհուկս ևեթ նոցա խրատեալ զնա խստիւ՝ թողցէ ազատ:

Ո՞չ մեծացուսցէ զանտեսութիւնն Աստուծոյ՝ յերադահաս խնամս արդարոյն: Վկայք անմեղութեան Յիսուսի լինին երկոքին դատաւորք իւր. մին նախիշխան, միւսն թագաւոր. ամբաստանիչք լինին Հրեայքն՝ որք ոչ գտանեն բարուրս բաւականս 'ի պարտաւոր կացուցանել զնա: Յիսուս լռէ, և ճշմարտութիւնն բարձրաձայն բարբառի վասն նորա, հռչակելով զանմեղութիւնն՝ 'ի ձեռն վկայից վերադունից քան զբնաւս: Աղաղակ բառնան զըպարտիչքն Հրեայք.

այլ սուտ թիւն չունի և ոչ զմի զօք 'ի նոցանէ ինքեան հաւատարիմ։ Եւ արդ ո՞ւմ անկ իցէ հաւատալ. դատաւորացն անկեղծութեան, ե-թէ զրպարտչացն չարութեան։ Հզօր է ճշմար-տութիւն յաղթական, և անմեղութիւն քաջա-պէս պաշտպանեալ։ Եթէ գոյր ինչ ցոյց հա-ւանութեան յանցանաց ապստամբելութեան՝ զոր չփէին զՅիսուսին, ոչ իշխէր Պիղատոս ար-ձակելի ասել զնա. արդ զի արձակել կամի, ա-պա և անպարտ զնա ցուցանէ։

Ո՛վ ամենասուրբ Յիսուս, աստանօր իղձ էր ինձ ներգործել ընդ քեզ և աղէրսս զղջական՝ վասն տառապանացն զոր կրես, և խնդական վասն յայտնութեան անմեղութեանդ. այլ հայ-ցեմ 'ի քէն, թոյլ տուր ինձ վայրիկ մի զանձնես խորհել։ Ճշմարտութիւն՝ որ յատեանս աշխար-հի դատ արար զքէն, զո՞ր դատ արասցէ զինէն՝ յորժամ 'ի գերագոյնն ատեան գայցէ մեծվա-յելչութիւն քո առ 'ի դատել զիս։ Ճշմարտու-թիւն՝ 'ի դատաստանի անդ զատուցէ զըն-րեալսն 'ի մերժելոցն. և իցէ՞ թէ յայնժամ ա-սիցի և զինէն որ զքէնն, թէ Զիք սորա մահու արժանի ինչ գործեալ։ Զարհուրեցուցանէ զիս գիտակցութիւնս իմ. քանզի սանդամ չեղէ ար-ժանի յաւիտենական մահու։ Դու լռես այժ-միկ, քանզի անմեղ ես. իսկ ես յայնժամ լռու-եղեց, կորացեալ ամօթով, զի ոչ ունիցիմ բան 'ի չքմեղս։ Վասն իմոյս մեղաց չունիմ այլ իմիք ականկալութիւն՝ բայց դատապարտութեան, այլ յարդիւնս քո վստահանամ փրկիլ, ո՛վ Յիսուս իմ, քանզի ամենապատիկ մեծ են երախտիք քո քան զապախտս իմ։ Հայր յաւիտենական, 'ի քաւութիւն յանցանաց իմոց՝ մատուցանեմ քեզ զՈրդի քո ամենասիրելի. ընդ սրբազան մարդկութիւն նորին՝ հայեաց յիմս դիւրաբեկ

բնութիւն. 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի որդւոյ քո ժախմ զողորմութիւնս քո, և վասն այսորիկ յուսացեալ եմ ընդունելի լինել. սովիմք ակն ունիմ ժամանել 'ի փրկութիւն, քանզի դա է կեանք իմ և փրկութիւն 'ի յաւիտեանս յաւիտենից և ես:

Ոչ ոք փրկի՝ բայց անմեղութեամբ կամ ապաշխարութեամբ: Նա զի չեմ ես անմեղ, ապա գոնէ գործեցից լինել ապաշխարող, և նկրտեցայց յաւէտ 'ի զիղջ վասն մեղաց իմոց:

ՄԻԱ. Ոչ հանդարտէն Հրեայք լսելով բազում անգամ 'ի Պիղատոսէ զվկայութիւն անմեղութեան Յիսուսի. դատաւորն հեթանոս արդարասէր է քան զվարդապետս աստուածային օրինաց. ոչ դադարէ 'ի ջատագովելոյ զանմեղութիւն: Նա տեսեալ զի անօրինացն կուրացեալ կրիւք՝ ոչ կարեն 'ի միտ առնուլ զիրաւունս, հնարի իմն հնարս գիտողս ըստ իւրոց կարծեաց: Սովոր էր յաւուրս տօնից զատկին շնորհել Հրէից կապեալ մի որ նոցա հաճոյ թուէր. զայս համարեալ դէպ յաջողութեան՝ առաջի առնէ նոցա զՅիսուս, որպէս զի ազատ լիցի՝ եթէ ոչ արդարացեալ անմեղութեան կողմանէ, գէթ յանցաւոր շնորհագիւտ, ըստ նախնեացն օրինի, յիշատակաւ ազատութեան որդւոցն Իսրայէլի յեգիպտական ծառայութենէն: Նա անկասկած ես լինել, զԲարաբբա զոմն բանտարկեալ զայր եղեռնագործ և ատելի ամենեցուն՝ առաջի առնէ ընդ Յիսուսի՝ յընտրութիւն միոյ 'ի նոցանէ. խորհելով 'ի միտ, եթէ ամաչեսցեն խնդրել զԲարաբբա, և աներկբայապէս արձակեսցի Յիսուս: Թէպէտ և լաւք իցեն կամք դատաւորին, այլ քանի նախատինք մարդացելոյն Աստուծոյ 'ի կշիռ համեմատութեան դնել ընդ

աշխարհագոյժ չարագործի: Ամօթ էր և զգերագոյնն անգամ 'ի հրեշտակական դասուց համեմատել ընդ նմա. քանզի ցո՞ երբէք 'ի հոգեղինաց զուարթնոց ասաց Հայրն յաւիտենական, «Որդի իմ ես դու, նիստ ընդ աջմէ իմմէ»: Իսկ արդ զիա՞րդ 'ի զուգակշռութիւն և յընտրութիւն արժանաւորութեան կարգի նմա՝ եղեռնաւորն և դժնդակագոյն քան զամենայն Երուսաղէմացիս: Եւ սակայն ոգւով զուարթութեան ըմպէ Յիսուս զնախատինսն: Եւ առ ինչ. — Առ 'ի հայթհայթելոյ մեզ հնարս համբերութեան, և իւրովն օրինակաւ 'ի բաց հերքելոյ 'ի մէնջ զչարաչար երկիւղ մեր 'ի նախատանաց աշխարհի:

Ո՛վ, քանի՜ մեծ է համբերութիւն քո այս, Փրկիչ երկրպագելի: Յորժամ այսպն արար ըզքեզ Հերովդէս՝ որպէս զխմար, զպակասութիւն իմն բնութեան կշտամբէր 'ի քեզ. զայն՝ որոյ մարթ է և լծակցել ընդ անմեղութեան. այլ արդ մատնիլ 'ի դատաստան նենգաժէտ ժողովրդեան՝ զի ընտրեսցին թէ ո՞ դժնդակագոյն և մահապարտագոյն իցէ, Բարաբբա՞ս եթէ դու, այս անհնարին են նախատինք քումդ ամենամաքուր սրբութեան: Եւ տակաւին համբերես դու: Իսկ ես ե՞րբ ուսայց, ո՛վ Յիսուս, մեծարել զանարգանս, մինչդեռ այսքան փառաւորեցեր դու զայնոսիկ՝ կամաւորապէս յանձն առեալ: Ուղղեա՛, Տէր, օրինօք Ճշմարտութեան՝ զխոտորնակ կարծիս իմ հարեալս յունայնութիւն. և ապա դիւրին լիցի ինձ համբերել: Տպաւորեա յոգւոջ իմում զօրինակ քո, և ոչ ես ամաչեցից, նա մանաւանդ և ուրախ եղէց յորժամ աշխարհ անարգեսցէ զիս:

Համարեսցին զիս երբեմն գթեալ 'ի չարութիւնս, զոր՝ ողորմութեամբն Աստուծոյ չիցէ

իմ արարեալ. և յայնժամ ըստ օրինակի Քրիս-տոսի համբերելով տարայց արհամարհանացս:

ՄԻԲ. Յանդիման արասցուք մեզ զՊիղատոս, որ 'ի պաշտպամէ ապարանիցն առաջի կացու-ցանէ Հրէից զՅիսուս, ասելով. Քանզի սովորու-թիւն է իմ յաւուրս յայսոսիկ առնել ձեզ շնորհս արձակելով յանցաւոր մի, զոր և կամիցիք, արդ-են աւադիկ Բարաբբաս և Յիսուս. զո՞ր 'ի դոցա-նէ կամիցիք: Կշռեսցուք զծանրութիւն նախա-տանացն: Ո՞ Յիսուսն իցէ և ո՞ Բարաբբաս: — Յի-սուս՝ Միածին Որդի Աստուծոյ. յաւիտենական Բան Հօր, լի շնորհօք և Ճշմարտութեամբ. Ճա-ռագայթ փառացն, կերպարան աստուածային էութեան, և անբաւ զօրութեամբ: Բարաբբաս՝ աւազակ, խռովիչ, մարդասպան, սպանող, և գար-շելեալ յամենեցուն վասն յայանի և մեծամեծ եղեռնիցն: Իսկ մատուցանել յընտրութիւն և ասել, Զո՞ կամիցիք. ո՞ յերկոցուն առաւել հաճոյ իցէ ձեզ, զի՞նչ իցէ. միթէ մա՞րթ ինչ իցէ ընդ լոյս և խաւար, ընդ ամենալաւն և ընդ ամենայոռին դըզն ինչ կամ ոչինչ համարել խորի: Կարի յոյժ մեծապէս թաղծեցաւ ընդ այս՝ Յիսուս, և բե-րանով մարգարէին գանգատ լինէր. Ո՞ւմ նմա-նեցուցէք զիս. կամ ընդ որո՞ւմ առնէք հաւա-սար. (Ես. խ. 75):

Ո՞չ ապաքէն և մեք յաճախ այսպէս առնեմք: Յամենայն առիթս մեղաց՝ միտք առաջի առնեն կամաց՝ զՅիսուս և զԲարաբբաս, զԱրարիչն և զարարածս. աստի զանբաւ բարին՝ զԱստուած, անտի՝ զհեշտութիւն զազիր և անարգ. և ասեն, Ո՞ր լաւագոյն քեզ և ընտրելի յերկուց այտի: Ընտրութիւն անարժան: Եթէ և զամենայն զեղեցիկն և զՃոխ և զմեծ և զառաւելաշնորհ որ ինչ յերկրի և յերկինս՝ կայր ընտրել, զի՞նչ

այդ ամենայն և փոքու խիք ունէր համեմատութիւն ընդ Աստուծոյ: — Եւ սակայն քանիցս զօր ամենայն առնեմ ես զայդ: Որ զի՞նչ և մեծ առաջի լիցի սրտի իմոյ՝ առ 'ի սիրելի լինել հաւասար Աստուծոյ, ո՞չ ապաքէն արժան է ինձ զարհուրելով սրտաբեկ լինել ընդ այն և կշտամբելով զանձն իմ՝ ասել. «Ո՞վ է որպէս զԱստուած»: Իսկ զի՞նչ եթէ յանդիման լիցի եղկելի հեշտութիւն զգայական հաճոյից կամ հպարտութեան: Այլ քանիցս տակաւին կամ դանդաղեմ 'ի կշիռ ընտրութեան, թէ ո՞ր լաւ իցէ, աստուածայի՞նն բարութիւն եթէ ընդունայնութիւն խոտան: Այսպէս առնեմ յաճախ հեղգութեամբ, յորժամ խորհիմ՝ թէ ընկալա՞յց եթէ մերժեցից զփորձութիւն: Յայնժամ ընդ Բարաբբայ 'ի համեմատութիւն ձգեմ զքեզ, ո՛վ Յիսուս: Եւ ո՞ տացէ ինձ արտասուս ըստ բաւականի առ 'ի լալ զհեղգութիւնս իմ՝ զոր ցարդ առ ոչինչ մի համարեցայ: Յաւէ՜ ինձ ընդ այս, Աստուած իմ. և գտեմ 'ի մտի քոյով օժանդակութեամբ՝ գոչել անդէն և անդ յորժամ թէ ընդ առաջ լինիցին ինձ հրապոյրք մեղաց. Ո՛վ է որպէս զԱստուած, մեծ և վայելուչ 'ի սրբութեան, և 'ի վեր քան զամենայն առ հասարակ պատուական և սիրելի:

Այնպէս գուն գործեցից՝ զի չեղեց պարտական խոստովանութեան՝ զդանդաղանս հեղգութեան 'ի մերժել զփորձութիւնս. այլ թէ չատ՝ մեղադրեցայց՝ զի ոչ որչափ արժանն էր գարշեցայ 'ի նոցունց:

ՄԻԳ. Անմեղադրելի իմն թուի Պիղատոս 'ի բաղդատելն զՅիսուս ընդ Բարաբբայ, այնու զի բանիւքն անմեղ ցուցանէ զնա. և զի եթէ արդար և եթէ յանցաւոր՝ հնարի միայն ազատել

զնա: Սակայն չէ մարթ չէ արժան չհամարել զնա մեծապէս մեղապարտ. քանզի եթէ արդար Ճանաչէ զՅիսուս՝ ընդէ՞ր ոչ իշխանութեամբ իւրով արձակէ զնա. ընդէ՞ր ոչ քաջապէս ընդդէմ կայ մոլեգին յուզման Հրէից 'ի պաշտպանութիւն իրաւանց և Ճշմարտութեան: Թէպէտ և ոչ դատապարտէ զՅիսուս, այլ և արձակէ ոչ, և գիտութեամբ 'ի վտանգ դատապարտութեան մատնէ. առ ակամբ չհակառակելոյ կամաց Հրէից՝ զանց առնէ զպարտուք պաշտամանն. որով և ցուցանէ՝ զի չէ փոյթ նմա դատապարտութիւն անմեղութեան, չատ է թէ չհամարեսցի իւր փառան՝ այլ նախանձու և չարութեան այլոց:

Ահաւադիկ օրինակ եղելոցն՝ չասացից յառհասարակ աշխարհի՝ այլ յիս ինքնին: Ո՛հ, քանի հնարագէտ է անձնասիրութիւն իմ 'ի թաքուցանել զընդունայնութիւն ընդ Ճշմարտութեան կերպարանաւ. 'ի ծածկել զգրգիռս ցանկութեան՝ բազբաղանօք գիտակցութեան. 'ի սքօղել զգործսն չարս՝ ընդ բարի բարի առաջադրութեամբք: Խոր է սիրտ իմ, և զամենայն ծածուկս նորա տեսանէ Աստուած. և թէ որպէս գաղտնի հնարիւք զուն գործեմ լնուլ զյօժարութիւն կրիցս՝ մինչդեռ երևեցուցանեմ նկրտիլ 'ի փառս նորա. և ստեմ՝ մերթ գիտաւորութեամբս առ գործն, մերթ գործով առ գիտաւորութիւնն: Աչաւանք մարդկան յաղթահարեն զիս. և բազում անգամ առ 'ի չլինել անհաձոյ մարդկան՝ զանհաձոյսն Աստուծոյ գործեմ:

Ո՛վ Աստուած իմ, և ո՞ս իցէ սիրելն զքեզ յամենայն զօրութենէ մտաց և սրտի, և 'ի վեր քան զամենայն ինչ, որպէս պարտք իմ պահանջեն յինէն: Զղջամ և ցաւիմ ընդ չարաչար գաղջութիւնս իմ և յողդողդութիւն 'ի սէր քո, 'ի

վերայ այնքան շնորհաց լուսոյ և օգնութեան, զոր գթութիւն քո պարգևեաց ինձ: Հայեաց 'ի տառապելութիւնս իմ՝ քաղցրահայեաց աչօք անհամեմատ մեծութեան ողորմութեանցդ. և յաւել ինձ շնորհս 'ի յաւելուած ուղղութեանց, որոց կարօտիմ՝ առ 'ի սիրել զքեզ յամենայն սրտէ, հաւատարմութեամբ, եռանդեամբ և զօրութեամբ, և յանձն առնուլ բիւր մահուան՝ քան անիրաւել առ քեզ: Տո՛ւր ինձ տալ զկաղալ սրտիս յերկուս հետս. որով կեղծաւորիմ և՛ կամել սիրել զքեզ և յաշխարհի աչաց ոչ ելանել:

Որ զանգիտէ յարհամարհ երևելոյ յաչս աշխարհի՝ ոչ է հնար թէ ոչ մեղիցէ առ Աստուած: Ճշմարիտ է առածս այս: Արդ քննեցից տեսից յի՞նչ իրս զանգիտիցեմ անհաճոյ երևել աշխարհի, որպէս զի քաջալերեցից զանձն իմ և զգուշկացից 'ի վտանգաց:

Նախադասել Հրէից զԲարաբբա քան զՅիսուս :

ՄԻԴ. Ի ծանուցանել Պիղատոսի առ քահանայապետսն՝ եթէ խորհի զՅիսուս և զԲարաբբա յընտրութիւն Հրէից մատուցանել, անդէն վաղվաղակի մտանէին նոքա այսր և անդր 'ի խուռնս ժողովրդեանն, շշնջելով և յորդորելով, զի մի զՅիսուս՝ այլ զԲարաբբա խնդրեսցեն: Թէպէտ և պնդէր Պիղատոս վկայել զանմեղութիւն Յիսուսի, այլ ոչ գնայ առ նոսա բան իրաւանց, քանզի կուրացեալք էին 'ի նախանձուէ. երկընչին, զի թէ Քրիստոս կեցցէ՝ աշխարհ ամենայն

զնի նորա երխայ․ և այս զկծեցուցանէ զնոսա և ստիպէ ընտրել զկեանն Բարաբբայ։ Աղմկեալք մոլութեամբ կրիցս այսոցիկ՝ որպիսի՞ չարիս ոչ չփեն զՅիսուսիւ, առ 'ի ցուցանելոյ զնա վատթարագոյն քան զաւազակն վաշուէր։ Յետ այնքան խոցելոյ զնա՝ մարթ էր նոցա այժմիկ ազնուապէս 'ի բաց թողուլ զպաշտպանեան, և շնորհս առնել Պիղատոսի՝ որ փափագէր և թախանձէր արձակել զնա․ այլ նոքա առաւել քան զառաւել զառածեալք 'ի չարութեան՝ յայտնապէս և անարդարանալի ամպարիշտք եղեին։ — Անիծեա՛լ նախանձ, որ պատճառք եղեւ սատանայի մուծանելոյ զմահ յաշխարհ, Կայենի՝ սպանանելոյ զեղբայր իւր անմեղ, և Հրեից՝ 'ի գաւաճանել զամենաքին անպարտական զառնն Աստուծոյ։

Այլ եթէ քննեցից զանձն իմ՝ գտի՞ց արդեօք ազատ յախտէ այսմի․ ո՞ գիտէ․ դժուարաբոյժ է ախտդ, քանզի և դժուարածանօթ։ Զգայցեմ արդեօք 'ի ներքուստ դժկամակութիւն կամ արտմութիւն՝ յորժամ տեսանիցեմ զմի յիմոց զուգակցաց սիրեցեալ, մեծարեալ գովեալ պատուեալ առաւել քան զիս և յաջողեալ քան զիս։ Քանի՞ցս այսպիսի յոյզք շարժմանց զգալի խռովութեամբ ոչ արտմեցուցին զիս, յառաւելութենէ անտի տիրացելոյ յիս անձնասիրութեան։ Եւ երկբայիցիմ թէ չիցէ այդ նախանձ՝ հակառակ սիրոյն՝ որով 'ի դէպ էր ինձ խնդալ ընդ ամենայն բարիս ընկերի իմոյ։ Եւ ո՞րքան ընդ այս ախտ ցաւէ ինձ 'ի խոստովանութեան իմում․ և զո՞ր դարման ուղղութեան տանիցիմ։

Աստուած իմ, ո՞ կարասցէ բժշկել զվէրս զայս մահացու, եթէ ոչ դու, հեղլով 'ի սիրտ իմ զհեղս ազնիւս սիրոյ՝ որ յանբաւելի բարութենէ քումէ ծորեն։ Թուիմ ատել զՀրեից

Նախանձ՝ որք մահու չափ ատեան զքեզ, ո՜վ սիրելիդ Յիսուս, վասն առաւել քան զնոսա սիրելի և մեծարոյ գոլդ քո՝ ժողովրդեանն. և ընդէ՞ր ոչ ատիցեմ և զնախանձն՝ զոր ունիմ ընդ ոմանս յընկերաց իմոց, ցանկանալով յիս շորթել զոր առ նոսայն յարգանս և սիրելութիւն: Ո՜վ Փրկիչ հոգւոյ իմոյ. տուր ինձ գարշել և զզուիլ յախտէ աստի՝ որ արդարև դիւական է, և ամենևին հակառակ Հոգւոյն Սրբոյ: Տուր ինձ լոյս ճանաչելոյ զտգեղութիւն նորին, և զօրութիւն՝ յաղթելոյ բռնացելումն յիս:

Ի նախանձուէնէ յառաջ գան դատել, պարսաւել և 'ի թիւր կարծիս լինել զընկերէն: Արդ զգոյշ կացիր այդոցիկ. և ջան եդիր, որքան հնար է, բարի դատել և խօսել զամենեցուն:

ՄԻՏ. Օրէնք հին կտակարանաց պատուիրէին հնարել փրկել զարդար՝ մատնեալ 'ի դատաստան. և զի գլխաւորաց ժողովրդեանն անկ էր գործս այս, չիք երկբայել եթէ արժան էր սոցա յառաջագէմ լինել 'ի պաշտպանութիւն Յիսուսի՝ որ անմեղն ցուցաւ: Եւ սակայն ամենեքին նոքա հակառակ նմա դաւ դնէին. և ո՞ է որ խորհիցի փրկել զնա: — Միայն կին Պիղատոսի զարհուրեալ և տագնապեալ յանըրջոց խօլականաց, յայտնապէս առաջի ամենեցուն հռչակէ զճշմարտութիւնն, եթէ այր արդար է Յիսուս. և երկիւղալից գուշակութեամբ խրատէ զայր իւր զգոյշ կալ 'ի դատապարտելոյ զնա. հաւանելով Հրէիցն անօրէնութեան: Ո՜վ զարմանալի իրացս. ժողովուրդն ընտրեալ մախայ ընդ Յիսուսի, և ջատագով նմա կան միայն Պիղատոս և կին նորա հեթանոսք:

Այլ մի 'ի զուր զարմանս ժամավաճառ լիցուք. ո՞չ զնոյնս է տեսանել յաճախակի առ-

բութեամբ յաշխարհի: Ո՜վ, քանի՜ սակաւք են որ զՅիսուսի կողմն ունիցին, պաշտպան կալով արդարութեան և փառաց նորա ջատագովիչք: Ո՜վ, քանի՜ բազումք իցեն նախանձորդք Յիսուսի, պնդեալք 'ի հալածել զնա և 'ի թշնամանել, առ ոչինչ համարելով զնա: Վասն այսորիկ և բազումք դատապարտին, սակաւք փրկին. և յայս սակս հարկ է քաղաքավարել որպէս սակաւքն այնոքիկ քաղաքավարին: Եւ զի՞նչ իցէ կեալն ըստ օրինակի սակաւուցս այսոցիկ: Սակաւք են խոնարհք ճշմարիտ խոնարհութեամբ սրտի: Սակաւք են որ սիրեն զԱստուած 'ի վեր քան զամենայն, և զընկերն՝ որպէս զանձինս իւրեանց: Սակաւք են որ համբերութեամբ տանիցին հակառակութեանց և վշտաց: Սակաւք են որ ոչ պատրիցին յունայնութեանց և երթիցեն զհետ ստախաբ բանից աշխարհի: Արդ կեա՞մ արդեօք և ես ըստ սակաւուցս այսոցիկ. ունիցի՞մ արդարև զխոնարհութիւն, մաքրութիւն, համբերութիւն և զաղքատութիւն հոգւոյ՝ որ տայն քեցել հրաժարել յաշխարհէ:
— Եթէ քաջ քննիցեմ զիս, գտանեմ անձամբ անձին մարդելոյզ. համարիմ ունել առաքինութիւնս ինչ, այլ ճշմարտիւ հեգ եմ և թշուառ, աղքատ և կոյր և մերկ, որ զատուեր ևեթ ուղղութեանց ունիմ: Աշխարհականք են բարք իմ, և կեամ որպէս բազումքն կեան: Սարտնում 'ի նուաստութենէ, 'ի մեռելութենէ, և յաղօթից. և ոչ հանդուրժելով ըստ սակաւուցն քաղաքավարութեան կեալ, տակաւին անձնախաբ լինիմ յուսով հասանելոյ 'ի յաւիտենական երանութիւնն, ուր ոչ ոք ժամանէ՝ եթէ ոչ ընդ անձուկն գնայցէ ճանապարհ սակաւակոխ: Աստուած իմ, թափեա զիս 'ի պատրանաց սատի, և մո՛յծ զիս 'ի շաւիղս ընարելոց

քոց, որք Թէպէտ և գժուարագնացք իցեն՝ այլ առ 'ի քէն զօրացեալ՝ հետևեցայց ես առ 'ի փրկել զանձն իմ:

Առ 'ի փրկել՝ անկ է զհետ երթալ Յիսուսի: Սակաւք են որ զայս առնիցեն, հետևել Յիսուսի նմանութեամբ նորին: Զայս պարտ է և ինձ առնել, և զայն արարից, հայցելով օգնութիւն առ 'ի յԱստուծոյ:

ՄԻՋ. Թէպէտ և տեսանէ Պիղատոս զձախողակ ջանս քահանայիցն և զգպրացն հրապուրչաց, այլ համօրէն զամբոխ ժողովրդեանն մարդասիրագոյնս գոլ առ Յիսուս, յիշատակաւ երախտեացն զոր առ 'ի նմանէ ընկալան: Արդ զի գամագիւտ լիցին յազատել զնա պատեհաւս, առաջի առնէ զնա ընդ Բարաբբայ, ասելով. Կամի՞ք զի արձակեցից ձեզ զԹագաւորն Հրէից: Այսպէս կոչէ զնա առ առակէ, յայտ առնելով նոցա զի սուտ էր ամբաստանութիւնն. և ոչ ընդ բանս ածէր արձակելոյ զնա՝ եթէ արդարև զԹագաւորութեան Թեկն ածեալ էր նորա: Իսկ զի՞նչ պատասխանի տան դատաւորին՝ որ հաճոյ երևեցուցանէ ինքեան զխնդրելն վասն նորա շնորհս ազատութեան: Միաբարբառ աղաղակեն ամենեքին. Ոչ կամիմք զՅիսուս, այլ զԲարաբբա: Եւ այնպէս զայրացեալք են ամենեքին 'ի վերայ նորա, զի մռնչիւն գազանաց Թուի գոչիւն նոցա քան ձայն մարդկան, ըստ նախասացութեան մարգարէին. (Երեմ. ԺԲ. 8):

Քանի՜ արդեօք խորագոյնս խոցեցաւ ամենալաւ սիրտ մարդացելոյ Որդւոյն Աստուծոյ՝ ընդ անհնարին նախատինսն, զի յայնքան ամբոխէն չգտաւ և ոչ մի ոք որ նախադասիցէ զնա քան զհրէշն զայն անօրէնութեանց: Իսկ նա քանի՜ հեզութեամբ համբերէ անտրտունջ: Որքան խրա-

տադոյնս կատաղին ամպարիշտքն ընդդէմ Նորա , այնքան առաւելագոյն գթով մարդասիրէ ինքն առ նոսա ։ Սիրէ զամենեսին որք ատեն զինքն ։ Եւ ո ստիպեաց զնա առ 'ի տանել այսքան արհամարհանաց՝ եթէ ոչ սէր Նորա առ իս ։ Այո , քանզի ոչ հանդուրժեմ ես սորա քան զոք դասել , և խնդրեմ գլել զամենայն նախանձորդօք իմաք , ամենեցուն տէրն հաճեցաւ նուաստագոյն քան զաշխարհաքարոզ եղեռնագործն համարիլ . և զի ոչ այլ ինչ պահանջի յինէն , եթէ ոչ ուսանել յԱստուածոյ այսքան խոնարհելոյ՝ չհպարտանալ , այլ խոնարհութեան նորա լինել նմանող , զխորդ ոչ սիրելով սիրեցից զառաքինութիւնն՝ որոյ վարդապետ ինձ եղև Աստուած՝ խոնարհեցուցանելով զանհասանելի մեծութիւն իւր ընդ այսքան հրապարակագոյժ ցածութեամբ ։

Պարձեալ կրկնեմ արդ զՃշմարտութիւնն՝ զոր բիւր անգամ ասացեալ եմ և յեղյեղեալ . և ոչ կարեմ կրկնել առաւել զամօթի հարկանելոյ և ամաչելոյ յանձնէ՝ վասն ոչ զնոյն գործով կատարելոյ ։ Ո՛վ ամենազօրութ Յիսուս , ո՛վ ամենախոնարհ Յիսուս , քանի՛ ճշմարիտ է թէ չէ մարթ զնոսա ածել զշարչարանս քո՝ և ոչ տեսանել ամենուստ զխոնարհութիւնդ ։ Այլ զի՞նչ օգտիցեն մարդոյ իմաստք և ճառք գեղեցիկք զխոնարհութենէ՝ եթէ չիցէ խոնարհ ։ Հպարտ յոյժ իցեմ՝ եթէ համարիցիմ իմով ևեթ ճարտարմտութեամբ տանել զայսպիսի գերազանց լաւութիւն . զի իմ իմիք կարող իցեմ ես առանց քոյոյ օգնականութեան ։ Ո՛վ փրկութիւնասէր ամենեցուն , յիշեա , զի ոչ առ ուսուցանել ևեթ ինձ զխոնարհութիւն՝ եկիր դու , այլ 'ի տանել և զշնորհս՝ որով արդարև խոնարհ եղէց ։ Ապաւինիմ արդ յարդիւնս քո՝ առ 'ի գամագիւտ լինել հնարից և վախճանին՝ որում յուսամ և փափագեմ ։

Վառեցայց ըղձիւք խոնարհութեան. և սիրելով զանարգութիւն՝ որ սրբեցաւ յանձին Քրիստոսի, զգոյշ կացից չհամարել զիս լաւ քան զայլ ոք, այլ ամենեցուն յետադաս:

ՄԻԷ. Հանապազորդ տանջեալ գիտակցութիւն մտաց Հրէից. անխծեալ լիցին յամենայն պասեքս իւրեանց, և վճիռ դատապարտութեան հասցէ հոգւոց նոցին, վասն մեծապէս մեղանացն չնորհս ապատութեան խնդրելով Բարաբբայ և ոչ Յիսուսի: Որպիսի՞ խառնակ խորհուրդք և մոլեգին կատաղութիւն, ընդդէմ դառնալ պարգևողին կենաց, և կեանս վերագոչել սպանչին, աւազակին և բիւր մահուց արժանաւոր եղեռնագործին: Զանհնարին չարութիւնդ այդ նախատեսեալ մարգարէին, 'ի դիմաց Փրկչին բողոքէր յերկինս՝ 'ի զարմանս կոչելով, զի ժողովուրդն սիրելի լքեալ զաղբիւրն կենդանի ջրոյ՝ դիմէր 'ի գուբս յարբումն: (Երեմ. բ. 12):

Այլ մի՛ յոյժ վառեսցուք սրտմտութեամբ ընդդէմ Հրէից, որոց փոքր է ամպարշտութիւն քան զմերս: Ամենայն մեղաւորի կչիռք իմն են 'ի ձեռին. և եդեալ 'ի միումն նժարի զԱստուած զդերագոյն բարի, զնախադասելին քան զամենայն բարիս, և 'ի միւսումն՝ զհեշտութիւն համառօտ, զախեղծ և զաղտեղի հաճութիւն, ընտրի առնէ նախ առանձինն թէ ո՞ր ընդունելի իցէ, Աստուած եթէ ապիրատ հաճոյքն. և ապա կնքէ սովորելով դատաստանաւն, եթէ ծանրակշիռ իցէ բարին այն աւերևոյթ և չնչին՝ քան Աստուած: Ոչ աւելազանց ինչ են բանքս: Զոր օրինակ ասացին Հրեայքն առ Պիղատոս, զԲարաբբա կամիմք և ոչ զՅիսուս, այսպէս 'ի պահու մեղանացն ասէ մարդ. Ինձ արարածս այս սիրե-

լի է քան Աստուած. ինձ հաճոյագոյն է լրումն ցանկութեանս՝ քան թէ Աստուած. հաճոյագոյնք են ինձ շնորհք սատանայի քան Աստուծոյն. սիրելի ինձ մարմին քան հոգի. սիրելի ընդունայնութիւն քան յաւիտենականութիւն. և առաւել հաճոյ մշտնջենաւոր պատուհասն քան մշտնջենաւոր վայելքն: Անհնար է զայսոսիկ զմտաւ ածել և ոչ զարհուրել. և թուի թէ յանհնարիցն իցէ հաւատացելոյ յետադասել զԱստուած քան զինչ և իցէ իր. և սակայն այդպէս գործի: Քանզի ես իմ իսկ չիցէ այդպէս արարեալ. եթէ 'ի քնին մտանեայց՝ ոչ կարեմ զթիւն 'ի համար ածել:

Արդ ամբաստան լինիմ զանձին չարութիւն, ով Աստուած իմ, և առեալ զարշիմ 'ի նոցանէ ցաւօք և զղջմամբ: Աւա՜ղ ապշութեանս, զի լաւ համարեցայ զիս քան զքեզ, և զկամս ցանկութեան իմոյ կատարել քան զարհամարհանս քո: Կամիմ դառնալ 'ի թիւր գնացից իմոց, և 'ի գթութիւնս քո ապաւինեալ՝ խոնարհ թախանձանօք ժտիմ ներումն թողութեան: Ո՛վ Յիսուս, որ լքեալ յամենեցուն՝ լքանես և ոչ զոք, պաշեմ զքեզ, ողորմեա՛ց ինձ. 'ի ժամէ աստի յայսմանէ վկայ կարդամ զդասս հրեշտակաց և զսուրբս երկնից, զի զքեզ միշտ մեծարեալ ընտրեցից, զյաւիտենական, զամենակարող և զանբաւ բարիդ՝ քան զայլ ամենայն բարիս: Ի վեր քան զամենայն արարածս՝ զքեզ ցանկամ սիրել, և սիրեցից. և շնորհօք քովք մի եղիցի ինձ այսուհետև անարգել զքեզ ընաւ ամենևին: Դու ինձ մեծարոյ ես յոյժ քան զամենայն հաճոյս, քան զամենայն գանձս և զպատիւ աշխարհի. առաւել սիրեմ զքեզ քան զանձն իմ: Այլ հաստատեա յիս զկամս իմ յողդողդունս. այս թէ ոչ առանց քոյոյ օգնականութեան յետ սակաւու միոյ դարձեալ սիրեմ զանձն իմ քան զքեզ:

·Քննեցից տեսից զինչ իւք իցէն յիս՝ զոր սիրիցեմ առաւել քան զԱստուծոյն. ոչ է ինձ արգելեալ սիրել զվայելչութիւն, այլ գերազանց սիրով սիրելի Աստուած միայն է:

Թախանձ Հրէիցն զի խաչեսցի Յիսուս:

ՄԻԸ. Ոչ հանդուրժէ Պիղատոս դադարել 'ի զարմանացն ընդ գործ այլանդակ ընտրութեան Հրէիցն, նախադասելոյ զԲարաբբա քան զՅիսուս. 'ի կարծիս անգամ չանկանէին նմա իրք: Արդ առ ամաչեցուցանել զնոսին և դարձուցանել յանօրէնութեան գնացիցն, իսկ զի՞նչ արարից, ասէ, զՅիսուս: Զայս ասելով կամի իմն 'ի հաւանութիւն կամաց նոցին ապաստան լինել, առ 'ի զիջուցանել զնոսա և իբրու յաղթել բարեբարութեամբ: Այլ նոցա առաւել ևս սրտամտեալ՝ աղաղակէին միաբերան, Խաչեսցի Յիսուս: Ո՜վ կուրութեան մտացն և անարդարանալի չարութեանն: Արդ այժմիկ, ըստ մարգարէին բանի (Ես. ԼԴ. 13), Երուսաղէմ որջ եղև վիշապաց թռչնաւորաց և ճիւաղական գազանաց. զի անբանօրէն և անգթաբար, յետ խնդրելոյ կեանս ազատութեան եղեռնագործին՝ կատաղելով և մռնչելով պահանջէին զի մեռցի ամենևին անմեղն Փրկիչ:

Այլ հայեցուք և 'ի Յիսուս, որ ոչ ցասնու ընդ ամպարիշտսն, և ոչ պակնու 'ի լրոյ խաչի և մահու և անարգականն մահու: Նկատեսցուք յայսմ ամենայնի զգթութիւն Յիսուսի և զառաքինութիւնս՝ զոր գործէն ամենակատար օրինակաւ և հզօրագոյն ներգործութեամբ սրտին: Արութեամբ կրթի և ընդդէմ երկեղին՝ զոր զգայ

ազնուական ոգին յարհամարհանաց անտի, և ընդդէմ ահի մահուան՝ յորժէ խորշի քաջեռանդն զգայութիւն նորա: Համբերութեամբն նահատակի ընդդէմ նախատանաց՝ զոր մի ըստ միոջէ գնէին նմա. հեզութեամբ, խոնարհութեամբ և սիրով՝ ընդդէմ գոռոզութեան և ատելութեան թշնամեացն. և առ ամենայն դէպս՝ որովք ընդդիմամարտի ընդ մեզ չարութիւն մարդկան, ցուցանէ մեզ՝ եթէ որպէս արժան իցէ զդէմ ունել և պաշտպանել անձանց վեհական կրթութեամբ համապատշաճ առաքինութեանց:

Ո՜վ վայելուչ վարժարան՝ զոր բանաս ինձ, աստուածային իմ վարդապետ, քոյովք օրինակօք: Այլ աւա՜ղ ինձ անհրահանգ և անարժան աշակերտիս, որ ոչ խրատիմ ինաւ յայսպիսի պատուական դասուց: Անդուստ եմ խորախուար չարութեան, երագ 'ի խորասուզել և 'ի սովորել յամենայն ազգս մոլութեանց, և ամենեքին վտառու յուսումն գերագոյն առաքինութեանցն՝ որ քեզ սեփականք են և ինձ կարեւորք 'ի փրկութիւն: Տեսանեմ զի ողորմութիւնք քո ոչ բարձի թողի առնեն զիս, քանզի ոչ դադարես 'ի լուսաւորելոյ, 'ի ներշնչելոյ և օգնելոյ ինձ: Այլ ընդէ՞ր է ինձ տակաւին լի գոլ ախտիւք, և յայնքան ժամանակաց հետէ և ոչ մի առաքինութիւն ոչ ստանալ: Ո՜վ ապերախտ, ապառում և խոտորասէր հոգւոյս: Պատճառք ամենայն չարեացդ, զի ոչ խորհիս 'ի չարչարանս Քրիստոսի, բայց եթէ իբրև յարտաքնոցն ինչ պատմութիւնս: Ո՜ տայր ինձ ճշմարիտ հաւատով, որպէս արժանն է, խորհել յայսոսիկ: Արդ, ո՞ն առեալ, մաղթեա ամենագութ Փրկչիդ, և թօթափեա զպղերգութիւնդ. խնդրեա խուզեա զգանձն, և հաւատա զի գտցես զոր ոչն գտեր ցարդ: Յիսուս իմ,

յանձն առնեմ զիս քեզ՝ 'ի շնորհս ամենասուրբ չարչարանաց քոց:

Արծարծեսցիս յիս զտենչանս նմանող լինելոյ առաքինութեանց Քրիստոսի. և ծանեայց՝ զի սկիզբն նմանութեան իցէ խոնարհութիւնն. քանզի անմարթ է ինձ առանց այսորիկ զայլ ինչ ստանալ առաքինութիւն:

ՄԻԹ. Յամբոխել Հրէիցն և 'ի բարձրաձայն գոչել զի խաչեսցի Յիսուս, դադարէ առ վայր մի Պիղատոս, թոյլ տալով ցածնըլոյ աղմըկին. ոչ կարելով 'ի միտ առնուլ՝ թէ զիա՞րդ յամառեալ անգթութեամբ խնդրիցեն 'ի խաչ հանել զանմեղն, և ոչ կամելով տեղի տալ աղաղակին՝ հակառակ պարտուց արդարութեան, մանաւանդ վասն թախանձանաց կնոջ իւրոյ, վերստին 'ի ձայն բարձր կրկնէ. Զի՞նչ չար արարեալ իցէ դորա: Եւ այսու բանիւ անմեղ զնա ցուցանելով՝ ընդ նմին յայտ իմն առնէ եթէ կամիցի արձակել զնա: Իսկ Հրէիցն առաւել ևս կատաղեալք՝ վերստին գոչեն մատնել զնա 'ի խաչ: Զպատասխանին առ հարցուածն՝ թէ իցէ՞ ինչ չար արարեալ նորա. զի ոչ ինչ գտանի յայնպիսեաց անտի գործեալ նորա. այլ միայն բըրդին յանհեդեդ բաղայս, առ 'ի հասանել ցանկութեան իւրեանց՝ դատապարտելոյ զնա, ուժգին հայցմամբքն և հայհոյութեամբք:

Այսպէս 'ի գլուխ ելանէ նախասացեալն 'ի Փրկչէն 'ի Գիրս սուրբս. և այս է օրինակ եղելումն 'ի հանապազօրեայ գործս մահուչափ մեղաց. յորժամ զերկրաւոր հեշտութիւն ընդ Աստուծոյ 'ի կշիռ համեմատութեան եդեալ, և զհեշտութիւն քան զԱստուած մեծարեալ, գոչեն, թէ ոչ ձայնիւ՝ այլ գործով՝ որ չարագոյն ևս է, եթէ Կեցցէ չարութիւն, կեցցեն մեղանք, և

'ի բաց բարձցի Աստուած . մեռցի անմեղութիւն, խաչեսցի սրբութիւն: Իսկ գիտակցութիւն միայն յայնժամ ասէ ցմեղաւորն. Զի՞նչ չար արար քեզ Աստուածն քո. ո՞չ նա ետ քեզ զկեանս, և պահէ զնոյն. ո՞չ նա առնէ քեզ բարիս բազումս և սիրէ առաւել գթով քան զհայր: — Այլ իցէ որ ինչ և է, պատասխանէ մեղաւորն, լաւ իցէ Աստուծոյ 'ի փառացն զըրկիլ՝ քան ինձ 'ի հաճոյից սատի: — Զի՞նչ ասիցեն արդեօք հրեշտակք յերկինս՝ զայսպիսի տեսանելով ժպիրհ յաւակնութիւն ամպարշտութեան:

Եւ զի՞նչ ասացից ես ինքն զանձնէ իմմէ, որ բազում անգամ գտայ այսպէս ժպիրհ և ամպարիշտ, որ ընդդէմ մտացս խղճի բողոքեցի, հակառակելով Աստուծոյ իմոյ: Երիցս բողոքեցին Հրեայքն առ Պիղատոս, և կրկնութեամբքն առաւել քան զառաւել անօրէնք գտան. իսկ ես քանի՞ցս և քանիցս բողոքեցի առ իմս գիտակցութիւն, յամառեալ 'ի կամս թշնամանելոյ զԱստուած: Արժան էր ինձ, ո՛վ Փրկիչ իմ ամենասուրբ, զի քանիցս գոչեցի ընդդէմ քո՝ Խաչեսցի, այնքան և դու գոչէիր յաւուրն դատաստանի, առ 'ի կրկնել կուտել զինև զյաւիտենական անէծս քո: Այլ գոհութիւն ողորմութեանց քոց, զի ոչ արարին զանց զինև որպէս զՀրէիւքն: Խառնամ'ի մեղաց իմոց և ապաշաւեմ. և դուն գործեմ քոյով օգնականութեամբ յայսմ հետէ գոչել միշտ և հանապազ, Մեռցին յանցանք, կեցցեն շնորհք. մեռցին մեղք, կեցցէ Յիսուս:

Անսացից ազդմանց խղճի՝ որպէս շնորհաց և ողորմութեանց Աստուծոյ. և առաջադի՛ր եղեց խաչել մեռուցմամբ զգոռոզացեալ անձնասիրութիւն իմ, զի դա գրգռեաց զկիրս ախտից իմոց աղաղակել՝ Խաչեսցի Յիսուս:

ՄԼ. Մեծ էր ամպարշտութիւն Հրէիցն 'ի խնդրելն արձակել զԲարաբբա և ոչ զՅիսուս. քանզի առաւել լաւ համարեցան զկեանս աւազակի միոյ քան զփրկչին տիեզերաց. նա մանաւանդ վատթար համարեցան զսա' քան զաւազակն հրապարակագոյժ: Թեթևագոյն լինէին յանցանք նոցին եթէ զաղատութիւն Բարաբբայ խնդրելով' թոյլ տային Պիղատոսի առնել ընդ Յիսուս զոր և կամիցի: Ծանրութիւն չարեացն յայսմ իսկ է, զի խնդրեն զչարագործն ապրեցուցանել' առ 'ի դատապարտել զարդարն. և արդարև իսկ խնդրեն զդատապարտութիւն Արդարոյն, որ յամենեցուն յայտնապէս արդար ճանաչի, և անարգանօք ամբաստանեն զնմանէ' չարագոյն լինել քան զաշխարհածանօթ եղեռնաւորն: Եւ ո՞ լիցեն գոքա որք այդպէս վրիժալից աղաղակեն զի խաչեսցի Քրիստոս: — Այնոքիկ' որ փոքր մի յառաջ ոստովք ձիթենեաց ելեալ ընդ առաջ նորա' Որդի Դաւթի և թագաւոր Իսրայէլի կոչէին զնա. արդ վեց աւուրք են զի բարբառնեալ կեցցէ կարդային նմա. և զի՞արդ այսպէս վաղվաղակի փոփոխեցան' մինչև կամել զի մեռցի, և մեռցի անարգական մահուամբ: Եւ զի՞նչ գործեաց նա յաւուրքս վեց' զի այդպիսի մահուամբ մեռցի: Յառաւօտէ մինչև յերեկոյ քարոզէր, և ամենեցուն բարիս առնէր, որպէս և միշտ սովորն էր. և յա՞յս սակս ուրեմն գոչեն 'ի վերայ նորա, զի Խաչեսցի: Ո՜վ աշխարհ, քանի՜ յեղյեղուկ ես և խաբուսիկ:

Միտ դիցուք և Յիսուսի: Զոր օրինակ ոգի նորա ոչ ընդունայնացաւ երբեք 'ի պատիւս, և ոչ 'ի նախատինս լքանի. 'ի յաջողութեան և 'ի վիշտս' փառաց Հօրն յաւիտենականի և եթ դէտ ակն ունի. և ոչ կարեն դղրդուեցուցանել զնա ոչ գովեստք և ոչ պարսաւանք աշ-

խարհի: Ո՜վ պայծառ օրինակ վասն իմ. զայս վարդապետութիւն անկ է ինձ ուսանել այժմիկ. զայս առաջադրել. մի ինչ առ սէր գովութեան գործել, և մի առ երկեղի պարսաւանաց զանց զպարտուք իմովք առնել: Եթէ և ամենայն աշխարհ գովեսցէ զիս՝ ոչ եթէ վասն այնր փրկեցայց. և եթէ աշխարհ ամենայն զիս նախատիցէ՝ ոչ վասն այնր դատապարտեցայց. զի ոչ 'ի դատաստանս մարդկան հաստատեալ է յաւիտենականութիւն իմ: Ի բուին իմում կայ հոգիս իմ. և 'ի գործոց իմոց՝ եթէ բարի և եթէ չար՝ վիճակեսցի բաղդ իմ:

Աղէ, Աստուած իմ Յիսուս, զօրացո զիս 'ի գործունակ պահպանութիւն առաքինութեանս այսորիկ, չառնելոյ ակն յընդունայն և 'ի վրիպական դատաստանաց մարդկան. այլ յամենայն 'ի գործս իմ 'ի քեզ միայն կառուցանել զուշ մտաց. քանզի դու ես դատաւոր իմ, և արդարութեամբ անկ է քննել զգործս իմ. և ինչ ոչ օգնեսցէ ինձ համբաւ բարի՝ եթէ ոչ ուղիղ գոցին գործք իմ առաջի քո. և ոչ ինչ սասանեսցէ ինձ համբաւ չար առաջի մարդկան՝ եթէ արդար և ուղիղ իցէ սիրտ իմ յաչս քո:

Գովասիրութիւն և երկիւղ պարսաւանաց՝ երկոքին ևս ծնունդք են հպարտութեան. իսկ ճշմարիտ հնարք անփոյթ լինելոյ զասացելոցն զինէն՝ է լինելն խոնարհ: Խնդրեցից ուրեմն 'ի Յիսուսէ զխոնարհութիւն:

ՄԼԱ. Հաստատուն կայ Պիղատոս 'ի կամս չդատապարտելոյ զՅիսուս, կրկնելով զի ոչ գտանէ պատճառս դատապարտութեան. պնդեն և Հրեայք ամենայնիւ դատապարտել զնա, առաւել քան զառաւել բարձրացուցանելով զձայնս իւրեանց, և կամելով բռնութեամբ յաղթա-

հարել զարդարութիւն։ Գուշէն մոլեգին յուսահատութեամբ գրգռեալք յիշխանացն, այլ առաւել ևս 'ի գիւղից սադրեալք. և 'ի դէպ է կարծել եթէ ինքնին սատանայ առաւել 'ի խաղալել զնոսա համոզիչեր լինէր՝ եթէ հնար էր նմա հասու լինել խորհրդոց գթութեանցն Աստուծոյ։

Այլ մեք լուսով հաւատոց խորամուխ լիցուք 'ի խորհուրդս։ Արդարապէս կամք եղեն Աստուծոյ իմաստութեանն անօրինել զհռչակ անմեղութեան Յիսուսի, և միանգամայն զդատապարտութիւն նորին. որպէս զի յայտ լիցի եթէ նա է զոհ զատկին, անբիծ և անարատ, պատրաստեալ 'ի զենումն, 'ի քաւութիւն օտարացն մեղաց և ոչ իւրոց ինչ։ Արդարապէս փոխանակ Բարաբբայ դատապարտի Յիսուս 'ի մահ, և վասն Յիսուսի ազատի Բարաբբա. քանզի ճշմարտապէս եկն Յիսուս 'ի կրել զպատուհաս մեղաւորացս կերպարանելոց յանձն Բարաբբայ. և դատապարտութեամբն Յիսուսի մեք փրկեցաք։ Ո՜վ խորհուրդք խորինք։

Քաջ իրաւամբք ասաց Պիղատոս եթէ ոչ գտանէ պատճառս մահու 'ի քեզ, ո՜վ Փրկիչ իմ աստուածային. քանզի զիա՞րդ հնար էր անհաւատին հասու լինել գաղտնեաց յաւիտենական վճռոցն։ Ոչ 'ի նախատանաց գործիս և ոչ 'ի մահուանէ խորշիս, այլ կամիս զի ծանիցի վամական պատճառ մահուանդ, և ազնուական արդիւնք նորին։ Պատճառք՝ սէր քո եղև և մեծ ցանկութիւն քո 'ի քաւել զմեղս մեր. արդիւնք՝ շնորհքն, թողութիւնն, հաշտութիւնն ընդ Աստուծոյ։ Ո՜վ Յիսուս իմ, ընդ ո՞ր առաւել զարմացայց, ընդ չարութի՞ւն Հրէիցն անգթացելոց 'ի վերայ քո, եթէ ընդ գթութիւն քո սիրարկու 'ի մեզ։ — Դարձո, հոգի իմ, զխոր-

հուրդս քո 'ի տմարդի և 'ի դիւաշունչ հրէ-չից. և զկայ առեալ 'ի քննել և 'ի վայելել զճաշակ քաղցրութեան մարդացելոյ Որդւոյն Աստուծոյ եգորովելոյ զքեւ, յորդորեաջիր բոր-բոքիլ 'ի սէր նորա : Աղէ, վառեա՛ց իմաստուք անբաւելի խոնարհութեան նորա. և 'ի տեսա-նելդ զնա առ սէր քո այնքան խոնարհեալ՝ մին-չև յանձն առնուլ առաւել մեղապարտ և մահա-պարտ դրիլ քան զԲարաբբա, տե՛ս, ո՞ւր դտա-նիցես քեզ տեղի ճահադոյն, եթէ ոչ 'ի ստորև քան զամենայն դեւս դժոխոց սակաւամեղս քան զքեզ: Աստուած իմ, երկնչիմ թէ այն ամենայն զոր եսանդն ըղձից վարկանիմ՝ դուցէ արդեօք խաղ ինչ իմացուածոց իցէ. տո՛ւր ինձ 'ի ճշմա-րիտ սրտէ ասել զոր մօքս ասեմ. առանց քո ոչ ինչ գիտեմ, ոչ ինչ կարեմ. այլ 'ի քեզ միայն ապաւինիմ:

Զպատճառ զոր ոչ գտանէ Պիղատոս 'ի մահ Յիսուսի՝ գտից ես յիմում գիտակցութեան մտաց. և են մեղք իմ: Առցին քննախնդիր եղեց քան թէ Հրէիցն այնոցիկ:

Յիսուս թողեալ լինի 'ի կամս Հրէիցն:

ՄԼԲ. Ի վերջին հասաք պայքար յորում վըճ-ռեսցի վասն Յիսուսի՝ կամ արձակել ի բրև ան-մեղ, կամ դատապարտել որպէս յանցաւոր. և դէպք իրացն եղեն ըստ առաւելագոյն զօրու-թեան միոյ 'ի վիճողացն. կամ Պիղատոս յաղթե-սցէ՝ որ արձակելն կամի զնա, կամ ժողովուրդն, որ 'ի խաչ հանել խնդրէ: Զմտաւ ած և տես, յո՞ր տառապելութիւն հասեալ կայ միածինն Որդի

Հօր յաւիտենականի, 'ի նշաւակի կալով և զպատուոյն և կենացն, և ոչ ումեք ջատագով կամ օգնական գոլով նմա: Արդարև ողորմելի վիճակ, այլ յուշ լիցի, զի և ոչ մի ինչ անցանէ ընդ Յիսուս որ ոչ իցէ սահմանեալ 'ի Հօրէն և հաճեցեալ յիւրմէն: Որքան վեհագոյն քան զբնաւս հանդիսացաւ պարգևօք շնորհաց, գիտութեան և այլոց ազնուական ձրից, այնքան և խոնարհեցաւ և նուաստացաւ արհամարհանօքն զոր կրէ, ըստ նախագուշակութեան մարգարէին. և այս վճիռ է նմա յաւիտենական, զի խոնարհեսցի ըմպել յուղխից անարգանաց, մինչև ամբարձեալ զգլուխն 'ի պսակիլ փառօք:

Մտցուք աղէ 'ի ներքս 'ի սիրտ Աստուածամարդոյս, տեսանել եթէ զինչ վերընծայէ Հօր զտառապանսն: Յանձն լինի նմա որպէս աղքատ և որբ լքեալ, շուրջ պատեալ 'ի զայրագին և յոխերիմ թշնամեաց: Այժմիկ երևի նա արդարև որդն աղկաղկ անկեալ 'ի գեհնս հրապարակի, ոտնակոխ անցաւորաց: Եւ մի ոք կարծեսցէ եթէ որպէս մեզ՝ լիցի և նմա, որք 'ի մեծամեծ տագնապս վշտաց՝ յառաւելուլ կրից՝ ուշագնաց լինիմք: Թէպէտ և յանհնարին վիշտս է Յիսուս՝ այլ խռովի ոչ. ոչ ծուխք կրից վերաշնչեալք մթարս ածեն զպայծառութեամբ մտացն. ոչ ցաւք զգայութեանցն կասեցուցանեն զզօրութիւնս հոգւոյն, և ոչ կսկիծն արգելու զկարեկցութիւն. ոչ տրտմութիւնն խափանէ զեռանդնն, և ոչ շռինդն թշնամանագիր աղաղակին՝ շուարեցուցանէ զուշ մտացն զգաստութեան, առ 'ի թուլացուցանել զոգին 'ի յարակիրթ ներգործութենէ սրբութեան և կատարելութեան:

Ուսիր, հոգի իմ, այնպէս վարիլ, զի մի վիշտք և տառապանք, և մի որպիսի և իցէ արկած կամ

արարած երկրաւոր՝ արգելուլցու զքեզ 'ի միա- նալոյ ընդ Աստուած՝ ներգործութեամբք սրտի։ Ներքին ներգործութիւնն է որ ազնուացու- ցանէ զամենայն գործս և զկիրս։ — Այլ ես զինչ կարիցեմ խոստանալ առնել, ով Յիսուս իմ, որ առանց քոյ օժանդակութեան և ոչ զանուն քո սուրբ արտաբերել բաւեմ։ Աղէ տուր զօ- րութիւն տկարութեանս իմոյ՝ քոյովդ ամենա- բաւական կարողութեամբ։ Տուր ինձ զքեզ յի- շել, զքէն խորհել, առ քեզ ուղղել զմիտս իմ, առ 'ի սիրել զքեզ և հաճոյ գտանել յաչս քո՝ յամենայն դէպս և պայմանս կենաց իմոց։

Փոյթ եդից կրթիլ 'ի ներգործութիւնս՝ ըստ նմանութեան Յիսուսի, և 'ի յաջողակին և 'ի ձախողակին դէպս, և 'ի պարտս վիճակի իմոյ, և յո և պէտ գուշնաքեայ իսկ գործս։

ՄԼԳ. Գիտէ Պիղատոս զի այր արդար է Յի- սուս. գիտելով և զայն զի Հրեայքն որպէս չա- րութեամբ ամբաստան լինին զնմանէ՝ փափա- գեն և անգթութեամբ 'ի խաչ հանել զնա, ոչ կա- րէ 'ի չքմեղս լինել 'ի հաւանելն անիրաւ խնդրոյ նոցա՝ առ 'ի դատապարտել զանմեղն։ Եւ սա- կայն ակն յանդիման ամենայն ժողովրդեանն՝ տայ բերել ջուր և լուանայ զձեռսն. յայտ իմն առնել կամելով այնու հրահանգաւ, եթէ սուրբ իցէ գիտակցութիւն մտաց իւրոց, չունի ինչ չարութիւն 'ի հեղման արեան նորին, այլ պատ- ճառք այնորիկ իցեն նորին իսկ ժողովրդեան ա- ղաղակն։ Անիրաւ դատաւոր, որ ճանաչէ զյան- ցանս Հրէիցն և զիւրն ոչ ճանաչէ. քանզի ոչ կամի ճանաչել, այլ ստապատիր բաղբաղանօք ձևեթել. բայց նա թէպէտ և ոչ կամի՝ ոչ նաև չիցէ արդարև մեղապարտ։

Ի մեզ ինքն վերաբերեալ զայդ գործ՝ խորհրդ-

տեսցուք: Քանզի յամենայն վկայէ իցեն իբրև զՊիղատոսդ, որք ոչ համարին մեղս զգործ մեղայն, այնու զի ըստ հաճոյս անձանց յարդարեն զկարծիս և զխիղճ իւրեանց: Այլ իցէ՞ երբեք թէ յատենին Աստուծոյ ոչ համարեսցին մեղք մահացուք՝ զոր մեքն ոչ կամիմք այնպէս համարել՝ ըստ մերս ինչ կարծեաց: Երկնչել անկ է մեզ, թէ մի արդեօք Աստուածն որ ապառնայ դատել և զարդարութիւնս դատեսցէ և զբաղում ինչ արդարութիւնս՝ որով մեքս անբասիր առնեմք զանձինս, առաւել հակամէտք շնորհուկս առնելոյ ցանկութեան քան խղճի մտաց: — Մեծապէս պէտք են ինձ քննել զանձն իմ ըստ այսմ մասին, որ կարևորն է յոյժ, և որ վրիպի 'ի տեսութենէս վասն կուրութեանն յանձին սիրոյ: Գիտեմ արդարև զի վաղվաղակի հաւանիմ կարծեաց որ օրինաւոր ինձ ցուցցեն զիրս՝ յոր յօժարեալս եմ, և չառնեմ փոյթ քննելոյ զճշմարտութիւն, շատացեալ հաւանականաւն՝ որ թերևս առերևոյթ միայն իցէ և 'ի վերին երեսս: Սիրեմ զազատութիւն, ոչ զորդւոցն Աստուծոյ այլ զորդւոց աշխարհիս, և յաճախ անձուկս և խիստս յոյժ կոչեմ զառածսն հիմնեալս 'ի վարդապետութիւն աւետարանին՝ ըստ տեսութեան Հարցն Սրբոց:

Զանգիտեմ. Փրկիչ իմ Յիսուս, եթէ 'ի ձորն Յովսափատու դատեսցես զիս այնու դատաստանաւ՝ որով զՊիղատոսն: Ճշմարտութիւն ինքնին դու ասացեր դու զանձնէդ. և զճշմարտութիւն անկ է ինձ իմովսանն խնդրել ամենայն հնարիւ. և զի այդ դիւրագիւտ է ըստ խոստման քում, եթէ որում աղաչիցէ ճանաչել զճշմարտութիւն՝ տացես նմա լոյս ճանաչելոյ, զիա՞րդ իշխեցից արդարանալ 'ի չքմեղս լինելով՝ չճանաչել զճշմարտութիւն, մինչ չիցէ իմ

աղօթիւք հայցեալ երբեք լոյս ծանօթութեան։ Այլ արդ աղաչեմ և խնդրեմ՚ի քէն, Աստուած իմ, մի թողուր զիս մոլորել՚ի շաւիղս կենաց իմոց։ Տուր ինձ ոգի սիրելոյ, փափագելոյ և խնդրելոյ զճշմարտութիւն, զի մի խաբեցայց ստապատիր կանոնօք յարդարել ինձ գիտակցութիւն մոլար։

Զգուշացայց յերկբայս խղճի մտաց՝ մի վստահանալ յընդարձակ վարկածս, և 'ի խոստովանութեանս՝ մի թեթև ինչ համարել զմեղսն՝ որ թերևս ծանունք իցեն։

ՄԼԴ. Զար քան զՊիղատոս են Հրեայքն. զի թէ ոչ ծանեան զՔրիստոս իբրև Աստուած ճշմարիտ, պարտ էր և մարթ էր նոցա ճանաչել զնա այնպէս 'ի սքանչելեացն, 'ի վարդապետութենէն և 'ի մարգարէիցն պատգամաց. և չկամելն ճանաչել զնա՝ առ ատելութեանն և քինու, պատրուակեալ տգիտութիւն է, որ առաւել ևս մեղապարտս և անարդարանալիս կացուցանէ զնոսա։ Բազում անգամ լուեալ էր նոցա զբանս նորին և զարմացեալ և Սուրբ կարդացեալ զնա. իսկ այժմիկ մինչ ամենեքին 'ի խաչ հանել զնա աղաղակեն, ժպրհին կարծել թէ սրբապիղծ կամօքն այնու և ոչ թեթևս ինչ մեղս գործիցեն. և 'ի թափել Պիղատոսի 'ի գլուխս նոցա զպարտս անիրաւ հեղման անմեղ արեանն, Այո՛, գոչեն, հաւանիմք զմեզ պարտապանս գրել արեանդ այդմիկ. եկեսցեն վրէժքն 'ի վերայ մեր և 'ի վերայ որդւոց մերոց։

Ո՜վ չարութիւն, քանի՞ կոյր իցես։ Սակաւ մի յառաջ օրհնէին զեկեալն յանուն Տեառն, և արդ գոչեն 'ի խաչ հանել զնա. խուն մի յառաջ խղճէին մտանել յապարանն՝ զի մի պղծիցին, այժմ և ոչ մի ինչ սոգիւս խղճի 'ի հնարել

զմահ արդարոյն: Կարծեն թէ և ոչ ստուեր ինչ մեղաց կայցէ 'ի գործդ. այլ զանձինս խաբեն. և խաբեբայքն իսկ մեղանչեն, քանզի չարութեամբ են կուրացեալք:

Այս անցք են և ընդ իս, հաւատալ և խոստովանել՝ եթէ Աստուած ամենեւին արժանի է սիրոյ և ունկնդրութեան, և թշնամանել զնա: Աստուած զոր մեղօքս անգոսնեմ՝ նա ինքն է զոր պաշտեմս 'ի բազմոցին՝ յեկեղեցիս, և յանբաւութեան իւրում ամենայն ուրեք: Եւ զիա՞րդ գործիցի այդ. մերթ յարգել զԱստուած այնքան պաշտամամբք կրօնից, և մերթ թշնամանել այնքան ապիրատ գործովք: Աստուած իմ, ո՜հ, քանի՜ն հաւատք իմ նշաւակեն զչարութիւնս իմ. և քանի՜ կոյր և անզգայ յարգարէ զիս չարութիւնս իմ: Սուրբքն 'ի քննել զխիղճ մտաց իւրեանց՝ ստգտանեն և զդոյզն արատս յանցուածոց և թերութեանց. իսկ ես առ ոչինչ համարիմ զմեղս՝ որք արհաւիրս ածէին այլոց ոմանց: Հրեայքն չհամարէին մեղս 'ի խաչ հանել զքեզ, քանզի մահապարտ դատէին, իսկ ես ճանաչեմ զքեզ արժանի պատուոյ և անմահ փառաց, և տակաւին 'ի խաչ հանեմ զքեզ, և դոյզն ինչ համարիմ զաստուածասպանութիւնն: Ա՜հ. իցէ՞ ոք 'ի վերայ երկրի ապառում քան զիս. — չիք ոք, չիք ուրեք. այլ յայսր ամենայնի վերայ ապաւինիմ յողորմութիւն քո, ո՜վ Փրկիչ ամենագորով 'ի փրկութիւն մարդկան. և խնդրեմ 'ի քէն սրբել զիս 'ի մեղացն գաղտնեաց՝ զորս ոչ ճանաչեմ, առ վրիժապարտ կուրութեանն՝ որում արժանի գտայ: Լուսաւորեա զխիղճ մտաց իմոց. և մի՛ հայիր յանօրէնութիւնս իմ՝ արդարակորով աչօք 'ի պատուհասել զնոսին, այլ կարեկիր աչօք 'ի թողուլ և 'ի ներել. և շնորհեա ինձ զսէր քո:

Ոչ խակախակ գլորի մարդ 'ի կուրութիւն և յամպարշտութիւն, այլ առ փոքր փոքր: Սանձեցից զկիրս, զգոյշ կացից յառիթման. քանզի մերձենալն 'ի մեղս՝ սկիզբն է մեղանչելոյ:

ՄԼԵ. Լուեալ Պիղատոսի զանիծադրութիւն Հրէիցն որ զվրէժս անպարտական արեանն կարդան 'ի վերայ անձանց և 'ի վերայ ամենայն սերընդոց իւրեանց. — անէ՛ծք արդարև ցաւագինք և ահագինս. — ափշեալ և ընդարմացեալ՝ թողու զվաղվաղակի ազատ զամբոխիչն Բարաբբա զորոյ խնդրեալ էին նոքա շնորհս արձակմանն. թողու և զՅիսուս 'ի հաճոյս նոցա, զի զոր ինչ և կամին արասցեն ընդ նա: Եւ զի՞նչ այլ կամիցին նոքա, բայց եթէ զի մեռցի Յիսուս մահու խաչի: Եթող զնա, ասէ աւետարանիչն, 'ի ձեռս նոցա. և մեզ 'ի դէպ է հարցանել, եթէ հնա՞ր ինչ էր մատնել զնա 'ի ձեռս անօրինագոյն և ժգդժագոյն դատաւորի:

Զնոյն գործեմք և մեք յորժամ մեղանչեմքս: Ունիմք ամենեքին կամս ինչ՝ որ կոչին կամք մարմնոյ, կամք սեփականք, այսինքն են կամք անձին սիրոյ, որ զհետ երթայ խոտորեալ յօժարութեանց ախտիցն, և ուղղակի հակառակեալ զկամօքն Աստուծոյ. որպէս զի 'ի չկամելն ինչ Աստուծոյ, և նորա կամելով զայն հակառակ Աստուծոյ՝ յաւակնի գերազանցել զԱստուծով և յաղթել նմա. և այնքան ապիրատ է և յոխորտ՝ զի ամենայնիւ ջանահնար լինի սպանանել զԱստուած, փափագելով իւրովանն զի Աստուած չեղէ Աստուած: Յայս սեփական կամս մատնէ զՅիսուս՝ յորժամ մեղանչէ ոք մահուչափս. և այդ զի՞նչ իցէ՝ եթէ ոչ միւսանգամ 'ի խաչ հանել զնա: Ո՛վ չարաչար կամք, ո՛վ նենգամէտ կամք: Այլ այսպէս ասելով զօգս կոծեմ 'ի զուր. անկ է ասել սեփական կամս, որ իմ իսկ է:

Ո՜վ Յիսուս իմ, են իմ 'ի ներքս խուժան կրից, որք յորդորելով զիս հանապազ 'ի մեղանչել՝ մերթ այսպէս և մերթ այնպէս, գոչեն անդուլ ընդդէմ քո. Ի խաչ հան, 'ի խաչ հան: Եւ քանիցս ոչ մատնեցի զքեզ 'ի ձեռս անիրաւ կամաց խուժանիդ: Յամենայն ժամ զգամ զմեղսասէր կամքս, որ հակառակ կալով քումդ սիրոյ՝ 'ի սէր ունայնութեանց վարեալ մղէ զիս ուժգին. և ե՞րբ իցէ զի ստուգապէս եգից 'ի մտի նուաճել զգոռոզութիւն սեփական կամացս, որ պատճառք և գրգիռ են ամենայն իմոցս կարեաց, և յարիլ սերտիւ 'ի քո կամս, որ աղբիւր է ինձ ամենայն բարեաց:

Էջ, հոգի իմ, մօքդ 'ի դժոխս, և տես, զիա՞րդ արդարութիւն Աստուծոյ պատուհանէ անդ միայն զանձին սեփական կամս. միայն սեփական կամք տոչորին մշտնջենաւոր հրով. որպէս զի եթէ չգոյին կամք սեփականք՝ և ոչ դժոխք կային: Քաջ զմտաւ ած. եթէ սեփական կամքդ կամին արդ խաչել զՅիսուս, խաչեսցէ և Յիսուս զկամքդ զայդ 'ի յաւիտեանս: Ապա ուրեմն... Շնորհեա ինձ, ո՜վ Յիսուս իմ, սիրել զանբաւ բարութիւնդ քո, և երկնչել յանսպառ արդարութենէ քումմէ:

Մեռելութիւն անձին կամաց՝ լիցի հանապազորդ կրթութիւն կենաց իմոց. մեռուցից զայն և յօրինաւորն իսկ, առ 'ի սովորիլ տիրապէս մեռուցանել զայն և յապօրէնն:

ՄԼՋ. Զէր պարտ ոչ Հրէից այնպէս անգըթաբար խնդրել՝ զի խաչեսցի Յիսուս, և ոչ Պիղատոսի այնպէս յանիրաւի մատնել զնա. քանզի տեսանելն լոկ միայն զամենեւին անմեղ գառնն՝ կրելով այնքան ամբաստանութիւնս, նախատինս, և լլկանս, և լուռ եւեթ կալով, առանց

անձին ինչ պաշտպանելոյ կամ ցանկալոյ, այն-
պիսի համբերութեամբ և հեզութեամբ՝ որ
յայտնապէս գերմարդկային ճանաչի, ոչ այդ-
քանական և հզօր առիթ էր՝ յետս կալոյ յայն-
պիսի անօրէն դատաստանէ։ Ի պատասխանելն
Յիսուսի առ հարցուածսն՝ քաջ'ի միտ առնուլին
'ի խոհական խօսիցն՝ եթէ այր զգօն է նա. և
'ի լռելն՝ ցուցանելով զոչն ներքևիլ 'ի թշնամա-
նաց անտի, յայտնի լինէր՝ եթէ գոյ 'ի նմա զօ-
րութիւն գերմարդկային. և 'ի խօսելն և 'ի
լռելն՝ յամենայնի զարմանալի երևէր։ Եւ սա-
կայն ոչ ոք օգտեցաւ յիրաց այտի։

Ո՜վ դատաստանք երկնից, խորք անդընդոց։
Այնքան խօսեցան և հնարեցան Հրեայքն՝ մինչև
յաղթողք դատան. թէպէտ և լռեալ էին զքա-
րողութիւն աստուածայնոյ վարդապետին՝ եթէ
արժան է պատկառ կալ արդարութեան 'ի դա-
տաստանի, այլ չածէին բնաւ զմտաւ, և առ ոտն
կոխեալ զամենայն փաստս արդարութեան՝
խնդրէին զդատապարտութիւն Արդարոյն։ Իսկ
արդարն Յիսուս՝ յայսքան աղէտս տառապա-
նացն՝ զինչ ասիցէ, կամ զինչ խորհիցի։ Տե-
սեալ զի 'ի գլուխ ելանէ պատգամ մարգարէին
(Ես. Ե. 7), եթէ անիրաւութիւն յաղթեսցէ
'ի դատաստանի, խորին հնազանդութեամբ
պաշտէ զարդարութիւն Հօր իւրոյ երկնա-
ւորի, և ոչ ինչ խռովելով յանիրաւութենէ
մարդկան՝ դադարէ 'ի լռութեան։

Իսկ դու զինչ ասիցես կամ խորհիցիս, հոգի
իմ, տեսանելով զտէրն քո՝ վատթարագոյն վար-
կեալ քան զաշխարհագոյժ չարագործն, և մա-
հու խաչի արժանի դատեալ, յանարգագոյնն
քան զամենայն աղգս տանջանաց։ Ես խորհիմ,
Տէր, զի որ այժմդ այդպէս անիրաւաբար դա-
տապարտիս, յաւուր միում գայցես 'ի դա-

տել զաշխարհ համօրէն՝ արդարութեամբ և
իրաւամբք. և այս լիցին իրաւունքն. տալ ամե-
նեցուն անաչառապէս ըստ գործոց իւրեանց.
բարեացն՝ զփառս յաւիտենականս, չարացն՝
զպատուհաս յաւիտենական: Իսկ ինձ զի՞նչ լի-
նիցի յայնժամ աւուր, որ բաղում անգամ ընդ
Հրեայսն գոչեցի վասն քո, Խաչեսցի: Զայս խո-
կամ, և յածելս զմտաւ՝ խոնարհեալ աստ. Ո-
ղորմեա ինձ, Աստուած իմ, ողորմեա ինձ. քան-
զի միայն ողորմութիւն քո բաւական է յօգ-
նել ինձ: Զէր ինձ պարտ բնաւ ամենեւին մեղան-
չել քեզ, մանաւանդ վասն այնչափ գթութեանց
ողորմութեան քո՝ զոր արարեր ընդ իս. և զի
անգոսնեցի ես զքեզ՝ միթէ վասն այդորիկ յու-
սահատ եղէց: Հաւատամ թէ 'ի վեր քան զբան
մեծ են գթութիւնք կեցուցչին իմոյ՝ քան զամ-
պարշտութիւնս իմ մեղաւորիս. վասն այնորիկ
զղջամ և ցաւիմ ընդ անօրէնութիւնս իմ. և
յուսադրիմ և վստահիմ յանբաւելի բարութիւն
քո, Աստուած իմ:

Աղաչեցից զՅիսուս՝ ձեռն տալ ինձ շնորհօք, զի
մի անզգայ գտայց ողորմութեանց իւրոց, համ-
գոյն Հրէիցն. զի թէ ոչ խրատիմ յօրինակացն
ընծայելոց ինձ 'ի չարչարանս իւր՝ եղեց նոցին
նմանող:

Ձաղկումն Յիսուսի:

ՄԼԷ. Զիջանի Պիղատոս 'ի թախանձանս
Հրէիցն, թողուլ զՅիսուս 'ի ձեռս նոցա՝ առնել
ընդ նա զոր և կամին. այլ զի գիտէ զանիրաւու-
թիւնն առ անմեղն, ձեռն արկանէ յայլ ինչ

ճնալոս, և տալ վճիռ ձաղկել զՅիսուս. ակն ունելով այնու հաճել և հանդարտել զժողովուրդն, և ամոքել՝ առ 'ի բաց կալոյ յանդգութ կամաց մոլոյց իւրեանց: Այս սովորութիւն էր ձաղկելոյ զդատապարտեալն 'ի խաչ. բայց աստանօր թուի դատաւորին առ գութ Յիսուսի առնել զայդ. ձաղկել՝ առ 'ի հաշտ առնել զառեալսն, և ապա արձակել զնա 'ի մահուանէ:

Այլ ո՜վ վճիռ անիրաւ, վճիռ վայրենի: Եթէ ճանաչես դու, Պիղատէ, եթէ չիք ինչ չար գործեալ առնդ այդորիկ, զիա՞րդ հնարիս արժանի ձաղկման գրել, որ չարագործացն է պատիժ: Իցէ՞ արդարութիւն պատուհասակոծ առնել զդատեալն անմեղ: Զիցէ՞ այդ եղեան ամպարշտութեան՝ զոր խուն մի յառաջ կշտամբեցեր 'ի Հրէայսն: Այլ մի՛ վայրապար յանդիմանեսցուք զդատաւորն. առցուք մեզ 'ի խրատ: Կարծեաց նա թէ զայս շնորհուկս առնելով ժողովրդեանն՝ ամոքեսցէ զնոսա. այլ վրիպեալ խաբեցաւ. քանզի հաճեցեալ նոցա ընդ ձաղկումն՝ յօժարեցան նենգութեամբ ապա և 'ի խաչ հանել զնա:

Այսպիսի ինչ և մեզ պատահէ: Որքան ջանայ ոք շնորհս առնել ախտիցն՝ այնքան դառնանան և ըմբոստանան. եթէ շնորհուկս առնիցես աչաց, առաւել ևս աճէ հետաքննութիւնն. եթէ որկորոյ շնորհիցես՝ աճէ անյագութիւն որովայնի. աճեն տենչք ցանկութեան, ցասման, յուլութեան և ամենայն ախտից, ցորչափ թոյլ տայցի նոցա առ փոքր փոքր. և անզգուշիցն 'ի փոքունց մեղաց՝ աճեցեալ չարութիւն առեալ վարէ 'ի մեղս մահացուս: Իցիւ թէ քաջ զայսոսիկ ածեալ էր իմ զմտաւ 'ի դէպ ժամու. քանզի անտի յառաջ եկին չարիք իմ: Զառաջինն հեռի էր յոյժ 'ի Պիղատոսէ խորհուրդ խաչելոյ զՅի-

սուս, այլ առ սակաւ սակաւ խոնարհեցաւ զիջանել առ շնորհուկս ժողովրդեանն: Այսպէս և ես բազում անգամ գրգռեալ 'ի մեղաց՝ առ 'ի հաճել զխուժան կրից և զգայութեանց՝ հաւանեցայ խաչել զՅիսուս:

Աստուած իմ, չիք դարման անցելոյն, բայց եթէ խոնարհել և ապաշաւել ընդ յանցուածս իմ. այլ վասն ապագային՝ արդարև կայ մնայ ինձ զգոյշ լինել: Ոչ հաճել՝ այլ պատժել անկ է ինձ զփափագս իմ. վասն այնորիկ հայցեմ 'ի քէն սատ զօրութիւն տկարութեանս իմոյ և քաջալերութիւն վեհերոտութեանս: Դու, Յիսուս իմ, և ոչ դոյզն ինչ անարգանաց պարտական ես. և ես քոյին օգնականութեամբ խոստանամ զգուշանալ յամենայն վնասուէ, յամենայնէ որ անարգանս քեզ ածիցէ, նաև 'ի փոքուէ մեղաց, զի մի առ փոքր փոքր անկայց 'ի մեղս մահացուս, թերևս և յանզղջութիւն 'ի սպառ:

Ի միտ առից թէ քանի՛ վտանգ է թոյլ տալ ախտից և առնել ինչ նոցա շնորհուկս. և առաջադրեցից զդէմ ունել 'ի սկզբան խլրտման նոցին:

ՄԼԸ. Այն ինչ հրաման տուեալ Պիղատոսի ձաղկել զՅիսուս, անդէն ձեռն 'ի գործ արկանեն. բուռն հարեալ զնմանէ դահճացն՝ ձգեն բռնաբար 'ի գաւիթն, 'ի հրապարակ անդր կառափման, ուր սովորութիւն է զան հարկանել զաւազակս և զմեծեղեռն չարագործս: Ո՛հ, ո՛հ. քանի՛ տօն խնդութեան կատարեն Հրեայքն վասն թուեցուցանելոյ Պիղատոսի եթէ յանցաւոր ծանեաւ զՅիսուս և արժանի մահու, քանզի մատնեաց զնա 'ի պատիժ՝ որով միայն զմեծեղեռն յանցաւորսն պատուհասեն: Այլ, ո՛հ, քանի խնդութիւն է և Քրիստոսի, տեսանելով ե-

կեալ հասեալ զաւաւօտն և զժամն այն նախա-
ձայնեալ 'ի մարգարէից և յառաջ ասացեալ
յիւրմէ, և այնքան ցանկացեալ, հեղլոյ զարիւն
իւր 'ի ձաղկանսն՝ առ 'ի փրկութիւն աշխարհի:
Զզուանքն որ տխրեցուցանէր զնա 'ի պարտէ-
զին, արդ ուրախացուցանէ զնա, զի հասեալ է
նմա ժամանակ հատուցանելոյ զգինս ազատու-
թեան մերոյ:

Հայեաց և տես, հոգի իմ, քանի՜ հանդարտու-
թեամբ խոնարհի Յիսուս առ վայելչութիւն փա-
ռաց Հօրն յաւիտենականի, յայտ առնելով լի-
նել կազմ և պատրաստ 'ի յանձն առնուլ զդառ-
նակսկիծ և զանարգագոյն տանջանսն: Տե՛ս,
զիա՛րդ ամօթահար թոյլ տայ դահճացն ձգել
տանել զնա յո և կամիցին, ամենեքին հեղ և հնա-
զանդ, առանց ինչ 'ի տառապանս անդ տալոյ
նշան ընդդիմանալոյ կամ չհանդուրժելոյ: Աս-
տուծոյ Որդի գոլով՝ 'ի մարդանալն առեալ էր
զկերպարանս ծառայի, առ 'ի հնազանդել ամե-
նեցուն. իսկ այժմիկ առնու և զկերպարանս ծա-
ռայի ապիրատի՝ որ արժանի իցէ գանելոյ. ըզ-
կերպարան ծառայի, ոչ զծառայիցն Աստուծոյ,
այլ զգիւացն արբանեկաց՝ որ իւր դահիճքն են:

Ո՛վ իմ Յիսուս, ո՞ կարիցէ անցանել մտանել
'ի սիրտ քո, և տեսանել զաղեկէզ ծարաւդ քո
'ի վշտակրել և 'ի հատուցանել զպարտս իմ:
Այլ և առանց աչաց տեսութեան՝ հաւաստամ զի
մեծ է յոյժ տենչ ծարաւոյդ. և գոհութիւն մա-
տուցանեմ քեզ, թէ ոչ որպէս արժանն է, գէթ
որպէս և կարեմս, յամենայն զօրութենէ եղկելի
հոգւոյս. զթերութիւն պարտականութեան ի-
մոյ լցցէ քո արժանաւորութիւնդ և գութ ե-
ւանդնաբորբոք: Թոյլ տուր ինձ աղերս մի ար-
կանել քեզ՝ ըստ փափագանացս նմանող լինելոյ
քեզ. որպէս յօժարութեամբ յանձն առեր դու-

զվճիռ ձաղկմանն 'ի հաւատութիւն արդարութեանն Աստուծոյ՝ վասն մեղաց իմոց, տուր և ինձ շնորհս՝ 'ի պատիժ մեղացս այսոցիկ յանձն առնուլ յօժարութեամբ զհարուածս ժամանակեայ արկածից, որովք ողորմութիւն քո հաճեսցի խրատել զիս. սակայն ինչ է այդ ամենայն առ պատժոյն որում արժանիս եմ. և տակաւին չկարեմ տանել դոյզն ինչ պատահարաց՝ անդիմակաց և անտրտունջ: Շնորհեա, Աստուած իմ, զի հարուածք ձեռին քո գթածի՝ աղքատութիւն, հիւանդութիւն, անարգանք և զրկանք՝ 'ի խոնարհութիւն և յուղղութիւն ինձ լիցին, և մի առ յանցանաց և յամառեալ խստութեանն՝ 'ի դատապարտութիւն ինձ: Հայրօրէն վարիս դու և 'ի խրատելն քում զիս. անկ է և ինձ յամենայն դէպս հայրական պատժոցդ՝ անսալ որդիական սիրով:

Ի միտ առից, եթէ մարթ է 'ի տառապանս վշտանալ՝ այլ հաւանիլ, ըստ օրինակին Քրիստոսի, յորում վիշտք ոչ սասանեն հաւանութեան կամացն: Հեծեծեսցէ զգայութիւն, այլ միտք միասցին ընդ Աստուծոյ:

ՄԼԹ. Ի հասանել Յիսուսի 'ի դաւիթն մեծ՝ ուր ձաղկելոցն է, փութան կալանաւորքն լուծանել զկապանս նորա, 'ի բաց կապտեն 'ի նմանէ զհանդերձիկն, և թողուն զնա մերկ: Ո՜հ, զի՞արդ զուարճանայ և քրքիջ բառնայ ամբոխն վատշուէր 'ի տեսանելն զնա: Եւ ո՜հ, քանի՜ շառադունանօք ծածկին դէմք օրհնելոյն Յիսուսի առ ամօթոյն. այն որ Աստուածն է ծածկող օդոց ամպովք, և բարձանց երկնից՝ փառօք. որ զգեցուցանէ երկրի խոտ դալարի և վերարկուէ պճնազարդ ծաղկամբք. և ահաւադիկ ինքն հոլանի կայ 'ի հրապարակի՝ գեղեցիկ և պարկեշտ

մարմնովն: Զգեցեալ է հոգւովն վայելչութիւն, զօրութիւն և սրբութիւն, այլ մարմնովն միայն զամօթ՝ վասն նախատակոծ մերկութեանն և պատկառանաց պարկեշտութեանն, և կուսականն մաքրութեան, հրապարակաւես ամենեցուն լինելոյ: Եւ ընդէ՞ր արդեօք որ լուսազգեաց պատեաց զսուրբ կուսանն՝ մերկամարմին 'ի տանջանս մարտիրոսութեան մատնեալս 'ի բռնաւորաց, ոչ և զանձն սքօղիցէ: Ի դէպ է ասել, զի ամօթ մերկութեան՝ պատուհաս գոլով և ծնունդ մեղացն Ադամայ, յանձն առնու կրել զայն՝ առ 'ի բառնալոյ զահագին ամօթ մեղաւորաց, յորժամ յաւուրն դատաստանի յայտ յանդիման լինելոց ամպարշտութիւնք նոցա 'ի համաշխարհական ատենին: Յանձն առնու զմերկութիւն մարմնոյն, առ 'ի ծածկել զպժգալի մերկութիւն հոգւոց մերոց՝ զգեստուք ուղղութեանց և շնորհաց:

Ո՛վ բարի Յիսուս, ո՞րքան առաւել քան զամենեսեան պարտական եմ քեզ շնորհս մատուցանել վասն բարեգթութեան սիրոյ քոյ առ իս, և կարեկից լինել ամօթապարտ չարչարանացդ զոր վասն իմ կրես: Ինձ, ինձ 'ի դէպ էին չարչարանքդ՝ յարժանի պատուհաս մեղանացս, և ոչ քեզ՝ որ կրես միայն առ 'ի գութ և առ 'ի հաշտութիւն քաւութեան: Այլ զի՞նչ լինիցի ինձ՝ եթէ ոչ օգտիցիմ յարդեանց քոց. — ամօթ անհնարին հանդերձեալ մնայ ինձ 'ի վերջնումն ատենի, 'ի հրապարակել մեղապարտ գիտացութեանս, և 'ի հոլանել չարութեանս իմոյ առաջի ամենայն սրբոց և հրեշտակաց՝ որք թշնամանագիր լիցին ինձ: Ո՛վ Յիսուս իմ, վասն մեծի խոնարհեցուցիչ ամօթոյն զոր կրեցեր՝ տուր ինձ ամօթ սուրբ՝ խոնարհել խրատուեալս յիշատակաւ մեղաց իմոց: Քանի՜ քանի՜ առիթք են ինձ

ամաչելոյ այժմիկ և խոնարհելոյ յիշատակաւ այնքանեաց անհեդեդ չարեաց՝ զոր արարի խորհրդով, բանիւ և գործով. եթէ գրչաւ համար առնէի մեղաց իմոց, որպիսի՛ գումար մեծ՝ ոչ յամօթ միայն առնէր զիս այլ և ահաբեկ:

Ի դարման անցելոյն՝ լաւ է ամօթահարութիւն մեղացն. այլ 'ի դարման ապագային անկ է ինձ զմտաւ ածել թէ քանի՛ ամօթալից իրք են մեղքն. ամաչեցից ընդ մեղս՝ զի մի մեղանչեցից:

Մխ. Յետ այսըն առնելոյ Հրէից զՅիսուս կատականօք՝ վասն մերկութեանն, բորբոքին սըրտմտութեամբ և հայհոյեն լուտանօք, յայն սակս միայն, որպէս ասաց մարգարէն, զի յօժարութեամբ յանձն առնու զձաղկանսն. այլ և խիթալով զի մի կախարդանօք ինչ խոյս տացէ, միաբանեալ ընդ հեթանոսսն՝ կապեն զնա պընդապինդ 'ի սիւնն, ուր սովորութիւն է պատուհասակոծ առնել զյանցաւորս: Այս երիցս կապի Յիսուս. քանզի նախ կապեցին զնա 'ի պարտէզին, և ապա հրամանաւ Կայիափայ. արդ ինքնին՝ ամօթահար՝ բայց ազատ կամօք տարածանէ 'ի կապուտմն զձեռսն, որոց հպմամբ ևեթ լուսաւորէր զկոյրս և յարուցանէր զմեռեալս: — Այլ ո՞ յետ այնքան յանդգնութեան տեռազերծ առնելոյ զնա՝ իշխիցէ և կապանօք զնա կաշկանդել: Պաշտեսցուք զանտեսութիւն աստուածային ողորմութեանն, և ասասցուք. Ոչ ոք բաւէր բռնանալ 'ի վերայ նորա՝ եթէ ոչ որչափ ինքն կամէր. և եթէ արժան իցէ զՃշմարիտն խոստովանել, Հայրն յաւիտենական զօրութեամբ սաստիկ սիրոյն կապէ զնա և պնդէ, զի ուժգինս կալցէ 'ի ձեռին զբաժակ չարչարանացն՝ զմատուցեալն նմա 'ի պարտիզին: Հայրն յաւիտենական որպէս մշակ՝ գիտելով զՈրդի իւր նմա-

նեալ որթոյ, կապէ 'ի սեանն՝ որպէս կապի որթ ընդ խեչակին, որպէս զի առաւել ևս պտղաբեր լինիցի: Եւ ինքն Յիսուս ամենեւին անպարտականն՝ յանձն առնու կապիլ 'ի հատուցումն պատուհասի մերոյ, ոչ ամաչելով ընդ նախատինս կապանացն, բայց յայն սակս միայն՝ զի բանի արգեօք թուլցի կրել զհարուածս, մինչ ինքն եկեալ է կրել վասն մերոյ: Ըստ այսմ արժան է ինձ խորհրդածել յամենայն չարչարանս Քրիստոսի, եթէ Յիսուս և ոչ մի ինչ կրէ բռնաբար, այլ զամենայն առ սէր:

Ո՛վ քաղցրագութ Յիսուս, որ եկիր յաշխարհ՝ արձակել 'ի կապանաց մեղաց զամենայն որդիս Ադամայ, արդ 'ի սեանն հանդերձիս հատուցանել զգինս փրկանաց մերոց: Այլ ինձ զիա՞րդ լիցէ խնդալ ընդ ազատութիւնս իմ, մինչ տեսանեմ զքեզ կապեալ առ 'ի ձաղկումն՝ որպէս ստրուկ մի անարգ: Ո՛վ սիրեցեալ Որդի Աստուծոյ, քանի՜ մեծ են գութք քո, զի շատ համարիս ինձ գոհանալ եւեթ զքէն, սիրել զքեզ և մխիթարել ընդ ամենայն բարիսն իմ: Այսպէս արժան է ինձ առնել. և այսպէս արարից անվրէպ: Գոհանամ զքէն յամենայն սրտէ, և ոչ դադարեցայց 'ի գոհանալոյ. սիրեմ զքեզ, և սիրեցից իսպառ և 'ի վեր քան զամենայն: Այլ տո՛ւր ինձ ձեռն օգնութեան. օգնութիւն 'ի հզօր օգնութեանց՝ զոր ստացայ վասն իմ չարչարանօք քովք, որպէս զի արժանապէս գոհացայց զքէն վասն այդորիկ, և սիրեցից զքեզ 'ի կեանս յայսոսիկ և 'ի հանդերձեալն 'ի յաւիտեանս:

Պտուղ բարեաց լիցի գործակցութիւն իմ շնորհացն՝ որոց Քրիստոս արժանաւորեաց զիս կապանօք իւրովք, գուն գործելով ապաշխարութեամբ արձակել զիս 'ի կապանաց մեղաց իմոց, և 'ի կապանաց չարասովոր ունակու_

թեանց իմոց՝ բուռն առնելով անձին և 'ի մեռելութիւն կրթելով։

Ձաղկանք Քրիստոսի։

ՄԽԱ. Առաջին արինահոս չարչարանք Քրիստոսի որով տանջեցին զնա թշնամիքն՝ Ձաղկանքն էն, զորոց արժան է նկատել, զի ոչ ճառեն աւետարանիչքն, կամ թէ հազիւ և համառօտ ինչ տան նշանակ. կամ զարհուրեալք գոլով, կամ 'ի վեր քան զբան գտեալ զՁաղկանսն. կամ թէ լաւ ևս ասել, 'ի հարևանցի իմն յիշատակեն, իբրու զսերմանս ևեթ թողլով մեզ զճշմարտութեան խորհրդոյն, որպէս զի մեք ինքնին ողջախոհ խոկմամբք աճեցուսցուք զայն 'ի սիրտս մեր։ Թաքուցանել իսպառ ոչ թաքուցանեն, այսպէս կամեցեալ Հոգւոյն Սրբոյ, զի յայտնի լինիցին և թշնամանքն այն դժուարակիրք, որ եղեն մեզ փառք մեծամեծք։

Արդարև անհամբոյր յոյժ է Քրիստոսի այս պատուհաս, զոր ոչ էր սովոր տալ ազնուական մարդկան, այլ միայն ստրկաց ապիրատից, գողոց և չարագործաց մեծաց։ Իսկ Յիսուս կրէ և զայս՝ անճառելի արիութեամբ, հաստատութեամբ և հոգւոյ հանդարտութեամբ։ Ոչ վրդովի ընդ ամօթ նախատանացն. թոյլ տայ արբանեկացն անիրաւութեան ձաղկ 'ի վեր առնուլ և հարկանել անարգօրէն և ուժգինս. և կայ ընդ հարուածովքն՝ որպէս թէ ոչ ինքն իցէ որ հարկանին։ — Եւ ի՞ւ իւիք արդահատուցէ 'ի ցաւսն։ — Մերովս օգտիւ։ Զգերեաց կրէ պատուհաս՝ զի զգերեալքս ազատեսցէ. կրէ զամօթ ձաղկանաց, զի յամօթոյ յաւիտենական դատա-

պարտութեանն՝ որ կնքեալ կայր մեզ առ յԱստուծոյ՝ ազատս արարեալ: Յանձն իւր առնու զպարտիս մեր, զի հաղորդս զմեզ արասցէ իւրոց բարեաց. կրէ զպատուհաս մեղաց մերոց՝ որպէս թէ իւր ինչ էին. որպէս զի վայելեսցուք մեք 'ի փառս և յարդիւնս շնորհացն, արդարութեանն և սրբութեանն՝ որ նորա միայն են:

Քանի՛ նուաստութիւն է Աստուծոյ՝ զգեցելոյ զմարդկային մարմին՝ գանակոծ լինել յաստուածացեալ անդամս իւր: Իսկ քանի՛ պատիւ ինձ՝ այնքան սիրել զիս Աստուծոյ՝ մինչ՚և յանձն առնուլ և զձաղկելն վասն իմ: Ո՛հ, ո՜րքան պարտք են ինձ սիրել զԱստուած՝ վասն մեծի և ամենամեծ յարգի որով յարգէն զիս զանարգ ստեղծուածս իւր: — Այլ եթէ ամենայն անարգութիւնք նորա փառք են ինձ, որպէս և փառք նմա իմ անարգանքս, եթէ վասն նորա ինչ կրիցեմ, ընդէ՞ր է ինձ խորշել և փախչել յամենայնէ որ անպատիւ ինչ երևիցի, և որ թերևս միայն առ կարծիս իմ այնպէս թուի: — Ամբարտաւանութեան իմոյ մեծի արգասիք են այդ ամենայն: Եւ չիցէ՞ պարտ և արժան, ո՜վ Տէր, զի և բռնի առաքիցես ինձ զամենայն նախատինս և յաշխարհի աստ, յորժամ ոչն կամիցիմ խոնարհել առ սիրոյ: Այո, արժան է գանակոծ լինել հպարտութեանս իմոյ: Եւ զի կամ է ինձ այսուհետև հաճոյ լինել քեզ, տուր ինձ աղաչեմ զշնորհս սրբոյ խոնարհութեան: Խոնարհութիւն բռնադատ՝ դատապարտ առնէ զիս. խոնարհութիւն ճշմարիտ սուրբ առնէ զիս:

Փառս տաց Աստուծոյ վասն անարգանացն զոր կրէ Քրիստոս ընդ հարուածովքն. և եղից 'ի մտի նմանել նմա գոնեա 'ի համբերութեան ծաղկանաց վշտաց՝ զոր հաճեսցի առաքել ինձ:

ՄԽԲ. Նախատալից են յոյժ Զաղկանք Քրիստոսի. տեսարան աչաւոր երկնի և երկնից. այլ և ցաւագին յոյժ 'ի վեր քան զբանս և զմիտս: Այլ գէթ առ 'ի վերայ հասանել սակաւ մի ցաւոցն սաստկութեան, արժան է զմտաւ ածել զի որ ձաղկին՝ Ճշմարիտ Որդի Աստուծոյ է, մարմնովն՝ զոր հրաշափառապէս կազմեաց Հոգին Սուրբ 'ի մաքուր և յանարատ արենէ Կուսին Մարիամու, ամենափափուկ իրանամբք, ամենաքնքոյշ յօրինուածով, որով և դիւրազգած առ 'ի կրել զամենայն սաստկութիւն ցաւոց. և առաւել ցաւեցուցանէր զնա թէթև ինչ խայթուած՝ քան զմեզ հարուած սրոյ: Նա որքան աշխոյժ էր բնութիւն նորա՝ այնքան և կիրք ցաւոցն սաստկագոյնք: Զայս 'ի յուշի ունելով տե՛ս արդ հոգի իմ, ո՞րպէս զխա՛րդ դահիճքն անգութք մոլեգինս և ուժգնագոյնս ամենայն զօրութեամբ իւրեանց իջուցանեն տեղան զհարուածն 'ի մարմին անդր կուսական, անարատ և աստուածացեալ: Հարուած հարուածոյ չտայ դուլ, մերթ 'ի թիկունս, մերթ 'ի գիրկս, մերթ 'ի կուրծս, և 'ի բովանդակ սրբազան մարմինն: Սիրտ ապառաժ ունիցի որ ոչ գորովիցի ընդ Յիսուս ախտակրեալ 'ի ցաւագին Նախատինս և 'ի Նախատակոծ ցաւսն: Իսկ այս զի՞նչ իցէ, զի սիրտ իմ կայ մնայ դեռ անկարեկիր, մինչդեռ կարծեմ թէ ցաւէր ինձ եթէ տեսանէի այսպիսի հարուածօք խոշտանգեալ և գրաստ մի անասուն:

Ա՛հ, գիտեմ, Տէր, ուստի իցէ յիս ցամաքութիւնս այս. — զի ոչ խորհիմ զայն՝ զոր հարկ էր ինձ ունել հանապազ զմտաւ. եթէ ձաղկիս դու վասն իմոցս մեղաց: Բայց արդ Ճշմարիտ հաւատով հաւատամ, զի որպէս 'ի պարտիզի անդ վասն մեղաց իմոց ցաւալլուկ եղև սիրտ քո

քաղցրագութ, այսպէս և այժմ խոստանդի ամենասուրբ մարմին քո 'ի գաւթին: Արդ անիծանեմ և ատեամ զամենայն մեղս իմ, և օրհնեմ և գովեմ զսէր քո: Իմ են մեղքն վասն յանցանացն, զոր վասն պատժոյ պատուհասին՝ քեզ արարեր, կալով ինձ յանդիման կքեալ Թիկամբք, դու սուրբդ, անարատդ, անմեղդ, առ ընդունելոյ զհարուածսն՝ որք ըստ արդարուԹեան ինձ մեղաւորիս անկ էին: — Ո՜վ սէր, աստուածային սէր, յո՞ր սահման հասեր վասն իմ: Իսկ ես կացի՞ց մնացից այսպէս ապառում, այսպէս ապերախտ: Ո՜վ Յիսուս ամենագութ, և ամենայն սիրոյ արժանի, տո՛ւր ինձ սիրել զքեզ մաքուր և հզօր սիրով, և պատրաստ լինել յընդունելութիւն ամենայն ձաղկանաց, արկածից և վշտաց՝ վասն անուան քո: — Առանց քեզ նմանելոյ ոչ է մարԹ սիրել զքեզ. կամիմ նմանոյ քեզ լինել, զի եղեց և սիրելի քեզ:

Գուն եդից կրել ինչ նեղութիւն կամ դըժուարութիւն առ սէր Յիսուսի. փոխեցից ըզհարկն յառաքինութիւն. և պատուեցից զառաքինութիւն՝ ըստ արժանեացն, ամբառնալով զայն 'ի գերբնականումն զօրութեամբ սիրոյ սըրբոյ:

ՄԽԳ. Շուրջ կան զՅիսուսիւ կալանաւորքն՝ որպէս մեղուք ծարաւիք արեան նորա. և արիւն արդէն 'ի վերին մաշկին ժամանեալ է. մինչդեռ վասն ամօԹոյ մերկութեանն, որպէս զի ոչ ոք երբէք 'ի մարդկանէ ամաչեաց, արիւն ոչ միայն զերեսն պատէ, այլ սփռեալ ընդ բովանդակ մարմին և մորԹ՝ զամենայն շառագունէ: Յառաջին իսկ հարուածոցն՝ պատառեալ նրբանիւԹ մորԹոյն ցնցղիին ցայտք արեան ընդ ամենայն մասունս, ոռոգանելով և զձաղկիչսն և զսիւն

և զյատակ գաւթին: — Ի դէպ է արդ ասել 'ի գլուխ ելեալ մարգարէութեանն. իբրու այն թէ քսակի իմն նմանելով մարմնոյն Քրիստոսի, և արեանն որ յերակունսն ընթանայ՝ զրամ գոլ պատուական, որ գին փրկութեան աշխարհի հանդերձեալն էր լինել, 'ի պատառել չարաչար հարուածոցն զամենասուրբ մարդկութիւն նորա, ելանէ արիւնն 'ի մեր փրկանս: — Տե՛ս, որքան մեծ է գին հոգւոյ իմոյ, զի արժէ զանգին արիւն Աստուծոյ: Իսկ զոր այնքան յարգէ իմաստութիւնն Աստուծոյ, ես որպէս յարգեմ կամ դատիմ զօր հանապազ՝ զհոգիս իմ: — Ո՜վ կուրութեան և ապշութեանս իմոյ: Քանզի ես և մեղանչեմ՝ անդէն վաճառեմ սատանայի զհոգիս իմ ընդ դոյզն և ընդ ոչինչ մի. այսպէս վաճառեցի բազում անգամ ընդ վայրկենի ինչ և անարգ հեշտութեան. և արդ մինչ տեսանեմս զմարդացեալ Բանն Աստուծոյ՝ զի հեղու և սպառէ անհնարին ցաւօք զարիւն իւր՝ 'ի փրկանս հոգւոյս, որչափ ինչ մեծագին արժան իցէ ինձ համարել զայն: Եթէ փոքր ինչ էր հոգիս իմ՝ միթէ Որդի Բարձրելոյն դո՞յր կամաւորապէս կրել զոր ինչ և կրէն:

Զարհուրեալ դողամ, ո՛վ Տէր, յիշատակաւ աւուրն՝ յորում համարս պահանջեսցիմ առ մեն մի չիթ արեանդ հեղլոյ վասն իմ: Զի՞նչ տաց պատասխանի հէքս և թշուառ, յորժամ տեսից զամենայն զոր արարերդ առ 'ի փրկել զիս, և զամենայն զոր ես 'ի կորուստ անձին իմոյ արարի: Ցայնժամ ծանեայց և զմեծութիւն ողորմութեանց քոց, և զխորութիւն չարեաց իմոց. այլ զի՞նչ օգուտ իցէ այնժամու ծանօթութիւնն, բայց եթէ 'ի յուսաբեկ առնել զիս: — Ո՜վ բարեգութ Փրկիչ, տո՛ւր ինձ այժմէն ճանաչել զճշմարտութիւն, յօգուտ անձին իմոյ.

որպէս զի նախանձոտ զգուշութեամբ հսկեցից 'ի վերայ հոգւոյ իմոյ, որպէս անգին գանձու․ զի այնքան արժէ՝ որքան քո արիւն։ Արժան էր ինձ արիւն ընդ արեան հատուցանել քեզ․ այլ զի գիտեմ եթէ և տալով չափ զամենայն որ յերակունս իմ խաղայ արիւն՝ անարգ և ոչինչ մի տացի քեզ, տաց փոխանակ այնր և տաց այժմէն իսկ զհոգիս իմ․ ոչ զիմ ինչ այլ զքո իսկ․ քանզի քոյին արեամբ առ 'ի քէն գնեալ է․ և խոստանամ ոչ ևս պղծել զայն մեղօք։

Զղջացայց այսուհետև ընդ ոչ մեծ ինչ համարել իմ ցարդ զհոգիս․ և յայն սակս մանաւանդ՝ զի առ ոչինչ համարելով զայն՝ առ ոչինչ մի համարեցայ և զարիւնն Յիսուսի։

ՄԽԴ․ Յարիւն համակի Յիսուս, և յարենէն ցնցղեալ յօդս՝ ցայտուկք սրսկին 'ի զգեստս, 'ի բաղուկս և յերեսս դահճացն․ այլ ոչ գորովին անագորոյնքն 'ի տես այնքան արեան․ նա մանաւանդ իբրու առաւել իմն վայրենացեալք և մոլեգնեալք յաճախագոյնս ևս թօթափեն 'ի վերայ նորա զճաղկսն, պատառելով զորբաղան իրանսն, և յաւելլով վէրս 'ի վերայ վիրաց, խոցուածս 'ի խոցուածս, կսկիծս 'ի կսկիծս․ և 'ի պատառուածոց թիկանցն և կրծոց երևին ամենայն կողք նորա, և թուելի իմն լինին ամենայն ոսկերքն։ Եւ ո՞ յայնքան բազմութենէն ողորմագին աչօք հայիցի 'ի նա։ — Եւ ոչ ոք։ — Առ տառապեալն այն՝ զորմէ ճառէ աւետարանն, անկեալ 'ի ձեռս աւազակաց և վիրաւորեալն 'ի ճանապարհին Երիքովի, գտաւ Սամարացի ոմն՝ որ գթացեալ դարմանեաց և պատեաց զվէրսն։ Իսկ ո՞ առ Յիսուս։ Ո՞ւր իցէք գոնեա դուք, ո՛ Մարիամ, ո՛ Մարեմանք։ Յառաջագոյն ասացեալ էր Մարգարէին (Ես․ Ա․ 6․) եթէ ոչ ոք բերցէ իւղս

և պատուհաս 'ի դարման վիրաց Փրկչին: Եւ որպիսի՞ դառնակսկիծ ցաւքն լինին: Եթէ ուք 'ի մէնջ ձաղկիցէ զանձն՝ զառաջինն զգալ զգայ, այլ առ սակաւ սակաւ նուազեն ցաւք. քանզի մարմինքն կամ բրտանան կամ թմբրին և անզգայք լինին: Ոչ այսպէս և Յիսուսին. քանզի մարմին նորա կազմեալ է առ զգալ և կրել նաև 'ի փոքուէ խմեքէ ճշասուէ. վասն որոյ և զգայ և կրէ երաշխէպս ցաւոց միոյ միոյ 'ի հարուածոց, առանց ինչ նուազութեան ցաւոց, քանզի հանապազ գիւրազգած է: Կրէ նա զի կրել կամի. և կամքն տան զօրութիւն բնութեանն 'ի զգալ և 'ի կրել զամենայն սաստկութիւն ցաւոց:

Ո՛վ բարի Յիսուս, որ սրբութիւնդ ես սրբոց, վասն է՞ր կամեցար զայսքան երաշխէպս դառնակսկիծ վիրաց 'ի յանձն առնուլ: Ի վէրսդ յայդոսիկ զսէր քո ընթեռնում ես. և հաւատոյ աչօք տեսանեմ՝ զի ոչ առ այլ ինչ հաճեցար այդպէս վիրաւորիլ, բայց զի զվէրս հոգւոյ իմոյ բժշկեսցես: Իմ վէրք առաւել ցաւեցուցանեն զքեզ քան քոյքդ. ես ինքն եմ անզգամ, որ առաւել քան զդահիճսն յաւելի վէրս 'ի վերայ մարմնոյդ, մեղս 'ի մեղս յաւելլով յիս. սակաւ ինչ ժամանակ տեւեաց ձաղկումն քո 'ի սեանն. այլ բազում ամք են զի չարութիւն իմ ձաղկէ զքեզ, յաճախելով իմ հանապազ յանօրէնութիւնս: Ո՛վ ամենագթած Յիսուս, անկանիմ յոտս քո և ժտիմ զողորմութիւնդ. զի չիք իմ այլ տեղի յուսոյ: Ողորմութիւն՝ որ առ սէր իմ առ քեզ ժոյժ ունել անիրաւութեանն և այնքան հարուածոց, նոյն յորդորեսցէ զքեզ 'ի թողութիւն յանցանացս և յերկայնմտութիւն, և 'ի տալ ինձ շնորհս ապաշխարութեամբ կեալոյ ընդմնացուածս կենաց իմոց:

Ըստ նմանութեան Յիսուսի որ առաւել ընդ

մեղս իմ ցաւէի քան ընդ վէրս իւր, ցաւեցայց և ես ընդ նոսին քան ընդ այլ ինչ չարիս. քանզի չիք ինչ զոր արժան իցէ չար կոչել առ չարութեամբ մեղաց։

ՄԽԵ. Յարժանահաւատ յայտնութեանց ծանուցաւ զի հազարաւոր հարուածք տուան Յիսուսի 'ի ձաղկանսն. այլ պարզագոյն ևս բացարի ճշմարտութիւն յասելն՝ եթէ հարուածքն որպէս անթիւք էին այնպէս և անթիւք: Պատուիրեալ էր յօրինաց ըստ առաւելութեան կամ նուազութեան չարեացն՝ նոյնչափ և զան հարկանել, և մի առաւել քան զքառասուն թուով: Այլ վասն Յիսուսի բարձան ամենայն օրէնք և հնարք, չափ և կարգ և թիւ. քանզի յիւր վերայ բարձեալ էր զմեղս ամենայն աշխարհի որք անհամարք էին. և կամելով վասն ամենեցուն հատուցանել՝ զամենայն կրելով պատիժս, որք ըստ նմին օրինակի անթիւք են, զիարդ չիցէ օրէն հաւատալ ստուգապէս՝ եթէ նմանապէս և հարուածք ձաղկանացն անթիւք եղեն. և թէ ըստ չափու արժանւոյ պատուհասի մեղաւորին՝ ձաղկեցաւ և քաւիչն: — Բաւական էր 'ի փրկութիւն ամենայն ազգի մարդկան յանձնառութիւն միոյ ևեթ հարուածոյ, միոյ ևեթ պատառուածի վիրաց, միոյ ևեթ կայլակի արեանն, վասն աստուածայնոյն զօրութեան միացելոյ ընդ մարդկութեանն. այլ որ բաւականն էր 'ի հաշտութիւն արդարութեանն Աստուծոյ՝ ոչ բաւէր 'ի լրումն սիրոյ նորին. և եթէ աւելի ևս հանդուրժէր կրել բնութիւն մարդոյս, առաւել ևս կրէր և յօժարութեամբ ևս, զայս ածելով զմըտաւ զի ոչ վասն իւր՝ այլ վասն մեր կրէ. և ըստ մի ըստ միոջէ տեղալ հարուածոցն և բանալ վիրացն՝ ցուցանէ 'ի նոսին զատաւս տեսանելիս սի-

րոյ Իւրոյ։ Եւ առ իմ՜. բայց 'ի յորդորել զմեզ 'ի փոխարէն սիրոյ Իւրոյ. քանզի 'ի սէր մեր առ. նա՝ հաստատեալ է կատարումն յաւիտենական փրկութեան մերոյ։

Ո՜վ Յիսուս, միանգամայն խոցեալ սիրով և ցաւով. շնորհ ունիմ քեզ վասն սիրոյդ, կարեկից լինիմ ցաւոյդ։ Առիթ սիրոյդ գիտեմ զիմ հոգիս՝ զոր 'ի յաւիտենից սիրեցեր. այլ գիտեմ և ա. ռիթ ցաւոցդ ոչ այնքան զառ 'ի դահճացն ձաղ. կանս՝ որքան զաշխարհի մեղանս, և զիմն մա. նաւանդ, զկուտեալսն և զյոլովեալս 'ի վերայ քո։ Ո՛հ, քանի՜ մեծ և ամենամեծ էր բարու. թիւնդ 'ի սիրելն զհոգիս իմ վատթար՝ որ և ոչ աչացդ ակն արկանելոյ արժանի էր։ Ո՛հ, յայտ է թէ և մեծ և յոյժ մեծ էին և իմ չարիք, ոչ միայն զքեզ ոչս սիրելով, այլ և անգոսնելով և հանապազ թշնամանս 'ի թշնամանս յաւելլով։ Ո՜վ ամենագութ Յիսուս, վասն այնքան վիրացդ 'ի վերայ վիրաց՝ զոր ոչ է մարթ մի ըստ միոջէ թուել, վիրաւորեա և զիմ սիրտ սիրով քոյին, որպէս զի 'ի վիրաց անտի սիրոյ՝ բղխեսցեն ար. տասուք ցաւոց և զղջութեան։ Անհնար է ինձ ցաւել ընդ անգոսնելն իմ զքեզ՝ եթէ զքեզ ոչ սիրեմ. վասն այնորիկ զսէր քո խնդրեմ, զի զգացից զկարեւորն ցաւ վասն մեղաց իմոց, որ. պէս զի եղիցիս դու արդարև իմ փրկիչ։

Ներգործեցից յիս սէր առ Յիսուս և ցաւ ընդ մեղս իմ, և մի՛ ձանձրացայց. քանզի եթէ գուցէ չափ և սահման յայլս յուղղութեանց, սիրոյ և զղջութեան չիք բնաւ։

ՄԽՋ. Առ 'ի զչափ առնուլ սաստկութեան ձաղկանաց Յիսուսի՝ արժան է յիշել, զի ոչ միայն վրիժակքն Պիղատոսի՝ այլ և նոքին ինքեանք Հրէայքն ձեռն 'ի ձաղկն հարկանէին առ 'ի սան.

ջել զնա, յետ դատախազս և դատաւորս նմա կալոյ՝ կալով արդ և դահճիձս։ Եւ զի յոյժ կատաղեալք և դիւամոլեալք էին 'ի վերայ նորա, կաշառեալք յիշխանացն՝ առ 'ի չարաչար տանջել զնա, քանի՜ արդեօք անգթութեամբ ուժոյ բազկացն կորովագոյնս խշուցանէին նմա հարուածս. զանգիտեն նենգաւորքն թէ մի արդեօք Պիղատոս՝ որպէս ասացն՝ արձակեսցէ զնա յետ զանահարութեանն. վասն որոյ ազատօրէն ունելով զնա տուր ըստ կամի 'ի ձեռս խուժանց՝ 'ի գանել, 'ի դէպ է կարծել եթէ շուրջ պատեալ զնովաւ բազմութեամբ՝ պէսպէս խարազանօք, մոլին ընդ միմեանս 'ի կեղեքել 'ի յօշատել զնա, զի հասցեն ցանկութեան խուժանց, մեռուցանել զնա։ — Հակառակամարտք լինին անդանօր անգթութիւն և համբերութիւն. Հրեայքն անյագելի ծարաւով փափագեալք մահուան Յիսուսի, տեղան 'ի նա հոյլս հարուածոց առ 'ի կարճոյ զրաւել զնա 'ի կենաց. ծարաւի և Յիսուս մեծապէս մահուամբ իւրով կատարել զփրկագործութիւն աշխարհի. այլ 'ի խաչի անդ կամելով մեռանել՝ առ ամենայն հարուած հրաշս ներգործէ՝ 'ի չմեռանել։ Պարտասեալ լքանի անգթութիւնն վրիժահան, այլ ոչ պարտասի համբերութիւնն 'ի կրելոյ զձաղկանսն։ Եւ չիցէ՞ մեզ 'ի դէպ 'ի համբերութենէ աստի լոկոյ ճանաչել և հաւատալ զնա Աստուած. ծածկէ նա զատուածութիւնն՝ ընդ վիրօքն և ընդ անարգանօք՝ առ երևելոյ միայն 'ի կերպարանս մարդոյ որ քան զընաւ մարդ խոտան և տրուպ իցէ. այլ չարալով անհամբերութեամբ նշան ինչ մարդկութեան՝ աննկուն համբերութեամբն յայտնէ զինքն Աստուած. զի ո՞ւմ այլ ումեք՝ եթէ ոչ Աստուածամարդոյ միայնոյ հնար էր կալ անընդոստ ընդ տեղատարափով այնքան և այնպիսի անողորմն հարուածոց։

Ո՜վ համբերութիւն Աստուծոյ, և ո՜վ Աստուած համբերութեան: Քանիօ՜ն անկ է ինձ 'ի շատագունանս հարկանիլ 'ի համեմատելս զառաքինութիւն համբերութեանդ այդքան առ 'ի քէն սիրեցելոյ, և առ յինէն այսքան գարշեցելոյ և խորշեցելոյ: Քանիօն չիցէ ինձ արժան անօթահար լինել 'ի տեսանելս, զի զամենակարողութիւնդ 'ի կիր արկանես 'ի հրաշագործել քեզ ժոյժ կրելոյ, և յիս ինքն ակնարկել՝ որ ամենեիմբ ջանամ հնարիմ միայն հեշտութեան դամագիւտ լինել և դիւրութեան մարմնոյս: Եւ զի՞նչ օգտիցէ ինձ վայելք աշխարհիս՝ գիտելով չափ իմ զի դու ընդ ձաղկանօք տուայտիս:

Աստուած իմ, որ անչարչարելի գոլով բնութեամբ՝ հաճեցար կամաւ մարդ լինել առ 'ի յանձն առնուլ զկիրս ցաւոց, հեղ յիս զոգի համբերութեան, և զարիութիւն՝ առաքինօրէն վարելոյ զայն առ սէր քոյին: Այս ինձ պտուղ լիցի 'ի խորհրդածութենէ չարչարանաց քոց, կրել ինչ զօր հանապազ համբերութեամբ 'ի համար քո, որպէս դու այնքան վշտաց համբերեցեր վասն իմ:

Ջանացայց և 'ի մասնաւորի անհանգստել զիս իւիք կամ վշտացուցանել 'ի մարմնի, ըստ նմանութեան Յիսուսի. և դուն գործեցից նուաճել զչար ունակութիւնս իմ խորշելոյ և գարշելոյ 'ի վշտակրութենէ:

Մխէ. Հարկ էր Փրկչին աշխարհի տանջիլ ձաղկանօք, զի լցցին պատգամք գրոց (Եսա. ծ. 6). և եթէ գրեալ ես է (Սաղմ. Ղ. 10) եթէ մի մերձեսցին տանջանք 'ի տապանակ մարդկութեան նորա, անկ է իմանալ թէ չէր ումեք հնար տանջել զնա բնաւ, և ոչ հարուած մի միայն տալ, եթէ ոչ էր նորա թոյլ տուեալ ազատ և յօժար

կամօք: Զայս 'ի մտի ունելով՝ ամբարձ արդ զաչս քո, հոգի իմ, և տե՛ս 'ի բարձուանդ սեանն զխորդ Հայրն յաւիտենական ծանուցանէ, եթէ ինքն տանջեաց զՈրդի իւր ցաւագին ձաղկանօքն. դահիճքն գործիք միայն եղեն և պաշտօնեայք գերագունի արդարութեան իւրում: Հարցցուք, ընդէր այդքան խստութեամբ վարիցի ընդ երկրորպագելի անձն Միածնի իւրում. և տացէ պատասխանի բերանով մարգարէին, եթէ առ անհնարին սաստկութեան իւրոյ առ մեղս: Մատիցուք և առ Յիսուս և ասասցուք. Ո՛վ սիրելի Որդի Աստուծոյ, զի՞նչ չար արարեալ է քո՝ զի այդպիսւոյ դառնակսկիծ և ամօթալից պատժոյ արժանի դատեցար. — և յառաջ քան զնա գիտակցութիւն մեր տացէ պատասխանի, եթէ Անմեղ է նա, և մեք եմք մեղաւորքն. և վասն մեր յանձն առնու զչարաչար տանջանսն, զի իւրով պատուհասիւն լոյս արասցէ մեզ եթէ անհասանելի մեծ է չարութիւն մեղաց:

Ո՛վ մեղք, արդարև քանի՜ մեծ չար իցես, զի վասն քո այսքան խստամբեր ապաշաւանս կրէ մարդացեալ Որդին Աստուծոյ: Հնա՞ր ինչ իցէ տեսանել զորբազան մարմինն պատառոտեալս 'ի ձաղկանացն, ծածկեալս վիրօք, և ոչ գոչել զարհուրանօք, Ո՛հ, քանի՜ չար, քանի՜ մեծ չար են մեղքն: Իցէ՞ հնար՝ և ճանաչելով 'ի ձաղկանաց Յիսուսի զմեծութիւն չարեացդ՝ և ոչ յորդորել ընդ նմին յապաշխարութիւն: Լո՛ւր, հոգի իմ, զձայն Տեառն քում, որ 'ի սեանդ խօսի, որպէս խօսէրն ընդ ժողովրդեանն Իսրայելի 'ի սեան ամպոյն, և զապաշխարութիւն քարոզէ քեզ այնքան բերանովք որքան վէրք են 'ի մարմինն:

Այո, Յիսուս իմ, լսեմ զբարբառ քո. այլ 'ի լուր ապաշխարութեան՝ զանգիտէ բնութիւնս

և քստմնելի զգայարանքս. աղէ՛ ծանո ինձ զպէտս իմ առ այս ուղղութիւն, զի գործակից եղեց չարչարանաց քոց, և արժանի գտայց թողութեան մեղացս: Տո՛ւր ինձ ոգի, տո՛ւր ինձ զօրութիւն. արիացայ 'ի գործել զմեղս, և ոչ արիանամ յապաշխարել. աղաչեմ զքեզ վասն ամենայն ձաղկից թաթաւելոց արեամբ քով, զոր համբուրեմս և պաշտեմ, աղաչեմ զքեզ վասն անզլոյ սիրոյդ՝ որով կրեցեր զնոսին, հե՛ղ և յիս սէր եռանդուն առ 'ի վշտակրել. որպէս զի որ հոգւովս և մարմնով ծառայեցի մեղաց, ծառայեցից և յապաշխարութիւն հոգւով և մարմնով, առ 'ի հատուցումն՝ ըստ իմում կարի՝ քումդ մեծվայելչութեան:

Քննեցից զչարաչար կիրառութիւնս հնգեցուն զգայարանաց մարմնոյս յանարգելն զԱստուած, և արարից ինձ զնոսին 'ի գործիս մեռելութեան և ապաշխարութեան: Ներեսցէ ինձ Աստուած՝ եթէ ես ոչ ներեցից անձին իմոյ:

ՄԽՐ. Թէպէտ և վասն ամենայն ազգի ազգի մեղաց առ 'ի մէնջ գործեցելոց՝ կամք եղեն Յիսուսի չարչարիլ, մարթ է ասել եթէ զչարաչար պատուհասս մարմնոյն ձաղկանօքն յանձն էառ յաւէտ 'ի մաքրութիւն մարմնական պղծութեանց: Ի պատուհաս մեղաց մարմնոյ՝ առաքեալ էր երկակի հեղեղս, զջրոյ և զհրոյ. իսկ այժմիկ առաքէ և հեղեղս հարուածոց 'ի վերայ ամենանարատ Որդւոյ իւրոյ, միայն զի տեսանէ զնա զգեցեալ մարմին ըստ ապականեալ բնութեանս մերոյ և աղտեղելոյ մեղանօք: Եւ գոցէ՞ ոք տակաւին որ թեթև ինչ համարիցի զգարշութիւն մեղաց մարմնոյ:

Քաջ կշռեսցուք զբանս զայս: Քանի՜ հիացեալ զարմացին դասք հրեշտակաց 'ի տեսանելն

զմարմնացեալ Որդին Աստուծոյ՝ այսպէս սաստ-
կագինս ապաշխարանս ընկալեալ յանարատ
մարմնին վասն անառակ մեղացն 'ի մարմինս մեր
գործեցելոց: Քանի՞ն առաւել անկ իցէ մեզ
հիանալ և ափշել, գիտելով զԱստուած 'ի մարդ-
կութեան իւրում՝ վասն մարմնասիրութեան
մերոյ այդպէս ձաղկեալ և ձրձեալ: Թէպէտ և
ոչ Աստուած տանջի, այլ մարմինն միացեալ ընդ
Աստուծոյ, սակայն պատուհաս մարմնոյն յԱս-
տուած անդր վերածի. արդ քանի՞ մեծ են չարիք
մեղաց պղծութեան, զի այդպէս խստագոյնս
պատուհասս յամենամաքուր մարմնի Աստուծոյ:
Քանի՜ մահացուք իցեն վէրք զգայարանաց, եթէ
չէք նոցին իւղ բուժիչ, բայց միայն արիւնն ծո-
րեալ 'ի վիրաց Աստուածորդւոյ:

Ո՜վ Հայր յաւիտենական, զծանրութիւն մե-
ղաց իմոց նշմարեմ 'ի ձաղկանս Որդւոյ քոյ
սիրեցելոյ. և զո՞ր փոխարէնս կարող իցեմ
հատուցանել, բայց եթէ զնոյն ինքն զվէրս և
զարիւն Որդւոյ քո: Վասն անօրէնութեանց
մարմնոյս մեղուցելոյ՝ մատուցանեմ քեզ զար-
գիւնս ամենասուրբ մարմնոյ նորա. եթէ մար-
մինս ապստամբ շարժեաց զցասումն բարկու-
թեան քո, մարմին խոնարհութեան Յիսուսի
հաշտ արասցէ զքեզ և շարժեսցէ 'ի գութ ո-
ղորմութեան յիմ վերայ:

Ո՜վ Յիսուս, սիրող պարկեշտութեան, և ա-
ռաւել սիրող ողւոց ողջախոհից, ցաւէ ինձ
յոյժ ընդ անչքելն իմ զքեզ անհամեստ գնա-
ցիւքս. հայցեմ 'ի քէն շնորհս թողութեան ան-
ցելոցն, և օգնութիւն ապագայիցն՝ առ 'ի չմե-
ղանչել քեզ: Հեռացո յինէն զառիթն, և զօ-
րացո զիս 'ի վերայ փորձութեանց և անառա-
կան ախտից իմոց. շիջո՛ յիս զտռփանս մարմնոյ.
և տուր ինձ ոգի սուրբ. մի ևս արատել զպար-

կեշտութիւն, այլ սիրել և պահել ամենայն նախանձու զգուշութեամբ: Եւ քանզի չէ ինձ հնար ոչ 'ի մարմնոյս հեռանալ և ոչ զմարմինս յինէն հեռի առնել, այլ հարկ է ինձ դարմանել զնա, բայց և որքան առաւել սնուցանեմ զնա՝ այնքան առաւել նա ապստամբէ, 'ի քեզ ապա յանձն առնեմ զզգայունս իմ զներքին և զարտաքին. զի քոյովդ զօրութեամբ դարման տարցես նոցին, և ես զգոյշ գտայց 'ի վտանգաց 'ի փառս քո:

Ի պահուստ ողջախոհութեան զգուշացայց պարկեշտութեան, մանաւանդ աչաց, ընդ որս մտանեն հեշտական պատկերք 'ի գրգռել ախորժակս աղտեղիս:

Մխթ. Յետ բազում անգամ փոխանակելոյ զհրեար՝ պարտասեալք դադարեն տանջիչքն և լուծանեն 'ի սեանէն զՅիսուս. որոյ պակասեալ յուժոյ և ընկեալ յոտից ցգլուխ՝ ոչ կարելով կալ կանգուն, անկեալ թաւալի 'ի ճապաղիս արեան իւրոյ: Ո՞չ շարժեսցի 'ի գութ՝ տեսեալ զնա յողորմելի պայմանիդ: Սակայն խապառ անգութ Հրէիցն յիշելով՝ զի գրեալ է յօրէնս գանել զյանցաւորն տարածեալ յերկիր, աւադիկ չարաչար նախանձու վառեալք, և վերստին ոյժ առեալ, սկսանին դարձեալ անագորոյնս խոշտանգել զնա: Եւ ո՞ք իցեն դոքա որք 'ի վերայ կիսամահիդ այդպէս անգթօրէն բրդին: Ո՛վ ամպարիշտ Հրեայք, քանի՞ դարշելիք իցէք 'ի գիւական սրտմտութեան ձերում: Այլ, ո՛հ, քանի՞ եւս առաւել կարեկցութեան և նմանողութեան արժանի է Յիսուս 'ի ցաւագին չարչարանս իւր:

Հայեաց 'ի նա, հոգի իմ, զիա՛րդ անկեալ դնի յորսայս, որպէս անշունչ և անզօր 'ի շարժել:

Արդ այժմիկ ողորմագութ Փրկիչն լուանայ զքեզ 'ի մեղաց քոց արեամբ իւրով յոր թաւալի. այժմիկ յարենէ անտի իւրմէ կազմէ սպեղանիս 'ի դարման խղխայթեալ վիրաց քոց. այժմիկ զերծուցանէ զքեզ 'ի ժամանակեայ և 'ի մշտնջենաւոր խոշտանգանաց, և 'ի նորանոր խոցուածոցն բանայ քեզ նորաբուղխ աղբերս շնորհաց: Ո՜վ ամենասիրելի Յիսուս, ո՜վ ամենասէր Յիսուս. համարիմ յանձն իմ հեղեալ զարիւնդ՝ զոր նշմարեմս թափեալ յերկիր շուրջանակի. և եթէ երկիր էի և ես անիծեալ վասն մեղացն Ադամայ, արդ համարիմ զանձն իմ երկիր օրհնեալ և ազատեալ յանիծից՝ քոյովդ արեամբ: Ո՜վ երջանիկ բաղդիս. իցեն ծանունք, իցեն յոլովք մեղք իմ. այլ յոլովագոյն և մեծագոյն ևս են գթալիր չարչարանք քո՝ որով հաճեցար 'ի փրկել զիս. վասն այնորիկ գոհանամ զքեն բոլորով սրտիւ: Ողորմիմ քեզ Փրկիչ իմ, վասն վշտաց քոց. եթէ էր ինձ հնար սփոփանօք իւիք ամոքել զդառնութիւն ցաւոցդ՝ արդարև դարման մատուցանէի: Այլ իմ իմիք կարող իցեմ: Անզգամին այնորիկ Ղազարու՝ որ յաւետարանս յիշի, էին գոնեայ շունք որ լեզուին զվէրս նորա. իսկ քեզ և շուն մի անգամ ոչ գոյ: Աղէ, վասն այդորիկ թոյլ տուր ինձ, Յիսուս իմ, մատչել մօտս առ քեզ, և լիզուլ լեզուաւս ըստ շանց օրինակի զվէրս քո, և ծծել զբարեբուղխ աւիշն՝ որ լցուցէ զսիրտ իմ սիրովքով: Եթէ սիրելոյ զքեզ չիցեմ արժանի, դու ամենևին արժանի ես սիրոյ. և այդմ շնորհաց սիրոյ ակն ունիմ, որպէս քաղցր պտղոյ 'ի դառնութենէ չարչարանացդ:

Ի շնորհս երախտեաց արեանն Յիսուսի հեղլոյ, գէթ ողորմագին ըղձիւք սրտի ուղերձեցից արտօսր կարեկցութեան կամ սիրոյ առ նա, կամ ցաւոց ընդ մեղս իմ:

ՄԾ. Հաճոյ է Յիսուսի 'ի խոկման մերում 'ի չարչարանս իւր՝ յիշել և զՄայրն ամենօրհնեալ, որպէս զանմեկին ընկեր տառապանաց իւրոց. որ կրեաց 'ի սրտին զոր նոյն կրէր 'ի մարմնի. գործակից նմին լինելով սեփական իմն օրինակաւ յարդիւնագործել զփրկութիւն աշխարհի: Արդ նշմարելով զնա, — որպէս և 'ի դէպ է բարեպաշտօրէն համարել զնա առընթեր գոլ Որդւոյն 'ի ձաղկանսն, — զի լուէ զշաչիւն միոյ միոյ 'ի հարուածոցն, և տեսանէ զխոշտանգանս ամենափափուկ և ամենամաքուր մարմնոյն, որպիսիս չիցէ արդեօք անկ համարել զնորա հառաչանսն, զհեծութիւնսն, զկսկիծ և զնուաղմունս: Հայեաց յերեսս Մարեմայ. տես, զիարդ միգապատեալ է պայծառութիւն ճակատուն. զիարդ դալուկն, արհաւիրք օրհասի և մահու նշմարին յայտնի և 'ի շրթունս: Մուտ մօքդ 'ի նկատել զսիրտն. զինչ գործէ, զիարդ կայ. նա մանաւանդ ո՞ւր իսկ իցէ: Ի տեղւոջ սրտին չիք գտանել բայց ձաղանս և ձաղկանս և խոցուածս: Ամենևիմբ փոխակերպեալ է 'ի չարչարանս Որդւոյն. և բովանդակեալ 'ի նմա ամենայն վիրացն սփռելոց յոտից մինչև ցգլուխ Որդւոյն, ոչ նշմարի և 'ի սմա բայց համառօտութիւն վիրաց, կամ մի վէրք 'ի բազում վիրաց յօդեալ:

Ողորմամահ հեծեծանօք և ձայնիւ՝ զոր Մայրն և Որդին միայն լսեն, Որդեակ իմ սիրելի, ասէ, ո՞ւր է գեղեցկութիւնն, ո՞ւր վայելչութիւն դիմաց քոց: Զի՞նչ չար արարեալ է քո: Ա՛հ, ո՞ տայր ինձ կրել 'ի մարմնի զցաւս հարուածոցդ՝ որպէս իմանալեաւս կրեմ 'ի հոգւոջ: Ո՜վ սէր անբաւ: Պաշտեմ զձաղկանսն և զձաղանս՝ զորս այդքան սիրով կրես 'ի փրկութիւն հոգւոց: Զայս ասելով և նուիրելով առ Հայրն յաւիտենական վասն մեր զամենայն զոր միանգամ կրէն Յիսուս 'ի

մարմնի, վերընծայէ վասն մեր և զամենայն զօր ինքնին յօգուտ խուրումկրէ:

Փառք և գոհութիւն սիրոյ քում, Մարիամ: Արդարև միակ փրկիչ անկ է ինձ ճանաչել զՅիսուս Քրիստոս որդի Աստուծոյ և որդի քո. այլ առանց ինչ բաժանելոյ 'ի փառաց որդւոյն՝ խոստովանիմ և զքեզ հաւատարիմ օգնական նմին յարդիւնս փրկագործութեան: Ո՜վ մայր Աստուծոյ, և մայր իմ ամենագորով, կարեկից լինիմ քեզ 'ի ցաւոդ՝ զոր կրես վասն իմ. և աղաչեմ տպաւորել 'ի սրտիս դէթ զմի 'ի վիրաց քոց, որով մեռցի անձնասիրութիւնս իմ, և կեցցէ միշտ սէրն Աստուծոյ: Վասն խանդաղակաթ արտասուացդ հեղլոյ 'ի ձաղկանս որդւոյդ, ընկալ ինձ շնորհս զղջական արտասուաց առ 'ի լալ դառնապէս զմեղս իմ: Ո՜վ մայր գթութեան՝ գթա՛ յիս:

Միութեամբ չարչարանաց Քրիստոսի և բարեխօսութեամբ Ս. Կուսին, յարդարին ամենազօր հնարք յընդունելութիւն ամենայն շնորհաց 'ի մեծութենէ փառացն Աստուծոյ. և ես բուռն հարից զհնարից այտի յամենայն 'ի պէտս իմ:

Պսակումն Յիսուսի փշովք.

ՄՏԱ. Ի կատարել ձաղկանացն՝ վաստակեալ դահճացն հանգչէին. այլ Յիսուսի չտան թոյլ և ոգի մի կլանել յանդորրու. քանզի անկեալ եդեալ գոլով արիւնաթաթախ 'ի գետնի, իբրև կամէր զհանդերձս իւր զգենուլ՝ ոչ ոք էր որ մատուցանէր նմա զայն, կամ ձեռն տայր կանգ-

նել յոտին. վասն որոյ հարկաւորէր յափսի. թերս խաղալ խնդրել զպատմուճանն, մինչ ոմն մղէր զնա և այլք հարկանէին բռնցի և աքացի. և որքան նա հեզանայր՝ այնքան նոքա առաւել զայրանային 'ի վերայ նորա: Որպիսի ամօթ, որպիսի աղէտք էն օրհնելոյն Յիսուսի, կալ մնալն այնպէս մերկամարմին և վիրաւլեց 'ի պարզի և 'ի ցրտի, որպէս ակնարկէ աւետարանն: Այլ, ո՜հ, քանի՜ համբերութեամբ տանի ամենայնի. արդարև գառն Աստուծոյ՝ որ ոչ բանայ զբերան իւր: Ճանաչելով զանձն արժանի պատուոյ և մեծարանաց, իսկ տեսանելով նախատակոծ լինել՝ խոնարհի և 'ի կամս Հօրն յաւիտենականի ապաստան լինի:

Ապա մինչ ուր ուրեմն զգենու զպատմուճանն, յիշեալ անօրինացն զի ամբաստանութիւն եղև զնմանէ զթագաւորութեան թեկն ածելոյ, փութանակի երթան առ Պիղատոս խնդրել կերպարանել զնա 'ի թագաւոր, և խաղ իմն անպիտան առնել: Առեալ ածեն 'ի սրահ դատաւորին, և ժողովեալ զամենայն զօրականն 'ի տեսիլն, որպէս զի առաւել ևս զկծեցուսցեն զնա, հաստատեն կարգել զպժգալի տեսլարանն՝ 'ի կերպարանս թագաւորի կատակելոյ զճշմարիտ Որդին Աստուծոյ, զթագաւորն թագաւորաց, զարքայն երկնից և երկրի: Յամենայն 'ի նախատինսն զոր դնեն Յիսուսի, յուշ լիցի քեզ, հոգի իմ, զի Աստուած է նա. և զի Աստուած է՝ ո՞ ստիպէ զնա զայդքան արհամարհանս և վիշտս յանձն առնուլ, եթէ ոչ սէրն. և տասցիս՝ թէ սէրն՝ որով որոշակի սիրէ զիս:

Այլ ե՞րբ մարթ իցէ այսմ լինել, ո՜վ Աստուած իմ, զի յանձն իմ մեղուցեալ չգտանեմ ինչ արժանի սիրոյ. մանաւանդ թէ բազում ինչ գարշելիս ունիմ առ ատելոյ առ 'ի քէն. ե՞րբ հնար

իցէ այդմ լինել: Եւ սակայն ստոյգ և ճշմարիտ է աներկբայ, զի սիրեցեր զիս և սիրես ճշմարիտ և սեռն սիրով, մինչև համբերել՝ի վեր քան զմիտս: Սիրոյ քո առ անմեղս և արդարս՝ հաւասու լինին միտք իմ. այլ սիրելոյ քում զիս զժահահոտեալս ախտիւք և անօրէնութեամբք՝ զիա՞րդ կարացից հաւատալ: Այլ հարկ է հաւատալ, և հաւատամ աներկմիտ, քանզի է իսկ արդարև այսպէս: — Այո, հաւատամ, Փրկիչ իմ, զի սիրես զիս. և քանզի սիրես զիս՝ մատչիմ առ քեզ վստահութեամբ՝ խնդրել յառաջ քան զամենայն զներումն թողութեան մեղաց իմոց. և ապա՝ զի այնպէս նորոգեսցես զգնացս վարուց իմոց ՚ի հաճոյս կամաց քոց, զի առիթ լիցի սիրոյ քում. և իմ հաճոյ եղեալ քեզ ևս քան զևս, սիրեցից զքեզ յաւիտեանս յաւիտենից: Զո՞ այլ սիրեցից ես, բայց ՚ի քէն, որ յանբաւս արժանիդ ես սիրոյ առ յինէն, որ անբաւապէս պարտական եմ քեզ:

Յիսուս ոչ միայն հատոյց զպարտս չարեաց գործոց մերոց, այլ և եգիտ մեզ շնորհս գործելոյ զբարիս. գործակից եղեց և ես շնորհացս այսոցիկ, ոչ միայն ոչ ևս արհամարհելով զԱստուած, այլ և հաճոյ լինելով նմա գործովք առաքինութեան:

ՄԾԲ. Քանզի ՚ի գլխաւորաց Հրէից արծաթակուրծ լեալ էին դահիճքն առ ՚ի տանջել զՅիսուս՝ ամենայն խելացնոր հնարիւք տանջանաց, նաև ՚ի գիւաց դրդեալք և գրգռեալք և որպէս այսահարք ՚ի դժոխաշունչ հոգւոյ, առ ՚ի փորձ իմն աննկուն համբերութեան նորին՝ հնարին տանջանս նախատալից և կսկծագինս, զոր չէր ուրուք տեսեալ կամ լուեալ կամ ընթերցեալ. բուռն հարեալ ՚ի խուրձն երկայն,

և խիստ և սոյրասուր փշոյ՝ պսակ բոլորեն և դնեն 'ի գլուխ նորա, ցուցանելով զնա թագաւոր նախատանաց և տառապանաց: Ոչ ոք յաշակերտացն առ ընթեր գտանի 'ի տեսիլ խաղարկութեան անարգական և ցաւագին պսակմանն փշովք. այսպէս տնտեսութեամբն Աստուծոյ սահմանեալ ողորմութեամբ, զի եթէ 'ի պարտիզի անդ տեսանելով զըմբռնումն աստուածայնոյ Վարդապետին՝ վտանգեցան յերկուանալ 'ի հաւատս, յո՞ր արդեօք գթէին վտանգ՝ 'ի տեսանելն զնա փշապսակ կատակեալ որպէս սուտ թագաւոր, այնքանիւք լուտանօք և այպանօք, որ 'ի վեր են քան զբանս և զմիտս:

Այլ դու, հոգի իմ, կազդուրեալդ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ 'ի խորհուրդս եկեղեցւոյ, հայեա՛ց ուշի ուշով յօրհնեալն Յիսուս՝ յողորմելի կերպարանիդ, և հաւատա այնքան առաւել պատուելի և սիրելի գոլ զնա քեզ՝ որքան առաւել անարգի վասն քո. զգա՛ յանձին քում գէթ դոյզն ինչ 'ի ցաւոց և 'ի վշտաց նորին. և թէ այլ ինչ առնել ոչ բաւիցես, կա՛ց յահի, յափշութեան և 'ի զարմացման, զմտաւ ածելով թէ ո՞ իցէ որ չարչարիդ: Ամբա՛րձ զաչս քո և 'ի բարձունս երկնից, նկատել զմեծութիւն անբաւելի վայելչութեան փառացն Աստուծոյ, արարչին ամենայնի, որ և միով ակնարկութեամբ ամենազօր տէրութեանն կարող է զամենայն յոչինչ լուծանել: Ո՛վ, քանի՛ մեծ են բարութիւն, գեղեցկութիւն, իմաստութիւն և փառք նորին: Դարձո անդրէն զաչս քո 'ի Յիսուս, և տե՛ս, զի որ այսպէս տառապեալն է և խոցեալ՝ նոյն ինքն Աստուած է և տէր տիեզերաց. հիացի՛ր և սքանչացի՛ր, թէ զիա՞րդ միաբանեալ կայցեն 'ի չարչարանս այնքան հակառակք, և մանաւանդ զիա՛րդ միաբանիցի ողորմութիւն ընդ արդարութեան:

Աստուած իմ, քանի՜ ահեղ են գործք քո. ահեղ է արդարութիւն քո 'ի չարչարանսդ. զի եթէ մեղք այդպէս սաստկագոյնս պատուհասեցան յանարատ մարդկութեան քում, որպիսի՜ պատուհասք մնայցեն ինձ ամենաչար մեղաւորիս: Ահեղ է ինձ և ողորմութեանդ գործ. զի զինչ լինիցի ինձ եթէ ոչ օգտիցիմ 'ի շնորհացդ՝ զոր ստացար վասն իմ: Տո՛ւր ինձ, Աստուած իմ, երկնչել յարդարութենէ քումմէ, այլ և յողորմութեանցդ, զի մի՛ երբէք ապախտ արարից զնոքօք:

Ներգործութեամբ յուսոյ ամոքեցից զերկիւղ, խոնարհելով և խնդրելով 'ի մեծվայելչութենէն Աստուծոյ՝ զկարևոր օժանդակութիւն գործակից լինելոյ չարչարանացն Քրիստոսի, ճշմարիտ ապաշաւանօք մեղաց իմոց:

ՄԾԳ. Յետ պսակելոյ ամպարշտացն փշովք՝ զՅիսուս, բազմեցուցանեն զնա յաթոռ, և այնպէս յարմարեն զթագն՝ զի շուրջ պատ առեալ պնդեսցէ զճակատն և զգլուխն բովանդակ. և ապա գաւազանօք և բռնցի այնպէս ուժգնագոյնս հարկանեն ընդ գլուխն՝ զի բազմախիտ և սայրասուր փուշքն ծակոտեսցեն զգագաթնն, մինչև ոմանց խորագոյնս 'ի ներքս 'ի փափկագոյն յուղեղն թափ անցանել. և զի են 'ի գլխի ջիլք և երակք որոց ուղղակի հաղորդութիւն է ընդ սրտի, և 'ի գլխի և 'ի սրտի հզօրագոյն է զգայականն զօրութիւն, քանի՜ ապա նուաղումն 'ի վերայ հասանէր նմա 'ի դառնակսկիծ և 'ի սաստիկ ցաւոց անտի:

Հայեա՛ց, հոգի իմ, 'ի Տէրն քո, զիա՞րդ ծածկեալ կայ գլուխ նորա 'ի մացառ տատասկացն. և զարթո զզօրութիւնս քո գոչել հիացմամբ և կարեկցութեամբ. Ո՛վ համբերութիւն, ո՛վ ան-

մեղութիւն. համբերութի՛ւն աննման, անմեղութիւն անճառելի: Այլ յետ հիացման և կարեկցութեան՝ մատիցուք յառաջ 'ի քնին խորհրրդոցն գաղտնեաց: Զի՞նչ իցէ փշեանդ այդ, եթէ ոչ մերս մեղանք. փուշքդ և տատասկ արդասիք են անիծիցն Աստուծոյ 'ի վերայ մեղացն Ադամայ. և արդարև 'ի գիտակցութեան մեղուցելոցն բուսանին անդէն փուշք խոցոտիչք: Եւ զի՞նչ էին կամք Յիսուսի 'ի յանձն առնուլն զխայթուածս այնքան փշոց, եթէ ոչ զանձամբ առնուլ զպանցանս մեր և զարժանին մեր պատուհաս:

Ո՛վ Յիսուս, շուշան ճշմարիտ 'ի մէջ փշոց, շուշան անարատ մաքրութեան 'ի միջի տատասկախիտ անօրէնութեանց: Յանուն ընդ Հրէայսն կամէի, զի զայդպիսիս պտղաբերեաց ապերախտ այգի նոցա. այլ այգոքիկ պտուղք են իմոյ հոգւոյս: Եւ իցէ՞ թէ ոչ այդպէս, — որպէս և էն, — մեղք իմ առաւել ևս խայթէին խոցոտէին և ցաւեցուցանէին զքեզ՝ քան փշեանն որով Հրէայք խոցեցին զքեզ: Գլուխ իմ լի է մնոտի փառասիրութեամբ. և առ շամբուշ մեծարանաց անձին իմոյ, առ յիմար տենչի մեծարելոյ և յայլոց, ցարդ ոչ այլ ինչ արարի՝ բայց ծաղկօք անցաւորօք պսակել զհպարտութիւն իմ. յայս սակս դու յանձն առեր զպսակ ապաշաւանաց փշոցն. ես ինքն եմ սոսյդ պատճառ քո թալկանալոյդ: Այլ աղէ, ո՛վ ամենագութ Փրկիչ, տո՛ւր սրտիս 'ի փշոց այտի, ճշմարիտ ոգւով ապաշխարութեան՝ խոցոտել հարկանել և խորագոյնս թափանցանել: Ապաշխարութեան միայն հնար է ջնջել զանօրէնութիւնս իմ. և զի քան զամենայն առաքինութիւն՝ այս ապաշխարութիւն պիտանացու է մեղաւորի ամպարշտի որպիսի եմ, զայս աղաչեմ և խնդրեմ 'ի քէն՝ 'ի շնորհս դառ-

նակսկիծ ցաւոցն՝ զոր կրեցեր 'ի փչաղգեաց պսակմանդ։ Առանց ապաշխարութեան չիք ինձ յոյս փրկութեան. իսկ ապաշխարել առանց քո օգնականութեան՝ չիք հնար։

Եթէ ծանր թուի ինձ կեալն ապաշխարութեամբ՝ յիշեցից զի ապա չէր պարտ կեալ մեղօք։ Մեղայ հպարտութեամբ. արդ յանձն առից ապաշխարութեամբ կրել 'ի գլուխ իմ զխորգ խոնարհութեան, վասն անարգութեան անձին իմոյ՝ որպէս արժան է ինձ վարկանել զիս։

ՄԾԴ. Յանդուգն ձաղկանան համակեալ Յիսուսի վիրօք 'ի թիկունսն, 'ի լանջս, 'ի բազուկս, 'ի բարձս, 'ի սրունս, թուէր ոչ ունել մասն ողջ բայց 'ի գլխոյն. բայց ոչ միայն կոփեալ էր և այն բանիցն հարուածովք, ապտակօք և բախմամբք, այլ և արդ 'ի պսակման փշոցն՝ կատարի և մարգարէականն գուշակութիւն, եթէ ոչ գուցէ 'ի սրբազան մարմնի նորա յոտից մինչև ցգլուխ՝ տեղի անխոց և անվէր։ — Զմտաւ ած և տես, հոգի իմ, զՓրկիչն քո ցաւագին, զիա՛րդ 'ի խուռն վիրաց անտի գլխոյն իջանեն տարափք արեան, և ուղխօրէն հոսեալ ընդ երեսն՝ այլագունեն զամենայն կերպարանն։ Ոչ այլ ինչ նշմարի՝ բայց ճապաղիք արեան. և արիւն որպիսի։ Արիւն Աստուածամարդոյ, որ հեղանի ոչ 'ի բռնութենէ կամ 'ի հարկէ, այլ միայն 'ի հաճութենէ անտի սիրալիր կամաց իւրոց. այդ ամենայն արիւն է բղխեալ 'ի խոցուածոց գլխոյն՝ խոցոտելոյ 'ի մեղաց քոց, և յերիւրեալ հանգոյն իւղաղանդուած սպեղանեաց 'ի բժշկութիւն խղխայթեալ և մահացու վիրաց քոց։

Ո՜վ Յիսուս իմ, Աստուած իմ, արիւն քո ոչ յերկիր թափի, այլ յիմ վերայ. և եթէ այդքան արիւն չիցէ բաւական 'ի բժշկել և 'ի սրբել զիս

յիմոց չարաչար ունակութեանց և յախտաւոր ըղձից, զի՞նչ ստացից կամ համարեցայց զանձն իմ, բայց եթէ անհնարին աղտեղացեալ: Ո՜վ ապառում չարութեանս իմոյ. փոխանակ յօգուտ արկանելոյ զարիւն քո յուղղութիւն և 'ի սըրբութիւն իմ, ցարդ ոչ արարի և ոչ այլ ինչ առնեմ արդ յաւուրց յաւուրս՝ բայց յաւելուլ վէրս 'ի վէրս և մեղս 'ի մեղս 'ի վերայ քո և 'ի վերայ հոգւոյ իմոյ: Ես զիա՞րդ չածեմ զմտաւ եթէ ընդ ամենայն ցաւոց քոց և ընդ ամենայն դոյզն կայլակի արեանդ՝ տալոց եմ անաչառ համարս. յանզգայս և 'ի պարապորդութեան կեամ ես գաղջ պղերգութեամբ, և ահա մերձենայ օրն ահագին՝ յորում լացից և յուսահատ եղէց, զի ուր և ուրեք դարձայց՝ ոչ գտից ողորմութիւն և գութ: Ո՜վ բարի Յիսուս, արդ երես 'ի գետին եդեալ, խոնարհեալ և զղջացեալ, անկեալ առ ոտս քո՝ խոստովանիմ և հայցեմ գթութիւն վասն արդեանց ամենարժէայ արեանդ, որ արդ ողորմութիւն գոչէ վասն իմ, զի մի երբէք նոյն արիւն ամբարձցէ զձայն իւր՝ զարդարութիւն բողոքել յիմ վերայ: Ողորմեա ինձ, Աստուած, ըստ մեծի ողորմութեան քում:

Յիշեցից յաճախ զի յաւուրն դատաստանի ահաւորագոյն ինձ տեսիլ լիցի՝ յիշելն զի չատ ինչ արարի 'ի չարչարել զՅիսուս, և սակաւ կամ ոչինչ յօգտիլ արդեամբք նորին:

ՄԾԵ. Ի նշմարել մերում զՅիսուս վիրաւեց և արիւնաթաթաւ, քաջ խորհեսցուք, ո՞ իցէ այդգունակ անարգեալդ և ցաւալլուկ տառապեալ: Նա ինքն է Ճշմարիտ Որդի Աստուծոյ, պատկեալն փառօք և պատուով, և տիեզերաց տէր և իշխան կարգեալ 'ի Հօրէն յաւիտենականէ. Ճշմարիտ Որդի Աստուծոյ, որ պսակեալ 'ի Մա-

րեմայ կուսէ պսակաւ մարդկութեան մերոյ, պսակեսցի յաւուրն դատաստանի և պսակաւ արդարութեան 'ի հրեշտակաց. նա ինքն այժմիկ 'ի նենգաւոր ժողովրդանոցէն պսակի թագիւ փշոց, թագիւ ցաւոց և անարգանաց: Ե՛լ դու հոգի իմ, ընդ դստերաց Սիոնի, տեսանել յայդ կերպարանս զթագաւոր քո, զարդարև զթագաւորն փառաց, զտէրն զօրութեանց. այսպէս յաղթեաց գոռոզութեան աշխարհի՝ համբերութեամբ իւրով և խոնարհութեամբ. և հաճեցաւ հրահանգել զմեզ յամենայն ուղղութիւնս, զամենայն կրելով ազգս ազգս վշտաց և նախատանաց: Այս է բովանդակութիւն վարդապետութեան նորա՝ զոր ուսոյց պսակմամբն փշէիւք, եթէ՝ նեղ, աշխատալի և փշալից է ճանապարհն արքունի՝ որ տանի յերկինս. զի չիք այլ ճանապարհ ժամանելոյ 'ի փրկութիւն յաւիտենական՝ բայց միայն ինքն Յիսուս Քրիստոս. և աւադիկ 'ի Յիսուս ճանապարհ մեր փշապատ. այլ աւադիկ նոյն իսկ մեզ ճանապարհ փրկութեան, նմանութեամբ վարուց մերոց՝ օրինակին Յիսուսի: Զանձն իմ խոբեմ՝ եթէ կամիցիմ արդ պսակել զիս բոլորիւք վարդից հեշտութեանց և զբօսանօք աշխարհի, և այսպ պսակիլ փառօք յարքայութեան. քանզի եթէ և Քրիստոսի Աստուածամարդոյ հարկ եղև առ. 'ի մտանել 'ի փառս իւր՝ չարչարիլ և փշովք պսակիլ, զի՞արդ իցէ ինձ հնար մտանել 'ի նոյն՝ ծաղկամբք պսակելով, փափուկ և մեղկ կենաց, զեջանելով հեշտ կամաց մարմնոյս, և խորշելով յամենայն մեռելութեանց: Կամ աստանօր և կամ անդանօր հարկ է ընդ փուշ գալ. և որ մերժէն զփուշս ապաշխարութեան և մեռելութեանց կենցաղոյս, հարցի փշովք տանջանաց և անքուն որդամբք հանդերձելոյն: Աներկբայ է ճշմար_

տուԹիւնս այս։ Եւ արդ զի՞նչ մնայցէ ինձ առնել. եԹէ ոչ՝ անձին զգաստ լինել, սորջանալ ընդ վրիպանս իմ յոր կեցի ցարդ չարաչար վարուք, և ընտրել ինձ նոր ճանապարհ գնացից։

Ո՛վ Յիսուս իմ, որ ողորմուԹեամբք պսակես զընտրեալս քո, գոհանամ զգԹուԹենէ քումմէ որով հաճեցար այժմիկ բանալ զաչս մտաց իմոց. ծանեայ՝ զի առ 'ի վայելել 'ի յաւիտենան սպասէ ինձ չարչարել 'ի ժամանակիս. և վասն այնորիկ աղաչեմ զքեզ, չափ դնել յախուռն յօժարուԹեանս 'ի հաճել զզգայուԹիւնս իմ։ Տո՛ւր ինձ սէր, ժոյժ և ույժ տանելոյ վշտաց։ ԵԹէ էր ինձ մարԹ և փափկուԹեամբք փրկիլ, ընտրէի մեռելուԹեամբք նմանել քեզ. զի առնոԹ մեծ է ինձ յոյժ փափկանալ՝ մինչ դու փշովք պսակիս. այլ առ 'ի գիւրել ինձ զկըրԹանս մեռելուԹեան՝ հայցեմ 'ի քէն շնորհիւ փշոյդ՝ ոգի զղջուԹեան։

Յամենայն դէպս ուր և ընդ առաջ լիցին ինձ փշոտք ակամայ կամ կամաւոր՝ 'ի մեռուցանել զիս 'ի զգացման կամ յախորժակս ինչ, համարեցայց եԹէ Յիսուս մատուցանէ ինձ զմի 'ի փշոց անտի իւրոց։ Ո՛վ փուշ անձկալի, փուշ մեծարգի։

ՄԾՁ. *Զիք ինչ առանց խորհրդոյ 'ի չարչարանս Քրիստոսի. որ Թէպէտ և 'ի հասարակի 'ի քաւուԹիւն ամենայն մեղաց մերոց սահմանեցաւ, այլ մարԹ է համարել զայն և 'ի սրբուԹիւն միոյ միոյ ազգի մեղաց։ Զիք մասն 'ի մարմնի մերում որով Թէ ոչ մեղանչիցեմք. և չիք 'ի մարմնի Յիսուսի մասն՝ որ Թէ ոչ առանձինն ինչ ցաւս կրեաց. և զի 'ի գլխի կերպարանին խորհուրդք մեղասէրք, արժան է խմասասիրել՝ եԹէ յայս սակս տառապեալ հաճեցաւ փր-*

չովքն պսակիլ: Եթէ էր ինձ հնար 'ի համար ար-
կանել զամենայն զոր խորհրդովս գործեցի մեղս,
քանի՛ արհաւիրս արկանէին զինև անհեդեդ-
հոյլք չարեացս: Քանիցս յօրինեցի 'ի գլխի ի-
մում խորհուրդս ցնորականս երկրաւոր մեծու-
թեանց, ընդունայնութեանց, պղծութեանց,
անառակութեանց և վտանգաւոր պարապոր-
դութեան՝ 'ի յագուրդ ախտաւոր ցանկու-
թեանց: Քանիցս թոյլ ետու մտանել 'ի գլուխ
իմ՝ մարմնոյ, աշխարհի և սատանայի, անօրէն
սադրանօք նոցին: Գիտէի զի մեծվայելչութիւն
Աստուծոյ արդելոյր ինձ զխորհուրդս չարս՝
սպառնալեօք անաչառ պատուհասի. և սակայն
քանիցս կամաւոր չարութեամբ հաւանեցայ
յազգս ազգս խորհրդոց չարաց, զնոյն ինքն զբա-
նական կեանս իմ 'ի մեղս մահացուս վարելով:
— Արդ ահաւադիկ 'ի գլուխ Փրկչին տեսանեմ
զբերս մեղաց իմոց. ահաւադիկ յաղագս իմ
այդքանեօք հեղձամղձուկ լինի փշովք՝ Բանն
Աստուծոյ. այդքան փշովք խոցոտի գլուխն
սրբազան՝ զոր Հայրն յաւիտենական պսակեաց
ծաղկօք սրբութեան:

Ո՜վ Յիսուս իմ, ոչ կարեմ հայել ընդ քեզ
առանց շառագունանաց. զի ոչ տեսանեմ 'ի
գլուխ քո փուշ՝ որ չիցէ իմ: Այլ զի՞նչ օգուտ
իցէ շառագնել, եթէ ոչ յորդորիցիմ 'ի սուգ և
'ի զեղջ: Ցաւիմ և զղջամ, Աստուած իմ, ընդ
ամենայն մեղս զոր խորհրդովս գործեցի. և ցաւէ
ինձ յոյժ դառնապէս՝ ոչ այնքան վասն զոր
անձինս առթեցի՝ պարտական առնելով անաչառ
դատաստանաց քոց, որքան անզգամեքն իմ առ
քեզ՝ այնքան վէրս տալով: Գթութիւն, ողոր-
մութիւն, քաւութիւն: Եւ զի մի ևս մեղայց
քեզ, տո՛ւր ինձ շնորհս մի 'ի հզօրեղ շնորհացդ՝
զոր ստացար վասն իմ խայթիւ այնր փշոյ՝ որ

խորագոյնս խոցեաց զքեզ։ Տո՛ւր ինձ միտս, բան և իմաստ, որ ոչ յայլ ինչ խորհիցի և յառիցի՝ բայց 'ի քեզ միայն. տո՛ւր ինձ ոգի այնպիսի ողջախոհութեան և պարկեշտութեան՝ որով յամենայնից զգուշացայց 'ի չար խորհրդոց՝ որպէս 'ի դժոխոց անտի։ Տո՛ւր ինձ, միով բանիւ, զսէր քո. զի չիք ինչ իբրև զդա հզօր 'ի դիմակալութիւն ցասման, նախանձու, ատագասիրութեան, և ամենայն ազգի ազգի մարմնական և դիւական չարեաց։ Եթէ զսէր քո ունիցիմ՝ զիա՞րդ հնար իցէ ինձ այնուհետև խորհել յանհաճոյսն քո, կամ զիա՞րդ ոչ խորհել միշտ 'ի փառս քո։

Զվէրս Յիսուսի իմոյ յիշեցից՝ 'ի յառնել 'ի վերայ իմ խորհրդոց չարաց։ Յորժամ խորհրդովք բարեօք պատսպարիցի հոգին՝ ոչ ինչ ոչ ատանանեացեն նմա խորհուրդք չարք։

Այգանումն Յիսուսի իբրու թագաւոր սրտի:

ՄՏԻ. Գիտէ Պիղատոս եթէ զիա՛րդ չարաչար նեղեն զՅիսուս, և ոչ արգելու, այլ թոյլ տայ 'ի շնորհուկս Հրէիցն, ակն ունելով թէ շատացեալ ուրեմն նոցա այնու՝ հանդարտեսցին 'ի սրտմտութենէ ատելութեան իւրեանց, և ոչ ևս խնդրեսցեն զնա սպանանել։ Այլ նոցա առաւել ևս վխտացեալ վասն կարծեացն՝ եթէ կամէր նա թագաւոր Իսրայէլի զինքն անուանել, ոչ դադարեն 'ի կատակելոյ զնա, յայպն առնելոյ և 'ի ծանակելոյ՝ որպէս թագաւոր կեղծ և ծաղրելի. վասն այնորիկ յետ դնելոյ 'ի գլուխ նորա զպսակն փշեղէն՝ արկանեն զնովաւ

և քղամիդ ներկեալ 'ի ծիրանի, ցնցոտի հնոտի և աղտեղի, որպէս զի առաւել ևս նշաւակեսցի անշքութիւնն 'ի շքի անդ: Նախատեսեալ էր Մարգարէիցն զայս ևս անարգական արհամարհութիւն Փրկչին աշխարհի, եթէ ծաճկեսցեն զնա անհնարին ամօթով յոտից մինչև ցգլուխ (Ես. կգ. 2). որպէս զի 'ի դէպ իցէ կարծել, եթէ սատանայի ինքնին հնարեալ էր զխոհերան. այլ, ո՛հ, զիա՛րդ կորագլուխ ամօթապարտ կրափահարեցաւ Թագաւորն ամբարտաւանից 'ի Թագաւորէ աստի խոնարհից: Զամենայն հնարս հնարեցաւ սատանայ առ անպատուել և անշքել զՅիսուս. այլ ամենայն զոր բանսարկուն հնարեաց չարութեամբն՝ փոխեցաւ յառիթ օգտի խոնարհութեան և յաւիտենական փրկութեան մերոյ: Զիք ինչ վայրապար 'ի Յիսուս. ոչ միայն մարդկութիւն նորա նուաստանայ, այլ և յաստուածութեան իւրում փայլէ խոնարհութիւն. և խոնարհութեամբ Աստուածամարդոյս ազատեցաք մեք 'ի ծառայութենէ մեղաց և 'ի գերութենէ դժոխոց:

Այլ եթէ ես ինքնին ոչ խոնարհեցայց, զի՞նչ օգուտ իցէ ինձ յամենայն խոնարհութենէ և յամենայն նուաստանալոյ քո, Աստուած իմ: Քանի՜ առիթք են ինձ զարհուրելոյ՝ 'ի տեսանելն զքեզ՝ որ 'ի փառս Որդւոյ Աստուծոյ և Թագաւորի երկնից և երկրի, յանձն առնուս այդքան հեզութեամբ և համբերութեամբ՝ զանարգանս վարկանելոյ սուտ Թագաւոր՝ 'ի կերպարանս նախատալիցս. և 'ի խորհելն յիմ վերայ՝ որ որդն աղկաղկ գոլով և ափ մի փոշւոյ, ոչինչ մի, տակաւին և ոչ մի գործ խոնարհութեան գործեցի ըստ քում նմանութեան: Ուստի՞ իցէ ինձ դժուարանալս և խռովել 'ի համբերութիւն վնասու ինչ կամ նախատանաց և ստգտանաց:

Արգելիչ ինձ և խափանարար խոնարհութեան հպարտութիւնս իմ է։ Եւ իցէ՞ հնար տեսանել զԱստուած՝ զայս ձև խոնարհեալ, և ինձ կալ կոկոզավիզ։ Ո՜վ Յիսուս, ո՞ տայր ինձ հասու լինել մտօք՝ բանից՝ զոր լռութեամբդ ասես։ Տո՛ւր ինձ զպարտս իմ նմանելոյ քեզ․ տպաւորեա յիս խորագոյնս զմեծ իմաստ կրից քոց որ վասն իմ․ և քաղցրացո ինձ ամենայն որ հանդիպեսցի ՛ի կրել վասն քո։

Յետ ընթեռնլոյ ինչ կամ խոկալոյ ՛ի չարչարանս Քրիստոսի, անդէն ՛ի մտացօնս արկանեմ․ բևեռեցից զոնեա ՛ի մտի զյիշատակ լոկ խոնարհութեանն նորա՝ վասն պարտուցս նմանող նմա լինելոյ։

ՄԾԸ․ Յընթեռնուլն զչարչարանաց Յիսուսի յաւետարանին՝ չէ պարտ յամել միայն ՛ի վերին երեսս գրոյն, այլ ՛ի ներքս յուզել անդր թափանցանել։ Մեծ խորհուրդ պարունակեալ կայ ի քղամիդն՝ որով ծածկեցաւ Փրկիչն մեր․ և միտ եդեալ ամենայնի զոր վասն մեր գործէ, որպէս ՛ի հանդերձն սպիտակ՝ զոր ՛ի տան Հերովդէի արկաւ՝ նշանակիւր անմեղութիւն նորա, այսպէս և ՛ի կարմիրս զոր ՛ի գաւթի այսր Պիղատոսի ագաւ՝ անկ է մեզ ճանաչել զմեղս մեր, ըստ ակնարկութեան բանից Գրոց, և գոչել հիացմամբ․ Ահա Մեսիա, Ընտրեալն, Սիրելին Հօր յաւիտենականի, սպիտակ և կարմիր, զգեցեալ բեհեզս և ծիրանիս՝ յերկիցս սուրբ մարդկութեան իւրում։

Զարհուրեալ սոսկացիր, անձն իմ, նշմարելով զանարատ Աստուածամարդն այդքան անօրէնութեամբք ծածկեալ և անհեդեդ եղերամբք․ և քաջ զմտաւ ած, թէ քանի՞ առաւել ծանր և բուռն և զկծեցուցիչ են նմա մեղք քո քան պա-

տաւատուն վերարկուն այն: Այլ իմաստասիրելով և զայն՝ զի 'ի ծիրանոջն յայնմ կերպարանի և բոցափայլ սէր նորա, յիշեա թէ որքան պարտական ես սիրելոյ զնա և շնորհս մատուցանելոյ: Ընդէ՞ր ինչ իցէ անընդոստ կալ սրտի 'ի հաւատալն՝ եթէ հաճեցաւ Աստուած անբաւ բարութեամբն յանձն իւր առնուլ զյանցուածս քո, և վասն քո կրել զայդքան անթիւ վիշտս վտանգաց:

Աստուած իմ, քանի՜ մեծ է բարութիւնդ, ողորմութիւնդ և սէր առ արարած մի քո՝ անարգագոյն և աներախտ քան զամենայն արարածս աշխարհի: Դու անբաւելի գթութեամբդ հաճեցար յանձն քո վերառնուլ՝ փշով պսակմամբդ՝ զմեղս իմ. և նովին իսկ պսակաւ փշեայ մաքրեցեր զհոգին, և արժանի արարեր զիս այնու՝ երանականն պսակի փառաց. այլ և յետ այնր հաճեցար դարձեալ ստանձնել զմեղս իմ ցնցոտի և աղտեղի գրգլեկաւն, և ծածկեցեր նովին և քաւեցեր, ձևելով ինձ ծիրանեաւդ զպատմուճան փրկութեան յաւիտենականի: Ո՜վ անլուր մարդասիրութիւն: Գոհութիւն քեզ անսպառ, և օրհնութիւն սիրոյ քում:

Մի ևս անյոյս եղեց 'ի փրկութենէ իմէ, թէպէտ և չիցեմ բաւական ապաշխարութեամբ ջնջել զհոգին. քանզի հաւանեալ գիտեմ եթէ մեծ են յոյժ ողորմութիւնք քո քան զամենայն ոճիր չարեաց իմոց: Ապաստանիմ ընդ վերարկուաւ գթութեանդ, և 'ի քեզ յուսադնեալ եմ, Յիսուս իմ. և քաջալերեալ այսու յուսով՝ ոչ ևս երկարութիւն կենաց խնդրեմ 'ի քէն կամ աջողութիւն ժամանակեայ, այլ զողորմութիւն քո միայն ժտիմ, որ պատուական է քան զամենայն կեանս կենցաղոյս: Ողորմեա ինձ, և խոստովան եղեց քեզ հանապազ 'ի ժամանակի և 'ի յաւիտեանս յաւիտենից:

Ղատուցիր սիրոյ Փրկչին իմոյ Յիսուսի ներգործութեամբք սիրոյ առ նա, հաստատուն առաջադրութեամբ մտաց՝ կամելոյ զամենայն որ հաճոյ իցէ նմա, և չկամելոյ և ոչ ինչ որ չիցէ նմա հաճոյ:

ՄԾԹ. Առ 'ի կերպարանել զՅիսուս 'ի թագաւոր կեղծ և ծաղրելի, յետ դնելոյ 'ի գլուխ նորա զթագն փշեղէն, և արկանելոյ զնովաւ զծիրանին ցնցոտի, դնեն և 'ի ձեռին նորա որպէս մական զեղէգն խոտան, առ 'ի ցուցանել, զի կամ խելագար ոմն էր թագաւորութեան փափագելով, կամ թէ մնոտի է թագաւորութիւն նորա, անզօր և անիշխան, զի և ոչ զանձն իւր կարէ պաշտպանել յայնքան անարգանաց: Բայց նա 'ի ճանաչել զանձնն՝ ճանաչէ և զեդեալն նմա անարգանս. այլ առնու և զեղէգնն 'ի ձեռն. ոչ մերժէ ոչ զմի ցաւ և ոչ մի նախատինս. այլ թոյլ տայ նենգաւորացն առնել ընդ նմա զինչ և կամիցին, առանց ինչ ասելոյ կամ տալոյ նշան թաղծալից տառապանացն: Աստանօր ճշմարտի բանն զոր փոքր մի յառաջ ասաց, եթէ թագաւորութիւն իւր ոչ է յայսմ աշխարհէ. այսինքն է, ոչ է այն ստանալի մեծութեամբք ընչից, կամ զինու զօրութեամբ, այլ աղքատութեամբ, համբերութեամբ և անարգակերպութեամբ:

Տե՛ս ինձ, հոգի իմ, թագաւորութիւնն Յիսուսի՝ թագաւորութիւն է փառաց յաւիտենականաց. և աւագիկ օրինակ նորին և հնարք ժառանգելոյ զայն: Կարիցե՞ս ասել ստուգութեամբ սրտի մտօք եթէ չիցես հեռի յարքայութենէ այտի՝ կրթութեամբ այնց առաքինութեանց. յո՞ր սահման աղքատութեան հոգւոյ ժամանեալ կայցես. յո՞ր համբերութիւն. յո՞ր աստիճան խոնարհութեան: — Եւ ոչ մի ինչ յուղղու-

թեանց տեսանեմ յանձին իմում, զոր թէ ար-
ժան իցէ ուղղութիւն անուանել. և զիա՞րդ իցէ
ինձ ակն ունել արքայութեան երկնից, որ ուղ-
ղութեամբք հայթհայթի, և յափշտակի բռնա-
բարութեամբ ախտիցն և զգայութեանց: Յամե-
նայն նուագի ասելոյ իմոյ զտէրունականն ա-
ղօթսն՝ Եկեսցէ արքայութիւն քո, աղաչեմ զԱս-
տուած՝ հաղորդ և զիս առնել երանեալ ար-
քայութեանն. այլ առ 'ի լինել այնմ արժանի՝
զիա՞րդ արդեօք յետոյ ջանայցեմ արդիւնագոր-
ծել զաղօթս իմ: — Ո՛վ Յիսուս իմ, ես եղէգն
եմ սնամէջ և զաղփաղփուն, որ յամենայն հող-
մոյ շարժի: Ունիմ փափագ բարեաց, և առա-
ջադրեմ իսկ երբեմն բարիս, այլ ոչ պահեմ. և 'ի
պահու իսկ յոր կարծեմ ունել կամս բարեաց՝
ափիրատ վեհերանօք 'ի չար անդր բուռն հար-
կանեմ: Աղէ, բարեգութ Յիսուս, վասն ծանա-
կէլ եղեգանն՝ զոր 'ի ձեռն առեր՝ առ 'ի կազդու-
րել արդեամբք քո զդիւրաբեկութիւնս իմ, և
պնդել օրինակաւ քով զմեղկութիւնս իմ, օժան-
դակեա ինձ օգնութեամբ քով: Ճշմարիտ պատ-
ճառք անհաստատութեան իմոյ յուղղութիւնս
և զթելոյ յախտս՝ յանձնապաստանութիւն իմ
է, և ոչն յիշել թէ եղէգն եմ նկուն. այլ տո՛ւր
ինձ, ո՛վ Յիսուս, սակաւ մի 'ի խոնարհութենէ
քումմէ, և վաղվաղակի թօթափեալ զառ յանձն
իմ վստահութիւն, 'ի քեզ միայն յեցայց, 'ի քեզ
միայն ապաստան եղեց, և լցից զպարտս իմ, և
աջողութեամբ հասից 'ի ժառանգել զգաւազանն
փառաց յարքայութեան քում, զոր անարգանօք
եղեգանդ ստացար ինձ:

Ի Յիսուսէ զեղէգն 'ի ձեռին ունելոյ՝ ուսայց
որպէս զեղէգն սին ընդունայն համարել զաշ-
խարհային առ հասարակ: Ունայնութիւն են
աջողութիւնք և հեշտութիւնք և պատիւք: Ու-

նայնութիւն համարեցայց զունայնութիւնս, և յաւիտենականացն եղեց ցանկացող։

ՄԿ. Արդ բազմեալ կալով Յիսուսի պսակաւն փշեայ, վերարկուեալ ծիրանեաւ, և եղեգամբն 'ի ձեռին, հնարի զօրականն զամենայն հնարս այպանից և ձաղանաց, ցոր վայր մարթ իցէ ժամանել յանդուգն ժպրհութեան. զգեցուցեալ նմա զձև ծաղրելի թագաւորի, մատչին զբօսնուլ նովաւ, խաղ առնելով աղգի աղգի կատականօք և ծաղրածութեամբ. ծիծաղին զնովաւ որպէս զանպիտանեաւ ոմամբ՝ որ ունիցի կամս այլ ոչ կարողութիւն թագաւոր լինելոյ. և մի ըստ միոջէ անցեալ զառաջեաւ նորին, ողջոյն տան և ասեն, Ողջ լեր, թագաւոր Հրէից. ջանալով մի քան զմի խենեշագոյնս արտասանել զողջոյնսն։ Հանդէս խնդութեան կատարեն 'ի վերայ նորա, տեսեալ զնա յայպն և 'ի նախատ. և ոչ ինչ պակասէ 'ի լրումն նախատացելոցն յինքենէ ըստ մարգարէիցն պատգամաց։ Խառնին ընդ զօրականին և Հրեայքն։ — Հայեցուք արդ մերթ յամպարիշտ կատակողմն ոխալից և քինաթափս, մերթ յօրհնեալն Յիսուս, որ կայ զերկիր նշմարելով, պարկեշտ, խաղաղասէր, հեզ և հանդարտ 'ի կրել զամենայն թշնամանս։ Նոքա ոչ գիտեն զոր ասենն և առնեն. այլ որպիսի՛ խորհուրդք կատարին անտանօր վասն մեր։ Թագաւոր կոչեն զնա խոտորնակ կամօք՝ առ ամաչեցուցանել զնա նուաստութեամբ. այլ խոստովանին որ ինչ նա է. և առանց զգալոյ՝ ասեն զճշմարտութիւն։

Այո, Յիսուս իմ, այո, թագաւոր ես դու փառաց. միայնդ ճշմարիտ թագաւոր, միայն մեծ, վեհագոյն քան զամենայն թագաւորս։ Թագաւոր ես, և թագ ընտրելոց քոց. թագաւոր իմ և Աստուած իմ. այդպէս զքեզ ճանա-

չեմ, խոստովանիմ և բարձր առնեմ. քեզ նուիրեմ զսպաս ծառայութեան իմոյ, քեզ հնազանդիմ, և յաւիտեան քո կամիմ լինել անդրդուելի կամօք: Եւ զի մի յանձին կամս՝ որ յողդողդն է և աւաղելի՝ եղեց վտանգ, քեզ խոնարհեցուցեալ զաղերս իմ՝ անսամ խորին հպատակութեամբ: Հաւատամ զի կարես, և յուսամ զի կամիս այնպէս հզօր առնել զտկարութիւնս իմ, զի արդարև հաւատարմութեամբ և յարատևակ ժուժկալութեամբ կատարեցից միշտ զհաճոյս կամաց քոց: Այսպէս լիցի ինձ, որպէս Թախանձանօքս ժտիմ: — Ո՛վ Թագաւոր աստուածային, ցաւակցիմ քեզ 'ի սրտէ վասն աւաղելի պայմանիդ՝ յորում նախատիս և լկիս 'ի Հրեից՝ որպէս Թագաւոր սուտ. այլ և խնդամ և ուրախակից լինիմ քեզ՝ զի պատուիս և մեծարիս՝ որպէս Թագաւոր գերագոյն՝ 'ի դասուց հրեշտակաց: Ողջ լեր, Թագաւոր իմ, ողջ լեր. փափագեմ բիւրիցս բիւր զայս ողջոյն մեծարանաց յեղյեղել քեզ. և յասելս՝ Ողջ լեր, իղձ լինիմ և ժտել 'ի քէն զփրկութիւն անձին իմոյ. փրկեա զհոգի իմ, ամենագութ Փրկիչ:

Քննեցից տեսից՝ Թէ իցէ՞ն արդարև կամք՝ եթէ բաղբաղայք առաջադրութիւնս իմ այս կալոյ 'ի սպասու Տեառն: Ճշմարիտ կամք՝ խոնարհին ժտել 'ի Տեառնէ, և շնորհօք նորին կատարեն զարժանն:

ՄԿԱ. Սադրանօք յուշ առնեն զօրականին Հրեայքն, եթէ Յիսուս ոչ միայն Թագաւորել կամէր, այլ և զանձն իւր որդի Աստուծոյ ասէր. վասն այսորիկ և ընդ այս ևս ծաղր առնելով զնա, 'ի կատականսն՝ զոր իբրև Թագաւորի սուտ գնէին նմա, յաւելուն և այլ ևս նախատինս. և անպատկառ օրինակաւ ծունր եդեալ առաջի

նորա, կերպարանին երկրպագութիւն, որպէս թէ 'ի ցոյց սուտութեան աստուածութեան նորա: Զի եթէ Աստուած էր, ասէն 'ի միտս իւրեանց, կամ թագաւոր, կամէր արդեօք և կարէր փրկել զանձն. և զի ոչ պաշտպանէ զանձն, այլ լուռ եւեթ կայ, թաքուցանելով զզօրութիւն իւր, և երևեցուցանելով զերկայն մութիւնն միայն, առաւել ևս գրգռէին զնա զկծանօք:

Զի՞նչ ասիցես, հոգի իմ, տեսանելով զԱստուած՝ որ 'ի հին կտակարանս կոչէր Աստուած վրէժխնդիր, Աստուած զօրութեանց, հզօր և կարող 'ի պատերազմի, որ արդ պարծանս համարի լինել Աստուած համբերութեան, զի կայ անյողդողդ ընդ տարափով լուտանաց: Ի՞ւ իւիք արդարասցուք մեք 'ի սրտմտութեան մերում, կամ իրաւունս ունիցիմք չհամբերելոյ տառապանաց և արկածից, զայսպիսիս ակն յանդիման ունելով օրինակս Փրկչին մերոյ: Այլ միտ դիցուք և գործոցն կատարելոց: Զոր օրինակ դատապարտեաց Կայիափա զՅիսուս՝ ոչ գիտելով զոր ասէրն, ըստ նմին օրինակի և այժմ զօրականքն երկիր պագանեն նմա, կոյրք և տգէտք, ոչ գիտելով զոր առնենն. և 'ի դէպ է ասել թէ ամենայն գործ ամպարշտութեան նոցա՝ ունիցի ինչ խորհուրդ խրատու վասն մեր: Որ ինչ յայնժամ գործեցաւ՝ նոյն և այժմիկ գործի յայնցանէ որ հաւատան զՅիսուս Աստուած Ճշմարիտ, և ոչ պահեն զպատուիրանս աւետարանին նորա, որպէս թէ օրէնք առասպելեալք իցեն ոչ գիտեմ որոյ աստուծոյ ստոյ. և յամենեցուն որ հաւատան զՅիսուս բարի գերունակ, և նախամեծար.քան զնա առնեն զդուզնաքեայ բարիս աշխարհի: — Քանզի և ես զայս օրինակ անգամնեցի զքեզ, Յիսուս իմ. հակառակս ամենևին գոր-

ծելով զթելադրելոյն ինձ 'ի հաւատոց քոց. կեղծաւորելով պատուել զքեզ և թշնամանելով չարութեամբ: Ցաւէ ինձ ընդ նենգութիւն իմ և ընդ կեղծաւորութիւն. և 'ի տեսանելն իմում զթշնամիս քո զի ծունր ածեն քեզ ընդ կատակս՝ ես սրտիւ բեկելով անկանիմ առաջի քո, խոնարհիմ 'ի պաշտել և երկիր պագանել քեզ: Ոչ ոք յամենայն չարչարանս քո ծունր քեզ կրկնեաց, բայց յորժամ պսակեցարն փը-շօք. քանզի 'ի փշոցդ միջի յայտնիս Աստուած և Փրկիչ աշխարհի, օրինակեալդ Մովսիսի 'ի մացառ բորբոքեալ փշալից մորենւոյն: Վասն այնորիկ ամենայն մեծարանօք երկրպագեմ քեզ՝ որպէս աստուածայնոյ իմոյ Փրկչի. և աղաչեմ զքեզ լինել ինձ Փրկիչ, առ 'ի գլուխ հանել զյաւիտենական փրկութիւն իմ:

Կրկնեցից զաղերս հաւատոց և զյուսոյ, յիշելով զի մեռեալ են հաւատք, մեռեալ է յոյս՝ եթէ ոչ օժանդակիցի գործովք բարեաց: Իսկ ես զի՞արդ կեամ. զի՞նչ գործեմ առ 'ի փրկել զանձն իմ:

ՄԿԲ. Յետ բանիցն այպանաց և ծաղու և թշնամանադիր կատակաբանութեանց անարգողնից՝ զոր թէ հնար էր առնել առ անձն մեծարգոյ, որպիսի էր Տէրս մեր Յիսուս Քրիստոս, յառաջէն և 'ի գործս. և շուրջ պար առեալ զնովաւ՝ ոմանք ապտակս հանեն նմա, ոմանք թուք արձակեն յերեսն՝ յորս չև ևս էին ցամաքեալ առաջին թքանքն. այլք առնուն զեղէգն յաջոյ նորա և հարկանեն ընդ գլուխն, որպէս զի ուր կակղագոյն մասն իցէ՝ խորագոյնս մխեսցին փուշքն, իսկ ուր խստագոյն՝ կամ բեկցին և կամ առաւել մորմոքեցուսցեն ըզվէրսն. մինչև սարսուռ սաստիկ ածել զնովաւ և

նուաղեցուցանել: Զամենայն հնարս անդթութեան հնարին առ 'ի կոտել զնա. և ոչ մնայ 'ի մարմնի նորա մասն ողջ: Եւ ո՞ հանճարեղս արար զնոսա և առ անարգել, և առ չարչարել այդքան անսովոր օրինակօք զանմեղն այն և զմիշտ բարերար ամենեցուն: Թուի ինձ եթէ գունդագունդ անդր դիմեալ հասեալ կային դևք 'ի մալել զպաշտօնեայսն, վառեալ 'ի նոսա անհնարին հուր ցասման: Այլ այն զիարդ և է, 'ի դէպ է ասել զամենայն 'ի տնտեսութենէ իմաստութեան և արդարութեանն Աստուծոյ, 'ի լրումն գրելոց, այնպէս ցուագինս լինել նախատանաց և այնպէս նախատալից ցաւոց Յիսուսի, որպէս զի քաջայայտ լիցի և ամենամեծ առ մեզս տելութիւն Հօրն յաւիտենականի, և ամենամեծ սէր Որդւոյն մարդասիրելոյ՝ առ մեղաւորս:

Եթէ գոյր ումեք հնար տեսանել զհոգին Քրիստոսի զզուեալ յայնքան անարգանաց և տանջանաց, զիա՞րդ արդեօք հիանայր 'ի նշմարելն և զանհնարին տրտմութիւն նորա ընդ մեղս մեր՝ պատճառս այնքան աղետից, և ընդ անհնարին ուրախութիւնն վասն փառացն զոր մատուցանէր Աստուծոյ, և փրկութեանն զոր առնէր հոգւոց: Տրտմէր վասն անհնարին ատելութեանն ամպարշտութեանց մերոց. խնդայր ընդ առատաբաշխ տուրս փրկագործութեան մարդկութեան մերոյ:

Ո՛վ աստուածային Փրկիչ, մասնաւորեա և զիս ատելութեանդ սրբոյ՝ որ առ մեղս, զի հանապազ դարշեցայց 'ի նոցունն և սարջացայց: Մասնաւորեա զիս և սիրոյ քում, զի սիրեցից զքեզ սիրովն որով սիրես դու զիս: Փափագեմ սիրել զքեզ, այլ ոչ գիտեմ թէ սիրիցեմ զքեզ: Եւ զիա՞րդ ստուգեցից զայս սէր: — Ո՛վ, Յիսուս իմ, յայնժամ գիտացից թէ սիրեմ զքեզ,

յորժամ գուն եդից նմանելոյ քեզ. յորժամ առ
'ի հնազանդել և հաճոյ լինել քեզ՝ ջանացայց 'ի
մեռելութիւն կրթից: Զայս դնեմ 'ի մտի առնել
քոյով օգնականութեամբ:

Ընտրեցից զմեռելութիւն՝ յորս կրթից կա-
միցիմ. և զայնցանէ յուէտ բուռն հարից՝ որոց
առաւել պէտս ունիմ առ 'ի նորոգել զիս 'ի
ներքոյ և արտաքոյ:

Յանդիման առնել Պիղատոսի զՅիսուս առ ժողովուրդն:

ՄԿԳ. Յայսպիսում գոլով Յիսուսի յողոր-
մելի և գձուձ պայմանի, վիրալից և արիւնաթա-
թաւ, նաև մերկ, զծիրանեակն միայն ունելով
զիւրև, կապեն դահիճքն պնդութեամբ զձեռս
նորա և զեղէգնն 'ի ձեռինն. ապա արկեալ կա-
ռան 'ի պարանոց նորա՝ որպէս անասնոյ, ածեն
զնա 'ի գաւիթ անդաստակին, ոչ դադարելով
'ի լուտանաց և յայպանաց, առ 'ի ցուցանել
զնա Պիղատոսի՝ 'ի կերպարանս թագաւորի ստոյ
և եպերելոյ: Ոչ շատ համարին ցոյցս առնել
զնա դասու զօրականին՝ յայս սակս կոչեցելոյ,
այլ առ առաւել ևս ամաչեցուցանել զնա՝ կա-
մին նոյնպէս յանդիման առնել զնա դատաւորին
և աւագ որերոյն Հռոմայեցւոց որ յապարանս
անդ իցեն: — Քանի՞ ամօթ կրէր Յիսուս տե-
սանելով զինքն անարգեալ 'ի միջի այնպիսւոյ
խուժանի. 'ի սկզբանէ աշխարհի ոչ ուրեք
լուաւ եթէ բռնաւորք և բարբարոսք այսքան
դառն տանջանօք և անարգանօք պատուհասե-
ցին զյանցաւոր ոք՝ որպէս արդ զՅիսուս, զէ-
կեալն արդարև 'ի քաւութիւն մեղաց մերոց,

այլ միշտ անարատ գոլով և անբիծ, առանց և դոյզն ինչ վնասու մեղաց իւրովանին։ Եւ ոչ մի ինչ ըստ հաստատակաց օրինի և սովորութեան գործեցաւ 'ի չարչարանս նորա. և ցաւքն և նախատինք գերածայրեալք եղեն։ Եւ իցէ՞ հնար անկարեկիր մնալ, թէպէտ և խիստ ումեք իցէ սիրտ, 'ի տեսանելն այդքան նուաստացեալ և յայդ սահման հասեալ զճշմարիտ Որդին Աստուծոյ։

Այլ, ո՜հ, անաւ, Տէր իմ, զի հարցից զքեզ երկեղածութեամբ. եթէ առ 'ի փրկել 'ի մեղաց և 'ի դժոխոց զհոգիս մեր՝ սխտոյ էին այնպիսի անհեդեդ լլկանք, հիմ ոչ առաքեցեր փոխանակ քո զմի զոք 'ի հրեշտակաց կամ 'ի հրեշտակապետաց։ Զսէր քո ընթեռնում 'ի վէրս քո, այլ չէ՞ր քեզ մարթ և 'ի ձեռն այլոց ուրուք կատարել զգործդ։ — Խելամուտ լեր, հոգի իմ. եթէ հրեշտակի ուրուք փրկեալ էր զմեզ՝ հարկ էր յերկուս բաժանել զսէր մեր, մասն մի առ Արարիչն մեր ընծայել և մասն առ հրեշտակն փրկիչ. այլ այս չէր յարմարաւոր. վասն որոյ որ ստեղծն զմեզ Աստուած՝ նոյն և փրկել կամեցաւ. որպէս զի մի բաժանեսցի սիրտ մեր, այլ առ նա միայն վերբերցի ամենայն սէր մեր։ Իսկ եթէ զքեզ միայն անկ իցէ ինձ սիրել, Աստուած իմ, որպէս զԱրարիչ և Փրկիչ, որպիսի՜ խեղաթիւր անիրաւութիւն էր իմ ցարդ՝ սիրել զանարգ և զխոտան ինչ արարած քան թէ զքեզ. առաւել զանձն իմ, զմարմին, զհեշտութիւն, և այլ բազում ինչ՝ քան թէ զքեզ։ Արդարև սխալեցի, և ցաւէ ինձ ընդ այն. յայսմ հետէ և առ յապա քեզ միայնոյ նուիրեմ զսիրտ իմ բովանդակ. վասն քո միայն կամիմ յայսմ հետէ կեալ, և բաց 'ի քէն ոչ զոք սիրել։ Քեզ միայնոյ անկ է ինձ լինել, զի ստեղծեր զիս և փրկեցեր, և

եղէց քո բոլորովիմբ: Այլ աղէ, արարիչ իմ և Փրկիչ, տո՛ւր ձեռն ինձ քոյովդ օգնականութեամբ. մի՛ թողուր և մի՛ անարգեր զգործ ձեռաց քոց:

Կրկնեցից զաղերս ցաւոց և սրտոյ. ամաչեցից ընդ անձնասիրութիւն իմ. և գուն եղից փոխանակ թերութեանց իմոց գէթ խոնարհել և ճանաչել զիս առ ոչինչ բաւական:

ՄԿԴ. Մտանէ Յիսուս ընդ քարշ ածեալ զան թէ բերեալ 'ի զօրականէն՝ առ դատաւորն Պիղատոս. որոյ այն ինչ ակն արկեալ 'ի նա՝ զարհուրի 'ի տեսլենէ այլագունեալ և տխեղծացեալ կերպարանացն. Թէպէտ և կրօնիւք հեթանոս, այլ հեզ և համբոյր է բարուք, և չունի զապառում խստութիւն Հրէիցն: Վասն որոյ 'ի գութ շարժեալ ցանկայ ազատել զծանուցեալ անմեղն, ցուցանել կամի զնա ժողովրդեան. այսպէս հաստատեալ կարծելով՝ թէ որ հայիցի ոք 'ի նա՝ թէպէտ և ոխերիմ ատեցող իւր իցէ՝ անդէն և անդ զիջեալ ողորմեսցի, յորժամ տեսանիցէ զնա այնպէս չարակոչկոծ խոշտանգեալ և յայն հասեալ պայման, զի ոչ եթէ թագաւորի՝ այլ և ոչ մարդոյ երևոյթ գոյ 'ի նմա:

Հայեցա՛յ, հոգի իմ, 'ի դէմս Տեառն քո, և խորհեաց: Չէ մարթ աստանօր չփոթել և համեմատել զքեզ ընդ Պիղատոսի, որ 'ի տեսանելն զՅիսուս գթացեալ խանդաղատեցաւ. իսկ դու այնքան խիստ ես և անգութ՝ զի ոչ լինիս կարեկից: Աղէ ա՛ծ զմտաւ, քանի՜ մեծի սիրոյ պարտական ես նմա՝ որ վասն քո կրէ ցաւս 'ի հոգի և 'ի մարմին. շատ ինչ պարտական էիր նմա զի ստեղծն զքեզ, այլ ո՛հ, քանի՜ ևս առաւել վասն զայս օրինակ զքեզն փրկելոյ: Սակաւ բանիւ

զքեզ և զաշխարհ համօրէն էած նա 'ի գոյ, այլ տես, քանիօ՞ն վշտօք, ո՛րքան արեամբ կատարէ զփրկագործութիւնն. ահաւադիկ վասն այդր քան վասն այլոց ամենայնի պարտական ես նմա. զի իւրով անարգութեամբն զքեզ մեծարեաց, իւրովք կապանօքն զքեզ եհոյծ, և վիրօք իւրովք բժշկեաց զքեզ:

Ո՛վ Յիսուս իմ, ճանաչեմ և խոստովանիմ զայս. այո, առաւել պարտական եմ քեզ վասն տանջանացն զոր կրեցեր 'ի փրկութիւն իմ, քան առ ամենազօր արարչակերտ շունչ քո. և եթէ որպէս արարչի իմոյ պարտական եմ քեզ բոլոր անձամբս, ո՛րքան ինչ առաւել ևս պարտիցիմ քեզ՝ որպէս Փրկչի: Արժան է ինձ տալ քեզ զամենայն զոր եմս և զոր ունիմ. այլ զի՞նչ բնաւ իցեմ ես, կամ զի՞նչ իմովսանն ունիցիմ՝ բայց զոչինչ: Եթէ իցեմ ինչ և գուցէ յիս բարի՝ քո է այդ ամենայն. և ես իմովսանն չեմ կարող չեմ բաւական ընծայելով իսկ քեզ զքոյսն՝ առանց քոյին օգնականութեան: Ո՛վ Յիսուս, ընկալ դու քեզէն զքոյսն որ յիս. և եթէ քո իսկ իցեմ բովանդակ՝ զի ստեղծերդ զիս և փրկեցեր, աղէ արա զիս քո լինել նաև 'ի մասին նմանելոյ քեզ: Աւադիկ սիրտ իմ որ փափագէ սիրել զքեզ, այլ և ամենայն զօրութեամբ իւրով ոչ բաւէ. զօրացո զնա քոյին շնորհիւ: Քեզ միայն հնար է զսիրտս զայս քարացեալ փոխել և առնել որդի Աբրահամու:

Առեալ զերեսին զօրութիւնս հոգւոյս և զհնգեսին զգայութիւնս մարմնոյ՝ մատուցից Յիսուսի 'ի նշանակ սիրոյ, և այսուհետև 'ի փառս նորին միայնոյ՝ վարեցայց նոքօք:

ՄԿՆ. Առ ամոքել զգազանացեալ Հրէայն ժողովեալս 'ի հրապարակին՝ սպառնելով կատա-

բածի, դատին ելանէ արտաքս Պիղատոս 'ի պաշտ-դամբ գաւթին, և ունելով ընդ ինքեան զՅի-սուս՝ առ 'ի ցուցանել զնա ժողովրդեանն, Ահա-ւադիկ, ասէ, յանդիման առնեմ ձեզ զայրդ, զի տեսեալ զողորմելի և զարդարև գթութեան արժանի պայման դորին, զգաստացեալ հան-դարտեսջիք յատելութենէ ցասման ձերոյ ընդ դա. զորմէ ես ինքնին վկայեմ ձեզ, զի չէք մե-ղուցեալ, և ոչ գտանեմ պատճառս դատապար-տելոյ զդա: Զայս ասելով 'ի չքմեղս իմն կամի լինել դատաւորն. և խոստովանելով զի յանի-րաւի ետ գան հարկանել զօրհնեալն Յիսուս՝ զանպարտն ծանուցեալ, յայս փաստ դիւրիմաց յանկուցանէ զբանն. Եթէ յանիրաւի ձաղկե-ցաւ Յիսուս՝ անյանց գոլով, մեծ ևս անիրաւու-թիւն լիցի սպանանելն զնա: Ո՛վ զօրութիւն ճշմարտութեան և անմեղութեան: Մարթ է սա-տանայի նորանոր տանջանարանաց հնարիւք մա-հուչափ դառնագինս գործել զչարչարանս Քրիս-տոսի Փրկչին. այլ ամենայն խորամանկութեամբ չարութեանն՝ ոչ կարէ բառնալ զպատիւ անմե-ղութեան անմեղին:

Խորհեցայց յանձն իմ՝ նմանեալ Պիղատոսի: Երկիցս դատաւորն անիրաւ սուղ ինչ յառաջ անպարտ խոստովանեցաւ զՅիսուս, և սակայն դատապարտեաց զնա 'ի ձաղկանս. յետ այնորիկ միւսանգամ խոստովանեցաւ զնա անմեղ, և սա-կայն ոչ խորշեսցի մատնել զնա և 'ի մահ: — Եւ-միթէ ո՞չ այսպէս առնիցեմ և ես հանապազօր. յամենայն ժամ յոր մատչիմ 'ի խորհուրդ խոս-տովանութեան, դաւանեմ զԱստուած՝ գերա-գոյն բարի, յոր չէ պարտ մեղանչել. այլ յետ սակաւուց մեղանչեմ նմա, զամենայն կեանս իմ վարելով խոտորնակի դարձադարձ 'ի մեղս և 'ի խոստովանութիւն. այլ զի՞նչ օգտիցեն խոստո-

վանութիւնքս՝ բայց եթէ որպէս զՊիղատոսին յառաջել ծանրաբեռնութիւն չարեաց և անօրէնութեանց:

Ցաւէ ինձ, Աստուած իմ, ընդ այսպիսի խոստովանութիւնքս, զի խիթամ թէ չարաչար եղեն, քանզի ոչ երբեք զգաստութեամբ բուռն հարի ուղղել զանձն իմ: Արդիւնք չարչարանացդ թողութիւն շնորհեն մեղաց մեղաւորի, յորժամ թէ ճշմարտապէս ապաշաւեսցէ. քանի՛ցս սպա զեղծայ ես չարչարանօք քովք, անարժանապէս մատչելով 'ի խոստովանութիւն: Ողորմեա ինձ Աստուած իմ, և տո՛ւր ինձ շնորհօք քովք ուղղել և ընուլ զթերին իմ. զի անմարթ է մեղուցելոյն հաշտիլ ընդ քեզ՝ առանց ճշմարիտ ապաշխարութեան՝ զոր ուղղութիւնն պահանջէ:

Քննեցից զչար սովորութիւնս իմ՝ առ 'ի փոյթ ուղղութեան. զի ուղղութիւն ստուգագոյն նշան է ընդ ունելոյ 'ի խոստովանութեան զթողութիւն մեղաց յողորմութենէն Աստուծոյ:

ՄԿՉ. Տեսեալ Պիղատոսի զի որչափ և բարբախօսէ վասն Յիսուսի՝ ինչ ոչ օգտի, նա մանաւանդ շշունջ խռովութեան լսի 'ի ժողովրդեանն, դառնայ առ նոյն ինքն Յիսուս և տայ բերել 'ի մէջ պատշգամին, որպէս զի ամենեքին տեսցեն զնա այնպէս փշապսակ, եղէգն 'ի ձեռին, ծիրանի զթիկամբ, և 'ի չարաչար կոտտանացն զոր ածեալն է զնովաւ՝ ծանիցեն զի և առաւել քան զչափ պատուհասեալ է անմեղն: Ո՞ կարիցէ ածել զմտաւ, քանի՞ ամօթ շառագունանաց եհաս թագաւորին փառաց, միայնոյ տեառն տիեզերաց, 'ի նշաւակի կալով այնքանոյ բազմութեան՝ յայսպիսի եղերական կերպարանս: Ոչ ոք իմանայ զխոնարհութիւն նորա, զի ոչ ոք զմեծութիւն նորա ճանաչէ. այլ մեզ յուշ լիցի հանապազ

սատուածութիւն նորա՝ 'ի խոկալն յանարգանս
մարդկութեանն: Աստուած է և մարդ՝ որ արդ-
իւրև թագաւոր սուտ հրապարակացոյց լինի. և
որպէս զօրութիւնն Աստուծոյ՝ 'ի հրաշագոր-
ծելն՝ փայլեաց 'ի պատիւ և 'ի փառս մարդկու-
թեանն, այսպէս և անարգանք մարդոյն յայ-
տանին և 'ի թշնամանս՝ յարհամարհանս Աստու-
ծոյ կրթին: Եւ առ իմէ՞ Աստուած՝ իմաստու-
թիւնն Հօր՝ որ չգործէ ինչ յանպատճառս, այդ-
քան նուաստանալ հաճեցաւ: Աւադիկ պատ-
ճառքն. յանձն էառ Աստուած այդպէս խոնար-
հիլ, որպէս զի մարդն բարձրասցի: Իսկ եթէ
այդքան խոնարհեցաւ Աստուած վասն մեր, ո՞
'ի մէնջ չլասցի ցածնուլ առ սէրն Աստուծոյ: Ո՞
ոչ յանձն առնուցու խոնարհել, քաջալերեալ
'ի յուսոյ անտի յաւիտենական բարձրութեանն,
որում արժանիս արար զմեզ Յիսուս իւրով
նուաստանալովն:

Ո՛վ Յիսուս, գերագոյնդ քան զբնաւս և քան
զբնաւս անարգեալ, շնորհս մատուցանեմ, և 'ի
նոյն յաւելում յամենայն զօրութենէ իմէ՝ ան-
բաւելի բարութեան քում: Իսկ զի՞նչ տացից
փոխանակ խոնարհութեան քո: Ի նշմարել ի-
մում զքեզ այդպէս հեզագին համբերութեամբ
հրապարականախատ լինել, անտրտունջ յառակ
նշաւակի կալով ամենայն աշխարհի, շարժել
շարժիմ արդարև 'ի գութ կարեկցութեան,
այլ և կորանամ յամօթոյ՝ տեսեալ զիս այնքան
օտարացեալ 'ի քումդ նմանութենէ: Ո՛վ. քանի՜
խոնարհ ես դու. քանի՜ հպարտ եմ ես, զի զշա-
րիմ և ցանում ընդ ամենայն բան պարսաւա-
դիր: Եւ միթէ մինչև ցմահ կեցի՞ց այսպիսի վա-
րուք: Քաւ լիցի ինձ այս, ամենախոնարհ Փր-
կիչ: Են են ինձ պատճառք խոնարհելոյ 'ի մար-
մնի, որ առ ի մի տղմոյ է, և առաւել ևս 'ի հո-

գուռջ՝ որ անօթ է չարութեան և անօրէնութեան. այլ չէք ինձ առիթ հզօրագոյն 'ի խոնարհեցուցանել զանձն իմ՝ քան զօրինակ քումդ խոնարհութեան։ Ցանկամ այդմ լաւութեան՝ առ 'ի կերպարանակից լինել քեզ և հաճոյ գտանել յաչս քոյ. այլ չունիմ ժոյժ կրթելոյ 'ի նոյն, քանզի ոչ գիտեմ բուռն առնել ինձ 'ի նուաճել զոռնքացեալ սէր անձին իմոյ։ Վասն որոյ ժտիմ զշնորհսն՝ զոր ստացար վասն իմ խոնարհութեամբդ 'ի համբերել այնքան ամօթոյ նախատանաց։ Ո՛, որ օգնեսդ ինձ յաղօթել քեզ, օգնեա և 'ի նմանել քեզ։

Քննեցից տեսից յինչ իրս առաւել փափագիցեմ գովութեան և մեծարանաց. և 'ի նոսին գուն եդից մեռուցանել զիս առ սէր Յիսուսի, բուռն առնելով անձին։

Ահա Այրդ։

ՄԿԷ. Կալով Յիսուսի անհնարին ամօթով յառակ նշաւակի թշնամեաց իւրոց, բուռն հարեալ Պիղատոսի զդրօշակէ ծիրանեացնորին՝ վերացուցանէ. զի տեսցեն ակն յանդիման զմարմինն պատառոտեալս 'ի ձաղկանաց, վիրաւորս և արիւնաքամս, և այնպէս այլափոխեալս՝ մինչև եղծանել մարդկեղէն տեսլեան։ Եւ զայս առնելով՝ չասէ այլ ինչ բայց միայն, Ահա Այրդ. և շատ համարի. կամելով իմն ասել. Եթէ զանգիտէք յառնէք յայդմանէ թագաւորութեան թեկն ածել, տեսէք վիմրդ չարալլուկ եղեալ է։ Եւ արդ ո՞չ ապաքէն գթութեան առ 'ի ձէնջ արժանի իցէ դա՝ քան ատելութեան։

Ե՛կ և դու հոգի իմ, կաց 'ի զննին հանդիսիդ։ Հայեաց ուշի ուշով 'ի Տէրն քո․ զիա՞րդ փշապըսակ գլխովն կայ յերկիր կորացեալ․ երեսք տըխատեալք և ուռուցեալք, և թքով աղտեղեալք, ձեռք կապեալք, մարմին բովանդակ խոց վիրալից սեւաթորմի․ և որպէս նախատեսեալ եղև 'ի Մարգարէէն՝ անարգեալ և ցաւագին քան զամենայն մարդ․ ոչ իսկ ունելով տեսիլ մարդոյ։ Ո՞ւր են վայելչութիւնք աստուածազարդ կերպարանայն՝ որ փոքր մի յառաջ 'ի հիացումն և 'ի սէր կրթէին զամենեսին․ զիա՞րդ գեղեցիկն և շնորհափայլ քան զամենայն ոք՝ այդպէս անշուք և ապեղծ։ — Ով Յիսուս, սէրն քո որով յանձն առեր մարդանալ՝ նա իջոյց զքեզ 'ի տխեղծս յայս երևոյթ․ միայն սէր քո եմոյծ զքեզ յայս կերպարան դժպհի։ Այլ ինձ և յայլայլութեան անդ երեսացդ՝ վայելուչ ես յոյժ․ և անշքութիւնդ այդ զարդ է գեղեցկութեան հոգևորի։ Յողորմելի տկարութեան քում՝ քանի՜ կորովի և հզօր ես դու 'ի կեցուցանել զիս 'ի յաւիտեանս։ Ո՜հ, վասն սիրելոյ քո զհոգիս իմ՝ մինչև զայսպիսի չարչարանս կրել, տպաւորեա յիս զծանօթութիւն պատուականութեան հոգւոյս։ Զի առաւել քան զաշխարհս ամենայն արժէ հոգի․ քանզի գին է անգին արեան քո։ Եւ զիա՞րդ ես յիմարեալ և ափշեալ անարգ համարեցայ զսա քան զինչ որ յաշխարհիս է, և խոտան քան ըզմարմինս իմ՝ որ հող և նեխ եւեթ է։ Վասն սակաւ յոյժ խնամելոյ իմ զհոգիս՝ արդարապէս դանդատիս, եթէ անօգուտ եղև վասն իմ արիւն քո։ Այլ արդ զքո իսկ զարիւնս քեզ վերընծայելով աղաչեմ, Տէր, խնայեա յիս։ Կամիմ փրկել զանձն իմ․ և փրկեցայց աներկբայ 'ի փառս քո՝ եթէ գործեցից զոր առաջադրեմս և զոր յուսամս քոյին օգնութեամբ, զխոնարհու-

թիւն և զսէր, զոր օրինակաւդ քով ուսուցեր ինձ։

Երկիր պագից ամենասուրբ մարմնոյ Յիսուսի, և մանաւանդ գլխոյն սաստկագոյն տանջեցելոյ։ Ի մարդացեալ Աստուածն իմ յուսացայց, և հաստատեցայց 'ի կամս նման նմա լինելոյ։

ՄԿՐ. Ի ցուցանել Պիղատոսի զՅիսուս առ Հրեայսն՝ առ 'ի գութ ինչ շարժել զնոսա և յասելն՝ Ահա Այրդ, համարեցայց եթէ և Հայրն յաւիտենական յանդիման արասցէ ինձ զնա ասելով, Ահա Այրդ։ Բայց, հոգի իմ, զաչս մտացդ առ տեսիլդ այդ, և զականջս սրտիդ՝ առ ձայնդ այդ։

Ահա Այրդ, ասէ ցիս Հայր 'ի բարձանց, զոր 'ի փրկութիւն քո առաքեցի յաշխարհ, նշանակ սիրոյ՝ որով սիրեցի զքեզ հանապազ։ Խնդրեցի և ոչ զոք գտի որ միջնորդ լինէր արդար ցասմանս 'ի վերայ քո. և արդ Ահա Այրդ. ոչ մարդ միայն, այլ մարդ և Աստուած, պատկեր էութեանս իմոյ, որ միայն ունի զօրութիւն լինել բարեխօս և հաշտարար ընդ մարդ և ընդ Աստուած։ Դու վասն մեղացդ տարագրեալ էիր յարքայութենէ և մերժեալ 'ի դժոխս, և ոչ ոք էր որ օգնէր քեզ։ Այլ Ահա Այրդ, Որդի մարդոյ և իմ Որդի, սահմանեալ լինել քեզ փրկիչ և կեցուցիչ։ Ահա Այրդ, վարդապետ ճշմարտութեան, օրինակ սրբութեան, որում՝ թէ փրկիլ կամիս՝ հարկ է քեզ լինել նմանող։

Ո՛վ ամենագութ Հայր յաւիտենական, քանի՜ ինչ պարտական եմ քեզ վասն սիրոյդ, որով հաճեցար կուտել 'ի գլուխ Որդւոյ քո զայսքան անթիւ աղէտս ցաւոց՝ որք ինձ անկ էին։ Ո՛վ գթութիւն ամենասքանչ. ոչ կարեմ 'ի բան բերել զմխիթարութիւն զոր զգամս յ'ածելն

զմտաւ զանչափութիւն սիրոյդ։ Այլ զիա՞րդ ճեղեց յամօթ կորակոր՝ յիշելով ընդ նմին զխոտորնակ գնացս իմ հեռի 'ի հետոց Որդւոյ քո այսորիկ։

Ո՜, քանի՜ խոնարհ և հեզ է Այրս այս փառաց՝ յանարգանս իւրում։ Քանի՜ համբերող է Այրս ցաւոց 'ի խոշտանգանս իւր։ Իսկ ես 'ի տառապելութեան իմում՝ քանի՜ յոխորտ և ամբարտաւան, ունայնութեանց սիրող և փափագող առժամանակեայ հեշտից։ Ո՜վ Հայր յաւիտենական, քանզի հաճիս ցուցանել ինձ զԱյրս զայս, և պատուիրես նմանող նմա լինել, յաղթեա ողորմութեամբ քով յամառութեանս իմոյ, օգնեա շնորհօք քովք լուծութեանս իմոյ. որպէս զի կարող եղեց ջնջել յանձնէ զամենայն կերպարանս մարդոյն հնացելոյ և երկրաւորի, և յորդարել զիս 'ի կերպարանս մարդոյս աստուածայնոյ։ Ո՜վ Հայր, ո՜վ պարգևիչ լուսոյ, վստահութեամբ զոր ազդեալ յիս՝ թախանձ արկանեմ գթութեան քում, տալ ինձ առաքինութիւն՝ որով հնար իցէ հետևող լինել առաքինութեանց Քրիստոսի. և այնպէս վերանորոգել զիս 'ի խորհուրդս, 'ի բանս և 'ի գործս, զի փոխեցայց յայր այլ՝ ըստ հաճութեան կամաց քոց։

Զմտաւ ածից այսուհետև զառաքինութիւնս Յիսուսի յարհամարհանան իւրում, սիրով փափագանօք և առաջադրութեամբ կամաց նմանող նմա լինելոյ. և յօժար ջանիւք 'ի պարտս փրկութեան անձին իմոյ։

ՄԿԹ. Զոր օրինակ Հայրն երկնաւոր յանդիման առնէ մեզ զՅիսուս ողորմելի կերպարանաւն՝ որով Պիղատոս կացոյց առաջի Հրէից, զի գուլթ արկցէ 'ի մեզ, և փափագ նմանողութեան,

արժան է և մեզ, հոգի իմ, տպաւորել 'ի մեզ զայլագունեալ կերպարանս Յիսուսի, և յանդիման կացուցանել զնա առ Հայրն երկնաւոր՝ յամենայն զօրութենէ ըղձից սրտի:

Ո՜վ Աստուած փառաց, Հայր սուրբ, Ահա Այրն առ 'ի քէն ծնեալ՝ 'ի ճառագայթս սրբոց, և առաքեալ յաշխարհ՝ լի շնորհօք և ճշմարտութեամբ: Ցուցանես ինձ զնա՝ զի գութ արկից նմա. ցուցանեմ և ես զնա՝ քեզ, զի գթասցիս 'ի վերայ իմ: Հայեա՛ց և տես, ո՞ է որ չարչարիդ: — Որդին քո, ամենեւին անմեղ, ամենեւին սիրելի. — և տե՛ս՝ վասն ո՞յր չարչարի. — վասն իմ որ եմս մեղաւոր ամենամեծ և ամենեւին անարգ: Առ 'ի գութ շարժել զքեզ յիմ վերայ՝ չունիմ հզօրագոյն և գորովագոյն ցուցանակ՝ քան զՈրդիդ քո զայդ:

Ահա Այրն, և առաւել քան զայր, Մարդ և Աստուած, որ վասն իմ խոնարհեցաւ յանձն առնուլ զթուք և զապտակ, զձաղկանս և զձաղանս: Այս գործ է անճառելի գթութեան. և 'ի սոյն՝ աղաչեմ, ո՛վ Բարձրեալ, արկանել զակն մեծվայելչութեան քո: Կարող եղէ ինքնին թշնամանել զքեզ, այլ ոչ ունիմ յանձնէ գրաւ հաշտութեան: Եւ արդ Ահա Այր աստուածային, միակ իմ յոյս, որ առատապէս հատոյց փոխանակ իմ. զսա առաջի առնեմ քեզ, Հայր ամենակալ. և զո՞ այլ հնար էր յանդիման առնել քեզ՝ հաճոյ և սիրելի իբրև զսա:

Ծանր և յոյժ ծանր են մեղք իմ. այլ եդեալ 'ի կշիռ ընդ արդեանց Յիսուսի, զիա՞րդ անբաւս առաւելուն շնորհք Փրկչին քան զչարութիւն մեղաւորի: Զխոնարհութիւն Յիսուսի դնեմ ես նժար հպարտութեան իմոյ. զհեզութիւն նորա՝ բարկութեանս իմոյ. զսէր և զքաղցրութիւն Յիսուսի՝ ատելութեանց և դժկամակութեանց ի-

մոց. զեռանդն նորա՝ գաղջութեան և հեղգութեանս իմոյ: Վասն մեղաց զոր գործեցի զօրութեամբք հոգւոյս՝ վերընծայեմ զտրտմեալ և զխոնարհ հոգի Յիսուսի. վասն մեղաց որ մարմնոյս զգայարանօք՝ վերընծայեմ զվիրաւորեալ և զկոշկոճեալ մարմին Յիսուսի: Հայեաց յամենասուրբ մարդկութիւնս Յիսուսի, և շատ է ինձ այս 'ի յոյս քաւութեան մեղանացս՝ շնորհօք ողորմութեան քո:

Ասացից և առ Հոգին սուրբ. Ահա Այրն՝ վասն որոյ Քրիստոս պատարագեաց զանձն՝ չարչարանօք. և հայցեցից 'ի նմանէ հոգի ապաշխարութեան, առ 'ի լինել արժանի ողորմութեան իւրում:

ՄՀ. Յածել զմտաւ զչարչարանս Քրիստոսի, անկ է և զերկիւղ անբաժան ունել 'ի յուսոյ. և 'ի խոկալն ընդ ամօթ նախատանաց Յիսուսի՝ յորժամ Պիղատոս յանդիման կացոյց զնա առաջի բազմութեան ժողովոյն՝ այնպէս խոշտանգեալ և վիրաւորեալ, ասելով Ահա Այրդ, արժան է և ինձ խորհել, եթէ օրինակ իմն է այդ աւուրն, յորում Աստուածամարդս այս այդպէս անշուք այժմիկ՝ երեւելով ամենայն վայելչութեամբ փառաց դատաւորի՝ յանդիման արասցէ զիս համօրէն աշխարհի:

Ահա այրն, տեսցեն զինէն նշաւակ կացելոյս հրեշտակաց և մարդկան: Ահա այրն՝ հարեալ զունայնութեամբք և աստուածամոռաց. այրն անկեալ 'ի պատուոյ մարդկութեան և հաւասարեալ անբանից՝ մոլութեամբ անասնական ցանկութեանցն: Ահա այրն. և 'ի նմին պահու յայտ յանդիման նշաւակեսցին ամենայն անօրէնութիւնք իմ որ ըստ խորհրդոց, ըստ բանից և ըստ գործոց: Զինչ ասացից, կամ զինչ

տայ պատասխանի ամբաստանութեանց իմոյ իսկ անձին գիտակցութեան: Ամօթալից, կորակոր և 'ի դող հարեալ, և ոչ ունելով բան 'ի չքմեղս անձին՝ կացից առաջի քո, Տէր դատաւոր:

Ո՜վ, որպիսի՜ ամօթ, որպիսի՜ նախատինք անկցին 'ի վերայ իմ յանդիման տիեզերաց, յորժամ տեսանիցեն ամենեքին զդարշութիւնս իմ, և մատնանիչ արարեալ ասիցեն, Ահա այրն ամբարտաւան, կեղծաւոր, գայթակղեցուցիչ: Ո՜վ Յիսուս, հաւատամ զի մատուցայց և ես 'ի դատն այն յետին. և զի դու ինքնին եղիցիս քննիչ անաչառ մեղաց իմոց՝ յորոց սակս այժմ տանջիմ: Եւ զի՞նչ լինիցի ինձ յայնժամ: Ո՜հ, մի՛ թողուր ինձ, Տէր, անկանել յանյուսութիւն. այլ տուր ինձ շունչ ապաշխարութեան յուսոյ: Գթա՛ Տէր, ողորմեա Տէր. զի թէպէտ և մեղաւոր եմ յոյժ պարտաւոր, այլ դու ես և եղիցիս միշտ իմ Փրկիչ: Մեծ երկիւղ է ինձ 'ի մեղաց իմոց. այլ փարատեա յինէն զվհատութիւն յողորմութենէ քում՝ շնորհօք անգին արեան քո: Կամիս 'ի չէք դարձուցանել զամենայն մեղանս իմ. և զի չէք այսմ հնար՝ բայց եթէ ցաւօք և ապաշաւանօք, ահա ցաւիմ և զղջամ, և առաջադրեմ հանապազ ցաւել և զղջալ: Կոյր եմ ես, եղկելի, դիւրադայթ 'ի մեղս, և դիւրամոռաց գործեցելոցս մեղաց. այլ շնորհօք չարչարանաց քոց ժտիմ զողորմութիւն. ով բարեգորով Յիսուս, տո՛ւր զիս ճշմարիտ ապաշխարող՝ կատարեալ ատելութեամբ մեղաց, և կատարեալ սիրով գերագոյն բարւոյդ, որպէս զի և ես ընդ ընտրելոց քոց յոյս կալայց յաւուրն դատաստանի:

Եթէ ոչ կամիմ զի յաւուրն դատաստանի ասիցեն զինէն, Ահա այրն մեղաւոր, այնպէս յարդարեցից զվարս իմ՝ զի ասիցեն, Ահա այրն ապաշխարող, զղջացեալ, խոնարհեալ:

Աղաղակ Հրեից զի խաչեսցի Յիսուս:

ՄՀԱ. Թոյլ ետ Պիղատոս պաշտօնէից իւրոց չարչարել և անարգել զՅիսուս, առ 'ի ցածուցանել զբարկութիւն Հրէից. յանդիման ածեալ զնա ամենեցուն՝ գանակոծ և փշապսակ, ծաղրազգեստ և այպանական, առ 'ի շիջուցանել զնախանձ նոցա. և ասաց ցնոսա գործական ձայնիւ. Ահա Այրդ ցձեզ, առ 'ի շարժել զնոսա 'ի գութ: Այլ առաւել ևս աճեաց չարութիւն և քէն անզգամացն. և արտաքս ի՛նչ քան զմարդկային բնութիւնս ելեալ, և գազանացեալ քան զգազանս վայրենիս, ընդ տեսանելն զնա՝ իսկ և իսկ մոլեգնեալ խնդրէին սպանանել, ոչ հանդուրժելով տեսանել իսկ զնա կենդանի: — Տես, հոգի իմ, զիարդ յարուցեալ կան 'ի վերայ Յիսուսի այդպէս կոչկոճելոյ՝ բազմութիւնք Հրէից. և լուր, զիարդ ամենեքին, իշխանք և ժողովուրդք միաձայն գոչեն զի խաչեսցի Յիսուս: Ո՞չ զարհուրեալ զնդայցէ սիրտ քո, և պակնուցուն միտքդ յամբոխէ աղաղակիդ: Ո՛վ, քանի՛ օտարք են չարաշշուկ գոռինքդ 'ի բերկրաձայն բարեբանութեանցն՝ որովք հինգ աւուրբք յառաջ կարդային զնա Թագաւոր Իսրայէլի: Այսպէս առնէ աշխարհ. մերթ բարձրացուցանէ և մերթ ընդ վայր հարկանէ, մերթ ընդգրկէ և մերթ մատնատու լինի. և իցէ՞ զգօնութեան հաւատալ և սիրել զխաբեբայն զայն և զնենգաւոր:

Այլ է՛կ, մտախոհ լիցուք, հոգի իմ. քանի՞ցս և մեք, թէպէտ և ոչ ձայնիւ բերանոյ, այլ չարութեամբ սրտի աղաղակեցաք, Ի խաչ հան, 'ի խաչ

հան։ Ո՜վ հեքութեանս, ո՜վ անհաստատութեան․ մանաւանդ թէ ո՜վ չարութեանս, ո՜հ ժպրհութեանս։ Ի խոստովանութեան, 'ի հաղորդութեան, յաղօթս, և յայլ ևս կրթութիւնս քրիստոնէական կենաց՝ ճանաչեմ և պաշտեմ զքեզ, Աստուած իմ, իբրև զտէր իմ վեհագոյն, և գերագոյն բարեաց․ և յետ սակաւու միոյ շլացեալ 'ի կրից՝ անագորոյն կամօք խնդրեմ խաչել զքեզ մեղօք իմովք, մոռացեալ զոր սակաւ մի յառաջ մատուցանէի քեզ երկրպագութիւն՝ իբրև Աստուծոյ։

Ո՛հ, Աստուած իմ, առաւել զարհուրեցուցանէ զիս ամպարշտութիւն իմ քան զՀրէիցն․ այլ քանզի ճանաչեմ արդ լուսով շնորհաց քոց զյանցանս իմ, զի՞նչ կարող իցեմ հատուցանել ընդ այնր։ — Փոխանակ գործոցն մեղանաց՝ որովք գոչէցի՝ Ի խաչ հան, ձայնիւ դառնութեան գոչեսցէ սիրտ իմ՝ Մեղայ, և արտասուօք զղջականօք գոչեսցեն աչք իմ հայցելով ներումն թողութեան։ Բարեգո՛ւթ Յիսուս, քեզ յանձն առնեմ զմնացուածս կենաց իմոց․ և վասն վրիպանաց անցելոցս կենաց՝ ոչ դադարեցից 'ի ժամելոյ 'ի բարեհաճութենէ քումմէ սիրտ բեկեալ և խոնարհ, յորմէ ոչ դարշեսցի աստուածային մեծվայելչութիւն քո․ սիրտ բեկեալ՝ վասն անգոսնելոյ իմ զքեզ, և խոնարհեալ՝ առ ոչ ևս անգոսնել զքեզ։

Կշտամբեցից զանձն իմ որպէս զմի 'ի Հրէից, վասն ապառում խստութեանս, զի յանդիման կացուցանելով ինձ զՅիսուս, Ահա Այրդ, տակաւին կամ անգութ և անզեղջ։

ՄՀԲ. Խժդժագոյնք անգամ յազգաց՝ 'ի տեսանելն զՅիսուս շարժէին 'ի գութ գորովոյ․ Հրէիցն միայն սովորելոյն 'ի ստունգանել Աս-

տուծոյ և 'ի չարչարել զառաքեալսն յաստուա-
ծակոյս կողմանէ անտի, մարթ էր այսպէս անո-
ղորմն գտանել: Ոչ սակաւք ոմանք արդ չարա-
խօսեն զնմանէ, այլ ամենեքին առ հասարակ լիա-
բերան գոչեն, և աղաղակեն զի սպանցի Յիսուս,
ոչ սովորական մահու այլ յոյժ դառնագոյն և
քան զբնաւս անարգագոյն, մահու խաչիւ: Թուին
ինձ ջոկատք զօրաց ճակատելոց 'ի մարտ, ըստ
նախասացութեան մարգարէին, և լեզուք նոցա
սուսերք են և նետք, որք իբրև 'ի կէտ նպատակի
դիմեն 'ի Յիսուս: Ատելութիւնդ այդ հրէական
մեծ և կարի յոյժ մեծ է, և արդարև դիւական.
և ըստ այնմ երևի մեծութիւն արտաքին նուաս-
տութեան Յիսուսի և ներքին առաքինութեանն.
յորմէ և գուշակեսցի թէ քանի՛ անհամեմատ
մեծ է սէր գթութեան նորա քան զարտմու-
թիւն և զկատաղութիւն Հրէից և զդիւացն
միահամուռ միանգամայն: Փրկել զմեզ կամելով
առաւելապատիւ փրկանօք, ոչ համարի բաւա-
կան մեռանել սրով կամ այլով ինչ պողովատիկ
զինու՝ որ 'ի մի հարուած սպանցէ զնա, այլ մե-
ռանել առ փոքր փոքր, կսկծագին և դժուա-
րատանջ մահուամբ 'ի կախաղանի. վասն այնո-
րիկ և 'ի լսել զձայն աղաղակին, Ի խաչ հան, 'ի
խաչ հան, քանի՛ արդեօք քաղցրանային իղձք
անձանց նորա: Բայց յուշ լիցի անմոռաց, զի
ոչ վիշտք նուաղէին 'ի նմա զհեշտն, և ոչ հեշտն
զվիշտ. միանգամայն կրէ նա և բերկրի:

Ո՜հ Յիսուս իմ, քանիցս ես յիշատակաւ
մխիթարութեանդ և յօժար պատրաստութեանդ՝
'ի մօտալուտ դատապարտութիւն մահուան խա-
չի՛ վասն իմ. և ուստի՞ քեզ այդքան սէր վասն
իմ՝ մինչև կամել զդժնդակագոյնն յանձն առ-
նուլ զմահ: Ի քննել զխիղճ գիտակցութեան
իմոյ՝ ճանաչեմ զիս սակս մեղաց իմոց արժանի

տանելութեան և անհնարին պատժոց: Իսկ դու տակաւին սիրես զիս, մինչև սիրել զտանջանս և զնախատինս մահուան խաչին՝ վասն իմ: Ո՜վ սէր անհասանելի. այլ ո՜վ երկինք և արհաւիրք, զի և ոչ այդու ամենայնիւ սիրելի լինիս և առ յինէն: Ուսա՞ր քեզ, հոգի իմ, այդքան խստասրտութիւն առ Յիսուս, մինչ գրեաթէ յանդգնայս լինել. ուսա՞ր քեզ այդ հակառակք նորայոցն իմացուածք. զի նա 'ի յիշատակ խաչին յոր մեռանելոց է՝ հրճուեալ բերկրի, իսկ դու տրտնջես և գելուս գալարիս յառաջադրելն մեռելութիւն ինչ առ սէր նորա: Տեսանեմ ես զախտ չարեաց իմոց, այլ ո՜վ կարասցէ բժշկել զայն, եթէ ոչ դու ինքն, Տէր Յիսուս: Դու որ հաճիս սիրել առ յինէն, տուր ինձ լոյս ճանաչելոյ զքեզ. օգնութիւն և զօրութիւն՝ սիրելոյ զքեզ, այնպիսի սիրով որ ձգեսցէ զիս 'ի նմանութիւն քո:

Յեղյեղեցից հոգւոյ իմոյ, Ի խաչ հան, 'ի խաչ հան. եթէ արդարև յօժար իցես սիրել զՅիսուս, պարտ է քեզ զանձնդ 'ի խաչ հանել, այսինքն է՝ զկամս քո, զկիրս քո, զզգայութիւնս քո:

ՄՀԳ. Միտ դիցուք անդթութեան Հրէից, զի մարթ է մեզ խրատ օգտի ընդունել: Տեսեալ զՅիսուս յողորմուկ կերպարանին, ոչ հանդարտեն 'ի սրտմտագին բարկութենէ իւրեանց, այլ զօրէն հրոյ որ ևս քան զևս աճէ 'ի ծաւալել զհրդեհն, առաւել ևս բորբոքեալ գոչեն, Ի խաչ հան, 'ի խաչ հան զդա. որպէս թէ ասիցեն. Զեն բաւական Յիսուսի ձաղկանքն, չեն բաւական փշով պսակումն, չեն բաւական անարգանքն և անուանարկութիւն. դոյզն ինչ է պատուհաս 'ի հատուցումն դմա. հարկ է զի և 'ի խաչ ելցէ: Այսպէս և մեր ախտքս առնեն, որքան թէ ոք շողոմիցէ նոցա՝ առաւել ևս ըմ-

բոստանեան և գոչէին յախուռն փափագանօք, Զէ բուական. մինչև ոչ լցցին ամենայն չափք չարութեան մեղաց: Աստի ուսանիմք, եթէ պարտ և արժան է զգէմ ունել ախտից՝ 'ի սկզբանն:

Այլ մի հեռասցուք 'ի Յիսուսէ: Տես, հոգի իմ, զիա՛րդ կայ նա գլխակոր, նուաստացեալ մինչև 'ի սպառ՝ առաջի բազմութեան ամբոխին, որ խառնաձայն գոչէ 'ի վերայ նորա, ծաղր առնէ և ընդ վայր հարկանէ: Ոչ յերկեղէ ինչ մահուն տրտմեալ կայ, զի և անվեհեր հոգւոյն ուսուցանէ մեզ չերկնչել անտի, այլ ըստ բանից մարգարէին, յապերախտութենէ Թշուառական Հրէիցն, որոց 'ի մոռացօնս արկեալ զբազմապատիկ բարիսն զոր ընկալան 'ի նմանէ 'ի հոգիս և 'ի մարմինս, խանդան սպանանել զնա. քանզի ոչ ինչ թուի նա յաչս նոցա՝ իբրև զգրաստ մի անպիտան: — Այլ ո՛վ բարի Յիսուս, միթէ ո՞չ անդստին ծանօթ էր քեզ և իմս անշնորհակալու բարք. և, ո՛հ, ո՛րքան յայտնանէ՝ քան 'ի Հրէիցն անտի խոցոտէր անձն քո, ըստ մեծութեան երախտեացն զոր ինձ արարեր, և ըստ մոռացութեան իմոյ՝ որ փոխանակ շնորհս մատուցանելոյ՝ թշնամանեմ զքեզ: Ամբաստան լինիմ քեզ, ո՛վ Փրկիչ իմ, զկամս չարութեան իմոյ և զնենգութիւն. և ոչ իշխելով զաչս 'ի վեր ամբառնալ, քանզի և ես մեղօք իմովք աղաղակեցի Ի խաչ հան, յետ այնքան առանձինն երախտեաց բազմապատիկ խնամոց սիրոյդ, խոնարհիմ, և յոչնչութիւն իմ ներամտեալ՝ հայցեմ ներումն թողութեան: Գիտեմ զի չեմ այդմ արժանի, զի չիք ոք անարժան ողորմութեանցդ քան զիս՝ զապաշնորհս և զչարաճճիկ մեղաւորս. այլ որքան մեծ է իմս ապերախտութիւն, այնքան մեծագոյն քո բարութիւնդ հանդիսասցի. և խոստանամ քեզ՝ քոյին շնորհիւ

օգնութեան, զի յիշելով զանբաւ պարտականութիւնս իմ, շնորհս կալայց քեզ յայսմ հետէ, ոչ միայն ոչ ևս անգոսնելով զքեզ, այլ հնազանդելով և սիրելով, և հաճոյ քեզ լինելով զամենայն աւուրս կենաց իմոց: Այսպէս եղիցի, ով Յիսուս, 'ի փառս քո և 'ի փրկութիւն իմ:

Ախտք կրից իմոց հանգոյն Հրէիցն քեցեն զիս 'ի Յիսուսէ և անշնորհակալու առնեն. ոչ իւիք գտից շնորհս յաչս նորա, եթէ ոչ զգոյշ կալով 'ի մեռուցանել զնոսին առ սէր նորա:

ՄՀԴ. Մի շտապեալ թողցուք զայս խորհրդածութիւն. այլ կշռելով զարտաքին ցաւսն և զհոգ տրտմութեան Յիսուսի 'ի դատապարտիլն 'ի մահ, մինչ առաւել ևս արժանի կարեկցութեան 'ի դէպ էր նմա համարիլ, խորամուխ լիցուք յոգի անդր խոնարհութեան նորին. որքան խոտան համարի 'ի Հրէից և 'ի հեթանոսաց, այնքան և փառաւորութեան առ 'ի մէնջ է արժանի: Ի մերումս խոնարհութեան՝ հանապազ գտանի ինչ հարկաւոր, դիտելով քաջ զանարգութիւն մեր. իսկ խոնարհութիւն Յիսուսի 'ի կամաց իւրոց եւեթ յառաջագայի. զի խոնարհի սիրել զանարգութիւն առ սէր մեր, թէպէտ և քաջ գիտիցէ զգերագոյն լաւութիւն իւր:

Հայեաց, հոգի իմ, ընդ հիահրաշ հեզութիւն Յիսուսի. մինչդեռ ամենուստ տեղան 'ի նա լուտանք և հայհոյութիւնք, նա ոչ ումեք չար ընդ չարի հատուցանէ. նա մանաւանդ գթալիր սիրով սիրէ զմի մի 'ի բորբոքելոցն և 'ի սրտմտելոց յիւր վերայ. և առ ամենայն զոր ասենն և առնեն առ քինու ոխութեան, փոխանակէ աղերս եռանդագին սիրոյ. այսպէս 'ի գլուխ հանելով զմարդարէականն բան ամենակատար խոնարհու-

Թեան չափով. յանձնառութեամբ սահմանելոցն յաստուածայնոց կամաց: (Ես. ծգ. 8: Գործ. Ն. 33):

Այլ դու, Հայր յաւիտենական, զինչ թողուցուս զՈրդի քո զարժանին ամենայն օրհնութեանց և երկրպագութեանց աշխարհի, այդպէս գարշելի լինել և վարիլ 'ի մահ՝ յանօրինաց անաի: Ո՛հ, չկարեմ 'ի միտ առնուլ զպատիւ և զփառս՝ զոր Որդիդ քո այդ տայ քեզ՝ յանարգանս իւրում՝ ներգործութեամբ վսեմագոյն խոնարհութեան. այլ արժան էր ինձ գէթ առնուլ 'ի միտ, եթէ այդ ամենայն խոնարհութիւնք նորա սահմանեալք են առ 'ի քէն 'ի պատուհաս ամբարտաւանութեանց իմոց. առ 'ի քէն սահմանեալք վասն իմ, զի ուսայց փառս տալ քեզ՝ խոնարհեցուցանելով զանձն իմ, և հնազանդ առնելով կամաց քոց 'ի հակառակին՝ որ ինձ հանդիպիցին: Եւ սակայն քանի՜ մեծամտեալ կամ տակաւին, մի՞չ խոկամս իսկ 'ի խոնարհութիւնս Յիսուսի՝ մտանելոյ 'ի փորձ այնքան անիրաւութեանց և նախատանաց: Զի՞նչ ասացից վասն այսքանոյ ապերասան հպարտութեան իմոյ: — Ո՛վ Թագաւոր գերագահ, ամենախոնարհ Փրրկիչ իմ, որ քոյին խոնարհութեամբ կազդուրեցեր զվիրաստահութիւնս իմ, մի՛ զրկեր զիս յօգնութենէ քումմէ. տկար եմ ես և յոյժ տկար, զի ոչ ժուժամ ոչ հանդարտեմ, այլ խռովիմ և առ դոյզն ինչ արկած որ հանդիպիցի ինձ. դիւրագրգիռ եմ 'ի սոդտանս պատուոյ անձին իմոյ, և ստուեր անգամ պարսաւոյ ահաբեկ առնէ զիս: Ո՛վ աստուածային առաքինութիւն, զօրութիւն իմ, տպաւորեա յիս զօրինակ քո. ակն ունիմ հերքել այնու զընդունայն փառասիրութիւն իմ, և սիրել զճշմարտութիւն խոնարհութեան՝ յորմէ խորշիմս:

Քննեցից տեսից, յի՞նչ դէպս մարթ իցէ ինձ կորուսանել զյարգ և զպատիւ յաչս այնոցիկ որ վարկ բարի ունիցին զինէն. և պատրաստ եղեց համբերել ամենայն յօժարութեամբ 'ի կամս Աստուծոյ:

ՄՀԵ. Լսէ Յիսուս զաղաղակ թշնամեացն, եթէ Ի խաչ հան, 'ի խաչ հան զդա. և 'ի հնչել ականջացն յամբոխէ սրբապեղծ աղաղակին, ոչ այլայլի 'ի համբոյր պարկեշտութենէն, և ոչ բանայ զբերան իւր 'ի տրտունջ կամ 'ի չքմեղս, այլ լուռ ևեթ կայ: Արժան է սքանչանալ ընդ սէր նորա 'ի պատճառս չարչարանացն, և յօրինակի չարչարանացն ընդ խոնարհութիւն նորա, և 'ի գործս չարչարանացն՝ ընդ համբերութիւնն. արդարև երրեակ առիթք արժանաւորք. այլ գերահրաշագոյն մեզ համբերութիւնն է:

Տե՛ս, հոգի իմ, զի՛արդ յայնքան խոշտանգանսն և 'ի զրկանսն՝ ոչ սրտմտի ամենևին Յիսուս. ոչ ընդդէմ Հօրն յաւիտենականի՝ որ սահմանեացն զնա 'ի վիշտս. ոչ ընդ ազգս մարդկան՝ վասն որոյ չարչարի, ոչ ընդ ապաշնորհ Հրեայսն՝ որ այդպիսիս հատուցանէին դառն չարչարանս փոխարէն բարեացն: Ի համբերատար լռութենէ նորա մարթ է 'ի միտ առնուլ՝ եթէ արդարև Որդի Աստուծոյ է նա, ըստ բանի մարգարէին (Եսա. ԽԲ. 1). զի իցէ՞ մեծագոյն քան զհամբերութիւնն Աստուծոյ՝ յերկայնամտել և 'ի չտեսս իմն լինել այնքան հանապազօրեայ անարգանաց իւրոց յաշխարհէ: Իցէ՞ մեծագոյն և քան զհամբերութիւն Յիսուսի զայնքան տանջանս և արհամարհանս կրելով յամենայն ազգէ մարդկան. հարկ է թէ աստուածային իցէ համբերութիւնդ այդ. համբերութիւն Աստուածամարդոյ: Արժան է մեզ պահել 'ի սրտի մերում զայդ յիշատակ, և այնու

վարիլ որպէս ապարատ ոմամբ՝ յամենայն դէպս հակառակս անխորժակաց անձնասիրութեան։ Թող գոչեսցէ 'ի վերայ իմ աշխարհ չարանիւթ, Ի խաչ հան, 'ի խաչ հան զդա. յիշատակ համբերութեանն Յիսուսի 'ի ցաւս իւր և յարհամարհանս՝ չառ լիցի ինձ 'ի նուաճել զխլրտմունս անհամբերութեան. զի յայսմիկ առաւել՝ 'ի չարչարանս և 'ի համբերութեան՝ քան այլով իւիք զգենու հոգի արութիւն զարմանալի։

Ո՛վ ամենագութ, ամենախոնարհ, ամենակիր Յիսուս, ճանաչեմ զճշմարտութիւն. այլ ընդ ճանաչել և ընդ կրթիլ նովիմբ՝ ասպարէզ մեծ է. և յետ պայծառութեան մտացս՝ 'ի քո լուսոյդ, պէտս ունիմ և կամացս կազդուրելոյ քոյին օգնականութեամբ։ Արդ, դու ինքն, որ օրինակդ ես և հայելի համբերութեան, այլ և վարձք և պսակ այնոցիկ որք համբերիցեն առ սէր քո, տուր զօրութիւն հաւատոց իմոց և յուսոյ իմոյ. և մի պակասեսցէ ինձ համբերութիւն յամենայն դէպս՝ 'ի զօրութենէ անտի յոր յուսամս և հաւատամ։ Նշան է նուաստութեան յուսոյ՝ համբերութեանն նուազութիւն։

Համբերութիւն 'ի մեռուցանել կամաւ զանձն իմ. համբերութիւն 'ի տանել թերութեանց և հակառակութեանց ընկերին։ Համբերութիւն յընդունել գոհութեամբ զվիշտս առ 'ի յԱստուծոյ առաքեալս։

ՄՀԶ. Քանզի ամենեքին 'ի ցաւս չարչարանաց Որդւոյ իւրոյ ամենասիրելւոյ համակեալ էին միտք ամենօրհնեալ Կուսին, 'ի դէպ է կարծել բարեպաշտօրէն, եթէ առաջիկայ գտանէր և անսանէր զՅիսուս՝ 'ի յանդիման առնելն Պիղատոսի և յասելն Ահա Այրդ, և 'ի լսել զաղաղակ Հրէիցն գոչման՝ Ի խաչ հան, 'ի խաչ հան

զդա։ Որպիսի՞ արդեօք ցաւօք խոցեցաւ ոգի նորա քաղցունին՝ 'ի տեսանել զԱստուածամարդն զոր սիրէր առաւել քան զիւր անձնն, յայնմ ողորմագին պայմանի. այլ և 'ի տեսանել զկատարի մոլութիւնն՝ որով հայհոյութեամբք և անիծիւք մահնիւթէինն նմա։ Ո՜վ, քանի՜ օտար է յաչս Մարեմայ՝ տեսարան մարդն, ուր հրեշտակքն երգէին Փառք 'ի բարձունս Աստուծոյ, 'ի հաշակեղն զծնունդ Յիսուսի, 'ի հրապարակէ սատի Երուսաղեմի՝ ուր Հրէայքն՝ բարձրաձայն կարդան 'ի խաչ հանել զնա։ — Ե՛կ, հոգի իմ, և յառեալ նկատեա զԿոյսն Սուրբ 'ի ցաւս իւր՝ արժանաւորս ամենայն կարեկցութեան մերոյ։ Զի՞նչ արդեօք ասաց նա յառաջնումն անդ տեսութեան Որդւոյն՝ յոտից ցգլուխ 'ի վէրս համակեալ, փշովք պսակեալ, ձեռօքն կապելովք, եղեգամբ 'ի բուին, պարանաւ պարանոցին, ամօթահար, նախատակոծ յայնքան զզուանաց և լուտանաց։ Հեղձամղձուկ լեալ 'ի հեծեծանաց, և 'ի լալոյ, ոչ բաւէ բանս յօդել, այլ սրտին բարբառի. և մերթ սիրոյ մերթ զարմանաց ներգործութեամբ՝ զգութ աղեացն արտաբերէ։ Հաւասար անձկութեանցն ծանր և մեծ են երաշխէպք ցաւոցն. և յայնքան յուզման աղմկի մտացն և խանդաղատանաց՝ տես, որպէս ժոյժ ունի, միաբանելով ընդ կամացն Աստուծոյ։ Որպէս 'ի մարդեղութեան Բանին՝ նոյն և 'ի չարչարանսն յեղյեղէ. Ահաւասիկ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ կամաց նորա։ Պաշտէ զարդարութիւն և զողորմութիւնս Աստուծոյ. և փոխանակ զչարչարողս՝ խոնարհի մեծարել զանարգական տանջանսն՝ որք առիթ փրկութեան աշխարհի լինին։

Ցաւակից լինիմ, ո՜վ Մարիամ, դառնութեանց սրտի քո, և հիանամ ընդ մեծութիւն ոգւոյդ.

այլ 'ի նկատել խմուժ զարտասուս ողոռնաձև վիժեալս յաչացդ, քամեալս 'ի սաստկութենէ ցաւոցդ, յանձն իմ մտաբերեալ զամօթի հարկանիմ. քանզի ճանաչեմ զիս ինքն առիթ աղետից քոց, զի մեղօք իմովք պատճառք եղէ չարչարանաց Որդւոյդ. և զի ինձ 'ի դէպ և արժան էր զլաց հարկանիլ, զի՞նչ այս պժգալի դժնդակութիւն, սիրտ այնպէս խստագին ունել, զի և ոչ դոյզն ինչ շիթս արտասուաց կաթիցէ: Աղէ, ո՛վ Կոյս ցաւագնեալ, տո՛ւր ինձ զարտասուս զոր ցօղեցեր 'ի չարչարանս Որդւոյդ. և առաւել մեծարգոյ համարեցայց զարտասուս կարեկցութեան և զղջութեան, քան զամենայն մնոտի բերկրութիւնս աշխարհի:

Ուսայց 'ի Մարեմայ միաբանել ընդ կամացն Աստուծոյ 'ի վիշտս վտանգաց իմոց. այսու միակամութեամբ ներակրթի խոնարհութիւն՝ որ հիմն է կատարելութեան, և սէր իսկ՝ որ պսակ և լրումն է կատարելութեան:

Պաշտպանել Պիղատոսի զՅիսուս նախատեալ Հրէիցն:

ՄՀԷ. Ախշի Պիղատոս ընդ յամառ խստասրտութիւն Հրէիցն, զի ոչ գոլովին բնաւ ընդ անմեղն, արժանաւորն ամենայն գթութեանց. այլ ևս քան զևս զայրացեալ խնդրեն զնա 'ի խաչ հանել: Վասն որոյ զչարեալ ընդ արհամարհանսն և ընդ դերև ելանել ակնկալութեանն, երգիծանօք իմն և թթուութեամբ ասէ ցնոսա. «Առէք զնա, և ձեզէն 'ի խաչ հանէք, զի ես 'ի նմա պատճառս ինչ մահու ոչ գտանեմ»:

Ո՜վ աստուածային տեսչութիւն, քանի՞ արդար ես: Առ Պիղատոս ածաւ Յիսուս՝ զի դատապարտ լիցի. իսկ նա ընդ հակառակն՝ չորից անմեղ դատի զնա: Ոչ հաւանի, այլ մերժէ և ատէ դատաւորն զհրէական չարակամութիւնն. և 'ի վերայ հասեալ զի իղձ է անօրինացն՝ յիւր ձեռն իբրև պաշտօնէի՝ կատարել զանզգամութիւն իւրեանց, բարձրաձայն բողոքէ՝ զի ինքեանք զոր կամին արասցեն, նոցա գրեսցի անիրաւութիւնն, բայց ինքն ոչ հաւանեսցի ընդ եղեռնն: Գովելի է բարոյական զգուշութիւնդ, չառնել չար 'ի հաճոյս ում՛ և իցէ: Այլ մեք զՀրէիցն նկատեսցուք չարութիւն:

Պարտականք են նոքա մասաւ խաչելութեան Քրիստոսի՝ աղաղակաւն թէ ի խաչ հան զդա. և սակայն համարին 'ի Պիղատոս հանել զմասն. արդարս և նախանձաւորս վարկանելով զանձինս, այնու զի ակն մարդոյ ոչ տեսանէ զչարաչար կիրս ախտից նոցին, զհեռ, զցասումն, և զատելութիւն: Դաւանին՝ զկրօնս Աստուծոյ՝ որ քննիչն է սրտից, և չածեն զմտաւ զԱստուած՝ որ յանդիման կայ նոցա, և տեսանէ և որոշէ զչարաչար կամս նոցին: — Առ մեզ վերածեսցուք զխրատս:

Հաւատամ և ես, Աստուած իմ, զի ուր և իցեմ՝ շուրջ կաս զինև և 'ի ներքս 'ի յիս. կարողութեամբդ, ներկայութեամբ և գոյութեամբ՝ խորագոյնս եւս ներամտես յանձն իմ՝ քան զիս ինքն: Այլ զիարդ զհաւատս զայս յուղղութիւն վարուց իմոց յօժանդակ առնում: Եթէ տեսանէին մարդիկ զտգեղութիւն ախտիցս և զդիմանցս, քանի՞ ամօթ շառագունանաց անկանէր 'ի վերայ իմ: Եւ դու տեսանես, Աստուած իմ. իսկ ես ոչ խորշիմ յաստուածային մեծվայելչութենէ քումէ. և առաւել զանգիտեմ յանցաւոր

յուշս մարդկան երևել քան զքո։ Աղէ, որ և-տուրդ ինձ հաւատս, շնորհեա ինձ Աստուած իմ, և կրթել 'ի նմին և յօգուտ իմ վարել։ Զիա՞րդ իցէ ինձ այսուհետև անգանել զքեզ, հաւատալով չափ զի դու դատաւոր իմ յաւիտենական՝ մերձ կաս առ իս։

Եգից 'ի մտի իբրու թէ չգուցէ ոք յաշխարհի բայց Աստուած և ես, առ երկնչել և սիրել զնա միայն․ յառաջ զակն 'ի ճշմարտութիւն և ոչ յայլ ինչ, զի այլն ամենայն ընդունայնութիւն է։

ՄՀԸ. Տեսեալ Հրէիցն զի Պիղատոս առ ոչինչ դրէ զմեղադրանսն՝ զթագաւորութեան թեկն ածելոյ Յիսուսի, միւս ևս ամբաստանութիւն 'ի վերայ ածեն, եթէ Զանձն իւր որդի Աստուծոյ արար․ վասն որոյ ոչ է պարտ նմա կեալ, ըստ օրինացն, որ հրամայեն զհայհոյիչսն սպանանել։ Զէ մարթ 'ի չքմեղս լինել չարութեան Հրէիցն վասն հանապազ յօրէնս բողոքելոյն․ զի եթէ հրամայէին օրէնքն մահու դատել զչարագործն և մի սպանանել զանմեղն, ընդէ՞ր ոչ դատապարտեցաւ Բարաբբա, և ո՞չ ազատեցաւ Յիսուս անմեղն վկայեալ։ Գրեալ էր յառաջագոյն, եթէ պարտ է Մեսիայի յանիրաւի մեռանել 'ի ձեռն անզգամաց՝ իբրու աստուածական պատուոյ կողոպտիչ։ Այլ տես և զանիրաւութիւնն յանզգամութեան անդ․ զի յետ ասելոյն եթէ որդի Աստուծոյ զանձն արար, ընդէ՞ր ոչ յաւելին պատմել զսքանչելիս գործոց նորա՝ որովք յայտնեաց թէ է իսկ որպէս զանձն անուանեաց․ հիմ ոչ ճառեցին զմեռելոցն յառնել, զկուրացն լուսաւորել, զբորոտացն սրբել, միով լոկով ամենակարողն ակնարկութեամբ։ Աւադիկ նենգութիւն անպատրուակ։

Այլ առ իմ՞ և դու ինքն, բարի Յիսուս, որ

հաճիս ճանաչիլ Աստուած և մարդ, չառնիցես այժմիկ հրաշս մի սքանչելեաց 'ի վկայութիւն աստուածութեան քում, վասն որոյ արարերդ յաճախ: Միտ դիր, հոգի իմ, զի գտջ յամենայնի խորհուրդ: Առաւել կամի Յիսուս զհամբերութիւն իւր ցուցանել՝ քան զամենակարողութիւնն. զի համբերութեամբ փրկելոց է զմեզ. համբերութեամբ անկ է և մեզ գործակից լինել փրկութեան մերում. և առաւել քան զամենայն՝ զառաքինութիւն համբերութեան հաճեցաւ մեզ ցուցագրին չարչարանօքն հայթհայթել 'ի փրկութիւն անձանց մերոց:

Ո՜վ համբերութիւն, լաւութիւն արժանաւոր և սեպհական Աստուծոյ. լաւութիւն այդքան պատուական և սիրելի յաչս Յիսուսի, քանի՜ և առ յինէն չիցես սիրելի. և սակայն սիրեմ և յորդեմ զքեզ մինչ յայլս տեսանեմ. այլ ոչ որպէս արժանն է՝ առ 'ի ստանալ զքեզ՝ սիրեմ: Ո՜վ ամենակիր Յիսուս, հայցեմ 'ի քէն շնորհել ինձ զընտիր զայդ լաւութիւն. ոչ 'ի բռնութենէ հարկի կամիմ վշտակրել, զի այդ համբերութիւն մերժելոցն է, այլ հայցեմ 'ի քէն տալ ինձ այնպէս վշտակրել՝ զի սիրեցից զվիշտսն. և սիրեցից սեան սիրով հետեւելոյ և համանման լինելոյ քեզ, որ սիրեցերդ կրել ցաւս և անարգանս յաղագս իմ. միով բանիւ՝ զայն համբերութիւն խնդրեմ 'ի քէն՝ որ նախասահմանելոցն է կնիք. և է կրելն առ սէր քո, փոխանակ աննկուն համբերութեանն՝ որով վառեցար առ սէր իմ յամենայն ընթացս չարչարանաց քոց:

Խոնարհեցայց երկիւղիւ և դողութեամբ, յիշելով զի յոյժ հեռի եմ 'ի սիրոյ վշտակրութեան. և առաւել եւս խոնարհեցայց առ երկեղի՝ զի մի արդեօք և տենչ սիրոյս այսորիկ բանիւ չափ եւեթ իցէ:

ՄՀԹ. Լսէ Պիղատոս զամբաստանութիւնն՝ եթէ Յիսուսի ասացեալ իցէ լինել որդի Աստուծոյ, և խոկեխոկ զահի հարկանի: Այլ տես, զիարդ անդրէն միւսանգամ զչարութիւն Հրէիցն ծանակեալ ցնդէ վերինն անսչութիւն: Բաջաղեցին Հրեայքն եթէ հայհոյեաց Յիսուս՝ ասելով զանձն որդի Աստուծոյ. իսկ Պիղատոս 'ի վարանս մտանէ, մի գուցէ զոր նոքայն հայհոյութիւն վարկանին՝ ճշմարտութիւն իցէ: Արժան համարին Հրեայքն մահու դատել զՅիսուս ըստ օրինաց, զի որդի Աստուծոյ զանձն արար. իսկ Պիղատոս՝ ոչ վասն օրինաց՝ որոց անգէտն էր, այլ վասն բանին Յիսուսի զի ասաց զանձն որդի Աստուծոյ, սպրուժէ 'ի դատապարտելոյ զնա. անհաւատ դիցապաշտ գոլով՝ չգիտէ ինչ զաստուածային խորհրդոց. այլ զի լուեալ էր 'ի համբաւոյ զսքանչելիսն և զլաւութիւնս առնն, ոչ ինչ անհաւատ թուի նմա լինել նորա որդի Աստուծոյ. և զի մի ցասմանն Աստուծոյ պատահեսցի՝ ոչ իշխէ մատնել զնա 'ի մահ:

Այլ մինչ դեռ դատաւորն և Հրեայքն հակառակեալ վիճէին՝ զի՞նչ առնիցէ Քրիստոս: Լսէ և լռէ. և երկոքումբք վարելով տնտեսութեամբք Աստուածամարդոյն, վկայութեամբն յայտ առնէ զի մարդ է, և առաքինօրէն վկայութեամբն՝ զի Աստուած է. վասն որոյ տեսեալ Պիղատոսի զգերմարդկային նորա համբերութիւնն, հաստատի 'ի կարծիս Աստուած գոլ նմա. և 'ի վարանս անկեալ զանգիտէ և զարհուրի:

Տես ինձ, հոգի իմ. կասկած մի երկեղի՝ թէ գուցէ Աստուած իցէ Յիսուս՝ կասեցուցանէ զՊիղատոս, և չտայ նմա թոյլ մատնելոյ զնա 'ի մահ. իսկ մեք որ հաւատոյ լուսով աներկբայ հաւատամք զաստուածութիւն նորա, զիա՞րդ

այսպէս սակաւս երկնչիմք, և ոչ լինի շատ երկիւղն այն արգելուլ զմեզ 'ի մեղաց: Աստուած իմ, և իցէ՞ ոք կոյր և հեք քան զիս. Թուի ինձ երբեմն թէ սիրիցեմ զքեզ, կամ թէ փափագիցեմ սիրել, այլ զանձն իմ պատրեմ. զի իցէ՞ հնար թէ կայծ մի եւեթ սիրոյն Աստուծոյ իցէ 'ի սրտիս, մինչ և ոչ երկիւղ Աստուծոյ գոյ 'ի նմա: Առ 'ի սիրել զքեզ՝ պիտոյ է և երկնչել. և յառաջ քան զամենայն՝ զերկիւղ պահանջես յինէն, առ 'ի Ճանապարհ գործել սիրոյ:

Ո՛վ Յիսուս, ողորմեա եղկելի արարածոյս քոյ, որ ոչ ունի զերկիւղն Աստուծոյ: Տո՛ւր ինձ երկնչել առ 'ի չանգոսնել զքեզ. երկնչել՝ առ 'ի սիրել զքեզ, և ժամանել 'ի մշտնջենաւոր փըրկութիւն: Մեծ է արդարև շնորհս այս՝ որում չեմն արժանի. այլ եթէ անարժան եմ ես շնորհի երկեղի քո, արժանի ես դու պատուոյ երկիւղի առ յինէն. յաղագս այնորիկ խնդրեմ զերկիւղ քո սուրբ՝ վասն սիրոյդ որով սիրես զփառս քո և զփրկութիւն իմ յաւիտենական:

Հրաժարեալ 'ի տենչանաց զմայլական կցորդութեանց՝ որոց չեմս արժանի, գոնէ եղից կայկայել խոնարհութեամբ յերկիւղն Աստուծոյ. և յայսմ և 'ի սոյն գալից զշնորհս և զերանութիւն իմ:

Վերջին դատ քննութեան Յիսուսի յատենին Պիղատոսի:

ՄԶ. Զանգիտէ Պիղատոս թէ գուցէ Աստուած իցէ Յիսուս. խիղճ մտաց նորա ազդէ նմա զերկիւղդ, քանզի յանիրաւի տանջեալ զնա ձաղկանօք՝ իրաւամբք խիթայ թէ հասցէ 'ի վերայ իւր

պատուհաս մեծ: Սաստկել զիւրան կամելով մուծանել զնա յապարանսն առ 'ի քննել. և սաստանօր ոչ զայն հարցանէ զոր գործեացն, այլ միայն թէ ուստի՞ իցէ. «Ուստի՞ ես դու». առ 'ի վերայ հասանել թէ իցէ՞ այր երկնաւոր եթէ երկրաւոր: Այսպէս լինի հանապազ որոց զչարն գործեն. գիտակցութիւն նոցա 'ի խայթի և 'ի խռովի կայ: — Այլ Յիսուս զի՞նչ առ հարցուածդ պատասխանիցէ: — Եւ ոչ ինչ. և զի զիրք մարդարէիցն լցցին, եթէ կայ նա արդ որպէս գառն անմռունչ, և զի անարժան է Պիղատոս՝ որ յառաջնումն քննութեան ոչ կամեցաւ լսել 'ի բերանոյ նորա զճշմարտութիւն: Եւ այս սովորութիւն է Աստուծոյ. յաւելուլ շնորհս որոց հաւատարմութեամբ գործակիցն լինիցին, և զլանալ որոց անփոյթք և ապերախտք զանց զնոքօք առնիցեն: Մեծ և անհնարին մեծ է պատուհասդ. և յաճախ պատահէ, վասն մերոցս յանցանաց: Ի պահու մահուան մերոյ ոչ կարասցուք գանգատել՝ եթէ ոչ տուան մեզ շնորհք 'ի դէպ ժամու, զի տեսցուք թէ մեք ինքնին արհամարհեցաք և մերժեցաք զայն յայս ինչ և յայն առիթս: Զիրերաց հարեալ յեռեալ կան շնորհք. և պատահէ յաճախ, զի որ առաջնումն գործակից լինի՝ բուռն հարկանէ և զայլոցն, և վերանայ 'ի սրբութիւն. և դարձեալ որ արհամարհէ զմին՝ վրիպի և 'ի բազմացն, և 'ի խստասրտութիւն կործանի:

Ճշմարտութի՞ւն խրախուսիչ, այլ և պակուցիչ. խրախուսիչ վասն ապագային, եթէ յարգեցից զաստուածային ներազդմունս նաև 'ի մանունս ինչ զոր օրինակ, 'ի զրկել զիս 'ի թեթև ինչ հեշտազօտութենէ, յորկորատութենէ, կամ յայլ ինչ կիրս. պակուցիչ՝ վասն անցելոյն. քանզի յիշեմ զի ապախտ արարի զբազում շնորհօք.

և գուցէ յաղագս այնորիկ մատնիցիմ 'ի մեղկութիւն մահացու՝ յորմէ ոչ ևս կարիցեմ յառնել: — Ջարհուրեալ դողամ, Աստուած իմ, և ոչ իշխեմ մատչել առ քեզ 'ի խնդիր շնորհաց. քանզի ճանաչեմ զիս անարդիւն և անարժան ընդունիցս քան զՊիղատոս. այլ, ա՛հ, միթէ յաւելի՞ց 'ի մեղս իմ և զմեղս համարելոյ զանարժանութիւնս իմ մեծագոյն քան զանբաւելի գթութիւնս քո: Քա՛ւ լիցի ինձ այս, ամենագութ Փրկիչ. այլ ժաեմ զողորմութիւնս քո. և 'ի հատուցումն արդարութեան քո վերընծայեմ զարդիւնս չարչարանաց քոց. և հայցեմ 'ի քէն շնորհս օժանդակս՝ հնազանդելոյ քեզ յամենայնի՝ յոր և ազդիցես ինձ:

Ընկալայց յօժարութեամբ զամենայն ազդեցութիւնս՝ որ կամ 'ի չարեաց խոտորեցուսցեն զիս, կամ առ բարին յորդորեսցեն, որպէս զյետին ազդեցութիւն առ յԱստուծոյ. և յոր հաստատեալ իցէ՝ կա՛մ դատապարտութիւն իմ՝ եթէ զդէմ ունիցիմ, կամ փրկութիւն իմ՝ եթէ իսկ և իսկ հնազանդիցիմ:

ՄՁԱ. Ի հարցանելն՝ զՅիսուս՝ թէ Ո՞ւստի ես դու, այսինքն Ո՞յր որդի իցես, ոչ ինչ տայ պատասխանի, և թաքուցանէ զխորհուրդ որդիութեանն Աստուծոյ. որ զի մի 'ի գերագունից և 'ի սրբազան ճշմարտութեանց է, չէր արժան առ անարժանն ճառել: Այլ դատաւորին կարծելով թէ չպատասխանիցէ կամ վասն չգնելոյ ինքեան մեծարանս, կամ առ գոռոզութեան բարուց, զչարեալ իմն սրտմտի, և իշխանաբար բրդի առ Յիսուս առ 'ի ստիպել զնա 'ի պատասխանի. «Ընդ իս ո՞չ խօսիս. ո՞չ գիտես եթէ իշխանութիւն ունիմ կապել զքեզ և արձակել»: Միտ դիր, զիա՞րդ Պիղատոս 'ի պարծելն թէ ունիցի

իշխանութիւն 'ի խաչ հանելոյ զնա կամ արձա-կելոյ, նշաւակէ յայտնապէս զանիրաւութիւն իւր. զի եթէ իշխանութիւն ունի՝ ընդէ՞ր ոչ ար-ձակէ զծանուցեալ և զվկայեալ անմեղն. ընդէ՞ր ոչ յօգուտ Յիսուսի վարէ զիշխանութիւնն՝ ո-րով խուն մի յառաջ արձակեաց զչարագործն Բարաբբա:

Այլ ես զիա՞րդ ոչ զգամ՝ զի զոր զՊիղատոսէ ասեմ՝ անկագոյն ևս է զանձնէս ասել: Ունիմ և ես բան դատողական ազատ, իբրև դատաւոր որ ունիցի իշխանութիւն ընտրելոյ ընդ չար և ընդ բարի. իշխանութիւն՝ մեղս գործելոյ և ոչ գոր-ծելոյ մեղս, որ է ասել թշնամանելոյ զԱստուած կամ ոչ. իշխանութիւն խաչելոյ զՔրիստոս և ոչ խաչելոյ. և 'ի ձեռն հաւատոց ընկալեալ լոյս գիտելոյ զսրբութիւն Աստուածամարդոյս, մինչ է ո՞չ անձամբ զանձն դատապարտեմ՝ յորժամ զինքնիշխանութիւն կամացս 'ի մեղս վարեմ և 'ի թշնամանել զԱստուած, մինչդեռ կարէի նո-վիմբ չմեղանչել և չստունգանել Աստուծոյ:

Աստուած իմ, չունիմ տեղի անմեղադրու-թեան, զի գիտակցութիւն իմ ամբաստանէ զիս պարտապան գոլ բիւր չարեաց: Խոստովանիմ զի չարաչար վարեցի և վարեմ յանձնի զազա-տութիւն կամացս, որ մինչ տուեալն է ինձ առ շնորհս գտանել՝ միաբանելով զնա ընդ բանակա-նութեան, և սիրել զգեղեցկութիւն ուղղու-թեանց, ես 'ի կործանումն անձին վարեմ զայն, զհետ երթեալ ցանկութեանց և մտաց եղեալ ախտից պղծոց: Ամենայն մեղաց զոր գործեմ՝ կամքն են պատճառք, որ զեղծանին ազատու-թեամբն որով հրաժարելեացն հաւանին. 'ի զուր է ինձ մեղադրել զզգայարանս. զի սոքա պաշ-տօնեայք են. և զի կամքն միայն հրամայեն, ապա նորա է ամենայն վնաս չարեացն: Բայց

տըդ 'ի քեզ ապաստան առնեմ, ո՛վ Տէր, և զկամս և զազատութիւն և զանձնիշխանութիւն իմ: Դու ինքն ուղղեա զիս, և շնորհօք քովք արգել զիշխանութիւն իմ 'ի գործել չար, զի մի ես արարից. զօրացո 'ի գործել զբարի, և գործեցից, և փառաւորեցից զքեզ, և գոհացայց զքէն յաւիտեան:

Ոչ ոք մեղանչէ եթէ ոչ կամի. ոչ ոք դատապարտի՝ բայց որ կամին: Ո՛հ, մի՛թէ ազատութեամբ՝ որով կարեմ որդի Աստուծոյ լինել՝ եղե՞ց մերժեալ և որդի գեհենի: Տեսից, ո՞ր օգուտ է ինձ:

ՄՁԲ. Առ ընդունայն պանծանս Պիղատոսի որպէս թէ իշխանութիւն ունիցի կենաց և մահու, զինչ արժան իցէ ասել Յիսուսի՝ այնքան խոնարհեցելոյ. որ թէպէտ և ունի իշխանութիւն 'ի վերայ ամենայն արարածոց յերկինս և յերկրի, այնպիսի իմն համարեալ վարկանի զանձն՝ որպէս թէ ոչ ինչ կարիցէ առնել, և ոչ մի ինչ ունիցի պարծանաց տեղի: Լռեալ կայ և ոչ 'ի չքմեղս լինի. այլ ոչ լռէ ուր փառացն Աստուծոյ պաշտպանութեան դէպ իցէ. և լուեալ զի դատաւորն անձին գրէ զիշխանութիւն՝ որ Աստուծոյ միայնոյ է, այսպէս վսեմութեամբ սաստանէ զնա. «Իշխանութիւնդ զոր ունիս՝ չէ քո. և ոչ ունէիր դու իշխանութիւն և ոչ մի 'ի վերայ իմ, եթէ ոչ էր քեզ տուեալ 'ի վերուստ»: Ուսուցանէ զմեզ Յիսուս չպարծել յինչ, զի մեք մեզէն ողորմելի եմք յոյժ. ամենայն բարի զոր ունիմք՝ յԱստուծոյ տուեալ է մեզ: Դարձեալ ուսուցանէ, զամենայն վիշտս արկածից որ հանդիպիցին մեզ՝ ընդունել որպէս սահմանեալս առ 'ի յԱստուծոյ, և ոչ յայլոց առթեալս, և ոչ իսկ 'ի սատանայէ, որ առանց Աստուծոյ հրամանաց՝

չէ իմիք ձեռնհաս: Այլ 'ի վեր քան զամենայն
յայս առնել կամի, եթէ չիք Պիղատոսի իրա-
ւունք իշխանութեան 'ի վերայ իւր. այլ ամենայն
որ ինչ լինի՝ ըստ թոյլ տալոյ կամաց իւրոց է, և
թէ չկամէր՝ ոչ ոք կարէր վնասել ինչ նմա. և զի
գիտուն լիցի, թէ ոչ առ հարկէ կամ 'ի բռնու-
թենէ ուստեք վշտակրի. և այսու ծանիցի զի
չարչարանք իւր արգասիք ևեթ են ամենագութ
սիրոյ իւրոյ:

Եւ ուստի՞ քեզ, Տէր, այսքան փոյթ յայտնե-
լոյ զսէր քո. ամենայն վէրք քո ասեն ցիս՝ թէ
պարտական եմ սիրելոյ զքեզ. և միթէ չէ՞ր պարտ
և արժան առնել ինձ այդպէս: Այո, Աստուած
իմ, սիրեմ զքեզ, սիրեմ, և առաւել ևս կամիմ
սիրել: Ո՛վ երջանիկ բաստիս, զի չունիմ պէտս
խնդրելոյ՝ թէ զի՞նչ պարտ իցէ ինձ առնել առ 'ի
սիրել զքեզ, զի դու ինքնին ուսուցանես զայդ:
Գիտեմ զպատուիրանս քո, զխրատս քո, և զա-
ռաքինութիւնս յորս կրթել զիս ախորժես. և
զի այդ առնես ինձ թէ յայնժամ ստուգիւ սի-
րեմ զքեզ յորժամ կեցից ըստ օրինակին առ 'ի
քէն ինձ ցուցելոյ, այսպէս գնեմ 'ի մտի առ-
նել:

Այլ քաջ միտ դիր, հոգի իմ. որպէս ոչ բաւա-
կան համարի Յիսուս չարչարիլ, այլ կամի զի գի-
տասցուք եթէ առ սէր մեր չարչարի, այսպէս և
մեզ չէ բաւական առնելն զպարտսն, այլ արժան
է առնել առ սէր նորա: Վասն որոյ ոչ միայն
հնազանդեցայց օրինաց քոց, Աստուած իմ, ըստ
արտաքին պահպանութեան, այլ օգնութեամբ
քով զոր հայցեմս՝ կամիմ հնազանդ լինել յաղագս
սիրոյ քոյ: Համբերից վշտաց՝ առ սէր քո. եղեց
հեզ, բարերար, պարկեշտ, և յամենայնի ուշ
նպատակի մտաց իմոց՝ եղիցի սէրն քո:

Քանի՜ քանի՜ գործս բարիս արարի ցարդ կամ

'ի սովորութենէ կամ առ մարդկան ականէ: Մ՛իտ եդից յայսմ հետէ և 'ի գործելն զբարի և 'ի խորշելն 'ի չարէ՝ շնորհաւէտ լինել, զամենայն առ սէրն Աստուծոյ ուղղելով:

ՄՁԳ. Առնելով Յիսուսի եթէ երկրաւոր իշխանութիւն չզօրէ ինչ 'ի վերայ իւր, և ամենայն որ ինչ ընդդէմ իւր գործի՝ յաստուածային տեսչութենէ անտի թոյլ տուեալ է, ոչ եթէ արդարացուցանէ զմարդկային չարութիւն, որպէս թէ ոչ իցէ անիրաւութիւն որ ինչ հակառակ իւր առնի, այլ մանաւանդ զի մի համարիցի Պիղատոս անպարտ գոլ, յաւելու. «Մեծ մեղք են այնմ՝ որ մատնեացն զիս 'ի ձեռս քո». յորմէ կարէր 'ի միտ առնուլ դատաւորն անիրաւ, զի թէ գուցեն մեղաւորք առաւել քան զնա, այլ և ինքն մեղաւ, զեղծանելով իշխանութեամբն և չառնելով զոր պարտն էր առնել, արձակել զանմեղն: Եթէ 'ի չարչարանսն Յիսուսի՝ Պիղատոս նուազ քան զայլսն մեղաւ, ո՞ արդեօք մեծամեղ ևս գտաւ: Ապաքէն Յուդաս, ամենայն չարեացն պատճառք: Առաւել մեղան քահանայապետքն որք առ նախանձու մատնեցին զնա 'ի ձեռս աշխարհական իշխանի. առաւել մեղան Հրեայքն որք գոչէին՝ Ի խաչ հան զդա:

Այլ առաւել ևս խորագոյնս մտիցուք 'ի քնին: Ո՞ առաւել մեղաւ 'ի չարչարանս Յիսուսի: — Նոքա արդարև որք գործակից եղեն չարչարանացն. առաւել ևս մեղանչէ՝ որ առաւելապէս 'ի դերև հանէ զարդիւնս չարչարանացն և զկէտ նպատակի կամացն Յիսուսի: Եւ վասն էր չարչարեցաւ Քրիստոս, եթէ ոչ վասն փրկութեան հոգւոց. ապա ուրեմն առաւել քան զամենեսին մեղանչեն քրիստոնեայքն՝ որք խափան

լինին փրկութեան հոգւոց՝ գործովք գայթակղութեանց: Զի՞ք քան զայդ մեղք ծանր, սրբապիղծ և ահագին: Եւ քանիցս գործեցի ես զայդ: Ո՜հ, Աստուած իմ, չեմ բաւական 'ի յիշել զբազմութիւն գայթակղութեանց զոր ետու. անթիւ են հոգիք զորս գայթակղեցուցի մերթ անվայել բանիւք, մերթ չար խրատուք, երբեմն չար օրինակաւ և երբեմն ամպարիշտ հրապուրանօք: Այլ ես ինքն առաւել քան զամենեսին մեղայ քեզ, ո՛վ Փրկիչ հոգւոց. և զիարդ իշխեցից ես չարագոյնս մեղաւորաց՝ յուսալ 'ի չարչարանս քո, զոր յաճախ գայթակղութեամբք իմովք առ ոսն հարի: Այլ սակայն յուսամ ես, քանզի կամիս զի յուսացայց. և զղջացեալ մանաւանդ ընդ մեղսն զոր պատճառս եղեւ այլոց գործել, յողորմութենէ քումէ ժամ ներումն թողութեան: Յայսմ հետէ մի ևս մեղայց քեզ, և մի ումեք տաց մեղանչել քեզ:

Զէ բաւական չմեղանչելն յԱստուած և չտալն այլոց մեղանչել. 'ի քաւութիւն գայթակղութեանց զոր ետու՝ ջանացայց դարձուցանել առ Աստուած անձինս ումանս յորդորանօք, հոգեշահ թելադրութեամբք և բարի օրինակաւ:

Դարձեալ ջանացեալ լինել Պիղատոսի ազատել զՅիսուս:

ՄԶԴ. Երկիցս 'ի վերջնում քննութեանս հարցաւ Քրիստոս. առ առաջինն հարցուած չետ ինչ պատասխանի. առ երկրորդն՝ սակաւ ինչ բանս. այլ յայսր վերայ՝ Պիղատոս, որպէս

տալ Աւետարանիչն, դարձեալ միւս անգամ խնամով փութացաւ փորձել և հնարել արձակել զնա, զի մի պարտական լիցի դատապարտութեան անմեղին, զորմէ վարանէր 'ի միտ թէ գուցէ որդի Աստուծոյ իցէ: — Այլ միտ դիցուք, թէ ուստի՞ իցէ Պիղատոսի կասկածդ: — Խիթայ, նախ, զի եւես զնա 'ի դատի իւրում լուռ եւեթ կալ. և յիրաւի իսկ, զի եթէ տայր պատասխանի 'ի չքմեղս անձին՝ մարթ էր կարծել եթէ առ երկեղի մահուն արդարացուցէ զանձն, վասն այնորիկ ՚ւ մարդ ոք իցէ. այլ 'ի լռելն և լռութեամբ յայտնել զաննկուն զօրութիւնն՝ առ ոչինչ համարելով զմահ, տայր իմն իրաւունս կարծելոյ՝ թէ վեհագոյն իցէ քան զմարդ սոսկ, նաև Աստուած իսկ: Խիթայ և Պիղատոս թէ Աստուած իցէ Յիսուս, քանզի լուաւ 'ի նմանէ բան զմեծէ զօրութենէ Աստուծոյ՝ յորմէ կախեալ կայցէ ամենայն մարդկեղէն իշխանութիւն: Զարմանալի է և այս, մանաւանդ թէ նմանելի, զի Յիսուս և լռելովն և խօսելովն՝ հանապազ շինէ զմիտս առաքինաղօր ազդեցութեամբք 'ի փառաւորութիւն անուանն Աստուծոյ: — Ո՜վ գեղեցիկ օրինակ: Տէ՛ր, հոգի իմ, զիա՞րդ շինութիւն առնու Պիղատոս և 'ի լռութենէ անտի Յիսուսի և 'ի խօսելոյ. և ուսիր աստի զգուշութիւն և զարժանաւոր պահպանութիւն լեզուիդ:

Մեծապէս պէտս ունիմ ուսմանդ այդմիկ, ամենաքաղցր Փրկիչ. քանզի յոյժ անզգոյշ եմ և 'ի խօսելն և 'ի լռել. լռութիւնս իմ գրեաթէ միշտ վայրապար է. և խօսելն իմ գրեաթէ միշտ սնոտի. և՛ խօսելն իմ և լռել գրեաթէ միշտ զուրկ յառաքինութենէ: Քանիցս ընդ վայր լռեցի, չածեալ զմտաւ զօգուտ ընկերին. քանիցս վատթարապէս խօսեցայ սնապարծու-

թեամբ, չարալեզուութեամբ և երկբանութեամբ։ — Աստուած իմ, քեզ նուիրեմ զլեզու իմ. դու ուղղեա զնա շնորհիւ քով սրբով. զի եթէ լռէ՝ առաքինի իցէ լռութիւն իւր, և թէ խօսի՝ առաքինի իցեն խօսքն. մի ինչ խօսեսցի որ յարհամարհանս իցէ քեզ, մի ինչ 'ի վնաս ընկերին։ Այլ այս ոչ է շատ. շարժեա զլեզու իմ խօսել միշտ զբարին և զօգուտ, մանաւանդ 'ի ժողովս և 'ի զրուցատրութիւնս։

Ի յաւելուածոյ սրտի խօսի լեզուն. վասն այնորիկ արժան է ինձ լնուլ զսիրտ սրբազան իմաստիւք, սրբազան խորհրդովք, և սրբազան ըղձիւք. որպէս զի բանք իմ բուրեսցեն հոտ սրբութեան։

ՄՁԵ. Տեսանեն Հրեայքն զի ոչ ինչ ազդեցին 'ի Պիղատոս ոչ պատճառանք օրինաց իւրեանց, ոչ պարտականութիւն մեղանաց՝ թէ Քրիստոս զանձն որդի Աստուծոյ արար. այլ տեսեալ մանաւանդ, զի դատաւորն յօժարեալ իմն է արձակել զնա, սկսանին գոչել բարձրաձայն, Եթէ արձակես զդա՝ չես բարեկամ կայսեր։ Բանադատեն զՊիղատոս անձնատուր լինել, կամ առ հաճոյս կամ առ երկեղի. և զի 'ի դերև ելին այլ ամենայն հնարք, ջանան երկեցուցանել զնա սպառնական ազդարարութեամբ յաչաց ելանելոյ կայսեր։

Այլ աստանօր 'ի դէպ է խորհրդածել. զի Պիղատոս չետես երբեք զՅիսուս հրաշս գործելով. այլ միայն յանչքութեան նախատանացն ետես զնա. սակաւ ինչ բան ևեթ լուաւ 'ի նմանէ, և սակայն խիթայր թէ Աստուած իցէ և զանգիտէր 'ի դատապարտելոյ զնա. իսկ ընդ հակառակն Հրեայքն՝ յետ բազում անգամ ականատես լինելոյ սքանչելագործութեանցն, և ականջալուր երկնաւոր վարդապետութեանն, ես

քան զկս առատանան նախանձու դատապարտելոյ զնա և սպանանելոյ, 'ի պատճառս նոցին իսկ իրաց վասն որոց արժան էր նոցա պաշտել զնա: Այսպէս 'ի գլուխ ելանէր ատացեալն զնոցանէ մարգարէին, եթէ յայն պայման հասցեն՝ մինչև ոչ օգտեսցեն նոցա և՛ զոր լսենն և զոր տեսանեն:

Ահեղք և անքննինք են դատաստանք քո, Աստուած իմ, այլ միշտ ուղիղք են և արդարք: Արդարև 'ի ժամանել հոգւոյ յաստիճան ինչ չարութեան, Թոյլ տաս նմա անկանել 'ի կուրութիւն, 'ի խղութիւն, 'ի ցամաքութիւն և յանզգայութիւն մահացու. քանզի չառնու այնուհետև ուստեք օգուտ 'ի փրկութիւն անձին իւրոյ. և զի սոսկ է եթէ հպարտութիւն է պատճառ բառնալոյ քո զտուրս շնորհաց 'ի հոգւոյ անտի, որքան ահ երկիւղի չկայցէ ինձ՝ եթէ առ հպարտութեան իմոյ անկայց և ես յայն պայման, յորում զրկեալ յօգնութեանց՝ որովք օժանդակես ընտրելոց քոց՝ գթեցից չարեաց 'ի չարիս՝ ընդ մերժեալսն: Այլ ես չճանաչեմ իսկ զհպարտութիւնս զայս. բայց եթէ ես ոչ ճանաչեմ, դու քաջ ճանաչես, Աստուած իմ. աղէ 'ի շնորհս խոնարհութեան չարչարանաց քոց՝ անկցի գութ քո 'ի վերայ իմ: Մի՛ յանարժանութիւն իմ հայիր, այլ 'ի կարօտութիւն: Հիւանդ եմ եղկելի, և ախտ իմ հպարտութիւնն է. և ո՞ կարիցէ բժշկել զայն, եթէ ոչ դու որ բժիշկդ ես հոգւոյ իմոյ: Ո՛վ Յիսուս Նազովրեցի, 'ի քեզ յուսամ, և 'ի ձեռս քո յանձն առնեմ զանձն իմ:

Երկեայց՝ Թէ յորժամ ոչն կարծիցեմ բարձցէ յինէն Աստուած զշնորհս իւր. արժանի իսկ եմ այսմ պատուհասի. այսու հաստատուն երկեղիւ խոնարհեցայց և խոնարհեցուցից զհպարտութիւնս իմ:

ՄՁԶ. Ոչ 'ի զուր ինչ աւանդեցին մեզ գրով աւետարանիչքն զչարութիւն Հրէիցն. քանզի դոյ մեզ և անտի առնուլ խրատ խորհրդական և փրկաւէտ ուսման: Միտ դիր, զիա՛րդ կարգ ըստ կարգէ ամբաստանութիւն մատուցանեն զՅի-սուսէ: Ջուաքինն ամբաստան եղեն եթէ թա-գաւորել կամի, և Պիղատոս խոտեաց որպէս սնոտիս զբանսն. ապա ամբաստանեցին եթէ զանձն իւր որդի Աստուծոյ արար. և իբրև չեղև այն ընդունելի, դարձեալ յառաջին բարուրան վերադառնան ասելով, Քանզի թագաւորել կամեցաւ՝ ապա ուրեմն ապստամբ է 'ի կայսերէ. որպէս զի կամ ըստ եբրայական օրինաց և կամ ըստ Հոռովմոցն՝ մահու պարտական դատիցի Յիսուս. և եթէ ոչ երկնչիցի Պիղատոս յԱստու-ծոյ՝ 'ի պատուհասել զհայհոյիչն, 'ի կայսերէ ան ածեալ զապստամբն պատժեսցէ:

Ա՛ռ ինձ գրեցան այս բանք, բայց զի ամենե-ցուն յայտնի լինիցի Հրէիցն չարութիւն՝ զոր ծանեաւ Պիղատոս. և զի յայտ է ամենեցուն եթէ Քրիստոս յանիրաւի զրպարտի, յայտ լիցի ամենեցուն և անմեղութիւն նորա: Այլ ուստի՞ գիտաց Պիղատոս եթէ զրպարտութիւնք են բողոքքն: Ո՛վ սքանչելեացս. նախանձու պա-տրուակաւ պնդագոյնս խօսին Հրեայք զամբաս-տանութեանցն բանս. և որքան և պնդիցեն՝ Պի-ղատոս կայ մնայ անհաւան թէ յանցաւոր իցէ Քրիստոս: Իսկ Յիսուս ոչ ամբաստանութեանցն պատասխանի տանէ, և ոչ անձին ջատագովէ, այլ լուռ ևեթ կայ. և այնքան հզօր է լռութիւն նորա՝ մինչև աներկբայ հաւատալ Պիղատոսի՝ եթէ չարախօսք զրպարտիչք են Հրեայքդ:

Որպիսի՛ հիասքանչ խրատ վարդապետու-թեան. ոչ ջատագովութեամբ՝ այլ ուղիղ գոր-ծովք և լռութեամբ լաւ ևս երևի անմեղու-

թիւն 'ի զղջարտութեանց միջի: Իսկ իմ այն ինչ լուեալ բանքրթմնջմանց զինէն՝ զչարիմ և վրէժխնդիր լինիմ. վաղժոյժ անձկամ 'ի չքմեղս լինել և արդարացուցանել զիս, ծանուցանելով եթէ 'ի զուր կրեմ հալածանս: Ոչ են բարուք հնարքդ. նա մանաւանդ յայդպիսի դէպս ոչ զգօնութեամբ և քաջութեամբ գործէ որ շատաբան լինի: Ուսայց ուրեմն լռել, բայց մի որպէս ստոյիկոս լռել թաքուն ամբարտաւանութեամբ, այլ ըստ բարւոյ քրիստոնէի լռել պարկեշտութեամբ և հեզահամբոյր խոնարհութեամբ: — Այլ ո՞ ուսուսցէ ինձ զառաքինազօր լռութիւնդ այդ՝ եթէ ոչ Դու, ամենապաշտելի Փրկիչդ իմ: Լռութիւն քո՝ լռութիւն է խօսուն, համոզկեր և թափանցիչ: Խօսեա՛ց աղէ գովլին 'ի սիրտ իմ. ազդմամբք օրինակիդ ակն ունիմ ուղղել զանդուլն շատախօսութիւն իմ, և նմանող լինել քումդ խոնարհ լռակեցութեան. աներկբայ գոլով եթէ միշտ գտայց անդորր և ուրախ եղեց ընդ համբերատար լռութիւն, քան ընդ խօսս պարծանաց 'ի չքմեղս անձին:

Պատշաճ պարկեշտութեամբ իմոյ վիճակի քաղաքավարեցայց, ոչ առ ահի չարախօսութեանց, այլ առ սէր առաքինութեան, և առաքինութիւն զօրացուսցէ զիս համբերել չարախօսութեանց՝ եթէ հանդիպեսցին ինձ յանպարտս:

ՄՁԷ. Լուեալ Պիղատոսի զանկանելն 'ի շնորհաց ինքնակալին Հռովմայ՝ եթէ անպատուհաս թողուցու զՅիսուս, մտանէ 'ի վարանս ինչ, և ոչ կարելով արհամարհել զօրէնս կայսերականս՝ որպէս արհամարհեաց զմովսիսականն, ցուցանէ խնամով իմն քննել զդատն. վասն այնորիկ

միւսանգամ արտաքս ածեալ զՅիսուս 'ի պատշգամբն, բազմի յատենի, որպէս թէ կամիցի հրապարակաւ դատաստան առնել: Այլ յանկարծօրէն իմն մտափոխ լինի. և հաւանեալ եթէ 'ի զուր է բարուրս խնդրել՝ ուր յայտ յանդիման կայ անմեղութիւնն, փոխանակ դատաւոր կալոյ՝ ջատագով կայ: Յառաջ քան զսակաւ մի 'ի ցուցանել անդ առ Հրէայսն զՅիսուս՝ ասէր Պիղատոս, Ահա այրդ ձեր ցձեզ, առ 'ի զարթուցանել կիրս ինչ գթութեան յոգիս նոցա. իսկ այժմ տեսեալ զի բուռն առնեն ամբաստանութեամբք՝ եթէ զՀրէից թագաւորութեան թեկնածէ, խօսելով իմն և երգիծանօք ասէ ցնոսա. Ահա թագաւորդ ձեր. իբրու թէ ասիցէ. Ո՞ւր են խելք ձեր 'ի կասկածելդ թէ թագաւորութեան ցանկանայցէ այսպիսի ոք ապիկար և գծուծ. հայեցարուք և 'ի միտ առէք՝ թէ քանի՞ ընդունայն է երկիւղդ ձեր, քանի՞ ստութեամբ է ամբաստանութիւնդ:

Տես, հոգի իմ, զիա՞րդ Պիղատոս 'ի պաշտպանել զանմեղութիւն՝ ուրանայ և մարմնչի ընդ ճշմարտութեան. անհնար ասէ Քրիստոսի թագաւոր լինել. և սակայն թագաւոր է նա ճշմարտապէս. որպէս անդստին իսկ 'ի մարդեղութեան նորա կանխաձայնեաց հրեշտակապետն Գաբրիէլ, եթէ Թագաւորեսցէ 'ի վերայ տանն Յակոբայ, և թագաւորութեան նորա վախճան մի լիցի: Արդ որպիսի՞ վիշտ է Յիսուսի, որ ինքնին իսկ ճշմարտութիւն է, լսել 'ի դատաւորէ անտի զջատագովութիւն անձին. պայմանաւ ստութեան: — Այլ ողէ՛, Յիսուս իմ, մինչ Պիղատոս թագաւոր ծաղու համարի զքեզ, տուր ինձ ճանաչել և պաշտել զքեզ որպէս զիմ ճշմարիտ թագաւոր: Այո, թագաւոր իմ ես դու. և զի առացեր թէ 'ի

ներքս յիս է թագաւորութիւն քո, աւադիկ բանամ քեզ զդրունս, տամ քեզ զբանալիս, զի մի ևս թագաւորեսցեն յիս մեղք, այլ դու միայն թագաւորեսցես շնորհօք յամենայն ժամանակս կենաց իմոց, և ապա փառօք 'ի յաւիտեանս: Երանի՜ է ինձ եթէ դու թագաւորեսցես յանձին իմում. քանզի այդ լիցէ ակնկալութիւն թագաւորելոյ և ինձ ընդ քեզ մշտնջենաւորապէս, և վայելել 'ի նշոյլս երեսաց քոց յարքայութեան Հօր քո: Եկ արդ, եկ յիս, թագաւոր իմ, և բարձ յինէն, 'ի հոգւոյ աստի իմմէ, զամենայն որ չար թուիցի ամենամաքուր աչաց քոց, որպէս զի թագաւորեսցես 'ի նմա հաճութեամբ: Ի շնորհս վշտալից և նախատալից չարչարանաց քոց՝ խնդրեմ 'ի քէն, ո՜վ Յիսուս, զեղջ ճշմարիտ յապաշաւութիւն հոգւոյ իմոյ:

Ունկնդիր եղեց ձայնի թագաւորին՝ որ 'ի ներքս յիս է. և նմա միայն լուայց, և մի՛ ցանկութեանց զգայականաց՝ որոց ցարդ անսայի:

ՄԶՐ. Այն ինչ յակն արկեալ Հրէից զՅիսուս՝ զոր ցուցանէ նոցա Պիղատոս, առ 'ի ցրուել զկասկածանս նոցա և հաւանեցուցանել՝ եթէ անմարթ էր այդպիսւոյ գծուծ և տառապելոյ առն զթագաւորութեան թեկնածել, ամենեքին միաբան սկսանին գոչել զայրագինս. Բարձ զդա յաչաց մերոց, զի ծանր է մեզ և տեսանելն զնա. բարձ զդա և հան 'ի խաչ: Ո՜վ զարմանալի և զարհուրելի իրք. Հրեայք ինքնին ծանեան զնա արժանի թագաւորութեան և խնդրէին առնել զնա թագաւոր. Հրեայք ինքնին վկայք էին, թէ քանի՜ հեռի էր նա 'ի կալանելոյ զթագաւորութիւն կայսեր՝ ուղղութեամբքն զոր առնէր և ուսուցանէր. Հրեայքն էին՝ որոց տեսեալ զնա զի հրաման տայր

ալեաց և հողմոց, ախտից և այսոց և մահու, · խոստովան լինէին եթէ մարդ աստուածային իցէ: Եւ նոյն ինքն Հրեայք արդ տեսեալ զնա անհնարինս, մինչև չհանդուրժել նմա. նոյն ինքն Հրեայք կատաղեալք գոչեն 'ի մահ վարել զնա, և 'ի մահ խաչի, որպէս զեղեռնագործ մի վատթար:

Զի՞նչ ասիցես, հոգի իմ. յորժամ զմտաւ ածիցես զկեանս քո՝ զոր վարեցեր մերթ բարի գործելով և մերթ չար, մերթ 'ի պատուել զԱստուած և մերթ յանարգել, ո՞չ կարիցես 'ի Հրեայքդ զքեզ ինքն կերպարանել: Լո՛ւր և տես զՀայրն երկնաւոր, որ ցուցանէ քեզ զՅիսուս կերպարանօք որովք եցոյցն Պիղատոս առ Հրեայս, և ասէ. Ահա թագաւոր քո. — գոչիցե՞ս և դու 'ի վերայ նորա՝ 'ի խաչ հանել զնա: — Ո՛վ ամենապաշտելի Փրկիչ իմ, գոչեցից ես մանաւանդ, կեցցէ և յաւիտեան կեցցէ թագաւոր իմ և իշխան իմ: Այլ ստգտանէ զիս գիտակցութիւն իմ. զիա՞րդ իցէ Յիսուս թագաւոր իմ, եթէ չիցեմ ես նորա հպատակ: Արդարև ունիմ զկրօնս քրիստոնէութեան. այլ քանի՞ քրիստոնեայք են Աստուած իմ, որք թէպէտև դաւանին քո լինել, այլ ոչ են քոյ. քանզի ոչ որպէս արժանն է պատուեն և անսան քեզ. երկնչիմ թէ գուցէ մի յայնցանէ իցեմ և ես. երկեցուցանէ այլ և յոյժ երկեցուցանէ զիս գաղջ և աւաղելի կեանք իմ: Ի քոյոց անտի եմ ես, այլ ոչ եմ քոյ, զի ոչ որպէս արժանն է քոյոցդ՝ կեամ ես: Այլ, աղէ՛, վասն այդորիկ իսկ թո՛յլ տուր ինձ աղաչել և խնդրել 'ի քէն. Արա զիս մի 'ի քոյոցդ, 'ի քոյոց ընտրելոց, որոց՝ յետ թողութեան մեղացն՝ տաս և զյաւիտենականն փրկութիւն. տո՛ւր ինձ լինել քոյ, ոչ բանիւ՝ այլ արդեամբք: Եւ զի՞նչ պարտ իցէ ինձ առնել առ

'ի լինել քոյ: Կամիցիս ուսանել, հոգի իմ, զոր պարտն իցէ քեզ առնել. — Հնազանդ լեր Յիսուսի՝ յամենայնի զոր ուսոյց քեզ վարդապետութեամբ իւրով. հաւատարիմ լեր Յիսուսի՝ նմանողութեամբ առաքինութեանցն, և մանաւանդ հեզահամբոյր խոնարհութեամբն. և ապա եղիցի նա թագաւոր քո, և դու 'ի ժողովրդենէ նորա, այժմ և միշտ և յամենայն յաւիտեանս:

Թագաւորք աշխարհի սիրեն ահաւորք լինել. միայն Յիսուս թագաւորն թագաւորաց փափագէ սիրելի լինել. գոհացայց զնմանէ զի հաճի տալ զինքն սիրել, և ժտեցից 'ի նմանէ տալ ինձ շնորհս սիրելոյ զնա զամենայն կեանս իմ:

ՄՁԹ. Տեսանէ Պիղատոս զանհնարին մախանս Հրէիցն ընդ Յիսուս. և զանգիտէ թէ գուցէ նովին չարութեամբ ամբաստան լիցին և զինքենէ յառենի կայսեր. այլ տակաւին նկրտի նուաճել զերկիւղն. և առ աղմուկ աղաղակին անբանօրէն գոչելոյ՝ Ի խաչ հան, պատասխանի առնէ կշտամբելով զկուրացեալ նենգութիւն նոցա. «Ես զթագաւորդ ձեր 'ի խաչ հանիցեմ». այսինքն է զայրդ զոր դուք ինքնին յարգեցէք և արժանի թագաւորութեան վարկայք: Զայս ասէ դատաւորն լրջմտութեամբ, առ 'ի յամօթ առնել, և անարգանօք թշնամանել զամպարիշտսն, զորս ոչ կարաց անարգանօքն Յիսուսի հաշտ առնել. այլ նոքա ամենեքին անազգամք և անամօթք, առաւել ևս պնդագոյնս պատասխանի տան խեղաթիւր պանծանօք, եթէ Չիք մեր թագաւոր բաց 'ի կայսերէ:

Ո՜վ հայհոյական բանիցն. — ուրանալ զՄեսիա, Ճշմարիտ Որդի Աստուծոյ, և թագաւոր տիեզերաց, և յանձն առնուլ զծառայութիւն անցաւոր թագաւորի երկրայնոյ: Այս բան

Հարուած էր ուղղել 'ի սիրտ Յիսուսի, փոխա-
նակ բարեացն մեծամեծաց՝ զոր փափագէր առ
ազգ իւր. և զայսմանէ ցաւագին հառաչանօք
գանգատէր բերանով մարգարէից իւրոց. և
վասն այնորիկ իսկ եկին հասին 'ի վերայ ազգին
այնորիկ մի ըստ միոջէ աղէտքն հոգեկանք և ժա-
մանակեայք: — Անկ է և ինձ խորամուխ լինել
յուղեղ անդր իրացս. քանզի յայդ իսկ հաս-
տատեալ է բաղդ իմ յաւիտենական: Նա է
Թագաւոր իմ՝ որ հրամայէ յիս 'ի ներքս. — և
ո՞ իցէ որ հրամայէն 'ի ներքս 'ի յիս: — Ո՛հ,
Աստուած իմ, զգամ'ի սրտի իմում զամբոխ
բազմութեան բռնաւորաց՝ որք կապտել կա-
մին յիւրեարաց զիշխանութիւն. մերթ հպարտու-
թիւն յարձակի յիս, մերթ նախանձ, մերթ ագա-
հութիւն, բարկութիւն, տռփանք և պղերգու-
թիւն. և ամենայն ախտք ելևելս առնեն զմի-
եամբք բռնադոյնս տիրապետել: Է երբեք զի
քոյով օժանդակութեամբ՝ զդէմ ունիմ նոցին,
Աստուած իմ, այլ սակայն հեծեմ և զանգիտեմ.
քանզի առաքինութիւն պակասէ ինձ, և պար-
տասիմ 'ի մարտնչելն. Ճանաչեմ զքեզ, ով
բարեսէր Փրկիչ. ինձ տէր ամենիշխան, և ասեմ
և խոստովանիմ ոչ ունել այլ տէր բայց 'ի Յի-
սուսէ. այլ զիա՞րդ հնար իցէ ինձ յաղթել այն-
քանեաց թշնամեաց քոց և իմոց: Դու ինքնին
մարտիր, Յիսուս իմ, և եկ վանել յիս զամենայն
ախտս զինեալս 'ի վերայ անձին իմոյ՝ առ 'ի կապ-
տել զիշխանականն սրտիս: Եկ և Թագաւո-
րեա յիս. զի դու միայն ես Թագաւոր իմ և Աս-
տուած իմ և Փրկիչ իմ: Իշխեա 'ի վերայ ամե-
նայն խորհրդոց իմոց և ըղձից իմոց. որպէս
զի սիրեցից 'ի վեր քան զամենայն զքեզն խորհել,
քեզ աղերս սիրոյ մատուցանել, և ոչ այլ ինչ
կամել՝ բայց զոր դուդ կամիցիս:

Զղջացայց վասն ամենայն դիպաց՝ յորս զօրէն Հրէից ուրացայ զՅիսուս, մերժելով խաղայինէն՝ ոչն կամելով հնազանդել ոչ պատուիրանաց նորա և ոչ խրատուց:

Հաւանի Պիղատոս դատապարտել զՅիսուս:

ՄԳ. Տես ինչ ջանահնար եղև Պիղատոս զի ճողոպրեսցի 'ի դատապարտելոյ զՅիսուս, հրաժարելով զանմեղութիւն նորա, հերքելով զզըրպարտութիւնսն, և զուն գործելով ողոքանօք զինջուցանել զցասումն քահանայից և զաղմուկ ժողովրդեանն. այլ յետ պաշտպան կալոյ արդարութեան 'ի բազում դէպս, 'ի վախճանի ուրեմն պարտեալ 'ի Թախանձեցուցիչ աղաղակէ ժողովրդեանն՝ լքանի. և 'ի մոռացօնս արկեալ զոր ասացն և զոր արար 'ի ջատագովութիւն Յիսուսի, վրիպեալ 'ի զգօնութենէ և 'ի հաստատութենէ՝ զինջանի դատապարտել զանմեղն: Չէր արդարև աւելի ինչ ակն ունել 'ի նմանէ, որ զի միշտ Թոյլ և մեղկ գտաւ 'ի կատարումն պարտուցն, ոչ ունելով արութիւն քաջութեան 'ի հերքել զընդդիմամարտն ճշմարտութեան: Զայս 'ի դէպ է ակն ունել և յամենեցուն որ դաղջութեամբ և հեզգութեամբ գործեն զծառայութիւն Աստուծոյ. որոց ոչ պակասեն լոյս և ազդ խղճի, որպէս ոչ պակասեցին Պիղատոսի, այլ և ըստ նորին օրինակի՝ ցրտութեամբ գործակից լինին. վասն այնորիկ զառաջինն յողդողդութեամբ դանդաղեն 'ի բարւոյն, և ապա յանզգաստից սահին 'ի չարն. և առ փոքր փոքր յամենայն արդեանց զուրկ գտանին, մինչև վրի-

պէլ և 'ի յաւիտենականն փրկութենէ , զոր յարատև ժուժկալողքն յառաքինութեան՝ ժառանգեն :

Աստուած իմ, քանի՜ խորք և ահաւորք են դատաստանք քո․ ոչ կարեմ աներկիւղ և անցանգէտ յիշել զօրինակ այնքան բազմաց, որոց երբեմն երևելիք գոլով յառաքինութեան՝ գթեցին յախտս և ցանկորդեալք 'ի նոյն՝ ոչ ևս դարձան յուղղութիւն : Իսկ ո՞ գիտէ թէ և ոչ ինձ մնայցէ այսպիսի դժնեայ կատարած . զի ես յանձնէ չկարեմ ինչ խոստանալ, դիւրաբեկ գոլով և յողդողդ 'ի բնէ անտի իմէ . չկարեմ և 'ի շնորհս քո վստահել, զի այդ տուրք են քո, զոր մարթ է ժամէ 'ի ժամ բառնալ յինէն՝ ոչ ինչ ինձ անիրաւելով : Ո՞ գիտէ ուրեմն եթէ շնորհք քո ոչ լքցեն զիս մինչ դեռ ընաւ ոչն կարծիցեմ, և ես չարեաց 'ի չարիս մեծագոյնս գլորեցայց . և եթէ այդպիսի ինչ հասցէ ինձ՝ չկարեմ այլ ինչ ասել՝ բայց զի արժանի այդմ էի : Այլ մինչ դեռ ես յերկիւղի կամ, առ քեզ դիմեմ Աստուած իմ և Փրկիչ , և աղաչեմ բառնալ յինէն զերկիւղ որ 'ի յուսահատութիւն անդր կործանիցէ , և տալ ինձ յուսով ողորմութեանդ երկիւղ սուրբ զարդարութեան քո , որ յորդոր լիցի ինձ 'ի բարիս և կասեցուցիչ 'ի չարեն , պահելով զիս 'ի խոնարհութեան :

Խոկացից յեղկելի պայման գաղջութեան իմոյ . խնդրեցից յԱստուծոյ օգնութիւն , և շնորհըս արժանապէս գործակից լինելոյ սրբոց իւրոց հոգեշնչութեանց :

ՄՂԱ. Ջանայ Պիղատոս փրկել զՅիսուս, այլ թուլաբար․ ոչ արիանայ պահպանել պընդութեամբ զճշմարտութիւն և զարդարութիւն . և որքան յանդգնութիւն 'ի Հրէայն՝

այնքան և երկչոտութիւն յաւելու 'ի նմա։ Զանգիտէ 'ի Յիսուսէ, և չիշխէ դատապարտել զնա, ասելով, Զի՞նչ լինիցի ինձ՝ եթէ 'ի մահ մատնիցեմ զորդի Աստուծոյ. իսկ եթէ ոչ դատապարտիցէ՝ զանգիտէ 'ի Հրէից անտի և նախանձաբեկ լինի. Զի՞նչ լինիցի ինձ, եթէ մատնիցեն զիս կայսեր։ Ի՜ թշուառական այր, որ առ երկիւղին Աստուծոյ իբրև 'ի կչիռս դնէ զսնոտի երկիւղ մարդկան։ Անգէտ է նա մարգարէական պատգամացն՝ որ ազդ առնեն մեզ չերկնչել և ոչ ուստեք՝ ուր առաջի կայցէ հաստատուն կալ վասն Աստուծոյ. այլ մինչ նա կամի իմն ոչ դատապարտել զՅիսուս և ոչ տրտմեցուցանել զՀրեայսն, զի՞նչ գուցէ ակն ունել 'ի նմանէ, բայց զի նկուն լիցի յահէ մարդկան։ Եւ այսպէս իսկ լինի, քանզի զանգիտեալ 'ի Հրէից անտի, ոչ միայն չկայ ընդդէմ, այլ և տեղի տուեալ բորբոքեալ սրտմտութեան նոցին՝ հաւանի դատապարտել զՅիսուս։

Մի՞ արդեօք և ես 'ի սմին պատեհի կայցեմ։ Աստուած իմ, քանիցս առ 'ի չառնել ինչ անհաճոյ մարդկան՝ տայցի և արարի զոչ հաճոյն քո։ Ըստ Պիղատոսի խելամտութեան չկամէի ինչ մեղանչել աստուածայնոյ քում մեծվայելչութեան, այլ և չկամէի ապաշնորհ գտանել յաչս աշխարհի։ — Եւ զի՞նչ ելք իրացն. մինչ վարանեալ կայի ընդ երկիւղ քո և ընդ երկիւղ աշխարհի, աշխարհային երկիւղն յաղթող գտաւ 'ի վերայ իմ։ Երկեայ 'ի չարալեզուացն, և առահի՝ թէ զի՞նչ ասիցեն զինէն եթէ աննման գըտայց նոցա, միաբանեցայ յանպատկառութիւն յեկեղեցւոջ, 'ի քրթմնջանս, 'ի մարդելուզութիւն, յանժուժկալութիւնս և 'ի խենէշ ընկերչակութիւնս։ Գիտէի թէ պարտք են ինձ առաքինօրէն գործել ըստ ընտիր քրիստոնէի, և առ

ոչինչ գրել զարհամարհանս և զայպանս իմ, և սակայն երկիւղ աշխարհի յաղթեաց ինձ, և առաւել յաշխարհէ քան թէ 'ի քէն զանգիտեցի: Նա և այժմ իսկ զիա՞րդ գերեալ եմ յակնածութենէ մարդկայնոյ, ոչ կարող պատկառ պատուիրանի զգուշութեանց աւետարանականի, մի երկնչել նաև յայնմանէ որ կամիցին զիս սպանանել, այլ 'ի քէն միայնոյ երկնչել՝ որ կարես հարկանել զիս 'ի մարմին և 'ի հոգի, ժամանակէիւ և մոնջէնաւոր մահուամբ: Տէր իմ և Յիսուս իմ, Ճշմարիտ են կշտամբանքդ որ վասն վատութեանս իմոյ, զի առաւել երկեայ յարարածոյ քան յարարչէդ. այսուհետև մի ուսուք երկեայց բայց 'ի մեղաց. երկեայց յամենակալ զօրութենէ քումէ, յարդարութենէդ և 'ի բարկութենէ. զի՞նք բաւական իցէ զդէմ ունել դոցին: Այլ աղէ, զօրութեամբ քով արիացո զվեհերոտութիւնս իմ, որպէս զի մի ինչ այսուհետև հրապուրեսցէ կամ խորշեցուսցէ զիս 'ի նկրտելոյ յամենայն դէպս 'ի փառս քո:

Ի քննել զանձն իմ գտանեմ բազում ինչ մեղս զոր գործեմ առ կարի դիւրամէտ թուլութեանս 'ի հաճել մերթ զայս ոք և մերթ զայն. պնդեցից զանձն իմ մի ևս տկարանալ զիջանել յայսոսիկ:

ՄՂԲ. Երկնչի Պիղատոս յամբաստանութենէ Հրէիցն 'ի Հռովմ, եթէ թողուցու ազատ զՅիսուս. զանգիտէ դարձեալ թէ գուցէ չկարիցէ 'ի չքմեղս լինել, և զրկեսցի իշխանութենէ իւրմէ: Այլ ուսուցի զմա այդ երկիւղ, եթէ ոչ 'ի փառասիրութենէ անտի. սիրէ յոյժ զիշխանականն աւագութիւն, վասն այնորիկ առ ահի զրկելոյ անտի՝ զանց առնէ դիւրաւ զպարտուքն, և զանձին շահ նախամեծարէ քան զարդարութիւն. որպէս զի 'ի դէպ է ասել՝ եթէ հպար-

տութիւն եղև պատճառք մահուանն Յիսուսի։
Հպարտութիւն քահանայապետից Հրէից տայ
նոցա գոչել, Խաչեսցի Յիսուս, քանզի երկնչին
թէ յաղթեսցէ բարձցէ 'ի նոցանէ Յիսուս զա֊
ւագութիւն և զմեծարանս առ 'ի ժողովրդե֊
նէն. հպարտութիւն թելադրէ և դրդէ զՊիղա֊
տոս յանիրաւ դատավճիռն. ոչ այդպէս անիրա֊
ւէր՝ եթէ փոխանակ զիշխանութիւն իւր 'ի կայ֊
սերէ ճանաչելոյ՝ յերկնուստ ճանաչէր տուեալ,
որպէս ազդեաց նմա Քրիստոս։ Նոյն ինքն հպ֊
պարտութիւն է՝ որ և յետ ներգործելոյ 'ի
դատս պարտութիւն Յիսուսի՝ առաւել ևս ներ֊
գործէ 'ի դատապարտութիւն հոգւոց։

Տո՛ւր ինձ, Աստուած իմ, քաջ 'ի միտ առնուլ
զճշմարտութիւնս զայս, եթէ ամենայն մեղք
յառաջ գան յանկարգ սիրոյ և յերկրեղէ։ Զա֊
րաշար՝ սիրեմ զանձն իմ, և փութամ 'ի հաճել
զամենայն մտօք ախորժակս իմ. և զի՞նչ իցէ այս
սէր, բայց եթէ հպարտութիւն, որ յունայնա֊
ցուցանելն զիս՝ վատթարէ և քամէ զզօրութիւն
իմ, մինչև անկարող լինել ամենեին 'ի բառնալ
'ի վերայ անձին իմոյ։ Սիրեմ զգովութիւն, զպա֊
տիւ և զհեշտութիւն և զամենայն որ յանձին չա֊
կրթիցի. և քանզի նախամեծար առնեմ զեր֊
կիւղ կորուսանելոյ զնոտիս զոր սիրեմ և անձ֊
կամ, քան զերկիւղ մեծի վայելչութեան քո։
Ոգիս այս հպարտութեան որ գերեալ է զիս,
հանապազ դարանակալ է ինձ, այնքան յաւէտ
բազմավտանգ՝ որքան զի գաղտնորագայթ. և ես
ոչ ճանաչել կարեմ և ոչ զգուշանալ, այլ միայն
'ի միտ առնում՝ զի որչափ անձնասիրութիւնս
իմ արծարծի՝ այնքան ցրտանայ կիս սէր քո
սուրբ։ Ո՛վ ամենագութ Յիսուս, ո՞ր դեղ կայցէ
փրկրութեան իմոյ և տառապելութեան.
փափագեմ մտադիւր վստահութեամբ դիմել

առ քեզ. զի ո՞ րք առաւել արժանաւոր իցէ գթութեան քում՝ քան զկարօտն եղկելի. այլ և խնդրեմ ոչ, յիշելով զի և չիք որ անարժան գթութեան քում քան զհպարտն եղկելի՝ որպէս եսս եմ: Սակայն քաջալերեալ ՚ի քումէ բարութենէ, կամիմ աղաչել զքեզ, և աղաչեմ. տեսանեմ ՚ի սրտի քում զդեղ բժշկութեան ցաւոց իմոց, զխոնարհութիւն քո. աղէ, մի՛ յանարժանութիւնս իմ հայիր, այլ տո՛ւր ինձ սակաւ մի ՚ի խոնարհութենէ քումէ որ պիտանացու է ինձ յոյժ:

Ոչ Հրեայքն և ոչ Պիղատոս յայդ ամպարշտութիւն ժամանէին՝ սպանանել զՈրդի Աստուծոյ, եթէ ոչ գուզնաքեայ ինչ համարէին զհպարտութիւն. այլ ես չար մեծ համարեցայց զայն և մահուչափ զգուշացայց յայնմանէ:

ՄՂԳ. Երկնչի Պիղատոս ՚ի ցասմանէ ժողովրդեանն, ՚ի մերժելոյ յաչաց կայսեր, և ՚ի կորստենէ շահու անձին, յաղատելն զՅիսուս. արդ զի ո՛չ արասցէ նա առ ՚ի գործել ուղղութեամբ և աներկեան լինել ՚ի զանդիտանացն: Օրէն է բարւոյ դատաւորի նա՛, քննել զդատն և ապա վճիռ հատանել. իսկ արդ ընդէ՞ր ոչ զամենայն փոյթ ՚ի մէջ առնուցու ՚ի ստուգել զփորձին, եթէ իցէ՞ արդարև յանցաւոր՝ համարեալն յանցաւոր: Թագաւորութեան թեկնածուին պէտոյ են զէնք, զինաւորք և դրամ. և ո՞ւր է դոյզն ինչ նշանակ առ ՚ի կասկածել զՅիսուսէ թէ թագաւորել կամիցի, մինչ չիք նորա բայց երկոտասան առաքեալքն, արք սինլքորք, և ինքն կեայ աղքատօրէն, ոչ իւր իսկ գոլով տունն յորում բնակէ: Այսոցիկ ամենայնի անգէտ է դատաւորն, ապուշ և անզգոյշ ՚ի պարտս իւր. երկիւղին մեծաւ ըմբռնեալ է, քանզի կուրացեալ է հպարտութեամբ մեծաւ:

Ո՞չ ապաքէն այս դէպք յաճախ պատահէին ։ Որքան հպարտութիւն ածէ յոգւոջ՝ այնքան հեռանայ 'ի նմանէ շնորհն լուսաւոր և ջեռուցիչ, և միայն նա յահեղ իմն կուրութեան և յանզգայութեան ։ Անձն հպարտ զանձին շահուզակատեալ դլխովին՝ զանց առնէ զպարտուքն. չտեսանէ այնուհետև և չխրէ զուղիղն. ոչ ևս լսէ ոչ արդարութեան, ոչ մտացն խղճի և ոչ Աստուծոյ ։ Աւաղելի՜ պայման ։ Այլ զգամ զի 'ի նկարագրել զբարս փառատիրին Պիղատոսի՝ զիմն իսկ յանդիման լինձ առնեմ ։ Առ հպարտութեան իմոյ ևեթ զօր հանապազ գործեմ բազմապատիկ մեղս զանցառութեան և զանլսողութեան. վասն որոյ և 'ի դէպ է ինձ դուշակել չարաչար սահեցմունս և դահավիժութիւնս անդարմանս և անվախճանս. զի սա այս ինձ խորշել յամենայնէ որ վնասել ինչ թուիցի ինձ, և յեղաշրջէ զմիտս իմ չերկնչել յիրէ որ անարգանս իցէ առ Աստուած. վասն այսորիկ եթէ ոչ գուն գործեցից նուաճել զայն, կարեմ այժմէն գրել զիս 'ի թիւս երկչոտ զդայասիրացն՝ որք յառաջագէմ էն 'ի դպրութեան դատապարտելոց ։

Աստուած իմ, տեսանես դու թէ քանի՞ ընդունայն իցեմ առ անկարգ սիրոյ ունայնութեանց. և քանզի չեք ոք որ կարիցէ ձեռն օգնութեան ինձ կարկառել, առ քեզ դառնամ և աղաչեմ գթալ յիս ։ Աղաչեմ բառնալ յինէն զգժնդակ զայս ախտ, որպէս զի մի ևս սիրեցից զունայնութիւն, այլ զճշմարտութիւն ։ Ո՜վ ամենագութ Փրկիչ, լուր աղաչանաց իմոց ։ Զասեմ լսել ինձ իբրև արժանւոյ. քան յինէն յանդգնութիւնս այս և յանձնապաստանութիւն. այլ յոյս իմ հաստատեալ է 'ի բարութիւն քո, 'ի գթութիւն և յողորմութիւն՝ որ անբաւն է. և սոքիմբք ակն ունիմ և սպասեալ միամ շնորհաց քոց ։

Եթէ հպարտութիւն կորուսանէ զշնորհս Աստուծոյ՝ խոնարհութիւն գտանէ և պահէ զնոյն։ Օգուտ է ինձ խոնարհութիւն. և զայս առաքինութիւն արժան է ինձ սիրել և խնդրել մեծաւ անձկաւ։

Յիսուս դատապարտի 'ի խաչ ելանել։

ՄՂԴ. Բազմեալ Պիղատոսի 'ի բեմի ատենին՝ 'ի բաց եդեալ զամենայն վարանս յերկուանացն, մատչի սահմանել զդատապարտութիւն Յիսու-սի, հակառակ լուսոյ մտացն, խայթից խղճին և փորձոյ հաւաստեաց անմեղութեան նորա։ Եւ ո՞ գրգիցէ զնա յակներևդ յայդ անիրաւու-թիւն։ — Դիտումն քաղաքագիտական, շնոր-հուկս առնելոյ և շահելոյ զժողովուրդն, և չելանելոյ յաչաց Կայսեր։ Զայս աւանդեն ա-ւետարանիչքն. որպէս զի յայտնի լինիցի՝ եթէ ամենևին անմեղ էր Քրիստոս իւրովսանն, և չգոյր ինչ պատճառ յանցանաց 'ի դատապարտել զնա. և ոչ առ այլ ինչ մեռանէր՝ բայց 'ի փրկութիւն աշխարհի, որպէս ասացն Կայիափաս։ — Արդ հատանէ դատաւորն զվճիռն անիրաւ և ան-գութ, զի Յիսուս Նազովրեցի խաչեալ մեռցի. և յարտասանել զվճիռն՝ զդողանի հարկանի յո-մից մինչև ցգլուխ, որպէս թէ ոչ դատաւոր իցէ դատապարտելոյն՝ այլ յանցաւոր դատապար-տեալ։ Սոսկայ և քամահի 'ի կրից բնութեան, որ ոչ հանդուրժէ Աստուծոյն կենաց 'ի մահ դատապարտութեան. այլ յայսր ամենայնի վե-րայ ոչ զգաստանայ և ոչ յուղղութիւն գայ, այլ չարաչար վարեալ իշխանութեամբն զոր

յԱստուծոյ ունի՝ ձեռնագրէ և հաստատէ զաստուածապաշտութիւնն:

Ո՜վ կոյր և անզգամ դատաւոր. ընդ հուպ անկցի հոգի քո 'ի ձեռս դատապարտելոյդ այգորիկ 'ի քէն՝ Աստուածամարդոյ, և դատեսցիս և դատապարտեսցիս առ 'ի նմանէ 'ի դըժոխս: Այլ զի՞ է ինձ ծանրացաւումն ընդ Պիղատոս լինել. միթէ ոչ յամենայն նուագս մահուչափ մեղանացս տամ և ես վճիռ մահու Յիսուսի՝ հակառակ հաւատոցս և խղճի գիտակցութեանս. ընդէ՞ր ոչ մանաւանդ ընդ իս իսկ ցասնուցում: Ի յիշատակել զմեղս իմ արժան էր այնպէս անհնարինս ատել զանձն իմ՝ մինչև ոչ ևս հաշտել ընդ իս ինքեան. քանզի յանձնասիրութենէ անտի յառաջագային ամենայն մեղք իմ՝ արժան է թէ ատելութիւն անձին լիցի ինձ ապաշխարութիւն: Այսպէս առնէին սուրբքն. այնքան ատէին զանձինս կամս և զմարմինս իւրեանց, զի նոքիմբ կատարին մեղք, զի համապաղ զրկմամբք և մեռելութեամբք մարտնչէին ընդ նոսին: Զայս արժան է և ինձ գործել, առ 'ի հաշտ առնել զմեծվայելչութիւնն Աստուծոյ և յապահովել ինձ զկեանս յաւիտենականս: Այլ սակայն ես ոչ միայն չատեամ զանձն իմ՝ այլ և սիրեմ մինչև իսպառ:

Աստուած իմ, որ շնորհես ինձ յոյս ճանաչելոյ զպարտս իմ, տո՛ւր և զօրութիւն կատարելոյ զնոսին: Հաւանեալ եմ թէ ատելութիւն անձին կարող է տապալել զտիրեալն յիս անձնասիրութիւն. և զի գերաշխարհիկ տուրք են այդ առ 'ի քէն պարգևեալք, զիա՞րդ հնար իցէ ինձ ինքնին հայթհայթել կամ ակն ունել՝ եթէ ոչ առանձինն շնորհք քո օգնեսցեն ինձ: Ամենայն առաքինութեան և ամենայն զօրութեան տուիչ դու ես և ոչ մարդ. վասն այսորիկ խոնարհեալ 'ի

ծունր անկանիմ առաջի գահոյից մեծութեան քո և ժտիմ զնոյն:

Աստեղութիւն անձին իմոյ լիցի մեռելութիւնն ներքին և արտաքին, զի երկոցուն ևս պէտք են ինձ, և՛ առ 'ի քաւութիւն մեղաց գործեցելոց, և 'ի զգուշութիւն առաջիկայից զոր կարեմ գործել:

ՄՂԵ. Ի տալ դատաւորին զվճիռ մահուան Յիսուսի, զգրի հարկանեն զայն առաջի ամենայն աւագանոյ Եբրայեցւոցն, և լռութիւն քարոզեն ամբոխին, որպէս զի հրապարակաւ ընթերցցի լու 'ի լու ամենեցուն. և 'ի ձայն բարձր կարդան. «Յիսուս Նազովրեցի խաչեսցի»: Անդէն և անդ ցասումն սրտմտութեան Հրէիցն փոխի յուրախութիւն մեծ, և գոչեն ամենեքին. Այո՛, այո՛. և խնդակից լինին միմեանց վասն յաղթութեանն զոր ստացան, և այսր անդր ընթանան հռչակել զլուրն որպէս զբերկրապատար աւետեաց: Մեղաւ Պիղատոս անիրաւութեամբն. իսկ Հրէիցն ոչ միայն մեծ ևս էր անիրաւութիւն, այլ անհնարին ևս մեծ անգթութիւն և խստասրտութիւն. զի այդպէս խնդան և հաճին ընդ դատապարտութիւն անմեղին՝ յայդօրինակ ցաւագին և անարգական մահ:

Տե՛ս, հոգի իմ, յո՛ր աւաղելի պայման հասեալ կայ միածին Որդի Հօր յաւիտենականի, նախօրինակն անմեղաց և արդարոց. զի ոչ միայն 'ի մահ մատնեցաւ, այլ և 'ի պժգալին և 'ի քստմնելին քան զամենայն մահուանս. և յատենի վճռով հաստատեալ իբրու արժանի այդմ մահուան, և դատապարտեալ համաշխարհական հանդիսիւ և հրճուանօք, որպէս թէ թափէին զքաղաքն 'ի դաւանաց ամբոխայարոյց և մոլորե֊

ցուցիչ չարագործի վատթարագունի: – Այլ մեք կացցուք հակակշիռք Հրէիցն. և մինչդեռ նոքա շլացեալք չարութեամբ՝ պանծանյ յանօրէնութեան իւրեանց, գոչեսցուք ըղձիւք զարմանաց և կսկծանաց սրտի. Դատապարտի՞ ուրեմն Յիսուս առ. մեղս մեր 'ի մահ: Առ. մեղս մեր 'ի մահ դատապարտեցաւ Յիսուս, Որդի Աստուծոյ Բարձրելոյ, յորում պահեալ կան ընտիր ընտիր գանձք շնորհաց և իմաստութեան Աստուծոյ: Քաջ քննեա և 'ի միտ ա՛ռ, հոգի իմ, զի՞նչ իցէ Աստուծոյ անպարտականի դատապարտիլն 'ի մահ՝ վասն մեղաց. և խորամուխ 'ի խորհուրդ լինելովդ՝ ապաշաւեա՛ց և զղջա՛: — Ո՛հ, քանի՜ ցաւէ ինձ, ամենաքաղցր Յիսուս, ընդ մեղանչելն իմ, ընդ անգոսնել իմ զքեզ՝ զԱստուածդ ամենաբարի. և այն զի ընդ վայր հարի զքեզ վասն ընդունայն և անցաւոր և չնչենոյ իրաց. ընդ վայր հարի զոր վասն անչափ բարութեանդ և սիրելութեան՝ արժան էր ինձ սիրել յամենայն զօրութենէ: Ցաւիմ ընդ այն և զղջամ յամենայն սրտէ. իցի՜ւ թէ չէր իմ երբեք մեղուցեալ. այլ մի ևս մեղայց այսուհետև կամաւորապէս: Պաշտեմ, օրհնեմ և գոհաբանեմ զողորմութիւն քո անբաւ. զղուիմ և գարշիմ 'ի սևասարաս չարութեանց իմոց. և աղաչեմ զքեզ տալ ինձ զօրութիւն քակտելոյ և ջնջելոյ զնոսին ճշմարիտ ապաշխարութեամբ, 'ի ձեռն շնորհաց քոց սրբոց:

Մատուցից առ Յիսուս զսիրտ իմ խստապինդ, զի լուծցէ 'ի զեղջ. 'ի խոնարհութիւն և յապաշաւ. և թախանձ արկից նմա վասն ամենայն ցաւոց և արդեանց իւրոց, և վասն ցաւոց և արդեանց մեծի Մօր իւրոյ և Կուսի:

ՄՂՋ. Կայ Յիսուս առաջի ատենին Պիղատոսի զօրէն յանցաւորի՝ յընթեռնուլն զվճիռ

մահուանն. և 'ի լսելն զայն, ո՞ կարիցէ ասել, քանի՞ դառնակսկիծ աղէտք հարկանէին զսիրտն ամենազգած: Քանզի առեալ էր զանձամբ զտկարութիւնս բնութեան մերոյ, չէք երկբայել թէ կրէր զատագնապս և զարհաւիրս և զմղձուկս՝ զոր սովոր են կրել դատապարտեալքն 'ի տանջանարան մահու, և առաւել ևս քան զնոսա՝ վասն ժրագոյն իրազեկութեանն: Այլ 'ի վերնական մասին մտացն՝ քանի՞ մեծոգի քաջապընդութիւն: Ոչ ջանայ խուսել 'ի մահուանէ, այլ մանաւանդ ընդառաջել նմա յաղթողաբէս: Կամէր 'ի չքմեղս լինել. կարէր դանդատել ընդ անիրաւութիւնն. կարէր բողոք բառնալ. այլ ոչ ինչ յայսպիսեաց ասաց արար: Յորժամ երբեմն ընդդէմ դարձան նմա Հրեայքն քարաձգութեամբ, հարցանէր, Ընդէ՞ր քարկոծ առնէք զիս. իսկ այժմ ոչ հարցանէ թէ ընդէ՞ր 'ի խաչ հանիցեն, ոչ ինչ հակառակի, այլ լռէ. ոչ ընդ Պիղատոս զչարի և ոչ ընդ Հրեայսն, այլ և գթայ 'ի վերայ նոցա: Թէպէտ և անիրաւ էր վճիռն, յօժարութեամբ ընկալաւ և հաւանեցաւ զի կատարեսցի այն. քանզի գիտէր թէ ոչ առ մեղս իւր մեռանի, այլ առ մեղս այլոց:

Աւագիկ, հոգի իմ, տե՛ս, զիա՞րդ սքանչելապէս նշմարին 'ի Քրիստոս և՛ տառապելութիւն մարդկան և գերագոյն զօրութիւն Աստուծոյ: Աստուած է որ եկն 'ի փրկանաւորել նուաստութեամբ զմարդ հպարտացեալ. այլ տե՛ս որպիսի՞ տրամակայութեամբ. զի մի՛ հանդերձանք փրկագործութեանն՝ զփրկագործողին մեծվայելչութիւն անչքեսցեն: Կամք եղեն աստուածայնոյ իմաստութեանն՝ յԱստուածամարդս յայս տալ մեզ օրինակ հրահանգի ուղղութեան վարուց մերոց: Իսկ արդ 'ի խորհրդածել մերում՝ թէ քանի՛ հեզութեամբ, քանի՛ խոնարհու_

թեամբ և համբերութեամբ յանձն առնու ըղ-վճիռ մահուն՝ առ ազատել զմեզ 'ի դատաստանիցս յաւիտենականն մահուան, յօրինակէ աստի յո-րում ներգործէ զգերագոյն առաքինութիւնս առ հանդուրժել կորստեան կենաց իւրոց և սրտի, զի՞նչ ուսանիցիմք մեք: — Ա՛հ, Յիսուս իմ, եթէ ըստ դիպաց մեղս ինչ որ ինձ դիցէ կամ ստգիւտ, զայն դէպ՝ զոր քո ինքնին սահ-մանեալ է 'ի կրթել զիս 'ի խոնարհութիւն և 'ի քո նմանութիւն, առնում ես պատճառս բրդե-լոյ 'ի գոռոզութիւն, 'ի ցասումն և 'ի դայթա-կղութիւն, յարհամարհել զքեզ: Աղէ, հաճեա՛ց, Աստուած իմ, զօրացուցանել զիս հոգւով պե-տութեան քո, 'ի կամս հաստատունս նմանելոյ քեզ, և սիրելոյ զպատիւ քո քան զիմս, առա-ւել զքեզ հաճելոյ՝ քան զիմ զգայական ախոր-ժակս: Փառք ինձ եղիցին փառաւորել զքեզ, համբերելով պատահարաց՝ զոր սիրախնամ անս-չութիւն քո առաքեսցէ ինձ, ոչ այնքան առ 'ի պատուհասել զիս՝ որքան 'ի մեռելութիւն կըր-թել և 'ի փրկել:

Խիստ թուի բանդ՝ խոնարհութեամբ համ-բերել նախատանաց. այլ քաղցր և անոյշ եղիցի 'ի յիշել իմում զՅիսուս՝ որ յանձն առնու զհա-մարիլն չարագործ, և 'ի խաչ դատապարտիլ:

ՄՂԷ. Զամենայն որ ինչ գործի 'ի դատա-պարտութեան Յիսուսի՝ 'ի ձեռն Պիղատոսի և Հրէիցն ռանհարուաց արդարութեան, ճշմար-տութեան և անմեղութեան, 'ի դէպ է համա-րել արգասիս աստուածային տեսչութեան՝ 'ի լրումն փրկագործութեան աշխարհի: Հեթա-նոսքն և Հրեայքն դատապարտեն զնա 'ի մահ խաչի. այլ վճիռ մահուանն կնքեալ էր 'ի յաւի-

տենից յերկինս. ինքնին Հայրն յաւիտենական շարժեալ ողորմութեամբ՝ 'ի հաշտ առնել զարդարութիւն իւր՝ եւ զՈրդի իւր յաւար մահու. և ինքն Որդին հաւանեալ հաճեցաւ ընդ դատակնիքն երկնային. և ամենեքին լցեալ սիրով առ Հայրն և առ մեզ՝ եւ ինքնին զանձն 'ի մահ: — Եթէ կամք ինչ էին Յիսուսի՝ կարէր բազում օրինակաւ խափանել զամենեսին 'ի նիւթեղոյ նմա մահ. այլ առաւել հաճեցաւ անսալ սահմանելոցն, և առնել զանձն զոհ գթութեան և հնազանդութեան. և ընդ այս անկ է մեծապէս սքանչանալ և գոհաբանել: — Քանի՜ պարտական եմ ես, Հայր յաւիտենական, ողորմութեանց քոց. զի առ 'ի տալ կեանս ինձ անարգի միոջ մեղաւորի, դատապարտեցեր 'ի մահ զամենասուրբ Որդիդ: Քանի՜ պարտական եմ սիրոյ քում, Որդի յաւիտենական, որ այդքան յօժարութեամբ յանձն առնուս զվճիռ խաչելութեան՝ վասն իմ: Քանիօն պարտական եմ քեզ և վասն օրինակացդ, որովք ցուցանես թէ ո՛րպէս զիա՛րդ օրէն իցէ ինձ փրկել զանձն, մինչ հնազանդութեամբ քով դամադիւտ լինիս փրկութեան իմոյ: Այլ ես երբ սկսայց, Յիսուս իմ, ստուգապէս սիրել զքեզ, մնաւանդ նմանող լինելով քում հնազանդութեան. այդմ առաքինութեան մեծ ես պէտք են ինձ. քանզի թէպէտ և փափիցեմ հնազանդել 'ի հաճոյան ինձ, այլ յոր հակառակ թուին կարծեաց կամ բարուց իմոց կամ զգայականս ախորժակաց, որպիսի՜ չքմեղս հնարիմ առ 'ի հրաժարել. որպիսի՜ քրթմնջանս և հեստութիւնս առ 'ի չխոնարհեցուցանել զխստութիւն պարանոցի իմոյ: Ո՛վ ամենաքաղցր Յիսուս, յորժամ տեսանեմ զաստուածային գլուխ քո պատուադրութեամբ կորացեալ առ վճիռ Պիղա-

տոսի՝ անհաւատի առն և անխրատի, և յօժարա֊կամ հնազանդութեամբ յիշխանութեան նորին մեծարել զգերագոյն հեղինակութիւն Հօր քո, 'ի միտ առնում՝ թէ քանի՜ հպատակութեամբ արժան է ինձ հնազանդել առաջնորդաց իմոց, ոյք և իցեն, յերեսփոխան քո ունելով զնոսին հանապազ. այլ ընդ նմին 'ի միտ առնում զկա֊րօտութիւն իմ առ շնորհս քո՝ առ 'ի նուաճել զոգի իմ գոռոզ և ապստամբ: Զայս շնորհս հայ֊ցեմ 'ի քէն, Հայր յաւիտենական, վասն ար֊դեանց հնազանդութեան՝ որով Յիսուս Քրիս֊տոս անքաւապատիկ մեծարեաց զքեզ. շնորհս հնազանդելոյ և ուրանալոյ զկամս իմ, 'ի պա֊տիւ կամաց քոց և սիրոյ քում:

Քննեցից, թէ որո՞ց վերակացուաց կամ յո՞ր իրս առաւել դժուարիցիմ 'ի հնազանդել. և հաստատեցից 'ի մտի իմում զհնազանդելն, խորհելով՝ թէ ո՜ւմ հնազանդի Յիսուս և յորպի֊սի՜ իրս հնազանդի:

Յիսուս բառնայ յուս իւր զխաչն:

ՄՂԸ. Յետ ընթեռնլոյ զվճիռն՝ վաղվաղակի տան զՅիսուս 'ի ձեռս Հրէից, զի տարցեն 'ի խաչ հանել, երբ և որպէս կամիցին: Մատնի 'ի ձեռս նոցա ողորմուկն, որդարև ըստ բանից մարգարէիցն՝ որպէս գառն 'ի ժանիս կատա֊ղեալ առիւծու, որպէս հանգրուան մատնեալ 'ի վրէժխնդրութիւն անգութ թշնամւոյ յաղ֊թողի. կամէին իմն կենդանւոյն կլանել զնա, և առատանան արագարագ սպանանել զնա: Փութան երթան պատրաստել զխաչն. մինչդեռ

այլք թշնամանեն, հարկանեն և թքակոծեն զնա։ Եւ նա ընդունի հանդարտութեամբ զթշնամանսն, ինքնին կամաւորապէս թոյլ տուեալ ապիրատութեան թշնամեացն՝ առնել զինչ և կամիցին ընդ պատիւ իւր և ընդ անձն գլխովին։ Ի բաց բառնան այնուհետև զծիրանին արկեալ զնովաւ, բայց զպսակն փշեղէն ոչ վերացուցանեն, այլ թողուն զամենայն ժամանակ չարչարանացն, զի մի իւիք նուազեսցին ցաւքն։

Զի՞նչ ասիցես, հոգի իմ, տեսանելով զՅիսուս վերստին նշաւակ կարգեալ տարափահոս իմն լուտանաց և լկանաց. Հրեայքն որքան սաստկացեալ զցաւս և զվիշտս նորա տեսանեն՝ այնքան և ծաղր առնեն զնովաւ։ Իսկ նա զի՞նչ խորհիցի։ Իցէ՞ հնար խոկալ 'ի խորհուրդս յայսոսիկ անզեղջ և անխոնարհ սրտիւ։ Հաւա՛տք, հաւատոց պէտք են առ հաստատութեամբ ընդունել, եթէ Յիսուս Քրիստոս է Միածին Որդի Աստուծոյ, որ անչափս սիրեաց զիս և մատնեաց զանձն իւր 'ի ձեռս թշնամեացն, առ 'ի կրել վասն իմ ազգի ազգի չարչարանս։ Եւ զի՞նչ իցէ վասն իմ։ — Առ 'ի փրկել զիս։ Ո՛հ. չիցէ՞ արժան այսու հաւատով սքանչանալ ընդ սէրն, ընդ համբերութիւն, ընդ խոնարհութիւն, որովք Թագաւորն յայս վիճակ պայմանի եհաս վասն ստրկի միոյ։ Աստուա՛ծ ոմն վասն փրկութեան մարդոյ. Արարի՞չն վասն արարածոյն. Անմեղն վասն մեղուցելոյն փրկութեան։ — Ո՛վ Յիսուս ամենագորով, Յիսուս ամենակիր, Յիսուս ամենախոնարհ, քանի՛ պարտաւոր առնէ զիս սէր քո. քանի՛ պարտաւորէ զիս օրինակ քո։ Փոխանակ սիրոյդ սիրեմ զքեզ, սիրել կամիմ և սիրեցից առաւել քան զառաւել։ Փոխանակ համբերութեանդ զի ոչ խնդրես քաջալերս յերթալդ 'ի մահ, այլ և կամիս երթալ փշապսակ, գնեմ

'ի մտի մեռուցանել զվաժարութիւն իմ 'ի հեշտութիւն կենաց, և զդժկամակութիւնս 'ի վըշտակրել: Իսկ փոխանակ խոնարհութեանդ՝ առաջադրեմ նմանել նմին՝ համբերելով չարախօսութեանց զինէն, քանզի դոքիմբք արժանի առնես զիս շնորհաց ժուժկալութեան:

Մտախոհ եղեց յառաջադրութիւնքս. և առ 'ի գործնօրէն կատարել՝ անյոյս եղեց յանձնէ, յԱստուած միայն վստահացեալ, և 'ի բարեխօսութիւն երից երանեալ Կուսին:

ՄՂԹ. Հոլանեալ 'ի նախատական ծիրանւոյն զոր արկեալն էր՝ մերկ մնայ Յիսուս. ամօթագին յոյժ տանջանք են նմա մերկութիւնն, զի կայ ակն յանդիման անթիւ բազմութեան մարդկութեան խուռնելոյ անդր 'ի տեսիլ և յայպանս նմա, որպէս անզգամի միոյ դատապարտելոյ 'ի կախաղան խաչի: Հրաման տան նմա զգենուլ զիւր պատմուճանն, որպէս զի 'ի փողոցն ընդ որ տանիցին զնա 'ի մահ՝ քաջ ծանիցի յամենեցուն: Եւ չիցէ՞ նա յամօթազգած յայս վիշտս իւր՝ արժանի ողորմագին կարեկցութեան մերում:

Նկատեա՛, հոգի իմ, զԱյրդ զայդ, որպէս մարդ՝ ազնուագոյն, անմեղագոյն և սիրելագոյն քան զամենայն մարդիկ, որ և փոքր մի յառաջ գեղեցկագոյն և շնորհազարդ էր քան զբնաւս. իսկ զիա՛րդ այժմիկ տեսեալ և այլափոխեալ 'ի մարմնի երկնթացելոյ թխացելոյ 'ի բազմութենէ վիրացն և 'ի մածուածոյ ճապաղեաց արեանն: Որպիսի՞ վիշտ այդպիսւոյ անձին ամօթխածի և մեծայարգի՝ 'ի ծաղկի երիտասարդութեանն կալ մերկանդամ 'ի հրապարակի առներև լրբենի ամբոխին՝ դատակնքով չարագործի վատթարագունի քան զաւազակ հուզկահար: — Խորամուխ լիցուք ապա 'ի խոկմունս՝ թէ ո՞ իցէ

տեղդ՝ որ Աստուած է Ճշմարիտ, անբաւ մեծվայելչութեամբ, յաւիտենական և անհասանելի: Ո՛վ հրաշալի անարգամեծարութեան Աստուծոյ, որ յանձն էառ մինչև 'ի յետին աստիճան անարգութեան իջանել, մերձ յոչինչ անդր, որպէս զեղեռնագործ արժանի պատուհասի չարեաց իւրոց: Այլ հի՞մ սակս յանձն էառ կրել զայսքան ամօթահար մերկութիւն: — Ի մի՛տ առնում, ո՛վ Յիսուս իմ, պայծառութիւն յաւիտենական լուսոյ, զնրբութիւնս սիրոյ քոյ: Կամեցար ինձ միանգամ մերկ նկատել զքեզ, զի տեսից 'ի բովանդակ յամենասուրբ մարմնի քում՝ որչափ ինչ կրեցեր վասն իմ. որչափ ինչ կրեցեր յամենևին անմեղ իրանդ՝ առ 'ի փրկել զախտալից մարմինս իմ: Այո՛, տեսանեմ, փրկութիւն իմ, ողորմութիւն իմ, ողջութիւն իմ, և գովեմ և օրհնեմ զքեզ. և զի ոչ գիտեմ ըստ արժան բաւականին և ըստ դէպ ժամու օրհնել և գովել զքեզ, աղաչեմ զքե՛զ՝ արդեամբք քովք լնուլ զթերութիւն գաղջութեան իմոյ: Բորբոքեա զսիրտ իմ՝ վառել այդքան սիրով զիս սիրողին. տո՛ւր ինձ ոգի հիանալոյ և նմանելոյ յաւէտ խոնարհութեանդ այդմիկ՝ որ 'ի զարմանս կրթէ զհրեշտակս և յահ երկիւղի զդաս դիւաց: Տեսանեմ, Փրկիչ իմ, որչափ ինչ առսէր իմ կրեցեր. այս է, և այս եղիցի միակ առիթ ուժգնակի թախանձանաց իմոց. մի 'ի դերև ելցեն յիս առատագեղ արդասիք փրկագործութեանդ:

Յիշեցից զյողդողդութիւն առաջադրութեանց իմոց. զի բազումս առաջադրեմ օր աւուր, և գո՛գ զմի ոչ կատարեմ: Խոնարհեցայց, և ժտեցից զպէտս կարօտութեան իմոյ:

Յ. Զգենու ամենօրհնեալն Յիսուս զպատմուճան իւր. իսկ Հրէիցն Թափեալ'ի նա զամենայն լուտանս այպանոց, հանեն զնա արտաքս'ի պողոտայն արքունի, ուր պատրաստեալ է խաչն։ Եթէ այլոց մահապարտից' առ գթութեան ինչ Թաքուցանեն' որքան հնար է' զգործիս տանջանարանացն, զի մի տեսեալ առաւել ևս մորմոքեսցին տրտմութեամբ, իսկ Յիսուսի անգթօրէն յանդիման առնեն զխաչն' յոր բևեռելոցն է, որպէս զի 'ի գժնդակ տեսլենէ անտի յառաջ քան զխաչել մարմնոյն' հոգին խաչեսցի։ Ա՛հ. եթէ մահուչափ տխրեցաւ նա 'ի պարտիզին, 'ի միտս ևեթ կերպարանելով զխաչն, զի՞նչ արասցէ արդ այժմիկ առաջի աչաց իւր ունելով զայն։ Այլ քանզի սոյն իսկ խաչս' նմա հանապազ կէտ նպատակի էր ջերմաջերմն ըղձիցն, որպէս զի Թալանայր անձկութեամբ ժամու մահուանն վասն փրկութեան աշխարհի, որպիսի՞ մեծ խնդութիւն չիցէ դարձեալ'ի դէպ համարել նմա զտեսիլ խաչին, կազմեցելոյ այժմիկ յետ երեսուն և երից ամաց փափագանացն։ — Այլ դու զմտաւ ած, հոգի իմ, զանհնարին զզուանս և զանհնարին սէր Յիսուսի առ խաչն։ Յազգմանէ բնութեան զզուի և զանգիտէ զզայութիւնն. Ներգործութեամբ սիրոյ քաջալերս զգենու և հրճուի հոգին։ Իսկ հնար ինչ իցէ սիրել զահարկուն, կամ խաչի' որ դժպհին է' ուրախարար լինել։ — Աւադիկ սատուգապէս տեսանեմք զայդ 'ի Քրիստոս. սիրէ ըղխաչն, Թէպէտ և ցաւագին է նմա, իբրու զի փառք են Հօրն երկնաւորի և յօգուտ մեզ' իբրև գործարան փրկութեան մերոյ և որպէս բանալի անհուն գանձու ամենայն բարեաց։ Սիրէ զխաչն' քանզի սիրէ զմեզ։ Եւ չիցէ՞ աներկբայ եթէ և մեզ սիրելի է խաչն' եթէ սիրեմք զՅիսուս։

Ո՛վ ամենասիրելի Յիսուս, արժանաւոր տեսարան կարեկցութեան և նմանութեան վասն իմ. ցաւակից լինիմ քեզ 'ի դառնագին աղէտքդ. այլ զիա՞րդ եղէց նմանող զուարթամտութեանդ: Ծանր է ինձ յոյժ կամաւորապէս վշտակրելն. և ընդ նախատեսանելս զի գալոց է ինձ խաչ, փոխանակ առաքինօրէն պատրաստելոյ ընդառաջել նմին, խոկամ կրթիմ 'ի հնարս 'ի բաց փախչելոյ: Ո՛հ, Աստուած իմ, եթէ էր յիս դոյզն սէր առ քեզ, որպէս է քո սէր անբաւ առ իս, քանի՜ քաղցր և անոյշ լինէր ինձ խաչն: Խորշիմ 'ի խաչէ, քանզի սէր մարմնոյ և աշխարհի բունացեալ է յիս. այլ դու, Տէր, տո՛ւր ինձ սիրել զքեզ. և սիրեցից և զխաչ, մինչև համարիլ զայն 'ի վայելս ինձ և 'ի փառս:

Թախանձանօք խնդրեցից, զսէրն Աստուծոյ. քանզի պատճառք սիրելոյ իմոյ զզգայականս և խորշելոյ 'ի վշտակրութենէ՝ կարծիք իմ են թէ սիրեցի զՅիսուս, մինչ ոչն սիրեմ զնա:

ՅԱ. Ընդգրկէ Յիսուս զխաչն՝ որպէս պարգև Հօրն յաւիտենականի. համբուրէ և ողջագուրէ, ողջունելով որպէս զսիրելի իւր և զհաճելի. քանզի նովաւ լինելի հաշտութիւն ամենայն մեղաց մերոց՝ զորս յանձն իւր էառ իբրև զիւր ինչ մեղս: Եւ անդանդաղ բառնայ ինքնին յուս իւր՝ դէմ դնել 'ի Գողգոթա: Մի՛տ դիր խորհրդոյն. 'ի պահու անդ հպելոյ Յիսուսի մարդկութեամբն աստուածացելով 'ի խաչն, անդէն հաղորդեցաւ 'ի նմա այնու հպմամբ՝ զօրութիւն ինչ աստուածային. իսկ և իսկ արդոյ եղև երկրի և երկնից, և ահարկու զօրութեանց դժոխոց. ցորքան 'ի ձեռս դահճացն էր խաչն՝ հոյլք դիւաց թշնամեաց փրկութեան մերոյ դարանեալ կային 'ի նմա իսկ. յայն ինչ բառնալ զայն

Յիսուսի՝ պակուցեալ ահիւ փախստական եղեն խորասուզք յանդունդս. յառաջ քան զընաւս նոքա խոնարհեցան 'ի խաչէն՝ որք նախ քան զընաւս հպարտացեալք էին ընդդէմ Աստուծոյ: — Զայս օրինակ խորհրդազգած լեալ մատեցուք, հոգի իմ, երկիր պագանել և պաշտել զԽաչն սուրբ. Ճանաչելով 'ի նմին հանդերձեալ զդեղ դարմանոյ ամենայն չարեաց մերոց, և զհայթայթանս ամենայն բարւոյ մերոյ հոգևորականի, մարմնականի և յաւիտենականի: Յարգեսցուք, պաշտեսցուք և սիրեսցուք զԽաչն Քրիստոսի. և յիշելով զի երևեսցի նա յաւուրն դատաստանի՝ յուրախութիւն Ընտրելոցն և յերկիւղ մերժեցելոցն, հայեսցուք 'ի նա ահիւ, և հայցեսցուք այժմէն 'ի ձեռն նորա ողորմութիւն, առ 'ի շահելոյ զօգուտն՝ զոր նովաւ կրեաց Յիսուս. զի մի՛ յայնմ աւուր զայրասցի 'ի վերայ մեր արդարութիւնն:

Ո՛վ ամենասուրբ Խաչ, նուիրագործեալ 'ի համբուրից և 'ի գգուանաց մարմնացելոյ Որդւոյ Աստուծոյ, պատրաստեալ սեղան ամենապատուական պատարագին որ մատչելոց է առ մեծվայելչութիւնն Աստուծոյ 'ի փրկագործութիւն աշխարհի. խոնարհեալ երկիր պագանեմ և ողջունեմ զքեզ, և աղաչեմ լինել ինձ այժմիկ տեղի ապաւինի և միջնորդ գթութեան վասն իմ, որպէս զի արժանի եղէց շնորհացն՝ զոր դառնակսկիծ չարչարանօքն հանդերձեաց վասն իմ Յիսուս: Ոչ որպէս զԱդամն առնեմ ես, որ յետ մեղանացն խնդրէր փախչել յերեսաց Աստուծոյ, թագուցանելով զանձն ընդ ծառով երկրաւոր դրախտին. մեղուցեալ եմ և ես, այլ ոչ փախչիմ. նա մանաւանդ 'ի հովանի քո ապաւինիմ մեղուցեալ անձամբս, ո՛վ ծառ կենաց. քանզի աստանօր գտանեմ զԱստուածն

իմ որ սիրէն զիս և կոչէ, ներումն թողութեան շնորհելով։ Ո՛վ պատուական և սրբազան Խաչ, վասն սիրոյն որով ընդգրկէ զքեզ Յիսուս, միջնորդեա շնորհել ինձ ոգի ուղիղ ապաշխարութեան, որով ընդունակ եղէց քաւութեան մեղաց իմոց։

Սիրեցից ջերմն եռանդեամբ՝ զնշան խաչին վասն կերպարանելոյն 'ի նմա. և հաւատովք կնքեցից զիս նովին ստէպ, առ 'ի խնդրել յամենայն դէպս՝ շնորհս և օրհնութիւնս, և յաւէտ ընդդէմ փորձութեանց։

Խաչաբարձ երթն Յիսուսի 'ի Գողգոթա :

ՅԲ. Զանգիտեալ Հրէիցն թէ ջրեսցէ Պիղատոս զվճիռն՝ շտապեն սպանանել զՅիսուս։ Այլ ինքն Յիսուս վասն մեծի սիրոյն փրկելոյ զմեզ մահուամբ իւրով, թոյլ տայ նոցա փութացուցանել։ Վասն այնորիկ և անյապաղ ածեն զնա արտաքս, և զերկոսին աւազակն դատապարտեալս՝ պատուհասակից առնել ընդ նմին, որպէս զի ընդ չարագործաց դասեալ՝ չարագործ և ինքն երևեսցի։ Զայս յառաջագոյն ասացեալ էր և Քրիստոսի, և այսպէս 'ի գլուխ ելանէր մարգարէութիւնն։

Փողք հարկանին, հնչէ բարբառ մեծ աղաղակի խնդութեան՝ իբրև յաւուր տօնի. և յուղին անկանին 'ի Գողգոթա կոյս։ Աւազակ մի յառաջոյ երթայ, և աւազակ մի յետուստ, և 'ի միջի Յիսուս. իւրաքանչիւր բարձեալ զխաչ իւր։ Յիսուս թէպէտ և ամենևիմբ տխեղծ և աղտեղեալ՝ որոշի տակաւին սովորական պատմուճանաւն,

զոր վերստին արկին զնովաւ, որպէս զի ամենեցուն նշաւակ կայցէ:

Տե՛ս արդ, հոգի իմ, զՏէրն քո, որպէս Աբէլ միւս հանեալ 'ի բացավայր, մատնիլ 'ի մահ 'ի Կայինէ. և որպէս միւս ոմն Իսահակ 'ի սպանդ 'ի լերինն. և զմտաւ ած զծանրութիւն անարգանացն և զամօթոյն՝ որ յընկերութեան անօրէն աւազակացն: Ո՛վ, քանի՜ այլազգ է ընկերակցութիւնս այս յայնմանէն որ հինգ աւուրբք յառաջ՝ երթայր և սպասուէր զնա ոստովք ձիթենեաց. յայնժամ Թագաւոր անուանիւր, այժմ գող և աւազակ:

Եւ զո՞ր հանից ինձ օգուտ՝ տեսանելով զքեզ, Տէր Յիսուս, 'ի մէջ երկոցուն աւազակացն: Յանցաւորք են դոքա, և ոչ ինչ է փոյթ նոցա զյանցանացն. այլ խիթան միայն ընդ պատիժ պատուհասին: Իսկ դու անմեղդ՝ սիրես մեծաւ սիրով զպատուհասն՝ առ մեծի ատելութեան յանցանաց. և վասն յանցանաց որ ոչ են քո՛ ընդգրկես զխաչն. նոքա բռնի տանին, դու յօժար: Իսկ ես ո՞մ իցեմ նմանող, քե՞զ եթէ աւազակացն: — Ընդ ամենայն պատահար որ թէ հանդիպի ինձ՝ զչարիմ ես. իսկ ընդ զիղջ մեղաց իմոց՝ հոգամ իսկ ոչ: Սուղ ինչ աշխատութիւն դառնացուցանէ և վհատեցուցանէ զիս. իսկ առ այնքան թշնամանան զոր եդի քեզ, Աստուած իմ, ոչ ինչ խռովի ոչ ինչ ցաւէ սիրտս իմ: Եւ այս զի՞նչ իցէ, բայց եթէ աւազակացն նմանել և ոչ քեզ:

Ո՛վ բարեգութ Յիսուս, նորոգեա զհոգիս իմ, զի մի՛ ընդ խաչ՝ այլ ընդ մեղս ցաւեցայց: Տո՛ւր ինձ ատելութիւն ճշմարիտ առ մեղս, և սէր առոյգ առ խաչ. որպէս զի 'ի քաւութիւն մեղանացս՝ կրեցից յօժարութեամբ զխաչն:

Ոչ պակասեն խաչք 'ի կեանս յայս. բայց մի

կրեցից՝ որպէս աւազակքն՝ առ հարկի և յանօգուտ. այլ ըստ օրինակին Յիսուսի կրեցից առ սէրն Աստուծոյ։

ՅԳ. Արժան է քննել, թէ զիա՞րդ արդեօք յուղւոջ աստ որ դէպ 'ի Գողգոթա՝ գնայցէ Յիսուս, կամ որպէս զիա՞րդ Հրեայքն։ Յիսուս վաստակեալ և լքեալ 'ի բազում հարուածոցն և 'ի կոչկոճանաց և յայնքան արենէն հեղլոյ, ջախջախեալ թիկամբք 'ի ծաղկանաց անտի, և ջղօք չարաչար տանջելօք, հազիւ բաւելով կալ յոտին, բուռն առնէ անձին տանել զփայտ պատուհասին։ Այլ քանզի 'ի բաղխել խաչին ընդ պսակն փշեղէն ածէ նմա անհնարին ցաւս մինչև 'ի նուաղումն. քանզի ոչ ևս զօրելով կրել՝ գլորեալ անկանի ընդ բեռամբն։ Ո՜վ, որպիսի համբերատար ժուժկալութիւն։ Եւ ո՞ է որ կարեկից լինիցի նմա։ Փոխանակ օգնութեան ընդունի 'ի դահճացն բռնցի և աքացի հարուածս և թշնամանս։ Ոմանք չուանօքն որով կապեցին զնա ընդ մէջս և ընդ պարանոցն՝ յառաջ ձգեն զնա. այլք 'ի թիկանց մղեն բրօք և աշտէիւք, և կէսք 'ի յետուստ կռուփս հանեալ նմա՝ երգիծանեն և հայհոյեն լուտանօք։ Ո՜վ տեսարան անլուր և անօրինակ։ Ծիծաղին և ցնծան ամբարիշտքն տեսանելով զնա յայպն և 'ի կատակ մատնեալ սինլքոր ռամկին, և փոխանակ մականի զկոճղ պատուհասին կրելով. և այլն. Թո՞ղ գիտասցէ արդ թագաւոր լինել։

Իսկ մեք հաւատոյ և գթութեան աչօք սքանչասցուք ընդ խորհուրդն գերապանծ, եթէ որպէս փառք են կրօնից խաչն, որ ցայն վայր համարեալ էր ամօթ և անարգութիւն։ Արանչացուք մանաւանդ, ո՜վ հոգի իմ, ընդ սէրն Յիսուսի՝ որ փայլէ ընդ խաչիւն, 'ի կրելն զչարչարանս

և զնախատինս՝ 'ի յաւիտենական փրկութիւն մեր։ Զհետ երթիցուք նորա հիացմամբ, և առաւել՝ գորովանօք և կարեկցութեամբ։ Զի՞ որ որդի է որոյ լուեալ՝ թէ դահիճք 'ի կախաղան տանին զհայր քո, ո՞չ անդէն և անդ 'ի լաց 'ի կոծ 'ի հառաչանս համակեսցի։ — Ո՛վ Յիսուս, ամենեւին սիրող և ամենեւին սիրելի հայր, հայր իմ ճշմարիտ և առաւել քան զհայր, յորմէ ունիմ զգոյութիւն, զշարժումն և զկեանս։ Թոյլ ինձ արդարև, զի եթէ էր իմ գտեալ յայնժամ յԵրուսաղէմ՝ ոչ հանդուրժէի տեսանել անթաց աչօք զայսքան տառապանս և անարգանս քո, առ մարդկային իսկ գթոյ։ Իցի՜ւ թէ էր իմ պատահեալ տեսութեան չարչարանացդ քոց։ — Եւ զիա՞րդ այժմիկ լուսով հաւատոց զնոյն տեսեալ՝ այսպէս ապառումն սրտիւ և ցամաք աչօք նկատեմ։ Ո՛վ քաղցրագութ Փրկիչ, տո՛ւր ինձ ճաշակել 'ի ցաւոց քոց, 'ի սիրոյ քումէ և 'ի համբերութենէ, որպէս զի շարժեցայց 'ի գութ, և գթալով՝ սիրեցից, և 'ի սիրոյ անտի յորդորեցայց լինել քեզ նմանող։ Դու ինքն ազդես յիս զայս հայցուած. հաճեա՛ց, աղէ, ընդունել և զհայցուածս իմ։

Գուն եղից առնել ինչ գործ խոնարհութեան, համբերութեան և սիրոյ, զի այսորիւք՝ Յիսուս ընդ խաչիւն՝ խրատէ զիս նմանակից լինել ինքեան։

ՅԴ. Երկար և ստուար և ծանրաբեռն է խաչն զոր տանի Յիսուս, անճառելի հեզութեամբ և համբերութեամբ։ Այլ մեզ անկ է խորամուխ լինել 'ի խորհուրդն։ Ի ստանձնել զխաչն՝ եբարձ նա 'ի վերայ իւր զամենայն մեղս մեր. այս աներկբայ մասն է հաւատոց. և ասելն զմեղս մեր՝ յայտ առնէ զամենայն մեղս աշխարհի. արդ կրելովն նո-

րա 'ի խաչի զչարաչարչարական մեռն, ո՜հ, քանի՜ առաւել հեծէ ընդ ծանրութեամբ սոցին քան ընդ խաչին: Ապաքէն քանզի ոչ մարդ ոք և ոչ հրեշտակ բաւէր բառնալ զայնքան ծանրութիւն, կամաւորապէս ինքնամատոյց եղև նա 'ի բառնալ և տանել զայն. սակայն և այնպէս՝ քանի՜ բեռն և տագնապ է նորա ընդ այնքանեաւ ճնշեալ կուտակութեամբ ազգի ազգի ապիրատութեանց: Զայ սմանէ առաւելապէս գանգատի բերանով մարգարէին, եթէ մեղաւորք կազմեցին եգին յուս իւր գործի տառապակարկատ, զի «Ընդ երկար արարին զանօրէնութիւնս իւրեանց»: (Սաղմ. ճԻԸ. 3):

Այլ դու զմտաւ ած, հոգի իմ, ո՞րքան բեռն մեղօք քովք յաւելեր 'ի խաչն Քրիստոսի. արդարև յոյժ և յոյժ ծանր էր այն մեղօք համօրէն ազգի մարդկան, այլ նուազէր արդեօք 'ի ծանրութենէն՝ եթէ չէր և քոց մեղաց բարդեալ 'ի նոսին: Խորհեա՛ց քաջ, քանիպատի՛կ եղեն մեղք քո համարով, տեսակաւ և հանգամանօք, և զոր արարեր և զոր ետուրդ առնել այլոց: Ո՛վ ահագին իրացս. եթէ չէին յաշխարհի այլ մեղք գործեալք բաց 'ի քոյոցդ, քանի՜ ծանրանայր Յիսուսի խաչն 'ի քոյոց այտի մեղանաց: Քանի՜ խիստ և կարծր ես, հոգի իմ, եթէ ոչ 'ի զեղջ և յապաշաւ լուծցէ զքեզ այս խորհրդածութիւն:

Ո՛վ ամենատար Յիսուս, այո՛ ցաւակից լինիմ անձկաբեկ տառապանացդ զոր կրես, ոչ այնքան ընդ փայտիւ խաչին, որքան ընդ խէթիւ մեղաց իմոց: Դոյզն էր գործ անօրէնութեան Հրէիցն 'ի չարչարանս քո՝ առ իմովքն. ես եմ, ես որ չարութեամբ իմով առաւել ճնշեմ և տաժանեցուցանեմ զքեզ և տամ հեծել և հառաչել: Եւ ո՞ տացէ աչաց իմոց արտասուս լալոյ զտիւ և զգիշեր զչարիսն իմ: Եթէ միոյ դեհենի

արժանի եղեն Հրեայքն՝ ես հազարաց եմ պատուհան: Այլ դու, Տէր, մի ընդ մեղս իմ հայիր, այլ յիս, որ թէպէտ տրուպ եմ ամենեցուն, այլ քո ստեղծուած եմ և քո փրկած: Գթա յիս, և կրթեա 'ի վերայ իմ զողորմութիւն քո և մի ընդ-վրէժս. և ես մի ևս մեղայց քեզ: Եդի 'ի սրտի կատարել զպատուիրանս քո սուրբ, և խոստանամ պահպանել զնոսին անդրժելի: Այլ զի՞նչ սակս խոստմունս և առաջադրութիւնս անդըրժելիս. աւա՜ղ կուրութեանս և տառապելութեանս: Ցի՞նչ կարիցեմ իմովանն վստահանալ 'ի մարդկութիւնս իմ, որ որպէս զխոտն վայրի է, որ այն ինչ ծաղկեալ և արագարագ խամրի, և որպէս ստուեր խուսափուկ առաջի ճառագայթից արեգական: Պարտ է ինձ ասել, թէ մի ևս մեղայց քեզ, 'ի ձեռն օգնականութեան քո, զոր աղաչեմ վասն արդեանց չարչարանաց քոց՝ մի զլանալ յինէն:

Խելամուտ եղէց թէ քանի՜ մեծ և ահագին չարիք իցեն մեղք, զի բարձեալ 'ի թիկունս մարդացելոյ Որդւոյն Աստուծոյ՝ ճնշեն և տառապեցուցանեն զնա: Ցեղյեղեցից ստէպ աղերս զղջութեան:

ՅԵ. Ի հռչակել համբաւոյ դատապարտութեան Յիսուսի՝ խռնին ամբոխք փողոցք՝ ընդ որս անցանելոցն է: Ամենեքին գարշին 'ի նմանէ և անգոսնեն. և ոչ ոք է որ հասու լինի խորհըրդոյն: Նաև 'ի նոցունց անտի որք գովէին զմեծահրաշ գործս նորա, են որք խնդալով ասեն, Լաւ է զի պատուհասեսցի ժպիրհն. և են որք զարմացեալ ասեն. Ո՞ կարծէր թէ այնպիսի սուրբ երևեալն՝ այսքան ամպարիշտ ոք էր. և այլք թերևս երթան ընդվայրաքննին ակն ունելով հրաշս ինչ գործեալ 'ի նմանէ տեսանել:

Ո՛հ, որպիսի՜ ամօթ է ինձ փոփոխութիւն այս_
օրինակ. սակաւիկ մի յառաջ պատուեալ և բա_
րեբանեալ՝ 'ի տղայոց անգամ, այժմ երգիծեալ
և անիծեալ յամենեցուն՝ վասն անարգանաց և
անիծից խաչին՝ զոր կրէ:

Մնա, հոգի իմ, յարգական խորհրդածու_
թեամբ 'ի ներքինն Յիսուսի, և տե՛ս, զի՞րդ որ
աղբիւրն է ամենայն օրհնութեանց՝ յանձն առ_
նու յանէծս լինել: Քանի՜ սիրով յաւիտենա_
կան Հօրն ցայգ վայր նախատանաց՝ խոնարհի 'ի
փառս նորա. և որքան առ մեզ սիրով՝ ընդունի
զայնքան անէծս, առ 'ի փրկելոյ զմեզ 'ի ժա_
մանակեայ և 'ի մշտնջենաւոր անիծից, ընդ ո_
րով անկեալ էաք մեղօք մերովք: Ի փրկութիւն
ազգի մարդկան միայն կառուցեալ զուշ մը_
տացն՝ չառնէ փոյթ մարդկօրէն ակնածութեամբ
զոր ինչ և ասիցեն զինքենէ. ոչ ինչ հոգայ զա_
մօթոյ նախատանաց. այլ ուրախութեամբ ըս_
տանձնեալ զխաչն՝ երթայ: Ո՛վ, որպիսի՜ խնդու_
թիւն է 'ի սրտի նորա: Եւ այս են զարմանալի
անտեսութիւնք Աստուծոյ. զի ամենայն վիշտ
յաւելու ուրախութիւն առ սէր նորա, այլ և
համօրէն խնդութեամբն ոչ ինչ պակասէ 'ի ցա_
ւոց զգայութեանցն: — Ցնորին միտք իմ 'ի
խորս խորհրդոց քոց, ո՛վ Փրկիչ. և ոչ լինիմ
ուշ 'ի կուրծս՝ առ 'ի նմանութիւն քեզ կրթիլ:
Որպիսի՜ դաս պատշաճաւոր առ իս: Դու ոչ ա_
մաչես հրապարականախատ լինել փշեղէն պսա_
կաւ 'ի գլուխդ և խաչիւ 'ի յուս, որպէս չարա_
գործ 'ի միջի երկուց աւազակաց, քանզի միայն
զհնազանդելն առ երկնաւոր Հայրդ խորհիս՝ 'ի
փրկութիւն իմ: Իսկ ես հեռանիցե՞մ քումդ օրի_
նակի: Բազում անգամ ամաչեմ հնազանդել
պատուիրանաց քոց կամ խրատուց. նուաստա_
նալ համարիմ զհամբերութիւն, զպարկեշտու_

թիւն և զխոնարհութիւն. և ոչ միոյ նախատանաց հանդուրժեմ առ սէր քո, և առ դոյզն ինչ պատկառանաց 'ի մարդկանէ' դեդևեալ գըթեմ: Հեղգ եմ և պղերգ և վատասիրտ: Ո՛վ Յիսուս, հզօրիչ քաղցրութեամբ քո զօրացո զիս, զի մի՛ երբեք ամաչեցից կրել զխաչ քրիստոնէական պատուիրանապահութեան: Խաչ իցէ ինձ առնելն զպարտս իմ. և կամիմ առնել մտադիւր: Խաչ իցէ ինձ կրելն զոր կամիս թէ կրեցից, և կրեցից յօժարութեամբ. այլ միայն սէր քո քաղցրացուսցէ զառնելն իմ և զկրել:

Փնտրեցից թէ զի՞նչ իցէ որ ծանր թուի ինձ 'ի հնազանդութեան կամացն Աստուծոյ. և յո՞ր առիթս առաւել ներգործեն յիս ակնառութիւնք մարդկայինք. և առանձինն խնամով դուն գործեցից ուղղել զիս:

69. Մատիցուք պատկառանօք առ Յիսուս և հարցցուք. Ո՞ւր երթաս, Տէր, և առ ի՞նչ խաչիւդ այդուիկ: — Ասէ. Հնազանդիմ ես, և երթամ կանգնել զծառս զայս փոխանակ ծառոյն' որով Ադամ ստունգանեալ մեղաւ: Ո՛վ սէր, ո՛վ իմաստութիւն արդարև արժանաւոր Աստուծոյ: Ադամ ճաշակեաց 'ի պտղոյ ծառոյն այնորիկ' որ եղև մեզ փայտ մահու, իսկ Աստուած գթահայեաց աչօք ընտրեաց զծառ խաչին, զի լինիցի մեզ 'ի փայտ կենաց: Ծառով միով կործանեաց սատանայ զաշխարհ. և այժմ ծառով միով վերականգնէ զնա Յիսուս. գնոյ հատուցանել 'ի վերայ փայտին զպարտսն որ 'ի ձեռն փայտի միոյ գործեալ էր. և զեղ դարմանոյ կազմէ 'ի նմին 'ի նիւթոյ' յորմէ թոյն մահաբեր ելեալ էր. նովին զինու յաղթէ դժոխային թըշնամւոյն' որով յաղթողեալ էր չարասէրն:

Տե՛ս, հոգի իմ, և սքանչացիր ընդ սէրն Յիսու-

սի. զի մի՛չ ձաղկանքն և փուշքն բաւականք էին 'ի լինելի փրկագործութիւն, նա և զխաչն կամեցաւ վերադրել: Տէ՛ս և սքանչացի՛ր ընդ աստուածային նորա իմաստութիւնն. որ զխաչն՝ զանարգագոյնն յաշխարհի իւր՝ առնու գործի յաւէտահրաշից իւրոց սքանչելեաց, այն ինքն է փրկութիւն մեր յաւիտենական: Տէ՛ս, որպէս զաչս ընդ երկինս առ Հայր ամբարձեալ՝ խոստովանի զխորհուրդս խաչին ծածկեալս լինել յամբարտաւանից և յայտնեալս միայն խոնարհաց: Արդարև 'ի խաչի եդեալ կան խորհուրդք Ճըշմարտութեան, սրբութեան և ամենայն բարեբաստութեան մերոյ. այլ ոչ ոք առնու զայն 'ի միտ՝ բայց որ խոնարհն է: Իսկ ինձ դէթ այսմ արժան էր աստանօր խելամուտ լինել, զի եթէ 'ի չարչարանաց ասախ Յիսուսի սակաւ ինչ կամ ոչ ինչ իմանամ՝ այդմ պատճառք հպարտութիւն իմ է: Իմանամ փոքր ինչ զարտաքին չարչարանացն՝ որ ինչ առաւել զգալին է մտացս երևակայութեան. այլ 'ի զօրութենէ անտի չարչարանացն ընաւ ինչ չառնում 'ի միտ, զի այդ է ծածկեալն յամբարտաւանից:

Ո՜վ Յիսուս իմ, որ լուսաւորեցեր երբեմն զկոյրն՝ կաւ արկեալ յաչս նորա, լուսաւորեա այդու օրինակաւ և զիս, խոնարհեցուցանելով զիս ծանօթութեամբ թշուառութեանս իմոյ: Ի կուրութեանս իմում ողբամ արդ զչարութիւնս իմ. և մինչդեռ զմտաւ ածեմ, թէ որքան քոյովանն աշխատ լինիս դու 'ի գլուխ հանել զփրկութիւն իմ, և որքան իմովանն աշխատիմ ես 'ի դերև հանել զգործդ, յապուշ կրթիմ և սառեմ ընդ միտս իմ. Զի՞նչ իցէ այս, զի փոխանակ գործակից լինելոյ արդեանց չարչարանաց քոց, նմանութեամբ քոյոց առաքինութեանց, անպիտանս ինձ առնեմ զնոսին՝ իմովս չարաչար

կենցաղավարութեամբ։ Ուր ոչն չինիցէ և միւսն քակեսցէ՝ զի՞նչ լինի շինածն այն։ Յիսուս իմ, Աստուած իմ, արդե՛լ, մի Թողուր ինձ այսպէս հակառակագործ լինել։ Հայցեմ ՚ի քէն զխոնարհութիւն՝ որ առաջին պտուղ է խաչիդ. եթէ զայդ ստացայց՝ ապա ամենայն յաջողեալ է ինձ։

Եթէ ոչ ինչ օգտիցիմ ՚ի խորհրդածութեանց աստի, գէթ զայս ծանեայց՝ զի առ հպարտութեան իմոյ ոչ ինչ ուստեք օգտիմ. ատեցից զամբարտաւանութիւն, ատելով ընդ միտս. Որպիսի՛ լոյս, որպիսի՛ եռանդն ընդունէի եթէ խոնարհ լեալ էի։

ՅԷ. Մի ՚ի դառնակսկիծ ցաւոց զոր կրեաց Յիսուս յերթալն ՚ի Գողգոթա՝ ՚ի դէպ է կարծել եթէ ՚ի հանդիպման անդ ամենասրբոյ Մօր իւրոյ եղև։ Ձգեալ ՚ի սիրոյ և ՚ի ցաւոց, ոչինչ ակն ածելով ոչ յամբոխէ խուժանին և ոչ ՚ի զինուորական խմբէն, ելեալ արտաքոյ քաղաքին, սպասէ սա Որդւոյ իւրում, որում անմարթ է չհանդիպել նմա։ Լսէ ՚ի մօտուստ զհայհոյանսն և զկռուփս հարուածոցն՝ զոր տանէին առ ՚ի Ճեպել յուղւոյն. ապա նշմարէ զնա զի գայ փշովքն պսակեալ, խաչիւն ՚ի Թիկունս, ՚ի մէջի երկուց աւազակաց, կապեալ և ընդ քարշ ածեալ անգութ և յանխնայ։ Ո՛վ Մարիամ, և զիա՞րդ ոչ եթող էլ հոգիդ ՚ի մարմնոյդ՝ յայն տեսիլ։ Հանդիպլին աչք աչաց՝ Մօրն և Որդւոյն. և ոչ կարելով բերանացի խօսել, վասն փութոյ Հրէիցն յառաջ խաղալոյ, խօսին սիրտ ընդ սրտի։

Ո՛վ հոգի իմ, որպիսի՞ս արդեօք լսէաք բանս՝ եթէ գոյր մեզ լսել զձայնս սրտիցն այնոցիկ։ Ո՛վ սիրելի Որդեակ իմ, ասէ Մարիամ. Որդեակ իմ սիրելի. — Մայր իմ սիրելի, ասէ Յիսուս,

սիրելի՛ Մայր: Եւ յասելն զայս՝ այնպէս պնդա-
պինդ փարին սիրտքն երկոքին և յիրար թափ-
անցանեն փոխադարձիկ սաստկութեամբ գո-
րովանաց, մինչև անհնար լինել որիշ զնոսին
տեսանել: Զուգախառնեալ են երկաքանչիւրոցն
ցաւք. և մի զմիւսոյն առնու՝ ոչ ինչ յիւրայնոյն
պակասելով: Զգայ Մարիամ զամենայն ցաւս
Յիսուսի, և Յիսուս զամենայն ցաւս Մարեմայ:
Ո՛վ խաչ նոր. նո՛ր և ցաւագին չարչարանք:

Գիտեմ, Յիսուս իմ, զի ընդարձակ է յոյժ
սիրտ քո. այլ զի և լի և թաթաղուն է տրտմու-
թեամբք, զիա՞րդ բաւես ընդունել 'ի նոյն և զա-
ռատութիւն վշտաց՝ որ զեղու 'ի սրտէ Մօր
քոյ: Ոչ կարեմ հասու լինել գաղտնեացդ. այլ
եթէ ոչ ունիմ միտս բաւականս 'ի հասողութիւն,
ընդէ՞ր չունիցիմ և սիրտ 'ի կարեկցութիւն: Ո՛վ
Մարիամ, ո՞ւր իցես: — Տեսանեմ զքեզ խորա-
սուզեալ 'ի չարչարանս Որդւոյ քոյ. և քանզի
յայդմ պայմանի տեսանեմ ևս զքեզ արտափայ-
լեալ գթով ողորմութեան, զի վասն եղկելի մե-
ղաւորաց այդպէս տառապիս, խոնարհեալ պա-
ղատիմ խանդաղատել և զսիրտ իմ գթութեամբ
քով. որպէս զի ընդ քեզ հեղից 'ի վերայ Յիսու-
սի չարչարելոյ արտասուս ինչ գորովոյ: Մաս-
նաւորեա զնմացուածս գթութեան հոգւոյդ և
իմս հոգւոյ, որպէս զի կարող եղէց արժանա-
պէս ցաւակից լինել Որդւոյ քում: Ո՛հ, երանի
ինձ եթէ եղէց բաւական մասնակից լինել քոյոց
ցաւոց: Մեծ է ինձ շիթ մի գառնութեանց քոց՝
քան զամենայն ուղխս քաղցրութեանց աշխար-
հի: Արդ հայեաց, հոգի իմ, մերթ 'ի Յիսուս,
մերթ 'ի Մարիամ. և առեալ զճաշակ անհնարին
վշտաց նոցին՝ զոր վասն քոյոց մեղաց կրեցին,
արտադրեալ ըղխեա և դու իղձս ողորմականս և
զղջականս: Ո՛հ, քանի՛ ցաւագնեալ է Յիսուս.

ո՛չ, քանի՛ ցաւագնեալ Մարիամ։ Այլ, ո՛չ, քանի՛ն ես առաւել տրտմեալք վասն մեղաց իմոց՝ քան վասն ամենայն վշտալից չարչարանացն։

Կշտամբեցից զանձն իմ վասն նուաղութեան եռանդեանս առ Կոյսն ցաւագին. եդից 'ի մտի ընկերել նմա և նմանել յընթացակցութիւն չարչարանացն, յանձն լինելով 'ի բարեխօսութիւն նորին։

Օգնութիւն Կիւրենացւոյն 'ի բառնալ զխաչն Յիսուսի։

ՅԸ. Տեսեալ Հրէիցն զի առ բազում վաստակելոյ 'ի կոչկոճանացն և ցաւոց՝ իսպառ ուժաթափեալ է Յիսուս, և ստէպ գթեալ անկանի յերկիր՝ ընկճեալ 'ի ծանրութենէ բեռինն 'ի վերայ եդելոյ, խորհին թեթևաբեռնել զնա, կոչելով զոք օգնական 'ի բառնալ զխաչն. բայց ոչ առ գթոյ ինչ՝ այլ առ զկծանաց անձին զայդ. և՛ զի երկնչէին թէ գուցէ զճանապարհայն մեռանիցի, և վրիպիցի 'ի նախատական մահուանէ անտի կախաղանին. և՛ զի ծանրաբեռնեալ գոլով յամբաքայլ լինէր, իսկ նոցա փոյթ մեծ էր վաղվաղ հանել զնա 'ի խաչ։ Ապա խնդրեն օգնական նմա. այլ ոչ ոք գտանի. զի ամենեքին յուրաստ կան զզուանօք, ոչ միայն 'ի կրելոյ այլ և 'ի հպելոյ իսկ 'ի խաչն՝ որ հասարակաց նշան անարգութեան համարեալ էր։ Զառնուն յանձն Հրեայք օգնել նմա, զի համարին ընդ նզովիւք անկանել իբր հաղորդակից լինելով դատապարտելոյն. չառնուն յանձն հեթանոսքն, զի նախատինս համարին ձեռն արկանել 'ի խաչն, որպէս

առ մեօք՝ 'ի կախաղանն․ իսկ աշակերտքն ահա-
բեկեալ փախուցեալ թաքչին՝ ոչ գիտեմ ուր։
Եւ իբրև այսպէս հրաժարի բազմութիւն հա-
զարաւորացն որ ընդ նմա կան, տեսեալ զոմն օ-
տար եկ 'ի Կիւրենեայ քաղաքէ, բռնի ունին
զնա պահակ, և ստիպեն բառնալ զխաչն յետուստ
եղկելի տառապելոյն։

Կարեկից լեր, հոգի իմ, Փրկչի քում ցաւա-
կցելոյ, վշտագնելոյ և բարձի թողի եղելոյ․ և
խորհեաց, թէ որպէս զօր ամենայն գոյն օրինակ
գործի․ ուր բանք լինիցին վշտակրելոյ վասն Յի-
սուսի, քանի՞ պատճառանս և չքմեղս հնարի
զգայականն ախորժակ․ ամենայն աշխարհիկ
փախչի 'ի խաչէն և խորշի, ոմն առ գոռոզու-
թեան և ոմն առ պղերգութեան։ Այլ թողեալ
մեր զայլոցն գործ, 'ի մեզ ինքեանս ակն արկ-
ցուք։ Ո՛վ Յիսուս իմ, քանի՛ ամօթ է ինձ տեսա-
նել զքեզ կամաւ կրելով զխաչն ծանրաբեռն՝ որ
ինձ անկ էր վասն իմոցս մեղաց․ այլ տեսանել
և յիս ինքն երկիւղ մեծ 'ի խաչէ նաև 'ի փոքրո-
գունոյ և 'ի թեթևագոյնէ, ոչ խրախուսելով կրել
զայն առ սէր քո։ Ա՜հ, դու որ Աստուածդ ես
և տէր տիեզերաց՝ կրես վասն իմ զծանրակիրն
խաչ․ իսկ ես որ բուռն մի հողոյ եմ յոչընչէ հա-
նեալ՝ ոչ կամիմ և առ փոքր մի նեղիլ առ 'ի կրել
ինչ վասն քո։ Ո՛վ հպարտութեանս, մեծ համա-
րել զանձն իմ քան զքեզ․ և առաւել քան զքեզ
մեծարել զմարմին և զաշխարհ։ Առ արժանաւո-
րել մարդասիրութեան քում՝ խոստովանիմ, Աս-
տուած իմ, զհիքութիւն վատթարութեան իմոյ․
այլ է, օգնեա ինձ շնորհօք քովք սրբովք, և տուր
ինձ ոգի նոր, ոգի հզօր, առ 'ի չզարհուրել
յայսմհետէ 'ի խաչէ, նա մանաւանդ առ 'ի սի-
րելոյ զայն։ Անհնար է ինձ սիրել զքեզ Տէր,
սակայն՝ մինչև ոչ սիրիցեմ զխաչ քո։

Առաջադրեսցից կրել ընդ Յիսուսի զխաչն. 'ի միտ առից զի խաչ Քրիստոսի է ամենայն մեռելութիւն, եթէ ներքին և եթէ արտաքին, շատ է թէ առ սէրն Յիսուսի արասցի:

ՅԹ. Ի պահէ յորմէ մատնեաց Յիսուս զանձն իւր 'ի ձեռս թշնամեացն՝ մինչև ցայժմ կամեցաւ միայնակ լինել 'ի չարչարանս իւր. վասն այսորիկ յըմբռնելն 'ի պարտիզին՝ հրամայեաց թողուլ 'ի բաց զաշակերտսն, որպէս զի ինքն միայնակ տանջեսցի և խոշտեսցի. ոչ ումեք կարօտելով օգնականի 'ի փրկագործութիւն աշխարհի, որպէս և չկարօտացաւ յարարչագործութեանն: Բայց միայն 'ի կրել զխաչն՝ ընդունի օգնական. և ոչ ըստ բերման դիպաց է ընկերել նմա Կիւրենացւոյն, այլ բարձր և գաղտնի խորհրդով: — Քրիստոս մարդ է և Աստուած. և զի ոչ երբէք զատաւ աստուածութիւնն 'ի մարդկութենէն, յայտ է թէ եթէ կամէր՝ կարող էր սքանչելեօք կազդուրել զլքումն մարմնոյն և զօրացուցանել զնա 'ի բառնալ տանել զխաչն մինչև 'ի Գողգոթա. բայց թէպէտ և հրաշագործեալ կազդուրեցոյց զմարմինն առ 'ի չըմեռանել 'ի կոտտանսն, ոչ 'ի բախիւն հարուածոցն և ոչ 'ի ցաւս կսկծահար փշոցն, ոչ զնոյն գործէ և ընդ բեռամբ խաչին, և նուաղեալ կարօտի օգնականութեան: Զայս օրինակ յորդորելով զիւր հաւատացեալսն՝ կրել զխաչն, և օրինակաւ իւրով կրկնելով զոր բանիւն ասաց. եթէ, Որ կամիցի զկնի իմ գալ՝ բարձցէ զխաչ իւր:

Զմտաւ ած, հոգի իմ, զիա՛րդ փափագէ Յիսուս զի ընկերակիցք նմա լիցուք 'ի վիշտս ընդ խաչիւն, վասն ցանկութեանն՝ զի լիցուք նմա ընկերք և 'ի փառացն վայելս: Բառնալ ընդ նմա

զխաչն՝ այս չէ խրատ, այլ հարկ իսկ՝ եթէ կա-
միցիմք փրկել զանձինս: Այսպէս սահմանեալ
Աստուծոյ 'ի յաւիտենական վճռուն, եթէ
պարտ է մեզ ծառայել նմա՝ և կամաւորապէս
ուս եդեալ բառնալ զխաչն, և յօժարութեամբ
սրտիւ կրել զայն առ սէր իւր: Իսկ մեք զի՞արդ
կամ ո՞րպէս գործեմք:

Փոխանակ զքէն, Յիսուս իմ, վասն սիրոյդ
որով արժանի առնես և զիս յընկերութիւն ըն-
տրելոց քոց որք բառնան ընդ քեզ զխաչն: Նո-
քեր կարացից առել զխաչ՝ յորժամ 'ի քաղցրս
յայս խորհուրդ մտաբերիցեմ, եթէ ընդ խաչիւ
տառապանաց և վշտաց ընդ իս կաս դու, և քա-
ջալերես ասելով. Ճանապարհ խաչիդ սպառի,
այլ անսպառ են երանելի փառքն զոր խոստա-
ցայ քեզ: Որքան և ծանր իցէ զգայարանաց՝
խաչն, ո՜հ, քանի՜ խնդութիւն է ոգւոյ 'ի յու-
սոյ անտի: Այլ ինձ պէտք են սիրոյ քում, ո՜վ
Տէր, քանզի առանց սիրոյ. ո՞ր խաչ բաւական
իցէ՝ ում և է՝ առ 'ի ժառանգութիւն յաւիտե-
նից վարձուց: Աւա՜ղ եղկելւոյս. քանիս ցարդ
կրեցի խաչս, այլ ինչ ոչ շահեցայ, քանզի ոչ
խորհէի՝ ոչ զհնազանդելն քեզ և ոչ զառնելն
զհաճոյս քո, Աստուած իմ: Տո՛ւր զօրութիւն
թիկանց իմոց բառնալ համբերութեամբ զխաչս.
տո՛ւր և սրտի իմոյ յօժարութիւն՝ առ 'ի կրել
զայնոսիկ վասն սիրոյ քո: Եթէ կարեոր ինչ
խաչք իցեն՝ զոր հաճիցիսդ առաքել ինձ, և եթէ
կամաւորք՝ զոր հաճիցիս հոգեշնչել յիս, տո՛ւր
զամենայն բառնալ յօժարակամ առ սէր քո:

Եթէ անդ լինէի մինչ խնդրէին զոք օգնա-
կան 'ի բառնալ զխաչն Քրիստոսի՝ թուի ինձ թէ
յօժարութեամբ զանձն յառաջ մատուցանէի:
Մատուցայց և այժմիկ. և հաճոյ լիցին Յիսուսի
իղձք իմ:

Յժ. Նկատեցից զՅիսուս որպէս զԹագաւոր իմ՝ որ կրեցէ զնշան նորոյ Թագաւորութեան իւրոյ 'ի խաչն: Իշխանք աշխարհիս նշանակ մեծութեան իւրեանց ունին կամ զպսակն 'ի գլուխ, կամ զգաւազան 'ի ձեռին. իսկ Յիսուս ունի զխաչն յուս իւր: Կանխաւ տեսեալ էր մարգարէին, եթէ Մեսիա կրեսցէ զիշխանութիւն իւր 'ի վերայ ուսոց իւրոց. և զօրութիւն նորա ոչ սրով իցէ այլ փայտիւ. և արդ լցան մարգարէութիւնքն: Խաչիւն նուաճեաց զդժոխս, յաղթեաց թշնամեացն, ընդարձակեաց զսահմանս Թագաւորութեան եկեղեցւոյ իւրոյ զզինուորելոյն և զյաղթականի:

Արդ հայեաց, հոգի իմ, 'ի Թագաւորն քո՝ որ բարձեալ զխաչն խաղայ յառաջէ 'ի Գողգոթա, և դարձեալ յետս առ մեզ՝ ծանուցանէ և բանիւ և օրինակաւ, եթէ որ կամիցի զհետ իւր երթալ՝ բարձցէ ընդ նմա և զխաչն: Ոչ զոք բռնադատէ, այլ հրաւիրէ. և ոչ զոմանս եւեթ հրաւիրէ՝ այլ առհասարակ զամենեսեան, զեկեղեցականս և զաշխարհականս, զաւագանին և զռամիկն. և յայտ առնէ թէ ոչ է բաւական մեզ 'ի փրկութիւն՝ ինքեան միայնոյ բառնալն զխաչ, այլ կարևոր է և մերս գործակցութիւն առ 'ի կրել մեզէն զմերս խաչ: — Ո՞ ոչ սքանչասցի ընդ ողորմած արդարութիւն և ընդ արդար ողորմութիւնս Աստուծոյ մերոյ. ըստ ամենայն անաչառ պահանջմանց արդարութեան՝ հատոյց վասն մեր Քրիստոս և մասնակիցս արար զմեզ արդեանց իւրոց. և ոչ այլ ինչ խնդրէ 'ի մէնջ՝ բայց զի երթիցուք զհետ նորա մերովս խաչիւ: Հնա՞ր ինչ էր նմա առնել աւելի քան զայն վասն մեր, կամ նուազագոյն ևս պահանջել 'ի մէնջ առ 'ի ժառանգորդս առնել զմեզ, ոչ ողորմութեամբ միայն այլ և արդարութեամբ, արքա-

յութեան իւրում։ Ո՞ր խաչ այնքան ծանր իցէ մեզ՝ որքան նմա իւրն խաչ։

Ո՜վ Յիսուս իմ, քանի՜ բարի ես դու, զի այսքանեաւ փոքու իւիք շատանաս մուծանել զիս յարքայութիւն քո։ Եթէ քաջ միտ եդեալ քննեցից՝ տեսանեմ զի ծանրագոյն ևս է խաչն զոր կրեմ յերթալ 'ի դժոխս՝ քան զոր դնես դու յիս՝ յառաջնորդել յերկինս։ Ոչ կարեմ ժխտել՝ եթէ հպարտութիւն, նախանձ, բարկութիւն, ատելութիւն, վրէժխնդրութիւն, ամփանք, որկորամէտութիւն, և այլ ևս կիրք իմ ապիրատք՝ չիցեն խաչք վշտաց և տառապանաց. և ո՞ւր երթայց հասից ես դոքիմք՝ եթէ ոչ յանփրկանակն յաւիտենականութիւն։ Իսկ 'ի հակառակէն՝ գիտեմ զի խոնարհութիւն, սէր, ողջախոհութիւն, ժուժկալութիւն, համբերութիւն, և բազում այլ ևս գեղեցիկ գեղեցիկ առաքինութիւնք՝ թեթևագոյն և քաղցրագոյն խաչք են. և գիտեմ զի թէ սոքիմբք զհետ քո ընթացայց՝ հասից յերանաւէտն յաւիտենականութիւն։ Իսկ զի՞նչ է այս իմ յիմարութիւն, կամել տաժանակիր խաչիւք դատապարտիլ, քան թէ քոյովքդ անուշիւք՝ փրկիլ։ Ո՜ Աստուած իմ, ո՜ թագաւոր իմ, եկեսցեն հասցեն շնորհք քո օծութեամբ իւրեանց և զօրութեամբ՝ կարգել զանձն իմ, և աւետարանական խաչիւք վարել զիս զհետ քո ամենայն ուրեք։

Խնդրեցից 'ի Յիսուսէ զսէր նորա, զի յայն հաստատեալ է ամենայն հնար պիտոյից. ոչ դըժուարանամ կրել զխաչս մարմնոյ և զաշխարհի, քանզի սիրեմ զմարմին և զաշխարհ. կրեցից և զխաչն Յիսուսի՝ եթէ սիրեցից զՅիսուս։

ՅԺԱ. Կիւրենացին կոչեալ 'ի պահակ կրելոյ զխաչն Յիսուսի, զառաջինն քրթմնջէ, դժգմնի և

յակամայս կրէ, վասն Նախատանացն և վասն բանադատութեանն առ 'ի Հրէից անտի. այլ այն ինչ բուռն հարեալ 'ի փայտն սուրբ և լուսաւորեալ 'ի միտսն երկնազդեցիկ լուսով, և զգեցեալ 'ի սրտի զօրութիւն գերաքուն, անդէն և անդ յեղափոխին խորհուրդք նորա և ախորժակք. դիւրալուր լեալ այնուհետև շնորհացն' ուս մատուցանէ համբերութեամբ 'ի նոյն խաչ. խոնարհութեամբ' անարժան նմին զանձն վարկանի. բառնայ սիրով և արդեամբք. և թուի ինձ նմա թէ չիցէ ուրեք յաշխարհի ծառ անուշակ իբրև զայն:

Այսպէս լինի ամենեցուն որք խրախուսեսցին, կամ հաւատալով 'ի բարիս որ 'ի խաչին եդեալ կան, կամ յուսալով ակնկալութեամբ բարեացն որք խաչիւն խոստացեալ եղեն: Ամենայն տաղտուկ փոխի 'ի հրճուանս. և չցաւէ ինչ մարդոյ' ուր սիրոյն գործէ: Այլ ինձ փոյթ մեծ է, հոգի իմ, զի քաջ իմասցիս զբան խաչին: Զի՞նչ իցէ տանելն զխաչն Քրիստոսի. — ոչ այլ ինչ' բայց մեռուցանել զչարախտավատ յօժարութիւնս ըղձից և զգայութեանց, և մանաւանդ զամբարտաւան անձնասիրութիւնն: Միա եդից ուրացութեամբ կամաց նորոգել զմարդն հին. գուն գործել 'ի ստանալ զառաքինութիւնս, և հանապազ մեծ համարել զյաւիտենական բարիս երկնից քան զանցաւոր վայելս աշխարհիս. և 'ի յաջողութիւնս պատրաստ կալ յօժարութեամբ կրելոյ զարկածս ձախողակս, ապաստան լինելով 'ի կամսն Աստուծոյ: Խիստ է ճառդ այդ, այլ ճշմարիտ է. և առ 'ի քաջալերել զմեզ' գոդցուք. Միթէ փո՞քր ինչ իցէ մեզ օրինակն Յիսուսի' որ 'ի խրախոյս մեզ երթայ յառաջոյ խաչիւն իւրով: Փո՞քր ինչ իցեն վարձք յաւիտենական երանութեանց' որ տացին այնոցիկ որք քրիստո-

նէարար կրիցէն զխաչն։ Դու, հոգի իմ, փափագեա այսօր տառապանաց, և վաղիւն՝ վարձուցն հատուցման. այլ մի այգպէս կարճամտեալ փութար. յուսա համբերութեամբ, անսուտ են հատուցմունքն խոստացելոյն։

Ո՛հ, Աստուած իմ, ուղիղ է ամենայն, և ճըշմարիտ են բանքդ. այլ ես յանձնէ կասկածեմ. քանզի զգամ զապստամբութիւն զգայութեան՝ որ ոչ հանդուրժէ խաչի։ Անձկութիւնք չարք այնպէս վառեն և ըլլաեն զիս՝ զի գրեաթէ շրջնապատ ըմբռնիմ յուղղութեանն ճանապարհի. ահա տեսանես, Տէր, զի մեծապէս պէտս ունիմ օգնականութեան առ 'ի քէն. և վասն այսորիկ խոստացայր ինձ, Յիսուս իմ, զփառս՝ եթէ երթայց խոյզիւ զհետ քո. ասէ, որ 'ի շերթայն իմ զկնի քո՝ այնքան զթութեամբ ածն կալեալ սպասես, շնորհեա ինձ սղորմութեամբ զսէր քո, զի սիրեցից նովիմբ և զխաչ քո։ Տո՛ւր ինձ խընդրել և գտանել զայն՝ որում տաղ փափագել։ Գիտեմ զի Տէրդ զօրութեանց ոչ լքանես, այլ և քաջալերես զյուսացեալսն 'ի քեզ. և ես 'ի քեզ յուսացայ և յուսամ, Թագաւոր իմ և Աստուած իմ։

Ոչ է բաւական բառնալ զխաչն, այլ և երթալ անկ է զհետ Յիսուսի. և այսմ միտ եդից ամենայն խնամով. քանզի 'ի բազում ինչ իրս՝ առ ակնանէ մարդկան ձնշեմ զիս, ապախա արարեալ զսիրոյն Յիսուսի։

Ցաւակցութիւն դստերաց Երուսաղեմի 'ի վերայ Յիսուսի :

ՅԺԲ. Յերթալն Յիսուսի խաչիւ իւրով 'ի Գողգոթա՝ երթայր զհետ նորա և բազմութիւն ժողովրդեան, կէսք 'ի ծաղր առնել զնա և այլք 'ի ցաւակից լինել: Էին ընդ նոսա և կանայք ոմանք. որոց տեսեալ զՅիսուս այնպէս կատեալ՝ չար քան զերկոսին աւազակսն, խանդաղատեալ զնովաւ՝ արտասուէին. իսկ Յիսուսի 'ի վեր ամբարձեալ զաչսն, և որպէս թէ ոչ ինքն իցէ ողորմելի վշտակիրն, և դարձեալ առ կանայսն՝ անխռով ձայնիւ ասէ ցնոսա, մի ինչ հոգալ և լալ վասն իւր:

Տե՛ս, հոգի իմ, զիա՛րդ ողոքանէ Յիսուս արեամբ վիրացն զճանապարհն, և չկամի զի այլք արտասուօք ողողիցեն. և յայտ այսու առնէ զի Մարդ է և Աստուած. քանզի թուի իմն ասել. Ընդէ՞ր լայք 'ի վերայ իմ, ո՛վ դստերք. զի այս օր է արքունական փառաց վայելչութեան իմոյ, օր իմ հարսանեաց և օր խնդութեան. ուրախութիւն համատարած գամ ես խաչիւս այսու պարգևել աշխարհի: Որ բունի երթայ 'ի մահ՝ նա իցէ արժանի արտասուաց. իսկ ինձ որ կամաւորապէս երթամ 'ի մահ՝ ոչ են պէտք ցաւակցութեան այլ զարմանաց. զի թէպէտ և մեռանիմ՝ այլ փութով և յառնեմ, և զնոյն ինքն զհեղինակն մահու եղծեալ ապականեմ զմեղսն:

Ո՛հ, քանի՛ ծանրագին են ուրախութիւնքս այսորիկ՝ մարդկութեան քում, ո՛վ Տէր իմ Յիսուս: Այլ ո՛վ, քանի՜ մեծ էին գթութիւնք սըր-

ափդ, զի և ոչ այնքան յորդահոսանք հեղեղաց վշտաց և թշնամանաց ոչ միայն ոչ բաւեցին չի-
ջուցանել զնոսին՝ այլ ևս քան զևս բորբոքեցին: Արդարև կամայօժար երթաս 'ի մահ, իշխանու-
թիւն ունելով դնել զկեանս քո և առնուլ. այլ սակայն առ իմէ՞ ոչ կամիս զի լացցեն 'ի վերայ
քո՝ վասն զուր և տարապարտուց տառապա-
նացդ և տանջանաց: — Սքանչանամ և գովա-
բանեմ զանձառ մեծութիւն գթութեանց քոց, և փոխարէն մատուցանեմ 'ի գոհութիւն զա-
մենայն փառս և օրհնութիւն զոր տան քեզ ա-
րարածք երկրի և երկնից: Այլ, աղէ, թոյլ տուր ինձ լալ, կամ մանաւանդ տուր ինձ լալ 'ի վե-
րայ չարչարանացդ, և այնպէս գորովալիր խան-
դաղակաթ լալ՝ զի քաղցրասցի ինձ հեղուլ զար-
տասուս իմ վասն քո, որպէս քաղցրանայ քոց սրբոց. գիտէ զայն որ փորձեացն: Աղաչեմ տալ և ինձ զայդր դոյզն ինչ ճաշակ, որպէս զի ևս քան զևս յորդորեցայց 'ի սիրել զքեզ. և առա-
ւել ևս սիրել, զայս խորհելով, զի եթէ այսքան քաղցր իցէ 'ի կեանս յայսոսիկ լալն վասն քո, քանի՜ քաղցրութիւն իցէ 'ի հանդերձեալն վա-
յելելն զքեզ: Եթէ քաղցր իցէ տառապիլն վասն քո, զի՞նչ լինիցի հրճուիլն վասն քո ընդ քեզ և 'ի փառսն քում:

Աղերսիւք խոնարհութեան անարժան համա-
րեցայց զանձն իմ՝ աստուածային մխիթարու-
թեանց. և եթէ տացէ ինձ Աստուած սփոփանս՝ ջան գործեցից բարուոք վարել զնոսին, և տա-
ծել յիս նոքիմբ զոգի ջերմն եռանդեան և աղօ-
թասիրութեան:

ՅԺԳ. Ընդ բեռամբ խաչին կալով Յիսուսի՝ փափագէ զի տեսցեն ամենեքին զընդարձակու-
թիւն անհամեմատ ցաւոց իւրոց. զի տեսեալ և

զկիրս համբերութեանն՝ ամենեքին կարեկից ցաւակից լինիցին: Եւ սակայն՝ մի լայք, ասէր առ կանայսն. ոչ զի չկամէր ընդ գութն, այլ զի յայտ արասցէ թէ ոչ այնքան ողբալի էին չարչարանք իւր՝ որքան չարչարանացն առիթք, որ էն մեղքն. ոչ այնքան զչարչարանացն ողբալ՝ որ ազատիչն է, որքան զայն՝ վասն որոյ չարչարին, որ է մեղաւորն. վասն այնորիկ յաւելու ասել. Լացէք 'ի վերայ անձանց ձերոց և 'ի վերայ որդւոց ձերոց: — Ակն կալեալ մնայ Յիսուս թէ ոք գտցի կարեկից վշտաց իւրոց. այլ և փափագէ զի ցաւակցեսցի վասն այնր պատճառի՝ յոր սակս ինքն չարչարի: Զարչարի նա վասն մեղաց մերոց. և յայս սակս արժան է ցաւակցել նմա: Լացէք, ասէ ինձ և մեզ, լացէք, ոչ վասն իմ ինչ՝ որպէս թէ 'ի մահ վարիցիմ, այլ զի վասն ձեր վարիմ 'ի մահ, վասն անօրէնութեանցդ զոր գործեցէք: Գովեմ զսէրդ որ վասն իմ. այլ առաւել ևս նախանձաւոր լինել արժան է ձեզ հոգւոց ձերոց և ընկերացդ. քանզի դոյ վախճան ցաւոցն զոր կրեմ ես, այլ մեղաւորացն սպառնացեալ տանջանք՝ անվախճանք են:

Քննեսցուք զնախանձն՝ որ պիտոյ է վասն մեղաց, այլ և զկարգն զոր պատուիրեաց մեզ Քրիստոս. քանզի ասելովն առ կանայսն լալ նախ 'ի վերայ անձանց և ապա 'ի վերայ որդւոց իւրեանց, կամի ուսուցանել՝ զի մինչև 'ի վերայ այլոց նախանձախնդիր եղեալ, արժան է անձանց լինել, քաջ քննելով զոգիս: Եւ ո՞ւմ առաւել 'ի ճահ իցէ պատուէրս այս՝ եթէ ոչ ինձ: Իցէ՞ թշուառագոյն քան զթշուառն՝ որ ոչ առնու 'ի միտ զթշուառութիւն իւր՝ առ ողբալ: Յայսպիսեաց սակի եմ ես, նախանձախնդիր 'ի վերայ այլոց, անփոյթ զինէն՝ որ լցեալս եմ ախտիւք քան զամենայն մարդ: Ցեսանեմ զխուղս

յաչս այլոց, և զանկան իմոյ գերանս ոչ նշմարեմ. մեծամեծք թուին ինձ թերութիւնք ինչ այլս. և ո՞րքան յանցանս ծանունս գործեմ, առ թեթև ինչ համարելով զայն: Կամիմ զղջացեալս և ուղղեալս տեսանել զայլս, և ես բնաւ ոչ ջանամ 'ի զիղջ և յուղղութիւն գալ: Լսեմ, ո՛վ Յիսուս, զձայն քո 'ի սրտիս՝ զի ասէ, լա՛ց 'ի վերայ հոգւոյ քո: Աղէ, դու որ գիտես զցաւս իմ և ունիս զդեղ բժշկութեան, գթացեալ դարման տուր ինձ: Սէր քո բուժէ զամենայն. և զայս բարիս միայն խնդրեմ վասն հոգւոյ իմոյ, զհաճոյ լինելն քեզ, և հնազանդելն և զկեալն 'ի քեզ վասն սիրոյ քո յաւիտենականի:

Այս կարգ է սիրոյ և նախանձաւորութեան. պտղաբեր առնել զչարչարանս Քրիստոսի նախ վասն իմ, ապա թէ այլոց: Տպաւորեսցիս 'ի միտս իմ զայս դաս ուսման՝ զոր ետն Յիսուս զճանապարհայն Գողգոթայ:

ՅԺԳ. Տեսեալ Յիսուսի զմորմոքումն կանանցն 'ի վերայ իւր՝ գորովի և ինքն 'ի վերայ նոցա. և թէպէտ չիցեն յարգոնակ արտասուք նոցին ռամկականք, իբր 'ի բնութենէ ազդեալք և ոչ 'ի հաւատոց, այլ հաճի և ընդ այն. և փոխանակ տրտմութեանն որ առթէ զխոնարհութիւն՝ հատուցանէ վարձս զկարեկցութիւնն, պատճառս տուեալ յորդորելոյ զխրատս նոցա 'ի զղջումն: Ոչ այնքան իմ չարչարանքս ողբալիք են, ասէ, որքան որ 'ի չարչարանաց անտի ոչն օգտիցի. իմ չարչարանքս ձեզ առաւել փոյթ իցեն քան ինձ, եթէ այսքան իմ 'ի հատուցումն մեղաց ձերոց վշտակրելով, դուք ոչ կամիցիք ապաշխարել զնոյն զմեղսն. և անօրէնութիւն ձեր զյաւիտենից տանջանաց պատուհասն կրեսցէ: Եկեսցէ, ո՛վ դստերք, ժամանակ սգոյ, տա-

ռապանաց և յուսահատութեան մեղաւորաց. և երանի՜ իցէ այնմիկ որոյ մոռուցեալ իցէ զանձին կամս։ Արդ մի լայք զիս՝ որ փրկչաբար երթամ 'ի մահ, այլ լացէք վասն ժամուն յորում եկից դատողական փառօք՝ անաչառ խստութեամբ պահանջել համարս։

Եկ, հոգի իմ, և ուսիր, քանի մեծ են ողորմութիւնք Փրկչին. զի մինչ այնքան անհնարին տառապանօք հարեալ է 'ի մարմին և 'ի հոգի, մոռացեալ իւրն զանձն, ամենայն խնամով ջանայ օգտակար առնել զչարչարանս իւր 'ի փրկութիւն հոգւոյն՝ զինքեամբ խանդաղատելոյ, զհզօրագոյնս 'ի խրատուց և հոգեշնչմանց դանձուց աստուածային իմաստութեան իւրոյ՝ շնորհելով նոցին։ Սիրելի են յոյժ չարչարակիցն Յիսուսի և դոյզն ինչ գործովք աղէկիզման մերոյ. և զի մի մոռացութիւնք չարչարանաց Քրիստոսի յանպտուղ ինչ կարեկցութիւն յանգեսցին, առանց նկրտելոյ 'ի նմանութիւն նորին, աւադիկ զայս օրինակ արժան է առնել։

Զի՞նչ լինիցի ինձ, Փրկիչ իմ, յահաւոր ատենի քում, եթէ ոչ օգտեցայց 'ի քումդ օրինակէ։ Գիտեմ զի խաչիւ զհետ քո երթալով, համբերելով վշտաց, և մոռուցանելով զանձն իմ առ սէր քո՛ փրկեցայց։ Իսկ եթէ ուրացայց զխաչն, զախորժակաց զգայութեան երթայց զհետ և զաշխարհի հրահանգաց, զիմ այլ իմիք անկ իցէ ինձ ակն ունել, եթէ ոչ՝ մտանելոյ 'ի թիւս անյուսիցն այնոցիկ՝ զորոց ասացերդ, եթէ հանապազ ցանկանայցեն մահու 'ի դժոխս՝ և ոչ կարասցեն երբէք մեռանել։ Տեսանեմ զի առ պղերգութեան իմոյ ևեթ՝ ոչ ինչ շահիմ 'ի չարչարանաց քոց, և վասն այնորիկ խիթամ դատապարտիլ. փոխանակ զարգանալոյ յառաքինութիւնս՝ ցարդ մեղս 'ի վերայ մեղաց յաւելի։ Աստուած իմ,

արդ ըի ամօթով կորացեալ՝ զհող համբուրեմ, աղաղակելով, Գթա յիս, և աղաչեմ տալ ըզշնորհսն զոր վասն իմ ստացար, որով՝ որպէս գիտես՝ ոչ միայն կարացից լինել գործակից այլ և եղէց խնկապէս գործակից չարչարանաց քոց։

Յիշեցից յաճախ, զի 'ի նմանել կամ յոչն նմանել Յիսուսի 'ի չարչարանս՝ հաստատեալ կայ կէտ հանդերձելոցն իմոց, կամ երանաւէտ կամ չարաբախտիկ մահու, դատաստանի և յաւիտենականութեան։

ՅԺԵ. Նկատեսցուք զՅիսուս 'ի խօսելն ընդ դստերան Երուսաղեմի, ոչ իբրև զայր ցաւոց նուաղեալ ձայնիւ, այլ պերճօրէն իմն պնդութեամբ՝ որպէս թէ 'ի տաճարին քարոզիցէ։ Ո՞ կարծիցէ թէ նա 'ի մահ երթայ, և թէ յետ կիսոյ ժամու 'ի խաչ ելանելոց իցէ։ Ոչ ինչ զանձնէ տրտնջէ, ոչ ինչ զցաւագին Մօրէն. այլ ամենևիմբ գթութեամբ վառեալ՝ զկայ առնու յորդորել զողորմելի հոգիսն յապաշխարութիւն յանցուածոց իւրեանց, առ 'ի թափելոյ զնոսին 'ի յաւիտենից տանջանաց։ Հայեցարուք յիս, ասէ, ո՛վ հոգիք սիրելիք, և խորհեցարուք 'ի վերայ անձանց ձերոց. զի եթէ ես վասն ոչ իմոց մեղաց այսպէս չարաչար պատուհասիմ, զի՞նչ լինիցի ձեզ վասն ձերոցն մեղաց։ Եկեսցէ հասցէ անվրէպ օրն դատաստանի. և անաչառ դատաստան լինիցի ձեզ, եթէ ոչ ջանասջիք իմով արդեամբքս հնարաւորել ձեզ թողութիւն ներման։ Եթէ հուր ցասմանն Աստուծոյ այդպէս ազդու է յեղծանել զմարդկութիւնս իմ զանմեղ, որ է իբրև փայտ իմն դալար. որպիսի՞ օրինակաւ վարիցի ընդ ձեզ, փայտք չորացեալք, որք և ոչ զմիոյ առաքինութեան ոչ զհիւթ ունիք և ոչ զպտուղ։

Ահեղք են բանքս Քրիստոսի առ որս մեղուցեալ և ոչ իցէ արարեալ պտուղ արժանի ապաշխարութեան: Կամ ապաշխարութիւն կամ դժոխք․ այս քարոզութիւն է զոր կարդայ մեզ 'ի ձաղկելն, 'ի պսակելն փշօք և 'ի նախատալից երթալն խաչակիր 'ի Գողգոթա: Այլ 'ի բուռն առնել ածել զմեզ յապաշխարութիւն՝ ցուցանէ մեզ 'ի վէրս իւր և՛ զգործս ողորմութեան իւրոյ 'ի մեզ, և զոր կայ մնայ առնել արդարութեանն իւրոյ: Մի ոք համարեսցի ասել, թէ Քրիստոս չարչարեցաւ վասն իմ, ապա ուրեմն փրկիմ ես․ քանզի ամենայն զոր կրեաց նա 'ի մարմնի իւրում սրբում՝ ոչ զօրեսցէ մաքրել զանօրէնութիւնս իմ՝ եթէ դարձայց անզղջ:

Ո՛հ․ ո՞ ոչ սքանչասցի ընդ անսպառ սէր քո, Տէր իմ Յիսուս, զի ոչ շատ ասելով զայդքան որ վասն իմ զկիրսդ՝ այդքան ջանահնար լինիս և յօգուտ իմ կարգել զնոյն կիրս չարչարանացդ: Տեսանեմ զոր կրեցդ, և նախատեսանեմ զոր մնայ ինձ կրել՝ եթէ ոչ պէտ արարից իմոց վըտանգաց:

Այլ զի՞ գործեցից ես՝ որ փայտս եմ չոր՝ առ ոչինչ պիտանացու: Խոնարհիմ առաջի քո, Աստուած իմ, որ միայն կարող ես ծաղկեցուցանել և պտղաբեր առնել զամենայն կոճղ ցամաք: Տո՛ւր ինձ զօրութիւն զուարթութեամբ առնել զապաշխարութիւն՝ զոր թելադրեսն ինձ: Եթէ գիտէի թէ հաճոյ էր քեզ զոհ կենաց իմոց՝ քաջալերէի քոյին օգնականութեամբ նուիրել քեզ զայն․ այլ քանզի գիտեմ, եթէ քան զամենայն ինչ՝ արժանաւոր համարիս զզղջումն սրտի, աւադիկ կամ զղջացեալ և տրտմեալ վասն անգոսնելոյ իմ զքեզ, և հաստատեալ 'ի մտի ոչ ևս մեղանչել քեզ: Հաշտեցո զարդարութիւն քո, Հայր յաւիտենական,

չարչարանօք Քրիստոսի, և տուր ինձ արդեամբք նորին մնանալ ընդ նմին մտօք, որպէս նայն միացաւ ընդ իս իմովս մարմնով. պնդեցայց սիրով ընդ նմին, որպէս հաճեցաւ նա սիրով զօդիլ ընդ իս:

Կրկնեցից յաճախ զաղերս զզջման. և գուն գործեցից 'ի քաւութիւն մեղաց իմոց՝ համբերել տառապանաց կենցաղոյս, և ուրոյն իւիք 'ի մեռելութիւն կրթել զզգայարանս իմ:

Ժամանել Յիսուսի խաչիլն 'ի Գողգոթա:

ՅԺԶ. Գիտելով Հրէիցն զի ազդողագոյն է Յիսուս բանիւք, և զանգիտեալ թէ 'ի խօսելոյն յուզեսցի ժողովուրդն և կամիցի զնա փրկել, Թշնամանօք և հարուածօք ձեպեցուցանեն զնա. այլ առաւել ևս ձեպէ և փութացուցանէ զնա սէր իւր. և ուր ուրեմն բազում աշխատութեամբ հասանէ 'ի գագաթն լերինն, ուր յօրինակ զոհին ածեալ եղև և Իսահակ: Ո՛հ, քանի՛ տխրական քատմութիւնք են մարմնոյ 'ի տեսանել զտեղի մահուն. և, ո՛հ, քանի՛ ուրախութիւն է և հոգւոյն 'ի տեսանել զտեղին՝ ուր կատարելոցն է զփրկագործութիւն աշխարհի: Եւ քանզի Գողգոթա լեառն էր անիծեալ և դժպհի՝ վասն չարագործաց անդ սպանմանն, նա կոչէ զայն լեառն սուրբ Աստուծոյ. և տայ նմա հազարս օրհնութեանց զի հանդերձեալ է լինել ինքեան տեղի բարձրութեան և փառաց:

Զիք և ոչ մի ինչ 'ի չարչարանս Քրիստոսի՝ զոր չիցէ նորա կամեցեալ և սահմանեալ, վասն այնորիկ ընտրեաց զԳողգոթա իբր 'ի միջավայր եր-

կրի․ որպէս զի երկիր համօրէն լիցի տաճար սեղանոյ խաչին, յորում մատուցանելոց է զպատարագ կենաց իւրոց, և ծաւալել զպղդումն զօրութեան նորին, ոչ առ մի ազգ միայն՝ այլ առ հասարակ ազգս մարդկան։ Այլ յաւելցուք ասել, թէ համճեցաւ Յիսուս յայտ առնել ընդ գթութեանն և զխոնարհութիւն իւր, ընտրելով զանարգական տեղի մահապարտից վասն մահուն իւրոյ, որպէս ընտրեացն 'ի տեղի ծննդեան իւրոյ զգոմս անասնոց։

Հոգի իմ. քանիպատիկ գեղեցիկ տեսարանք են մեզ 'ի չարչարանս Քրիստոսի․ շատ է եղանելըն 'ի Գողգոթա՝ առ 'ի նշմարել անդ խորհուրդս բազմագիմիս։ Այլ ո՞վ իցէ արժանի, ո՛վ Տէր, եղանելոյ 'ի լեառնն սուրբ, բայց որ սուրբն է և անբիծ և ներկուռ յառաքինութիւնս։ Գէթ անկ է ընդ քեզ խաչաբարձիկ զիմել անդր։ Իսկ ես զիա՞րդ եղէց արժանի ընդ քեզ կալոյ 'ի Գողգոթա, մինչ ոչ իւիք ընդհատ 'ի խաչահանուացն քոց խորշիմ 'ի խաչէն․ մի 'ի բազմաց անտի եմ ես՝ որք համարին զհետ երթալ քո առանց իւիք կամելոյ վշտակրել․ եդեալ 'ի մտի՝ թէ շատ իցէ չյանդգնելն 'ի թշնամանել զքեզ, առ կատարելութիւն գրելոյ զխմաստութիւն անձնասիրութեան, և չիցէ ինչ փոյթ աշխատ լինել 'ի ստացումն առաքինութեանց՝ որք պատիժք են մարմնոյ։ Ո՛վ, որպէս խաբեալ են դոքա, և ես ընդ նոսին։

Ո՛վ աստուածային վարդապետ իմ, շնորհեա ինձ սակաւիկ մի 'ի սրբոյ խոնարհութենէ քումէ, որով ծանեայց քաջիկ զանձն իմ․ զի եթէ ծանեայց զիս որպիսի եմ՝ հրէշ չարութեանց, մեղաւոր եղկելի, արժանի դժոխոց, որում 'ի դէպ էր լինել արդ 'ի դժոխս՝ 'ի կրել զամենայն ազգ տանջանաց, վասն ամենայն ազգի մե֊

ղացս գործեցելոց, ո՞ր այնուհետեւ մեռելութիւն կամ խոնարհութիւն ծանր թուիցի ինձ. մանաւանդ թէ ո՛ր խաչ ոչ լինիցի ինձ սիրելի: Որում մեղօք կեցեալ իցէ՝ ապաշխարութիւնն չէ խրատ այլ պատուէր:

Հզօր է յիշատակ դժոխոց, այլ հզօրագոյն եւս է այս՝ զոր 'ի Ձեռն է դիւրընտել ինձ առնել, եթէ, Զոր ինչ և կրեցից՝ զի՞նչ իցեն առ չարչարանօքն Քրիստոսի. ոչ ինչ իմն առ Նորայովքն:

ՅԺԷ. Ի հասանելն Յիսուսի 'ի Գողգոթա՝ բառնան զխաչն 'ի թիկանց նորա. և խուռն դիմեն շուրջ զնովաւ Հրեայք և հեթանոսք առնել Նմա կատականս այպանաց, ոմն այսպէս և ոմն այնպէս. ամենայն ոք օրինաւոր համարի զթելադրեալն յանդթութենէ. որոց և ոչ միում հակառակ կայ աստուածային վշտակիրն. միայն աստուածութեան զօրաւիգն կալով Նմա մինչև 'ի սահմանեալ կէտ ժամուն՝ յորում պյետխին աւանդեսցէ շունչ: Եւ որպէս սովորութիւն է տալ մահապարտից կաղձուրիչ ինչ առ 'ի առկալոյ տանջանացն, յետ արբուցանելոյ երկոցուն աւազակացն գինի բարի, մատուցանեն առ Յիսուս գինի լեղեաւ դառնացեալ: Թուին իմն գթալ 'ի նա վասն վաստակելոյն և նուաղելոյն, այլ զամենայն գործեն 'ի քամահանս և 'ի տանջանս նմին. կարեկցութիւն կեղծաւորին և կատաղութիւն կատարեն:

Տե՛ս, հոգի իմ, եթէ զի՞արդ ամենայն անդամօքն տանջեալ գոլով Յիսուսի՝ բաց 'ի լեզուէն և յաղեացն, տան Նմա զլեղին, զի լինիցի ամենաիմք կատարեալ Այր ցաւոց: Զայս եւս Նախասացեալ էր մարգարէին, եթէ լեղի արբուսցէ Մեսիայի ժողովուրդ իւր սիրեցեալ: Եւ ո՞չ թուիցի քեզ Նա, հոգի իմ, արժանի մեծի գը-

թութեան՝ վասն որ 'ի դիւր կազդուրման նորա տան նմա դժնդակ և զզուելի արբումն. և ընդէ՞ր ոչ տան արտասուօք ընկերշակիցես 'ի դառնութեան ցաւոց նորա: Ո՜հ, եթէ էր յիմ իշխանութիւն լալ, արդարև, ո՛ Յիսուս, ոչ այլ ինչ առնէի 'ի չարչարանս քո՝ բայց լալ ևեթ. այլ զի չունիմ արտօսր՝ տաց զոր ունիմս, զխմացուած վշտակցութեան և կարեկցութեան՝ 'ի տեսանելն իմ զքեզ վասն իմ ախմարիս այդպէս ծանակեալ յիմաստութեան քում. և վասն իմ թշուառիս՝ այդպէս դառնացեալ 'ի քաղցրութեան քում: — Եւ զի՞նչ իցէ մատուցանելագ քեզ գինի լեղեաւ խառնեալ, եթէ ոչ հաւատքն իմ՝ զոր խանգարեմ ախտաւոր բարուքս. խորհուրդքն եկեղեցւոյ և աղօթքն՝ զոր մատուցանեմս գաղջութեամբ և պղերգութեամբ. գործքն բարիք՝ զոր կատարեմ խոտորնակ մտօք սնափառութեան, նախանձու և կեղծաւորութեան: Ի լեղիդ՝ որ զքիմս քո դառնացուցանէ՝ ճանաչեմ յաւէտ զորկորածէտութեան զմեղս իմ, որով յուտելն և յըմպել առաւել զախորժ զգայութեանս խնդրեմ քան զպէտս կարօտութեան: Ահաւադիկ, Թագաւոր փառաց, ամպարշտութիւն իմ, որով մեծագոյն ևս փայլէ ամենագորով սէր քոյին: Ցաւէ ինձ յոյժ ընդ ապերախտութիւն իմ, մինչ այնքան շնորհօք պարգևաց, և մանաւանդ ամենապատիւ խորհրդով հաղորդութեան՝ դու տաս ինձ մեղր, և ես քեզ զլեղի: Աղէ, յաղթեա բարութեամբ քով չարութեանս իմոյ. և վասն դառնադառն լեղւոյն զոր ճաշակեաց, տուր ինձ ճաշակել զանուշարար քաղցրութիւնս սիրոյ քո:

Յիշեցից զլեղին Յիսուսի՝ 'ի ճաշակելն իմ կերակուրս՝ 'ի մեռելութիւն ախորժակաց որկորոյ. և զի մի՛ լեղախառն իցեն գործք իմ՝ մի՛ ե-

դից զի ամենայն գործք իմ բարիք իցեն և ուղիղ մտօք կատարիցին։

ՅԺԸ. Կարկառէ Յիսուս զօրհնեալ շրթունսն յանօթ գինւոյն և լեղւոյ մատուցելոյ, այլ անդէն յառնուլ զճաշակն՝ յետս կայ և ոչ կամի ըմպել. առաւել զծարաւն, զնուաղումն և զթալանայն ընտրելով՝ քան զգառնահամբոյր կազդուրումն։ Ոչ եթէ հրաժարէ 'ի գժպհի ըմպելւոյն՝ առ 'ի չկրել զտաժանելի դառնութիւնն, — այն զի այնքան ճաշակէ որ բաւական իցէ գեղել 'ի թոյն զքիմսն, և տալ և բերանոյն զիւր տանջանս, — այլ յայտ է թէ առ խորհուրդ ինչ չէառ յանձն կլանել զայն։ — Ի լեղին կերպարանեալ էն մեղք մեր. վասն մեղաց յօժարի հատուցումն առնել յաւագին չարչարանօքն. այլ ոչ 'ի ներքս յաղխան ընդունել և խուրացուցանել իմն յանարատ յաստուածացեալ մարմինն իւրում և զայն՝ որ պատկեր և ստուեր է մեղաց։ Քա՛ւ, զայդ չառնու յանձն։ Լեղիդ այդ չկայր 'ի բաժակին՝ զոր կամակար ընկալաւ 'ի պարտիզին. վասն որոյ և քաղցրացան նմա ձաղկանքն, քաղցրացաւ խաչն, քաղցրացին և բևեռքն. այլ ոչ է հնար յաղխ նորին քաղցրանալ լեղւոյ մեղաց՝ ոչ առ ամենասուրբ հոգին և ոչ առ ամենամբիծ մարմինն։ Եւ թէպէտ ոչ է լեղի անապակ՝ այլ խառնեալ ընդ գինւոյ, բայց և ոչ ընդ խառնուածն հանդուրժէ. ոչ ընդ դառնութիւն լեղւոյն սպուժէ՝ այլ ընդ օրինակեալն 'ի լեղւոյն։

Ո՛վ, քանի՛ պատուական է ինձ առաջին այս դաս՝ զոր տայ ինձ 'ի Գողգոթա, Տէր իմ Յիսուս. զգինւոյ բարւոյ երևոյթ ունին առածք ինչ և կարծիք՝ հաճոյականք առ հպարտութիւն և առ զգայութիւնս. այլ որքան և քաղցր իցէ գինին՝ խառնուած ունի լեղւոյ, և արժան է ինձ

հրաժարել յայնմանէ՝ ըստ քում օրինակի։ Լուայց զոր ասեն ինձ սատանայ, մարմին և աշխարհ, բայց ոչ անսացից, այլ հերքեցից։ Այս են չարիք իմ, ո՛վ Տէր, զի 'ի հեշտանս երկրաւորս զգամ զքաղցրն և ոչ զդառնն. խանգարեալ են ճաշակք իմ, և ոգի խռովեալ 'ի կրից՝ դիւրաւ խաբի. այլ դու Տէր, տո՛ւր ինձ ճաշակել զդառնութիւնս նոցին, զի մի արբեցայց յընդունայն քաղցրութենէ նոցին, նա մանաւանդ զզուեցայց 'ի քաղցրութենէ խաբուսիկ հրապուրանացն։ Հոգի իմ ծանրացեալ բազմապատիկ խօթութեամբք ըստ թուոյ ախտից իմոց՝ ոչ ևս ընտրէ զհամեղն ճաշակ. աղէ, դու ըստ սովորութեան մարդասիրութեան քում մատիր բժշկել զայն, որպէս զի ճաշակեցից, ծանեայց և ընտրեցից զճշմարիտ և զմեծ քո քաղցրութիւնդ, զոր պահես այնոցիկ ոյք սիրեն զքեզ. մի ինչ հաճոյ և բերկրարար թուեսցի ինձ բայց 'ի քէն. ամենայն հաճոյք իմ իցեն միայն 'ի սէր քո. և ընտրեցից յաւէտ վշտակրել ընդ քեզ՝ քան բերկրել առանց քո։ Այլ ե՞րբ իցէ, ո՛վ Յիսուս իմ, զի սկսայց ճշմարտապէս սիրել ըզքեզ, առ 'ի մոռանալոյ զընդունայնութիւնս և գտանելոյ զհեշտանս իմ 'ի քեզ միայն՝ որ եսդ ճշմարտութիւն։

Ի վարուցս կենաց իմոց հաստատեցից զայս կանոն, հրաժարել յամենայն խառնուածոյ լեղւոյ, այսինքն է՝ յամենայնէ յորում մարթ իցէ լինել մեղաց ինչ կամ կարծեաց և վտանգի մեղաց։

ՅԺԹ. Փութանակի վճարել փափագելով զգործն՝ ոչ ևս ժամավաճառ լինին Հրեայքն, յետ այպանելոյ զնա որպէս զեղեռնաւոր ոք 'ի տանջանարան մահու մատնեալ, գործօնեայք

անօրէնութեանն ձեռն արկանեն 'ի գործ կատարման վճռոյ մահուանն. և ոմն առնու զուռն և զկռան, ոմն զբևեռս, միւս զայլ ինչ գործի բրելոյ զփոսն ուր կանգնելոց է խաչն. և այլք յախուռն դիմեն 'ի վերայ նորա զերծանել ըզհանդերձսն: Ամենայն ինչ ամբարշտօրէն և յանխնայ գործի. և քանզի վէրքն՝ կցեալ մածեալ էին 'ի պատմուճանն, վերստին պատառեալ փեռեկլին անհնարին ցաւով և բղխմամբ արեան: Այս չորիցս 'ի հրապարակի բազմութեան հոլանեալ երևի մերկ ամօթահար և վշտահար. և ոչ մերժէ զտաժանակիր պատուհաս մերկութեանն, առ 'ի զգեցուցանելոյ զմեզ անմահական կենօք:

Այլ դու տե՛ս, հոգի իմ, զՓրկիչն քո, զի՞րդ 'ի ճապաղիս արեան համակեալ կայ. և խորին յարգանօք երկիր պագ արեանն հեղլոյ 'ի գետին, զի արիւն է աստուածային՝ որով դուք փրկեցար: Հայեաց 'ի Միածին Հօրն յաւիտենականի, որ ամբարձեալ զաչս յերկինս՝ գոհանայ, զի եհաս ժամ ելանելոյ 'ի խաչ՝ այսպէս մերկ և աղքատ՝ առ սէր քոյին: Այլ իմանայցե՞ս զոր նայն մերկութեամբն ուսուցանէ քեզ: — Ոչ ոք է բաւական յաղթող լինել աշխարհի և սատանայի՝ եթէ ոչ իցէ աղքատ և մերկ. և զի աղքատաց եղև խոստացեալ արքայութիւն յաւիտենական երանութեանցն, հարկ ուրեմն է անհրաժեշտ աղքատանալ առ 'ի ժառանգելոյ զայն: Եւ ո՞ր իցէ հարկաւորս այս աղքատութիւն. — Աղքատութիւն հոգւոյ, աղքատութիւն ըղձից, որ է կեալն հրաժարեալ յաշխարհայնոց. չսիրել չփափագելն նոցին, նա մանաւանդ արհամարհել որպէս ունայնութիւնս անցաւորս, խաբէականս, անարժանս 'ի յարգ և 'ի տենչ հոգւոյ՝ որ սահմանեալն է 'ի ժառանգութիւն փառաց յաւիտենականաց:

Ո՛վ Յիսուս իմ, ամենեւին սիրող աղքատութեան, որ հաճեցար ծնանել աղքատ, կեալ աղքատ, այլ եւ 'ի մահուդ լինել աղքատ. աղէ, լուսաւորեա զմիտս իմ ճանաչել զհեքութիւն ունայնութեանց՝ առ 'ի խոտել զնոսին. եւ զյարգ աղքատութեան՝ առ սիրելոյ զայն: Դու որ կամաւորաբար ընտրեցեր զաղքատութիւն, առ 'ի բաշխելոյ մեզ զանբաւ մեծութիւնս քո, պարգեւեա ինձ 'ի մեծամասն բաժին՝ զաղքատութիւն հոգւոյ, որով սիրտ իմ է գոհասցի յարկածս նեղութեանց եւ կարօտութեանց, եւ զերծ յամենայն ստեղծուածոց՝ ընդ քեզ միայն միասցի՝ ընդ անբաւելի բարիդ: Խնդրեմ 'ի քէն զոր չունիմս եւ զոր ինքնին ոչ կարեմ ունել. եւ այն ունիմ առ 'ի քէն՝ զի վասն մերկութեանդ եւ աղքատութեան առ սէր իմ կրեցելոյ, տացես ինձ սիրել եւ կատարել զաղքատութիւն հոգւոյ՝ առ սէր քո. որպէս զի հայեցայց միշտ արհամարհօտ աչօք յունայնութիւնս, եւ յարգող աչօք 'ի յաւիտենականն:

Աղքատութեան հոգեւորի հակառակ կայ յիս զակատումն 'ի սէր դիւրութեան. անկ է ինձ չափ գնել դմին. առաքինութիւն ոչ աղքատութիւնն է՝ այլ սէր աղքատութեան. ոչ յիրս՝ այլ յիղձս:

Խաչելութիւն Յիսուսի :

Յի. Քանզի աստուածայինն իմաստութիւն զամենայն տնտեսէր 'ի Յիսուս, որպէս 'ի տեղի խաչելութեան ընտրեաց զլեառնն Գողգոթա, այսպէս սահմանեաց եւ զժամանակն, առ 'ի ցոյց

ազնուագութ սիրոյն , զի խաչեսցի 'ի ծաղկի տիոյն , և յաւուր տարեկանի ստեղծման մարդոյն , և 'ի նմին ժամու յորում յանցեաւ մարդն առաջին ։ Աւետարանիչքն միով ևեթ բանիւ նշանակեն զխաչելութիւն Յիսուսի , թերևս պատկառեալք ահիւ և արտասուօք ․ մեզ թողլով նկատել զօրինակ իւրացն , որ լիովին յայտնեսցի 'ի համաշխարհական դատաստանին՝ յԱստուծոյ , որում միայն ծանօթ է չափ գթութեանն Յիսուսի և անգթութեան Հրէիցն ։

Արդ կերպարանեսցուք զամենագութն Յիսուս 'ի հրամայելն նմա զի անկցի յերկիր՝ տարածանել 'ի վերայ խաչին ․ անկանի վաղվաղակի 'ի գուճս , և խոնարհեցուցանէ զգլուխն 'ի հնազանդութիւն պատուիրանի Հօրն երկնաւորի ։ Աստանօր արդարև 'ի մօտալուտ պահու խաչելութեանն՝ խոնարհութեամբ իւրով մեծ փառս մատուցանէ վայելչութեան Աստուծոյ , ցուցանելով զանձն հնազանդ մահուչափ , և 'ի մահ խաչի՝ յանարգագոյնն քան զամենայն մահ ․ և աստանօր դարձեալ ստուգապէս կատարէ զփրկագործութիւնն , հատուցանելով վասն մեր 'ի խաչին զգինս աստուածային կենաց իւրոց ։

Խորհեա՛ց , հոգի իմ , զի եթէ սքանչելի էր հնազանդութիւն Որդւոյն Աստուծոյ 'ի մարդեղութեանն վասն քո , առաւել ևս հրաշալի է հնազանդութիւնն 'ի ժամուս , 'ի դնելն վասն քո զանձն իւր 'ի վերայ խաչին՝ առ 'ի մեռանել որպէս զվատշուէր ոք ։ Այսպէս ուսուցանէ քեզ հնազանդել Աստուծոյ ։ Իսկ դու ո՞րպէս ։

Ո՛վ զարմանալի հրաշիցս , ընդ որ արժան է և երկնից իսկ հիանալ ։ Ես ամենևին հնազանդ եմ յանկութեանց մարմնոյ և օրինաց աշխարհի , մինչև յանձն առնուլ զմահ յաւիտենական 'ի պատուհաս չարաչար հնազանդութեան իմոյ ․ և

ո՜հ, քանի՜ խեռ և սաստիկ եմ 'ի հնազանդել քեզ, Տէր իմ Տէր և Աստուած իմ, որ կեանս յաւիտենականս խոստացար հնազանդելոց քոց: Այս իմ վարք խոտորնակք՝ արգասիք են խոտորնակի սիրոյ տիրեցելոյ անձինս: Զակատեալ սիրեմ զզգայունս իմ, զընդունայնութիւնս աշխարհի, և ուր սէր իմ մտէ՝ անդր և հնազանդութիւն իմ: Ո՛վ Աստուած իմ, մաքրեա զսէր իմ յամենայն աղտոյ չարէ. զի մի ևս սիրեցից զժամանակեայս և զանցաւորս, այլ զհոգևորսն և զմշտնջենաւորս. մի ևս զաշխարհ՝ այլ զքեզ զարարիչդ աշխարհի. և եթէ սիրեցից զքեզ, որպէս և արժան իսկ է, ապա և հնազանդեցայց քեզ: Աւադիկ քեզ սիրտ իմ, լի՛ց սիրով քով, և խոստանամ քեզ հնազանդել անվրէպ յամենայնի:

Աւ 'ի նմանող լինել Յիսուսի որ հնազանդի դահճացն, զաչս առ Աստուած ունելով, կրթեցայց 'ի հնազանդել նաև ստորնադունից քան զիս, նախամեծար առնելով զկամս այլոց քան զիմս՝ առ սէրն Աստուծոյ:

ՅԻԱ. Ի չարչարանսն Քրիստոսի անկ է հանապազ կառուցանել զակն հոգւոյ մերթ 'ի մարդկութիւնն որ կրէ, և մերթ յաստուածութիւնն որ նախախնամութեամբն անտես զամենայն սահմանեալսն ողորմութեամբ 'ի սկզբանէ յաւիտենից. վասն այսորիկ դիտելով Աստուածամարդոյն եթէ հասեալ է ժամ՝ յորում ոչ 'ի հարկէ այլ կամաւորաբար ելանելոց է 'ի խաչ, աւադիկ տարածանի 'ի խաչին, գնելով զթիկունսն տեռեալս 'ի վիրաց՝ 'ի վերայ կարծր և անհարթ փայտին: Զէ ինչ պիտոյ բուռն առնել նմա առ այդ. ինքնին տարածանէ և զբազուկսն, որպէս թէ գիրկս կամելով արկանել սիրելւոյ

ժողովրդեան իւրում, թէպէտ և ապստամբի և ապերախտի․ և փարել և պնդել 'ի գոգ իւր զամենայն հաւատացեալս եկեղեցւոյ իւրոյ:

Կարկառէ նախ զաջոյ ձեռնն՝ 'ի դիմաց սրտին, նշանակ սիրոյն, և զի այնու մեղաւ Ադամ առնլով զպտուղն․ և դահճին յարմարեալ յափամէջն զբևեռնն սուսար, բաղխելով բաղխէ կռանահար, զի անցեալ ելցէ ընդ ձեռնն և ընդ փայտն մինչև 'ի միւս կողմն: Ո՛հ, որպիսի ցաւք և նուաղանք քստմնելի գելմանց և գալարմանց՝ 'ի պատառատել մսոյն և մանանց և ջղաց և ներդից և երակաց 'ի փափուկ մարմնի անդ:

Տե՛ս, հոգի իմ, զիա՞րդ ցնցղկեալ ցայտէ արիւնն 'ի վիրաց անտի․ և ո՞րպէս Յիսուս նուիրէ զայն առ Հայրն երկնաւոր վասն քո: Ո՛հ, խիստ քան զվէմ ապառաժ է սիրտ քո՝ եթէ ոչ կակղիցի յայդ տեսիլ: Աղաչեա զՓրկիչ քո տալ քեզ կաթս արտասուաց վշտակցութեան, արտասուաց զղջութեան․ և 'ի ծունր անկեալ մօք՝ երթ երկիր պագանել և գոհանալ և համբուրել զձեռնն սուրբ զվասն քո բևեռեալն:

Ո՛վ Յիսուս իմ, կարեկից լինիմ քեզ 'ի դառնաշունչ ցաւսդ՝ զոր կրես յաջում ձեռինդ՝ որ չափէն զերկինս և զարդարեալ է աստեղօք, և լցեալ երանաւէտ բարեօք: Ո՛, քանի՜ պարտական եմ ես այդմ ձեռին․ դովաւ պաշտպանեցեր ինձ, մերթ առ 'ի պնդել և չտալ թոյլ անկանելոյ, մերթ կանգնելով յետ անկմանս իմոյս ապիրատութեամբ: Յիսո՛ւս իմ քաղցրագութ, հաստուած եմ ձեռինդ աջոյ, և 'ի դիմանէ 'ի բևեռելոյդ 'ի խաչի՝ ակն ունիմ շնորհաց դարձի ապաշխարութեան, շնորհաց կատարեալ ուղղութեան և յաւիտենական փրկութեան: Կարկա՛ռ ինձ, ո՛վ Յիսուս, զաջդ այդ և փառաւորեա զդա յիս, տալով ինձ շնորհս ազդուս՝ առ 'ի յաղթել ամե-

նայն Թշնամեաց յաւիտենական փրկութեան իմոյ, և հասանել 'ի լեառնն սրբութեան, 'ի լեառն փառաց, զոր դովլին իսկ աջով ստացաւ վասն իմ։ Ո՜վ ամենասուրբ վէրք, երկիր պագանեմ ձեզ և աղաչեմ պաշտպանել զիս հանապազորդ։

Ի վերայ անտի աջոյ ձեռինն Յիսուսի համբերեցայց ելեալ զշնորհսն՝ որովք յետ մեղանացս խոնարհեցայ ապաշխարութեամբ։

ՅԻԲ. Դժնդակագոյն ևս է բևեռումն ձախոյ ձեռինն. զի ոչ հասանելով 'ի բացուած ծակին 'ի խաչի անդ, կալեալ դահճաց զբազուկն՝ քարշեն ուժգին ձգմամբ մինչև հասցէ 'ի տեղին, լայնելով զպատառուած աջոյ ձեռինն, խախտելով զյօդուածս ուսոյն, և հերձակտուր առնելով զյոլովս 'ի ջլացն. և ապա բևեռեն զայն հանդոյն առաջնոյն. և 'ի յաւելուածոյ ցաւոցն 'ի ցաւս՝ փոքր միւս ևս 'ի նուաղելոյ ոգւոյն և 'ի Թալանալոյ՝ շնչասպառ իսկ լինէր բարեբանեալն Յիսուս։ Եթէ և զմի յանասնոց կենդանեաց տեսանէաք զայդ օրինակ խաչեալ՝ ապաքէն 'ի գութ շարժէր մարդկային բնութիւն. իսկ արդ քանի պատճէն արժան իցէ մեզ կարեկից վշտակից լինել ընդ Յիսուսի։ Այլ մի այնքան ընդ մարմնոյն ցաւս յառեսցուք՝ մինչև զհոգւոյն աղէտսն մոռանալ։ Որպիսի՞ արդեօք տաժանական տխատանք անկան 'ի վերայ նորա՝ 'ի ներքսւոյն յայնքան նախատանաց և 'ի տառապանաց։ Այլ և 'ի վերայ այսոցիկ՝ այդ ամենայն կիրք ոչ խափանեն զառաքինի մտացն ներգործութիւն. և որպիսի՛ սիրայիր աղերս առ Աստուած, որպիսի՛ սէր առ մեզ. որպիսի՛ սէր և առ խաչն՝ յոր այդպէս պնդապէս կցի և բևեռի։

Մատիցուք հարցանել զնա. Զի՞նչ են բևեռքդ զոր 'ի մէջի ձեռացդ ունիս։ Պատասխանի առնէ.

Նշանակք են և վկայութիւնք սիրայօժար հնազանդութեան իմոյ: Ո՜հ. քանի՜ բաղում իրք են ուսանելիք հայելովն չափ միայն 'ի ձեռագ յայդոսիկ յանարատս և վիրաւորս: Աստուածային գթութիւն դրոշմեալ 'ի նոսին զանուն իմ. և ո՛ տայր ինձ զերանելին բախտ՝ տպաւորելոյ և ըղձերս նոցին 'ի սրտի իմում, առ 'ի բաց ջնջել անտի զամենայն տխուր և զպատկերս ախտից: — Ո՛վ բարեգութ Յիսուս, հաճեա՛ց յիշել զի տեղւած եմ ձեռաց քոց, ձեռացդ՝ որք բևեռօք հեղուսան վասն իմ. ո՛հ, միթէ խոստա՞ն համարիցիս զհաստատուած ամենակարող և փառաւորեալ ձեռացդ այդոցիկ: Հայեաց 'ի վէրս ձեռացդ, և ընթերցեալ 'ի դոսին բևեռօք և արիւնագիծ տառիւք գրեալ զփրկութիւն իմ, գթա յիս և փըրկեա: Ձկամիմ այլ ուրեք խնդրել ինձ տեղի ապաւինի և հանգստեան, բայց միայն 'ի վէրքս յայսոսիկ. յաջում անդ է աղբիւր կենացն՝ որ կեանք են Ճշմարիտ. 'ի ձախում՝ գանձ անբաւ մեծութեանց և փառաց. և իցէ՞ ինչ ինձ աւելի քան զայդոսիկ փափագելի կամ ա՛նկալի: — Բևեռեա 'ի վէրս քո, ո՛վ Փրկիչ, զամենայն սէր իմ և զիղձս և զյոյս. քանզի անդանօր հանդիպին ողորմութիւն և Ճշմարտութիւն, արդարութիւն և խաղաղութիւն, առ 'ի հաշտ առնել զիս ընդ Աստուծոյ: Վէ՛րք ամենասուրբք, պաշտեմ, գոհանամ, և համբոյր տամ ձեզ. և աղաչեմ լինել ինձ ամուր ապաւինի յերեսաց վտանգաց, որք հանապազ պաշարեն զանձն իմ. կորուսանել զշնորհն Աստուծոյ, և զփառսն յաւիտենականս:

Առ 'ի յապահովել ինձ 'ի վէրս Յիսուսի զյոյս փրկութեան իմոյ՝ ծանեայց զայս խմաստ որպէս ստատապեալ 'ի նոյն խոկ 'ի վէրսն. եթէ, Պարտ է հնազանդել Աստուծոյ, և որում փոխան Աստուծոյ կարգեալ իցէ 'ի վերայ իմ:

ՅԻԳ. Յետ բևեռելոյ զձեռսն Յիսուսի՝ մատչին առ ոտսն. զորս, զի ոչ հասանէին 'ի նշանակեալ տեղի բևեռմանն, բռնին հարկեալ միոյ 'ի դահճացն ձգէ ամենայն զօրութեամբ ուժոյն. և ապա զիրերօք ածեալ զնոսին՝ ծակոտեն երկաթնագոյն բևեռաւ՝ և բախեն կռանաւ, մինչև ելցէ սայրն ընդ միւս կողմն: Յանգթաբար և 'ի բուռն քարշանացն՝ այնպէս ձարձատին ջիղքն և տրորին մասունք թիկանցն, կրծոցն և կողիցն, զի արտաքս 'ի բնական կայիցն ցցուեալ ոսկերացն, մարթ էր ըստ իւրում իսկ նախատացութեանն բերանով մարգարէին, մի առ մի թուել զնոսին: — Անմանք յոյժ և անհնարինք քան զկարծիսեն ցաւքն: — Իսկ յիմում սրտի ո՞ւր իցէ ցաւակցութիւնն: Եթէ փուշ մի խոցոտեսցէ զոտս իմ՝ յոգւոց հանեմ և տաղտապիմ 'ի ցաւոյ խայթիցն. իսկ վասն Յիսուսի հեղուսիւք խոցելոյ ոչ յուզին գութք իմ, որպէս թէ յանզգայից ոք արարածոց իցեմ: Եւ զի՞նչ իցէ այս, սիրել զոտն մի, զմի յանդամոցս՝ քան զՅիսուս Քրիստոս՝ ըզգլուխն իմ:

Հայեաց և տես, հոգի իմ. քանի՞ համբերութեամբ և հեզութեամբ տանի նա զանձնակսկիծ տանջանացն. ոչ ընդ խայթուածս փշոց գլխոյն քրթմնջելով, ոչ ընդ խոցուած բևեռաց ձեռացն և ոտից, և ոչ ընդ դահճինն՝ որք անագորոյնս առնեն ընդ նմա քան ընդ անբան անասուն: Դա է գլուխ մեր, ընդ որում անկ է մեզ պատշաճեալ յարմարել՝ եթէ կամիցիմք փրկել զանձինս: Այլ ո՛հ, քանի՞ հեռի եմք 'ի նմանութենէ նորին՝ 'ի փափկութիւնս, 'ի զգայութիւնս և 'ի կարծմտութեան մերում: — Ո՛վ ամենագութ Յիսուս, խոնարհիմ առաջի քո լի ամօթով և շառագունութեամբ. թո՛յլ տուր ինձ, աղէ՛, փարիլ զոտիւք քովք խաչեցելովք. չեմ արդարև այդմ

արժանի, զի մեղաւոր եմ մեծեղեան. այլ երկայնամիտ լեր և ընդ իս, և մի մերժեր յոտից քոց, յոտից՝ ընդ որովք ախեղերքս կան, զոր Սրովբէքն փառս համարին թևաքօղել, և որք հրեկայաքայլ յերկնից յերկիր ընթացան վասն իմ: — Ո՛վ տէր սրբազանք, այդպէս վասն իմ բևեռուալինդք 'ի խաչափայտին, փոխանակ զի ես համարձակագնաց եղէ 'ի շաւիղս անօրէնութեան 'ի կորուստ անձին իմոյ, ապաշաւելով ընդ մեղս իմ՝ հայցեմ թողութիւն. և վասն արդեանց ձերոց աղաչեմ զՏէր՝ մուծանել զիս 'ի ճանապարհս ուղղութեան, և տալ զօրութիւն գնալոյ ընդ հետս շաւղացդ անյողդողդ հաստատութեամբ, որպէս զի կարող եղէց հասանել 'ի կէտ նպատակի իմոյ: Ո՛վ տէր աստուածայեալք, դուք էք պատկեր ողորմութեան և դատաստանի. տուք ինձ արդ ճաշակել 'ի քաղցրութենէ ողորմութեանն, զի զերծայց 'ի դառնութենէ ահեղ դատաստանին:

Աղերս մի վշտակցութեան առ Յիսուս. աղերս մի զղջման ընդ մեղս իմ. և աղերս մի ապաւինութեան յողորմութիւնն Աստուծոյ, զի զօրացուսցէն զիս յառաջադրութեան կամացս միտ դնելոյ խնամով 'ի կատարելութիւն իմ:

ՅԻԴ. Բևեռեալ զՅիսուս, կցեն 'ի գագաթն խաչին տախտակ մի, յորում գրեալ է, Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից: Այսպէս յայտ յանդիման առնելով ամենայն աշխարհի, եթէ յետ այնքան աղմկից ամբաստանութեանց և դատից՝ ոչ գտաւ նմա այլ պատճառ մահապարտութեան՝ բայց այս միայն, զի Թագաւոր է և փրկիչ աշխարհի: Անհաճոյ է Հրէիցն այս ձև գրութեան Պիղատոսի. այլ ըստ վերնական իմն ակնարկութեան՝ կամի նա զի զոր գրեաց գը-

րեալ լիցի. քանզի անյեղաշրջելի ճշմարտութիւն է զոր ասացն Յիսուս զանձնէն, եթէ Թագաւոր իցէ. և հակառակ կամաց Հրէից միշտ ճշմարտութեամբ իցէ նա Թագաւոր և 'ի մահուն և յետ մահուն: — Քահանայապետ մեծ է Քրիստոս, որ 'ի սեղան խաչին պատարագէ զանձն իւր առ Հայր. է և Թագաւոր, որ քառակուսի անկեամբք խաչին հիմնեցուցանէ զԹագաւորութիւն, իւր և ծաւալէ 'ի չորեքծագեան ոլորտս աշխարհի. վասն այնորիկ և գրեցաւ 'ի պիտակին յունարէն, հրէարէն և լատիներէն. որպէս զի կատարեսցի մարգարէին պատգամ, եթէ ամենայն ազգք և լեզուք ծառայեսցեն այսմ Թագաւորի:

Տե՛ս ինձ, հոգի իմ, զիարդ ամենայն ինչ բովանդակի յառաջնում անդ բառի պիտակին, 'ի Յիսուսն անուն: Վասն այնորիկ խաչեցաւ՝ զի Յիսուս էր, այսինքն է Փրկիչ. և Թէ վերասցի այս միայն պատճառք մահուն՝ որ վասն մեղաց աշխարհի, չմնայ այլ ինչ պատճառ: Յիսուս է նա, և զի Յիսուս է՝ Աստուած գոլով և մարդ, ուագիկ 'ի վճարելն անդ մարդկութեանն՝ աստուածութիւնն արքայակերպ վայելչութեամբ ճառագայթէ 'ի վերայ մարմնոյն. նշանակելով տառիւք տախտակին՝ եթէ Թագաւոր է աստուածային, և՛ ընտրելոցն որք հաւատան 'ի նա և պսակեսցին 'ի նմանէ, և՛ մերժեցելոցն անհաւատից՝ որք պատժեսցին 'ի նմանէ:

Յիսուս իմ, Փրկիչ իմ, Թագաւոր իմ և Աստուած իմ, ո՜վ, քանի՜ խնդութիւն է ինձ՝ զի 'ի զրպարտութիւնս անդ բացերևակի պարզի անմեղութիւն քո, և փառք 'ի Թշնամանս անդ: Խնդութիւն է ինձ զի 'ի տախտակի խաչիդ ծանիցի, յամօԹ Թշնամեացդ, զի աստուածային ոմն ես Թագաւոր 'ի վերայ ամենայն Թագաւորաց

երկրի. այսպէս գրեաց Հայրն յաւիտենական, և այսպէս եղիցի անվրէպ: Եթէ փրկեցայց՝ դու ես Աստուած իմ և Թագաւոր իմ, որ յաւիտեանս երանելի արասցես զիս յարքայութեան քում. և եթէ դատապարտեցայց՝ համայն և այնպէս Աստուած իմ ես դու և Թագաւոր, որ 'ի յաւիտեանս կացցես զիս 'ի ներքոյ պատուհասից ամենարդար ցասման քո: Քանզի զքեզ՝ ոչ ինչ պակաս յատեղանէ հաստատութեանն երկնից՝ պատուէ և խանձող մի դժոխոց. այլ ինձ չիցէ՞ լաւ ես ճանաչել և օրհնել զքեզ, Աստուած իմ և Թագաւոր իմ, սիրով և սուրբ յուսոյ անկեղծութեամբ, քան թէ հիքաբար յետոյ անիծանել զքեզ, և լինել իսպառ անզեղջ մեղաւոր: Այո՛, Յիսուս իմ, ճանաչեմ և պաշտեմ զքեզ որպէս Աստուած իմ և Թագաւոր իմ, և պատրաստեալ կամ հնազանդել քեզ յամենայն 'ի հաճոյս կամաց քոց: Ո՛վ Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից, այսինքն է ամենեցուն որք հաւատան 'ի քեզ և յուսան, ողորմեա ինձ:

Քանիցս և հայեցայց կամ խորհեցայց 'ի խաչելեալն, յիշեցից զտախտակն՝ առ 'ի հաւատալ և խոստովանել՝ եթէ Այրդ այդ ցաւոց՝ Աստուած է ճշմարիտ. և ըստ չափու հաւատոց իմոց եղիցին ինձ և արդիւնքն:

ՅԻԵ. Զորք են դահիճքն խաչահանուք Յիսուսի. և ոչ գտանելով վարձս արժանաւորս անգթութեան իւրեանց, պատառեն անարգանօք զհանդերձս նորա 'ի չորս մասունս. իսկ վասն ներքին պատմուճանին վիճակս արկանեն թշնամանօք, որպիսի և ոչ ընդ աւազակին գործեն: Դուզնաքեայ են իրք, այլ և այնպէս 'ի գիր արկեալ յաւետարանս, քանզի կանխաճառեալ են 'ի մարգարէից. և զի յայտնապէս կատարեցան

'ի Քրիստոս՝ 'ի հաստատութիւն հաւատոց մերոց կրթին. թէպէտ և թաքունք են խորհրդով, այլ սակայն զգրի հարան: Այլ մեք միտ դիցուք ուշի ուշով միում ևեթ խորհրդեան: — Յարտաքին հանդերձն որ 'ի չորս բաժանի, օրինակի արտաքին երևոյթ քրիստոնէութեան, որ ընդ չորեսին կողմանս աշխարհի տարածեցաւ. քանզի հասարակաց բաշխին բանքն Աստուծոյ և խորհուրդք եկեղեցւոյ. այլ պատմուճանն ներքին օրինակ է ներքին ոգւոյ օծմանն, եռանդեան, սիրոյ և շնորհաց կենդանարարաց՝ որ ոչ ամենեցուն տուեալ լինին. այլ իբրև վիճակաւ իմն, և սակաւուց պարգևք. քանզի որպէս վիճակն անկանի առանց ակնառութեան անձին կամ արդեանց, այսպէս և յաստուածուստ տըւեալ լինին այս շնորհք՝ գաղտնի դատաստանանօքն՝ առ այնոսիկ՝ ընդ որս և հաճի և կամի:

Որքան խորինք են գաղտնիք աստուածային իմաստութեան՝ այնքան և խոնարհեցուցիչք անձանց մերոց: Զմտաւ ած, հոգի իմ, զի լինել 'ի հաւատս սակաւ ինչ օգնէ՝ եթէ ոք չունիցի և զոգին Քրիստոսի. գործք քրիստոնէութեան արտաքին իմն հանդերձք են հասարակաց ամենեցուն. այլ ոչ ամենեցուն է ներքին պատմուճանն, որ է ոգի շնորհացն՝ որով գործք արժանընդունակք հանդիսանան յաւիտենից կենաց:

Այս ոգի՝ վիճակաւ իմն է և վասն իմ. վասն զի ոչ լինի տուեալ ըստ արդեանց, այլ ըստ սոսկ ողորմութեան հաճութեանն Աստուծոյ: Եւ ո՞ գիտէ թէ անկցի և ինձ այդ վիճակ: Ո՛վ անդունդք անքննինք. ոչ առ անյուսութիւն ինչ խորհելի է այդ, այլ առ 'ի խոնարհութիւն: Եթէ ունիցիմ խոնարհութիւն՝ անկցի և ինձ վիճակ հաճոյ լինելոյ քեզ, ո՛վ Աստուած իմ. վիճակ դալոյ յիս արդարացուցիչ և յարատևիչ

շնորհաց՝ զոր տաս միայն խոնարհաց առ 'ի քէն ընտրելոց։ Գաղտնութիւն դատաստանաց քոց ոչ է ինձ առիթ յուսահատութեան. քանզի գիտեմ ստուգութեամբ եթէ այս դատաստան է քո, լինել միշտ ձեռնտու խոնարհաց. և եթէ ոչ լինիցիմ խոնարհ՝ իմ յանցանք իցեն և իմ պատուհաս՝ ամենևին արդար առ 'ի քէն, առ հպարտութեան իմոյ։ Արդ, աղէ, տո՛ւր ինձ, Աստուած իմ, ճշմարիտ խոնարհութիւն, առ 'ի պատրաստ լինել յընդունելութիւն ոգւոյ սրբութեան, որ պիտոյ է ինձ 'ի ժառանգութիւն յաւիտենական փրկութեան. քանզի առանց խոնարհութեան անհնար է ժամանել 'ի սրբութիւն և 'ի փրկութիւն։

Գոհացայց զՔրիստոսէ վասն բարեացն զոր արար ընդ իս և առնէ յեկեղեցւոջ սրբում. և գուն գործեցից ընկերել ներքնոյն զգործս արտաքին առաքինութեանց։

Յիսուս խաչեալ 'ի միջի երկուց աւազակաց։

ՅԻՁ. Ի հին օրէնսն սովորութիւն էր բարձրացուցանել զզոհն՝ որպէս նուէր առ Բարձրեալն. այսպէս և զպատարագեալն վասն մեր զՅիսուս բարձրացուցանեն։ Փարշեն դահիճք զխաչն մինչև 'ի փոսն ուր կանգնելոցն է. և առ փոքր փոքր ամբարձեալ կշիռ ուղղակի յօդս՝ խոկ և խոկ միահաղոյն թողուն շեշտակի անկանել 'ի նոյն. որպէս զի յուժգին թնդմանէն սասանել ամենայն անդամոց խաչեցելոյն, և յօդիցն լուծանել, և վիրացն վերապատառել, անհնարին ցաւօք և մահացուցիչ նուաղեցուցանելով։ Զայս

ևս կանխաւ ասացեալ էր նորա, յիշեցուցանե֊լով զծանօթ դէպսն, եթէ որպէս բարձրացոյց Մովսէս զօձն պղնձի 'ի նպատակ ժողովոյն, առ 'ի պահպանութիւն կենաց Եբրայեցւոցն 'ի խածա֊նող օձիցն, այսպէս կայր և ինքեան բարձրանալ 'ի խաչի, առ 'ի տալ իւրոցն հաւատացելոց ըղ֊կեանս՝ զոր վիշապն անդնդային կորզեալ էր 'ի նոցանէ: Վասն որոյ 'ի դէպ է մեզ նշմարել 'ի խաչին բարձրացելոյ ոչ զօրինակն այլ զօրինա֊կեալն Ճշմարտութիւն:

Տես արդ, հոգի իմ, զինարդ կայ Յիսուս բե֊ւեռեալ 'ի բաց, լեզու արենաթաթախ, աչք կըկո֊ցեալք, դէմք 'ի դալուկն մահու հարեալք, մարմին հիւծեալ, դոգք տրորեալք որպէս թէ չունիցին անդամս և փորոտիս: Ո՜հ, որպիսի՜ տագնապք, որպիսի՜ վիշտք անթարգմանելիք, անիմանալիք, կանգնիլ կալ նորա 'ի բարձու յայս ձև տարագու, չունելով դոյզն ինչ յե֊նարան բովանդակ ծանրութեան մարմնոյն՝ բաց 'ի բևեռացն: Իսկ իմ որպիսի՜ այս խստասրտու֊թիւն, զի ոչ մորմոքիմ 'ի տեսլենէդ և ոչ 'ի գութ շարժիմ: Ի Յիսուսէ խաչեցելոյ՝ նկուն ե֊ղեալ և ցածուցեալ տեղի տան և գլուխք. և չիցէ՞ առաւել քան զգլուխն իմս չարութիւն, եթէ ոչ կամիցիմ յաղթիլ յանբաւ բարութենէ նորին:

Ո՜վ Յիսուս խաչեալ, լուեմ զձայն վիրացդ՝ որք աղաղակեն ինձ սիրել զնա՝ որ այսքան դառ֊նագոյն տանջանաց տարաւ վասն իմ. ցանկամ և ես սիրել զքեզ, Փրկիչ իմ Յիսուս, և առ քեզ նուիրել բոլորովիմբ զսէր իմ. այլ սիրտ իմ այնպէս խիստ է, սառուցեալ և անզգայ՝ որ֊պէս թէ մեռելոյ դիականն: Աղէ, հար խոցեա զնա միով 'ի բևեռացդ, զի ընդոստեալ 'ի թըմ֊րութենէն զգաստասցի: Զկամիմ թէ յաւել֊

յես այլ ես վէրս 'ի վէրս քո վասն իմ, այլ զի վերածցես առ սիրտ իմ զմի յայնքանեաց քոյոց վիրաց, որպէս զի անձին զգացեալ և սա՝ ըղխես-ցէ առ քեզ հառաչանս ինչ սիրարկուս:

Առաջին արգասիք սիրոյ իմոյ այս իցէ, խա-չակցել ընդ քեզ, Տէր Յիսուս, ընդ խաչեցե-լոյդ վասն մեղաց, զներքին մարդս իմ զանեալն չարութեամբ: Ի զուր է ինձ ձգնել ամբառնալ 'ի խորհրդական նրբութիւնս սիրոյ, եթէ ոչ զետեղիցիմ յառաջնում աստիճանին, որ է սուրբ-ջանքն ընդ անդամնեն իմ զԱստուած, միամիտ առաջադրութեամբ ոչ ևս մեղանչելոյ նմա:

Ի ծունր անկեալ առ ոտս խաչին, աղաչեցից զխաչեցեալն Յիսուս, զի լիցի ինձ ստուգու-թեամբ՝ Փրկիչ, շնորհելով ինձ զսէրն կարևոր 'ի ժառանգութիւն յաւիտենից փրկութեան:

ՅԻԷ. Գրեալ էր 'ի սրբազան պատգամն, ե-թէ Մեսիայն եղիցի իբրև զՋահ որ սփռիցէ շուր-ջանակի զլոյս իւր. և արդարև եղաւ նա յաշ-տանակի բարձրանալումն 'ի խաչին: Իսկ Հրեայքն զի՞նչ գործիցեն 'ի խաւարեցուցանել զհամբաւ նորա: — Խաչելով ընդ նմին երկուս աւազակս՝ կանգնեն զնոսին մի ընդ աջմէ և մի ընդ ահեկէ, որպէս զի երևեսցի նա 'ի միջին որպէս գլուխ և վատթարագոյն քան զնոսին: Յամենայն ժամ գուն գործէին զլպարտութեամբք չարահամ-բաւել զնա, և արդ զյետին ձիգն ձգնին՝ յանար-գագոյն մատնեալ մահ ընդ չարագործս:

Խորհեա՛ց, հոգի իմ, զպատկառանս ամօթալից նախատանաց նորին, 'ի նշաւակի տեսութեան կալով այնքանոյ ամբոխի ազգաց և ժողովրդոց, չարագոյն վարկուցեալ քան զերկոսին չարա-գոյնս բնաւից որ յԵրուսաղէմ քաղաքի: Ճա-նաչէ զթշնամանան զոր գնեն նմա, և զգայ և կրէ

զամենայն տխրական կիրս՝ ըստ արժանի իրացն. և սակայն այնպէս հեզութեամբ տանի՛ զի յապշութիւն կրթէ 'ի վեր քան զբան. արժանի՛ պաշտաման և նմանողութեան. քանզի սովին յաղթէ գոռոզութեան աշխարհի:

Ո՜վ Յիսուս իմ, մեծ եղև խոնարհութիւն քո 'ի ծննդեան քում'ի մարին՝ 'ի միջի անբանից. իսկ զի՞նչ այս խոնարհութիւն, մեռանել խաչեալ 'ի միջի երկուց աւազակաց: Երբ վ. այս փառաց քոց ունէիր 'ի Թաբոր, յորժամ ցուցեր զքեզ ճառագայթեալ լուսով ընդ մէջ Մովսիսի և Եղիայի. իսկ այժմ 'ի Գողգոթա բիւրս բիւրուց խնդրես վկայս՝ ականատես լինել անարգութեան քում, 'ի կերպարան եղեռնաւորի և վատթար եղեռնաւորի, ընդ սպանիչս դատապարտեալ 'ի մահ: Զինչ իցէ այս խոնարհութիւն: — Վշտակից լինիմ հիքութեան քում, ո՜վ Բանդ յաւիտենական, որ իբրև 'ի միջակի կաս ամենասուրբ Երրորդութեան յարքայութեան անդ. վշտակից լինիմ քեզ, Թագաւոր փառաց, որ վասն իմ զայսպիսի ամօթ նախատանաց կրես: Օրհնեմ և գոհանամ զքէն վասն քաջանշան օրինակիդ՝ զոր տաս ինձ: Քանի՛ գեղեցիկ էր՝ եթէ 'ի պատահել ինձ զրկանաց կամ նախատանաց կամ Թիւր դատողութեան զինէն՝ գիտէի համբերել ոգւով ճշմարիտ խոնարհութեան, յարակցելով զայս համբերութիւն և խոնարհութիւն ընդ քոյումդ: Այլ չիք իմ խոնարհութիւն և համբերութիւն. բայց են իմ բաղձանք ստանալոյ զնոսին՝ այնու զի բաղձամ սիրել զիս: Աղէ, ո՜վ Յիսուս իմ, որ հաճեցար 'ի խաչ ելանել՝ ոչ առ 'ի դատապարտել զիս այլ առ 'ի փրկել, լո՛ւր փափագանաց իմոց: Քոյին օժանդակութեամբ կրթեցայց և ես 'ի նոյնս. քանզի աւաղ և եղուկ է ինձ, որ հիքագոյնս

եմ քան զամենայն մարդիկ, եթէ անպէտ արա՟րից զչարչարանս քո 'ի բժշկութիւն գոռոզա՟ցեալ ամբարտաւանութեան իմոյ:

Եղից 'ի մտի թէ ինձ առաւել պէտք են խո՟նարհութեան 'ի դէպս առթից՝ քան այլոց 'ի մարդկանէ. և հարկ է ինձ խոնարհեցուցանել զանձն իմ և ոչ զայլս:

ՅԻԸ. Դիտումն Հրէից 'ի կանգնել զՅիսուս խաչեալ 'ի միջի երկոցուն աւազակացն էր ա՟նարգել զնա. բայց Աստուծոյ այլ դիտումն էր. քանզի կատարեցաւ այնու նախասացութիւն Փրկչին, և յայտնի եղև եթէ մեռանելովն որ՟պէս մեղաւոր 'ի միջի մեղաւորաց՝ մեռանէր 'ի փրկութիւն ամենեցուն առ հասարակ. և մա՟նաւանդ մեղաւորաց, զամենայն ազգս մարդ՟կան անխտիր հրաւիրելով 'ի վայելս առատա՟ռեղ շնորհի փրկագործութեանն: Ինքն իսկ սակաւուք յառաջ քան զերթալն 'ի պարտէզն՝ նախածանուցեալ էր՝ եթէ ընդ անօրէնս համա՟րեսցի. և Հրեայքն յամօթ իւրեանց՝ իրաւա՟ցուցանեն զմարգարէութիւնն, առանց ինչ օգ՟տելոյ 'ի ճշմարտելոյ անտի մարգարէութեանն 'ի ծանօթութիւն Փրկչին:

Զմտաւ ած, հոգի իմ. զիա՞րդ այժմիկ Յիսուս 'ի միջի աւազակացն յայս առնէ պարզապէս, ե՟թէ վախճան անբաւ գթութեան իւրոյ 'ի կրելն զայնքան դառն տանջանսն՝ էր կոչումն և խըն՟դիր և փրկութիւն հիքացեալ մեղաւորաց, դեղ մահացու հիւանդութեան նոցին կարգելով զա՟րիւն իւր ծորեալ 'ի վիրացն: Արդ ո՞րքան վըս՟տահութեամբ չիցէ մեզ արժան մատչել առ նա, մինչ գիտեմքս զի ոչ խորշի նա յընկերութենէ մեղաւորաց, և զի վասն մեղաւորաց խաչեցաւ: Ո՞վ. քանի՛ զարմանալի է անբաւ իմաստութիւն

քո, Տէր Յիսուս, որ ծածկէ զանբաւելի կարողութիւնն ընդ այդպիսի հեզութեամբ և նուաստութեամբ: Քանի՜ զարմանաց իրք, զի մարդ դատապարտեալ 'ի մահ ընդ աւազակս՝ զառհասարակ ազգ մարդկան ազատէ 'ի յաւիտենից դատապարտութենէ ընդ դևս: Խորին պատկառանօք պատուեմ զվսեմութիւն ամենայն խորհրդոցդ գաղտնեաց. այլ, ո՜հ, քանի՜ոն մխիթարութիւն է ինձ և այս, զի տեսանեմ վասն իմ այդքան վշտակրել քեզ և հեղուլ առատապէս զարիւնդ: Բաղում և ծանունք են արդարև մեղք իմ. այլ զիա՞րդ յուսահատեցայց յողորմութեանդ շնորհէ՝ տեսանելով չափ զքեզ վասն մեղացս այսոցիկ խաչեալ, և գրկատարած ակն ունելով 'ի ժողովել զիս և տալ ներումն թողութեան: Գո՞յր ինձ այլում իմիք ակն ունել առ 'ի չլինել հեղգասիրտ յապաւինութիւն 'ի քեզ: — Ո՛վ Յիսուս, սիրագորով առ մեղաւորս, ահաւասիկ ես գլուխ մեղաւորաց, որ դիմեմ 'ի թողութիւն, ապաւինեալ յարդիւնս քո՝ զորս կամեցար իմ արդիւնս լինել. ուժգնագոյն զգացմամբ ծանօթութեան և ըղձից՝ զղջամ ընդ թշնամանելն իմ զքեզ. Աստուած բարձրեալ և բարերար, որ ամենևին արժանաւորդ ես սիրոյ 'ի վեր քան զամենայն որ ինչ յաշխարհիս, անկանիմ 'ի գիրկս քո. ընդ քեզ կամիմ կեալ, ընդ քեզ մեռանել, փափագելով սիրել զքեզ, և սիրել առաւել քան զառաւել:

Խորագոյնս տպաւորեցից 'ի միտս իմ զմեծութիւն չարչարանաց Քրիստոսի, և համարելով զբովանդակն վասն իմ կրեալ՝ եդից 'ի նոսին զյոյս ապաւինութեան իմոյ առ 'ի կատարել զառաջադրութիւնս իմ:

ՅԻԹ. Հայեացուք վերստին 'ի Յիսուս՝ որ խաչեալ մերկ կայ 'ի Նշաւակի ամենեցուն, որպէս զի տեսցի զոր ինչ կրէն բովանդակ 'ի մարմին իւր օրհնեալ: Գլուխն փշապսակ, զոր ոչ գիտէ ուր հանգուցանել. երեսքն Թքամածք. բերանն լեղեաւ դառնացեալ. ականջք տանջեալք 'ի հայհոյութեանց լսելոյ. ձեռքն բեւեռեալք, բեւեռեալ և ոտքն. և մարմինն համօրէն ծածկեալ վիրօք: Բայց հայեացուք, մի հրէական անհաւատ աչօք, որ նախանձու և ընդվայրհարութեամբ հայէին Թէ ընդ մարդս համարի զնա, այլ հաւատոց աչօք, քննելով Թէ ո՞րպիսի՞ ոք իցէ այրս այս՝ զայդ օրինակ խաչեալ և խորասուզեալ 'ի հեղեղս տառապանաց:

Աստուած է Ճշմարիտ, յԱստուծոյ Հօրէ ծնեալ, անբաւելի 'ի վայելչութեան, 'ի գեղեցկութեան և 'ի մշտնջենաւոր էական երանութեան իւրում: Իսկ զի՞արդ այդքան անարգեալ աստուածայինն վայելչութիւն. զի՞արդ այդպէս անչքեցեալ աստուածայինն գեղեցկութիւն. ի՞բր տառապեալ աստուածայինն երանութիւն, և աստուածեղէնն յաւիտենականութիւն 'ի տագնապս մահու ըմբռնեալ: Ո՞ ած վարեաց զԱստուած յայս սահման անձկութեան: — Միայն գուԹք նորա, որով և մարդ եղեալ յանդիման կացուցանէ ամենեցուն զինքն 'ի խաչին. որպէս զի ծանիցի որքանութիւն սիրոյ նորա առ մեզ, և որքանութիւն պարտականութեանս մերոյ առ 'ի սիրել զնա: Եւ զի չգոյր 'ի մարմնի նորա յոտից մինչև ցգլուխ մասն ողջանդամ, սիրտն միայն՝ Թէպէտ և մահուչափ տրտմութեամբ տագնապեալ՝ կայր տակաւին հզօր, եռանդուն և պայծառափայլ. քանզի անդ բազմեալ սիրոյն քաջապնդէ և զօրացուցանէ զբնութիւն հաստուածոյն առ 'ի տոկ չարչարանացն: — Եւ դու, հո-

գի իմ, որ զՏէրն քո ցանկաս սիրել, ո՛ւր այլ գտանիցես առիթ հզօր առ 'ի յորդորել զքեզ 'ի սէր նորին, քան կաղով այդր 'ի գինին: Ամբա՛րձ զաչս մտաց քոց, և տե՛ս, ընդ որքանեօք տաժանակօք ցաւօք ներքևեալ կայ՝ մինչ 'ի խնդիր քո եկեալն է. և յերկիր տարածեալ խոնարհութեամբ՝ հատո՛ սէր ընդ սիրոյ աստուածացեալ սրտի նորա:

Ողջ լե՛ր, ո՛ սիրավառ սիրտ Յիսուսի. պարտական եմ ես քեզ՝ վասն այդքան դառն երաշխեպ ցաւոց՝ զոր վասն իմ կրեաց Փրկիչն իմ: Այլ զիա՞րդ 'ի հէքութեանս իմում եղեց քեզ հաճոյ: Ո՛վ ամենաքաղցր սիրտ, սիրտ ամենամաքուր, սրբեա զսիրտ իմ յաղտից ընդունայնութեանց. որպէս զի ջինջ և մաքուր միասցի ընդ քեզ սիրտ ընդ սրտի, և յեռանդեան իւրում շնչեսցէ և հառաչեսցէ ընդ քեզ, և մի՛ լիցի նմա այլ կեանք՝ բայց քո ևեթ սէրն. որպէս զի արժանապէս պաշտեսցէ և պատուեսցէ միշտ զքեզ, այնպէս ախորժ յօժարութեամբ, զի մի՛ ընաւ այլում իմիք հեշտութեան աշխարհային նախանձեսցի: Ո՛վ Յիսուս իմ, աղաչեմ զքեզ վասն սրտի քո, խաչակցել զիս ընդ քեզ. և երեքումք բևեռօքդ հեղուսել զերեսին զօրութիւնս հոգւոյս, զյուշ, զբան և զկամս, առ 'ի կատարել յարմարութիւն հաճոյից կամաց քոց:

Մի՛ յիշել զոր չկամի Աստուած թէ յիշիցեմ, ոչ խորհել զոր չկամի Աստուած թէ խորհիցիմ, և մի՛ կամել ընաւ զոր ոչ հաճի Աստուած՝ թէ կամիցիմ:

Թշնամանք Յիսուսի առ 'ի Հրէից :

ՅԼ. Յետ խաչելոյ Յիսուսի մարմնոյն՝ խաչէն Հրեայքն և զոգի նորա, անդադար յաւելլով ցաւս 'ի ցաւս. 'ի վերայ տանջանաց խաչելութեանն յաւելեալ և զնախատինս և զքամահանս: Օրէնք են բնութեան վշտակից լինել, կամ գոնեա մի այպանել զվշտացեալն. բայց վասն Յիսուսի չէք ինչ օրէնք: Տէս արդ, հոգի իմ, զիա՛րդ ամենեքին հային 'ի նա, աւագանին և ռամիկն, ծաղր առնելով և հայհոյելով ահագին լուտանօք, և շարժմամբ և մոլեգնեալ գնացիւք և նշանօք յայտ առնելով զխնդութիւն իւրեանց ընդ տառապանս նորին: Ամենուստ վիշտք և թշնամանք: Իսկ 'ի Յիսուս քանի՜ հեզութիւն և համբերութիւն: Որքան յագեալ թուի նախատանօքն՝ այնքան և առաւել քաղցնու. զդայ զանարգանսն որ զկծանեն յոյժ զնա և կատեն, այլ տակաւին փափագէ նոցին առ սէր մեր: — Եւ միթէ ո՞չ 'ի համբերութենէ աստի նորա 'ի դէպ իցէ ճանաչել զնա Աստուած: Սքանչացուք ընդ Բարձրեալն՝ որ փառքն է հրեշտակաց 'ի յերկինս, և յետնագոյն և նուաստագոյն 'ի մարդիկ 'ի Գողգոթա. մատուսցուք գոհութիւն անբաւ գթութեանց նորա. զի ոչ առ 'ի բռնութենէ իմեքէ կամ 'ի հարկէ, այլ իւրով կամաւ յանձն առնու զերգիծանսն և զնուաստութիւնն, առ 'ի զերծուցանել զմեզ 'ի մշտնջենաւոր նախատանաց և յամօթոյ. և վառեալ յորդորեսցուք առաւել եւս նմանող լինել նմա՝ 'ի կրել համբերութեամբ և խոնարհութեամբ

զարհամարհանս և զարկածս չարեաց: Քանզի անմտութիւն իցէ մեր ամաչելս ընդ խոնարհութիւն և ընդ հեզութիւն. և իբր իցէ անպատուութիւն ծառայի՝ առնել զոր տէր իւր առնէ փառօք:

Ո՛վ աստուածային Փրկիչ, զի՞նչ արդեօք առնէիր յանձին քում, յորժամ այնքան զզուանաց տանելով 'ի խաչին վասն իմ, և 'ի նկատի մտացդ ունելով զիս, և զիմ պարտականութիւնս նմանելոյ քեզ, տեսանէիր և զիս այսպէս անհամբոյր, այսպէս դժպհի, այսպէս վրէժխնդիր ցնորական պատուոյ անձինս, որ ոչ հանդուրժեմ և փոքու իմիք քրթմնջանաց և մեղադրանաց, այլ քանքարտամ և կոծիմ: Վա՜յ ինձ վասն չուէր քրիստոնէիս: Եւ զի՞արդ, ո՛վ Տէր, սիրեցեր զարուեստս զայս երկրաւոր՝ այսպէս գոռոզացեալ, նաև յանդիման աչացն ունելով զօրինակ համբերատարդ խոնարհութեան: Օրհնեմ և բարեբանեմ զսէր քո սուրբ. առեալ և գարշիմ 'ի զզուելի հպարտութենէ իմէ: Աղէտուր ինձ մասն 'ի սիրոյդ խոնարհութեամբ քով. զի եթէ ոչ խոնարհեցիմ՝ ոչ երբեք կարիցեմ սիրել զքեզ. և եթէ ոչ սիրիցեմ զքեզ՝ ոչ գոյից զշնորհս կատարելոյ զձշմարիտն խոնարհութիւն, որ է կամաւորապէսն կրել զանչքութիւն՝ առ սէր քո: Ապաւինիմ յողորմութիւն քո, վստահեմ յարդիւնս քո, զի ոչ զրկես զիս յօժանդակութենէ շնորհացդ՝ 'ի դէպ ժամու:

Զիք աղդողագոյն դեղ հպարտութեան՝ քան զյիշատակ խոնարհութեան Յիսուսի խաչեցելոյ: Յիշեցից զայն սակս, և հանապազօրդ աոարից զյիշատակն, որպէս զի յամենայն դէպս նովին առաքինացայց:

ՑԼԱ. Մի յերգիծանաց որովք խաղ առնէն զխաչեցեալն Յիսուս, էր անցանել խուժանին հանդերձ իշխանօքն զառաջեաւ նորա, հայել 'ի նա և ծաղր առնել, ասելով. Վա՜հ, որ փրկէիր զայլս, փրկեա և զանձն քո. Եթէ Թագաւոր իցես, եթէ որդի ես Աստուծոյ՝ էջ այժմ 'ի խաչէդ: Զայս ասեն առ առակ և յանարգանս նըմին, որպէս Թէ ոչ Թագաւոր իցէ և ոչ Աստուած, այլ ժպիրհ ոք և մնապարծ: Ի դէպ է կարծել Թէ ասիցեն զայդ և ազդրանօք գլխոց, որք զգալով զզօրութիւն խաչեցելոյն՝ զարհուրեալ դողան, և կամին իմն խափանել զփրկագործութիւն աշխարհի 'ի խաչին:

Այլ մեք միտ դիցուք հաստատութեան Քրիստոսի: Յաւէ նմա վասն հայհոյութեանցն զոր լսէ. և Թէպէտ կարէ հրաշագործութեամբ յայտնել զաստուածութիւն իւր և իջանել 'ի խաչէն, այլ առաւել ընտրէ ուսուցանել մեզ համբերութիւն քան ցուցանել զօրութիւնս. և մահուամբն յաւէտ Աստուած Ճանաչիլ և փըրկել զհոգիս, քան իջանել 'ի փայտէն և զանձն ապրեցուցանել: Թէ ոչ կամէր՝ և ոչ խաչէր. և զի վասն մեր բեւեռեցաւ 'ի խաչին՝ հրաժարէ իջանել 'ի խաչէն. որպէս զի յայտնի լիցի եԹէ ոչ է պիտոյ այնմ որ տէրն է փրկութեան՝ սքանչելիս առնել 'ի փրկութիւն անձին, և ոչ առանց տեղական ժուժկալութեան մարԹ է յաւիտենական փրկութեան մերոյ 'ի գլուխ ելանել:

Ո՜վ Յիսուս իմ, Աստուած և մարդ, քանի՜ հզօր է սէր քո առ իս, որ կապէ զամենակալ զօրութիւնդ և պնդեալ կաշկանդէ զքեզ 'ի խաչին, սերտագոյնս քան զբեւեռսն և քան զամենայն կապանս աշխարհի: Իսկ իմ, աւա՜ղ, քանի՜ տկար է սէր առ քեզ, որ՝ յայն ինչ հասանել

խաչի 'ի վերայ իմ՝ անձկայ փութանակի թօթափել զայն. և չունիմ ժոյժ և տոկ 'ի մեռուցանել զանձնասիրութիւն իմ, ժուժկալելով և դուզնաքեայ ինչ վաստակոց: Զէ մարթ սիրել զխաչեցեալն՝ առանց սիրելոյ զխաչն. և այս յայտնի նշան է, թէ զի ոչ սիրեմ զխաչ՝ ապա և ոչ զքեզ սիրեմ, զամենասիրելի Փրկիչդ իմ: Քո օրինակդ եւեթ այդպէս համբերատար ժուժկալելոյ նախատանաց վասն իմ, շատ և շատ էր յոյժ 'ի յորդորել զիս 'ի համբերութիւն ամենայն զկծեցուցիչ նախատանաց վասն քո. իսկ ուստի՞ է ինձ այս անժուժկալութիւն և բանի միոյ լոկոյ՝ որ ասիցի ինձ փոքր ինչ խստիւ կամ խայթիւ: Թուի ինձ երբեմն ունել եռանդն ինչ. այլ առ վայրկեան մի եւեթ է. և անդէն իսկ 'ի զգալն զխաչ՝ աճապարեմ իջանել 'ի խաչէն: Ո՛հ, Յիսուս իմ, շնորհեա ինձ սիրել զքեզ. և վասն քո սիրել և զխաչ՝ ճշմարիտ և տևողական սիրով. զի զի՛նչ օգուտ իցէ սկսանել և ոչ յարակայել յառաքինութեան, մինչ դու զփառս քո խոստացար տալ որոց համբերեսցեն մինչև իսպառ:

Զմտաւ ածից զյողդողդութիւն իմ և զտկարութիւն. և յիշատակս այս եղիցի ինձ յառիթ խոնարհութեան. ճանաչելով զիս յոչինչ պիտանացու, առ 'ի ժառել զԱստուծոյ օգնականութիւնն ստէպ աղօթիւք:

ՅԼԲ. Որքան և խոշտանգանօք և անարգանօք լցեալ իցէ Յիսուս, դոյ ինչ տակաւին յամենայնի՝ որով մարթ է ճանաչել զնա Աստուած և մարդ: Հայհոյի և այպանի, իբրու այն թէ ախմարաբար պարծիցի որդի Աստուծոյ լինել, և վայրապար յուսացեալ իցէ յԱստուած, և ոչ իցէ որդարև անպարտ, բայց եթէ տայցէ հրա-

չափառ ինչ նշան անմեղութեան իւրոյ և իջցէ 'ի խաչէն: Այլ քանզի նախաճառեալ էր 'ի Գիրս, եթէ կարգեսցի Մեսիայն յառակ նշաւակի և հայհոյիցի, աւադիկ այս իսկ է նշան ճանաչելոյ զնա Աստուած, զի աստուածութիւն իւր 'ի կատակսն լինի անհաւատից: Որպէս 'ի սուրբս՝ նոյն և 'ի Սուրբն սրբոց յարատև տոկումն վըշտացն՝ փաստ է սրբութեան: Հաւատալ 'ի նա խոստանան Հրեայքն՝ եթէ իջցէ 'ի խաչէն. և զայդ ասեն ոչ զի յօժարք են 'ի հաւատալ, այլ մանաւանդ զի մի ոք հաւատասցէ Աստուած գոլ զայնպիսի ոք այր զկծեալ երդիծանօք և այպանօք: Դարձեալ, սադրեալք 'ի դիւաց ասեն զնոյն, զի խափանեսցի փրկագործութիւն աշխարհի որ խաչիւն կատարիւր: Գիտէ գեհենական թշնամին եթէ Յիսուս նախանձու փրկութեան հոգւոց մատնեաց զանձն 'ի խաչ. վասն այնորիկ համարի թէ և նովին նախանձու իջցէ արդեօք 'ի խաչէն առ 'ի փրկել զհոգիս այնոցիկ որ հաւատայցենն: Այլ Աստուածամարդս մեր ոչ 'ի զրոյցս մարդկան նայի և ոչ 'ի դիւացն հնարագիտութիւնս. խրատ տայ մեզ իւրով օրինակաւ՝ մի երբեք թուլանալ յառաքինութենէ, որչափ և բամբասիցեն զմեզ մարդիկ կամ մախայցեն դևք:

Ո՛վ երկնաւոր 'վարդապետ, և իցէ՞ ոք որ առաւել քան զիս պէտս ունիցի ուսման այդմ սրբոյ խրատու. քանզի է երբեք զի ընտրեմ զխաչ ըստ քում նմանութեան, եդեալ 'ի մտի կրթիլ 'ի մեռելութիւն, 'ի համբերութիւն, 'ի խոնարհութիւն. այլ, ո՜հ, և քանի՜ փութով յաճախ անձապարեմ իջանել 'ի խաչէ անտի՝ առ ամենայն մնոտի պատճառէ զոր սադրեսցէ ինձ սատանայ կամ մարմին կամ աշխարհս. բաղբաջելով չատանանել առողջութեան իմոյ կամ պա_

տուող կամ ժամանակեայ ինչ շահու, խնդրեմ զՏէր հանդստի, և յամառեալ պնդիմ 'ի պահանջանս իմ. նա մանաւանդ պատշաճս և վայելուչս անուանեմ զգրգանս զգայարանաց. արդարութեան և նախանձու անուամբ մեծարեմ զանհամբերութիւնս և զամբարտաւանութիւնս իմ։ — Ո՜վ Յիսուս իմ և Աստուած իմ, տեսանեմ զօրինակ քո և լսեմ զձայնդ՝ որ 'ի խաչէն ազդէ ինձ մի լսել այնմ որ խոտորեցուցանիցէ զիս 'ի բարւոյն, այլ կալ հաստատուն 'ի լրումն պարտուցս: Իսկ ես իբրև կոյր և խուլ կամակոր, ոչ լուսով քով լուսաւորիլ կամիմ, և ոչ զլուր ձայնիդ ընդունել յականջս. խաբիմ և թողլ տամ խաբել զիս, քանզի անձամբ անձին սիրեմ զպատրանս: Այլ դու ինձ, աղէ, ձեռն տուր շնորհօք քովք. գիտեմ եթէ ոչ խաբեցայց 'ի սիրելն զխաչ. տպաւորեա զՃշմարտութիւնս զայս յոգւոջ իմում, և տուր զօրութիւն սրտիս պինդ ունել զնոյն:

Ակնարկութիւն մի 'ի խաչն շատ լիցի 'ի հերքել զընդունայնութիւն պատճառանաց՝ որովք հնարիմ օրինաւոր ինձ համարել զկեանս դատարկակեացս, զկեանս փափկավարս ըստ հաճոյս անձնասիրութեան:

Յիսուս խաչեալ աղօթէ վասն թշնամեաց իւրոց:

ՅԼԳ. Նկատեսցուք զՅիսուս 'ի խաչին՝ որպէս զվարդապետ յաթոռ իւրում, որոյ առաջին դաս յաղօթսն վասն խաչահանուացն՝ դաս է անճառ գթութեան: Բազում անգամ և յաճախ քարո-

զեալ էր նորա զայս լաւութիւն. և արդ օրինակաւն թողու, որպէս բովանդակութիւն վարդապետութեան իւրոյ, տալով նշանակ խանդաղատագին գորովոյ, ոչ առ հալածիչսն եւեթ, և զրպարտողս, այլ և առ խաչահանուս գլխովին. որով ուսուցանէ մեզ սիրել զնախանձորդս մեր՝ որոց չէ տակաւին բարձեալ զկեանս մեր. որպէս սիրէ ինքն զթշնամիսն 'ի պահու յորում սպանանէինն զնա: Յաւետահրաշ է այս սէր Յիսուսի. զի ոչ խորհի յումէ՞ կրէ, այլ վասն ո՞յր. և աղօթէ թողեալ լինել նոցա՝ յորոց կրէ զտառապանսն այժմիկ, և կեանս մաղթէ՝ յորոց կենազրաւ լինի: Նա ոչ ինչ համարի զցաւսն զոր կրէ յանմեղ մարմնին, առ 'ի փրկութիւն հոգւոց մեղաւորաց. և առաւել քան զչարչարանս իւր՝ զառն համարելով զկորուստ հոգւոց, ընծայէ առ Հայր զնոյն ինքն զչարչարանսն, զի մի և մի ոք յեղկելի հոգւոց անտի 'ի կորուստ մատնիցի:

Հոգի իմ, տեսեա՞լ իցէ քո այլուր երբէք այսպիսի չարչարանս, բարեգութս և համբերատարս: Մա՞հ եթէ մեծի տկարութեան մարդոյս իցէ նշանակ, մեծի ևս առաքինութեան է այսքան ջերմաջերմն սիրով մեռանել:

Ո՜վ Տէր իմ Յիսուս, տո՛ւր ինձ արդ կեալ այնպէս՝ զի արժանի եղէց և 'ի մահուան իմում նմանել քեզ, բարիս փափագելով չարակամաց իմոյ: Տո՛ւր ինձ միտս քումդ նման, առ 'ի յիշել յաղօթս իմ և զայնոսիկ որ առնեն ինձ ինչ վնաս, և զայնոսիկ մանաւանդ որք զքեզն անգոսնեն: Եւ քանզի դու զբովանդակ իսկ զանձնդ ընծայեցեր առ աստուածային մեծվայելչութիւն՝ վասն թշնամեաց քոց, յորոց մի և ես էի, արդ տո՛ւր ինձ ըստ իմում չափու մասնակից լինել նուիրման քում: — Հա՛յր յաւիտենական,

հայեաց 'ի սրբութենէ փառաց քոց՝ 'ի զոհս զոր մատուցանէ քեզ քահանայապետն մեր՝ Որդին քո Յիսուս: Զարաչար լլկանօք և հեղմամբ արեանն՝ պատարագեաց նա զկեանս իւր առ 'ի հատուցումն խնդս պարտեաց. արդ զի՞նչ ես կամիցիս 'ի լրումն արդարութեանդ և 'ի զիջումն ցասմանդ: Լո՛ւր և ունկն դիր մեղմաձայն մաղթանացն, որովք հայցէ 'ի քէն թողութիւն մեղաց իմոց. և 'ի շնորհս երեսաց ամենալաւ մաղթողիս, քան զոր չիք պատուական յաչս քո, ցո՛յց, թէ որքան մեծ ես յողորմութեան քում առ իս, քան ես 'ի չարութեան իմում մեղանչելով առ քեզ:

Նմանող եղեց խոհական գթութեան Քրիստոսի, որ զմեղս ատէ և զմեղաւորն սիրէ. դժուարին է ընտրութիւնս այս, այլ Աստուծոյ շնորհօքն լիցի ինձ դիւրին:

ՅԼԴ. Յամենայն 'ի չարչարանս իւրում եցոյց Քրիստոս զանձն իւր մարդ և Աստուած. այսպէս և 'ի խաչին: Կարող էր յայտնել որպէս Աստուած մահուչափ վրէժխնդրութեամբ 'ի թշնամեացն, այլ ընտրեաց ցուցանել զաստուածութիւն իւր՝ համբերութեամբ և սիրով, բարիս առնելով չարարարացն: Եւ որ ցարդ կայր լուռ և անմռունչ առ տանջանս և անարգանս, վերահայի առ Հայր իւր Աստուած, և աղաչէ ներել ամենեցուն՝ որք այնքան անգթութեամբ և անիրաւութեամբ հալածէին զնա: Ո՛վ աղօթք, արդարև արժանաւորք Որդւոյ Աստուծոյ: Զնոյն նախագուշակեալ էր մարգարէին, զաղօթելն Մեսիայի վասն իւրոց անարգուաց: Ո՞ այնքան սիրեաց երբեք զբարեկամս իւր՝ որպէս Քրիստոս զթշնամիս:

Այսպիսի ջերմաջերմն աղօթիւք և օրհնու֊

Թեւամբ առ խաչահանուս իւր, քաջ իսկ յայտ առնէ զինքն, գոլ Ճշմարիտ Աստուած, Որդի Աստուծոյ Հօր, որպէս և իւր իսկ տացեալ էր յառաջագոյն. «Յորժամ բարձրացուցանիցէք զՈրդի մարդոյ՝ յայնժամ գիտասջիք թէ ես եմ... Որպէս ուսոյց զիս Հայրն իմ՝ զայն խօսիմ»: Եւ որպէս պատուիրեաց աղօթս առնել վասն հալածչաց և զրպարտչաց՝ որոց կամիցին լինել որդիս Հօրն երկնաւորի, այժմիկ 'ի խաչին զնոյն կատարէ ամենապքանչ օրինակաւ: Կարէր լռելեայն 'ի միտս իւր կատարել զայս առաքինութիւն. այլ կամեցաւ և ձայնիւ արտայայտել, զի լիցուք լսողք և նմանողք սմին: Եւ ընդէ՞ր զայսպիսի բանս պահիցէ մինչև 'ի վերջայս կենաց իւրոց. բայց զի իբրև ձայնք հօր օրհնութեանն՝ տպաւորագոյնս դրոշմեսցին 'ի սիրտս որդւոցն:

Ո՛վ Յիսուս իմ, Աստուած իմ, զի՞նչ ասացից առ այսքան գթութիւն քո հրաշալի, որ ձաղկեալ և փշազգած, բևեռեալ 'ի փայտի, և լցեալ անարգանօք, իբրև մոռացեալ խսպառ զանձն, միայն վասն խաչահանուացդ թողութիւն ժտիս 'ի Հօրէ: Ո՛վ Աստուած ամենայն բարութեանց, որպիսի՜ քաղցրութիւն շնորհաց և փառաց տացես սիրելեաց քոց, եթէ այսքան առատապէս հեղուս զիւղ ողորմութեանդ 'ի վերայ այնոցիկ որք ատեին զքեզ: Ո՛հ, տո՛ւր և ինձ շնորհս զքեզ սիրելոյ, զի ահա փափագանօք հայցեմ: Քեզ յանձն առնեմ զամենայն մերձաւորս իմ՝ որք միանգամ բանիւ կամ գործով թշնամանեցին ինչ զիս. և հայցեմ 'ի շնորհս գթութեանդ՝ օրհնել զնոսա, առ 'ի լնուլ Ճշմարիտ բարեօք 'ի կեանս յայսմիկ և 'ի հանդերձելումն: — Եւ յետ այսպիսեաց սրտագին մաղթանացս, ընդ որ գիտեմ զի հաճիս, միթէ զլանայցե՞ս զշնորհս զոր վասն անձին իմոյ խնդրիցեմ: Փափագեմ

սիրել զքեզ. և առ 'ի սիրել զքեզ՝ սկիզբն առնեմ նմանելոյ քեզ: Այլ առ 'ի նմանող լինել՝ տուր ինձ զկատարելութիւնն՝ յոր կամիս ինձ ժամանել լինել:

Աղօթեցից 'ի մասնաւորի վասն չարախօսաց զինէն և անուանարկուաց. և զայս արարից առ 'ի լինել նմանող Յիսուսի, որ աղօթէ 'ի խաչին վասն սպանողաց իւրոց:

ՅԼԵ. Ի մեծութեան չարչարանաց Քրիստոսի՝ մեծութեան գթութեան նորա յայտ արժան է մեզ հետևել. վասն որոյ և արժան է յիշել. զի ոչ միայն աղօթեաց վասն խաչահանուացն և անարգուացն, այլ և առ 'ի շարժել զՀայրն 'ի գութ՝ հնարի ինչ անմեղադիր առնել և նուազեցուցանել զծանրութիւն յանցանաց նոցին, ասելով, թէ Ոչ գիտեն զինչ գործեն: Ո՛վ, քանի՜ հնարագէտ է գթութիւն: Է իսկ ստոյգ զի ոչ գիտեն ապիրատքն՝ թէ Այրս այս Որդի է Աստուծոյ, և թէ քանի՜ մեծ են մեղք իւրեանց. այլ արուեստաւոր ինչ է տգիտութիւնդ՝ 'ի կամայական չարութենէ, որ ոչ գիտէ՝ զի ոչ կամի: Այլ յայսր ամենայնի վերայ՝ Քրիստոս կարեկից լինի գթութեամբ. և ոչ որպէս Աստուած վրէժխնդիր, այլ որպէս Աստուած ողորմութեանց՝ ըստ մարդկութեանն ներէ սիրողաբար. արեամբ իւրով ծածկէ զանօրէնութիւնսն. և աղաչէ զՀայր զիջանել 'ի չքմեղս անգիտութեանն, որպէս զի դիւրագիւտ լիցի թողութիւն չարեացն:

Ահաւասիկ, հոգի իմ, խրատ քեզ՝ զոր օրինակաւ իւրով ուսուցանէ Տէր. այսպէս արժան է և քեզ առնել՝ յորժամ բանիւ կամ գործով հարցիս յումեքէ: Որ ոք և մեղանչէ՝ արդարև կոյր է և տգէտ, զի ոչ գիտէ զոր գործէն. զի զիա՞րդ հնար էր մեղանչել՝ եթէ քաջ ոք միտ դնէր

և Թշնամանացն՝ որ առ Աստուած, և արքայութեան՝ յորմէ վրիպլին, և գժոխոց՝ որում պարտական գտանի մեղօքն: Տգիտութիւն աղբիւր է ամենայն չարեաց. և ագիտութիւն կամաւոր՝ որում անմեղադիր մեզ լինել կամիմք զայլս, արժան է և առ 'ի մէնջ անմեղադրութեան առ այլս:

Ո՛վ Աստուած իմ և վարդապետ իմ Յիսուս, զիարդ ոչ կորացայց ամօթով՝ զքո տեսեալ զայսպիսի օրինակ գթութեան և բարութեան, իսկ իմ այսպէս խիստ և հպարտ գոլով, զի փոխանակ գթալոյ և անմեղադիր լինելոյ ոլալանաց մերձաւորի իմոյ, առաւել ևս ծանրացուցանեմ և գատապարտ առնեմ զառն նախանձախնդրութեամբ, 'ի չարաչար միտս յեղլով զգործս նորա: Զի՞նչ լինիցի ինձ՝ եթէ և դու այնպէս գնայցես ընդ իս՝ որպէս ես ընդ ընկերս իմ: Անհուն և անբաւ շնորհաց երախտեաց պարտական եմ գթութեան քում, որ այսպէս ներողամտութեամբ խնամարկէ յիս՝ որ արժանիս եմ ծանր ծանր պատուհասից վասն անարգարանալի մեղաց իմոց. և ցաւէ ինձ այս, զի ոչ կարեմ գոհանալ զքէն ըստ արժան բաւականին և ըստ յօժարութեան հոգւոյս: Դու ինքն վառեա յիս զսէր Ճշմարիտ առ 'ի լինել քեզ նմանող 'ի սիրելն և 'ի գթալ առ չարակամս իմ, և զհաւատս Ճշմարիտ առ 'ի Ճանաչելոյ զծանրութիւն չարեաց մեղաց: Գիտեմ զի մեղք Թշնամանս հասուցանեն մեծի վայելչութեան Աստուծոյ, յարքայութենէ տան վրիպել, և անվախճան գեհենոյն պարտաւոր կացուցանեն. գիտեմ, այլ ոչ խոկամ. և զի ոչ խոկամ՝ վասն այնորիկ և մեղանչեմ ստէպ: Ո՛վ մեծեղեան անգիտութիւն: Մինթէ արդարանայցեմ մեղաւորս՝ ասելով, Ոչ գիտէի. Զանի զմոռաւ: Ո՛վ բարեգութ Յիսուս, արթուն կալ յիս զհաւատս՝ զի մի երբեք մեղայց քեզ:

Սանձեցից զչար միտումն մտացդ' 'ի չարաչար դատել և կասկածել զընկերն․ և որքան հնար է անմեղադիր եղեց, զի և յայսմ Քրիստոսի լինիցիս նմանող։

Խոստումն Արքայութեան առ Աւազակն աջակողմեան :

ՅԼԶ. Անդէն և անդ յաղօթելն Քրիստոսի վասն թշնամեաց իւրոց' 'ի ձայնէ անտի լուսաւորի մի յաւազակացն խաչելոց ընդ նմա։ Երբէք ընդ Քրիստոսի չէր սորա եղեալ ուրեք, ոչ զվարդապետութիւն նորա լուեալ, և ոչ զսքանչելիսն տեսեալ. և այժմ առաջին նուագ գոլով ընդ նմա 'ի փայտ պատուհասին, միտ եդեալ համբերութեան նորա և սիրոյ' որով յանձն առնու զտանջանսն և զանարգանս, իսկ և իսկ ճանաչէ և խոստովանի զնա Աստուած. խոնարհի, խոստովանի զյանցանսն և հայցէ ողորմութիւն, և փրկութիւն' ոչ 'ի մարմնաւոր մահուանէ' այլ 'ի յաւիտենից մահուանէ հոգւոյն։ «Յիշեա զիս, Տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով»․ ասէ աւազակն։ Իսկ Յիսուս տեսեալ զապաշխարութիւն նորա, թէպէտև կայր առ երի Մայր իւր ցաւագնեալ, մինչև զՄայրն մխիթարեալ' դառնայ առ աւազակն, և ասէ․ «Այսօր ընդ իս իցես 'ի դրախտին»։

Այս բանք' առաջնաձայնակ պտուղք են չարչարանաց Քրիստոսի, զի 'ի սկզբանէ աշխարհի մինչև ցայն վայր չէր ումեք տուեալ խոստումն արքայութեան։ Այլ մեր դիր, ում ումեք տուեալ լինի այսպիսի խոստումն։ Առ աւազակ' որ վասն եղեռանց իւրոց բազում դժոխոց պար-

տականն էր, այլ 'ի վերս Քրիստոսի նկատեալ զմեղս իւր՝ 'ի զեղջ հարկանի և տրտմի ճշմարիտ ապաշխարութեամբ: Սրբոց՝ որոց զամենայն կեանս իւրեանց 'ի գերապանց գործս ուղղութեան ծախեալ իցէ՝ պարգևեալ լինին փառք արքայութեան. նոյն փառք խոստացեալ և տուեալ լինին աստանօր միոյ ժամու ապաշխարողի, որ զղջմամբն իւրով 'ի մեծեղեան մեղաւորէ փոխի 'ի մարտիրոս մեծ:

Ո՜վ մեծի մխիթարական խոկմանս: Ընդէ՞ր անյոյս եղեց ես 'ի թողութենէ մեղացս կամ 'ի յաւիտենական փրկութենէ, մինչ տեսանեմս այսքան առատ ողորմութեամբ շնորհեալ արձակումն և բացումն դրանց արքայութեան առ աւազակ եղեռնագործ: Ո՜վ Յիսուս իմ, որ հաճեցար 'ի խաչ ելանել, և 'ի խաչէ անտի ցուցանել զաստուածութիւն քո, խաչիլ յաւազակաց մէջի և յաւազակս այս ցուցանել զամենակարող զօրութիւնդ քո, յիշեա և զիս՝ որ խաչեալդ ես այժմիկ և վասն իմ. յիշեա և զիս՝ որ եկդ այժմիկ յարքայութեան քում: Մեծ են յանցանք իմ և մեծագոյն քան զաւազակին փրկելոյ, քանզի մեղաւոր եմ ապերախտ. այլ վստահ եմ և քաջայոյս յարդիւնս չարչարանաց քոց, եթէ անբաւապատիկ մեծ է ողորմութիւն քո 'ի վերայ մեղաւորաց: Որպէս աւազակին այնորիկ՝ նոյն և վասն իմ բացեալ են վէրք քո և հեղեալ արիւն քո անգին. վասն այնորիկ և ես նովին հաւատով գոչեմ. Յիշեա և զիս, Տէր. Յիշեա և զիս, Փրկիչ, զոր գնեցեր ամենառատ փրկանաւ:

Վերընծայեցից աղերս յուսոյ յողորմութիւն Աստուծոյ և յարդիւնս Քրիստոսի՝ 'ի թողութիւն մեղաց իմոց և 'ի փրկութիւն յաւիտենական. յուսացայց և խնդրեցից շնորհս զղջման:

ՅԼԷ. Զի մի յոյս փոխեսցի 'ի յանձնապաստանութիւն, արժան է խորհրդածել, զի թէպէտև ապաշխարեաց աւազակն և փրկեցաւ մեծաւ օգնութեամբ շնորհաց արդեանցն Քրիստոսի, այլ և նա ինքնին իւրովանն գործակից եղև շնորհացն: Խաչեալ էր և չունէր արձակ բայց զսիրտն և զլեզուն, և զերկոսին եւս երկիւղածութեամբ 'ի գործ արկ հաւատով, յուսով և սիրով առ Քրիստոս, յայնպիսում ժամանակի և 'ի դէպս, յորս թէպէտ և ներքին լուսով ծանեաւ զնա Աստուած, սակայն տեսանէր և զամենայն արտաքին նշանս մարդկութեան 'ի նմա, նա և զկարի անարգեալ մարդոյ:

Դարձեալ ոչ դանդաղեաց աւազակն մինչև 'ի յետին պահ կենացն՝ առ կոչումն աստուածային, այլ անդէն և անդ յառաջնումն նուագի զգալոյ զեռումն շնորհաց՝ անձնատուր 'ի նոյն եղև: Այսպէս արժան է փութալ կանխել և մի մինչև 'ի մահ յապաղել զդարձն առ Աստուած. քանզի բազումք խաբեցան այսպիսի մտօք յուսով. այլ անյապաղ լսել և անսալ ձայնի աստուածային կոչմանն. զի վտանգաւոր է յապաղումն, և որքան յապաղէ՝ այնքան առաւելու վտանգն:

Ո՛վ հոգի իմ, արդ և զքեզ կոչէ Յիսուս, և գիրկս տարածեալ մնայ քեզ, փափագելով ընծայել յօգուտ քո զարիւն իւր առ Հայրն յաւիտենական: Վերակոչէ զքեզ 'ի պայմանէ այտի քումէ ունակացեալ գաղջութեան՝ որ մերձ է 'ի լքումն առ 'ի յԱստուծոյ. կոչէ զքեզ 'ի սպասաւորութիւն իւր եռանդուն առաքինագործութեամբ: Արդ՝ զի՞ յամես 'ի նմանելոյ աւազակին դարձիւ զղջման, որպէս զի նմանակից եղիցիս և ակնկալութեանն:

Յիսո՛ւս, մի տար ինձ թոյլ լինել յայնցանէ

որք անփոյթ լինին զպարտուց, և օրինակաւ բարւոյ աւազակին վայրապար յուսադնին: Նըմանող լինիմ ես հաւատոց նորա, հաւատամ զի Աստուած իմ ես դու. նմանող լինիմ յուսոյ նորա, և ակն ունիմ ամենայն բարւոյ առ 'ի քէն՝ որ աղբիւրդ ես բարութեանց. նմանող լինիմ սիրոյն, և սիրեմ զքեզ առաւել քան զամենայն, և պատրաստ եմ օժանդակութեամբ քով տալ զանձն իմ վասն քո: Վասն սիրոյ քո՝ տարայց, նմանեալ բարւոյ աւազակին, ամենայն վշտաց խաչի՝ զոր և առաքիցես ինձ: Այժմէն իսկ յայսմ պահէ անդանդաղ բոլորով սըրտիւ դառնամ առ քեզ. և յամենայն զօրութենէ հոգւոյ նուիրեմ քեզ զանձն իմ բովանդակ: Ցաւէ ինձ զի ոչ վաղագոյն ընծայեցի քեզ զհնազանդութիւն կամացս. և յառատութենէ ողորմութեանցդ ժամիմ հաստատել յիս զայն՝ զոր շնորհօք քովք սկզբնաւորեցեր: Տուր ինձ զխոնարհութիւն ընտրելոյ աւազակին, զի ծանեայց զոր եմս մեղաւոր եղկելի. ցորչափ կեցից 'ի խոնարհութեան՝ գոյ ինձ աներկեան լինել թէ ոչ վրիպեցայց յօգնութենէ քումէ:

Ապաշաւեցից զծուլութիւն իմ՝ որով ապախտ արարի բարի բարի ազդեցութեանց ներքնոց. և արթուն կացից ընդունել այսուհետև անվրէպ, զի դոքա են պարգևք և բարիք անճառելիք:

ՅԼԸ. Երկու են աւազակքն խաչեալք. և մինչդեռ մին ապաշաւէ՝ միւսն յամառեալ կայ և հայհոյէ: Նմանք 'ի չարագործութեան, նըմանք և 'ի պատուհասին. այլ ոչ ևս արդ նմանք սրտիւք և կատարածիւ. քանզի մին ապաշխարէ և փրկի, միւսն անզեղջ կայ և դատապարտի: Մին կանխէ քան զՊետրոս՝ երթալ յարքայութիւն, միւսն զհետ Յուդայի երթայ 'ի դժոխս:

Մին փրկի յերկուց անտի, թէպէտ և վասն երկոցունց իսկ հեղու Յիսուս զարիւն իւր։ Եւ քանզի 'ի մին յայն 'ի փրկեալն՝ արժան է աքանչանալ ընդ գործ շնորհաց՝ որ գերագոյն իմն օրինակաւ շարժէ զնա 'ի դարձ, աւելի իսկ մեզ քննելն՝ եթէ ընդէ՞ր առաւել եղեն գութք շնորհաց առ մին քան առ միւսն. այլ խոնարհութեամբ պատկառ կացցուք դատաստանացն Աստուծոյ, և երկիւղիւ ակն ածցուք։

Օրինակ մի է այս հանդերձելումն յաւուրն դատաստանին։ Քրիստոս յատենի խաչին՝ 'ի միջի երկուց աւազակաց, զընտրեալն յաջմէ ունելով և զչարին յահեկէ, նմա զարքայութիւն շնորհէ, զսա 'ի դժոխս առաքէ. այսպէս արասցէ և 'ի գալստեան իւրում 'ի դատել զկենդանիս և զմեռեալս. յաջմէ կացուսցէ զընտրեալսն, 'ի ձախմէ՝ զմերժեալսն. և հրաւիրելով զընտրեալսն 'ի յաւիտենական փառս, առաքեսցէ զմերժեալսն 'ի տանջանս յաւիտենականս։ Քննեսցուք զգիտակցութիւն խղճի մտաց մերոց. և մի լիցուք յանձինս ապաստանք, այլ խոնարհեսցուք ընդ դատաստանօք ամենակալին Աստուծոյ։

Երկիր պագանելով առաջի քո, Աստուած իմ, պաշտեմ զանհասանելի խորհուրդս իմաստութեան քո մեծի, որ 'ի վեր է յոյժ քան զխորս տգիտութեան իմոյ. և մինչ զմտաւ ածեմ զանթուելի մեղս իմ՝ գոյ ինձ արդարև փաստ զանգիտելոյ, թէ մի արդեօք համարեալ իցեմ և ես առաջի արդարութեան քո 'ի թիւս անօթոյն անարգութեան, որ են մերժեալքն. այլ ընդ նմին ածեալ զմտաւ, ո՛վ խաչեցեալդ իմ Յիսուս, զդառնութիւն չարչարանացդ զոր վասն իմ կրեցեր, քաջալերիմ ակն ունել թէ ողորմութիւն քո համարեսցի և զիս 'ի թիւս անօթոյն պատուականաց, որ են ընտրեալք

քոյին։ Այլ տակաւին ո՞ գիտէ թէ յընտրելոցն իցեմ եթէ 'ի մերժելոց։ Երկնչիմ և յուսամ. և զայս խնդրեմ շնորհս 'ի քէն, Փրկիչ բարերար, ունել զիս առ ոտս խաչի քո ընդ մէջ յուսոյ և երկեղի. որպէս զի մի՛ յուսոյն ընդունայնացայց, և մի՛ երկիւղիւն վհատեցայց. այլ խոնարհութիւն հաստատեսցէ զիս 'ի սէր քո և զի սէր ընկերին։ Երկնչիմ 'ի քէն, Դատաւոր իմ. սիրեմ զքեզ, Հայր իմ. և յուսամ 'ի քեզ՝ զի կոչեսցես և զիս ընդ ընտրեալսն քո յաջմէ քումէ։

Մերժեցից 'ի մտաց որպէս թելադրութիւնս դիւականս՝ զերկբայս նախասահմանութեան՝ որ խռովեն զանձն իմ։ Աստուած՝ ոչ է խռովութեան՝ այլ մխիթարութեան, և առաւել մխիթարէ զխոնարհս։

Տիրամայրն առ ոտս խաչին։

ՅԼԹ. Ի դադարել ուր ուրեմն Հրէիցն 'ի չարչարելոյ զՅիսուս՝ ազգի ազգի տանջանօք և անարգանօք, յաւելուն 'ի նա չարչարանս նոր, որ և դառնագոյն քան զընաւս համարեալ լինի. և է տեսիլ ամենասուրբ Մօր իւրոյ՝ անդ առ երի յանդիման խաչին կացելոյ։ Այլ ոչ է մարթ վերահասու լինել վշտաց Քրիստոսի ընդ տեսանել զՄայրն առ ոտս խաչին, թէ չիցէ ոք հասու ցաւոց Մօրն՝ 'ի տեսանելն զՅիսուս 'ի խաչին։ Մարիամ որ սիրէ զՅիսուս առաւել քան զամենայն մարս՝ կրէ 'ի յոգւոջ զամենայն զոր 'ի մարմնի իւրում կրէ Յիսուս, և կցորդութեամբ սրտին՝ կրէ զոր նոյն 'ի սրտի իւրում։ Վասն այսորիկ և տեսանել Յիսուսի զանհնարին ցաւս

Մօր իւրոյ, ընդ հայելիս աչացն ընդունի յինքեան ցաւ անհնարին։

Ո՛վ հանդիպումն աչաց Որդւոյն և Մօրն։ Արժան է աստանօր զկայ առնուլ քեզ, հոգի իմ, և բաժանել զհայեցուածս մտացդ, մերթ նկատելով զՈրդիս այս և մերթ զՄայրս այս։ Որպիսի՜ ցաւք Մօրն 'ի տեսանել այսպէս խոշտանգեալ զօրհնեալ պտուղ որովայնի իւրոյ՝ զՅիսուս։ Որպիսի՜ ցաւք Յիսուսի՝ 'ի տեսանելն այսպէս վշտահար զՄայր իւր սիրելի և զամբիծ։ Յիսուս՝ խաչ և վիշտ է Մօր իւրում. Մարիամ՝ խաչ և վիշտ Յիսուսի։

Այլ մեզ ոչ է 'ի դէպ զդորովանս ևեթ նկատել, այլ անցեալ խոկասցուք, վասն է՞ր են ցաւք Որդւոյն և Մօրն։ — Մեղք մեր հանդերձեցին Քրիստոսի զչարչարանսն. նոքին ուրեմն են և պատճառք ցաւոց Մօր նորա։

Ո՛հ, իցիւ թէ չէր այսմ այսպէս եղեալ, որպէս և էն։ Այլ հաւատք և գիտակցութիւն իմ ստիպեն զիս խոստովանել զճշմարտութիւն, եթէ ամենայն վէրք մարմնոյդ, ո՜վ Յիսուս, և ամենայն վէրք ոգւոյդ, ո՜վ Մարիամ, վասն իմոց յանցանաց և մեղաց եղեն։ Եւ ո՞ւմ առաւել քան զիս արժան էր տխրել և ախտակցել։ Եւ սակայն, աւա՜ղ եղո՛ւկ չուառականիս, զի և յածելս զմտաւ զվիշտս ձեր՝ կամ ցուրտ և ցամաք որպէս պատկեր փայտեղէն կամ քարեղէն։ Եւ ընդէ՞ր այդպէս ապառում իցես, հոգի իմ, և անկարեկիր տառապանաց Աստուածամարդոյդ և Մօր իւրում։ — Ո՛վ Մարիամ, Մայր ողորմութեանց, առ քեզ վերադարձեալ պաղատիմ զամենագութ պաշտպանութիւն քո, զի լինիցիմ լսելի՝ 'ի ժամելս իմում ցաւ ճշմարիտ և կարեկցութիւն չարչարանաց քոց և Որդւոյդ, և զղջումն և ատելութիւն մեղաց իմոց։ Ընդ քեզ

փափագեմ կալ առ խաչին, և ընդ քեզ ողբալ»։

Կոյսն ամենօրհնեալ վերընծայեաց զցաւս իւր առ Հայրն յաւիտենական, մաղթելով ներգործել յիս զզօրութիւն ցաւոց Որդւոյն. 'ի նոսին և ես ապաստան արարից զանձն իմ, որպէս զի և վայելեցից զարդիւնս նոցին եղեց արժանի։

ՅԽ. Ի *յայտնել Քրիստոսի զինքն՝ մարդ, գոբովանօքն առ Մայր իւր, յայտնէ և գերագոյն քան զմարդ զոլ՝ սքանչելի անդորրութեամբն նաև 'ի լռութեան անդ տառապանացն։ Տես, քանի հանդարտութեամբ առնէ զկտակ իւր 'ի խաչին։ Յետ Թողլոյ առ Թշնամիսն զեռանդուն աղօթսն, առ աւազակն՝ զարքայութիւն, Թողու և առ Մայրն փոխանակ որդւոյ զսիրելի աշակերտ իւր զՅովհաննէս. և առ Յովհաննէս՝ փոխանակ մօր՝ զսիրելի ծնող իւր Մարիամ։ Մխադիր և Մարեմայ. զիա՞րդ մինչ յայտ առնէ կին լինել՝ մայրենի մորմոքանօքն առ Որդին, ցուցանէ և 'ի վեր քան զհնմասեռսն լինել արիութեամբն՝ ժուժկալելով անհնարին ցաւոցն։ Մայրաբար գործէ, այլ առաքինութեամբ՝ որ արժանաւոր իցէ Մօր Աստուծոյ։ Դառն և ամենադառն են ցաւք նորա. այլ տես, քանի՛ վայելուչ, քանի՛ հեզօրէն կրէ, ոչ ինչ այլ յայլմէ լինելով կամ կողկողելով։ Յայտ ուրեմն է զի կամք իւր 'ի կամս Աստուծոյ էին ապաստան։ Յիսուս զայն կամի զոր Հայրն յաւիտենական կամի, զփրկութիւն աշխարհի. զնոյն՝ և ոչ այլ ինչ փափագելով և Մարեմայ, երկոցուն ևս պայծառ և խաղաղ են միտք, Թէպէտ և զգայունք վշտակրեալք։ Յայսմ յԱստուծած ապաւինութեան գտանի երջանկութիւն և կատարելութիւն։ — Իսկ իմ ուստի՞ իցէ մերձ ընդ մերձ խռովել և վրդովել յոգւոյս։ — Անտի իսկ զի ոչ կամիմ զոր Աստուածն կամի։*

Ո՛վ Յիսուս, ո՛վ Մարիամ, քանի՛ թշուառ եմ ես. զի ճանաչեմ զաղէտս իմ և առ ձեռն պատրաստ ունիմ զդեղն կամակ, և ոչ կամիմ առնուլ: Ո՛հ, եթէ բոլորովիմբ թողուի զիս յառաջնորդութիւն կամացն Աստուծոյ, և ապաստան լինէի յամենիմաստ տեսչութիւն նորին, ո՛ քան զիս 'ի կենցաղումս առաւելոյր 'ի բարեկենդանութեան՝ ներքին խաղաղութեամբն յոր վայելէի, և հաստատուն յուսով յաւիտենականն երանութեան:

Այսպէս արարից յայսմ հետէ, և 'ի ձախողութիւնս երկիր պագից հեզութեամբ կամացն Աստուծոյ: Եւ թէպէտ իցեն ինչ ինչ ծանունք առ զգայութիւնս, ասացից, թէ այսպէս կամի, այսպէս անօրինէ Աստուած. և հուպ ընդ հուպ խոնարհեցայց և մխիթարեցայց, զի կամքն Աստուծոյ կատարին և ոչ իմ: Այս է իմ առաջադրութիւն. այլ քանզի յողդողդ են կամք իմ, և անձնատուր յիւրական սէր՝ 'ի կոյրն 'ի ստահակ և յապստամբ, խնդրեմ 'ի քէն, Հայր յաւիտենական, վասն արդեանց Յիսուսի և Մարիամու, շնորհել ինձ այնպիսի կցորդութիւն ընդ կամաց քոց, զի մի՛ և մի ինչ արարածական լիցի քակտիչ:

Զգոյշ կացից անձին իմոյ. և երբ և զգացից խռովութիւն 'ի ներքս 'ի յիս, անձնասիրութեան իմոյ եղեց մեղադիր, և 'ի կամս Աստուծոյ եղէց ապաստան՝ դարձայց յանդորրութիւն:

ՅԽԱ. Տեսցուք զկարգ բաժանէ Քրիստոս զգործ բարեգթութեան ընդ սիրելիս իւր՝ ընդ Մայրն և ընդ աշակերտ: Յանձն առնէ զՅովհաննէս առ Մայրն՝ զի կալցի իւր յորդի. յանձն առնէ զՄարիամ առ Յովհաննէս՝ զի ընկալցի 'ի մայր. ասել իմն կամելով. Ես մեռանիմ, Մայր

իմ, այլ իմ փոխանակ թողում քեզ որդի այլ. և դու Յովհաննէս, զրկիս 'ի հօրէս, այլ իմ փոխանակ տամ քեզ զիմ Մայր: Սփոփանք են Մարեմայ խնամք որդւոյն խաչեցելոյ առ ինքն. այլ և որպիսի՜ ցաւ նմա՝ փոխանակութիւն սոսկ մարդոյ ընդ Աստուծոյ Ճշմարտի: Փառք են և Յովհաննու 'ի մայր ունել զՄայրն Աստուծոյ. այլ որպիսի՜ և ցաւք իւր ընդ զրկիլն յայնպիսւոյ Հօրէ: Ո՜վ քաղցր դառնութիւնք. ո՜վ դառն քաղցրութիւնք:

Ածցուք զմտաւ, զի 'ի տուեալ լինել Մարեմայ 'ի մայր Յովհաննու՝ տուաւ նա 'ի մայր և մեզ, որ կերպարանակիցք եմք սորոյ աշակերտին. և որպէս Յովհաննէս տուաւ յորդի Մարիամու, այսպէս և մեք տուաք նմա յորդիս: Ճշմարիտ Մայր մեր է Մարիամ, զի ծնաւ զմեզ հոգեպէս առ ոտս խաչին, որպէս ծնաւ մարմնով զՅիսուս 'ի մսրին. և կրեաց 'ի Գողգոթա զերկունս՝ զոր ոչն կրեաց 'ի Բեթղեհէմ: Ո՞ ետես զայսպիսի սքանչելիս. կուսի կոյս մնալով՝ զայսքան որդիս ծնանել միահաղոյն: Այլ քանի՜ հաճութիւն և մեզ՝ մայր ունել զՄայրն Աստուծոյ:

Ո՜վ Յիսուս, հայր գորովագութ, զի՞նչ տաց քեզ փոխանակ ամենասուրբ Մօրդ՝ զոր ետուր ինձ 'ի մայր: Բարիք են՝ որ որչափ և խորհիմ՝ մեծագոյն ևս երևին. զի որո՞ց ոչ կալայց ակն առ 'ի քէն շնորհաց՝ զայսպիսի ունելով միջնորդ առ քեզ՝ զքո իսկ Մայր: Անթուելի երախտեաց պարտական եմ քեզ, Յիսուս. և առ 'ի չլինել ապերախտ՝ հայցեմ 'ի քէն, զի որպէս 'ի խաչէ այսր ազդեցեր 'ի Մարիամ զորդի լինելոյ ինձ 'ի մայր, ներգործեա և յիս ոգի լինելոյ նմա յորդի:

Ո՜վ Մարիամ՝ ամենագութ առ իս, գոհանամ զքէն, զի արժանի արարեր զիս քում որդեգրութեան: Եւ ես թէպէտ և յոյժ անարգ եմ և

խոստան, այլ երկրամած խոնարհութեամբ ընդունիմ և ես զքեզ 'ի մայր. և աղաչեմ, մի հայիր յանարժանութիւնս իմ, այլ լեր ինձ 'ի մայր: Լեր իմ մայր, առ ընդունել ինձ զշնորհս՝ զորս 'ի կարօտութեան իմում տեսցես ինձ կարեւորս և յոյժ պիտանիս 'ի փրկութիւն անձին իմոյ: Ընկալ ինձ շնորհս Ճշմարիտ աստուածսիրութեան, որպէս զի գնացից իբրև արժանաւոր քեզ որդի. և այս շատ է ինձ:

Մի երբեք զանց արարից պատուել զԿոյսն ամենօրհնեալ. և հաճոյ եղեց նմա առաւել ողջախոհութեան մասամբ, նմանեալ Յովհաննու, որ և վասն այսորիկ սիրելի եղև նմա և արժանի ընդունելոյ զնա 'ի մայր:

Գանգատ Յիսուսի զի բարձի թողի եղև:

ՅԽԲ. Ժամն երիս կացեալ Յիսուսի 'ի խաչին, մինչդեռ 'ի սպառ նուաղեալ թուէին ոգիքն և մերձ 'ի շունչ վախճանին, յանկարծակի 'ի ձայն բարձր աղաղակէ և գոչէ. ոչ իբրու 'ի բնութենէ իմիքէ կամ յոչ ժոյժ ունելոյ ընդոստուցեալ, — քանզի և 'ի դառնութիւնս չարչարանացն ամենեւին ոչ այլայլեցաւ քաղցրութիւն նորա հեզոգի. — այլ աղաղակէ առ 'ի յայտ առնել, եթէ սաստկութիւն ցաւոց մարմնոյն և հոգւոյն՝ 'ի մահուչափն արդ հասին յաստիճան. և գոչէ այսպէս, քանզի այսպէս նախասացեալ է 'ի գիրս, եթէ Փրկիչն աշխարհի յառաջ քան զմեռանելն լիաձայնապէս յանդիման արասցէ Աստուծոյ զատադնապ վշտացն (Սաղմ. ԿԲ. 4. ՃԽԱ. 3.): Յամենայն տանջանս իւր ոչ վերացոյց ճիչ

աղաղակի. իսկ այժմիկ ահա 'ի մեռանել ժամա-
նեալ՝ արձակէ լիովին զձայնն, և Ճչէ որպէս
մայր յերկունս: — Նկատեսցուք զՏէր մեր որ-
պէս հայր՝ 'ի ստեղծանելն զմեզ, և այժմ 'ի խա-
չին որպէս մայր լինել մեզ. քանզի զարդիս 'ի
կատարման փրկագործութեանն երկնէ զմեզ 'ի
շնորհս և ծնանի յորդիս իւր: Ձեղև ինչ աշխատ
'ի լինել մեզ հայր յարարչագործութեանն. այլ
որպիսի՞ տաժանակիր տագնապս՝ հանգոյն եր-
կանց ծննդականի՝ ոչ կրեաց 'ի լինելն մեզ մայր
փրկագործութեամբն: — Արդ այժմ 'ի դէպ է
քեզ, հոգի իմ, ունել քեզ զՅիսուս իբրև 'ի
մայր խանդաղակաթ, որ յարգանդէ ծնաւ ըզ-
քեզ, և ոչ կարէ չզօրովիլ զքեւ գթովք. անկ է
և քեզ համարել զքեզ նմա յորդի ցաւոց: Վասն
այսորիկ մեծաձայնագոյնս գոչէ, զի քաջալուր
լիցի, և խորագոյնս տպաւորեսցի խորհուրդն
յոգւոջ:

Ո՜ Յիսուս իմ, հայր իմ և մայր իմ, և ամենայն
ինչ. քանի՜ պարտական իցեմ կաթոգին սիրոյդ:
Պարտական եմ քեզ վասն հոգւոյս՝ զոր ստեղ-
ծեր և փրկեցեր. այլ պարտական եմ քեզ և
վասն քումդ իսկ հոգւոյ՝ զոր ետուր վասն իմ:
Եւ զիա՞րդ կարող եղեց հատուցանել քեզ ըզ-
պարտս իմ: — Վասն հոգւոյս իմոյ՝ չունիմ և
չկարեմ այլ ինչ տալ՝ բայց զնոյն զհոգի իմ. և
ահաւասիկ տամ քեզ զայն աստանօր. առ, ըն-
կալ, զի քո իսկ է: Այլ վասն քոյ հոգւոյդ՝ այդ-
քան վասն իմ տառապելոյ 'ի խաչին, զինչ ար-
ժամիցէ տալ քեզ: — Ոչ ինչ գտանեմ 'ի հատու-
ցումն ըստ արժան բաւականի տուեցելոյն ինձ.
այլ զայս միայն կարեմ մաղթել. Ո՜վ սիրելի Յի-
սուս, որ այդքան առատապէս հատուցեր Հօր
քում յաւիտենականի զպարտիս իմ որ առ նա,
հատո աղաչեմ և քեզ ինքնին զպարտս զոր

պարտիմս քեզ. և տո՛ւր ինձ հզօր զօրութեամբ արդեանց քոց՝ գէթ սիրել զքեզ սիրով արժանաւորաւ առ այն՝ որ առաւել է ինձ քան զհայր և քան զմայր՝ զի ծնաւ զիս՝ ոչ ըստ բնութեան այլ ըստ շնորհաց, ոչ երկրի՝ այլ երկնից:

Գիտեմ զի ոչ իւիք կարեմ հաճոյ լինել Աստուծոյ՝ բայց սիրելով զնա. և սակայն ոչ սիրեմ և ոչ հանդերձիմ 'ի սիրել, նա մանաւանդ և թշնամանեմ և խոտեմ զնա: Աւա՜ղ ինձ: Մատուցից աղերս ցաւագինս, զղջականս և խոնարհականս:

ՅԽԳ. Այս են բանք զոր ասացն Յիսուս բարձրաձայն. «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՞ր թողեր զիս»: Ոչ եթէ գանգատի իբրու թէ աստուածութիւնն անջատեալ իցէ 'ի նմանէ, զի ոչ երբէք բաժանեցաւ անձնական միաւորութիւն Աստուածամարդոյն, և ոչ Հայր զատաւ յՈրդւոյն. այլ ցաւագնի որպէս մարդ, և որպէս նախասացեալն էր զնմանէ. թուելով մարդկութեանն վշտացելոյ ամենայն մասամբք իւրովք՝ եթէ լքեալ թողեալ եղև 'ի տագնապ ժամուն անօգնական և անմխիթար. և այսպէս ցաւագնի՝ զի գիտացեն ամենեքին եթէ ոչ հեշտ ինչ էր նմա չարչարիլն՝ Աստուած գոլով. այլ մանաւանդ քանզի Աստուած էր՝ դառնագոյն ես են նմա չարչարանքն, զի և ոչ շիթ մի մխիթարութեան աստուածայնոյ ամոքէ զցաւսն:

Ո՞ կարասցէ խելամուտ լինել մեծամեծ խորհրդոց բովանդակելոց 'ի գոչման Փրկչին. գոչումն ոչ գանգատանաց՝ այլ մեծիմաստ վարդապետութեան: Մի՛տ դիր, հոգի իմ: Յիսուս կրէ զառերևոյթս այս լքումն յանաչառ արդարութենէն Աստուծոյ, զի մի՛ լիցուք մեք լքեալք յողորմութենէն Աստուծոյ. և ցաւագնի ոչ վասն իւր

ինչ՝ այլ վասն մեր, ցուցանելով զվէրս իւր առ Հայրն երկնաւոր՝ վասն մեր, զի մի լիցուք մեք բարձի թողի 'ի շնորհաց նորին: Տեսանէ զի սակաւուց լիցին յօգուտ չարչարանք իւր՝ չատ իսկ բաւականք 'ի փրկութիւն ամենեցուն. և այս թափէ զսիրտ նորա, գտանիլն միայն ընդ սակաւուց ընտրելոց, 'ի սակս բազմացն դատապարտութեան, որ զայն կամիցին 'ի սակս մեղաց իւրեանց: Ո՛հ, քանի կսկծագին էին Յիսուսի այս վիշտք: Այլ ոչ այնքան 'ի վերայ նորա՝ որքան թէ 'ի վերայ մեր արժան է լալ:

Ո՛վ քաղցր Յիսուս, և ամենաքաղցր 'ի սաստկութեան դառնութեանցդ. իցե՞մ արդեօք և ես յաւուր թիւ մերժեցելոցն, որ դժնդակագոյնս քան զամենայն ցաւս տանջեաց զքեզ 'ի չարչարանսդ: Զարհուրիմ ես. չարութիւն իմ զարհուրեցուցանէ զիս: Քանզի Աստուած իմ, մեղօք իմովք արժանի գտայ թողեալ լքեալ լինելոյ առ 'ի քէն իսպառ ասպուռ լքմամբ 'ի ժամանակի և 'ի յաւիտեանս. նաև յայժմուս վասն անսաղելի դաղջութեանս արժանի եմ այդմ ահեղ պատուհասի. այլ սակայն ցորչափ կեամս յարեալ 'ի խաչ քո, յուսամ ո՛վ Յիսուս, և փափագեմ յուսալ զամագիւ ա լինելոյ գթութեան: Տաւիմ ընդ մեղս իմ. ցաւէ ինձ զի ոչ օգտեցայ 'ի չարչարանացդ՝ անփոյթ լինելով զսուրբ խորհրդոց եկեղեցւոյ. և աղաչեմ զքեզ, Փրկիչ իմ, ձեռն տուր ինձ օգնութեամբ շնորհացդ՝ զոր վասն իմ ստացար: Մի թողուր զիս 'ի ժամանակի կենաց իմոց. մի թողուր զիս մանաւանդ 'ի ժամու մահուան իմոյ. որպէս զի և 'ի կեանս և 'ի մահու և 'ի յաւիտեանս՝ հանապազ սիրեցից զքեզ և միացայց ընդ քեզ անլուծանելի կապանօք սիրոյ:

Երկեայց 'ի բարձի թողի լինելոյ յերեսաց Աս-

տուծոյ. և ո՞ գիտէ թէ ոչ պատահեսցէ ինձ այս 'ի գործել խմուլ զառաջինն մեղս. վա՜յ է ինձ ե- թէ և մի անգամ մեղայց. քանզի չքունին նոյն ինքն է կորուստն անդարմանելի:

Յիսուս ցուցանէ զխաչն Ծառայոյն ;

ՅԽԴ. Քանզի 'ի սատակութենէ ցաւոյն և 'ի քամելոյ արեանն՝ ցամաքեալ էին աղիք, ոսկերք և կոկորդ Յիսուսի, ողորմագին ձայնիւ աասց, Ծարաւի եմ. յայտ առնելով այսու ոչ միայն զկիծ պապակոյն որով տագնապէրն, այլ և զյե- տին չքաւորութիւնն. որպէս թէ կամելով ասել. Աչաւագին Աստուած որ արար զծովս և զգետս, և զբիւրս բիւրուց Երրայեցւոցն արբոյց յանա- պատին, յայս պայման հասեալ կայ, զի և ոչ կաթիլս երկուս ջրոյ գտանէ 'ի զովանալ, և մե- ռանի ծարաւահիւծեալ: — Իսկ զի՞արդ կազդու- րեն զնա: Կարկառեն 'ի շրթունսն սպունգ լցեալ քացախով, զի 'ի ծծելն ծաղր լիցի և տանջեսցի: Ո՛ եսես, ո՞ լուաւ զայսպիսի անգթութիւն, եթէ առ հեգ դատապարտեալ մերձ 'ի մեռանել՝ քա- ցախ մատուսցի յարբումն, և զլասցի ումպ մի ջրոյ, զոր և ոչ անասնոց զլանան:

Վշտակից լեր Յիսուսի, հոգի իմ, որում ցաւք յաւելուն մինչև ցսպառ. և զովլին իսկ ծանու- ցեալ զի Փրկիչ է աշխարհի՝ յորում 'ի գլուխ ե- լանեն մարգարէին պատգամք, միտ դիր բանիս, Ծարաւի եմ. բան հակիրճ՝ այլ խորհրդաւոր: Վասն էր արդեօք՝ այնքան երաշխէպս ցաւոց կրելով՝ միայն զծարաւոյն գանգատիցի: Հարց- ցուք զնա ինքն պատկառանօք. Որպիսի՞ ինչ իցէ

ծարաւդ այդ. — և լսեմք, զի բորբոքք են սիրոյ որ առաւել քան զամենայն տոչորէ զնա 'ի ներքուստ: Սիրէ և անձկայ փրկութեան հոգւոց մերոց. և յետ ըմպելոյ մինչև ցյատակ զմրրախառն բաժակ չարչարանացն, ասէ ծարաւի գոլ յըմպել անյագաբար միւս ևս դառնագոյն բաժակ, եթէ պիտոյ իցէ և այն 'ի փրկութիւն նոցին:

Սքանչանամ, Տէր Յիսուս, ընդ ծարաւդ այդ, տոթեալ 'ի հրատոչոր սիրոյդ. և յետ բազում անգամ ըստ տկարութեան իմոյ գոհանալոյ ըզքէն՝ վասն ամենայնի զոր վասն իմ կրեցեր, շընորհ ունիմ արդ և զփափագանացդ որով փափագես վշտակրել 'ի փրկութիւն իմ՝ առաւել քան զոր տանիցի բնութիւն. գոհանամ և զանբաւ արդեանցդ՝ զոր այդու ծարաւով յաւելեր 'ի գանձս չարչարանաց քոց: — Այլ զի՞րդ կարացից յայսմիկ նմանել քեզ, մինչ ծանր յոյժ թուի մարդկութեան իմոյ չարչարիլն, և զուրկ եմ 'ի սիրոյ որ եռանդեամբն իւրով ներգործէ: Աստուած իմ, որ այնքան կրեցեր և փափագեցեր կրել վասն իմ, վառեա զիս սիրով քով, զի վառեսցի յիս Ճշմարիտ ծարաւ վշտակրելոյ վասն քո: Ոչ պակասեն վիշտք 'ի կենցաղումս. միայն յօժարական կամք վշտակրութեան պակասեն ինձ, այն որ արդիւնաւոր գործէ զվիշտսն. և ո՞ կարիցէ հաստատել յիս զայսպիսի կամս՝ եթէ ոչ դու:

Մատուցից աղերս զղջական՝ վասն որ ցարդ նմանող եղէ Հրէիցն, արբուցանելով Յիսուսի զքացախ վարուց իմոց:

ՅԽԵ. Մի յանողորմն հնարից զոր հնարեցան 'ի տանջելն զՅիսուս՝ գրեալ է և քացախն տըրուեալ նմա յարբումն 'ի ծարաւին: Այլ մեք

նկատեսցուք զծանկեալ խորհուրդն: Ծարաւ նորա ծարաւ է հոգւոց՝ 'ի սիրոյն առթեալ, որ զփրկան տաչորէ. և սքանչելիք այս են՝ զի տեսանելով զբիւրս բիւրուց հոգեաց որք արդեամբք նորա փրկելոցն են՝ ոչ շատ համարի զայն 'ի յագուրդ. նախատեսանելով զառատութիւն հնձոց այգւոյ եկեղեցւոյն, առ փոքր ինչ և զայն գրէ և անբաւական 'ի հարկանել զպապակումն. քանզի տեսանէ և զյոլովս՝ որոց ապախտ արարեալ զչարչարանօքն՝ դատապարտ լինիցին:

Աղէ, խորհեա՛ց և տես, հոգի իմ. եթէ գտեալ էր քո 'ի Գողգոթա և լուեալ զասելն Յիսուսի թէ ծարաւի եմ, ո՞չ ապաքէն մատուցանէիր նմա սակաւ մի ջուր. արդ գիտասջիր զի է տակաւին քեզ դէպ ժամանակ զովացուցանել զտապ նորա: Զոր առ Սամարուհին ասաց առ ջրհորո՛ն՝ զնոյն և քեզ ասէ 'ի խաչէն. Տո՛ւր ինձ ըմպել. այլ քաջ 'ի միտ առ. ծարաւի է նա քեզ ինքեան. և կամի զի որպէս յասելն զայն առ կինն՝ անկաւ 'ի նա ծարաւ առ ինքն, նմին նման ծարաւեսցիս և դու Յիսուսի: Կամիցիս արդ սփոփել զՓրկիչն քո ծարաւեալ. ծարաւեա՛ց և դու նմա՝ որ հրաւիրէն զքեզ յաղբիւր կենացն յաւիտենականաց. Յիսուսի միայնոյ ծարաւեսջիր, որ կարողն է յագեցուցանել և փրկել զքեզ. որով և Յիսուս 'ի ծարաւի իւրում քեւ զովասցի:

Ո՛վ Տէր իմ Յիսուս, զամօթի հարկեալ պատկառեմ ես, և չգիտեմ զինչ ասել, յորժամ զմտաւ ածեմ զծարաւն սաստիկ՝ որով ծարաւիս ինձ՝ որ ջուրս եմ պղտոր և տղմաշաղախ. և տակաւին խորհիմ զանձնէս՝ որ բազում իրաց ծարաւիմ և ոչ քեզ, յորմէ բղխեն ուղխք երանաւէտ փափկութեանց: Այսպիսի է իմ ծարաւս. ծարաւ ախտաւոր ցանկութեանց. ծարաւ

մարմնոյ, երկրի, աշխարհի։ Եւ զի՞նչ լիցէ այս ծարաւ՝ եթէ ոչ քաղցախ դառնաճաշակ առ քեզ մատուցեալ։ Ո՜վ Յիսուս իմ խաչեցեալ, տո՛ւր ինձ 'ի ծարաւոյ զոր կամիդ ինձ ունել. ծարաւ նմանող քեզ լինելոյ 'ի խոնարհութեան, 'ի գըթութեան, 'ի համբերութեան, 'ի հնազանդութեան, և որ ինչ այցին նման ուղղութիւնք։ Երանի՜ ինձ եթէ գուցէ և իմ ծարաւ կատարելոյ յամենայնի ընդ քեզ զկամս Հօր քո երկնաւորի. քանզի այլաւ հնար է ինձ սփոփել զսիրտ քո, և դարման ծարաւոյդ մատուցանել, և արժանի լինել լսելոյ յաւուրն դատաստանի զձայն քո փառելի՝ որ ասիցէ առ ընտրեալսն. « Եկայք օրհնեալք, զի ծարաւեցի և արբուցէք զիս »։ Ընծայեմ քեզ, Հայր յաւիտենական, զծարաւ Որդւոյ քո Միածնի. և վասն սիրալիր փափագոյն որով փափագէս զի ամենեքին նմա նմանեսցին, տո՛ւր և ինձ շնորհս նմանող նմա լինելոյ 'ի դեղեցիկ յայդ ծարաւման խորում։

Կամիմ փրկիլ. կամիմ նմանող լինել Յիսուսի՝ յառաքինութիւնն սրբազանս. զայս անկ է ինձ ունել ծարաւ, առաջադրելով առանձին յայս ինչ կամ յայն ուղղութիւն ներակրթիլ։

Յետին Բանք Յիսուսի :

ՅԽԶ. Արդ հասեալ Յիսուսի յելս կենաց, տայ յայտնապէս վկայութիւն՝ եթէ կատարեաց զոր ինչ եան անկն էր, անթերի և ոչ կիսամասնեայ, ոչ ինչ մնալով յորոց արժանն էր առնել զոր թէ չէր արարեալ։ Խոստովան լինի զի զոր միանգամ աստուածայինն իմաստութիւն սահ-

մնեաց 'ի վերայ իւր՝ 'ի գլուխ եհան բովանդակ, զամենայն՝ զոր պահանջէին 'ի նմանէ արդարութիւնն Աստուծոյ և ողորմութիւնքն Աստուծոյ. զբովանդակն ճշմարտութեան և գթութեան՝ զոր Հայրն յաւիտենական հրամայեաց նմա առնել և կատարել: Վասն իսկ յայտնեալ էր նորա եթէ ոչ այլոյ իմիք փափագէր՝ բայց կատարելոյ զգործն Աստուծոյ, որ է փրկութիւն աշխարհի, ըստ պատշաճի օրինակացն և մարգարէութեանց Ս. Գրոց. և արդ գիտելի առնէ, զի կատարեաց և կատարելագործեաց զամենայն որ չարչարանացն էր և փրկագործութեան, այլ և զօրինացն ևս, յօրինակ մեզ. որպէս զի չմնայր ինչ այլ նմա գործել իւրովանն վասն փրկութեան մերոյ յաւիտենականի, բայց միայն մեռանելն:

Ո՛հ, երանի՛ որում հասեալ 'ի վախճան կենաց՝ կարիցէ ասել թէ կատարեաց զամենայն պարտս քրիստոնէական կենաց. այս է նմանողն լինել Քրիստոսի՝ յարատեւութեամբ. և պարտք նմանողութեան են մեզ լինելն խոնարհ, բարերար, համբերող, հնազանդ, ոչ յիրս իրս և 'ի ժամանակս ժամանակս, այլ յամենայնի և յամենայն ժամանակի, մինչև 'ի շունչն յետին. զի զի՞նչ օգուտ իցէ սկսանել կեանս բարիս և ոչ 'ի նոյն հանապազորդել: Զբազումս ծանեաք 'ի կատար սրբութեան ժամանեալ, և ապա անկեալ և գլորեալ 'ի կործանումն. և զի յարատեւելն մինչև իսպառ՝ սեփական իմն շնորհք են առ 'ի վերուստ՝ ոչ ամենեցուն տուեալք, ո՞ գիտէ թէ պարգևեսցի և մեզ: Արժան է երկնչել, այլ մի լինել անյոյս:

Եւ յո՞ կարիցեմ ես զյոյս իմ հաստատել աներկբայ՝ եթէ ոչ 'ի քեզ, Յիսուս իմ խաչեալ: Քաջ գիտեմ զանձին իմոյ յողդողդութիւն և

տկարութիւն, որ և 'ի վաղորդենէ 'ի վաղորդայն փոփոխիմ 'ի մտացս առաջադրութենէ. և զի յանցեալ կեանս իմ յաճախ և մերձ ընդ մերձ գլորեցայ և անկայ, զիա՞րդ իշխեցից ինձէն խոստանալ զտեւել տոկալն յապագայն: Ի քեզ միայն ապաւինիմ, Աստուած իմ և Փրկիչ իմ. և աներկմիտ հաւատամ քոյին օգնութեամբ ծախել ըզկեանս իմ յանվրէպ ծառայութիւն քո և 'ի հնազանդութեան, լաւ համարելով զմեռանելն քան զքեզն թշնամանել: Մեծ են շնորհքս զոր խընդրեմ 'ի քէն, յարատեւել 'ի սուրբ սպասու քոյին՝ ցկատարած կենաց իմոց. այլ խնդրեմ զայն արդեամբք լիակատար յարատեւութեանն՝ որով տարար այնպիսի դառն և ցաւագին չարչարանաց: Յիսուս իմ, որ տաս ինձ փափագել զգաստ և ուղիղ վարուց, այնպէս հաստեա և հաստատեա զիս 'ի բարւոջն, զի մի ևս գրգռեալ թողից զայն և ոչ վասն միոյ իրիք պատճառի:

Առ 'ի գտանել զշնորհս յարատեւութեան յանձն արարից զիս Աստուծոյ և յուսացայց 'ի նա, և գործակից եղեց շնորհաց նորին՝ բուռն առնելով անձին:

Յխլ. Բոլորամանեայ կատարումն ամենայն նախաճառելոցն 'ի մարգարէից անտի և յինքենէ իսկ 'ի Յիսուսէ Քրիստոսէ, տայ մեզ իմաստասիրել, եթէ արդ չմնալով այլոյ իմիք 'ի գլուխ ելանել՝ բայց եթէ դուշակութեան յետին դատաստանին, կատարեսցի և այն անվրէպ. և եկեալ փառօք իւրովք Աստուածամարդոյս 'ի Հրէից խաչեցելոյ, ասասցէ և յայնժամ. Ամենայն ինչ կատարեալ է: Կատարած է աշխարհի. կատարեալ են ամենայն ժամանակք. կատարեալ է ժամանակ գործելոյ չարիս. կատարեալ է ժամանակ գործելոյ զբարիս. և արդ

'ի գալ հասանել յաւիտենականութեան՝ հարկ է տալ համարս Ճշգրտութեամբ: Ամենայն ինչ կատարեալ է: Կատարեալ է ամենայն ինչ և վասն արդարոց և վասն մեղաւորաց. սոցա կատարեալ են գրգանք և հեշտութիւնք, և նոցա կատարեալ են վիշտքն և խաչք. և հասեալ է ժամ ընդունելոյ իւրաքանչիւր ըստ արդեանց գործոց իւրոց կամ փառս յաւիտենականս և կամ տանջանս յաւիտենականս:

Այլ որ 'ի կատարածի աշխարհիս հանդիպելոցն է՝ նոյն դիպեսցի և 'ի կատարածի կենաց իմոց. քանզի 'ի պահու անդ մահուանս ամենայն ինչ զրաւեսցի վասն իմ, և աշխարհ և ժամանակ և ամենայն ժամանակաւորքս: Ամենայն ինչ կատարեալ է, ասիցէ ցիս Քրիստոս՝ յանդիման առնելով ինձ զաւետարան իւր սուրբ և զչարչարանսն. Աւադիկ զայս ամենայն արարի իմովսանն վասն փրկութեան քո յաւիտենականին: Իսկ ես եղէ՞ց արդեօք կարող ասել, Ամենայն ինչ կատարեալ է, զի գործակից եղէ իմովսանն շնորհաց նորին: Քաջ խորհեաց, հոգի իմ. յի՞նչ իրս ցարդ ծախեցեր զկեանս քո. զիա՞րդ պահեցեր զօրէնսն. ո՞րպէս զխրատս Քրիստոսի. ի՞բր մտադիւր պարապեցար յաղօթս. զիա՞րդ յանձնեցեր առ սուրբ խորհուրդս: Վասն ամենայնի այսոցիկ կայ մնայ տալ համարս առ խաչեցեալն. և դու զի՞նչ տայցես պատասխանի:

Ո՜հ, Աստուած իմ, 'ի քննել զանձն իմ՝ ամօթ ծածկէ զիս իսպառ. քանզի ոչ այլ ինչ տեսանեմ յիս՝ բայց մեղս ևեթ, զորս և ոչ տեսեալ ոչ ապաշաւեմ. և զիա՞րդ ոչ յայնժամ առաւել ևս եղէց ամօթապարտ: Յիսուս իմ, փրկիչ իմ և դատաւոր իմ, աղաչեմ զքեզ փառաւոր առնել յիս այժմիկ և յայնժամ զողորմութիւնս քո, զողորմութիւնն՝ զորովք բազում անգամ չա-

րութեամբ ապախտ արարի։ Արդարև 'ի նանիր
և յանօրէնութիւնս վատնեցի զժամանակ իմ.
իսկ արդ իսպառ մերժեցայց յերեսաց քոց։ Այն
ունիմ դարման գտանելոյ, քանզի գիտեմ հա-
ւաստեաւ թէ դու դեղ դարմանոյ, և այն է սէր
քո. չիք մեղք թէպէտև մեծ և այլանդակ՝ որ ոչ
թողեալ լիցի սիրողին զքեզ. և 'ի սէր յայսմ քո-
վանդակեալ կայ ամենայն առաքինութիւն։ Եւ
արդ շնորհեա ինձ, Աստուած իմ, զպակաս մնա-
ցուած ժամանակի կենաց իմոց՝ ծախել բոլորո-
վիմք 'ի սէր քո, յամենայն սրտէ և յամենայն զօ-
րութենէ մտաց. որպէս զի կարող եղէց 'ի ժա-
մու մահուան իմոյ ասել 'ի փառս քո և 'ի գո-
հութիւն իմ մշտնջենաւոր, եթէ Ամենայն ինչ
կատարեալ է. Կատարեալ է ամենայն ինչ, քան-
զի վերջին վախճան ամենայնի է սէր քո։

Յաճախեցից յաղերս սիրոյ առ Աստուած.
զոհեցից առ այս սէր՝ զյատկացեալն ինչ յիս ու-
նակութիւն ախտի, միաւորելով զկամս իմ յար-
գիւնս չարչարանացն Քրիստոսի։

ՅԽԸ. Արբեալ Յիսուսի զբաժակ չարչարա-
նացն զոր եառն 'ի պարտիզին, և չմնալով այլոյ
իմիք յանթերի լրումն հնազանդութեանն, բայց
ումեմն յետին, որ է մեռանելն, մտանէ յօրհաս,
ցուցանելով զամենայն նշանս տագնապի զոր ըն-
նութիւն ազդէ օրհասականաց։ Այլ յեղակար-
ծումն իմն ամբարձեալ զգլուխ իւր և զաչս յեր-
կինս, ուժգնութեամբ ոգւոյ՝ որպէս ամենեին
առողջ ոք՝ կարդայ առ Հայր իւր յաւիտենականն.
ոչ որպէս մարդ որ 'ի ձիգն օրհասին կայցէ, այլ
որպէս Աստուածամարդ, որպէս և էն, անյող-
դողդ, քաջահնչող ձայնիւ, լու 'ի լու ամենեցուն
և սանդարամետականաց անդամ։ Ի կարդալն
զԱստուած՝ Հայր, ծանուցանէ զի է և ինքն Աս-

տուած Որդի, որ վերադառնայ առ Հայրն՝ յորոյ ծոցոյ ելեալ եկեալ էր յաշխարհ. և որպէս ամենակարող՝ գոչէ անօրինակ հրաշափառագոյն ձայնիւ. որպէս զի յայտ լիցի՝ թէ ոչ մեռանէր՝ եթէ չկամէր. և եթէ մեռանի՝ ոչ առ բռնութենէ իմիքէ կամ ՚ի հարկէ, այլ յազատ և ՚ի յօժար կամաց է, որով յանձն առնու պատարագել զպատուական կեանս իւր մահուամբ: Ի լուր այնր ձայնի՝ ՚ի միտ առնու հարիւրապետն, եթէ անսովոր և գերմարդկային իրք են սքանչելիք, և խոստովանի զՅիսուս Աստուած և մարդ:

Այլ, ո՛ն, և մեք ածցուք զմտաւ: Եթէ այդքան հզօր և թափանցիկ է ձայն Աստուածամարդոյն օրհասականի, որպիսի՞ ինչ լինիցի յորժամ գայցէ ՚ի դատել զաշխարհս: Արդ, հոգի իմ և փութա ՚ի խոստովանութիւն հաւատոյ, գոհութեան և զղջման: Հաւատամ աներկբայ, ո՛վ Յիսուս, զի Ճշմարիտ Որդի ես Աստուծոյ. և որպէս դու կամաւորապէս ետուր զկեանս քո վասն իմ ՚ի խաչի, այսպէս և ես քոյին օգնականութեամբ պատրաստեմ յամենայն դէպս հարկաւորս նուիրել քեզ զկեանս իմ և զարիւն՝ ՚ի խոստովանութիւն աստուածութեան քո՝ որ աներկբայելի մասն է հաւատոց: Հաւատամ ՚ի քեզ, Աստուած իմ, և խոնարհեալ երկիր պագանեմ և գոհանամ զգորովասէր կամաց քոց՝ որով յանձն առեր զմահ վասն իմ: Եթէ փրկեցայց, որպէս և յուսամ, պարտական եղէց հանապազ մահուան քո՝ վասն յաւիտենական փրկութեան իմոյ: Այլ զի՞նչ հնար է ինձ երախտիս քեզ մատուցանել: Ի վէրս քո ընթեռնում զցանկութիւնս սրտի քո, որով ոչ միայն զմեծութիւն գթութեանցդ ցուցանել կամիս ՚ի չարչարանքդ, այլ և զեղուլ ծաւալել զբարեմոյն հոսանս գթութեանցդ և պտղաբերս գործել. վասն այդորիկ

Հոգի իմ փարեալ զոտիւք քովք հաստատուցանէ կամս ընդ կամաց · այսինքն է կամս եւանդունս 'ի սիրել զքեզ՝ վասն կամացն որով այնպէս ջերմագոյնս սիրեցեր զիս: Աղէ, որ կանխեցերդ՝ այդպիսի գթութեամբ՝ նովիմբ օժանդակեա ինձ արժանի լինել այնմ գթութեան՝ որում ակն կալեալ մնամ ինձ:

Զմտաւ ածից զշնորհս և զողորմութիւնս՝ զոր հանապազորդ առնէ ինձ Յիսուս չարչարանօք իւրովք, և գուն գործեցից պատրաստ լինել տալոյ զհամարն զոր պահանջիցիմ 'ի դատաստանի:

ՅԽԹ. Այս են յետին բանք Քրիստոսի խաչեցելոյ՝ զօրութեամբ եւանդեան ոգւոյն բարբառեալք, ըստ նախասացութեան մարգարէին. «Հայր, 'ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ: Եւ ընդէր ասիցէ զայս, աներկբայ գոլով զի ոգի նորա աւանդեալ է Հօր, վասն անբաժանելի միաւորութեանն ընդ անձն Բանին: Մի ոք կարծիցէ թէ առ կարօտութեան ինչ յանձն լիցի · այլ այսպէս բարբառի՝ առ 'ի յայտ առնել զսերտ վստահութիւն՝ զոր ունի առ Հայր՝ որպէս Որդի · այսպէս բարբառի աւանդելով 'ի ձեռս Հօր զհոգիս հաւատացելոցն՝ որք մահուամբ իւրով զգենցոյ են կենդանութիւն, և միացեալ են ընդ հոգւոյ իւրում: Այսպէս բարբառի առ 'ի ծանուցանել, զի հոգիք մեր ոչ եւս են 'ի ձեռս սատանայի՝ յորմէ հեռաւ յանձն արար 'ի ձեռս Հօր · ուսուցանելով այդու և զեկեղեցի, և օրինակ մեզ ընծայելով նովին վախճանել մտօք 'ի կատարածի կենաց մերոց:

Մտա դիր, զիարդ աստուածային Փրկիչ՝ թէպէտև այդքանեօք ախտակրեալ էր ցաւօք, չէկաց բնաւ պարապորդ, այլ և 'ի հուսկ վերջայսմանդ կենացն կամեցաւ հրահանգել զմեզ օրինա-

կաւ և վարդապետութեամբ։ Արդ, ո՛հ առեալ և մեք՝ փափագանօք նմանող նմա լինելոյ, աղաչեսցուք զնա արժանաւորել և զմեզ այսու օրինակաւ յանձն առնել զանձինս մեր 'ի վախճանի կենաց մերոյ։ Ո՛վ, քանի՜ գեղեցիկ մահ է՝ աւանդել զոգի 'ի ձեռս Աստուծոյ մերոյ։ Այլ առ հասանել յայդ երանութիւն՝ արժան է այժմէն պատրաստութեամբ յանձն լինել 'ի ձեռս Աստուծոյ, և ըստ իւրաքանչիւր վիճակի հետևել կամաց նորա. ապա թէ ոչ՝ զիա՞րդ յուսասցի 'ի մահուան ընդունելի լինել Աստուծոյ՝ հոգի որ առանց սիրոյ և առանց երկիւղի Աստուծոյ կեցեալ իցէ։ — Ո՛հ, Յիսուս իմ, այս է ինձ ժամ և ժամանակ յանձն լինելոյ 'ի քեզ. և յամենայն սրտէ քեզ աւանդեմ զիս, դնելով զանձն իմ 'ի ձեռս քո՝ զորս տարածեցեր 'ի խաչին առ իս։ Ձեռք սիրալիցք, որք ոչ մերժէք և ոչ զոք յապաւինելոցն 'ի ձեզ. ձեռք զօրաւորք, յորոց ոչ ոք կարէ յափշտակել զմի 'ի հոգեացն աւանդելոց 'ի ձեզ. 'ի ձեզ յանձն լինիմ ես, առաջնորդել որպէս և հաճոյ իցէ ձեզ՝ 'ի գնացս կենաց իմոց։ Ոչ գիտեմ զեղանակ մահուան իմոյ. և մարթ է թէ մեռայց՝ չկարելով ասել և բան մի. վասն այսորիկ այժմէն 'ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ, ո՛վ իմ Յիսուս, որ ոչ ևս է իմ, այլ քո, քանզի գին է արեան քոյին։ Կապանօք սիրոյ կաշկանդեալ կա՛լ զդա 'ի բուին, զի մի խուսափիցէ, և լե՛ր դմա պաշտպան 'ի թշնամեաց գեհենոյն, որք դարանակալ լիցին նմա յանցանելն 'ի կենցաղոյս, և յանյուսութիւն կործանել ճգնիցին յիշատակաւ մեղացն գործեցելոց։ Ո՛վ Յիսուս, լե՛ր իմ Յիսուս. այս են աղօթք զոր մատուցանեմ վասն պահու մահուանս։ Կա՛ց ինձ 'ի թիկունս օգնութեամբ քով. որպէս զի կեցեալ քեզ հնազանդ՝ 'ի ձեռաց քոց անցից 'ի

ձեռս Հօր, որում յանձն արարեր զիս՝ 'ի յանձն առնել քում առ նա զքո հոգիդ:

Առ աներկևան լինել յամենայն պատահա_րաց անակնկալ մահու՝ զօր ամենայն յանձն ա_րարից զհոգի իմ, և ասացից ջերմեռանդեամբ՝ առ խաչեալն Յիսուս՝ զոր նոյն ասաց առ Հայր. «Հայր, 'ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ»:

Մահ Յիսուսի խաչելոյ:

ՅԾ. Զերիս ժամս կացեալ Յիսուսի 'ի խաչին, նուաղեալ մարմնով և թաղծեալ հոգւով, հա_սանէ յետս մահու. և մեռանի՝ ոչ վաղ և ոչ ա_նագան քան զանվրէպն վայրկեան, յորում ամե_նեւին ազատ կամօք թոյլ տայ մահու՝ ըստ սահ_մանելոյն 'ի յաւիտենից կարգաց: Վասն որոյ յառաջ քան զվախճանելն՝ խոնարհեցուցանէ զգլուխն, իբրև 'ի յանձնառութիւն հրամայեցե_լոցն, և 'ի գոհութիւն Հօր՝ խոնարհական յար_գանօք, զի հաճի կոչել զնա առ ինքն: Խոնար_հեցուցանէ զգլուխն՝ նշան տալով մահու զի գայցէ. զի թէ ոչ էր կամեցեալ՝ չէր նորա եկեալ. յայտ առնելով զի յամենայն կեանս իւրում ոչ ինչ արար բռնադատութեամբ հարկի, և ոչ բռնի ինչ վշտակրեաց, և չիք որ բռնութեամբ 'ի մահ վարիցէ զնա. այլ յամենայնի և ամենեւին տէր է անձին իւրում:

Ո՛վ հոգի իմ, յառեա՛ց արդ աչօք քովք յԱս_տուածամարդն՝ որ մեռանի. և տե՛ս, զիա՛րդ այն որ 'ի գալն յաշխարհ էր գեղեցիկն 'ի մարդիկ, այժմ 'ի մեկնելն՝ տգեղագոյն քան զբնաւս թուի, մինչև կերպարանաց անգամ մարդոյ չե_րևել 'ի նմա: Հայեա՛ց 'ի դա յետին անգամ, մինչ

տակաւին կենդանի է, Միածին որդի Բարձրելոյն, անքաւելին, և ամենալիրն երկրպագելի կատարելութեամբք իւրովք, զիմորդ նուաղելով նուաղի և ժամանէ 'ի մահ՝ վասն քո, արարածդ փանաքի, որ քոյովանն զչարութիւն ևեթ ունիս սեփական: Ո՛չ զարհուրիս, ո՞չ սարսես 'ի խորհելդ՝ եթէ Աստուած ոմն մեռանի վասն քո, և առ գութ սիրոյն ևեթ զոր ունի առ քեզ: Աղէ՛, ա՛ծ զմտաւ ուշի ուշով հաւատոյ՝ զբանս զայս. Յիսուս Քրիստոս փրկիչն իմ մեռանի վասն իմ մեղաւորիս:

Ո՛վ Յիսուս իմ, այդ որպիսի՜ սէր է քո՝ որ վարեաց զքեզ մինչև 'ի փայտ խաչին, և 'ի հրաժարել անդ յաստուածային կենացդ՝ վասն իմ: Թէպէտ և մեղաւոր եմ անարժան յոյժ, այլ ազդեալ զգամ 'ի սիրոյ այտի վստահութիւն մեծ յոյժ. և համարեալ զխոնարհել գլխոյդ՝ առ 'ի տալ 'ի հրաժարելդ յաշխարհէ՝ համբոյր սիրոյ առ ընտրեալսն քո, խրախուսեմ համարձակ մատչել առ քեզ վստահաբար, թէ ոչ անարգեալ լքցես զիս յանարժանութեան իմում: Ո՛վ քաղցրագութ Յիսուս, որ ոչ ունիս տեղի գնելոյ զգլուխ քո, թո՛յլ տուր սպասաւորել քեզ, և ժուժեա զի ամբարձից զգա և հանգուցից 'ի վերայ իմ: Կարեկից լինիմ զառնակսկիծ վշտաց ամենամաքուր հոգւոյդ 'ի հրաժարելն յամենամաքուր մարմնոյդ. և քանզի կամաւորապէս զոհես զսէր հոգւոյն առ մարմինն՝ վասն սիրոյդ որ առ հոգիս իմ, աղաչեմ զքեզ՝ օգնական լինել ինձ առատաղեղ շնորհօքն՝ զոր վասն իմ տացար 'ի վերջնումն տագնապի օրհասիդ, որպէս զի ես քան զես բորբոքեցայց սիրով քով: Ո՛հ, ո՞ տայր ինձ մեռանել ընդ քեզ և վասն քո՝ աստանօր պնդեալ 'ի խաչիդ: Տո՛ւր ինձ գէթ մինչև յաւարտ կենաց իմոց սիրել զքեզ անհա-

տաւպէս. և յորժամ հաճոյ լիցի քեզ զի մեռայց՝ ընկեցից զհոգի քո սիրապատար 'ի գիրկս քո, առ 'ի սիրել և վայելել զքեզ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Փարեցայց զխաչին, և ուղղեցից առ նա աղերսս սիրոյ յամենայն զօրութենէ եռանդեան հոգւոյս, որպէս թէ յօրհասին պահու իցեմ. և վասն այնր ժամու արարից զայս այժմէն:

ՅԾԱ. Խոնարհեցուցեալ զգլուխն 'ի մեր կոյս, և զսիրոյն ամբարձեալ առ Հայրն երկնաւոր, Յիսուս մատուցանէ զանձն յետին բոլորապտուղ պատարագ, աղաչելով զմեծվայելչութիւնն Աստուծոյ ընդունել զայն. և լսելի եղեալ վասն լիալիր և առաւելեալ արդեանց իւրոց, կատարէ իսկոյն մահուամբն՝ զկամաւոր և զբոլորակատար զոհ պատարագին, արձակելով զշունչն և աւանդելով զոգին 'ի ձեռս Հօրն 'ի հոտ անուշից: Ո՞վ է որ կարիցէ այսպէս ննջել՝ երբ և կամիցի, որպէս Յիսուս՝ որ մեռաւ յորժամ կամեցաւն: Այսպէս յայտ յանդիմանի երևի որ ինչ էն, մարդ՝ ճշմարիտ՝ զի մեռաւ, և Աստուածամարդ՝ զի մեռաւ քանզի կամեցաւ մեռանել, և մեռանէր ոչ՝ թէ ոչն կամէր:

Եւ արդ, զի՞նչ արժան իցէ առնել մեզ, հոգի իմ, տխրե՞լ եթէ ուրախանալ ընդ այսպիսի մահ: Իսկ և իսկ 'ի մեռանելն Յիսուսի՝ ցածուցեալ խաղաղի աստուածայինն արդարութիւն վասն մեղաց աշխարհի, և բնութիւն մարդկան հաշտի ընդ Աստուծոյ. հաստատութիւն առնու նոր կտակարանք 'ի նոր եկեղեցւոջ. բացեալ լինին մեզ փակեալ դրունքն արքայութեան, որոց՝ միայն մահուամբ Փրկչին հնար էր բանիլ: Ապա ուրեմն, ո՜վ մահ, քանի՜ լի ես ամենայն մխիթարութեամբ վասն մեր: Այլ գիտելով և զայն զի առ

մեղս մեր մեռաւ Յիսուս, և զի մեք եմք պատճառք զրաւման կենացն՝ որ պատուականագոյն է քան զամենայն կեանս աշխարհի, զիա՞րդ ոչ սրտմտեսցուք ընդ անձինս մեր՝ որ այնքան չարեաց պատճառս եղեաք։

Սէր և ցաւ. զայս երկուսին պտրտիմ քեզ, ո՜վ իմ Յիսուս։ Եւ զիա՞րդ մարթ է ինձ յանդիմանն լինել քեզ առանց յերկիր կորանալոյ յամօթոյ՝ վասն ապերախտութեանս 'ի պարտս իմ։ Պարտ է ինձ սիրել զքեզ և ոչ սիրեմ. և որպիսի՞ սիրտ իցէ այս իմ, որ ոչ գորովի ոչ ընդ չարչարանս քո և ընդ մահ որոց վասն իմ համբերեցեր, և ոչ վասն այնքանեաց բարեաց՝ որք 'ի չարչարանաց և 'ի մահուանէ քումէ զեղան յիս։ Պարտ և արժան է ինձ ողբալ զանգութ խստասրտութիւն իմ'ի վերայ քո, և ոչ ողբամ. ո՜հ, քանի՜ կարծր է սիրտս այս որ ոչ խորտակի և ոչ կակղանայ յայնքան արենէն առ 'ի քէն հեղլոյ։ Եւ զի չէք յիս ոչ սէր և ոչ ցաւ, խոնարհիմ առաջի քո, Յիսուս իմ խաչեցեալ. և անարժան զիս գիտելով շնորհաց քոց, աղաչեմ զքեզ թոյլ տալ ինձ բարեգթութեամբ՝ մնալոյ աստէն առ ոտս քո, յերկրպագութիւն և 'ի գոհութիւն սիրոյ քո մեծի, որով յանձն առեր մեռանել 'ի խաչի՝ ամենեւինդ անմեղ՝ վասն իմ չուառական մեղաւորիս, որ և մրուր եմ մեղաւորաց։ Եւ եթէ ոչ կարիցեմ ըստ արժան բաւականին ցաւել ընդ մեղս իմ, ցանկամ գէթ ցաւել դառնապէս։ Աղէ՛, լե՛ր օժանդակ ըղձիցս, մի՛ յապախտիս իմ հայելով այլ յերախտիս արդեանց քոց. կեամ ես յուսով անբաւ արդեանցն՝ զոր յաւէտ մահուամբդ ամբարեցեր վասն իմ։ Աղէ՛, շնորհեա ինձ՝ մինչև իցեմ մեռեալ՝ սիրել որպէս արժանն է՝ զանհասանելի բարութիւնս քո, և ցաւել որպէս և արժանն է՝ ճշմարիտ զղջմամբ ընդ մեղս իմ։

Նշան չար համարեցայց զգաղջութիւն իմ, ըզցամաքութիւն և զանկարեկցութիւն ընդ յիշատակ չարչարանաց քոց. և զի պատճառք այսոցիկ՝ մտացս և սրտիս ընդ վայր յածմունքն են, գուն եղից ամփոփել զնոսին՝ առ 'ի գալ 'ի զղջումն ապաշխարութեան։

ՅԾԲ. Նկատեսցուք զՅիսուս խաչեալ և մեռեալ, ըստ օրինակին առաջի եդելոյ մեզ յաւետարանին։ Երիւք բևեռօք առկախեալ կայ յօդս. և չիք մասն զգայուն 'ի մարմնի նորա՝ որոյ չիցէ կրեալ զիւր յատուկ կսկծագին չարչարանս։ Թէպէտ և մեռեալ՝ այլ Աստուած է, զի ոչ բաժանեցաւ աստուածութիւնն 'ի մարմնոյ անտի. և զի Աստուած գոլով յաւիտենական և անմահ՝ յանձն էառ մահկանացու լինել և մեռանել 'ի խաչի վասն մեր, ապա 'ի վեր քան զամենայն անկ է զանբաւահրաշ սէր նորա ածել զմտաւ։ Մեծ իրք էին արդարև, որում չգոյր փոխանակ այլ գործ մարդկային, եթէ մեռեալ էր նորա 'ի փըրկութիւն բարեկամացն, որ էին արդարքն. այլ նա և վասն թշնամեացն մեռաւ, մեղաւորաց և ամպարշտաց. մեռաւ՝ զի տացէ կեանս որոց ետուն նմա մահ։ Եւ արդ չիցէ՞ արժանի ափշեալ հիանալ ընդ այսպիսի սէր քաղցրանշան, գերագոյն, արդարև արժանի և սեփական Աստուծոյ միայնոյ։

Զկայ տացուք առ վայր մի 'ի վերայ այսր բանի. Քրիստոս մեռաւ վասն մեղաւորաց։ Ապա ուրեմն մեռաւ և վասն իմ. պարտք են ինձ հաւանել այսմ՝ որպէս այլոց մասանց հաւատոց. և որքան 'ի դէպ է հաւատալ աներկմիտ և անյողդողդ լինել 'ի վերայ այսորիկ, այնքան և յուսոյ իմոյ անկ է հաստատուն և անկասկած գոլ։ Մահու չափ մեղանչեմ՝ եթէ չհաւատայ-

ցեմ զՅիսուս Քրիստոս մեռեալ 'ի յաւիտենական փրկութիւն իմ. մահուչափ մեղանչեմ դարձեալ, եթէ ոչ յուսացայց փրկիլ մահուամբ նորին: Թէպէտ և բիւրապատիկ ես մեղաւոր իցեմ քան զոր եմս, զի՞նչ իցէ այդ. ո՞ր հոգի իցէ մեղսաթաթաւ՝ որ ոչ փրկիցի 'ի ձեռն մահուանն Յիսուսի: Քանզի յետին տկարութիւն է մահ՝ վասն այնորիկ իսկ ընտրեաց զայն Աստուածամարդն մեր, զի նովաւ զհրաշափառն և զամենակարող ցուցցէ զօրութիւն: Հաւատասցուք ուրեմն 'ի Յիսուս և յուսասցուք. այլ և սիրեսցուք. զի 'ի պակասել սիրոյ՝ 'ի դերև ելանեն հաւատքն և յոյս:

Ո՜վ Յիսուս, վասն իմ մեռեալ 'ի խաչի, զանձն իմ բովանդակ պարտական եմ սիրոյ քում. և զիա՞րդ ոչ սիրեցից զքեզ յամենայն զօրութենէ իմմէ, որ եդ յոյս իմ, փրկութիւն իմ և կեանք իմ: Զիա՞րդ ոչ սիրեցից զքեզ՝ որոյ և յանկանել յիշատակիդ 'ի միտս իմ՝ անդէն և անդ փարատին ամենայն արհաւիրք յանցաւոր գիտակցութեան իմոյ, և քաղցրեալ կազդուրի հոգիս 'ի քաղցրութենէ օծութեանց քոց: Ո՜վ սիրելի Յիսուս, Յիսուս սիրելի, գոհանամ զքէն վասն մահուան քո. և սիրեմ զքեզ առաւել քան զամենայն. և փափագիմ յամենայնի զհաճոյս քո կատարել և գործել 'ի քո փառս: Յանկամ նմանել քեզ՝ 'ի խաչել զանձն, և մեռուցանել վասն սիրոյ քո, որպէս դու խաչեցար և մեռար վասն իմ: Այլ քեզ միայնոյ, Աստուած իմ, հնար է կարողացուցանել զիղձս իմ՝ քոյին օժանդակութեամբ: Փափագեմ խաչակցել ընդ քեզ զյիշողութիւն իմ, զմիտս իմ և զկամս. խաչեսցին ընդ քեզ խորհուրդք իմ, իղձք իմ և զգայութիւնք իմ:

Խաչել զանձն՝ մեռուցումն է անձին, և մե-

ռուցումն անձին՝ է ուրացութիւն ախորժակաց առ ստացուածս ընչից, առ զգայականս և առ պատուասիրութիւն: Մի՛տ եդից ուղղութեան ընդ միոյ միոյ կարեաց իմոց:

ՑԾԳ. Որպէս 'ի չարչարանսն նոյն և 'ի մահուն հաճեցաւ Քրիստոս յայտնիլ Աստուած և մարդ. վասն այնորիկ և յայն ինչ աւանդել հոգւոյն՝ որով ցուցաւն մարդ, ցուցանի և Աստուած հիասքանչ զարմանալեօք. և յետ ողորմելի յարգարելոյ զտառապելութիւն իւր, սքանչացուցանէ և զմեծ վայելչութիւն իւր, վեր 'ի վայր առնելով զտիեզերս մահուամբ իւրով: Արեգակն խաւարի, օդքդ ծածկին մթութեամբ, և 'ի հասարակ աւուր գիշեր գործի. քօղ տաճարին հերձեալ ցելու, երկիր առ հասարակ դողայ, վէմք պատառին, գերեզմանք բանին: Նըշանք են այսոքիկ դրդելոյ բնութեան, և յայտ լինի եթէ ոչ մարդ լոկ է մեռեալն՝ այլ Աստուած. և զի երեք են խաչեալքն, ոչ ումեք անկ է ընծայել զսքանչելիսդ՝ բայց Քրիստոսի, որ միայն ծանուցաւ Աստուած: Այս ամենայն գրեալ էր կանխաւ 'ի մարգարէիցն, և ինքն իսկ նախասացեալ էր, եթէ յետ բարձրանալոյն 'ի խաչ՝ ձգեցէ զարարածս ամենայն 'ի վկայութիւն աստուածութեան իւրոյ: (Յովհ. ԺԲ. 32):

Իսկ այս որպիսի՞ զարմանալիք իցեն՝ զի 'ի դըղրդել երկնից և երկրի 'ի կարեկցութիւն արարչին բնութեանց, դու հոգիդ իմ, յամառեալ կաս 'ի կուրութեան և 'ի պնդութեան: Տե՛ս և սքանչացիր, և երկիր պա՛գ Աստուծոյ խաչեցելոյ վասն քո մեղաւորիդ, ամպարշտիդ և կորուսելոյդ: Ո՜հ, որպիսի՜ առիթք են ինձ աստանօր կորանաց յամօթոյ. ոչ առ արարածոց անզգայնոց բարիս առնել՝ մեռար դու, Տէր Յիսուս. և սա-

կայն գոքին իսկ 'ի մահուդ՝ այնպիսի նշանակս տան վշտակցութեան և զարհուրանաց՝ զի թուին ինձ զգայունք լինել. այլ դու վասն իմ մեռար՝ զի զերծուսցես 'ի գերութենէ սատանայի և 'ի տանջանաց դժոխոց. վասն իմ մեռար, զի մուծցես զիս 'ի շնորհս և յորդեգրութիւն Աստուծոյ, և 'ի յոյս ժառանգութեան յաւիտենից փառաց. իսկ ես տակաւին ոչ մարդասիրեմ, ոչ գորովիմ ընդ քեզ, որպէս թէ չիցեմ իմիք քեզ պարտական: — Աստուած իմ, պաշտեմ զզաղտնիս խորհրդոց քոց. այլ եթէ հրամայեցեր վիմաց պատառել 'ի մահուդ, — առ 'ի նշանակել՝ զի արգեամբք շնորհացդ զոր ստացար վասն մեր մեռանելով՝ կակղեսցին և կարծրութիւնք սրտից մերոց, — աղէ, հեղ յիս զհոսանս շնորհացդ այդոցիկ. և տուր ինձ սիրտ զղջացեալ, զի գոչեցից սրտէն առ ոտս խաչիդ՝ Ողորմութիւն. և լացից գէթ զհիքութիւն իմ, որով՝ 'ի չարչարանացդ և 'ի մահուանէդ՝ որ այնքան հզօրք են 'ի սրբել զհոգիս, ես ոչ քաղեմ և ոչ մի պտուղ սրբութեան: Ո՛հ. եթէ վէմ ապառաժ էի, ո՛վ Յիսուս, 'ի ժամու մահուանդ, խորտակեալ փշրէր արդեօք կարծրութիւնս իմ. իսկ զի հաճեցար անբաւ գթութեամբդ՝ մարդ զիս հաստատել զգայուն և իմացուն և կարող 'ի յորդորումն ըղձից, զի՛մ րդ տակաւին կամս կարծրակուռ, անկիր անզգայ մնալով 'ի յիշատակս մահուան քո: Ողորմեա ինձ, Աստուած իմ, ողորմեա եղկելւոյս. տուր ինձ գէթ իմանալ զի մեռար վասն մեղաց իմոց, զի գոնեա լացից դառնապէս զնոյն զմեղս իմ:

Մեծ հնարք 'ի ստանալ զզեղջ և զեռանդն խոնարհութիւնն է: Խնդրեսցից թողութիւն յուլութեան իմոյ և պղերգութեան, որովք անարժան գտանիմ շնորհաց երկնից:

Խոցումն կողին Յիսուսի 'ի խաչին:

ՅԾԴ. Համարելով Հրէից եթէ Յիսուս ոչ այդպէս վաղ մեռցի, խնդրեն 'ի Պիղատոսէ խորտակել զբարձս նորա, զի մեռանիցի 'ի սաստկութենէ ցաւոց նորոց տանջանացն. և առ 'ի հաւանութիւն ածել զնա, յետ սպանանելոյ զանմեղն անօրէնութեամբ, վրէժխնդիրք օրինաց ցուցանեն զանձինս, ասելով, խղճել թողուլ զմահապարտսն 'ի խաչին, զի մի անարգութիւն լիցի մեծի տօնին: Արդ եկեալ զունդ զինուորաց՝ երկաթի մահակօք հարեալ սպանանեն զաւազակսն. իսկ զՅիսուս տեսանելով մեռեալ՝ ոչ հալին 'ի նա, այլ մի ոմն 'ի նոցանէ անգթագոյն և ապառումն, 'ի կարծիս եղեալ եթէ գուցէ չիցէ մեռեալ, 'ի շնորհուկս Հրէիցն՝ որք կացեալ անտանօր տաճաւլին այսպն զնա առնէին, գեղարդեամբ խոցէ զնա ընդ կողսն:

Արժան է աստանօր զմտաւ ածել, եթէ զխո՞րդ Հրեայքն և 'ի չբեկանել ոսկերացն Յիսուսի, և 'ի նախատինսն, և 'ի խոցումն մեռելոյն՝ յանկամայ կամս կատարեցին զառ 'ի նմանէ նախասացեալսն. և սակայն այնքան կուրացեալք են չարութեամբ իւրեանց և խստացեալ սրտիւք, զի առաւել ևս բորբոքին սրտմտութեամբ 'ի վերայ նորա: Այլ, ո՜հ, ո՞րքան և սէրն Յիսուսի բորբոքեալ փայլէ յաստուածացեալ մարմնին և յանձնամման 'ի հոգւոյն: Տեսանէ զանողոք չարութիւն նոցա և երկայնամտէ. և շնորհօք իւրովք 'ի ներքուստ յապաշխարութիւն կոչէ զնոսա, և գթութեամբ ակն կալեալ սպասէ: Ո՞չ այսպէս

և ընդ քեզ, հոգի իմ, բիւր անգամ արար Յիսուս, մինչ դու մեղանօք հանապազ հալածէիր զնա, և նա հանապազորդէր գթութեամբ յերկայնամտել և 'ի կոչել զքեզ: Ո՜վ ամենագթած Յիսուս, արդ 'ի վերայ հասանեմ եթէ ընդէ՞ր յօրինակ զատկական գառինն՝ գուշակեցին չբեկանել և ոչ միոյ յոսկերացդ. և նշանակեցին, զի որքան և հնարս հնարեսցեն թշնամիք քո 'ի տանջել և 'ի թշնամանել զքեզ, ոչ բաւեսցեն լուծանել զպնդութիւն առաքինութեան քո. և խոնարհութիւն, հնազանդութիւն, համբերութիւն, և մանաւանդ սէրն՝ միշտ և հանապազ աննկունք և անթերիք մնան 'ի քեզ: Ամենակալ Աստուած, Աստուած արդարադատ և ողորմած, որ խորտակես զզօրութիւնս ամբարտաւանից՝ յուսացելոց ընդունայնութեամբք կալ յակատանի, և պաշտպանես և պահպանես զզօրութիւն խոնարհաց յուսացելոցն 'ի քեզ, աղէ, բարձ յինէն զհպարտութիւն՝ որ ամենեւին ատելի է քեզ, և շնորհեա ինձ զճշմարիտ սուրբ խոնարհութիւն, որով արժանի գտայց պաշտպանութեան առ 'ի քէն, և կազդուրելոյ յամենայն յառաքինութիւնս որք հարկաւորք են ինձ 'ի յաւիտենական փրկութիւն: Հաստատեա 'ի սիրտ իմ 'ի վեր քան զամենայն՝ զսէր, բարի առնելոյ առ սէր քո՝ որոց չար ինձ առնիցեն. և զի գրեալ ես է, թէ որ հայիցի 'ի սուրբ կող քո խոցեալ՝ լայցէ և ցաւեսցի 'ի վերայ քո, տո՛ւր և յիս կատարել մարգարէութեանն, զի 'ի վէրս քո յայդ յառեսցին խորհուրդք իմ կաթոգին ըղձիւք և զղջմամբ, 'ի նոյն հաստատելով և զյոյս իմ վասն ամենայն պիտոյից իմոց: Ո՜վ վէրք սիրալիրք, 'ի ձէնջ ակն ունիմ գտանել զշնորհս սրբութեան և զերանութիւն փառաց որ պատրաստեալ է սրբոց:

Կրթեցայց 'ի խոնարհութիւն, որով ոսկերք հոգւոյ՝ որ են առաքինութիւնքն՝ կան 'ի հաստոջ, և առանց նորա և ոչ մի յուղղութեանց կարէ կալ 'ի կայի. զայն ժառեցից Թախանձանօք 'ի Քրիստոսէ։

ՅՃԵ. Ու կամեցաւ Յիսուս կենդանւոյն ընդունել զխոցումն գեղարդանն, զի մի ոք կարծիցէ 'ի սաստկութենէ հարուածոցն բռնամահ եղեալ. այլ մեռաւ արդարև յայն սակս՝ զի կամեցաւ. և զի 'ի սիրոյ անտի չարժեցան կամքն, այսպէս հաճեցաւ խորհրդաբար սահմանել՝ զի բացցի կող նորա. որպէս զի ընդ արտաքին պատառուած վիրայն՝ մուտք գործեսցին 'ի ներքին խորագոյն վէրան, զոր սէր բացեալ էր 'ի սրտին սայրասուր ևս սլաքաւ։ — Տէր, հոգի իմ, զխարդ երկաթ գեղարդեանն ուժգին Թափով մղեցելոյ փեռեկէ զկուրծան, մխի 'ի ներքս և Թափ կողմանէ 'ի կողմն անցանէ ընդ սիրտն։ Տես յաջակողմանն զվիրաբերանն լայնապատառ, մինչև կարող լինել ձեռնամուխ լինել 'ի նոյն. տես փեռեկեալ և զսիրտն, և մուտ 'ի ներքս մտօք. քանզի յայս սակս գործեցաւ արտաքին խոցուածն՝ զի դուռն և մուտք գործեսցին 'ի քննին այլոյ անտեսանելի խոցուածոյ սիրոյն։ Ի խոցուածոյ այտի սիրոյ ծագեցան այլք 'ի վիրացն. գլխոյն, ձեռաց և ոտից և բովանդակ ամենայն մարմնոյն. քանզի առ ինչ կրեաց զձաղկանսն և զփուշս և զբևեռս և զմահ, եթէ ոչ առ 'ի հարկանել զփափագ սիրոյն անձկացելոյ առ փրկութիւն մեր յաւիտենական։ Ա՜հ. իցէ՞ որ յառեալ մտօք յայդ սիրտ խանդակաթ սիրով՝ և ոչ յորդորեսցի 'ի հատուցումն սիրոյ նորին։

Այլ ոչ այսչափ միայն. քանզի մեղք իմ ոչ

տային ինձ համարձակել, և անարգութիւն իմ յետս կասեցուցանէ զիս 'ի մօտ մատչելոյ առ մեծ վայելչութիւնն Աստուծոյ: Ո՛վ, քանի՜ մեծ եղև մարդասիրութիւնքո առ իս, բարի Յիսուս, զի խոնարհեցուցեր զգլուխ քո՝ իբրու նշան իմն տալ ինձ և կոչել և հրաւիրել, զի մտից 'ի ներքս 'ի սիրտ քո. և աղդ առնել ինձ, զի վասն նորին իսկ երկիւղի կասկածանաց յերեսաց ծանրութեան մեղաց իմոց և ցասման արդարութեանն, տուաւ ինձ ատաանոր ապաստանարան ողորմութեան և փրկութեան և թողութեան և նորոգման կենաց: Ո՛վ, ո՜րքան և ոսպիսի՜ յոյս ապաւինութեան շնորհեն ինձ գթութիւնք քո: — Եւ արդ գիմեալ գամ, ո՜վ Փրկիչ իմ, քանզի 'ի պատառուած վիրացդ տեսանեմ ինձ դուռն բացեալ. գամ և մտանեմ. այլ գողամ պատկառանօք, և աղաչեմ զգթութիւն քո՝ մի մերժել զիս: Գուցէ՞ ուրեք յաշխարհի վայր անդորրու, խաղաղական և անքոյթ որպէս 'ի սիրտս յայս: Որպիսի՜ քաղցրութիւն, քանի՜ հրճուանք և վայելք բնակելն այդր 'ի ներքս: Ո՛վ սիրալիր Յիսուս, հաստատեա և մշտնջենաւորեա զբնակութիւն իմ 'ի տաղաւարի այդր սրբոյդ: Սիրտ ամենամաքուր, սիրտ ամենաքաղցր, ամենափառաւթոռ աստուածութեան, սրբարան սիրոյ. յամենայն զօրութենէ իմէ պատկառանօք ողջունեմ և երկիր պագանեմ քեզ: Դու ես աղբիւր շնորհաց. և 'ի քէն ակն ունիմ ընդունել զօժանդակութիւն շնորհաց՝ որք կարեւորագոյնք և հզօրագոյնք իցեն 'ի գլուխ յաւիտենական փրկութեան իմոյ:

Ջերմեռանդն պաշտօնատար եղեց սրբազան Սրտին Յիսուսի, յորում կամք նորա ներգործեն անդուլ սէր վասն իմ: Ապաշաւեցից զապերախտութիւն իմ. և բողոքեցից հանապազ՝ եթէ կամիմ երախտագէտ լինել նմին:

ՅԾԶ. Զհարուած տիգին ոչ զգայ Յիսուս, քանզի մեռեալ էր. այլ որպէս ամենայն գըրեալքն զնմանէ 'ի գլուխ ելին, այսպէս այժմիկ լրագոյն և անվրէպ կատարի 'ի Մարիամ յամենօրհնեալ մայր իւր՝ գուշակութիւն ծերունւոյն Սիմէոնի, զոր ասայն ցնա 'ի տաճարին, եթէ ընդ անձն նորա անցցէ սուր: Հոգին Մարեմայ խանդաղակաթ սիրովն և վշտակցութեամբ՝ կայ 'ի սրտին Յիսուսի. և ընդ մխել ապաառում երկաթոյն ընդ սիրտ Յիսուսի՝ անցանէ և ընդ անձն Մարիամու: Առաւել է նա քան զմարտիրոս, զի տանջի հոգւովն. և տանջանք հոգւոյ մեծ են քան զմարմնոյ:

Յաւս կսկծագինս կրեաց Մարիամ 'ի խաչելութեան Որդւոյն. մեծ ցաւս 'ի տեսանել զնա խաչեալ, այլ և մեռեալ. քանզի սիրովն բոլորովիմբ կայր յՈրդին. և զոր միանգամ նոյն կրէր՝ կրէր և ինքն. այլ ցաւ զոր արդ կրէ 'ի խոցախական հարուած տիգին՝ անհնարին է յոյժ. քանզի ցաւ է յաւելեալ յայլ ամենայն ցաւսն, մինչդեռ 'ի Յիսուս վէրք մի է յաւելեալ յայլ վէրսն:

Վշտակից լեր, հոգի իմ, Թագուհւոյ մարտիրոսաց, և զմտաւ ած՝ ընդէր այդպէս ցաւակցի Մարիամ: — Քանզի սիրէ զՅիսուս. և քանզի մեծ է յոյժ սէր նորա, մեծ են յոյժ և ցաւք իւր: Վասն էր չիք և քո դոյզն ինչ գործակցութեան առ Յիսուս: — Հարկ է խոստովանել, թէ քանզի չիք քո սէր առ նա: Ով եղկելի հոգւոյս, զոր չեն բաւական 'ի շարժել 'ի գութ սիրոյ առ Յիսուս, ոչ բովանդակ դառնակսկիծ չարչարանք նորա և ոչ հարուած գեղարդեանն՝ որ յետ մահուն խոցեաց զսիրտն սիրտ նորին: Այլ աղէ, եթէ այդքան առառում և կարծր է սիրտ քո՝ հայեաց գէթ ուշով

'ի կողս նորին: Կամք եղեն ընդունել զխոցուածդ զայդ, քանզի ընդ այն մատուցանէ քեզ զսիրտ իւր: Եւ չիցէ՞ սէր գեղեցիկ սիրելն զՅիսուս սրտիւ նորա՝ որ և քո է: Ո՜վ իմաստ մխիթարական: Արդարև գլուխ իմ ես, Տէր Յիսուս. և եթէ աչք գլխոյ իմոյ իմ են՝ զի աչք գլխոյ իմոյ են, զիա՞րդ ոչ իցէ իմ՝ սիրտ քո, որ սիրտ է գլխոյ՝ որ իմ է գլուխ: Ձեր իմ երբեք զայս խորհրդածել. իսկ զի խորհիմս այժմ, քանի՜ բաղդ է ինձ գտանել զսիրտ՝ որով կարեմ, ո՜վ Յիսուս, արժանապէս աղերսել քեզ և սիրել զքեզ: Արդ տո՛ւր ինձ այսու սրտիւ՝ որ քո է և իմ, սիրել զքեզ: Կոյս Մարիամ, բարեխօս լեր վասն իմ. զի այնքան յօժար եմ 'ի չարիս՝ մինչ և սրտին Յիսուսի չարաչար վարիլ: Տո՛ւր, զի և իմ սիրտ լիցի ամենևիմբ Յիսուսի, որպէս նորա սիրտն իմ է բոլորովին:

Սիրտ Յիսուսի՝ սիրալիր կամք նորա են. և սիրելն զՅիսուս սրտիւ նորին՝ է ամենևիմբ կցորդ լինել կամաց նորին, պատրաստ և յօժար 'ի հնազանդել կամաց Աստուծոյ:

ՅԾԷ. Ի խոցել կողիցն Յիսուսի՝ ել վաղվաղակի 'ի վիրացն արիւն և ջուր. որով նախ եցոյց զի մարդ էր ճշմարտապէս ունակ հիւթոց՝ որպէս ամենայն մարդիկ. յայտնեաց և Աստուած լինել՝ սքանչելեօքն. քանզի որչափ և խոցեսցի դիակն ոչ արձակէ արիւն, և ջուր բնաւ ոչ: Հարկ ուրեմն է զի առանձնաշնորհ իմն իցեն այս վէրք. վասն այսորիկ և աւետարանիչն ոչ վէրս կոչէն զայն այլ խոցուած*

* Լատին թարգմանութիւնն բացուած ասէ, զի եբաց զկողսն. և յայս յարմարէ հեղինակս զիմաստ իւր՝ ըստ բանից Ս. Օգոստինոսի:

կամ բացուած․ քանզի եղև նա մեզ որպէս դուռն կենաց, յորոյ բացմանէ ելանեն խոր-հուրդք սուրբք՝ օրինակեալք 'ի ջուրն և յա-րեան, 'ի ծնունդ Ընտրելոց յեկեղեցւոջ, և 'ի փրկութիւն յաւիտենից նոցին իսկ ընտրելոցն։

Ո՛վ, քանի՛ պարտականք եմք Յիսուսի վասն խոցուածոյս, որ թէպէտ չեղև նմա 'ի ցաւս, այլ եղև յարդիւնս վաստակոց, վասն նախատե-անելոյն զայն և նուիրելոյ առ Հայրն յաւիտե-նական։ Ի պատառուածոյ այտի եւ արիւն փըր-կութեան իմոյ 'ի հաշտութիւն արդարութեանն Աստուծոյ․ հոսեաց անտի և ջուր որ սրբեաց զիս մկրտութեամբ աւազանին, և որ բաղում ան-գամ ընջեաց զմեղս իմ 'ի խոստովանութեան։ Ի խոցուածոյ այտի ելանեն ամենայն շնորհք, օրհ-նութիւնք և ողորմութիւնք, որոց կարօտիմս փափագանօք առ երանութիւն իմ ժամանակեան և յաւիտենական։ Ո՛վ սրբազան խոցուած, որ բացար ինձ 'ի մուտս՝ որպէս տապան Նոյի, զի մի կորեայց ընդ մերժեցելոցն, այլ զի փրկե-ցայց։ Այլ, ո՜հ, սա ինքն ցուցցի ինձ 'ի Յիսուսէ և յաւուր միում․ և կամք իմ խոտորնակք՝ թէ կամիցիմ ապաստանել 'ի նոյն, պարտաւորեսցին յատեան դատաստանի։

Ո՛վ իմ Յիսուս, ո՛վ Աստուած իմ, բողոքեմ արդ ինքնին զամենայն անօրէնութիւնս իմ, և ապաշաւանօք հայցեմ ողորմութիւն, զի թող-ցես ինձ, ո՛վ Փրկիչ իմ, և մի պահանջեսցին 'ի դատ՝ յորժամ կացցես ինձ դատաւոր։ Լուա զիս ջրովդ այդու, և առաւել մաքրեա և սրբեա զիս արեամբդ այդուիկ։ Փափագեմ մտանել ուր կոչեսդ զիս՝ առնել տեղի մշտնջենաւոր բը-նակութեան 'ի սրտի քում։ Այլ քանի՛ մաքրու-թիւն և անբծութիւն պահանջի լինել առ 'ի բնակել ինձ 'ի տեղւոջդ յայդմիկ սրբութեան։

Արդ տուր հոգւոյ իմոյ ջրովդ այդու զանմեղութիւն, և արեամբդ այդուիկ զսէր. որպէս զի լիցի քեզ արժանի, նմանելով քեզ: Արդեամբք խոցուածոյդ այդորիկ, ո՜վ Յիսուս իմ, օգնեա ինձ 'ի վտանգս կենաց իմոց և մահուան: Ի դա ապաւինիմ ես. և եթէ չարութիւն իմ ամօթով շուարեցուցանէ զիս, ողորմութիւնք քո քաջալերեալ մխիթարեն զիս:

Մի եղեց յայնցանէ՝ որք համարին բարուոք աղօթել՝ եթէ գոռովիցին ինչ յաղօթելն: Պտուղ խոցուածոյ կողից և սրտին Յիսուսի՝ եղիցի առնելն զկամս Յիսուսի:

Բարձումն Յիսուսի 'ի խաչէն:

ՅԾԸ. Անդէն ընդ մեռանելն Յիսուսի՝ վաղվաղակի յայտնի լինի մեծ զօրութիւն արդեանց նորա հրաշալի ցուցակութեամբք. քանզի հարիւրապետ ատենին որ տարաւ զնա 'ի մահ, և զօրականքն որք ընդ նմա պահէին զՅիսուս, թօթափեալ զմթարս հեթանոսութեան՝ փառաւորեն զխաչեցեալն, խոստովանելով Ճշմարիտ որդի Աստուծոյ. և ամենայն ժողովուրդն որ եկեալ էր անդր 'ի զննին՝ դառնան 'ի Գողգոթայէ, զկուրծս բախելով, ցաւելով և ապաշաւելով զի գործակից դառն 'ի դատապարտութիւն նորա. և ուր սակաւ մի յառաջ քրքիջք այպանաց լսէին՝ արդ հեծութիւն և աշխարումն ապաշխարութեան միայն լսելի լինի: Կանայքն որ առ ահի Հրէիցն 'ի հեռաստանէ կային, արդ քաջալերեալք յառաջ մատչին երկիր պագանելով խաչին: Յովսէփ Արեմաթացի և Նիկոդէ-

մու՝ որք 'ի ծածուկ աշակերտք էին Յիսուսի՝ մինչ կենդանին էր, արդ 'ի մահուն պարծին հաւատարիմք նորա լինել. և ամենայն ամբոխն որ փոքր մի յառաջ ամպարիշտ համարէր զնա, արդ անմեղ և արդար ճանաչէ զնա: Եւ ուստի՞ այս փոփոխումն: Մեռաւ Յիսուս, և յետ մահուն ընդարձակի և հաստատի թագաւորութիւն նորա 'ի վերայ հոգւոց, զորս քաղցրութեամբ շնորհաց իւրոց յափշտակեալ յինքն ձգէ:

Զմտաւ ած, հոգի իմ, թէ քանի՜ք՝ որոց չէր հաւատացեալ ոչ 'ի վարդապետութիւնս Քրիստոսի, և ոչ 'ի սքանչելագործութիւնսն՝ մինչ կենդանին էր, այժմիկ յետ մեռանելոյն անձնատուր լինին 'ի նա հաւատով և զղջմամբ: Մատիր և դու ընդ նոսին. և թէպէտ անագան ուրեմն գաս, Քրիստոս որ ընդունի զգիմեալսն առ ինքն յորում և է ժամու, ընկալցի և զքեզ: Եւ ուստի՞ իցէ քեզ՝ նա և յետ մահու Փրկչիդ՝ այդպէս խստացեալ կարծրացեալ կալ: Աղէ՜, եկ խոնարհութեամբ, անարժան զանձնդ համարելով շնորհաց նորին. և թերևս խոնարհութեամբ գտցես և զամենայն շնորհս որոց փափագեսն. քանզի ամենայն չարիքք քո 'ի հպարտութեանդ են:

Ահաւադիկ, Տէր Յիսուս, մատչի առ ոտս քո հոգի մեղուցեալ, վատթար քան զՀրեայս և զհեթանոսս. նոքա ոչ ծանեան թէ վասն ո՞յր և վասն է՞ր մեռար, այլ հեղին արտասուս ապաշխարութեան 'ի մահուանդ. իսկ ես ամենասոյդ հաւատովս գիտեմ զի մեռար վասն իմ 'ի սակս մեղաց իմոց. այլ ո՞ւր իցեն հառաչանք իմ և հեծութիւնք ապաշխարանաց: Որպիսի՞ չարութիւն իմոյս խստասրտութեան: Զկարեմ ասել, Աստուած իմ, եթէ զլանաս յինէն զշնորհս քո, այլ հարկ է խոստովանել եթէ ես ինքն եմ ապ-

երախտ և ապստամբ 'ի շնորհաց քոց։ Որպի֊սի՞ք ապա ուրեմն տագնապք մնայցեն ինձ։ Այլ դու բարեգո՛ւթ Յիսուս, արդեամբք մահուամբ քո յաղթեա, լո՛յծ զխստութիւնս իմ. ա՛ռ կոր֊զեա զիս, կակղացո և վառեա 'ի սէր քո. զի մի ինչ այսուհետև, ոչ երկիւղ մտաւ, ոչ աշա֊ռութիւն 'ի մարդկանէ՝ ընդոստուսցեն զիս 'ի հնազանդութենէ քումմէ։ Տո՛ւր ինձ քաղել 'ի մահուանէդ զպտուղ՝ զոր ցարդ ոչ քաղեցի 'ի չարչարանացդ։

Քննեցից եթէ արդեօք առ մարդկան ականէ խորշեցի՞մ 'ի դէպս առթից երևել բարեպաշտ, խոնարհ և հեզ. և յաղթեցից վեհերոտու֊թեանս. ոչ եղեց ամօթս 'ի շնորհաց՝ զոր մա֊հուամբ իւրով ստացաւ վասն իմ Քրիստոս։

ՑՄԹ. Զանգիտէ Պօղոս ամենօրհնեալ թէ գուցէ գայցեն այլ զինուորք սադրեալք 'ի գըւ֊խաւորաց Հրէից՝ բառնալ 'ի խաչէն զամենա֊սիրելի որդին իւր և վերստին թշնամանել զնա։ Վասն որոյ աղաչէ զՅովսէփ Արեմաթացի եր֊թալ խնդրել 'ի Պիղատոսէ հրաման՝ իջուցանե֊լոյ զնա և թաղելոյ պատշաճապէս վայելչու֊թեամբ. և նա՝ քանզի այր տոհմիկ էր և մեծա֊տուն և երկիւղած յԱստուծոյ, երթայ վաղվա֊ղակի յապարանս դատաւորին առաստաձեռն ըն֊ծայիւք, և ոչ հայելով յանձին վտանգ, յատե֊լութիւն և 'ի հալածանս հարստայեղց Հրէից, խնդրէ զմարմին խաչեցելոյն Յիսուսի։ Զաւէ 'ի կշտամբանս անիրաւ դատաւորին՝ մարմին Աս֊տուածամարդոյն, յորոյ մահուանն արեգակն խաւարեցաւ, երկիր դողացաւ և վէմք պատա֊ռեցան, այլ ցածութեամբ այնչափ ինչ աւէ՝ զի ծանիցի խնդիր լինել մարմնոյ աղքատ Նազով֊րեցւոյն։ Այսու օրինակաւ ընդունի անյապաղ

զպարգեւն. եւ գտանայ արդարեւ մեծատուն 'ի Գողգոթա:

Արդ մինչդեռ է զնա իջուցեալ 'ի խաչէն, հայեաց դու, հոգի իմ, 'ի Յիսուսն քո խաչեցեալ եւ 'ի մեռեալ, եւ տես զիա՛րդ կայ հոլանի 'ի պարզի, տեռեալ 'ի ձաղկանաց, խոցոտեալ ձեռօք եւ ոտիւք 'ի բեւեռացն, գեղարդնապատառ կողիւ, եւ 'ի յորդահոս վտակաց արեանն մածեալ սրբազան վիրօքն: Արիւնդ այդ արիւն է Աստուծոյ: Քաջ խորհեաց, խելամուտ լեր զինչ իցէ՝ Աստուծոյն. եւ զի արիւնդ այդ հեղեալ է վասն քո, 'ի քաւութիւն եւ 'ի թողութիւն մեղաց, յիշեա եւ ած զմտաւ, զի ոչ գնով ոսկւոյ եւ արծաթոյ փրկեցար, այլ ամենապատուական արեամբ Աստուածամարդոյն:

Ո՛վ Փրկիչ իմ Յիսուս, Միածին Որդի Աստուծոյ, է՞ր ինչ արժանի վասն անարգի եւ չուառական ստեղծուածոյ միոյ զայդքան արիւն հեղուլ: Այլ քանզի ողորմել կամեցար հիքութեանց իմոց, չէ՞ր եւ չիք մի արեանդ բաւական՝ 'ի փրկել ոչ զիմն եւեթ հոգի, այլ եւ զհոգիս ամենայն երկրի եւ հազարաց աշխարհաց. եւ առ իմէ՞ հեղեր խաղառ զամենայն մինչեւ 'ի ներքին կայլակս որ 'ի մէջ սրտիդ: Ի միտ առնում եւ գիտեմ զի առ 'ի յայտնել ինձ զսէր քո մեծ. իսկ ես իւ իւիք կարացից առնել փոխարէն սիրոյդ: Եթէ եւ զամենայն արիւն իմ նուիրեցից քեզ, զի՞նչ իցէ արիւնս այս չնչաւոր առ աստուածային արեամբդ՝ որում չիք գին: Ո՛հ. քաջ իմանամ, զի ոչ արիւն խնդրես յինէն, այլ զսիրտ. եւ ոչ սիրտ մարմնեղէն, այլ զհոգեղէնն, որ են կամքն. եւ 'ի կամաց անտի ոչ այլ ինչ խնդրես՝ բայց զի յորդորեալ վառիցի նկրտել 'ի նմանութիւն սրբոց առաքինութեանց քոց: Ո՛վ. քանի՜ բարի ես դու՝ զի խնդրես յինէն բա-

րիս ինչ, որ ինձ առաւել յօգուտ է քան թէ քեզ: Կամիմ նմանող լինել քեզ. և նմանեցայց քեզ, Յիսուս, 'ի խոնարհութեան, 'ի հնազանդութեան, 'ի համբերութեան, և յամենայն որ հաճոյ իցէ քեզ: Օգուտ է և ինձ այս. քանզի վայ և եղուկ է հոգւոյ՝ որ թէ յայնքան արենէ ոչ ջեռեալ բորբոքեսցի 'ի կրթութիւն առաքինութեանց: Կամիմ նմանակցել քեզ. և զի մեղկ և տկար է բնութիւնս իմ, հայցեմ 'ի քէն կազդուրել զիս ամենակարող շնորհօք քովք:

Առաջին առաքինութիւն յոր բուռն հարկանէ Արեմաթացին 'ի նմանել Յիսուսի՝ արիութիւնն է, ընդդէմ ակնառութեան 'ի մարդկանէ, առ 'ի չզանգիտել 'ի սպասու Տեառն և ոչ 'ի վտանգէ ուստեք աշխարհի: Գուն գործեսցիս և ես վառիլ սովին՝ որում մեծապէս պէտս ունիմ:

ՅԿ. Ընկալեալ 'ի Պիղատոսէ զշնորհն՝ փութապէս դարձ առնէ Արեմաթացին ընդ Նիկոդիմոսի ընկերակցի իւրում 'ի Գողգոթա, իջուցանել զմարմինն Յիսուսի 'ի խաչէն: Միադիր ուշով, հոգի իմ, և տես, զիարդ երկոքին միաբան նախ ծունր եդեալ երկիր պագանեն Որդւոյ Աստուծոյ, ապա յեցուցեալ զսանդուղսն ելանեն, մին յաջմէ և միւսն յահեկէ, հանել զբևեռս ձեռացն, զերկայնս և ստուարս, զխորամուխս 'ի կոճեղն, վասն որոյ և դժուարախլելիս. բայց խնամով և պատկառանօք յաջողէ նոցա հանել: Այլ ո՞ւր երբեք լուաւ, եթէ այդպիսի ազատք տոհմիկք երթեալ իցեն իւրեանց ձեռօք լուծանել զպարանեալն 'ի կախաղանէ. այլ սոքա փառս անձանց համարին ելանել 'ի խաչն և իջուցանել անտի զՅիսուս: Մինչ կենդանի էր գառնն մեր հեզահամբոյր,

ամենայն խաժամուժ և ամպարիշտ ամբոխ մարդկան ձգձգէր և լլկէր զնա. իսկ այժմ յետ մահուն՝ միայն հպին 'ի նա հոգիք ազնիւք և արդարք՝ ընդ հակառակս միմեանց մրցելով բարեպաշտութեամբ'ի պատուել զնա: Ի հին օրէնսն պիղծ համարէր որ հպէրն 'ի մեռելոտի. այլ այն օրէնք 'ի յանդ ելին. և որ հպին 'ի Յիսուս՝ համարի սրբիլ և մաքրիլ: — Նիկոդեմոս Թափէ զոտս Յիսուսի 'ի բևեռաց անտի. իսկ Յովսէփ 'ի գիրկս առեալ ունի զմարմինն: Որպիսի՜ բաղդերջանիկ է նմա պնդել 'ի ծոց իւր զՓրկիչն աշխարհի: Յետ այնորիկ ձեռն օգնութեան տան ամենեքին. այլ և Մարիամ ինքնին, որ մի ըստ միոջէ հաւաքէ զբևեռսն և զպսակն փշեղէն, նաև զորդին գլխովլին ուս ընդ անութ կալեալ 'ի Թիկանցն, մինչդեռ Մագդաղենացին բուռն հարկանէ զոտիցն՝ որք երբեմն երախտաւորք եղեն նմա: Որպիսի՜ ողբք, որպիսի՜ ձայնք դառն հեծութեանց, մանաւանդ յաշակերտէն սիրեցելոյ 'ի Յովհաննէ, 'ի պատել անդ օրհնեալ մարմնոյն կտաւօք, և 'ի դնել 'ի գիրկս ամենասուրբ Կուսին:

Իսկ դու, հոգի իմ, զի՞ գործես. հի՞մ ոչ փութաս երթալ լուանալ արտասուօք քովք ըզվէրսն սրբազանս: Ո՛հ, ոչ համարձակիմ, ո՞վ Յիսուս: Յորչափ 'ի ձեռս Թշնամեաց քոց էիր, պաշտանեաւորացն և դահճաց, իշխեցի մտանել և ես 'ի դասս նոցին. իսկ այժմիկ տեսանելով ըզքեզ շուրջ պատեալ 'ի հոգւոց սրբենեաց, արժանացելոցն առ 'ի քէն առաւելագոյնի իմն հաղորդութեան և ճաշակման արդասեաց մահուանդ, զի՞արդ իշխեցից զաղբադոյնս 'ի մեղաւորաց՝ հուպ լինել 'ի քեզ: Ի հեռաստանէ կացեալ երկիր պագանեմ քեզ. և աղաչեմ զքեզ առնել զիս արժանի մօտ մատչելոյ 'ի զնին վի-

բաց մաքրափայլ մարմնոյդ վասն իմ առեցե. լոց: Արդարև մեղաւոր եմ յոյժ անարժան. այլ յիշեա, Փրկիչ իմ, զի չարչարանօք քովք ոչ միայն թողութեան մեղաց արժանացուցեր զիս, այլ և սրբարար շնորհաց, որ հաճոյացուցանեն զիս աստուածայնումդ մեծվայելչութեան, և յաւիտենից իսկ երանութեանց հաղորդս առնեն. արդ մի զապախտիս իմ նկատեր յիս, այլ զերախտիս քո: Մա՛յր ցաւագին, բարեխօսեա վասն իմ, զի լսելի եղէց, քան զի ոչ այլ ինչ խնդրեմ, բայց վիրաւորել 'ի սիրտ և նուաղել սիրովն Յիսուսի. որպէս վիրաւորեցաւն Յիսուս և մեռաւ 'ի խաչին առ սէր իմ:

Քանզի ընտրեցի խաչակից լինել Յիսուսի, պնդեցից 'ի մտի չթողուլ երբեք զխաչ մեռելութեանց 'ի նմանութիւն Քրիստոսի, որ ոչ էջ 'ի խաչէն բայց յետ մահուանն:

Յիսուս 'ի գիրկս Մարիամու եդեալ:

ՅԿԱ. Նստեալ Տիրամօրն 'ի ստորոտ խաչին՝ ունի 'ի գրկին տարածեալ զմարմին որդւոյն մեռելոյ: Մարթ է մեզ աստանօր որքան և կամք իցեն յերկարել 'ի քնին ընդարձակութեան ցաւոց նորին. այլ ոչ լիցուք քաջ խելամուտք՝ եթէ ոչ հաւատասցուք անհնարին մեծ լինել զցաւս այնպիսւոյ Մօր այնպիսւոյ Որդւոյ: Որպէս գերազանցէր նա քան զամենայն մարդ շնորհօքն, սրբութեամբ և արդեամբ, այսպէս և 'ի վեր է քան զբնաւից երաշխեպ ցաւոց նորին. և եթէ հնար էր ումեք յառել 'ի սիրտ նորա՝ տեսանէր արդեօք 'ի նմին որպէս 'ի հա-

յեղլոջ և զամենայն վէրս Յիսուսի, և զճշգրիտ օրինակ մահուան նորա:

Զմտաւ ած, հոգի իմ, զմայրն Թաղծալից, խոցեալ սլաքաւ սիրոյ և ցաւոյ յամենայն մասունս կուսական աղեացն. զիարդ մերթ հայի և արտասուօք Թանայ զգլուխ, զձեռս, զոտս, զկողս և զայլ ամենայն պատառոտեալ անդամս Որդւոյն ամենասիրելւոյ. մերթ համբուրելով զճակատն, զայտս, և զշրթունս. մերթ վտաւատաւն ջնջելով զարիւնն և զթուքս. մերթ խանդակաթ ողջագուրմամբ փարելով զնովաւ. և մերթ գորովագութ և զղջական բանիւք ողբս յարդարելով: Զի՞ք նորա այլ մխիթարութիւն՝ բայց այս ևեթ, զի Որդի նորա մեռաւ 'ի փրկութիւն քո յաւիտենական. և յուրախութիւն դարձուցէ զողբումն՝ յորժամ և դու կամեսցիս իսկապէս փրկիլ: Եւ արդ, որպիսի՞ ինչ իցեն կիրք զգացուածոց քոց: Փոխանակ փարելի բանից սփոփանաց՝ Մարիամ փափագէ 'ի քէն գործս արժանիս յաւիտենից կենաց: Զի՞նչ ասիցես դու. չունիցի՞ս պէտս օժանդակիչ շնորհաց: Ապա դիմեա՛ց առ Տիրամայրդ. և նա տացէ քեզ ոչ միայն զշնորհսն, այլ և զհեղինակն շնորհաց, որ նոյն ինքն է Որդին իւր:

Ո՛վ, քանի՜ պարտական եմ սիրոյ և գթութեան քում, ո՛վ ամենասիրող և ամենասիրելի Կոյս. 'ի նշմարելն իմում զՅիսուս 'ի գիրկս քո՝ Թուիմ տեսանել զԹագաւորն փառաց 'ի գահու իւրում՝ որ ամենեին ողորմութիւն է. և սիրտ իմ լցեալ զեղու յուսով: Ո՛վ Մայր իմ և Աստուծոյ իմոյ. չեղև ինձ երբեք այսքան և այսպիսի վստահութիւն յուսոյ՝ որպէս յայժմուս 'ի մատչել իմում խնդրել շնորհս առ 'ի քէն. ո՛ն, հեղցի և յիս յառատութենէ սիրոյն՝ որ զեղեալ յորդէ 'ի սիրտ քո: Սուր սիրոյն՝ որով

սիրեսդ զՈրդի քո զՅիսուս, ոչ միայն եհար զքեզ այլ և խոցեաց, վիրաւորեաց բոլորովին, թափ էանց կողմանէ 'ի կողմն: Երանի՜ էր և ինձ եթէ սայրիւ չափ սրոյն խոցոտեալ լինէի: Տո՛ւր ինձ ըստ ցանկութեան սրտի իմոյ, ո՜վ սուրբ Մայր սիրոյ և ցաւոց. զի թէ այսպէս սիրեցեմ զՅիսուս՝ փրկիմ աներկբայ. և 'ի փրկութեան իմում ուրախ եղիցիս և դու:

Ջերմեռանդն եղէց 'ի պաշտօն Մօրն ցաւագնելոյ, և վառեցայց 'ի նմանութիւն նմին. և վաղ վաղ նմանող եղէց ըստ կարի իմում՝ աղերս սիրոյ ստէպ առ Յիսուս ուղերձելով:

ՅԿԲ. Օրէնք էին 'ի հին կտակարանին, զի թէ գտանէր 'ի վերայ արքունի ճանապարհի դիակն սպանելոյ ուրուք, պարտ էր գալ ծերոց ժողովրդեան տեղւոյն և լուանալ զձեռս 'ի նշան անպարտ լինելոյ յոճրէ մարդասպանութեանն: Իսկ արդ գտանելով մեր 'ի խաչին զմարմին կտտամահ խողխողեալ, ոչ զորոյ մարդոյ, այլ զԱստուածամարդոյ՝ Յիսուս Քրիստոս կոչեցելոյ, որոնեսցուք խնդրեսցուք՝ ո՞ իցէ պարտական սպանմանն: Որ մատնեացն զնա Յուդա՝ ստրջացաւ իսկ, խոստովանելով զՅիսուս այր արդար և ոչ արժանի մահու. արդարացոյց զանձն և Պիղատոս՝ անմեղ զնա վկայելով, և ոչ պարտական մահու. 'ի չքմեղս եղեն և Հրեայքն ասելով, ոչ է մեզ օրէն սպանանել զոք: Արդ ո՞վ այդպէս խժդժօրէն վէրս եդեալ սպան զերիտասարդ երեսուն և երից ամաց, զգեղեցիկն, զսուրբն և զսիրելին քան զամենայն մարդիկ աշխարհի:

Ե՛կ, հոգի իմ, եկ և տե՛ս 'ի գիրկս կարեվէր վշտագնելոյ մօրն՝ զորդի իւր մեռեալ: Կարիցես և դու անստգիւտ խղճիւ ասել՝ թէ չեմ պար-

տական մաՀու դորա, և չիք իմ մեղուցեալ 'ի դա: Այլ է, քաՋ խորհեա՛ց լուսով հաւատոյդ, և տեսցես, զի չիք 'ի սրբազան մարմնի անդ վէր՝ զոր չիցէ ապառում չարութեան քո եդեալ: Փշովք աղտեղի խորհրդոցդ խոցոտեցեր զգլուխ դորա. յայրատ հայեցուածովքդ՝ արիւնաքամ արարեր զաչս նորա. լպիրշ բարբառովք՝ լեղի դառնութեան Ճաշակեցուցեր լեզուին. պիղծ և անասնական հեշտութեամբք՝ վիրալից արարեր զանարատ մարմինն, և չարաչար ըղձիւք՝ պատառեցեր զսիրտն ամենամաքուր: Ճանաչիցե՞ս արդ, հոգի իմ մեղուցեալ, եթէ դու ինքն ես բովանդակ պատՃառք չարչարանաց նորա և մաՀուանն:

Այո՛, Աստուած իմ, Ճանաչեմ զմեծ չարիսն զոր արարի. այլ թէ էր իմ զմտաւ ածեալ և քննեալ զառիթ մեղացն՝ մեղանչէի արդեօք: Որպիսի՛ սոսկումն է ինձ չկարել տեսանել ըզքեզ անշնչացեալ՝ առանց գիտելոյ զիս վատթարագոյն քան զՀրէայսն, ստուգապէս դահիՃ և առիթ մաՀուան քո: Յաւէ՜ ինձ ընդ ամենայն չարիս իմ, և ցուէ ինձ ես զի վասն պախարակելի գաղջութեան իմոյ չունիմ ցաւ ըստ արժան բաւականին: Բա՜բէ, և ե՞րբ ոչ շանթահար արարին զիս երկինք. կամ զիա՞րդ ոչ ընկլոյզ զիս երկիր՝ յորժամ մեղանչէի: Զիա՞րդ և այժմիկ համբերես ինձ, Հայր յաւիտենական, աւազակիս սպանողի Միածնի Որդւոյ քո սիրելւոյ: Զիա՞րդ և դու իսկ, ամենասրբուհի Մայր, չտաս թոյլ հրեշտակաց երկնից և ամենայն արարածոց երկրի՝ վրէժ լուծանել յինէն, որ 'ի խաչ հանի զՈրդին քո զՅիսուս, և սուսեր ցաւոց հարեալ անցուցի ընդ սիրտ քո գողտրիկ: Չեմ բնաւ արժանի ողորմութեան. այլ սակայն զըղջացեալ ընդ մեղս իմ ակն ունիմ գտանել զնոյն.

և այս առաջին պատիւ իցէ զոր կամիմ մատուցանել Փրկչին իմում, փոխանակ մահուն զոր ետու նմա՝ կեանս առ 'ի նմանէ յուսալով: Յիսուս իմ, երկիր պագանեմ քեզ. 'ի քեզ յուսամ, առ քեզ հառաչեմ. և քոյին արդեամբք արդահատեալ խրախուսեմ 'ի քեզ:

Առ զգուշանալ 'ի մեղաց՝ առաջադրեսցիս զերիս զայսոսիկ. զգէմ ունել փորձութեանց, զգուշանալ յառթից, և մեռուցանել զախտս իմ: Եւ յամենօրհնեալ Կուսէն խնդրեսցիս շնորհս կատարելոյ զայսոսիկ արդեամբք:

ՅԿԳ. Մինչդեռ կայ Յիսուս իջուցեալ 'ի խաչէն և եդեալ 'ի գիրկս Մօր իւրում, յօգուտ մեր կրթեսցուք զշահ խորհրդոյն: Գիտիցե՞ս, հոգի իմ, եթէ ընդէ՞ր այդպէս մեռեալն Յիսուս կայցէ 'ի նշաւակի 'ի գնին ամենեցուն: Աստուածային տնտեսութեան է այդ գործ, որով տայ նշանակս զահեղ դատաստանին իւրոյ, և խելամուտ առնել՝ թէ որպիսի ինչ իցեն արդասիք մահուչափ մեղաց: Այնքան անհնարին թշնամանք են մեծի վայելչութեանն Աստուծոյ՝ մեղքդ, մինչև Հօրն յաւիտենականի 'ի վրէժ անարգութեան փառաց իւրոց՝ չխնայել և յիւր Որդին. զոր թէպէտ և սիրէր յոյժ յոյժ՝ այլ սաստկապէս և պատուհասեաց: — Վճիռ չարչարանաց և մահուանն Յիսուսի՝ 'ի յաւիտենից սահմանեալ էր յամենասուրբ Երրորդութենէ, միայն 'ի պատիժ պատուհասի մահացու մեղաց. քանզի սոքա թշնամանելով մարդոյ զԱստուած՝ չէր մարթ այլազգ առնել փոխարէն՝ բայց 'ի ձեռն անձին որ իցէ Աստուածամարդ: Քանի՛ ուրեմն մեծ չարիք են իրքդ. որպէս թէ նոյն բան իցէ ասել՝ մահուչափ մեղք և ցաւագին և անարգական մահ Աստուծոյ: — Վիրօք և

մահուամբ Յիսուսի խաչեցելոյ և մեռելոյ՝ Հայրն յաւիտենական քարոզէ մեզ զանհնարին այլանդակութիւն մահացու մեղաց՝ առաւել բարձրաձայն, քան զամենայն պատգամս իւր որ ցայնժամ, քան զամենայն պատուհաս զոր առաքեաց յաշխարհ, և քան զամենայն դժնդակ պատիժս դժոխոց: Աստանօր 'ի դէպ է քեզ, հոգի իմ, տեսանելով զՅիսուս յայսպիսում ողորմելի պայմանի՝ գոչել. Ո՜հ, քանի մեծ չարիք են մահուչափ մեղք: Այնպիսի են չարիք՝ յորոց անկ է տխրել և դողալ՝ քան յայլմէ ուստեք չարէ: Ի կշիռ մահացու մեղաց՝ փոքր և թեթև են ամենայն վտանգք և տաժանմունք ժամանակեայքն և յաւիտենականք:

Ո՜հ, աղդեացէ թափանցցէ մինչև յուղեղս հոգւոյ իմոյ ձայն քարոզութեանդ այդորիկ, ո՛ Հայր յաւիտենական: Առ 'ի զզուշացուցանել զիս 'ի մահացու մեղաց՝ պէսպէս վարիս ընդ իս սիրագորով եղանակօք խոստմանց, սպառնալեաց, բարերարութեանց և պատուհասից. հզօրք և հարկեցուցիչք են այդոքիկ. այլ չիք որ այնպէս ստիպողագոյնս բռնադատիցէ զիս առ 'ի չմեղանչել այսուհետև՝ որպէս չարչարանք քո և մահ, զոր վասն մեղաց իմոց յանձն էառ Որդին քո: Յ'ածել իմում զայս զմտաւ՝ անկ էր լալ հանապազ: Եւ իցէ՞ հնար յիշել զայն և միւսանգամ զնոյն նորոգել՝ մեղօք: Աստուած իմ, տպաւորեա յոգւոջ իմում զծանօթութիւնս զայս զոր ազդեաց յիս այժմիկ. և քանզի զչարչարանսն և զմահն զաւթեալն 'ի մեղաց՝ արարեր դու 'ի դեղ հզօր ընդդէմ մեղացն, հայցեմ 'ի քէն զշնորհս ազդողապէս օգտելոյ յիս դեղոյդ, և՛ 'ի քաւութիւն մեղացս գործեցելոց, և 'ի զգուշութիւն մեղաց զոր տկարութեամբ կամ չարութեամբ մարթ է ինձ գործել զոր հանա-

պազ։ Առաւել ընտրեմ զամենայն չարիս կենցաղոյս, նաև զդժոխս իսկ, քան մեղանչել մահուչափ։

Յիշեցից ստէպ զչարչարանս և զմահ Յիսուսի, առ 'ի ցաւել ընդ մեղս իմ և զգուշանալ յապագայից։ Հաւատամ և դիւրընկալ է դեղդ. զոր թէ ոչ առից՝ իմ են յանցանքն։

ՅԿԴ. Քանզի եհեղ Յիսուս զպատուական արիւն իւր և ետ զպատուական կեանս որպէս գինք փրկութեան մարդկան 'ի գերութենէ սատանայի, աղէ, մեք եդեալ քննեսցուք զինչ իցէ 'ի մարդումս այնքան արգոյ՝ որ արժիցէ զարիւն և զկեանս Աստուծոյ։ Մարդս ըստ մարմնոյն՝ ափ մի փոշւոյ է, ծրար տառապանաց, խաղալիկ ունայնութեանց, որպէս տերև մի հողմավար։ Այլ ունելով 'ի մարմնին հոգի բանական, անմահ, ստեղծեալ ըստ պատկերի Աստուծոյ և սահմանեալ 'ի վայելս յաւիտենական փառաց Աստուծոյ ինքնին, 'ի փրկութիւն հոգւոյս այսորիկ մեղօք կորուսելոյ՝ ետ Յիսուս զարիւն իւր և զկեանս։ Արդ, քանի՜ մեծ է յարգ հոգւոյ մերոյ յաչս Քրիստոսի Աստուծոյ և Մարդոյ։

Մտախոհ լեր, հոգի իմ, և առ 'ի քաջ ճանաչել զքեզ ինքն՝ հայեաց 'ի Յիսուս որ եհեղ առատապէս զարիւն իւր վասն քո. միթէ առնո՞յր յանձն կամաւորապէս զայնպիսի դժնդակ և նախատալից չարչարանս և զմահ, եթէ դո՞ւզին էիր դու, կամ անարգ և յոչինչ պիտանացու։ Եւ զի՞նչ էին կամք Տեառն 'ի ցուցանել իւրում 'ի վերայ քո զայդպիսի նշանակ անչափ վարկի և սիրոյ։ Ոչ այլ ինչ, բայց զի ուսցիս այնպէս յարգարել զբարս քո՝ զի արժանաւորք եղիցին հոգւոյ այդքան սիրեցելոյ առ յԱստու-

ծոյ. և զի Աստուած ինքնին այնքան վաստակե_ ցաւ և արար 'ի փրկել զքեզ, ուսցիս այսր թէ քանիօ՜ն արժան իցէ և քեզ պատկառ կալ ան_ ձինդ, շնորհ ունել զնմանէ և վաստակել 'ի փրկութիւն քո յաւիտենական: Աղէ, կշռեա՛ց զանբաւաչափն զոր արար Աստուած վասն քո_ յոյ փրկութեան, և զսակաւիկն ինչ զոր դուդ առնես 'ի փրկութիւն քո յաւիտենական:

Ամաչեմ և կորանամ յամօթոյ, ո՜վ ամենասի_ րող Փրկիչ իմ. մանաւանդ վասն այսորիկ, զի տեսանեմ առ 'ի քէն կուսէ մեծարգոյ համա_ րեալ զհոգի իմ քան զմարմին քո, որ արժանի էր անբաւ յարգի, քանզի Աստուծոյ էր մար_ մին. իսկ առ յինէն՝ տեսանեմ առաւել պա_ տուեալ և սիրեցեալ զփուտ և զգծուծ մար_ մինս իմ, քան զհոգիս՝ որ արժանի է բազում պատուոյ և սիրոյ առ յինէն, վասն զանազան և ընտիր ձիրիցն: Աւա՜ղ ապշութեանս: Խոկումս այս միայն եթէ հոգի իմ արժէ զարիւն և զկեանս Աստուծոյ, չիցէ՞ առաւել քան զբաւական առ 'ի պահպանել զնա՝ ամենայն նախանձաւոր զգու_ շութեամբ: Ոչ թէթև ինչ է անօրէնութիւնս իմ՝ քանիցս և անարգեմ զհոգիս և արկանեմ 'ի վտանգ կորստեան:

Յիսուս իմ, Աստուած իմ, որ բազում ան_ գամ շնորհեցեր ինձ վշտակից լինել չարչարա_ նաց քոց, տո՛ւր ինձ և միտս կարեկիցս տառա_ պեալ հոգւոյս՝ որ հասեալ կայ յողորմելի հի_ քութիւն: Դու անհնարին տագնապաւ 'ի խըն_ դիր ելեր հոգւոյս այսմիկ. իսկ հոգիս այս զանց զքեւ արարեալ՝ զայլ ինչ խնդրէ: Եւ իցէ՞ նմա հնար չուառագոյն ևս լինել: Ա՜հ, Փրկիչ իմ, ահաւասիկ հոգին զոր այնքան ծանր գնոյ ստա_ ցար. դարձուցանեմ զայն անդրէն առ քեզ. քեզ տամ, քեզ յանձն առնեմ, որպէս զհոգի

որ քո է բոլորովին և քեզ անկ է: Դարման տար զմա և առաջնորդեալ շնորհօք քովք՝ հասո՛ ՚ի փառս քո:

Յայս կնքեցից զխորհուրդս իմ, հաստատուն կամօք սիրել զԱստուած. այն զի սիրելով զԱստուած՝ սիրեմ և զհոգի և զմարմին. քանզի Աստուծոյ միայն է երջանիկ առնել զհոգի և զմարմին:

ՅԿԵ. Մինչ ես անգամ ակն արկցուք ՚ի Յիսուս մեռեալ և ընկողմնեալ ՚ի գիրկս Մօր իւրոյ ցաւագնելոյ. և յետ զմտաւ ածելոյ թէ քանի՜ ծանր և անհեդեդ են մեղք մահացուք, զի ՚ի քաւութիւն նոցին հարկ եղև Աստուծոյ մեռանել. քանի՜ պատուական է հոգիս մեր, զի ՚ի փրկութիւն նորին Աստուած մեռաւ. զմտաւ ածելով ես և զի յանձն էառ Յիսուս զմահ առ ՚ի զերծուցանելոյ զմեզ ՚ի պատժոց դժոխոց և արժանի առնել փառաց արքայութեան. ՚ի վերայ ածցուք և զայն՝ թէ անհնարին ուրեմն չար են դժոխքն, քանզի առ ՚ի փրկել զմեզ անտի մեռաւ Աստուած. և անչափ մեծ բարի է արքայութիւն, քանզի առ արժանի զմեզ նմին առնելոյ՝ մեռաւ Աստուած: Վայե՜լ ինչ էր Որդւոյ Աստուծոյ մեռանել՝ առ ազատել զմեզ ՚ի դժոխոց, եթէ դոյզն ինչ չարիք էին դժոխք. վայե՜լ ինչ էր Որդւոյ Աստուծոյ մեռանել առ ՚ի շահել մեզ զարքայութիւն՝ եթէ դոյզն ինչ բարիք էին արքայութիւն: Ի հաւատոց է, եթէ առ երկաքանչիւր ես ՚ի սոյանէ ՚ի դէպ պատշաճեցան չարչարանք և մահ Քրիստոսի:

Խորհեա՛ց, հոգի իմ, զի՞նչ լինէր քեզ՝ եթէ չէր մեռեալ Յիսուսի վասն քո: Յեզր վախից ահաւոր յաւիտենականութեան հասեալ կայիր անօգնական, և ՚ի ծանրութենէ մեղանայդ ընկը-

Ծնեալ՝ մայր քեզ դաշավիժութիւն աներկբայ. այլ Յիսուսի գթացեալ 'ի քեզ՝ բուռն եհար, և ազատեաց զքեզ 'ի վտանգէն մեծէ. և ոչ միայն այնչափ, այլ և մինչ դատապարտութիւն 'ի վերայ կայր քո՝ վատահացոյց զքեզ, զի 'ի կամելդ նմանող նմին լինել՝ եղիցիս երանելի յաւիտեանս: Բայց զմտաւ ած և քննեա, ո՛վ հոգի իմ, զինչ իցեն դժոխք, զինչ արքայութիւն, և որչափ ինչ պարտիս Փրկչին քում:

Ո՛վ Յիսուս իմ, որպիսի՛ շնորհաց գոհութեան չիցեմ քեզ պարտական վասն երախտեաց քոց՝ որք անչափք են և անթուք. եթէ իմ էին համօրէն տիեզերք՝ և տայի քեզ, տակաւին դոյզն ինչ էին տուրք իմ առ պարտականութեանս իմոյ. և ճանաչեմ զպարտս իմ, որ է սիրելն զքեզ յամենայն զօրութենէ սրտի. և գիտեմ զի հաճիս ընդ այս. այլ ո՞ բաց 'ի քէն՝ կարող իցէ հեղուլ յիս զսէր զայդ սուրբ: Արդ, դու որ կանխես յորդորես զիս 'ի սիրել զքեզ, կատարեա լրացո զփափաք տենչանացս. որպէս զի իսկապէս սիրեցից զքեզ, և սիրեցից բովանդակ սիրով զոր խնդրեսդ յինէն:

Միակ կէտ հնարից ճողոպրելոյ 'ի դժոխոց և ժառանգելոյ զարքայութիւն՝ հաստատեալ կայ յայս սէր: Իսկ ես, աւա՜ղ, քանի՜ չար գործեմ և զանձն իմ խաբեմ մեծապէս, մինչ երկմտեմ 'ի յուսոյ, դժուարին յոյժ համարեալ զոգւոյս փրկութիւն: Զինչ դիւրագոյն քան զայդ՝ շնորհիւ արդեամբք Աստուածամարդոյն մեռելոյ 'ի խաչին վասն իմ: Ամբարձ զաչս քո, ո՛վ հոգի, և հայեաց 'ի Տէր քո Յիսուս Քրիստոս, և ուսիր 'ի նմանէ: Նա զբովանդակ զանձն իւր ետ վասն քո, առ 'ի դիւրել քեզ զփրկութիւն յաւիտենական. եթէ և դու տացես նմա յօժար սիրով զբովանդակ զքեզ, չեն այլոյ իմիք պէտք 'ի փրկութիւն անձինդ:

Զի մի բանիւք չափ իցէ սէր իմ, դուն գործեցից նմանող լինել Յիսուսի. քանզի 'ի նմանութենէ աստի յայսմանէ կախեալ կայ ամենայն. որ նմանիցի նմա՝ փրկեսցի. որ ոչն կամիցի նմանել՝ կորիցէ։

ՑԱՆԿ

Կանխաձայնութիւն Քրիստոսի առ Առաքելսն զՉարչարանաց իւրոց . . 1
Դաւաճանութիւն Յուդայի . . . 5
Ընթրիք Քրիստոսի 'ի Բեթանիա . . 14
Մուտք Քրիստոսի յԵրուսաղէմ . . 18
Հրաժեշտ Յիսուսի 'ի Մօրէ իւրմէ . . 30
Ընթրիք Յիսուսի 'ի վերջնումն Պասեքի . 35
Լուանալ Յիսուսի զոտս Առաքելոցն . . 43
Պատրաստութիւն հաստատութեան խորհրդոյ ամենասուրբ Հաղորդութեան . 53
Հաստատութիւն ամենասուրբ Խորհրդեանն 60
Տալ Յիսուսի Առաքելոցն զԽորհուրդն սուրբ, և զիշխանութիւն կատարելոյ զնոյն 69
Խնամք Յիսուսի վասն ապաշխարութեան Յուդայի 73
Ժպիրհ նենգութիւն Յուդայի 'ի մատնելն զՅիսուս 82
Բանք Քրիստոսի յետ վերջին Ընթրեացն . 93
Երթալն Յիսուսի 'ի Պարտէզն Առաքելովք իւրովք 104
Զգայական տխրութիւն Քրիստոսի 'ի Պարտիզին 110

Բանական տխրութիւն Քրիստոսի 'ի Պարտիզին 123
Քնածութիւն Առաքելոցն 'ի Պարտիզին . 136
Աղօթք Քրիստոսի 'ի Պարտիզին . . 142
Երեւումն զօրացուցիչ Հրեշտակին առ Յիսուս 153
Օրհասական տագնապ Յիսուսի 'ի Պարտիզին 160
Արիւնահոս Քրտունք Քրիստոսի . . 171
Երկու խորհուրդք համբերողին Յիսուսի 'ի Պարտիզին 188
Ընդառաջել Քրիստոսի Թշնամեաց իւրոց 'ի Պարտիզին 192
Ընդունել Յիսուսի զհամբոյր Յուդայի . 199
Ըմբռնումն Յիսուսի 'ի Պարտիզին . . 206
Փախուստ Առաքելոցն յըմբռնման Քրիստոսի 221
Տարումն Յիսուսի 'ի Պարտիզէն 'ի տուն Աննայի 231
Յիսուս յատենին Աննայի . . . 242
Յիսուս յատենի Կայիափայ . . . 257
Զաղանք Յիսուսի 'ի տան Կայիափայ . 276
Խորհուրդ Հրէից 'ի սպանութիւն Յիսուսի . 293
Ուրանալ Պետրոսի զՅիսուս . . . 300
Գթութիւն Քրիստոսի 'ի Պետրոս . . 310
Ապաշաւ Պետրոսի 317
Վարումն Յիսուսի յատեան Պիղատոսի Դատաւորի 328
Անզղջութիւն և յուսահատութիւն Յուդայի 339
Ամբաստանութիւն Հրէից զՅիսուսէ առ Պիղատոս 349
Կալն Յիսուսի առաջի ատենին Պիղատոսի . 356
Վերստին ամբաստանութիւն Հրէից զՅիսուսէ 368

Ապաքումն Յիսուսի 'ի Պիղատոսէ առ Հերովդէս 375

Յիսուս յանդիման լինի Հերովդէի . . 379

Ծանականք Յիսուսի յարքունիս Հերովդէի . 386

Անդրէն առաքումն Յիսուսի 'ի Հերովդէէ առ Պիղատոս 393

Ջուգաձուել Պիղատոսի զՅիսուս ընդ Բարաբբայ 401

Նախադասել Հրէից զԲարաբբա քան զՅիսուս 408

Թախանձ Հրէից զի խաչեսցի Յիսուս . 416

Յիսուս թողեալ լինի 'ի կամս Հրէից . 423

Ձաղկումն Յիսուսի . . . 432, 440

Պսակումն Յիսուսի փշովք . . . 457

Այպանումն Յիսուսի իբրու թագաւոր սուտ 468

Յանդիման առնել Պիղատոսի զՅիսուս առ ժողովուրդն 479

Ահա Այրդ 486

Աղաղակ Հրէից զի խաչեսցի Յիսուս . 493

Պաշտպանել Պիղատոսի զՅիսուս հակառակ Հրէից 503

Վերջին դատ քննութեան Յիսուսի յատենին Պիղատոսի 508

Դարձեալ ջանահնար լինել Պիղատոսի ազատել զՅիսուս. 515

Հաւանի Պիղատոս դատապարտել զՅիսուս 526

Յիսուս դատապարտի 'ի խաչ ելանել . 533

Յիսուս բառնայ յուս իւր զխաչն . . 540

Խաչաբարձ երթն Յիսուսի 'ի Գողգոթա . 547

Օգնութիւն Կիւրենացւոյն 'ի բառնալ ըզխաչն Յիսուսի 558

Ցաւակցութիւն դստերաց Երուսաղեմի 'ի վերայ Յիսուսի 566

Ժամանել Յիսուսի խաչիւն 'ի Գողգոթա . 573
Խաչելութիւն Յիսուսի 580
Յիսուս խաչեալ 'ի մէջ երկուց աւազակաց 591
Թշնամանք Յիսուսի առ 'ի Հրէից . . 599
Յիսուս խաչեալ աղօթէ վասն թշնամեաց իւրոց 604
Խոստումն արքայութեան առ Աւազակն աջակողմեան 610
Տիրամայրն առ ոտս Խաչին . . . 615
Գանգատ Յիսուսի զի բարձի թողի եղեւ . 620
Յիսուս ցաւագնի վասն Ծարաւոյն . . 624
Յետին Բանք Յիսուսի 627
Մահ Յիսուսի խաչեցելոյ . . . 635
Խոցումն Կողին Յիսուսի 'ի խաչին . . 643
Բարձումն Յիսուսի 'ի խաչէն . . . 650
Յիսուս 'ի գիրկս Մարիամու եդեալ . . 656

ՈՒՂՂՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՈՒՂՂԵԼԻՔ

Աղօթք · բ · ծդ · ծը · հդ · հե · հը · հթ · ձա · ձդ ·
ճդ · ճիբ · ճկը ·
Անսալ ազդմանց հոգւոյ · ժե · լթ · խ · խդ · ձ ·
ճլթ · ճժդ · ճհա · ճհէ · մա · մժ · մժա · մժդ ·
միթ · մլզ · մձ · յլէ · յխը ·
Աչառութիւն · Շահասիրութիւն · զ · ը · ի · ձէ ·
ճի · ճիե · ճխդ · ճխզ · մա · մդ · մժը · միդ ·
մլ · մլա · մլդ · յե · յլբ · յծթ ·
Ապաշխարութիւն · ժդ · ժը · խթ · ծե · կբ · կդ ·
կզ · կէ · կը · կթ · հդ · ղդ-ղէ · ճա · ճժը ·
ճիդ · ճիէ · ճիը · ճլե · ճհդ · ճհը · ճղթ · մի ·
միբ · միթ · մխդ-մխե · մծբ · մծզ · մկե · մձ ·
մլե · յդ · յժդ · յժե · յժզ · յիը · յլզ · յլէ ·
յկբ :
Ապերախտութիւն · ե · լթ · խ · խդ · խե · ծ · ծա ·
կ · կա · կը · հբ · ձզ · ճ · ճժ · ճժա · ճժդ ·
ճժզ · ճի · ճիդ · ճիդ · ճլ · ճլթ · ճկդ · ճկե :
Ս · Աստուածածին · ժզ · ժէ · ժը · ճծթ · մծ ·
մհզ · յէ · յլ · յխ · յխա · յծզ · յկա :
Արքայութիւն · ժդ · ժե · իզ · ծե · կե · ճղէ ·
մծե · մկզ · յթ · յժա · յլզ · ձկէ :
Բամբասանք · խ · ծդ · կդ · ճա · ճդ · ճէ · ճլբ ·
ճլդ · ճխէ · ճկբ · ճղթ · մի · միթ · մլ · մլդ ·
մլզ · մլթ · մխդ · մծդ · մձ · յիդ · յլբ · յխէ ·
յխը · յծէ :

Գժոխք. ձե. ճՀ. մծե. յժգ. յժե. յժղ. յկե։
Երկիւղ դատաստանաց Աստուծոյ. խա. խղ.
խէ. ծղ. կգ. ճղ. ճը. ճկբ. ճկզ. ճձթ. ճղա.
մծբ. մՀթ. մձ. մձե. մղ. յիե. յլը. յխգ.
յխղ։
Լռութիւն. ճձ. ճղթ. մբ. մե. մը. մթ. մժբ.
մժգ. մի. մծէ. մՀե. մձգ. մձղ։
Խոստովանութիւն. ժգ. իթ. խգ. ճլթ. ճխե.
ճՀա. ճձէ. միբ. մկէ. մՀա։
Ծուլութիւն. Գաղջութիւն. ա. ե. ժգ. իբ. լ.
Հգ. Հգ. ձէ. ճբ. միե. ճիթ. ճկը. մա.
մժա. միբ. մկ. մկը. մղ. յը։
Հաղորդութիւն. ժգ. ի. իը. իթ. և այլն. լէ.
լը. խգ. մժը. մՀա։
Համբերութիւն. ը. խգ. ծե. կա. ճժգ. ճիղ.
ճլգ. ճլզ. ճլէ. ճխգ. ճխը. ճծե. ճկ. ճղգ.
մբ. մգ. մե. մէ. մժե. միա. մխզ. մկա. մՀե.
մՀը. մղզ. մղը. յբ. յթ. յլ. յլա. յխը։
Հաւատք. լգ. լէ. ծզ. ճլգ. ճխ. ճխէ. ճծզ.
ճձէ. մ. մխբ. մծա. մկ. մկա. մՀե. մՀէ.
մՀթ. յժա. յիթ. յլե. յխը. յծբ։
Հնազանդութիւն. ի. իե. իլ. լէ. կգ. կթ. ձէ.
ձը. ճղը. մձբ. մձէ. մձթ. մղէ. յե. յի.
յիբ. յլէ։
Մահ. լա. կգ. ղ. ղա. ճձը. ճղթ. յլգ. յխէ.
յխթ. յծ. յծա։
Մեռելութիւն անձին. ա. ժէ. ժը. ծե. կե. Հբ.
ձէ. ճբ. մլե. մկբ. մկղ. մՀբ. մՀգ. մՀե.
մձա. մղե. մղէ. յը. յժա։
Յանձնապաստանութիւն. ծէ. Հգ. ձբ. ճիա.
ճկէ. ճՀէ. մբ. միե. միղ. մծղ. յժղ. յլէ։
Յաւիտենականութիւն. ղ. ժե. իգ. ծե. կե.
ճղ. միէ. մծե. յժթ. յխէ։
Յոյս. Ապաւինութիւն յԱստուած. գ. է. իա.
լե. խա. ծբ. ծգ. ծե. կգ. կթ. Հղ. Հէ. Հը.

ձ. ձբ. ձգ. ձէ. ձը. ճգ. ճե. ճէ. ճժ. ճժբ.
ճժե. ճժղ. ճիա. ճխէ. ճծբ. ճկա. ճյգ.
ճհբ. ճհղ. ճձե-ը. ճղա. մ. մգ. մէ. մի.
մըղ. միդ. մխթ. մծը. մծթ. մկ. մկա. մկթ.
մհ. մհդ-ղ. մձ. յթ. յժա. յժը. յի. յիա.
յիգ. յիը. յլը. յխ. յխբ. յխդ. յծբ. յծե.
յկբ. յկե:

Նախանձ. ճձա. մղ. միբ. միդ:

Շնորհաց զեղծումն. բ. ե. թ. ժ. ժե. իթ. ըթ.
խ. ձա. ճհէ. ճձա. ճձը. մ. մժա. մըղ.
մկե. մձ. մձա. մձգ. յծը:

Ողջախոհութիւն. մժ. մխը. մծղ. յժէ:

Ունակացեալ կիրք. գ. դ. ղ. թ. ժբ. ծթ. կ.
կբ. ղբ. ճղ. ճը. ճխ. ճխե. ճխթ. ճկդ.
ճհէ. ճձա. ճղբ. միթ. մըե. մծէ. մհգ. մհթ:

Սէր անձին. ա. ղ. ժ. ժգ. ժե. ժթ. իդ. իղ.
իէ. իթ. խթ. ծ. ձե. ղէ. ճղ. ճղե. ճղէ.
մա. մգ. մը. մժը. միդ. միե. միէ. մհդ.
մղբ. մղգ. յժը. յժթ. յի. յիգ. յիթ. յլա.
յլբ:

Սէր ընկերին. դ. է. ը. թ. իէ. լբ. լղ. խդ. ծբ.
ձգ. ճժղ. ճլը. ճխգ. ճկթ. ճհբ. մժե. մժը.
միդ. միղ. յլդ-ղ:

Վախճանն. ժա. ժգ. ճղէ. միէ. յժթ:

Փոյթ փրկութեան անձին. ա. ե. ը. ժա. ժգ.
իբ. խէ. ծղ. կգ. ղթ. ճիա. ճխը. ճծգ.
ճկղ. ճկէ. ճհէ. մժը. միե. մխդ. մկէ. յժգ.
յխե. յխէ. յծա. յկգ:

Սէր Աստուծոյ և Խոնարհութիւն գրեաթէ յընդհանուր մասունս գրոցս:

ԱՂՕԹՔ

ԱՂՕԹՔ

Ա.

Յիշատակաւ տրտմութեան Յիսուսի 'ի Պարտիզին :

Ո՛վ Փրկիչ աշխարհի, ո՛վ Ճանապարհ և Ճըշմարտութիւն և կեանք եղկելի ստեղծուածոյս· տեսանես, եթէ որպէս յայտ առնեմ ես յամենայնի լինել որդի Ադամայ: Քանզի արտասահման գոլով և պանդուխտ 'ի հովտիս արտասուաց, գուն գործեմ չլինել ինձ ստանօր դըրախտ փափկութեան: Իղձ լինիմ պատսպարել զիս յերեսաց չարեաց· փափագեմ կեալ աստէն զամենայն աւուրս իմ յանդորրու և 'ի դիւրի· կամիմ 'ի խաղաղութեան վայելել ստանօր: Եւ զիարդ ես ինձէն ոչ ամաչեմ, որ հետեւող գոլով խաչեցելումդ, քեզ թողում զամենայն պատիժ պատուհասի, և ինձ որոնեմ զհեշտ և զհանգոյս: Ո՛վ, քանի՜ աննման եմ քեզ, որ ոչ շատացեալ հեղմամբ արեանն՝ զոր յետ սակաւու միոյ հանդերձեալ էին դահիճք հանել յամենամաքուր երակաց քոց, հաճեցար 'ի պարտիզի անդ լինել ինքնին դահիճ սրբոյ սրտիդ, և արձակեցեր արիւն յորդառատ մինչև յառոգանել զգետինն: — Այսպէս 'ի հանդէս մրցմանց

մնանեմք մեք, Տէր. դու՝ տալով մեծամեծ օրհնակս համբերութեան չարչարանաց, և ես մեծապէս հեռանալով 'ի քումդ նմանութենէ։

Ո՛վ փառքդ արքայութեան, ո՛վ մեծութիւն երկնից և երկրի, Աստուած իմ և Փրկիչ իմ. մինչև ցե՞րբ ձգիցին այսպիսի հակառակ մրցանք ընդ կեանս քո և ընդ իմ. ընդէ՞ր ոչ դադարիցի այժմէն։ Ահաւասիկ, Տէր, որ փոխելոյ զմեղկութիւն սրտիս 'ի փափագ կրելոյ ինչ վասն քո։ Բա՛րձ յինէն, Տէր, զսէրն չարաչար՝ զոր ունիմ առ իս ինքն, և փոխարկեա 'ի քո սէր։ Շատ իցէ յոյժ ժամանակն աւաղելի՝ զոր ծախեցի 'ի հաճոյս զգայութեանց իմոց։ Եկեսցէ հասցէ յայսմ հետէ 'ի վերայ իմ զօրութիւն աստուածային արեանդ՝ առատապէս հեղլոյ, առ 'ի տալ ինձ կորով ուժգին։ — Մեծ ինչ արդարև խնդրեմ 'ի քէն. այլ խնդրեմ զայն յԱստուծոյդ՝ որ արար ինձ մեծամեծս ես և անսահմանս։ Եւ արդ, մի՛ զլանար յինէն՝ զոր այդքան առատաձեռն վասն իմ շահեցար։ Եւ ես այսուհետև յանձն արարեալ զիս գլխովին յաստուածային ձեռս քո, փափագեմ յերջանկութիւն մեծ համարել զչարչարանս, որք հորդեն ինձ Ճանապարհ նմանող լինելոյ քեզ, և սիրելոյ զքեզ առաւել քան զառաւել, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Բ.

Առ Յիսուս կապեալ և ճաղկեալ :

Փրկիչ իմ ամենասիրելի, զի՞նչ էին օրէնքդ ո֊րով վարին ընդ քեզ. անպարտ հրապարակէն զքեզ. և գանակոծ առնէն իբրև զմեղապարտ: — Օրէնք սիրոյ քո էին այդ, որ ոչն կամի այլ օրէնս՝ բայց զօգուտն իմ: — Ինձ 'ի դէպ էին վէրքդ այդոքիկ, ինձ հարուածք և հերձուածք մարմնոյդ. և ես շրջիմ ազատ՝ Թէպէտ և յանցա֊ւոր, մինչդեռ տարափք հարուածոց տեղան 'ի վե֊րայ Թիկանց քոց աստուածայնոց: Այն զի եԹէ երբէք առ ուղղել զիս կամիցիս փոքր մի խրատել զանձին, կամ առ 'ի լուսաւորել զմիտս իմ՝ հար֊կանել սլաքօք լուսոյ քո. եԹէ կամիցիս ներգոր֊ծել յիս զբարերարդ՝ զորս խառնեմ չարեօք իմովք, ահա նոյնհետայն վեր 'ի վայր առնեմ զամենայն՝ տրտնջանօք, անդէն և անդ յերկիր կործանիմ, և համարիմ 'ի սպառ բարձի Թողի եղեալ զանձն իմ. և չառնում 'ի միտ՝ զի անձնասիրուԹիւն խաբէ զիս, ընդ պատրուակաւ մեծագունի բա֊րւոյ՝ խնդրելով զիւր և հանապազ փախչելով 'ի խաչէ:

Եւ արդ զի՞նչ կարող իցեմ ասել, բայց եԹէ խոստովանել առաջի քո, Տէր, զԹշուառու֊Թիւն անձին իմոյ և հայցել 'ի քէն դեղ դար֊մանոյ: Քանզի յամենայնի նման եմ ես ինձ, և այնպէս վարիմ՝ որպիսի եմս, արարած եղկելի, վարակեալ տկարուԹեամբ և խաւարաւ: Վասն որոյ քեզ վայել է, ով որ զօրուԹիւնդ ես հո֊

գույ իմոյ, գործել ըստ որում եսդ՝ Աստուած ամենակալ. որում հնար է միով եւեթ ակնարկութեամբ փոփոխել զսիրտս վհատեալ՝ ՚ի սիրտ հաճոյ կամաց քոց։ Շիթ մի փոքրիկ աստուածային արեանդ՝ որ առատապէս հեղանի այդր, և առ ոտն կոխի յայնցանէ որոց վասն հեղեալ լինի, շիթ մի և եթ նորին՝ կարող է տալ ինձ հաստատութիւն կամաց, որում փափագեմս յոյժ. և առ այս՝ տամ զիս քեզ բոլորովին։ Աղէ՛, կապեա զիս ընդ սեանդ այդմիկ անշարժապէս. հա՛ր և խոշտանգեա անխնայ. մի հայիր յըմբռստութիւն զգայականիս, այլ հայեաց միայն յօգուտ հոգւոյս և ՚ի փառս քո, որ յաղթողն երևի ՚ի տկարութեանս իմում։

Այլ ես աղօթել իսկ ոչ գիտեմ՝ որպէս արժանն է. խօսեսցին ընդ իմ սրբազան խոցուածք վիրացդ այդոցիկ, որ յոտից մինչև ցգլուխդ ծածկեն զքեզ. ահա նոքին ժաեն վասն իմ շնորհս, որոց միշտ անարժան գտայց՝ մինչև թէ ոչ նոքին արասցեն զիս արժանի։

Գ.

Առ Յիսուս փշազգած :

Երկիր պագանեմ քեզ, գլո՛ւխ աստուածային, փշովք պսակեալ վասն իմ. գլուխ՝ զոր չեն արժանի պսակել պարք աստեղաց։ Երկիր պագանեմ ձեզ, աչք լուսապատարք, զուարթացուցիչք արքայութեան, և արդ վասն իմ քօղարկեալք և արտասուալիցք։ Երկիր պագանեմ աստուածափայլ դիմացդ, յորոյ տեսու֊

թենէ ոչ յագենայն հոյլք հրեշտակաց, և այժմիկ առ ոտս իմ մատուցեալ կան Թքալիցք, կապուտակեալք և անշքացեալք: Ո՛վ հայելի անարատ, վասն իմ փոխեալ 'ի հայելի չարչարանաց և արհամարհանաց. զիա՞րդ իցէ ինձ հնար՝ թէ 'ի հայելս իմ ընդ քեզ մտադիր ակամբ՝ ոչ ծանեայց զկրբութիւն իմ, որ ծանրացեալ գոլով անթիւ մեղօք՝ հրաժարեմ տակաւին և կաթիլ մի ըմպել 'ի բաժակէ անտի դառնութեան, զոր դու՝ կեցուցիչդ հոգւոյ իմոյ՝ կամիս քամել մինչև ցյատակ: Ո՞չ ես ինքն եմ մեղաւորն՝ որ յանցեայ, և բազում անգամ և ծանուննս. և զիա՞րդ գանդաղեմս հատուցանել զէթ մասն ինչ փոքրիկ յանհամար պարտուց անտի՝ ընդ որովք անկայ՝ մեղանչելովս: Կարեմ ես անդրէն միւսանգամ և հեշտեաւ դառնալ 'ի նոյն մեղս. և զիա՞րդ անզգայեալ յիմարիմ՝ ատել զվիշտսն՝ որք պահպանենն զիս յանդրէն 'ի նոյնս դառնալոյ, հանդոյն փշոյ փակելով ինձ զճանապարհս դահավիժութեանց:

Ո՛վ Տէր, աստանօր ընդ մոլեգնելոյ ումեք է գործ քո, որ ոչն ճանաչէ ոչ զախտ իւր և ոչ զդեղ նորին. և վասն այնորիկ որքան ընդդէմ դառնայ եղկելին՝ այնքան առաւել լե՛ր նմա կարեկից. և որչափ հրաժարէ նա 'ի դեղոց՝ այնչափ ևս առաւել բռնադատեա զնա ընդունել զնոյնս: Սէրն անսահման որ պարտաւորեաց ըզքեզ չարչարել մեծապէս վասն իմ, նոյն պարտաւորեսցէ արդ ներել ինձ: Տկարութիւնք իմ շարժեսցեն զքեզ 'ի գութ, և մի 'ի բարկութիւն: Դու գիտես առաւել քան զիս՝ թէ որպիսի ինչ իցեմ ես. տեսանես զի կարող եմ ես ինքնին անկանել, այլ կանգնել՝ ոչ. կարեմ անհամբեր լինել, համբերել ոչ կարեմ: Վասն այսորիկ, ո՛վ ապաւէն իմ և զօրաւիգն ճշմարիտ,

օգնեա ինձ և զօրացո և արա զի եղեց քեզ նմա–
նակից։ Չէ պարտ, չէ արժան թէ ընդ փչա–
պաակ գլխով լիցին անդամք փափկակեացք՝ որ–
պիսի եսս եմ։ Ցանկամ այսուհետև փոխել զիս
գլխովին յորմէ եմն՝ յայլ ոմն. և այնպէս փա–
փագեմ կրել չարչարանս՝ որպէս երբեմն տաղտ–
կանայի 'ի չարչարելոյ։ Եւ դու, Տէր, որ բա–
րեգթութեամբ տաս ինձ զյօժարութիւն, տուր
և զկատարումն. որպէս զի նմանող քեզ գոլով
յերկրի 'ի չարչարանս, արժանի եղեց և նմա–
նակցութեան փառացդ՝ անդ 'ի յերկինս՝ յան–
սպառ յաւիտեանսն. ամէն։

Դ.

Առ Յիսուս խաչաքարն։

Ո՛վ երկայնամիտ համբերող Տէր, որպիսի՞ ոք
հրէշ իցեմ ես, այր՝ դժոխոց դատապարտեալ,
և տակաւին տրտնջեմ։ Եթէ սիրտ քո ամենա–
գութ ոչ ունէր զգեմ աստուածային արդա–
րութեանդ, հաստուցանելով փոխան խմոցս
պարտեաց, ո՞ւր արդեօք լինէի ես այժմ, եթէ ոչ
անկեալ թաղեալ 'ի հուր գեհենոյն, 'ի մշտնջե–
նաւոր յուսահատութեան և 'ի յաւերժական
տարամերժութեան յանսահման բարւոյն։ Այլ
զայս ամենայն 'ի մոռացօնս արկեալ՝ անխրաւել
ինձ համարիմ թէ արհամարհանք ինչ ուստէք
հասցեն. և տատրաստ իմն թուի՝ եթէ ձեռն քո
ամենառատ ոչ բաշխիցէ ինձ ձիրս պարգևաց.
կամ թէ ոչ վայելիցեմ անընդհատ յանխռով
խաղաղութեան, յորում և անմեղագոյնք իսկ

անձինք ոչ վայելեն հանապազորդ: Ո՜վ կուրութիւն մտաց. ո՜վ թիւրութիւն սրտի:

Դու, գանձդ անմեղ, յառաջընթաց լինիս վտանգեալ և պարտասեալ՝ ընդ բեռամբ խաչին ծանրացելոյ 'ի մեղաց իմոց, և ես մեղացն գործօղս՝ որպէս թէ չիցեն ինչ իմ՝ հրաժարեմ 'ի գալոյ զհետ քո՝ նաև ամենաթեթև խաչիւ իմով: Ո՜վ լոյս անստեղծ, ծագեալ յաշխարհս առ 'ի լուսաւոր առնել զամենայն մարդ, ներեա խաւարի իմում, և ծագեա լոյս 'ի մթանս: Ո՜ որ ճանաչեսդ զամենայն տառապելութիւնս իմ, բժշկեա զցաւս իմ, վասն մեծի փառաց քոց, քանզի դու միայն ես կարող յամենայնի: Արժան էր ինձ հետամուտ լինել վշտաց և նեղութեանց՝ 'ի հատուցումն պատուոյ աստուածային արդարութեանդ, զոր պահանջէրն 'ի պատժոց իմոց. և եթէ ոչ իշխեմ զհետ նոցին ձգիլ, գոնեա մի եղեց այնքան հեք և վեհերոտ՝ մինչ և 'ի ստուերաց անգամ նոցին զանգիտեալ փախչել: Ահա յանձն առնեմ զիս գլխովին յաստուածային ձեռս քո. մի ևս լիցի ինձ թափել մեկնել անտի, որպէս ցարդ խուսափեցի անարգապէս, և որպէս խիթամն 'ի վատասրտութենէս: Ահաւասիկ յանձն առնեմ քեզ զբանալիս ազատութեան իմոյ. և մեծ քան զամենայն շնորհս գրեմ՝ ընդունել զբաժակն զոր մատուցանելոցես ինձ հանապազօր: Նա քանզի առ 'ի քէն են այս յօժարութիւնք, և դու ինքն ազդես 'ի սիրտ իմ. աղէ, հաստատեա զնոսին անջինջ մինչև 'ի մահ. որպէս զի և յետ մահուան, եթէ յաշխարհի աստ երթեալ իցեմ զհետ քո՝ խաչիւ իմով, ակն կալայց և տեսանել զքեզ յաթոռ փառաց յաղթութեանդ, և ընդ նմին թագաւորել 'ի յաւիտեանս. ամէն:

Ե.

Առ Յիսուս 'ի խաչին:

Զի՞նչ խնդրես 'ի հոգւոյ իմէ, Տէր, 'ի տալ քում թոյլ՝ ընթանալ զքեզ 'ի խաչ՝ 'ի միջի երկուց աւազակաց: Եթէ փրկել զաշխարհս կամիցիս և զիս 'ի փառս վերածել, չիցէ՞ շատ և մի 'ի հառաչանաց քոց: Եւ եթէ չիթ մի աստուածային արեանդ՝ առաւել է քան զգինս բիւրուց աշխարհաց, ընդէ՞ր կամիցիս հեղուլ բովանդակ մինչև ցյետին կաթիլ՝ յայդպիսի երաշխէպս տանջանաց:

Այո, այդպէս մեծացուցեր և առաւել արարեր զչարչարանս քո՝ առ 'ի խրախոյս վեհերոտութեան իմոյ, և առ ուսուցանել, զի եթէ ոչ եղեց քեզ չարչարակից, ոչ լինիցիմ քեզ և թագակից: Ահա Աստուած իմ և վարդապետ, տես քանի՛ ծանր և դառն եղև քեզ տալ ինձ զայս դպրութիւն. և սակայն այսքան ամս գոլով իմ 'ի դպրոցի՝ տակաւին չառնում 'ի միտ: Խոստովանիմ զի դու ես իմ առաջնորդ, և զանգիտեմ զհետ քո գալ: Կոչեմ զքեզ լոյս իմ, ճշմարտութիւն իմ, և ոչ դնեմ 'ի մտի ընդունել զվարդապետութիւն քո: Հաւատամ՝ զի բաց 'ի քէն չիք ինձ փրկութիւն, և սակայն թուիմ ոչ աներկեան լինել 'ի քեզ, կամ թէ զանգիտեմ աւանդել զիս իսպառ 'ի ձեռս քո: Յայլոց՝ եթէ տեսանիցեմ նեղութիւնս՝ մեծ պարգևս համարիմ շնորհեալ նոցա. իսկ եթէ պարգևիցես ինձ զնոյնս՝ թիւր ինչ պատճառանս պատճառիմ առ

'ի չհաճել: Կամէի՝ զի սրբութիւն և ոչ մի դըժուարութիւն ունէր. կամէի՝ զի առաքինութիւն մի և մի իւիք խափան լինէր իմոցս հաճոյից: — Ո՜վ խորք թշուառութեան իմոյ. զինչ եղիցի եղկելւոյս սրտի: Ո՜վ խորք խաւարի մտացս:

Այլ արդ, ո՛ն առեալ դիմեմ առ քեզ՝ որ խորք ես ողորմութեանց և ամենայն բարութեանց: Հաստատեա յիս սիրտ սուրբ, զի եղիցի ինձ իբրև հայելի, յանդիման առնել ինձ անայլայլակ զճշմարտութիւն զոր ուսուցանես ինձ: Նորոգեա յիս զհոգի ըստ քումդ հոգւոյ, զի յօժարութեամբ ընկալայց զչարչարանսն՝ որպէս բարիս մեծամեծս: Այամ շնորհաց ակն ունիմ 'ի քէն, Տէր ամենագութ, որ այնքան ներող ես տկարութեանս իմոյ, որքան կարող 'ի փրկել զիս անտի: Գիտեմ, Տէր, զի չեմ այդմ արժանի, այլ և ոչ այնչափ անարժան քումդ օգնականութեան, որչափ դու կարող 'ի տալ ինձ զնոյն. վասն այնորիկ վստահութեամբ ապաւինիմ 'ի քեզ: Եւ քանզի մեծ ես դու, Տէր, յամենայնի, գիտեմ զի ոչ իւիք պակաս գտցիս և 'ի ծառայէ քումմէ տառապելոյ, որ կարդայ առ քեզ, և խնդրէ զօրութիւն տկարութեան իւրոյ. առ 'ի լինել արժանի պսակին՝ զոր պատրաստեցեր 'ի յաւիտենից՝ ընտրելոց քոց 'ի ձեռն համբերատար նեղութեանց:

Ջ.

Առ Յիսուս չքնաղ 'ի խաչին :

Ո՜վ Ճշմարիտ մխիթարիչ վշտացելոց, ո՜վ յոյս անձին իմոյ և միակ բարի, զի՞նչ լինէր հիքոյս՝ եթէ համբերութիւն քո չէր անսպառ. զիա՞րդ բաւէիր տանել ընդ երկար իմոյս հանդոյն անարգ սրտի, որ ոչ գիտէ և քայլ մի ոտին փոխել, թէպէտ և երթաս դու առաջի՛ ճանապարհ հորդելով նմա: Եթէ 'ի փափկութիւնս վարեալ էր քո զկեանս, ունէի արդեօք առուեր ինչ բաղբաղանաց արդարացուցանելոյ զանձն իմ 'ի փախչելս և 'ի խորշել յամենայն վշտաց. այլ քանզի և զնոսին իսկ զվիշտան ազնուացուցեր դու օրինակաւ քով, և քաղցրացուցեր յոյժ զնոյնս, և 'ի վերայ այսոցիկ աւանդեցեր իսկ զհոգիդ լքեալ թողեալ յերկնից և յերկրէ, զի՞նչ այսուհետև կարասցէ զիս արդարացուցանել 'ի փախչել իմում արագարագ 'ի վշտաց և 'ի չարչարանաց:

Ոչ իմանամ տակաւին զի արհամարհեմ զգերազանց շնորհ փրկութեան իմոյ՝ յորժամ 'ի խնդիր լինիմ այնոցիկ՝ յորոց դու հանապազ խոյս ետուր. այսինքն են հեշտութիւնքն, և խոյս տամ յայնցանէ՝ զորոց դու հանապազ զհետ կրթեցար, որ են չարչարանքն: Ի մխիթարել քում զիս՝ քո լինիմ բոլորովիմբ. և 'ի յօժարելն իմ կերպարանակից քեզ լինել՝ խոստանամ քեզ մեծամեծս, և կարծեմ բովանդակ ամենևին յանձն լինել յաստուածային ձեռս

քո։ Այլ յորժամ 'ի փորձ մտանիցիս, աւա՛ղ, ոչ ևս եմ նոյն. իսկ և իսկ համարիմ զիս բարձի Թողի եղեալ առ 'ի քէն. արդարացի համարիմ անձնասիրութեան զամենայն պատճառանս իւր. և մեծ ինչ իցէ եթէ և ոչ տրտնջիցեմ զատաւապանաց իմոց։ Ո՜վ կուրութեանս։ Ա՞յս իցէ զհետն երթալ Քրիստոսի՝ որ կախեալ զփայտէ մեռանի վասն իմ, լքեալ և Թողեալ 'ի Հօրէ իւրմէ։ Ա՞յս իցէ խնդրել իմ գտանել զՓրկիչն իմ, մինչ հանապազ խնդրեմ զնա հեռի 'ի խաչէ՝ ուր նայն բազմի։

Քեզ միայնոյ անկ է, Տէր իմ և լոյս յաւիտենական, ոչ միայն լուսաւորել զիս, այլ և վառեալ բորբոքել։ Եթէ դու ինքնին ձգիցես զիս զհետ քո, ո՜հ, զիա՛րդ մատդիւր ընԹացայց ուր և վարիցես. իսկ եթէ Թողուս զիս 'ի տկարութեան իմում, և ոչ քայլ մի ոտին կարացից փոխել։ Այս գործ է՝ զոր վայել է գործել աստուածային շնորհաց քոց. փոխել զիս գլխովին յայր այլ։ Ոչ խնդրեմ 'ի քէն մխիթարութիւնս, ոչ խնդրեմ շահս օգտի. այլ սիրտ խնդրեմ այնպէս համախոհ կամացդ աստուածայնոց, մինչև ընդունել զդառնն փոխանակ քաղցու, և սիրել զկալ մնալն անմխիթար, զբարձի Թողի լինելն յամենայնի՝ որ հաճոյ իցէ փառաց քոց։

Ո՜վ, քանի՜ օրհնութիւնս մատուցեն քեզ հրեշտակք՝ եթէ լուիցես աղաչանաց այսոցիկ։ Ո՜վ, քանի՜ մեծ լինիցին այս արդիւնք արեան քո սրբոյ։ Ո՜վ, քանի՜ փառք իցեն ամենակարող բազկի քում, կակղացուցանել զկամս իմ այնքան՝ մինչև զգէմ ունել ամենայն բաղխմանց։ Այսմ շնորհաց ակն ունիմ 'ի գԹութենէ բարութեան քո, և այժմէն սկիզբն առնեմ գոհութիւն քեզ մատուցանել, յուսով հանապազորդելոյ զնոյն ընդ ամենայն յաւիտեանս. ամէն։

Է.

Առ Տիրամայրն առ ոտս խաչին :

Ո՜վ Թագուհի մարտիրոսաց, մայր սուրբ սիրոյ, եթէ առաւել քան զամենայն արարածս սիրեցեր դու զԱստուած քո, անհնար էր թէ և ոչ առաւել քան զամենայն արարած չարչարէիր վասն սիրոյ նորին: Տեսանեմ զքեզ առ ոտս Խաչին՝ ընկղմեալ 'ի ծովս ցաւոց հաւասարս սիրոյ քում. այլ և տեսանեմ զքեզ ծարաւի առաւել ևս չարչարելոյ, իբրև ամենահաւատարիմ ընկեր չարչարանաց Աստուածորդւոյդ: Այսու փորձիւ ցուցանես առ Տէր զմեծութիւն սիրոյդ, և այսու աճեցուցեալ սնուցանես ևս քան զևս զնոյն: Այլ սոքին իսկ ցոյցք սիրոյդ՝ են ինձ եղկելւոյս մեծ կշտամբանք, որ ամենևիմբ օտարացեալ 'ի նմանութենէ սիրոյդ, կամիմ սիրել առանց ինչ վշտակրելոյ. և համարիմ սիրող լինել Աստուածորդւոյդ՝ հանապազ հեռի դեգերելով 'ի խաչէն: Այնքան կոյր եմ, զի չիմանամ իսկ թէ անձնասիրութիւն ևեթ է այս, և ոչ աստուածսիրութիւն. այս է կենդանի լինել ըստ հոգւոյ հնոյն Ադամայ, զհետ երթալ թիւր յօժարութեանց, և ոչ զկնի վարդապետութեան Փրկչին:

Իսկ ո՞վ իցէ բաւական ընդունել վասն իմ զմեծ զայս շնորհ, զլուսաւորութիւն մտացս կուրացելոց, բայց եթէ դու, ո՜վ Մայր գթութեանց, առ որոյ ոտս տեսանեմ բացեալ աղբեան մեծի ողորմութեան: Կարող ես դու ընդ-

ունել ինձ զմեծ զայս շնորհ բարեաց. աղէ, թոյլ տուր ինձ թախանձել զքեզ, և ասել. Քեզ վայել է ընդունել և շնորհել ինձ զայդ. քեզ վայելէն մեծապէս արդիւնք և փառք խաչին. և քանզի առ ոտս խաչին ընծայեցար մեզ 'ի մայր, փոյթ մեծ է քեզ նմանող լինել քեզ ինքեան և Որդւոյ քում Յիսուսի: Վասն որոյ անկանիմ առաջի քո խոնարհեալ հոգւով մինչև յերկիր. և աղաչեմ զքեզ, ոչ բառնալ յինէն զնեղութիւնս, այլ ընդարձակել զնոսին մեծապէս 'ի սրտի իմում. որպէս զի որչափ խորշեցայ և փախեայ 'ի նոցանէ, այնչափ ըղձակաթ եղէց նոցին յայսմ հետէ: Այս գործ արժանավայել է քեզ գործելոյ. զի յորժամ տեսից զանձն իմ լքեալ թողեալ յերկրէ և յերկնից, յորժամ տեսից յանձին իմում միայն զհիքութիւն և զյօժարութիւն առ չարն, և զդժկամակութիւն առ առաքինութիւնս, յայնժամ մի ես վհատեցայց. այլ կացից անդողդողդ իբրև զքեզ 'ի լերին Գողգոթայ, չարչարելով և ոչ դադարելով 'ի սիրելոյ: Երանի՜ ինձ, եթէ արասցես զայս շնորհ. չեմ արդարև այդմ արժանի, այլ գովլին իսկ մեծացին փառք գթութեանց քոց: Մի յարգեանց իմոց չափեսցի ապաւինութիւնս իմ 'ի քեզ, այլ 'ի քոյոյդ արդեանց և 'ի Փրկչին իմոյ և Աստուծոյ. յայս վստահ լինիմ յուսով, զի ոչ եղէց յամօթ յաւիտեան. ամէն:

Ը.

Յոյս աներկեան 'ի Քրիստոս:

Փրկիչ իմ Յիսուս, աղբիւր սիրոյ, 'ի տեսանել իմում ընդունել զքեզ 'ի խաչափայտի, խոնարհեալ զգլուխ քո առ իս, բազկատարած ընդձեռս, և զոտս քո վիրաւորեալ 'ի հեղուսից, համարձակիմ լի յուսով աղաղակել ըստ սաղմոսերգուին, «Ոչ մեռայց, այլ կեցից յաւիտեան»: Խաչ քո աղբիւր է փրկութեան, արիւն քո պատուական և մահ քոյին ինձ 'ի քաւութիւն. ողջոյն պաշտպանեալ՝ որպէս կարիցեմ մեռանել և ոչ կեալ յաւիտեան: Ո՛վ խաչեալդ Փրկիչ իմ Յիսուս, խաչ և չարչարանք, արիւն քո և մահ՝ են ինձ 'ի գրաւ յաւիտենական փրկութեան աներկբայելի. արիւն քո ինձ 'ի լուացումն, վէրք քո 'ի բժշկութիւն, չարչարանք քո 'ի սփոփումն, խաչ քո 'ի զօրութիւն, և մահ քո նախատալից առաջնորդ 'ի կեանս յաւիտենից: Յիրաւի արդ 'ի չարչարանս քո է ամենայն յոյս իմ, 'ի խաչ քո և 'ի պատուական արիւնդ: Ո՛վ բարեգութ Յիսուս, պատսպարեալ 'ի խաչ քո և յարիւն, և ծածկեալ 'ի վէրս սրտիդ՝ մատչիմ առ Հայր քո երկնաւոր յաղերս համարձակաձայն. Հայր իմ, թո՛ղ ինձ վասն արեան Որդւոյ քո, որ 'ի փրկութիւն ամենայն իսկ աշխարհի առաւելեալն բաւէ: Աստուած ամենայն մխիթարութեանց, լուր աղօթից իմոց և հառաչանաց սրտի իմոյ՝ զոր հեղում առաջի քո. վէրք Որդւոյ քո թախանձեն

վասն իմ անդադար շնորհս 'ի քէն և ողորմութիւն: Հայր բազումողորմ, տուր ինձ յարատեւութիւն 'ի բարին, և շնորհս մինչև 'ի սպառ 'ի ժամու մահուան, վասն նախատական խաչի և դառնակսկիծ մահու Միածնի Որդւոյ քո Յիսուսի, որում չէ քեզ մարթ զլանալ ինչ:

Վասն որոյ 'ի խաչ Փրկչին իմոյ դիմեմ, և ողջագուրեմ զայն անթողլի. արկանեմ ընդ նովաւ զմեղս իմ, պատսպարիմ նովաւ ընդդէմ ամենայն վտանգաց և ամենայն փորձութեանց մեղաց. նովաւ սփոփիմ, նովաւ զօրանամ 'ի հոգեվարս իմ, և նովաւ վանեմ զյարձակմունս դժոխոց: Ի խաչ ևեթ, 'ի մահ և յարիւն Տեառն իմոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի է ամենայն յոյս իմ. և աներկեան ակն ունիմ գտանել նովաւ զթողութիւն մեղաց իմոց, զուղղութիւն վարուց, մահ քրիստոնէական, և զերանաւէտ կեանս յաւիտենից. ամէն:

Թ.

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՄԵԾԻ ԱՒՈՒՐ ՈՒՐԲԱԹՈՒՆ

Այսօր անճառ լուսոյն ծագումն՝
Ի փրկութեան մեր կատարումն,
Խոնարհի 'ի վերնատունն,
Ի ստուերական տօնից լրումն.
Նախ քան զընթրիսն խորհրդոյ
Սփածաւ զենջակ՝ արկողն լուսոյ.
Եւ ջուր առեալ ծառայաբար
Զոտս լուանայր զաշակերտացն:

Բանին Հօր՝ փառաց լուսոյ՝
Պետրոս մերձիլ յոտս ոչ ներէր,
Այնըմ ձեռաց՝ որոյ են գործք
Երկնից երկինք և երկրաւորք.
Որով կուրաց աչըք բացան,
Խուլք և համերք արձակեցան.
Որ վերածեաց զինքն 'ի ծովին,
Սաստեաց ալեացն և լռեցին:
Գըլխոյն ընտրեալ հօտին փոքու,
Սատէր զխորհուրդն ոչ գիտելոյ.
Որով դառնայր և հնազանդէր,
Զոտս և ըզգլուխս մաքրել մաղթէր.
Գըլխոյս ասէ չէ ինչ պիտոյ
Լուացումըն ջրոյ, զի լուացեալ է.
Ոտիցըդ պէտք են մաքրութեան,
Յօդիլ 'ի գլուխըս սըրբութեամբ:
Դասուց իւրոց աշակերտաց
Զոր նախ բանիւ վարդապետեաց,
Այսօր գործով ըզծայրագոյնն
Եցոյց յինքեան զխոնարհութիւն.
Սպասաւորեալ հոգեղինաց
Այն որ անտեսն է հրեղինաց,
Տարեալ պաշտօն իւր ծառայից,
Այն որ պաշտին 'ի սրովբէից:
Եթէ տէրս, ասէ, էից
Եւ վարդապետըս բոլորից,
Զաշակերտացդ և զծառայից
Զոտըս լուացի 'ի հնոյ աղտից,
Միմեանց և դուք համաբնութեամբ
Ցուցէք ըզնոյն խոնարհութիւն,
Բարձրացելոյն 'ի կործանումն
Եւ անկելոյ բնութեանց կանգնումն:
Զոր մաքրեցեր յաւազանին
Մաքուր ձեռօք զոտըս նոցին,
Եւ ուսուցեր խոնարհութեամբ

Յաղթող լինել չար հըպարտին.
Եւ զիմ լըւա զոխըմըն մեղաց
Ապաշխանօք սըրբոյ գըդին.
Եւ ըզգընացս ուղղեա զոտին՝
Խոնարհութեամբ ելիւք յերկինս:
Ելից զօրէնըն Մովսէսի
Զոր խօսեցաւ 'ի Սինայի.
Եկեր ըզզատն օրինակին
Եւ ըզբաղարջն ընդ եղեգին.
Ըզհինն 'ի նորըս փոխելով
Զըստուերըն 'ի լոյս ճըշմարտելով.
Փոխան զառինն ինքըն գոլով
Գառն Աստուծոյ նըւիրելով:
Ընդ բաղարջին հաց անխըմոր
Ետ ըզմարմին իւր զերկնաւոր,
Ըզկուսածինն անսերմնաւոր
Զանապականն և զհոգեւոր.
Ընդ ոչխարին արեան ուխտին՝
Ետ մեզ զարիւն իւր ուխտ կըրկին,
Եւ եղեգան զաւանդունին՝
Փոխան ըզվարս աստուածային:
Թագաւորն արարածոց
Զհայրըն կենաց եւ քաղցելոց,
Եւ ըզբաժակն ուրախարար՝
Արք յԱդամայ տըրտմեցելոց.
Այս նոր ուխտ է իմոյ արեան,
Փոխան հընոյ ուխտին արեանց.
Զոր յիշատակ իմ առնիցէք
Մինչև եկից ես միւսանգամ:
Ժողովեալքս՝ 'ի քէն հայցեմք
Ընդ ժողովեալ վերնատանին,
Որ զկենարարըդ քո մարմին
Բաշխեալ ետուր ընդ բաժակին.
Շնորհեա և մեզ, Տէր, ընդ նոսին
Հաղորդ լինել քում սեղանին.

Կենաց հացիդ յոր փափագիմք
Եւ ըմպելւոյդ ում ծարաւիմք ։
Ի յընտրելոց աշակերտացն
Յուդաս մեկնեալ 'ի սուրբ դասանց,
Զբարձող մեղաց գդառն Աստուծոյ
Մատնէր 'ի մահ ընդ արծաթոյ.
Ի յընթրիսըն հոգեւոր
Մերձի ժըպիրհն և նենգաւորն,
Ուտելով ընդ վարդապետըն
Յաճախէ զխաբէութիւն ։
Լոյսըն խօսէր աղերսալի
Խաւարելոյն վասըն դարձի.
Մի ոմն 'ի ձէնջ, ասէ, եղբարք,
Զիս մատնելոց է առ 'ի մահ.
Պետրոս լըւեալ զայն՝ զարհուրէր,
Եւ ակնարկէր առ Յովհաննէս,
Հարցանել՝ թէ ո՞վ իցէ
Դաւաճանող վարդապետին ։
Խնամով սիրոյն յիւր սիրելեացն
Ըզօրըրտմութիւնըն փարատեաց.
Թացեալ պատառ տայ Յուդայի
Նըշաւակեալ զդողըն մատնիչ.
Զոր առեալ և մերկացաւ
Յաստուածային Հոգւոյն շնորհաց.
Մատնեցաւ նախաչարին
Ընդ մատնութեան վարդապետին ։
Ծայրագոյն լուսոյն զըրկեալ
Խաւարասէրն արտաքս ելեալ.
Տէրըն յայտնէր լոյս եղելոցն
Ըզգայթակղին 'ի գիշերի.
Պետրոս խօսէր խրախուսելի
Եւ կըշտամբիւր հաւախօսի ։
Զիւրն յաշխարհէ զփոխին ասէր
Եւ ըզգալուստ Հոգւոյն պատմէր ։
Կեդրոնեան յայնկոյս ձորոյ

Ի վերնատունն եւ խորհրդոց ,
Եմուտ պարտէզ ընդ պարտիզի
Եմոյծ զԱդամ յԱդին դրախտին .
Մուծցես և զմեզ , Տէր , ընդ նըմին ,
Ուստի հաներ նախ զառաջինն .
Զի ժառանգել ըզհայրենին
Արժանացուք մեք վերըստին :

Հոգայր ըզկրիցըն տըրտմաբար
Երիւքն եղեալ առանձնաբար .
Փըրկել զաշխարհս հոգւս յօժար
Բայց է բնութիւն մարմնոյս տըկար .
Ոչ ունի ուժեղ և զօրաւոր
Եւ ունի անզօր վըտանգաւոր .
Այլ մի և նոյն զոլ միաւոր ,
Կըրէր ըզկիրսըն կամաւոր :

Զայնիւ մաղթէր աղօթական
Վասն իմ առ Հայր իւր էական ,
Ծունըր դընէր խոնարհական
Որում կըրկնի ծունր ամենայն .
Եթէ փըրկիլ մարդկան հնար է
Առանց մահու իմ՝ որ գրեալ է ,
Բաժակ մահուս յինէն անցցէ .
Ոչ իմ կամաւ՝ այլ քոյդ եղցէ :

Պօղեալ յերկիւղ քըրտանց հոսման
Որոնաձև կայլակ վիժման ,
Ի զօրանալ հրեշտակ մերձեալ
Զօրինակն գիրըն լըցեալ .
Զի կատարեալ էառ զընութիւն
Աստուածըն Բան ըզմարդկութեան .
Պարտ էր զերկիւղ և զտըրտմութիւն
Ցիւրումըն կրել անօրէնութիւն :

Ճառագայթ փառաց Էին
Որ ըստ բնութեանըս մարդկային
Տագնապեցար 'ի գիշերին ,
Աղօթեցեր առ Հայր յերկին .

Ծագեա 'ի մեզ զլոյսդ երկնային
Եւ փարատեա զերկիւղ չարին.
Մասունք հոգւոց մեր և մարմին
Ցերկիւղ քո սուրբ բեւեռեսցին:
Մերձեալ Յուդաս որ մատնելոց՝
Հանդերձ դասուն փարիսեցւոց,
Անկան նըման սատորանկելոցն
Որք յաւիտեան չեն կանգնելոց.
Յուդաս նենգաւ համբուրելով
Առիթ մահու նըշան տալով,
Փոխան սիրոյ զնա մատնելով
Զար ընդ բարւոյ վըճարելով:
Յայնժամ առ գութ սիրոյն Պետրոս՝
Ըզծառային անուն Մաղքոս,
Եհատ սուսերբ զականջն աջոյ
Որ ոչ լըւաւ տեառըն խըրոյ.
Իսկ Տէրըն մեր արագապէս
Յունկըն մերձեալ բըժըշկապէս,
Առողջացոյց աստուածապէս,
Զոր ոչ տեսին կուրացն հանդէս:
Նոր հօտին փոքու ցըրուեալ,
Քանզի զհովիւըն քաջ հարեալ,
Պետրոս միայն ըզհետ երթեալ.
Ի յաղջկանէ վիմին շարժեալ.
Նըշանակեալ հաւըն խօսէր.
Առ 'ի Պետրոս Տէրն ակնարկէր.
Զբանըն յիշէր, դառն արտասուէր,
Ի գլորմանէն դարձեալ կանգնէր:
Շնորհեալ վիմին եկեղեցւոյ
Զոր պահեցեր 'ի հոսելոյ,
Եւ կանգնեցեր 'ի գլորելոյ
Վասըն սըրտին արտասուելոյ.
Կանգնեա և զիս, Տէր, ընդ նըմին
Ի գլորմանէ սայթաքողին,
Տալով աչացս յորդ արտասուս
Եւ ջուր նըման ծովու՝ գըլխոյս:

Ո՛վ, կամաւ զանկապելին
Կապեալ ըղձեաւ արձակողին,
Ի յապարանսըն տանէլին
Կայիափայ և Աննայլին.
Ծառայն զերեսն այն ապտակէր
Յորմէ սրովբէն թեւաքօղէր,
Թուք արձակեալ պիղծ բերանով
Յայն որ կուրին լոյս ծագեաց թքով։
Զար կապանաց մարդկան լուծիչ
Որ կապեցար ընդ կապելոյն,
Զիս արձակեա յինքնակապես
Մեղաց կապից գրժոխայնոյն.
Որ ընդ մեղօք պարտաւորին
Կացեր անմեղդ 'ի յատենին.
Յորժամ փառօք գաս հայրենին՝
Մի դատեսցես զիս ընդ նոսին։
Պատկառանօք հինն Ադամայ
Որ ձաղեցար վասըն նորա,
Զընջեա զամօթ մեղաց լըրբին
Որով զերեսս իմ ծածկեցին.
Որ ներեցեր չար ծառային
Ածել ձեռօք քեզ ապտակին,
Հա՛ր ուժգնակի զդեմըս չարին
Որպէս և զիս եհար ուժգին։
Զահըն լուսոյ յառաւօտին
Ի յուրբաթու հընոյ զատկին,
Կայր առաջի դատաւորին
Ծառայն նըստէր 'ի յատենին.
Ի հարցանել Պիղատոսի
Տէրն ոչ տանէր պատասխանի.
Զի կանխասաց գիրըն լըցցի,
Եղէ ես մարդ որ ոչ խօսի։
Ռամկական զաւք զինուորացն
Արկին հանդերձ նախատանաց,
Այնմ որոյ զգեստն է լոյս փառաց

Իբրև զօթոց զինքեամբ արկած․
Ի ծունր իջեալ կատակէին
Զգլուխն եղեգամբ հարկանէին․
Պըսակ 'ի փշոց բոլորէին
Ըզփուշ մեղացըն բարձողին։
Սոսկալին սերովբէից
Բառնայր ինքեամբ ըզփայտ խաչին,
Մինչ 'ի տեղի Գողգոթային,
Յորում եդեալ մարդն առաջին։
Ետուն ըմպել գինի զմըռսեալ
Եւ կերակուր լեղեաւ խառնեալ,
Որով զպըտղոյն դառըն Ճաշակ՝
Փոխեաց մեզ քաղցր և ախորժակ։
Վերնականքըն զարհուրեալ
Տեսին ըզՏէրըն մերկացեալ,
Եւ ըզհանդերձսըն բաժանեալ,
Պատմուճանին վիճակ արկեալ։
Ըզձեռսն և զոտսըն ծակեցին,
Ըստ յայտնապէս դաւթեան ձայնին․
Ընդ փայտ խաչին բևեռեցին
Զմատուռնան որ գրեաց 'ի տախտակին։
Տարածեալ ձեռք ընդ ձեռաց
Ոտք ընդ ոտից ընթանալեաց,
Փայտ ընդ փայտի դառըն պըտղոյ
Կեանք ընդ մահու փոխարկելով․
Ի մէջ երկուց անօրինաց
Կայր մերկացեալ տուողն օրինաց,
Զոր ոչ տեսին ազգըն կուրաց
Բաց 'ի միոյն յաւազակաց։
Րոպէից արեգականն
Ըզտիւն արար գիշերանման,
Զըստուերըն քող արկ մերկութեան
Զի մի տեսցէ ակն անարժան․
Ի միջօրեայն նըսեմացաւ,
Յորժամ Ադամ մեղօք մեռաւ․

Ի յիններորդն 'ի լոյս դարձաւ,
Յորժամ մահուամբ մահըն լուծաւ:
Յօղէր արտօսըր ցաւագին
Մայր Տեառն որ կայր մերձ առ խաչին,
Յորժամ լըսէր ըղձարաւին
Բարբառելոյ իւր Միածնին:
Ետուն քացախ խառնեալ լեղի
Այնմ որ բըղխեաց գետ յԱդենի,
Եւ 'ի վիմէն վըտակ բարի
Արբոյց տոհմին դառնացողի:
Խուծեալ յերրորդ ժամու օձին
Զմիտըս նախնոյ մօրն Եւային,
Ի վեցն անկեալ մարդն առաջին
Հաւանական բանիւ նորին.
Ի սոյն ժամու Տէրն 'ի խաչին,
Զի քաւեսցէ զմեղըս նոցին.
Եւ յորժամ եւ Ադամըն հին,
Եդ զաւազակն 'ի մէջ դրախտին:
Փարելի բարբառ ընդ իմ
Էլի էլի առ Հայր գոչէր,
Զհոգին՝ կամաւ՝ Հօր աւանդէր,
Զհոգիս մարդկան նոյն ընծայէր.
Երկիր հիմամբք սասանեցաւ,
Եւ վարագոյրն ընդ մէջ հերձաւ.
Վէմք 'ի յինքեանց պատառեցան,
Եւ գերեզմանք մահու բացան:
Քարոզի 'ի սքանչելեացս
Աստուած մարմնով վասն իմ խաչեալ,
Մերով բնութեամբըս մեռանի,
Աստուած անմահ խոստովանի.
Կըրկնավըտակ կողին աղբերբք
Եկեղեցի իւր հաստատի.
Ջըրովըն մաքրէ, զարիւնն ըմպէ.
Զորդի ընդ Հօր փառաւորէ:

Նորոգող տիեզերաց,
Որ զգեցուցեր մեզ լոյս փառաց,
Արկար ըզքեւ 'ի զինուորաց
Քղամիդ կարմիր նախատանաց.
Մերկեա յինէն ըզքուրձ մեղաց,
Ըզարդարմագինն արեամբ ներկած.
Եւ ըզգեցո զուրախալին
Ըզպատմուճանն իմ զառաջին:
Երկնաւոր թագաւորիդ
Ի ծունր իջեալ՝ խաղ առնէին.
Ծածկեալ ըզգլուխըդ կռփէին,
Եւ եղեգամբ հարկանէին.
Եւ զիմ անկեալ մինչ 'ի գետին
Ի հնազանդել կամաց չարին,
Մի՛ թողուցուս խաղալ սովին,
Այլ կանգնեսցես զիս վերըստին:
Քամեալ բոլորըդ քո մարմին
Յետ վըճռոյ դատաւորին,
Սաստիկ էառ զհարուած գանին
Վասըն գանից նախաստեղծին.
Զիս որ յոտից մինչեւ ցըգլուխ
Յաւօք նեղիմ անհընարին,
Առողջացո դարձեալ կըրկին
Որպէս շնորհօք յաւազանին:
Սըրբափայլ պըճնեալ զորդուն
Զոր զգեցուցեր Ահարոնին,
Փոխան պըսակ 'ի փշոց եգին
Մըշակք այգւոյն Իսրայելին.
Ըզփուշ մեղաց հանցես յինէն
Զոր յիս եհար իմ թըշնամին.
Եւ ողջացո զխայթուած վիրին,
Զի սպիք մեղացըն ջընջեսցին:
Ետուն ըմպել քեզ ըզլեղին
Եւ ըզքացախն 'ի ծարաւին,
Արբեր կամաւ զի քաղցրասցին

Ճաշակք պըղպըղըն դառնագունին.
Ըզգաստութիւն թունաւորին
Զոր 'ի մասունս հոգւոյս արկին,
Հերքեա 'ի բաց հանդերձ ստվին,
Եւ քաղցրասցի սէր քո 'ի սմին:
  Սանըննեալ ծառոյ մահաբերին
Այնմ որ բուսաւ 'ի մէջ դրախտին,
Փոխան բարձեր ըզփայտ խաչին,
Ի Գողգոթայ հաներ տեղին.
Զիմ առ 'ի մեղս անկեալ զոգի
Եւ ծանրագոյն բարձող բեռին,
Բարձ 'ի յուսոյդ՝ ըստ ոչխարին,
Հան 'ի յերկինս յուխտեալ տեղին:
  Ի յուրբաթու ժամ երրորդին
Բեւեռեցար Տէրդ 'ի խաչին.
Լուծեր զկապանս նախատեղծին,
Եւ կապեցեր ըզթըշնամին.
Զիս ամրացո ընդ հովանեաւ
Կենդանարար քո նըշանին.
Եւ 'ի ծագելն յարեւելից
Լուսաւորեա լուսով նորին:
  Երանեալ աւազակին
Բացեր ըզդուռն Ադին դրախտին.
Ըստ հաւատոյ սըրտի նորին
Կատարեցեր ըզխընդրելին:
Տուր և ինձ, Տէր, ընդ նըմին
Լսել ըզնոյն պատասխանին.
Այսօր ընդ իս իցես յԱդին,
Ի հայրենիս քո առաջին:
  Բարբառելով զէլի էլին՝
Հիմունք երկրի տատանէին,
Եւ վարագոյր հին օրինին
Վերուստ 'ի վայր պատառէին.
Արդ ընդ վիմացն որ շարժէին
Շարժեա զանշարժ սիրտս 'ի բարին.

Ընդ պատուել վարագուրին
Զիմ պատառեա ըզգիր պարտին ։
Արեգական լոյս քօղարկեալ
Խաւարանայր միջօրէին.
Եւ գերեզմանըք բանային ,
Մարմինք սըրբոցըն յառնէին.
Ընդ խաւարել լուսաւորացն՝
Մաքրեա յինէն զգործ խաւարին.
Ընդ մեռելոցն որք յառնէին՝
Կանգնեա զմեղօք մեռեալ հոգիս ։
Նոր սիրոյ պատուիրանին
Գործով լըցող եղեր բանին ,
Աղօթելով առ Հայր յերկինս
Թողուլ ըզմեղս որ 'ի խաչին.
Ինձ որ հոգւովս հաւատացեալ
Երկըրպագեմ քեզ Միածին ,
Թող ըզլուծումըն հրամանին ,
Մի յիշեսցին մեղքն առաջին ։
Սարսեցին սանդարամետք
Ի յաւանդելն առ Հայր զհոգին ,
Որ 'ի գըժոխս իջեր ներքին
Ի բանտ մահու և խաւարին.
Կապեալ զիշխանըն մահածին
Հաներ զհոգիսն որ 'ի բանտին.
Եւ զիս հանցես , Տէր , ընդ նոսին
Բանտէ մեղաց աղջամըղջին ։
Աղբերացն անապական
Որ յետ մահուն անմահարար ,
Բըղխեալ 'ի քէն վըտակ կըրկին
Ի նորոգումըն կողածնին.
Բաց ըզբերան իմ յարբուցումըն
Քո արեան կենարարին.
Լըւա դարձեալ յաւազանին ,
Թէ ոչ շնորհօք այլ արտասուօք ։
Յանմահին մեռանելոյ

Զմեռեալ հոգիս կենդանացո.
Թաղմամբ 'ի նոր գերեզմանի
Զթաղեալս 'ի մեղս վերածեա.
Ի գրի ներքնումն իջանելով
Ի գրոյ մեղաց վերաբերեա.
Ի ստուեր մահու քո բնակելով
Լուսաւորեա և զիս հոգւով:
Սիրտ իմ առ քեզ աղաղակէ
Բանդ որ ընդ Հօր 'ի սկզբանէ,
Որ կամաւոր վասըն մարդկան
Կրեցեր մարմնով զայս ամենայն.
Ինձ լսելի արա ըղձայն
Յարքայութեանըդ քո կոչման,
Ընդ ժողովոց անդ անդրանկացն
Որհնել ըզքեզ միշտ յաւիտեան:

Ժ.

Հառաչանք առ փրկիչն Յիսուս:

Գառն Աստուծոյ, Տէր իմ և Աստուած, Յիսուս Քրիստոս, որ զենար 'ի վերայ խաչին և բարձեր զմեղս աշխարհի: Մեղուցեալ ծառայս և ծանրաբեռնեալս յանցանօք՝ անկեալ աղաչեմ զքեզ. Տէր իմ և Աստուած իմ: Ողորմեա ինձ, որպէս ողորմեցար համօրէն աշխարհի. զի դու ես յոյս և լոյս աշխարհի, Ճանապարհ և Ճշմարտութիւն և կեանք: Զմահացեալս մեղօք և զանօրինեալս յանցանօք՝ մի անտես առներ, այլ ողորմեա ինձ վասն ամենայն անօրինական կրից քոց, որոց տարար համբերութեամբ բազմաւ:

Յիշեա ամենակեցոյց Տէր, զիջումն քո 'ի հայ-

բական ծոցոյն, և զմարմնանալն 'ի սրբոյ Կու-
սէն Մարիամայ: Ցիշեա ամենօրհնեալ Տէր՝
զշրջելն քո իբրև զմարդ 'ի մէջ մեղաւորաց
մարդկան: Ցիշեա, ամենասուրբ, Տէր՝ զմկրտելն
քո 'ի Յորդանան 'ի Յովհաննէ: Ցիշեա ամենա-
գէտ Տէր, զդաւաճանան 'ի դպրացն և զփոր-
ձանան 'ի փարիսեցւոցն: Ցիշեա յառաջատես
Տէր, զմատնելն 'ի Յուդայէ, և զքամահելն 'ի
քահանայից: Ցիշեա ամենազօր Տէր, զըմբռնելն
'ի պարտիզին, և զձեռնակապելն 'ի խուժանէն:
Ցիշեա ամենակարող Տէր, զկալն առաջի Կա-
յիափայի, և զհարցումն 'ի յԱննայէ: Ցիշեա
անոխակալ Տէր, զապտակն 'ի ծառայէն, և զկր-
ռուփն 'ի կատապետացն: Ցիշեա երկայնամիտ
Տէր, զթուքն 'ի յԵբրայեցւոցն, և զծեծն եղե-
գամբ: Ցիշեա արքայ արքայից՝ զկապանօք կանգ-
նելն 'ի յատենին Պիղատոսի, և զդանելն 'ի նմա-
նէ: Ցիշեա անմատոյց լոյս, զքղամիդն կարմիր,
և զպսակն փշեղէն: Ցիշեա անյիշաչար Տէր, ըզ-
ժամն զայն, յորժամ՝ բարձեր զխաչափայտն
կենսաբեր ուսովդ: Ցիշեա, Բարձրեալ, զբարձ-
րանալն քո 'ի վերայ կենդանարմատ փայտին,
և զպարսաւանդելն բևեռօք: Ցիշեա, մի մոռանար
զպասքումն ծարաւոյն, և զճաշակ լեղւոյն և
քացախին: Ցիշեա, մի մոռանար զձայնն էլի էլի,
և զխոցումն 'ի զինուորէն: Ցիշեա, մի մոռանար
զհոսումն վարդագոյն սուրբ արեանդ, և զխո-
նարհելն աստուածացեալ գլխոյդ: Ցիշեա կեն-
դանիդ յաւիտենից՝ զթաղումն երեքօրեայ, և
զյարութիւնն աստուածապէս, և զհամբար-
ձումն հրաշափառապէս: Ցիշեա յիշեա յիշա-
տակդ յաւիտենից, զկոչուսեալս· քանզի վասն
մեղաւորիս յանձն առեր զայս ամենայն, ամենա-
գութ Տէր: Արդ զայս ամենայն ունիմ առ քեզ
միջնորդ և բարեխօս, բաղումողորմ· ողորմեա

ինձ, և Թող զամենայն յանցանս իմ, և սրբեա 'ի մեղաց․ պատուեա յանվախճան վշտաց գեհենին, և տուր ինձ տեղի յարքայութեանդ քում․ զի դու ես մարդասէր Տէր: Եւ քեզ ընդ Հօր և ընդ Հոգւոյն Սրբոյ վայելէ փառք, իշխանու-Թիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից․ ամէն:

ԺԱ․

Աղերս առ խաչեալն Յիսուս:

Առ քեզ անկանիմ, աղբիւր ջրոյ կենդա-նւոյ, և աղաղակեմ, Թէ ընդէ՞ր է ինձ սրբու-Թեան ծարաւել, երբ դու ես իմ սրբուԹիւն․ կամ ընդէ՞ր փափաքեմ մաքրուԹեան, մինչ դու ես իմ մաքրուԹիւն: Այսուհետև ուսեալ, ե-Թէ դու ես իմաստուԹիւն մեզ յԱստուծոյ առեալ, արդարուԹիւն և սրբուԹիւն, առ քեզ ծարաւիմ, քեզ փափաքեմ, քեզ տոփամ: Տուր իմ ծարաւեալ ոգւոյս՝ զքեզ զովացումն, աղ-բիւր ջրոյ կենդանւոյ խաղացելդ 'ի կեանս յաւիտենից: Ծարաւիմ ըմպել 'ի կրկին վտա-կաց կողից, որով և արբեալ սիրով քո զմայ-լիմ: Քաղցնում ուտել զմարմինդ, որով կենդա-նացեալ անմահ ես լինիմ: Փափաքեմ ողջագու-րել զխոցուած ձեռացդ, որով հաստեալ առ քեզ պատկիմ: Տոփամ անկանել զդէմսդ, ո-րոյ ապաստակաւն 'ի վիրաց իմոց բժշկիմ: Վաղ-վաղակի լուր ինձ, Տէր, զի նուաղեալ յինէն հո-գի իմ: Նուաղեցաւ հոգի իմ 'ի քո անձկաց սի-րոյ: Տոչորեցայ յառ քեզ տոփանացդ, ով վասն

իմ խաչեալ։ Թալկացայ, յորժամ առ քեզ ակնարկեմ, ո՛վ վասն իմ ապտակեալ։ Եւ աղաղակեմ. Յոյց ինձ զդէմս քո. լսեցո ինձ զբարբառ քո. զի ձայն քո քաղցր է, և դէմք քո գեղեցիկ։ Ե՞րբ եկից երևեցայց քեզ։ Արդ, լո՛ւր ինձ, և արբեցո՛ զիս վաղվաղակի քո գիտութեամբդ և սիրով. զի և յինէն՝ որ հաւատամ 'ի քեզ՝ բղխեսցեն աղբիւրք ջրոյ կենդանութեան։

ԺԲ.

Աղերսք և օրհնութիւնք առ Յիսուս խաչեալ :

Որ 'ի յերկնից իջեր, Բանդ Աստուած, և վասն մեր մարմնացար 'ի սրբոյ Կուսէն, ողորմեա ինձ, Աստուած իմ, ողորմեա։ Որ 'ի խաչին տարածեցեր զանարատ բազուկս քո, և վասն մեր հեղեր զարիւն քո սուրբ, ողորմեա ինձ, Աստուած իմ, ողորմեա։ Որ 'ի գերեզմանի եդար անապական, և յարուցեալ նորոգեցեր զաշխարհս, ողորմեա ինձ, Աստուած իմ, ողորմեա։

† Որ զանարատ բազուկս քո 'ի խաչին տարածեցեր, Քրիստոս Աստուած, և նշան յաղթութեան ետուր մեզ, սովաւ զկեանս մեր պահեա։ Որ զաշխարհակեցոյց բազկատարածութիւն խաչի քո, Քրիստոս Աստուած, զաւազան զօրութեան ետուր մեզ, սովաւ զկեանս մեր պահեա։ Որ զմեռեալն 'ի ճաշակմանէ փայտին յանցանաց՝ կենաց փայտիւն կենագործեցեր, սովաւ զկեանս մեր պահեա։

† Դու յանձն առեր, Աստուած, ելանել 'ի խաչ՝ վասն մեր, և ընդ նմին բևեռել զհնու-

թիւն մեղաց մերոց. վասն որոյ երկրպագեմք և վերօրհնեմք զքո զանճառ խոնարհութիւնդ: Ի խաչիլն քո մեռուցեր զմահ, և յաղբերէ կողի քո տիեզերաց արբուցեր զանմահութիւն: Յայգւոյդ անմահութեան ճաշակեցաք, և տեսաք զի քաղցր և ուղիղ ես, Տէր, և վասն ամենեցուն փրկութեան եկիր յաշխարհս:

† Ու համբարձար կամաւ 'ի խաչ քո, Տէր, տարածեցեր զբազուկս քո՝ ժողովել զհեռացեալ ազգ մարդկան առ քեզ, Տէր: — Եկեալդ 'ի փրկութիւն ստեղծուածոց քոց, պատկերակից եղեր հողեղէն մարդոյն. զմեղս սպաներ, և զմահու գերեալսն ազատեցեր 'ի մեղաց: — Աստուած՝ զքեզ փառաւորեմք, որ 'ի յերկնից խոնարհեցար, ծառայի առեր զկերպարան, և զտիեզերս ազատեցեր 'ի մեղաց:

† Բանդ՝ որ 'ի Հօրէ իջեալ՝ մարմնացար 'ի Կուսէն, խաչեցար կամաւ Հօր վասն մեր, զմեղս սպաներ, սուրբ Աստուած, ողորմեա մեզ: Որ յարարածոց ես անբովանդակելի, 'ի խաչափայտին բեւեռելով զմահ կոխեցեր, սուրբ Աստուած, ողորմեա մեզ: Որ 'ի նախնումն զանկեալն 'ի ծառայութիւն մահու՝ պատուական մարմնով և արեամբդ քո ազատեցեր, սուրբ Աստուած, ողորմեա մեզ:

† Հաստատութիւն իմ լեր, Տէր, և յոյս փրկութեան, որ զառաջին Ադամն ազատեցեր 'ի մեղաց, նորոգեա և զիս զապականեալս մեղօք: Որ յատենի կացեր, անպարտդ, կողին պատրանօք, և արբուցեր մեզ 'ի կողահոս աղբերէդ, նորոգեա և զիս զապականեալս մեղօք: — Հաստատութիւն իմ լեր, Տէր, որ յաղթող խաչիւ քով զդժոխս աւերեցեր. քանզի յարեար երեքօրեայ, զանկեալն կանգնեցեր զԱդամ: Օգնեա, Փրկիչդ Աստուած, պարծելոցս 'ի խաչ քո, յու-

սողացս 'ի քեզ, Տէր. և փրկեա, միայն բարերար, 'ի վտանգէ զանձինս մեր:

† Օրհնական ընդունելի եղև իմ Տէր ինձ 'ի փրկութիւն. սա է իմ Աստուած, և փառաւորեցից զսա: Ի խաչին բևեռեցաւ, և զգժոխոցն եղոյծ զբռնութիւն. սա է իմ Աստուած, և փառաւորեցից զսա: Որ մահուամբն եղոյծ զմահ, և յարութեամբն զնախահօրն ջնջեաց զմեղս. սա է իմ Աստուած, և փառաւորեցից զսա:

† Լոյս Աշխարհի, Քրիստոս Աստուած, առ քեզ հոգի իմ առաւօտէ. 'ի յերկրի երևեցո ինձ զերեսս քո: Քոյով պատուական խաչիւ, Քրիստոս Աստուած, և հրաշափառ քո առաւօտու յարութեամբդ՝ երևեցո ինձ զերեսս քո: — Հոգի իմ յամենայն ժամ զքեզ փառաւորէ, Տէր, վասն զի լոյս են հրամանք քո 'ի վերայ երկրի: Հոգի քո սուրբ և բարի՝ զէն ինձ, Քրիստոս, եղիցի յամենայն ժամ, ընդդէմ թշնամւոյն հակառակողի:

† Խաչի քո, Քրիստոս, երկիր պագանեմք, և զթաղումն քո մեծացուցանեմք, և սուրբ զյարութիւնդ քո փառաւորեմք: Եկայք, հաւատացեալք, երկրպագեսցուք Քրիստոսի Աստուծոյ մերոյ. վասն զի եկն 'ի ձեռն խաչին իւրոյ շնորհեաց պարգևս աշխարհի: Փառք սուրբ խաչիդ:

ԺԳ.

Առ սուրբ արիւնն Քրիստոսի :

Արիւն Քրիստոսի, արիւն պատուական, գինք յաւիտենից կենաց, վարձք և փրկանք տիեզերաց, արբումն և լուացումն հոգւոց մերոց, որ բարեխօսդ ես միշտ վասն մեր մարդկան առաջի աթոռոյ ողորմութեանն Աստուծոյ, խորին խոնարհութեամբ քեզ երկիր պագանեմ, և ցանկամ փոխարինել ըստ կարի իմում անարգանացն և թշնամանաց՝ զոր կրես հանապազ 'ի մարդկանէ, մանաւանդ յորոց ժպրհինն հայհոյել զքեզ: Եւ զիա՞րդ ոչ օրհնեցից զքեզ, արիւն պատուական, գանձ անկշռելի. և զիա՞րդ ոչ բորբոքեցայց 'ի սէր Յիսուսի՝ որ եհեղն ըզքեզ. զի՞նչ լինէի ես առանց փրկելոյ նորա զիս քու: Ո՞ արար հեղուլ զքեզ յերակաց Տեառն իմոյ ցվերջին շիթ. ո՛չ մարդասիրութիւն նորա աներկբայապէս: Սէր անհունն՝ որ պարգևեցեր մեզ զկենարարս զայս ըմպելի. ըմպելի անգին՝ բղխեալ յաղբերէ անսպառ սիրոյ, տո՛ւր զի ամենեցուն սիրտ և ամենեցուն լեզու օրհնեսցէ զքեզ, գովեսցէ և փառաւորեսցէ, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

ԺԴ.

Առ խաչն Սուրբ:

Պսա՛կ անհասական գլխոյն Յիսուսի, միջնորդ փրկութեան մերոյ, և գրաւ տիեզերաց, Ճառագայթաւէտ լոյս աշխարհաց, արեգակն սիրոյ և պայծառ լուսոյ. Նշա՛ն սուրբ և սոսկալի երախտեացն առ մեզ. սուր աստուածամուխ՝ սպանող հակառակամարտին մերոյ, և դրոշմ զգայարանաց մերոց, և ամուր ապաստանի ակնկալութեան մերոյ։ Աստուածային զօրութիւն քո՝ որ պահէ հաստատուն զհիմունս աշխարհի՝ պահեսցէ զհոգի և զմարմին իմ՝ 'ի ցասմանէ և 'ի ցանկութենէ և յատելութենէ, և յամենայն փորձութեանց և 'ի գայթակղութեանց հոգւոյ և մարմնոյ. 'ի փառս սոսկալի զօրութեան քո։

ԺԵ.

Առ Սուրբ Տիրամայրն յիշատակաւ տնօրէնութեանց Քրիստոսի:

Աստուածածին, Մայր Քրիստոսի, և ծնող Միածնին Հօր, բարձող անիծից, և պարծանք ազգի մարդկան. յերկնային զօրացն երանեալ, և 'ի հրեղինաց օրհնաբանեալ. միջնորդ Աստուածոյ և մարդկան, և հաշտարար Հօր ընդ արա-

ածս. Թագ և պսակ կուսից, և համարձակ բա-
րեխօս մեղաւորաց: Մեղուցեալս յամենայնի՝
կանխիմ առաջի քո, և աղաչեմ, բարեխօսեա
վասն իմ առ Բանն Աստուած, զոր ծնար մար-
մնով, զոր կերակրեցեր՝ զկերակրիչն ամենայնի և
ամենայն կենդանեաց: Աղաչեա վասն իմ զան-
րանիկդ քո. կացո առաջի նորա միջնորդ և բա-
րեխօս զմանկութիւն իւր, զկաթամբ սնանելն
որպէս մանուկ, զուսով բառնիլն, զգրկօք գը-
գուելն, զշրթամբք համբուրելն, զողջագուրելն
որպէս տղայ, զերթևեկելն քո ընդ Նմա յԵ-
գիպտոս և 'ի Նազարէթ և յամենայն տեղիս:
Զտրտմութեամբ տառապելն վասն դորա 'ի
ժամ չարչարանացն. զյանձնարարութիւնն քո
առ Յովհաննէս, յորժամ հեղուսեալ կայր վըշ-
տօք 'ի վերայ խաչին. զդառն արտասուսն քո
զոր վտակօրէն հեղուիր՝ յորժամ տեսանէիր
զնա վտանգեալ 'ի վերայ խաչին: Վասն որոյ
մատնի 'ի դատաստան՝ տառապէիր կսկըծակոծ.
վասն չարաչար չարչարանացն, վասն սաստիկ
ծարաւմանն, վասն ճաշակման լեղւոյն և քա-
ցախին, վասն տեսանելոյն զքրքմատեսակ ա-
րիւնն իջեալ, վասն իջուցանելոյ 'ի խաչէն ա-
րիւնաղանգ մարմնով, վասն դիաղարդիկ դնե-
լոյն 'ի սուրբ գերեզմանն:

Աղաչեմ զքեզ, Մայր լուսոյ, հայցեա վասն իմ.
դիր աղերս աղաչանաց առաջի դորա զամենայն
կիրս չարչարանացն իւրոց. զի վասն իմ կրեաց
բարերարն և մարդասէրն: Յիշեցո, սուրբ Կոյս,
զայսքան չարչարանքս, զի Թերևս ողորմեսցի և
ներեսցէ բազմամեղիս, և ջնջեսցէ զձեռագիր
յանցանաց իմոց, և իւրով անմեղ մատամբն և
սուրբ արեամբն գրոշմեսցէ զդեգերեալս 'ի
դպրութիւն կենացն անվախճանից առ ամենայն
սուրբս իւր. զի ընդ նոսին փառաւորեսցից զա-

մեծասուրբ զԵրրորդութիւնն՝ զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգի. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն: